ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

9(ս)
Բ-61
51

ՀԱՄԱՌՕՏ

ՆԿԱՐԱԳԻՐ ՎԱՐՈՒՑ

ԵՐԵՒԵԼԻ ԱՐԱՆՑ

ՅՕՐԻՆԵԱԼ Ի ՊԷՏՍ ՄԱՆԿԱՆՑ

Ի Հ. ՄԻՆԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ

ԲԺՇԿԵԱՆ ՏՐԱՊԻԶՈՆՑԻՈՅ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

303
~~16~~

ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1850

ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՑ

ՏԱԼԻԹԱՅ ՏԻԿՆՈՋ

ԵՒ ՔԵՐՑ ՆՈՐԱ

ՀԱՄԱՍՓԻՒՌ ԵՒ ՏԱԲԻԹԱՅ ՏԻԿՆԱՅՑ

Ի ԶԱՐՄԷ ԲԺՇԿԵԱՆՑ

308

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մեր ազգին վերջի տարիներուս մէջ ցուցըցած տղայոց դաստիարակութեան և դպրատանց բարեկարգութեան փոյթը լսելով, և իմ ասկէ տարիներով առաջ հրատարակած Հմփուըէին և Վուրժուըէին մանկանց ըսուած գրքերուն՝ բարեսէր ազգերնուս յօժարամիտ ընդունելութիւնը տեսնելով, համարձակեցայ ծերութեանս ատեն աշխարհքիս մէկ ծայրը գրուած այս համառօտ Նկարագիրս ալ տպագրել վարուց անուանի արանց ծաղկելոց յաշխարհի, և երկրաւոր՝ և աւելի կերպով մը երկնաւոր առաքինեաց, որոնց տեղեկութիւնը ամենուն համար հարկաւոր է: Աւելի սրբոց վարքերը ընտրեր եմ, ըսի, ինչու որ գլխաւոր նպատակս տղայոց դաստիարակութիւնը դրեր էի, և բազմամեայ առաքելութեանց մէջ անձամբ փորձ եղած գիտէի, թէ այնպիսի թարմ հասակի մը բանաւոր անդաստանին մէջ սերմանուած հունտերը՝ արժան է որ լաւ ընտրանօք ըլլան, թէ որ կ՚ուզենք որ ընտիր և բարեկիրթ զաւկըներ ունենանք, թէ մարդկանց և թէ Աստուծոյ հաճոյ:

Յուսամ որ դրած նպատակիս վախճանը լաւ կերպով իմացողը, կրնայ դիւրաւ ալ հասկընալ թէ ինչու համար այսպիսի գործքի մը կատարելութեան հանդամանքները պակաս են այս գրքիս մէջ ։ Բայց միանգամայն այս ալ պէտք չէ մոռնալ, որ տղայոց համար գրուած գիրք մը, ազգերնուս մէջէն շատ տարիքը առածներու ալ օգտակար կրնայ ըլլալ, բայց մեծերուն համար գրուածը տղայոց չի ծառայեր ։ Հիմակուհիմայ այս ետքիններուս համար հրատարակեցինք, ատենին՝ Աստուծոյ յաջողելովը, առջիններուն համար աւելի լաւ և ընտիր ոճով շարադրածները կը տպագրենք ։

* * *

ՆԿԱՐԱԳԻՐ
ԵՐԵՒԵԼԻ ԱՐԱՆՑ

Ա.

ԱՇՈՏ Ա. էր որդի մեր Սմբատ թագաւորին՝ որ նահատակեցաւ հաւատքի համար, և պզտի եղբայրն էր քաջազօր Աշոտին, որ անզաւակ մեռնելով 928 ին ասոր թողուց թագաւորութիւնը։ Աստի Աբաս նոյն տարին նստաւ թագաւոր և դրաւ իր գահը 'ի մայրաքաղաքն Կարս կամ Գարս. սա առաջ սպարապետ էր եղբօրը, և շատ քաջագործութիւններ ըրած էր։ Իսկ երբոր թագաւոր եղաւ՝ մեծամեծ յաղթութեամբ թշնամիները հնազանդեցուց. և Ափխազաց թագաւորը բռնեց խոնարհեցուց։ Անկէց ետև բարեշինութեան և ազգասիրութեան հետեւելով ծաղկեցուց իւր տէրութիւնը և բարձրացուց իրեն Բագրատունեաց ցեղին անունը, որոնք կը թագաւորէին Արարատեան աշխարհը մեծ Հայաստանու մէջ։ Սա թէպէտ ժամանակ մը խռովեցաւ վասն իշխանութեան՝ ուրիշ բագրատունի իշխանաւորաց հետ՝ մանաւանդ քսու խառնակիչներուն պատճառաւ , բայց ինքն բարեպաշտ ըլլալով շուտով զղջացաւ ․ ու սկսաւ փառաւոր եկեղեցիներ և վանքեր շինել , մինչև շատ փախստական իշխաններ և վանական կրօնաւորներ գնացին լեցուեցան հոն և շէնցուցին ։ Աբաս արքայն այսպիսի աշխարհաշինութեամբ և աստուածպաշտութեամբ թագաւորեց 24 տարի մինչև 'ի խոր ծերութիւն ու վախճանեցաւ բարի անուամբ յամի 951 ․ որ և թողուց երկու որդի՝ Աշոտ և Մուշեղ ։

ԱԲԱՍ Բ․ Բագրատունի , էր Մուշեղ թագաւորին որդին և թոռն Ա․ Աբաս արքային ․ որ յաջորդեց թագաւորութեան հօրը մահուանէն ետև 'ի Կարս քաղաքին յամի 984 ։ Սա մանկութեան ժամանակը անհանդարտ բնութեամբ անկիրթ եղաւ , առանց առաքինութեան և քաջութեան ․ բայց երբոր թագաւոր նստաւ՝ բոլորովին փոխուեցաւ և եղաւ հանճարեղ և բարեպաշտ ։ Նախ և առաջ գիտութեանց հետևելով բացաւ զանազան դպրոցներ հանդերձ գիտուն վարժապետներով , որոնց ձեռքով կրթել տուաւ բոլոր իր երկրին մանկունքը պէսպէս պիտանի ուսմամբք ․ որոնք որ աւելի քաջ էին և ուժեղ , զինուորութիւն սորվեցուց ․ մինչ զի անուանի եղան իւր տէրութեան երիտասարդները թէ՛ ուսմամբ , թէ՛ լաւ հրահանգով և թէ՛ արութեամբ ։

Յետոյ ջանք ըրաւ բոլոր աւազակները և գողերը կորսնցընելու ․ այնպիսի արթնութեամբ վրէժխնդիր եղաւ չարագործներուն ոչ մեծի խնայելով և ոչ փոքրի , ոչ իշխանի , և ոչ ռամկի ․ մինչև մաքրեց և խաղաղացուց իւր աշխարհը ։ Ասկեց եւ սկսաւ գեղեցիկ բարեկարգութեամբ քաղաքական օրէնքներ դնել ամենուն · դատարկ և անգործ մարդ մը չթողուց, բոլորին ալ գործք և օգտակար աշխատանք գտաւ, ու ամէն մարդ բանի և գործքի պարապելով մեծ շինութիւն և շահ եղաւ թէ տէրութեան և քաղաքներուն, և թէ հասարակ ժողովրդեան ։

Նաև ամէն բանի մէջ ինքն ըլլալով բարի օրինակ շատ մեծ օգուտներ ըրաւ ոչ միայն քաղաքականութեան, այլ և աստուածպաշտութեան հոգևորապէս ։ Որչափ որ անկարգութիւն մտեր էր եկեղեցականաց մէջ վերցընել տուաւ և յորդորեց զամէնքն յաստուածպաշտութիւն և 'ի ժամասիրութիւն ։ Արգիլեց որ պաք օրը կաթնեղէն չուտեն · զի ան ատենը մտեր էր ազգին մէջ անպահեցողութիւն և եկեղեցականք թուլցեր էին · ուստի զամէն բան և ամէն հոգի բարեկարգեց ։

Ի 986 · մեծ փառաւոր վանք մը շինել տուաւ Արշարունեաց գաւառին ծայրը, և դրաւ հոն առաջնորդ զՄովսէս վանահայրը իրեն երկու խստակրօն եղբայրներովն, որոնք լաւ կարգով ծաղկեցուցին այս վանքը և 'ի 1002 ամին վախճանեցան սրբութեամբ ։

Աբաս թագաւորին մայրն ալ անանկ ջերմեռանդութեամբ շարժեցաւ 'ի սէրն Աստուծոյ, որ ձգեց անցաւոր թագաւորական պսակը և փառքերը, մտաւ կուսանաց վանք, ուր մինչև 'ի մահ աղօթքով և մտածութեամբ կ'անցընէր յեկեղեցին իր կեանքը հանդերձ մեծամեծ առաքինի բարեգործութեամբ ։ Աբաս թագաւորն այսպիսի բարեպաշտութեամբ թագաւորեց 45 տարի Կարս մայրաքաղաքը մինչև բարի անուամբ փոխեցաւ առ Աստուած . և Թողուց իւր Թագաւորութիւնը խելացի և ուսումնասէր քաջ հօրեղբօրորդւոյն, որ էր Գագիկ Ա․ Տե՛ս 'ի կարգին ։

Վեհ պայազատաց չեղեն յարգելի
  Թագ և արքունիք ունայն աշխարհի .
  Որ ցանգ յերերեալ աստ և անդ դառնան,
  Չև իսկ վայելեալ՝ փոյթ անհետանան ։
Աստուածասիրաց միակ ցանկալի,
  Երանական Թագն անանցանելի .
  Աստանօր ձգնեալ մաքրափայլ վարուք
  Անդանօր պճնիլ երկնապանծ փառօք ։

ԱԲԳԱՐ Հայոց Թագաւորն՝ էր որդի կռապաշտ Արշակունի Արշամ արքային . Թագաւորեց յամի աշխարհի 3999 և գնաց Պարսկաստան, ըրաւ խաղաղութիւն Պարսից Թագաւորին որդւոյը մէջ ։ Բայց այս գործս Հռոմայեցւոց դէմ ըլլալով՝ Հերովդէս ամբաստանեց Հռոմայեցւոց, Թէ Աբգար պիտի ձեզմէ երես դարձընէ ու միանայ Պարսից հետ ։ Այս պատճառաւ Աբգար դեսպան ղրկեց Երուսաղէմ Հերովդեսին ամբաստանութիւնը սուտ հանելու համար ։ Դեսպանները երբոր դարձան յԵրուսաղեմէ պատմեցին Աբգարին Քրիստոսի Տեառն մերոյ ըրած բժշկութիւններն ու հրաշքները . որ երբ լսեց մէկէն Թուղթ գրեց ու հրաւիրեց Փրկիչն որ գայ զինքը բժշկէ վասն զի հիւանդ էր ։ Յիսուս պատասխան գրել տուաւ Թովմայ Առաքելոյն ձեռքովը, Թէ Համբարձմանէս ետքը կուգայ քեզ կը բժշկէ իմ մէկ աշկերտս ։ Այս Թղթին հետ բերին Թագաւորին նաև Քրիստոսի պատկերքը դաստառակի վրա նկարած։ Եւ Համբարձմանէն ետև ղրկեց Թովմայ զԹադէոս Առաքեալը որ էր 70 աշակերտներէն ու բժշկեց զԱբգար. որ ճշմարտիւ հաւատաց Քրիստոսի և մէկէն քակեց կռատունները. և փրկչին անձեռագործ պատկերքը դրաւ Եդեսիայ քաղաքին դրանը վրա. որ ներս մտնողներն անոր երկրպագութիւն ընեն։ Շատ ծաղկեցուց քրիստոնէութիւնը բոլոր տէրութեանը մէջ, ղրկելով զսուրբն Թադէոս իր Սանատրուկ քեռորդւոյն որ էր արքայ վերին Հայաստանու, որով բոլոր ազգը քրիստոնեայ եղաւ։ Յետոյ թուղթ գրեց Տիբեր կայսեր յորդորելով որ քրիստոնեայ ըլլայ. նոյնպէս առ Պարսից թագաւորը Արտաշէս, և առ Ներսեհ արքայ Ասորեստանի։ Եւ այսպիսի բարեպաշտութեամբ փոխեցաւ երկնից թագաւորութիւնն, մկրտութենէն իրեք տարի ետքը յամի տեառն 34. որ թագաւորեց 38 տարի։ Քրիստոսի սուրբ դաստառակը կը յիշատակեն հին Հարք սուրբն Եփրեմ, Գրիգոր պապ, Յովհաննէս դամասկացին, Ղերուբնայ ականատես պատմիչն, յորմէ Խորենացին առեր կը պատմէ ստուգութեամբ։ Եւսեբիոս ևս հաստատելով կը յիշէ Աբգարին թղթակցութիւնը Յիսուսի փրկչին հետ. նոյնպէս և Յիսուսի գրած թուղթը։

Աբգար երջանիկ արքայ իմաստուն.
Բարեպաշտ ընտիր գըտաւ գերաբուն.
Նախ հաւատացեալ 'ի մէջ արքայից.
Փրկչին սիրելի գրով խօսակից։
Այր աստուածասէր ծաղկիչ հաւատոց,
Օրինակ բարի լուսատու Հայոց.
Առաքինափայլ գործովք հրաշալի
Ճոխացաւ կրկին թագօք պանծալի։

ԱԲԴԱ կամ ԱԲԴԱՒ՝ էր մեծանուն եպիսկոպոս Պարսից կողմերուն, իմաստութեամբ և առաքինութեամբ զարդարուած, արթուն և քաջ հովիւ, փոքր Թէոդոս կայսեր ժամանակը։ Այն ատեն Ա. Յազկերտ կրակապաշտ Պարսից թագաւորը հալածանք հանելով խիստ կը չարչարէր քրիստոնեաները՝ որ դառնան ըլլան կրակապաշտ։ Զայս տեսնելով երանելին Աբդա եպիսկոպոս՝ սիրտը շարժեցաւ աստուածային նախանձով վազեց գնաց Պարսից կրակատունը այրեց, որուն մէջ առանց մարելու միշտ կրակ կը վառէին ու կը պաշտէին։ Երբոր լսեցին մոգերը կամ քուրմերը՝ մէկէն իմացուցին թագաւորին։ Թագաւորը կատղելով կանչեց սուրբ եպիսկոպոսը սաստիկ թշնամանելով հրամայեց որ երթայ նորէն շինէ զկրակատունը, թէ չէ՝ կը կորսուիս ըսաւ։ Պատասխանեց սուրբը, թէ անհնարին է ինձի շինել ձեր սնոտի մոխրատունը, ուր անմտութեամբ թողլով զԱրարիչն՝ արարածը կը պաշտէք։ Թագաւորը զայս լսելով անանկ բորբոքեցաւ որ մէկէն նահատակել տուաւ զերանելի Աբդա եպիսկոպոսն աչքին առջև։ Անկէց ետև հանեց դառն հալածանք և անհամար սուրբեր նահատակեցան սոսկալի տանջանքներով և պայծառ հրաշքներով. որով առաւել լուսաւորեցաւ և ծաղկեցաւ սուրբ հաւատքը։ Որոնց մէջ անուանի եղան Որմզդան կամ Հուրմուզ, և Սայէն, և Բենիամին սարկաւագն։ Տե՛ս 'ի կարգին։

Առաքելաշնորհ Աբդաւ մեծապանծ,
Խորտակիչ կռոց և' արքայից բազկաց.
Առ 'ի սէր փառաց երկնից արքային՝
Այրէր մոխրատունս անաստուած ազգին։

Երկնաբերձ սիրոյ բոցբոց մեծափառ,
Ձըգի բարձրանայ առ բարին անձառ.
Յոչինչ համարեալ զչարչարանս և մահ.
Զի արժանացի պսակայն անմահ։

ԱԲԴԻԱ կամ ԱԲԴԻՈՒ կը թարգմանի ծառայ Աստուծոյ, էր Սիւքեմայ երկրէն և հազարապետ Աքայաբու արքային, այր աստուածապաշտ։ Սա կը համարուի այն յիսնապետը, որ Ոքոզիա անօրէն թագաւորէն ղրկուեցաւ որ երթայ Եղիա մարգարէն տանի թագաւորին. ինչպէս առաջ ալ երկու յիսնապետ ղրկեր էր, որոնք յիսունական մարդիկներով այրեց Եղիա երկնառաք հրով։ Բայց Աբդիա խոնարհ աղաչանքներով ցածուց Եղիայի սիրտը, ու այս պատճառաւ մեծ հալածանքներ ալ քաշեց. ինչպէս առաջ ալ 100 մարգարէ պահեր էր լեռներուն մէջ Եզաբէլին ձեռքէն։ Ասոր այսպիսի բարեպաշտութեանը աշակերտ եղաւ Եղիայ մարգարէին և ընտրուեցաւ մարգարէ Աստուծոյ. և 12 Փոքրամատեան մարգարէներուն մէկը. որ համառօտ և զօրաւոր գուշակութեամբ նկարագրելով Հրէից գերութիւնն ու կը մարգարէանայ մեր ազատութեանը վրայ Քրիստոսի փրկութեամբն՝ սատանային գերութենէ։ Աբդիա թաղեցաւ Սամարիայի մէջ. ուր յայտնեցան նշխարքը քրիստոնէութեան ժամանակն. անոր հետ յայտնեցան Եղիսէ մարգարէին և Յովհաննու Մկրտչին ոսկորներն ալ։

ԱԲԴԼՄՍԵՀ կը նշանակէ ծառայ Քրիստոսի՝ էր Պարսկաստանի կողմերէն որդի Լևի հրէայէն. և առաջ կ՚անուանէր Ասեր։ Յամի Տեառն իբր 552 Աբդլմսեհ երբ 12 տարուան էր, հօրը խաշինքը և անասունները կ՚արածէր քրիստոնէից տղոց հետ միատեղ․ որոնք անուշ խօսքերով կը պատմէին իրեն Քրիստոսի հրաշքները և քրիստոնէական հաւատքին զօրութիւնը․ ինքն ալ շատ սիրով մտիկ կ՚ընէր և կը հարցընէր․ բայց անոնք իրեն հետ կերակուր չէին ուտեր հրեայ ըլլալուն համար։ Մէկ օր մը երբոր անոնք ժողվեր հաց կ՚ուտէին, Ասեր գնաց քովերնին, խնդրեց թէ ինչպէս կրնամ ձեզի հետ միանալ, և հացակից ըլլալ, որպէս զի գարշելի չերևնամ ձեզի։ Անոնք ալ պատասխանեցին, թէ որ հաւատաս բոլորով սրտով և մկրտուիս ջրով յանուն Յիսուսի Քրիստոսի։ Ան ալ մէկէն կանչեց խընդալով․ ահա՛ հոս ջրհոր և աւազան կայ․ ես պատրաստ եմ մկրտուելու։ Եւ սկսաւ հաւատքով և սիրով աղաչել անոնց որ զինքը մկրտեն շուտով որպէս զի հայրը և եղբայրները չիմանան։ Ես ըսածներնուդ կը հաւատամ կ՚ըսէր․ մեծ է Փրկիչն Քրիստոս զիս կ՚ընդունի, ինչպէս որ պատմեցիք մինչև հիմա։ Ան ատենը քրիստոնեայ մանկունք տեսնելով անոր կատարեալ հաւատքով բաղձանքը՝ իջեցուցին զինքն աւազանին մէջ․ և ինչպէս որ տեսած և սորված էին, երեք անգամ ջուրը խօթեցին՝ ըսելով․ “Մկրտի ծառայս Ապտալմէսեխահ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ,,։ Իսկ աւազանէն հանելէն ետև համբուրելով զինքը՝ իրենց նոր լաթերը անոր հագուցին ու նստան միատեղ ուրախութեամբ կերակուր կերան։ Նոյն ատեն Աբդլմսեհի երեսները պայծառացան, և վրայէն անուշ հոտ կը բուրէր Հոգւոյն սրբոյ շնորհօքն, մինչև մէկալ կռապաշտ հովիւներուն մանկունքը տեսնալով զայն լուսափայլ և անուշահոտ կերպարանքը զարմանալով կ՚ըսէին . Մեծ է այս խորհուրդ քրիստոնէից ։ Այս հոգւոր ուրախութեան և խօսակցութեան մէջ ընկերներուն մէկը հանեց իր ականջէն ոսկի օղն ու անոր ականջն անցուց . որպիսի զի յայտնի ըլլայ Հրէից թէ նա մշտնջենաւոր ծառայ է Քրիստոսի ։ Աբդլմեհ երբոր տուն դարձաւ , ու մայրը օղը տեսաւ տղուն ականջը և իմացաւ բանը , խելքը գլխէն գնաց . և հարցուց իմացաւ անոր հաստատ քրիստոնէութիւնը՝ զարմացաւ . և մէկ ամիս հօրը չերևցուց ։ Բայց տղան մօրը սիրտ կուտար . ու կանուխ կ՚երթար դաշտը խաշինքը նայելու և ընկերաց հետ հոգւոր խօսքերով զուարճանալու , և սրբոց վարքը լսելու ։

Քիչ ատենէն ետև երանելի մանուկը տեսիլք տեսաւ քունին մէջ , որ Քրիստոս ձեռքէն բռնեց ու մութ գուբի մէջէն զինքը հանեց , ուր որ Հրեայք կը տանջուէին . և տարաւ հրեշտականման մանկանց դասը դրաւ ։ Այս բանը մօրը պատմելով սիրտը շարժեց որ քրիստոնեայ ըլլայ ։ Յետոյ գնաց գտաւ եպիսկոպոս մը , և դրոշմ առնելով անկէ՝ զօրացաւ Հոգւով սրբով . երբոր տուն դարձաւ՝ համարձակ կը դաւանէր զՔրիստոս ։ Հայրը իմանալով և տեսնելով տղուն կերպը՝ սոսկալի կատղեցաւ իբրև գազան , մինչ զի առաւ դանակը որդւոյն ետևէն ընկաւ ։ Իսկ երանելին վազեց գնաց մկրտուած տեղն , ու սկսաւ աղօթք ընել ծնկան վրա՝ վառեալ սրտով , և Յիսուսին կ՚աղաչէր որ զինքն արքայութեան արժանի ընէ . որուն համար արիւն կ՚ուզէր թափել , և հրեշտակաց դասը խառնուիլ ։ Հոն եկաւ հասաւ անգութ հայրը Ղևի , և կատղած զարկաւ մորթեց զերանելին Աբդլմսեհ, իբրև գառն անմեղ։ Միւս օրը ընկերներն երբոր գնացին հոն տեսան սուրբ մարմինը արիւնաթաթախ, ընկան վրան լացին գուրգուրալով և խնդրեցին որ իրենց համար բարեխօս ըլլայ, որպէս զի արժանի ըլլան տեսնելու զինքն երկնային փառքերուն մէջ։ Վերջը ծածկեցին հողով քարով անոր սուրբ մարմինը և լալով դարձան իրենց տունը առանց ուրիշի պատմելու։

Բայց քանի մ՚ օրէն ետև քրիստոնեայ վաճառականներ անկէց կ՚անցնէին ուղտերով, տեսան որ սուրբին գերեզմանին վրայ լոյս կը փայլի, և մօտեցան առին անուշ հոտը և քարերը վերուցին, հողը բացին տեսան արիւնաթաթախ մարմինը՝ իմացան որ նահատակ է, առին նշխարքը փաթթեցին մաքուր լաթերու մէջ, դրին ուղտին վրայ, ետ դարձան տարին իրենց քաղաքը ասելով. մենք մեր գանձը գտանք, ուրիշ բան չենք ուզեր։ Այս վաճառականներուն մէկը շատ հարուստ էր և անզաւակ. տարաւ սուրբին մարմինը իր տունը դրաւ, ու ուխտեց փառաւոր մատուռ մը շինել անոր անուամբն և թէ որ նորա բարեխօսութեամբ Աստուած իրեն զաւակ տայ, սուրբին անունը դնէ անոր երբոր անունը յայտնուի։ Իսկ սուրբը շուտով յայտնեցաւ. վասն զի ընկերները պատմեցին իրենց ծնողացն ու գնացին միատեղ նշխարքին ուխտ ընելու, տեսան որ մարմինը չկայ, միայն արիւնովը ներկած վէմը գտան հոն. իմացան որ ճամբորդները վերուցեր տարեր են։ Խիստ ցաւեցան որ մեծ գանձ մը կորուսին. ուստի մէկէն փոքրիկ մատուռ մը շինեցին սուրբին գերեզմանին վրայ և մէջ տեղը դրին արիւնոտ վէմն, վրան ալ խաչ մը կանգնեցին . և գրեցին , թէ “ Հոս է կատարման տեղը վկային Քրիստոսի սրբոյն Աբդլմըսեհի ” : Անկէց ետև եղաւ ուխտատեղի հաւատացելոց . և ամէն տեղ տարածուեցաւ անոր գերեզմանին հրաշքները :

Միւս տարի եկաւ հօն նոյն հարուստ վաճառականը իր ընկերներովն ու տեսաւ մատուռն , հարցուց տեղեկացաւ Աբդլմսեհին պատմութիւնն և նահատակութիւնը . իրենք ալ պատմեցին թէ ինչպէս վերուցին սուրբ մարմինը տարին մատուռ չինեցին մէջը հանգուցին : Զայս լսելով մատրան սպասաւորները աղաչեցին վաճառականին , որ մասն ինչ նշխարաց սուրբին շնորհէ այն մատրան , ուր որ նահատակեցաւ : Նա ալ տուն դառնալէն ետև կատարեց այս օրինաւոր խնդիրքը , և գտաւ իրեն գեղեցիկ որդի մը ծնած . և մկրտել տուաւ սուրբին մատրան մէջ , անունն ալ դրաւ Աբդլմսեհ . ու եղաւ մեծ ցնծութիւն ամենեցուն : Նաև առաւել հռչակեցան սուրբին հրաշքները արևելքի կողմերը երբոր հայրը մայրը և ազգականքը հաւատացին Քրիստոսի և մկրտեցան Աբդլմսեհի վկայարանին մէջ :

Աստուածավառ տենչ Աբդլմըսեհին ,
Գերամբարձ պըճնեաց զնա յանճառ բարին .
Զենեալ 'ի հօրէն զոհ արիւնընծայ ,
Մատուցաւ Փրկչին պատարագ կամայ :
Քա՛բէ գերահրաշ սրբարար շնորհաց ,
Որ հանէ 'ի փշոց վարդ 'ի զարդ փառաց .
Անդ 'ի հոտ անոյշ Հօրն երկնաւորի ,
Աստ ծաղկեալ հրաշիւք 'ի պարծանս խաչի :

ԱԲԵՆԵԶԵՐ էր գիտնական ռաբբի Հրէից, և ներհուն փիլիսոփայ, քաջ աստեղաբաշխ և վարպետ բժիշկ ԺԲ դարուն ։ Որ և լաւ տեղեակ ըլլալով Արաբացւոց լեզուին և օրինացն՝ սորված էր ուսումն աղթարաց ։ Գրեց աստուածաբանական գիրք մը Հրէից համար · նաև նկարագրական մեկնութիւն մը հին Կտակարանին և քերականութիւն մը · որ թարգմանեցին լատիներէն · ինքը մեռաւ 'ի Սպանիա 75 տարուան յամի 1174 ։

ԱԲԷԼ էր երկրորդ որդին Ադամայ, անմեղ հովիւ ոչխարաց · որ լաւ և անդրանիկ գառները զոհ և պատարագ կ'ընծայէր Աստուծոյ · ուստի հաճոյ և ընդունելի կ'ըլլար Արարչին ։ Իսկ Կային մեծ եղբայրը ագահութեամբ անշահ և փուճ պտուղները կ'ընծայէր Աստուծոյ, որ հաճոյ և ընդունելի չէր ըլլար ։ Ասոր համար չարաչար նախանձեցաւ Աբելին վրա · և խաբէութեամբ տարաւ դաշտը, զարկաւ սպաննեց անգթութեամբ զարդարը · և Աստուծոյ սոսկալի անէծքն առաւ · որ երերեալ տատանեալ հոգւով և մարմնով կորաւ յաւիտեան ։ Իսկ Աբէլ ժառանգ եղաւ յաւիտենական փառաց ։

Աբէլ երջանիկ արդար շնորհալի
  Չըքնաղ օրինակ համայն աշխարհի,
  Վասն արդարութեան լեալ զոհ անուշից,
  Անմահ յիշատակ եթող համայնից ։
Երանի որոց յոյսն է հաստատուն,
  Լինին ողջակէզ 'ի սէր Բարձրելոյն,
  Յորմէ ընկալան զամենայն բարիս,
  Ընծայեն նորին ըղձիւք գերաբուն ։

ԱԲԻԲԱՍ էր առաքինազարդ, և աստուածիմաստ սարկաւագ Եդեսիոյ. որ աստուածային սիրով վառուած գիշեր ցորեկ անդադար կը քարոզեր, և շատերը կը դարձըներ կռապաշտութենէ 'ի քրիստոնէութիւն, անօրէն Դիոկղետիանոսի հալածմանքին ժամանակը։ Երբոր աս թագաւորը լսեց, հրաման ըրկեց դատաւորին որ բռնէ Աբիբասն աշակերտներով շղթայակապ բանտարկէ և տանջէ. թէ որ չդառնայ՝ հրով այրէ։ Դատաւորը փնտռել տուաւ զԱբիբասը, բայց չգտան՝ վասն զի գեղ գացեր էր. բռնեցին աշակերտները և մայրը երկաթը զարկին։ Երբոր լսեց սուրբն Աբիբաս՝ մէկէն գնաց դահճապետին յայտնեց զինքը. ան ալ խորհուրդ տուաւ իրեն, որ երթայ պահուի. խոստանալով, թէ ես քու մայրդ և աշակերտներդ կ' ազատեմ։ Բայց սուրբ սարկաւագը ելաւ ինքնակամ Լիսանիաս դատաւորին առջև, որ հարցուց սուրբին, թէ ի՞նչ է անունդ։

Պատասխանեց. Անունս քրիստոնեայ է. ծնողքս զիս կոչեցին Աբիբաս, և արժանացայ սարկաւագութեան աստիճանին։ Ասաց բռնաւորը. ինչո՞ւ չես հնազանդիր թագաւորին ու զոհեր կռոցն։ Պատասխանեց սուրբը. Մենք քրիստոնեայքս չենք սորված ձեռքով շինած փուճ կռոց երկրպագութիւն ընելու՝ որոնք թքնելու և արհամարհելու արժանի են։ Ատենը կատղելով դատաւորն հրամայեց որ կախեն և տանջեն զերանելին. բայց տեսաւ թէ նա աւելի անարգութիւն կուտայ կռապաշտութեան և Քրիստոս կը բարձրացընէ, վճռեց որ ողջ ողջ այրեն զԱբիբաս, և հանեց բանտէն մայրը և աշակերտներն որ տեսնեն անոր մահը.

երբոր կը տանէին սուրբը նահատակելու , ամէնքը եռեւէն երթալով կը համբուրէին զերանելին , եւ Յիսուսի յանձնելով կը փառաւորէին զԱստուած ։ Իսկ ինքը լի հոգեւոր ցնծութեամբ կը գոհանար . եւ երբ փայտերը բերին չորս դին շարեցին ու կը վառէին . սկսաւ սուրբը կրակին մէջէն աղաղակել այսպէս . “Տէր Յիսուս ընկա՛լ զոգի ծառայի քո Աբիբայ„ . եւ մէկէն հոգին աւանդեց ։

Քրիստոնեաները կրակէն հանեցին սուրբ մարմինը պատեցին մաքուր կտաւով , խնկով եւ անոյշ իւղով օծեցին ու դրին սնտուկին մէջ եւ թաղեցին մօտիկ տապանաց սուրբ Գուրիասայ Սամոնասայ , սուրբ Աբիբասին զգեստներն ալ առին իրենց մէջ բաժնեցին իբրեւ մասունք ։ Յետոյ սրբոյն Կոստանդիանոսի ժամանակը մեծաշէն եւ փառաւոր եկեղեցի շինեցին այս սուրբերուն գերեզմանին վրայ . եւ եղաւ մեծահռչակ ուխտատեղի . վասն զի մեծամեծ սքանչելիք անպակաս կ՚ըլլային անոնց գերեզմանէն . ինչպէս որ գրած են ականատես վկաները . եւ կը տօնէ եկեղեցին ։

Երկնատարփ տենչանք քաջ առաքինեաց ,
Ամբարձ ըղձոսին ՚ի փառաց ՚ի փառս .
Որչափ սիրաբար աստ չարչարեցան ,
Այնչափ գերամբարձ անդէն փայլեցան ։
Եր դու հետեւող այնց սրբասիրաց ,
Ըստ սիրով վառեալ անդ վերձեմղաց .
Անզեղջ են շնորհք եւ քեզ նպաստել .
Եւ մասին սըրբոց արժանի առնել ։

ԱԲՐԱՀԱՄ մեծ նահապետ Եբրայեցւոց՝ էր քաղդէացի որդի կռապաշտ Թարային . երբոր չափահաս եղաւ՝ ելաւ ծնած երկրէն Միջագետի կողմերը բնակեցաւ աստուածային հրամանաւ բոլոր ազգականներովը ։ Հայրը մեռնելէն ետև՝ նոյն Աստուծոյ հրամանաւ անկէց ալ փոխադրեցաւ և հնազանդելով կ՚երթար, ուր որ կամենար Աստուած ։ Աբրահամու այս կոյր հնազանդութիւնն շատ հաճոյ եղաւ Աստուծոյ, որ անկէց եղած ազգը իրեն ժողովուրդ ընտրեց ։ Ուստի ելաւ գնաց Քանանացւոց երկիրը բնակեցաւ վրանով (չատըրով) Մամբրէի կաղնի ծառին տակը ։ Հոն երևցան հրեշտակներն ու աստուածային կողմանէ խոստացան. թէ Աբրահամ՝ զաւակ պիտի ունենայ Սառայէն, որ 90 տարուան ամուլ էր ։ Աբրահամ կենդանի հաւատքով հաւատաց, թէ Աստուած կարող է պառաւէն ալ զաւակ տալու իրեն . ուստի այս հաւատքն ալ շատ հաճոյ եղաւ Աստուծոյ, և համարեցաւ նմա արդարութիւն ըստ Պօղոսի առաքելոյն ։

Ապա միւս տարին ծնաւ խոստացեալ որդին Իսահակ, որ երբ 17 տարուան եղաւ, Աստուած նորէն ուզեց զԱբրահամն փորձել . ուստի հրամայեց որ մորթէ զայն մէկ հատիկ զաւակն ու զոհ ընէ Արարչին ։ Այս հրամանը ո՞րչափ սոսկալի և ծանր էր Աբրահամու, թէ այն զաւակը շատ սիրելուն համար, և թէ՛ միայն անով յուսալուն համար ցեղ ունենալու ըստ խոստմանն Աստուծոյ ։ Բայց ինքը առանց երկմտութեան հաւատաց թէ Տէրն կարող է մեռածէն ալ իրեն զաւակ յարուցանելու ։ Եւ այսպէս տարաւ լեռանը վրան ու երբոր ձեռքը վերուց որ զարնէ զենու որդին, ահա հրեշտակն արգելեց ու օրհնեց զնա անուամբն Աստուծոյ . ան ատեն Աբրահամ ողջակէզ ըրաւ Սահակին տեղը ոչխար մը որ կախուած էր Սաբեկայ ծառէն ։ Աբրահամու բոլոր այս առաքինական հնազանդութեան գործքը և հաւատքը արժանի ըրին զինքն կոչուելու Հայր հաւատացելոց հին և Նոր օրինաց, նաև հայր և գլուխ ազգաց բազմաց ՝ որոնք փափագեցին և հաւատացին գալստեան Մեսիային Աբրահամու զաւակէն, ինչպես որ մարգարեացան ։ Աբրահամու եղան ուրիշ զաւակներ ալ ուրիշ կնկանէ ։ Բայց Իսմայել Ագարէն ծնածը շատ մեծ ազգ եղաւ . իսկ ինքն Աբրահամ 175 տարուան վախճանեցաւ Քրիստոսէն 1821 տարի առաջ ։ Հռոմ սուրբ Յակոբայ եկեղեցնայ մէջ վէմ մը կայ . որուն համար կը պատմեն թէ այն քարին վրա Իսահակ պիտի զոհ ըլլար ։

Աբրահամ յորդոր լինի զաւակաց,
  Ըլլով կոյր հնազանդ Արարչին կամաց ։
  Թողուլ զցանկալի ամէն ըստացուած .
  Ի գոգ իւր Ճեպել որպէս ինքն ասաց ։
Այսպէս նահապետք գըտան գերապանծ,
  Հետևեալ անշուշտ երկնից պատգամաց .
  Պըճնեալք 'ի հաւատս 'ի սէր անխափան,
  Ճոխաբար հասին երկնաւոր խոստման ։

ԱԲՐԱՀԱՄ և ԽՈՐԷՆ խոստովանող երէցներն էին աշակերտք սուրբ Թարգմանչաց Սահակայ և Մեսրոպայ, որ Վարդանանց և Ղևոնդեանց նահատակութենէն ետև Պարսիկները բռնեցին ու կ' ուզէին որ կրակապաշտ ընեն ։ Դահճապետն առաւ զանոնք և կըստիպէր որ երկրպագութիւն ընեն արեգական . իսկ անոնք երբոր նախատեցին Պարսից սուտ կրօնքը, գետնին վրա քաշելով ծեծեցին երանելինեըր՝ ետքն ալ ականջնին կտրեցին ու կապանքով քշեցին դէպ յԱսորեստան, արքունի այգիները մշակելու համար։ Իսորէն եօթը տարի աշխատելէն ետև հոն խորշակէն զարնուեցաւ ու փոխեցաւ առ Քրիստոս ՚ի 461։ Իսկ Աբրահամ ինը տարի գերիի պէս ծառայելէն ետև՝ նախարարներուն միջնորդութեամբ ազատեցաւ, և գնաց Հայաստան մխիթարելու զամէնքը։ Որ տեսաւ որ զինքը կը փառաւորեն իբրև խոստովանող վկայ, քաշուեցաւ առանձին տեղ ու կը ճգնէր։ Իսկ ժողովուրդը տեսնելով անոր հրեշտակային վարքը՝ ստիպեցին զինքը՝ և ձեռնադրել տուին եպիսկոպոս Բզնունեաց։ Որ շատ գեղեցիկ բարեկարգութեամբ ծաղկեցուց եկեղեցիները և եկեղեցականները իւր վիճակին մէջ մինչև ՚ի խոր ծերութիւն. և այնպէս մեծ շինութիւն եղաւ ամենուն ու տարածեցաւ սրբութեան անունը, մինչ զի Հոռոմները երանի կուտային Հայոց, որ այնպիսի սուրբ ունին ինչպէս որ ականատես պատմիչները գրեցին։ Այսպիսի սքանչելի սրբութեամբ փոխեցաւ և սա առ Աստուած. և Խորենայ հետ եղաւ տօնելի։

ԱԲՐԱՀԱՄ Ա. կաթողիկոս Ղրիմանու՝ որ և Պետրոս Ա. էր միաբան վարդապետ Սսայ կաթողիկոսարանին ուր ձեռնադրեցաւ եպիսկոպոս Տրապիզոնի. և յետոյ հաստատեցաւ առաջնորդ Հալեպու։ Հոն անհանգիստ ըլլալով խռովիչներուն ձեռքէն գնաց Ղրիման փոքրիկ վանք մը շինեց անունամբ Փրկչին. ուր աշակերտներ ժողվելով կրթել սկսաւ, որպէս զի ըլլան վարդապետ և քարոզիչ ուղղափառութեան։

303

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ

Ահա այսպիսի յաջողութեամբ Տեառն կազմեց իւր միաբանութիւնը, և հրովարտակով Օսմանեանց՝ հաստատուեցաւ կաթողիկոս ուղղափառ Հայոց յամի 1740. և միւս տարին գրեց թուղթ 'ի Վենետիկ առ երջանիկ Մխիթար աբբահայրն մեր և խնդրեց որ ընդունի զինքը հանդերձ աշակերտներովն իրեն Մխիթարեան միաբանութեան մէջ. նաև խնդրեց որ երկու վարդապետ Լիբանան ղրկէ կարգադրութեան համար: Իսկ գերիմաստ Մխիթար Աբբայն հասուն խորհրդով մտածեց հեռաւորութիւն և տարբեր բնաւորութիւն կրկին աշխարհաց՝ դժուար երևցաւ այս գործը. ուստի հրաժարեցաւ և այնպէս գրեց պատասխանի:

Աբրահամ կաթողիկոս 'ի 1742 գնաց Հռոմ. և խնդրեց Սրբազան Պապէն Բենեդիկտոսէ ԺԴ. որ հաստատէ իւր կաթողիկոսութիւնն: Սրբազանը սիրով կատարեց անոր բաղձանքը, և շնորհեց իրեն Պալլին իշխանութեան, գոհար մատնի և խաչ, նաև ծանրագին շուրջառ: Այսպիսի պատուով Հռոմէն դարձաւ Լիբանան. և կրեց սաստիկ ոտքի ցաւ մինչև փոխեցաւ առ Աստուած յամին 1749:

ԱԲՐԱՀԱՄ քահանայ Արդար անուամբ՝ էր Ուռհայեցի աշակերտ սուրբ Յակոբայ Մծբնայ հայրապետին. որ հրաժարեալ յաշխարհէ և յընտանեացն գնաց քաղաքէն դուրս խուցի մը մէջ փակուեցաւ կը ճգնէր. տասը տարի դուրս չելաւ. ուտելիքն ալ պատուհանէն կ'առնէր: Ծնողքը մեռնելէն ետև ամէն բաները բաժնեց աղքատներուն. բայց քաղքին եպիսկոպոսը անոր առաքինութիւնները տեսնելով ստիպեց զինքն ու քահանայ ձեռնադրեց: Որ սկսաւ քարոզել սուրբ Աւետարանը և դարձընել անհաւատները . մինչև մէկ ամբողջ գեղ մը կռապաշտներու լուսաւորեց քրիստոնէութեամբ ։ Յետոյ լսեց թէ եղբօրը դուստրն Մարիամ մեղքի մէջ ընկեր է , գնաց քարոզութեամբ շահեցաւ , ու վանք մը դրաւ . ուր ապաշխարեց Մարիամ սրբութեամբ մինչև 'ի մահ ։ Իսկ ինքը նորէն դարձաւ իւր խուցը ճգնեցաւ զարմանալի աստուածապաշտութեամբ յիսուն տարի , մինչև փոխեցաւ առ տենչալին իւր Յիսուս ։ Իրեն վարքը գրեց սուրբն Աբբայ Եփրեմ իր աշակերտակիցն . և եղաւ տօնելի քրիստոնէից ։

Սէր երանութեան, սէր անճառ փառաց ,
Վառէ բորբոքէ՝ զսիրտս հոգեսիրաց .
Թողուլ զանցաւոր՝ վայելս բերկրանաց ,
Եւ ընդհետ կրթիլ անհասանելեաց ։
Ահա քեզ արդիւնք երկնային շնորհաց ,
Հետևիլ բարւոյ՝ և անմահ կենաց .
Այս գիւտ սխրալի՝ այս գանձ անկապուտ ,
Վաճառ՝ իմաստուն վաճառականաց ։

ԱԳԱԹԱ կամ ԱԳԱԹԻ . ըստ յն . Բարի կը նշանակէ . որ էր սիկիլիացի Փալէրմօ քաղաքէն , գեղեցիկ կոյս մեծատուն , և պայծառ առաքինութեամբ և աստուածպաշտութեամբ՝ Դեկոս կռապաշտ կայսեր ժամանակը ։ Բռնեցին զսուրբն Ագաթա , և հանեցին դատաւորին առջև . որ առանց հարցընելու սկսաւ համարձակ յայտնելու իր քրիստոնէութիւնը և յանդիմանելու անոնց մոլար կռապաշտութիւնը ։ Դատաւորը զարմանալով կուսին համարձակութեանը վրայ խիստ ամըչցաւ . ուստի հրամեց որ ծեծելով սուրբ կուսին ծիծերը կտրըտեն , ու բանտը փակեն ։

Հոն երեւցաւ իրեն սուրբ Պետրոս առաքեալ ծեր բժշկի կերպարանքով, և դեղ կը մատուցանէր կուսին որ առողջանայ ։ Ագաթա պատասխանեց, թէ “Իմ դեղս Քրիստոս է. նա զիս կը բժշկէ առանց դեղի „ ։ Ըսաւ Առաքեալը. “Ես անոր աշակերտն եմ. նա՛ զիս ղրկեց քեզի „ ։ Անյայտ եղաւ տեսիլքը. և կոյսը տեսաւ որ բոլորովին առողջացեր է, ուրախութեամբ գոհացաւ Փրկչին ։ Յետոյ հանեցին բանտէն երանելին, ու քաշեցին խեցիներու վրայ, որ բոլոր մարմինը վիրաւորեցաւ. ու խոցերը կրակով այրեցին ։ Ան ատեն սոսկալի գետնաշարժութիւն մը եղաւ ու քաղաքին կէսը կործանեց, անկէց անանկ սարսափեցաւ ժողովուրդն որ բազմութեամբ վազեցին դատաւորին վրան ու կ՚ուզէին սպաննել. դահիճներն ալ դադրեցան սուրբ կոյսը տանջելէն և տարին բանտը դրին ։ Բայց նոյն գիշերը եռանդագին աղօթելով աւանդեց հոգին առ Աստուած երջանիկ սուրբ կոյսն Ագաթա. որ եղաւ հաստատութիւն սուրբ հաւատոյ և մխիթարութիւն քրիստոնէից ։ Որոնք մեծ ուրախութեամբ առին սուրբ մարմինը և մեծ պատուով դրին տապանի մէջ երևելի տեղ մը. ուր անսպակաս կ՚ըլլան հրաշք և բժշկութիւնք անոր բարեխօսութեամբն ։ Աս գերեզմանս է Կատանիայ քաղաքը Սիկիլիայի մէջ որուն վրա պայծառ եկեղեցի մը շինեցին, որ եղաւ մեծ ուխտատեղի հաւատացելոց ։

Ագաթա չքնաղ կոյսն երանելի,
Ըստ բարի անուանն եղև բարելի.
Ծարաւեալ սիրով և տեսլեամբ Փրկչին,
Ըղձանաց իւրոց եհաս կաթոգին ։

Յընծայ Պանորման քաղաք աննըման ,
Պարտէզ համարեալ աշխարհիս համայն .
Որ զհոգիահրաշն Ագաթա կուսան ,
Հաներ 'ի ձօնի յԱնմահին սեղան ։

ԱԳԱԹԱԲՈՍ կամ ԱԳԱԹՈՊՈՒՍ սարկաւագ և Թէոդուլոս ընթերցող երիտասարդն Թեսաղոնիկեցիք , եղբարք էին առաքինազարդ . որ կը փայլէին աստուածսիրութեամբ Մաքսիմիանոսի հալածանքին ժամանակը ։ Գիշեր մը երկուքն ալ տեսիլք տեսան , որ մատերնին ոսկի մատնիներ դրուած են , և անոնց քարերուն վրա գրած է իրենց նահատակութիւնը ։ Քանի մ' օրէն ետև բռնեց զանոնք Թեսաղոնիկէի Փաւստինոս դատաւորը , բանտ դրաւ . հոն ալ նոյն հաւատքով երբոր զիրենք Աստուծոյ յանձներ էին , նորէն տեսիլք տեսան , թէ նաւի մը մէջն են , ու երբոր նաւը կոտըրտեցաւ , ու նաւավարները ընկըղմեցան , իրենք ելան բարձր տեղ մը ազատեցան ։ Դատաւորը միւս օրը փորձելով տանջեց սուրբերը . բայց չկըրցաւ անոնց սիրտը պաղեցընել և Քրիստոսէն բաժնել . ուստի հրաման ըրաւ որ զանոնք ծովը նետեն ։ Իսկ նոքա ուրախութեամբ յանձն եղան աստուածային կամացն ու ծովակուր նահատակեցան ։ Որոնց բարեպաշտ ազգականները գտան սուրբ մարմինները ծովին քովն ու մեծ պատուով հանգուցին . և եղան տօնելի և հրաշագործ ։

Երկնաբերձ է ծառն առաքինութեանց՝
Ի անմահ պըտղովք՝ չըքնաղ գերազանց .
Առաքինասէրք վերճեմեալ ընդ այն
Յանհասանելին՝ ձըգտին բարձրանան ։

Նոյն և քեզ մնայ փառք գերաստիճան ,
Թէ յառաքինեաց՝ գնաս պողոտայն ·
Քանզի շնորհք Փրկչին՝ հաւասար բաշխի ,
Առնել ընդհանուրս երկնից արժանի ։

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ՝ էր հռոմայեցի ատենադպիր Տրդատ Հայոց թագաւորին , որուն հրամանով գրեց անոր պատմութիւնը գեղեցիկ ոճով հայերէն ։ Որովհետև ականատես էր Տրդատին շատ գործողութեանցը և սուրբ Գրիգոր Լուսաւորչին չարչարանացը և քարոզութեանը , բոլոր դիպուածները խիստ կարգաւորեալ գրեց · մինչ զի գովելի եղաւ ամէն պատմիչներու ։ Ղազար Փարպեցին գովութեամբ կը գրէ · Այն երանելին Ագաթանգեղոս պատմեց ստուգիւ Հայոց ազգիս և աշխարհիս դարձը ՚ի կռապաշտութենէ յաստուածպաշտութիւն ձեռամբ սուրբ նահատակին Գրիգորի ։ “Օր յարմարապէս պատմելով ծանոյց մեզ այլն բանիբուն գիտութեամբ , և լի ամենայն հրահանգիւ , ստուգաբան և յարմարագիր ՚ի պատմութիւնս „ և այլն ։ Այս գիրքը տպուեցաւ ՚ի Կոստանդնուպօլիս յամի 1709 , և ՚ի Վենետիկ ՚ի 1835 ։

Ագաթանգեղոս պերճ իմաստասէր ,
Ըստ յունականին հրեշտակ բարեսէր ·
Ծ աստուածպաշտութ՟ի լծեալ գիտութե՟ց ,
Գտաւ քարտուղար առաքինապանծ ։
Բարեբաղդ գրիչ սուրբ Լուսաւորչայ
Գործոց արութեանց՝ մեծին Տրդատայ ·
Լցեալ ՚ի հոգւոյ նոյն երանելեայ
Վերճնցաւ փառօք զերդ աստուածիմաց ։

ԱԳԱՊԵՏՈՍ Ա. սուրբ քահանայապետ Հռոմայ, Նստաւ յաթոռ սրբոյն Պետրոսի յամի 535. և իմաստութեամբ կառավարեց ընդհանուր եկեղեցին Քրիստոսի իբր տասնըմէկ ամիս. և վասն հաշտարարաց օգտին գնաց 'ի Կոստանդինուպօլիս Եւտիքականներուն ուժը կոտրելու համար: Երբոր հասաւ Ելլադա, բժշկեց անլեզու կաղ մը. և քաղաքը մտած ատենը կուրի մը աչք լուսաւորեց: Փոխեց զԱնթիմոս եւտիքեան պատրիարքը և քշել տուաւ. ու անոր տեղը ձեռնադրեց դրաւ զՄինաս առաքինի և ուղղափառ եպիսկոպոսը: Բայց նոյն ատեն հիւանդացաւ սուրբ հայրապետը և փոխեցաւ առ Աստուած 'ի 536. զոր մեծ փառօք հանգուցին 'ի տաճարն Առաքելոց. յետոյ փոխադրեցին 'ի Հռոմ. և տօնեցին ամէն եկեղեցիք:

ԱԳԱՊԵՏՈՍ Բ. Հռոմայեցի, Նստաւ յաթոռ քահանայապետութեան Հռոմայ 'ի 946, և կառավարեց խոհեմութեամբ եկեղեցին Քրիստոսի տասը տարի. ապստամբ բռնաւորները խոնարհեցուց թէ ժողովքով, և թէ իշխանաց ձեռքով: Երբոր այսպէս խաղաղութեամբ և աստուածապաշտ կարգով կը բարեկարգէր եկեղեցիները և տէրութիւնները, մահը վրան հասաւ, փոխեցաւ առ Քրիստոս 'ի 20 օգոս. 956:

Քահանայապետք պետրոսեան գահին,
Զինեցան ընդդէմ թշնամեաց խաչին.
Առ անշարժ պահել զհիմն եկեղեցւոյ,
Զոհեցին ըզկեանս 'ի սէր Աստուծոյ:
Այս էր օրինակ քաջ հօտապետին,
Տալ զանձն 'ի փրկանս, անմեղ իւր խաշին,
Հալածեալ ըզգայլս, ջոկս անըզգաստից,
Կանգնել զյաղթանակ փրկական խաչին:

ԱԳՆԷՍ կամ ԱԳՆԱՍԻԱ, ըստ յն. Ագնի՛ կը թարգմանի գառնիկ և ողջախոհ. որ էր ազնիւ կոյս հռոմայեցի պարկեշտ և իմաստուն։ Միշտ կը քարոզէր կանանց գեղեցիկ խրատներով, որ կը դառնային իրենց չար ճամբաներէն և կռապաշտութենէ։ Ուստի լսելով քաղքին իշխանը բռնել տուաւ կոյսը և կը ստիպէր որ կամ զոհէ կռոց, և կամ երթայ պոռնկատունը։ Երբոր պարկեշտ կոյսը մերժեց անօրէն հրամանը, բռնի քաշեցին տարին գարշելի պոռնկանոցը, ուր սուրբ կոյսը բազկատարած զՔրիստոս կը կանչէր իրեն օգնական։ Հոն եղած անառակ կորիճները սարսափելով դուրս փախան. մէջերնէն մէկ չար մը երբոր ուզեց մօտենալ սուրբ կուսին, մէկէն զարնուեցաւ ընկաւ մեռաւ։ Իշխանը կանչեց հարցուց Ագնեսին, թէ ինչպէս մեռաւ կորիճը. ան ալ պատմեց թէ պահապան հրեշտակս քովս էր. անոր ահէն ընկաւ մեռաւ։ Պատասխանեց իշխանը. Կը հաւատամ խօսքիդ թէ որ ողջացընես մեռելը։ Երբոր սուրբ կոյսը սկսաւ ծնրադրութեամբ աղօթել, մէկէն յարութիւն առաւ մեռելը։ Զայն տեսնելով ամէնքը զարհուրեցան։ Իսկ անօրէն իշխանը կախարդութիւն համարելով հրաման ըրաւ որ այրեն սուրբ կոյսն իբրև վհուկ։ Բայց երբոր կրակով չվնասուեցաւ երանելին, սրով գլխատեցին յամի 304։ Ութ օրէն ետև սրբուհին Ագնէս փառաւորապէս երևցաւ ծնողացն ու մեծապէս մխիթարեց, մինչև մոռցան սուգը. և սուրբ գերեզմանն ալ շատ հրաշքներ ըրաւ ուխտաւորներուն. ինչպէս որ բժշկեց զԿոստանդիա Կոստանդիանոսին դուստրը մկրտուելէն առաջ, որ մկրտուեցաւ ու շինեց փառաւոր եկեղեցի 'ի պատիւ սուրբ Ագնէս կուսին․ որ ամէն ազգի մէջ փառաւորեցաւ և տօնեցաւ, ինչպէս կը վկայէ սուրբ Հերոնիմոս ալ։

Ագնէս գառն էիր՝ զոհ եղէ Փրկչին,
Միշտ վառեալ գոլով 'ի սէր փեսային․
Ետու զամենայն՝ վասն անանց բարւոյն,
Ժառանգ եմ ահա մեծութեան անհուն։
Արդ մի՛ անխայեր՝ առ սէր Արարչին,
Փոխել զանցաւորս ընդ անանց գանձին․
Աստ առաքինեաց՝ է տանել վշտաց,
Անցանել 'ի փառս՝ անճառից կենաց։

ԱԳՐԻՊՊԱՍ Հռոմայեցի, էր փառաւոր իշխան և հիւպատոս, փեսայ եղաւ Օգոստոս կայսեր․ և այնչափ սիրելի էր, որ անոր տեղը կայսր պիտի ըլլար թէ որ չուտով չմեռնէր Քրիստոսէն 12 տարի առաջ։ Նա անուանի եղաւ երբոր Գաղղիայի մէջ մեծամեծ յաղթութիւններ ըրաւ քաջութեամբ, ու հրաժարեցաւ հանդէսներով փառաւորուելու ինչպէս որ սովորութիւն էր։ Նա հարկաւոր և փառաւոր շէնքեր շինել տուաւ Հռոմայու մէջ, որոնց գլխաւորն է Պանթէոն ամենադից մեհեանն․ որ հաստատ մնաց մինչև ցայսօր, և սուրբն Բոնիփակիոս Դ․ Սրբազան Պապն յէ․ դարուն օծեց զայն տաճար Աստուածամօրն և Համօրէն մարտիրոսաց․ որ հիմա կ՚ անուանի Ռոդօնտա, այսինքն բոլորաձև։

Ողբայ Ագրիպպաս՝ թէ հի՞մ կուրացայ,
Անշունչ դից պատուող լինել ջանացայ․
Ոչ բացի զաչս իմ հայել ընդ երկին,
Որ անդուլ պատմէ՝ ըզփառս Անեղին։

Ուսիր 'ի խնդիր լինել ճշմարտին,
Եւ մի երկրապիշ ըստ դիցամոլին.
Առաքինօրէն գործք իմաստութեան,
Քեզ չքնաղ կազմեն տաճար հոգեկան։

ԱԴԱՄ առաջին մարդն՝ ստեղծեց ամենաբարին Աստուած հողէ, անմահ հոգւով և ինքնիշխան կամօք կատարեալ ըստ պատկերի Աստուծոյ, արարչագործութե՛ վեցերորդ օրը, հոգևոր և մարմնաւոր ձիրքերով զարդարած, իմաստուն և գեղեցիկ երիտասարդ, Թագաւոր, և հայր աշխարհի. և դրաւ աստուածաշէն դրախտին մէջ, ուր կենդանիներն եկան առջևը աստուածային հրամանաւն՝ և ամենուն անուն դրաւ իմաստութեամբ։ Յետոյ Թմրութիւն մը գալով Ադամայ, առաւ Աստուած անոր մէկ կողն ու ստեղծեց Եւան և տուաւ իրեն կողակից և հարսն մաքուր. երկուսն ալ շնորհազարդ հրեշտակի նման անմեղութեամբ կը զուարճանային դրախտին մէջ անախտ և անցաւ։ Շատ չանցաւ դևը օձին կերպարանքով խաբեց ու կերցուց Եւային, բարւոյ և չարի գիտութեան ծառին արգիլած պտուղը, ուսկից որ անոնց հնազանդութիւնը փորձելու համար արգիլեր էր Աստուած՝ չուտելու։ Բայց անոնք անհնազանդութեամբ կերածնուն պէս՝ մերկացան աստուածային շնորհաց և փառաց զարդն, ու մէկէն իմացան թէ չար ըրին և մերկ են. վասն զի իրենց լուսեղէն պատմուճանն ու անմահութիւնը կորուսին։ Ուստի անէծք առին որ մեռնին ու հող դառնան, և տրտմութեամբ հաց ուտեն. յետոյ ամենագթած Տէրը յոյս թողութեան տալով իրենց հագցուց կաշիէ պատմուճան, նշան ապաշխարութեան ։ Նաև զօրացուց Եւային սիրտը, իմացընելով որ իւր անարատ դուստրը Մարիամ Աստուածածին ծնանելով զՓրկիչն աշխարհի՝ պիտի ջախջախէ օձին գլուխը, որ է սատանան ։ Այս պատճառաւ Ադամ Եւային անունը կեանք դրաւ, որ է կին և մայր ամենայն մարդկային ազգի ։

Ադամ ու Եւայ անկէց ետև անարժան ըլլալով անմահ դրախտին, մէկէն դուրս վռընտուեցան և բնակեցան դրախտին դիմացը միշտ լալով իրենց խեղճութիւնը ճշմարիտ ապաշխարութեամբ ։ Եւայ քիչ ատենէն ետև ծնաւ իր անդրանիկ որդին Կայէնը, որ ստացուած կը նշանակէ ․ իսկ երկրորդ որդին երբոր ծնաւ, անունը դրաւ Աբէլ կամ Հաբէլ, այսինքն սուգ կամ ունայնութիւն ։ Որ իրաւ մեծ սուգ և տրտմութիւն եղաւ ծնողացը, երբոր Կայէն չար նախանձով զարկաւ սպաննեց զանմեղ Աբէլը որ կուսութեամբ նահատակուեցաւ ։ Բայց Աստուած մխիթարելով զանոնք տուաւ ուրիշ արդար որդի մը Սէթ անուամբ, որ եղաւ ընտիր և աստուածապաշտ ինքն և զաւակներն, մինչև կոչեցան որդիք Աստուծոյ ։ Նախաստեղծք այսպիսի աստուածպաշտութեամբ և ապաշխարութեամբ անցուցին իրենց երկար կեանքը ․ մեռաւ Ադամ յամի աշխարհի 930 ․ և թաղեցաւ Գողգոթա լեռան վրա ըստ վարդապետաց ոմանց ։ Թողին աշխարհիս վրա շատ զաւակներ անհամար թոռներով ․ որոնց սորվեցուցին ամէն աստուածպաշտութեան կարգերը, օրէնքները և պատուիրանքը ինչպէս կը վկայեն սուրբ Հարք ։

Քանի՞ գերապանծ՝ փառք նախաստեղծից,
Օ խա՞րդ դառնաղէտ՝ յետ պատուհասից.
Թագաւոր երբեմն իշխան աշխարհի,
Այժմիկ մահապարտ՝ և ախտից գերի,
Լացէ՛ք զհեգն Ադամ՝ զհայր ձեր ողբալըն,
Պատճառ կորստեան՝ սերնդոց բնաւին.
Հեղէ՛ք ընդ նմին և սուրբ արտասուս
Որ զախտից 'ի ձեզ շիջուցանէն բոյս:

Ադդէ սուրբ հայրապետն էր Եդեսացի մետաքսագործ, և խոյրարար մեր Աբգար Թագաւորին. երբոր Թադէոս առաքեալը Եդեսիա գնաց, Ադդէ անոր աշակերտելով մկրտեցաւ և ձեռնադրեցաւ եպիսկոպոս. և եղաւ նորա փոխանորդ՝ հովիւ Միջագետաց Հայոց և Ասորւոց, և էր առաքելանման քարոզ բանին Աստուծոյ. բոլոր այն կողմերը լուսաւորելով ծաղկեցուց մեծամեծ սքանչելագործութեամբ, մանաւանդ Աբգար Թագաւորին կենդանութեան ժամանակը: Բայց անոր մահուանէն ետև՝ որդին Անանուն, և քեռորդին Սանատրուկ դարձան կռապաշտ եղան, ու մեծ հալածանք հանեցին Ադդէին և եկեղեցւոյ դէմ:

Անանունն երբոր կը մտածէր, որ դաստառակը կամ Փրկչին պատկերքը քաղքին դրանը վրայէն վերցընէ, ու կուռք դնէ անոր տեղը, Ադդէ սուրբ հայրապետը գիշերով գնաց կանթեղ կախեց սուրբ պատկերքին առջին ու կղմինտրով ծածկեց հաւասարեց պատին. որ շատ ժամանակէն ետև յայտնուեցաւ հրաշքով. և դրուեցաւ Ուռհայի Աստուածածնայ եկեղեցին: Անանուն անօրէն արքայն հրամայեց սուրբ Ադդէի, որ իրեն ոսկեզարդ գլխանոց մը շինէ ինչպէս որ հօրը խոյրը կը շինէր:

Ան ալ պատասխան տուաւ թէ իմ ձեռքս չի կրնար գլխանոց շինել անարժան գլխու որ Քրիստոսի երկրպագութիւն չընէր ։ Թագաւորը կատղելով խրկեց զինակիրն որ երբ սուրբը աթոռը բազմած քարոզ կուտար զարկաւ սրով կտրեց ոտքը ․ իսկ երանելին մէկէն աւանդեց հոգին ։ Բայց անիրաւ թագաւորը շուտով պատժուեցաւ ․ վասն զի երբոր պալատին մէջ մարմարիոն սիւն մի կանգնել կուտար՝ ընկաւ խորտակեց ոտքն , և չարաչար զինքն ալ սատկեցուց ։

Արդար պատուհաս պատրաստ կայ չարին ,
 Թէ՛ աստ և թէ՛ անդ՝ վաղ հասցէ նըմին ․
 Ոչ յարքայից ակն՝ ածէ և վեհից ,
 Ոչ գիտնականաց՝ և ոչ՝ի ձոխից ։
Եթէ չես արդար՝ ըստ առաքինւոյն ,
 Քեզ ոչ ինչ նպաստէ նախնեաց պետութի ․
 Թէ չըկաս պատկառ բարոյականին ,
 Երբ զԱնանուն մատնեսցիս չարին ։

ԱԴՈԿՏՈՍ էր փառաւոր դուքս Եփեսոս քաղաքին , Մաքսիմիանոս կայսեր ժամանակը ․ Կալիսթինէ անունով դուստր մը ունէր այնչափ գեղեցիկ , որ թագաւորն ուզեց իրեն կին առնելու ։ Բայց հայրը չուզեց կռապաշտի տալ իր անարատ զաւակն որ չըլլայ թէ հաւատքէ հանէ ․ հապա ծածուկ փախուց արևելք ։ Երբոր լսեց թագաւորը՝ կատղելով իշխանութենէ ձգեց զԱդոկտոս և ամէն ապրանքն առաւ ու բոլոր ընտանեօքն աքսորեց Միջագետաց աշխարհը ։ Եւ հոն Աղեքսանդրոս իշխանին գրեց որ զԱդոկտոսը սաստիկ տանջէ , որպէս զի ուրանայ հաւատքը ։ Բայց նա որչափ որ տանջանք տուաւ քաջ նահատակին , ճար չեղաւ որ ուրանայ, մինչև գլխատմամբ նահատակեցաւ երանելին. զոր հանգուցին կինն ու միւս դուստրն։ Իսկ Կալիսթինէ դուստրն երիտասարդի ձևով հալածական շրջեցաւ մինչև Մաքսիմիանոսի մահը. երբոր Լիկինոս թագաւորեց, որուն թագուհին էր քրիստոնեայ և քոյր մեծին Կոստանդիանոսի, Կալիսթինէ գնաց անոր ձեռքովը ետ առաւ հօրն ապրանքը, և Միջագետէն բերաւ մայրն ու քոյրը, նաև սուրբ հօրը նշխարքն տարաւ Եփեսոս պատուով գերեզման դրաւ, որ եղաւ ուխտատեղի. ինքն ալ հոն ծառայելով սրբութեամբ հանգեաւ 'ի Քրիստոս, և թաղուեցաւ հօրը գերեզմանին մէջ. նոյնպէս մայրը և քոյրը, զորս միատեղ կը տօնեն Յոյնք։

Տեսանե՞ս ըղգործ սիրոյ երկնային,
Իբր առ ոչինչ գրէ՝ զփառս անցաւորին.
Մրցի ոգորի ընդ բռնակալաց,
Յաղթէ ժառանգէ՝ զբարին աննիաղ։
Այսու օրիորդք՝ վեհ հանդիսացան,
Լքին զմարմին՝ գեր 'ի վեր սլացան.
Թագ 'ի գլուխ կապեալ զանմահ փեսային,
Եղեն արժանի սուրբ առագաստին։

ԱԴՐԻԱՆՈՍ Սպանիացի, էր Կայսր Հռոմայ և ազգակից Տրայիանոսի, որուն յաջորդեց յամի 117, ու շատ զօրացաւ թշնամիներուն դէմ, և տուրքերը թեթևցուց։ Թէպէտ հալածանք հանեց քրիստոնէից դէմ. բայց Արիստիդեայ քրիստոնեայ փիլիսոփային գրուածովը շուտով դադրեցուց, և կը փափաքէր որ զՓրկիչը անցընէ չաստուածներուն կարգը պատուելու համար։ Շատ շինութիւններ ըրաւ Աթէնք և ուրիշ տեղեր · Հրէից ալ շինել տուաւ կործանած Երուսաղէմը · որոնք երբոր նորէն ապստամբեցան, անանկ չարաչար զիրենք պատժեց, որ և ոչ թող կուտար որ Երուսաղէմ մտնեն և հեռուէն ալ նային ։ Անգղիոյ մէջ մեծագործ պարիսպ մը կանգնեց բարբարոսներուն դէմ ապահովութեան համար · սիրող ալ ըլլալով առաքինի գործոց և ուսմանց, կը խնամէր գիտունները, և գրեց քիչ մը բանաստեղծութիւն ծանր հիւանդութեան ժամանակը, ուր կը յիշէ հոգւոյն անմահութիւնը · և մեռաւ յամի 138 ջրգողութեամբ վաթսուներկու տարուան · և իրեն յաջորդ ընտրեց Անտոնինոս Պիոս իմաստասէրն ։

Թէպէտ իմաստուն թէպէտ խորագէտ,
  Այլ քանզի շնորհացն Աստուծոյ անգէտ,
  Ադրիանոս ոչ ետես լոյս կենաց,
  Այլ 'ի խաւարի դից եկաց մընաց ։
Ո ինչ օգուտ գիտել՝ զմեծութիւն վեհին,
  Եւ ոչ հետևիլ պատգամաց նորին ·
  Նա և դևք անգամ՝ գիտեն և դողան,
  Այլ զուրկ 'ի շնորհաց՝ տանջին յաւիտեան ։

ԱԴՐԻԱՆՈՍ պատուական վկայն Նիկոմիդացի էր կռապաշտի զաւակ, բայց իր կինն Անատոլա՝ քրիստոնէ ։ Մաքսիմիանոսի հալածանքին ատենը զինուորաց վերակացու դրուած ըլլալով, երբոր կը տեսնար քաջ նահատակներուն զարմանալի համբերութիւնը, շատ կը զարմանար՝ հարցուց տեղեկացաւ, թէ ինչ յուսով այս անտանելի տանջանքներուն կը համբերեն ուրախ սրտով ։ Եւ երբ իմացաւ և սորվեցաւ ճշմարտութեան ճամբան, հաւատաց

Քրիստոսի, ու գրել տուաւ իւր անունը հալածեալ քրիստոնէից թուոյն մէջ, և անոնց հետ ելաւ համարձակ կայսեր առեանն ու բանտը մտաւ: Երբ լսեց բարեպաշտ կինը՝ ուրախութեամբ վազեց գնաց բանտը, և համբուրելով շղթաները երանի կուտար երկանը քաջալերելով, որ մինչև վերջը համբերէ արիութեամբ:

Երբոր քիչ օր մնաց մահուան վճիռն ելլալու Ադրիանոս իրեն տեղը երաշխաւոր տուաւ բանտապետին ու գնաց տուն՝ կնկանը իմաց տալու, որ գայ իր նահատակութիւնը տեսնէ ինչպէս որ կը փափաքէր: Բայց կինը կարծելով թէ նա բանտէն փախեր է, դուռը փակեց ըսելով թէ չեղայ արժանի կոչուելու կին մարտիրոսի, այլ ուրացողի: Իսկ երբոր իմացաւ գալուն պատճառը՝ ուրախանալով ներս առաւ, ու գրկախառնութեամբ ողջունելով մէկզմէկ, գնացին միատեղ բանտը: Ասոր կրկին հարցմունքէն ետև այնչափ ծեծ տուին Ադրիանոսի, մինչև միսերը պատըռտեցան ու աղիքները թափեցան, և նորէն բանտը ձգեցին. նաև արգիլեցին որ կին մարդ բանտը չերթայ: Բայց Նատալիա մարդու զգեստով կ'երթար կը դարմանէր վէրքերը:

Երբոր դահիճները պիտի խորտակէին սուրբերուն ծունկը, Նատալիա աղաչեց որ Ադրիանոսէն սկսին, և ինքը բռնեց ոտքերն որ ջարդեցին սրունքը և այսպիսի քաջութեամբ երանելին Ադրիանոս աւանդեց հոգին քսանուիրեք ընկերներով, յամին 320: Իսկ երանելին Նատալիա շատ հալածանք քաշելէն ետև վասն Քրիստոսի, երկու անգամ արժանի եղաւ տեսնելու տեսլեամբ զսուրբն Ադրիանոս, որ զինքը մխիթարեց ասելով. Ո՜վ մարտիրոսաց, շուտով պիտի ըլլաս ինծի պսակակից երկնային փառաց մէջ ։ Եւ այնպէս աղեղաւ · քիչ ատենէն վերջը անոյշ քուն ըլլալով աղախինն Քրիստոսի փոխեցաւ առ Աստուած պայծառ դիմօք , և թաղուեցաւ սուրբ վկաներուն հետ մէկտեղ ։

Ահա ճշմարիտ պատկեր դիւցազանց ,
Ի մահ և 'ի կեանս անքակ լըծակցաց ·
Առաքինիք վէհք հըզօր յաղթականք ,
Մարմնոյ , աշխարհի , ւ՛ աշխարհակալաց ։
Սէր անցաւորիս չեղև ձեռընհաս ,
Իստնանել սրտիցըն սրբասիրաց ·
Որք 'ի սէր վառեալ յաւիտենական ,
Յերանելեաց կայս յաւերժ միացան ։

ԱԴՐԻԱՆՈՍ Ա. Հռոմայեցի նստաւ գլուխ ընդհանուր եկեղեցւոյ 'ի 772 · և գումարել տուաւ Նիկիոյ Բ · ժողովը պատկերամարտից դէմ · նաև հաստատեց վճիռ ընդդէմ նոյն հերետիկոսաց 'ի 787 ։ Այնչափ մեծամեծ առաքինի գործքերով զարդարեց զեկեղեցին Քրիստոսի քսանըչորս տարի , մինչ զի մեծն Կարոլոս և բոլոր աշխարհ անմխիթար լացին այս մեծահամբաւ հայրապետիս մահը յամին 795 · և տապանագիրն ալ յօրինեց մեծն Կարոլոս ։ Այս հայրապետս շատ իմաստալից նամակներ գրած ունի ուղղափառութեան վրա ։

ԱԴՐԻԱՆՈՍ Բ. Հռոմայեցի , յաջորդեց Նիկողայոս պապին 'ի 867 · և երկու տարիէն ետև Կոստանդնուպօլսոյ Բ · ընդհանուր ժողովը ընել տուաւ Փոտ պատրիարգին դէմ · որ Յոյն ազգը բաժնեց Հռոմայի աթոռէն և նզովեցաւ իր ազգէն ալ ։ Իսկ սրբազան պապն քաջութեամբ կառավարեց ընդհանուր եկեղեցին հինգ տարի, և փոխեցաւ առ Աստուած ութսունըմէկ տարուան. ունի գրած շատ պիտուական ողջունագրեր:

ԱԴՐԻԱՆՈՍ Գ. Հռոմայեցի, ընտրեցաւ գլուխ սուրբ եկեղեցւոյ 'ի 884. և տեսնելով Փոտին խռովութիւնը նզովեց, որպէս զի զգատանայ և Յունաց հերձուածը վերցընէ: Ապա երբոր Գաղղիա կ'երթար թագաւորին խընդրելովը, ճամբան վախճանեցաւ բնական մահուամբ և բարեսէր անուամբ 'ի 885:

ԱԴՐԻԱՆՈՍ Դ. Անգղիացի, ընտրեցաւ քահանայապետ Հռոմայ, որ առաջ էր վանական կանոնիկոս. երբոր Հռոմ գնաց՝ Եւգինէոս Գ. հայրապետն շնորհեց իրեն կարդինալական պատիւ և եպիսկոպոսութիւն ու ղրկեց նուիրակութեամբ Շուետաց և Դանեաց աշխարհը: Ուր տեղ շատ անհաւատ բարբարոսներ դարձուց յաստուածպաշտութիւն և խիստ անուանի եղաւ. մինչ զի երբ Հռոմ դարձաւ՝ յաջորդ ընտրեցին Անաստաս պապին յաթոռ առաքելապետին 'ի 1154: Արիութեամբ դէմ կեցաւ հերետիկոսներուն և ապստամբներուն, ու խոնարհեցուց զամէնքը. և փոխեցաւ առ Քրիստոս 'ի 1159. կան ասոր գրած իրեք կոնդակները:

ԱԴՐԻԱՆՈՍ Ե. Ճենուացի, յաջորդեց Իննովկենտիոսի Ե. որբազան պապին 'ի 1276. բայց մէկ քանի մը դեռ ձեռք չզարկած և ոչ օծութեան հանդէսն սկսած սաստիկ հիւանդ ընկաւ: Ան ատեն երբոր մեծամեծներն իրեն շնորհաւորելու կ՚երթային կ՚ըսէր թէ․ "Լաւ էր որ զիս առողջ կարդինալ տեսնէիք քան կիսամեռ պապ"։ Եւ այսպէս վախճանեցաւ երեսունը եօթը օրէն ետև և մեծ տրտմութիւն բերաւ ամենուն։

ԱԴՐԻԱՆՈՍ Զ․ Հոլանտացի, մեծանուն իմաստութեամբ և առաքինութեամբ հաստատեցաւ քահանայապետ Հռոմայ ՚ի 1522․ որ առաջ վարժապետ եղած էր Կարոլոսի Ե․ կայսեր, և յետոյ աւագ կարդինալ և արժանաւոր յաջորդ եղաւ սրբազան պապին Լևոնի Ժ։ Շատ բարենախանձ ըլլալով մեծագոյն ջանքով աշխատեցաւ հերձեալները շահելու՝ մանաւանդ չարասէր Լութեր աղանդապետը։ Նաև երևելի քարոզիչներ ալ ղրկեց Ամերիկա՝ որ վայրենիները հաւատքի բերեն․ և կրօնասէր անձանց մեծ պատիւ կուտար, իսկ Թուլահաւատները կը պատժէր․ և սովոր էր ըսելու, "Եկեղեցիք քահանաներով պէտք է զարդարուին, և ոչ քահանայք եկեղեցիներով"։ Յետ կառավարելոյ զընդհանուր եկեղեցին իբր երկու տարի, վախճանեցաւ և թաղեցաւ փառօք յեկեղեցի սրբոյն Պետրոսի։

Դժնեայ զարշ հերձուածք չարասէր անձին
 Ի խոր վիհ զմարդիկ խարդաւանեցին․
 Օցտեալք ինքնահաճ՝ յանսըխալ գլխոյն
 Կորեան անգըլուխք առ չար բանսարկուն։
Փոտ հերձող դաշանց՝ և եկեղեցւոյ
 Մեհանայ տենչայր՝ ըստ մոլեալ ոգւոյ,
 Կորոյս զմեծութիւն ազգին և ըղձս,
 Յիւրոց ւ՚ օտարաց ընկալաւ նզովս։

ԱԶԻՈՍ սքանչելագործ նահատակն, էր Իսաւրացի զօրական Լիկինոսի կայսեր. տեսնելով քրիստոնէից հալածանքները՝ քաշուեցաւ լեռը կը ճգնէր մեծ առաքինութեամբ, մինչև առաւ Յիսուսէն շնորհք բժշկութեան։ Բայց արքայազուն որսորդները տեսնելով զինքը ճանչցան, ու գնացին Դիոկղետիանոսին պատմեցին. ան ալ հարիւրյիսուն զօրական ղրկեց որ բերեն Ազիոսը։ Իսկ նա անոնց քարոզելով ճըշմարտութիւնը ջուր բղխեցուց ճամբուն վրա ու դարձուց զանոնք քրիստոնեայ ըրաւ։ Ուստի թագաւորը զամէնքը մատնեց Ակուիղինոսի եպարքոսին ձեռքը, որ տարաւ սուրբերը Պոնտոս. նախ Ազիոսը կախեց մազերէն ու երկըթէ ճանկով քերել տուաւ և ձգեց բանտը։ Հոն երևցաւ իրեն Տէրն և ողջացուց վէրքերը. յետոյ կրակը ձգեցին, երբոր անկեց ալ անվնաս ելաւ, հաւատացին եպարքոսին կինն ու դուստրը և անուանեցան Պեղագիա և Թէոդոսիա։ Անոր համար դատաւորը միկէն կտրել տուաւ գլուխնին թէ անոնց, թէ Ազիոսին, և թէ հարիւրյիսուն զօրականաց։ Իսկ Թադէոս եպիսկոպոս Սինոպ քաղաքին գնաց ժողվեց նշխարքները հանգուց պատուով. և երբ Ազիոսի տապանէն հրաշքներ եղան՝ հաւատացին տասուերկու զօրականք ու նահատակեցան սրով։

Բամբէ գերիմաստ մտաց երջանկին,
Փոխէ զերկրաւորս՝ ընդ երկնաւորին.
Սայր մի համբերեալ հրձուի անվախճան,
Իսպառ անմահից՝ լուսեղէն յարկին։

Ագիոս ձայնէ քե՛զ ադամածին ,
Ո՞ւր կաս , Թո՛ղ զիս՝ հայեա՛ց 'ի վարս իմ,
Ե՛ս լքի համայն զիղձ մարմնականաց ,
Եւ զաստուածային գտի զանծախ գանձ ։

ԱԹԱՆԱԳԻՆԷՍ , էր եղբայր Մարիամու սըրբասէր ամուսնոյն մեր սուրբ Լուսաւորչին՝ Սեբաստիայի կողմէն . որ 'ի մանկութենէ մնեալ էր առաքինութեամբ և իմաստութեամբ ։ Որուն բարի անունը երբոր լսեց Սեբաստիայի եպիսկոպոսը՝ առաւ իր քովը , քահանայ ձեռնադրեց ու դրաւ քորեպիսկոպոս և իրեն աթոռին օգնական ։ Իսկ նա փառաւորապէս կատարելով իւր պաշտօնը շատ անհաւատ դարձուց , և ծաղկեցուց եկեղեցական կարգերը ։ Գործեց մեծամեծ հրաշքներ , սպաննելով ահագին վիշապ մը և ազատելով բերնէն մանուկ մը ։ Ուստի Սեբաստիոյ եպիսկոպոսը տուաւ իրեն եպիսկոպոսական իշխանութիւն . անկէ ետև Աթանագինէս շինեց նահատակաց վկայարաններ ու սուրբ նշխարքնին հանգուց փառօք ։

Իր համբաւը հասնելով Դիոկղետիանոսին ականջը , հրաման հանեց որ նահատակեն զերանելին , երբոր խնդրակները գնացին որ զինքը բռնեն , ինքը մեծ պատուով հարկինք ըրաւ իրենց ։ Վերջը գնաց անոնց հետ Սեբաստիա , հոն իր Արիստոն աշակերտը նահատակեցին . Իուեգինոս աշակերտն ալ Կեսարիա սպաննեցին . իսկ Սևեռիանոս մէկալ աշակերտը հաւատքն ուրացաւ և մատնիչ եղաւ սուրբ վարդապետին ։ Բայց դատաւորը որչափ ջանաց չի կրցաւ թուլցընել սուրբին միտքը , անոր համար կրակով այրել տուաւ զանիկայ ։ Իսկ նշխարքն անվնաս հանեցին կրակէն , որ վերջը սուրբ

Լուսաւորիչ խնդրեց ու առաւ սուրբ Ղևոնդ հայրապետէն, և բերաւ հանդուց Հայաստան սուրբ Յովհաննէս Մկրտչին նշխարքին հետ մէկտեղ։ Ասոր համար կրկին անգամ յիշատակը կը կատարենք Սուրբ Աթանագինէսին. և ամէն ազգք քրիստոնէից ալ կը տօնեն։

Հոգեշարժ տաւիղ Աթանագինեայ,
 Ձայնէ հետևել՝ յերկնից պողոտայ.
 Լքանել զորկանս՝ երկնայնոյն 'ի սէր
 Հրճուիլ յարաժամ ըղձանօք առ տէր։
Այսու երանեալք՝ գերամբարձ դասն,
 Որանց դժոխոց դիւաց յաղթական.
 Հարին փշրեցին՝ զէն բռնակալաց,
 Ի կաճառս երկնից չքնաղ թևացան։

ԱԹԱՆԱՍ կը Թարգմանի անմահ, որ էր հայրապետ Աղեքսանդրիոյ՝ ծնեալ յԱղեքսանդրիա յամի 295, և մանկութեան ժամանակը նուիրեցաւ Աստուծոյ ու առաքինութեամբ և բարի վարքով մեծցաւ։ Աղեքսանդր սուրբ հայրապետը օր մը տեսաւ որ Աթանաս մանուկը ընկերներուն հետ խաղալու ատեն եպիսկոպոս ձևացեր էր ու ձեռնադրութիւն կընէր. իմացաւ անոր հոգւոյն եռանդը, առաւ զինքը հայրապետանոցը, ուր զարգացաւ իմաստութեամբ և սրբութեամբ։ Ապա եղաւ գրագիր և սարկաւագ սուրբ հայրապետին՝ յաջողակ ըլլալով թէ խօսքով և թէ գրով։ Իսկ երբոր Աղեքսանդր հայրապետն գնաց 'Նիկիոյ սուրբ ժողովքը, Աթանաս հոգւով սրբով լեցուած գնաց մէկ տեղ. և եղաւ անյաղթելի պաշտպան ուղղափառութեան Արիոսի դէմ, որ խայտառակելով նզովեցաւ։ Այլ սուրբ Աթանաս զանազան երևելի գործքեր ըրելէն ետև՝ յաջորդ նստաւ Աղեքսանդրու պատրիարգութեան աթոռը. և շատ քաջութեամբ պայծառացուց ուղղափառ հաւատքը հերետիկոսներուն դէմ : Որ թէպէտ շատ հալածանքներ ալ քաշեց արիոսեան և կիսարիոսեան հերձուածողներէն. սակայն զարմանալի գործքերով և հրաշքներով ամենուն յաղթեց ու փառաւորեցաւ : Գրեց շատ աստուածխնամ ճառեր և նամակներ. ապա մեծ արդեամբք և սրբութեամբ վախճանեցաւ իր աթոռը Աղեքսանդրիա յամի 373 : Ժամանակէ ետև սուրբ Աթանասին մարմինը փոխադրեցին Կոստանդինուպօլիս, և անկէց Վենետիկ, ուր կայ մինչև հիմա պատուով :

Անմահ, գերազանց, բանական հոգի,
  Վասն անմահ կենաց՝ արարչագործի.
  Առաքինապանծ գործովք գեղազան,
  Ձգիլ 'ի բարւոյն յերջանիկ վախճան :
Մեծ է մարդ և ոչ էակ փանաքի,
  Թէպէտ և յերկիր խոնարհ պանդխտի.
  Եթէ պահեսցէ վառ ըղձրագ բանին,
  Վեհանայ 'ի կարգ անմահականին :

ԱԹԱՆԱՍ եպիսկոպոս Տարօնի այլ առաքելական՝ էր Վաղերիանոս անօրէն կայսեր ժամանակը : Ան՝ ատենն հոն էր Խանթուշ կոյս դուստր կռապաշտի, որ գնաց երկու ծառայով առ սուրբն Աթանաս մկրտուելու համար : Իսկ սուրբը հրեշտակին ազդեցութեամբն գնաց անոր առաջը, ու խաչակնքելով ջուր բղխեցուց, և անով մկրտեց զԽանթուշը, որուն երևցան երկու հրեշտակք ու պայծառ հանդերձ հագուցին ։ Երբոր եպիսկոպոսը հաղորդութիւն կուտար կուսին, ծառաներն ալ տեսնելով քովը փառաւոր տիկին մը գլուխը պսակով և խաչով իրենք ալ հաւատացին և մկրտեալ՝ անուանեցան Խարխիմոս և Նեոփիտոս ։

Իսկ երանուհին Խանթուշ շատ հալածանք քաշելով առանձնացաւ լեռը, և հոն առաքինութեամբ կը ձգնէր քանի չորս տարի. ուր սքանչելի սրբութեամբ փոխեցաւ առ Աստուած. և չորս տարիէն ետև յայտնեցաւ հրաշքով. և տապանին վրայ շինուեցաւ մատուռ և վանք ։ Յետոյ սուրբ եպիսկոպոսն Աթանաս մատնեցաւ կայսեր ձեռքը. և գլխատեցաւ վասն անուանն Քրիստոսի, ու սուրբ մարմինը մեծ պատուով դրին արծըթէ տապանի մէջ ։ Նմանապէս տանջեցան հաւատքի համար Խարխիմոս և Նեոփիտոս. ու որով կատարեցան 'ի Տէր ։

Ահա այս է գործ՝ աստուածասիրին,
Հոգալ և զընկերս և ըղշահ նոցին.
Յորմէ պսակ չքնաղ պէսպէս շնորհաց,
Ինքեան և այլոց՝ յօրինի անանց ։
Առաքինութիւն սուրբ Աթանասայ
Գեղափայլ պսակ՝ հիւսեաց Խանթուշայ
Հանեալ 'ի ծոցոյ՝ դիւամոլ զարմին,
Պանծացոյց փառօք 'ի լոյսն երկնային ։

ԱԹԵՆԱԳՈՐԱՍ Աթենացի փիլիսոփայ, էր Բ. դարուն. որ զարմանալով քրիստոնէից քաջութեանը վրայ՝ սկսաւ հետաքրքրաբար կարդալ Աստուածաշունչը, և անկէ լուսաւորուելով հաստատ հաւատաց Քրիստոսի, ու գրեց ջատագովութիւն սուրբ հաւատոյ առ խմաստասէր կայսրն Մարկոս Օրեղիոս. հաստատեց նաև զյարութիւնն մեռելոց պղատոնական իմաստասիրութեան պատճառներով ալ: Նա այսպէս փակեց անհաւատ հակառակողներուն բերանը. և իրեն անունը փառաւորեցաւ պաշտպան ըլլալով անսուտ ճշմարտութեան:

Աթենագորաս ոգէ յարաժամ,
Մի ծածկեր ընաւ զլոյս ճշմարտութեան,
Քանզի արևու մթագնիլ չէ մարթ,
Ոչ է և խափան ինչ գտցի զիմամարտ:
Հաւատք ճշմարիտ՝ են պայծառ արփի,
Ի լոյս անաղօտ՝ միշտ անժխտելի,
Ոչ է խաւար մտաց՝ ըստուեր անկանի,
Նա կայ յիսկութեան՝ պայծառ գերարփի:

ԱԹԵՆԱՍ · Տ · ՊԱԼԼԱՍ :

ԱԼԱՓԻՏԷ Կոռնելիոս Պետրոս՝ էր Գերմանացի իմաստուն վարդապետ Յիսուսեան, լեզուագէտ և բանասէր. որ եղաւ մեծահամբաւ մեկնիչ բոլոր սուրբ գրոց, և երևելի վարժապետ Հռոմայի Լուանիայի դպրոցներուն: Ասոր գրեանքը լեցուն են պանծալի վարդապետութեամբ, և մեծ յարգ ունին. մանաւանդ բոլոր աստուածաշունչին մեկնութիւնը. որ տպագրեցաւ 'ի 1698. իսկ ինքն վախճանեցաւ սրբութեամբ եօթանասուներմէկ տարւան. և թաղեցաւ առանձին տեղ պատուով 'ի 1637:

Սովացեալ գրեան՝ քաջ Ալափիտին,
Քեզ լիցի խրախոյս, մանուկ քաջածին.
Գոցխս մեծայարգ՝ օրէնակագիր
Ոչ է զժամանակ քաջ՝ արկանես 'ի կիր:

Չեղև իմաստնոց սահմանել զգին ,
Ժամուց բոպէից՝ զի են իսկ անգին .
Չիք ազատութիւն՝ դրուատից արժան ,
Թէ ոչ որ մասանցն է ժամանակին ։

ԱԼԷՔՍ Ա. Կոմնենոս՝ էր կայսր Յունաց , որուն Հագարացւոց դէմ յԵրուսաղէմ քաջագործութեցը համար , զօրքը ձգեց զՆիկեփորոս Թագաւորն ու զինքն ընտրեց կայսր 'ի 1080 . որ շատ զօրացաւ Սկիւթացւոց դէմ և յաղթող եղաւ շատերուն . նաև շատ ջանաց որ մեր ազգը Հռոմայ հետ միաբանեցընէ , ուստի Գրիգոր վկայասէր կաթողիկոսը գնաց իրեն խոստացաւ որ կամաց կամաց կատարէ կամքը , և անանկ հանդարտեցուց . և հաստատեց իշխան Տարսոնի Ներսէսի Լամբրոնացւոյն պապուն հայրը ։ Նոյնպէս անկեղծ մտքով ջանաց որ միաբանէ Յոյները լատին եկեղեցւոյն հետ , և շատ ընծաներ ղրկեց 'ի Հռոմ և Լատինացւոց վանքերուն . միշտ աստուածաշունչ կը կարդար . և մեռաւ եօթանասուն տարեան 'ի 1118 . իր աղջիկն Աննա եղաւ ուսումնասէր գրոց աշակերտ . որ գրեց հօրը պատմութիւնը ։

Աշխարհակալին՝ չեղև ինչ յարգի ,
Քան ըզքրիստոնեանց՝ միութեան հոգի .
Մի են հաւատք մի հօտ հովուի միոյ
Հարկ է մի լինել՝ սուրբ եկեղեցւոյ ։
Թէ յամենեսին այս տենչ վառեալ էր ,
Ո՞ր եկեղեցի՝ պառակտեալ լինէր .
Թէ անձնիւր պահէր՝ զպատուէր տիրական ,
Հանուրք փայլէին սիրով միաբան ։

ԱԼԵՔՍԻԱՆՈՍ կամաւոր աղքատ՝ էր Հռոմայեցի , միամօր որդի բարեպաշտ ծնողաց Եւփիմիանոսի իշխանին և Ագլայիսի տիկնոջ, Արկադէոս և Ոնորիոս կայսերաց ժամանակը։ Որ մանկութենէն բարեսնունդ և աստուածասէր ըլլալով զարդարուեցաւ թէ՛ ուսմամբ և թէ՛ առաքինութեամբ, և սիրելի եղաւ կայսեր և հայրապետին, և ամէն Հռոմայի մեծամեծաց։ Երբոր տասնըութը տարուան եղաւ երանելին՝ ծնողքն կայսեր ստիպելովը ակամայ ամուսնացուցին· բայց ինքն Աստուծոյ սիրով վառուած ըլլալով մեծ տրտմութեան մէջ էր այս բանիս համար։ Ուստի հարսնիքը չլմընցած ելաւ ծածուկ հօրը տնէն և քաղաքէն փախաւ գնաց դէպ 'ի յարևելս աղքատի կերպով ու հասաւ Ուռհայ քաղաքը, և հոն Աստուածամօր եկեղեցնայ դուռը կը մուրար աղքատներուն հետ միատեղ։ Ուր գնացին զինքը փնտռող ծառաները, իրեն ողորմութիւն ալ տուին առանց ճանչնալու· վասն զի մազեղէն քուրձերու մէջ անանկ կը ճգնէր խիստ պահքով, որ չէր ճանչցուեր։ Հոն երբոր տասը տարիէն ետև յայտնի եղաւ սրբութիւնը հրաշքներով՝ փախաւ անկէց գնաց Լաւոդիկէ· անկէց ալ երբոր Տարսոն կը փախչէր նաւով, աստուածային կամօք սաստիկ քամի մը ելաւ, և տարաւ հանեց զինքը մինչև Հռոմ։ Ան ատենը յանձնելով զինքն Աստուծոյ գնաց հօրը դուռը անծանօթ երեսով· ուր տասնըեօթը տարի ճըգնեցաւ սքանչելի սրբութեամբ· մինչև վերին յայտնութեամբ իմացաւ մեռնելուն օրը, և գրեց բոլոր վարքն, ու ձեռքին մէջ առած ջերմ եռանդ աղօթքով աւանդեց սուրբ հոգին։ Բայց Աստուած փառաւորել ուզելով երանելին՝ դղրդիւն մը հանեց քաղաքին մէջ· եկեղեցնայ մէջ ալ ձայն մը լուեցաւ, թէ խնդրեցէ՛ք զայրն Աստուծոյ Եփիփանոսի տունը ։ Մեր գնացին Թագաւորը և Հայրապետը ․ տեսան որ սուրբին մարմինը լուսով կը ճառագայթէր ․ սուրբ Հայրապետը երբոր խնդրեց ու անոր ձեռքէն թուղթն առաւ , և կարդացին վարքն իմացան որ Աղեքսիանոսն էր , ամէնքն իրար անցան ․ մանաւանդ հայրն ու մայրը , և սրբասէր խեղճ կինը ։ Վազելով ընկան վրան , տեսան վզին վրա նշանը ․ ամէնքն ալ ողբով ու լալով մարեցան ․ յետոյ բերին մարգարտաշար և ոսկեզարդ զգեստներ զարդարեցին լուսափայլ մարմինը ․ ոմանք կ՚ողբային , ոմանք սոսկալով կը գովէին սքանչելի վարքը , և շատերն երանի տալով սուրբին կը փառաւորէին զԱստուած ։ Վասն զի մեծամեծ հրաշքներ եղան սուրբ նշխարքէն ․ որ նախ արծաթ տապանակով դրին Առաքելոց տաճարը , և ապա շինեցին իրենց տունը գեղեցիկ տաճար սրբոյն Աղեքսիանոսի ։ Մեր ծնողքն եղան սպասաւոր սուրբ գերեզմանին ․ և բարեպաշտութեամբ ճգնելով փոխեցան առ Աստուած միաբան իրենց հարսին հետ ․ որոնց յիշատակը օրհնութեամբ կը կատարեն եկեղեցիք քրիստոնէից ամէն աշխարհ ։

Ահա մեծասքանչ՝ տիպ երկնաւորին ,
 Ըզկեանս ըզմարմին՝ յոչինչ գըրողին ․
 Օ՜ ի տանջք , փառք , որ կանն՝ որչափ ահագին ,
 Հանդերձեալ փառաց՝ ոչ զուգակշռին ։
Հարկ է ինձ սիրել՝ զանանց տենչալին ,
 Փոխել զանցաւորս՝ ՚ի գիւտ անեղծին ․
 Օ ի հաճոյք համայն՝ մաշին ընդ մարմնոյ ,
 Միայն սրբութիւն կայ ընդ Աստուծոյ ։

ԱԼԷՔՍԻՈՍ Միխայլովիչ՝ էր Թագաւոր Ռուսաց որդի Միքայէլի կայսեր, որուն յաջորդ նստաւ երբոր տասնըվեց տարւան էր յամի 1645, և մեծ քաջութեամբ շատ զօրացաւ։ Լեհաց յաղթելով առաւ Սմօլէնսք գաւառը․ և Կիովայի մայրաքաղաքը, զսպեց Աժտերխանու բնակիչներուն ապստամբութիւնն ալ։ Յամի 1674 յաղթեց քաջութեամբ Օսմանեանց և տիրեց Ուգրանիայի․ բայց քառասունըվեց տարւան մեռաւ 'ի 1677, և մեծ սուգ տուաւ ազգին։ Վասն զի շատ գեղեցիկ բարեկարգութեամբ ծաղկեցուցեր էր տէրութիւնը և մեծ գանձով հարստացուցեր էր․ Թողուց մէկ հատիկ որդեակ մեծն Պետրոս չորս տարւան տղայ․ որ ալ աւելի փառաւորեց ազգը։

Կանոն անյեղլի՝ դիւցազն քաջաց,
Ջանալ 'ի սէր՝ օգտի հայրենեաց․
Որով ընծայի յօրինակ բարեաց,
Եւ անմահական առնու շուք փառաց։
Հօրամոյն զաւակ՝ գանձ է մեծազգին,
Սատար ազգայնոց՝ պարծանք աշխարհին․
Որպէս մեծապանծ՝ Պետրոս առաջին,
Հօրն եղև անմահ յոյս և փառք ազգին։

ԱԼԻ՝ էր փեսայ Մահմետին, որ զօրաւոր ըլլալով և գիտուն օրինաց, պիտի յաջորդէր անոր․ բայց երբոր Ապուպէքիրն ընտրեցին յաջորդ՝ Ալին փախաւ յԱրաբիա, և հոն հաւաքումն ըրաւ իրեն նոր աղանդին․ ու Ապուպէքիրին օրէնքները թուլցունելով սիրելի եղաւ ազգին։ Ուստի 'ի 656ին վարպետութեամբ և մեծ յաղթութեամբ Պասրայի մօտ՝ չորրորդ Խալիֆա կամ յաջորդ եղաւ Մահմետին․ որ շատ քաջագործութեամբ և կանոնադրութեամբ զօրացուց զաղանդը և բազմացուց աղանդակից Ափրիկեցիք, Պարսիկք, եւ եւ այլն: Երեւելի բանիբուն էր իւր գիտութեամբն. գրած ունի բանաստեղծական առակներ և վճռական խօսքեր, որ տպուեցան: Սորա որդիքն էին Հասան, Հիւսէյին, և Մօհասան. որոնք շուտով մեռան: Իսկ ինքն վաթսունևիրեք տարուան սպանուեցաւ թշնամիներէն. որուն վրայ յետոյ փառաւոր գերեզման կանգնեցին, և ամէն տարի բազմութեամբ ուխտի կ՚երթան Պաղտատու մօտ:

Պարսիկները ամէն տարի կը կատարեն հրապարակական հանդէսով Հասան Հիւսէյնին սուգը ողբով և լացով, նաև ծանրագին ընծաներով կը յարգեն Ալիին շիրիմը:

Ալին պատուիրէ լինել բանիբուն
Յամենայն արարս արթուն իմաստուն.
Քանզի գիտութիւն տիրէ աշխարհի
Հատու յաղթական քան սուր երկսայրի:
Բարոյականին կանոն անյեղլի,
Լուսափայլ պահէ զմիտս առաքինի.
Այն զի ընտրութեամբ պերճանայ մարմին,
Իսկ իմաստութեամբ գերապանծ հոգին:

ԱԼԼԱՏԻՈՍ Լէոն գիտնական Հռոմ սախըզցի, որ գնաց Հռոմ խիստ բանիբուն ուսումնական եղաւ. մինչև վարժապետ դրուեցաւ յունական լեզուին: Յետոյ Աղեքսանդր Է. պապն դրաւ զինքը վերակացու Վատիկանեան գրքատան: Հայրենասիրութեամբ դպրոցներ հաստատեց իր հայրենի քաղաքը. և շատ գերիմաստ գրքեր շարադրեց աստուածաբանութեան և ուսմանց վրայ ամէն տեղեկութեամբ: Քաջ կը հաստատէր հռոմէական ուղղափառ հաւատքը , և զօրաւոր պատճառներով կը ջանար ազգին մէջ մտցընել ուղղափառութիւնը ։ Ասոր վրայով կը պատմեն թէ քառասուն տարի մէկ հատիկ գրիչով գրեց ․ ու վախճանեցաւ ութսունուիրեք տարւան յամի 1668 ։

Ազգասէր գիտնոց՝ միայն տենչալի ,
 Գերիմաստ գործել՝ զազգ իւր պանծալի ․
 Ծառ իմաստութե՟՝ տնկեալ ’ի դրախտին ,
 Ընդ դարս համօրէն՝ պարարել զմանկտին ։
Այսպէս Ալլատեայ ջանք գիտնականին ,
 Բազմարդիւն գտան՝ ’ի հելլէն ազին ․
 Վառեաց ’ի հոգիս՝ ճրագ ճշմարտութեան ,
 Փայլել անթերի յուղղափառութեան ։

ԱԼԼՈՒԿԻՈՍ իշխան Սպանիացի , որ գերի ընկաւ Սկիպիոն հռոմայեցի զօրապետին ձեռքը 210 տարի Քրիստոսէ առաջ ։ Ան ատենը Սկիպիոնին առջևը տարին մէկ շնորհալի աղջիկ մը , որ Ալլուկիոսին նշանածն էր ․ Սկիպիոն երբոր լսեց , կանչեց Ալլուկիոսին տուաւ , ասելով ․ Այս կոյսը քեզի համար պահուած է ․ բայց ասոր փոխարէն քեզի բարեկամ ըրէ՛ զիս ալ ։ Այս առաքինական գործքին վրայ շատ զարմացաւ իշխանը , և աղջկան ծնողքը շատ արծաթ տուին անոր ազատութեան համար ։ Բայց Սկիպիոն ամենևին չուզեց առնելու ․ այլ հանեց Սպանեօլին տուաւ ասելով ․ “Առ այս արծաթը իմ ձեռքէս ինչպէս օժիտ (ճիհէզ) հարսիդ որ քեզի կու տամ„ ։

Քանի՛ գերապանծ գործ դիւցազնական ,
 Սկիպիոնի դրուատից արժան ․
 Անձնիւր զիւրըն տալ՝ ըստ բուն օրինաց ,
 Ի տախտակ սրտի՝ գրեալ անմոռաց ։

Առաքինեաց բանք՝ այսպէս գեղազան,
Ընդ դալս համօրէն՝ յածին 'ի շրջան.
Յօրինակ բարեաց՝ յօձան ճշմարտին,
Ընդ լուսոյ ծագման յար չքնաղ փայլին :

ԱԼՈԶԻՈՍ կամ ԼՈՒՃԻ ԳՈՆԶԱԿԱ, մանուկ ազնուական հրեշտակային վարքով, էր որդի Փերտինանտի ասպետին : Ծնաւ 'ի 1568, և Աստուծոյ նուիրեցաւ բարեպաշտ մօրմէն, միշտ կրթուելով անարատ առաքինութեամբ և ուսմամբ : Մանկութեան ժամանակը շատ աղօթասէր և ուսումնասէր եղաւ. և սուրբերուն վարքը կարդալով ուխտեց առանձին Աստուածածնայ աւետման պատկերին առջև ուխտ մշտնջենաւոր ողջախոհութեան, և անարատ պահեց. մինչ զի և ոչ մօրն երեսը համարձակ կը նայէր : Միշտ ճգնելով զանձը կը տանջէր, և շաբթուն իրեք օրը հացով ջրով կանցընէր. շատը լուռ կը կենար ու գիշերը երկար աղօթքներով կը տքնէր : Երբոր հայրը կը խրատէր որ այնչափ չի ճգնի, նա յայտնեց որ կ'ուզէ կրօնաւոր ըլլալ. հայրը դէմ կեցաւ, մինչև երկու տարի ճար չեղաւ :

Յամի 1585 երբոր տասնութը տարուան եղաւ՝ մայրն ալ իրեն օգնելով մտաւ Ալօզիոս Յիսուսեանց կարգը 'ի Հռոմ. և շուտով եղաւ իբր հայլի մը առաքինութեանց՝ հեզ, խոնարհ, հնազանդ, կանոնապահ, և մեռեալ աշխարհի :

Այնչափ զինքն հոգևոր կրթութեանց տուաւ որ եղաւ շնորհալի և վառեալ աստուածային սիրով, որպէս անմարմին հրեշտակ. երբոր կը լսէր բանն աստուածային՝ սիրտը կ'ելլար կուլար. վասն եղբայրսիրութեան կ'երթար հիւանդանոցը ուրախութեամբ կը ծառայէր հիւանդներուն ։

Մեծ սէր ունէր որ երթայ քարոզէ սուրբ հաւատքը ընդ բոլոր աշխարհ, և դարձընէ անհաւատները . բայց Աստուած կամեցաւ զինքը շուտով կանչելու . իրեք ամիս բարակ ցաւով մաշեցաւ, միշտ պատրաստուելով զուարթութեամբ 'ի մահ ։ Ապա 21 Յունիսի 'ի 1591 գետինը տարածեալ քաղցրութեամբ աւանդեց մաքուր հոգին, քսանւիրեք տարուան ըլլալով . և փառաւորեցաւ հրաշքներով . ու եղաւ տօնելի սուրբ և պաշտպան մանկութեան ։

Այսպիսի է անձն աստուածասիրին,
Մաշէ զամենայն՝ 'ի սէր անմահին .
Չիք ինչ գերապանծ՝ քնքուշ այն սրտին,
Քան զողջակիզել 'ի սեղան խաչին ։
Ահա օրինակ ձեզ Ալոզիոս,
Սլացարուք մանկունք զհետ նորին հետոց,
Զի չիք ինչ անկար՝ վասն առաքինեաց,
Եւ ոչ մի խափան՝ բարւոյն կամեցող ։

ԱԼՊԷՐԹԻ՝ էր մեծանուն մեքենագործ և գլխաւոր ճարտարապետ իտալացի Պոլոնիայ քաղաքէն ժ.Զ. դարուն ։ Սա ճարտարմտութեամբ փոխադրեց կ՚ըսեն Պոլոնիայի Աստուածածնայ ժամուն զանգակատունը երեսուն հինգ քայլ հեռուն բոլոր զանգակներովը ։ Նաև շտկեց հինգ ոտնաչափ ծռած Չէնթօ գեղին սուրբ Բլասոյ եկեղեցւոյն զանգակատունը ։ Յետոյ հրաւիրեալ գնաց Մաճառստան շատ մեծամեծ շէնքեր շինեց, ու ասպետութեան պատիւ առաւ թագաւորէն ։

Իմաստուն մտաց՝ է յարգել ըղձամ,
Զըծախել ընդ վայր՝ վարել պիտուական .
Օ ի այնու գիտնոց՝ հանճար փայլեցան ,
Թողին յաշխարհի՝ գործս իմաստութեան ։
Պատճառ բիւր բարեաց՝ ժամանակ միայն ,
Ծընող գիտութեանց՝ արուեստից համայն .
Որչափ դիւրասահ՝ այնչափ մեծայարգ ,
Պանծք տիեզերաց՝ չեղեն զուգայարգ ։

ԱԼԲԵՐՏ ՄԵԾ անուանեալ Գերմանացի, էր մեծիմաստ վարդապետ Տոմինիկեան 'ի ԺԳ դարուն . որ եղաւ գաւառական առաջնորդ զանազան վանքերու իրեն կրօնին ։ Ապա Աղեքսանդր Դ . Պապն բարձրացուց զինքը յեպիսկոպոսութիւն Ռաթիզպոնայ քաղաքին . վասն զի էր առաքինի , իմաստուն , և բարի օրինակ ամենուն ։ Բայց իրեք տարիէն ետև հրաժարեցաւ եպիսկոպոսական պատիւէն , ու կրօնաւորութեամբ նորէն ձեռք զարկաւ բարեկարգել վանքերուն դպրոցները ։ Ի 1274 հրաւիրուեցաւ գնաց Գաղղիա Լիոնի ժողովը . և ամէն տեղ իւր իմաստուն բարեկրթութիւնը յայտնի ըրաւ գրելով մեծահատոր իմաստալից գրեանք և այլն ։ Ալբերտի աստուածաբանութիւնը թէպէտ համառօտ է , բայց կատարեալ ըլլալով 150 տարի առաջ հայերէն ալ թարգմանեցաւ , ու յետոյ տպուեցաւ , և մինչև հիմա յարգի է հոգևորաց մէջ ։ Ալբերտի աշակերտներուն մէջ շատ երևելի վարդապետ եղաւ սուրբ Թովմաս Ագուինացին . իսկ ինքն վախճանեցաւ 'ի Կողոնիա եօթանասուն եօթը տարւան յամի 1282 ։

Ճոխագոյն արդիւնք՝ մեծին Ալպերտի
Ճոխացոյց ըղփաւս՝ քաջ վարդապետի,
Որ յեկեղեցւոյ պերճացեալ յաթոռ
Յարքայութեն երկնից փայլի սուրբ հռետոր։
Ջանամ բարձրանալ՝ յաստիճան ուսմանց,
Նոյն և 'ի վերելս՝ առաքինութեանց.
Ընդ այս իմաստունք՝ վերամբարձ գըտան,
Ի կաճառս գիտնոց, 'ի սրբոց խորան։

ԱԼՓԻՈՍ Աղեքսանդրոս և Զոսիմոս անտիոքացի երեք եղբարք հեթանոսք, երկաթագործ գարբին էին Դեկոս կայսեր ժամանակը և բարի անուն ունէին։ Ան ատեն էր Մարկոս անունով բարեպաշտ հովիւն ալ, որ սրբութեամբ և հրաշքով անանկ անուանի եղած էր որ գազանները ոտքը կը լզէին։ Երբոր թագաւորը լսեց՝ զրկեց երեսուն զօրական, որ բերեն զսուրբը. բայց նա դարձուց զանոնք 'ի քրիստոնէութիւն, ուստի նահատակեցան սրով 'ի Նիկիա։ Իսկ զսուրբն Մարկոս աստին անդին հալածուելէն ետև տարին Անտիոք. ուր իրեն տանջանքի գործիքները շինելու համար կանչեցին աս իրեք եղբայր գարբինները՝ որոնք շատ աշխատեցան ու չկրցան երկաթը հրով կակղցընելու և ծեծելու. այս պատճառաւ հաւատացին Քրիստոսի և գլխատեցան սուրբ Մարկոսին հետ։ Նոյնպէս իրենց իրեք գործակիցներն ալ հաւատացին ու սրով նահատակեցան. և ամէնքն եղան երեսունուեօթը հոգիք. որ կը տօնեն եկեղեցիք քրիստոնէից։

Մարք երանելի՝ յաղթող վըկայից,
Վառեցեն յոգիդ՝ զանանց սէրն երկնից,
Ունել անսայթաք՝ ըստ շաւղաց նոցին,
Ցնծալ յարաժամ 'ի յարկըս վերին։

Սոքա հրաշալի՝ քարոզք գերապանծ,
Առիթ փրկութեան՝ համօրէն ազանց.
Փարատիչք ցաւոց՝ ախտից մոլեկան,
Վերբերիչք 'ի լոյս՝ աստուածգիտութեան։

ԱԼՖՐԵԴՈՍ Թագաւոր Անգղիոյ, որ անուանեցաւ Մեծ, 871ին յաջորդեց եղբօրն. յաղթեց Տանիմարքացիներուն, վերջը տիրելով Լոնտրայի, հաստատեց զօրաւոր նաւատորմիղ մը։ Յետոյ գեղեցիկ ծաղկեցուց իր թագաւորութիւնը քաղաքական բարեկարգութեամբ և իմաստութեամբ. շատ երևելի դպրոցներ կանգնելով. մանաւանդ Օքսֆորթի համալսարանը շատ աւելի փառաւորեց։ Բազմապատիկ օգտակար գրեանք բերել տուաւ Հռոմայէն թագաւորական գրքատանը համար. ինքն ալ լաւ սորված ըլլալով Լատին լեզուն գրքեր ալ շարադրեց, որոնց գլխաւորն կըսուի Հաւաքումն ժամանակագրութե, այլ և գիրքն Օրինաց։ Գողերն ու աւազակները այնպէս հալածելով կորնցուց տէրութենէն, որ արքունի ճամբուն վրայ կախեց ոսկի մանեակ մը ճամբորդները փորձելու համար. ու մէկը չդպաւ անոր ու չվերուց։ Ահա այսպիսի առաքինական քաղաքավարութեամբ անանկ սիրելի եղաւ ամենուն, որ երբ փոխեցաւ յաշխարհէս յամի 900, սուրբի կարգ դրին զինքը. և սկսաւ ժողովուրդը տօն յիշատակի կատարել ամէն տարի 'ի 26 հոկտեմբերի։

Արդարակորով՝ վեհից պետութիւն,
Ի հըպատակաց՝ բարեբաղդութիւն.
Արդար իրաւամբք՝ քան գոռ զօրութեամբ,
Ծաղկին տիեզերք՝ թագաւորք պանծան։

Արարչին պատկեր՝ ինքնակալք ձայնին ,
Նորք արդար դատեն՝ ըստ ուղիղ կարգին .
Առաքինափայլ՝ պսակ 'ի գլուխ ,
Թագաւորեսցեն յաւիտեան նոքին ։

ԱԼՔԱԶԱՐ Լուդովիկոս՝ էր անուանի վարդապետ Յիսուսեան սպանիացի , որ մեծ ջանքով և խորունկ իմաստութեամբ գրեանք շարադրեց , որոնց ամենէն նշանաւորն եղաւ Յովհաննու Յայտնութեան Ձոխ մեկնութիւնը . որուն այնպիսի պայծառ մեկնութիւն տուող չէր եղած ինչուան իր ատենը , ինչպէս որ գիտունները գովելով կ՚ըսեն թէ այս մեկնութիւնը շատ տեղ գեղեցիկ բացատրութեամբ կը հաստատէ եղածները եկեղեցւոյ անցած դարերուն մէջ , չէ թէ դիպուածով ըլլալիքները . ինչպէս Պոսիւէ ալ կը վկայէ թէ այս գրքին շատ գլուխը եղած բաները կը յայտնէ , քան թէ ըլլալիքները ։ Իսկ նոյն վարդապետը վախճանեցաւ յիսունըինը տարուան յամի 1613 ։

Ներհուն մեկնաբանք՝ 'ի լոյս վերբերին ,
Խորանդունդ զիմաստս աստուածաշնչին .
Թողեալ յաշխարհի՝ անմահ յիշատակ ,
Ի փառս հաւատոյ՝ և յարդիւնս անձին ։
Զյաւիտենական խորս աստուածային ,
Զոր հին տեսանողքըն նախ ծանուցին ,
Ապա առաքեալքն ետուն 'ի զընին ,
Սոքա պարզագոյն մեզ աւանդեցին ։

ԱԿԱԿԻՈՍ Թարգմանի անմեղ , որ էր Ամասիայի մանուկ քրիստոնեայ . երբոր Լիկինոս կռապաշտ թագաւորը շատ խոստմունքներով ուզեց զինքը հաւատքէ հանելու Ճար չեղաւ , հրամանն տուաւ ու կախեցին , և ծեծելով կոտրտեցին մարմինը . բայց սուրբը աղօթելով լսեց երկնային ձայն մը և զօրացաւ ։ Ան ատեն կուապաշտներն ձգեցին զինքը տաք տապակի մէջ եռացեալ ձիթով որ խաշի . բայց նա աղօթքով պաղեցուց . և յետոյ կործանեց կուռքերը . ձգեցին սոսկալի մեծ առիւծին առջին , բայց գազանը չմօտեցաւ իրեն ։

Նմանապէս հրեշտակը ազատեց երանելին կրակէն և բանտէն . տեսան որ ըլլալու բան չէ , վճռեցին որ գլխատուի ։ Երբոր աղօթք կ՚ընէր ծնգան վրա՝ լսեց քաջալերական ձայն երկընքէն , ու վիզը երկնցուց գլխատուեցաւ յամի 310 ։ Իսկ հաւատացեալներն հանգուցին սուրբ մարմինը . և յետոյ պայծառ եկեղեցի շինեցին 'ի Մելիտոն քաղաքը ։

ԱԿԱԿԻՈՍ հարիւրապետ Բիւզանդացի՝ էր քաջ երիտասարդ . երբոր կռապաշտ դատաւորը կը քննէր քրիստոնեայ զինուորներուն հաւատքը , Ակակիոս քաջութեամբ ըսաւ թէ ես քրիստոնեայ եմ , և երբ համարձակ կը դաւանէր զՔրիստոս , չարաչար ծեծեցին ։ Յետոյ տարին Բիւզանդիա . բայց ճամբան շատերը դարձուց Քրիստոսի հաւատքը . մինչև բանտին մէջ հրեշտակներ կ՚երևնային սուրբին ու վէրքերն բժշկելով կը մխիթարէին ։ Ապա կըրկին հարցափորձ ըրին ու խայտառակ եղան , և ծնօտը խորտակեցին . իսկ նա ուրախ սրտով կը ծաղրէր զանոնք . մինչև որ գլխատեցին սուրբը յամին 303 . ապա նշխարքը փոխադրեցաւ 'ի Կաղաբրիա Միկիլոյ ։

Սրբափայլ արեամբ՝ մայր եկեղեցի ,
Քաջ նահատակացն իւրոյ զարդարի ·
Որոյ հրաշագործ՝ նշխարք աստ ծաղկին ,
Հոգիք յանմահ կենաց փայլին առ Փրկչին ։
Գերահրաշ շնորհք Արարչապետին ,
Որ մանկանց յաղթել տաս կայսեր բաղկին ·
Օ առիւծուց ժանիս , ըզհրապոյրս դիւին ,
Փափկասուն մարմնով քև նոքա լուծին ։

ԱԿԻՒԼԻՆԷ մատաղ կոյս էր Պաղեստինացի , դուստր ազնուականի , Դիոկղետիանոսի ժամանակը · որ հինգ տարուան մկրտուեցաւ Եւթաղիոս եպիսկոպոսէն , և աստուածային շնորհօքն առաքինի և բարի օրինակ եղաւ տարեկից աղջիկներուն մէջ · մինչ զի այն հասակովը հրաշք կը գործէր , ու բարի խրատներով և սրբակաց վարքով կը դարձնէր շատերը ՚ի հաւատս Քրիստոսի ։ Ուստի Նիկոդիմոս հեթանոսը մատնեց զերանելին · որ բռնեցին և հանեցին Վաղերիանոս դատաւորին ատեանը · ուր շատ ծեծելէն ետև զուրբ կոյսը , կրակի պէս տաք շամփուրներ խօթեցին ականջներուն մէջ անանկ սաստիկ որ արիւնախառն ուղեղը քթէն և ականջներէն կը վազէր ։ Բայց սրբուհին երբոր կ՚աղօթէր բանտին մէջ ջերմեռանդութեամբ , հրեշտակ Աստուծոյ երևցաւ բժշկեց զինքը · և յետոյ սրով նահատակեցաւ · ու տօնելի եղաւ քրիստոնէից ։

Սիրտ Ակիւլինեայ սրբասէր կուսին ,
Օ ամէն դժնդակս՝ եհար առ ոտին ·
Բանտ գանք և տանջանք՝ չեղեն ձեռնհաս ,
Բաժանել յիւրմէ՝ զփեսայն երկնային ։

Թէ կաս եռանդեամբ՝ 'ի սէր քո Փրկչին,
Նոյն շնորհք անշուշտ՝ 'ի քեզ ներգործին,
Լինիս ահարկու՝ դրանցըն դժոխոց,
Երկնից ժառանգորդ սիրելի սրբոց ։

ԱԿԻՒՂԱՍ Պոնտացի կամ Սինոպցի՝ էր լեզուագէտ փիլիսոփայ, աղանդաւոր կախարդ․ որ Ադրիանոս կայսերէն դրուեցաւ Ճարտարապետ Երուսաղէմ շինելու համար ։ Ուր հաւատաց Քրիստոսի ու մկրտուեցաւ․ բայց հրէական մտքով կախարդութենէ չհրաժարեցաւ միշտ հետեւելով մոգութեան․ երբոր եպիսկոպոսաց ալ մտիկ չըրաւ ու հակառակեցաւ, հալածեցին զինքը․ գնաց Հրէայ եղաւ, և անոնց լեզուն սորվելով կը կարդար միշտ աստուածաշունչը ։ Յամի տեառն 129 նորէն ինքը թարգմանեց սուրբ գիրքը յոյն լեզուով, պատճառելով թէ եօթանասնից թարգմանութիւնը լաւ չէր․ որ է սուտ, վասն զի բոլոր հաւատացեալները Քրիստոսէն և Առաքեալներէն սորված զայն կը գործածէին ։ Իսկ Ակիւղասին թարգմանութիւնը բառական ըլլալով հաւատարիմ չէր․ մանաւանդ Մեսիային վրայի վկայութիւնները մթնեցուցեր էր ներհակ ըսելով քրիստոնէից, ինչպէս որ կը վկայեն հին վարդապետները․ բայց այս թարգմանութիւնը հիմա կորած է․ միայն կտոր բրդուճ զրոյցները կը գտնուին ։ Սուրբ Երոնիմոս կը վկայէ թէ շատ բնաբան սուրբ գրոց կայ որ շիտակ թարգմաներ է Ակիւղաս ։

Աւաղ կամակոր՝ կոյր Ակիւղասին,
Լուսոյ 'ի խաւար դահավիժողին․
Որպէս շուն մոլի՝ դարձեալ 'ի փսխած,
Եղև չարաղանդ բաժին չար դիւաց ։

Օ ինչ շահ 'ի գիւտոյ՝ անգին մարգարտի ,
Թէ մոլորութեամբ՝ անգիւտ կորնչի ·
Օ ինչ ւ՛ 'ի լուսոյ՝ աւետարանին ,
Թէ ոք 'ի խաւար սրտիւ դեգերի ։

ԱԳՐԷՏԱ Մարիամ՝ էր Սպանիացի հաւատաւոր որբասէր կոյս և մայրապետ սուրբ Ֆրանչիսկոսի կարգին 'ի ժէ դարուն · որ շատ խելքով և առաքինի վարքով գեղեցիկ բարեկարգեց վանքերը մինչև մեռաւ սրբութեամբ վաթսունուիրեք տարւան ։ Յետ մահուան իր չինած մէկ գիրքը տպուեցաւ , որ էր Աստուածածնայ վարքը · ասոր վրա գաղղիացի վարդապետները շատ տարակոյսներ հանեցին դժուարապատում խօսքերուն համար կերպ կերպ մեկնութիւն տալով ։ Թէպէտ վնասակար բան մը չիգտան գրքին մէջ և իրեն սրբութեանը վրա ։ Իսկ բարեմիտ գիտունները շատ կը գովեն թէ՛ նոյն գրքին ճշմարտախօսութիւնը , և թէ՛ երանելւոյն սրբափայլ վարքը , որ աքանչելի քաղաքավարութեամբ անարատ հայլի մը եղած էր սուրբ վարուց և առաքինութեանց ։

Գովանի արդիւնք՝ բարեպաշտ անձանց
Գրեալ՝ կան 'ի գիր՝ դպրութեան կենաց ·
Որքա թէ՛ կանուխ և թէ՛ անագան ,
Յերկնից արքայէն՝ ընդունին ըզվարձ ։
Երանի է քեզ՝ թէ գործովք բարի ,
Այնըմ մատենին՝ լինիս արժանի ·
Թող տկարամիտք՝ այլազգ դատեսցեն ,
Առաքինութիւն ոչինչ ըստնանի ։

ԱՀԱՐՈՆ՝ էր եղբայր Մովսէս մարգարէին իրեք տարւով մեծ , որուն եղաւ գործակից աստուածային հրամանաւ հրաշագործութիւններ ընելով Փարաւոնին առջև, և միատեղ հանելով Իսրայելացիները Եգիպտոսէն. նաև քառասուն տարի ամէն գործքերու մէջ մէկտեղ էին երկու եղբարք անապատին մէջ։ Բայց երբոր Մովսէս ելաւ Սինա լեռը. ապստամբ Հրէաները սաստիկ վախ տալով Ահարոնին՝ շինեցին ոսկիէ կով մը և կուռքի պէս պաշտեցին, ինչպէս որ կը պաշտէին Եգիպտոսի մէջ։ Թէպէտ Ահարոն այս գործքիս թոյլ տալովը մեծապէս մեղանչեց բայց շուտով գտաւ թողութիւն. վասն զի միայն վախուն պատճառաւ թողուցեր էր որ մինչև Մովսեսի դարձը հանդարտ կենայ ժողովուրդը, ինչպէս որ եղաւ։ Ասոր քանի մը տարիէն ետև առաւել հաճոյ ըլլալով Աստուծոյ Ահարոն հաստատուեցաւ մեծ քահանայապետ բոլոր ազգին վրա. մինչ զի Աստուած պատժելով անոր թշնամիները գետինն անցուց զԴաթան, Աբիրոն և Կորխ, որոնք կը մերժէին Ահարոնին քահանայապետութիւնը. նաև պատուելով Աստուած ծաղկեցուց մինակ անոր գաւազանը և ոչ նախանձոտներունը։ Ահարոն վախճանեցաւ սրբութեամբ Հոր լեռան վրա հարիւր քսանուիրեք տարւան. ասկէց սկսեալ մինչև վերջին կործանումն Երուսաղէմի ութսունուվեց քահանայապետք եղան Հրէից։ Ասոնցմէ ոմանք Դաւթի արքունի ցեղին հետ խնամութիւն ընելնուն համար Յիսուսի ազգահամարն ալ կոչուեցաւ քահանայական և թագաւորական։

Ահարոն մեծաց շնորհաց ցանկալի
Ընտրեալ 'ի Տեառնէ՝ գտաւ արժանի.
Քահանայապետ տանն Իսրայէլի
Ձեռնտու հզօր՝ մեծին Մովսիսի։

Ընկճեալ յերկիւղէ՝ իբրու մարդ սխալեաց
Աղանդէն զղջմամբ՝ 'ի լոյսն արար դարձ.
Որ յուսայ 'ի Տէր մի ամաչեսցէ,
Աստուածախօս մեծն ասաց Մարգարէ։

ԱՀԱՐՈՆ կամ ՀԱՐՈՆ՝ ԱԼ--ՌԷՇԻՏ մեծահռչակ Ամիրապետ Աբբասեանց. որ յամի 786 նստաւ 'ի Պաղտատ ինքնակալ, ու Ասիայի մեծ մասին տիրեց մինչև Հնդստան նաև Ափրիկէի և Եւրոպայի մէկ մասին. մինչև Յունաց դշխոյն Եռինէ տուրք կուտար իրեն։ Արաբացւոց մէջ շատ երևելի բարոյական գործքեր կը պատմեն այս մեծայաղթ Ամիրապետին քաջութեանցը վրայ. որուն սիրելի էին քաջ և առաքինի մարդիկ։ Երբոր լսեց մեծին Կարոլոսի քաջագործութիւններն՝ շատ մեծարելով ընծաներ ղրկեց իրեն. նաև Երուսաղեմայ տիրելով Յիսուսի սուրբ գերեզմանը շնորհեց Կարոլոսին։ Անոր օրը Արաբացիները մտուցին 'ի Սպանիա իրենց թուանշանին գործածութիւնը որ մնաց մինչև հիմա. իսկ Հռոմայեցւոց թուանշանը քիչ քիչ խափանեցաւ։ Հարոն մեծ ամիրապետը քսանուերեք տարի թագաւորելէն ետև մեռաւ 'ի 809, և մեծ անուն ունի արևելցոց մէջ։

Արութեան հանդէս՝ տիրող քաջազանց,
Պայծառ շողշողէ 'ի ծագս աշխարհաց.
Օ ի առաքինեաց ցոր վայր նետ ձըգի,
Ընդ և փառք իւրեանց պերճ լուսափայլ։
Ոէ քեզ չէք տիրել ոլորտից երկրի,
Գոյ յաղթել կըրից, մարմնոյ, աշխարհի.
Դրոշմեալ յանձին ջան անխոնջ քաջաց,
Մեծ լցին քո փառք քան զերկրակալաց։

ԱԳԱԹՈՆ սուրբ կրօնաւոր Սիկիլիացի՝ նստաւ քահանայապետ Հռոմայ 'ի 678 . որ մեծ ջանքով կարգաւորեց ընդհանուր եկեղեցին, մանաւանդ արևելեան եկեղեցւոյն խռովութիւնները, որ Միակամադաւան հերետիկոսները կը պատճառէին ։ Որոնց համար նախ Հռոմ ժողովք ըրաւ, դատապարտեց . յետոյ ընել տուաւ Կոստանդնուպօլսի Գ . ժողովքը, և հաստատելով այս սուրբ ժողովքին կանոնները՝ խաղաղացուց Յունաց եկեղեցին ։ Աւստի ամենուն ալ սիրելի եղաւ առաքինի և սուրբ վարքովը . անանկ որ նոյն ժողովքին մէջ երբոր այս սուրբ հայրապետին կոնդակը կարդացին, ամէնքը աղաղակեցին . “ Պետրոս խօսեցաւ բերանովն Ագաթոնի „ ։ Այս վերցուց սովորութիւնը կայսերաց տուրք տալու վասն ընտրութեան հայրապետին Հռոմայ, և շատ գեղեցիկ կարգով կառավարելէն ետև ընդհանուր եկեղեցին իրեք տարի ու կէս, վախճանեցաւ սրբութեամբ 'ի 682, և փառաւորեցաւ հրաշագործութեամբ սուրբ նշխարացն . մինչ զի Յոյնք և Լատինք տօնելով անուանեցին Սքանչելագործ հայրապետ ։

Այս է գործ շքեղ ծայրագոյն հովուի,
Պահել անարատ՝ գառինս Յիսուսի .
Դիմագրաւ եղեալ զանձն 'ի սէր խաշանց,
Հալածել ըզգայլս հերքել ըզհերձուածս ։
Դու հովիւ կարգեալ Քրիստոսեան հօտին
Հսկեա քաջութեամբ նմանեալ նմին .
Օ ի և քեզ լոյսի անշուշտ պըսակիլ,
Յերևման յաղթող քաջ Հովուապետին ։

ԱՂԵՔՍԱՆԴՐ Մեծն էր որդի Փիլիպպոսի Մակեդոնացւոց թագաւորին . որ ծնաւ 356 տարի Յիսուսէն առաջ, և քսան տարւան յաջորդեց հօրը · նաև քաջութեամբ տիրեց քանի մը գաւառներուն Յունաց ու շուտով զօրացաւ ։ Յետոյ ժողվեց երեսունըհինգ հազար զօրք ու պատերազմ բացաւ Դարեհ Պարսից թագաւորին դէմ · որուն զօրքն էր վեց հարիւր հազար , և նախ յաղթեց Կիլիկիայի կողմերը ու տիրեց Դարեհի գանձին , և բռնեց անոր մայրը , կինը , որդին և երկու դստերքը · և հրամայեց որ լաւ պատուով պահեն զանոնք ։ Անկէց առաջ երթալով տիրեց Տիւրոսի , և ելաւ Երուսաղէմին վրայ , ուր Յադդէ քահանայապետն իր զգեստով առաջն ելաւ անոր՝ ու ցուցուց Դանիէլի մարգարէութիւնը , որ կը գուշակէր իրեն յաղթութիւնը Պարսից դէմ ։ Յետոյ գնաց առաւ Եգիպտոս ու Աղեքսանդր քաղաքը շինեց իւր անուամբը ։

Դարեհ խեղճութեամբ արևելք քաշուած կը ջանար որ Աղեքսանդրին հետ հաշտութիւն ընէ իրեն ուզածին պէս · բայց նա չկամեցաւ , այլ նորէն ելաւ Դարեհին վրայ , ու տիրելով բոլոր Պարսից թագաւորութեանը մտաւ փառաւոր յաղթանակաւ 'ի Բաբելոն ։ Ապա ընկաւ Դարեհին ետևէն ու հասաւ անոր , երբոր վիրաւորած հոգին փչէր էր · շատ ափսոսաց , և իրեն վերարկուով պատեց ու մօրը ղրկեց որ իրենց օրէնքովը թաղեն ։ Աղեքսանդր նոյն քաջութեամբ բոլոր աշխարհաց Ասիայի տիրեց մինչև Հնդստան ամենայն յաջողութեամբ և գովութեամբ ապա դարձաւ 'ի Բաբելոն ։

Բայց երբոր անգործ մնաց սկսաւ վարքը փոխել և հագաւ Պարսիկներուն զգեստն ու անոնց նման տուաւ զինքը անառակութեան , և հեշտութեանց , մինչև ուզեց ըսուելու որդի

Դիոսի չաստուծոյ: Ասով շուտ մը փճացաւ կորուց կեանքը 324 տարի Յիսուսէն առաջ. և միայն տասուերկու տարի թագաւորեց: Աղեքսանդր ետքերը մոլութեան մէջ իյնելով թէպէտ խեղճ և անարգ մեռաւ. սակայն շատ մեծանուն եղաւ և գովեցաւ ամէն աշխարհքի և ամէն ազգի մէջ թէ՛ քաջութեամբ ու բարեգութ մարդասիրութեամբն, և թէ՛ խոհական աշխարհաշինութեամբը, ծաղկեցընելով վաճառականութիւնը, արուեստն ու գիտութիւնը: Ասոր համար ղրկեց ութըհարիւր արծաթ տաղանդ Արիստոտէլ փիլիսոփային, որ իւր վարժապետն էր. որպէս զի հետևի բնական տեղեկութեանց և քննութեան կենդանեաց: Շատ երևելի գործքեր և բարոյական իմաստալից խրատներ կը պատմեն վարքին մէջ. գովելի են նաև համբերութիւնը, և այլ առաքինութիւններն:

Յաղթողն Աղեքսանդր ողբայ ցաւագին
Անյաղթեալն 'ի կրից ըզկորուստ անձին.
Միայն իղձ եղէ ասէ սին փառաց,
Զածի ըզմոռաւ զանմահ զիմ հոգին:
Օ՜ ինչ շահ ինձ կոչիլ որդի Դիոսին.
Թէ զմասն Աստուծոյ չունիմ ճըշմարտին.
Տեսի զսուրբ քաղաք վայր սքանչելեաց,
Այլ չընկալայ զայս նորուն սուրբ շնորհաց:

ԱՂԵՔՍԱՆԴՐ Ա. Փաւլօվիչ, այսինքն որդի Պօղոսի, էր կայսր Ռուսաց և յաջորդեց հօրը յամի 1801: Մեծ ջանքով հետևեցաւ քաղաքական և ուսումնական բարեկարգութեանց ընդարձակ տէրութեանը. շատ տեղ ուսումնարաններ և հասարակաց դպրոցներ հաստատեց ամէն ազգաց ինչպէս Թիֆլիզ, Երիւան, ու շատ բարեսիրտ ըլլալով կը փափաքէր նաև ամէն ազգաց ծաղկիլը ։ Իր ատեն 'ի 1805 կային քսան համալսարան, չորսհարիւր ինըսունըչորս մեծամեծ դպրոցներ, հազար չորս հարիւր եօթանասունըհինգ արքունի վարժարաններ, և իրեքհարիւր երեսուն հազար և հինգ հարիւր ուսանողներ . որոնց համար կուտար երկու միլիոն արծաթ ռուպլի . Թող ուրիշ աշխարհաշէն բարի կարգադրութիւններն ողորմած կայսեր ։

Նեմցէի և Ռուսի տէրութեանց խնդիրքով պատերազմ բացաւ Գաղղիացւոց դէմ . և ամէն անգամ հետևեցաւ որ շուտով հաշտութիւն ընէ, վասն զի խիստ կը մեղքընար պատերազմին մէջ ըրած վնասներուն համար ։

Ի 1812 Նափոլէոն Գաղղիացւոց կայսրը ուզեց որ բոլորովին տկարացընէ Ռուսները և Աղեքսանդրի տէրութիւնը, հինգ հարիւր վաթսուն հազար զօրքով մտաւ Ռուսիա . բայց Քութուզոֆ խելացի սպարապետը ետ քաշուեցաւ, և թողուց որ Գաղղիացիք երթան ետևներէն մտնեն Մոսկուա մայրաքաղաքը երբ չարաչար կայրէր ։ Նափոլէոն սաստիկ ձմեռէն վախնալով սկսաւ շուտով ետ դառնալ, բայց գրեթէ բոլոր բանակը կորուց ցրտով և սովով ։ Ապա 'ի 1813 Նափոլէոն նորէն զօրք ժողվեց ու ելաւ Աղեքսանդրի վրա՝ Եւրոպայի տէրութիւնք միանալով դաշնադրութեամբ զարկին փախուցին Նափոլէոնը 'ի Փարիզ ։ Ի 1814 Աղեքսանդր գլուխ դրին բոլոր դաշնադիրներուն բանակին, և միաբան մտան Փարիզ . ու ժողովուրդեան քարոզեցին թէ Եւրոպա խաղաղացընելու եկեր ենք ։

Աղեքսանդր շատ մարդասիրութեամբ վարուելով ամենուն հետ երբոր ելաւ Փարիզէն ամէնքը կ՛ աղաղակէին . "Կեցցէ խաղաղարարն Եւրոպիոյ միշտ ": Յետ գնալոյ 'ի Լոնտոն, դարձաւ 'ի Փեդրպուրկ մայրաքաղաքը . և տպել տուաւ դրամաձև միտալ . շրջանակը գրած սաղմոսին այս բանը . "Ո՛չ մեզ Տէր մի՛ մեզ, այլ անուան քում տո՛ւր զփառս ", . որ բաժնեց յաղթական զօրքին :

Իսկ եկեղեցականաց համար ալ շինել տուաւ խաչ մէկ կողմն տպած նոյն բան սաղմոսին . և միւս կողմն՝ Նախախնամող ակն Ամենակալին . որ մեզ ալ ընծայեց աղօթք խնդրելով :

Ի 1815 Աղեքսանդր հաշտութիւն ըրաւ Պարսից թագաւորին հետ . որ տուաւ Ռուսաց Շիրվան, Ղարապաղ, Դարբանդ, Տաղստան, Կէնճէ, Շէքին, նաև աշխարհն Վրաց, և այլն : Այս միջոցս երբոր՝ Նափոլէոն նորէն մտաւ Փարիզ, Աղեքսանդր ալ հոն դարձաւ դաշնակիցներուն հետ, և նորէն խաղաղացուց Գաղղիա : Յետոյ 'ի 1821 դարձեալ թագաւորաց ժողովեցաւ 'ի Վերոնա, ուր գնաց Աղեքսանդր կայսրն . յետոյ եկաւ Վենետիկ . շուտով դարձաւ գնաց Խրիմ ու անկէ՝ ալ բաժնուեցաւ գնաց Թայղան Ազախու մեծ քաղաքը . ուր քիչ օրուան մէջ կուրծքի ցաւով վախճանեցաւ քառսունըութը տարուան յամի 1825. նոյեմ. 19 . որ բոլոր աշխարհ և տէրութիւնը անմխիթար սուգի մէջ թողուց . և անորդի ըլլալով՝ Նիկողոս իւր եղբայրը ժառանգեց թագաւորութիւնը մինչև ցայժմ փառաւորապէս :

Աշխարհաքարոզ պայծառ դիւցազանց
 Փառք են բարերար գօլ տիեզերաց .
 Սիրել և սիրել միայն տենչալն
 Էր Աղեքսանդրու բարեսէր սրտի :

Որչափ բարեգութ առ ազգս համայն,
Այնչափ գերապանծ գովեստից արժան.
Առաքինափայլ գործք վեհափառին,
Անմահ յիշատակք կանգնեցան նմին:

ԱՂԵՔՍԱՆԴՐ Ա. սուրբ քահանայապետ Հռոմայ նստաւ գլուխ ընդհանուր եկեղեցւոյ յամի 121, և իմաստութեամբ կառավարեց իւր հօտն տասը տարի, գեղեցիկ կանոններով բարեկարգեց եկեղեցական արարողութիւնները. կոնդակով պատուիրեց որ ջուր խառնեն 'ի բաժակն սուրբ պատարագին և բոլորաձև բարակ բաղարջով պատարագեն. օրհնած ջուր ալ գործածեն ժամերուն և տներուն մէջ: Կռապաշտները տեսնելով Աղեքսանդրին այսպիսի բարեկարգութիւնը բռնադատեցին որ հաւատքէն հանեն. երկար ատեն բանտին մէջ շատ տանջեցին. ապա նահատակեցին վասն Քրիստոսի 'ի 132:

ԱՂԵՔՍԱՆԴՐ Բ. Մեդիօլանեցի ընտրեցաւ հայրապետ Հռոմայ 'ի 1061. և կառավարեց եկեղեցին խոհեմութեամբ իբր տասուերկու տարի: Բայց անիրաւ իշխաններէն շատ նեղութիւն քաշեց. ժողովքով և համբերութեամբ խոնարհեցուց թշնամիները, նաև կայսրը. ապա նոյն սրբակաց առաքինութեամբ վախճանեցաւ:

ԱՂԵՔՍԱՆԴՐ Գ. Սենացի էր իմաստուն ատենադպիր եկեղեցւոյն Հռոմայ մեծ հանդէսով օծուեցաւ Պապ 'ի 1159. բայց շատ հալածանք քաշեց մեծամեծներէն, մինչև անցաւ 'ի Գաղղիա և ժողովքով հաստատեց եկեղեցւոյ իրաւունքը հանդերձ բարեկարգութեամբ:

Յետոյ գալով 'ի Վենետիկ շատ պատուեցաւ իշխաններէն. և անոնց ուժովը խոնարհեցուց իր մեծ թշնամին Փետերիկոս կայսրը, որ եկաւ Վենետիկ ընկաւ համբուրեց սրբազան Պապին ոտքը, և զղջմամբ խնդրեց թողութիւն. իսկ մեծ Հայրապետն վերուց զինքը. և սուրբ Մարկոսի եկեղեցին պատարագ ընելէն ետև արձակում տուաւ Կայսեր: Յետոյ գնաց Հռոմ, և գումարեց Լատերանու ընդհանուր ժողովը 'ի 1179. և լաւ կանոններ հաստատեց. ապա 'ի 1181 փոխեցաւ առ Քրիստոս, քսանուերկու տարի առաքինութեամբ սուրբ եկեղեցին կառավարելէն ետև:

ԱՂԵՔՍԱՆԴՐ Դ. Անագնիացի ընտրեցաւ քահանայապետ Հռոմայ 'ի 1254. և մեծ ջանքով նուիրակներ ղրկեց առ Թէոդորոս կայսր Յունաց միաբանութեան համար. զօրացուց կրօնաւորները, և դատապարտեց մոլորական գրեանքը հաստատելով զատեան քննութեան գրքերու վրայ: Գրեց նաև բարեկարգութեան կոնդակներ և իմաստալից նամակներ, ապա 'ի 1261 փոխեցաւ առ Աստուած:

ԱՂԵՔՍԱՆԴՐ Ե. Կրետացի՝ հաստատեցաւ հայրապետ Հռոմայ 'ի 1409: Աղքատի զաւակ ըլլալով կը մուրար տղայութեան ատեն: Որ մը Ֆրանչիսկեան կրօնաւոր մը տեսնելով զայս խեղճ տղան՝ մեղքցաւ, տարաւ իր վանքն որ ծառայէ կրօնաւորներուն: Իր մանուկը մեծնալով խելքն ալ աճեցաւ, ու այն բարի կրօնաւորին կրթութեամբը սորվեցաւ փիլիսոփայութիւն և աստուածաբանութիւն. մինչև եղաւ բարի կրօնաւոր, քաջ քարոզիչ, և սորպոնեան վարդապետ ։ Ապա աղքատսիրութեամբ և սրբակաց վարքով եղաւ արքեպիսկոպոս , կարդինալ և պապ ․ որ վասն խոնարհութեան կ' անուանէր զինքը աղքատ ։ Բայց մեծ զօրութեամբ կառավարեց զուխտն Հռոմայ և ընդհանուր եկեղեցին ․ ահաւոր էր իշխաններուն և թագաւորներուն ։ Իսկ ցաւալին այն եղաւ որ տասը ամիսէն ետև վախճանեցաւ 'ի 1410 ․ և շատ գովելի եղաւ անունը առաքինութեամբ ։

ԱՂԵՔՍԱՆԴՐ Զ․ Սպանիացի յաջորդեց յաթոռ սրբոյն Պետրոսի 'ի 1492 ․ աջողակ էր մեծամեծ գործքերու մէջ , եռանդուն և հմուտ գրոց ։ Սակայն իւր ազգին և ազգականաց աւելի կողմնակից ըլլալով՝ բամբասուեցաւ և շատ թշնամիներ ունեցաւ ։ Անոր օրը գտնուեցաւ Ամերիկա , որ իւր վճռով շնորհեց Ֆերդինանտոսի Ե․ Սպանիացի թագաւորին ․ ասկէց ալ խռովութիւններ ծագեցան արքայից մէջ ։ Ասիկայ հրաման ալ հանեց Եւրոպայի տէրութեանց , որ միաբան երթան արևելեան անհաւատները խոնարհեցընեն ։ Իսկ ինքն վախճանեցաւ եօթանասունուերեք տարուան 'ի 1503 ։

ԱՂԵՔՍԱՆԴՐ Է․ Սենացի նստաւ 'ի հայրապետական աթոռ Հռոմայ ․ և լաւ խնամակալ եղաւ սուրբ հաւատքին հաստատութեան և շինութեան Հռոմայ 'ի 1655 ։ Պատուեց ուսումնասէր և առաքինի արդիւնաւորները ․ հաստատեց նախնի քահանայապետներուն վճիռները վասն Անարատ յղութեան Աստուածածնին ։ Մեծ ջանքով կը լուսաւորէր անհաւատները գրելով և քարոզիչներ ղրկելով Ամեըրկա և հեռու աշխարհներ . շատ իշխաններ և Թագուհիներ քրիստոնեայ եղան ։ Խաչատուր կաթողիկոսն Սսայ 'ի 1665 ուղղափառդաւանութեան թուղթ գրեց իրեն իրեք եպիսկոպոսով և ինը վարդապետով ։ Լվով քաղաքը դպրոց հաստատեց իւր ծախքովը վասն տասուերկու ուսանող հայ տղոց . ամէն հարկաւոր բանի կը հասնէր ։ Գրականութեան ալ հետևած ըլլալով առաջուց շինէր էր ընտիր բանաստեղծութիւն որ տպուեցաւ 'ի 1656 ։ Երբոր այսպէս կը փառաւորէր Սրբազանին բարի անունը , հասաւ վրան մահաբեր ցաւ մը , մէկէն ամէն հոգևոր պատրաստութիւնը տեսաւ . ու կանչեց բոլոր Կարդինալներն օրհնելով հոգևոր ճառ մը խօսեցաւ և ջերմեռանդութեամբ աւանդեց առաքինի հոգին վաթսունըւինը տարեան 'ի 1667 ։

ԱՂԵՔՍԱՆԴՐ Ը . Վենետիկցի , ծեր և իմաստուն՝ նստաւ յաթոռ սրբոյն Պետրոսի 'ի 1689 . որ քիչ ժամանակուան մէջ մեծ գործքերով փառաւորեց թէ եկեղեցին Քրիստոսի , և թէ իր հայրենիքը ։ Շատ ջանք ունէր շուտով կարգի դնելու ամէն օգտակար գործքերը . երբոր իրեն կ՚ըսէին թէ ինչո՞ւ կը փութաս . կ՚ըսէր իմ ժամանակս իրիկուն է ։ Որ և փառաւորապէս ամէն հոգևոր և եկեղեցական գործքերը կատարելէն ետև՝ առ Աստուած փոխեցաւ ութսունըմէկ տարեան 'ի 1691 ։

Քաջազօր գըլուխք մայր եկեղեցւոյ ,
Վրաջան ահարկուք ներհակ թշնամեաց ,
Հարին փշրեցին զմեքենայս չարին ,
Անարատ պահեալ զանդամս Յիսուսին ։

Ա յոր քաջացան շնորհօք երկնային,
Իւ է՛ յոր ճըգամբք և արդեամբք անձին.
Կուռ անպարտելիք 'ի բան հաւատոյ,
Ցըրիչ հերձուածոց մըշակաց գլխին:

ԱՂԵՔՍԱՆԴՐ սուրբ հայրապետ Աղեքսանդրիոյ մայրաքաղաքին՝ յաջորդեց Ակիւղասին ու նզովեց Արիոս հերետիկոսը: Ապա 'ի 325 ին ծերութեան ժամանակը՝ Նիկիոյ ժողովին մէջ սուրբ հայրապետներուն մէկն էր, որ գուշակեց թէ իրեն յաջորդը սուրբ Աթանաս պիտի ըլլայ. ինչպէս որ եղաւ: Շատ իմաստուն և առաքինի գործքերով պայծառացուց սուրբ հաւատքը և կուրացուց հերձուածողներուն աղանդը. մինչև սորա և սուրբ Յակոբայ Մծբնայ հայրապետին աղօթքովը սատակեցաւ Արիոս 'ի գարշելին. և ինքն սրբութեամբ փոխեցաւ առ Քրիստոս 'ի 336:

ԱՂԵՔՍԱՆԴՐ հայրապետ Երուսաղէմի, որ քահանայ ձեռնադրեց Որոգինէս վարդապետը. և խոստովանողական մահուամբ բանտին մէջ փոխեցաւ առ Տէր 'ի 249:

Կան և այլ սրբակաց հայրապետներ Աղեքսանդր անուամբ. նաև Հայ կաթողիկոսներ, ինչպէս էր Աղեքսանդր Ջուղայեցի, որ 'ի 1707 նստաւ կաթողիկոս Էջմիածին, և գրեց թուղթ ուղղափառ դաւանութեան ազգին կողմանէ առ սրբազան պապն Կղեմէս ԺԱ. և ընկալաւ անկեց գիր օրհնութեան. ապա առաքինութեամբ վախճանեցաւ 'ի 1714:

Առաքելագործ սուրբ հայրապետաց ,
Պարծանք էր ճգնիլ վասն եկեղեցեաց ․
Բանիւ և գործով հալածել ըզչարն ,
Կանգնել զհաւատոյ յաղթանակ փառաց ։
Սոքա ոտնահար հաղեից դիւական ,
Կործանիչ մոլար աղանդոց համայն ,
Անսաղապ մըցեալ 'ի կեանս և 'ի մահ ,
Պահեցին անշէջ զլոյս ճշմարտութեան ։

ԱՂԵՔՍԱՆԴՐ Նատալիս էր Գաղղիացի վարդապետ Դոմինիկեան ․ որ ուսումնասէր ըլլալով անուանի եղաւ , ու շատ գրքեր հանեց ․ գլխաւորներն են՝ Աստուածաբանութիւն ընդարձակ և Եկեղեցական պատմութիւն , և այլն ։ Որուն շատ գործքերը տպուեցան և գովելի եղան թէ հմտութեանը , և թէ յստակ լատինաբանութեանը համար ․ ծերութեան ատենը կուրացան բազմաշխատ աչքերը ․ և վախճանեցաւ ութսունըվեց տարւան , 'ի 1724 ։

Նատալիս ձայնէ , մանկի՛կ , թարմ ոգի ,
Տո՛ւր ինձ զոր ասեմ՝ փոքր խըրատուի ․
Ճշդեա՛ զժամանակ մի՛ մնար անգործ ,
Թէ ցանկաս լինել գիտուն սխրագործ ։
Վաղեմի ծերն այն մնայ առ դըրան ,
Ըրլանել ամբոխ վաստակ և ըզկեան ,
Թէ ոչ վարես զայն 'ի յիշատակ բարեաց ,
Նա բառնայ 'ի քէն 'ի քթթել ական ։

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ Մամեան նստաւ կայսր Հռոմայ 'ի 222 , և շատ ջանք ըրաւ ոչ միայն ամէն անկարգութիւն վերցընելու տէրութեանը մէջէն , այլ և ծաղկեցուց դպրոցները՝ պատուելով իմաստուններն ու խելացի սորված մարդիկ ․

որոնց ժողովարան ըրեր էր իր պալատը ։ Նոյնպէս շատ սէր կը ցուցընէր քրիստոնէից վրայ, մինչ զի կը պատմեն թէ առանձին իւր խցին մէջ դրեր էր Յիսուսի պատկերքն աստուածոց կարգը ․ ոչ երբէք ալ թողուց որ իրեն ընծայեն անուն կամ պատիւ կռոց ․ զի էր բարեմիտ և բանիբուն ։ Երբոր լսեց թէ իշխաններուն մէկը մեծ կաշառ դրամոց կերեր է, որ միջնորդ ըլլայ մեծցընելու համար հարուստ մարդ մը, կապել տուաւ զայն կաշառակուրծ իշխանն ու ոտքին տակը յարդ վառելով՝ սատկեցուց, կանչել տալով ․ "Ով որ ծուխ կը վաճառէ՝ ծխով կը կորսուի" ։ Այս Կայսրը միաբան մեր Ս. Խոսրով թագաւորին հետ ելան Արտաշիր Պարսից թագաւորին վրայ զարկին չարաչար փախուցին ։ Իսկ 'ի 235 երբոր յանդիմանեց մէկ զինուորը, նա միաբանելով ուրիշներուն հետ զարկաւ սպաննեց զբարերար կայսրն ։ Հռոմայ ծերակոյտը դիւցազանց կարգը դրաւ զինքն վասն պատուոյ, կան մինչև հիմա դրամներ Աղեքսանդրոսին անուամբը՝ մէկ կողմը տպած "Աստուծոյ որդի" ։

Ո՜հ դառն աղէտից կայսեր բարեբաղդ,
Պաշտեալ իբր ա՟ծ մերժիլ տարաբաղդ ․
Գտնել թէ գոյ տէր արարիչ Աստուած,
Կորնչիլ իսպառ որպէս անաստուած ։
Օ՜ ինչ շահ վեհանալ յաստուածոց կարգին,
Մատնիլ ընդ նոսա անզերծ գեհենին ․
Ո՜չ լաւ էր լինել աղքատ մուրացիկ,
Անցանել մահուամբ 'ի կեանս երջանիկ ։

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ Հռոմայեցի էր քաջ զօրական Մաքսիմիանոսի կայսեր ․ սա երբոր բոլոր իր ընկերները կռոց կը զոհէին, ոչ միայն հրաժարեցաւ անոնցմէ, այլև յայտնեց ամենուն համարձակ իւր քրիստոնէութիւնը. երբոր իմացաւ Թագաւորը՝ ծեծելով սուրբն տանջեց, ու հալածական ըրաւ մինչև 'ի Կոստանդինուպօլիս: Ուր խանձողեցին կողը և շատ տանջեցին. իսկ սուրբը քաջութեամբ և համբերութեամբ հրաշքներ կը գործէր, ու շատ կռապաշտներ հաւատքի բերելով կը լուսաւորէր. մինչև նահատակեցաւ սրով:

Երանի սրբոց քաջ առաքինեաց
  Վառելոց 'ի սէր անպատում փառաց.
  Անդադար օրհնեն զԱրարիչն անհուն
  Զվերբերիչ մարդկան 'ի լոյս գերաբուն:
Երանի և քեզ Թէ լինիս արժան,
  Անճառ բերկրանացն անծայր յաւիտեան,
  Սրբափայլ վարուք և խոնարհութեամբ,
  Ճշմարիտ սիրով աստուածպաշտութեան:

ԱՄԱԼԹԷԱ էր դուստր Կրետի Թագաւորին, որ ըստ հին առասպելական պատմութեան սնոյց զաստուածն Արամազդ իւր այծին կաթովը: Անոր համար փոխադրեցաւ երկինքը համաստեղութեանց կարգը հանդերձ իւր այծովը, ինչպէս որ կը նշանակեն երկնագունդին վրա աստղաբաշխերն: Արամազդ կամ Դիոս նոյն այծին մէկ եղջիւրը ընծայեց Յաւերժահարսանց որ օգնական էին Ամալթեային, և տուաւ այն եղջիւրին գերընական զօրութիւն մը՝ անանկ որ ինչ բան ուզենան, անով ձեռք բերեն: Ահա այս է հեթանոսներուն ըսած Եղջիւր առատութեան, և Մաղթեղջիւր կամ Ամաղթեղջիւր, այս ինքն Եղջիւր Ամալթէայ, ուսկից ամենայն բարիք կը Թափին կ՚ըսէին Յոյնք ։ Իսկ Յոբը երանելին իր երրորդ աղջկան անունը դրաւ Ամաղթեղջիւր ըստ թարգմանութեան Յունաց և Հայոց , որ ըլլայ յիշատակ իրեն ետքի ճոխութեանցը ։

Անգոյ առասպելըդ դիցաբոլին ,
Ջանայ մաղթեղջերբ շուք տալ Դիոսին .
Ամաղթէ ասէ տայ բարիս երկրի ,
Որ է գիւտ դիւաց պատրիչ գլխովին ։
Մի է ճշմարիտ արարիչ Աստուած ,
Պարգևիչ բարեաց բարեխնամ գըթած .
Յորմէ համօրէն էակք գոյացան ,
Սխրալի կարգաւ յար ՚ի շարժման կան ։

ԱՄԱՍԻԱ էր նահապետ Հայոց և Հայկայ թոռանը որդին , որ իրեն բնակարան շինեց Արարատ լեռան մօտ զուարճալի տեղ մը , և կոչեց իւր անուամբն Մասիս . իսկ բոլոր գաւառն անուանեց Մասեաց ոտն ։

Այս գեղազուարճ տեղը բաժնեց իր երկու որդւոցն , ու Գեղամ որդւովն դարձաւ յԱրմաւիր հօրը բնակարանը , և հոն մեռաւ ութսուներկու տարիի չափ իշխելով Հայոց վրայ . իր տեղն անցաւ Գեղամ որդին ։

Ամասիա դու հայկազունն արի
Այր աշխարհաշէն օրինակ բարի .
Գիտեալ զապագայս գըտաւ մեծիմաստ ,
Հոգացաւ զորդիսն առնել բարեբաստ ։
Բարեբաղդ և դու լինիս ճետ քաջայ ,
Թէ ըստ մեհ նախնեացդ հետևիս բարեաց .
Ո՛ի առաքինեաց արդիւնք մեծաձայն ,
Աշխարհաքարոզ հնչեն յաղգս ազգաց ։

ԱՄԲԱԿՈՒՄ էր փոքրամատեան մարգարէներէն մէկը, որ ձեռամբ հրեշտակին կերակուր տարաւ Դանիէլ մարգարէին։ Բայց ըստ ոմանց կը համարի թէ էր որդի այն Սոմնացի կնոջն, որ կենդանացուց Եղիսէ մարգարէն։ Զօրաւոր և շատ վսեմ են Ամբակումայ աղօթքն ու մարգարէութիւնքն վասն Գալստեան Փրկչին, և քրիստոնէական հաւատոյ. նաև վասն անիրաւութեանց Հրէից, և այլն։ Զոր մէկալոնց հետ կը տօնէ սուրբ եկեղեցին։

ԱՄՈՎՍ նոյնպէս էր փոքրամատեան տասներկու մարգարէներուն մէկը. առաջ հովիւ էր մօտ Բեթղեհէմի, որ ըստ բազմաց կը համարի թէ Եսայեայ մարգարէին հայրն ըլլայ։ Սա նախ չարչարեցաւ Ամասիայ քրմէն վասն Աստուծոյ. զի զօրաւոր մարգարէութեամբ սպառնացաւ Հրէից կորուստը, անոր համար երկըթէ գաւազանով զարկին ծամելիքը ջարդեցին. քանի մ' օրէն ետև վախճանեցաւ։

Ընտրեալքն յԱրարչէն յօրէնս նոր և հին,
Զանազան առնուլ ըզպսակն երկնային.
Անվեհեր ձգնեալք յասպարէզ մարտի,
Յայտնեցին զպատուէրս կամաց Արարչին։
Տեսին հաւատով զխոստումն աւետեաց,
Զոհեցան 'ի սէր անսահման փառաց.
Այսպէս հոգեկիր մարգարէքն Իվին
Սշտակիր հասին այնց երանութեանց։

ԱՄԲՐՈՍԻՈՍ սուրբ հայրապետն էր այր սքանչելի իշխանաւոր, իմաստուն, և բանիբուն աստուածային և արտաքին գիտութեամբ, որ եղաւ արդարադատ կառավարիչ կողմանց Իտալով, կառավարելով աշխարհը բարեկարգութեամբ և խաղաղութեամբ։ Ուստի գովելի առաքինութեանցը համար ամենուն հաւանութեամբն ընտրեցին եպիսկոպոս Միլան մայրաքաղաքին․ աստուածիմաստ վարդապետութեամբ ջնջեց այն կողմերէն Արիոսի աղանդը, և ծաղկեցուց ժողովուրդը բարեպաշտութեամբ և ամենայն լաւութեամբ Մեծին Թէոդոսի տանն։ Այնչափ մեծ էր այս սուրբ հայրապետին նախանձայուզութիւնը եկեղեցական իրաւանց վրայ, մինչև զԹէոդոս Թագաւորը եկեղեցին չմտուց ծննդեան օրը․ վասն զի անոր հրամանաւը անպարտ արեանհեղութիւն եղեր էր Թեսաղոնիկէ քաղաքը։ Բարեպաշտ Թագաւորն ալ մէկէն խոնարհեցաւ և արժանաւոր ապաշխարութեամբ առաւ սուրբ հայրապետին օրհնութիւնը։ Վաղենտինոսի կայսեր ալ դէմ կեցաւ չթողուց որ Արիանոսներուն համար եկեղեցի շինել տայ։ Եւ այսպէս շատ հերետիկոսներ և անհաւատներ քաղցր վարդապետութեամբ հաւատքի բերաւ ու դարձուց յուղղափառութիւն, որոնց մէկն ալ էր սուրբ Օգոստինոս․ ուստի եղաւ Հռոմայ եկեղեցւոյն չորս գլխաւոր վարդապետաց մէկը։ Ըրաւ գեղեցիկ կարգադրութիւնք եկեղեցւոյ․ գրեց շատ աստուածիմաստ ճառեր և մեկնութիւններ ՚ի հաստատութ͞ի ճշմարտութեան և սուրբ հաւատոյ, զոր այսպէս կը գովէ մեր Յայսմաւուրքը․ “Որպէս ջահ լուսափայլեաց յեկեղեցի նախանձաւոր գոլով ուղղափառ հաւատոյ, և տապալիչ հերձուածողաց„։ Այսպիսի առաքինութեամբ և սքանչելի սրբութեամբ քաղաքավարեալ մինչև ՚ի բարի ծերութիւն յամի 397, հանգեաւ ՚ի

Քրիստոս քսանուիրեք տարի հայրապետութեան պաշտօնը կատարելով· և պաշտելի եղաւ ամէն քրիստոնէից։

Նորահրաշ չքնաղ գործք եղեն վեհին,
Ամբրոսիոսի սուրբ հայրապետին·
Իբր աստղ պայծառ ծագեալ յարևմուտս,
Փայլեաց յընդհանուրս զլոյսն ա՟ծային։
Հրճուի Եւրոպա ՚ի լոյս երջանկին,
Շքեղ մատենից հոգեկիր նորին·
Անմահ յիշատակք քարոզ կենդանի,
Յայսօր հռչակեն զհայրապետն արհի։

ԱՄԵՐԻԿՈՍ՝ էր նաւապետ բանիբուն Իտալացի· երբոր լսեց Նոր աշխարհքին գտնուիլը Կոլոմպոսէ իր քաղաքակցէն՝ գնաց նախ Սպանիայի թագաւորէն խնդրեց և առաւ նաւ, ու գնաց ինքն ալ Ամերիկայի աշխարհը քանի մը նոր տեղեր գտաւ ՚ի 1497։ Ետքը գնաց Փորթուգալի թագաւորին նաւերով գտաւ Բրազիլու աշխարհը և դարձաւ Եւրոպա· և իւր ճամբորդութիւնն ու նոր աշխարհին գիւտը և պատմութիւնը աշխարհագրական տեղեկութեամբ նախ ինքն գրեց հրատարակեց ամէն տեղ։ Անոր համար այն աշխարհը իւր անուամբ Ամերիկա կոչուեցաւ ինչպէս գրած նամակներէն յայտնի է։ Հինգերորդ անգամ ճամբորդութիւն ընելու ատեն վախճանեցաւ մէկ կղզի մը վաթսունուիրեք տարուան ՚ի 1514։

Մեծապանծ էր ձիգն Ամերիկոսի
Կոլ գտիչ վայրաց նորոյ աշխարհի·
Ի լոյս ածելով զերկիրն ընդ մարդկան,
Ի գազանական կենաց տըմարդի։

Քեզ լոյսն յորդոր ջանք բանասիրաց ,
Նշանել 'ի գիւտ անծայր աշխարհաց .
Կոխել քաջարշաւ ընդ վըտանգս աստեաց
Գըտանել զանգիւտ վայրն առաքինեաց :

ԱՄԻՐՏՈՎԼԱԹ էր ճարտար բժիշկ բազմագէտ հայ Ամասիացի ԺԵ դարուն . որ կը բնակէր 'ի Կոստանդինուպօլիս Ֆէթիհ սուլդան Մէհէմմէտին օրը և անուանի էր վարպետութեամբն և շատ լեզուներ գիտնալուն համար : Ուստի շարադրեց հարուստ և ընդարձակ բժշկարան մի լեցուն զանազան տեղեկութեամբ, և անուանեց “Անգիտաց անպէտ„ : Որ կը յիշատակէ իրմէ առաջ եղած հայազգի գիտուն բժիշկներուն անունները : Ապա մեծանուն բժիշկ Սահակն տրապիզոնցի իւր բժշկարանը զարդարեց ասոր տեղեկութեանցը հետևելով . իսկ ինքն մեռաւ 'ի 1496 :

ԱՄՄԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ էր շատ գիւտաւոր բժիշկ Գերմանացի , որ իւր հնարքով սորվեցուց 'ի ծնէ խուլից և համրից կենակցիլ իրարու հետ և նշանացի խօսելով և պատասխանելով մէկզմէկու միտքը հասկընալ և իմացընել իրարու : Ասոր վրա շարադրեց երկու գիրք 'ի 1692 , զոր յետոյ գեղեցիկ ծաղկեցուցին դպրատուններով մանաւանդ 'ի Գերմանիա , 'ի Գաղղիա , և 'ի Հոլանտա : Սակայն նախ 'ի ԺԶ դարուն Պետրոս Պօնցիոս հնարեց համրագրութիւնը 'ի Սպանիա , համր խուլից լեզուն և պռկունքը շարժելով , գիր ալ հնարեց , կարդալ և ուսում սորվեցուց . որ հիմա աւելի ծաղկած է շատ տեղ :

Սխրալի է գործ իմացականին,
  Ճարտար կատարող ըղձնութեան թերին.
  Օ որ համերց խոլից զլացաւ բնութիւն,
  Տես իբր հնարէ հանճար մարդկային։
Ահա լեզուաց նոր հանդէս հիասքանչ,
  Խօսիլ անլեզու լսել անականջ
  Շարժմամբ անդամոց վիճեն հարցանեն,
  Կատարեն համակ ըստ կարգի ուսմանց։

ԱՄՄՈՆԻՈՍ ՍԱՔՔՈՑ էր փիլիսոփայ Աղեքսանդրացի քրիստոնեայ, որ ՚ի Գ. դարուն եղաւ վարժապետ մեծին Որոգինեսի և Պղոտինոսի. իւր իմաստասիրութեամբն շատ գովելի եղաւ գիտնոց և հեթանոս փիլիսոփաներուն։ Շարադրեց գիրք մը կոչեցեալ “ Համաձայնութիւն չորից աւետարանաց „. զոր կը գովէ սուրբն Երոնիմոս, և մինչև ցայժմ գիտունները կը յարգեն. որ յերիւրելով աւետարանաց բնաբաններէն՝ կը ջանայ համաձայնել իր ժամանակին փիլիսոփայութիւնը սուրբ Աւետարանին վարդապետութեանը հետ. բայց փուճ տեղը աշխատեցաւ համեմատել լոյսը խաւարին հետ. որ է անհնարին, ինչպէս յայտ է ամենեցուն։

Անհնարինքն են միշտ անկարելի
  Թէ և անկիրթ միտք կարծեն կարելի,
  Օ լոյսն ընդ խաւարի, սուտ ընդ ճշմարտին,
  Օ խարդ է լծել ըստ ուղիղ կարգին։
Այսպէս սկզբունք մասանց հաւատոյ,
  Ոչ համեմատին ընդ կեղծ աղանդոյ.
  Անմտաց է գործ նըկըրտիլ առ այն,
  Անգոսնիլ ապա յիմաստնոց համայն։

ԱՄՈՆ Եգիպտացի սուրբ ճգնաւորն 'ի մանկութենէ էր առաքինակեաց, որ բանի ամուսնացուցին իւր կամքին ներհակ․ ուստի նախ և առաջ հարսն հաւանեցուց, որ քրոջ եղբօր պէս իրարու հետ ապրին սրբութեամբ մինչև 'ի մահ։ Որոնք այնպէս սուրբ մնացին միատեղ, մինչև որ մեռան երկուքին ալ ծնողքը՝ Մաքսիմիանոսին հալածանաց ժամանակը։ Ապա սրբասէր հարսն մտաւ կուսանաց վանքը, իսկ սուրբն Ամոն եղաւ ճգնաւոր սքանչելի քաղաքավարութեամբ և հրաշագործութեամբ Թեբայեցւոց կողմերը, մինչև առաջնորդ եղաւ իրեք հազար ճգնաւորաց։ Զամենը կառավարելով իմաստութեամբ մինչև 'ի խոր ծերութիւն՝ հանգեաւ 'ի Քրիստոս բազում արդեամբք․ որուն հոգին երկինքն ելած ատենը հրեշտակներով, տեսաւ սուրբն Անտոն ու պատմեց իւր աշակերտներուն։

ԱՅԻԹԱԼԱՍ քուրմ էր կռոց Պարսից, որ ունեցաւ անբժշկելի ցաւ մը, և ինչ որ ըրաւ ճար չեղաւ․ ապա միտքը դրաւ՝ որ երթայ քրիստոնէից եպիսկոպոսին, ու անկէց գտնէ բժշկութիւն։ Ուստի ասանկ հաւատքով ճամբայ ելածին պէս բժշկեցաւ, ու ճշմարտապէս հաւատալով մկրտեցաւ․ և եղաւ զօրաւոր քարոզ ճշմարտութեան, դարձընելով շատ հեթանոսներ 'ի հաւատն Քրիստոսի։ Այս պատճառաւ քաղաքին իշխանը բռնեց զինքն ու հրաման ըրաւ մէկ քրիստոնէի մը, որ սուրբին ականջը կտրէ․ նա ալ վախուն դողալով կատարեց անոր հրամանն․ և մէկէն 'ի մէկ չորցաւ ձեռքը։ Իսկ սուրբն Այիթալաս բանտը փակեցին, ու յանձնեցին Մոգպետին, որ շատ քննելով տեսաւ որ անհնարին է անոր ուրանալը, գլխատեցին զերանելին :

Այսպէս էր սրբոց գործ անյաղթելի ,
Կոխել զամենայն փառս և վիշտս երկրի .
Միակ նպատակ տենչանաց նոցին ,
Փառաւոր առնել զանուն Արարչին :
Այս և քոյդ լցի իղձ գերբնականին ,
Դիմել միշտ 'ի վեր յանվախճան բարին .
Օամէն խոչ և խութ առ ոչինչ գրեալ
Հասանել փառաց սրբոց երամին :

ԱՆԱԿՂԵՏՈՍ սուրբ հայրապետն Հռոմայ էր Աթենացի ազգաւ Յոյն, առաքինի և իմաստուն . որ յամի 103 նստաւ սրբոյն Պետրոսի գահը և քաջութեամբ կառավարեց զեկեղեցին Քրիստոսի ինը տարի սաստիկ հալածանաց ժամանակը : Սա նախ շինեց Վատիկանու եկեղեցին Պետրոս առաքեալին գերեզմանին վրայ . որ յետոյ շատ մեծագործ շինուեցաւ , ու կոչեցաւ աշխարհաքարոզ . և զանազան եկեղեցական կանոններ ալ հաստատեց վասն պայծառութեան հաւատոյ . նաև պատուիրեց որ կղերիկոսներուն մազերը խուզեն , և եպիսկոպոսները ձեռնադրուին իրեք եպիսկոպոսով : Եւ այլ երևելի շատ գործքերով պայծառացուց եկեղեցին . ինքն ալ պայծառացաւ մարտիրոսութեամբ Տրայիանոսի կայսեր հալածանքին ատենը , խիստ չարչարանքներ քաշելով կռապաշտներէն 'ի 112ին . զոր ամէն եկեղեցիք տօնեցին . ինչպէս կը յիշէ սուրբն Օգոստինոս :

Անակղետոս մեծ հօտապետ արի ,
Գերապանծ յաջորդ սրբոյն Պետրոսի ,
Սխրալի սիրով զինքն 'ի զոհ մատոյց ,
Շըքեղ փայլեցաւ 'ի լոյս անմատոյց ։
Որդի՛ ուղղափառ նոյն սուրբ հաւատոյ ,
Մարտի՛ր անվեհեր վասն եկեղեցւոյ .
Զօրացեալ 'ի շնորհս Ամենակալին ,
Յաղթես հալածչաց , թշնամեաց նորին ։

ԱՆԱՆԻԱ էր Քրիստոսի եօթանասուներկու աշակերտներուն մէկը , նաև ձեռնասուն աշակերտ սուրբ առաքելոցն Պետրոսի և Անդրէի , որ ձեռնադրեցաւ եպիսկոպոս Դամասկոսի Պետրոս առաքեալէն . և էր մարմնով փառաւոր , հեզ և խոնարհ , շնորհալի և հրաշագործ ։ Մինչ զի արժանի եղաւ տեսլեան Յիսուսի , և անոր հրամանաւ լուսաւորեց Պօղոս առաքեալին կուրացած աչքը և հոգին , մկրտելով հրաշագործութեամբ և նշանով ։ Անկէ ետև շատ անհաւատներ դարձուց սքանչելի քարոզութեամբ և մեծամեծ հրաշքներով . մինչև հեթանոսները բռնեցին ու խիստ տանջանքներով ջանացին որ դարձընեն զերանելին . բայց նա համարձակ դէմ կեցաւ թագաւորին և ամենուն լուսաւոր վարդապետութեամբ ։ Այս պատճառաւ շատ ծեծ տալով քերթեցին և այրեցին կողը . յետոյ տարին քաղաքէն դուրս քարկոծեցին . իսկ իւր աշակերտներն առին սուրբ մարմինը թաղեցին պատուով յամի Տեառն 70 ։ Այս սուրբ առաքեալին տունը շինեցին եկեղեցի՝ անուամբ Փրկչին , յետոյ այլազգիք մզկիթ ըրին . բայց կը պատուեն Երանելւոյն անունը և գերեզմանը ։ Իսկ պատուական նշխարքը հանգուցին նախ Յուդայի պալատին մէջ, ուր իջեր էր Պօղոս առաքեալը ։ Ապա նոյն սուրբ մարմինն փոխադրեցին 'ի Հռոմ ։

Հոգեհրաշ քարոզ Աստուծոյ բանին
Անանիա ընտրեալ աշակերտ Փրկչին,
Լուսատու պայծառ մեծին Պօղոսի
Եւ իւր հայրենեաց Դամասկեան մարզին ։
Սա խոնարհ և հեզ, տեսլեամբ փառացի,
Փրկչական տեսլեան գտաւ արժանի.
Կործանիչ բագնեաց յաղթող արքայից,
Բարձրացոյց 'ի փառս սուրբ զեկեղեցի ։

ԱՆԱՆԻԱ Շիրակացի էր գիտնական վարդապետ Հայոց, Է դարուն, որ գնաց Տրապիզոնի Յունաց ուսումնարանը, և հոն Տիւքիկոս փիլիսոփայէն սորվեցաւ չափաբանական գիտութիւններն ու Համարող ըսուեցաւ. վերջը դարձաւ իր երկիրը ։ Այս ուսումնարանին աւրած տեղերը կան մինչև հիմա Տրապիզոն, որ հիմա մզկիթ է. բայց զանգակատունը և բոլոր շինուածքը պատկերքներով կեցած է ։ Անանիա սկսաւ ծաղկեցնել ուսումը 'ի Հայաստան, և հասուց երևելի աշկերտներ ալ, նաև գրեց շատ պիտանի գրքեր, քերականութենէ սկսեալ ամէն գիտութեանց վրա ճառեր, որ գլխաւորներն են. ա̃ Աստեղագիտութիւն. բ̃ Վասն որպիսութեան կենաց իւրոց. գ̃ Յաղագս զղջման և արտասուաց. դ̃ Վասն կշռոյն և վասն չափուց. ե̃ Յաղագս խոնարհութեան. զ̃ Պատմութիւն և ժամանակագրութիւն խառն ։ Գրիգոր Մագիստրոս շատ կը գովէ զայս վարդապետը. և Անաստաս կաթուղիկոսն ասոր յանձնեց Հայոց տումարին նորոգութիւնն 'ի 667 ։

Զան ուսումնատենչ մեծ համարողի
Մեծաց գովեստից եղև արժանի.
Որչափ սրտեռանդն յուսման կրթեցաւ,
Այնչափ մեծիմաստ վերապատուեցաւ։
Հետևեա՛ ձայնիս ասէ վարդապետ,
Մի կէտ մի անցցէ վասն քո անպէտ,
Ներկրթեալ առ ոտս իմաստուն անձանց,
Եղիս անուանի համբակ գերապանծ։

ԱՆԱՍՏԱՍ Ա. սուրբ հայրապետ Հռոմայեցի նստաւ յաթոռ Հռոմայ 'ի 398. ու աստուածային շնորհօք և ամենայն բարեկարգութեամբ կառավարեց ընդհանուր եկեղեցին չորս տարի, մերժելով ամէն հերետիկոսներն ու նոյն ժամանակին աղանդաւորները, որոնք շատ զօրացեր էին ամէն աշխարհ։ Բայց զօրաւոր վարդապետութեամբ և սուրբ վարքով զամէնքը պապանձեցուց. ինչպէս որ կը հաստատեն ժամանակակից սուրբ հայրապետները Ամբրոսիոս, Հերոնիմոս, Օգոստինոս, Ոսկեբերան, և այլն։ Զարմանալի էր աղքատասէր գթութիւնը, մինչև նոյն առաքինութեամբ և սրբութեամբ փոխեցաւ առ Աստուած 'ի 402։

ԱՆԱՍՏԱՍ Բ. Հռոմայեցի սուրբ և իմաստուն անձն, ընտրեցին քահանայապետ Հռոմայ 'ի 496. և իբր երկու տարի առաջնորդեց վայելուչ կարգադրութեամբ, գրելով կոնդակ առ արևելեան կայսրն Անաստաս վասն հաստատութեան սուրբ ուղղափառ հաւատոյ։ Նոյնպէս գրեց նամակ խնդակցութեան առ Կղոդովէոս թագաւոր Գաղղիոյ, որ դարձեր էր 'ի հաւատս Քրիստոսի խափանելով կռապաշտութիւնը։ Իսկ առաքելաշնորհ սուրբ հայրապետն Անաստաս կատարելով իւր պաշտօնը իմաստութեամբ՝ փոխեցաւ առ Քրիստոս 'ի 498 ։

ԱՆԱՍՏԱՍ Գ․ հաստատեցաւ յաջորդ սըրբոյն Պետրոսի 'ի 911, որ անարատ վարքով առաքինութեամբ և խոհական կառավարութեամբ կարգադրեց եկեղեցական արարողութիւնները և ամենայն կանոնները ։ Երեք տարիէն ետև փոխեցաւ առ Քրիստոս ։

ԱՆԱՍՏԱՍ Դ․ Հռոմայեցի ընտրեցաւ քահանայապետ հռոմէական սուրբ աթոռոյն 'ի 1153, և մեծ իմաստութեամբ կառավարեց ընդհանուր եկեղեցին․ անոր համար քիչ ժամանակուան մէջ մեծանուն հանդիսացաւ, և ամէն ազգաց պատկառելի և սիրելի եղաւ առատաձեռնութեամբը, մանաւանդ սովի ժամանակ խնամելովը աղքատները․ բայց մահը շուտ հասաւ ու շատ օգտակար մեծագործութիւնները անկատար թողուց ։

Առաքելագործ քաջ հովիւք Փրկչին
Արեամբ չափ ճգնեալք 'ի վերայ հօտին,
Ոխնեցան ընդդէմ հերձուածոց չարաց,
Պահեալ անսասան սուրբ զեկեղեցին ։
Ահա ապացոյց կրօնից ուղղութեան
Յոր վերայ հովիւք գան ընդ քիրտն արեան․
Դրունք դժոխոց աստ ոչ ինչ զօրեցին,
Շարժել զանշարժ վէմն ըստ անսուտ վճռին ։

ԱՆԱՍՏԱՍԻԱ էր Հռոմայեցի, կոյս սրբակաց և մայրապետ կուսանաց․ զոր կռապաշտները բռնեցին և շատ տանջեցին Դեկոսի հալածանաց ժամանակը ։ Յետոյ վիզն անուր անցուցած՝ մատնեցին դատաւորին . բայց երբոր նա անվախ համարձակ կը դաւանէր զՔրիստոս , ծեծելով ձգեցին կրակի վրա . քերեցին մարմինը , կտրեցին ծիծերը և հանեցին ըղունգներն ու ջարդեցին բոլոր ակռաները ։ Ապա գլխատեցին զերմանելի կոյսն , որ երբ տանջանքի մէջն էր՝ ջուր ուզեց ։ Կիւրեղ անունով մէկը հասուց իրեն ջերմեռանդութեամբ ջուր . զան ալ բռնեցին նահատակեցին , որ սուրբ կուսին աղօթքով և բաժակ մի ջրին վարձքով արքայութիւնը ժառանգեց , ուստի երկուքն ալ եղան տօնելի ։

Անաստասիա ամբիծ աղաւնին ,
  Վառեալ'ի սիրոյ անմահ փեսային ,
  Զկապանս և տանջանս առ ոչինչ գրեալ ,
  Թեւանայ տենչմամբ առ իւր անձկալին ։
Այսպէս և հոգիդ քո հարսն է նորին ,
  Գեղեցկազարդեալ'ի շնորհըս վերին .
  Ո՛ն վառեա՛'ի սէր աստուածպաշտութեան ,
  Փառօք վերբերիս յերկնաւոր փեսայն ։

ԱՆԱՍՏԱՍԻՈՍ կամ ԱՆԱՍՏԱՍ քահանայ էր առաջ պարսիկ մոգ Մակունդաս անուամբ Բ . Խոսրով թագաւորին օրը ։ Պարսիկները երբոր Հերակլ կայսեր դէմ պատերազմ բացին ու առին Երուսաղէմ և գերի տարին սուրբ խաչն Քրիստոսի , որով մեծամեծ հրաշքներ եղան հոն , Մակունդաս լսելով կարծեց թէ քրիստոնէից Աստուածն հոն եկեր է . հարցուց թէ ուսկից է այն փայտին զօրութիւնը ։ Երբոր իմացաւ թէ Աստուածն քրիստոնէից խաչուեր է անոր վրա վասն փրկութեան մարդոյ , վառեցաւ սիրտը քրիստոնէութեան սիրով, և հետևելով ճշմարտութեան սորվեցաւ հաւատքը. մինչև հաստատ առաջադրեց որ քրիստոնեայ ըլլայ ։ Այս փափաքով գնաց յԵրուսաղէմ, և մկրտեալ անուանեցաւ Անաստասիոս, այս ինքն Յարութիւն, 'ի պատիւ յարութեան Փրկչին. ապա գնաց սուրբ Սաբայի վանքը կրօնաւորեցաւ, ու սորվեցաւ դպրութիւն և ամենայն աստուածպաշտութեան կարգերն, և եղաւ շատ ջերմեռանդ ու բարեպաշտ. և երբոր մարտիրոսներուն չարչարանքը կը լսէր, կը բորբոքէր սիրտն ու լալով կը խնդրէր որ ինքն ալ արժանի ըլլայ սրբոց նահատակութեանը ։ Ուր տեսիլք մ' ալ տեսաւ որ բարձր լեռան մը վրա ելեր էր, ու տուին ձեռքը ոսկի բաժակով գինի. խմածին պէս արթնցաւ. գնաց եկեղեցին հաղորդուեցաւ ամենայն պատրաստութեամբ նահատակութեան համար ։ Յետոյ գնաց Կեսարիայ Պաղեստինու. և հոն քարոզելով զՔրիստոս վար կը զարնէր Պարսից լեզուով անոնց խաբեբայ մոգութիւնն ու մոլորութիւնը ։ Անոնք ալ բռնեցին սուրբը տանջեցին ու ծեծելով բանտը դրին կապանօք, ուր երկնաւոր տեսլեամբ մխիթարուեցաւ հրեշտակներէն. ապա տարին Պարսկաստան զերանելին Անաստաս, և սոսկալի տանջանքներով և հարցմունքներով փորձեցին ։ Բայց ինքը միշտ ուրախ և զուարթ պատասխան կու տար ու կը համբերէր ամէն վշտաց, մինչև հեթանոսները կապելով գլխատեցին սուրբը. որուն հրաշագործ նշխարքը սփռեցան 'ի Պաղեստին և 'ի Հռոմ, և ամէն տեղ մեծամեծ հրաշքներով փառաւորեցաւ անունը, և տօնեցին եկեղեցիք քրիստոնէից ։

Ո՛վ անճառահրաշ շնորհաց անմահին,
Ո խորդ լուսափայլ արար զսեաւ հոգին.
Կորզեալ յանդնդոց խաւար գեհենին,
Եհան 'ի կաճառ զօրաց լուսածին։
Անաստաս եղեալ արի խաչազգեաց,
Ի մութ խաւարէ ել 'ի լոյս փառաց.
Հերքեաց քաջապէս զդեն մոխրապաշտից,
Հրաշագործ անմահ լեալ աստուածազգեաց։

ԱՆԱՓԵՍՏՈՍ Պօղոս էր Ա. Դուքս վենետիկի. որ 'ի 697ին միաբան կամօք իշխանաց եղաւ իշխանապետ մեծ և կոչեցաւ Տօժ։ Սա մէկէն 'ի մէկ սկսաւ օրէնքներ սահմանելով բարեկարգել քաղաքը և ժողովուրդը, նաև կրթելով զանոնք նաւարկութեամբ զօրացուց տէրութիւնն, որ հետզհետէ այնչափ ուժովցաւ, մինչև ոչ միայն Ադրիական ծովուն, այլ Միջերկրական ծովուն մեծամեծ կղզիներուն ալ տիրեց յետոյ ճոխութեամբ։ Իսկ ինքը մեռաւ 'ի 717, որուն յաջորդելով ապա երևելի Տօժ իշխաններ փառաւորեցին այս հասարակապետութիւնը կոչելով Ազնուապետութիւն. որ 'ի 1797ին Գաղղիացիք տիրելով վերուցին այս փառաւոր ինքնակալութիւնը վասն թուլամորթութեան իշխաններուն. վերջի Տօժն եղաւ Լուդովիկոս Մանին. իսկ այս տէրութեան շարունակութիւնը բոլոր ԺԳ. դար քշեց։

Զնաշխարհիկ անզոյգ քաղաք Վենետկեան,
Անառիկ պանծայ ընդ աշխարհ համայն.
Յազգասէր քաջաց փայլեալ բարեբաղդ,
Յանարի արանց լքաւ իբր անբաղդ։

Այո՝ զաղփաղփուն արարք աշխարհի,
Բայց պանծան յաւերժ յիշատակք բարի.
Ազգ գայ ազգ երթայ յանդուլ հոլովման,
Համբաւք լաւ և վատ պատմին յաւիտեան:

ԱՆԱՔՍԱԳՈՐԱՍ էր Յոյն փիլիսոփայ Յիսուսէն 500 տարի առաջ, որ իմաստութեամբ մտածելով աշխարհիս սքանչելի բարեկարգութեանը վրայ կը քարոզէր թէ պատճառ տիեզերքիս աստուածային միտքն է. Աստուած է հոգի կամ միտք. և թէ կազմած է աշխարհս յԱրարչագործէն խառնութեամբ այլևայլ մասունքներու: Արեգակն է գնտակ մեծ հրեղէն. նաև լուսինին մէջ կ՚ըսէր, բնակիչք կան: Երբեմն երեսը զարկին թէ հայրենիքդ չես հոգար. պատասխանեց մատովն երկինքը ցուցընելով. "Ես հոգ ունիմ և մեծ կը համարիմ իմ հայրենիքս, որուն համար ծնած եմ": Եւ երբ կը քարոզէր թէ ամէն բան ստեղծուած է միայն Գերագոյն էակէն, Աթենացիք զինքը դատապարտեցին իբր անկրօն և մահապարտ թշնամի աստուածոց: Երբոր լսեց այս բանը՝ ասաց. "Օրէնք բնութեան շատոնց դատապարտեր է զիս ալ, և իմ թշնամիներս ալ, այդ ելքի պատուհասով որ մեռնինք":

Եւ երբ լսեց որդւոյն մահը՝ ասաց. "Գիտէի որ մահկանացու ծնայ": Յետոյ թշնամիներէն փախաւ գնաց ՚ի Լամփսակիա, և հոն սովամահ մեռաւ եօթանասունևերկու տարւան. իսկ գերեզմանին վրայ նուիրական սեղան մը կանգնեցին պատւոյ համար:

Իմաստնախորհ բան իմացականին
Քաջ լուսաբանէ զԷակն այն անծին .
Զի գեղապաճնեալ արարածք անբաւ ,
Հարկ է ասեն գոլ միոյն ինքնաբաւ :
Բայց մըտացդ հանդէպ զմատեան անբաւին ,
Տե՛ս ըզ չքնաղ գործս արարող մատին .
Զիա՛րդ հիասքանչ էակք պարբերեալք ,
Կան ըստ գեղեցիկ կարգաց Անեղին :

ԱՆԳԷԱՍ էր փոքրամատեան մարգարէ , որ Թարգմանի ուրախարար , զի Բաբելոնէն դառնալէն ետև մարգարէանալով ուրախացուց ժողովուրդը , Թէ հինգ հարիւր տարիէն ետքը Փրկիչ պիտի գայ : Ուստի շատ սիրտ կու տար Զօրաբաբելին որ առաջ տանի Երուսաղէմի տաճարին շինութիւնը . նաև սաստիկ կը յանդիմանէր Հրէաներն որ աւելի իրենց տունը շինելու հոգ ունէին և ոչ Աստուծոյ տունը : Մարգարէութիւնը Թէպէտ երկու գլուխ է . բայց զօրաւոր խօսքով կը սպառնայ յաստուածակոյս կողմանէ ասելով . “ Դարձեալ միւսանգամ շարժեցից զերկինս և զերկիր „ . և այլն . Պօղոս առաքեալ այս բանը վկայութիւն կը բերէ իր Թղթին մէջ . իսկ ինքն վախճանեցաւ խաղաղութեամբ , զոր կը տօնենք :

Անգէ տեսանող ձայնէ քաղցրաձայն ,
Մի զերկրաւորաց լինել փութաջան .
Առաքինութեամբ հիմնեսցի քոյդ տուն ,
Երանաւէտեալ յանմահից կայան :
Այսգոյն տենչանօք համօրէն արդարք ,
Գործովք բարութեան եղեն երկնաբնակք .
Որոց ոտք միայն զերկիր կոխէին ,
Հոգւով և մտօք յերկինս ճեպէին :

ԱՆԴՐԷԱՍ նախկին առաքեալ Քրիստոսի, առաջ էր աշակերտ Յովհաննու Մկրտչին. և եղբայր գոլով սրբոյն Պետրոսի տարաւ զնա առ Քրիստոս. և եղաւ երևելի աշակերտներուն մէկը, միշտ շրջելով Յիսուսին հետ։ Իսկ Համբարձմանէն ետքը վիճակեցաւ Անդրէի բարբարոսաց աշխարհն, որ մեծամեծ սքանչելեօք սերմանեց զբանն կենաց 'ի Պոնտոս և 'ի Բիւթանիա, նաև յԵլլադա և 'ի Բիւզանդիա կամ Կոստանդինուպօլիս. ուր դրաւ եպիսկոպոս Եւստաքէոս իւր աշակերտը, և այս պատճառաւ Պօլիս անուանեցաւ աթոռ սրբոյն Անդրէի. այլև Ռուսաստանի կողմերը քարոզելուն և լուսաւորելուն համար ալ կոչուեցաւ առաքեալ Ռուսաց։

Յետոյ գնաց շրջեցաւ Յունաստանի քարոզութեամբ սուրբ Աւետարանին մինչև 'ի քաղաքն Պատրէս, ուր Եգէաս կուապաշտ դատաւորը լսելով անոր հրաշքներն ու քարոզութիւնները՝ շատ նեղութիւն և տանջանք տուաւ, որ դարձընէ. ապա հրամայեց որ խաչ հանեն։ Իսկ երանելին պլլուելով խաչին կ'ուրախանար Քրիստոսի խաչակից ըլլալուն համար. ուստի որչափ որ մնաց խաչին վրայ՝ միշտ կը քարոզէր սուրբ հաւատքը, մինչև աւանդեց հոգին յամի 69։ Իսկ մարմինը տարին 'ի Կոստանդինուպօլիս, հանգուցին Առաքելոց տաճարը. և Ոսկեբերան գովեստ և պայծառ ճառ խօսեցաւ վրան։

Ողկայք Քրիստոսի ցօղով սուրբ արեանց
Մանրացուցին զոյժ աշխարհակալաց.
Աղքատին բնութեամբ Առաքեալքն անզօր,
Եղեն գերափառ յաղթողք մեծազօր։

Դոքա են իշխանք երկնից արքային ,
Խորհրդածուք մեծք խորոյն անհասին ,
Լոյս ճշմարտութե՟ ընդ աշխարհ համայն ,
Ծաւալեցին ընդ աստուածգիտութեան ։

ԱՆԴՐԷԱՍ զօրավար էր ծածուկ քրիստոնեայ առանց մկրտութեան , և զօրագլուխ կայսերական բանակին ։ Երբոր իրեն վեց հարիւր զօրքովը՝ ճակատեցաւ բարբարոսաց դէմ , անոնց բազմութենէն սկսան իր զօրքը վախնալ ․ քաջն Անդրէաս յորդորեց զանոնք՝ որ հաւատան յԱստուած ճշմարիտ ու խնդրեն անոր օգնութիւնը ․ նոյն աստուածային զօրութեամբ յաղթելով փախուցին թշնամիները ։ Իսկ երբոր դարձան ու կը փառաւորէին զԱստուած՝ երկու հարիւր զօրականք եկան բուն բանակէն իրենց հետ միացան ։ Ան ատենը Անտիոքոս կռամոլ մեծ սպարապետը բարկանալով հալածական ըրաւ զԱնդրէաս իւր բանակովը ․ և դրաւ անոնց վրայ երկու հազար զօրք ․ որ հալածելով և նեղելով զանոնք կորնցընեն ։ Բայց քաջն Անդրէաս զամէնքը դարձուց 'ի քրիստոնէութիւն , ապա միաբան գնացին 'ի Տարսոն մկրտեցան Պետրոս եպիսկոպոսէն քաղաքին , և Բերիայի Նոննոս եպիսկոպոսէն ։ Մկրտութեան ատենը վերէն լոյս ծագեց ու գլուխներուն վրայ պսակներ երևցան իբր նշան մարտիրոսութեան , ինչպէս որ եղաւ ։ Վասն զի անօրէնն Անտիոքոս զօրք հանեց ասոնց բանակին վրայ , որք աներկիւղ պատրաստեցան պատերազմել հեթանոսաց դէմ և մեռնիլ 'ի սէրն Քրիստոսի , ինչպէս որ կը քաջալերէր զիրենք քաջն Անդրէաս ։ Ուստի ամէնքը յօժարութեամբ յանձն առին արիւն թափելու վասն երկնաւոր յուսոյն. և կատարեցան 'ի Տէր բոլորը երկու հազար հարիւր ոգիք. որոնց սուրբ նշխարքը մեծամեծ հրաշքներ յայտնելով տօնելի եղան։

Այսպէս յոյս հըզօր է փառաց վերին,
Տայ զոհել ըզկեանս 'ի փառըս խաչին.
Մերժեալ զահ, զերկիւղ, զոյժ բռնակալաց,
Առնու զանթառամ՝ պըսակն յաղթողաց։
Արդ նոյն փառաւոր պըսակ նազելի,
Անշուշտ վասն քո յերկինըս պահի.
Թէ նովին յուսով լինիս յաղթական,
Փառք տիրականիդ շըքեղ պերճանաց։

ԱՆԴՐԷԱՍ կրօնաւոր Կրետացի, շատ երևելի աստուածապաշտ էր Ը. դարուն մէջ. որ պատկերամարտութեան հալածանքին ատենը գնաց 'ի Պօլիս, զարմանալի կերպով ջատագով եղաւ պատկերներուն և սրբոց նշխարաց՝ համարձակ յանդիմանելով Կոպրոնիմոս պատկերամարտ կայսրը։ Աստի կատղելով այն անօրէնն ալ չարաչար ծեծել տուաւ զերանելին, ակռաները և բերանը քարով ջարդեց։ Ապա ոտքը չուան կապած քարշ բերին քաղաքին մէջ և երբոր կացնով ալ ոտքը կտրեցին, աւանդեց հոգին առ Աստուած, ու մեծամեծ հրաշքներ եղան. մեծ պատուով հանգուցին սուրբ մարմինը փառաւոր տեղ մը, որ եղաւ ուխտատեղի հաւատացելոց Կրիսիս անուամբ։

Առաքինասէր հովիւ խոհական,
Մեծ չընաշխարհիկ յիւրում պաշտաման,
Հըզօր դիմամարտ զինու թշնամեաց,
Ցըրիչ քանասար գայլոց գազանաց։

Իղձ եղև տենչմամբ հետևել Փրկչին,
Ի փրկանս գառանց զոհել զկեանս անձին.
Սիրտ սիրաբորբոք վառեալ հանապազ,
Վերափայլեցաւ յանմահիցըն դաս :

ԱՆԹԵՐՈՍ սուրբ հայրապետն Հռոմայ ազգաւ Յոյն՝ յաջորդեց սրբոյն Պետրոսի 'ի 237. և սկսաւ սրբութեամբ և իմաստութ՟բ կառավարել սուրբ եկեղեցին : Նա պատուիրեց որ նօտարները ժողվեն հաւաքեն մարտիրոսաց ամէն վկայաբանութիւններն ու գործքերը և զգուշութ՟բ պահեն եկեղեցնայ մէջ : Բայց մէկալ տարին ինքն ալ մարտիրոս եղաւ . զի Մաքսիմինոս կռապաշտ դատաւորը նահատակեց սուրբը վասն անուանն Քրիստոսի . և տօնելի եղաւ :

Անթերոս յաջորդ մեծին Պետրոսի,
Համանման նմին քարոզ Քրիստոսի,
Յօղովլ սուրբ արեան փայլեցոյց զիւր գահ,
Անթառամ փառօք պսակեցաւ անմահ :
Այս մեծահրաշ գործք աստուածարելոց,
Ի սէր ճշմարտին ողջակէզ ելոց,
Քաջ ամրացուցին զհիմն եկեղեցւոյ,
Անշարժ գոլ անյաղթ և դրանց դժոխոց :

ԱՆԹԻՄՈՍ՝ էր հայրապետ Իզնիմիտ քաղաքին, հովիւ առաքինի և իմաստուն : Մաքսիմիանոս թագաւորը լսելով ասոր սրբութեան համբաւը՝ զօրք ղրկեց որ բռնեն : Բայց նա զանոնք ամէնը հաւատքի բերաւ ու մկրտեց . ապա ելաւ թագաւորին առջեն, համարձակ քարոզեց Քրիստոսի աստուածութիւնը . մինչև կատղելով կռապաշտները սկսան սոսկալի տանջել զերանելի հայրապետը ծեծով, հրով և սրով։ Իսկ նա անվնաս ազատեցաւ, ձեռամբ հրեշտակաց. յետոյ բանտը ղրկին, ուր ալ բանտարկեալները քրիստոնեայ կը դարձընէր։ Ան ատենը հրամանաւ Թագաւորին գլխատեցին զսուրբն Անթիմոս յամի 302. և հոն հանգուցին հաւատացեալք անոր հրաշագործ մարմինը։

ԱՆԹԻՊԱՍ՝ վկայ հաւատարիմ անուանեցաւ Յովհաննու յայտնութեան գրոց մէջ. որ էր Քրիստոսի աշակերտներէն մէկը, և ձեռնադրեցաւ եպիսկոպոս Պերգամոյ։ Նա իւր զօրաւոր աղօթքով կը հալածէր դևերն ու կը խայտառակէր քուրմերուն սատանայական խաբէութիւնները. այնչափ որ կռամոլ իշխանները կատղեցան Անթիպասին դէմ. իսկ դատաւորը բռնեց զերանելին, և մեծ հալածանքով կը նեղէր որ զոհել տայ կռոց։ Այլ երբոր ճարը հատաւ, ձգեց սուրբը հրացեալ պղնձէ ցուլին մէջ. և այնպէս այրելով ողջակէզ եղաւ ՚ի սէրն Քրիստոսի. և թաղեցաւ հոն պատուով. ու ամէն ազգաց տօնելի եղաւ։

Անթիպաս ընտրեալ աշակերտ Փրկչին,
Մեծափառ վըկայ քաջ հաւատարիմ.
Նախընծայ պտուղ սուրբ եկեղեցւոյ,
Արժանի նորուն շքեղ սեղանոյ։
Պանծայ Ասիա արեամբ վըկային,
Ո ի լուսով փայլեաց դիւանուէր տեղին.
Ամպարիշտ կռօնք բարձան ընդ բագնեաց,
Փառօք հըռչակին գործք սքանչելեաց։

ԱՆԻԽ Պետրոս՝ էր Գերմանացի գեղացու մը որդի, որ մինչև քսանըհինգ տարւան եղաւ՝

հովիւ և երկրագործ էր ։ Բայց անասունները քշած ատենը միշտ երկինքը նայելով աստղերուն շարժմունքը կը զննէր ուշադրութեամբ, ուր անանկ վառեցաւ սիրտը անոնց վրա որ գիշեր ցորեկ զանոնք մտածելով և դիտելով, կրցաւ որոշել երկնից շրջանները ։ Ապա հանդիպեցաւ իրեն մէկ քաջ վարդապետ մը Յիսուսեան . և տեսաւ որ մէկ գեղացի տղայ մը առանց վարպետի այսչափ տեղեկութիւն ունի, զարմանալով առաւ իրեն աշկերտ ըրաւ, ու քիչ ժամանակւան մէջ եղաւ լաւ աստեղաբաշխ ։ Մինչ զի քաղքին համալսարանին համար յօրինեց խիստ լաւ երկնագունտ մը, և պատուական գործիքներ մաթէմաթիգայի . իսկ ինքը մեռաւ քառասունը հինգ տարւան յամի 1766 ։

Այսպիսի ինքնահանճար հովիւներ տեսանք Նողայի Թաթարներուն մէջ . որ երկնից աստղերուն շարժմունքները և շրջանները դիտելով՝ աստղաբաշխութեան և մաթէմաթիգային ուսմունքը կը բացատրեն իրենց բառերով և բնական ոճով մը ։ Յորմէ կը հետևի թէ բնազննական գիտութեանց և աստղաբաշխութեան առջի գտնողներն եղան հողագործներն ու հովիւները բնական հանճարով, ինչպէս որ Ովիդիոս ալ կը վկայէ ։

Հիասքանչ ներհուն միտք շինականին,
Յայտնէ զզօրութիւն մտաց ձիր հաստչին,
Յորմէ արտադրեալ՝ գիւտ պէսպէս ուսմանց,
Սխրացոյց զաշխարհ ընդ գիտնականաց ։
Բարեկիրթ միտք են ծնող գիտութեան,
Իսկ անկիրթքն են գուլ նսեմ և խոտան .
Հարկ է ներկրթել զայս բանականին,
Զի քաջ ուռճասցին սերմանք բընածին ։

ՆԻԿՏՈՍ կը թարգմանի անյաղթ, էր ազնուական կոմս Նիկոմիդացի. եղբօրորդի մ'ալ ունէր Փոտինոս անունով որ կը նշանակէ լուսազգեաց. որոնք ըստ անուանցն եղան փառաւոր նահատակք, և նախկին պսակաւորք Դիոկղետիանոսի հալածանքին ատենը'ի 302: Վասն զի երբոր անօրէն կայսրը կը պատուիրէր որ ամէնքն ալ կռապաշտ ըլլան. Նիկտոս առաւ զՓոտինոս, ճղքեց բազմութիւնն ու ելաւ թագաւորին առաջն. և համարձակ խոստովանեցաւ իւր քրիստոնէութիւնը, չարաչար վար զարնելով հեթանոսներուն մոլորութիւնը և կուռքերուն ոչնչութիւնը, անանկ որ շատերը դարձան եղան քրիստոնեայ: Ուստի սաստիկ ծեծով տանջեցին զերանելին ու ձգեցին առիւծի մը բերան. բայց Աստուած պահեց զինքը. յետոյ դահիճին ձեռքն ալ չորցաւ, չի կրցաւ գլուխը կտրել. նոյնպէս ոչ անիւը և ոչ հուրը կրցան վնասել: Տեսան որ չըլլար, բանտը ձգեցին իրեք տարիի չափ. յետոյ երբոր նորէն կրակին մէջ ձգեցին սուրբերը, աղօթելով փոխեցան առ Աստուած, բայց մարմինները անապական մնացին իբրև կենդանի. զոր մեծ պատուով հանգուցին հաւատացեալները, և շատերն ալ անոնց հետ մարտիրոս եղան վասն Քրիստոսի'ի 305:

Նիկտոս ալին՝ ընդ անուանն անյաղթ
Ի հանդէս մարտին գըտաւ քաջայաղթ.
Ինքնարշաւ կացեալ ընդդէմ արքային,
Ապշեցոյց զաշխարհ քաջութեամբ անձին:
Նոյնպէս Փոտինոս ջահ լուսապայծառ,
Երկնալոյս շնորհօք փայլեաց սիրավառ.
Որք զոյգ ղամբարք անշէջ հաւատոյ,
Լուսատու որդւոց սուրբ եկեղեցւոյ:

ԱՆԻԿՏՈՍ սուրբ քահանայապետն Հռոմայ ազգաւ Ասորի՝ ընտրեցաւ գլուխ սուրբ եկեղեցւոյ 'ի 167, և փառաւորեց իւր աթոռը հաստատելով առաքելական կանոնները վասն կղերիկոսներուն, և կատարելոյ զատկին տօնը կիրակի օր յետ գարնանային հաւասարակածին ։ Այս բանիս համար եկաւ իրեն Պօղիկարպոս Իզմիրու սուրբ եպիսկոպոսը ։ Իսկ սուրբն Անիկտոս վասն ուղղափառ հաւատոյ՝ մարտիրոսութեամբ պսակեցաւ փառօք 'ի 175 ամին, իմաստութեամբ և սրբութեամբ կառավարելով ընդհանուր եկեղեցին ութը տարի ։

ԱՆՆԱ · Տ · ՅՈՎԱԿԻՄ ·

ԱՆՆԱ Իւանովնա՝ էր դուստր Յովհաննու, մեծին Պետրոսի Ռուսաց կայսեր եղբօրը, որ յաջորդեց Բ. Պետրոսի ։ Այս խելացի կայսերուհին նստաւ 'ի 1730ին և մեծ խոհեմութեամբ կառավարեց թագաւորութիւնը խաղաղութեամբ և լաւութեամբ . շատ զօրացուց զինուորութիւնն ու վաճառականութիւնը, գեղեցիկ բարեկարգելով տէրութիւնը ։ Բայց շուտով հասաւ մահը քառասունըեօթը տարուան հասակին 'ի 1740 . և կայսերութիւնը թողուց Իւան թոռանը ։

ԱՆՆԻԲԱԼ՝ էր քաջ սպարապետ Կարքեդոնացւոց 220 ամօք . Քրիստոսէն առաջ, որ խելքով և քաջութեամբ քիչ ատենի մէջ բոլոր այն կողմերուն և Եւրոպայի մեծ մասին տիրեց, մինչև հասաւ Հռոմ, և մեծ հնարքներով կը ջանար տիրելու ան քաղքին ալ ։ Շատ անգամ յաղթելով Հռոմայեցւոց մեծ վնաս տուաւ . և քիչ մնաց որ բոլորովին պիտի տիրէր, թէ որ չերթար՝ Նափոլի, զօրքին հանգիստ տալու համար . ուր անոնք անառակութեամբ ուտելու խմելու ընկան թուլութեան ։ Իսկ Հռոմայեցիք միջոց գտան զօրացեալ բանակ կազմեցին ու տուին իրենց քաջ Սկիպիոն զօրավարին ձեռքը, ղրկեցին Սպանիայի վրան . որ հոն յաղթելէն ետև անցաւ յԱփրիկէ, պաշարեց Կարքեդոն Աննիբաղին հայրենիքը ։ Կարքեդոնացիք նեղը մնալով ետ կանչեցին Աննիբաղն որ երթայ հայրենիքը ազատէ . իսկ նա մէկէն թողուց Իտալիա ու Ափրիկէ գնաց պատերազմեցաւ . բայց յաղթուեցաւ Հռոմայեցիներէն, անանկ որ ստիպեցաւ անոնց հետ հաշտութիւն ընելու իրեն վնասովը ։ Ահա այսպէս վերջացաւ Փիւնիկեան տասնըեօթը տարուան սաստիկ պատերազմը ։ Իսկ ինքը փախաւ յԵփեսոս և 'ի Հայաստան ։ Հռոմայեցիք շատ ետևէն ընկան որ բռնեն, և ուր որ գնաց՝ վրան մարդ հանեցին ։ Երբոր Բիւթանիա փախած էր Աննիբաղ, հոն ալ գնացին պաշարեցին տունը . խեղճը նայեցաւ որ ազատում չունի, թոյն առաւ մեռաւ վաթսունըչորս տարուան ։ Ասոր մեծամեծ քաջութիւնները, խելքը, և հայրենասիրութիւնը ամէն աշխարհք և ամենայն ազգ կը գովեն ։

Աննիբաղ եղուկ կարդայ այժմ անձին,
    Քաջայաղթ ազգաց՝ այլ ոչ բուռն ախտին .
    Իղձ լինէր կլանել զաշխարհ ամենայն,
    Բայց անպուրծ անկաւ 'ի մահուն բերան ։
Անյագ հուր է տենչ սնոտի մեծութեանց,
    Ուտէ սպառէ զոգիս ընդ կենաց .
    Որչափ գերապանծ լինել ձգնեցաւ,
    Այնչափ 'ի կորուստ անձին փութացաւ ։

ԱՆՈՒԲԻՍ՝ ըստ առասպելաց էր չաստուած Եգիպտացւոց, որ կը ձեւացընէին շանագլուխ, մէկ ձեռքը նուագարան մէկալ ձեռքը՝ օձապատ գաւազան. և էր նշանակ շնիկ աստեղ, որ երբ արևէն հեռանալով կ՚երևնայ առաւօտանց, Նեղոս գետն ալ կ՚ըսկըսի առատանալ։ Այս պատճառաւ Եգիպտացիք զայն պաշտելով զգուշութեամբ կը դիտէին անոր ծագելը. և մինչև հիմա այս սովորութիւնը կը պահեն հոն, ու մեծ ուրախութիւն կ՚ընեն. վասն զի նոյն ջրին առատութեամբը կ՚ըլլայ Եգիպտոսի պտղաբերութիւնը և հարստութիւնը։

ԱՆՈՒՇԱՒԱՆ էր Հայկազուն նահապետ բարեհանճար և զօրաւոր. որուն հայրը Կարդոս նուիրեր էր զինքը սօսեաց անտառին, անոր համար կոչուեցաւ Սօսանուէր։ Հայրը մեռնելէն ետև քանի որ դեռ տղայ էր՝ գերի եղաւ Նինուասայ Շամիրամայ որդւոյն։ Երբոր մեծցաւ Թագաւորական պալատին մէջ սիրելի եղաւ մեծամեծներուն, ու Հայաստանու մէկ մասին տիրեց, և յետոյ բոլոր Հայոց աշխարհին, ու շատ բարեկարգութեամբ զօրացաւ։

Անուշաւան քաջ դիւցազն իմաստուն
Այր բարեհանճար հըզօր գերագոյն,
Ի կարգս իշխանաց շքեղ վեհացաւ
Ի դարս հնութեան պերճ գերահամբաւ։
Օրինակ չըքնաղ հօրամոյն մանկանց
Մի՛ ինչ վըստահիլ մեծութեան ծնողաց.
Որչափ բարեկիրթ ոք առաքինի
Այնչափ քաջանուն արդար դրուատի։

ԱՆՍԵԼՄՈՍ՝ սուրբ արքեպիսկոպոսն Անգղիոյ Կանտուարիայ քաղաքին՝ էր Գուռինցի Բենեդիկտեան աբեղայ ընտիր և իմաստուն, որ եղաւ առաջնորդ իրենց կրօնին յամի 1078։ Երբոր գնաց Անգղիա սիրելի եղաւ Գուլիէլմոս Բ. Թագաւորին, որ զինքն եպիսկոպոս ձեռնադրել տուաւ Կանտուարիայի. բայց Թագաւորը չդիմանալով սուրբին խրատներուն ճամբեց զինքը Հռոմ, որ անկեց անցաւ Նափոլի և հոն նստաւ Բաւլիա քաղքին ժողովքին մէջ 'ի 1098։ Իւր մեծ իմաստութբ̃ խօսեցաւ Յունաց դէմ և զօրաւոր պատճառներով հաստատեց զելլումն Հոգւոյն սրբոյ 'ի Հօրէ և յՈրդւոյ։ Քանի մը տարիէն ետև Հենրիկոս Թագաւորը դարձուց զսուրբ եպիսկոպոսը իւր աթոռը, որ սկսաւ բարեկարգել ամենայն խոհեմութեամբ եկեղեցին և ժողովուրդը։ Նաև պիտանի գրեանք և աստուածաբանական ճառեր գրեց հերետիկոսաց դէմ, մինչև համարեցաւ իբրև առաջին դպրոցական վարդապետ աստուածաբանութեան։ Այսպիսի սրբութեամբ և իմաստութեամբ փոխեցաւ առ Աստուած եօթանասուներեօթը տարուան 'ի 1109, և փայլելով հրաշագործութեամբ տօնելի եղաւ յԵւրոպիա։

Անսելմոս ներհուն աբեղայ ընտիր
Հետևող կարգաց լեալ աստուածադիր.
Ծաղկեցոյց զտաղանդ բընական բարուց
Գերաստիճանեալ 'ի կատար վարուց։
Շնորհքն երկնային ընտրեաց զարժանին
Ի գերագոյն փառս ըստ խոնարհ սրտին.
Հովիւ վեհապանծ հօտին տիրական,
Սխրալի նկար առաքինութեան։

ԱՆՏԻՈՔՈՍ բժիշկ էր Սեբաստացի Դիոկղետիանոսի հալածանքին ժամանակը. որ Քրիստոսի անուամբն կը բժշկէր ամէն հիւանդները, և վարձուց տեղ կը դարձընէր զանոնք 'ի քրիստոնէութիւն: Կռապաշտ դատաւորը բռնեց զինքն ու սաստիկ չարչարեց որ դառնայ հաւատքէն. տեսաւ որ չըլլար՝ ձգեց զսուրբն եռացեալ կաթսայի մէջ, և գազաններու առջին. բայց վնաս մը չեղաւ սուրբին, հապա աւելի զօրացաւ ու աղօթքով կործանեց կուռքին սեղանը: Վերջը երբոր գլխատեցին զերանելին, արեան հետ կաթ վազեց. զայն որ տեսաւ Կիրակոս դահիճը, նզովեց կուռքը և հաւատաց Քրիստոսի. ան ալ հոն նահատակեցաւ սրով, և տօնեցան 'ի փառս Աստուծոյ:

ԱՆՏՈՆ Աբբայ մեծ և սուրբ Ճգնաւոր՝ էր ազգաւ Եգիպտացի զաւակ բարեպաշտ և մեծատուն ծնողաց, որ ծնողքը մեռնելէն ետև լսելով աւետարանին խօսքը եկեղեցւոյ մէջ, բաժնեց աղքատներուն ամէն ունեցած բարիքն, ու հրաժարելով աշխարհէս առանձնացաւ յանապատ քսան տարուան: Նախ ճգնաւորներուն մէջ բնակելով կրթեց զինքը զարմանալի առաքինութեամբ, յետոյ քաշուեցաւ ներսի անբնակ անապատները և լեռները՝ այնպէս խստակրօն վարքով որ դիւանքը դողացուց, ու սրբափայլ աղօթքով և քաջութեամբ յաղթեց ամենայն սատանայական փորձութեանց: Վասն զի ինչպէս անմարմին հրեշտակ մը կը համբերէր սոսկալի ճգնութեանց հրաշքներով և սքանչելի սրբութեամբ. մինչև ծաղկեցուց անապատը սրբակաց աշկերտներով և վանքերով: Եւ այնչափ մեծամեծ գործքերով անունը հռչակուեցաւ, որ մեծն Կոստանդիանոս և որդիքը իրեն նամակներ գրեցին խնդրելով զսուրբ օրհնութիւնը. և երբոր Ճգնաւորները կը զարմանային այս բանիս վրա՝ ասաց. “Մի՛ զարմանաք մեծ կայսեր ինձի հետ թղթով խօսելուն համար որ մահկանացու է. այլ անոր վրա զարմացէք որ Աստուած խօսեցաւ մեզի հետ իւր ծառային որդւովն„: Որուն ապա գրեց պատասխան Ճգնաւորներուն խնդրելովը. և երկու անգամ գնաց յԱղեքսանդրիա, մէյմը Մաքսիմիանոսի հալածանքին ատենը մարտիրոսներուն սիրտ տալու համար, որպէս զի ինքն ալ անոնց հետ նահատակուի. մէյմ ալ սուրբ Աթանասին խնդրելովը, որ Արիանոսները խայտառակելով ուղղափառ հաւատքը զօրացուց Ճշմարիտ դաւանութեամբ:

Ետքի ծերութեան ժամանակը գնաց ներսի անապատները Ճգնաւորներն տեսնելու համար. ուր գտաւ սուրբ Պօղոս անապատականը ու թաղեց անոր մարմինը: Երբոր անկէց դարձաւ եկաւ իր տեղը, շատ չանցաւ ինքն ալ փոխեցաւ առ Աստուած 'ի 17 յունվ. յամի 356, իբր հարիւրհինգ տարուան. աշկերտները ամփոփեցին սուրբ մարմինը, յետոյ անկէց փոխադրեցին յԱղեքսանդրիա. անկէց ալ ապա տարին Գաղղիա սուրբ Անտոնին վանքը հանգուցին: Սա սուրբը եօթը թուղթ գրած ունի Եգիպտացւոց լեզուով, և հոգեշահ կանոններ ու խրատներ, որ լատիներէն թարգմանած է: Իսկ սուրբ Անտոնին վարքը գրեց սուրբ Աթանաս հայրապետը յունարէն. զոր ապա թարգմանեցին լատիներէն և հայերէն:

Դիւցազնական գործք առաքինութեանց
Պերճացոյց զարի ճգնող Հայրն Հարանց.
Փոխեալ զանցաւոր բարիս և ըղձեանս
Ընդ անանց բարեաց անճառ ճոխութեանց:
Յաղթողն աշխարհի մեծաքանչ Անտոն,
Վերնական շնորհօք եղեալ գերըղձօն.
Հիացոյց զվերինս զստորինս համայն,
Մերձեմեալ հրճուի յանդրանկաց խորան:

ԱՆՏՈՆ Պատուացի էր անուանի սուրբ վարդապետ, և կրօնաւոր Ֆրանչիսկեան, Փորթուգալի Լիզպոնա քաղաքէն ազնուական ցեղէ ծնեալ ՚ի 1195: Որ անցաւ յԻտալիա աբեղայ ձեռնադրուեցաւ. յետոյ փափաքելով մարտիրոսութեան, ճամբայ ելաւ երթալու յԱփրիկէ, բայց հովին բռնութեամբը եկաւ ընկաւ յԻտալիա: Ուր զանազան քաղաքներու մէջ քարոզիչ և վարժապետ եղաւ աստուածաբանութեան ու միշտ սրբակաց վարքովը կը կրթէր ժողովուրդը և աշկերտները: Իսկ երբոր Պադուա գնաց և նոյն առաքինական գործքերով ծաղկեցուց ժողովուրդն ու դպրոցները, առաւել փառաւորեցաւ իր պայծառ անունը. յետոյ դարձաւ յԻտալիա, և սքանչելի քարոզութեամբ նստաւ Պատուա քաղաքը մինչև փոխեցաւ առ Քրիստոս երեսունըհինգ տարուան ՚ի 1231, և եղաւ տօնելի սուրբ և սքանչելագործ: Յետոյ կանգնեցին մեծաշէն եկեղեցի անուամբ Աստուածածնին, և հոն փառաւոր խորանին մէջ հանգուցին սուրբ մարմինը: Ամէն օր շատ ուխտաւորներով լեցուն է եկեղեցին, զի միշտ անպակաս են սուրբին հրաշքները. լեզուն ալ անապական կեցած է հոն մինչև ցայժմ: Սուրբ Անտոնին յիշատակը մեծապէս կը պատուեն 'ի Լիզպոնա իր հայրենիքը, և նստած տունն ալ կը պահպանեն որ մնայ. իսկ բուն իր գրչով գրած գեղեցիկ ճառերը և քարոզները կը պահեն նշխարքներուն հետ:

Յաստուածային սէրն վառ յիմաստութիւն
Եւ 'ի գեղն հարեալ գերանճառ բարւոյն
Քաջիկ պերճացաւ Անտոն պատուացի,
Ըզգօն վարդապետ, քարոզ շնորհալի:
Առաքինութեամբ եղև գերափառ,
Եւ իմաստութեամբ քարոզ ուղղաճառ.
Բանիւ և գրով ջաղխիչ հերձուածոց,
Ուղղիչ մանկտւոյ և բարի վարուց:

ԱՆՏՈՆ և Կրօնիդէս էին սրբակաց կրօնաւորք առաքինութեամբ ծաղկեալք 'ի Կեսարիա քաղաքը. ուր երբոր գնաց մեր սուրբ Լուսաւորիչն եպիսկոպոս ձեռնադրուելու, խնդրեց Ղևոնդիոս հայրապետէն՝ ու առաւ զանոնք ալ տարաւ հետը 'ի Հայաստան, ուր կրօնաւորներուն վարժապետ դրաւ: Եւ երբոր շինեց սուրբ Կարապետի եկեղեցին ու վանքը 'ի Տարօն աշխարհն, հոն դրաւ զանոնք հանդերձ ուրիշ ընկերներով՝ վանքը ծաղկեցընելու և սուրբ Կարապետին սպասաւորութիւն ընելու համար: Այս սուրբերը մեծ ճգնութեամբ և սուրբ վարքով փառաւորեցան, մինչև առին Յիսուսէն շնորհ սքանչելեաց բժշկելով հիւանդները: Այս քառասուն տարիէն ետև փոխեցան առ Աստուած և թաղուեցան հոն Իննակնեան վանքը:

Արբափայլ վարուք գործով հրաշալի ,
Սոքա հրահանգիչք հայկազնեան ազգի .
Ճգնողք և քարոզք բանին Աստուծոյ ,
Ծաղկիչք տէրունեան պայծառ հաւատոյ ,
Իբրև արուսեակ 'ի Հայս ծագեցան ,
Շնորհօք Բարձրելոյն հրաշափառ ցուցան .
Փայլեալք ընդ լուսոյ մեր Լուսաւորչին ,
Պայծառացուցին և զորդիս նորին :

ԱՆՏՈՆԻՆԷ կոյս Բիւզանդացի , Մաքսիմիանոսի հալածանքին ատենը բռնեցին կռապաշտները , և խիստ հարցմունքներէն ետև շատ նեղեցին՝ որ ուրանայ զՔրիստոս : Բայց տեսան որ ճար չեղաւ , բանտը փակեցին զինքը , իրեք օր քաղցած թողուցին . որուն չորրորդ գիշերը լուսափայլ հրեշտակ Տեառն երևցաւ ու կերակուր տուաւ : Յետոյ հանեցին բանտէն սուրբ կոյսն ու տանջեցին ծեծով և սրով . ապա տարին պոռնկատունը ձգեցին : Ան ատենը կրտրիճ զօրական մը Աղեքսանդրոս անունով մտաւ հոն , ու իր վերարկուն ձգելով կուսին վրա և քաջալերելով դուրս հանեց , ու ինքն անոր տեղը նստաւ : Երբոր բանը իմացուեցաւ՝ դատաւորը կանչեց Աղեքսանդրոսը ատեան , և երբոր նա համարձակ դաւանեցաւ զՔրիստոս , կախեցին զան ու մարմինը սրով կրտըրտեցին , բայց նա զօրանալով երկնաւոր ձայնէն համբերեց քաջութեամբ : Ապա հոն տարին Անտոնինէ կոյսն ալ ու միատեղ տանջեցին՝ բոլոր մատուըները կտըրտելով . և ետքը կրակով նահատակեցան սուրբերը , որոնց նշխարքը փոխադրեցին 'ի Կոստանդինուպօլիս ուր եղան հրաշագործ և տօնելի :

Այս գերամաքուր աղաւնիք կրկին
Սնուեալք գերբնապէս սիրով երկնային,
Երկու քաջ մարտիկք յասպարէզ մտեան,
Յանմարմնոց երամ չքնաղ թեւացան ։
Պանծալի արարք եղբայրասիրաց,
Են անմահ տիպար համօրէն ազանց ․
Արդիւնք սուրբ սիրոյ՝ թէ աստ դուզնաքեայ,
Անդ անճառ բարեօք ճոխ ատոքանայ ։

ԱՆՏՈՆԻՆՈՍ սուրբ եպիսկոպոս Ֆլորենցացի ծնաւ 'ի 1390, և մնաւ սուրբ վարքով երկիւղած և ուսումնասէր ․ մինչև տասնըհինգ տարւան բոլոր ուսումը լմնցուց ու կրօնաւոր եղաւ Դոմինիկեանց կարգին մէջ ։ Եւ որովհետև անխոնջ զինքը տուեր էր խիստ ճգնութեանց և ուսումնական աշխատութեանց աղօթքով և պահքով, շատ տկար և վատուժ էր ։ Սակայն իր մեծամեծ առաքինութիւնները ոչ միայն սուրբ կարգին արժանացուցին զինքն, այլև բարձրացուցին յեպիսկոպոսութիւն քաղաքին, թէպէտ ինքն շատ դէմ կեցաւ որ չըլլայ ․ բայց Եւգինէոս Դ․ պապը օծել տուաւ զինքը արքեպիսկոպոս ։ Երանելին զարմանալի հոգով և աղքատսիրութեամբ կառավարեց եկեղեցին, խնամեց ժողովուրդը, և իմաստութեամբ բարեկարգեց ամէն բան հանդերձ հրաշագործութեամբ մինչև տասնըչորս տարի, և զարմացուց բոլոր Եւրոպա ։ Գրեց շատ հոգելից գրեանք աստուածաբանական, իրաւական և պատմական, որ տպուեցան և են պիտուական քարոզիչներու և խոստովանահարց ։ Այսպիսի առաքինութեամբ և սրբութեամբ փոխեցաւ առ Քրիստոս եօթանասուն տարւան 'ի 1461 ։ Մարմինը ութ օր մնաց սուրբ

Մարկոսի տաճարին մէջ անուշահոտութեամբ և հրաշագործութեամբ· և ապա դասեցաւ սրբոց կարգը։

Արք աստուածընտիրք այսպէս վեհացան,
Ելով յաչս անձին անարգ և խոտան·
Որչափ սիրտ ամբիծ աստ լիցի ցածուն,
Այնչափ բարձրասցի անդ վըսեմագոյն։
Խոնարհ կրօնաւոր վարդապետ արի,
Անտոնինոս ձեզ օրինակ լիցի,
Որոց վիճակեալ էք նորուն կարգի
Եւ ոյք հրահանգիչ էք մարդկան ազգի։

ԱՆՏՈՆԻՆՈՍ Պիոս էր ինքնակալ թագաւոր Իտալացի· որ նստաւ կայսր յամի Տեառն 138, և մէկէն թեթևցուց ժողովուրդին տուրքը· նաև կերպ կերպ բարելաւութեամբ մականուանեցաւ Պիոս, այսինքն բարեգութ։ Կը ջանար որ առիթ մը պատերազմի կամ արեանհեղութեան չըլլայ, և կ՚ըսէր· “Աւելի կը փափաքիմ պահելու մէկ ժողովուրդիս կեանքը, քան հազար թշնամեաց կորուստը„։ Օգնութիւն կը հասցընէր ամէն կարօտ խեղճերուն· շատ մեծամեծ և օգտակար շէնքեր ալ կանգնեց յիշատակ բարեպաշտութեան և առաքինութե՟։ Եւսեբիոս հնախօսը կը պատմէ, թէ երբոր Անտոնինոս կարդաց սուրբ Յուստինոսին ճառը վասն ջատագովութե՟ քրիստոնէից՝ դադրեցուց հալածանքը հրովարտակաւ։ Պատմիչները կ՚անուանեն զնա Սոկրատ գահակալ, որ իրեն յաջորդ դրաւ Մարկոս Որեղիոս իր փեսան իմաստասէր։ Շատ մեծ առաքինութեամբ և ողորմութեամբ խնամեց ժողովուրդը սոյն ժամանակը, մխիթարելով աղքատները ։ Զարմանալի էր ասոր ներողամիտ հեզութիւնը , մինչև յայտնի քրթմնջող թշնամիներուն ալ ներելով՝ կ՚ամընչցընէր ։ Ասիա գնացած ժամանակը երբոր Բդեշխ էր՝ Պողեմոն փիլիսոփային տունն իջաւ , որ հոն չէր , ապա երբ տուն գնաց ու տեսաւ , երես դարձուց և չուզեց զԱնտոնինոսը · իսկ նա հեզութեամբ ելաւ գնաց անկէ կէս գիշերուն ։ Յետոյ երբոր կայսր եղաւ ու Պողեմոնն ալ գնաց իրեն խնդիրքի համար , Անտոնինոս ծիծաղելով ասաց փիլիսոփային · “ Քեզի համար պատուիրեցի՝ որ պալատիս մէջ բնակելու տեղ պատրաստեն , որ չըլլայ թէ կասկածիս , թէ խոր գիշերուան մէջ պիտի վռնտուիս տնէս դուրս „ ։ Պողեմոն խիստ ամընչնալով պապանձեցաւ · բայց կայսրը սիրտ տուաւ իրեն ։ Թագուհին երբոր կը տրտնջար թէ իր ազգականները ոչ կը մեծցընէ և ոչ կը հարստացընէ · պատասխանեց այսպէս · “ Չես գիտեր որ մենք երբ այս մեծութեանը հասանք , կորուսինք ամէն ունեցած իրաւունքնիս „ ։ Անտոնինոս բարեբարոյ կայսրն այսպիսի ազնիւ քաղաքավարութեամբ վճարեց կեանքը եօթանասունիրեք տարուան յամի 161 , զոր Հռոմայեցիք կուռքերուն կարգը դրին ու պաշտեցին ։

· ԱՆՏՐԷՍ Յովհաննէս էր Սպանիացի վարդապետ Յիսուսեան , իմաստուն և առաքինի , որ անցաւ յԻտալիա , ու նստաւ Վենետիկ · ուր մեծայարգ պատուեցաւ թէ՛ ներհուն գիտութեամբը , և թէ՛ սրբակաց վարքովը · շատ իմաստասիրական շահաւէտ գրեանք ալ շարադրեց ։ Խիստ ընդունելի եղաւ իր տեղեկութեանց գիրքը Յաղագս ծագման և յառաջատութեան ամենայն գիտութեանց և բանասիրական արուեստից ։ Իր չորս մասն բաժներ է . Ա. մասին մէջ կը համառօտէ բոլոր գիտութեանց և ազատական արուեստից պատմութիւնը . Բ. մասին մէջ կը ճառէ բանասիրութեան առաջնալուն վրա . Գ. մասին մէջ վասն փիլիսոփայական գիտութեանց . իսկ Դ. մասին մէջ յաղագս եկեղեցական վարդապետութեանց կը ճառէ խիստ լաւ , հմուտ և իմաստուն ճշմարտախօսութեամբ , նաև վսեմ և յստակ ու երկար ոճով ։ Այս վարդապետը առաքինազարդ վարքով և բարեպաշտութեամբ վախճանեցաւ 'ի Վենետիկ եօթանասունըեօթը տարեան 'ի 1817՝, և բարի անունը միշտ կը յիշատակի ։

ԱՇԱԿԵՐՏՔ Պօղոսի , սուրբ Առաքեալը շատ աշակերտներ ունեցաւ , բայց գլխաւորներն են Արքիպպոս , Փիլիմոն , Յասոնն , և Սոսիպատրոս ։ Առջի երկուքն էին Կողոսացիք , ուր նահատակեցան քարկոծմամբ և ծեծով , և եղան տօնելի ։ Իսկ Յասոնն և Սոսիպատրոս ձեռնադրեցան եպիսկոպոս Տարսոնի և Կոնիայի , ու մեծամեծ հրաշքներով բոլոր ժողովուրդը դարձուցին Քրիստոսի հաւատքը՝ քարոզելով զանազան քաղաքներու մէջ ։ Ասոնք նաւեցին հասան Կորֆու կղզին . հոն ալ լուսաւորելով շինեցին եկեղեցի սրբոյն Ստեփաննոսի անուամբ . իսկ մեծաւորը լսելով բռնեց սուրբերը , բանտը փակեց ծեծով , ուր որ կային եօթը աւազակներ , որոնք դարձան քրիստոնեայ եղան ու բանտապանին հետ նահատակեցան ։ Բայց սուրբն Յասոնն և Սոսիպատրոս առաքեալները շատ չարչարանքներէն ետև՝ հրաշքով իշխանին մեռած որդին կենդանացուցին , ու համարձակ զՔրիստոս քարոզելով՝ կղզին մեծ մասը դարձուցին. և իրենք սրբութեամբ և խաղաղութեամբ փոխեցան առ Աստուած։

Ո՜վ սքանչելեաց մարդասէր Փրկչին,
Յիւր պաշտօն ընտրէ զմարդիկ հողածին.
Զհալածողս առնէ անօթ ընտրութեան,
Եւ զաշակերտեալս շնորհաց օթարան։
Այս ներգործութիւն երկնածիր շնորհաց,
Զանարգս ՚ի յերկրի գործէ վերամբարձ.
Ըզձկնորսն առնէ իւր աթոռակից,
Ըզտըգէտ հովիւսըն խորհրդակից։

ԱՇՈՏ Բիւրատեան էր նախարար Հայոց Բագրատունի, որ զարմանալի քաջութեամբ զօրացաւ ու բոլոր ասպատակ աւազակները ջնջեց Հայաստանէն։ Մինչև եղաւ ինքնագլուխ իշխանապետ և անուանեցաւ Պատրիկ. բայց հինգ տարիէն ետև ընկաւ պատերազմի մէջ, ու բարեպաշտութեամբ վախճանեցաւ ՚ի 689 մեծ անուն թողլով։ Աս իշխանիս համար կը պատմէ Վարդան, թէ շինեաց Դարունից եկեղեցին յանուն փրկչական պատկերին, զորն որ բերաւ որդին արևմուտքէն։

ԱՇՈՏ Բ. Վասակեան Բագրատունի, փառաւոր իշխան Հայոց, հաստատուեցաւ իշխանապետ Մրուան ամիրապետէն ՚ի 743, որ ազգասիրութեամբ և բարեպաշտ առաքինութեամբ պայծառացուց ազգը, և սիրելի եղաւ նաև Այլազգեաց. զի մեծ քաջութեամբ շատ օգնութիւն ըրեր էր անոնց։ Բայց քանի մը նախանձոտ իշխաններ բռնեցին ու կուրացուցին զանիկա տասնըհինգ տարի իշխանութիւն ընելէն ետև. իսկ վախճան առաքինի իշխանիս եղաւ 'ի 772: Աշոտ իշխանապետ կը համարի արմատ Բագրատունեան թագաւորութեան, վասն զի անկէց որդւոց որդի Դ. Աշոտը նստաւ առաջին թագաւոր Հայոց Բագրատունեաց: Նոյնպէս ասոր Վասակ որդիէն եղաւ սկիզբն թագաւորութեան Վրաց, որ քշեց մինչև մեր օրը:

ԱՇՈՏ Գ. Մսակեր էր քաջագործ և զօրաւոր իշխան Բագրատունի և նախարար Սպեր գաւառին Հայոց, որ անպարտելի արութեամբ հալածեց այն կողմերէն բոլոր Հագարացիներն ու սկսաւ շինել հոյակապ Անի քաղաքը իրեն բնակութեան համար: Սա երբոր եկեղեցւոյ մէջ կ' աղօթէր լսեց որ Այլազգիները կուգան քաղաքը կոխելու. աղօթքը լմնցուց, ելաւ անոնց դէմ, և մեծ քաջութեամբ հալածական ըրաւ զամէնքը, իրենց գլխաւորը սատկեցուց, ու փառաւորելով զԱստուած դարձաւ 'ի քաղաքն Անի. ապա 'ի 820 վախճանեցաւ բարեպաշտութեամբ, ու իրեն յաջորդեց Սմբատ որդին:

ԱՇՈՏ Դ. որդի Սմբատայ Խոստովանողին եղաւ առաջին թագաւոր Բագրատունեաց, որ 'ի 859 նախ հաստատեցաւ ամերապետէն ոստիկան կամ իշխանապետ աշխարհին, և մեծ քաջութեամբ ջնջեց ապստամբները, ու ծաղկեցուց բարեկարգութեամբ ազգը, որով անուանի և սիրելի եղաւ ամենայն ազգաց: Վասիլ Արշակունի երբոր կայսր նստաւ 'ի Կոստանդինուպօլիս, լսելով Աշոտին խելքն ու քաջութիւնը՝ սիրով կապուեցաւ հետն, ու թագաւորական թագ ղրկեց իրեն: Նոյնպէս Հագարացւոց ամիրապետն ալ ղրկեց Թագ մեծագին, անուանելով Թագաւոր Հայոց 'ի 887 : Աշոտ ևս առաւել զօրացաւ, իմաստութեամբ և արութեամբ անկէց ետև, ու ամենայն բարեկարգութեանց և շինութեանց հետևելով հաստատեց ազգին զինուորութիւնը, և տիրելով չորս կողմի ազգերուն շատ մեծցաւ : Յետոյ գնաց 'ի Կոստանդինուպօլիս, և շատ մեծ պատիւ տեսաւ Լևոն իմաստասէր կայսերէն, և նոյն պատուով դարձաւ փառաւորապէս 'ի Հայաստան : Բայց Շիրակ գաւառին մօտ հիւընդցաւ, ու մէկէն ամենայն հոգևոր պատրաստութիւններն տեսաւ բարեպաշտութեամբ, և վախճանեցաւ եօթանասուներմէկ տարւան 'ի 889 . որ տիրեց իշխանութեամբ քսանըհինգ տարի, և Թագաւորութեամբ հինգ տարի :

ԱՇՈՏ Բ. Երկաթ, երկրորդ Թագաւոր Բագրատունի, որդի էր Սմբատայ Խոստովանողին, և Թոռն վերոյիշեալ Աշոտին . շատ անուանի եղած էր քաջագործութեամբ և խոհեմութեամբ : Ուստի հօրը մահուանէն ետև նստաւ Թագաւոր 'ի 914, և շուտ մը զօրք ժողվեց ու այլազգի Թշնամիները հալածելով հաստատուեցաւ հայրենի աթոռը : Բայց նախարարները անմիաբանութ՟բ խռովութիւն հանեցին ու աշխարհքը տակնուվրա ըրին : Կոստանդին կայսրը լսելով խիստ մեղքցաւ ու կանչեց Աշոտ Թագաւորը, որ գնաց 'ի Կոստանդինուպօլիս, և մեծ պատիւ տեսաւ կայսերէն . ու նաև շատ զօրքով դարձաւ Հայաստան ընկճեց Թշնամիները և բոլոր ապստամբները, մինչև կոչուեցաւ Շահնշահ : Ապա շատ սաստիկ պատերազմներով յաղթեց այլազգիներուն մեծամեծ քաջութեամբ․ ետքը հիւանդութեամբ մեռաւ 'ի 928, և անզաւակ ըլլալով յաջորդեց իրեն եղբայրը Աբաս ։

ԱՇՈՏ Զ․ Ողորմած, որդի Աբաս արքային, յաջորդեց հօրը 'ի 951, և օծուեցաւ Անանիա կաթողիկոսէն․ մեծամեծ քաջութիւններէն ետև շատ շինութիւններ ալ ըրաւ․ վասն զի երևելի վանքեր, փառաւոր եկեղեցիներ և ապարաններ շինեց, ու Անի ըրաւ թագաւորանիստ քաղաք․ իր Խոսրովանոյշ թագուհին ալ շինեց Սանահնի և Հաղբատայ մեծակառոյց վանքերը, թող ուրիշ բարեպաշտական գործքերն ։ Աշոտ ամրցուց Անի քաղաքին պարիսպը մեծ մեծ աշտարակներով․ իսկ զժողովուրդը զարմանալի բարեկարգութեամբ ճոխացուց, մինչ զի ամիրապետը լսելով անոր մեծ քաջութիւնները, ղրկեց իրեն կրկին թագ՝ անուանելով Շահիարմէն․ նաև հայրական գթով աղքատները հոգալուն համար կոչուեցաւ Աշոտ Ողորմած ։ Ասոր օրը գիտութիւնն ալ լաւ ծաղկեցաւ Հայոց մէջ, և երևելի գիտուններ, բանիբուն աբեղաներ և իմաստուն վարդապետներ ելան, ազգը լուսաւորեցին, ինչպէս Գրիգոր Նարեկացին և այլք ։ Ու այսպէս սքանչելի քաղաքավարութեամբ և խոհեմութեամբ թագաւորեց Աշոտ քսանըվեց տարի․ ապա բարեպաշտ և առաքինի վարքով և անուամբ, փոխեցաւ առ Քրիստոս 'ի 977․ իրեք տարիէն ետև սրբակրօն թագուհին ալ վախճանեցաւ ։

ԱՇՈՏ Է․ Բագրատունի արքայ, էր երկրորդ որդի Գագիկ թագաւորին, որ հայրը մեռնելէն ետեւ 'ի 1020 Թագաւորեց Յովհաննէս մեծ եղբօրը հետ. բայց չի նստաւ Անի քաղաքը։ Վասն զի որչափ զօրաւոր և քաջ էր, այնչափ ալ փառասէր և անհանդարտ էր, խռովութեամբ լցուց ազգն՝ որ մինակ տիրէ Թագաւորութեան, և այսպէս երկուս բաժնուելով տէրութիւնը շատ տկարացաւ։ Թէպէտ ինքն անյաղթելի էր պատերազմերուն մէջ և ահաւոր էր թշնամիներուն, անանկ որ անգամ մը Վրաց զրահաւոր քաջ զօրավարին հետ կռուելով մէկ զարնելով երկուս ձղքեց և սարսափեցուց զամէնքը։ Երբոր գնաց Վասիլ կայսեր, շատ մեծ պատիւ գտաւ և անոր զօրքովը դարձաւ թշնամիները կործանեց. յետոյ ձանձրանալով պատերազմներէն ընտրեց խաղաղ և զուարճալի կեանք մը մինչև 'ի մահ 'ի 1039. Թողուց մէկ հատիկ որդի Գագիկ անուն տասներչորս տարեան, որ յաջորդեց Յովհաննէս արքային, և վերջին Թագաւոր եղաւ Բագրատունեաց։

Բարեպաշտութիւն աշխարհակալաց
Ազգասիրութեամբ և գործովք բարեաց
Կանգնեցին զաշխարհ և ծաղկեցուցին,
Անեղծ պսակ փառաց 'ի գլուխ կապեցին։
Գործք բարեացապարտ մեր Բագրատունեաց
Հայազնեայցս եղեն պարծանք պարծանաց.
Անմահ յիշատակքն ցարդ կան անկործան,
Պայծառ դիւցազանցն հաղորդք լեալ անուան։

ԱՊԵԼԷՍ էր մեծահամբաւ պատկերահան Կովացի մեծին Աղեքսանդրին ժամանակը, որ միայն անոր հրաման տուեր էր իր պատկերքը քաշելու։ Հնախօսները կը յիշեն խիստ գովելով ասոր պատկերքները. ինչպէս են քաշուածք մը մատակ ձիոյ, զոր արու ձիերը տեսնելով կը խինջային կենդանի կարծելով. Նաև Ափրոդիտէին քնանալուն և ծովէն ելլելուն պատկերքը, նոյնպէս Աղեքսանդրին կենդանագիրը շանթակիր, և այլն: Կը պատմեն ալ թէ այս նկարիչն իր նկարները կը դնէր հրապարակն ու ետին կը ծածկուէր, տեսնողները ինչ պակասութիւն որ գտնէին՝ կը շտկէր: Կօշկակար մը ասոր քաշած կօշկին վրայ պակասութիւն գտաւ, ան ալ շտկեց: Կօշկակարը հպարտանալով միւս օրը կ'երթայ ուրիշ տեղի ալ պակասութիւն որ կը գտնէ՝ Ապեղէս գլուխը դուրս կը հանէ կ'ըսէ. “Կօշկակարը կօշիկէն վեր դատում թող չընէ„: Մէկն ալ երբոր մեծ մեծ կը ճառէր նկարներու վրայ՝ ըսաւ. “Քանի որ լուռ կեցեր էիր կարծէի թէ տեղեակ ես պատկերահանութեան, բայց հիմա գիտցայ որ իմ աշկերտներուս պէս լաւ ներկ ճզմող ես քարի վրայ„: Ունի քանի մը կիւտեր ներկի վրայ, բայց քաշածները կորսուած են:

Ապեղէս գոչէ թէ հիմ կուրացայ,
  Ոչինչ նկատեալ անձինս յիմ վերայ.
  Դից և դիւցազանց անգոյ էակաց
  Նկարիչ եղէ կեղծ առասպելեաց:
Թէ փոխան նոցին նըկատ լինէի
  Երկնապար կարգաց էից անճառի,
  Նկարեալ 'ի միտս անմահ զիմ հոգին
  Լինէի արդեօք գտակ Երկնաւորին:

ԱՊԻՍ ըստ հին պատմութեան էր թագաւոր Արգոսի, որ 1700 տարի Քրիստոսէն առաջ. գնաց յԵգիպտոս սորվեցուց անոնց բժշկութիւն, այգեպանութիւն, երկրագործութիւն և արուեստ գինի շինելու ։ Ուստի այս բարերարութեանցը համար Եգիպտացիք զինքն անուանեցին Ոսիրիս ․ և մեռնելէն ետև աստուածացուցին ու կուռք մը կանգնեցին կովու ձևով ։ Յետոյ սկսան ողջ կովերն ու եզներն ալ պաշտելու ․ մէկ հատ մ՚ալ առանձին կռատան մէջ պահելով շատ քուրմերով կը պաշտէին ․ որուն կ՚երթային ամէն քաղաքներէն պատգամ հարցընելու ։ Եւ երբոր կը տկարանար, ծածուկ կը խեղդէին ու կը թաղէին որ չըսուի թէ մեռաւ, անուանելով Սերապիս ․ այսինքն հրաժարումն Ապիսի ․ որուն թաղմանը վրայ մեծ ողբ կընէին ։ Յետոյ կ՚ընտրէին ուրիշ կով մը և մեծ հանդիսով կը տանէին նոյն կռատունը ․ որ ապա փառաւոր տաճար շինուեցաւ ։

Իսրայելացիք սորված ըլլալով յԵգիպտոս այս Կովուն պաշտօնը տեսնելու, անապատին մէջ ալ ոսկիէ կով մը շինեցին ու պաշտեցին ։ Նոյնպէս Յերոբովամ անոնց թագաւորը յետոյ երկու հատ կով շինելտուաւ որպէս կուռք ․ մէկը դրաւ ՚ի Բեթէլ, մէկալը ՚ի Դան ․ որպէս զի ժողովուրդը անոնց երկրպագութիւն ընէ ու Երուսաղէմայ տաճարը չերթայ ։ Տ․ ՚ի կարգին ։

ԱՊԻՐԱՏ էր փառաւոր իշխան որդի Վասակայ և տէր Ծովք բերդին ․ որուն որդիքն էին Վասիլ, Շահան, Գրիգորիս, և Ներսէս Շնորհալին ․ որք անուանեցան Պահլաւունիք ․ զի Ապիրատին մայրն էր դուստր Գրիգորի Մագիստրոսին ։ Եւրոպացի խաչակիր զօրքն երբոր այն կողմերն եկան՝ Ապիրատ անոնց ուտելիք պաշար ղրկելով սիրելի եղաւ ու զօրացաւ անոնց ուժովը ։ Եւ երբոր յամի 1111 Սկիւթացիք

պաշարեցին Թուրք բերդը , վռնտեց զանոնք . բայց լսելով Ապիրատ թէ դուրսը խռովութիւն մը կայ , ելաւ պարսպին վրայ տեսնելու համար , ուր թշնամիներուն մէկը պահուած ըլլալով զարկաւ նետով ներս ձգեց : Որ չարաչար վիրաւորուելով քանի մի ժամէն ետև մեռաւ . իսկ իւր իշխանութիւնն առաւ Վասիլ որդին :
Ապիրատ անուամբ ուրիշ քանի մը երևելի իշխաններ ալ եղան Հայոց մէջ . որոնք առաքինութեամբ և քաջութեամբ անուանի եղան , ու ազգը խնամեցին հայրաբար :

Ապիրատ խրատ տայ հայկազուն մանկանց՝
Քաջանուն լերուք ըստ ձերոց նախնեաց ,
Օ գօն բարեկիրթ հեզ և իմաստուն
Ըստ իմ որդեկաց ընտիր բանիբուն :
Հօրանոյն որդւոց յոյժ վայելչական ,
Հարցըն պարծելեաց գոլ համանըման .
Օ աստուածպաշտութէ և զիմաստութէ ,
Արկանել զանձամբ պայծառ պատմուճան :

ԱՊՈՂԻՆԱՐ Կղոդիոս էր մեծիմաստ եպիսկոպոս Հերապօլսի . որ զօրաւոր վարդապետութեամբ ափիբերան ըրաւ իւր ժամանակին հերետիկոսները : Նա յամի 177 գրեց փառաւոր ճառ ջատագովութէ քրիստոնէական հաւատքի վրայ ու ընծայեց Մարկոս Օրելիոս կայսեր որն որ քրիստոնէից դէմ նոյն ժամանակը սաստիկ հալածանք հաներ էր :

Ամբիծ հայրապետ այն Ապողինար ,
Ոլար հերձուածոց ջախջախիչ ոտնահար .
Ջատագով հզօր ուղղափառութեան ,
Սուրբ եկեղեցւոյ իմաստուն պաշտպան :

Առաքինութեանց անցեալ՚ի հանդէս ,
Յաղթեաց մոլելոց հզօրեղապէս .
Պարծանք հաւատոյ հանուրց գովելի ,
Եւ հեթանոսաց իսկ պատկառելի :

ԱՊՈՂՈՆ ըստ առասպելաց էր մեծանուն չաստուած հեթանոսաց որդի Դիոսի . որ կոչի Հայր ազատական արուեստից , բժշկութեան և գուշակութեան , նաև չաստուած արեգական և գլուխ ինն Մուզայից : Ուստի դիցապաշտք կանգնեցին ասոր անուամբը մեծագործ տաճարներ . բայց առաւել փառաւորն էր ՚ի Դելոս կղզին իր ծնած քաղաքը ՚ի Դեղփէ , ուր քուրմերը կուռքին բերնէն պատգամախօսութիւններ ընելով կը խաբէին ժողովուրդը : Իսկ Արտաշէս մեր թագաւորը ասոր ոսկեզօծ կուռքը տարաւ յԱրմաւիր տնկեց որ յիմարութեամբ կը պաշտէին Յոյնաց պէս : Յոյնք ասոր արձանը ձևացուցեր էին , պատանի մը անմօրուս՝ ձեռքը քնար , գլուխը պսակ , և ոտքին քով նուագարան , երբեմն չորս դին ինը Մուզաներ , և երբեմն իբր կառավար արևու՝ չորս ճերմակ ձիերով , ձեռքը նետ :

Ապողոն անգոյ չաստուած դիւցազուն
Վկայէ զմարդիկ լեալ անիմաստուն .
Քանզի նշկահեալ զԷն ամենիմաստ ,
Մեծարեն զոչէն կոյր խաւարամած :
Թէ արեգական զիս դնեն աստուած ,
Գէթ անտի ուսցին թէ է սին հաստուած .
Զրկեալ՚ի լուսոյ խոկական Հաստչին ,
Զծաղրալից աստուածս հաստել նկրտին :

ԱՊՈՂՈՆԻԱ էր կոյս Աղեքսանդրացի, պարկեշտ և սրբակաց առաքինի, որ Դեկոսի հալածանքին ատեն՝ անօրէն դատաւորը բռնեց ու շատ նեղութիւն տուաւ, որ կռոց երկրպագանէ: Բայց նա երբոր արհամարհեց, չարաչար տանջելով բոլոր ակռաները հանեցին, և երբոր անով ալ չի կրցան հաւատքէ հանել երանելի կոյսը, կրակ վառեցին որ այրեն: Անատեն խաչակնքելով զինքը սուրբ կոյսն, ապաւինեցաւ առ Աստուած՝ ու վազեց գնաց ընկաւ կրակին մէջ 'ի սէրն Քրիստոսի, և քաջութեամբ կատարեցաւ յամի 260. որ զօրաւոր բարեխօս է ատամնացաւաց:

ԱՊՈՂՈՆԻՈՍ վկայն էր Լիւդացի. որ շատ տեղեր քալելով՝ և քարոզելով կը դարձնէր անհաւատները. մինչև բռնուեցաւ կռապաշտներէն յԻկոնիոն, և շատ ծեծեցին ու տանջեցին զինքն որ ուրանայ հաւատքը: Տեսան որ չուրանար, խաչ հանեցին զերանելին ու նիզակով խոցեցին. և այնպէս նահատակեցաւ վասն հաւատոյ:

Այսպէս քաջացան վկայք բարեբուն,
Ի հուր և 'ի սուր զանձինըս ետուն,
Մահ և չարչարանք 'ի սէր անմահին,
Համայն դժուարինք դիւրացան նոցին:
Աստուածսիրութեան այս գործ սխրալի
Յաղթեաց արքայից և դիւաց գնդի.
Մինչև հիանալ անմարմնականաց՝
Կարծելով ըզմարդ յանմահից կարգաց:

ԱՊՈՒՊԷՔԻՐ էր աներ Մահմէտին, որ տեղեակ ըլլալով իրենց օրինաց՝ անոր յաջորդ ընտրեցին Խալիֆա անուամբ, որ է փոխանորդ, յամի Տեառն 631 ։ Այս քանիս դէմ ելաւ Ալի փեսայն Մահմէտին. բայց հալածուեցաւ փախաւ յԱրաբիա ։ Ապուպէքիր անկէ ետև զօրանալով յաղթեց Հերակլի Յունաց կայսեր եղբօրը, ու աթոռը փոխադրեց 'ի Դամասկոս, անկէց ալ յետոյ փոխադրեցաւ 'ի Պաղտատ. իսկ ինքն մեռաւ յամի Տեառն 634, և թաղեցաւ 'ի Մէտինէ ։

Ապուպէքիր շարադրեց հաւաքումն Ղուրանին, աւելի կարգաւորելով և օրէնքներ աւելցնելով գլուխները բաժնեց. բայց Պարսիկներն չեն ընդունիր անոր դրած օրէնքները, նաև Ալին դէմ ըլլալուն համար կ' ատեն. թէպէտ Օսմանեանց խիստ ընդունելի է իբրև երկրորդ օրէնսդիր ։

ԱՊՊԻԱՆՈՍ էր մեծանուն պատմաբան Յոյն ազնուազարմ Աղեքսանդրացի 'ի Բ դարուն, որ գոլով ատենաբան, եղաւ բդեշխ Հռոմայ ու գրեց անոր պատմութիւնը ժամանակագրութեամբ և լաւ ոճով ։ Ունի ուրիշ շատ գրուածներ ալ, ինչպէս Պատմութիւն պատերազմաց Ափրիկոյ, Ասորւոց, Պարթևաց, Միհրդատայ, Սպանիոյ, և այլն ։ Փոտ պատրիարգը կը յիշէ ասոր քսանըչորս շարադրած գիրքերը, որ սկսեալ Տրոյիոյ կործանմանէն կը հասցընէ մինչև Ադրիանոս կայսրը ։ Երևելի հեղինակներն ալ սորա գրուածքներէն վկայութիւն կ' առնուն ։

Պատմութիւնք նախնեաց քարոզեն անձայն,
Փէ կեանք մարդոյ են ստուերի նման.
Քաջայաղթ կայսերք գրիչք գերագոյն
Սուզեալ կան 'ի ծոց վաղեմի ծերոյն ։

Ձեռակերտք պետայ, մատեանք իմաստնոյ
Վկայ են նոցին բազմաշխատ գործոյ.
Ազգ գայ ազգ երթայ ըստ անխաբ վճռոյն,
Երկիր և տարերք անեղծ կան կանգուն։

ԱՊՏՈՆԻՄՈՍ էր եպիսկոպոս Իտալացւոց, որ Դիոկղետիանոսի հալածանքին ատեն գնաց 'ի Բիւզանդիա, և բնակեցաւ Սիւրէ գեղը աստուածասէր մարդու մը քով, որ Կուռնելիոս կ'ըսուէր. ու քարոզելով սքանչելի վարդապետութեամբ կը լուսաւորէր շատ անհաւատներ։ Ապա շինեց եկեղեցի մը՝ անուամբ Հրեշտակապետին, և հոն ձեռնադրեց զԿուռնելիոսը նախ սարկաւագ, յետոյ քահանայ և եպիսկոպոս։ Օր մը երբոր կը պատարագէր իր շինած եկեղեցւոյն մէջ՝ վրա հասան կռապաշտներն, ու սրով բրով ցրուեցին ժողովուրդն. ապա նահատակեցին զերանելին խորանին առջև. որուն վրա վկայարան շինուեցաւ Կոստանդիանոսի ժամանակը և տօնեցաւ։

ԱՊՈՂՈՍ էր Աղեքսանդրացի Հրէայ, այր ճարտարաբան և բանիբուն, որ տեղեկանալով հաւատոց Քրիստոսի, համարձակ կը քարոզէր զԱւետարանն զօրաւոր խօսքով և գրով. մինչ զի Հրէաները կը պապանձէին, ու չէին կրնար պատասխան տալ։ Պօղոս առաքեալ երբոր յԵփեսոս էր, Ապօղոս իրեն գնաց և եղաւ օգնական քարոզութեանն. ինչպէս որ կը վկայէ Առաքեալը. "Սա էր տեղեկացեալ ճանապարհին Տեառն, և եռայր հոգւով, խօսէր և ուսուցանէր վասն Յիսուսի . . . բազում նպաստ լինէր հաւատացելոցն 'ի ձեռն շնորհացն. քանզի պնդագոյն զՀրէայսն յանդիմանէր հրապարակաւ . ցուցանել գրովք եթէ Քրիստոսն է Յիսուս ,,: Որ այսպիսի եռանդեամբ քարոզեց նաև 'ի Կորնթոս, և շատերը աշակերտեց լուսաւորելով, մինչև նորա անուամբ կը պարծէին ոմանք թէ Ապողոսեան եմք . որոնց յանդիմանութիւն կը գրէ Պօղոս ասելով . "Իսկ արդ ո՞վ է Պօղոսն, կամ ո՞վ Ապողոս . պաշտօնեայք, որովք հաւատացէքն . . . ես տնկեցի, Ապողոս ջուր ետ . այլ Աստուած աճեցոյց ,, . և այլն : Ուստի այսպիսի առաքելական վաստակով, առաքինութեամբ և սուրբ վարուք փոխեցաւ Ապողոս 'ի խաղաղութիւն :

Երջանիկ հոյլուք՝ աշակերտք ընտիր
Պերճ հանդիսացան անձամբ հոգեկիր .
Թաւալեալ ըզլոյս աստուածգիտութեան,
Փայլեցին յաշխարհ շնորհօք վերնական :
Ապողոսն Հրեայ ճոխ ատենաբան,
Շլացեալ 'ի ցոլմանց լուսոյն իսկական .
Դարձաւ 'ի Քրիստոս յարեգակն արդար
Քարոզ և՝ աշակերտ 'ի բանըս պայծառ :

ԱՌԱՔԵԼ անուամբ եղան քանի մը վարդապետք Հայոց, և գլխաւորներն են չորս .

Ա . էր փոխանորդ Թադէոսի Բ . կաթուղիկոսին . որուն յաջորդեց 'ի 1584 : Սա մեծ համբերութեամբ այնչափ վշտացաւ այլազգիներուն ձեռքէն, որ ճարը հատաւ 'ի 1586 ձեռնադրեց Դաւիթը իւր տեղն ու ինքն առանձնացաւ վանքը . և վախճանեցաւ հօն խաղաղութեամբ և առաքինական վարքով :

Բ . Առաքել էր եպիսկոպոս Սիւնեաց, և քեռորդի Գրիգորի Տաթևացւոյն, որ ծաղկեցաւ 'ի ԺԵ դարուն, շարադրելով զանազան խրատական գրուածքներ թէ արձակ և թէ ոտանաւոր ։

Գ. Առաքել էր Բաղիշու կողմանց աշակերտ Գրիգորի Խլաթեցւոյն, որ ծաղկեցաւ ԺԵ դարուն մէջ ոչ միայն վարդապետութեամբ, այլ և զանազան խրատական գրուածներով և ոտանաւորներով ։

Դ. Առաքել պատմիչ՝ էր Դաւրէժցի միաբան Էջմիածնայ 'ի ԺԷ դարուն, որ հրամանաւ Փիլիպպոս կաթուղիկոսին գրեց նոյն դարուն Հայաստանու կողմանց պատմութիւնը, սկսեալ յամէն 1601 մինչև 'ի 1669, որ տըպուեցաւ յԱմսդրտամ 'ի 1669 ։

Բանասէր բաբունք ազգիս Հայկազանց
Ջան եղին թողուլ զյիշատակ նախնեաց.
Թէ բարձան հզօր տիրողքն ընդ գիտնոց,
Գործոց դիւցազանց վէպք մնացին յետնոց ։
Անցք չարախտավատ ալիք անդադար
Հարեալ ընդ ազգիս արկին 'ի խաւար,
Արդ անցեալ 'ի գիր յողբալ հրաւիրեն
Զանձինս բարեգութ ցաւակից առնեն ։

ԱՍԱՓ էր որդի Բարաքեայ, քաջ երաժիշտ և իշխան մեծ սաղմոսերգու Ղևտացւոց, զոր Դաւիթ մարգարէն երգիչներուն գլուխ դրաւ խորանին դիմացը և տապանակին առջև ։ Քանի մը սաղմոսի վերնագիրը Ասափայ անուամբ գրած է. մեկնիչները կը համարին թէ անոնց եղանակն ալ նա յօրիներ է. կամ Դաւթին բերնէն առեր գրեր է ։ Այս պատճառաւ նաև Ասափ մարգարէ ալ կոչեցաւ ։

ԱՍԿՂԵՊԻՈՍ, ըստ առասպելաց էր որդի Ապողոնի և չաստուած բժշկութեան, որ սորվէր էր Քիրոն ձիացուլէն, ու անբժշկելի ցաւերը կը բժշկէր ։ Նաև մեռելներն ալ կ՚ողջընցնէր կ՚ըսեն. բայց Հիպպողիտոսը ողջընցնելու ատեն շանթահար կորաւ Արամազդէն. որ յետոյ երկինք վերուց զինքն ու ըրաւ համաստեղութիւն մը օձակալ անունով ։ Սա ունէր մեծագործ տաճար ՚ի Հռոմ և ուրիշ քաղաքներու մէջ. և կը նկարէին զանը նստած ծեր՝ մէկ ձեռքը երկու օձով պատած գաւազան, մէկալ ձեռքը օձին գլխուն վրա դրած, որ նշան է խորագիտութեան և նորոգութեան կենաց. որովհետև օձը հին խորխը փոխելով կը նորոգի ։ Որուն նուիրեր էին հեթանոսները աքաղաղ՝ նշան արթնութեան, ագռաւ, և էգ այծ. բայց Կղեմէս Աղեքսանդրացին կը պատմէ թէ Ասկղեպիոս էր թագաւոր Եգիպտացւոց, զոր յետոյ աստուածացուցին մոլորութեամբ, և փոխադրեցին ՚ի Յունաստան ։

Այսպէս աղճատեալ միտք դիցամոլից
Կեղծեն զանհաւանս առ ՚ի պաշտօն դից.
Ազնուտի էակս պատուեալ ՚ի բագին,
Ընդէն ընդ նոսա ՚ի չիք փոխարկին ։
Քանի՜ եղկելի են ազգք հողածնաց,
Օրկեալ յԱրարչէն ստեղծանեն չածս.
Վերաբերեալ ըզմարդըն մահկանացու՝
Համաստեղութեանց կարգեն ՚ի պարու ։

ԱՍՈՂԻԿ Ստեփանոս՝ էր գիտնական վարդապետ Հայոց Տարօնացի պատմիչ, որ ծաղկեցաւ ՚ի Ժ դարուն ։ Սա հրամանաւ Խաչիկ կաթուղիկոսին գրեց Հայոց պատմութիւն մը՚ի սկզբանէ աշխարհի մինչև իր օրը ՚ի 1004, ստոյգ ժամանակագրութեամբ ։ Շարադրեր է նաև մեկնութիւն մը մարգարէութեան Երեմիայի ․ ինչպէս որ Գրիգոր Մագիստրոսն ալ կը յիշէ ․ “ Վասն որոյ բանս հայցէ 'ի քէն զՄեկնութիւն Երեմիայ մարգարէի, զոր գրեալ է Ասողկայ երջանիկ ծայրագոյն ծերոյ, շնորհել մեզ ” ։

Ասողիկն ասէ ցմանկտին Հայկեան ․
Մի ապախտ առնէք զուսումն յարգական ․
Քանզի գիտութիւնք և՝ ազգասիրութիւն
Բարձրացուցանեն զազգ և պետութիւն ։
Առաքինափայլ այս տենչ պանծալի
Զազգ մեր պերճացոյց տիրել աշխարհի ․
Այլ յորժամ ապախտ արար զայն աշխոյժ ,
Կորոյս զոր ունէր վեհութիւն և ոյժ ։

ԱՍՍԵՄԱՆԻ Յովսէփ Սիմոն՝ էր արքեպիսկոպոս Մառոնի , որ 'ի Հռոմ կարգաց և եղաւ բանիբուն կանոնիկոս Վատիկանու ․ նաև տեղեակ ըլլալով արևելեան լեզուաց և ազգաց , շարադրեց զանազան պիտուական գրեանք որ տպած են , և կ՝ըսուին Մատենադարան արևելեան , Վկայաբանութիւն արևելեան վկայից ․ Գիրք արևելեան իրաւանց , Տօմարագիրք , և այլն ։ Վախճանեցաւ ութսուն ամաց 'ի 1768 ։ Կան ուրիշ Ասսեմանիներ նոյն ցեղէն , որ պատմական գրուածք ալ ունին ։

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ · Տ · ՄԱՐԻԱՄ Կոյս ։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ , ըստ Պրս ․ Յիզտբուզտ , էր ազգաւ Պարսիկ որդի մոգպետի , բնակիչ Դուին քաղաքին Հայոց ․ առաջին անունն էր Մախոժ ։ Սա երբոր տեսաւ Գրիգորի Ռաժկին նահատակութիւնը, որ մոգութենէ դարձած էր, սիրտը վառեցաւ քրիստոնէութեան վրայ ու կ՚անարգէր մոգութիւնը։ Օր մը երբոր մոգերը զոհ կ՚ընէին, տեսաւ որ կրակ ելաւ Ատրուշանէն կամ կրակարանէն ու սկսաւ այրել ապարանքը և կրակատունը․ երբ չի կրցան մարել, մեծ աղաղակ ելաւ քաղաքին մէջ։ Հայոց իշխանը լսելով զայն՝ առաւ քահանաները խաչով ու աւետարանով գնացին հոն, մէկէն կրակը մարեցաւ։ Մախոժ զայն տեսնելով գնաց քահանայից հետ, դաւանեց համարձակ Քրիստոսի հաւատքը։ Պարսիկները լսածնուն պէս բռնեցին չարչարելով բանտը դրին․ ուր մկրտեցաւ Ներսէս աբեղայէն, ու անուանեցաւ Յիզիտբուզիտ, կամ Նազէպպուզիք, որ թարգմանի Աստուածատուր․ և եղաւ ճգնազգեաց կրօնաւոր բանտին մէջ։ Չորս ամիսէն ետև հանեցին Պարսիկ մարզպանին ատեանը․ երբոր հաստատութեամբ դաւանութիւն տուաւ ճշմարտութեան, կրօնաւորական զգեստն պատռտելով հանեցին, շատ ծեծեցին, և տանջելով տարին խաչի վրան բևեռեցին, ու նետով զարկին։ Բայց քաջ նահատակը խաչին վրայ զՔրիստոս քարոզելով կատարեցաւ․ ուր եղան հրաշքներ ալ․ ուստի Մովսէս հայրապետը քահանաներով գնաց վերուց սուրբ մարմինը, դրաւ պատուով մայր եկեղեցին Դունայ յամի 552․ և եղաւ տօնելի։

Աստուածատուր քաջ վկայն Քրիստոսի
Աստուածսիրութեամբ վառեալ՚ի հոգի,
Մերժէ զմոգութիւն կրակապաշտ դենի,
Ինքնանուէր զոհ Փրկչին ընծայի։

Սէր երանելոյն չքնաղ բոցավառ
Որ պարսկական շիջոյց ըղձհուր չարափառ :
Համանման բոցոյն բաբելոնական
Լափեաց ըղնախանձ հոգւին դիւական :

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ Ա. սուրբ Հայրապետ՝ էր Հռոմայեցի. ընտրեցաւ քահանայապետ ընդհանուր եկեղեցւոյ 'ի 615 : Որ իմաստութեամբ և սրբութեամբ փառաւորեց իւր մեծ պաշտօնը իրեք տարի. շատ բարեգութ և ողորմած էր աղքատներուն և հիւանդներուն վրա : Երբոր ելեփանդական ցաւը սաստկացեր էր հոն՝ սուրբ Հայրապետը անձամբ կ'երթար կը հոգար հիւանդները. մինչև իրեն ալ անցաւ, ու նոյն հիւանդութեամբ փոխեցաւ առ Աստուած 'ի 618 :

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ Բ. էր կրօնաւոր Հռոմայեցի. նստաւ քահանայապետ Հռոմայ 'ի 672, և առաջնորդեց իմաստուն կառավարութեամբ չորս տարի. ամենայն ջանքով հետևեցաւ՝ որ անառակները և անխրատ մարդիկ ճամբայ բերէ : Ուստի բնական քաղցրութեամբ և առաքինական մարդասիրութեամբ շատ ուղղութիւն և շինութիւն ըրաւ եկեղեցւոյ և ժողովրդեան, մինչև փոխեցաւ առ Տէր նոյն բարի վարքով 'ի 676 :

Պայծառ հօտապետք գահու Պետրոսեան
Երկնաձիր շնորհօք շքեղ փայլեցան.
Զօնեալ զկեանս 'ի սէր բանական հօտին
Հանին 'ի գաւիթ երկնաւոր Հովուին :
Այս էր պատուիրան Փրկչին Յիսուսի
Հետևիլ շաւղաց իւրոց սիրալի.
Ինքըն Կարապետ գոլով զամենայն
Ածէ անարատ յիւրն արքայարան :

ԱՍՔԱՆԱԶ, ըստ պատմութեան Հայոց էր որդի Գամերայ, եղբայր Թորգոմայ և թոռն Յաբեթայ. ասոր համար մեր ազգը կ՚ըսուի Ասքանազեան, Թորգոմեան, Յաբեթեան։ Յովսեպոս կը դնէ, թէ Հռեգինացի Յոյնք Ասքանազէն առաջ եկած են. ոմանք ալ կը համարին՝ թէ արևմտեան Սարմատացիք ալ անկէց եկած են։

Ասքանազեան զարմս 'ի գրոց ներբողի
Արդարակորով քաջ առաքինի.
Ով նահապետաց բարեպաշտութիւն
Յորդորէ զոգիս որդւոց յարութիւն։
Քեզ լոյս խրատ ով պերճ Ասքանազեան,
Բարւոք հետևել քաջաց մերազնեան.
Մի դու 'ի զարմից գտեալ յետնազոյն՝
Նախատինք լիցիս բոլոր ազգայնոյն։

ԱՏԱՆՍՈՆ ՄԻՔԱՅԷԼ էր Գաղղիացի երևելի տնկաբան և տեղեակ ամէն բոյսերու. որ շատ տեղեր շրջեցաւ Ամերիկայի կողմը և Ազորեան կղզիները։ Ուր ժողվեց անհամար բոյսեր, հանքեր և կենդանիներ ու դարձաւ իր հայրենիքը, և գրեց անոնց պատմութիւններն հանդերձ պատկերներովը, որ եղաւ հարիւր քսան հատոր գիրք. իսկ ժողված բնական բաներն էին երեսունըչորս հազար կտոր բան, որ լաւ շարեր էր իր հանդիսարանին մէջ։ Սակայն Գաղղիացւոց խռովութեան ժամանակին հանդիպելով՝ ամէն պատուական գրուածները անտիպ և անկատար մնացին. իսկ ինքն մեռաւ ութսուն տարւան 'ի 1806։

ԱՏԼԱՍ էր թագաւոր Մաւրիտանիոյ կամ Ափրիկէի, ժամանակից Մովսէս մարգարէին.

և ըստ ոմանց՝ էր Յակոբ Նահապետն, և Ատլանտեանք ալ էին որդիքն Իսրայէլի, իսկ աշխարհն Ատլանտ՝ Հրէաստան ։ Ատլաս, ըստ առասպելաց՝ էր որդի երկնից, և լաւ տեղեակ աստեղաց. որ կը ձևացընէին կոնակն առած երկնից գունտն, իբր գտնող աստղաբաշխութեան ։

ԱՏՈՎՄԵԱՆ զօրավարք՝ էին սուրբ Վարդանայ ընկերներէն, որ անոնցմէ երկու տարի առաջ նահատակեցան ։ Վասն զի երբոր Յազկերտ կրակապաշտ արքայն Պարսից հալածանք հանեց, ու նենգութ̄բ կանչեց Ատովմ Գնունին և Մանաճիհր Ռշտունին, որ իրեն երթան հանդերձ իրենց գնդովն ։ Բայց երանելիքն իմացան որ զիրենք ուրացութեան համար կը կանչէ, ճամբան թողուցին մտան Անձևացեաց գաւառը ։ Յազկերտ զօրք ղրկեց անոնց վրայ, որ կամ դարձընեն զանոնք, և կամ հաւատքէ հանեն ։ Ան ատեն սուրբն Ատովմ տեսիլք տեսաւ, որ կամարաձև լոյս մը իջեր էր բանակին վրայ, և լուսաւոր մարդ մը պսակ կը բաժնէր ամենուն ։ Երբ հասան հոն Պարսից զօրքը, նորէն նոյն տեսիլն երևցաւ. ուստի Ատովմեանք ձգեցին զէնքերն ու նահատակեցան կամաւոր մահուամբ վասն անուան Քրիստոսի յամի 449. ուր վանքեր շինեցին և տօնեցին, հրաշքներով ալ ծաղկեցան ։

Կան ուրիշ եօթը Ատովմեան զօրականք քաջք և եռանդունք, որք 'ի 853 փառաւորապէս նահատակեցան Բուղայ ոստիկանէն հաւատքի համար. որոնց գլխաւորին անունն էր Ատովմ Անձևացի ։ Իսկ այս երկու գունդ նահատակներուն պատիւ՝ Ատովմանց շարականը շինեցին հին ատենը ։

Քաջանունն Ատովմ արի փառաւոր
Սուրբ Հոգւոյն զինու վառեալ երկնաւոր ,
Դիմագրաւ լինի թշնամեաց գնդին ,
Մերժէ զահ զերկիւղ առ 'ի սէր Փրկչին :
Անյաղթ ախոյեան ընդդէմ հրապաշտից ,
Հանդերձ քաջ գնդաւն եղծիչ պիղծ դենից .
Զօնեալ սուրբ զարիւնն առ եկեղեցի
Ինքըն վերթևէ 'ի տես Յիսուսի :

ԱՏՏԻԿՈՍ էր մեծիմաստ պատրիարգ Կոստանդնուպոլսոյ Հայ ազգաւ Սեբաստացի աբեղայ , որ յաջորդեց Արսակիոսի , քանի որ դեռ ողջ էր Ոսկեբերան : Ուստի կանոնի դէմ ըլլալով չընդունեց պապն Ինովկենտիոս Ա. իսկ Ոսկեբերան վախճանելէն ետև ընդունեց ու հրամայեց որ Ոսկեբերանին անունը սուրբ հայրապետաց կարգը անցընէ . և նա շուտով կատարեց : Ունի գրած վարդապետական ճառեր , ուսկից սուրբ վարդապետները վկայութ՟ի կը բերեն հերետիկոսներուն դէմ : Յամի 420 սուրբ Սահակ Պարթև թուղթ գրեց Ատտիկոսի որ միջնորդութիւն ընէ կայսեր , որպէս զի կարենայ երթալ հովուել Յունաց բաժնին մէջ բնակող Հայերը . նա ալ կատարեց : Արկադեայ կայսեր որդւոյը կրթութեան համար գրեց ճառ հաւատոյ և կուսութեան . ուստի իմաստութեամբ և սրբութեամբ եղաւ բարի օրինակ հօտին , և փոխեցաւ առ Աստուած 'ի 427 :

Հնազանդութեան գործ Ատտիկոսին
Քեզ լիցի հրահանգ հետևել նմին .
Ո ի հնազանդութ՟բ բարձրանայ խոնարհ
Պերճ առաքինի փայլեալ գերագահ :

Որքեղ երանեալ զաւակ շնորհալի,
Ճգնի քատակիլ որդւոյն Միածնի,
Ընդգրկեալ առնու զխաչըն փրկական
Հետևի նըմին սիրով գերընական:

ԱՏՐՆԵՐՍԵՀ կամ ԱԴՐԻԱՆՈՍ, էր որդի Պրօբոսի կայսեր, և ըստ ոմանց՝ արքայ Հռոմայ քրիստոնեայ, ինչպէս էր եղբայրը կամ հօրեղբայրը Դոմետիոս, որ եղաւ եպիսկոպոս Բիւզանդիոյ: Իսկ ասոր յաջորդները Պրօբոս և Մետրոփանոս կը համարին որդիք Ատրներսեհի կամ Դոմետիոսի: Ատրներսեհ գնաց 'ի Նիկոմիդիա կը խրատէր զհալածիչ կայսրն Լիկինոս, որ չի չարչարէ քաջ զօրականները Քրիստոսի. վասն զի կ՚ըսէր թէ երբոր քրիստոնեայ զօրքդ պակսի, թշնամիներդ կը զօրանան: Իսկ անօրէն թագաւորը կատղելով հրամեց որ գլխատեն զերանելին վասն քրիստոնէութեանն. բայց Դոմետիոս եպիսկոպոսը գողցաւ մարմինն, ու տարաւ պահեց յԱրկիւրոպօլիս ուրիշ սուրբ նշխարքներու հետ միատեղ:

Կենդանի հաւատք աստուածասիրաց
Պայծառ փայլեցան 'ի հանդէս վշտաց.
Նուիրեալք 'ի սէր Ամենափրկչին
Յարաժամ ցընծան 'ի փառս երկնային:
Ջանամ սուրբ սիրով վառիլ անդադար,
Գոհացող լինել շնորհացն անըսպառ.
Ո՜ ինչ ունիս զոր ոչ առեր յԱրարչէն.
Ո՛ ոհեա՛ զքեզ անչափ բարեաց փոխարէն:

ԱՐԱՄ էր մեծահռչակ նահապետ Հայոց, որդի և յաջորդ Հարմեայ նահապետին, որ հալածեց իւր աշխարհէն օտար ազգաց իշխաններն , ու Հայոցմէ դրաւ մարզպան իշխան մը Կապադովկիոյ Մշակ անուամբ . և հրամայեց բնակիչներուն որ հայերէն խօսին , և այս մասն կոչեցաւ Փոքր Հայք ։ Յետոյ աւելի տարածեց իշխանութիւնը 'ի Կովկասէն մինչև 'ի Տորոսի լեռները . և սկսան մօտ եղած ազգերը անուանել մեր ազգը Արմէն , և զՀայաստան Արմէնիա . Արամ տիրեց փառօք երկայն ատեն ։

Արամ գերափառ Հայոց նահապետ ,
Յաղթական ազգաց , տիրող վեհապետ .
Յիւր անուն ձայնեալ զազգ մեր Արամեան
Եղև յիշատակ ընդ դարս յաւիտեան ։
Դիւցազանց անուամբ թէ պանծալ տենչաս ,
Առաքինութեանց նոցին հետևեաց .
Ամօթ է պարծիլ յանուն Արամեան ,
Եւ լինել 'ի բարըս վատանըշան ։

ԱՐԱՄԱԶԴ կամ ԴԻՈՍ է անուն մեծահռչակ չաստուածին բոլոր հեթանոս ազգաց , որդի Կռոնոսի ։ Սա ըստ առասպելախօսից սնաւ Ամալթէա այծին կաթովը , որ այս պատճառաւ փոխադրեցաւ յաստեղատունն երկնից Այծեղջիւր անուամբ ։ Արամազդ մեծնալէն ետև ազատեց զհայրը Տիտանեանց ձեռքէն , ու նորէն հօրը թագաւորութիւնը ձեռք բերելով՝ իրեք բաժնեց . Պոսիդոնին տուաւ ծովու տէրութիւնը . Պղուտոնի դժոխքը , և ինքն առաւ աշխարհիս երեսն ու երկինքը ։ Յետոյ վերի չաստուածներն ալ կայծակով զարկաւ վռնտեց , ու բոլոր տեղերուս տիրեց . Նա և անթիւ անոտի չաստուածներ ծնաւ , զանազան բաներու վրա դրաւ , կ'ըսէին մոլորեալ հեթանոսները ։ Դիոսի արձանը ձևացուցեր էին՝ գահը նստած , աջ ձեռքին մէջ թագաւորական գաւազան և կայծակն , ոտքին տակը արծիւ ։ Սորա անուամբ կանգներ էին մեհեաններ ամէն կողմն աշխարհի ։ Յովհան իմաստասէր կ՚ըսէ ․ Ամենայն ազգ պատուեցին այլաձևելով զնորա անունն , Քուշացիք՝ Նեբրովթ կոչելով , Բաբելացիք՝ Բէլ , Փղշտացիք՝ Բահաղ , Ելլենացիք՝ Դիոս , Պարսիկք՝ Որմիզդ , Հայք՝ Արամազդ ։ Եւ այլևայլ կերպարանք փոխուելով իրեք հարիւր Դիոս կը համրէն կռամոլները ։

Արամազդ չաստուած անգոյ դիւահնար ,
Գերապատուեցաւ հընութեան ՚ի դար ․
Որք զանգոյ էակս առեալ ՚ի պաշտօն
Անկղխտանային յանատակ ՚ի տօն ։
Ով աղէտալի կուրութեան մարդոյ ,
Ո խարդ փոխարկէ զԱն ընդ չէք անգոյ ․
Դրօշեալըս կոփէ երկիր պագանէ ,
Եւ ձեռակերտին իւրոյ աղերսէ ։

ԱՐԱՄԱՅԻՍ էր թոռն Հայկայ , նահապետ Հայոց , և որդի Արմենակայ ․ որ շինեց Արմաւիր քաղաքը Արագածու դաշտին մէջ Գեհոն գետին քով , և կոչեց Երասխ՝ Երաստ թոռանը անուամբ ։ Ասոր որդին Շարայ շատակեր ըլլալով բնակեցուց Ախուրեան գետին մօտ խիստ պտղաբեր տեղը ․ ուր աճելով Շարայ՝ երկիրն ալ իր անուամբն կոչեցաւ Շիրակ ․ որ առատութեանը համար առակ ըրեր էին ասելով ․ “ Եթէ քո Շարայի որկորն է ․ մեր Շիրակայ ամբարքն չէն „ ։

ԱՐԱՅ նահապետ Հայոց էր որդի Արամայ , որ խիստ գեղեցիկ ըլլալուն համար կոչեցաւ

Արայ Գեղեցիկ, և շինութիւններ ընելով Արմաւիրայ կողմը աշխարհն ալ անուանեցաւ Արարատ ։ Շամիրամ՝ Նինոսէն ետև հրաւիրեց զԱրայ որ երթայ քովը . բայց նա երբոր մերժեց անոր կամքը, պատերազմի ելաւ վրան . իսկ Արայ պատերազմին մէջ ընկաւ, միայն քսանըվեց տարիի չափ թագաւորեց ։ Շամիրամ շատ աշխատեցաւ որ կախարդութեամբ յարութիւն տայ Արայի . երբոր մարմինը հոտեցաւ, փոսի մը մէջ թաղել տուաւ . ու սուտ անուն հանեց, թէ աստուածքը լզելով յարուցին ։ Որուն Կարդոս որդին դրաւ հօրը տեղը, կոչելով Արայ, որ տասուերկու տարեան էր ։ Շամիրամ ժամանակ մը կեցաւ Հայաստան ու շինեց Շամիրամակերտ, որ է Վան քաղաքը ։

Արայ համազգ Յովսեփայ նախնոյն,
Վերձ հոգւով մարմնով արի դիւցազուն .
Մերժեալ ըզհրապոյրս կաթոտ գշխոյից,
Շըքեղ պանծացան 'ի կարգ անմահից ։
Այս հիանալի տիպք առաքինեաց
Խոր դըրոշմեցին յոգիս պատանեաց .
Յաղթեալ հեշտութեանց մի լինել գերի,
Այլ անճառ պսակացն եղեալ արժանի ։

ԱՐԱՏՈՍ էր Յոյն բանաստեղծ և աստեղաբաշխ 270 տարի Յիսուսէն առաջ, որ շարադրեց ոտանաւոր ճառ աստղերուն վրա Երևոյթք անուամբ, զոր Կիկերոն թարգմանեց լատիներէն ։ Առաջին մասին մէջ կը ճառէ համաստեղաց և աստեղաց դրից վրա . Բ. մասին մէջ կը խօսի երկնային գլխաւոր շրջաններուն վրա . իսկ Գ. մասին մէջ կը բերէ տասուերկու կենդանակերպից ծագումն և գուշակական բաներ ։

Պօղոս առաքեալ յԱթէնս փիլիսոփաներուն երեսը զարկաւ այս բանաստեղծիս գրածը՝ ասելով. “ Որպէս և ոմանք ՚ի ձերոց Ճարտարաց ասացին՝ թէ նորա և ազգ իսկ եմք ”։ Այս խօսքս Արատոսին գրուածներուն մէջէն է։

ԱՐԷՍ էր չաստուած պատերազմի, որ ծնաւ Հերայէն զինավառեալ, և սպաննեց Պոսիդոնին որդին։ Անոր համար ելաւ տասներկու դից ատեանն, և արդարացաւ ըստ առասպելախօսից. իսկ այն ատեանն կոչեցաւ Արիսպագոս. այսինքն Տեղ Արեսի։ Արեսի անուամբ անթիւ կռատուններ կանգնեցին շատ տեղեր. և կը զոհէին գայլ, շուն, ձի, և թեղօշ ծառն ալ իրեն նուիրեցին։ Հռոմայեցիք կը համարէին զինքը Հռոմուլոսի հայրն, ու տօն ալ կը կատարէին։

ԱՐԻՈՍ աղանդապետ՝ էր երէց Աղեքսանդրացի ուրացող Քրիստոսի աստուածութեանն, որ նախ ընկաւ ՚ի հերձուածն Մելիտոսի, յետոյ թողուց զայն ու ձեռնադրեցաւ սարկաւագ և քահանայ ՚ի 315։ Ապա սկսաւ առջի աղանդը քարոզելով ըսել թէ որդին Աստուծոյ է արարած և ոչ համագոյակից Հօր։ Նախ սուրբն Աղեքսանդր դատապարտեց զինքն ՚ի 319. յետոյ ՚ի 325 ընդհանուր ժողովն Նիկիոյ իրեք հարիւր տասնըութը հայրապետաց, չարաչար նզովեց զԱրիոս և իւր պիղծ աղանդն, որ յետոյ ՚ի գարշելիս սատկեցաւ ՚ի 336.

Ահա այս բաժին աղանդապետաց,
  Դառնաղէտ կորուստ դառնալից կենաց.
  Արիոս ժայթքեաց զաղանդ զազրալից,
  Պղծալից կորեաւ ինքն ՚ի գարշելիս։

Նշաւակ չարատանջ կործանման չարին ,
Աստէն փորձ առեալ անզերծ գեհենին ,
Մոլեալ յանդգնէր յանհասանելիս .
Կորոյս նա իսպառ և զառձեռն բարիս :

ԱՐԻՍՏԱԲՈՒՂՈՍ՝ էր թագաւոր Հրէից որդի Յովհաննու Հիւրկանեայ, թոռն Շմաւոնի Մակաբեան, որ նստաւ թագաւոր 102 տարի Քրիստոսէն առաջ, որուն յաջորդեցին ուրիշները: Իսկ Արիստաբուղոս գնաց Հռոմ զաւակներովը , յետոյ զօրքով գնաց յԵրուսաղէմ Պոմպէոսի դէմ սպաննուեցաւ . անոր որդին Անտիգոնոս նստաւ թագաւոր օգնականութեամբ Բարզափրանայ մեծ զօրավարին Հայոց 33 տարի Քրիստոսէ առաջ :

Թշուառ եղև բաղդ Հրէաստանեայց ,
Անկեալ 'նդ գերութեամբ բարբարոս ազգաց .
Որք հաւատարիմ էին Արաբին՝
Շրջակայ ազանց ինքեանք տիրէին :
Թագաւորք նոցա ընդ թողուլ զԱստուած՝
Ողորմ գերեցան հեթանոս յազանց .
Սանձեալ ընդ լծով հռոմէական ,
Զրկեցան յողջոյն փառաց տիրական :

ԱՐԻՍՏԱԿԷՍ կամ սուրբ Ռստակէս՝ էր պզտի որդին սուրբ Լուսաւորչի , ծնաւ և մնաւ 'ի Կեսարիա մօրը ձեռքին տակը . յետոյ մտաւ վանք կը ճգնէր սքանչելի առաքինութեամբ և հրեշտակային վարքով : Տրդատ թագաւորն բերել տուաւ 'ի Հայաստան , և սուրբ Լուսաւորիչ հայրը ձեռնադրեց զինքն եպիսկոպոս իբրև իրեն փոխանորդ , ու հետն առաւ տարաւ 'ի Հռոմ : Յետոյ իրեն տեղը ղրկեց 'ի սուրբ ժողովն Նիկիոյ, որ բերաւ ժողովքին սահմանը․ ինչպէս նաև անունին ստորագրութիւնը կայ գրած սինհոդոսին հայրապետներուն կարգը։ Երբոր սուրբ Լուսաւորիչ պիտի առանձնանար Սեպուհ լեռը, իր տեղը դրաւ զսուրբն Արիստակէս կաթողիկոս ամենայն Հայոց, որ սքանչելի բարեկարգութեամբ ծաղկեցուց Հօրն արդիւնքը փառաւորելով եկեղեցին 'ի Հայաստան։ Նոյնպէս բարոյական խրատներով կը շտկէր իշխաններուն անկարգութիւնը․ երբոր սաստիկ յանդիմանեց չորրորդ Հայոց իշխանին Արքեղայոսի անիրաւ գործքը՝ նահատակեցաւ Ծոփաց գաւառը յամի 338, և թաղեցաւ 'ի Թիլ աւանին Եկեղեաց․ որ կուսական սրբութեամբ և առաքինութեամբ եօթը տարի հայրապետութիւն ըրաւ, և տօնեցաւ։

ԱՐԻՍՏԱԿԷՍ Լաստիվերտցի՝ էր գիտնական վարդապետ Հայոց ԺԱ դարուն․ որ գեղեցիկ ողբական ոճով գրեց իր պատմութիւնը սկսեալ 'ի Ա․ Գագիկ արքայէն մինչև ցառումն Անւոյ կամ մինչև ցամ Տեառն 1071․ յիշելով ամէն դիպուածները և պարագաները․ նոյն ատեն ինքն ալ վախճանեցաւ։ Ունի հոգևոր գրուածքներ ալ։

ԱՐԻՍՏԱԿԷՍ Գրիչ Հռետոր՝ էր վարդապետ Հայոց․ որ ծաղկեցաւ 'ի սկիզբն ԺԳ դարուն․ և գրեց երկու խրատ յարմարագրութեան վրայ, որ կը սկսի այսպէս․ “Աստուածազանից արանց առաջի”։ Գրչագիրները կը կոչեն Արիստակէս․ իսկ մանկագրութիւնն է․ “Վերլուծութիւնք բացերևապէս բազմազան բառից և բայց յոքնախումբ շարադրութեան ,, ։ Արիստակեսի անուամբ կայ նաև փառաւոր ճառ նաւակատեաց ։

Աստուածաշնորհ վեհ հօտապետ արի,
Սուրբ Արիստակէս հրեշտակ 'ի մարմնի .
Ի տիս մանկութեան հին աւուրց ընտիր,
Ի կատարելում պերճ աստուածընտիր ։
Կենդանի քարոզ աստուածպաշտութեան
Հօր Լուսաւորչի ծնունդ արփիական .
Զարիւն իւր հեղեալ 'ի սէր ճշմարտին
Ըզվըկայութիւն լըցոյց ծընողին ։

ԱՐԻՍՏԻԴԷՍ Ա. էր իշխանապետ Աթենացւոց . առաքինի, քաջ և արդարակորով, մինչև անուանեցաւ Արդար՝ 483 տարի Քրիստոսէն առաջ ։ Թշնամիները չքաշելով այս գովելի անունը քշեցին վիճակով զինքը . երբոր վիճակները կը գրէին, գրել չգիտցող անծանօթ մարդ մը տեսաւ որ Արիստիդէս անկէց կ'անցնի, աղաչեց որ անունը գրէ խեցիին վրա ։ Հարցուց իրեն Իշխանապետը թէ ինչ վնաս տեսեր ես անկէց . պատասխան տուաւ թէ բան մը տեսած չեմ, և չեմ ալ ճանչնար, բայց չեմ քաշեր որ արդար ըսուի ։ Երբոր Պարսիկները ելան Աթենացւոց վրա, շուտով Արիստիդէսը դարձուցին աքսորանքէն, որ եկածին պէս յաղթեց Պարսիկներուն ու չարաչար կորոյս ։ Այս իշխանապետը անընչասէր ըլլալով երբոր մեռաւ, թաղմանը համար և աղջիկները կարգելու համար՝ հասարակաց գանձարանէն ծախք ըրին, զի ինքը բան մը չունէր ։

ԱՐԻՍՏԻԴԷՍ Բ. էր սուրբ փիլիսոփայ Աթենացի, որ յամի Տեառն 129 դաւանելով

Քրիստոսի հաւատքը անփոփոխ պահեց իմաստասիրական քաղաքավարութիւնն, ու գրեց ճառ ջատագովութեան վասն ճշմարտութեան քրիստոնէական հաւատոյ և ընծայեց Ադրիանոսի կայսեր՝ Աթէնք գնացած ատենը, որով մեծ օգուտ ըրաւ սուրբ կրօնին․ ինչպէս կը յիշեն սուրբ Հերոնիմոս, և Եւսեբիոս։

Պըսակ պարծանաց է արդարութիւն,
 Պատշաճեալ 'ի գլուխ իշխան կարգելոյն,
 Որով պանծացան թագաւորք հզօր,
 Ինքնակալութիւնք, կայսերք քաջազօր։
Արդարք են տիրող մեծութեանց երկրի,
 Ի կեանս և 'ի մահ յաւերժ կենդանի․
 Ի՛ր Արիստիդեայ անուն բարեշուք
 Յազգ իւր և յօտարս էարկ նախանձուկ։

ԱՐԻՍՏՈՏԷԼ էր գերահռչակ Յոյն փիլիսոփայ, մեծիմաստ, և գլուխ Ճեմական դպրոցին, որ ծնաւ 384 տարի Յիսուսէն առաջ 'ի Թրակիա․ նախ զինուոր եղաւ, յետոյ վառուեցաւ ուսմանց սիրով, ու գնաց Աթէնք՝ աշակերտեցաւ Պղատոնին։ Իր ամենայն ջանքով ուսմանց հետևելով, շատ մեծանուն հանդիսացաւ իմաստասիրութեամբ․ մինչ զի Փիլիպպոս արքայն Մակեդոնիոյ զինքն հրաւիրեց՝ որ երթայ Աղէքսանդրի վարժապետ ըլլայ, այսպէս գրելով․ “Փիլիպպոս Արիստոտելի ողջոյն․ Ինձի որդի մը եղաւ, շնորհակալ եմ աստուածոց՝ ոչ այնչափ վասն զաւակիս, որչափ վասն ծնանելոյ քուկին օրդ․ զի կը յուսամ թէ քեզմէ պիտի առնու ուսումն և կրթութիւն ինձի արժանաւոր յաջորդ ըլլալու, և բաւական կառավարելու իմ մեծ տէրութիւնս„։ Աղէքսանդր ալ եղաւ արժանաւոր աշկերտ

Արիստոտելի ։ Ուստի Փիլիպպոս վասն շնորհակալութեան անոր անուանը արձան կանգնեց․ Արիստոտել մնաց արքունիքը ութը տարի․ յետոյ գնաց Աթէնք, մեծապէս պատուեցաւ․ ուր ճեմելով դաս տալուն համար՝ կոչուեցաւ իր աղանդը Ճեմական ։ Որուն զրկեց Աղեքսանդր Պարսից աշխարհէն ութհարիւր տաղանդ ստակ, որ ծախսէ բնական զննութեանց և ուսումնական քննութեանց համար ։ Արիստոտել շատ անգամ չաստուածները ծաղր ընելուն համար՝ Աթենացիք իրեն ծուռ կը նայէին․ մինչև փախաւ Քաղկիդէ, և հոն մեռաւ վաթսունւիրեք տարուան Աղեքսանդրէն երկու տարի ետև, և 322 տարի Յիսուսէն առաջ, որուն կանգնեցին քաղաքացիքն արձան և սեղան զոհի ։ Վասն զի էր վեհանձն և անկեղծ, բարեգութ և սիրելի․ շատ գրեանք շարադրեց, գլխաւոր և պիտուականքն են՝ Տրամաբանութիւնն, Բարոյականն, Պատմութիւն կենդանեաց, Քերթողութիւն և Հռետորութիւնն, որ գրեց Մեծն Աղեքսանդր կրթելու համար ։ Նաև ունի շատ խելացի խօսքեր․ զոր օրինակ “Արմատք գիտութեանց են դառն, այլ պտուղն քաղցրահամ ։ Յոյսն է երազ ինչ յարթնութեան ։ Խտիրն՝ 'ի մէջ իմաստնոյ և անմըտի, ոչինչ ընդհատ է 'ի կենդանի մարդոյ և 'ի մեռելոյ ։ Ոչինչ այնպէս վաղ ծերանայ, ուպէս երախտիքն և շնորհքն ։ Դպրութիւնք զարդ են մարդոյ 'ի յաջողուածս, և մխիթարութիւն 'ի վիշտս ։ Բարեկամն է մի հոգի՝ յերկուս մարմինս բնակեալ ։ Ստախօսից շահ այն է, զի յասելն զճշմարիտն՝ ոչ լինին հաւատալի ։ Չէ պարտ հայել 'ի հայրենիսդ․ այլ յայն՝ թէ իցես արժանի հայրենեացդ „ ․ և այլն ։

Արիստոտէլ մեծն այն իմաստնաճառ
Լուսատու գիտնոց կայ ինքն ՚ի խաւար ·
Զսեռից տեսակաց բընախօսելով,
Ապախտ արար զանձն անմահըն հոգւով ։
Նախկին կարեւոր իմաստասիրի՝
Այս է գիտել է՞ր գոյացաւ հոգի ·
Որ չէ մակացու աստուածգիտութեան,
Կոյր է զաչացու անբանից նըման ։

ԱՐԿԱԴԻՈՍ էր երէց որդի Մեծին Թէոդոսի, որ մանկութեան ատենը գահակից ըլլալով հօրն՝ ՚ի 395ին յաջորդեց կայսերութեանը տասնըվեց տարւան ։ Բայց անմտութեամբ կարգուեցաւ Եւդոքսիային հետ, որ դուստր էր Գաղղիացի զօրավարին, և նորա խելքին հետևելով կորոյս փառքը · մանաւանդ երբոր սուրբ Ոսկեբերանը աքսորեց կնկանը խօսքով ։ Արկադիոս թէպէտ հաստատեց Թէոդոսեան օրէնքն, բայց մէկ շինութիւն մը չի կրցաւ ընելու՝ մինչև մեռաւ երեսուն տարւան ՚ի 408, միայն տասուերեք տարի թագաւորեց ։ Սա Շապուհ Պարսից թագաւորին հետ միաբանելով՝ և չի խղճալով երկուս բաժնեցին Հայոց աշխարհն, ու տկարացուցին վատութեամբ ։ Իսկ իւր կայսերութիւնն ալ քանի գնաց տկարացաւ, մինչև յետոյ կորաւ ։

Ահա քեզ տիպար ախմար զաւակաց
Շեղելոց յուղիղ կարգէ ծընողաց ·
Օ՜ ի՞նչ շահ յիմաստից հօրն առաքինւոյ,
Եթէ որդին զիրկ է ՚ի հանճարոյ ։
Չիք գերութիւն մեծ և ամօթալի՝
Բան զմտանիլ ՚ի ձեռըս կընոջ լկտի ·
Որ տոռամբ ձգեալ ածէ աստ և անդ,
Մինչև կործանէ յանել խորխորատ ։

ԱՐԿՈՒԹԻՈՍ Պետրոս՝ էր իմաստուն երէց Յոյն Քօռֆուցի, որ սորվեցաւ 'ի Հռոմ ու գնաց 'ի քարոզութիւն ճշմարտութեան 'ի Լեհաստան և Ռուսիա: Ոչ միայն ողջամիտ վարդապետութեամբ, այլև պիտուական գրուածով մեծ օգուտ բերաւ սուրբ եկեղեցւոյ, որոնք տպագրեցան 'ի Հռոմ. և են՝ ա̅ Համաձայնութիւն արևելեան և արևմտեան եկեղեցեաց 'ի վարդապետութիւնս եօթն խորհրդոց եկեղեցւոյ. բ̅ Յաղագս քաւարանի. գ̅. Յաղագս բղխման Հոգւոյն սրբոյ 'ի Հօրէ և յՈրդւոյ:

ԱՐՄԵՆԱԿ Նահապետ՝ էր որդի Հայկայ և յաջորդ նորա, որ տիրապետեց Հայոց, ու առաւ բոլոր ընտանիքը զաւակներով գնաց յարևելեան կողմն ընդարձակ դաշտին մէջ բնակեցաւ: Նա և շէնքեր ալ շինեց գետին մօտիկ բարձր լեռան տակը, և հոն մեծ անտառ մը տնկեց սօսի ծառոց, ու ըրաւ իրեն բնակարան անուանելով Արագած, կամ Արմենագած, ուր շատ տարի թագաւորեց ու մեռաւ, որուն յաջորդեց որդին Արամայիս:

ԱՐՇԱԿ Ա. էր անուանի արքայ Պարսից, ազգաւ Պարթև, որ զօրանալով թագաւորեց յերկրին Քուշանայ 246 տարի Յիսուսէն առաջ, և մեծ քաջութեամբ յաղթեց Սելևկիացւոց արքային ու տիրեց Բաբելոնի: Ուր իմաստութեամբ երեսուն տարի տիրելէն ետև մեռաւ: Իր յաջորդները կոչեցան Պարթև Արշակունիք ու միշտ Հռոմայեցւոց դէմ պատերազմեցան:

ԱՐՇԱԿ Բ. էր Թոռն առաջնոյն, որ մեծամեծ գործքերով անուանեցաւ Մեծ, և զօրանալով Թագաւորեց մինչև 'ի Հնդստան 190 տարի Յիսուսէն առաջ: Այլ Ասորեստանի և Հայաստանու տիրելէն ետև ստակ տպեց, վրան գրաւ Թէոս, այսինքն Աստուած. և Վաղարշակ իւր եղբայրն ալ գրաւ Թագաւոր Հայոց: Ապա շատ Թագաւորներու յաղթելէն ետև, և քսանըմէկ տարի Թագաւորելէն ետև մեռաւ:

ԱՐՇԱԿ Ա. Թագաւոր Հայոց Արշակունի, էր որդի և յաջորդ Վաղարշակայ, որ Թագաւորեց 127 տարի Յիսուսէն առաջ, ու ապստամբ Պոնտացիներուն յաղթեց. և այս յաղթութեան նշան կանգնեց արձան մը ծովին մօտ, ու նիզակը զարկաւ քարէ պատուանդանին ծակելով խրեց, զոր բնակիչները զարմանալով պաշտեցին: Արշակ շատ նեղութիւն տուաւ Բագրատունի Հրէաներուն, որ Թողուն զԱստուած ու կռապաշտ ըլլան: Շատերը չպաշտեցին կուռքն ու նահատակեցան. ոմանք ալ տղաքնին չէին Թլփատեր, շաբաթ ալ չէին պահեր: Արշակ տասուիրեք տարի Թագաւորեցու մեռաւ. իսկ որդին Արտաշէս յաջորդեց անոր տեղը:

ԱՐՇԱԿ Բ. որդի Տիրանայ Թոռին Տրդատայ նստաւ Թագաւոր Հայոց 'ի 363, որ չարագործութեանցը համար ատելի եղաւ նախարարաց և մեծին Ներսեսի: Մինչև աքսորանաց մէջ Թշուառութեամբ անձնասպան կորաւ 'ի 380ին:

ԱՐՇԱԿ Գ. էր որդի Պապայ, յաջորդեց հօրը 'ի 386. որ անյաջող ըլլալով, Թշուառութեանց պատահեցաւ ու առանց քաջագործութեան մեռաւ հիւանդութեամբ 'ի 390ին : Ան ատենը թագաւորեց Խոսրով բոլոր Հայոց վրա :

ԱՐՇԱՄ էր թագաւոր Հայոց Արշակունի, եղբայր Բ. Տիգրանայ, որ վաթսուն տարուան թագաւորեց, ու պատերազմեցաւ Հռոմայեցւոց հետ, և Պարսից օգնելովը տիրեց Հայաստանու մէկ մասին : Յետոյ հաշտութիւն ընելով Օգոստոս կայսեր հետ, խաղաղութեամբ նստաւ Մծբին քաղաքը մինչև 'ի խոր ծերութիւն, և մեռաւ 6 տարի Յիսուսէն առաջ. Նաև քանիմը տարի թագաւորելէն ետև թողուց տէրութիւնը իր Աբգար որդւոյն : Տես 'ի կարգն :

Դիւցազուն սպետաց բնաբոյս հրահանգք
Ի վարել ըղեան ուղիղ բարեկարգ .
Որք լուսով բանին ևեթ ծաղկեցան ,
Արքենօրէն գերապանծ գրտան :
Թէ լոյս հաւատոյ ծագեալ էր նոցին ,
Բանի հրաշագեղ շնորհօք փայլէին .
Այս պարգև միայն քրիստոնէից տուաւ ,
Պանծալ աստ և անդ կրկին պըսակաւ :

ԱՐՍԷՆ կամ ԱՐՍԵՆԻՈՍ էր երևելի ձրգնաւոր ազգաւ Հռոմայեցի, ազնիւ տնէ, գիտուն և փառաւոր : Մեծն Թէոդոս իր Արկադէոս և Ոնորիոս որդւոցն վարպետ դրաւ Արսէնը, որ շատ տարի թագաւորին պալատը կեցաւ. վերջը փառքէ փախչելով 'ի 390ին առանձնացաւ անապատ, ուր կատարեալ առաքինութեամբ և արտասուօք կը ձգնէր 'ի Սկիտէ սուրբ ձգնաւորներուն քով : Այնպէս աստուածային սիրով վառեալ գիշեր ցորեկ կ'աղօթէր, որ ամենուն բարի օրինակ էր երանելին խորին խոնարհութեամբ և անարատ քաղաքավարութեամբ, որով քառասուն տարի ձգնեցաւ սրբութեամբ և սքանչելագործութեամբ։ Ապա 'ի խոր ծերութեան հիւանդացաւ և աւանդեց սուրբ հոգին 'ի հասակին հարիւր տասնըութը տարուան. եղաւ տօնելի, որուն երանի կուտային ձգնաւորները, որ թագաւորական փառքէն փախաւ, ու անապատը ձգնեցաւ սրբութեամբ և իմաստութեամբ։

Արսէն գերիմաստ ազգաւ պայազատ
Ըզփառս արքունեաց փոխեաց յանապատ.
Առաքինացեալ շըքեղ գերազանց,
Մինչև զարմանալ դասուց հրեղինաց։
Հայելի պայծառ վարք առաքինեաց,
Ջքնաղ բուրաստան հրաշագեղ ծաղկանց,
Յորում պերճանայ ազգ մահկանացուին
Տիրական շնորհօք իբրև անմարմին։

ԱՐՏԱՇԷՍ արքայ Պարսից՝ Երկայնաձեռն անուամբ՝ թագաւորեց 465 տարի Քրիստոսէն առաջ. և զօրանալով յաղթեց Եգիպտացւոց և ուրիշ թշնամիներուն։ Սա ըստ պատմութեան սուրբ գրոց՝ խոստացաւ Եզրասին Երուսաղէմը նորոգելու, նաև դատաւորներ դրաւ քաղաքին Հրէաներէն. ուսկից կը համրեն սկիզբն եօթանասուն եօթներորդացն Դանիէլին. իսկ ինքն քառասունըութը տարի թագաւորելէն ետև մեռաւ։

ԱՐՏԱՇԷՍ Ա. թագաւոր Հայոց Արշակունի՝ էր որդի Արշակայ Ա. որ թագաւորեց 'ի Մծբին 114 տարի Յիսուսէն առաջ, և զօրանալով Պարսից վրա , իւր աթոռը դրաւ Պարսկաստան ։ Այնչափ անհամար զօրք ժողվեց , որ երբ միաբան նետ կը նետէին , արևին լոյսը կը խափանէր . տիրեց փոքր Ասիոյ և Յունաստանի ։ Յետոյ դարձաւ Հայաստան ու թագաւորեցուց իր որդին Տիգրան Բ . և ինքն գնաց Պարսկաստանի ալ տիրեց . վերջը պատերազմի մէջ ընկաւ քսանըհինգ տարի թագաւորելէն ետև ։ Սա բերաւ Յունաստանէն 'ի Հայաստան ոսկեզօծ պղընձաձոյլ կուռքեր անոնց քուրմերովն մէկտեղ ։

ԱՐՏԱՇԷՍ Բ . արքայ Հայոց՝ էր որդի Սանատրուկ թագաւորին , որուն որդիքն երբոր Երուանդ սպաննեց , Արտաշէս տղայ ըլլալով Սմբատ Բագրատունիին ձեռքով փախաւ Պարսկաստան . յետոյ Պարսից զօրքով եկաւ Հայաստան յաղթեց Երուանդայ , ու թագաւորեց խաղաղութեամբ յամի Տեառն 88 ։ Եւ շատ գեղեցիկ բարեկարգութիւններ ըրաւ , շատ դպրոցներ հաստատեց , և թշնամեացն ալ յաղթելով , հաշտութիւն խօսեցաւ Տրայիանոսի կայսեր հետ ։ Սաթինիկ Ալանաց արքային դուստրն ըրաւ դշխոյ Հայոց . յետոյ գնաց Բակուրակերտ , հոն հիւանդացաւ ու մեռաւ քառասունըմէկ տարի թագաւորելէն ետև յամի 128 , և մեծ հանդէսներով թաղեցաւ . և իրեն յաջորդեց որդին Արտաւազդ Բ ։

ԱՐՏԱՇԻՐ Սասանեան էր արքայ Պարսից , որ սպաննեց իրմէ առջի թագաւորն ու նստաւ աթոռը 'ի 226 . բայց մեր Խոսրով Ա . Տրդատ թագաւորին հայրը վրան ելաւ յաղթեց ։ Արտաշիր ալ դաւաճանութեամբ սպաննել տուաւ

Խոսրովը Անակայ ձեռքով, ու տիրեց Պարսից և Հայոց։ Ապա յիսունըութը տարի թագաւորելէն ետև մեռաւ յամի 290. որուն յաջորդեց Շապուհ որդին, որ գրեց գիրք կանոնաց և ժամանակագրութիւն կամ յիշատակարան իր գործոց, նաև շինութիւններ ալ ըրաւ. և կըսէր թէ "Գէշ է այն իշխանն, ուսկից առաքինիք կը վախնան ու չարագործները կը սիրեն։ Թէ որ թագաւորը գթայ ժողովրդեան վրա, ժողովուրդն ալ իրեն հնազանդ կըլլայ". և այլն։

ԱՐՏԱՇԻՐ էր թագաւոր Հայոց Արշակունի, տասնըութը տարուան թագաւորեց 'ի 422, որ ապականեալ գէշ վարքովը գանելի եղաւ նախարարներուն։ Ասոնք ժողվեցան գնացին սուրբ Սահակ կաթուղիկոսին, որ իրենց հետ միաբան Պարսից թագաւորին ձեռքովը ձգեն աթոռէն Արտաշիրն։ Սուրբը երբոր շատ դէմ կեցաւ իրենց, ու իմացուց թէ ատկէց ազգին կործանումն կ'ըլլայ, անոնք մտիկ չըրին, ելան գնացին Վռամ Պարսից արքային մատնեցին։ Արտաշիր ալ գնաց զինքն արդարացուց. բայց Վռամ խիստ փափաքելով Հայոց կորստեանը վրա՝ ձգեց աթոռէն Արտաշիրն ու քշեց Խուժաստան 'ի 428ին. և ամէն բաներն յափշտակեց առաւ. և անոր տեղը ղրկեց Մարզպան, այսինքն Պարսիկ իշխան մը 'ի Հայաստան. իսկ Արտաշիր խեղճութեամբ մեռաւ աքսորանաց մէջ. միայն վեց տարի թագաւորեց ու վերցաւ Արշակունեաց թագաւորութիւնը Հայոցմէ, և գերի եղան Պարսից անկէ ետև մեծ թշուառութեամբ։

Աշխարհակալաց օրէնք տիրական
Պող իրաւասէր հանուրց բարեխնամ.
Սրով մեծայաղթ տիրեն միշտ ազգաց,
Պատճառք շինութեան և անթիւ բարեաց:
Թէ արդարասէր էին մեր իշխանք
Սրբոյն Սահակայ լինէին հնազանդք.
Հեստեալ կորուսին զարքայն և զինքեանս,
Կրակապաշտ Պարսից գերի մատնեցան:

ԱՐՏԱՒԱԶԴ էր արքայ Հայոց որդի Մեծին Տիգրանայ, որ թագաւորեց 35 տարի Յիսուսէն առաջ. բայց ախտասէր ըլլալով զօրքերը գանեցան իրմէն ու թշնամիները զօրացան: Անտոնինոս Հռոմայեցւոց զօրավարը երբոր Պարսից վրա ելաւ, խաբէութեամբ իրեն կանչեց զԱրտաւազդ, ուսկից առաջ ջարդ կերեր էր, ու կապանօք ղրկեց Կղէոպատրայ Եգիպտոսի դշխոյին. ուր ամենեւին չուզեց երկրպագութիւն ընել այն կնկանը: Սակայն նա դառնացեալ՝ Անտոնիոսին մահուանէն ետև գլխատեց Արտաւազդը, որ հինգ տարի թագաւորեց և իրեն յաջորդեց Արշամ իր հօրեղբայրը:

ԱՐՏԱՒԱՆ՝ էր քաջ նախարար Հայոց, և փեսայ սրբոյն Հմայեկայ Թոռին սուրբ Սահակայ Պարթևի: Վարդանանց նահատակութենէն ետքը երբոր Պարսիկները կը նեղէին մեր ազգն որ ուրանան սուրբ հաւատքը, Արտաւան ուրիշ նախարարներով միատեղ գնաց առ Լևոն կայսրն 'ի 471ին. և բնակելով Մակեդոնիա, հոն բազմացաւ անոնց հետ. յետոյ փոխադրեցան Լորէնէ, ուր երկար ժամանակ պահեցին իրենց Արշակունի փառաւոր անունը ։ Ոմանք ալ դարձան Հայաստան ու տիրեցին քանի մը քաղաքաց Բագրատունեաց թագաւորութեան ատենը . որոնցմէ եղաւ Գրիգորիս Պահլաւունի իշխանն ։ Սորա թոռն եղաւ Գրիգոր Մագիստրոս . ասոր ալ թոռն Ապիրատ Շնորհալւոյն հայրը ։ Տես ՚ի կարգին ։

ԱՐՏԵՄԻՍ Մեծ վկայն՝ էր փառաւոր Պատրիկ Աղեքսանդրիայի , և դուքս մեծին Կոստանդիանոսի ատենը ։ Ոերութ՟է ժամանակը երբոր լսեց Յուլիանոսի ուրացողին չարութիւնները քրիստոնէից դէմ, գնաց յանդիմանեց զինքը ։ Իսկ անօրէն կայսրն ծեծել տուաւ , և կտրտեց սրբոյն մարմինը ու երկու քարի մէջ չարաչար պնդեց , որ աղիքները վար եկան ։ Երբոր չի կրցաւ երանելւոյն քաջութեանը յաղթել խայտառակ եղաւ , ու գլուխը կտրել տուաւ ՚ի 362ին ։ Նշխարքները տարին ՚ի Կոստանդինուպօլիս , որ մեծամեծ հրաշքներով փառաւորեցաւ և տօնեցաւ մինչև ցայսօր ։

Այսպէս բարեսէր իշխանք կորովի
Միշտ գերազանցեն յոր և է կարգի .
Եթէ ՚ի տանջանս և թէ ՚ի բարձին
Պաշտպան է նոցա աջ Երկնաւորին ։
Իսկ զեղծ անարիք նախատինք ազգի ,
Օրինակ չարեաց և ախտից գերի .
Անձանց և ազգին պատճառ կորստեան ,
Քակտիչ աշխարհաց կարգաց պետութեան ։

ԱՐՏԵՄԻՍ կամ ԱՆԱՀԻՏ ըստ առասպելաց էր չաստուածուհի որսորդութեան և դուստր Արամազդայ . բանաստեղծք կը գովեն ասոր ողջախոհութիւնը , որ մեղքէ փախչելով որսորդութեան կը հետևէր ։ Կ'անուանէին զինքը նաև Լուսին և Պերսեփոնէ, ու տօնախմբութեան օրը չէին երթար որսորդութեան. և գլուխը կը նկարէին հերասփիւռ. մարմինը ծածկած կարմիր զգեստով մինչև ծունկը. ձեռքն աղեղն և յուսն կապարճ, քովն ալ շուն մը. երբեմն ալ նստած ոսկեղէն կառքի մէջ ։ Հեթանոսներն ասոր անուամբ շատ տեղ փառաւոր տաճարներ շինեցին. բայց Եփեսոսի տաճարն էր եօթն հրաշալեաց մէկը, որ երեցաւ Աղեքսանդրին ծնած գիշերը աննշան մարդէ մը 350 տարի Քրիստոսէն առաջ. զոր յետոյ նորէն շինեցին, և ան է որ կը յիշէ Գործք Առաքելոցն ։ Արտաշէս Ա. թագաւորն Հայոց ասոր կուռքը բերաւ Յունաստանէն 'ի Հայաստան, ուր տօնը կը կատարէին վարդի առատ ատենը, և կ'անուանէին Վարդամատն նաև Ոսկիամայր, զի ոսկիէ սեղան կանգներ էին յԱշտիշատ, զոր կործանեց սուրբ Լուսաւորիչ ։

ԱՐՏԵՄԻՍԻԱ՝ էր զօրաւոր դշխոյ, քոյր և կին Մաւզոլէոսի արքային Կարիոյ, որ Դիւցազնուհի անուանեցաւ՝ կանգնելով յիշատակ էրկանը մեծագործ գերեզման մը, երեսունը վեց ազնիւ սիւներու վրայ կայնած՝ զարմանալի գեղեցիկ քանդակներով. մինչ զի աշխարհիս եօթն հրաշալեաց մէկը կոչուեցաւ. և այսպիսի փառաւոր դամբարանները կ'անուանէին Մաւզոլէոն ։ Այս Դշխոյ սաստիկ կսկծուն նոյն գերեզմանին քով մեռաւ 351 տարի Յիսուսէն առաջ ։ Հնախօսները կը գովեն ասոր քաջութիւններն՝ որ ըրաւ Հռոդացւոց դէմ, խորտակելով անոնց նաւերը ։

Դիցամոլից զուր բաղձանք խօլական
  Ցուցակ է հոգւոյս մեր անմահութեան ·
  Բագին կանգնեցին ըստեղծին զաստուածս
  Գէթ անմահացելին 'ի բերան ռամկաց ։
Արդ ու՞ր այդ անմահ կարծեալ դրօշուածք ·
  Բարձան 'ի միջոյ, անկան 'ի մոռաց ·
  Գոյզն ինչ յիշատակ միայն 'ի գըրի
  Աղօտաբանեն նըման երազի ։

ԱՐՐԻԱՆՈՍ՝ էր մեծիմաստ փիլիսոփայ Յոյն ծաղկեալ և փառաւորեալ Ադրիանոս Անտոնինոս և Մարկոս Օրելիոս կայսերներէն ։ Որ ոչ միայն էր երևելի բնախօս և պատմաբան, այլ և զօրավար և հիւպատոս ։ Եպիկտետոսի իմաստասիրին աշակերտ եղաւ · խիստ ճոխաբան էր, և շատ գրեանք շարադրեց · որոնցմէ մնացածներն են · ա · Պատմութիւն արշաւանաց մեծին Աղեքսանդրի ։ բ · Համաքումն խօսից Եպիկտետեայ իմաստասիրին, կամ իր վարժապետին, որ է ընտիր գործ և գերապանծ մնացուած հնութեան, և տպածն ութը գիրք բաժնուած է ։ Սուրբ Օգոստինոս և սուրբն Կարօլոս շատ կը գովեն ասոր բարոյական և վճռական խրատները վասն համբերութեան և ժուժկալութեան ։

ԱՐՔԵՂԱՅՈՍ էր թագաւոր Հրէից և որդի մեծին Հերովդեսի, որուն յաջորդեց յԵրուսաղէմ յերկրորդ ամի թուականին Յիսուսի, ինչպէս կը պատմէ Մատթէոս աւետարանիչ ։ Եւ կ'երևնայ թէ սուրբ Յովսէփ ասոր վախուն առաւ Յիսուսը, փախաւ յԵգիպտոս ըստ տեսլեանն ։ Արքեղայոս ոսկի արծիւ մը կախեց տաճարին դրան վրայ՝ իբր կայսերական նշան ։

Հրէաներն այս բանիս դէմ ելլելով մեծ խռովութի հանեցին, մինչ զի Թագաւորն ալ իրեք հազար Հրեայ ջարդեց։ Ասոնք ամբաստանութիւն գրեցին Կայսեր Թագաւորին դէմ, ու աքսորել տուին 'ի Վեննա Գաղղիոյ. ուր մեռաւ յամի Տեառն 6։

ԱՐՔԻՄԻԴԷՍ էր ներհուն մեքենաբան Սիրակուզացի և ազգական Հերոնի արքային, որ ամէն մեծութիւնը ձգեց ու ընկաւ չափաբերական ուսմանց ետևէն, մինչև եղաւ գերիմաստ փիլիսոփայ. օր մը ըսաւ Թագաւորին. Թէ որ աշխարհքէն դուրս տեղ ըլլար որ մեքենաներս շարեի, այս մեր աշխարհը վեր կը վերցընէի։ Սա կազմեց ապակեղէն գունտ մը, որ սքանչելի վարպետութեամբ մոլորակաց շարժմունքները անսխալ կ' երևցընէր. շատ երևելի և պատուական գիւտեր գտաւ, ու անուանի եղաւ, մանաւանդ երբոր Հռոմայեցւոց նաւերն այրեց կիզանող հայլիով։

Բայց քաղաքն առնուած ատենը Հռոմայեցի զինուոր մը մտաւ Արքիմիդէսին տունը որ տանի զինքը զօրապետին։ Իսկ նա զբաղած ըլլալով կը զուարճանար իր չափմունքներովը. անանկ որ զինուորը կարծելով թէ զինքը մարդու տեղ չի դներ՝ կատղեցաւ սպաննեց զպատուական փիլիսոփայն, որուն վրա աշխարհք լացաւ. և առ 'ի պատիւ փառաւոր դամբարան կանգնեցին երկրաչափական փորուածքներով գերեզմանին վրան։ Նորա ուսումնական գրեանքը կորած են. կան քանի մը կտոր բան որ արևելքէն բերին յԵւրոպա, և յետոյ տպագրեցին պատկերներով, որպէս զի յիշատակը մնայ մեծանուն իմաստասիրին։

Գեղափայլ մըտաց ձրագ բանականին
Վառ 'ի վառ պահեալ գործէ զհրաշալին.
Այսպէս իմաստնոյ հանճարք փայլեցան
Ի բարոյականն և 'ի տեսական:
Վայել է մարդոյ ըստ կամաց Վեհին
Անաղօտ գործել ձրագաւ պերճ բանին.
Ուր չէ խաւարի և ոչ գիշերոյ,
Այլ որդի տունջեան և պայծառ լուսոյ:

ԱՒԱԳ կամ ՍԱՐԳԻՍ Իւանեան էր իշխան Հայոց և քաջ սպարապետ Վրաց, որ Թաթարներուն հետ քաջութեամբ և խոհեմութեամբ վարուելով՝ շատ մեծցուց իր իշխանութիւնն, և մեր ազգը խաղաղութեամբ պահելով մեծ օգուտ ըրաւ ամենուն: Ապա յետ շինութեանց, խաղաղութեամբ և բարի անուամբ վախճանեցաւ յամի 1249:

ԱՒԱԳ նոր վկայն էր Բաղիշեցի. մանկութեան ժամանակը Պարսիկի մը քով կեցաւ արուեստ սորվելու, և սրբութեամբ հաւատքը պահեց: Բայց Պարսիկները կարծելով թէ ուրացեր էր հաւատքը՝ երեսուն տարիէն ետև բռնեցին, կը նեղէին որ դուն այլազգ ես: Նա քաջութեամբ կը պատասխանէր թէ ես քրիստոնեայ եմ, էի, և եղէց. ծառայ Քրիստոսի Աստուծոյ իմոյ օրհնելոյն 'ի բարձունս:
Նոքա բազմութեամբ հանեցին սուրբը Ամիրշարաֆ ամիրային ատեանը, որ վրան յանցանք մը չի գտնալով՝ ղրկեց գլխաւոր դատաւորին: Որուն դիմաց համարձակ խոստովան եղաւ Քրիստոս Աստուած, և լեցուած Հոգւով սրբով՝ կերպարանքը լուսաւորեցան հրեշտակի պէս: Մինչև կատղելով անհաւատ-

ները ընկան երանելոյն վրան ու քարով փայտով զարկին գլխուն, նահատակեցին յամի 1390 ։

ԱՓՐԱ էր հեթանոս կին պոռնիկ Օգոստայ քաղաքէն, որ հալածանաց ատենը դարձաւ 'ի քրիստոնէութիւն, ու բարի վարքով ապրեցաւ ։ Իսկ կռապաշտները բռնեցին ու կը նեղէին որ դառնայ . նա պատասխան կուտար, թէ ես քրիստոնեայ եմ . առաջ պիղծ գործքերու կը ծառայէի սատանայական խաբէութեամբ . հիմա ազատեցայ, զի շնորհքն Աստուծոյ զիս ըրին պարկեշտ և զգաստ ։ Դատաւորը կը ստիպէր թէ զոհէ՛ կռոց ըստ հրամանի թագաւորաց ։ Ափրա կը պատասխանէր թէ պղծութիւն է պաշտել զդիս . ես այդ չար գործքերէն հեռանալով գնացի առ Տէրն իմ Քրիստոս, որ կուտայ ինձի զօրութի՟ համբերելու ամէն տանջանաց, որպէս զի ուրախ ընեմ հրեշտակներն, որ երբեմ՟ մեղքերովս տրտմեցուցի ։ Բռնաւորը կատղելով չարաչար ծեծել տուաւ ասելով . Ա՛յ անամօթ զոհէ՛ կուռքերուն . չէ՛ նէ՝ կ՚երդնում անոնց անուանն որ քեզ կրակով այրեմ ։

Ափրա քաջութեամբ պատասխան տուաւ . ես ալ զքեզ կ՚երդուընցունեմ, որ այրես իմ մեղաւոր մարմինս որ ժանգրոտ պղնձի պէս մաքրի ու փայլի, և արժանաւոր պատարագ ըլլայ Փրկչիս ։ Զարմանալով դատաւորն անոր սրտապինդ խոստովանութեանը վրան, կապել տուաւ ոտքը ձեռքը, և քաշեցին տարին գետին քով՝ այրեցին սուրբը, և եղաւ վկայուհի տօնելի ։

Նոյն բորբոք սիրոյ գործ ըսքանչելեաց ,
Ի սիրտըս վառեալ վըկայից բազմաց ·
Ետ մերժել զերկիւղ , դիմել յասպարէզ ։
Ողջակէզ լինել Տեառն արիապէս ։
Սորա է փոխել զնիւթական մարմին
Յաննիւթից տեսակ իբրև անմարմին ·
Մինչև վերառեալ զերկրաքարշ էակ՝
Առնէ լուսաճեմ աստուածատեսակ ։

ԱՓՐՈԴԻՏԷ , ըստ Հայ · Աստղիկ՝ էր չաստուածուհի սիրոյ և գեղեցկութեան ըստ հեթանոսական առասպելաց , դուստր Դիոսին , ծովուն փրփուրէն ծնած՝ ուր կաթեր էր արիւն Ուրանոսին · զի Աֆռօտիդէ՝ փրփրածին կը թարգմանի ։ Շատ գեղեցիկ ըլլալով՝ երկինքը դասեցաւ , և իր անուամբը կոչեցաւ հինգերորդ մոլորակն Արուսեակ կամ Աստղիկ ։ Ասոր արձանը կը ձևացընէին բազմած կառքի մէջ , որ կը քաշէին աղաւնիներ և ճնճղուկներ · գլխուն վրա կը դրէին արուսեակը ։ Այս կուռքը Հայերը կանգներ էին յԱշտիշատ , և կռատունը կ՚անուանէին Սենեակ Վահագնի , որ ոսկիով լեցուն էր , և մեծ ուխտատեղի եղած էր Հայոց · զոր սուրբ Լուսաւորիչ կործանեց , ու տեղը առաջին սեղան և մայր եկեղեցի շինեց ՚ի պատիւ Ճշմարտին Աստուծոյ երկնի և երկրի ։

ԱՔԻԻԼԼԷՍ կամ ԱՔԻԼԼԷՍ էր գերահռչակ արքայ և դիւցազն քաջ , որ անուանի եղաւ բոլոր աշխարհիս մէջ , և այնչափ զարմանալի յաղթութ՟ քաջագործութիւններ ըրեր էր Տրովական պատերազմին մէջ , մինչև բանաստեղծները առասպելեցին թէ Քիրոն ձիացուլը սնուցեր էր զինքը առիւծի ըղեղով։ Իսկ մայրն ալ ծնած ատենը ընկղմեր էր 'ի Ստիւգեան լիճն չաստուածոց․ որուն զինք չէր կրնար խոցելու․ միայն ոտքին կրունկն կրնար խոցուիլ, որովհետև ոտքէն բռներ էր մայրը ջուրը խոթած ատենը։ Եւ այսպէս շատ մեծամեծ գործքեր ընելէն ետև Աքիլլէս կրունկէն զարնուեցաւ, մեռաւ, և թաղեցաւ Տրոյիոյ դիւցազանց քով։ Երբոր Մեծն Աղեքսանդր տեսաւ անոր գերեզմանը՝ պսակով մեծարեց, ու ըսաւ այսպէս․ “Երանի քեզ Աքիլլէս որ ողջութեանդ ատեն բարեկամ ունեցար զՊատրոկղէս․ իսկ մեռնելէդ ետև զՀոմերոս ունեցար պատմիչ և նկարիչ քաջութեանցդ ”։

Իղձք զարմանահրաշ աշխարհիս քաջաց
Մեծամեծըս տան գործել դիւցազանց․
Զի թէ և անցցէ աշխուժին հասակ,
Քարոզ կարդասցեն պերճ իւրեանց արարք։
Սձիռ քանդակեալ կայ 'ի սիրտ քաջին՝
Թէ անմահ հոգւոյ անմահ գործք պիտին․
Անցանէ աշխարհ և փառքն իւր 'ի սպառ,
Գործք քաջաց մնան 'ի խրատ անսպառ։

Բ ·

ԲԱԲԷԼ կամ ԲԱԲԵԼԱՍ սուրբ հայրապետն էր պատրիարգ Անտիոքայ Փիլիպպոս և ՚Նումերիանոս կռապաշտ կայսերաց ժամանակը ։ Երբոր ՚Նումերիանոս մտաւ կռատունը և զոհելէն ետև ուզեց մտնել Աստուծոյ եկեղեցին ալ, որպէս զի խափանէ սրբազան պաշտօնը · քաջ հովիւն սուրբ Բաբէլ ամենուն սիրտ տալով հաստատեց ժողովուրդն ու ելաւ կայսեր դէմ քաջութեամբ արգիլեց, թող չի տուաւ որ ներս մտնէ ։ ՚Նումերիանոս զարհուրելով սուրբին համարձակութենէն, մեծահամբաւ առաքինութենէն, ու իմաստութենէն և սրբութենէն ետ դարձաւ կատաղութեամբ ։ Միւս օրն բերել տուաւ ատեանն, ու ըսաւ · "Այ թշուառական ինչպէս համարձակեցար զիս արգիլելու · չե՞ս գիտեր որ ինքնակալ եմ ես · իմ ձեռքէս ո՞ւր պիտի փախչիս · հիմա թո՛ղ օգնէ քեզի աստուածդ ։ Պատասխանեց Բաբելաս · "Աստուած զիս հովիւ դրաւ իր ժողովրդին վրայ, որ ապականիչ գայլը վռնտեմ, որ չըլլայ թէ կորսուցնէ հօտը, որուն համար ես պիտի համար տամ ստեղծողիս ,, ։ Այսպիսի զօրաւոր պատճառներով պապանձեցուց զկայսրն · որ երկաթ անցուց սուրբին վիզն, ու նախատինքով քաղքին մէջ պտըտցուց ։ Բայց նա սքանչելի համբերութեամբ յաղթեց ամէն բանի · լսեց բռնաւորն թէ Բաբէլ վարդապետ է աշկերտներու · անոնցմէ բերել տուաւ իրեք եղբարք, Ուրբանոս տասներկու տարուան, Պրիլիդիանոս ինը, և Եպողոնիոս եօթը տարուան · շատ հարցաքննելով զարմացաւ մանկանց ճարտար պատասխաններուն և իրենց հաստատ քրիստոնէութեան վրա ։ Ապա ծեծով և տանջանքով կախեց զսուրբ հայրապետն աշկերտներուն հետ՝ յետոյ վճռեց որ գլխատուին · Բաբելաս աղաչեց որ նախ մանկանց գլուխը կտրեն, ետքը զինքը գլխատեն ՚ի 251 կամ 283 ։ Շատ մեծամեծ հրաշքներ եղան իր սուրբ նշխարքներովը, մինչև Ապողոնի կռատունը այրեցաւ երկնաւոր հրով, և դադրեցան դիւախօս կախարդութիւնները · ինչպէս կը պատմէ Ոսկեբերան ալ ։

ԲԱԲԵԼԱՍ դպիր՝ էր ծերունի վարդապետ շատ մանկանց, որ սքանչելի կրթութեամբ յայտնապէս կը սորվեցնէր սուրբ հաւատքը ամենուն թէ քրիստոնէից, և թէ անհաւատից տղոցն Մաքսիմիանոսի հալածանքին ատեն ։ Երբոր լսեց թագաւորը՝ կանչեց հարցուց թէ ինչո՞ւ մեր կրօնը ձգեր ես ու այլ կրօն կը սորվեցընես ։ Պատասխանեց սուրբը թէ հաւատք քրիստոնէից է ճշմարիտ աստուածպաշտութիւն, և հեթանոսացն է կռապաշտութիւն ։ Բռնաւորն կատղելով հրամայեց որ քարով խորտակեն բերանը և ակռաները · բայց նա քաջութեամբ ոչինչ սեպելով տանջանքները աւելի կը հաստատէր Քրիստոսի սուրբ հաւատքը ։ Մինչև դուրս ձգեցին երանելին, ու գլուխը կտրեցին · ապա բերին աշկերտները ութսունըչորս թուով իբրև սուրբ գառնուկներ մորթեցին, որոնք իրենց սուրբ վարդապետին վրա նահատակեցան ցնծալով ։ Գնացին ծնողքները վերուցին արտասուախառն խնդութբ̃, թաղեցին վարդապետին հետ պատուով 'ի Նիկոմիդիա յամի 300 · և մեծ տօն կատարեցին ։

Առաքելաշնորհ վարդապետք արի,
  Ամբարձան ընդդէմ թշնամեաց խաչի ·
  Հարին զբռնութիւն դիւաց կայսերաց,
  Կանգնեցին նշան յաղթական փառաց ։
Սոքօք ամրացան հիմունք Սիոնի,
  Պերճացան մանկունք ուսմամբ ցանկալի ·
  Որով լոյս կրօնից փայլեցաւ անճառ՝
  Ընդ ծագս աշխարհի քան զարև պայծառ ։

ԲԱԳԱՐԱՏ՝ էր անուանի նախարար Հայոց, ազգաւ Իսրայեցի Սմբատայ ցեղէն, զոր 'Նաբուգոդոնոսոր գերի տարաւ Հրէաստանէն ու բնակեցուց 'ի Հայաստան Հայկակայ Հայոց արքային խնդիրքովը ։ Բագարատ Բ · Վաղարշակ Ա · թագաւորին օրը հաստատեցաւ թագադիր Հայոց արքային, ասպետ և զօրավար որդւոց որդի ։ Որոնք երկար ժամանակ պահեցին իրենց օրէնքն աստուածպաշտութեան, որուն համար շատերն ալ նահատակեցան մեր կռապաշտ թագաւորներէն, ու յետոյ սուրբ Լուսաւորչայ օրը եղան քրիստոնեայ և բարեպաշտ իշխաններ, քաջ և զօրաւոր թագաւորներ ։ Որոնք կանգնեցին մեր Բագրատունեաց թագաւորութիւնը՝ իմաստութբ̃ և սրբութբ̃, ինչպէս էին Աշոտ, Սմբատ, և այլն ։ Տես 'ի կարգին ։ Այս ցեղէն եղաւ ուրիշ Բագարատ իշխան մը՝ ազգական Սմբատայ խոստովանողին, և փեսայ Արծրունեաց, որ Ամիրապետէն հաստատեցաւ նաև Պատրիկ մեծ իշխան Հայոց տիրելով Սիմ լեռանը իշխանական փառքով ։ Բայց յետոյ հոգևոր բաներու խառնուելով ու կաթողիկոսին նեղութիւն տալով կորոյս մեծութիւնը, և զրկուեցաւ ամէն փառքէն ։ Սորա խնդիրքովը Նանայ սարկաւագապետն Ասորի՝ գրեց զմեկնութիւն Յովհաննու աւետարանին ։

ԲԱԳԱՐԱՏ կամ **ԲԱՆԳՐԱՏ** սուրբ հայրապետ՝ էր Անտիոքացի, որ լսելով Քրիստոսի համբաւը գնաց հօրը հետ յԵրուսաղէմ տեսաւ ու հաւատաց Տեառն ։ Յետոյ աշակերտելով սրբոյն Պետրոսի ձեռնադրեցաւ եպիսկոպոս, որ առաքեց զինքը 'ի Տոռոմենայ քաղաքը կղզւոյն Սիկիլիոյ ։ Իւր մեծամեծ հրաշքներով և զարմանալի քարոզութեամբ նախ դարձուց Վոնիփակլիոս քաղաքապետը, և միշտ կործանելով կուռքերը բիւրաւոր ժողովուրդ դարձուց և լուսաւորեց քրիստոնէութեամբ ։ Շինեց փառաւոր եկեղեցիներ մեհեաններուն տեղը . բոլոր զարդարեց տաճարներով և քահանաներով, մինչև անուանեցաւ իսկապէս լուսաւորիչ Սիկիլիոյ ։ Սակայն օր մը Բագարատ երբոր առանձին կ՚աղօթէր, ծածուկ կռապաշտ մը ընկաւ վրան սպաննեց սրով, որուն համար ամէնքը սուգ առին ողբացին . իսկ աստուածասէր իշխանն Վոնիփակլիոս չարաչար տանջանօք կորոյս սպաննողը ։ Իւր սուրբ նշխարքը արծըթէ տապանով հանգուց իւր շինած եկեղեցւոյ մէջ, որ եղաւ նշանաւոր ուխտատեղի, վրան ալ գրեցին ճառեր և երգեր, ու տօնախմբութիւնը հաստատեցին ։

Բագարատ դիւցազն հովիւ հրաշալի
Փրկչին տեսութեան գտաւ արժանի ·
Որով ճոխացեալ հրաշափառապէս
Զազգս և ըզկղզիս սրբեաց լուսատես ։
Սիկիլիա ցայսօր շնորհօք Փրկողին
Ընծայ 'ի պարծանս իւր լուսաւորչին ·
Որոյ սուրբ արեամբն և քարոզութեամբ
Յաւէրժ ծաղկեցաւ գերահրաշ փայլմամբ ։

ԲԱԹՈՒ կամ ՊԱԹՈՒ՝ էր զօրաւոր խան Թաթարաց՝ Թոռն Ճինկիզ խանին, որ թագաւորեց և խաղաղացուց հիւսիսային աշխարհները, այսինքն Ռուսաց, Վրաց և Հայոց, իր Սարդախ քրիստոնեայ որդւոյն ձեռամբն ։ Ասոնց թագաւորական քաղաքն էր Պահճէ սարայ Խրիմի, ուր տիրեցին յաջորդ խաները մինչև Շահին Գէրէյ, որ 'ի 1779 յանձնեց իշխանութիւնը Ռուսաց, և այսպէս վերցաւ Ճինկիզ խանին տէրութիւնը ։

Այս արքունիքն ու քաղաքը մինչև հիմա նոյն շէնքերով և կարգովը կեցած են զարդարուն · ուր ինջաւ՝ Նիկողայոս Ա, Ռուսաց կայսրն ։

ԲԱՀԱՂ կամ ԲԷՂ և կամ ՆԵԲՐՈՎԹ՝ համարեցաւ առջի թագաւոր Բաբելացւոց, որ մեռնելէն ետև պաշտեցին Ասորիք, Փիւնիկեցիք և Ամմոնացիք կոչելով Բահաղ և Մողոք, որուն կը զոհէին անասուն, և իրենց որդիքը ։ Իսրայելացիք ալ անոնցմէ սորվեցան ու կը պաշտէին զոհելով զաւկըները · ուստի Մովսէս և ուրիշ մարգարէները չարաչար կը նախատեն ու կը պատժէն անոնց անմտութիւնը ։ Այս չաստուածոյն սեղանը ներկած էր քուրմերուն արիւնովը, որ 'ի պատիւ կուռքին մարմիննին ճղքելով և ծակծըկելով կը վազցընէին սեղանին վրա ։ Իսկ մեհեանն էր 'ի ձորն Ենովմայ Երուսաղեմայ մօտիկ՝ անուանելով Գեհեան. ուր միշտ կրակը վառած կը պահէին, նաև երբեմն հոն կը ձգէին մեռելներն որ այրէին ։ Յովաս արքայն Յուդայ կործանեց ասոր սեղանը. Դանիէլ մարգարէն ալ կործանեց Բաբելոնի մէջ ասոր կուռքը ։

Ո՛վ սարսափելի մըտաց շամբշելոց
Անշէջ գեհենին ատեան մատնելոց.
Զյաւէտ նողոտկալիս անըմբեր բնութեան
Զխա՞րդ ընդգըրկեն որպէս որբազան ։
Այս է մահաբեր գիւտ դիւապաշտից
Աստ և անդ դիպիլ՝ անբաւ աղէտից.
Փո՛ղ վայելեսցեն զիւրեանց ստեղծուածս՝
Զանմեռ որդն և հուր և զմոլի չաստուածս ։

ԲԱՂԱԱՄ՝ էր Մովսէսի ժամանակակից, և կ'ըսուէր արտաքին մարգարէ կամ գուշակ, որ ելեր կ'երթար Մովաբու արքային քով՝ Իսրայելացիները անիծելու համար. հեծած էշը՝ տեսնելով սուսերաւոր հրեշտակ մը ճամբուն վրա՝ կանգ առաւ ։ Բաղաամ սկսաւ սաստիկ ծեծել էշը. հրեշտակն ալ լեզու տուաւ անբանին՝ որ կշտամբեց անոր չարութիւնը, ինչպէս օրինակ կը բերէ Պետրոս առաքեալ. “Որ կշտամբանս իւրոյ անօրէնութեանն ստացաւ զէշն անխօսուն մարդկեղէն բարբառով բարբառեալ՝ արգել զմարգարէին զանօրէնութիւնն„ ։ Բաղաամ այս հրաշքը բանի տեղ չի դնելուն համար երևցաւ իրեն հրեշտակն ու պատուիրեց որ օրհնէ Իսրայէլացիներն . իսկ նա օրհնելու տեղը մարգարէացաւ վասն Յիսուսի ասելով . " Ծագեսցէ աստղն Յակոբայ ... և հարցէ զիշխանս Մովաբայ ,, : Երբոր այս խօսքիս վրա նեղացաւ Թագաւորը՝ խրատ տուաւ իրեն Բաղաամ, որ Մովաբու աղջիկները զրկէ Իսրայէլացւոց բանակը . որոնք պոռնկելով կռապաշտ եղան, ու պատժուեցան աստուածային բարկութեամբն մէկզմէկ ջարդելով : Յետոյ բարեպաշտ զօրքը ելան Մովաբու վրան, ու չարաչար կոտրեցին, նաև Բաղաամն ալ հոն սպաննեցին :

Բաղաամ՝ ողբայ զանիրաւ իւր վարձ,
Որով կրկնակի կործեաւ չարակարծ .
Որք ապախտ առնեն զլոյս աստուածային,
Քան զանբան թշուառ նանրանան ինքնին :
Այս լիցի հանուրց ահաբեկ հրահանգ,
Թէ ժանտից դատող են նաև անբանք .
Որք առ սէր շահու լինին անիրաւ,
Մատնին 'ի կորուստ սոսկալի վճռաւ :

ԲԱՂԴՈՎԻՆՈՍ Ա . էր Լատին Թագաւոր Երուսաղէմի և եղբայր Գոտոփրետոսին, որ առաւ Երուսաղէմ, ու նստաւ հոն առաջին Թագաւոր : Սորա յաջորդն եղաւ այս Բաղդովինոս յամի 1100 . և 'ի 1104 տիրեց Ագգէ քաղաքին . բայց յետոյ պաշարեցաւ Ռէմլէ քաղաքին մէջ, և վտանգելով հազիւ ազատեցաւ անկէց, ու մեռաւ 'ի 1118 :

ԲԱՂԴՈՎԻՆՈՍ Բ . նստաւ Թագաւոր Երուսաղէմի 'ի 1118, որ քաջութեամբ շատ անգամ Հագարացւոց հետ կռուեցաւ ու ազատեց զԱնտիոք և գնաց օգնելու Եդեսիայի կոմսին ։ Ուր թէպէտ գերի ընկաւ Հագարացւոց ձեռքը , բայց օգնութեամբ քրիստոնէից ազատեցաւ , ու դարձաւ յԵրուսաղէմ . և զօրացեալ հալածեց այլազգիներն ։ Այն ժամանակը Երուսաղէմացիք Վենետիկի նաւերով զարկին թշնամիներուն՝ տիրեցին Տիւրոսի ։ Իսկ Բաղդովինոս տասուերկու տարի թագաւորելէն ետև մեռաւ 'ի 1131 ։ Կալիստոս Բ. սրբազան պապն այս թագաւորին օրը հաստատեց սրբոյն Յովհաննու և Տաճարականաց զինուորական կարգերը ։

ԲԱՂԴՈՎԻՆՈՍ Գ. յաջորդեց յաթոռ թագաւորութեան Երուսաղէմի 'ի 1142 , և շատ զօրացաւ , մանաւանդ երբոր Կոնրադոս կայսրն Գերմանացւոց և Լուդովիկոս արքայն Գաղղիոյ գնացին յԵրուսաղէմ խաչակիր զօրքով , միացան Բաղդովինոսին հետ ու տիրեցին Դամասկոսի ։ Որոնք յետոյ դարձան յԵւրոպա , և Բաղդովինոս նոյն քաջութեամբ յաղթեց Նուրէտտին ամիրային , և տիրեց Ասկաղոնի ։ Բայց աւաղ որ դեղակուր ըրին 'ի 1163 , առոյգ հասակով ։

ԲԱՂԴՈՎԻՆՈՍ Դ. մանուկ ըլլալով նստաւ թագաւոր Երուսաղէմի 'ի 1174 . որուն խնամակալ և հազարապետ դրուեցաւ Ռայիմոնդոս կոմսն Տրապօլսոյ ։ Յետոյ երբոր Սալատին սուլդանն Եգիպտոսի անհամար զօրքով ելաւ Պաղեստին , Բաղդովինոս արիութեամբ դէմն ելաւ , ետ վռնտեց մինչև Նեղոս գետ ։ Բայց թշնամին նորէն ելաւ Երուսաղէմայ վրան երբոր Բաղդովինոս տկարութեան մէջ էր, և նոյն պատերազմերուն ատենը մեռաւ 'ի 1186. իսկ իւր յաջորդները չկարենալով դէմ դնել՝ Սալատին առաւ զԵրուսաղէմ 'ի 1189. ուստի քրիստոնէից տէրութիւնը միայն 89 տարի քշեց Պաղեստինու մէջ:

ԲԱՂԴՈՎԻՆՈՍ Ե. էր կոմս Ֆլանտրացի և երևելի խաչակիր, որ անցեալ միաբանութեամբ արևելք Գաղղիացւոց և Վենետիկցոց հետ, տիրեց Կոստանդինուպօլսոյ 'ի 1204. ընտրեցաւ առաջին կայսր արևելեան Լատինացի, որ քիչ ժամանակէն ետև ելաւ պատերազմով Եդրէնէի վրա: Բայց Բուլղարներուն թագաւորը գնաց քաղաքին օգնելու և չարաչար պատերազմելով մեծ ջարդ եղաւ. Բաղդովինոս ալ գերի ընկաւ ու անողորմ սպանուեցաւ. իսկ Բուլղարներուն քարասիրտ թագաւորը հանել տուաւ կայսեր գլխուն ոսկորն ու անով գինի կը խմէր:

ԲԱՂԴՈՎԻՆՈՍ Զ. էր վերջին կայսր արևելեան Լատինացի. որ նստաւ 'ի Կոստանդինուպօլիս 'ի 1228, ուր յիսունըութը տարուան մէջ հինգ Լատին կայսերք նստան: Բայց նոյն ժամանակը Բաղէոլոգ կայսրն Յունաց շատ բազմութեամբ և բոլոր ուժովը սաստիկ պաշարեց Կոստանդինուպօլիսը. անանկ որ Բաղդովինոս չդիմացաւ, ձգեց փախաւ Եւրոպա յամի 1260, և մեռաւ 'ի 1273:

Բաղդովինոսեանց կտակ իմաստուն
Ի բարիս գործել քաղցըր գերաբուն.
Ո ի քաջազն արքայ տիրող է անձին՝
Ողորմած արդար ըստ ուղիղ բանին:

Վարք առաքինեաց գահ է անկործան՝
Հըզօր ամրապահ աջով տիրական.
Բարեգործութիւնք և անստգիւտ կեանք
Յարաժամ նոցին անքուն թիկնապահք։

ԲԱՆԻԿ կամ ԲԵՆԻԿ՝ էր բանիբուն վարդապետ Հայոց ԺԴ դարուն, որ գրեց զանազան ճառեր և հոգեշարժ աղօթքներ վայելուչ բանիւ։ Ունինք իրեն աղօթագիրքը գրած ԺԵ դարուն. իսկ ինքն հոգևոր քարոզութեամբ և ճգնութեամբ առաքինացեալ՝ վախճանեցաւ Հեթում Ա. թագաւորին օրը։

ԲԱՌՆԱԲԱՍ սուրբ առաքեալն էր Կիպրացի Հրեայ, Ղևեայ ցեղէն, և գործակից Պօղոսի. որուն հետ շատ շրջեցաւ քարոզելով հեթանոսաց։ Սա վաճառեց իւր գեղն ու գինը տուաւ առաքեալներուն. ապա առաւ հետը իր եղբօրորդին Մարկոս, նաւեց 'ի Կիպրոս. ուր Մատթէոսի աւետարանովը կը քարոզէր, ու շատերը կը լուսաւորէր հրաշքներով։ Ուստի նախանձելով Հրեաները հասան վրան ու քաշեցին քաղաքէն դուրս քարկոծեցին, և սուրբ մարմինը կրակը ձգեցին. որ սուրբ Մարկոս և մէկալ աշկերտները ժողվելով պահեցին Աւետարանին հետ մէկ քարանձաւի մէջ, որ 'ի 488 ամին յայտնեցան Զենոն կայսեր օրը՝ որուն թուղթն ալ կայ գրած առ հաւատացեալ Հրեայս ամենայն տեղեկութք Սուրբ գրոց. ինչպէս որ կը հաստատեն հին վարդապետները։

ԲԱՐԱՂԱՄ կամ ԲԱՐՂԱՄ ծերունին՝ էր Անտիոքացի, ճշմարիտ աստուածապաշտ, որ Նումերիանոսի հալածանքին ատենը բռնեցին կռապաշտներն տարին դատաւորին ։ Եւ նա որչափ որ տանջեց և ծեծեց զերանելին , այնչափ զօրացաւ քաջութեամբ և զօրաւոր պատասխանով ։ Յետոյ տարին կռատունն , ու ձեռքին մէջ դրին կրակ և խունկ , որ ակամայ խնկէ կուռքին ․ բայց նա երեսն անդին դարձուց և միտքն առ Աստուած , ու ձեռքն այնչափ անշարժ բռնեց որ բոլոր այրեցաւ , և որպէս անուշահոտ պատարագ Աստուծոյ աւանդեց հոգին ։ Սուրբն Բարսեղ և Ոսկեբերան գեղեցիկ ճառերով գովեցին սուրբ նահատակը ։

Առաքելագործ արք ըզպատուէր Փրկչին
Խաչեալք աշխարհի գործով յարգեցին ․
Անխոնջ քարոզեալ զսուրբ աւետարան
Մարմնով տանջեցան հոգւով զօրացան ։
Զէն անպարտելի զխաչն ունէին ,
Հարին փշրեցին զեղջիւր բանսարկուին ․
Արեամբ և քրտամբ յաղթեցին դիւաց
Բարձին զաղտս հոգւոց կռոց և մեղաց ։

ԲԱՐԴԱԾԱՆ՝ էր Ուռհայեցի բանիբուն պատմագիր ազգաւ Ասորի , լեզուագէտ և յաջող գրուածքով Բ դարու աղանդաւոր հերձուածող , որ գալով ՚ի Հայաստան կը ջանար զՀայոց ազգը կռապաշտութենէ իւր աղանդն դարձընել ։ Ուստի շատ բան գրեց Հայոց հեթանոսական ծեսերուն դէմ ․ յետոյ գնաց յԱնի քաղաք ․ ուր կարդալով մեհենական և թագաւորական հին պատմութիւնները դարձուց ասորերէն , ու յօրինեց լաւ պատմագիրք մը՝ որ ետքը թարգմանեցին յունարէն ։ Այս գրքէն շատ բան հանեց գրեց իր պատմութեանը համար մեր հնախօս Խորենացի վարդապետը ։

ԲԱՐԴԻՇԱՒ՝ էր եպիսկոպոս Պարսից, շատ հոգեսէր, առաքինի, որ Շապուհ Թագաւորին ատեանը ելաւ հալածանքին ատեն քաջութեամբ դաւանեց զՔրիստոս ու հաստատեց ժողովուրդը։ Որչափ որ տանջեցին զինքը ծեծելով և ոսկորները ջարդելով, այնչափ զօրացաւ համբերութեամբ· յետոյ բռնութեամբ դրին ափին մէջ խունկ, որպէս զի կրակը ձգէ պաշտելով· բայց սուրբը երբոր գետինը նետեց անարգելով, կատղեցաւ թագաւորն ու բոլոր մատունքը կոտրտել տուաւ։ Հոն իրեք կտրիճներ տեսնելով եպիսկոպոսին սքանչելի համբերութիւնը՝ դարձան քրիստոնեայ եղան, ու բանտարկութեամբ կատարեցան 'ի Քրիստոս։ Իսկ սուրբ հայրապետին լեզուն կտրտեցին, որ համարձակ խայտառակեց կրակապաշտութիւնն ու թագաւորն երբոր երկնային ձայնը կը քաջալերէր զինքն։ Այս երկնային ձայնը լսելով իրեք հարիւր եօթանասունիրեք անձինք հաւատացին Քրիստոսի, ու մկրտեցան իրենց արիւնովը· յետոյ գլխատեցին քաջ հովիւն Բարդիշաւ· որ եղաւ տօնելի։

Նոյնպէս նահատակեցաւ այն ժամանակը Բարբաշմէն Պարսից եպիսկոպոսապետը որ էր քեռորդի և յաջորդ սրբոյն Շմաւոնի, որ մեծ քաջութեամբ Շապուհ արքային ատեանը շատ քարոզութիւն ըրաւ մոգութեան և կրակապաշտութեան դէմ։ Թագաւորին մեծամեծ խոստմունքները երբոր անարգեց՝ չարաչար տանջեցին, ու կապանքով բանտը ձգեցին քաղցած տասներմէկ ամիս· ապա գլխատեցին տասներվեց աշկերտներովը փառաւոր վկայութեամբ յամի 346։

ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ էր տասներկու առաքեալներէն մէկը, և ըստ բազմաց՝ էր Նաթանայէլ, որ աշակերտեցաւ Քրիստոսի ու քարոզութեամբ շատ տեղ շրջեցաւ 'ի Հայաստան, Պարսկաստան, Խորասան մինչև 'ի Հնդստան։ Այլ իսկապէս եղաւ Հայր Հոգևոր ազգիս Հայոց մեծամեծ գործքերով և հրաշքներով։ Վասպուրական աշխարհքը լուսաւորելով շինեց եկեղեցի և կուսաստան, հոն Հոգւոց վանքը դրաւ Տիրամօրն հրաշալի պատկերքը, տպաւորած կիպարիս փայտի վրա անոր սուրբ ննջման ատենը։ Որով սուրբ առաքեալը շատ հրաշագործութիւններ ըրաւ ու բազմութիւն դարձուց 'ի քրիստոնէութիւն․ նաև տնկեց լեռան վրա սուրբ խաչ մը, որով յետոյ Լուսաւորիչ հրաշքներ կը գործէր․ ապա կանգնեցին զայն Տրդատ թագաւորին գերեզմանին վրա։ Ոսկեբերան կը պատմէ թէ, սուրբ առաքեալը յետոյ անցեալ'ի փոքր Ասիա քարոզեց․ ապա գնաց յԱղբակ գաւառ Հայոց, և մեծամեծ գործքերով լուսաւորեց, մկրտելով զթագուհին Արգուհի՝ քոյրն Սանատրուկ արքային, որ երբ լսեց՝ կատաղութեամբ ղրկեց իրեն հազարապետն Տերենտիոս, որ բռնէ տանջէ սուրբ առաքեալը․ բայց նա հաւատաց Քրիստոսի և մկրտեցաւ։ Ուստի չարաչար տանջանքով սուրբ Բարթուղիմէոսին մորթն քերթեցին, ու խաչը հանեցին, և ծեծելով նահատակեցին յամի Տեառն 50։ Անաստաս կայսրն 'ի 508 փոխադրեց նորա սուրբ նշխարքը 'ի Դարա քաղաք․ անկէց տարին 'ի Սիկիլիա և 'ի Հռոմ'ի 839, և հանգուցին պորփիւրեան քարէ տապանով իւր անուամբը շինուած հոյակապ եկեղեցւոյ մէջ։

Բարթուղիմէոս հայր Հայաստանեայց
Ձայնէ քաղցրութբ որդւոց իւր քըրտանց .
Արդ ես հանի զձեզ խաւարէ 'ի լոյս ,
Կայք հաստատ 'ի նոյն հաւատ սէր և յոյս :
Որ ձեր փրկութեան եղէ մորթեզերծ ,
Կացուցանել զազգդ Հայոց երկնամերձ .
Ապա կացէք միշտ 'ի նոյն ուղղութեան ,
Զի լինիք ժառանգ սուրբ արքայութեան :

ԲԱՐՈՒՔ մարգարէ էր որդի Ներեայ և աշակերտ Երեմիայ մարգարէին . որուն հետ գնաց յԵգիպտոս , և օգնական եղաւ անոր շատ տեղ , նաև չարչարակից և հաւատարիմ պաշտօնեայ Աբիմելէքին հետ միատեղ մինչև 'ի մահն Երեմիայի , ինչպէս որ կը գովէ զանոնք սուրբ գիրքը : Բարուք յետոյ գնաց Բաբելոն ու գրեց իր մարգարէութիւնը կարգաւորեալ և գեղեցիկ ոճով նման Երեմիային , ուր կը գուշակէ Մեսիային գալուստը և Հրէից թշուառութիւնը :

ԲԱՐՍԵՂ ՄԵԾՆ էր գերահամբաւ սուրբ հայրապետ Կեսարացի և ճարտարախօս վարդապետ եկեղեցւոյ ծնեալ 'ի 329 , բարեպաշտ Բարսղէն , որ ունէր տասը որդի , երեքն եղան եպիսկոպոս և սուրբ : Այս սուրբ Բարսեղ գերազանց ըլլալով ճոխաբանութեամբ Աթէնքին մէջ կապուեցաւ սիրով Գրիգոր Աստուածաբանին հետ . յետոյ դարձաւ իր հայրենիքը : Սակայն աշխարհային ծանրութենէ ձանձրանալով առանձնացաւ Պոնտոսի անապատը , ուր գրեց կանոններ կրօնաւորական վարուց վրա , որ մինչև հիմա վանականները անոնցմով կը կրթուին : Վասն զի ինքն ալ Եգիպտոսի ճգնաւորներուն քով կրթուած էր , և աստուածային իմաստութէ դարձուցեր էր իր վարժապետը Եւուղոս, և ուրիշ հեթանոս Հելլենացիներն 'ի քրիստոնէութ̃ի: Ուստի 'ի 369 ամին Կեսարու Հայրապետին մահուանէն ետև՝ վասն զարմանալի իմաստութ̃ե և առաքինութ̃են՝ սուրբ Բարսեղ ընտրեցաւ եպիսկոպոսապետ այն աթոռին, ըլլալով հովիւ քաջ, ծաղկեալ գրով և ճարտարախօսութեամբ, գլխահար հերձուածոց Արիանոսաց, Հոգեմարտից և այլոց. նաև հաստատութիւն հաւատոյ ուղղափառութեան, մինչ զի ամէնքը կը դողային երանելոյն անունէն և հրաշքներէն. Վաղէս կայսրն արիոսեան սարսելով կ'երթար անոր պատարագը լսելու. նոյնպէս հեթանոսներն ալ փափաքելով կը կարդային անոր իմաստալից գեղեցիկ ճառերը և թղթերը: Սուրբն Բարսեղ շարադրեց հոգելից ճառեր, մեկնութիւններ և աղօթքներ, զարդարելով եկեղեցին և վանքերը զարմանալի բարեկարգութեամբ և կրթութեամբ. մինչև լի արդեամբք և հրաշագործութեամբ փոխեցաւ առ Աստուած 'ի 379: Եւոդիոս իւր յաջորդն անմիջապէս գրեց վարքը, որ հայերէն ալ թարգմանեցին. և կը սկսի. "Սիրելիք և բարեկամք": Սուրբն Բարսեղ յիսուն տարւան վախճանեցաւ, որ թէպէտ նիհար էր մարմնով, այլ երևելի և մեծանձն էր, փառահեղ, խոհական, և հանդարտախօս, ճգնազգեաց և սիրելի ամենայն ազգաց, որոնք կը տօնեն մինչև ցայժմ:

Աստուածարեալ պերճ վերնոց ցանկալի
Բասիլիոս մեծն հրեշտակ 'ի մարմնի.
Ճոխ հոգեպայծառ շնորհօք գերազանց,
Ջահ եկեղեցւոյ, քարոզ լուսապանծ:

Հովիւ գերահրաշ հօտին Քրիստոսի
Ճոխացոյց զփարախն ըստ չքնաղ կարգի.
Ցըրիչ թշնամեաց հերձուածող գնդին,
Յաղթող վեհացաւ գլխահար դիւին:

ԲԱՐՍԵՂ Ճոն էր վարդապետ Հայոց 'ի է դարուն, նաև գիտնական առաջնորդ Պալրավանից՝ Շիրակայ երկրին մէջ. որուն յանձնեց Ներսէս Շինող կաթուղիկոսն՝ որ ընտրելով հաւաքէ պատուական շարականները անպիտաններէն, որ այն ժամանակը շատերը կը շինէին: Նա այս գործս լաւ կատարելով, ընտրած շարականները անուանեցան Ճոնընտիրք:

Բարսեղ անուամբ կայ ուրիշ վանական վարդապետ մը, որ գրեր է մեկնութիւն Մարկոսի աւետարանին. բայց ամբողջ գործքը կամ բնագիրը դեռ չի հասաւ մեզի:

ԲԱՐՍԵՂ կաթուղիկոս Հայոց էր թոռն Գրիգորի Մագիստրոսին, որ 'ի 1074 հաստատուեցաւ տեղապահ Գրիգոր Վկայասէրին, որ իրեն քեռին էր: Վկայասէր սուրբ կաթուղիկոսը երբոր ծանր հիւանդացաւ 'ի 1105, կանչեց քովը զայս Բարսեղն ու յանձնեց իրեն քրոջը թոռները զԳրիգոր և զՆերսէս Շնորհալի, մէկը տասնիրեք տարուան, մէկալը տասը. նաև պատուիրեց որ Բարսեղէն ետև Գրիգորը ձեռնադրեն կաթուղիկոս: Նա ալ յանձնեց զանոնք Ստեփաննոսի գիտնական վարդապետին, որուն քով աղէկ վարժեցան Կարմիր վանքին մէջ: Բարսեղ եղաւ կաթուղիկոս, և զԳրիգորը տասնըհինգ տարուան ձեռնադրեց քահանայ, և ըրաւ իրեն որդեգիր: Քանի մը տարիէն ետև Բարսեղ իւր տիրացուներովը տանիքին վրա երեկոյեան ժամն ըսելու ատեն տանիքը կործանեցաւ , ու կաթուղիկոսին մէջքը կոտրեցաւ . տարին զինքը վանք , ուր յանձնեց Գրիգորին ձեռքը կաթուղիկոսութեան քօղն ու գաւազանը . նաև ամենուն պատուիրեց՝ որ դնեն զնա կաթուղիկոս , և ինքն մեռաւ 'ի 1113 , որուն առանձին կաթուղիկոսութիւնն տևեց ութը տարի , և յաջորդն եղաւ նոյն Գրիգոր Պահլաւունի քսան տարւան ։

ԲԱՐՍՈՒՄԱ կամ ՊԱՐՍԱՄ էր ճգնող հայրապետ Ուռհայի 'ի սկիզբն Ե դարու , որ քաջութբ՟ կը հովուէր քրիստոնեայ ժողովուրդն՝ որ մնացեր էին Աբգար Թագաւորին ժամանակէն ։ Ուր կռապաշտութիւնը զօրանալով տեսաւ որ ամէնքը կը վազէին կուռքին տօնին օրը զոհ ընելու . Շաբէլ ծեր քուրմն ալ պայծառ հագուած գլուխը ոսկեզարդ խոյր , կը ստիպէր ժողովուրդն՝ որ ուրախութբ՟ կատարեն պիղծ տօնը ։ Ան ատենը սուրբ եպիսկոպոսին սիրտը վառեցաւ աստուածային նախանձով , գնաց քուրմին ասաց . Աստուած ամենաթագաւորը քեզմէ պիտի պահանջէ այս մոլորեալ ժողովուրդին հոգիները . ինչպէս այս խուլ անշունչ կռոց երկրպագութիւն ընել կուտաս , և ինչպէս քեզ ալ չես մեղքընար , որ ծերացեր ես ։ Ահա այսպիսի սքանչելի վարդապետութեամբ այնպէս շարժեց քուրմին սիրտն , ու քաջ հաւանեցուց շնորհօքն Աստուծոյ , որ լուսաւորեալ հաւատաց Քրիստոսի , և գիշերանց առաւ զԲուէա իր քոյրն , ու գնաց առ եպիսկոպոսը՝ մկրտեցան , և հագաւ ճերմակ պատմուճան նշանակ լուսաւորութեան՝ անուանելով Փութայել ։ Միւս օրը երբ տեսան զգեստն ու լսեցին, որ կըսէր· Ինչո՞ւ կը զարմանաք, գիտնաք որ ես մկրտեցայ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ· և այս սուրբ մկրտութեամբ առի թողութիւն մեղացս, որով պատճառ եղած էի ձեր կորստեանը· բայց անկէց ետև պիտի պատճառ ըլլամ ձեր փրկութեանը· արդ հաւատացէք 'ի ճշմարիտն Աստուած։ Այսպիսի սքանչելի քարոզութ՟ը շատ ժողովուրդ լուսաւորելով կ'երթային քովը ու կը մկրտուէին։ Ուսիաս կռապաշտ դատաւորը լսելով կանչեց քուրմը, կրկին և կրկին հարցաքննութեամբ տոկալի տանջեց, ու ճար չեղաւ դարձընելու· այլ միայն բազկատարած յԱստուծոյ թողութիւն կը խնդրէր։ Շատ հրաշքներէն ետև ուզեցին՝ որ երկուս ճղքեն, խիզարը չի կտրեց, ապա գլխատեցին։ Իսկ քոյրը առաւ գլուխը գիրկն ու կ'աղաչէր՝ որ իրեն հոգին ալ առնէ տանի Քրիստոսի ընծայէ։ Երբոր լսեց դատաւորը՝ զան ալ գլխատեց, որ քրիստոնեաները պատուով թաղեցին։ Այն ժամանակը կռապաշտները մատնեցին դատաւորին զԲարսումա եպիսկոպոսը· և երբոր հանեցին ատեանը, համարձակ խոստովան եղաւ ու քաջութեամբ կը փափաքէր մեռնելու վասն Քրիստոսի։ Դատաւորը նախ աղաչանքով և սաստկութեամբ շատ ջանացաւ դարձընելու քաջ հովիւը, երբոր անհնարին եղաւ, սկսաւ չարաչար տանջելու· ապա կախել տուաւ սուրբն, ու կը մտածէր զարմանալով, թէ ինչպէս յաղթէ անոր քաջութեանը, ահա հասաւ Տրայիանոսի կայսերական հրովարտակը, որ կ'արգիլէր ա՛լ չտանջեն քրիստոնեաները· Թո՛ղ ազատին հալածանքէն։ Այս հրամանով մէկէն 'ի մէկ ազատեցին զսուրբն Բարսումա, և հաւատացեալք առին մեծ ուրախութեամբ և օրհնութեամբ տարին եկեղեցին ու գոհացան Աստուծոյ ։ Իսկ ինքն անկեց եւս առաւել համարձակ քարոզելով աստուածպաշտութեան հաւատքը շատ ժողովուրդ վաստըկեցաւ . և այսպիսի սուրբ վարքով և առաքինութեամբ ծերացեալ յոյժ փոխեցաւ առ Քրիստոս , զոր մեծ պատուով և տօնախմբութե̃բ թաղեցին եկեղեցնայ մէջ ։

Նորջանիկն 'ի հարս արին Բարսումա
Օ արթուն կայն առէ վայելուչ նոցա .
Մինչ անխայեալ անցաւոր բարեաց՝
Միայն ժառանգել զբարութիւնս անանց ։
Այս էր անմոլար կանոն փրկչական ,
Զոր արթուն հովիւք քաջ հանդիսացան .
Փրկեցին զանձինս և ըզհօտ իւրեանց ,
Հասին անվախճան կենաց գերապանծ ։

ԲԱՔՈՍ կամ ԴԻՈՆԻՍԻՈՍ , ըստ առասպելաց , էր որդի Դիոսի և գլխաւոր չաստուած մը հեթանոսաց , որ անցեալ 'ի Հնդստան և Եգիպտոս՝ սորվեցուց արուեստ երկրագործութեան և այգեպանութեան , նաև վաճառականութեան ։ Այս պատճառաւ կոչուեցաւ աստուած գինւոյ . և վասն մեծամեծ յաղթութե̆ցն թշնամեաց դէմ՝ համարեցաւ առիւծանման զօրաւոր դիւցազն ։ Նորա պատկերքը դիցաբանք կը ձևացընէին թարմ պատանեակ փափկամարմին՝ նստած տակառի վրա , ձեռքը բաժակ յաղթական կառքով , և ուղեկիցն էր այծամորդն կորաքամակ , նաև առասպելական կուսանք . թող ուրիշ կերպ կերպ խայտառակ քաշուածքներն ու նշանները , որ մինչև հիմա կը գտնուին ։ Աստի ասոր տօնախմբութեան օրերը կռապաշտներն ամենայն խայտառակ զեղխութիւն կը կատարէին՝ զինեմոլութեամբ և ցնծութեամբ խնդալով ։ Մինչ զի բոլոր ուրախական տօները կ՚անուանէին Բաքոսեան . նաև քրիստոնեայք մինչև հիմա արևմուտք բարեկենդանի օրերը կը կոչեն Բաքոսականք ։

Ո՛հ դիւամոլ մոլաց դառն աղէտալի ,
Կուրացեալ ախտիւք յո՞ր խաւար բերի .
Իբ՞ր ապախտ առնէ զկարգ բընականին ,
Լկտի յամօթանս դըժոխականին ։
Ընտրէ զպիղծ Բաքոս պաշտպան իւր չա̃ծ ,
Յաղագս պաշտել զախտս անկրօն անա̃ծ .
Թէ աստուածն իցէ շամբշեալ զեղխութ̃ք ,
Զինչ ապա պաշտող նորին կուրութեամբ ։

ԲԵԴԱ՝ էր մեծահամբաւ յարգելի երէց Սկովտացի վանական իմաստուն , առաքինի և լեզուագէտ ։ Որ մանկութենէն ՚ի վեր ուսման և առաքինութե̃ հետևելով եղաւ բանիբուն , առաքինի և սրբասէր , մինչև ձեռնադրեցաւ աբեղայ երեսուն տարւան ։ Հմուտ ըլլալով սուրբ գրոց և վարդապետութեան սրբոց յօրինեց գեղեցիկ ոճով լատիներէն Անգղիոյ եկեղեցական պատմութիւնը մինչև իր օրը ։ Նաև գրեց հատընտիր հաւաքումն բանից հին սուրբ վարդապետաց եկեղեցւոյ կարգաւոր և յստակ ։ Ունի և վկայաբանութիւն սրբոց՝ դիւցազնական տաղաչափութեամբ գրած . ամէն գրուածներուն մէջ կը փայլի անկեղծութիւն , երկիւղածութիւն և աստուածպաշտութիւն ։ Յամին 735 գտան զերանելին իւր խցին մէջ գետնատարած փռուած , ուր և այսպէս բարի անուամբ վաթսուներեք տարւան փոխեցաւ յաշխարհէս . իսկ գրքերը տպուեցան 'ի 1688 , ութը հատոր միածալ :

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ՝ օրհնեալ անուամբ Աբբայ՝ էր Հռոմայի գաւառէն որդի ազնուական ծնողաց . ծնաւ 'ի 480 ամի , և մնաւ ժուժկալութեամբ և իմաստութեամբ 'ի սուրբ վարս : Որ տասնըվեց տարուան թողուց զաշխարհ և առանձնացաւ յանապատ քարանձաւի մէջ , ուր սքանչելի ճգնութբ̃ կը քաղաքավարէր սուրբ Հարց հետ իրեք տարի : Ան ատեն երբոր սըրբութեան համբաւը տարածեցաւ ամէն տեղ , աբեղաներն գնացին մեծ աղաչանքով զինքը մեծաւոր ընտրեցին . բայց չդիմանալով սուրբին սաստիկ յանդիմանութեանը՝ թոյն տուին . բայց նա խաչակնքածին պէս՝ ամանը կոտրեցաւ ու մահադեղը թափեցաւ : Երբոր դարձաւ իր ճգնարանը , շատ մարդիկ գնացին հետն ու աշակերտեցան . մինչ զի քիչ ժամանակի մէջ շատ վանքեր շինեց , ու հաստատեց յԱրևմուտք զկարգ Բենեդիկտեան կրօնաւորաց ամենայն բարեկարգութեամբ և լուսաւոր կանոններով , որոնք հայերէն ալ թարգմանած ունինք : Յետոյ անցաւ 'ի Կասինոն , կործանեց Ապողոնի կուռքն ու այրեց անոր անտառն և կանգնեց մատուռն , նաև բնակիչները կրթեց աստուածպաշտութեամբ և շատերը լուսաւորեց : Ունելով մարգարէական հոգի ըրաւ գուշակութիւններ և շատ հրաշքներ , մինչև յարութիւն ալ տուաւ մեռելի : Իսկ իր մահն առաջուց պատմելով պատրաստեց իւր գերեզմանն ու վեց օր առաջ գնաց յեկեղեցին հաղորդուեցաւ , և ապա փոխեցաւ առ Աստուած յամի 543 , 'ի տիս վաթսունուիրեք ամաց : Այս սուրբին կրօնէն շատ երևելի իմաստուն պապեր, սուրբ եպիսկոպոսներ ու վարդապետներ ելան, որ ծաղկեցուցին և լուսաւորեցին զԵւրոպա :

Գերահրաշ ճգնող հայր աստուածընտիր՝
Պատճառ բիւր բարեաց րաբուն հոգեկիր,
Անվեհեր դիմեալ 'ի հանդէս ճգանց,
Գտաւ ժառանգորդ անպատում փառաց :
Երկնաձիր շնորհօք հորդեաց ելս երկնից,
Դիւրաքայլ շաւիղ իւր համակրօնից ․
Նախընթաց եղեալ անմերձենալեաց
Հասոյց զաշակերտս անթառամ պսակաց :

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ա․ էր հռոմայեցի, ընտրեցաւ քահանայապետ յաթոռ սրբոյն Պետրոսի 'ի 574, որ շատ քաջութեամբ և իմաստութեամբ կառավարեց զեկեղեցին Քրիստոսի, և հայրական մեծ խնամով հոգաց աղքատները՝ Լոմպարտացւոց խռովութեան ժամանակը : Նաև գեղեցիկ կանոններով անարատ պահեց ուղղափառ հաւատքը հերձուածողներէն ․ և այսպէս չորս տարի անսխալ կատարելէն ետև իւր պաշտօնը փոխեցաւ առ Տէր առաքինութեամբ 'ի 578 :

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Բ․ սուրբ քահանայապետն Հռոմայեցի նստաւ յաթոռ սրբոյն Պետրոսի 'ի 684 ․ շատ գեղեցիկ զարդարեց եկեղեցին և եկեղեցականները : Թէպէտև կայսրն և մեծամեծները այնչափ կը պատուէին զսուրբ հայրապետն, ու կատարեալ հնազանդութիւն կ'ընէին, բայց նա խոնարհութեամբ փափաքելով երկնային փառացն՝ կը փախչէր անոնց պատուէն , և փոխեցաւ առ Աստուած սուրբ վարուք և բարի անուամբ 'ի 685 ։

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Գ· Հռոմայեցի , ընտրեցաւ Հայրապետ Հռոմայ 'ի 855 , բայց վասն խոնարհութեան մեծ դժուարութեամբ յանձն առաւ այն ծայրագոյն պաշտօնը ։ Միքայէլ կայսր ընծաներով պատուեց զՍրբազանը , որ մեծ քաղցրութեամբ և առաքինութեամբ կը խնամէր հայրաբար զամէնքը , մինչև վախճանեցաւ 'ի 858 ։

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Դ· Հռոմայեցի , ձեռնադրեցաւ քահանայապետ Հռոմայ 'ի 900 , և նոյն օրն կոնդակ հանեց վասն բարեկարգութեան սուրբ եկեղեցւոյ · և անունը պայծառացուց աղքատսիրութեամբ և հայրախնամ գթութեամբ ։ Սակայն երևելի գործքերու ձեռք չի զարկած փոխեցաւ առ Քրիստոս 'ի 903 ։

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ե· յաջորդեց սրբոյն Պետրոսի 'ի 964 , ուր Օթոն կայսրն Գերմանացւոց թշնամութեամբ մտաւ 'ի Հռոմ և զՍրբազանն հանեց աթոռէն խրկեց 'ի Գերմանիա , և տեղը դրաւ Լևոն դերապապն ։ Իսկ զԲենեդիկտոս յանձնեց Համբուրգայ եպիսկոպոսին , որուն քով մնաց առաքինութեամբ մինչև ցմահն 'ի 965 · և մարմինն փոխադրեցին 'ի Հռոմ ։

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Զ· Հռոմայեցի , ձեռնադրեցաւ պապ յաթոռ Հռոմայ 'ի 973 · բայց թշնամիները հալածելով զինքն , չի կրցաւ երևելի գործ մը գործելու , մինչև բանտը դրին ու խեղդեցին 'ի 974 ։

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Է. եպիսկոպոս Հռոմայեցի, նստաւ պապ 'ի 975, և իմաստուն կառավարութեամբ խաղաղացուց եկեղեցւոյն խռովութիւնը ինը տարի, ուր ժողովքներ գումարելով ծաղկեցուց աթոռը հանդերձ գեղեցիկ բարեկարգութեամբ, մինչև վախճանեցաւ 'ի 984։

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ը. Թուսքանացի, յաջորդեց յաթոռ սրբոյն Պետրոսի 'ի 1012։ Հենրիկոս Բ. կայսրն գնաց 'ի Հռոմ՝ և զօրացուց քահանայապետին իշխանութիւն. իսկ Սրբազանն մեծ հանդէսով թագ դրաւ անոր՝ կայսր օծելով։ Յետոյ զօրք ժողվեց ու քաջութեամբ բռնաւորները նուաճեց և խոհեմութեամբ խաղաղացուց եկեղեցականները մինչև փոխեցաւ քաջանուն հայրապետն յամի 1023։

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Թ. էր եղբօրորդի Բենեդիկտոսի Ը. և նստաւ քահանայապետ 'ի 1033. բայց Հռոմայեցիք գոհ չըլլալով վրան ձգեցին աթոռէն։ Նա նորէն նստաւ և սկսաւ վարել զիշխանութիւնն. և յետոյ վասն խաղաղութեան եկեղեցւոյ հրաժարեցաւ իշխանութենէն։ Այս դարձեալ հաստատելով նստաւ իւր քահանայապետութեան աթոռը, մինչև վախճանեցաւ յամին 1048.

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ժ. էր եպիսկոպոս, և ընտրեցին քահանայապետ Հռոմայ 'ի 1058. քաղաքական խռովութեան ժամանակն ըլլալով քիչ ատենէն ետև հալածեցին աթոռէն։ Բայց նա վասն խաղաղութեան սուրբ եկեղեցւոյ ամենևին ետևէն չեղաւ իշխանութեանը, և քիչ ժամանակէն ետքը վախճանեցաւ առաքինի համբերութեամբ 'ի 1059։

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԱ․ էր աղքատի որդի Վենետիկի կողմերէն, որ եղաւ նախ Դոմինիկեան աբեղայ առաքինի և իմաստուն, նաև առաջնորդ կարգին, և յետոյ կարդինալ։ Նա յաջորդեց յաթոռ առաքելապետին Պետրոսի 'ի 1303․ երբոր մայրը փառաւոր հագուստով գնաց իրեն, չուզեց զինքը ճանչնալու․ յետոյ երբ աղքատ զգեստովը գնաց, պապը մեծ խոնարհութեամբ պատուեց զմայրը։ Շատ երևելի գործքերով և բարեկարգութեամբ պայծառացուց զեկեղեցին Քրիստոսի․ նա և մեծ իմաստութեամբ միաբանեց թագաւորներն ու իշխանները հաստատելով խաչակիր զօրքն Երուսաղէմ ազատելու համար։ Եւ որովհետև անաչառ կը յանդիմանէր ուրիշներուն պակասութիւնը դեղ մահու խմցուցին երանելւոյն, որ փոխեցաւ առ Տէր վաթսունըչորս տարւան 'ի 1304, զոր Աստուած փառաւորեց երևելի սքանչելագործութ̅բ, և պատուեցաւ երանելի անուամբ․ նաև ունի պիտուական գրուածներ։

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԲ․ Գաղղիացի՝ էր որդի հացագործի Կիստերսական ուխտէ, և պայծառ առաքինի վարքով և գիտութեամբ։ Նախ հաստատեցաւ առաջնորդ իրենց կարգին, ապա եպիսկոպոս և կարդինալ․ յետոյ 'ի 1334 ընտրեցաւ ծայրագոյն հովիւ ընդհանուր եկեղեցւոյ։ Սկսաւ շատ բարեկարգութեամբ փառաւորել զուղղափառ կրօնն, լաւ նորոգեց վանական կանոններն ու ուխտերը։ Ի 1336 սահմանեց կոնդակաւ թէ Հոգիք արդարոց մեռնելէն ետև մէկէն կը ժառանգեն զարքայութիւնն երկնից՝ դէմ յանդիման տեսնելով զԱստուած։ Եւ այսպէս առաքինի վարքով կատարելով իւր պաշտօնը փոխեցաւ առ Աստուած 'ի 1342 յԱւինիոն քաղաք Գաղղիոյ, իննուսուն տարուան ։

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԳ. էր գիտնական վարդապետ Դոմինիկեան 'ի Վենետիկ, որ վասն մեծ առաքինութեան բարձրացաւ 'ի պատիւ արքեպիսկոպոսութեան և կարդինալութեան. միշտ ջատագով ճշմարտութեան, ժուժկալ և առաքինի ։ Սա 'ի 1724 ընտրեցաւ քահանայապետ Հռոմայ եօթանասունըհինգ տարուան, որ վասն հաստատութեան ուղղափառ հաւատոյ հանեց զօրաւոր կոնդակներ և դրաւ կանոններ բարեկարգութեան համար ։ Ժողով գումարեց 'ի Լատերան, և պատուիրեց ամէն եպիսկոպոսաց՝ որ ուսումնարան ունենան կղերիկոսները կրթելու համար. մեծ պատիւ կուտար գիտուններուն և առաքինի գրագէտներուն ։ Հաստատեց դպրոցներ, հիւանդանոցներ և աղքատանոցներ գեղեցիկ կարգով. նաև ամէն գործքին մէջ կերևնար աստուածսիրութիւնը և կրօնաւորական առաքինութիւնը, որով տարածեցաւ սրբութեան համբաւը ։ Ուստի անարատ քաղաքավարութեամբ փառաւորեց իւր ծայրագոյն պաշտօնը իբր վեց տարի, և բազում արդեամբք փոխեցաւ առ Քրիստոս ութսունըմէկ տարուան 'ի 1730. որ մինչև վերջը գրուածքով թողուց պիտուական գրեանք ։

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԴ. էր Բոնոնիացի գերահռչակ կարդինալ Լամբերտինոս ազնուազարմ ցեղէ, և մեծիմաստ գրող վարուց քահանայապետաց Հռոմայ ։ Նախ եղաւ ատենադպիր սուրբ ժողովին, եպիսկոպոս Անքոնայի, կարդինալ և արքեպիսկոպոս Բոնոնիայի · ապա ընտրեցաւ արժանաժառանգ յաջորդ գահին սուրբ Պետրոսի 'ի 1740, որ էր մեծանձն և զուարթամիտ, պաշտպան իմաստնոց, բարեպաշտ, ու սիրելի ամենեցուն : Շատ մեծանուն հանդիսացաւ բարեկարգութբ̃ և մեծագործութեամբ, նորոգելով Լատերանու տաճարն ու շինելով շատ սրբազան տեղեր, հիւանդանոցներ, և դպրոցներ, այլովքն հանդերձ : Բայց 'ի պիտուական կանոնադրութեանց և իմաստալից կոնդակաց շարադրեց նաև աստուածիմաստ գրեանք և հոգևոր ճառեր ամենայն վայելչութեամբ : Սսայ կաթուղիկոսին Հայոց ղրկեց զՊալլիում իշխանութեան · գրեց և նամակ օրհնութեան առ երանաշնորհ մեծն Մխիթար Աբբահայր մեր մեծաւ սիրով 'ի 22 սեպ · 1742 : Այս գերիմաստ սրբազան հայրապետն պէսպէս փառաւոր գործքերէն վերջը առանձնացաւ միայն հոգևոր պատրաստութիւնը տեսնելով բարեպաշտ և աստուածասէր եռանդեամբք, մինչև փոխեցաւ առ Աստուած ութսունուիրեք տարւան յամի 1758 · և թողուց անմահ յիշատակ թէ առաքինազարդ սրբակաց վարքը, և թէ բարեգործական շինութիւններն ու գրուածները :

Այսպէս քաջապերճ հօտապետք արթուն
Անյաղթ զօրացան շնորհօք գերագոյն,
Ախոյանք հզօրք, պարծանք հաւատոյ,
Զաղխիչ թշնամեաց սուրբ եկեղեցւոյ :
Բանական հօտին հովիւք հոգեսէր
Քաջ հանդիսացեալք ոչխարացն 'ի սէր ·
Կոխեցին զատան ջոկս անհաւատից,
Ամբարձան յանճառ փառս լուսաճեմից :

ԲԵՆԻԱՄԻՆ էր սարկաւագ լցեալ հոգւով սրբով, քաջ և զօրաւոր բանիւ, որ համարձակ զճշմարտութիւնն քարոզելոյն համար բանտը փակեցին զինքը երկու տարի կրակապաշտ Պարսիկները։ Յետոյ Թէոդոս կայսեր դեսպանները միջնորդ եղան ազատելու համար զսուրբը, Յազկերտ թագաւորն ուզեց որ Բենիամին ձեռագիր տայ որ ալ չդարձընէ Պարսիկները. իսկ նա ամենևին յանձն չառաւ։ Թէպէտ յետոյ դեսպաններուն ձեռքով ազատեցաւ բանտէն, սակայն երբ քարոզելով շատ անհաւատներ դարձուց մկրտեց, նորէն բռնեցին զերանելին չարաչար տանջեցին, ու ցիցը զարկին. իսկ նա աղօթելով աւանդեց հոգին քաջութեամբ 'ի 418։

ԲԵՆԻԿ կամ ԲԵՆԻՏԻՈՍ Փիլիպպոս՝ էր Փլորենտացի մանուկ սքանչելի, որ հինգ ամսուան սկսաւ խօսիլ, և սնաւ ապա ուսմամբ և աստուածպաշտութեամբ Փարիզի մէջ, մինչև եղաւ բարի օրինակ ընկերներուն։ Յետոյ դարձաւ իր հայրենիքն ու յայտնութեամբ մտաւ Աստուածածնին ծառայից կարգը, և մեծամեծ ճգնութեամբ և առաքինութեամբ շատ տեղեր շրջեցաւ քարոզութեամբ, ու սահմանեց զեղբայրութիւնը եօթն ցաւոց Աստուածամօրն։ Անգամ մը հանեց վերարկուն տուաւ մերկ և բորոտ աղքատի մը, մէկէն բժշկեցաւ բորոտը։ Այնչափ ծաղկեցաւ սրբութեամբ և առաքինի գործքերով, մինչև կասկած առաւ թէ զինքը կ'ուզեն ընտրել քահանայապետ Հռոմայ. ուստի անյայտութեամբ պահուեցաւ, մինչև լսեց թէ Գրիգոր Ժ. նստաւ պապ. յետոյ երևան ելաւ։ Աս ահա այսպիսի առաքինութեամբ և սրբութեամբ վախճանեցաւ փաթթուելով խաչելութեան Փրկչին, որ թաղեցին փառօք 'ի 1285, և շատ հրաշքներ եղան գերեզմանէն 'ի վերայ ախտաժետաց, կաղաց, կուրաց, և այլոց:

ԲԵՌՆԱՐԴԻՆՈՍ Սիենացի ծնեալ 'ի 1380. եղաւ ուսումնասէր և առաքինի, շնորհազարդ և պարկեշտ, նաև խիստ ջերմեռանդն սուրբ Աստուածածնայ. տասնըեօթը տարուան էր՝ ամէն ուսումն կատարեց. երբոր ելաւ քարոզ մը տուաւ, բոլոր ժողովուրդն զմայլեցան: Ի 1400 մահտարաժամին ատենը չորս ամիս ծառայեց հիւանդաց, և ապա մտաւ Ֆրանչիսկեան Մինորից կարգը, խիստ գերազանց եղաւ առաքինութեամբ և ճգնութեամբ: Երբոր քահանայացաւ սկսաւ շրջիլ քարոզութեամբ մինչև Երուսաղէմ, և շատ անառակներ արդարացուց ապաշխարութեամբ. յետոյ եղաւ ընդհանրական վերակացու իրենց ամէն վանքերուն: Հրաժարեցաւ սուրբը իրեք եպիսկոպոսութենէ, այսինքն Սիենայի, Ֆերրարայի, և Ուռպինայ, անոր համար ոտքին տակը իրեք թագ կը նկարեն: Շատ սքանչելագործութիւններէն և բարեգործութիւններէն ետև լի արդեամբք փոխեցաւ առ Տէր վաթսուներեք տարուան 'ի 1443, և դասեցաւ ընդ սուրբս:

ԲԵՌՆԱՐԴՈՍ սուրբ առաջնորդ վանական էր Ջինէվրացի ազնուազարմ, եղաւ աստիճանաւոր քարոզիչ, որ կը քարոզէր՝ շրջելով Ալբեան լեռներուն մէջ, և կը վերցընէր հեթանոսներէն մնացած մոլորական աղանդները: Երբոր տեսաւ ուխտաւորներուն անհնարին տառապանքը՝ որ անկեց կ'անցնէին կ'երթային 'ի Հռոմ, խիստ մեղքընալով երկու վանատուն շինեց այն լեռներուն վրայ, որ Դիոսի նուիրած էին, և հիմա իր անունովը կը կոչուին. և ժողվեց հոն այն կողմի Օգոստինեան կրօնաւորներն ու եղաւ անոնց առաջնորդ. յետոյ գնաց Հռոմ հաստատել տալու այս ուխտը՝ որ շարունակեցաւ մինչև մեր օրը։ Միաբաններն ալ իւր կանոնները պահելով անուանի եղան հիւրասիրութ՟. վասն զի ով որ իրենց վանքն երթայ՝ կ՚ընդունին, և իրեք օր ձրի կը պահեն մեծ մարդասիրութեամբ։ Իսկ ինքն նոյն առաքինի վարքով և սրբութեամբ փոխեցաւ առ Տէր ութսունըհինգ ամաց 'ի 1008, որուն տապանէն շատ հրաշքներ ըլլալով՝ դասեցաւ սրբոց կարգը։

Տես զառաքինեաց գործս հիանալի
  Դիւրընթաց առնէ զանկոխ ամայի.
  Բանայ զճանապարհ մինչ 'ի ծագս երկնից,
  Հանէ զերկրածինս 'ի կարգս անմահից։
Պանծայ Բեռնարդոս ընդ հիւրասիրին
  Հօրըն հաւատոյ մեծ Նահապետին.
  Ի գլուխս լերանց և սառամանեաց
  Օթեվան կազմեալ եկաց պանդխտաց։

ԲԵՌՆԱՐԴՈՍ սուրբ վարդապետ եկեղեցւոյ, էր մեծահամբաւ նախկին առաջնորդ վանից Պայծառաձորոյ Բենեդիկտեանց, որ գոլով ազնուական Գաղղիացի ծնեալ 'ի 1092, և սնեալ իմաստութեամբ, եղաւ մեծաւոր կարգին, ու բարեկարգութեամբ և խոհեմութ՟ այնչափ ծաղկեցուց կրօնն՝ որ եօթը հարիւր աբեղայ աշկերտ ունեցաւ, որոնցմէ ելան շատ երևելի անձինք, պապեր, կարդինալներ և եպիսկոպոսներ ։ Մեծ կարգադրութեամբ խաղաղացուց խռովութիւնները, և ճարտար քարոզութեամբն միաբանեցան հաւատացեալք և և կազմեցին անհամար բազմութիւն խաչակիր զօրաց ընդդէմ անհաւատից ։ Շինեց եօթանասուներկու վանք իւր կրօնին, յետոյ կրկին աւերցաւ · ամէն իշխանաց սիրելի, և ամենուն կ'երթար համարձակ և անկոչ · նաև շատ զօրեղ և ազդու էին իւր խօսքը թագաւորաց առջին ։ Բայց 'ի մեծամեծ հրաշագործութեանց շատ օգտակար գրքեր ալ շարադրեց աստուածաբանական խնդրոց և շնորհաց վրա քաղցր և գեղեցիկ ոճով · մինչև հերետիկոսները ալ մեծապէս կը պատուէին զերանելին և աստուածիմաստ ճառերը ։ Քանի մը անգամ կամեցան՝ որ եպիսկոպոս ըլլայ, այլ ինքն ամենևին չուզեց · միայն իւր փափաքն էր երթալ առ Աստուած բարի մահուամբ՝ ինչպէս որ եղաւ վաթսունիրեք տարեկան 'ի 1159 ։

ԲԵՍԱՐԻՈՆ Տրապիզոնցի էր մեծահռչակ կարդինալ Յոյն, աստուածասէր միանձն, և արքեպիսկոպոս Նիկիոյ, որ մեծ սիրով ջանացաւ միաբանելու Հոռոմները Լատինացւոց հետ ։ Մինչ զի համոզելով Բաղէոլոգ կայսրն՝ գնաց անոր կողմանէ առ Եւգինէոս Դ. պապն, որ ժողով գումարեց Ֆէրրարա · ուր գնաց Յունաց պատրիարքը և կայսրը իշխաններով և եպիսկոպոսներով ։ Այս ժողովը փոխադրեցաւ 'ի Ֆլորենտիա և հաստատեցաւ միաբանութիւնն ճշմարտախօս ճոխաբանութեամբ Բեսարիոնին, որուն տուաւ պապը կարդինալութիւն 'ի 1439ին ։ Նաև յետոյ պիտի քահանայապետ ընտրէին հրաժարեցաւ, և բնակեցաւ 'ի Հռոմ, ու սիրելի եղաւ ամենուն եզական իմաստութեամբ և քաղցր բնաւորութեամբն ։ Շատ կը պատուէր գիտուն առաքինիները և իւր պալատն էր ճեմարան իմաստնոց․ ունէր ճոխ գրատուն ընտիր ընտիր գրքերով ։ Բոլոր գրչագիրները Յոյն, Լատին, ընծայեց Վենետիկի գրքատանը, որ շատ զգուշութեամբ կը պահպանեն ։ Երևելի են իւր շինած գրեանքը և գիտնական ճառերը, որ տպագրեցան, ու մինչև հիմա յարգելի են թէ իր գործքերը և թէ իւր փառաւոր անունը, որ փոխեցաւ առ Աստուած եօթանասունուինը տարւան 'ի Ռաւեննա, և մարմինը փոխադրեցաւ 'ի Հռոմ 'ի 1472 ։

ԲԷԼ․ Տ․ ԲԱՀԱՂ ։

ԲԻԱՍ էր հին փիլիսոփայ Յոյն եօթն իմաստասիրաց մէկը 608 տարի Քրիստոսէն առաջ, որ կը քարոզէր թէ աշխարհքէս ելած ատենս ամէն բանս ալ հետս պիտի տանիմ, այս ինքն առաքինութիւն և գիտութիւն, որք մարդուս յատուկ ինչքն են անկողոպտելիք ։ Երբոր հարցուցին թէ ինչ է քաղցրն․ ասաց թէ Յոյսն է ։ Կ'ըսէր որ թշուառական նա է, որ չի համբերեր թշուառութեց, իսկ թշուառաղքատ՝ ագահն է, որ կեանքը կուտայ շահին համար ։ Թագաւորը ղրկեց իրեն ոչխար մը ասելով, թէ գէշ մասն մէկին իրեն թող ղրկէ ։ Բիաս միայն լեզուն կտրեց ղրկեց, յայտնելով թէ մարդուս լեզուէն աւելի գէշ բան չկայ ։ Կը պատմեն թէ Յոնիայ գաւառին վրա գրեց տասներկու հազար տող ոտանաւոր․ և երբոր կ'ատենաբանէր՝ գլուխը դնելով թոռանը թևին վրան մէկէն մեռաւ . ուստի քաղաքացիք տաճար կանգնեցին Բիասին անուամբը ։

ԲՈԳՈՎՐԻՍ էր առջի քրիստոնեայ Թագաւորն Բուլղարաց, որ յամի 843, Յունաց հետ հաշտուելէն ետև՝ երբոր Միքայէլ մանուկը Թագաւորեց, ուզեց դաշինքն աւրելով ծեծ բանալ Յունաց դէմ ։ Ան ատեն Թագաւորամայրն Թէոդորա իմացուց անոր թէ որդւոյս տղայութեանը մի՛ նայիր, հապա զիս պիտի տեսնես զօրքիս գլուխը, որք աստուածային ողորմութեամբ խայտառակելոց են յանդուգն անհաւատարմութիւնդ մէկ կնիկ մարդու մը ձեռքով ։ Այսպիսի խելացի խօսքերով շարժեցաւ Թագաւորին սիրտն ու հաստատեց հաշտութիւնը՝ խնդրելով դշխոյէն ղրկել նորա քոյրն, որ պատանդ էր 'ի Կոստանդինուպօլիս ։ Ուր նա քրիստոնեայ եղած էր . և երբոր գնաց եղբօրը քով՝ սորվեցուց անոր քրիստոնէական հաւատքն, ու մկրտել տուաւ հետն եղած եպիսկոպոսին՝ անուանելով Միքայէլ 'ի պատիւ Կայսեր, նաև սուրբ խաչին նշանը դրաւ դրօշին վրան . ուսկից այնպէս սարսափեցան կռապաշտ Բուլղարներն՝ որ մէկէն դարձան մկրտեցան 'ի 845ին ։ Իսկ 'ի 865 առաւել հաստատեցան լատին քարոզիչներու ձեռքով՝ որ Նիկողայոս սրբազան պապն ղրկեց, որուն գնաց Թագաւորին որդին ալ և խնդրեց հոգևոր առաջնորդներ ։

ԲՈՅԵՍԻՈՍ էր իմաստուն, բանասէր Հռոմայեցի ուղղափառ հիւպատոս, որ վարժած ըլլալով Աթէնք, երբոր դարձաւ յԻտալիա՝ Թէոդորիկոս արքայն Գոթաց մտաւ 'ի Հռոմ, որուն վրայ գովեստից ճառ մը խօսելով շատ սիրելի եղաւ Թագաւորին նոյն ժամանակը ։ Բայց յետոյ նախանձոտները Թագաւորին աչքէն հանեցին , որ իբրև մատնիչ բանտը դրաւ , ու յետոյ կապանօք ղրկեց 'ի Բաւիա , ուր տանջելով՝ գլխատեցին եօթանասուն տարուան 'ի 524 . վասն զի կը փափաքէր՝ որ Հռոմ աղանդաւոր վայրենի Գոթաց տակէն խալըսի , ու ազատ ըլլայ ։ Ուստի ուղղափառները մեծ պատուով թաղեցին եկեղեցիայ մէջ իբրև վկայ ճշմարտութե . և 200 տարիէն ետև Լոմբարտացւոց Թագաւորը փոխադրեց Բոյեսիոսին ոսկորները սուրբ Օգոստինոսի տաճարին մէջ , և շինեց վրան փառաւոր դամբարան , որ կայ մինչև ցայժմ ։ Շատ ընտիր գրուածներ ունի , մանաւանդ Մխիթարութեան գիրքն՝ որ շարադրեց բանտարկութեան ատենը իր մխիթարութեան համար . կը ճառէ յստակ ոճով , գեղեցիկ հանճարով աստուածային նախախնամութեան և կանխագիտութեան վրայ համդերձ կրօնասիրութեամբ ։ Ոտանաւորներն են փառաւոր վճռական և իմաստալից ։ Այնպէս պանծալի են գրուածքն յաղագս խորհրդոյ Երրորդութեան և երկուց բնութեանց Քրիստոսի , ուղղափառ վարդապետութեամբ և աստուածաբանական ոճով ։ Բոյեսիոս այս պատճառաւ մեծ յարգութեամբ դասեցաւ 'ի կարգ Հարց Լատին եկեղեցւոյ ։ Անոր ուրիշ գրուածքը յաղագս շաբաթուց , թուաբանութեան , երկրաչափութեան և երաժշտութեան , որ բոլորը միատեղ տպած են , ու շատ ցանկալի են ամէն տեղ թէ գործքերը և թէ իր պայծառ անունը , զոր Բողանտեանք Սուրբ անուամբ պատուեցին ։

Իմաստասիրաց հրահանգք տենչալի
Լինել բարեկիրթ գերիմաստ արի .
Քանզի գիտութիւնք ընդ առաքինութեան
Են մարդոյ ևեթ օժիտ սեպհական :
Լեր գանձող յանձին զայն գանձս անյեղլի ,
Որ և ոչ մահուամբ 'ի քէն բառնալի .
Ազգ գայ և երթայ այնք ընդ քեզ մնան ,
Աստ և յանմահ կեանս են հոգւոյդ օճան :

ԲՈՆԱՎԵՆՏՈՒՐԱ կը թարգմանի Բարի գալուստ , որ էր սուրբ և երևելի վարդապետ Լատին եկեղեցւոյն Թոսքանայի 'ի ԺԳ դարուն : Սա մեծ ջերմեռանդութեամբ , բարի կրթութեամբ , և քաջ ուսմամբ զարգացաւ , ու երբոր քսանևերկու տարուան եղաւ , սուրբ Ֆրանչիսկոսին հրաշքը տեսնելով մտաւ վանքը 'ի 1243 . իսկ գիտութեանց ուսմունքը և աստուածաբանութիւնը կատարեց 'ի Փարիզ սուրբ Թովմայի հետ միատեղ : Յետոյ մեծամեծ պաշտօններու մէջ շատ անուանի և իմաստուն երևեցաւ հանդերձ կերպ կերպ բարեգործութեամբ , մինչև ընտրեցին զինքն ընդհանրական մեծաւոր իրենց կարգին 'ի Հռոմ : Քահանայապետն Գրիգոր Ժ . տեսնելով երանելւոյն գերապանծ առաքինութիւնները պատիւ կարգինալութեան տուաւ իրեն , և 'ի 1272 բարձրացուց յեպիսկոպոսութիւն Ալպա քաղաքին , և տարաւ հետը 'ի Գաղղիա 'ի ժողովն Լուգդոնի : Ուր յետ երևելի գործոց և սքանչելեաց փոխեցաւ առ Աստուած յիսունևիրեք տարուան 'ի 1275 , յուլ . 13 , և եղաւ տօնելի հայրապետ , անուանելով Այր գերապանծ : Սուրբն Բոնավէնտուրա ունի շատ փառաւոր գրուածներ և ուղղափառական ճառեր , բարոյական խրատներ, մեկնութիւններ սուրբ գրոց, և այլն ։

ԲՐԻԳԻՏԱ կամ ՊՐԻՃԻԴԴԱ կոյս գեղեցիկ հոգւով և մարմնով՝ էր Իրլանտացի 'ի Ջդարուն, որ այնպէս զարմանալի պարկեշտութեամբ և աստուածպաշտութեամբ մնաւ. որ բոլորովին զինքն Յիսուսի ընծայեց ։ Ուստի հայրը որչափ որ կ'ըստիպէր որ հարսնացընէ, նա հրաժարելով պատասխան կուտար, թէ ես ունիմ փեսայ իմ Փրկիչս, ուսկից մէկը չի կրնար զիս բաժնելու ։ Եւ գիտնալով թէ գեղեցկութեանը պատճառաւ ետեւէն ընկեր են առնելու, լալով կ'աղաչէր Յիսուսին, որ դէմքին գեղեցկութիւնը վերցընէ. ինչպէս որ եղաւ խնդիրքը կատարուելով, հայրն ալ թողուց որ կոյս ըլլայ ։ Մաքիլլա սուրբ եպիսկոպոսն օրհնեց զինքն մայրապետ. և ուխտին ատենը երեւցաւ Բրիգիտային գլխուն վրայ հրեղէն սիւն, և մէկէն առջի գեղեցկութիւնը եկաւ դէմքին հրաշքով ։ Անկէց ետեւ շատ զօրացաւ սրբութեամբ և հրաշագործութեամբ, մինչև անդամալոյծները և բորոտները, նաև կոյրերը աղօթքով կ'առողջացընէր. վասն յայտնելու ճշմարտութեան խօսեցուց մէկ անգամ ալ նորածին տղայ մը ։ Աղօթքով և խրատով շատ մեղաւորներ դարձի բերաւ, և սքանչելի առաքինութեամբ փոխեցաւ առ փեսայն իւր Քրիստոս 'ի 528, և տօնեցաւ ։

ԲՐԻԳԻՏԱ Շուետացի՝ էր սրբասէր այրի կին Թագաւորազարմ, որուն վրայ աստուածային շնորհքն և սքանչելիքը կը փայլէին տղայութեան ժամանակէն. որչափ անգամ խաչելութեան վրայ կը նայէր, կուլար Յիսուսի վէրքերը մտածելով: Երբոր եղաւ չափահաս, հայրը բռնադատելով հարսնայուց զինքն Վիւսոն բարեպաշտ իշխանին. որոնք հոգևոր գործոց հետևելով աղքատները միշտ կը հոգային և իրենց զաւակները աստուածպաշտութեամբ կը սնուցանէին, մինչ զի բարի օրինակ եղան ամենուն: Յետոյ ուխտ գնացին սրբոյն Յակոբայ 'ի Սպանիա, և երբոր դարձան հրաժարելով իրարմէ ուխտեցին եղան կրօնաւոր, Վիւսոն մտաւ Կիստերսականաց վանքն ու հոն վախճանեցաւ սրբութեամբ. իսկ Բրիգիտա շինեց Վալցենոնի կուսաստանը, ու հոն կրօնաւորեցաւ, և կրօնն ալ իր անուամբ կոչեցաւ Բրիգիտեան: Եւ այսպէս կատարեալ ճգնութեամբ սրբափայլ եղաւ, զինքը տալով Յիսուսի զարմանալի առաքինութեամբ և սրբութեամբ, մինչև լցեալ հոգւով սրբով եղաւ հոգետես և զօրաւոր թէ գրով և թէ ճարտարախօսութեամբ: Գնաց ուխտ յԵրուսաղէմ և 'ի Հռոմ, ուր երևելի յայտնութիւններ եղան իրեն, զոր գրեց ու տպագրեցան. ապա շատ հրաշագործութիւններէն ետև հիւընդցաւ 'ի Հռոմ, և հինգ օր առաջ գիտցաւ մեռնելը, ու մեծաւ պատրաստութեամբ փոխեցաւ առ Քրիստոս եօթանասուն տարուան 'ի 1474, յուլ. 24. իսկ 'ի 1491 դասեցաւ ընդ սուրբս, մարմինն ալ փոխադրեցին իրեն շինած վանքը 'ի Շուետս:

ԲՐՈՒՆՈՆ սուրբ նախահայր կարգին Կարդուսեանց լռակացից՝ էր Գերմանացի, և քաջ բանիբուն կրթեալ 'ի Փարիզ, եղաւ վարդապետ փիլիսոփայութեան և աստուածաբանութեան, Նաև գլուխ կանոնիկոսաց եկեղեցւոյն Հռեմայ ։ Կը պատմեն թէ օր մը մեծ հանդեսով պաշտօն կը կատարէին մէկ մեծահամբաւ իմաստունի մը վրան, մեռելը յանկարծ գլուխը վերուց դագաղին մէջէն ասաց. “Ամբաստանեցայ, դատեցայ, և դատապարտեցայ”. և յետոյ դարձեալ ընկաւ մեռած ։ Բրունոն հասկըցաւ որ այն մարդուն դատապարտութե՟ պատճառն էր ճարտարախօսութիւնն, որով զինքն ամենուն արդար կ՚երևցըներ կեղծաւորութ՟բ ։ Ուստի յորդորեց աշկերտներն որ երթան առանձնանան ու հաստատեն Լռակացութեան կարգն ։ Գնաց հրաման առաւ Հուգոն եպիսկոպոսէն, ու շինեց ճգնարան և վանք սոսկալի լեռներուն մէջ, որ կ՚անուանին Կարդուսա կամ Շէռթօզա, և այս կրօնը նոյն անուամբ կոչեցաւ, ու շատ հետևող լռակաց միաբաններ ունեցաւ, որոնք զատ զատ խուցերու մէջ լուռ կը ճգնէին ։ Ուրբանոս Բ. սրբազան պապն Բրունոնի աշկերտն ըլլալով կանչեց զինքն 'ի Հռոմ ու ըրաւ իրեն խորհրդական, և երբոր կամեցաւ տալու իրեն արքեպիսկոպոսութիւն, հրաժարեցաւ, գնաց առանձնացաւ Կաղաբրիայի լեռներուն մէջ, կը ճգնէր սրբութեամբ և առաքինութեամբ ։ Նաև գրեց աստուածիմաստ հոգւով խրատական թղթեր, և ուրիշ պիտուական գրեանք. խիստ գովելի են Սաղմոսաց և Պօղոսի թղթոց մեկնութիւնները՝ այլ և Ողբերգութիւն աշխարհիս թշուառութեանը վրա ։ Ամէն գրածներուն մէջ կը փայլին ոչ միայն աստուածսիրութիւն, առաքինութիւն և գեղեցիկ իմաստութիւն, այլ և հմտութիւն յոյն և եբրայեցի լեզուաց. տեղեակ էր ևս դպրութեանց հին Հարց և եկեղեցական կանոնաց, և այն ։ Բրունոն այսպիսի սրբութեամբ և հրաշագործութ̃ք Աշտարակ կոչեցեալ անապատին մէջ կատարեց առաքինազարդ կեանքը յիսունըհինգ տարւան 'ի 1101, և դասեցաւ ընդ սուրբս ։

Սէր աստուածամուխ վառեալ 'ի սրտի
Ըզգերմարդկայինս գործէ կարելի ․
Բարձեալ զերկրաքարշն յանմարմնոց կայան
Շնորհափայլ պճնէ աստուածանման ։
Զաննուաճելի լեզուն աննահանջ
Սանձեալ Բրունոնի լռութ̃ք ինքնատանջ,
Համարձակախօս ըզսիրտս յարդարէր
Խօսել առ Աստուած ըզտիւ և զիշեր ։

* * *

Գ.

ԳԱԲԻԱՆՈՍ՝ էր անուանի հիւպատոս Հռոմայ և բդեշխ Հայոց և Ասորւոց երկրին 58 տարի Քրիստոսէն առաջ, որ բռնեց զԱրիստաբուղոս Բ. Հրէից Թագաւորը ղրկեց 'ի Հռոմ և զՀիւրկանոս անոր եղբայրը հաստատեց քահանայապետ յԵրուսաղէմ: Տիգրան Բ. Հայոց Թագաւորին ձեռքէն փախաւ յԵգիպտոս, ու անկեց ճարտարութեամբ հաշտութիւն խօսեցաւ Տիգրանայ հետ, և վարպետութեամբ ղրկեց իրեն քեռորդին Միհրդատ Բ. և Արշամը: Բայց Հռոմայեցիք անոր խաբէութիւններն իմանալով աքսորեցին, որ մեռաւ 'ի Սալոնա, 40 տարի Յիսուսէն առաջ, և գովեցաւ Կիկերոնէն ճառով:

ԳԱԲՐԻԷԼ կը թարգմանի " Զօրութիւն Աստուծոյ „: Տ. Հրեշտակք:

ԳԱԲՐԻԷԼ ՍԻՈՆԻՏԱ էր բանիբուն Մարոնի Լիբանանցի, որ 'ի Հռոմ եղաւ վարժապետ արևելեան լեզուաց, և յետոյ գնաց Փարիզ վասն տպագրութե̃ բազմալեզուեան աստուածաշնչին. աւելցընելով ասորի և արաբացի լեզուներն սուրբ գրոց 'ի լատին թարգմանութիւնը: Ուր ապա հաստատեցաւ վարժապետ արևելեան լեզուներու, և Թարգմանեց արաբերէն Ապտուլլահ Մէհէմմէտին աշխարհագրութիւնը, որ տպեցաւ 'ի 1619 · իսկ ինքն վախճանեցաւ եօթանասուներկու տարուան 'ի 1648 :

ԳԱԳԻԿ Արծրունի էր Թագաւոր միայն Վասպուրականի նահանգին Հայոց և քեռորդի Սմբատայ Ա. արքային, որ կոչեցաւ բռնաւոր զի սպաննելով իւր աներն յափշտակեց անոր երկիրը : Յետոյ ապստամբեցաւ Սմբատ արքայէն, ու միացաւ Յուսուփ այլազգ ոստիկանին հետ, որ զինքը Թագաւորեցուց 'ի 908, և ասով մեծամեծ չարիք բերաւ ազգին, մինչև Սմբատին մահուանն ալ պատճառ եղաւ : Թէպէտ յետոյ զղջացաւ և իւր քաջութեամբն յաղթեց Յուսուփ ոստիկանին ու Ամիրապետին սիրելի եղաւ, բայց ի՞նչ շահ որ ազգը ոտնակոխ եղաւ անհաւատից : Ապա 'ի 927 Գագիկ ուզելով միաբանութիւն ընել Յունաց եկեղեցւոյ հետ՝ նամակ գրեց անոնց պատրիարգին, որ այսպէս կը սկսի · ,, Գագիկ Արծրունի, երկրպագող սրբոյ խաչին, և ծառայ սուրբ Հայրապետին ,, · և այլն : Յոյները այս գրած Թուղթը բանի մը տեղ չի դրին · իսկ ինքը մեռաւ 'ի 936ին, որուն յաջորդեց որդին Դերենիկ :

ԳԱԳԻԿ Ա. Բագրատունի՝ էր Թագաւոր Հայոց, որ եղբօրն յաջորդեց 'ի 989 յԱնի քաղաք, և կոչեցաւ Շահնշահ, այսինքն արքայ արքայից : Սա մեծամեծ քաջութեամբ և առաքինութեամբ շատ զօրացաւ, ու Թշնամեաց յաղթելով տիրեց հօրը տիրած տեղերուն : Նոյնպէս Թագուհին Կատրամիտէ բարեպաշտ ջանքով կատարեց մեծագործ կաթուղիկէ եկեղեցին Անւոյ, ուր փոխադրեցաւ անկէց ետև կաթուղիկոսարանը· շինեց Գագիկ նաև Լուսաւորչայ փառաւոր տաճարը։ Յետոյ Դաւիթ Կիւրապաղատին և Վրաց արքային հետ միաբան փառաւոր յաղթութիւն մը ըրին Ամիրային դէմ որ ունէր հարիւր հազար զօրք· որուն շատ մեծ ջարդ տուին, ու իրենցմէ քանի մը հոգի միայն ընկան։ Այս թագաւորը այսպիսի քաջագործութեամբ մեծանուն բարձրացաւ երեսուն տարի տիրելով խաղաղութեամբ մինչև 'ի ծերութիւն, ապա վախճանեցաւ 'ի 1019։ Որուն վրայ այսպէս կը վկայէ ականատես Ասողիկ պատմիչը· “Էր այր սրամիտ և վարժ 'ի պատերազմի, և առատաձեռն 'ի բաշխել· և իւրով իմաստութեամբ և քաջութեամբ՝ զբաժ հարկաց յոլովից տեղեաց ազատեաց, և զկիւրակեացն զցայգուն պաշտօն սաղմոսերգութե՟ կատարէր„· և այլն։

ԳԱԳԻԿ Բ· Բագրատունեաց վերջին թագաւոր տասնըեօթը տարւան նստաւ յԱնի 'ի 1042, որ 'ի մանկութենէ կրթուած ըլլալով աստուածպաշտութեամբ և զանազան ուսմամբ Հելլենացւոց, եղաւ զօրաւոր և հանճարեղ, վեհանձն և քաջայաղթ առաքինի։ Սակայն իշխաններուն մէջ ոգի խռովութեան մտնելով կորուսին զայն քաջ թագաւորը և պայծառ թագաւորութիւնը· մանաւանդ ապստամբութեամբ Վեստ Սարգսի իշխանին Սիւնեաց, որ Յունաց հետ միաբանելով մատնիչ եղաւ Անի քաղաքին և թագաւորին, որպէս զի ինքն ըլլայ թագաւոր։ Ու այսպիսի չար խորհրդով համոզեց արքայն որ երթայ 'ի Կոստանդնուպօլիս առ կայսրն որ զինքը կ'ուզէր ․ Գագիկ 'ի 1045 գնաց առ Մոնոմախոս կայսրն Յունաց , որ նախ մեծ պատիւ տուաւ իրեն , և յետոյ սկսաւ նեղել․ որպէս զի Անի քաղաքը տայ Յունաց , ինչպէս որ Յովհաննէս Թագաւորն Հայոց խոստացեր էր առաջուց ։ Երբոր արքայն մերժեց կայսեր խօսքը , վերուց զինքը փակեց իբր բանտարկեալ , ու կը ստիպէր Հայ իշխաններն որ տան զԱնի ։ Սարգիս ելաւ զամէնքը համոզեց , թէ լաւ է քրիստոնէից ձեռքն ընկնիլ , քան թէ անհաւատից ․ և այսպէս մատնելով զրկեցին Անի քաղաքին բանալիքներն առ կայսրն 'ի 1046 ։ Գագիկ երբոր լսեց խելքը գլխէն գնաց , ու զօրաւոր պատճառներով և մեծ քաջութեամբ դէմ դրաւ կայսեր ամենևին չի հրաժարելով արդար իրաւունքէն ․ բայց վերջը տեսաւ որ ճար չի կայ , մատնուեր էն չարաչար՝ քաղաքն ալ , ինքն ալ , ակամայ հաւանեցաւ , մանաւանդ թէ՝ գանելով իր իշխաններուն անհաւատարմութեանը և ապստամբութեանը վրա , որոնք սուտ երդումով կապուեր էին հետը ։ Ուստի առաւ կայսերէն Պիզու քաղաքը և մեծ պալատ մը 'ի Կոստանդինուպօլիս , ու ձեռքը քաշեց Անի քաղաքէն ։ Յետոյ ամուսնացաւ , առաւ Դաւթի Արծրունւոյ Սեբաստիոյ արքային աղջիկը , և շինեց վանք մը ․ միշտ հոն կ'երթար մխիթարուելու համար ։ Երբոր լսեց թէ Կեսարիայի մետրապօլիտը իրեն շանը Արմէն կը կանչէ ազգը նախատելու համար , սիրտը չդիմացաւ ու պարկի մը մէջ զինքը դնելով շանը կոտրտել տուաւ ։ Քանի մը ամիսէն ետև Գամրաց երկիրը քալելով մօտեցաւ իրեք մարդով Կիզիստրա բերդին քով , Յոյն իշխանները ելան դիմացը երկրպագութեամբ պատուեցին իբրև թագաւոր, և կեղծաւորութ՟բ բերդը մտցընելով հոն չարատանջ սպաննեցին. մարմինն ալ բերդին պատէն կախեցին։ Գագիկ միայն իրեք տարի թագաւորեց, և երեսունըհինգ տարի խեղճութ՟բ հալածանք քաշեց Յունաց մէջ. վերջապէս վեհափառ արքայն, պայծառ Շահընշահն կեանքը թշուառ անցուց մեծ համբերութեամբ, որուն վրա ամէնքը սուգ առին լացին, որով բոլորովին վերջացաւ Բագրատունեաց թագաւորութիւնը 'ի 1080, կամ 'ի 1079։ Մարմինը թաղեցին բերդէն դուրս, յետոյ տարին հանգուցին իր շինած վանքին մէջը 'ի Պիզու քաղաք։

ԳԱԳԻԿ Գ. թագաւոր անուանեալ Կարս քաղաքի՝ էր թոռն Մուշեղայ արքային եղբօր Աշոտ Ողորմածին, որ 'ի 1029 թագաւորելով բոլոր աւազակները կորուս հալածեց իր երկրէն։ Բայց 'ի 1050 Պարսից ասպատակները յանկարծ երկիրը կոխեցին և մեծ վնաս տուին. իսկ ինքն ամրացաւ վերնաբերդին մէջ, ու յետոյ շատ լաւ ամրացուց քաղաքը։ Քանի մը տարիէն ետև Տուղրիլ արքայն Պարսից ելաւ Յունաց վրա, և երբոր կոխեց Կարսի սահմանը, Գագիկ դէմ դրաւ անոնց ունենալով զօրավար հզօր քաջն Թաթուլ անյաղթելի կտրիճը, որ պատերազմին մէջ զարկեր վիրաւորեր էր Պարսից մեծ իշխանին որդին. բայց իր ձին ալ զարնուելով Պարսիկները բռնեցին զԹաթուլը, երբոր տարին Տուղրիլին, ըսաւ Թաթուլին. “Թէ որ դա մեռնի, զքեզ անոր զոհ պիտի ընեմ„։ Նա ալ պատասխան տուաւ քաջութ՟բ. “Թէ որ իմ զարկածս է, պէտք է որ մեռնի. թէ որ ուրիշը զարկեր է, չեմ գիտեր„։ Եւ երբ մեռաւ այն զարնուածը , Տուղրիլ սպաննեց զԹաթուլն ու անոր աջ ձեռքը կտրեց և մեռնողին հօրը ղրկեց ըսելով, թէ Որդիդ ասանկ քաջ ձեռքէ մը մեռաւ , որուն զարկածը չապրիր ։ Տուղրիլի մեռնելէն ետև նստաւ Ալփասլան , ու տիրեց Անւոյ 'ի 1064 . և երբոր հնազանդութիւն կը պահանջէր Գագիկէն , նա սևերը մտած ձևացուց զինքը սգաւոր և հիւանդ վասն մահուան Տուղրիլին ։ Ալփասլան լսելով շատ սիրեց զԳագիկը , և հագուց թագաւորական զգեստ . և նա փառաւոր սեղան մը ըրաւ ու մեծ պատուով ճամբեց 'ի Պարսկաստան ։ Գագիկ նայեցաւ որ հանգստութիւն չպիտի ունենայ , տուաւ իւր տէրութիւնը Տուկիծ կայսեր Յունաց , ու առաւ Ծամնդաւ բերդը իրեք քաղաքով և հարիւր գեղերով, ու բնակեցաւ Յունաց աշխարհը . նաև քովն առաւ զԽաչիկ կաթուղիկոսը , որուն յաջորդեց Գրիգոր Վկայասէր ։ Գագիկ լսեց թէ Հոռոմները զԳագիկ Բ . Բագրատունի արքայն Կիզիստրայի բերդը փակեր են , ազգասիրութեամբ գնաց ազատելու . բայց երբ լսեց թէ սպաննեցին , ետ դարձաւ ողբալով , և այսպիսի սգով վախճանեցաւ ինք 'ի 1080 ։ Անկէց ետև մնաց Հայաստան անտէր և անթագաւոր խեղճ վիճակի մէջ ։

Արամեան արքայք դառնադառն ողբան
Ո՜ թշուառ պառակտումն ազգիս հայկական .
Ի միաբանիլն որքան գերազանց ,
Ընդ քակտիլըն լեալ գերի խուժ ազանց ։
Աւա՜ղ յաղթական փառաց քաջազանց ,
Յորոց սարսէին աշխարհք շրջակաց .
Ոգի խռովութեան հասեալ 'ի վերայ
Եղծ զամենայն փառս և զազգն ընդ նոսա ։

ԳԱՂԲԱ ՍԵՐՎԻՈՍ Սուլպիկեան՝ էր կայսր Հռոմայեցւոց, և առաջ Ներոն կայսեր ժամանակը աւագ բդեշխ Սպանիացւոց ։ Ուր այնչափ խոհեմութեամբ և քաջագործութեամբ փառաւորեցաւ առաքինի անունն, որ զօրավարները կը յորդորէին, որ գլուխ քաշէ չարագործ Ներոնէն, և ինքն ըլլայ ինքնակալ ։ Ներոն զասոնք լսելով հրամայեց որ սպաննեն զԳաղբա. իսկ նա փութալով զօրապետներուն ձեռքով Կայսր անուանեցաւ իր զօրքէն. որուն հետ միացան նախ Գաղղիացիք և Հռոմայեցիք ։ Յետոյ բոլոր կայսերութիւնն ու ծերակոյտը մերժեցին անօրէն Ներոնը, որ յուսահատեալ անձնասպան եղաւ կորաւ յամի Տեառն 68 ։ Էն ատեն Գաղբա փառաւորապէս մտաւ 'ի Հռոմ և ամէն յանցաւորներն ու խռովարարները պատժելով բարեկարգեց զքաղաքը, և վերուց անկարգութիւնները ։ Որով եղաւ արժանաւոր ինքնակալ, քաղաքավար, քաղցր և սիրելի. բայց Օթոն իշխան գործակից Ներոնին սկսաւ նախանձիլ իրեն, ու զօրքին աչքէն հանել, զի անզաւակ և եօթանասուներկու տարուան ծեր էր. մինչև ապստամբեցուց զօրքը, և մարդ ալ ղրկեց զԳաղբան բռնելու որ տաճարին մէջ զոհ կը մատուցանէր ։ Իսկ նա աներկիւղ ելաւ զօրքին առաջն ու վիզը երկնցունելով ասաց. ‶Թէ որ ժողովրդեան օգուտ է իմ մեռնելս, ահա պատրաստ եմ„. հոն զինուոր մը զարկաւ կտրեց գլուխն ու տարաւ անիրաւ Օթոնին, որ յաջորդեց անոր քիչ ժամանակ. իսկ Գաղբա եօթը ամիս միայն կայսերութիւն ըրաւ, որ արժանի էր երկար ժամանակի կայսերական մեծափառութեան ։

ԳԱՂԵՆՈՍ կամ ԳԱՂԻԱՆՈՍ՝ էր մեծահամբաւ բժշկապետ Յոյն պերգամացի Բ դարուն մէջ, որ զանազան քաղաքներ երթալով լաւ վարժեցաւ բժշկութեան. յետոյ գնաց Հռոմ, ուր անբժշկելի ցաւերն ալ բժշկելով շատ մեծանուն հանդիսացաւ: Կը պատմեն թէ մեծ խնամով կը քննէր ու կը նայէր հիւանդները և ձրի կը բժշկէր աղքատները. խոհեմ, հանդարտամիտ և փութաջան էր իր գործքին. պարկեշտ և քիչ ուտող. ոչ երբեք կուշտ կերակուր կ՚ուտէր, անոր համար ապրեցաւ ըստ ոմանց հարիւր քառասուն տարի, և ըստ այլոց հարիւր ութսուն: Նա շատ բան գրեց բժշկութեան և դեղոց վրայ, իբր երկու հարիւր հատոր կամ պրակ, որոնց շատը այրեցան ՚ի Հռոմ Խաղաղութեան տաճարին մէջ, ուր պահուած էին. մնացածները տպած են ՚ի Յոյն և ՚ի Լատին, զորոնք շատ կը գովեն բժիշկները:

Գաղենոսի է կանոն բազմաշահ՝
  Պարկեշտ գոլ ՚ի վարս անդորր անձնապահ.
  Չարեչափ ՚ի կեր ՚ի հոգս ընդ կրից,
  Որք են մահաբեր և պատճառք ախտից:
Թէ սանձես չափով զիղձ անկականին,
  Ոչ շատ ոչ նուազ ըստ արդար կշռին,
  Աշխոյժ ՚ի յարարս ժիր առաքինի՝
  Կեաս ձիգ բարեկեաց անախտ կորովի:

ԳԱՄԱՂԻԷԼ էր մեծանուն վարդապետ օրինաց Մովսեսի և ծածուկ աշակերտ Յիսուսի, որ սրբոյն Պօղոսի և Ստեփաննոսի վարժապետ ըլլալով՝ ջատագով եղաւ ատենին մէջ և ազատել տուաւ առաքեալները: Ղուկիանոս սուրբ երէցը կը պատմէ թէ Գամաղիէլ թաղեց ըզսուրբ Ստեփաննոս , և երբոր յայտնի եղաւ քրիստոնէութիւնը նահատակեցաւ ։ Նոյնը կը գրէ նաև թէ 415 ին երևցեր է իրեն սուրբ վկայն յայտնելով սուրբ Ստեփաննոսին և իւր գերեզմանը . ուր տեղ որ գտան թէ իրեն և թէ սուրբ Ստեփաննոսին նշխարքը , զոր կը հաստատէ և սուրբն Օգոստինոս ։

ԳԱՅԻԱՆԷ սրբուհի կոյսն՝ էր Հռոմայեցի մայրապետ սանամայր սուրբ Հռիփսիմէին և վարժող կուսանաց , զորոնք առաւ փախուց Հռոմայէն արևելք Դիոկղետիանոս կայսեր ձեռքէն քանի մը քահանաներով, մինչև հասան Հայաստան ։ Տրդատ թագաւորը կ'ուզէր հարսնացընել իրեն զսուրբ Հռիփսիմէ կոյսն գեղեցիկ՝ հրաման ըրաւ Գայիանէին որ անոր միտքը դարձընէ . բայց նա խրատ կուտար որ հաստատ կենայ հաւատքին վրայ ու Քրիստոսէն չի բաժնուի , ասոր համար քարով զարկին Գայիանէին բերանը ջախջախեցին . և սուրբ Հռիփսիմէն դառն տանջանքով նահատակեցին երեսունւիրեք ընկերներով, թագաւորին կամքը չի կատարելուն համար ։ Իսկ թագաւորը կատղելով հրաման ըրաւ միւս օրն որ չարաչար տանջանքով սպաննեն զԳայիանէ քովը մնացած երկու ընկերներովը ։ Ուստի զսուրբ կուսանքը Վաղարշապատու քաղաքէն դուրս հանեցին ու հոն դրանը քով գլխատեցին , որոնք անուանեցան Գայիանեանք ։ Իսկ ինը օրէն ետև սուրբ Լուսաւորիչ գնաց անոնուն նշխարքները ժողվեց , ամփոփեց թուով երեսունըեօթը , յամի Տեառն 301 ։ Տ . Հռիփսիմէ ։

Գայիանէ կոյս մայր օրհնողաց ,
Հօրն երկնաւորի հարսն գերապանծ ,
Զքօղ առագաստին շքեղազարդեալ
Վարդագոյն արեամբ պճնեաց գեղափայլ :
Ջահ արփիահրաշ իմաստուն կուսան ,
Պայծառ լուսատու ազգիս հայկազնեան .
Ի յարեւմտից ծագեալ մեզ արեւ
Աակ շուշանափայլ բոլորեալ զիւրև :

ԳԱՅԻՌՍ էր սուրբ քահանայապետ Հռոմայ Դաղմատացի և ազգակից Դիոկղետիանոսի կայսեր , որ յաջորդեց յաթոռ սրբոյն Պետրոսի 'ի 283 : Սա երկու տարի սաստիկ հալածանք քաշեց , ու ծածուկ միշտ կը քաջալերէր նահատակները , և կը զօրացընէր քարոզիչները : Ասիկայ սահմանադրեց որ եկեղեցականները կարգաւ առնուն եօթը աստիճանները . և այլ գեղեցիկ բարեկարգութիւններ ընելէն ետև , իմաստութեամբ և սրբութեամբ փոխեցաւ առ Տէր 'ի 296 , ու դասեցաւ վկայից կարգը այնչափ հալածանքներ քաշելուն համար վասն հաստատութեան սուրբ հաւատոյ :

ԳԱՐԱՅԻՄՔ . Տ . ԽՍԱՐԱՅԻՏՔ :

ԳԵԴԵՈՆ էր շատ զօրաւոր և բարեպաշտ դատաւոր Հրէից , որուն օր մը երևցաւ հրեշտակ Տեառն և ասաց . “ Տէր ընդ քեզ , հզօր զօրութեամբ ,, . նա պատասխան տուաւ . “ Եթէ էր Տէր ընդ մեզ՝ ընդէ՞ր գտին զմեզ ամենայն չարիքս այսոքիկ . և ո՞ւր են ամենայն սքանչելիքն նորա զոր պատմեցին հարքն մեր ,, : Արկնեց հրեշտակը . “ Երթ զօրութեամբ քովայդուիկ , և փրկեսցես զԻսրայէլ 'ի ձեռաց

Մադիամու ,, ։ Գեդէոն երբոր նշան խնդրեց և ուտելիք բերաւ որ հարկէ զհրեշտակը , նա քարին վրա դնել տուաւ զանոնք , ու գաւազանին ծայրովը դպածին պէս , կրակ ելաւ այրեց բաղարջն ու աներևոյթ եղաւ հրեշտակը։ Գեդէոն սարսափելով սեղան կանգնեց հոն , ու երկրպագութիւն ըրաւ Աստուծոյ . և գնաց գիշերանց Բահաղու կուռքը կործանեց , և ջարդեց անոր անտառն , ու հոն սեղան շինեց Արարչին , և զոհ մատոյց բարեպաշտութեամբ , և այնպէս զօրացաւ Աստուծոյ օգնութեամբ որ իրեքհարիւր մարդով խորտակեց հարիւր քառասուն հազար Մադիանացւոց զօրքն , ու ազատեց զԻսրայէլ անոնց գերութենէն ։ Գեդէոն բարի հաւատքով ուրիշ հրաշքներ ալ տեսաւ , ու բոլոր թշնամիները կործանեց , և շատ տեղ յաղթութիւններ ընելով փառաւորեցաւ , ինչպէս կը յիշէ Պօղոս առաքեալ ։ Ապա 'ի խոր ծերութեան վախճանեցաւ թողլով եօթանասուն որդի ։

ԳԵԼԱՍԻՈՍ Ա. սուրբ հայրապետն , էր Հռոմայեցի , զոր ոմանք կարծեցին Աֆրիկեցի , որդի Վաղերիոսի եպիսկոպոսին Հիպպոնացւոց ։ Սա օծաւ պապ 'ի 492ին , և առաքելական նախանձով կառավարեց զեկեղեցին Քրիստոսի իբր հինգ տարի . և զանազան ժողովքներով ամրացուց ուղղափառ հաւատքը և եկեղեցւոյ կանոնները ։ Նաև որոշեց կանոնական սուրբ գրքերը , և դատապարտեց զԱկակիոս Կոստանդինուպօլսի պատրիարքը , և ուրիշ Եւտիքեսի աղանդապետին ջատագովները . Նամակ գրեց առ Անաստաս կայսրն , որ Եւտիքականները մերժէ , ու եկեղեցական բաներու չխառնուի ։ Ինքն միշտ գլխաւոր ըլլալով հերձուածողներուն, գրեց ընդդէմ Եւտիքեանց ևայլոց. ունի շատ իմաստալից կոնդակներ և վճիռներ, տաղեր և պատարագի աղօթքներ. ապա խըստակրօն և առաքինի սուրբ վարքով փոխեցաւ յերկինս 'ի 496ին, և մեծաւ գովութեամբ տօնելի եղաւ ։

ԳԵԼԱՍԻՈՍ Բ. էր Իտալացի վարդապետ Բենեդիկտեան և առաքելական նուիրակ, ծեր, առաքինի և իմաստուն, որ 'ի 1118 ընտրեցին քահանայապետ Հռոմայ իւր կամքին դէմ ։ Բայց շատ մեծ հալածանք քաշեց Գենգիոս իշխանէն, և Հենրիկոս Ե. կայսերէն, մինչև բանտը մտաւ, և իւր բարի օրինակովն և համբերութեամբը ազատեցաւ, ու վերջը գնաց 'ի Գաղղիա ասելով. « Եթէ հալածեսցեն զձեզ 'ի քաղաքիս յայսմիկ, փախիջիք յայլ » ։ Ուր մեծապէս պատուեցին զՍրբազանն. բայց ինքը քաշուեցաւ վանքի մը մէջ, ու հոն սրբութեամբ կատարեց երջանիկ կեանքը 'ի 1119ին ։

Ահա սխրալի տիպ առաքինեաց
 Սուրբ եկեղեցւոյ փառաւոր հովուաց.
 Ոյց սիրով տանջեալ 'ի պահեստ հօտին
 Մերժեցին ըղձալիս բարձրացան յերկինս ։
Էր դու հետեւող վշտակիր քաջաց
 Վասն արքայութեան անխոնջ ճգնողաց.
 Որք զրկեալ յողջոյն փառաց երկրաւոր
 Ճոխացան անանց փառօքն երկնաւոր ։

ԳԵՂԱՄ՝ էր Հայկազն նահապետ որդի Ամասիոյ, որ յաջորդեց հօրը պայազատութեամբ փառօք յԱրմաւիր գլխաւոր քաղաքը ։ Յետոյ տէրութիւնը յանձնեց իւր որդւոյն Հարմայի, ու գնաց Սեւանայ ծովին քով քաղաք շինեց բազմամարդ, անուանելով Գեղարքունի. ծովակն ալ կոչեցաւ ծով Գեղամայ: Ապա այս տեղս ալ տուաւ Սիսակայ միւս որդւոյն, ու գնաց Երասխ գետին մօտ կանգնեց դաշտին մէջ Գեղամի կամ Գառնի քաղաքը, ուր կեցաւ աշխարհաշէն վայելչութեամբ և զօրութեամբ:

ԳԵՆՆԱՐԻՈՍ սուրբ հայրապետն էր եպիսկոպոս Բենեւենտ քաղաքին Իտալիոյ՝ Դիոկղետիանոսի հալածանաց ատենը, որ համարձակ կը քարոզէր ու շատ անհաւատներ կը լուսաւորէր: Ուստի կռապաշտները բռնեցին սուրբը սարկաւագներով բանտը դրին, ուր Տիմոթէոս անօրէն դատաւորը տանջելով՝ խիստ ջանաց դարձընելու, մինչև կրակը ձգել տուաւ: Տեսաւ որ կրակը չի մօտեցաւ սուրբերուն, չարաչար ծեծով գազաններուն առջևը նետել տուաւ. երբոր որ անկեց ալ ազատեցան անվնաս, շատ հեթանոսներ տեսնելով այս հրաշքը՝ դարձան 'ի Քրիստոս, հինգ հազարէն աւելի: Բռնաւորը կատաղութեամբ այլ չգիտցաւ ինչ ընէ, հրամայեց՝ որ տանին անապատը գլխատեն ծածուկ զսուրբ Գեննարիոս վեց ընկերներովը, որք ուրախութեամբ կատարեցան, և դատաւորն ալ չարաչար սատկեցաւ մէկէն: Սուրբ եպիսկոպոսին մարմինը տարին մեծ պատուով հանգուցին 'ի Բենեւենտ. անկէ փոխադրեցաւ 'ի Նափոլի մայր եկեղեցին, որ իւր անուամբը շինեցին, ուր անհամար հրաշքներ կ'ըլլան մինչև ցայսօր: Վասն զի հոն է սրբոյն նշխարքը և արիւնը շիշի մը մէջ պահած է. այս սուրբ արիւնը տօնին օրը կը հանեն դուրս մեծ հանդէսով և բոլոր ժողովրդով. ուր երբոր եռանդագին աղօթքներով կը կատարեն սուրբ պաշտօնը, կը սկըսի արիւնը շիշին մէջ եռալով պղպղալու ամէն տարի՝ սքանչելագործութեամբ սուրբ Գենարիոսին, զոր ջերմեռանդութեամբ կը համբուրեն բոլոր ժողովուրդը. և մինչև երկու օր կը տևէ այս զարմանալի հրաշքը։

Ո՛վ սքանչելեաց երկնաստեղծ մատին
  Տեառըն բնութեան ամենազօրին.
  Ի ցոյցըս հրաշից ստեղծագործութեան
  Գործէ նորանորս վասն օգտի մարդկան.
Այլ անդ յաճախ հրաշք Աստուծոյ յայտնին,
  Ուր են պարզ հաւատք երկիւղած սրտին.
  Մատն Ստեղծողիդ հաւատ յոյս և սէր,
  Ցուցցէ քեզ նըշանս աջն ամենատէր։

ԳԵՐԱՐԴՈՍ՝ էր կարգապետ ուխտին Յովհաննու Երուսաղէմի, որ գնաց յԵրուսաղէմ, ու եղաւ վերակացու հիւանդանոցին՝ հրամանով Բենեդիկտեան վանահօրն. ուր առաքինութեամբ կը խնամէր պանդուխտ և ուխտաւոր հիւանդները Քրիստոսի սուրբ գերեզմանին մօտիկ։ Գերարդոս ՚ի 1100 ամին հոն հաստատեց կարգն անուանեալ Յովհաննու Երուսաղէմի, որ յետոյ կոչեցաւ կարգ Մալդայի, որ իրեք ուխտէն ՚ի զատ չորրորդ ուխտ ունէր Խաչակրի՝ օգնելու քրիստոնէից, որոնց նշանն էր ճերմակ խաչ կուրծքերնուն վրան։ Գերարդոս այսպիսի առաքինութեամբ և սրբութեամբ վախճանեցաւ յԵրուսաղէմ ՚ի 1121, և ուխտը հաստատեցաւ կոնդակով Անաստասի Գ․ քահանայապետին Հռոմայ ։ Իսկ այս կարգը կը բաժնուի երեք դաս․ Ասպետ կամ զինուոր , Կղերիկոս , և Աշխատաւոր եղբայր ։

ԳԵՐՄԱՆՈՍ էր սուրբ պատրիարգ Կոստանդինուպօլսոյ և որդի Յուստինիանոսի պատրիկի , զոր սպաններ Հերակլի որդին , ու զմանուկն Գերմանոս ըրաւ եկեղեցական ։ Ան այնչափ առաջացաւ սուրբ վարքով և Աստուածային գիտութեամբ , մինչև ընտրուեցաւ պատրիարգ մեծահռչակ իմաստութեամբ և խաղաղարար խոնարհութբ՟ ։ Ունէր շնորհ հրաշագործութե՟ և ատենաբանութե՟․ երբոր Լևոն Իսաւրացի պատկերամարտը կայսր նստաւ , սուրբ Գերմանոս մեծ քաջութեամբ յանդիմանեց , ու զօրաւոր բանով խրատեց, բայց կայսրը անդարձ մնաց․ ան ատեն երանելին հանեց եմիփորոնը սուրբ սեղանին վրա դրաւ՝ ու առանձնացաւ իր բնակարանը , և իրեք նամակ գրեց պատկերամարտից դէմ ։ Նաև գրեց քաղցր վարդապետութեամբ առ Հայս թուղթ միաբանութեան և սիրոյ՝ հաստատելով Քաղկեդոնի սուրբ ժողովքին ճշմարտութիւնը , զոր ղրկեց Հայոց Ստեփաննոսի Սիւնեցի վարդապետին ձեռքովը ։ Իսկ ինքն նոյն սրբութեամբ և առաքինութեամբ փոխեցաւ առ Աստուած իննուսունըչորս ամաց ՚ի 733 , և եղաւ տօնելի ։

ԳԷՈՐԳ փառաւոր քաջ նահատակն էր Կապադովկացի , ազնուազարմ՝ երիտասարդ և կոմս Դիոկղետիանոսի ասպետներուն մէջ ։ Երանելին երբոր տեսաւ հալածանաց պատրաստութիւնը՝ վառեցաւ սիրովն Քրիստոսի , և աներկիւղ ելաւ կայսեր ատեանն՝ ու համարձակ յայտնեց իւր քրիստոնէութիւնը յանդիմանելով հեթանոսներուն անգութ խստասրտութիւնը , և ջատագովելով քրիստոնէութեան ճշմարտութիւն ։ Այս զարմանալի քաջասրտութեանը վրա խիստ կատղեցան ամէնքը , մինչև զօրական մը վերուց գեղարդը՝ սուրբին փորուն զարկաւ . բայց երկաթը ծռելով՝ վնաս չի տուաւ ։ Յետոյ դրին սոսկալի մեծ քար մը կուրծքին վրա՝ որ ճզմուի չարաչար . իսկ նա աղօթելով առ Փրկիչն ամենևին չի վնասուեցաւ ։ Ապա կապեցին քաջ վկայն սուսերաւոր անիւի վրա , որ դարձընելով ջարդուբուրդ ըլլայ . այն դառն տանջանքին մէջ կարծեցին թէ մեռաւ ։ Իսկ հրեշտակ Տեառն հանեց անկէց ու ողջացուց բոլոր վէրքերը . նոյնպէս ազատեցաւ աստուածային զօրութեամբ գուբին մէջէն և կերպ կերպ սոսկալի տանջանքներէն , գործելով մեծամեծ հրաշքներ , մինչև մեռել ալ յարոյց ։ Մանաւանդ երբոր կործանեց կուռքերը աղօթքով՝ շատ անհաւատներ հաւատքի եկան ու Քրիստոսի ճշմարտութիւնը կը քարոզէին ամենուն աղաղակելով . “ Մեծ է Աստուածն քրիստոնէից „ ։ Կռապաշտները շատ բանէն ետև տեսան՝ որ խայտառակ եղան մնացին , մինչև թագուհին ալ քրիստոնեայ և վկայուհի եղաւ . ուստի թագաւորը վճիռ հանեց գլխատելու զսուրբ Գէորգ նշանաւոր վկայն Քրիստոսի յամի 303 , ուր եղան մեծ հրաշքներ թէ առաջ և թէ յետոյ . նաև ամէն քրիստոնէից պաշտելի և տօնելի եղաւ ։

Այսպէս քաջայաղթ նահատակք Փրկչին
Երկնաձիր շնորհօք ամբարձան յերկին .
Կոխեցին զաշխարհ զմեծութիւն փառաց ,
Ընկալան 'ի Տեառնէ զպսակ պարծանաց ։

Անճառահրաշ ձիր յաղթանակ մարտի
Սակս առաքինեաց պատրաստեալ պահի.
Որչափ գերապանծ առաքինացին,
Այնչափ լուսափայլ փառօք պճնեցին:

ԳԷՈՐԳ կաթուղիկոս Հայոց Գառնեցի, նստաւ յաթոռ 'ի 876ին, և մեծապէս աշխատեցաւ ազգին լաւութեանը համար: Աշոտ Ա. Բագրատունին օծեց թագաւոր 'ի 885ին, և անոր մահուանէն ետև 'ի 890ին, օծեց որդին Սմբատ Ա. արքայն: Յետոյ երբոր Ափշին ոստիկանը ելաւ Սմբատին վրա, գնաց անոր կաթուղիկոսն յորդորեց՝ որ հաշտուի. բայց բռնաւորը բռնեց՝ երկաթը զարկաւ զհայրապետը. երկու ամիսէն ետև երբ յաղթուեցաւ Սմբատէն՝ արձակեց զնա շատ գանձ առնելով: Իսկ երբոր նախարարները Թագաւորէն երես դարձուցին, Ափշին զօրանալով՝ սկսաւ աւերել զՀայաստան, կաթուղիկոսը փախաւ՝ գնաց Վասպուրական աշխարհը նստաւ. և 'ի 896ին վախճանեցաւ, քսանըմէկ տարի կաթուղիկոսութիւն ընելէն ետև, զոր թաղեցին 'ի Ձորոյ վանքը, ուր պահած էր Լուսաւորչայ գաւազանը, և պատարագին շարժական սեղանը, որ հետը կը պտըտցընէր սուրբ Գրիգոր հայրն մեր քարոզութեան ժամանակը:

ԳԷՈՐԳ Ակեացի և Խոսրով Գաբեղեան էին քաջ իշխանք նախարարազարմք, որոնք անօրէն Բուղայ ոստիկանին ձեռքէն շատ նեղութիւն քաշելէն ետև՝ սրով նահատակեցան հաւատքի համար 'ի 953: Այս քաջ նահատակներուն համբերութ՟իը զարմացուց Այլազգները, մինչ զի անոնցմէ մէկը սկսաւ աղաղակել, թէ

Ես քրիստոնեայ եմ. ուստի ան ալ գլխատեցին, ու իրեքին վրան ալ լոյս իջաւ, և փառաւորեցան երանելիները սուրբ հաւատքին լուսովը ։

ԳԷՈՐԳ անապատական Լիմէացի, 'ի Ը. դարուն, կը ձգնէր յՕլիմպոս լեռը սքանչելի առաքինութեամբ մանկութենէն մինչև 'ի ծերութիւն ։ Ապա աստուածային նախանձով վառած իջաւ լեռնէն, ու գնաց յանդիմանեց պատկերամարտ Լևոն Իսաւրացի կայսեր չարութիւնը, բայց անօրէնը բանտարկելով կը նեղէր սուրբն՝ որ գրով մերժէ սուրբ պատկերքները ։ Իսկ նա երբոր սկսաւ անարգել կայսեր խօսքը և պատկերքները ջատագովել, տանջելով՝ սուրբին գլուխն այրել տուաւ. ապա քիթը կտրեց, ու անարգութեամբ աքսորեց զերանելին, ուր գոհանալով՝ կատարեցաւ սրբութեամբ իննուսուն տարւան ։

ԳԷՏ. Տ. ՄՀՈՒԿ ։

ԳԻՒՏ կաթողիկոս Հայոց, էր աստուածիմաստ աշակերտ սրբոց Թարգմանչաց Սահակայ և Մեսրոպայ, որ 'ի 465 յաջորդեց յաթոռ սուրբ Լուսաւորչին, և ջանահնար եղաւ անդադար քարոզութեամբ դարձընելու ժամանակով Պարսից աղանդոյն մոլորեալները, որոնցմէ մէկը չարախօսելով Պերոզ արքային, տանել տուաւ զերանելին 'ի Պարսկաստան. ուր շատ նեղութեամբ ստիպեց Թագաւորն՝ որ դառնայ կրակապաշտ ըլլայ ։ Իսկ հայրապետը մեծ քաջութեամբ մերժելով անոր խօսքն՝ ընկաւ կաթողիկոսութենէ, և մեծաւ ուրախութեամբ ետ դարձաւ, որ վան

Ճշմարտութեան հալածուեցաւ ։ Բայց քիչ մը ժամանակ Տիբոն նստաւ, և հոն հրաշքով բժշկութիւններ ըրաւ՝ ու մեծապէս պատուեցաւ հեթանոսներէն. նաև զօրացընելով քրիստոնեաները, և ձեռնագրելով իրենց եպիսկոպոսներ և քահանաներ, զարդարեց եկեղեցիները հանդերձ ամենայն բարեկարգութեամբ ։ Յետոյ դարձաւ ՚ի Հայաստան, մեծապէս մխիթարեց ազգը, և նոյն առաքինութեամբ և սրբութեամբ փոխեցաւ առ Աստուած ՚ի 476 ։

ԳՂԵՐԻԿԷ կոյս Հռոմայեցի, Անտոնինոսի ժամանակը յայտնեց իրեն քրիստոնէութիւնը՝ երբոր Սաբինոս դատաւորը կը զոհէր կռոց, ու կը նեղէր զկոյսն՝ որպէս զի մասնակից ըլլայ պիղծ զոհին. այլ նա աղօթքով կործանեց Դիոսին արձանը ։ Անոր համար տանջեցին անմեղ կոյսը, և ծեծելով ձգեցին բանտին մէջ. ուր հրեշտակ Տեառն կերպարելով կը մխիթարէր զինքն ։ Յետոյ տարին ՚ի Հերակլիա, ու կրակը ձգեցին. բայց անձրևով մարեցաւ կրակը. յետոյ քերթեցին գլխուն մորթը և կապանքով բանտը դրին. ուր հրաշքով վէրքերը ողջացան և շղթաները քակուեցան. զայն տեսնելով Լաւոդիկոս բանտապետն՝ հաւատաց Քրիստոսի, ու նահատակեցաւ ։ Իսկ սրբուհի կոյսն երբոր ձգեցին գազաններուն առջևը՝ գոհանալով կ՚աղօթէր. և երբ գազանին մէկն որ խածաւ զինքն, մէկէն աւանդեց հոգին ուրախութեամբ ։ Դոմետիանոս եպիսկոպոսը առաւ մարմինը, ամփոփեց պատուով ՚ի Հերակլիա, զոր տօնեցին քրիստոնեայք ։

Անհասանելոյն նըշան սխրալի
Ի տկարս յաւէտ պանծացեալ փայլի ·
Կոյս մատաղ անյաղթ իբրև ախոյեան
Խորտակէ ըզհզօրս վերին զօրութեամբ ։
Գործ շնորհաց է այս վերնական բազկի
Յաղթել բռնութեանց ուժոյ աշխարհի ·
Թէպէտ քաջանան կորովի մարտիկք
Վանէ կոյս մանուկ մի երկնատենչիկ ։

ԳՈՆՏՈՓՐԵԴՈՍ կամ ԿՈՆԴՈՊՐԷ Պույլեօն էր Ա. Թագաւոր Երուսաղէմի Ֆլանտրացի , որ առաջ ըլլալով սպարապետ Հենրիկոսի Դ. կայսեր՝ երբոր մեծամեծ քաջագործութք անունը հռչակեցաւ , ընտրեցին զինքը խաչակիր բանակին հարիւր հազար ձիաւորներու և հինգհարիւր հազար հետևակ զօրաց , որոնք ՚ի 1096 ելան գնացին արևելք Երուսաղէմը առնելու · քաջ զօրավարին հետն էին շատ աբեղաներ , և իւր երկու եղբարքը Բաղդովինոս , Եւստաքէոս · որ նախ յաղթելով Սելճուգեաց՝ մտաւ յԱնտիոք · անկէց ելաւ Պաղեստին , և ՚ի 1099 առաւ Երուսաղէմ ։ Որ մազեղէններ հագաւ , ու բոպիկ քալելով՝ գնաց ջերմեռանդութեամբ յերկրպագութիւն սուրբ Գերեզմանին Յիսուսի · և ութը օրէն ետև ընտրեցին զինքը Թագաւոր Երուսաղէմի , բայց նա զինքն կ՚անուանէր խնամակալ սուրբ Գերեզմանին ։ Երբոր զօրքը ստիպեց՝ որ Թագով պսակուի , նա Թագադրութեան հանդիսին մէջ ոսկի պսակին տեղը փշէ պսակ դրաւ գլուխը ՚ի պատիւ Փրկչին ։ Այս բարեպաշտ Թագաւորը անհաւատներուն մեծ քաջութեամբ յաղթելէն ետքը՝ սկսաւ գեղեցիկ բարեկարգել երկիրը ամենայն կերպով · հաստատեց աթոռ պատրիարգութեան , կանգնեց փառաւոր եկեղեցի Սողոմոնեան տաճարին տեղը, և ուրիշ եկեղեցի սուրբ Գերեզմանին վրայ. հանեց լաւ օրէնքներ ժողովուրդին և Թագաւորութեանը օգտին համար ամենայն արդարութեամբ: Երբոր ամէնքը կը յուսային երկայն ատեն տեսնելու այս բարեպաշտ Թագաւորին առաքինի քաջագործութիւնները՝ մէկ տարիէն մեռաւ, և բոլոր աշխարհ լացուց, որուն յաջորդեց իւր եղբայրը Բաղդուինոս Ա. այս տէրութիւնը մնաց Եւրոպացւոց ձեռքը միայն ութսունըինը տարի:

ԳՈՐԴԻՈՍ հարիւրապետ էր Կապադովկացի պատուական քաջ պատերազմող Գիոկղետիանոսին, որուն չարութիւնները տեսնելով քրիստոնէից դէմ՝ ձգեց պատուաւոր պաշտօնն, ու առանձնացաւ անապատը. երկար ժամանակ ճգնեցաւ խստակրօն առաքինութեամբ: Սակայն երբոր հալածանքը նորոգեցաւ Լիկինոսին օրը, Գորդիոս աստուածային ազդմամբ դարձաւ անապատէն 'ի Կեսարիա, և հեթանոսաց տօնին օրը յայտնեց իր քրիստոնէութիւնը բազմութեան առջև. և դատաւորին դիմացն ելաւ՝ համարձակ քարոզեց զճշմարտութիւն հաւատոյ: Ուստի սոսկալի տանջեցին սուրբ վկայն քերթելով, և անիւի մէջ խորտակեցին ոսկորները. բայց անիւն կոտրտելով սուրբը կենդանի մնաց: Ապա կրակ վառեցին որ ողջ ողջ այրեն. իսկ նա ուրախութ՟բ վազեց մտաւ կրակին մէջ, ու ջերմեռանդ աղօթքով աւանդեց հոգին: Մարմինը անարատ մնալով՝ բոցը կամարաձև եղաւ վրան, ու գիշերանց վերուցին պահեցին. յետոյ սուրբն Բարսեղ փոխադրեց իւր շինած տաճարը սուրբ

Գորդիոսի անուամբը, և գեղեցիկ ճառով գովեստ խօսեցաւ վրան. իսկ վարքը գրողն ալ ականատես կը վկայէ, թէ "Տեսաք զհոգի նորա զի իբրև զփայլակն վերացաւ յերկինս":

Բարեպաշտութիւն զոյգ ընդ քաջութեան
Գործէ գերապանծ գործ դիւցազնական,
Որով քաջանուն պետք տիեզերաց
Զօրացան առին զբանակս օտարաց:
Թէ տենչաս տիրել անկորուստ փառաց
Լե՛ր աստուածասէր առաքինապանծ.
Ահա Գորդիոս քեզ քաջ օրինակ
Արութեամբ զերկնից վերբերողն ըղթագ:

ԳՈՒԻՏՈՆ Լուսինեան՝ էր Գաղղիացի վերջին թագաւոր Երուսաղէմի, որ կոմս էր Յաֆաի, և եղաւ թագաւոր Երուսաղէմի 'ի 1185: Բայց երկու տարիէն ետև Սալադին սուլդանն գնաց առաւ Պաղեստին. Գուիտոն իր տէրութիւնը տուաւ Ռիքարտոսի արքային Անգղիոյ, ու անկէ առաւ Կիպրոս կղզին, պահելով անունը՝ թագաւոր Երուսաղէմի, և մեռաւ 'ի 1194: Նոր յաջորդներն ալ նոյնպէս անուանեցան շարունակ մինչև 'ի 1473:

ԳՈՒԻՏՈՆ կամ ԳՒԻՏՈՆ էր թագաւոր Հայոց 'ի Կիլիկիա, որդի Ամալրիկոսի լատին դքսին Տիւրոսի և Զամբլունայ դստեր Լևոնի Գ. արքային Հայոց: Սորա մօրքոյրը Մարիամ կայսրուհին զինքը դրաւ իշխան Աքայիոյ, զոր 'ի 1343ին դրին թագաւոր Հայոց 'ի Սիս քաղաքի. բայց ատելի եղաւ ազգին. վասն զի փոխել կ'ուզէր Հայոց եկեղեցական ծէսերը, և Լատինի ծէս խօթել. ասով մէջերնին մտաւ մեծ անմիաբանութիւն, և շատ տկարացաւ տէրութիւնն ու ոտնակոխ եղաւ Այլազգիներուն․ մինչ զի իշխաններն եկան վրան սպաննեցին երկու տարի թագաւորելէն ետև 'ի 1345։

Այս տունկ թունաբեր պատճառ կործանման
Անբաւ աղէտից ազգին Թորգոմեան․
Որչափ միութեամբ քաջ հանդիսացաւ,
Նոյնչափ բաժանմամբ կորակոր անկաւ։
Անմիտ թագաւոր կորուստ է ազգին,
Ում չէ փոյթ բառնալ ըզթոյն կորուսչին․
Օ խո՞րդ կայցէ տուն և գահ 'ի կայի
Յորժամ 'ի խորոց հիմըն տատանի։

ԳՈՒԼԻԵԼՄՈՍ Տիեզերակալ անուամբ՝ էր թագաւոր Անգղիոյ բազմայաղթ և հզօր ԺԱ դարուն, որ ազգակից ըլլալով սըրոյն Եդուարդայ՝ երբոր մեռաւ, ժառանգեց թագաւորութիւնը 'ի 1065։ Այս օգնութեամբ արքային Գաղղիոյ յաղթեց քաջութեամբ թշնամիներուն, գնաց Լոնտրայի վրան․ իշխանները դողալով տարին իրեն մայրաքաղաքին բանալիները հնազանդութիւն խոստանալով։ Իսկ նա փութով սկսաւ բարեկարգել տէրութիւնը և քաղաքը պիտանի օրէնքներով, և գեղեցիկ ծաղկեցուց դպրոցները, արուեստներն ու վաճառականութիւնը․ նաև հնազանդեցուց զարքայն Սկովտիոյ․ և 'ի 1078 կանգնեց զաշտարակն Լոնտրայի, ամրոցներ շինելով զօրացուց քաղաքը և զարդարեց շինութեամբ։ Յետոյ տկարութիւն ունենալով գիրութեանը պատճառաւ՝ գնաց Նորմանտիա իր քաղաքը վան առողջութեան․ ուր Փիլիպպոս արքայն Գաղղիոյ ծաղր ընելով ղրկեց հարցուց Գուլիելմոսին , թէ Այդ յղութեան ցաւէդ երբ պիտի ազատիս ։ Սոր վրա խիստ նեղանալով պատասխան տուաւ ․ Ինչ մը ատենէն երբոր դուրս ելլեմ տնէս պիտի գամ քառասունքուելու կամ օրհնուելու Թագաւորական տաճարին մէջ տասը հազար կերոնաձև նիզակով ։

Եւ այսպէս ելաւ Փիլիպպոսին դէմ, և քաջութեամբ հասաւ Փարիզու դուռն ու զամէնքը դողացուց ։ Այս յաղթութեանս մէջ մեծ ձախորդութիւն պատահեցաւ Գուլիելմոսի , որ ձիով խրամէն ցաթկելու ատենը գետինն ընկաւ ու վնասուեցաւ ․ մինչև մեռաւ վաթսուն տարուան 'ի 1087 ։ Անգղիացւոց վրա քսանըմէկ տարի թագաւորեց ․ և միշտ խնամակալ եղաւ կրօնի և գիտութեանց , շատ վանքեր ալ շինեց ու ծաղկեցուց աբեղաներով ․ որուն յաջորդեց երկրորդ որդին Գուլիելմոս ։

ԳՈՒՍԱՆՔ կամ ՄՈՒԶԱՅՔ՝ են ըստ հեթանոսաց չաստուածք գիտութեանց և արուեստից , նաև ըստ առասպելաց դատերք Դիոսի , զոր Հոմերոս կը դնէ ինն թուով յաւերժահարսունք կոյսք և առանձնականք , ցուցանելով թէ առանց բարեկարգութեան և զգաստութեան ոչ գիտութիւն կ՚ըլլայ և ոչ հանճար ։ Առաջինն կը կոչէին Կալլիոպէ իշխող դիւցազնական բանաստեղծութեց ․ բ Կղիով իշխող պատմութե ․ գ Երատոն՝ սիրատարփական երգերու ․ դ Թալիա՝ կատակերգութեանց ․ ե Մելպոմենէ՝ եղերերգութեց ․ զ Տերպսիքորէ՝ կաքաւուց ․ է Եւտերպէ՝ նուագարանաց ․ ը Պոլիմնիա՝ տաղերգութեանց ․ թ Ուրանիա՝ աստղաբաշխութեան և հռետորութեան ։ Աս ձևացընէին զասոնք գեղեցիկ կուսանք գլուխնին ծաղկապսակով, որոնց նուիրած էին արմաւենի, դաբնի, աղբերակունք, և այլն. իսկ ամենուն գլուխ և աստուածն էր Ապողոն։ Նաև կը նկարէին զանոնք իրարու ձեռք բռնած պարող, ցուցանելով թէ ուսումնական գիտութիւնք պէտք է իրարու հետ կապակցեալ ըլլան։

ԳՈՒՐԳԷՆ Խաչիկ Արծրունի՝ էր առաքինասէր արքայ Անձևացեաց, որդի Աբուսահլի Համազասպայ արքային Վասպուրական աշխարհի, որ մեռնելէն ետև իրեք որդիքն ալ թագաւորեցին քաջութեամբ և բարեպաշտութեամբ։ Գուրգէն յաջորդ նստաւ հօրը, Աշոտ Սահակ երեց եղբայրը թագաւորեց Վան քաղաքին, իսկ Սենեքերիմ Յովհաննէս փոքր եղբայրը տիրեց Ռշտունեաց 'ի 972։ Սոքա շնորհալից եղբայրսիրութեամբ այնպէս զօրացան և բարեկարգեցին իրենց տէրութիւն, որ ազգը բարեբաղդ եղաւ. ինչպէս որ կը վկայէ ժամանակակից սուրբ Գրիգոր Նարեկացին. «Թագաւորեալք և փառաւորեալք 'ի մի ամանակի արք բարիք և աստուածասէրք, խոհեմութեամբ հանճարոյ առաւելեալք. և ըստ պատահման դիմաց պատկերի անսման երեսի՝ յաւէտ ցանկալիք. իսկ 'ի սէր սրբոց, 'ի պատիւ ընտրելոց, 'ի յարգումն հեզոց, յընդունելութիւն ուղղոց, 'ի զարդ եկեղեցեաց, 'ի պայծառութիւն սրբութեան տեղեաց և քրիստոսեան նշանաց, 'ի սպաս մարտիրոսաց՝ անկշիռք և անզուգականք»։

Անոնց օրն եղաւ փոխադրութիւն խաչին Ապարանից, և Գուրգէնին խնդիրքովը գրեց սուրբ Գրիգոր Նարեկացին Երգոց երգոյն մեկնութիւնը ։ Գուրգէն յետ խոհեմ քաջագործութեանց վախճանեցաւ խաղաղութեամբ և բարեպաշտութեամբ յամի 1003 . և թողուց իրեք որդիք՝ Դերենիկ , Գագիկ , և Աշոտ , որոնք տղայ ըլլալով՝ Սենեքերիմ եղբայրը կը կառավարէր զբոլոր թագաւորութիւնը ։

ԳՐԱՏԻԱՆՈՍ առաքինափայլ կայսրն Հռոմայեցւոց՝ էր որդի Վաղենտիանոսի Ա. որուն յաջորդեց տասնըվեց՝ տարուան յամի Տեառն 375 , և քաջակորով մեծագործութեամբ փառաւորեց սուրբ հաւատքը ։ Սա զի խափանեց կռապաշտութիւնը՝ կործանելով յաղթութեան կուռքն , որ Յուլիանոս նորէն կանգներ էր , ընջեց ամէն հեթանոսական պաշտօնները՝ և հալածական ըրաւ հերետիկոսները . զՄեծն Թէոդոս ըրաւ իրեն օգնական և գահակից արևելեան կողման . ինքն նստաւ 'ի Հռոմ ու բոլոր արևմտեան աւազակները կորոյս անպարտելի քաջութեամբ ։

Յառաջ կայսերք կ'անուանէին նաև Քահանայապետ . այս անունը վերցուց վրայէն , և կրօնասիրութեամբ ծաղկեցուց եկեղեցին՝ խնամելով գիտուններն ու հոգևորականներն . որ սովին ատենը կռապաշտները կատղելով կ'ըսէին թէ Գրատիանոսի մեղաց համար չաստուածները պատիժ տուին սովը ։ Իսկոյն Մաքսիմոս սպարապետը ծածուկ կռապաշտ ըլլալով խոստացաւ զօրքին , որ նորոգէ հեթանոսութիւնը թէ որ զինքը կայսր ընեն . և ասանկով ապըստամբեցաւ կայսեր դէմ . իսկ նա մէկէն ելաւ թշնամիներուն դէմ , բայց զօրքն անմիաբան ըլլալով մատնուեցաւ ու սպանուեցաւ ապըստամբներէն քսանըչորս տարուան յամի 383 ։

Սուրբն Ամբրոսիոս դառն արտասուօք լացաւ գերեզմանին վրան, ու վկայից կարգը դասեց. որուն բարեխօսութեամբը մեծն Թէոդոս սիրելի եղաւ սրբոց և ամենուն, մինչև յաջորդեց կայսերութեանը։ Տես 'ի կարգին։

Դիւցազուն կայսերք բարեզարդ իշխանք
 Առաքինափայլ գործովք պերճացան.
 Սրովք քաջացեալ պետք տիեզերաց
 Յաղթեցին առին զբանակս օտարաց։
Թէ տիրել բաղձաս գահին երկնապանծ,
 Սևեռ 'ի սրտի զբոյն աստուածաքանչ.
 Աստ երկնաձեմից երկոքումբք Թևօք
 Աստ և յապագայն բարձրասցիս փառօք։

ԳՐԻԳՈՐ Սքանչելագործ, էր զաւակ Պոնտացի հեթանոսի 'ի Գ դարուն, որ մանկութենէն շատ ուսումնասէր և սրբասէր ըլլալով, լաւ կրթուեցաւ մեծիմաստ Որոգինէսին ձեռքին տակ 'ի Կեսարիա, և լուսաւորեալ մկրտեցաւ։ Իսկ սրբութեան և իմաստութեան համբաւը՝ զինքն արժանի ըրաւ եպիսկոպոսութեան Նէոկեսարիոյ իւր հայրենեացն. ուր այնպէս ծաղկեցուց քրիստոնէութիւնն, մինչ զի տեսլեամբ երևցաւ իրեն սուրբ Աստուածածինն, և Յովհաննու աւետարանչին ձեռօքը տուաւ իրեն ուղղափառ հաւատքին սահմանը. որով դարձուց 'ի Քրիստոս քաղաքացիներն ու շատ հեթանոսներ մեծամեծ հրաշագործութեամբ, մինչև մականուանեցաւ Սքանչելագործ. ուստի առաջ որ քաղաքին մէջ տասնըեօթը միայն քրիստոնեայ կային, յետոյ այնչափ միայն հեթանոս մնացին։ Նա այսպիսի սքանչելի սրբութեամբ և խորին ծերութեամբ փոխեցաւ առ

Տէր 'ի 270, և տօնեցաւ յիշատակը ։ Սուրբ Գրիգոր՝ Նիւսացին գրեց սորա վարքը և հրաշքները, որ և շատ պատուական գրուածքներով ծաղկեցուց սուրբ եկեղեցին ։ Գլխաւորներն են՝ ա՛ Բան հաւատոյ, զոր Յովհաննէս աւետարանչէն սորվեցայ կ՚ըսէր ․ բ՛ Ճառ գովեստից Որոգինէսին վրայ ․ գ՛ Մեկնութ̅ի ժողովողին ․ դ՛ Թուղթք ընդհանրական վասն ապաշխարութեանց և Գետնատարած աղօթք այլովքն հանդերձ ․ որոնք տպագրեցան 'ի 1521, և պիտանի են գովութեամբ միշտ ։

ԳՐԻԳՈՐ Լուսաւորիչ աստուածաշնորհ հայրապետն մեր՝ էր որդի Անակայ, Արշակունի թագաւորաց ցեղէն, ծնեալ 'ի Վաղարշապատ յամի 357, որուն սնուցիչ եղաւ Սոփիա քրիստոնեայ բարեպաշտ կինն որ երբոր Անակին ցեղը սրէ անցուցին փախուց զմանուկն 'ի Կեսարիա և հոն մկրտել տուաւ ու կոչեցաւ Գրիգոր, սնեալ իմաստութեամբ և առաքինութեամբ մինչև հասաւ կատարելութեան հասակը և ապա ամուսնացեալ ունեցաւ երկու զաւակ Վրթանէս և Արիստակէս ։ Յետոյ բաժնուեցաւ սրբասէր կողակից Մարիամէն, որ մէկ տարւան Արիստակէս որդին առաւ ու կուսանաց վանքը մտաւ ․ իսկ ինքն գնաց առ Տրդատ, որուն հայրը զԽոսրով արքայն սպաններ էր Անակ իւր հայրն ․ որպէս զի հօրը պարտքը լեցընէ ծառայելով որդւոյն ։ Գրիգոր մնաց Տրդատին քով մինչև որ թագաւոր եղաւ նա, ու Հռոմէն ելան եկան Հայաստան, և երբոր Տրդատ հրամայեց Գրիգորին՝ որ Անահիտ կուռքին գլուխը ծաղկէ պսակ դնէ 'ի շնորհակալութիւն, սուրբը մէկէն հրաժարելով յայտնեց իւր քրիստոնէութիւնը համարձակ քարոզելով զՔրիստոս ։ Ուստի արքայն սկսաւ չարաչար տանջել զերանելին տասնըչորս կերպ տանջանքով. երբոր այս սոսկալի տանջանքներէն հրաշքով ողջմնաց Լուսաւորիչ՝ ձգել տուաւ զան խոր վիրապին մէջ. ուսկից տասնըհինգ տարիէն ետև Խոսրովիդուխտ Թագաւորին քոյրը հանել տուաւ աստուածային տեսիլքով, որ ելաւ լուսաւորեց զարմանալի հրաշքներով զբոլոր Հայաստան և բժշկեց զՏրդատ և ամէն դիւահարները. ամփոփելով Հռիփսիմեան կուսանաց սուրբ նշխարքները, և վաթսուն օր քարոզելով սուրբ հաւատքը սորվեցուց անոնց աստուածպաշտութիւնը ։ Յետոյ Թագաւորին խնդրելովը գնաց 'ի Կեսարիա, որ է Գայսերի, ձեռնադրեցաւ եպիսկոպոս Ղևոնդ հայրապետէն ու դարձաւ 'ի Հայաստան 'ի 302, և մկըրտեց Թագաւորն ու ժողովուրդը. քանդեց բոլոր կռատուններն ու անոնց տեղը վանքեր և եկեղեցիներ շինեց. նաև իրեք վկայարան ալ սուրբ Հռիփսիմեանց անուամբ շինեց որ մինչև հիմա կանգուն են Էջմիածին ։ Ապա 'ի 318ին ձեռնադրեց եպիսկոպոս Արիստակէսը, ու Տրդատին հետ միատեղ գնացին Հռոմ ողջունելու զսուրբ Սեղբեստրոս և մեծն Կոստանդիանոս, ուր մեծ պատուով պատրիարգ կամ Կաթուղիկոս Հայաստանեայց անուանեցաւ. իսկ դառնալէն ետև 'ի 325 ղրկեց զԱրիստակէս 'ի սուրբ ժողովն՝ Նիկիոյ, որ երբոր բերաւ իրեն ժողովքին սահմանադրութիւնը և հաւատամքը՝ ասաց. “ Իսկ մեք փառաւորեսցուք ,, և այլն ։ Ապա 'ի 331 դրաւ զԱրիստակէս իր աթոռն ու առանձնացաւ 'ի Սեպուհ լեռը կը ճգնէր Մանեայ այրին մէջ հրեշտակային սրբութեամբ մինչև փոխեցաւ փառօք յերկինս իբրև կենդանի նահատակ. իսկ սուրբ մարմինը ժամանակէն ետև յայտնեցաւ հրաշքով և ամէն տեղ պատուեցաւ. նաև տօնեցաւ 'ի Հռոմ և 'ի Նափոլի 'ի 30 սեպտ. ուր պատուով պահած է պատուական գլուխը և ութ օր կը տօնեն ։

Աստուածահրաշ լոյս շնորհաց երկնային
Ծագեաց 'ի գրկոյ մեր Լուսաւորչին.
Մերժեալ զդիւաշունչ մոլութեանց խաւար՝
Ծաղկեցոյց զհաւատս և սէր սրբարար ։
Դու խաւարածին մոլեալդ Հայաստան
Բանիւ պերճացար 'ի լոյս տունջեան.
Լեր ջերմ շնորհակալ Հօրըն հաւատոյ
Որ արեամբ գնեցար որդի Բարձրելոյ ։

ԳՐԻԳՈՐ Աստուածաբան՝ էր Նազիանզացի սուրբ հայրապետ գերիմաստ և վարդապետ եկեղեցւոյ, որ մնաւ առաքինափայլ սրբակաց վարքով, և մեծանուն հանդիսացաւ աստուածային և փիլիսոփայական գիտութեամբ կրթելով Աթենացւոց, Աղեքսանդրիայի, և Կեսարիոյ երևելի ուսումնարաններուն մէջ։ Երբոր դարձաւ հօրը քով, որ էր եպիսկոպոս Նազիանզու՝ Գրիգոր անուամբ՝ հեթանոսութենէ դարձած, ձեռնադրեցաւ հօրմէն քահանայ և եղաւ անոր օգնական ամէն գործքի մէջ. նաև անդադար հոգևոր ընթերցմանց և աստուածախոհ մտածութեանց պարապելով լուսաւորեցաւ իմաստութեամբ ։ Յետոյ գնաց առ սուրբն Բարսեղ Կեսարացի իւր սիրելի ուսումնակից, և երկուքը միաբան կը ճգնէին սքանչելի սրբութեամբ. մինչև Բարսեղ ձեռնադրեցաւ արքեպիսկոպոս Կեսարիայի, ու ձեռնադրեց զԳրիդոր եպիսկոպոս Սասիմայ, որ անդադար կ'երթար ծեր հօրը օգնելու։ Նա հրաւիրեցաւ երթալ 'ի Կոստանդինուպօլիս և զօրացընել ուղղափառները Արիանոսաց և Հոգեմարտից դէմ։ Իւր այնպէս հրաշալի աստուածաբանութեամբ պապանձեցուց հերձուածողներն, որ Թէոդոս կայսրը նստեցուց զԳրիգոր պատրիարգ Կոստանդինուպօլսոյ, և շատ մեծ օգուտ բերաւ սուրբ եկեղեցւոյ և ուղղափառութեան. այլ և Կոստանդինուպօլսոյ սուրբ ժողովքին մէջ իբրև ախոյեան մեծազօր ոչնչացուց աղանդաւորները։ Բայց ժողովքէն ետքը կամակար հրաժարեցաւ աթոռէն նախանձոտներուն պատճառաւը, և գնաց իւր Ճգնարանը հայրենեացը մօտ. ուր սրբութեամբ փոխեցաւ առ Քրիստոս 'ի 389 ամի՝ վաթսուներկու տարւան, և թաղեցաւ 'ի Նազիանզ հօրը քով, որ յետոյ փոխադրեցաւ 'ի Կոստանդինուպօլիս, և ապա 'ի Հռոմ մեծաւ յարգութեամբ հանգուցին տաճարի մը մէջ։ Սուրբ Գրիգոր հրաշալի վարդապետութեամբ և զօրաւոր քարոզութեամբ ոչ միայն շատ հերձուածողներ և անհաւատ մոլորեալներ հաւատքի բերաւ, այլ և գրեց աստուածիմաստ ճառեր, հոգելից գրեանք և ոտանաւորներ քաղցրաբանութեամբ և պայծառ ճոխաբանութեամբ, որոնցմէ մէկ քանին Հայերէն թարգմանեցին մեր հին վարդապետները. ինչպէս է գիրքն "Նա որս". և ճառերը Ծննդեան, Յայտնութեան, Մկրտութեան, Զատկի, Նոր կիւրակէի, Պենտեկոստէի, և այլն։

ԳՐԻԳՈՐ Նիւսացի՝ էր եղբայր մեծին Բարսղի և աշխարհիկ երէց Նիւսա քաղաքին, որ վասն մեծ իմաստութեան և առաքինութե՟ ընտրեցաւ եպիսկոպոս այն քաղաքին ։ Իւր զօրաւոր վարդապետութեամբ այնչափ փայլեցուց ուղղափառութիւնը յաղթահարելով հերձուածողները , մինչև արիոսեան Վաղէս կայսերէն աքսորուեցաւ ։ Բայց շուտով դարձաւ , ու աւելի համարձակ կը զօրացընէր ուղղափառները ․ Կոստանդինուպօլսի ժողովքին մէջ ալ հանդիսացուց իրեն աստուածիմաստ գիտութիւնը Մակեդոնին և ուրիշ հերետիկոսներուն դէմ ։ Շատ սիրելի էր գիտնոց և վարդապետաց հոգեշահ գրուածներովը , որոնցմէ մեր նախնիք Հայերէն դարձուցին շատոնք ․ այսինքն Գիրք յաղագս բնութեան և կազմութեան մարդոյն ․ Մեկնութիւն Երգոց երգոյն , և ինն երանութեանց ․ Ճառ կուսութեան ․ Հատուած մեկնութեան վեցօրէից ․ Ճառք ՚ի թաղումն Տեառն ․ ՚ի սուրբն Ստեփաննոս , ՚ի Յովսէփ Արեմաթացին , ՚ի Թէոդորոս զօրավար , ՚ի սուրբն Գրիգոր Սքանչելագործ ․ ՚ի կատարումն մանկանցն Բեթղեհեմի , և այլն ։ Բայց ինքն նովին սրբութեամբ վախճանեցաւ վաթսունըհինգ տարւան ՚ի 396 ։

ԳՐԻԳՈՐ ՙՆարեկացի՝ էր որդի Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի , ծնեալ յամի 951 , և մնեալ իմաստութեամբ և սրբութեամբ ․ որ աշակերտեալ Անանիա մեծիմաստ առաջնորդին ՙՆարեկայ վանից պայծառացաւ հոգեհանճար գիտութեամբ և աստուածային իմաստութեամբ ։ Մինչ զի նոյն վանքին մէջ աբեղայացեալ , եղաւ վարժապետ կրթելով կրօնաւորները հոգևոր ուսմամբ և գիտութեամբ ։ Ծաղկեալ հասակին մէջ քանի մը տարւան

Գուրգէն արքային խնդիրքովը շարադրեց Երգոց երգոյն մեկնութիւնը համառօտ և վայելուչ ։ Մեծապէս կը ջանար որ ազգը շտկէ և Քաղկեդոնի ժողովքին պատճառաւ եղած տարաձայնութիւնը վերցընէ , անոր համար տգէտները ծուռ նայելով սրբոյն Օայթ կը կոչէին ։ Բայց խայտառակ եղան չարախօսները , որ զինքը փորձելու գնացեր էին ուրբաթ օր մը . և նա կամաւ խորոված աղաւնիներ հանեց անոնց . իսկ նոքա երբոր սկսան գայթակղիլ , սուրբը հրաշքով թռուց աղաւնիները , և ամենուն բերանը փակուեցաւ ։

Անկեց ետև երանելին աստուածային սիրով վառուած մշտամռունչ աղօթքով կը բորբոքէր եռանդագին . մինչև արժանի եղաւ տեսնելու զԱստուածամայրն Յիսուս գիրկը , և լցեալ աստուածային շնորհօք յօրինեց հրաշալի աղօթից գիրքը Նարեկ անուանեալ ։ Նաև գրեց խորին իմաստից հոգելից ճառեր գանձեր և տաղեր . ապա լի արդեամբք փոխեցաւ առ տենչալին Քրիստոս յիսունևերկու տարեան ՚ի 1003 . և թաղեցաւ Նարեկայ վանքը ։

Արթուն պերճ Գրիգոր հրեշտակն ՚ի մարմնի
　Պարծանք Նարեկայ քերթող հրաշալի ,
　Բորբոքմամբ սիրոյ թևանայ յերկին
　Լեալ աստուածավառ իբրև անմարմին ։
Սրտեռանդն հայցուածք զերդ խունկ անուշից
　Բուրեցան ՚ի հոտ արքային երկնից .
　Աստուածխօսութեամբ աստ պերճաբանէ ,
　Տեսլեամբ անճառից անդ գեղապարէ ։

ԳՐԻԳՈՐ Ա . Մեծ սուրբ քահանայապետն Հռոմայ՝ էր իմաստուն և առաքինի որդի պատընկի, որ մատաղ հասակաւ վերակացու եղեր էր քաղաքին Յուստինոս կայսերէն : Բայց շուտով թողուց գնաց սուրբ Անդրէասին վանքը մտաւ, որ ինքն շիներ էր · ուր սուրբ վարքով պայծառ փայլեցաւ, ու Բենեդիկտոս Ա · պապէն ձեռնադրեցաւ սարկաւագ : Յետոյ նուիրակութեամբ գնաց 'ի Կոստանդինուպօլիս և փառաւորապէս կատարեց իր պաշտօնը կայսերաց հետ · երբոր դարձաւ նորէն առանձնացաւ իր վանքը, հրեշտակային վարքով կը հոգար աղքատները · մինչև հրեշտակ Տեառն երևցաւ իրեն աղքատի ձևով ու ողորմութիւն առաւ :

Ապա 'ի 590, Պեղագիոս պապէն ետև օծուեցաւ քահանայապետ յաթոռ սրբոյն Պետրոսի · և բարեկարգելով ընդհանուր եկեղեցին խափանեց հերձուածները, լուսաւորեց Անգղիացիները, և շատ տեղ ծաղկեցուց սուրբ հաւատքը իւր աշկերտներուն քարոզութեամբն : Գրեց աստուածիմաստ ճառեր, մեկնութիւն Սուրբ գրոց, կոնդակներ և նամակներ · թղթերուն սկիզբն կը դնէր “Ծառայ ծառայից Աստուծոյ„ : Գեղեցիկ պայծառացուց արևմտեան եկեղեցին կարգադրութեամբ արարողութեանց, երգոց, և կղերիկոսաց : Գրեց Տրամախօսութիւն ըսուած գիրքն ալ, ուր կը պատմէ շատ սրբոց վարքեր՝ որ Ներսէս Լամբրոնացին թարգմաներ է հայերէն : Որչափ որ մեծ էր իշխանութիւնը և իմաստութիւնը սուրբ Գրիգորին, այնչափ ալ խոնարհ և աղքատ էր վարքը · մինչ զի ժամանակակից սուրբերը տեսան վրան Հոգին սուրբ աղաւնակերպ, երբոր կը շարադրէր հոգևոր գրքերը · ուստի արևմտեան եկեղեցւոյ չորս վարդապետաց մէկը անուանեցաւ ։ Նա այսպիսի սրբութեամբ և իմաստութեամբ փառաւորեալ իւր ծայրագոյն պաշտօնն հանդերձ սքանչելագործութեամբ կատարելով՝ փոխեցաւ առ Քրիստոս 'ի 604, որ ամէն քրիստոնեայ կը յիշատակէ ։

ԳՐԻԳՈՐ Բ. սուրբ հայրապետ Հռոմայ ընտրեցաւ յաջորդ սրբոյն Պետրոսի 'ի 715, որ վասն բարեկարգութեանց իրեք անգամ ժողովք ըրաւ 'ի Հռոմ, և ջանահնար եղաւ պատկերամարտութեան դէմ՝ նզովելով Լևոն կայսրը և մոլորեալ իշխանները ։ Գեղեցիկ սահմանադրութեամբ հաստատեց եկեղեցական կանոններն ու տօներն . իսկ ինքն առաքինի վարքով մեծապանծ եղաւ ։ Կոնդակով և քարոզիչներով ալ շատ անհաւատներ լուսաւորեց . ասոր տասնըհինգ իմաստալից նամակները կան տպած . և ինքն փոխեցաւ առ Տէր խաղաղութեամբ և սրբութեամբ 'ի 731 ամին ։

ԳՐԻԳՈՐ Գ. սուրբ քահանայապետ Հռոմայ՝ էր ազգաւ Ասորի և մեծիմաստ առաքինի, որ 'ի 731 ընտրեցաւ գլուխ ընդհանուր եկեղեցւոյ, և մեծ քաջութեամբ պաշտպան ըլլալով սրբազան պատկերաց նզովեց պատկերամարտ հերետիկոսները, նաև եկեղեցիները պատկերքներով և սրբոց նշխարքներով զարդարեց ։ Զօրաւոր կոնդակներով և վճռով շատ պայծառացուց ուղղափառութիւնը . ինքն ալ դասեցաւ սուրբ վարքով սուրբերուն կարգը . զի 'ի 741 փոխեցաւ առ Քրիստոս ։

ԳՐԻԳՈՐ Դ. էր Հռոմայեցի խոնարհ և գիտուն, զոր իւր կամքին դէմ ընտրեցին պապ 'ի

827, որ մեծ ջանքով փառաւորեց եկեղեցին և դատապարտեց հերձուածող պատկերամարտները : Շատ ջերմեռանդ էր Ամենայն սրբոց, որոնց տօնը սահմանեց որ արևմտեան եկեղեցիք մեծահանդէս 'ի Նոյեմբերի մէկին կատարեն, ինչպէս որ սուրբ Բոնիփակիոս դրեր էր : Իսկ ինքն բարեկարգութեամբ և առաքինութեամբ վախճանեցաւ 'ի 844 :

Հռոմայի սրբոյն Պետրոսի աթոռը նստան Գրիգոր անուամբ տասնըվեց մեծագործ քահանայապետներ, որ զարմանալի առաքինութեամբ վերուցին անկարգութիւնները, ծաղկեցուցին ուսումն բարի վարուց և վայելուչ բարեկարգութեամբ պայծառացուցին ուղղափառ հաւատքը, ինչպէս որ ստորագրեր ենք կարգաւ ամենուն վարքը Սրբազան պատմութեան մէջ :

Ընտրեալ քաջ հովիւք Պետրոսեան հօտին
Զօրացեալք շնորհօք փրկչական մատին՝
Փշրեցին զաղեղն ժպիրհ հալածչաց
Ողջ պահեալ զհաւատ սիոնի մանկանց :
Առաքելաջանք չեղեն անձնասէր
Դիմագրաւ 'ի մահ յԱնմահին նուէր .
Հոգւով և մարմնով անյաղթք 'ի գուպար
Ընդ առաքելոց հրճուին վեհափառ :

ԳՐԻԳՈՐ Վկայասէր սուրբ կաթուղիկոս Հայոց՝ էր որդի Գրիգորի Մագիստրոսին, որ առաջ կ'անուանէր Վահրամ, և ունէր դքսութիւն կայսերէն Յունաց . բայց հրաժարեցաւ այս պատուէն ու մտաւ վանք : Ուր առաւել պայծառացաւ իմաստութեամբ և առաքինութեամբ, մինչև օծեալ կաթուղիկոս կոչեցաւ

Գրիգոր Բ. 'ի 1065. որ մէկէն սկսաւ նորոգել վանքերը և զարդարել եկեղեցիները բարեկարգութեամբ՝ թարգմանելով սրբոց վկայաբանութիւնը 'ի Յոյն և Ասորի լեզուաց գեղեցիկ ոճով և սիրով. ուստի մականուանեցաւ Վկայասէր: Յետոյ ելաւ ոտքով շրջեցաւ Հայաստան քարոզելով և մխիթարելով ժողովուրդը, նաև ձեռնադրելով իրենց հոգեսէր եպիսկոպոսներ և գիտուն վարդապետներ: Ապա գնաց ուխտ յԵրուսաղէմ և 'ի Հռոմ, ուր խօսակցելով ընդ սրբազան պապին Գրիգորի Է. ծանօթացաւ, և ամէն տեղ սիրելի և գովելի եղաւ: Նաև յետոյ գնաց հովուեց Եգիպտոսի ժողովուրդը, և դարձաւ 'ի Հայաստան, նստաւ վանքը՝ պարապելով թարգմանութեանց և հոգեշահ գործոց. ուր մինչև 'ի խոր ծերութիւն միշտ աշխատեցաւ: Ուստի այսպիսի սքանչելի վարքով և սրբութեամբ փոխեցաւ առ Աստուած քառասուն տարի կաթուղիկոսութիւն ընելէն ետև յամի 1105, և թաղեցաւ Կարմիր վանքը:

ԳՐԻԳՈՐ Գ. Պահլաւունի սրբազան կաթուղիկոսն՝ էր եղբայր Շնորհալւոյն՝ անձն փառաւոր և պայծառ առաքինութեամբ և իմաստութեամբ. մինչ զի քսան տարուան կաթուղիկոս օծուեցաւ 'ի 1113: Որ բարեկարգելով աթոռը սկսաւ գրել հոգելից ճառեր, մեկնութիւններ, և թարգմանութիւններով լրացուց սրբոց վկայաբանութիւնը, որ սկսեր էր Գրիգոր Վկայասէրը. կարգաւորելով ճաշոցը հրամայեց որ կարգաւ կարդացուի եկեղեցնայ մէջ: Ուստի պայծառացուց սրբոց տօները, և ձևացաւ ճառընտիր գիրքը այս երանելեաց աշխստասիրութեամբն, մինչ զի կոչեցաւ երկրորդ Վկայասէր: Յօրինեց զիմաստալից քաղցր շարականները՝ Խորհուրդ անճառ, և Մեծահրաշ. նաև գիտնական վարդապետները պարտաւորեց ու գրել տուաւ մեկնութիւններ, և այլն: Դաւիթ արքեպիսկոպոսն Աղթամարայ գլուխ քաշելով կաթուղիկոսէն հինգ եպիսկոպոսով ձեռնադրեցաւ կաթուղիկոս, պատճառելով թէ հոն է Լուսաւորչայ սուրբ Աջը, քողը, գաւազանը, և գօտին մաշկեղէն. նաև դաստառակը և սուրբ Հռիփսիմեայ հողաթափը, և այլն:

Ասոր համար մեծ ժողով ըրաւ Գրիգոր կաթուղիկոս երկուհազար հինգ հարիւր եպիսկոպոսաց և վարդապետաց. ուր նզովեցին զԴաւիթ խորհրդակիցներովը յամի 1114: Քանի մը տարիէն ետև գողցան անկեց Լուսաւորչայ աջը, քօղն ու գաւազանը և բերին Գրիգոր կաթուղիկոսին, որ կը նստէր իւր Ծովք բերդը. և հոն ձեռնադրեց իր եղբայրը Ներսէս Շնորհալին քահանայ, նաև յետոյ եպիսկոպոս օծեց ու նուիրակութեան ղրկեց որ քարոզութեամբ լուսաւորէ ազգը, և ծաղկեցընէ դպրոցները: Իննովկենտիոս Բ. սրբազան պապն լսելով շատ գովեստներ կաթուղիկոսին վրայ՝ ղրկեց իրեն գաւազան և քող հայրապետական սիրալիր թղթով. և կաթուղիկոսը գրեց պատասխան շնորհակալութեամբ և հպատակութեամբ, և այլն: Հռոմկլայ բերդը այն ատենը Լատինացւոց ձեռքն ըլլալով Գրիգոր կաթուղիկոսը գնեց, ու կաթուղիկոսարանը հոն փոխադրեց ապահովութեան համար. ուր կանգնեց հոյակապ եկեղեցի: Եւ երկար ժամանակ մնաց հոն կաթուղիկոսարանը. իսկ ծերութեան ատենը գումարեց մեծ ժողով և հոն ձեռնադրեց իրեն տեղը կաթողիկոս զՇնորհալին անոր կամացը դէմ: Ապա իրեք ամիսէն ետքը սրբափայլ վարքով և լի առաքինի արդեամբք փոխեցաւ առ Քրիստոս եօթանասունուիրեք տարուան յամի 1165. և թաղեցաւ փառօք ՚ի Հռոմկլայ, յիսունուիրեք տարի հայրապետութիւն ընելէն ետև. որուն յիշատակը մնաց անմահ:

ԳՐԻԳՈՐ Դ. Տղայ մականուամբ՝ էր եղբօրորդի և յաջորդ Շնորհալւոյն, զօրաւոր ճարտարաբանութեամբ և գործքով, ազգասէր և գիտուն: Սա երբոր գնաց Շնորհալւոյն թաղմանը, եպիսկոպոսները զինքն ընտրեցին կաթողիկոս ՚ի 1173, որ մէկէն սահմանեց զի տարուէ տարի Շնորհալիին տօնը կատարուի: Ապա գեղեցիկ գլուխ տարաւ Յունաց հետ միաբանութեան ժողովը, ինչպէս որ սկսեր էր Շնորհալին. որով շատ բարեկարգութի եղաւ ազգին. ծաղկեցաւ ուսումը և ճշմարիտ դաւանութիւնը գործակցութեամբ սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյն, և եթէ Յունաց կայսրը Միւ Մանուէլ շուտ չմեռնէր՝ ամէն բան կը յաջողէր. ուստի գործքն անկատար մնալով կաթողիկոսը շատ տրտմեցաւ: Ապա գրեց նամակ սիրոյ և հպատակութեան առ սրբազան պապն Հռովմայ Լուկիոս Գ., որ ընծայեց իրեն պատասխանին, նաև թագ հայրապետական, եմիփորոն փառաւոր և պալլիւն. իսկ պապին կոնդակը թարգմանեց Լամբրոնացին: Այս պատճառներով նախանձոտներն սկսան բամբասել զԳրիգոր կաթողիկոսը, որոնց գլուխն էր Գրիգոր Տուտէորդին, տգէտ վարդապետ. զոր պապանձեցուց երանելւոյն ժողովքով և իմաստուն գրով : Ի 1193 վախճանեցաւ Հայրապետը սրբութեամբ վաթսուն տարւան . քսան տարի կաթուղիկոսութիւն ըրաւ , միշտ ազգին համար աշխատելով , իւր և ազգին անունը առաքինութեամբ փառաւորելով . և թաղեցաւ 'ի Հռոմկլայ Հօրեղբօրը քով : Գեղեցիկ հաստատեց և կարգաւորեց եկեղեցական պաշտօնները և երգերը . նաև շինեց Հռոմկլայի մէջ փառաւոր եկեղեցի սուրբ Լուսաւորչայ անուամբ : Իսկ թղթակցութիւններն Յոյն կայսեր և պատրիարգին հետ՝ տպագրեցան 'ի Ռուսաստան և 'ի Վենետիկ , և այլն :

ԳՐԻԳՈՐ Զ. Ապիրատ էր միւս եղբօրորդի Շնորհալւոյն , այր առաքինի և բանիբուն , որ 'ի 1195 նստաւ կաթուղիկոս երբոր Գրիգոր Ե. գահավէժ ընկաւ բերդէն վար , մեռաւ վասն անկարգութեանն : Ուստի Գրիգոր Զ. առջի երանելեաց կարգը բռնելով՝ զօրացուց ժողովուրդը . և օծեց փառօք Լեոն Բ. թագաւորն Հայոց 'ի 1198 , միաբանելով իշխանները , և այլն : Այսպէս բարեսէր քաղաքավարութեամբ փոխեցաւ առ Տէր բարեխնամ Հայրապետն 'ի 1202 : Գրիգորիսեանք անուանեցան այս հինգ իմաստուն Հայրապետներն , որ սուրբ Թարգմանիչներէն ետև եղան պատճառ հոգևոր բարեաց և ծաղկիչ ուսմանց հանդերձ Շնորհալի հայրապետաւ և այլովք :

Ամէն հօտապետք պարծանք Հայկազանց
Ներհուն գերիմաստք պերճ բարենախանձ ,
Ճգնեցան գործել զազգըն բանիբուն ,
Ուսմամբք կրթութք՟ ծաղկել գերաբուն :

Սոքա նորոգիչք կարգաց գիտութեանց,
Շքեղացուցին նըսեմ զազգ իւրեանց.
Ընդ Լուսաւորչին շաւիղս անխոտոր
Ընթացեալք պայծառ և սիրայորդոր ։

ԳՐԻԳՈՐ Մագիստրոս էր գիտնաւոր իշխան Հայոց, խոհեմ իմաստասէր, որդի Վասակայ Նահապետին, սուրբ Լուսաւորչին և սուրբ Սահակին զարմէն ։ Սա թողուց իւր Բջնի բերդն ու բնակեցաւ 'ի Կոստանդնուպօլիս 'ի 1044 . և հոն Հագարացի Մանուչէին հետ վիճելով Կուրանին տաղաչափութեանը վրայ՝ խօսք տուաւ որ իրեք օրուան մէջ բոլոր Աստուածաշունչը Ադամէն սկսեալ մինչև 'ի Քրիստոս ոտանաւոր ոճով համառօտէ ։ Մանուչէ խիստ զարմանալով՝ խոստացաւ որ քրիստոնեայ կ'ըլլայ թէ որ կարենայ ընել ։ Գրիգոր իրեք օրէն ետև կատարեց, և երբոր սկսաւ կարդալ գեղեցիկ առոգանութեամբ, հիացաւ մնաց Մանուչէ, զի լաւ գիտէր Հայերէն . և ապա սկսաւ սորվիլ սուրբ հաւատքը, և լուսաւորեալ մկրտեցաւ 'ի 1049 ։ Նոյնպէս Իբրեհիմ ամիրային հետ թղթակցութեամբ լուծեց դժուար խնդիրները հաւատքի վրայ . որով և ամենուն սիրելի եղաւ իմաստուն գրուածներովը, ոտանաւորներով, և նամակներով ։ Յօրինեց քերականութի̃, և թարգմանեց օգտակար գրեանք, երկրաչափութիւն և այլն ։ Աշակերտներն եղան երևելի հայրապետներ, մէկն ալ էր իր որդին Գրիգոր Վկայասէր ։ Շնորհալին և Լաստիվերտցին մեծապէս կը գովեն զսա . իսկ Յոյն կայսերք պատուեցին զինքը իշխանական անուամբս Մագիստրոս ։ Գրիգոր շքեղ ընծայ ղրկեց Պետրոս կաթուղիկոսին ականազարդ գաւազան , սկիհ ճարտարագործ , մեռոնի աման , և ոտանաւոր գովեստ սուրբ խաչին · և այլն ։ Յամի 1050 հալածեց Թոնդրակեցի Հայոց հերետիկոսները՝ քանդելով իրենց ժողովատեղին · ուր շինեց եկեղեցի յանուն սրբոյն Գէորգայ , և բարեկարգեց Միջագետաց կողմերը՝ միշտ օգնելով ազգին ։ Ապա 'ի 1058 կատարեց առաքինազարդ կեանքը բարի ծերութեամբ , և թողուց չորս որդիք · ու թաղեցաւ Բասենոյ Աստուածածնայ վանքը մօտ յԷրզիրում ։

ԳՐԻԳՈՐ Մամիկոնեան էր պատրիկ , և իշխանապետ Հայոց , հաստատեալ Ամիրապետին կողմանէ 'ի 659 , որ գովելի ազգասիրութեամբ շինեց վանքեր , եկեղեցիներ , և ուրիշ պիտանի շինութեամբ անուանի եղաւ ինքը և ազգը ։ Մինչ զի գնաց իրեն քով Մուրհան պարսիկը , և լուսաւորեալ մկրտեցաւ անուանելով Դաւիթ , որ յետոյ նահատակեալ կոչեցաւ Դաւիթ Դունեցի ։ Ի 683 Գրիգոր քաջութեամբ հալածեց աւազակները , և քսանըչորս տարի առաքինութեամբ կառավարելով իշխանութիւնը և խնամելով ազգը՝ ընկաւ պատերազմի մէջ ։

ԳՐԻԳՈՐ Սկևռացի կամ Լամբրոնացի էր սրբակրօն վարդապետ Սկևռայ վանից , ճարտարաբան և յաջողագիր , որ 'ի 1204 գրեց գեղեցիկ ոճով սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյն գովաբանական վարքը , վայելուչ ճառերն յարութեան Քրիստոսի և փոխման Տիրամօրն · նաև ընտիր շարականը ծննդեան Յովհաննու Մկրտչին ։ Այլ և գրեց Գրիգորի Նարեկացւոյն վարքը , և զանազան մեկնութիւններ Եսայեայ , Եւագրի , և այլն ։

ԳՐԻԳՈՐ Խլաթեցի կամ Ծերենց էր առաջնորդ Սուխարայ վանից 'ի ժԵ դարուն, որ գրած է որբոց վրա շատ գովեստներ, երգեր և գանձեր պարզ ոճով. շատին սկզբնատառերը իր անունը կը կազմեն։ Նաև շարադրեց վերջի նահատակներուն պատմութիւնը, Խրատք ժամակարգութեանց և աւանդապահութեան վրա. մինչև կոչեցաւ յամենից Հռետոր։ Իսկ ծերութեան ժամանակը ութսնամեայ ինքն ալ նահատակեցաւ Բերդերէն յԱրծկէ քաղաքը։ Սորա կարգաւորած Յայսմաւուրքը կը կարդացուի եկեղեցական պաշտամանց մէջ։

ԳՐԻԳՈՐԻՈՍ Պահլաւունի էր մեծ իշխան 'ի զարմէն Արշակունեաց և 'ի փառաւոր ցեղէն սուրբ Լուսաւորչայ սուրբ Սահակին կողմանէ։ Այս զօրաւոր իշխանը առաքինութեամբ քաջ հանդիսացաւ Բագրատունի թագաւորներուն օրը ազգին լաւութեանը համար. ունէր իրեք երևելի իշխանազուն զաւակներ՝ Վահրամ, Վասակ, և Տիգրան. Վասակէն ծնաւ Գրիգոր Մագիստրոս. իսկ ինքն մեռաւ 'ի 982։

ԳՐԻԳՈՐԻՍ սուրբ առաջին կաթուղիկոս Աղուանից՝ էր որդի սուրբ Վրթանիսի, որ վասն առաքինութեան և իմաստութեան Տրդատ թագաւորը ձեռնադրել տուաւ եպիսկոպոսապետ մատաղ հասակաւ, և ղրկեց Աղուանից կուսակալ իշխանին, որպէս զի հաստատէ ժողովուրդը քարոզութեամբ և սուրբ վարքովը։ Իւր զօրաւոր վարդապետութեամբ կը յաղթէր անհաւատները, և կը սաստէր իշխաններն՝ որ ուղղութեան հետևին, ու անիրաւութենէ հեռանալով՝ բարեպաշտ ըլլան ։ Բայց անօրէններն բռնեցին սուրբը ձիու պոչին կապեցին, ու մինչև Կապալից ծովը վարելով նահատակեցին 'ի 342 ։ Սարկաւագները վերուցին սուրբ մարմինը, տարին Ամարաս աւանը թաղեցին մեծաւ պատուով իր շինած եկեղեցւոյն մէջ, որ 'ի 489 հրաշքով յայտնեցաւ Վաչագան Աղուանից արքային օրը․ և տապանին վրայ շինեցին եկեղեցի սուրբ Գրիգորիս անուամբ ։

ԳՐԻԳՈՐԻՍ վկայ, Ռաժիկ կամ Մանաճիրը, էր որդի անհաւատից, որ Խոսրով արքային օրը գալով 'ի Հայաստան բնակեցաւ 'ի Դուին ։ Ուր լուսաւորեալ հաւատաց Քրիստոսի և մկրտուեցաւ․ ապա ջերմեռանդութեամբ վանք մտաւ ու վարեցաւ աստուածսիրութեամբ և եղբայրսիրութեամբ ։ Երբոր Դենշապուհ Պարսիկ մարզպանը Հայաստան գալով լսեց թէ Գրիգորիս մոգութենէ դարձեր քրիստոնեայ և կրօնաւոր եղեր է, բռնեց կը տանջէր՝ որ նորէն դառնայ մոգ անհաւատ ըլլայ․ բայց սուրբը քաջութեամբ յաղթեց բռնաւորին, և զուարթութեամբ նահատակեցաւ 'ի 550․ նաև տօնելի եղաւ սրբութեամբ ։

ԳՐԻԳՈՐԻՍ Արշարունեաց եպիսկոպոսն՝ էր բանիբուն աստուածային գիտութեամբ և առաքինի ուսումնասէր, որ 'ի 684 ձեռնադրեցաւ հովիւ աշխարհին Արշարունեաց, և հայրաբար կը խնամէր ազգը ։ Սա քանի մը վարդապետներով գնաց տեսութեան Վահանայ Կամսարական պատրկին․ իշխանը սեղանին վրայ խօսակցելով երեսին տուաւ թէ ինչո՞ւ չէք լուսաւորէր մեր ազգը գրութեամբ ուսմանց, մեկնութեամբ Սուրբ գրոց, և եկեղեցական պատմութեանց, և այլն ։ Գրիգորիս անկեց յորդորուելով գրեց հմտութ̃ լաւ տեղեկութիւններ եկեղեցական պաշտօններուն վրայ, ու իրեն ընծայեց վայելուչ շարադրութ̃ այսպէս սկսանելով. " Օ՜ հարկ բանից՝ զոր պահանջեցեր յինէն փութապէս յաղագս աստուածային ընթերցուածոցն, ո՜վ Կամսարականդ Սահան պատրիկ, հաստուցի . . . վասն զի այր ես դու մեծ և ողջախոհ մտօք, պսակեալ ծերութեամբ և իմաստութեամբ իբրև թագաւոր յԱստուծոյ 'ի ժամանակիս 'ի միջի մերում". և այլն ։ Իսկ ինքն քսանուինը տարի եպիսկոպոսութիւն ընելէն ետև վախճանեցաւ առաքինի վարքով 'ի 713, և թողուց իրեն անեղծ յիշատակ զայս պիտանի գիրքն, ուր կը մեկնէ տօներուն և ընթերցուածներուն խորհուրդները և կարգը այլովքն հանդերձ ։

Ընտիր րաբունք Արամեան որդւոց
Օրինակ բարեաց ապա եկելոց,
Փայլեալք գերափառ 'ի լոյս գիտութեանց
Առեցին ըղձրագ ազգին խաւարած ։
Երա՜նի կարդայ գիրն աստուածային,
Այց եղէն առիթ բարւոյ ընկերին.
Նաղում երանի՛ և Հայոց երկրին
Ունէ դարձեալ բերցէ զհամանման սոցին ։

Դ․

ԴԱՄԱՍՈՍ՝ էր սուրբ քահանայապետ Հռոմայ Սպանիացի, որ 'ի 367 յաջորդեց սուրբ Փելիքս հայրապետին, և մեծ իմաստութեամբ կառավարեց ընդհանուր եկեղեցին տասնըեօթը տարի՝ փառաւորելով զճշմարտութիւնը առաքելական նախանձով և առաքինութեամբ, զոր սուրբ Հերոնիմոս անուանեց Կ̃նարատ վարդապետ անարատ եկեղեցւոյ ։ Վասն զի զօրաւոր կոնդակներով ու քաջութեամբ յաղթեց թշնամիներուն և հերձուածողներուն, խաղաղացուց եկեղեցին և եկեղեցական խռովիչները զամէնքն ալ կանոնաւորելով ։ Ուստի ժողովներ գումարեց 'ի Հռոմ, և դատապարտեց զՄակեդոն և ուրիշ հերետիկոսները, հաստատելով զհամագոյութիւն սրբոյ Երրորդութեան, և զաստուածութիւն Հոգւոյն սրբոյ ։ Ապա հրաման ըրաւ արևելեան եպիսկոպոսներուն, որ Կոստանդնուպօլսոյ Ա․ ժողովը գումարեցին ու նզովեցին զՄակեդոն ։ Իսկ ինքն գեղեցիկ կանոններով զարդարեց եկեղեցին և ծէսերը․ նորոգեց տաճարները և մարտիրոսաց գերեզմանները փառաւոր արձանագրութիւններով ։ Եւ այսպիսի առաքինութեամբ և սրբութեամբ ութսուն տարուան ելաւ աշխարհէս 'ի 384, և դասեցաւ սրբոց կարգը ։ Սուրբ

Հերմինիոս էր իւր քարտուղարը և անոր հրամանաւ Թարգմանեց զԱստուածաշունչը . իսկ իրեն կոնդակները տպուեցան 'ի Հռոմ 'ի 1638 ։

ԴԱՄԱՍՈՍ Բ . Գերմանացի պապն Հռոմայ նստաւ յաթոռ սրբոյն Պետրոսի 'ի 1048 . բայց քսանւիրեք օրէն ետև վախճանեցաւ , ու չեղաւ ձեռնհաս երևելի գործք մը կատարելու ինչպէս որ կը փափաքէր առաքինութեամբ ։

ԴԱՄԻԱՆՈՍ . և . ԿՈԶՄԱՍ ։

ԴԱՆԻԷԼ, կը Թարգմանի դատաստան Աստուծոյ , էր աստուածաշնորհ մեծամատեան մարգարէ , այր ցանկալի՝ Յուդայի ցեղէն , որ 606 տարի Յիսուսէն առաջ մանկութեան ժամանակը գերի տարին Հրէաստանէն 'ի Բաբելոն իր ազգականներովը , որ էին Երեք մանկունք՝ Անանիա , Ազարիա և Միսայէլ ։ Որոնք Նաբուգոդոնոսորին պալատին մէջ սպասաւոր էին . զոր անուանեց Սեդրաք , Միսաք , Աբեդնագով , իսկ Դանիէլի անունը փառաւորելով կոչեց Բաղտասար այս ինքն Բելայ գանձ ։ Նաև առաւել սիրելի ըլլալով և խելացի հանճարով՝ վերակացու դրաւ Բաբելոնի կողմերուն վրա , որ եղաւ քաջ հոգաբարձու և կառավար ։ Յետոյ մեկնելով Թագաւորին տեսիլքը խորհրդաւոր արձանին , որ կը նշանակէր մեծամեծ պետութիւնները՝ Բաբելացւոց , Պարսից , Աղեքսանդրին , և անոր յաջորդներուն , այնչափ զարմացաւ Նաբուգոդոնոսոր , մինչև զԴանիէլ դրաւ գլուխ իր մոգերուն և կախարդներուն առաւել փառաւորելով իբրև այր Աստուծոյ ։ Այս կանգնեց Թագաւորը իրեն ոսկի արձանն ու հրամեց որ ամէնքը երկրպագելով պաշտեն. բայց Դանիէլ և իրեք մանկունքն չի պաշտեցին: Թագաւորը վախնալով ազատ թողուց զԴանիէլ, բայց իրեք մանկունքը ձգեց բոցին մէջ, որոնք երբոր հրաշքով չայրեցան, Թագաւորը զարհուրելով օրհնեց զԱստուած Իսրայէլի և մեծապէս պատուեց զանոնք: Դանիէլ յետոյ մեկնելով Բաղդասար արքային տեսած խորհըրդաւոր բառերը՝ որ հրաշքով պատին վրա գրուեցան, շատ փառաւորեցաւ: Անկեց ետև Մարաց արքային Դարեհի ալ այնչափ սիրելի եղաւ Դանիէլ, մինչև իշխաններուն գլուխ դրաւ զինքը. անոր հրամանաւը կործանեց Բելին կուռքը, և սատկեցուց անոնց պաշտած վիշապը: Ասոր համար թշնամիները կատղելով՝ երկու անգամ առիւծներուն գուբը ձգեցին զերանելին. բայց երբոր անվնաս մնաց, աւելի պատուեցաւ հեթանոսներէն թէ ինքը և թէ ազգն Հրէից. Նաև իր իմաստութեամբն ազատելով մահուանէ զանմեղ Շուշանը, և դատապարտելով չար ծերերը՝ և ևս փառաւորեցաւ ՚ի մանկութենէ մինչև ՚ի խոր ծերութիւն: Ամէն բանէն ետև Կիւրոս Թագաւորէն Պարսից հրովարտակ առաւ վասն Հրէից դառնալուն ՚ի Պաղեստին, և վասն շինութեան Երուսաղէմին և տաճարին Աստուծոյ: Դանիէլ յայտնի մարգարէացաւ, թէ յետ եօթանասուն անգամ եօթն ամաց, այսինքն 490 տարիէն ետև Մեսիայն պիտի գայ ու մեռնի, ինչպէս որ կատարուեցաւ ամէն գուշակութիւնը Քրիստոսի վրան. անոր համար Հրեայք չեն ընդունիր իր մարգարէութիւնը՝ բայց բոլոր աստուածաշունչը կը վկայէ անոնց ճշմարտութեանը ։ Դանիէլ վախճանեցաւ իբր իննսուն տարուան, նոյնպէս և իւր ընկերները․ որոնց նշխարքները հրաշագործութեամբ փառաւորեցան, և եղան տօնելի ամէն քրիստոնէից ։

ԴԱՆԻԷԼ Ասորի՛ էր աշակերտ սուրբ Լուսաւորչին, քահանայ և քորեպիսկոպոս, որ ծերութեան ատենը քաշուեցաւ կը նստէր Տարօնայ վանքը ։ Իսկ սուրբն Յուսիկ վախճանելէն ետև ընտրեցաւ կաթուղիկոս Հայոց․ բայց աթոռը չի նստած գնաց յանդիմանեց զՏիրան արքայն, որ անիրաւութեամբ սպաններ էր զսուրբ Յուսիկը․ երբոր թագաւորը չուզեց ապաշխարելու, անիծեց զինքը ։ Ասոր համար կատղելով մէկէնիմէկ խեղդել տուաւ զսուրբ ծերունին․ իսկ աշկերտները տարին թաղեցին զսուրբ մարմինը իր վանքը ՚ի 362 ։ Տիրան արժանապէս շուտ պատուհասեցաւ սուրբին անէծքովը․ զի արքայն Պարսից բռնեց զինքը կուրացուց․ և իր որդին զինքը խեղդել տուաւ բանտին մէջ ։

ԴԱՆԻԷԼ Ճգնաւոր անուամբ քանի մը հրաշագործ սուրբեր կը յիշէ Հարանց վարքը ։ Առաջինն էր աշակերտ սրբոյն Արսենի, որ անկէց ետև ծաղկեցաւ ճգնաւորներուն մէջ թէ սրբակեաց վարքով, և թէ խրատաբանութեամբ վասն առաքինութեանց ։ Երկրորդն էր աշակերտ և սարկաւագ սուրբ Պափնուտիոսին, զարդարեալ առաքինութեամբ և խոնարհութեամբ, որ յետոյ ձեռնադրեցին քահանայ անապատականներուն համար․ բայց ինքը միշտ սարկաւագութիւն կ՚ընէր վասն խոնարհութեան ։ Չորրորդն էր մեծանուն հայրն Դանիէլ քահանայ Սկիւթոյ ՚ի Զ դարուն, գոլով այր Աստուծոյ և հոգևոր հայր շատ ծածուկ սուրբ առաքինեաց և ծառայից Յիսուսի, և այլն ։

ԴԱՍԻՈՍ զօրական՝ էր Դիոկղետիանոսի ժամանակը Միւսիոյ քաղաքէն, ուր սովորութիւն էր կռապաշտից, որ Կռոնոս չաստուածին տօնին օրը զոհ կը մատուցանէին մէկ գեղեցիկ երիտասարդ մը կուռքին առաջը ։ Բայց ութ օր առաջ կը զարդարէին և լաւ կերակուրներով կը զարմանէին ու մեծ հանդէսով կը շրջեցունէին, և յետոյ զօրականները կտրտէին կ՚ուտէին ողորմելին ։ Իսկ այն տարին վիճակն ելաւ Դասիոսին որ զոհ ըլլայ․ բայց նա քաջութեամբ պատասխանեց՝ Լաւ է ինձի մեռնիլ վասն անուանն Քրիստոսի, քան թէ ՚ի պատիւ պիղծ Կռոնոսին ։ Աստի կռապաշտները մէկէն բռնեցին սուրբը՝ դատաւորին ատեանը հանեցին, որ վճռեց թէ իբրև հայհոյիչ գլխատուի Դասիոս ։ Բայց նախ տարին Կռոնոսի կուռքին առջևն ու ափին մէջը դրին կրակ և խունկ, որպէս զի հարկաւ ծխէ չաստուածին առաջը․ իսկ երանելին զուարթութեամբ պահեց կրակը ձեռքին մէջ մինչև հասաւ գլխատման տեղը, և ուրախութեամբ նահատակեցաւ վասն սուրբ հաւատոյ, և եղաւ տօնելի մարտիրոս իբրև քաջ զօրական Քրիստոսի զոհեալ հրով և սրով ։

Աստուածաշնորհ քաջք վառեցան սիրով
Յաղթեցին չարեաց տիրական հոգւով․
Դիմեալք ՚ի բոց հրոյ անվեհեր մարտիկք,
Ելին ՚ի բոցոյ զերթ անմահ փիւնիկ ։

Քեզ մարգարէք, մարտիրոսք հզօր,
Երկնապանծ շնորհօք գտան քաջազօր.
Մերժեալ զահ զերկիւղ և զոյժ բանսարկուին
Փառաւորեցին զանուն Հըզօրին :

ԴԱՐԵՀ Ա. արքայ Պարսից կոչեցեալ Աշտապեան՝ էր մեծազօր նախարար, և ճարտարութեամբ ախոռապետին ընտրեցաւ ինքնակալ Պարսից 522 տարի Քրիստոսէն առաջ : Զօրաբաբէլ մէկէն տարաւ ասոր Կիւրոսին հրովարտակը վասն շինութեան Երուսաղէմին և տաճարին Աստուծոյ, և առաւ անկէ հրաման ու ստակ՝ տաճարին շինութեանը համար : Յետոյ տիրեց Բաբելոնի և յաղթեց ուրիշ ազգաց . բայց յաղթուեցաւ Աթենացւոյմէ Միլդիատէս քաջ զօրավարէն՝ որ տասը հազարով երկուհարիւր հազար Պարսիկ կոտորեց ի Մարաթոն : Եւ երբոր նորէն ուզեց Յունաց հետ պատերազմելու, մեռաւ 485 տարի Քրիստոսէն առաջ : Ըստ ժամանակագրաց ոմանց այս Դարեհն էր որ Եսթերն իրեն թագուհի ըրաւ . նաև ասոր վեցերորդ տարին կատարեցաւ Զօրաբաբէլի տաճարին շինուածը :

ԴԱՐԵՀ Գ. Կոդոմաննոս նստաւ արքայ Պարսից 336 տարի Քրիստոսէն առաջ, և անուանի եղաւ առաքինութեամբ և խոհեմութեամբ : Ասոր օրը մեծն Աղեքսանդր ելաւ Պարսից վրայ . որուն դէմ ելաւ Դարեհ վեցհարիւր հազար զօրքով և իրեք պատերազմի մէջ յաղթուեցաւ և փախաւ : Ան ատեն իրեն երկու սպարապետները ուզեցին որ սպաննեն զԴարեհ, ու իրենք թագաւորեն Պարսից : Ուր տեսան որ Աղեքսանդր կը հասնի իրենց, զարկին արքային և կիսամեռ թողուցին փախան . խեղճը ընկած հոգեվարք, սկսաւ օրհնել զԱղեքսանդր շնորհակալութեամբ, որ իւր մայրը և կինը գերի բռներ էր ու պատուով պահեր էր։ Աղեքսանդր հասաւ հոն, Դարեհ ալ մեռաւ. որուն վրա շատ լացաւ ու իրեն քղամիդովը պատեց, զմռսել տուաւ, և յետոյ փառաւոր սնտուկով մօրը ղրկեց. նաև բռնեց թշնամիներն ալ շարաչար սատկեցուց վրէժխնդրութեամբ։ Դարեհ այր բարեսէր այսպէս խեղճութեամբ յիսուն տարւան մեռաւ, վերջացաւ թէ ինքն և թէ Պարսից թագաւորութիւնը. որ տևեց երկու հարիւր երեսունըութ տարի։ Բայց իրեն արդարութիւնը, հեզութիւնն ու առաքինութիւնը փառաւորեցին անունը, եղաւ բարի օրինակ աշխարհակալ թագաւորաց։

Այս է փառասէր արքային վախճան,
Ճեպէն նուաճել զաշխարհաց սահման.
Այլ ընդ միջօրեայն հասեալ արկածից
Խաւարի արև կարծեալ անմահից։
Ո՞ւր այն տենչ փառաց անդաձմունք ունայն
Արդ սահեալ կորեան 'ի քթթել ական.
Աղձմամբք մտին ընդ դուռն անցաւորիս,
Ելին բազմաղէտ վշտօք ցաւալից։

ԴԱՒԻԹ Մարգարէ անուանեալ Աստուածահայր՝ էր որդի Յեսսեայ Յուդայի ցեղէն. ծնաւ 'ի Բեթղեհէմ 1085 տարի Յիսուսէն առաջ։ Սա 'ի մանկութենէ լցեալ Հոգւով սրբով կոչեցաւ այր ըստ սրտին Աստուծոյ, օրինակ հեզութեան և խոնարհութեան գոլով մեծութեան մէջ, նաև կատարեալ աստուածապաշտութեան և ապաշխարութեան։ Մինչև 'ի հովուութենէ ընտրեցաւ թագաւոր Սաւուղին տեղը, և օծուեցաւ ձեռամբ Սամուէլ մարգարէին, և եղեւ մարգարէ Բարձրելոյն մտաւ մեծամեծ պատերազմերու մէջ, և ապաւինելով Աստուծոյ՝ յաղթեց ամէն թշնամիներուն և հեթանոսներուն, կործանելով ղահագին Գողիաթ հսկայն աստուածային զօրութեամբ։ Ասոր եղաւ յաղթող աշխարհակալ մեծ, մարգարէ հոգելից, և աստուածախօս հզօր երգաբան, ինչպէս յայտ է իրեն յօրինած սաղմոսարանէն, որ է նուագարան և հոգեշարժ գործի արարչական փառաբանութեանց հին և նոր եկեղեցեաց սրբոց մինչև հիմա։ Աս է կատարեալ մարգարէութի՟ 'ի վերա ամենայն սնօրէնութեանց Մեսիային և նոր եկեղեցւոյ, որ բոլորը կատարեցաւ և կատարելոց է հետզհետէ մինչև 'ի կատարած աշխարհի։ Ասոր այսպիսի աստուածավառ սիրով և մեծագոյն քաջագործութեամբ խաղաղացուց Դաւիթ իւր թագաւորութիւնը և յանձնեց իր որդւոյն՝ Սողոմոնին ձեռքը. ապա փոխեցաւ առ Տէր եօթանասուն տարւան, քառասուն տարի փառաւորապէս թագաւորելէն ետև։ Իսկ սուրբ մարգարէին գերեզմանը մինչև հիմա կայ 'ի Պաղեստին. և ամէն ազգք քրիստոնէից, Հրէից և Այլազգեաց միշտ կը պատուեն իբրև ուխտատեղի։

Երկնաշնորհ վսեմ հագներգողն արքայ,
Ամբիծ արդարոց երանի կարդայ.
Անման յապիրատ խաւարին գործոց
Երգակցին չքնաղ լուսերամ զուարթնոց։
Երանի և ոյք յաղցաւոր 'ի կեանս
Ջերմ ըղձեա պնդին առաքինութեանց.
Քաջաշնորհ անցեալք ընդ ծով ալէտանջ,
Հրճուին յաւետեաց երկրին լուսապանծ։

ԴԱՒԻԹ Անյաղթ փիլիսոփայ աստուածասէր՝ էր կրտսեր աշկերտ սուրբ Թարգմանչաց Սահակայ և Մեսրոպայ, նաև քեռորդի սրբոյն Մովսէսի Խորենացւոյն։ Որ վարժելով Աթէնք քաղաքը՝ ծաղկեցաւ իմաստութեամբ և առաքինութեամբ, մինչև Անյաղթելի անուամբ փառաւորեցաւ Հայոց և Յունաց մէջ Դաւիթ կաթուղիկոսին ժամանակը։ Օրաւոր ըլլալով ատենախօսութեամբ և գրով, յօրինեց շատ հոգևոր ճառեր, պիտուական և փիլիսոփայական գրեանք Հայ և Յոյն լեզուով, գրելով նաև թարգմանութիւններ. և այլն։ Թէպէտ ոճն է մթին և խորհրդաւոր, բայց գովելի է գիտնոց. մինչև Հոռոմներէն անուանեցաւ Աստուածասէր, և մեր ազգէն տօնեցաւ սուրբ Թարգմանչաց կարգին մէջ. վասն զի սրբութեամբ և առաքինութեամբ փոխեցաւ առ Տէր, և իր սքանչելի գրուածներովը յարգեցաւ։

Այս ուրիշ Դաւիթ փիլիսոփայ Բագրևանդացի Ը դարուն, որ գրեց ողջամիտ վարդապետութեամբ ճառ 'ի վերայ աստուածային և մարդկային բնութեանցն Քրիստոսի Աշոտ պատրկին խնդրելովը. նաև թարգմանեց սուրբ Բարսղին քանի մը ճառերը։ Ուստի գովելի ուսումնասիրութեանը և գիտնական գրուածներուն համար փիլիսոփայ անուանեցին. զի տեղեակ էր Հելլէն լեզուին և փիլիսոփայութեան, և այլն։

ԴԱՒԻԹ Դունեցի՝ էր որդի Պարսկի և մօր քրիստոնէի. երբոր Խորասանէն եկաւ Հայաստան՝ տեսնելով քրիստոնէից պարկեշտ վարքը, բոլորով սրտով հաւատաց Քրիստոսի և մկրտելով փոխեց առջի Սուրհան անունն ու անուանեցաւ Դաւիթ՝ Գրիգորի Մամիկոնէին հօրը անուամբ, որ եղաւ իրեն կնքահայր : Եւ այսպիսի աստուածահաճոյ վարքով բնակեցաւ Դուին քաղաքն՝ ու ամուսնացեալ ունեցաւ զաւակներ և մնոյց աստուածպաշտութեամբ : Իսկ ծերութեան ժամանակը Աբդըլ-լայ այլազգի իշխանը բռնեց սուրբ ծերը չարաչար տանջեց որ ուրանայ սուրբ հաւատքն ու կոխէ սուրբ խաչը : Բայց տեսաւ որ նա սուրբ խաչը կը պաշտէ , հրամեց որ խաչ հանեն և գեղարդով խոցեն . իսկ սուրբը ուրախութեամբ նահատակեցաւ . և թաղեցին պատուով Յիզտիբուզտի նահատակին քով յամի 693 , և խաչն ալ տնկեցին գերեզմանին վրա՝ որ եղաւ ուխտատեղի :

ԴԱՒԻԹ և ԳՈՒՐԳԷՆ եղբարք Գնունիք՝ էին իշխանազուն կտրիճներ գեղեցիկ և փառաւոր , զոր Այլազգիք բռնեցին տարին 'ի Դուին : Յուսուփ ոստիկանը տեսնելով անոնց վայելչութիւնը՝ շատ ջանացաւ որ դարձընէ զանոնք յայլազգութիւն մեծամեծ խոստմունքներով : Բայց տեսաւ որ անոնք քաջութեամբ անարգեցին իրեն խօսքերը և հաստատ կան 'ի սէրն Քրիստոսի , տարին հրապարակին մէջն ու գլխատեցին 'ի 917 :

ԴԱՒԻԹ Բագրատունի անուանեալ Անհողին՝ էր որդի Գուրգէնի եղբօր Գագիկ Ա. արքային , որ հօրեղբօրմէն ետև տիրելով Տաշրաց նահանգին և քաջութեամբ ընդարձակելով թագաւորեց 'ի վերայ Վրաց և Գուգարաց , նաև Աղուանից և Ուտէացւոց : Ուստի զօրանալով՝ կոչեցաւ արքայ Աղուանից · ապա շինեց Լոռի քաղաքն ու տուաւ իւր որդւոյն Գուրգէնի · իսկ ինքն կընստէր Սամշողդէ ։ Ապուսվար ամիրայն Դունայ ելաւ Դաւթին վրա հարիւրյիսուն հազար պարսկական զօրքով և շատ քաղաքներու տիրեց · իսկ Դաւիթ ճարտարութեամբ դաշինք դնելով Բագրատունի թագաւորաց հետ՝ առաւ անոնցմէ ինը հազար զօրք խառնեց իր տասը հազար զօրքին հետ ու ելաւ ամիրային դէմ ։ Ուր հրամայեց Յովսեփայ կաթուղիկոսին Աղուանից, երթալ բանակը եպիսկոպոսով, քահանաներով, սարկաւագներով, խաչով, աւետարանով, և այլն ։ Որոնց հետ գնացին նաև ինքնակամ շատ մարդիկ, ու ճակատեցան անհաւատներուն դէմ կրօնաւորներուն հետ՝ արևմտեան խաչակիր զօրաց պէս ։ Ապուսվար ծաղր ընելով յարձակեցաւ Դաւթին վրա · իսկ քրիստոնեաները կղերիկոսներով սկսան հնչեցունել քշոցներն ու ծնծղաները երգելով · ‟Արի՛ Տէր օգնեա՛ մեզ և փրկեա՛ զմեզ վասն անուան քո „ · և այլն ։ Ու այսպէս զարկին չարաչար աւրեցին անհաւատները, և հինգ օր ետևներէն ընկան հալածեցին իրենց երկրէն հանեցին ։ Ուստի Դաւիթ բոլոր տեղերուն տիրեց քաջութեամբ մինչև 'ի մահ, և թաղեցաւ Սանահին վանքը · որուն յաջորդեց Գուրգէն որդին իւր 'ի 1046 ։

ԴԱՒԻԹ Արծրունի՝ էր թագաւոր Հայոց 'ի Սեբաստիա, որ հօրն Սենեքերիմի իշխանութեան ժամանակը շատ զօրացաւ քաջութեամբ յաղթելով Սկիւթացւոց և հալածելով Վասպուրական աշխարհէն՝ ինքնիշխան տիրապետեց ։ Իսկ հօրը 'ի Սեբաստիա փոխադրելէն և մեռնելէն ետև յաջորդեց անոր թագաւորութեանը 'ի 1027 · ուր տասը տարի թագաւորելէն ետքը մեռաւ անորդի · և թագաւորեց Ատոմ եղբայրը, որուն գահակից եղաւ կրտսեր եղբայրը Աբուսահլ։

ԴԱՒԻԹ Կոմնենոս էր վերջին կայսր Յունաց 'ի Տրապիզոն, որ դաշնակից եղաւ Պարսից արքային հետ։ Բայց Փէթիհ սուլդան Մէհէմմէտ Կոստանդինուպօլսին տիրելէն ետև երբոր խաղաց Տրապիզոնի վրայ, Դաւիթ վախնալով մէկէն անձնատուր եղաւ անոր · որ տարաւ ողորմելին 'ի Պօլիս, և սկսաւ ստիպել՝ որ ուրանայ հաւատքը։ Իսկ երբոր նա արհամարհեց չուրացաւ իւր հաւատքն՝ սպաննեց զինքը։ Նիկեփորոս Դաւթի կայսրորդին փախաւ 'ի Պարսկաստան և յետոյ 'ի Մոռա։

ԴԱՒԻԹ Բէկ Սիւնեցի՝ էր քաջ զօրավար Վրաստանու կողմերը, որ 'ի 1722 առաւ իրեն քառսուն քաջ Հայերն ու գնաց Սիւնեաց աշխարհը այլազգիներուն ձեռքէն ազատելու համար։ Ուր շատ մը բազմացուց իր զօրքն ու տիրեց այն կողմերուն, և շինեց ամուր բերդ մը Հալիձոր գեղին մէջ, և հոն դրաւ իրեն զօրավար քաջն Մխիթար։ Իսկ այլազգիները եօթանասուն հազար մարդով պաշարեցին նոյն բերդը, և մեքենաներով սկսան պատերազմիլ · Դաւթին հետն էին իրեք հարիւր հոգի և Մխիթարն ու Տէր Աւետիք երէցն · որոնք երկուհարիւր մարդով ելան բերդէն դուրս, և անանկ սոսկալի կոտորած մը տուին թշնամիներուն, որ թողլին իրենց ամէն բանն ու փախան։ Դաւիթ ետևներէն ընկաւ և վռնտելով և ջարդելով տասուիրեք հազար հոգի՝ առաւ աւարը, և զօրացման · իսկ Թշնամիներուն զօրքը քսանուերկու հազար փախան մտան Մեղրի բերդը ։ Որ գնացին Մխիթար և Աւետիք քիչ մարդով, ճարտարութեամբ և մեծ քաջութեամբ խորտակեցին զանոնք ու դարձան Հալիձոր ։ Դաւիթ անկէց ետև կրկին անգամ Թշնամիներուն յաղթելէն ետքը չարաչար կոտորածով և զարմանալի քաջութեամբ, հիւանդացաւ և մեռաւ յիսունըչորս տարուան 'ի 1728 ։

ԴԱՒԻԹ, ըստ Լտ․ ՏԱՒԻՆՈՒՍ՝ ծնաւ 'ի Հայաստան 'ի ԺԱ դարու, և սնեալ աստուածպաշտութեամբ եղաւ կամաւոր աղքատ վասն Քրիստոսի ։ Վասն զի ամէն ունեցածը բաժնեց աղքատներուն, ու անծանօթ կերպով գնաց ուխտ յԵրուսաղէմ և 'ի Հռոմ · անկէց ելաւ երթալու յուխտ սրբոյն Յակոբայ 'ի Սպանիա, բայց տկարանալով մտաւ Լուքքա քաղաքն Իտալիոյ և նստաւ հիւանդանոցին մէջ սուրբ Միքայէլի ժամուն մօտ, որ յետոյ կոչեցաւ Տաւինոյի հիւանդանոց ։ Այս սուրբին առաքինութիւններն ամէն տեղ պատմելով եղաւ բարի օրինակ · ուստի ջերմեռանդ տիկին մը Աթա անուամբ հրաւիրեց զերանելին Դաւիթ և իր պալատին մէջ խուց մը տուաւ իրեն, ու հաւատքով կը պատուէր իբրև սուրբ Աստուծոյ ։ Իսկ ինքն միշտ կը ձգնէր հոգևոր կրթութեամբ, պահօք և աղօթիւք · միայն հաց և ջուր էր ուտելիքը երկու օրն անգամ մը ։ Որ վախճանելէն առաջ կանչեց զԱթա տիկինն, օրհնեց որ իրեն հիւրընկալ եղաւ, և պատմեց մահուան օրն, և իրեք օրէն ետև հոգին աւանդեց Աստուծոյ 'ի 1050 ։ Միայն մէկ ամիս կեցեր էր այն քաղաքը · զոր մեծ պատուով թաղեցին մօտ սուրբ Միքայէլի տաճարին, ուր բուսաւ հրաշքով ողկուզալից որթ մը. իսկ այն հրաշալի խաղողն ուտող հիւանդներն ալ առողջացան. շատ հրաշքներ եղան սուրբին տապանէն անուշ հոտերով և հրեշտակային ձայներ լսուելով: Յամի 1061 Անսելմոս եպիսկոպոսը քաղաքին նստաւ քահանայապետ 'ի Հռոմ անուամբ Աղեքսանդր Բ, որ հանել տուաւ սուրբին մարմինը, և կաւեղէն տապանով դրաւ սուրբ Դուկասու տաճարին մէջ. ուր բժշկեցան կաղեր, կուրեր և շատ տկարներ. և յետոյ մարմարեայ տապանով հանգուցին խորանին տակը: Ապա 'ի 1547 երբոր բացին տապանը՝ գտան սուրբ մարմինն անապական զարմանալի անուշահոտութեամբ, և հանգուցին 'ի նոր խորանը. յետոյ 'ի 1646 աւելի պատուելով նոճի տապանի մէջ հանգուցին նոյն աւագ խորանին տակը ապակի փեղկով: Ու այն հանդէսին ատենը հրաւիրեցին Անկոնայէն տասուերկու Հայ իշխաններ, որ բռներ էին թափօրին ամպհովանին իրենց ազգակից սուրբին վրա: Իսկ կաւեղէն տապանն եղաւ օրհնած ջուրի աւազան, ուր շատ բժշկութիւն եղաւ: Այնպէս երանելւոյն թաղեայ (քէչէ) կարմրագոյն գտակը տօնին օրը կը հանեն կը տանին նախ Դուքսին և իշխաններուն գլուխը կը դնեն վասն ջերմեռանդութեան, և յետոյ ուխտաւորներուն, նաև համբուրելով արծաթապատ սուրբ աջը՝ անպակաս կ'ըլլայ բժշկութիւն հիւանդաց. ուստի Աղեքսանդր պապն դասեց զնա սրբոց կարգը 'ի 1159:

ԴԵԲՈՐԱ էր մարգարէուհի և դատաւոր Իսրայէլի Սամեգարէն ետև, և 1285 տարի

Քրիստոսէն առաջ, որ արմաւենիի տակը նըստած դատաստան կը տեսնէր. անոր համար նոյն տեղն կոչեցաւ Արմաւենի Դեբորայ: Երբոր Իսրայելացիք չար գործքով գերի եղեր էին Յաբինայ Թագաւորին Քանանացւոց՝ Դեբորա հրամայեց Բարակ իշխանին յանուն Աստուծոյ զօրք ժողվելու ելլել Յաբինայ վրան եւ ազատել զԻսրայելացիքն անոր ձեռքէն: Բարակ կատարելով հրամանն՝ տասն հազար զօրք առաւ՝ Դեբորային հետ մէկտեղ գնաց զարկաւ աւրեց թշնամին՝ սատակելով անոր Սիսարա զօրավարը Յայել կնկան ձեռքովը, եւ ազատեց զԻսրայել հեթանոսներէն: Որովհետեւ այս յաղթութիւնն եղաւ աստուածային յաջողութեամբ՝ Դեբորա երգեց գեղեցիկ երգաբանութիւն մը բոլոր զօրութիւնն Աստուծոյ ընծայելով, որ քիչ մարդով անհամար թշնամիներն կործանեցին: Եւ այս երգս աստուածիմաստ խօսքերով լեցուն՝ գեղեցիկ նմանութեամբ եւ պայծառ շարադրած ըլլալով ասող եղաւ թէ Հոմերոսի Իլիականն ասկէց ելած է: Դեբորայի արդար եւ իմաստուն կառավարութեամբն քառսուն տարի երկիրը խաղաղութիւն վայելեց մինչեւ 'ի մահն:

Քաջ ներգործութիւն յուսոյ Անձաւին
 Ո՛ կանացի բնութիւն փոխէ յառնացին.
 Կաղք անկածք եւ կոյրք իբրեւ եղջերուն
 Անցին ընդ լերինս բարձին զլռնութիւն:
Այնու քաջացեալ կուսանք փափկասուն
 Մարտեան քաջապէս ընդդէմ թշնամւոյն.
 Հարին զօրութիւն հզօրաց եւ դիւաց
 Պերճացան յուսով երկնային փառաց:

ԴԵՄԵՏՐԻՈՍ սուրբ վկայն՝ էր Թեսաղոնիկեցի Մաքսիմիանոսի ժամանակը, իշխան զօրաւոր գիտուն և առաքինի, որ համարձակ քարոզելով ճշմարտութիւնը շատ կռապաշտներ կը լուսաւորէր: Ուստի երբոր կայսրը հոն գնաց հեթանոսները մատնեցին զԴեմետրիոս թէ քրիստոնէից ուսուցիչն է մեզի դէմ. անոր համար բռնեցին բանտը դրին զերանելին: Թէպէտ թագաւորը շատ բան խոստացաւ և շատ սպառնալեօք ուզեց դարձընել. հնար չեղաւ: Լևի անունով ընկերը երբոր կայսեր առջև իւր սո՛սկալի ուժը պիտի երևցունէր՝ փընտռեցին մէկն որ դիմացը հանեն, անատենը՝ Նեստորիոս սուրբ Դեմետրիոսին աշակերտը գնաց վարպետին աղօթքն առաւ և ապաւինելով խաչին զօրութեանը ելաւ Լևիին դէմ ու վերուց զարկաւ գետինը սատկե՛ցուց: Ասոր համար սաստիկ տրտմելով կատղեցաւ կայսրը. մանաւանդ երբոր իմացաւ թէ Դեմետրիոսի աշկերտն է՝ Նեստորիոս, երկուքն ալ նահատակեց. որոնց մարմինը պատուով ամփոփեցին հաւատացեալները: Յետոյ Լեոնդիոս բարեպաշտ եպարքոսը կանգնեց տապա՛նին վրայ փառաւոր եկեղեցի, ուր եղան մեծամեծ հրաշքներ. իսկ գերեզմանէն ելած անուշահոտ ձէթը դեղ եղաւ ցաւոտներու, և ուրիշ հրաշագործութեամբ շատ փառաւորեցաւ անունը սուրբ Դեմետրիոսի վկային:

ԴԵՄԵՏՐԻՈՍ Փալերէոս՝ էր Ճեմական փիլիսոփայ Աթենացի, որ Աղեքսանդրէն ետև եղաւ Արխոնդ կամ հրամանատար Աթենացւոց՝ 309 տարի Յիսուսէն առաջ: Սա տասը տարուան մէջ գեղեցիկ կարգադրութեամբ և փառաւոր շէնքերով այնպէս պայծառացուց Աթէնք, որ քաղաքացիք անոր յիշատակ կանգնեցին երեք հարիւր վաթսուն պղնձէ արձան, տարւոյն օրերուն թուովը ։ Բայց յետոյ նախանձոտներուն ձեռքէն փախաւ գնաց Եգիպտոս առ Պտղոմէոս Լագոս թագաւորն ասելով. « Հոս չեն կրնար զրկել զիս դէթ իմ առաքինութենէս, որ ջանքով վաստըկեր եմ » ։

Ըստ հին պատմութեան Պտղոմէոս Փիղադեղփոս սորա խորհրդովը շատ ճոխացուց Աղեքսանդրիոյ գրքատունը երկուհարիւր հազար հատորով գրոց ։ Մինչ զի հաւանեցուց զԹագաւորն՝ որ թարգմանել տուաւ Աստուածաշունչը Հրէից լեզուէն 'ի Յոյն լեզու ։ Իսկ ինքն Դեմետրիոս իմաստասէր, մեռաւ Պտղոմէոսի օրը իր պատուովն, որ աշկերտներուն խրատ կուտար թէ՝ « Պարտ է 'ի տան ակնածել 'ի ծնողաց, 'ի պողոտայս յանցաւորաց, և յառանձնութեան յանձանց իւրեանց » ։

ԴԵՄՈՍԹԵՆԷՍ քաջ ատենաբան Աթենացին ծնաւ 381 տարի Քրիստոսէն առաջ, որ մանկութենէն ուսումնասէր ըլլալով կը յաճախէր Պղատոնին և Իսիոսին համալսարանը, ու եղաւ երևելի ճարտասան ։ Բայց նրբաձայն և թոթովախօս ըլլալով անանկ լաւ կրթեց զինքը և շտկեց այս պակասութիւնները, որ եղաւ կատարեալ ատենաբան ճարտարախօս ։ Ու որպէս զի հանդարտ շարադրէ ճառերը՝ գետնափոր խուցի մէջ բնակելով ճրագի լուսով կը գրէր . ուստի նախանձորդները կը ծաղրէին թէ ճառերը ձէթ կը հոտին ։ Ոմանք ալ երեսը զարնելով ըսին թէ բերանը հոտած է . պատասխանեց . « Սան ճառելոյս չարագործութեանց վրա բերանս հոտեցաւ » ։ Ու երբոր նախատեցին թէ ինչո՞ւ չարագործներու հետ կը տեսնուիս, ասաց. “Բժիշկները միշտ հիւանդաց հետն են, բայց իրենք առողջ են„:

Երբոր սա քաղաքական գործքերու մէջ զօրացաւ, սկսաւ Մակեդոնացւոց դէմ թշնամութիւն ընելու հանդերձ չարախօսութեամբ. անոր համար հալածուեցաւ Աթէնքէն: Անթիպատրոս անոնց թագաւորը երբոր բռնել տուաւ զինքը, ժամանակ խնդրեց որ թուղթ մը գրէ ազգականներուն. բայց գրչին մէջ թոյն լեցուցեր էր, երբոր բերանը դրաւ՝ ընկաւ մեռաւ վաթսուն տարեկան: Աթենացիք պատուելով կանգնեցին արձան Դեմոսթենեսին, և յարգեցին գրած ճառերը զօրաւոր և ընտիր, նուրբ և գեղեցիկ. ինչպէս Կիկերոն ալ կը վկայէ: Պլուտարքոս կը յիշէ ասոր վաթսունըհինգ ճառերը. բայց շատը կորած են, քանի մը հատ մնացած կան ընտիրներէն, որ տպեցան շատ անգամ և շատ լեզու թարգմանուած են:

ԴԻԴԻՄՈՍ էր բանասէր Աղեքսանդրացի, որ հինգ տարեկան կուրցեր էր. բայց մանկութեան ատենը խելահաս եղածին պէս վառեցաւ ուսման սիրով, ուրիշներուն կարդալ տալով և դպրոցներուն մէջ յաճախ մտիկ ընելով վարժեցաւ դպրութեանց և գիտութեանց. ևս առաւել սուրբ Գրոց և աստուածային բանից քաջ հմուտ եղաւ՝ լուսաւորեալ մտօք և երկիւղածութեամբ: Եւ այնչափ մեծանուն հանդիսացաւ, մինչև վարժապետ եղաւ Աղեքսանդրիոյ համալսարանին. ուր աշակերտեցան իրեն սուրբն Հերոնիմոս, Հռուփինոս, Իսիդորոս, և այլն. որուն կ'երթային գիտունններն ամէն տարակուսական խնդիրները քակելու համար:

Յաճախ կ՚երթար յայցելութիւն Դիդիմոսի մեծ աբբայն սուրբ Անտոն ճգնաւոր 'ի մխիթարութիւն · բայց անգամ մը երբոր նա տրտմութիւն ցըցուց կուրութեանը համար, ասաց սուրբ Անտոն · “Կը զարմանամ, ինչու կը վշտանաս տեսութիւն չունենալուդ համար՝ որ ամէն մարդու և կենդանեաց հասարակ է · և չես մխիթարուիր մտքիդ լուսաւորութեանը վրայ, որ պարգևեցաւ միայն հրեշտակաց, մարգարէից, և առաքելոց սրբոց · որով կրնանք ճանաչել և սիրել զԱստուած · լաւ է այսպիսի աչք ունենալ հոգւոյ, քան մարմնոյ „ · և այլն :

Դիդիմոս առաքինի վարքով վախճանեցաւ իննսուն տարւան 'ի 398 · և թողուց շատ իմաստալից ճառեր և մեկնութիւններ · գերազանց է ճառն Հոգւոյն սրբոյ, և բանախօսութիւնն ընդդէմ Մանիքեցւոց · ճառն 'ի վրայ Թղթոց Կաթուղիկեայց և մեկնութեան Առակաց Սողոմոնի, և այլն :

Մեծասքանչ անքուն լոյս բանականին,
Թեկն ածեալ ճախրէ յանմերձենալին ·
Թափանցեալ 'ի խորս աստուածգիտութեան,
Ճառէ զանճառից պերճ աստուածաբան :
Այս խրատ գործոց հարց առաքինեաց
Գծեցին անջինջ 'ի սիրտս համբակաց ·
Օ իմացականին լոյս պահեալ 'ի վառ,
Լինել գերիմաստ քաջ հոգեհանճար :

ԴԻՈԳԻՆԷՍ Կինիկեան, որ է Շնական փիլիսոփայ՝ Սինոպ քաղաքէն, գնաց Աթէնք աշակերտեցաւ Անտիսդենեայ աղքատութիւն սիրողին · և այնպէս վառուեցաւ անոր վարդապետութեամբն, որ ամէն մարմնական հանգիստը արհամարհեց ։ Վասն զի բնակարանն էր կարաս մը, որ հետը կը պտըտցընէր մէկ գաւազան, մէկ տօպրակ, և ջրի աման մը ունէր · ան ալ զարկաւ կոտրեց երբոր տեսաւ մէկն որ ափով ջուր կը խմէր, առանց ասոր ալ կ՚ըլլայ եղեր ըսելով · այս նորաձև քաղաքավարութ̃բ և աղքատ վարքով շատ պատիւ գտաւ իբրև մեծ առաքինի ։ Պղատոնին սրահը մտաւ ու աղտոտ ոտքերով կոխկըռտեց մաքուր փռոցներն ասելով "Կոխտեմ զփառասիրութ̃ի Պղատոնի ,, · ան ալ պատասխանեց · "Եւ ես ընդ պատառուածս հանդերձիդ տեսանեմ զհպարտութիւն քո ,, ։ Մեծն Աղեքսանդր իրեն գնաց ու առաջարկեց որ բան մը ուզէ իրմէն · Նա պատասխանեց, թէ հեռու գնա կարասին բերնէն որ լոյսը չխափանի, որն որ չես կրնար տալու ։ Աղեքսանդր զարմանալով աղաղակեց · "Խիստ սիրով կ՚ըլլայի Դիոգինէս՝ թէ որ Աղեքսանդր չըլլայի ,, ։ Ցորեկ ատեն ճրագը ձեռքը պտըտելով հարցընողներուն կ՚ըսէր · "Մարդ կը փնտռեմ ,, ։

Դիոգինէս երբեմն գերի ընկաւ աւազակներուն ձեռքն ու Կորնթացի ազնուական մը գնեց զինքը, և դրաւ ամէն գործքերուն վրան և տանը վերակացու, նաև վարժապետ տղոցը վասն իմաստութեանը և հմտութեանը ամէն բանի մէջ ։ Ուր երկար ժամանակ կենալէն ետև մեռաւ իննըսունըվեց տարեկան, 320 տարի Քրիստոսէն առաջ ։ Կորնթացիք փառաւոր թաղում ըրին · իսկ Սինոպցիք շիրիմ կանգնեցին՝ վրան կեցած շան արձան մը · զի էր Շնական աղանդէն փիլիսոփայից, և ունեցաւ շատ երևելի աշակերտներ ։

ԴԻՈԴՈՐՈՍ Սիկիլիացի էր մեծանուն հին պատմաբան Յոյն Օգոստոս կայսեր ժամանակը, որ երեսուն տարի աշխատելով և շատ քաղաքներ քալելով յօրինեց պատմութիւն մը հին ազգաց բացայայտ ոճով և շատ հարկաւոր տեղեկութեամբք Մատենադարան անուանելով։ Այս պատմագրութիւն քառասուն գիրք բաժնած էր. հիմա միայն տասնըհինգ գիրքը կայ ուրիշ գրուածներով, որ պիտանի խրատներով և հմտութեամբ առաքինութիւն կը սորվեցընէ. նաև ամէն բանի յաջողութիւնը կ՚ընծայէ երկնային աներևոյթ նախախնամութեան և ոչ կոյր բաղդի կամ կոյր դիպուածոյ՝ ուրիշ հեթանոսներուն նման ։ Ասոր հին ժամանակէն ՚ի վեր գովելի եղաւ և պիտուական ինչպէս մեր հնախօս Խորենացին ալ կը գովէ ։

ԴԻՈԴՈՐՈՍ կամ ԴԻՈԴՈՐ Տարսոնացի՝ եպիսկոպոս էր նոյն քաղաքին և իմաստուն վարժապետ սուրբ Բարսղի և Ոսկեբերանին, որ մեկնեց սուրբ Գիրքը նկարագրական մտօք ։ Սա սկզբանէ էր Նեստորեայի և վարժապետ Թէոդորոսի Մոպսուեստացւոյն, որ մոլորական գրուածովը նզովեցաւ մեր սուրբ Սահակ Հայրապետէն ։ Նոյն պատճառաւ Դիոդորոս ալ կասկածելի եղաւ հին հայրապետաց առջին. թէպէտ շատերն ալ կ՚արդարացընեն ։

ԴԻՈԿՂԵՏԻԱՆՈՍ ԳԱՅԻՈՍ ՎԱՂԵՐԻՈՍ՝ էր կայսր Հռոմայեցւոց ծնեալ ՚ի Դաղմատիա յամի 245, որ զինուորական քաջութեամբ մեծցաւ այնչափ որ զօրքին ձեռքով կայսր ընտրեցաւ ՚ի 284ին. և թշնամիները կորսնցընելէն եւս հաստատեց իւր իշխանութիւնը 'ի 285 ։ Երբոր Հուչէին յաղթեց մեր Տրդատ թագաւորը մենամարտութեամբ, զօրք տուաւ անոր, ղրկեց 'ի Հայաստան թագաւորեցուց ։ Իսկ 'ի 292ին Կեսար ըրաւ զՄաքսիմիանոս Գաղերիոս, և Կոստանդ Քլորոս մեծին Կոստանդիանոսի հայրը, և ասոնք տկարացուց կայսերութեան ուժը ։ Ապա 'ի 303 գրգռեալ դիւապաշտ Մաքսիմիանոսէն սոսկալի հալածանք հանեց քրիստոնէից դէմ՝ քանդելով եկեղեցիները և նահատակելով հաւատացեալները անհամար թուով՝ որ տևեց տասը տարի մինչև 'ի մեծն Կոստանդիանոս ։ Բայց ինքն ալ ընկած ծանր հիւանդութեամբ անխելքութե՟ մէջ երկու տարիէն վերջը, մինչև ակամայ յանձնեց թագաւորութիւնը Կոստանդի Քլորոսի, հօրն մեծին Կոստանդիանոսի, և Մաքսիմիանոսին ․ իսկ ինքն քաշուեցաւ 'ի Սալոն հայրենիքը ․ ուր ինը տարի պարտէզ կը մշակէր ։ Սր թէպէտ պատժեցաւ չարաչար, բայց հալածանքը աւելի սաստկացաւ չար Մաքսիմիանոսի օրն ․ մինչ զի դրամներուն վրան ալ տպեցին թէ վերցաւ քրիստոնէութիւնը ։ Սակայն թշուառութեամբ իրենք կորան, և զարմանալի ծաղկեցաւ հաւատքն Քրիստոսի հալածանքով, մինչև որ թագաւորեց մեծն Կոստանդիանոս ․ իսկ Դիոկղետիանոս լսելով զասոնք՝ սրտամաշ սատկեցաւ վաթսունըութը տարուան յամի 314 ։ Տ ․ Կոստանդիանոս ։

Դիոկղետիանոս զէն բելարայ՝
Ո՛ իւր անգութ ոճիր զիարդ դառն ողբայ ․
Կարծեաց զօր զարև լուսածին մանկանց ,
Կարծեաց և զիւր կեանս ընդ ուշոյ մնաց ։

Օ ի՞ քեզ ապիրատ՝ զի՞ 'նդ անմեղ արեանց ,
Ե՞րբ լցի յագուրդ քոյն չար տենչմանց .
Սգոլիս խամրել զլոյսն արեգական ,
Արդ յանլոյս տանջիս 'ի խաւար գեհեան :

ԴԻՈՄԻԴԷՍ բժիշկ սուրբ վկայն՝ էր Տարսոնացի ազնուական և բարեպաշտ , Մաքսիմիանոսի ժամանակը , որ ներհուն գիտնական ըլլալով բժշկապետ կ'անուանէր . և ամէն հիւանդներու կը հանէր , ու ձրի կը բժշկէր . շատ անգամ ալ միայն Յիսուսի անունը կարդալով եռանդեամբ և հրաշքով կ' առողջանային : Սա աստուածպաշտութեամբ այնչափ վառուած էր , որ եղաւ նաև հոգևոր բժիշկ . իբր զի հալածանաց ժամանակը քարոզելով կը յորդորէր զամէնքն որ հաստատ մնան 'ի սէրն Քրիստոսի հանդերձ բարեպաշտութեամբ և առաքինութեամբ : Այս մտքով գնաց Նիկիա և կը մտնէր բանտերուն մէջ հիւանդները դարմանելով կը զօրացնէր նահատակները քաջութեամբ : Մաքսիմիանոս լսելով զասոնք՝ մէկէն դահիճներ ղրկեց որ կապանքով տանին զԴիոմիդէս առ ինքն 'ի Նիկոմիդիա . երբոր ճամբայ ելաւ երանելին՝ կասկածելով թէ կայսրը խնայելով չի նահատակէ զինքն իբրև ճարտար բժիշկ , այլ կը ջանայ մոլորեցունելու , սկսաւ ջերմեռանդութ՟ խնդրել աստուածային շնորհայն օգնութիւն երթալու առ Արարիչն իւր սուրբ կամօքն . և հոն խաչակնքելով աւանդեց հոգին : Իսկ դահիճները կտրեցին սրբոյն գլուխը տարին թագաւորին , որ շատ տրտմեցաւ անոր մահուանը վրան ու գլուխը ղրկեց որ մարմինին հետ թաղեն : Յետոյ Կոստանդիանոս այս սուրբ վկային անուամբը վկայարաններ շինել տուաւ 'ի Կոստանդնուպօլիս, 'ի Նիկիա, և 'ի Նիկոմիդիա. իսկ Աստուած փառաւորեց սուրբը երևելի հրաշքներով, զոր կը տօնէ սուրբ եկեղեցին։

ԴԻՈՆԵՍԻՈՍ Արիսպագացի սուրբ հայրապետն՝ էր մեծ փիլիսոփայ Աթենացի և ինն ընտիր դատաւորներուն մէկը, որ կը նստէին Արիսպագոսի դատարանը։ Երբոր սուրբ Պօղոս առաքեալ քարոզեց նոյն դատարանին մէջ՝ հաւատացին Քրիստոսի Դիոնեսիոս և ուրիշներն ու մկրտեցան. սուրբ Առաքեալը ձեռնադրեց զԴիոնեսիոս եպիսկոպոս Աթենացւոց։ Սա լցեալ Հոգւով սրբով ծաղկեցուց զճշմարտութիւնն քրիստոնէութեան, լուսաւորելով Հելլենացիները քարոզութբ, ինչպէս բանիբուն աստուածաբան փիլիսոփայ և քարոզ բանին կենաց խորիմաստ գիտութեամբ, և այլն։

Աթենացիք նախանձելով միաբան կռամոլ քուրմերով բռնեցին զերանելի հայրապետը, նահատակեցին սրով վասն անուանն Քրիստոսի յամի իբր 96։ Իննովկենտիոս Գ. պապն Հռոմայ 'ի ԺԳ. դարուն սուրբ Դիոնեսիոսի նշխարքը ղրկեց 'ի Գաղղիա, որ 'ի Հռոմ տարեր էին. ուր մեծ ջերմեռանդութեամբ փառաւոր տաճարներ շինեցին անոր անուամբը։ Նմանապէս մեծ յարգութիւն ունեցան աստուածաբանական ընտիր գրեանքն որ տպուեցան, զոր օրինակ գիրքն Երկնային քահանայապետութեանց, գիրքն Աստուածային անուանց, գիրքն Խորհրդական Աստուածաբանութեան, Նամակներ, Պատարագամատոյց, և այլն։ Զորս թարգմանեցին հայերէն մեր հին թարգմանիչքը և Ստեփաննոս Սիւնեցին 'ի Ը. դարուն։

Այս ուրիշ սուրբ Դիոնեսիոս առաջին եպիսկոպոս Փարիզու, որ իբր առաքեալ գնաց 'ի Գաղղիա քարոզելով սուրբ աւետարանը և լուսաւորելով ժողովուրդն Աստուծոյ: Իւր քաջութեամբ գլխատեցաւ վասն 'ի Քրիստոս հաւատոյ յամի 240. ոմանք շփոթելով կը համարին թէ սա է Արիսպագացին հոն գլխատուած երկու ընկերով:

Արդարակորով վեհն Արիսպագին
 Կորզեալ 'ի ծոցոյ սանդարամետին ,
 Վերձացաւ 'ի լոյս աստուածգիտութեան
 Վերձացոյց զԱթէնս ճշմարիտ ուսմամբ:
Տես ով քրիստոնեայ զանհաս գործ շնորհաց ,
 Իբր հանէ զանկածն 'ի դաս հրեշտակաց .
 Լեզու տայ ճառել զԷակէն անճառ ,
 Աստուածախօսել յիմաստնոց կաճառ:

ԴԻՈՆԵՍԻՈՍ Թրակացի քերթող՝ ծաղկեցաւ Յիսուսէն դար մի առաջ, և եղաւ վարժապետ 'ի Հռոմ, գրելով քերականութիւն Յունաց լեզուին. որ անուանի եղաւ գիտնական աշխատասիրութեամբն: Այս քերականութիւնը թարգմանեցին հայերէն մեր հին վարդապետները՝ Մովսէս քերթող, Դաւիթ անյաղթ, և այլք, նաև մեկնեցին. որ եղաւ նոցա իբր առաջնորդ քերականութեան կամ քերթողութեան նոյն ժամանակը:

ԴԻՈՆԵՍԻՈՍ Աղիկառնացի՝ էր Յոյն պատմաբան հին, որ 30 տարի Յիսուսէն առաջ բնակեցաւ Հռոմ քսանուերկու տարի, և տեղեկանալով հնութեանց՝ գրեց իր պատմութիւնը քսան գիրք. բայց հիմա մնացած կան տասնըմէկ, որ կը հասնին մինչև 'ի 312 ամն Թուականին Հռոմայ:

ԴԻՈՆԵՍԻՈՍ Աղեքսանդրացի սուրբ պատրիարգ 'ի Գ. դարու, որ Պօղոս առաքելին թղթերը կարդալով հաւատաց Քրիստոսի, և եղաւ մեծանուն աշակերտ Որոգինեսի, մինչև յաջորդեց իրեն վարժապետութեանը Աղեքսանդրի համալսարանին յամի Տեառն 231: Իսկ 'ի 248 Աղեքսանդրիայի պատրիարգը մեռնելէն ետև ընտրեցաւ յաջորդ և զօրացուց զեկեղեցին բարեկարգութեամբ և առաքելական վարդապետութեամբ, գրելով քաջալերական թղթեր, որպէս զի հաստատ մնան Դեկոսի հալածանացը դէմ և արիանան: Բայց Վալերիանոսի կայսեր հալածանացն ատեն աքսորեցին հերձուածողներն զսուրբը. ապա 'ի 260 դարձաւ իր աթոռը, և դատապարտեց զՍաբէլ հերետիկոսն որ կ'ուրանար իրական զանազանութիւնը երեք անձանց սուրբ Երրորդութեան. և կը դնէր մի անձն աստուածութեան՝ ըստ այլևայլ գործոց կոչելով Հայր և Որդի և Հոգի, և այլն:

Յետոյ գրեց սուրբը իր ուղղափառ դաւանութիւնը Պօղոս Սամոսատացւոյն դէմ, որ կը քարոզէր Սաբէլի մոլորութիւնը, և այլն: Նաև գրեց շատ աստուածիմաստ ճառեր և գիտնական նամակներ. յայտնի կ'երևնայ իմաստութիւնը ընդհանրական գրած թղթէն առ Բասիլիդէս եպիսկոպոս: Շատ գրեանքը կորած են. Եւսեբիոս կը յիշէ անոր գրուածներուն հատուածները: Կան մեր ճառընտրին մէջ հայերէն թարգմանած անոր ճառերէն 'ի Գալուստ Փրկչին յԵրուսաղէմ, 'ի Յարութիւն և 'ի Համբարձումն Տեառն, և այլն։ Ուր կ'երևնայ սուրբ հայրապետիս հանճարամտութիւնը, զօրաւոր պատճառաբանութիւնը, և մեծ հմտութիւնը հանդերձ խոնարհ երկիւղածութեամբ. որ և առաքինազարդ սրբութեամբ փոխեցաւ առ Աստուած 'ի 17. հոկտ. 264։

ԴԻՈՆԵՍԻՈՍ սուրբ հայրապետ Հռոմայ՝ Յունաց ազգէ իմաստուն և սրբակաց՝ նստաւ յաթոռ սրբոյն Պետրոսի 'ի 261, որ զքանչելի վարդապետութեամբ կոնդակներ գրեց, և ամէն աշխարհ պայծառացուց սուրբ հաւատքը։ Մեծ գութ ունեցաւ տնանկներուն և հաւատքի համար հալածուողներուն վրայ, ամենայն կերպով օգնելով և մխիթարելով։ Ժողով ըրաւ Հռոմ, ու քաջութեամբ նզովեց Սաբէլը և ուրիշ հերետիկոսները. և այսպիսի արթնութեամբ և բարեկարգութեամբ կառավարելով եկեղեցին Քրիստոսի տասնըմէկ տարի, ապա նահատակ եղաւ Աւրելիանոսի հալածանքին ատենը 'ի 272։

ԴՈՄԵՏԻԱՆՈՍ ճգնաւոր մարտիրոս՝ յառաջ էր մոգ Պարսից, որ հետևելով սորվեցաւ ճշմարիտ հաւատն Քրիստոսի, ձգեց ծնողքն ու գնաց 'ի Մծբին, և եղաւ վանական ժուժկալ և խիստ ճգնազգեաց Սարգսի և Բագոսի վանքին մէջ։ Մինչև արժանի եղաւ տեսլեան Հոգւոյն սրբոյ աղաւնակերպ սուրբ պատարագին վրայ. երբոր այս հրաշքը Սուրբին վանահօրն ալ երևցաւ, հրաւիրեց զսուրբն Յակոբ ձեռնադրել տալու զԴոմետիանոս քահանայ։ Բայց նա լեռը փախաւ եղաւ խոտաճարակ երկու տարի զարմանալի առաքինութեամբ . ուստի առաւ Յիսուսէն շնորհք բժըշկութեան , ու սկսաւ քարոզել 'ի Միջագետս և դարձընել անհաւատները հրաշագործութեամբ ։ Յուլիանոս ուրացողն երբոր այն կողմերէն անցաւ , և լսեց մեծ համբաւը երանելւոյն՝ շատ հետևեցաւ՝ որ դարձընէ սուրբ Ճգնաւորը . ապա տեսաւ որ ըլլալու չէ , քարկոծել տուաւ երկու աշկերտներովը , որոնք փառաւորեցան սքանչելեօք և տօնախմբութեամբ ։

ԴՈՄԻՆԻԿՈՍ սուրբ հիմնադիր կարգին քարոզչաց՝ էր Սպանիացի ծնեալ յաղնիւ ծնողաց 'ի 1170 , և սնեալ առաքինի վարքով և գեղեցիկ ուսմամբ բարեպաշտութեան . քաջահմուտ հանդիսացաւ հարկաւոր գիտութեանց և աստուածաբանութեան մէջ ։ Այնչափ ողորմած էր և աղքատասէր , որ սովին ժամանակը ամէն բանը տալէն ետքը գիրքերն ալ ծախեց ու բաժնեց տնանկաց ։ Դոմինիկոս զարգացաւ իմաստութեամբ և հասակաւ , մինչև Դիեկոս եպիսկոպոսին հրամանաւ եղաւ կանոնիկոս եկեղեցւոյն Ոսմայ սուրբ Օգոստինոսին կարգին մէջ ։ Եւ այսպէս ամենուն բարի օրինակ ըլլալով ջերմեռանդութեամբ , պահօք և խոնարհութեամբ՝ կանոնիկոսներն իրենց առաջնորդ ըրին սուրբը , որ յետոյ հրամանաւ Թագաւորին գնաց եպիսկոպոսին հետ 'ի Դաղղիա ։ Ուր յայտնի եղաւ զօրաւոր քարոզութիւնը և անյաղթելի վարդապետութիւնը աստուածաբանական պատճառներով հերձուածողաց և մոլորեալ Ալբիկեանց դէմ ։ Եւ ապա կերպ կերպ հալածանքներ քաշելով նոյն այլափառներէն , սքանչելի համբերութեամբ և քաղցրութեամբ շատ մոլորեալ հերետիկոսներ ալ լուսաւորեց ճշմարտութեան լուսով։ Ալբեճն աղանդաւորներն փորձելով՝ կրակը ձգեցին սուրբ Դոմինիկոսին գիրքը և իրենց չարափառական գրուածքը․ բայց սուրբին գիրքը կրակէն դուրս ցաթկեց աղօթքով, իսկ անոնցը մէկէն այրեցաւ։ Աստուածամօրն շատ ջերմեռանդն ըլլալով այնչափ զօրացաւ հոգևորապէս, մինչև բիւրաւոր մոլորեալներ դարձուց յաստուածպաշտութիւն․ այլև յանձնելով զինքն նորա պաշտպանութեանը՝ արժանի եղաւ աստուածահրաշ տեսլեանց։ Որով ժողվեց աշակերտներն ու հաստատեց իւր կարգը Դոմինիկեան ուխտին՝ օգոստինեան կանոններով, հաւանութեամբ Ոնորիոսի Գ․ սրբազան պապին յամի 1216։ Յետոյ գիտնական աբեղաներէն քարոզիչ ղրկեց հեռաւոր աշխարհներ, 'ի Հայաստան, յԱսիա, յԱփրիկէ, մինչև 'ի Հնդիկս և ամէն քաղաք Եւրոպայի․ ուր շատ վանքեր շինուեցան այս կրօնին․ իսկ ինքն շինեց 'ի Հռոմ երկու վանք արանց և կանանց ընտիր կանոնադրութեամբ․ նաև հաստատեց աղօթքն Վարդարանին տասնըհինգ տուն մաղթանաց ուղերձեալ'ի պատիւ տնօրէնութեանցն Քրիստոսի միջնորդութեամբ Տիրամօր կուսին։ Նա այսպիսի երջանիկ վարուք սրբութեամբ և մեծամեծ հրաշագործութեամբ հանգեաւ 'ի Տէր սուրբն Դոմինիկոս 'ի Պոլոնիա Իտալիոյ յիսունևիրեք տարուան 'ի 1223․ ապա ծաղկելով սքանչելագործութեամբ՝ կարգեցաւ սրբոց դասը, և տօնեցաւ ըստ սահմանադրութեան Գրիգորի Թ․ քահանայապետին Հռոմայ։ Իսկ աշակերտներն կոչեցան Դոմինիկեանք։

Ժրագլուխ մեծագործք քաջ համբերատար
Ջանիւ վեհացան սերձ յուսապատար .
Գործեալ սխրալի գործ դիւցազնական
Եղեն հիմնադիրք բարեաց անկործան :
Վեհ Դոմինիկոս տիրական անուամբ
Առաքինահրաշ ճոխացաւ արդեամբք .
Յաղթեալ քաջապինդ հանուրց արկածից
Եհաս 'ի վայելս չքնաղ իւր ըղձից :

ԴՈՆՈՍ Ա. Հռոմայեցի՝ այր առաքելաշնորհ և զօրաւոր՝ ընտրեցաւ քահանայապետ ընդհանուր եկեղեցւոյ 'ի 676, և հնազանդեցուց ապստամբները՝ խաղաղ պահելով զեկեղեցին Քրիստոսի : Եւ յօժարեցոյց Կոստանդին արևելեան կայսրն որ վերցընէ Յունաց տարաձայնութիւնը, մաքրելով Միակամադաւանից աղանդը, և միացընելով զամէնքը 'ի միաբանութիւն ուղղափառ վարդապետութեան սուրբ եկեղեցւոյ : Որուն համար գրեցան կոնդակներ պատրաստութեան ընդհանուր ժողովոյ . բայց այս հարկաւոր բանին գործադրութիւնը դեռ չեղած՝ հասաւ վախճան կենաց սրբազան հայրապետին 'ի 678 . որով ամէն բան խափանեցաւ :

ԴՈՆՈՍ Բ. էր Հռոմայեցի, և 'ի 974 նստաւ հայրապետ յաթոռ սրբոյն Պետրոսի առաքելապետին . բայց վիճակ աթոռին և եկեղեցականաց խիստ խռոված ըլլալուն համար չի կրցաւ ուզած բարեկարգութիւններն հաստատել : Վասն զի անհանգիստ ժամանակը ամէնքը անհանգիստ ըրաւ . մինչև մեծ քահանայապետը տրտմութենէն չդիմանալով վախճանեցաւ տարիէն ետև :

ԴՈՐՈԹԷԱ, այսինքն աստուածապարգև՝ էր կոյս գեղեցիկ և շնորհալի հոգւով և մարմնով Կապադովկացի, զոր Դիոկղետիանոսի հալածանքին ժամանակը բռնեցին տարին Սաբրիկիոս կռապաշտ դատաւորին, որ շատ ահ տալով և խոստմունքներով փորձեց՝ որ ուրանալ տայ հաւատքը : Երբոր կոյսը մերժեց զան քաջութեամբ, հանեց կախաղանի վրան. իսկ երանելին ուրախութեամբ ըսաց. Անոր համար բարձրացուցեր զիս, որ համարձակ նայիմ իմ երկնային հայրենիքս վերի դրախտն ծաղկալից և պտղալից, ամենազուարճալի և անթառամ, ուր աղբիւր անմահութեան և անսպառ բարիք ամենայն խնդութեամբ լեցուն են : Բռնաւորն կախաղանէն իջուց կոյսն ու տուաւ երկու ուրացող քոյրերու, որ խաբէութ՟բ հաւատքէ հանեն. բայց նա զանոնք խրատելով դարձուց 'ի Քրիստոս : Ուստի իրեքը մէկտեղ ելան դատաւորին առաջն ու համարձակ խոստովանեցան թէ ահա պատրաստ ենք մեռնիլ սուրբ հաւատքի համար : Կատղելով դատաւորը նահատակեց այն երկու քոյրերը հնոցի մէջ ձգելով. իսկ զ'Դորոթէա նորէն հանելով կախաղանը տանջեցին չարաչար և այրեցին կողը. բայց նա երբոր զուարթութեամբ փառք կուտար Աստուծոյ՝ կը զարնէին երեսներուն, մինչև յոգնեցան դահիճներն. իսկ երանուհին մնաց անպարտելի և ուրախ հոգւով. ուստի վճռեց դատաւորն որ գլխատուի : Երբոր կը տանէին սուրբ կոյսը՝ հանդիպեցաւ իրեն Թէոփիլոս փիլիսոփայն, որ ծաղրելով ըսաց. Աղջիկ, ես լսեցի քեզմէ որ կը պատմէիր երկնային դրախտին վրա. թէ որ իրաւ հոն կ'երթաս այսպէս ուրախ հարսնիք գնացողի նման, կ' աղաչեմ ինձի տալ ղրկէ՛ այն ծաղիկներէն և պտուղներէն . իսկ կոյսը խօսք տուաւ որ կը ղրկեմ : Եւ երբ գըլխատման տեղը հասաւ կոյսը՝ սկսաւ աղօթել, հրեշտակ Տեառն երևցաւ իրեն ու տուաւ փոքրիկ կողով մը , մէջը կային իրեք կարմիր վարդ և իրեք անուշահոտ խնձոր : Կոյսը խնդրեց որ տանի տայ Թէոփիլոսին իր կողմանէ , և այն կէտին նահատակուեցաւ քաջութեամբ :

Թէոփիլոս առաւ հրեշտակէն ընծաները ու լուսաւորելով թողուց կռոց պաշտօնը և մկրտեցաւ . ապա ելաւ դատաւորին ատեանը համարձակ պատմեց եղած հրաշքը . զոր դատաւորը հանել տուաւ բազկատարած կախաղանին վրան . իսկ երանելին ասաց . Ահա հիմա եղայ ճշմարիտ քրիստոնեայ խաչելեալ Փրկչիս նման : Երբոր կը տանջէին քերանօք ասաց դատաւորը . Մնայէ՛ անձիդ ո՛վ թշուառական . պատասխանեց սուրբը , Դո՛ւն մնայէ՝ թշուառական հոգուդ : Ու ատենը գլխատեցին սուրբ վկայն յամին 300 :

Անբիծ աղաւնի հարսն անմահ Բանին
  Առաքինութեամբ յաղթէ չար դիւին .
  Մերժեալ զահ զերկիւղ բռուն ինքնակալաց
  Թեթև թևանայ առ փեսայն փառաց :
Այսպէս պերճացան երկնահոս շնորհօք
  Անթիւ օրիորդք սրբափայլ վարուք .
  Աս հիւսեալ պսակ կուսական զարդու ,
  Ընդ փայլն յաւերժ 'ի զուարթնոց պարու :

Ե.

ԱԳԻՏԻՈՍ Աբբայ՝ էր Աթենացի յարքայական զարմէ ի դարուն․ այր բարեկիրթ և աստուածապաշտ, նաև խիստ ողորմած և հրաշագործ։ Անգամ մը երբոր հանեց վերարկուն ողորմութիւն տուաւ աղքատ հիւանդի մը, մէկէն առողջացաւ․ դարձեալ բժշկեց օձահար մը և դիւահար մը․ ասոր այնչափ փառաւորեցաւ անունն՝ որ ուզեց անծանօթ աշխարհ մը երթալ հեռանալ փառքէն։ Երբոր նաւ մտաւ, մեծ ալէկոծութեան հանդիպեցաւ․ բայց աղօթքով ազատեցաւ և ելաւ 'ի Գաղղիա, ու գնաց սուրբ Մաքսիմոսին քով, որ եպիսկոպոս էր Արելատ քաղաքին, և քաղաքավարելով առաքինութեամբ և հրաշալի սրբութեամբ՝ հօն ալ անունը փառաւորեցաւ․ երկու տարիէն ետև ելաւ անկէց փախաւ, անցաւ Ռոդանոս գետը և գտաւ ճգնաւոր մը՝ կեցաւ քովը։ Երբոր հոն ալ իմացուեցան հրաշքները, անկէց ալ փախաւ մտաւ անտառներուն մէջ խոտաճարակ կը ճգնէր սրբութեամբ․ մինչ զի կենդանիները չէին փախչէր իրմէն։

Այն ժամանակը երբոր թագաւորն որսի ելաւ, եղնիկ մը փախչելով որսորդներէն գնաց ճգնաւորին քովն ընկաւ․ մէկ որսորդ մը առանց դիտելու նետը ձգեց, անգիտութեամբ զարկաւ սուրբին ։ Թագաւորն իմանալով սաստիկ ցաւեցաւ, և տարաւ մեծ գթութեամբ և հոգով դարմանել տուաւ առողջացուց ։ Այնչափ սիրելի եղաւ արքային, որ անոր խնդիրքովը շինել տուաւ հոն մենաստան աբեղայից, որոնց առաջնորդ Աբբայ եղաւ սուրբն Էգվինոս, և գեղեցիկ ծաղկեցուց վանքը բարեկարգութեամբ և բարի օրինակով · ապա յամի 700 վախճանեցաւ նոյն վանքին մէջ սրբութեամբ, և եղաւ տօնելի ։

ԷԴՈՒԱՐԴ Խոստովանող կոչեցեալ՝ որդի էր Էթելրեդայ արքային Անգղիացւոց և թոռն սուրբ Էդուարդայ նահատակին, որ երբ Դանիք կոխեցին Անգղիա՝ փախաւ գնաց քեռուն քով, որ էր Նորմանտիայի դուքս ։ Իւր թարմ հասակաւ մնաց սքանչելի մաքրութեամբ և սրբութեամբ, հոգեսէր և աղօթասէր իբրև մեռեալ աշխարհի այն փափկութեան և մեծութեան մէջ ։ Իսկ երբոր բռնաւորներն հեռացան անկէց՝ հրաւիրեցաւ գնաց հայրենիքն ու նստաւ հօրը գահն · բայց միշտ ջանաց զօրացընել կրօնն ու աստուածպաշտութիւնը, շինել նորոգել եկեղեցիներն, և այլն ։ Երբոր բռնադատելով ամուսնացուցին զինքն, նա թագուհւոյն հետ ուխտեց՝ որ իրենց կուսութիւնը ամբողջ պահեն, բարի օրինակ ըլլալով առաքինութեանց, հայր որբոց և խնամող աղքատաց, բաժնելով իրենց գանձը կարօտելոց ։ Մինչ զի արժանի եղաւ տեսնելու զՅիսուսը լուսափայլ՝ պատարագի ատեն ։ Շատ ջերմեռանդն էր Յովհաննու կոյս աւետարանիչին, որուն անուամբը ինչ որ խնդրէին կուտար · անգամ մը ուրիշ բան չունէր, մատնին հանեց տուաւ աղքատին · զոր յետոյ Աւետարանիչն դարձուց իրեն տեսլեան մէջ, նաև աւետիս տուաւ որ շուտով պիտի փոխի առ Աստուած, ինչպէս որ կատարեցաւ 'ի 1066 · յունվ, 5 : Ապա երեսունըվեց տարիէն ետև երբոր փոխադրութիւն եղաւ նշխարքին, գտաւ անապական և անուշահոտ : Այս սուրբ թագաւորն ունէր նաև հոգի մարգարէութեան, որ կատարեցան · և ինքն եղաւ տօնելի սուրբ Աստուծոյ հրաշագործ :

ԵԶԵԿԻԱ՝ էր արքայ Յուդայ, բարեպաշտ և աստուածասէր, որ յաջորդելով իր հօրը Աքազու 726 տարի Յիսուսէն առաջ, վերուց կորուց բոլոր կուռքերը և կռապաշտութիւնը · նաև պարտաւորեց քահանաներն որ սկսանին ըստ կանոնի կատարել տաճարին մէջ Աստուծոյ ճշմարիտ սուրբ պաշտօնները անխափան : Եզեկիա եղաւ Փղշտացւոց վրայ, ու քաջութեամբ առաւ այն քաղաքներն որ նոքա անիրաւութեամբ յափշտակեր էին · իսկ երբոր հիւանդացաւ ու խնդրեց Ստեղծողէն առողջութիւն, խոստացաւ Աստուած ձեռամբ Եսայեայ մարգարէին տալ իրեն տասնըհինգ տարւան ալ կեանք · և ասոր ճշմարտութեանը նշան ըլլալու համար ետ դարձուց տասը գիծ արևու ժամացուցին վրայի շուքը : Այլ երբոր իր գանձը ցցուց Բաբելացւոց արքային դեսպաններուն, սաստիկ յանդիմանեցաւ Եսայի մարգարէէն վասն սնափառութեանն · իսկ նա զղջմամբ շուտով թողութիւն գտաւ : Երբոր Սենեքերիմ Ասորւոց թագաւորը եկաւ Երուսաղէմայ վրայ, Եզեկիա մեծագոյն ընծաներով հազիւ սիրտն առաւ ու հաշտուեցաւ դաշնադրելով հետը :

Իսկ Սենեքերիմ Եգիպտոսէն որ դարձաւ, նորէն պաշարեց զԵրուսաղէմ. բայց Թագաւորին և ժողովուրդին աղօթքովը հրեշտակ Տեառն ջարդեց հարիւր ութսունըհինգ հազար զօրքը. մինչև կորագլուխ ետ դարձաւ Սենեքերիմ և սպաննուեցաւ որդիքներէն։ Եզեկիա շատ բարեպաշտական գործքերէն 'ի զատ՝ կոտըրտեց վերուց Մովսեսի պղնձի օձն, զոր կը պաշտէին Հրեայք յիմարութեամբ. ինքն վախճանեցաւ յիսունիրեք տարւան, Յիսուսէն 698 տարի առաջ։ Հրեայք կը պատմեն, թէ այս թագաւորը տեղեակ էր ուսումնական գիտութեանց, որ կարգադրեց իրենց տօմարը, և այլն։

Այս չնաշխարհիկ պատկեր տէրունեան
Լեալ իբրու կարօտ յանքաւ ճոխութեան,
Մերկ ամենևին յընչից և փառաց
Դէտակն ունելով անանց մեծութեանց։
Վարձանք արքայից և երանելեաց
Են փառք Անմահին և արդիւնք անձանց.
Առաքինափայլ բարեպաշտութեամբ
Ծաղկեցուցանել զհաւատս ընդ ուսման։

ԵԶԵԿԻԷԼ՝ էր որդի Բուզայ քահանային, և չորս մեծամատեան մարգարէից մէկն, որ պատանեկութեան ատենը գերի տարին յԵրուսաղէմէն 'ի Բաբելոն։ Ուր մարգարէացաւ սքանչելի և գաղտնածածուկ տեսիլքներով ժողովուրդին չարագործութեանցը և տաճարին աւերմանը վրայ. որով գերի եղան և կործանեցան. ու կ'ատէին զուրբը կարծելով թէ անոր գուշակութեամբն կորան։ Անոր համար շատ նեղութիւն քաշեց խստապարանոց Հրեիցմէ.

վասն զի նա որչափ կը ջանար դարձընելու զանոնք կռապաշտական չար ճամբաներէն, նոքա այնչափ աւելի կատղելով կը հալածէին և կ'անարգէին զմարգարէն ։ Ապա երբոր յանդիմանեց Դանայ և Գադայ ցեղին անօրէն դիցապաշտութիւնը նահատակեցաւ Դանայ իշխանէն· որ ձիու պոչէն կապեց ու քարոտ տեղեր քշելով չարաչար սպաննեց զերանելին ։ Իսկ օրինապահ բարեպաշտները թաղեցին պատուով՝ ի Բաբելոն այն տեղն որ կ'ըսուէր շիրիմ նախնեաց Աբրահամու, ըստ աւանդութեան Քաղդէացւոց ։

ԵԶՆԻԿ Կողբացի՝ էր աշակերտ սուրբ Սահակայ և Մեսրոպայ 'ի թուոյ Թարգմանչաց, և բանիբուն վարդապետ Հայոց, քաջ տեղեակ Յունաց և Ասորւոց լեզուին ։ Անոր համար առաքեցաւ յԵդեսիա Պաղնացի Յովսեփին հետ, որպէս զի Ասորերէն գրքերը թարգմանեն ու տանին Հայաստան ։ Անկէց անցան 'ի Կոստանդնուպօլիս, և գտան հօն դասընկերներն, ու սկսան միատեղ թարգմանութի ընել ։ Ապա յամի 431 ամին Եփեսոսի սուրբ ժողովքին վճիռը և ընտիր օրինակ մը Աստուածաշունչին ըստ եօթանասնից, բերին սուրբ Թարգմանիչներուն, որ թարգմանեցին հայերէն ։ Եզնիկ ձեռնադրեցաւ եպիսկոպոս Բագրևանդայ, բարեկարգեց ժողովուրդը, և 'ի 450 մտաւ Արտաշատու ժողովքին մէջ ընդդէմ կրակապաշտ Պարսից ։ Այս վարդապետս ունի գրած պիտանի գործքեր և ճառեր· գլխաւորն է գիրքը ներհակ Պարսից և Մանիքեցւոց և անաստուածից դէմ զօրաւոր պատճառներով և ընտիր շարադրութեամբ ։ Կան ճառընտրին մէջ զանազան հաստատածներ վարդապետութեան երանելւոյն 'ի վերայ հաղորդութեան և վասն արարչութեան, և այլն ։

ԵԶՐ կամ ԵԶՐԱՍ քահանայ Աստուծոյ, մարգարէ, գրիչ և ուսուցիչ օրինաց, էր որդի Սարեայ քահանայապետին՝ ծնեալ 'ի Բաբելոն, և լցեալ Հոգւով սրբով, նախանձաւոր եղաւ հին օրինաց ուսուցանելով և քարոզելով ամենայն ժողովրդեան Հրէից ։ Դարձեալ նորոգիչ եղաւ ոչ միայն կանոնաց և կարգաց, այլ և խանգարեալ աստուածաշունչ տառից. անոր համար կոչեցաւ Գրիչ օրինաց ։ Սան զի երբոր Քաղդէացիք առին Երուսաղէմ այրեցին տաճարը և ամէն գրեանքը, խափանեցաւ մովսիսական գրերով գրած աստուածաշունչ գրքերը, և այն տառերուն օրինակը միայն Սամարացւոց քով մնացեր էր իբր անծանօթ ։ Արդ այս Եզրաս աստուածաշնորհ՝ բերնուց սորված ըլլալով բոլոր սուրբ Գիրքը ժողվեց, մէկ օրինակ ըրաւ ու նորէն գրեց ճարտար քաղդէական տառերով, որ սորվեր էին Հրէայք, և մինչև հիմա նոյն գիրքը կը գործածեն. իսկ հին գիրը քիչ մարդ գիտէ՝ կոչելով գիր Սամարացւոց ։ Եւ այսպէս նախանձաւոր ըլլալով փառացն Աստուծոյ միշտ կը կարդար և կը սորվեցնէր ժողովուրդին աստուածային օրէնքն ու պատուիրանապահութիւնն Բաբելոնին մէջ օգնական ըլլալով քահանայապետաց Յովսեդեկեայ և Յեսուայ ։ Ուստի մեծապէս պատուեցաւ և սիրելի եղաւ Հրէից և հեթանոսաց վասն իմաստութեանն. նոյնպէս սիրելի էր երկայնաձեռն Արտաշէսի և Կիւրոսի արքայից Պարսից, որուն հրամանովը ելաւ Բաբելոնէն գնաց յԵրուսաղէմ մեծ պատուով, և սորվեցուց հոն օրէնքն Աստուծոյ. նաև սրբեց ժողովուրդը և քահանաները. ժողովելով ազգը 'ի նորաշէն տաճարն Զօրաբաբէլին, կը կարդար և կը մեկնէր Աստուածաշունչը ամէն օր։ Ահա այսպիսի բազմամեայ առաքինութեամբ վախճանեցաւ խաղաղութեամբ յԵրուսաղէմ։ Եզր ժամանակակից էր Մաղաքեայ վերջի մարգարէին, և ասոնցմէ ետև այլ մարգարէ չեկաւ մինչև 'ի Քրիստոս, որ տէրն էր մարգարէից։

ԵԶՐ կաթողիկոս լաւ սորված և կրթուած ըլլալով հայրապետանոցին մէջ, Քրիստափորէն ետև նստաւ սուրբ Լուսաւորչայ աթոռը 'ի 628. և խոհեմութեամբ կը բարեկարգէր վիճակը։ Երբ Հերակլ կայսր Յունաց գնաց Կարին և քաղաքապետ դնելով Մժէժ Գնունի. պատուիրեց որ ժողովք ընեն հաւատքի համար, և տարաձայնութիւնը Հայոց և Յունաց մէջէն վերցընեն, գնաց Եզր կաթողիկոս, և իր վարդապետներովն միաբանեցաւ Յունաց հետ, ընդունելով Քաղկեդոնի սուրբ ժողովքը 'ի 629. ուստի կայսրը մեծապէս պատուեց զկաթողիկոսը պարգևներով։ Երբոր դարձաւ Հայրապետն իր աթոռը, ամէն եկեղեցականներն ելան ընդ առաջ ու մեծ հանդէսով տարին 'ի քաղաքն և եկեղեցին։ Այս միաբանութեան դէմ ըլլալով Յովհաննէս փակակալը ոչ միայն չերևցաւ հոն, այլև հայհոյեց զկաթողիկոսը և զժողովն Քաղկեդոնի. նզովեցաւ հայրապետէն և արտաքսեցաւ 'ի Մայրոյ վանքը, ինքն ալ կոչեցաւ Մայրագոմեցի վասն մոլորութեանցն որ միշտ կը քարոզէր թէ ինքն և թէ մոլորեալ Սարգիս աշկերտն։ Եզր կաթուղիկոսն անկէ ետև շատ շինութիւն ընելով ընդարձակեց սուրբ Գայիանեանց քարակոփ վկայարանը, և քովը բնակարան քահանայից շինեց. Նաև աւելցուց Արևագալին ժամերգութիւնը: Բայց երբ Հագարացիք կոխեցին Հայաստան ու աւրեցին, հայրապետը կսկծալով հիւընդցաւ և վախճանեցաւ յամի 639:

Քաջազն ազգասէրք այսպէս ճգնեցան
Վասն օգտի ազգին հոգւոյ փրկութեան.
Հանին յանդնդոց զոգիս մութ խաւար,
Ի լոյս ճշմարտին պանծալ անմոլար:
Լեր օրինապահ յարգող կանոնաց
Հնազանդ և հլու սրբազան հովուաց.
Վայ որ քակեն զցանկ հայրենի կարգին
Օձահար տանջեալք յանզերծ գեհենին:

ԵՂԵՒԹԵՐԻՈՍ սուրբ քահանայապետն բոլոր հօտին Քրիստոսի՝ էր Նիկոպօլսեցի Յոյն ազգաւ, նստաւ պապ Հռոմայ 'ի 161, և տասնըհինգ տարի փառաւորապէս կառավարեց սուրբ եկեղեցին մերժելով Վաղենտինեան հերետիկոսները և հաստատելով սուրբ հաւատքը. շատ տեղ ալ իմաստուն քարոզիչներ ղրկելով պայծառացուց ուղղափառութիւնը: Լուկիոս արքայն Անգղիոյ լուսաւորեալ խնդրեց սրբազանէն բանիբուն վարդապետներ. և նա ղրկեց զՓոկաս և զԴամիանոս, որք կործանելով կուռքերն հաստատեցին քրիստոնէութիւնը 'ի Բրիտանիա: Լիոն քաղաքը Գաղղիոյ քրիստոնէութեամբ ծաղկելով, երբ որ շատ վկաներ ալ նահատակեցան, սուրբն Երանոս գնաց առ սուրբ քահանայապետն և մեծ յարգութեամբ հաստատեցաւ եպիսկոպոս Լիոնի · իսկ ինքն փոխեցաւ առ Աստուած 'ի 185 ։

ԵԼԵՒԹԵՐԻՈՍ եպիսկոպոս Լիւրիկեցւոց էր Հռոմայեցի, սարկաւագ Հայրապետին Հռոմայ, որ քսան տարւան ձեռնադրեալ եպիսկոպոս Լիւրիկիայի շատ անհաւատներ լուսաւորեց ։ Ադրիանոս կայսրն լսելով՝ ղրկեց վրան զՓելիկիա իշխանը, զոր սուրբը դարձուց 'ի Քրիստոս · որ ելաւ կայսեր դիմացն ու համարձակ վկայեց ճշմարտութեան ։ Ուստի դրին զինքը հրացեալ մահճի վրան · բայց չայրեցաւ · նաև դարձուց Կորևոս եպարքոսն՝ որ եկեր էր զինքը չարչարելու · բայց հաւատալով Քրիստոսի՝ ան ալ նահատակեցաւ ։ Իսկ սուրբ եպիսկոպոսը շատ տանջանքներէն ետև գլխատեցաւ Անթիայ մօրը հետ միատեղ, որ տօնելի եղան հրաշքներով ։

ԵՂԻԱ նախապատիւ մարգարէն Թեզբացի, էր յազգէ քահանայից ծաղկեալ 900 տարի Քրիստոսէն առաջ, որ գուշակեց Աքայաբ ամբարիշտ արքային թէ պիտի ըլլայ մեծ սով և չորութիւն վասն չարութեան նորա, որ տևեց իրեք տարի և վեց ամիս · իսկ ինքն անապատին մէջ կը կերակրէր Աստուծմէ ղրկուած ագռաւէն ։ Երթալով 'ի Սարեփթայ՝ յարութիւն տուաւ այրի կնոջ մը որդւոյն, և առատացոյց սափորին իւղը, որ անով կերակրեցան ամէն տունը ։ Աքայաբ երբոր զոհ կը մատուցանէր Բահաղու կռոցն, դիմացն ելաւ ու յանդիմանեց · և քուրմերը ժողվեց, հրաման ըրաւ՝ որ երկնաւոր հրով այրեն իրենց զոհը ։ Երբ նոքա չկրցան, Եղիա սքանչելեօք կատարեց իր պատարագը երկնային հրով, և ջարդել տուաւ չորս հարիւր յիսուն քուրմերը ։ Յետոյ գնացեալ 'ի Քորեբ լեռը արժանացաւ աստուածային տեսլեան, որ զօրացեալ՝ նորէն գնաց, կշտամբեց Աքայաբը՝ գուշակելով անոր չարաչար մահը, որ կատարեցաւ ։ Անկեց ետև թագաւորեց Ոքոզիա ու ղրկեց երկու զօրավարներ՝ որ բռնեն իրեն բերեն զԵղիան. բայց նա զանոնք հարիւր զօրքով կորուց երկնաւոր հրով ։ Անկեց ետև վերացաւ երկինքը Եղիա հրեղէն կառքով 895 տարի Յիսուսէն առաջ, և կայ մնայ կենդանի մինչև ցայսօր. և աշխարհիս վերջին ատենը պիտի գայ նահատակ ըլլայ Ենովքայ հետը, ինչպէս Յայտնութեան գիրքը կ՚ըսէ ։ Ուր ամէն քրիստոնեայք իբրև կենդանի մարգարէի Աստուծոյ ասոր յիշատակը կը կատարեն ։

ԵՂԻԱԶԱՐ էր որդի Ահարոնի երկրորդ քահանայապետ Հրէից, որ ըստ հրամանին Աստուծոյ հօրը տեղն անցաւ, ու գործակից ըլլալով Յեսուին՝ անցուցին Իսրայէլացիներն Յորդանան գետէն Աւետեաց երկիրը. ուր հովուեց ժողովուրդը ամենայն ուղղութեամբ և քաղաքավարութեամբ տասուերկու տարի մինչև 'ի մահն ։

ԵՂԻԱԶԱՐ քահանայ. Տ. ՄԱԿԱԲԱՅԵՑԻՔ ։

ԵՂԻԱԶԱՐ կաթուղիկոս Հայոց նախ եղաւ պատրիարգ Կոստանդնուպօլսոյ, առ որ գնաց Աստուածատուր պատրիարգն Երուսաղէմի, ու միաբան առին դռնէն հրովարտակ. և անով գնաց Եղիազար յԵրուսաղէմ, տիրեց սուրբ

Յակոբայ վանքին, զոր Յոյնք յափշտակեր էին Հայոց ձեռքէն ։ Յետոյ նոյն վանքը նըստաւ, և ջանաց որ կաթուղիկոս ըլլայ Հայոց · ուր կանգնեց եկեղեցի Էջմիածին անուամբ · և 'ի 1664 հրովարտակ առաւ, ու սկսաւ մեռոն օրհնել և եպիսկոպոսներ ձեռնադրել որպէս Կաթուղիկոս Երուսաղէմայ Քրիստոսական աթոռին ։ Յակոբ կաթուղիկոսն Էջմիածնի թէպէտ հրովարտակ հանել տուաւ անոր դէմ, բայց նա ետ չկեցաւ · մինչև 'ի 1680 վախճանեցաւ Յակոբ · և Էջմիածնի միաբաններն ընտրեցին Եղիազարն իրենց կաթուղիկոս, ու այն վտանգաւոր հերձուածը վերուցին ։ Եղիազար ապա գնաց իր աթոռը, և շատ շինութիւն ըրաւ հանդերձ կանոնադրութեամբ և խաղաղութեամբ մինչև վախճանեցաւ 'ի 1691 ։

ԵՂԻՇԷ առաքեալ էր աշակերտ սուրբ Թադդէոսի առաքելոյն, որ նորա կատարմանէն վերջը ձեռնադրեցաւ Եպիսկոպոս 'ի սուրբ Յակոբայ Տեառն եղբօրէն, ու նորէն դարձաւ արևելք՝ քարոզելով Հայոց, Մարաց, և Աղուանից ։ Ապա երբոր նահատակեցաւ մէկ աշկերտը 'ի Մահառ քաղաքը՝ ինքն անցաւ 'ի Դաշտակ աւանը, ուր նահատակեցաւ քարկոծմամբ · իսկ սուրբ մարմինը գուբը ձգեցին, որ անյայտ մնայ ։ Սակայն երանելին յայտնեց հրաշքով ժամանակէն ետև · զոր հանեցին անկէ, հանգուցին նախ 'ի գեղն Ուռեկան, յետոյ փոխադրեցին փառօք 'ի վանքն Ջրվշտիկ · ուր շատ հրաշքներ կ'ըլլար սուրբին բարեխօսութեամբն ։ Իսկ գուբին վրայ կանգնեց Վաչական բարեպաշտ արքայն Աղուանից մեծ սիւն մը՝ յիշատակ սուրբ Եղիշէ առաքելոյն . և այս սեանը վրա ձգնեցաւ Թագաւորին սենեկապետն ։

ԵՂԻՇԷ կամ սուրբ ԵՂԻՇԱ էր վարդապետ և գլխաւոր աշակերտ սրբոց Թարգմանչաց, նաև ատենադպիր մեծին Վարդանայ իւր ազգակցին, որ գրեց զհանդէս նահատակութեան սուրբ Վարդանանց և Ղևոնդեանց իբրև ականատես ։ Այս պատմագրութիւնը, կոչեցեալ Վարդան գիրք, շատ գերապանծ և վայելուչ շարադրած է . ամենայն կերպով քաղցր և գեղեցիկ . սկսեալ 'ի 439 տարւոյն մինչև 'ի 463 տարին կը հասցունէ, որ տպուեցաւ ուրիշ իրեն գրուածներովը ։ Սա կոչի նաև եպիսկոպոս Ամատունեաց, որ կը ձգնէր լեռներու մէջ Մոկաց և Ռշտունեաց կողմն . և գրեց խրատական կանոններ, Մեկնութիւն Արարածոց, Յեսուայ, Դատաւորաց և Հայր մերին . ունի և զանազան ճառեր Չարչարանաց, Թաղման և Յարութեան Տեառն, այլովքն հանդերձ ։ Այսպիսի սքանչելի վարդապետութեամբ և սրբութեամբ փոխեցաւ առ Քրիստոս երանելի վարդապետն Եղիշէ 'ի 480, և շինեցաւ եկեղեցի նշխարքին վրա իր ձգնարաններուն մէջ և տօնեցաւ ։

Թարգմանչաց վեհից ձեռնասուն ընտիր
Երհուն Եղիշէ բարուն հոգեկիր .
Ընդ աստուածիմաստ Րաբունապետացն
Եղև սուրբ Դպրոց Թարգմանն գերապանծ ։
Սոքա արդարև ծաղկինք դպրութեանց
Զանազան ուսմանց ազգիս Հայկազեանց .
Յոր ցանգ վայելեմք ըղձանօք սրտի
Ի պճնել նորօք զազգային մանկտի ։

ԵՂԻՍԱԲԷԹ սրբուհին էր կին Զաքարիայ քահանայապետին և մայր Յովհաննու Մկրտչին, Ահարոնի ցեղէն, որ ամուլ մնացեր էր երկար ժամանակ: Այս աւետեօք Գաբրիէլ հրեշտակապետին յղացաւ պառաւութեան ատենը և ծնաւ զՅովհաննէս սքանչելի տեսիլքներով. մինչ զի Աստուածամայրն գնաց այցելութիւն իրեն, և լցուց տունն օրհնութեամբ և աստուածային շնորհօք: Ասոր և մանուկն Յովհաննէս եղաւ շնորհալից Կարապետ որդւոյն Աստուծոյ, երկրպագելով յորովայնէ յորովայն: Սուրբ Պետրոս Աղեքսանդրացին կը գրէ, թէ Եղիսաբէթ Բեթղեհեմի մանկանց կոտորածին ատենը առաւ Յովհաննէսն ու փախաւ Հրէաստանի լեռներուն մէջ և հոն փոխեցաւ յաշխարհէս, յանձնելով զաւակն Աստուծոյ, որ անվնաս մեծցաւ հոն հրեշտականման:

ԵՂԻՍԱԲԷԹ պերճ դշխոյ Սպանիայի, էր դուստր Յովհաննու արքային Գասթիլիայի, որ ամուսնացաւ Ֆերդինանդոսի հետ տասնուինը տարւան 'ի 1469. և զօրանալով թագաւորեցին բոլոր Սպանիայի վրան, մինչև Մաւրիներն ալ հալածեցին անկէց: Այս դշխոյին ջանքովն եղաւ Ամերիկայի գտնուիլն. վասն զի քաջ և հաստատուն սիրտ ունէր, որ որոշած բանէն ետ չէր կենար առաքինի արութեամբ. մեռաւ յիսունըչորս տարւան 'ի 1504:

ԵՂԻՍԱԲԷԹ Փեթրովնայ կամ Պետրովեան էր դուստր մեծին Պետրոսի Ա. կայսեր Ռուսաց: Այս խոհեմ և առաքինի դշխոյն նստաւ յաթոռ թագաւորութեան 'ի 1742, և երբոր պիտի ամուսնանար՝ նշանածը մեռաւ.

անկեց եւ յաշխարհ չի մտաւ պարկեշտ թագուհին մինչեւ 'ի մահ : Ամենայն բարեկարգութեամբ և խաղաղութեամբ վարելով՝ կայսերութիւնը ծաղկեցուց եւրոպացի ուսումնականներուն ձեռքով . և այսպիսի բարի անուամբ և գործքով մեռաւ յիսուներմէկ տարուան 'ի 1762 : Աւելի բարեգութ ըլլալով զամենքը մօր պէս կը խնամէր . ամենեւին մարդ մը չդատապարտեց մահուամբ՝ ինչպէս ուխտ ըրեր էր : Այլ քսանըհինգ հազար բանտարկեալ և պարտաւորներ ազատեց . շատին պարտքն ալ իրեն գանձէն վճարեց , և ետ դարձուց այլոց ինչքը , որ տէրութիւնը գրաւեր էր . անոր համար մականուանեցաւ Բօղինեա , այս ինքն Դիւցազնուհի :

ԵՂԻՍԱԲԵԹ թագուհի Փորթուգալայ էր դուստր թագաւորին Արագոնայ , որ մնաւ զարմանալի բարեպաշտութեամբ , և եղաւ պահեցող , աղօթասէր , և ատեցող աշխարհի : Թէպէտ ակամայ կամօք ամուսնացուցին Դիոնեսիոսի արքային հետ . բայց իբրեւ մեռեալ աշխարհի միշտ կը պահէր իւր առաքինի սովորութիւններն , և ջերմ աղօթքով հրաշքներ կ'ընէր : Անգամ մը մէկ աղքատ կնկան վէրքը լզելով բուընտցուց , և կոյր աղջկան մը աչք լուսաւորեց . միշտ կը հոգար աղքատները և հիւանդանոցները : Նոյնպէս շինեց և զարդարեց եկեղեցիներ , վանքեր և դպրոցներ . ամենուն բարերար էր , և խաղաղարար արքային : Էրիկը մեռածին պէս նոյն օրը հագաւ կուսանաց զգեստ Ֆրանչիսկեանց . գնալով ուխտատեղիներ , մեծագին յիշատակներ ըրաւ էրկանը հոգուն համար : Յետոյ շատ բան աղքատաց և տնանկաց բաշխելով մտաւ իր շինած կուսաստանին մէջ։ Իսկ երբոր գնաց հաշտեցընելու երկու թագաւորներն, որ էին իր որդին ու փեսայն, հիւընդցաւ, և դիմելով առ Տիրամայրն՝ արժանի եղաւ նորա մայրական քաղցր այցելութեանը. և այնպէս ցնծութեամբ և սրբութեամբ աւանդեց հոգին 'ի 4. յուլ. 1336. և փայլեցաւ հրաշագործութեամբ նաև յետ մահուանը. մինչ զի երեք դարէն ետև ալ սուրբ մարմինը կը բուրէր անոյշ հոտ անապականութեան. և դասեցաւ ընդ սրբոց կանգն։

Դստերք իմաստունք լապտեր 'ի ձեռին
  Մտին յառագաստ անմահ փեսային.
  Անշէջ պահեալ ըզճրագն առաքինութեան
  Ի լոյսն անմատոյց պերճ հանդիսացան։
Դուռն առագաստին և քեզ մընայ բաց,
  Ե՛րթ բաղխեա՛ անքուն 'ի գործըս բարեաց.
  Թէ անզօր բնութիւնք այսպէս վեհացան,
  Դու զի՞ մնաս արտաքս զերթ յիմար կուսան։

ԵՂԻՍԷ մարգարէ էր որդի Սափատայ, Ռուբէնի ցեղէն, որ թողուց իր ագարակն ու տունը, աշակերտեցաւ Եղիային, և միշտ սպասաւոր եղաւ անոր մինչև վերջը՝ 907 տարի Յիսուսէն առաջ։ Իսկ երբոր վերացաւ Եղիա, ժառանգեց ոչ միայն նորա մաշկեակն ու անով անցաւ ընդ Յորդանան, այլ և կրկին ոգին՝ մարգարէութեան և հրաշագործութե՟ առաւ 895 տարի Քրիստոսէն առաջ։ Ուստի ըրաւ մեծամեծ հրաշքներ, քաղցրացուց Երիքովի ջուրը. և երբոր անհաւատից տղաքները զինքն ծաղրեցին, անիծեց, և արջերուն պատռել տուաւ. աճեցուց այրի աղքատ կնկան իւղն՝ որով վճարեց անիկայ իր պարտքը ։ Սոմնացի ամուլ կնոջն որդին յարոյց . բազմացուց հացն ու բաժնեց ժողովրդեան . բժշկեց Նէեման Ասորին բորոտութենէն , և այլն ։ Մահուանէն ետև ալ երբոր մեռել մը ձգեցին գերեզմանին մէջ , և Եղիսէի ոսկորներուն դպաւ՝ յարութ̃ի առաւ , և նոյն տեղն կոչեցաւ Սեբաստուպօլիս ։ Սուրբ մարգարէն հարիւր տարեան վախճանեցաւ 'ի Սամարիա 830 տարի Յիսուսէն առաջ . իսկ հրաշագործ գերեզմանն եղաւ հռչակաւոր ուխտատեղի մինչև սուրբ Հերոնիմոսին օրը , ինչպէս որ ինքը կը պատմէ . և եկեղեցին կը կատարէ միշտ երանելւոյն տօնը ։

ԵՄԻԼԻԱՆՈՍ Թրակացի էր ծառայ հեթանոսի Յուլիանոսի ատենը , որ վառեալ սատանայական նախանձով մտաւ գաղտ կռոց տաճարն ու կործանեց անոնց սեղանը և զոհը ։ Քուրմերը երբոր բռնեցին մէկ անմեղ հողագործ մը կը ծեծէին , Եմիլիանոս ելաւ դատաւորին ատեանն ու ասաց . Ես ծառայ եմ Քրիստոսի , ու կը փափագիմ կորսունցընել ձեր փուճ կուռքերը ։ Ասոր կատղելով հեթանոսները չարաչար ծեծեցին ու կրակը ձգեցին . բայց նա առանց այրելու մնաց այնպէս , և աղօթելով՝ աւանդեց հոգին . իսկ մարմինը առին քրիստոնեայք հանգուցին ։ Զոր փառաւորեց Աստուած տալով շնորհք օգնելու նաւակոծելոց ։

ԵՆՈՎՍ անդրանիկ որդին Սեթայ ծնեալ յամի աշխարհի 235 , յառաջադէմ եղաւ քան միւս եղբարքը . որ յուսացաւ կոչել զանուն Տեառն Աստուծոյ կարդալով յօգնութիւն , և սահմանելով աստուածային գլխաւոր պաշտօն և պատարագներ հաստատ յուսով, և այլն ։ Սա եղաւ հայր Կայենանայ, և աստուածահաճոյ քաղաքավարութեամբ ապրեցաւ ինըհարիւրհինգ տարի և մեռաւ ։

ԵՆՈՎՔ նահապետ՝ էր հինգերորդ յԵնովսայ և եօթներորդ յԱդամայ, որ այնպէս գերազանց և աստուածազգեաց եղաւ, մինչ զի Աստուած փոխեց զինքն երջանիկ վիճակի մէջ իրեքհարիւրվաթսունըվեց տարի ապրելէն ետև ։

Սա ըստ վարդապետութեան եկեղեցւոյ նորէն պիտի գայ Եղիա մարգարէին հետ աշխարհիս վերջի ատենն ու քարոզէ և յորդորէ զմարդիկ որ ապաշխարեն ։

Ենովք կը համարի առաջին մարգարէ գուշակելով գալիքները ինչպէս որ կը գրէ Յուդա առաքեալը. “Մարգարէացաւ վասն նոցա և եօթներորդն յԱդամայ Ենովք և ասէ. Ահաւասիկ եկն Տէր բիւրովք սրբովք հրեշտակօք առնել դատաստան ըստ ամենայնի„ ։ Իսկ ըստ պատմութեան Յովսեպոսի, Ենովք իւր աւանդութիւնները երկու սիւներու վրայ գրած էր. մէկը մինչև ան ատենը մնացեր էր Սուրայ երկիրը, և այլն ։

՚Նախահարք նախկին տիպք բարեպաշտից
 Բանիւ և գործով մարդկան հրահանգիչ,
 Զաստուածուսոյց բանս՝ աւանդս Ադամայ,
 Փոխեցին յորդիս մնալ յարակայ ։
Յուսով զօրացան ՚ի խոստմունս Իին
 Ճգնեալք յաշխարհի յերկինս՝ յածէին.
 Աստուածպաշտութեամբ ձըգելով ըզկեանս
 Հասին աւետեաց և անմահութեան ։

ԵՆՏԻՆՈՎՊԷ՝ էր Ճարտարապետ Կրետացի, որ 'ի 405 փախաւ Ադրիական ծովուն ծայրը իրեն տուն շինեց. ուր գնացին փախստականներ մօտ տեղերէն շինեցին քսանըչորս տուն. և այս եղաւ սկիզբն շինութեան Վենետիկ քաղաքին 'ի 421 ։ Այս Ենտինովպէին առջի տունը յետոյ շինեցաւ եկեղեցի սրբոյն Յակոբայ, որ կանգուն կայ մինչև հիմա Ռիալթօ թաղին մէջ, որ է առջի թաղը քաղաքին, և եղաւ անմահ յիշատակ անուան հիմնարկողին։

ԵՊԱՄԻՆՈՆԴ Թեբայեցի՝ էր արքայազուն քաջ զօրավար Յունաց, որ 371 տարի Քրիստոսէն առաջ մեծամեծ քաջութեամբ յաղթեց Լակեդեմոնացւոց յիսուն հազար զօրքով, ու մտաւ Լակոնիա, և ազատեց հայրենիքը Թեբէն, Լակեդեմոնացւոց բռնութենէն ։ Բայց երբոր այս մեծ յաղթութեամբ դարձաւ հայրենիքը, նախանձոտներն ուզեցին զինքը կորսունցընել. իսկ նա առաքինութեամբ միայն խնդրեց որ գերեզմանին վրա այսպէս գրուի. "Աս կորոյս կեանքը հայրենի հասարակապետութիւնը ազատելու համար" ։ Ժողովուրդը մեղքընալով ազատեցին զինքը մահուանէ, որ առաքինի քաջագործութեամբ անանկ զօրացաւ որ թշնամիները խայտառակեցան. և շատ յաղթութիւններ ալ ըրաւ անկէ ետև ։ Վերջապէս երբ Սպարտացւոց դէմ կը պատերազմէր սաստիկ քաջութեամբ՝ վիրաւորեցաւ սլաքով չարաչար. բայց սլաքը թողուց խոցին մէջն ու պատերազմը շարունակեց. և երբոր թշնամիները խորտակեցան՝ ասաց. "Շատ է ինծի որ յաղթող մեռնիմ". ապա երկաթը հանածին պէս խոցէն, փչեց հոգին քաջ առաքինին.

և երբ կը ցաւէին թէ անզաւակ կը մեռնիս, կ՚ըսէր. “Կը թողում իմ յաղթութիւններս ձեզի զաւակ”։ Սան զի ազատ էր, պարկեշտ, սակաւապէտ, արդար, անկեղծ և քաղցրաբարոյ, նաև բարի օրինակ առաքինութեանց։

ԵՊԻԿՏԵՏՈՍ փիլիսոփայն՝ էր Յերապօլսեցի Ա. դարուն, որ իրեն օգտակար իմաստասիրութեամբը մեծահամբաւ եղաւ Հռոմայ մէջ, և վարժապետութիւն ըրաւ Ադրիանոսի և Օրեղիոսի կայսերաց։ Այս իմաստասիրին ուսմունքը և գրուածքը աւելի մօտիկ է սուրբ Աւետարանին վարդապետութեանց. կ՚երևայ թէ տեղեակ եղած էր սուրբ Գրոց քարոզութեանցը, որ նոյն ժամանակը բաւական տարածուեր էր։

Սա գերի ընկած ատենը մխիթարուելով կ՚ըսէր. “Գտանեմ զիս յայնմ վիճակի, զոր վերին նախախնամութիւն վասն իմ սահմանեաց. ուստի՝ ի տրտնջելս զայսմանէ, մեղանչեմ ընդդէմ նորա”։ Շատ հեզ և հանդարտամիտ ըլլալով կը քարոզէր զանմահութիւն հոգւոյ և առաքինութիւն. նաև կ՚ըսէր թէ իմաստութիւնը այս երկու բառիս մէջն է, “Հրաժարիլ և համբերել”։ Արրիանոս սորա աշակերտը հաւաքեց իր վարդապետութիւնները ութը գիրք ըրաւ, բայց չորսը մնացին, զորս շատ ախորժանօք կը կարդային հին վարդապետները սուրբ Օգոստինոս, և այլք։ Եպիկտետոսին հողէ կանթեղն ծախուեցաւ մեռնելէն ետև իրեք հազար դենարի։

ԵՊԻՄԱՔՈՍ Եգիպտացի՝ էր քաջ և գեղեցիկ կտրիճ մը Պելուսիայէն, որ Դեկոսի հալածանքին ժամանակը երբոր տեսաւ վկաներուն տանջանքներն ու հրաշքները, վազեց կատունը և ջարդեց կուռքերը: Աստի դատաւորը զերանելին ուրիշներուն հետ բանտը դրաւ. բայց նա զօրաւոր քարոզութեամբ դարձուց 'ի Քրիստոս բանտապանները, և շատ զօրացուց կապեալները: Իսկ միւս օրը նոր դարձողներն ելան ատեանը և համարձակ յանդիմանեցին կռապաշտութեան պղծութիւնը, ուր մէկէն կտրեցին լեզուներն ու գլխատեցին: Ապա չարաչար տանջեցին զԱպլիմաքոսը. և երբոր արիւնը ցաթկեց կոյր աղջկան մը աչքին մէջ, բացուելով լոյս տեսաւ, անոր համար դատաւորը վճիռ տուաւ և մէկէն նահատակեց:

ԵՊԻՄԵՆԻԴԷՍ Յոյն բանաստեղծ Կրետացի շատ անգամ կը փակուէր քարանձաւներուն մէջ ու աներևոյթ կ'ըլլար, և անուն կը հանէր թէ մեռաւ: Եւ հոն յօրինելով իր կեղծ բանաստեղծութիւնը կ' երևցընէր թէ իւր կամքովը կը մեռնի, ու խօսակցելով չաստուածոց հետ կը սորվի քաւութիւն մեղաց, և ուզած ատենը յարութիւն կ'առնէ, և այլն: Սողոն փիլիսոփային հետ մեծ բարեկամութիւն ունենալով տուաւ իրեն օրինակ լաւ քաղաքական կարգաց. և ապա մեռաւ Կրետէ խորին ծերութեամբ 598 տարի Յիսուսէն առաջ: Շատ գրուածներ ունեցաւ, Պղատոն կը կոչէ զինքն “Այր դիւցազն”, և Պօղոս առաքեալ կը բերէ անոր ոտանաւորներէն. “Կրետացիք հանապազասուտք, չարաճճիք, դատարկապորտք”:

ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՔ Քերսոնայ կամ Խրիմու՝ էին 'ի Դ դարուն նահատակք և խոստովանողք ։ Վասն զի Դիոկղետիանոսի ատենը Երուսաղէմի՝ Երմոն հայրապետը առաքեց զԵփրեմ եպիսկոպոսը ՚ի Թուրքաստան, և զՎասիլիոս եպիսկոպոս ՚ի Խերսոն քարոզութեան համար, զոր քաղաքացիք հալածեցին անկէ ծեծելով. իսկ նա գնաց Պարթենոն լեռը կը ճգնէր ։ Բայց երբոր իշխանին մեռած որդւոյն յարութիւն տուաւ, մկրտեցաւ իշխանն բազմութեամբ. անոր համար անհաւատները բռնեցին սուրբ եպիսկոպոսը ծեծելով քաշեցին, մինչև աւանդեց հոգին ։ Յետոյ գնացին հոն ուրիշ եպիսկոպոսներ, անոնք ալ նահատակեցան. ապա Երմոն ղրկեց հոն իր աշկերտը՝ Եթերիոս եպիսկոպոսն սուրբ և առաքինի ։ Խերսոնացիք երբոր ան ալ չընդունեցան, գնաց առ մեծն Կոստանդիանոս և անոր զօրքովը դարձաւ հանեց Խերսոնէն մնացած անհաւատներն ու անոնց տեղը դրաւ քրիստոնեայ բնակիչներ. շինեց եկեղեցիներ. և քահանաներով պայծառացուց քրիստոնէութիւնը ։ Ապա նորէն ճամբորդ եղաւ ու Դանաբրիս գետին Սալոն կղզիին մէջ վախճանեցաւ, և գերեզմանէն հրաշքներ կ՚ըլլային ։ Յետոյ Կոստանդիանոս ղրկեց անոր տեղը զսուրբ Կապետոն եպիսկոպոսը, որ կռապաշտներուն ստիպելովը մտաւ կրակին մէջ, ու ժամ մը կեցաւ անկիզելի, և եմփորոնը կրակով լեցուց ելաւ դուրս, և այսպէս շատ անհաւատներ դարձուց հաւատքի բերան. ապա բարի ծերութեամբ հանգեաւ ՚ի Տէր ։ Ասոնց հետ կը պատուի յիշատակ Եփրեմի եպիսկոպոսին Թուրքաստանու. նաև Եւստորիոսի և Արկադէոսի եպիսկոպոսաց ։

ԵՊԻՓԱՆ մեծահամբաւ հայրապետն Կիպրոսի՝ էր ազգաւ Հրէայ, սուրբ վարդապետ եկեղեցւոյ ծնեալ՚ի 333, որ եղաւ հմուտ ամենայն օրինաց և աւանդութեանց Եբրայեցւոց։ Տեսնելով այս Ճգնաւորաց սքանչելի վարքը և սուրբ Հարց գործքը հաւատայ Մեսիային և մկրտեցաւ կրօնաւորելով և ծաղկեալ վարքով հրաշագործութեանց. մինչև կը պատկառէին իրմէն իշխանք և թագաւորներն։ Եւ երբոր եպիսկոպոս ձեռնադրեցաւ, առաւել փայլեցաւ վարդապետութեամբ և արդեամբք շարադրելով աստուածախնամ Ճառեր և գրքեր յօգուտ սուրբ հաւատոյ և ընդդէմ Արիանոսի և հերձուածողաց։ Առջի գիրքը կը կոչուի Դեղարան յիշելով հին աղանդները և մերժելով, զայս գիրքը շատ կը յարգեն վարդապետները։

Երկրորդ գիրքը կ՚անուանի Խարիսխ, որ կը Ճառէ վասն խորհրդոյ Երրորդութեան, մարդեղութեան, յարութեան մեռելոց, և ամենայն վարդապետութեանց հաւատոյ։ Երրորդն է Ճառ չափուց և կշռոց։ Չորրորդն է յաղագս երկոտասան գոհար ականց քահանայապետին Հրէից՝ լի հմտութեամբ։ Եպիփան ծերութեան ատենը գնաց ՚ի Կոստանդնուպօլիս և գուշակեց Ոսկեբերանին թէ չպիտի հասնի արտասահմանութեան տեղը, որ կատարեցաւ ետքը։ Նոյնպէս սուրբ Ոսկեբերան ալ անոր համար գուշակեր էր թէ չպիտի հասնի յաթոռը, որ շուտով կատարեցաւ. վասն զի Եպիփան Կիպրոս երթալու ատեն վախճանեցաւ նաւուն մէջ. իսկ մարմինը տարին թաղեցին իրեն եկեղեցւոյ մէջ յամի 403։

ԵՒՊՐԱՔՍԻԱ ճգնաւոր կոյս՝ էր մէկ հատիկ դուստր բարեպաշտօն Անտիգոնոսի սենեկապետին՝ յազգականութենէ Թէոդոսի կայսեր ։ Երբոր հայրը մեռաւ , թագաւորը նշանեց զինքը խորհրդական իշխանի մը որդւոյն . իսկ մայրն առաւ եօթը տարւան աղջիկը մտաւ կուսանաց վանքը ։ Յետոյ երբ մայրն ալ մեռաւ , հրաւէր եկաւ որ հարսնիքի պատրաստութիւն տեսնեն . բայց կոյսն հրաժարեցաւ ու գրեց կայսեր աղաչելով , որպէս զի թողու զինքն որ հարսն ըլլայ երկնաւոր փեսային ։ Որուն համար շատ ուրախ եղաւ թագաւորը և թող տուաւ իրեն կամքին . որ էր տասներկու տարւան , և սկսաւ զարմանալի սրբութեամբ ճգնութիւններ ընել պահօք և աղօթիւք միշտ հոգևոր ընթերցուածոց հետ ըլլալով , և խոնարհութեամբ ամենուն ծառայելով ։ Մինչ զի քաջութ՟բ յաղթելով նաև գիւական փորձութեանց , ծաղկեցաւ հրաշագործութեամբ . ապա երեսուն տարի ճգնութենէն ետև հանգեաւ 'ի Տէր , և թաղեցաւ մօրը քով ։

ԵՍԱՅԻ գլուխն մեծամնատեան մարգարէից՝ էր որդի Ամովսայ յարքունի զարմէ Դաւթի , որ յայտնի մարգարէացաւ զօրաւոր քարոզութ՟բ Փրկչին գալուստը 681 ամօք առաջ , նաև վասն սքանչելի պայծառութեան նոր եկեղեցւոյն և աշակերտելոյն Քրիստոսի . մինչև սուրբ Հարք մականուանեցին զնա Աստուածաբան մարգարէ ։ Այս սուրբ մարգարէն շատ մեծամեծ գործքերէն ետև որ կատարեց Յուդայի թագաւորներուն առջև , և յետ սքանչելի քարոզներուն , որ տուաւ ժողովրդեան , երբոր իմացաւ Մանասէ թագաւորին անօրէնութիւնը , ազդեցաւ անոր հրամանաւ գլխէն 'ի վար իբր հարիւր տարուան հասակին մէջ, և թաղեցաւ մօտիկ Սելովմայ աւազանին, որուն ջուրը կ'ըսուի թէ աղօթքով Եսայեայ բղխեցաւ: Իսկ սուրբ մարմինը հրաշագործութեամբ փոխադրեցաւ յետոյ 'ի Կոստանդինուպօլիս և ուրիշ տեղեր: Մարգարէութիւններն են վաթսունըվեց գլուխ, շատ գերապանծ ոճով և գեղեցիկ նմանութեամբք գրած:

Կայծակնամաքուր տեսանող հզօր,
Աստուածապատում քարոզ տիրազօր,
Շնորհալից բանիւ հոգեհրաշ գրչաւ
Բարձրացոյց ըզփառս Էին ինքնաբաւ:
Սա աստէն տեսող անպատում փառաց
Կշտամբիչ չարեաց ժանտ թագաւորաց,
Առ սէր օրինաց Բարձրեալ արքային
Սղոցեալ մարմնով սըլացաւ յերկին:

ԵՍԱՅԻ կաթողիկոս Հայոց նստաւ յամի 775, որ մանկութեան ատենը մնաւ կաթողիկոսարանին մէջ և եղաւ բարեկիրթ և ուսումնասէր աբեղայ, ինչպէս որ մայրը կը փափաքէր: Ապա յառաջադէմ ըլլալով ձեռնադրեցաւ եպիսկոպոս Գողթան գաւառին, յետոյ յաջորդեց Սիոն կաթողիկոսին, և հովուեց ժողովուրդը տասուերեք տարի. վախճանեցաւ 'ի 788, որուն յաջորդեց Ստեփաննոս Ա:

ԵՍԱՅԻ վարդապետ Հայոց Նչեցի առաջնորդ Գայլեձորոյ վանից 'ի ԺԳ դարուն, էր խոնարհամիտ և հեզահոգի, որ շատ աշակերտներ ունեցաւ, գլխաւորն եղաւ Յովհան Որոտնեցին, զոր Եսայի վարդապետ ղրկեր էր Մարթուղիմէոսի Դոմինիկեան Լատին եպիսկոպոսին 'ի մեծ Հայս, որպէս զի տեղեկութիւն տայ անոր Հայոց վարդապետութեանց և արարողութեանցը վրա: Բայց նա այնչափ կապուեցաւ սիրով եպիսկոպոսին հետ, մինչև ջանացաւ՝ որ լատին ծէսերը մտցընէ Հայոց եկեղեցւոյ մէջ: Ասկէց երբոր խռովութիւններ ծագեցան ազգին մէջ, ամէնքը մեղադրեցին անոր անխոհեմութիւնը: Այս բանիս համար գրեց Եսայի վարդապետ թուղթ խրատական առ Յովհան, որ խոհեմութեամբ շարժի ու խռովութիւն չհանէ, և այլն: Սորա անուամբ կան քանի մը գրուածներ, այսինքն Մեկնութիւն Եզեկիելի, Մեկնութիւն քերականութեան, և Պատմութիւն հաւատոյ, այլովքն հանդերձ:

ԵՍԹԵՐ էր 'ի ցեղէն Բենիամինի, դուստր հօրեղբօր Մուրթքէի իշխանաւոր Հրէի: Արտաշէս կամ Դարեհ արքայ Պարսից զայս գեղեցիկ Եսթերն առաւ իրեն կնիկ և թագուհի ըրաւ: Այն ատեն Համան սիրելի իշխանը ոխ ունելով Մուրթքէին վրա՝ հրաման առաւ արքայէն, որ ջարդէ բոլոր Հրէաները, Մուրթքէն ալ կախէ փայտէն: Եսթեր թագուհին երբոր լսեց՝ արտասուօք և խորգով պաղատեց առ Աստուած միաբան Մուրթքէին հետ. և ապա ընկաւ թագաւորին ոտքը խնդրեց ազատութիւն անանկ որ՝ ոչ միայն ազատեց ազգը այս կոտորածէն, այլև Մուրթքէի տեղը չար Համանն կախուեցաւ նոյն փայտէն անարգանօք: Հրեայք այս մեծ ազատութեան անջինջ յիշատակը ամէն տարի կը կատարեն տօնախմբութեամբ կոչելով Փուրիմ:

ԵՍՈՎՊՈՍ էր Յոյն հին առակախօս իմաստասէր ծնեալ գերութեան վիճակի մէջ և Քսանթոսի փիլիսոփային ծառայած, որ կնկանը խօսքովը վաճառեց Իդմոնեայ փիլիսոփային. Անոր քով սորվեցաւ իմաստասիրութիւնն ու բնախօսութիւնը իւր բարակ խելքովը, և զամենքը կը յորդորէր որ թողուն ծուռ ճամբանին ու լաւ ըլլան ինչպէս որ մարդկութեան կը վայլէ : Իսկ այս պիտանի խրատները առակով կը ձևացընէր շնչաւոր և անշունչ բաներն օրինակ բերելով՝ աւելի իմանալի ընելու համար իր բանը . ինչպէս որ սուրբ Գրոց մէջ ալ կան այսպիսի խրատական առակներ, զոր օրինակ Յովաս Իսրայէլի թագաւորը զակքանն ու եղևնափայտը օրինակ բերելով կը ծաղրէ զԱմասիա արքայն Յուդայի, և այլն :

Եսովպոս մեծ հնարագիտութեամբ և խելքով ազատեցաւ գերութենէն ու գրեց առակները, ընծայեց Կրեսոս Լիւդիայի արքային . և իմաստութեամբը շատ սիրելի եղաւ անոր 550 տարի Քրիստոսէն առաջ : Այս թագաւորին հրամանովը ելաւ շրջեցաւ Յունաստան և ամէն տեղ առակներովը անուանի եղաւ : Երբոր գնաց Դեղփոս կղզին ու տեսաւ տեղացոց անառակ ծուլութիւնը՝ սկսաւ առակներով կշտամբել որ առաքինութեամբ երկրագործութեան հետևեին, բայց նոքա անանկ գէշ թշնամացան, որ բռնեցին խեղճ Եսովպոսը բանտ դրին, զրպարտելով թէ կուռքին բաժակը գողցեր է : Ուր քանի մը առակներով ջանացաւ անօրէններուն սիրտը կակուղցընել, բայց ճար չեղաւ . գացին բազմութեամբ բանտէն հանեցին ու տարին լեռանը ծայրէն վար նետեցին սպաննեցին : Յունաստանի իշխանները լսելով զայս անօրէն սպաննութիւնը՝ մեծ սիրտցաւութեամբ գնացին Պեղոս կղզին ու Եզովպոսին սպաննողները բոլոր սատկեցուցին ։ Եզովպոսին առակները գրեթէ ամէն լեզուով թարգմանած է շատ կամ սակաւ թուով․ Սոկրատ հին ատենը զանոնք ոտանաւոր յօրինեց , որ հիմա կորած է ։ Իսկ մեր թարգմանութիւնն է իրեքհարիւրութ առակներ , որ իրեք անգամ տպագրեցաւ ոտանաւորներովը ։

Եզովպոս ներկուռ ուսմամբ հրաշալի
Անբաղդ վշտատես այլ մեծահոգի ,
Անհեթեթ մարմնով, մըտօք նրբացեալ
Առակս հանճարեղս ասաց գեղափայլ ։
Թէ բաղդին արկած դառնանայ ուժգին
Մարտիր արութեամբ ընդ վշտաբերին ․
Կա՛լ քեզ յօրինակ զԵզովպ չարաբաղդ
Լինել հեզութեամբ 'ի բնաւս բարեյաղթ ։

ԵՐԱՆՈՍ հետևող առաքելոց՝ էր մեծահամբաւ սուրբ հայրապետ Լուգդոն քաղաքին Գաղղիացւոց Բ դարուն , որ աշակերտելով սուրբ Պօղիկարպոսի և Պապիասի շատ զօրաւոր վարդապետ եղաւ թէ գրով, և թէ ճարտարախօսութբ̃ ընդդէմ անհաւատից և հերետիկոսաց ։ Նաև հետևելով վարուց սրբոց առաքելոց հաստատեց զմիաբանութիւն պառակտեալ եկեղեցիներուն պատճառաւ տօնախմբութեան զատկի ։ Վասն զի արևելցիք կը կատարէին զատիկը Հրէից հետ ․ իսկ արևմտեայք 'ի միւս կիրակէն 'ի 14 լուսնի մարտին ․ ապա միաբանեալ սկսան ամէնքը նոյն օրն տօնել, ժողովքներով ետքն ալ հաստատեցին ։ Երանոս այսպէս առաքինական գործքով և գրուածքներով երբոր կը քարոզէր զճշմարտութիւն, բռնուեցաւ Սեւերիանոսի կայսեր հալածանքին ատենը, և նահատակեցաւ սրով շատ ժողովրդով յամի 202 :

ԵՐԱՆՈՍ կամ ԵՐԻՆՈՍ՝ էր սուրբ եպիսկոպոս Սերմիոյ, որ Դիոկղետիանոսի հալածանքին ժամանակը երբոր անուանի եղաւ զօրաւոր քարոզութեամբ ճշմարտութեան, և առոյգ հասակովն անդադար կը սորվեցընէր ամենուն զքրիստոնէութիւն՝ բռնեցին կապանօք իշխանին ատեանը հանեցին : Իր քաջութեամբ պատասխան տալուն համար չարաչար ծեծելով բանտը փակեցին . բայց տեսան որ հաստատ է սուրբ հաւատքին մէջ՝ գլխատեցին կամուրջին վրայ ու մարմինը Սաւոն գետը ձգեցին ՚ի 303 :

ԵՐԵՄԻԱ մեծամասնեան մարգարէ՝ կուսակրօն, սրբեալ յորովայնէ, որդի էր Քեղկեայ քահանային ղեւտացւոյ . որ սկսաւ մարգարէանալ պատանեկութեան ժամանակը քարոզելով եռանդեամբ զբանն Աստուծոյ Հրէաստանին մէջ, մինչև որ առին Քաղդէացիք զԵրուսաղէմ : Բայց շատ նեղութիւն և սոսկալի հալածանք քաշեց անհաւան ժողովրդէն, մինչև կապեցին ու գուբը ձգեցին : Վասն զի միշտ երեսնին կը զարնէր իրենց անիրաւութիւնն, ու կը մարգարէանար անոնց չարաչար կորուստն և Երուսաղէմի կործանումն, վրէժխնդիր ըլլալով աստուածային օրինացն : Այս պատճառաւ գուբը ձգեցին որ մեռնի . ուսկից հանել տուաւ Աբդիմելէք Եթովպացին թագաւորին հրամանաւն . որ խղճալի ողբ յօրինեց ու կուլար չար ժողովուրդին վրայ : Իսկ երբոր Հրէայք գերի գնացին 'ի Բաբելոն՝ Երեմիա մնաց յԵրուսաղէմ, որ մխիթարէ մնացած ժողովուրդը, որոնք յետոյ ելան գնացին յԵգիպտոս և բռնութեամբ առին սուրբ մարգարէն ալ հետերնին տարին ։ Բայց նա հոն ալ միշտ երեսնին վար կ'առնէր կռապաշտութեանցը համար և կը մարգարէանար անոնց ալ կործանմանը վրա ․ ուստի կատղելով քարկոծեցին զերանելին 'ի Տափնաս 690 տարի Քրիստոսէն առաջ, որ քառասուն տարի մարգարէացաւ ։ Իսկ գերեզմանը մինչև հիմա կը պատուէն ամէն ազգք, որ Աղօթարար վամն ապերախտ ժողովրդեան և եղբայրասէր անուանեցաւ Մակաբէին տեսլեանը մէջ, զորօրինակ “ Եղբայրասէրս այս, սա է՝ որ բազում աղօթս անպակաս յաճախ մատուցանէ Աստուծոյ՝ Երեմիա մարգարէ Աստուծոյ ,, , և այլն ։

Երեմիա ողբս առեալ ցաւագին
Լայ անմխիթար 'ի գառն աղէտին ․
Ո̀չ զքաղաք զտաճարն և եթ մեծաշուք,
Եւ զհօգւոց կորուստ ազգին չարաշուք ։
Ո̀ւր են երկնահրաշ նշանք սրբութեան
Ո̀ւր աստուածախօս դաբիրն հրաշագան ․
Ոտնակոխ պղծոց բարձաւ սուրբ տեղին
Յանօրէնութեանց ապիրատ ազգին ։

Երեք մանկունք, Անանիա, Ազարիա, և Միսայէլ ։ Տ․ Դանիէլ ։

ԵՐՄՈԳԻՆԷՍ ։ Տ․ ՄԻՆԱՍ ։

ԵՐՄՈՆԷ՝ էր մարգարէուհի կոյս, դուստր Փիլիպպոսի աւետարանիչ առաքելոյն կամ սարկաւագին, որ գնաց յԵփեսոս Եւտիքեայ քրոջը հետ Յովհաննէս աւետարանիչը տեսնելու համար ։ Բայց մեռած գտնելով զնա աշակերտեցաւ Պետրոնիոսի նոյն տեղի քահանային · իսկ ինքն շնորհալից ըլլալով ունէր հոգի մարգարէութեան և շնորհք բժշկութեան , մինչև անունը հռչակելով երբոր անկեց անցաւ Տրայիանոս կայսրն , լսելով չարչարեց զնա ։ Եւ երբոր կը զարմանար անոր համարձակ քաջութեան և աստուածիմաստ քարոզութեանը վրա , լսեց երանուհւոյն մարգարէութիւնը՝ կայսեր յաղթական ըլլալուն համար 'ի Պարսկաստան , ուր կ'երթար · ապա ազատ թողուց զինքը ։ Իսկ 'ի 117 Ադրիանոս կայսրն շատ տանջեց զԵրմոնէ հաւատքի համար · այլ երբոր խայտառակ եղաւ , հրամայեց որ գլխատեն զկոյսն , սակայն դահիճներուն ձեռքը չորցաւ և հաւատացին Քրիստոսի · և սրբուհի կոյսն աղօթելով բժշկեց հոն գլխատման տեղը անոնց ձեռքն , ու իրեն հոգին աւանդեց խաղաղութեամբ Աստուծոյ ձեռքը ։

ԵՐՈՒԱՆԴ Ա · էր Հայկազն թագաւոր Հայոց , որ յաջորդեց հօրը իբր 580 տարի Յիսուսէն առաջ , և քիչ թագաւորելուն համար կոչեցաւ Սակաւակեաց ։ Սորա քոյրն առաւ Վարդգէս երևելի իշխանն որ շինեց զաւանն Վարդգեսի · ուր էր առաջ քաղաքն Արտիմէդ , որուն համար կը գրէ Խորենացին , թէ հիները կ'երգէին այսպէս · " Հատուած գնացեալ Վարդգէսն մանուկ 'ի Տուրհաց գաւառէն՝ եկեալ նստաւ զՇրէշ բլրով զԱրտիմէդ քաղաքաւ՝ զՔասաղ գետով , կռել կոփել զդուռնն Երուանդայ արքայի ,, ։ Վաղարշ թագաւորը յետոյ շինեց այս քաղաքն՝ ու անուանեց Վաղարշապատ ։

ԵՐՈՒԱՆԴ Բ. էր արքայ Հայոց, որ Սանատրուկի ցեղը ջնջելով թագաւորեց յամի Տեառն 68, և աթոռը փոխադրեց յԱրմաւիր քաղաք, զոր նորէն շինեց ու անուանեց Երուանդաշատ։ Ապա շինեց ուրիշ փոքր քաղաք ու հոն դրաւ կուռքերը անուանելով Բագարան, այսինքն տեղի բագնաց։ Նաև շինեց փառաւոր մայրաքաղաքն Երուանդակերտ. ուր փախաւ երբոր յաղթուեցաւ Արտաշէսին զօրքէն, և հոն պալատին մէջ սպաննուեցաւ սրով յամի 88. թագաւորեց քսան տարի։ Արտաշէս թաղել տուաւ զնա պատուով և մահարձանով։

ԵՒԱ էր նախամայր կողակից Ադամայ և ապաշխարողակից, զոր Յոյնք կը տօնեն ՚ի 19 դեկտեմ. մենք անուամբ Նախահարց կը յիշենք։ Տ. Ադամ։

ԵՒԱԳՐ Պոնտացի էր ճգնաւոր մեծանուն, կամ սարկաւագ աշակերտ Գրիգորի Աստուածաբանին, և աշակերտ մեծին Բարսղի՝ յիշատակեալ ընդ սրբոյն Մակարայ ճգնաւորի, որ ծաղկեցաւ աստուածիմաստ գիտութեամբ և գրեց երկու գիրք վարուց սրբոց և հոգելից խրատներ վասն միանձանց, որ թարգմանած են հայերէն. իսկ ինքն վախճանեցաւ սրբափայլ ճգնութեամբ յամի 406, զոր կը տօնենք և կը յիշենք պատարագին մէջ։ Կայ և ուրիշ Եւագր միայնակեաց ՚ի Դ դարուն, զոր կը դատափետէ սուրբն Հերոնիմոս իբրև մտերիմ բարեկամ Որոգինեանց, բայց բարեկամ ըլլալով միայն՝ մոլորած չըսուիր։

ԵՒԱԳՐԻՈՍ էր պատմաբան Յոյն Զ դարուն, որ հմտութեամբ գրելով իր պատմութիւնը կը հասնի մինչև 'ի Մօրիկ կայսր 'ի 594 . ստուգութեամբ է գրածներն և յատակ շարագրութեամբ ։ Վեց գիրք բաժնուած է անուանք եկեղեցական պատմութեան . և ինքն թագաւորական պաշտօններու մէջ ըլլալով աւելի տեղեակ էր նաև արտաքին պատմութեանց , և այլն ։

ԵՒԱՍՏՈՍ էր Հրէից ազգէն , և վասն առաքինութեանցն նստաւ քահանայապետ Հռոմայ յամի 112 , և մեծ խոհեմութեամբ կառավարեց զեկեղեցին Քրիստոսի իբր տասը տարի ։ Որ հաստատելով առաքելական աւանդութիւններն՝ պայծառացուց հաւատքը , և բաժնեց զՀռոմ զանազան վիճակի վրայ՝ որ վկայարաններ և եկեղեցիներ ալ շինեց ։ Մեծամեծ եկեղեցիները անուանեցան «ՊԱՐԷԿԻԱ , այս ինքն արքունի տաճար , և բաժնուեցան Աւագ առաջնորդներուն ։ Երբոր սուրբ հայրապետը այսպէս կը բարեզարդէր վիճակը , Տրայիանոսի հալածանքին ատենը բանեցին զերանելին ու վկայական մահուամբ նահատակեցին , ինչպէս որ յիշատակը կը տօնէ սուրբ եկեղեցին ։

ԵՒԳԻՆԷ կոյս էր դուստր ազնուատոհմ Փիլիպպոսի Հռոմայեցւոյ , որ գոլով այր իմաստուն և հանգարտ հաստատեցաւ եպարքոս Աղեքսանդրիայի , և գնաց հոն բոլոր ընտանեօքը ։ Եւգինէ քրիստոնեայ աղջիկներուն ընտանի ըլլալով կը կարդար սուրբ Գիրքն ու սրբոց վարքը , աւելի Թեկղի կուսին վարքը . ուստի հաւատաց Քրիստոսի և սորվեցաւ սուրբ հաւատքը ։ Ապա առաւ հետը երկու հաւատարիմ ներքիններ Պրոտոս և Յակինթոս, որոնց սորվեցընելով զճշմարտութիւնը՝ տարաւ առ Հեղինոս եպիսկոպոսն ու իրեքն ալ մկրտուեցան։ Ուր Եւգինէ փոխեց անունը Եւգինէոս անուանեցաւ, ու կրօնաւորի զգեստով վանք մտաւ ներքինեացը հետ միատեղ, և երբոր մեծ ճգնութեամբ և սրբութեամբ կը քաղաքավարէին, նախանձով դիւին գնաց իրեն կին մը Մելենա անուամբ, որ աղօթքով կուսին բժշկեր էր տենդէն, կ՚ուզէր հետը մեղանչելու։ Երբոր սուրբը վռնտեց չար կինը՝ գնաց Փիլիպպոս եպարքոսին զրպարտեց զԵւգինէ, թէ զիս կ՚ուզէր ապականել։ Ան ատենը գնացին բերին սրբուհին արեղայի ձևով հօրը ատեանը, որ յիշելով սուրբ Գրոց խօսքն, թէ “Ժամանակ է լռելոյ՝ և ժամանակ խօսելոյ„, յայտնեց զինքն հօրը. և աստուածային շնորհօքն դարձուց քրիստոնեայ ըրաւ հայրն ու մայրը Կղոդիա, նաև եղբայրները Սերգիոս և Աւիտոն։ Փիլիպպոս մեծ եռանդեամբ հրաժարեցաւ մարմնական իշխանութենէն, ու յետոյ ընտրեցաւ եպիսկոպոս Եգիպտոսի կողմանցն։ Որուն վրայ կատղելով հեթանոսները՝ տաճարին մէջ չարաչար խոցեցին, որ իրեք օրէն ետև վկայական մահուամբ փոխեցաւ առ Քրիստոս։ Ապա Եւգինէ կոյսն դարձաւ արևմուտք մօրը և եղբայրներուն հետ միատեղ. ուր քարոզելով զհաւատս Քրիստոսի՝ նահատակեցաւ բանտի մէջ սրով՝ նոյնպէս ներքինիքն ալ վասն անուան Տեառն գլխատեցան։ Իսկ մայրն ու եղբայրքը սրբութեամբ և խաղաղութեամբ կատարեցան ՚ի Գ. դարուն, և եղան տօնելի ամէնքը։

Քաջ ազնուուհի Եւգինէ կուսան
Թեւածէ առ Տէր լըքեալ զփառս համայն.
Մրցեալ ընդ մարմնոյ և բուռն ընդ դիւաց
Յաղթէ, հասանէ անթառամ փառաց։
Քանի՛ քեզ ամօթ թէ յետնեալ մնաս
Ի չքնաղ գործոց պերճ դիւցազնուհեաց,
Որք քնքուշ մարմնով հարին փշրեցին
Զարուեստ դիւական մարմնախորժ ախտին։

ԵՒԳԻՆԷՈՍ Ա. էր Հռոմայեցի և ընտրեցաւ տեղապահ սուրբ Մարտինոսի պապին, որ վարեցաւ յաթոռէն յամի 654։ Եւգինէոս մեծ խոհեմութեամբ կառավարելով իւր պաշտօնը՝ Մարտինոսէն ետև օծուեցաւ հայրապետ Հռոմայ նոյն տարին, ու իբր երկու տարի բարեկարգեց զեկեղեցին Քրիստոսի։ Որ շատ հեզ և ողորմած, խոնարհ և սրբակաց ըլլալով փառաւորեցաւ. իսկ 'ի 657 սքանչելի առաքինութեամբ փոխեցաւ առ Քրիստոս։

ԵՒԳԻՆԷՈՍ Բ. Հռոմայեցի հաստատեցաւ քահանայապետ հօտին Քրիստոսի 'ի 824. և վասն բարեկարգութեան սուրբ եկեղեցւոյ ժողով գումարեց 'ի Հռոմ վաթսուն եպիսկոպոսաց. ու կանոնաւորեց կղերիկոսներուն, և ծեսերուն կարգը։ Իսկ իրեք տարիէն ետև առաքինի վարքով փոխեցաւ առ Տէր։

ԵՒԳԻՆԷՈՍ Գ. աշակերտ սրբոյն Բեռնարդոսի և առաջնորդ վանաց սրբոյն Անաստասայ՝ ընտրեցաւ պապ 'ի 1145. բայց վասն խռովութեան Հռոմայեցւոց անցաւ 'ի Փարիզ 'ի 1147։ Ուր մեծապէս պատուեցաւ Լուդովիկոս արքայէն, և ժողովք ըրաւ Խաչակիր զօրաց համար ։ Ապա 'ի 1148 դարձաւ 'ի Հռոմ իւր աթոռը և խաղաղասէր քաղցրութեամբ խնամեց զամէնքը, այլ 'ի 1153 փոխեցաւ յերկինս սրբութեամբ ։ Սա ունի գրած զօրաւոր կոնդակներ և վճիռներ. նոյնպէս գրեց նամակ առ Գրիգոր Կաթուղիկոս, եղբայր Շնորհալւոյն, յորդորելով միաբանելու Լատինացւոց հետ ։

ԵՒԳԵՆԻՈՍ Դ. Վենետիկցի նստաւ յաթոռ սրբոյն Պետրոսի 'ի 1431, և մեծ ջանքով հետևեցաւ որ հերձուածողները շահի, և ժողովքներով միաբանէ 'ի մի հաւատ կաթուղիկէ սուրբ եկեղեցւոյ ։ Ապա 'ի 1438 Ֆերրարա ժողով գումարեց Յունաց հետ միաբանութիւն ընելու համար. յետոյ ժողովը փոխադրեցաւ Փլորենտիա, և հոն Յոյները միաբանեցան ։ Եւ երբոր այսպիսի հոգեշահ առաքինութեամբ կ'աշխատէր՝ հասաւ երանելւոյն մահը 'ի 1447. և ամէն բան անկատար թողուց գնաց առ Աստուած ։

ԵՒԹԱՂԻՈՍ՝ էր ներհուն գիտնական Եգիպտացի Ե դարուն, ըստ ոմանց եպիսկոպոս Սուլկիայ քաղաքին Ափրիկոյ, և ըստ այլոց՝ մեծանուն սարկաւագ ժամանակակից Աթանաս քահանային, զոր կը կոչէ եղբայր և հայր պատուական Կաթուղիկեայց յառաջաբանութեան մէջը ։ Եւ անոր յորդորանքով գրեր է նախադրութիւնքն և ցուցակք գլխոց գործոց Առաքելոց, թղթոց Կաթուղիկեայց և թղթոց Պօղոսի հանդերձ բաժանմամբ ընթերցուածոց, գլխոց, տանց, և այլն ։ Այս յառաջաբաններն ու ցուցակները յօրիներ է Եւթաղ յունարէն յամի 458. և մեր հին վարդապետք ընտիր հայկաբանութեամբ թարգմաներ են հայերէն , զոր տպագրեցինք Աստուածաշունչին մէջ յամի 1805 : Տես անդ :

ԵՒՍԵԲԻՈՍ սուրբ քահանայապետ ընդհանուր եկեղեցւոյ՝ օծաւ 'ի 309 . և մեծ իմաստութեամբ հետևեցաւ պահպանութեան կանոնաց ապաշխարութեան հաստատելով նախորդաց վճիռները , և շահելով մոլորեալներն ու ուրացողները : Արնոբիոս երևելի ճարտասանն ալ դարձաւ կռապաշտութենէն և եղաւ ջատագով ճշմարտութե՟ : Եւ այսպիսի արթնութեամբ Սրբազանը անարատ պահեց զհօտն , բայց զինքն բռնեցին անհաւատները տանջանքով նահատակեցին սուրբ հաւատքին համար 'ի 311 :

Շքեղ տենչանօք հովիւք Քրիստոսեան ,
Ի սէր սուրբ հօտին նահատակեցան ,
Առ միաբանել զանդամս Յիսուսին
Ի գաւիթ դառանց երկնաճեմ հօտին :
Երանի որք կան 'ի նոյն 'ի հանդէս
Հետևեալ հետոց Փրկչին քաջապէս :
Որ թողեալ յերկինս ըզհօտն անմոլար ,
Եկն և ըստանձնեաց զկորուսեալն ոչխար :

ԵՒՍԵԲԻՈՍ Պամփիլոս՝ էր ներհուն հայրապետ Կեսարիոյ Պաղեստինու ճոխ իմաստութեամբ և արտաքին տեղեկութեամբ , որ գերահամբաւ հռչակեցաւ ուսմամբ հնութե՟ց և սրբազան գրոց : Հաստատեց դպրոց գիտութեանց , և ձեռնադրեալ քահանայ՝ շուտով եղաւ յաթոռ եպիսկոպոսութեան Կեսարիոյ Պաղեստինու 'ի 313 : Այս միջոցն եղաւ

Արիոսեան հերձուածն ու նզովեցաւ 'ի սուրբ ժողովն՝ Նիկիոյ յամի 325 . Կոստանդիանոս այս ժողովքին մէջ աջ կողմը նստեցոյց Եւսեբիոսն , որ ճարտարախօսութեամբ քաջ վարդապետեց : Բայց Արիոսին կողմը բռնեց . նաև զանազան ժողովքներու մէջ գտնուելով սուրբ Աթանասին ալ դէմ եղաւ , ու Կայսեր ձեռքով Արիոսը աքսորանքէն ետ դարձընել տուաւ : Կոստանդիանոսի գովեստ մը շինեց , տուաւ . շատ չանցաւ ինքն ալ մեռաւ 'ի 338 : Շատ երևելի են գրած գրքերը . ա̃ Եկեղեցական պատմութ̃ի տասը գիրք . բ̃ Վարք մեծին Կոստանդիանոսի չորս գիրք . գ̃ Ժամանակագրութիւն 'ի սկզբանէ աշխարհի . դ̃ Գիրքն աւետարանական պատրաստութ̃եց տասնըհինգ գիրք , և ցուցմանց տասը գիրք . ե̃ Ճառ ընդդէմ Յերոկղէսի անհաւատին . զ̃ Մեկնութիւնք քանի մի սաղմոսաց և Եսայեայ . է̃ Ճառք ինչ . ը̃ Տեղագրութիւն քաղաքացն սուրբ Գրոց , և այլն : Ուրիշ գրուածքները բազմահմուտ վարդապետիս կորսուած են , նաև վեցիջեան համաբարբառ թարգմանութիւնը սուրբ Գրոց : Ժամանակագրութեանն ալ ամբողջը միայն հայերէն հին թարգմանութեան մէջ կը գտնուի , ուսկից որ ուրիշ լեզուներ ալ թարգմանեցան :

ԵՒՍՏԱԹԷՈՍ ս̃բ հայրապետն Անտիոքայ նստաւ պատրիարգ 'ի 322 , որ սրբոյն Աղեքսանդրի հայրապետին Աղեքսանդրիոյ ձեռօք , դատապարտել տուաւ զաղանդապետն Արիոս , և մի էր սրբոց հարց Նիկիոյ : Նաև գրեց Արիանոսաց դէմ, որոնք կատղելով սուտ յանցանքներ դրին սրբոյն վրան ու աքսորել տուին , որ փոխեցաւ առ Տէր ՚ի 337 ՚ի քաղաքն Փիլիպպէ ։ Սորա ճառը տպեցաւ որ գրած էր Սամուէլի պատմութե̃ մէջ յիշուած վհուկ կնկանը վրայ ։

ԵՒՍՏԱԹԻՈՍ կամ **ԱՊՂԱԿԻԴՈՍ**՝ էր զօրավար Դոմետիանոսի կայսեր՝ բարեսէր Հռոմայեցի, բայց հեթանոս ։ Օր մը որս գնացած ատենը դիմացն ելաւ եղջերու մը՝ որ ունէր գլխուն վրայ լուսափայլ խաչ և Քրիստոսի պատկերքը, և ձայն մը եկաւ իրեն, թէ “Ինչու կը հալածես զիս . ես եմ Յիսուս Քրիստոս ” ։ Իսկ նա սարսափելով երկրպագութիւն ըրաւ ու առաւ բոլոր ընտանիքը գնաց առ Յովհան եպիսկոպոս . սորվեցան սուրբ հաւատքը, և մկրտեցան . կինը անուանեցաւ Թէոպիստէ . իսկ երկու որդիքը՝ Ագապիոս և Թէոպիստոս ։ Ամէնքը հոգևորապէս շնորհազարդ ծաղկելէն ետև Յովբ երանելոյն նման սոսկալի նեղութիւն և աղքատութիւն քաշեց սուրբը . ամէն ապրանքը կորսնցնելէն ետև կինն ալ յափշտակեցին իրմէն ու որդիքն ալ ընկան գազաններուն բերանը ։ Իսկ ինքն աղքատ ողորմելի ձեռքը ծոցը կը պըտըտէր համբերելով ՚ի սէրն Քրիստոսի . մինչև սքանչելի կերպով անարատ դարձուց Տէր իրեն կինը, որդիքը, և բոլոր առջի մեծութիւնն ու պատիւը ։ Ալ երբոր կռապաշտներն իմացան անոր քրիստոնէութիւնը՝ Տրայիանոս կայսրը դատապարտեց ու պղնձէ տաք ցուլին մէջ ձգել տուաւ նահատակեց զերանելին կնիկովը և որդիքներովը յամի իբր 100 ։

ԵՒՍՏՐԱՏԻՈՍԵԱՆՔ՝ էին հինգ փառաւոր վկայք Դիոկղետիանոսի ժամանակը Հայաստանու կողմերէն ։ Առաջինն է սուրբն Եւստրատիոս Հայկազուն, անուամբ Տէր Յուսիկ, փոքր Հայաստանէն․ այր առաքինի և քաջ, որ վառեալ սիրով նահատակութեան ինքնակամ յայտնեց հաւատքը ։ Ուստի բռնեցին հեթանոսներն հանեցին ատեան ՚ի Սեբաստիա քաղաքն ու չարաչար տանջեցին քերանով, ծեծով, և կախաղանով, ապա ոտքը երկաթէ կօշիկ գամեցին ու կրակի մէջ ձգեցին նահատակեցին ։ Երկրորդն սուրբ Օքսենտիոս ընտիր քահանայ, որ շատ տանջանքներէն ետև ընկերներէն առաջ գլխատեցաւ․ բայց գլուխը հրաշքով ծառին վրա գտան ագռաւին ձայնէն ։ Երրորդն է սուրբ Եւգինէոս, որ կամաւ յայտնեց զինքն թէ Եւստրատիոսին ընկեր և աշակերտ եմ․ ուստի կտրեցին լեզուն, ձեռքն ու ոտքը ։ Չորրորդն սուրբն Ովրեստէս քաջ կտրիճ, որ ոսկի խաչը վզէն կախած տեսնելով չարչարեցին ու բանտը դրին մէկալոնց հետ․ ապա կրակի վրա պառկեցուցին, մինչև աւանդեց հոգին ։ Հինգերորդն սուրբ Մարդարիոս այր գեղջուկ, որ տանիքը շտկած ատենը տեսաւ որ Եւստրատիոս կապած կը տանէին, վազեց ետևէն կանչելով․ Տէր իմ ես ալ կը հետևիմ քու ճամբայիդ առ Քրիստոս ։ Ես միշտ կ՚ըսէր Քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ ։ Անոր համար չարաչար տանջանքով գլխիվար կախեցին և տաք շամփուրով ծակծըկելով նահատակեցին ։

Ապա ամենէն վերջը նահատակեցին հրով պարագլուխն սրբոց Եւստրատիոս, որ բանտին մէջ կտակ ըրեր էր, որ չորս ընկերներուն հետ միատեղ թաղուի յԱրօրկա իր քաղաքը․ ինչպէս որ կատարեց Սեբաստիոյ եպիսկոպոսը ։

Այսպէս սէր Փրկչին, տենչ անձնուելեաց,
Ստուեցին ըղխիտս անյաղթ մրցողաց.
Խոտել զանցաւորս ըղձալ անանցին,
Հրճուիլ յաւիտեան յանպայման բարին:
Նրանք կարդամք սրբոց երամին,
Որք ձգամբ գտին զերկնընթաց ուղին,
Արեամբ վերձեմեալ վարուք սրբութեան,
Ամբարձան փառօք յանմահից խորան:

ԵՒՏԻՔԷՍ վանահայր հերետիկոսապետ՝ էր Յոյն 'ի Ե դարուն. որ սաստիկ՝ Նեստորին դէմ խօսելով մոլորեցաւ մէկ ծայրէն մէկալը: Ասան զի կը քարոզէր թէ Քրիստոս մէկ բնութիւն ունի շփոթեալ. որուն գործակից եղաւ Դիոսկորոս Աղեքսանդրիայի պատրիարգը, և Պարսամ արքիմանդրիտ Սամոստացի, որք նզովեցան 'ի Կոստանդինուպօլիս և 'ի Քաղկեդոն յամին 451 և 458:

ԵՒՏԻՔԻԱՆՈՍ Լունացի՝ ընտրեցաւ քահանայապետ Հռոմայ 'ի 275, և օրինադրեց որ մեծ պաքին բակլայ դնեն խորանն ու օրհնեն. նաև խաղող օրհնեն. իսկ նահատակներուն մարմինը կարմիր կապայով թաղեն ինչպէս ինքն ալ իր ձեռքովը թաղեր էր իրեքհարիւր քառասունևերկու նահատակ. և յետոյ ինքն ալ նահատակեցաւ հաւատքի համար յամի 285. իսկ մարմինը փոխադրեցին իր հայրենիքը Լունա:

ԵՓԵՍՈՍԻ սուրբ ժողովք է երրորդ ընդհանուր սինհոդոս երկուհարիւր հայրապետաց, որ գումարեցաւ յամի 431. ուր նախագահ նստաւ 'ի կողմանէ սրբազան պապին Կիւրեղ Աղեքսանդրացին ։ Հոն դատապարտեցին զՆեստոր և զաղանդն իւր պիղծ . նաև հաստատեցին զաստուածամայրութիւն Տիրամօրն . որուն սահմանը բերին Հայաստան Թարգմանիչները , և կը տօնենք տօնը ։

ԵՓՐԵՄ Խուրի Ասորի , այս ինքն ընթերցող՝ էր զաւակ հեթանոսաց յԱմիդ քաղաքէ , որ ծնած ատենը երազի մէջ կը տեսնէին տղին բերանը բուսած խաղողի բարունակ պտղալից , ուսկից ամէն կենդանիք կ՚ուտէին , որ կը նշանակէր անոր աստուածատուր գիտութիւնը , որով կերակրեց զաշխարհ ։ Վասն զի Եփրեմ քրիստոնէից մօտենալով լուսաւորեցաւ և մկրտեցաւ . ապա առանձնացաւ անապատը՝ կը ճգնէր սրբութեամբ ։ Յետոյ երբոր լսեց սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետին անունը՝ գնաց իրեն աշակերտ եղաւ , ու միատեղ գնացին Նիկիոյ ժողովը ։ Ետքը նորէն առանձնացաւ Եդեսիայի լեռան վրայ կը ճգնէր . և ապա ծաղկեցաւ աստուածային իմաստութեամբ , սրբութեամբ , և հրաշագործութեամբ ։ Նաև իմանալով մեծին Բարսղի սքանչելի առաքինութիւնը , գնաց քովը ու ձեռնադրեցաւ սարկաւագ , և քահանայ . ապա դարձաւ յԵդեսիա կը քարոզէր զբանն կենաց յորդաբուղխ վարդապետութեամբ , մինչև կոչեցաւ Վարդապետ տիեզերաց և Քնար Հոգւոյն սրբոյ ։ Շարադրեց շատ հոգեշահ գրեանք մեկնութիւնք հին և նոր կտակարանաց . ճառք ՚ի տնօրէնութիս Քրիստոսի , առ սուրբս վասն ապաշխարութեան , և ընդդէմ հերձուածողաց . Յորդոր պահոց , աղօթից , զղջման , կրօնաւորաց , և վասն ամենայն առաքինութեանց , որով ինքն զարդարուած էր շնորհալից սրբութեամբ, և իմաստութեամբ, որով՝ի խոր ծերութեան անապատին մէջ հանգեաւ 'ի Քրիստոս յամի 379, և տօնելի եղաւ ։

ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՐԿՈՒ աշակերտք Քրիստոսի՝ էին օգնական և գործակիցք երկոտասան առաքելոց վասն քարոզութեան սուրբ Աւետարանին. ինչպէս որ Տէրն մեր ընտրեց ու երկու երկու ղրկեց, որ աւետարանեցին Հրէից ։ Նմանապէս համբարձմանէն ետև ղրկուեցան առաքեալներէն բոլոր աշխարհք, որ քարոզեցին ամէն ազգաց հեթանոսաց և նահատակեցան զանազան տանջանօք վասն անուան Տեառն, ինչպէս պիտի յիշենք յայտնիները ։

ԵՕԹՆ Խոտաճարակք՝ էին եօթը ճգնաւորք չորսը Յոյն, իրեքը Սպաստանէն, որ եկեր էին Հայաստան ու Գլակայ վանքը կը ճգնէին, անտառին մէջ խոտ ուտելով կ'ապրէին մեծ ապաշխարութեամբ քանի տարի ։ Յետոյ երբոր Պարսիկները կոխեցին Տարօն, այս ճգնաւորները գնացին վանքն ու յորդորեցին աբեղաները՝ որ փախչին անկեց ատեն մը. իսկ իրենք հաղորդուելով աղօթքի կեցան եկեղեցւոյ մէջ վասն փրկութեան երկրին. նոյն ատենը Պարսից զօրքն ալ հասան հոն ու կոտորեցին սուրբերը 'ի 604. և մարմիննին թաղեցան պատուով Անտոնի և Կրօնիդեայ ճգնաւորաց քով ։

ԵՕԹՆ մանկունք Եփեսոսի կամ Եօթն ննջողք՝ էին որդիք Եփեսոսի իշխանաց Դեկոս կայսեր հալածանաց ատենը, որոնք տեսնելով քրիստոնէից բարեպաշտութիւնը՝ հաւատացին Քրիստոսի և ծածուկ մկրտեցան, անուանելով Մաքսիմիանոս, Մարտինիանոս, Ամղիքոս, Դիոնեսիոս, Կոստանդիանոս, Անտոնիոս, և Յովհաննէս: Երբոր քրիստոնէութիւննին յայտնեցաւ, կռապաշտները հանեցին զիրենք յատեան, ուր համարձակ դաւանեցին զՔրիստոս, և իբրև անհնազանդ ծեծ կերան. բայց անհաւատները թող տուին զանոնք՝ որ երթան զգաստանան, ու դառնան: Իսկ նոքա ծածուկ քաղաքէն ելան գնացին Ողքոս մօտիկ լեռը կը ճգնէին այրին մէջ. և մէկն իրենցմէ որ ըստ օրէ ծպտեալ կ՚երթար քաղաքէն ուտելիք կը գնէր ու կը դառնար: Բայց մէկ գիշեր մը խորունկ քունի մտան ու այնպէս մնացին մեռելի նման անապական մինչև մեծին Թէոդոսի կայսեր օրը՝ իբր հարիւրքառսուն տարի: Ած ամենաբարին նոյն ժամանակը յարութիւն տուաւ իրենց ու խայտառակեց յարութիւն չկայ ըսող հերետիկոսները: Իսկ երանելիք մէկէն արթընցան ու իբր քունէն ելած Ամղիքոս ընկերնին ղրկեցին քաղաք որ հաց բերէ. բայց նա երբոր տեսաւ քաղաքին եղած փոփոխութիւնը և քրիստոնէութիւնը զարմացաւ մնաց: Ապա գնաց բդեշխին և եպիսկոպոսին պատմեց ամէն բան. ու առաւ զանոնք գնացին այրը տեսան ընկերները պայծառ նըստած, որ կը պատմէին քաշած հալածանքնին և ամէնքը կ՚ուրախանային աստուածային սքանչելեացը վրան: Իսկ եպիսկոպոսը շուտով գրեց իմացուց Թէոդոս կայսեր, որ փութով անցաւ Եփեսոս գնաց ու տեսաւ եօթը մանկունքն կայտառ և լուսափայլ. հիացաւ, և իջաւ ձիէն համբուրեց զանոնք լալով: Ապա մտան այրին մէջ միաբան գոհացան զԱստուծոյ.

իսկ մանկունքն առին եպիսկոպոսին օրհնութիւնն ու վախճանեցան հոն ։ Թագաւորը հրամայեց՝ որ փառաւոր դագաղի մէջ դնեն սուրբերուն մարմինը , և այրը եկեղեցի շինուի ու հոն հանգչին , և ամէն տարի հանդիսաւոր տօնը կատարուի յամի Տեառն 389 · ինչպէս որ մինչև ցայժմ մենք ալ ուրիշներն ալ կը տօնենք ։

Ո՞վ անճառահրաշ անըստեղծ մատին
Զանգոյակն ՚ի գոյ չքնաղ ածողին ,
Ո՛ր և զգոյս դարձեալ ՚ի չըգոյս փոխէ ;
Ըզմեռելոտին ՚ի կեանս վերըբերէ ։
Ա՛յս անշուշտ պատգամ է մարգարէին
Օրհներգուի գործոց Արարչապետին ,
Թէ մատնէ մահու՝ նոյն Տէր և կորզէ ,
Զի կենաց մահու իշխան նա ինքն է ։

* * *

Զ.

ԶԱՂԵՒԿՈՍ Օրէնսդիր՝ էր աշակերտ Պիւթագորասի 500 տարի Քրիստոսէն առաջ, որ օրէնք դրեր էր թէ շնացողներուն աչքը հանեն : Երբոր իր որդին այս յանցանքին մէջ ընկաւ, մէկէն հրամայեց որ աչքերը հանեն. ժողովուրդը աղաչեց՝ որ ներէ որդւոյն : Այն ատենը հանել տուաւ որդւոյն ձախ աչքն ու իրեն աջ աչքն. և ասով թէ օրէնքը անխախտ պահեց և թէ ժողովուրդին խօսքը չի կոտրեց, թէ հայր գթած ըլլալն իմացուց, և թէ արդար Օրէնսդիր ըլլալն յայտնեց. և անանկ դողացուց զամէնքն որ շնութիւնը հալածական ըրաւ այն կողմերէն : Արգելք դրաւ կանանց որ գինի չի խմեն բաց 'ի հիւանդաց. նաև ով որ անիրաւ տեղը օրէնքին դէմ խօսի, խեղդամահ սատկի, և այլ բարեկարգութիւններով խաղաղ պահեց ժողովուրդը մինչև 'ի մահն. և անուանի եղաւ հին օրէնսդիր իմաստասէրներուն մէջ :

ԶԱՄՈՍԿԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ՝ էր մեծահամբաւ ատենադպիր Լեհաց՝ գիտուն և Լեզուագէտ, որ հաստատեցաւ սպարապետ և դիւանադպիր. ու յաղթելով Ռուսաց ետ առաւ Լեհացոց տեղերը : Ուստի 'ի 1586 ընտրեցաւ թագաւոր Լեհաց . բայց մեծանձնութեամբ հրաժարեցաւ թագէն . ու ընտրել տուաւ զՍիկիզմունդ իշխանն Շվետաց, և նստեցուց թագաւոր : Իսկ ինքն խնամակալ եղաւ գիտնոց՝ շատ դպրոցներ կանգնելով 'ի Լեհաստան . և ամենևին թող չի տուաւ որ նորադանդ չարափառներն իր հայրենիքը մտնեն . մինչ զի անուանեցաւ "Պաշտպան հայրենեաց, և հաստատարան ուղղափառ կրօնից" : Նա 'ի 1605 փոխեցաւ յաշխարհէ առաքինութեամբ վաթսունուինը տարեան :

ԶԱՊԷԼ դշխոյ՝ էր համեստ դուստր Լևոնի Բ. արքային Հայոց . և էր միամօր, իսկ մայրն էր Լատին : Սա 'ի 1219 ըստ կտակի հօրն հաստատեցաւ Թագուհի Հայոց՝ Կոստանդին մեծ իշխանին ձեռքին տակը, որ նախ ամուսնացոյց զնա Փիլիպպոսի կոմսին Անտիոքայ . և նորա մահուանէն ետքը առաւ իրեն Հեթում որդւոյն 'ի 1222, որ նստաւ թագաւոր Կիլիկեցւոց : Իսկ առաքինազարդ Զապէլ դշխոյն ծնաւ իրեն զաւակներ, և անարատ քաղաքավարելով բարի օրինակ եղաւ ամենուն բարեպաշտութեամբ և աղքատսիրութեամբ մինչև փոխեցաւ առ սիրելի Փրկիչն 'ի 1252, լսելով ձայն յերկնից, "Եկ աղաւնի իմ, սիրելի իմ, կատարեալ իմ," : Հոն ներկայ գտնուելով Վահրամ արքունի դիւանագպիրն կը պատմէ ականատես . ուր կատարեցին փառաւոր թաղումն դշխոյիս արքայավայել հանդէսներով :

Զապէլ գերազան շքեղ Թագուհի
Պարծանք Ռուբինեանց պերճ առաքինի .
Թագ 'ի գլուխ պճնեալ գործովք բարութե
Տիրաբար ցնծայ 'ի փառս անվախճան :

Ամբիծ աղաւնի պատկեր Տիրածնին
Արժանի գտաւ ձայնի փեսային.
Ե՛կ իմ կատարեա՛լ 'ի լոյս անմատոյց
Պսակիլ գերապանծ Թագիւ անմարմնոց:

ԶԱՔԱՐԷ իշխան Հայ, Սպասալար արքային Վրաց, եղաւ սպարապետ մեծ 'ի 1184, և եղբայրն Իւանէ խնամակալ տէրութեն. որք միաբանութեամբ զօրացան Պարսից դէմ ու տիրեցին Սիւնեաց աշխարհին, և Շիրակին, Կարսին, և այլն: Յետոյ խնդրեց Դաւիթ կաթուղիկոսէն հրաման պատարագ ընել տալու բանակին մէջ, ինչպէս առաջ կըլլար. Կաթուղիկոսը ժողովք ըրաւ 'ի Կիլիկիա և հաստատեց անոր ուրիշ խնդիրներն ալ. ա՛ Պատարագել ոչ միայն վասն ննջեցելոց, այլև վասն կենդանեաց. բ՛ Ճրագալուցին պասը ձկնով և ձիթով լուծանել. գ՛ Սի առանց դպիր ձեռնադրելու սարկաւագ օրհնել, և այլն: Զաքարէ այս կանոնները ընդունեց վարդապետաց ժողովքով. ուր գլխաւորքն էին Մխիթար Գոշ, և Խաչատուր վարդապետ, որ երգեց հանդիսաւոր պատարագին և բանակին մէջ զայս գեղեցիկ երգս “Խորհուրդ խորին անհաս անսկիզբն„, որ մինչև հիմա կ՛երգենք պատարագին սկիզբն, և այլն: Զաքարէ շատ յաղթութիններ ընելէն ետև քաջութեամբ դարձաւ Լոռի իր քաղաքն ու մեռաւ առաքինութեամբ 'ի 1211, և թաղեցաւ 'ի Սանահին եկեղեցնայ դրանը քով:

ԶԱՔԱՐԻԱ՝ էր փոքրամատեան մարգարէ որդի Բարաքեայ ծաղկեալ Դարեհին օրն, 520 տարի Քրիստոսէն առաջ: Մարգարէութիւնն է խորհրդաւոր Յիսուսի գալստեանը վրայ չորեքտասան գլուխ ։ Սմանք կը համարին թէ քահանայ է, և վկայական մահուամբ սպանեալ է ընդ մէջ տաճարին և սեղանոյն ըստ բանի Փրկչին, զոր առանձին կը տօնենք ։

ԶԱՔԱՐԻԱ հայրն Յովհաննու Մկրտչի՝ էր քահանայ Աստուծոյ Ահարոնի ցեղէն, արդար առաջի Տեառն համդերձ ամուսնաւ Եղիսաբեթով, որ իրեն ծնաւ որդի ծերութեան սքանչելապէս . որով կապուեցաւ ու բացուեցաւ լեզուն հրաշքով Գաբրիէլի ։ Ուստի օրհնեց զԱստուած մարգարէանալով որդւոյն համար թէ այս մանուկս լինելոց է մարգարէ Բարձրելոյն և յառաջընթաց Կարապետ բանին Աստուծոյ ։ Ըստ ոմանց Յովհաննէս անապատ երթալէն ետև Հերովդէս սպաններ է Զաքարիան տաճարին մէջ ըստ Տեառն բանի ։

ԶԱՔԱՐԻԱ սուրբ քահանայապետ եկեղեցւոյն Քրիստոսի՝ էր Յոյն ազգաւ իմաստուն և առաքինի . որ ընտրեցաւ պապ 'ի 741, և գումարեց ժողով վասն բարեկարգութեանց ։ Նաև գնեց Վենետիկցոց գերիներն ու ազատեց . և մեծ քաջութեամբ դէմ կեցաւ արքայից և զօրացուց զուղղափառ հաւատքը, թարգմանելով 'ի Յոյն լեզու զտրամախօսութի̅ սրբոյն Գրիգորի մեծին ։ Այսպիսի գեղեցիկ կարգաւ կառավարեց զեկեղեցին տասը տարի . ապա ներելով թշնամեայն վախճանեցաւ սրբութեամբ . և նոյն օրն անցուցին անունը վկայաբանութեան մէջ ։

ԶԱՔԱՐԻԱ Ա. կաթողիկոս Հայոց՝ էր բանիբուն դպիր, զոր Սմբատ Բագրատունին ընտրել տուաւ 'ի 854. և ժամանակին կարճութեանը համար մէկ օրուան մէջ ձեռնադրեցին սարկաւագ, քահանայ, եպիսկոպոս, և կաթողիկոս։ Որ շատ լաւ կառավարեց ազգը գրելով թուղթ առ Փոտ պատրիարգն Յունաց որ չի նեղէն իրենց տակն եղած Հայերը. նաև խնդրեց իրմէն տեղեկութիւն Քաղկեդոնի ժողովին վրայ, զոր նեստորական կարծեր էին։ Փոտ երկար պատասխան կը գրէ ամենայն ճըշմարտութեամբ. մինչ զի ժողով գումարեց կաթողիկոսն 'ի 862, և հաստատեց զճշմարտութիւնն 'ի Շիրակվան։ Որ և գրեց մեկնողական ճառեր վասն ծննդեան, մկրտութեան և գալստեան Յիսուսի յԵրուսաղէմ. նաև վասն կատարածի աշխարհի, 'ի չարչարանս, 'ի թաղումն, 'ի սուրբ խաչն, 'ի սուրբ եկեղեցի, և 'ի ննջումն սուրբ Կուսին. իսկ ինքն վախճանեցաւ 'ի 876 իբր քսաներկու տարի նստաւ 'ի Աթոռին։

ԶԱՔԱՐԻԱ Բ. էր կաթողիկոս Աղթամարայ, որ լսելով Էջմիածնայ խռովութիւնը և Սարգիս վարդապետին բռնակալութիւնը զօրութեամբ Պարսիկ նախարարին՝ փութացաւ ինքը գնաց անկէց առաջ շատ ընծաներով առաւ նախարարէն զկաթողիկոսութիւնն, ու զաջը Լուսաւորչայ, և մեծ փառօք գնաց նստաւ յԷջմիածին 'ի 1461։ Աղթամարայ աթոռն ալ իր ձեռքն ըլլալով Սարգիս վարդապետը ձեռնադրեց եպիսկոպոս ու տեղապահ դրաւ. յետոյ ինքն ալ հոն գնաց նստաւ 'ի 1462։ Զաքարիա անուամբ կան քանի մը կաթողիկոմներ և պատրիարգներ . նոյնպէս Զաքարիա աշակերտ Թադէոսի առաքելոյն , որ ձեռնադրեց եպիսկոպոս իրեն տեղը կը հովուէր ժովուրդը ։

ԶԱՔԱՐԻԱ Գ. սուրբ կաթուղիկոս Աղթամարայ 'ի ԺԴ դարուն գոլով առաքինի և իմաստուն , Պարսիկները նախանձելով ամբաստանեցին Իզդին ամիրային , թէ զիրենք չարչարեր է ։ Ամիրայն հաւատալով սուտ ամբաստանութեանը կը ստիպէր կաթուղիկոսն որ ուրանայ զՔրիստոս , այլ նա երբոր մերժեց անոր խօսքը՝ Պարսիկները սուրբին վրան թափեցան վիրաւորեցին կուշտը և չուանով քաշեցին փողոցին մէջ , ու քարով նահատակեցին փշրելով գագաթը , որ օրհնելով զԱստուած կատարեցաւ . իսկ քրիստոնեայք տարին մարմինը մեծ պատուով թաղեցին Աղթամար յամի 1396 ։

ԶԵՆՈԲ՝ էր եպիսկոպոս Ասորի 'ի Դ դարուն Գլակ անուամբ , որ աշակերտելով սուրբ Լուսաւորչին նստաւ առաջնորդ Իննակնեան սուրբ Կարապետի վանքին Տարօնայ , որ կոչեցաւ Գլակայ վանք ։ Զենոբ հրամանաւ Լուսաւորչին գրեց Ասորերէն անոր 'ի Կեսարիա երթալու պատմութիւնը , և հոն ձեռնադրութիւնը , զփոխադրութիւնը նշխարաց սուրբ Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին , նաև Տրդատայ պատերազմն , և այլն ։ Որհին ատենը թարգմանեցին Հայերէն , և յետոյ տպագրեցաւ 'ի 1719 , և 'ի 1823 . զոր 'ի Է դարուն լրացուց Յովհաննէս եպիսկոպոս Մամիկոնեան , և կոչեցաւ Պատմութիւն Տարօնոյ ։

ԶԵՆՈԲԻՈՍ և ԶԵՆՈԲԻԱ էին եղբայր և քոյր Կիլիկեցի, Դիոկղետիանոսի ժամանակը։ Զենոբիոս եպիսկոպոս ձեռնադրեցաւ ու աղօթքով կը բժշկէր հիւանդները և կը լուսաւորէր քրիստոնէութեամբ. ուստի բժիշկներն մատնեցին Լիւսիա դատաւորին, որ կախել տուաւ սուրբ եպիսկոպոսն ու չարաչար տանջեց մարմինը։ Քոյրը լսելով գնաց դատաւորին առաջ. Ես ալ քրիստոնեայ եմ՝ և յանդիմանեց հեթանոսաց անգթութիւնը։ Բռնեցին տանջեցին, և երկուսն ալ տարածեցին կրակի վրայ. և երբոր նաև եռացեալ ձէթին մէջն ալ անվնաս մնացին, տարին քաղաքէն դուրս գլխատեցին. զոր թաղեցին տապանաւ լեռան վրայ։

ԶԵՆՈՆ զօրական Մաքսիմիանոսի կայսեր, էր Արաբացի. և երբոր յայտնեցաւ քրիստոնէութիւնը, բաշխեց ամէն բանը աղքատաց, ու ծառաներն ալ ազատ ըրաւ։ Միայն մէկ ծառայն Զենան անուամբ պատանին չի բաժնուեցաւ իրմէն. զոր առեալ քաջն Զենոն ելաւ Մաքսիմոս դատաւորին ատեանը, և համարձակ դաւանելով զՔրիստոս, զարկաւ ոտքովը խորտակեց առջևի բագինն։ Ուստի կախեցին և ծեծեցին սուրբը քերելով մարմինն և հրացեալ շամփուրով ալ այրեցին կուրծքը. ապա երկուքը մէկտեղ կախեցին ու կրակը ձգեցին. երբոր անվնաս պահեցան և հաստատ ՚ի սուրբ հաւատս՝ սրով նահատակեցին։

ԶԵՆՈՆ նախնի փիլիսոփայ էր Յոյն Կիպրացի, որ վասն վաճառականութեան գնաց Փիւնիկէ, և դառնալու ատեն ալէկոծութեամբ ընկաւ Աթէնքին քովերը։ Եղաւ ցամաքն ու շիտակ գնաց քաղաքը՝ ուր երբոր լսեց հօրը ապրանքով լեցուն նաւերուն կորուստը, տրտմելէն մտաւ գրքածախի մը խանութ, և ուզեց գիրք մը կարդալ տրտմութիւնը անցընելու համար. առջի գիրքն որ առաւ, էր Քսենոփոնտին Ճառը. կարդալով վառեցաւ սիրտը ուսումնասիրութեամբ և խնդրեց վարժապետ մը Ճարտասանութեան: Այն միջոցին անկեց կ՚անցնէր Կրատէս իմաստասէրն. գրքածախն ասաց Զենոնին. Ահա քեզի վարժապետ. գնաց քովն եղաւ իրեն աշակերտ տասը տարի. յետոյ գնաց ուրիշ փիլիսոփաներու ալ աշակերտ եղաւ տասը տարի, լաւ սորվեցաւ ամէն ուսումները: Ապա բացաւ դպրոց ու երևելի շատ աշկերտներ ունեցաւ. ուստի այն ալէկոծութիւնը իրեն մեծ յաջողութիւն կը սեպէր, որ պատճառ եղաւ գիտուն ըլլալու: Ան կը ջանար որ տուած խրատները գործքով կատարէ: Կը սիրէր Թշնամին և ամենուն բարերար էր. նաև միշտ իր գործքը կը քննէր. ամենևին փառք պատիւ չէր սիրեր: Միշտ միակերպ էր թէ հանգստութեան մէջ, և թէ նեղութեան. սովոր էր ասել. “ Բարեկամն է միւս ես: Կատարելութիւնն հաստատեալ է ՚ի սակաւս: Անութիւնն ետ զերկուս ականջս և զմի բերան, առ ՚ի լսելոյ բազումս և խօսելոյ սակաւս „: Որ և առողջ ապրեցաւ մինչև մեռաւ իննուսունըութ տարեկան ուրախութ̄ 264 տարի Քրիստոսէն առաջ: Աթենացիք վրան կանգնեցին փառաւոր շիրիմ:

ԶԵՓԻՒՌԻՆՈՍ՝ էր Հռոմայեցի սուրբ հայրապետ. նստաւ յաթոռ սրբոյն Պետրոսի ՚ի 203., և բարեկարգութեամբ կառավարեց զեկեղեցին Քրիստոսի տասնըութ տարի Սեւերոսի կայսեր հալածանաց ատեն ։ Մերժեց աղանդաւորները հաստատելով ուղղափառութիւնը ։ Սահմանեց որ ձեռնադրութիւնը հանդէսով ըլլայ յեկեղեցին, և ամէն տարի քրիստոնեայք հաղորդուին 'ի զատկին, և այլն ․ որ և փոխեցաւ սրբութեամբ 'ի 221 ։

ԶՈՍԻՄՈՍ սուրբն ազգաւ Յոյն ընտրեցաւ քահանայապետ Հռոմայ 'ի 417, և գլխահար եղաւ Պեղագեան հերձուածողաց ․ նաև զօրաւոր կոնդակներով փառաւորեց ուղղափառ եկեղեցին ։ Կանոնադրեց եկեղեցականները՝ սարկաւագներուն ալ պատուիրեց որ ձախ ուսերնին բեհեզ ուրար կրեն, և այլն ։ Այսպիսի գեղեցիկ կառավարութեան մէջ հասաւ մահը սուրբ հայրապետին 'ի 418 ։

ԶՈՒԱՏ կամ **ԶՈՒԻԹ** էր երէց Արտաշատու Տիրան արքային օրը ։ Պարսիկները երբոր կոխեցին Հայաստան և կողոպտեցին եկեղեցիները՝ գերի տարին նաև զսուրբ երէցն Զուատ, և կապանքով հանեցին Շապուհ արքային առաջը ։ Որ տեսնելով փառացի անձն սրբոյն՝ կը ջանար որ հանէ հաւատքէն ասելով․ Դուն մոգ ես, մազերդ ճերմակ են, մօրուքդ թուխ, արդ քեզի ճար չկայ ապրելու թէոր ուրանաս Քրիստոսդ ։ Որուն պատասխանեց սուրբ երէցը ․ Մոգութիւն և կախարդութիւն հեռու է մեզմէ ․ իսկ մազերուս գոյնը չէ օտար բնութենէ, վասն զի գլխոյս մազը քսան տարի առաջ բուսած է քան մօրուացս, և այլն ։ Յետոյ սկսաւ քաջութեամբ դաւանել զաստուածութիւնն Քրիստոսի, և անարգել զանաստուած Պարսից մոլորութիւնը . ուստի կատղելով գլխատեցին զերանելին , որ եղաւ տօնելի :

ԶՈՒԻՆԳԼԻՈՍ հերետիկոսապետ Զվիցերի էր 'ի ժԵ դարուն աւագերէց Ցուրիկ գաւառին մէջ : Լեւոն Ժ . սրբազան պապն ասոր օրը կոնդակ հանեց օրհնութեան և ներողութեան ընդ բոլոր Եւրոպիա ձեռամբ Ֆրանչիսկեան աբեղայից . այս բանիս համար նախանձելով կատղեցաւ հերետիկոսը , և սկսաւ մերժել աթոռն Հռոմայ , և ներողութեան օրհնութիւնը , և սրբոց բարեխօսութիւնը . նաև ուրացաւ բոլոր եկեղեցական կանոնները , խորհուրդները , և ծէսերը :

Ապա 'ի 1513 տարածելով չար աղանդը սկսաւ պատռել սուրբ պատկերքները , և կործանել խորանները . յետոյ ելաւ լրբութեամբ կարգուեցաւ : Եպիսկոպոսները այն կողմի ազգային ժողովքով դատապարտեցին զանօրէն Զուինգլիոս և զաղանդն չար . բայց նա աղանդակիցները ժողվեց ու պատերազմ ըրաւ ուղղափառաց հետ , որոնք զարկին սատկեցուցին զաղանդապետն 'ի 1521 . որ էր քառասունչորս տարուան : Թէպէտ չարը կորաւ , բայց աղանդը նման ըլլալով Կալվինին՝ երեքտասան նահանգին կէս ժողովուրդը խմորեցան մինչև հիմա . այլ ուղղափառ Զվիցերիները խիստ հաստատ և ջերմեռանդ են վասն ճշմարտութեան հաւատոյ :

ԶՐԱԴԱՇՏ՝ էր մեծահամբաւ մոգ Պարսից , զոր ոմանք համարին Զրուան չաստուածն , և ոմանք Քամ , Մովսէս , Եղիա , իսկ այլք կոչեն Թագաւոր Բակտրիացւոց , և այն : Յայտ է թէ եղեր են զանազան օրէնսդիր Զրադաշտներ . ինչպէս Պղատոն ալ կը դնէ Զրադաշտ մը որդի Որմզդայ և վարդապետ օրինաց Պարսից , որ երկու սկզբունք կը քարոզէր բարի՝ արարիչ բարեաց , և չար՝ չարաց : Կը յորդորէր պաշտել զԱստուած երկնից , և երկրպագել արևու և կրակի , միշտ վառ պահելով հուրը : Այս աղանդաւորներէն մինչև հիմա կան Պարսից և Հնդկաց կողմերը , որք յիմարութեամբ կը պատուեն զարեգակն և զկրակն . նաև միշտ վառ պահելով կը հաւատան թէ Զրադաշտին իրենց տուած հուրն է հրաշագործ :

ԶՕՐԱԲԱԲԷԼ Սաղաթիէլեան՝ փառաւոր իշխան արքունի զարմէն Յուդայի , էր 'ի Բաբելոն երբոր Կիւրոս տիրեց այն քաղաքին , որ և սիրելի եղաւ արքային : Նաև աստուածային փառացն համար նախանձաւէր ըլլալով յաջողութեամբ հրաման առաւ թագաւորէն Երուսաղէմայ տաճարը կանգնելու և տաճարին բաները ետ դարձընելու համար , զոր Նաբուգոդոնոսոր Բաբելոն փոխադրեր էր : Եւ այսպէս հիմն ձգեց տաճարին 555 տարի Քրիստոսէն առաջ : Բայց Սամարացիք թշնամի ըլլալով Հրէից արգելք եղան , անկատար թողուցին գործքը մինչև Դարեհին օրը : Անատենը հրաման ըրաւ Աստուած Անգէի և Զաքարիայ մարգարէներուն , որ քարոզութեամբ շինել տան տաճարը : Ուստի Հրէայք արթըննալով առաքեցին Զօրաբաբէլն առ Դարեհ արքայն , որուն ծանօթ էր առաջուց . մինչ զի երբոր հասաւ թագաւորական քաղաքը , մտաւ սենեկապետներուն կարգը . և կ'երևնայ թէ այն ժամանակը ատենախօսութիւնն ընելով ընդունելի եղաւ Դարեհին, և առաւ հրաման կատարման տաճարին, որ կատարեցաւ 515 տարի Քրիստոսէն առաջ։ Անկէց ետև Հրէայք առին հրաման շինելու Երուսաղէմի պարիսպն, որ կատարեցաւ քսանըհինգ տարուան մէջ. իսկ ինքն Զօրաբաբէլ աստուածային օրհնութ̅բ վախճանեց իւր առաքինազարդ կեանքը, և գովելի եղաւ ազգասէր և աստուածասէր անուամբ։

Աստուածավառ ջանք Զօրաբաբէլի
  Զանուն իւր կանգնեաց անմահ պանծալի.
  Կանգնելով տաճար արքային երկնից
  Կառոյց և ինքեան տուն յաւիտենից։
Հոգւոյն ես սրբոյ դու ո՛վ քրիստոսեան
  Կանգնեալ և սրբեալ տաճար հրաշազան.
  Արդ պճնեա գործով առաքինութեանց
  Տէրունւոյն արժան գոլ տաճար փառաց։

* * *

Է.

ԷՄՄԱՆՈՒԷԼ Կոմնենոս կամ Կիռ Մանուէլ կայսր՝ էր որդի կայսեր Յովհաննու Պերփեռուժենայ, այր բարեպաշտօն և քաջ, որ 'ի 1143 պսակեցաւ կայսր Յունաց և տեսնելով թէ Այլազգիք կը զօրանան, ջանացաւ միաբանիլ Հայոց և Լատինացւոց հետ: Ուստի գրեց սիրահրաւէր նամակներ առ Ներսէս Շնորհալին և Գրիգոր կաթուղիկոս. նաև ժողով ընել տուաւ Մետրապօլիտներուն 'ի Կոստանդինուպօլիս միաբանութեան համար: Սակայն այս բաղձալի գործ դեռ գլուխ չելած՝ հիւանդացաւ կայսրն. և ութ օր առաջ քան զմահն հագաւ կրօնաւորի զգեստ ու նստաւ փսիաթի վրան, և ապաշխարողական կարգով փոխեցաւ բարեպաշտութեամբ առ Աստուած վաթսուն տարւան, երեսունըութ տարի թագաւորելէն ետև 'ի 1180, զոր Հայերը յիշատակեցին:

ԷՄՄԱՆՈՒԷԼ Մեծ, էր բարեպաշտ արքայ Փորթուգալաց, որ թագաւորեց 'ի 1495, և գեղեցիկ ջանքով ձեռնտու եղաւ որ նորանոր աշխարհք գտնեն. ինչպէս որ 'ի 1500 գտնուեցաւ յԱմերիկա իւր անուամբն Պրազիլիայի աշխարհը: Ուր կանգնեց փառաւոր շինուած մը Բեթղեհէմ անուամբ, և բոլոր երկիրը շէնութ̃ լեցուց. իսկ այն մեծ շինուածն եղաւ գերեզման անոնց թագաւորներուն: Բոլոր անհաւատ Մուղրիները հալածեց իրեն աշխարհքէն, և շատն ալ դարձուց քրիստոնեայ ըրաւ : Նմանապէս հաւատքի բերաւ Հրէաները . և ատով մեծանուն հանդիսացաւ բոլոր Եւրոպայի մէջ, մինչ զի Փորթուքալցիք անոր Թագաւորութեան ժամանակը կոչեցին Ոսկեղէն դար : Այս մեծագործ Թագաւորն բաց ՚ի պանծալի բարեգործութեանց յօրինեց յիշատակագրութիւն մը Աֆրիկայի և Հնդստանու վրա . իսկ ինքն բարի անուամբ և խաղաղութեամբ վախճանեցաւ յիսուներեք տարեան ՚ի Լիսպոն մայրաքաղաքն յամի 1521 :

Էմմանուէլ սուրբ անուն տէրունեան
Ընդ մեզ տէր Աստուած արքայ յաւիտեան .
Համանուն արքայք յուսացեալ ՚ի նոյն
Պերճացան ՚ի փառս անուամբ Բարձրելոյն :
Անունն այն հզօր Սքանչելագործին
Ընդ մեզ գոլ յաւէրժ` խոստումն է փրկչին .
Մի թերի գտցուք ՚ի յոյսն անսահման ,
Զի և մեզ տացին նոյն շնորհք փրկչական :

ԷՅԼԷՐՈՒՍ կամ ԷՅԼԷՐ էր անուանի ուսումնական , և սրամիտ փիլիսոփայ Զվիցերիայէն , որ երկար ատեն վարժապետութիւն ըրաւ ՚ի Պետերպուրկ ու ՚ի Պերլին , և ծերութ՟ե ատենը կուրացաւ . բայց այս վիճակին մէջ ալ շատ պիտուական գրեանք շարադրեց հմտութ՟բ : Գրեց ևս իմաստութեամբ անաստուածներուն դէմ` հաստատելով թէ հարկաւոր է ամենայն կերպով աստուածային յայտնութիւնն վասն բանաւորաց , որ տպագրեցաւ ՚ի 1747 : Դարձեալ շարադրեց շատ աստղաբաշխական և մաթեմաթիգական գրուածք իբր չորսհարիւր : Նաև գրեց վասն տեղատութեան ծովու , տարածութեան ձայնի, 'ի վերայ գունոյ, ծառատընկոց, և այլն։ Ապա եօթանասունըեօթը տարուան վախճանեցաւ բարի անուամբ 'ի 1783, և թողուց շատ զաւակներ՝ իրեն նման լաւ կրթուած գիտնական և բարեպաշտ, որք մեծահամբաւ գովելի եղան Ռուսիայ մէջ։

ԷՍԹԷՌՀԱԶԻ էր մեծապատիւ իշխան Մաճառաց և քաջայաղթ սպարապետ Գերմանացւոց, որ քաջութեամբ օգնելով ազատեց Վիենա մայրաքաղաքը Օսմանցոց ձեռքէն Լէօբօլտ կայսեր ժամանակը 'ի 1683։ Նաև հետևեալ տարին Մաճառ զօրքով կոխեց առաւ Պուտայ մայրաքաղաքն Օսմանեանց ձեռքէն, որ հարիւր տարիէն 'ի վեր տիրեր էին։ Սորա քաջութեանը պարտական են Աւստրիացիք, որ էր նաև բարեպաշտ, ուսումնասէր, և օգնական գիտնոց. որուն ցեղը մինչև հիմա մեծ պատիւ ունի յԵւրոպա։ Այս առաքինի քաջը մեռաւ 'ի 1713 աստուածպաշտութեամբ եօթանասունըութ տարուան, գերեզմանին վրա գրեցին. “Մղեցի քսանևչորս պատերազմունս, և ոչ երբէք զթիկունս իմ դարձուցի առ թշնամիս. և սակայն այժմ անկեալ դնիմ յորսայս 'ի տեղւոջս յայս”։

ԷՐԹՕՂՐՈՒԼ էր որդի Սիւլէյման նախարարին Թուրքաստանու, որ Ճինկիզ խանին որդւոցը ձեռքէն փախաւ ընտանեօքն 'ի փոքրն Ասիա։ Իսկ որդին բազմութեամբ գնաց առ Ալայէտտին ամիրայն, որ տուաւ իրենց նաև բնակութիւն, ուր բազմանալով զօրացան, և Էրթօղրուլ որդին հրամանատար եղաւ անոնց վրա, ու քանի մը Յունաց քաղաքներուն տիրեց. նաև Քէօթահեա մայրաքաղաքն ալ առաւ 'ի 1281 ։ Ուստի շատ սիրելի եղաւ ամիրային և բոլոր Հագարացւոց իւր քաջութեամբ մինչև մեռաւ իննուսուն տարուան 'ի 1290 . իսկ ամիրային դրաւ զօրավար սորա որդին Օսման Ա. ուսկից սկսան Օսմանեանք ։

ԷՕՆ ՏԸ ՊՕՄՕՆ էր անուանի բանագիր Գաղղիացի, որ աղջկան կերպով ծնաւ ու իգական անուամբ մկրտեցաւ . բայց երբոր հասակն աճեցաւ , սկսաւ մանչ տղոց դպրոցն երթալ անոնց զգեստովն ։ Ուր բարի ջանքով այնչափ առաջեց ուսման մէջ, մինչև եղաւ արքունի փաստաբան և մատենագիր գրելով տէրութե՟ եկամուտներուն ու քաղաքական կարգերուն վրա . որով շատ տարածուեցաւ անունը և գիտութիւնը ։ Մինչ զի Լուդովիկոս ԺԵ . Թագաւորն Գաղղիոյ յանձնեց անոր կատարումն ծանր գործքի մը Ռուսիայի տէրութեան համար . որ ոչ միայն յաջողութեամբ և խոհեմութեամբ գլուխ տարաւ գործքը , այլ և սիրելի եղաւ Եղիսաբէթի Թագուհւոյն Ռուսաց , և խօսք անցուց անոր որ դնէ առջի պաշտօնատէրը Ռուսի տէրութե՟ այն իշխանն , որ Գաղղիացւոց օգտակար էր . և այս բանիս համար մեծ պատիւ առաւ արքայէն նաև հաստատուեցաւ զօրապետ Գաղղիացւոց ։ Էօն զինուորութեան մէջ ալ մեծ քաջութիւններ ցուց . յետոյ գնաց 'ի Լոնտրա , ու եղաւ տեղակալ դեսպանին . և երբոր այսպէս կը փառաւորէր յաջողութեամբ, նախանձոտներուն չարախօսութեամբն Թագաւորին աչքէն ընկաւ . և մնալով տասնըչորս տարի յԱնգղիա միշտ հայրենեացը օգտին համար կ'աշխատէր ։ Սակայն Թշնամիներն հռչակեցին թէ նա կին մարդ է . մինչ զի Լուդովիկոս ետկանչեց որ դառնայ Փարիզ ։ Ի 1777 երբոր դարձաւ , գնաց պատուովը նստաւ իր ծննդեան քաղաքը , բայց կնկան հագուստով՝ ըստ հրամանաց արքային , և անուամբ “ Կոմսուհի Էօնի „ , որ մեծապէս վշտացաւ տրտնջալով ընդդէմ տէրութ̅ե ․ և այս պատճառաւ բանտ ալ մտաւ ։ Յետոյ դարձաւ յԻնգղիա երիկ մարդու հագուստով , և զրկուելով տէրութ̅ե տուրքէն շատ աղքատցաւ ծերութ̅ե ատենը ․ բայց միշտ փայլեցաւ քաջութեամբ և իմաստութեամբ ․ որ շատ գրքեր ալ գրեց ․ գլխաւորքն են տասներեք տպած քաղաքականք , և պատմական ճառք , և այլն ։ Եղիոնոս բժիշկն երբեմն արքունի վիրաբոյժ ըլլալով՝ Էօնին մեռնելու ատենը քովը գտնուեցաւ 'ի 1810 , որ մեռաւ ութսունուերկու տարուան , ու ամէնքը մեծամեծ գովեստներ տուին իրեն ։ Իսկ այն բժիշկը եղաւ ականատես երբոր նորա մարմինը զննեցին , և վկայեց ճշմարտութեան ․ ուր անդամազննութ̅ե բժշկին ստուգեցաւ որ նա այր մարդ էր , թէպէտ տղայ ժամանակը անկատար ձևացած անդամով ․ բայց առաքինութեամբ կատարեալ այր մեծանուն հանդիսացաւ զարմանալի ։

Այս հատուցումն է աշխարհ քաջ արանց
Յօգուտ ազգային զանձինս մաշողաց ․
Իսկ ապախտ պետաց բարք են նողոտկալի
Ի սեւ քսութեանց քան ազգասիրի ։
Քանի՞ յաճախեալ այս ախտ մահաբեր
Ընդհանուր բարեաց եղծիչ վատշուեր ․
Որ խոտեալ զարժանն յարգէ զանարժան
Թշնամանս առնէ ազգին և ինքեան ։

Թ.

ԹԱԴԷՈՍ առաքեալ Հայոց էր եղբայր Թովմայի առաքելոյն Քրիստոսի եօթանասունևերկու աշակերտաց մէկը, որ համբարձմանէն ետքը առաքեցաւ Թովմայ առաքեալէն առ Աբգար թագաւոր ըստ խոստման Փրկչին, որ յետ բժշկելոյն մկրտեց բոլոր ընտանեօքն և բազմութեամբ Եդեսիայ քաղաքին ժողովըրդեան. նաև շինեց մեծ եկեղեցի ։ Յետ լուսաւորելոյ զաշխարհն Միջագետաց իրեն տեղը եպիսկոպոս ձեռնադրեց զԱդդէ խոյրարարն Աբգարու, և ինքն գնաց 'ի մեծն Հայս արքունի հրովարտակաւ, և հաւատքի բերաւ զՍանատրուկ Աբգարու քեռորդին բազմութեամբ ժողովրդոց ։ Բայց թագաւորին մեռնելէն ետև Սանատրուկ նորէն դարձաւ կռապաշտ եղաւ. իսկ իր Սանդուխտ իմաստուն դուստրն՝ աշակերտեալ սրբոյն Թադէի բոլոր սրտով վառեցաւ Աստուծոյ սիրով մինչև բանտակից և չարչարակից եղաւ առաքեալին ։ Ուստի մեծամեծ հրաշքներով և երկնաւոր տեսլեամբ շատ մարդիկ ալ լուսաւորեցին. ուր ձեռնադրեց առաքեալը Զաքարիա անունով մէկը եպիսկոպոս. և ինքն գնաց 'ի Կապադովկիա, տարածեց սուրբ հաւատքը ուր եպիսկոպոսներով և եկեղեցիներով զարդարեց հաւատացեալները ։

Յետոյ դարձաւ 'ի Հայաստան հաստատելով քրիստոնեաները · իսկ Սանատրուկ կատղեցաւ ու գլխատեց զսուրբ Թադէոսն Արտազ գաւառին մէջ · և զսրբուհի Սանդուխտը նահատակեց կուրծքը խոցելով յամի Տեառն 48, որուն վրա լոյս իջաւ ու շատ մարդիկ նորէն հաւատացին ։ Ապա 'ի Դ դարուն մեծ հրաշքով յայտնեցան երկուսին ալ նշխարքը նոյն Արտազ գաւառին մէջ և շինեցաւ եկեղեցի նաև վանք անուամբ Թադէի առաքելոյն · ուր կը պահէն արծաթապատ սուրբ աջն և ուրիշ մասունքներն որ մեծ ուխտատեղի է մինչև ցայժմ ։

Արփիահրաշ լոյս բանին կենդանի
　Ծագեցաւ 'ի Հայս ձեռամբ Թադէի,
　Լուսաւորեցան ազգք արևելեան
　Զերծեալք 'ի պիղծ կռոց յԱծ միայն ·
Նոյին պճնեցաւ նախնի վկայուհի
　Արքայածին կոյս Սանդուխտ հրաշալի ·
　Զօնեալ զամբիծ կեանս 'ի սէր փրկչական
　Ծիրանի քօղով սլացաւ առ փեսայն ։

ԹԱԴԷՈՍ սուրբ հայրն և իր մեծ եղբայրն երանելին Վարոս՝ էին աշակերտք սրբոյն Սահակայ և Մեսրոպայ, որք կը ճգնէին պահօք և աղօթիւք ապառաժներուն մէջ · և սուրբ Անտոնին պէս հրեշտակային վարքով յաղթեցին զանազան փորձանաց դիւին ։ Ապա երբ որսորդները տեսան զսուրբն Թադէոս ու իմացուցին ամենուն, որոնք ժողվեցան քովը ու շինեցին եկեղեցի և ճգնարաններ, և աշակերտ եղան · ուստի նոյն տեղն անուանեցաւ Թադէոյ վանք ։

Այս աշակերտներուն մէկն էր Թովմաս, այր առաքինի, որուն յանձնեց վանքը սուրբն Թաթուլ, և ինքն առանձնացեալ 'ի ճգնարանն Մայրոյ ձոր․ հոն կատարեցաւ սրբութեամբ, և թաղեցաւ իր վանքը ։ Նմանապէս զտան զսուրբ Վարոս իր ճգնարանին մէջ․ ուր շինեցին մենաստան անուանեալ Գիտոյ վանք ։ Նոյնպէս սուրբ հայրն Թովմաս սրբութեան վարքով փոխեցաւ առ Աստուած ։

ԹԱԹՈՒԼ զօրավար ։ Տ․ ԳԱԴԻԿ Գ ։

ԹԱԼԻԼԷՈՍ բժշկապետ՝ էր Լիբանանցի ծնեալ և սնեալ բարեպաշտութեամբ ։ Նումերիանոսի հալածմանց ատենը, զոր բռնեց Թեոդորոս դատաւորը շատ տանջեց ։ Բայց երբոր անվնաս մնաց սուրբը, դահիճներն հաւատացին Քրիստոսի և նահատակեցան ։ Իսկ երբ դատաւորն սկսաւ ինքն ալ տանջանք տալու ձեռքը չորցաւ, ու սրբոյն աղօթքովը բժշկեցաւ․ ուստի յիմարելով բռնաւորն ծովը նետել տուաւ զերանելին․ բայց Աստուած ազատեց․ նոյնպէս ազատեցաւ գազաններէն հրաշքով ։ Վերջը գլխատեցին զԹալիլէոս 'ի 283․ և եղաւ հրաշագործ նահատակ ։ Ապա մեծն Կոստանդիանոս շինեց անոր վկայարան մը 'ի Կոստանդնուպոլիս ։ Իսկ սուրբ նշխարքն հիմա են 'ի Վերոնա քաղաքն Իտալիոյ և կը յարգեն մեծ պատուով ։

ԹԱՂԷՍ՝ էր նախնի փիլիսոփայ Յունաց 640 տարի Յիսուսէն առաջ, որ երթալով Եգիպտոս սորվեցաւ շատ բնագիտական և աստղաբաշխական ուսմունք, մինչև առաջին գուշակող եղաւ խաւարման արեւու ։ Ջ՛ուրը ամէն բանի սկիզբն կը դնէր ըստ Եգիպտացւոց ․ իսկ իր քարոզութիւնն էր այսպէս ․ «Աստուած է նախ քան զամենայն, զի է անստեղծ ։ Երջանկութիւն մարմնոյ հաստատեալ է յառողջութեան, իսկ հոգւոյն՝ յիմացողութեան և 'ի գիտութեան ։ Ա՛ռ 'ի բարւոք վարելոյ ըզկեանս, հարկ է 'ի բաց կալ 'ի գործոց՝ զորս ստգտանեմք յայլս ։ Չէ արժան ասել ումեք զայն ինչ, որով կարող իցէ նա վնասել մեզ ։ Ի վարելն ընդ բարեկամս պարտ է 'ի մտի դնել՝ թէ մարթ է նմա երբեմն դառնալ մեզ 'ի թշնամութիւն ։ Չիք խտիր ընդ մահ և ընդ կեանս ,, ․ և այլն ։ Սա ինըսուն տարի ապրեցաւ և շատ ոտանաւորներ գրեց օդի գուշակութեան և աստղաբաշխական բաներու վրան, որ կորած են, միայն կը յիշուին գրոց մէջ ։

ԹԱ՛ՍՍՕ մեծահամբաւ քերթող Իտալացի ծնեալ 'ի Նէապօլիս 'ի 1544, վարժեցաւ փիլիսոփայական, աստուածաբանական և իրաւաբանական ուսմանք ․ իսկ տասներեօթ տարւան հետեւեցաւ բանաստեղծութեան, ուգալով Վենետիկ քաղաքը, մեծ անուն հանեց քերթողութեան ․ ապա հրաւիրեալ գնաց 'ի Ֆէռառա Դքսին պալատը, գրեց բանաստեղծութիւնն կոչեցեալ Երուսաղէմ Ազատեալ, որուն վրա տասուերկու տարի աշխատեր էր ։ Որով աւելի մեծանուն հանդիսացաւ Եւրոպայի մէջ ․ և գրուածներն ալ ձեռքէ ձեռք կը պտըտցընէին գովութեամբ ։ Եւ այսպէս շատ նախանձողներ ունեցաւ ու թշնամութեանց մէջ ընկաւ ․ մինչև սիրահարութեամբ խելագարեալ յիմարանոց ալ մտաւ, և հոն ալ գեղեցիկ բանաստեղծութիւն մը յօրինեց ։ Այլ զգաստանալէն ետև աստին անդին ժուռ եկաւ ու գնաց Հռոմ, և պատուեցաւ Կղեմայ Ը. պապին եղբօրորդիքներէն, որ հրաման ըրաւ յաղթանակ տալու քերթողութեանցն Տասսօին հանդէսով։ Սակայն խեղճը դժբաղդութեամբ ծանր հիւանդցաւ, մինչև տանել տուաւ զինքն այն վանքն, ուր որ իր հայրը մեռեր էր. և հոն ամենայն բարեպաշտութեամբ հոգևոր պատրաստութիւնը տեսաւ. իսկ 1595 ին մեռաւ յիսունըմէկ տարւան, և թաղուեցաւ փառօք յեկեղեցնայ մէջ. յետոյ գերեզմանին վրան փառաւոր շիրիմ կանգնեցին, Խիստ շատ գրուածներ ունի արձակ բարոյական և բանասիրական ճառեր իմաստալից. նաև ոտանաւորներ դիւցազնական, քնարերգական, և թատերական. բոլորը հանճարով լեցուն են, մինչև կարդացողները կըզմայլին. և զանազան լեզուով թարգմանած և տպուած են յարգանօք։

Տասսօ նրբամիտ քերթող իմաստուն
Ողբէ զմանկտի լինել բանիբուն.
Բայց չքնաղ ուսումն իմացականին
Ի ուղղել զկիրս ըղձալ անմահին։
Գերաթռիչ ըղձիւք բանաստեղծական
Յածեալ ընդ ծովու ցամաքի սահման,
Լքեալ զանցաւոր հոգոց տենչ ունայն
Գըտի զիսկապէս տենչին իմ վախճան։

ԹԱՐԳՄԱՆԻՉՔ էին բանիբուն լեզուագէտք, որ լեզուէ լեզու կը թարգմանէին զանազան գրքեր. բայց մասնաւորապէս թարգմանիչ անուանեցան զԱստուածաշունչ սուրբ Գիրքը թարգմանողներն յԵբրայեցւոց լեզուէն ՚ի

Յոյն, և 'ի Յոյն լեզուէն 'ի Հայ բարբառ։ Քրիստոսէն 277 տարի առաջ Պտղոմէոս Փիղադելփոս Եգիպտացւոց թագաւորը, Հրէից Եղիազար քահանայապետէն ուզեց ընտիր օրինակ մը Աստուածաշունչին իր գրքատանը համար. ան ալ տուաւ լաւ օրինակ մը, եօթանասունևերկու Ռաբբիներուն ձեռքով ղրկեց։ Անոնք Յոյն լեզու դարձուցին աստուածաշունչը, որ կոչեցաւ Եօթանասնից թարգմանութիւն. որ և ընտիր ճիշդ ըլլալուն համար Տէրն մեր, և առաքեալները, նաև սուրբ վարդապետներն այն թարգմանութենէն վկայութի՟ կը բերէին։ Հայ թարգմանիչներն ալ ո՟ք Սահակ և Մեսրոպ 'ի Ե դարուն նոյն եօթանասնից օրինակէն թարգմանեցին մեր աստուածաշունչը Յունէն 'ի Հայ լեզու շատ գեղեցիկ և աննման. վասն զի բաղդատելով ուրիշ թարգմանութեանց հետ իրենց աշակերտներուն ձեռքովը ամենէն գերազանց եղաւ։ Տ. Սահակ, Մեսրոպ և Եղիշէ։

ԹԵԿՂ, կամ ԹԵԿՂԻ կոյս Իկոնիացի էր դուստր Թէոկղեայ այրի մեծուհւոյ. երբոր սուրբն Պօղոս գնաց յԻկոնիոն Ոնեսիփորայ տունը՝ Թեկղի լսելով աստուածային բանը հաւատաց 'ի Քրիստոս, և աշակերտեցաւ Պօղոսի, ու մերժեց իր նշանածը Թամիւրոս, որ մատնելով կրակը ձգել տուաւ սուրբ կոյսը, բայց Տէր պահեց զինքը։ Ապա առաքելոյն հետ գնաց յԱնտիոք. ուր գազաններուն բերնէն ալ ազատեցաւ հրաշքով, մինչ զի շատ հոգի դարձան 'ի Քրիստոս. ուստի իբրև առաքելուհի շատ տեղեր քալելով քարոզեց մեծամեծ սքանչելագործութեամբ։ Յետոյ երբոր լեռը քաշուած կը ճգնէր՝ գնացին վրան անամօլթ չար անառակներ , ան ատեն քարը պատռեցաւ ու սուրբ կոյսը պահեց յամի Տեառն 50 . զոր շատ գովեցին սուրբ Հարք կոչելով Նախավկայուհի , ինչպէս սուրբն Սանդուխտ :

ԹԵՄԻՍՏՈԿՂԷՍ էր քաջ և մեծահամբաւ զօրավար Աթենացւոց , որ ազգին աղէկ երևնալու համար սկսաւ աղքատաց և կարօտներուն օգնել և խնամել հանճարով : Երբոր ասով անունը ելաւ , ապա ժողովուրդին միտքը շինեց ու նաւեր պատրաստեց Պարսից դէմ պատերազմելու , որուն ինքն գլուխ եղաւ , գնաց բոլոր ծովու աւազակները հալածեց : Յետոյ ելաւ Պարսից դէմ , և շատ վարպետութեամբ յաղթեց Քսերքսէս արքային , մինչև չարաչար խորտակեցան անոր հարիւրաւոր նաւերը և իրեքհարիւր հազար զօրաց բանակը : Այսչափ փառաւորեցաւ Թեմիստոկղէս , որ ոսկեղէն կառքով տարին Լակեդեմոնիա և անկէ Աթէնք փառքով հանդիսացուցին : Բայց մեծանձնութեամբն ու ճարտասանութեամբն այնպէս պայծառացաւ անունն , որ վերջը թէ Լակեդեմոնացիք և թէ Աթենացիք նախանձով լեցուեցան ու խեցեկոյտ վճռակով դատապարտեցին , իբր թէ կ'ուզէ թագաւորել : Իսկ նա ճարտարութեամբ փախաւ գնաց ընկաւ Քսերքսեսին , որ շատ մեծ պատուով ընդունեց զինքն ու իրեք քաղաք կապեց իրեն համար : Յետոյ երբոր Պարսից թագաւորը պատերազմ պիտի բանար նորէն Յունաց դէմ , ուզեց որ Թեմիստոկղէսը գլուխ դնէ բանակին . բայց նա չուզեց սուր քաշելու ընդդէմ հայրենեացը , և ոչ ալ ապերախտ ըլլալու թագաւորին , ուստի ընտրեց որ թոյն առնէ , քաջութեամբ մեռնի վաթսունըհինգ տարւան՝ 464 տարի Յիսուսէն առաջ · և այսպէս Յունաստան չար նախանձով կորուց այս մեծագործ քաջը ։

ԹԵՐԵԶԻԱ կոյս էր Սպանիացի դուստր ազնուական · ծնաւ 'ի 1515 , և սնաւ յերկիւղն Աստուծոյ 'ի բարեպաշտ ծնողաց · որ գոլով եօթն տարւան սրբոց վարքերը կարդալով կը զմայլէր եռանդագին · նաև միշտ հանդերձեալ վիճակը փառաց և տանջանաց մտածելով կը գոչէր · Յաւիտեան յաւիտեան ։ Այսպիսի սիրով վառուած խորհեցաւ եղբօրը հետ՝ որ երթան Մաւրիտանիա մարտիրոս ըլլան · բայց հօրեղբայրը թող չի տուաւ ու դարձուց զիրենք այս ճամբայէն ։ Ապա երբոր տասւերկու տարւան էր , մայրը մեռաւ · բոլոր սրտով յանձնեց զինքն Աստուածամօրն ջերմեռանդ զաւակ գրելով , մինչև եղաւ շնորհալից և հրաշագործ ։ Յետոյ սատանան ուզեց սիրտը պաղեցընելով հոգևոր ճամբայէն հանել սուրբը · բայց հայրը դրաւ զինքն կուսանաց վանքը կրթութիւն առնելու 'ի կուսանաց · ուր միտքը հաստատեց որ կրօնաւոր ըլլայ , որպէս զի աղէկ ծառայէ Աստուծոյ · բայց հիւանդութեան պատճառաւ գնաց հօրը տունն ու առողջացաւ ։ Ապա քսան տարւան որ եղաւ՝ առաւել հոգևորին սէրը բորբոքելով սրտին մէջ՝ մտաւ Կարմեղեան կուսանաց վանքը ։ Իր այնչափ ճգնութեամբ և փափաքով նորէն հիւընդցաւ սաստիկ · և երբոր մեռածի պէս մնացեր էր անշարժ՝ մէկէն 'ի մէկ արթընցաւ , ու պատմեց տեսած տեսիլքը դժոխքին և արքայութեան վրայով ։ Անկէց ետև այսպիսի աստուածային տեսիլքներով զօրացեալ՝ սկսաւ մեծամեծ ճգնութիւններ ընելու ջերմեռանդութեամբ: Հրաշալի համբերութեամբ շատ ցաւեր ալ քաշեց. նաև ամէն հիւանդութեանց և դիւական փորձութեանց յաղթեց լալագին աղօթքով, մինչև մոռցաւ աշխարհ և միացաւ ընդ Քրիստոսի հրեշտակի նման: Այնչափ վառեցաւ կրօնաւորական սիրով, որ եղաւ նորոգիչ իւր կրօնին՝ շինելով երեսուներկու վանք և զարդարելով բարի կանոններով, ինչպէս որ շարադրեր էր ինքն սրբուհին իր վարքին մէջ զանազան տեսիլքներով: Նոյնպէս 'ի զատ երանելին գրեց ուրիշ հոգելից գրեանք աստուածավառ սիրով. ինչպէս են Ճառ կատարելութեան վարուց և Կանոնք ներանձնութեան, Գիրք այցելութեան, Մտածութիւնք հաղորդութե վրա, Շաւիղ կատարելութեան, և այլն: Նա 'ի 1582 երբոր կ' երթար Պուռկոս վանք շինելու համար, ճամբան հիւանդցաւ, ու հոկտ. 4 փոխեցաւ առ Աստուած զարմանալի հրաշքով վաթսունըութ տարուան. և մարմինը մնաց անապական և անուշահոտ մինչև հիմա, զոր Գրիգոր ԺԵ. պապն Հռոմայ դասեց սրբոց կարգը 'ի 1622, և տօնեցաւ:

Թերեզիա արին հրեշտակն 'ի մարմնի
Ընտրէ մայր ինքեան զերկնից Տիրուհի.
Սրով սոսխացն եղև յաղթական
Մարմնոյ աշխարհի մարտից դիւական:
Զայն ահեղահրաշ ձայն յաւիտենին
Օ առաքինւոյն սիրտ շարժեաց 'ի բարին,
Վառեալ տենչանօք ըղհետ Յիսուսի՝
Նա ըղըրաբիոն կուսական մարտի:

ԹԷՈԴՈԼԻՆԴԱ էր դշխոյ Լոմպարտացւոց, որ այրը մեռնելէն ետև առաւ Արիոսեան դուքսն Գուռինու և դարձուց ուղղափառ ըրաւ, որուն ղրկեց սուրբ Գրիգոր պապը իրեն Տրամախօսութեանց գիրքը։ Իսկ երբոր նորէն որբևարի եղաւ ինքն կը կառավարէր այն աշխարհը մինչև որդին մեծցաւ։ Այս դշխոյն շինել տուաւ կ՚ըսեն Միլանու արքայական երկաթի պսակն, որ է բոլորած մէկ բևեռն խաչին Քրիստոսի, շնորհեալ իրեն Հռոմայ Հայրապետներէն, որուն վրայ պատած է ոսկի լայն թիթեղն։ Լոմպարտացւոց թագաւորներն այս պսակով կը պսակուէին․ մեծն Կարոլոսն ալ այս պսակով պսակուեցաւ թագաւոր Իտալիոյ․ նոյնպէս ետքի Աւստրիոյ կայսերքն ալ ասով պսակուեցան Իտալիայի վրայ թագաւոր։

ԹԷՈԴԻՏՈՍ Գաղատացի էր այր առաքինի և աստուածապաշտ, որ քրիստոնէից օգնելու համար հալածանաց ատենը իր տունն ըրաւ պանդոկ գինեվաճառի․ ուր պահելով քրիստոնեաները՝ կը կերակրէր աղքատներն ու կը հաստատէր հաւատացեալները հաւատքով և բարի վարքով իբրև հայր ամենուն։ Մինչ զի աստուածային շնորհօք և աղօթքով կը բժշկէր հիւանդները․ նաև անուամբ գինեվաճառի համարձակ շրջելով՝ կը ժողվէր նահատակներուն նշխարքները և կը զօրացընէր բանտարկեալները, և իւր տանը մէջ պատարագ ալ ընել կուտար կատարեալ աստուածպաշտութեամբ։ Հալածիչները բռնեցին նոյն օրերը եօթը կուսանք սրբակրօնք, որոնք շատ տանջելէն ետև դատաւորն ստիպեց՝ որ տանին Արտեմեայ և Աթենասայ՝ արձանները լճին մէջ լուանան քրմուհիներուն պէս․ երբոր յանձն չառին սրբուհիները՝ լճին մէջ խեղդել տուաւ․ որոնց մարմինները ժողվեց Թէոդիտոն ամփոփեց՝ Նահապետաց եկեղեցւոյ մօտ։ Իսկ կռապաշտներն երբոր փնտռեցին զԹէոդիտոնը, նա կամաւ ելաւ դատաւորին ատեանն ու կշտամբեց հեթանոսաց կուրութիւնը։ Ան ատեն չարչարելով քերեցին կողն ու խանձողեցին․ նաև քարով զարկին կզակին, թափեցին ակռաները․ յետոյ տարածեցին հրացեալ խեցեղինաց վրա, երբոր անսպառելի գտան քաջ նահատակը՝ գլխատեցին․ իսկ մարմինը ամփոփեցաւ փառօք։

ԹԷՈԴԻՏՈՆ թարգմանիչ սուրբ Գրոց Եբրայեցւոց լեզուէն 'ի Յոյն՝ էր Եփեսացի, աշակերտ Տատիանոսի հերետիկոսին․ որ երբոր Հրէայ դարձաւ՝ սինակոկայն իրեն յանձնեց՝ որ Աստուածաշունչը թարգմանէ 'ի Յոյն լեզու, որ կատարեց յամի Տեառն 186․ որուն միայն հատուածները կան։ Այս թարգմանիչ քիչ մը զգուշաւոր է․ բայց տեղ տեղ օտարանալով Եօթանասնից թարգմանութենէն չէ անկասկածելի, թէպէտ ամբողջ գործքը կորած է։

ԹԷՈԴՈՍ Ա․ Փլաբիոս կայսր Հռոմայեցւոց անուանեալ Մեծ, էր Սպանիացի որդի Թէոդոսի բազմայաղթ զօրավարի, որուն բարելաւութիւնը յիշելով Գրատիանոս կայսրն կանչեց զԹէոդոս քովն ու դրաւ արքունական գործքերու վրան 'ի 379։ Ապա յանձնեց իրեն, որ գնաց պատերազմեցաւ Գոթաց և Գերմանացւոց դէմ, և երբոր յաջողութեամբ կատարեց Թէոդոս յաղթութիւնը, եղաւ գահակից կայսեր և ինքնակալ արեւելեան աշխարհայ գոլով երեսունիրեք տարեան ։ Անկեց ետեւ ջանք ըրաւ հաւանութեամբ Գրատիանոսին բոլոր ուղղափառ եպիսկոպոսները դարձուց իրենց աթոռը · նաեւ մեծն՝ Ներսէս Հայոց հայրապետն ալ դարձուց պատուով 'ի Հայաստան, զոր աքսորեր էր Վաղէս արիոսեան չար կայսրը ։ Ապա հանեց հրաման՝ որ ամէն տեղ քաղաքեն նիկիական ուղղափառ հաւատքը · եւ ով որ չընդունի զայն՝ թող չի բնակի 'ի Կոստանդինուպոլիս ։ Թէոդոսի ջանքովն եղաւ Կոստանդինուպոլսոյ ժողովքը հոգեմարտից դէմ · նաեւ շատ բարեկարգութե՟ց եւ ուղղութեանց պատճառ եղաւ այս սուրբ կայսրն, գոլով ամենուն օրինակ բարի առաքինութեամբ եւ խոնարհութեամբ ։ Մանաւանդ երբոր սուրբ Ամբրոսիոսին առջեւն խոնարհելով յանձն առաւ դրած ապաշխարանքն Միլանու եկեղեցիէն դուրս ելլալու, պատճառաւ Թեսաղոնիկէ եղած սպանութեանցը իր հրամանովը ապստամբներուն համար ։ Եւ այսպէս ոչ միայն արդարացաւ կայսրն, այլ եւ մեծ օրինակ եղաւ աշխարհի հանդերձ գովութեամբ ։ Որչափ աւելի բարեպաշտ, գթած եւ աստուածասէր եղաւ, այնչափ ալ աստուածային յաջողութեամբն յաղթող բարձրացաւ ամէն տեղ ։ Բարեգութ եւ առատաձեռն էր տնանկաց, պաշտպան ուղղափառութեան եւ բարերար գիտնականաց, որով պայծառացուց եւ մեծցուց թէ կայսերութիւնը եւ թէ կայսերական քաղաքը · բարեբարոյ էր եւ վեհագուն, վայելչահասակ, քաղցրահայեաց, եւ ատեցող փառաց աշխարհի ։ Ապա 'ի 395 հիւանդութեամբ փոխեցաւ յերկնային թագաւորութիւնն 'ի Միլան քաղաքը յիսուն տարեան, տասնըեօթը տարի թագաւորելէն եւս . եւ բոլոր աշխարհք սգով լեցուց Թէ արեւելք եւ Թէ արեւմուտք ։ Իսկ մարմինը տարին ՚ի Կոստանդինուպօլիս մեծ հանդէսով դրին մեծին Կոստանդիանոսի գերեզմանին մէջ . սուրբն Ամբրոսիոս եւ սուրբն Պաւլինոս գովեստներով պատուեցին զմեծն Թէոդոս . իսկ Հայք կը տօնեն յիշատակը տարուէ տարի . որուն յաջորդեցին որդիքը Արկադէոս եւ Ոնորիոս ։

ԹԷՈԴՈՍ Բ . անուանեալ Փոքր էր որդի Արկադէոսի , որուն յաջորդեց տղայ հասակաւ ՚ի 408 . ուստի իր մեծ քոյրն Պողքեր կը վարէր կայսերութիւնը խոհեմութեամբ եւ խաղաղութեամբ ։ Թէոդոս երբոր առաւ իշխանութիւնը քրոջը խրատովն շարժելով, դէմ եղաւ անհաւատներուն եւ հերետիկոսներուն ։ Սուրբն Մեսրոպ եւ Վարդան Մամիկոնեան գնացին առ կայսրն եւ առին հրաման վան դպրոց կանգնելու Յունաց տակի Հայաստանու մէջ, որ եւ տուաւ Վարդանայ պատիւ ստրատելատութե՟ ՚ի 420 . այլ եւ Հայաստանի Կարին գաւառին մէջ շինել տուաւ Թէոդոսուպօլիս քաղաքը, որ հիմա Էրզրում կ՚ըսուի ։ Թէոդոս Թէպէտ անյաջող էր պատերազմի մէջ, բայց աննենգ եւ բարեմիտ ըլլալով ամենուն հետ խաղաղ կը վարուէր . երբեմն չափազանց ալ միամիտ գտնուելով ամէն Թղթի ձեռք կը դնէր առանց կարդալու ։ Այս անխոհեմութեանը համար քոյրը տուաւ իրեն Թուղթ մը՝ որ առանց կարդալու ստորագրեց , որուն մէջ գրած էր Թէ գերի ընէ իր կինը . յետոյ երբոր իրեն կարդացուց՝ ամչնալով կայսրը զգուշացաւ այսպիսի անխոհեմութենէ ։ Թէոդոս յամի 431 Կեղեստիանոս պապին հրամանովը ընդհանուր ժողով գումարել տուաւ յԵփեսոս , ուր դատապարտեցաւ Նեստոր հերետիկոսն ու իրեն պիղծ աղանդը ։ Իսկ ՚ի 450 մեր քաջն Վարդան երբոր խնդրեց օգնութիւն անհաւատ Պարսից դէմ, բարեպաշտ կայսրը խոստացաւ օգնելու · բայց ամիսէն ետև մեռաւ քառասունըինը տարեան ։

Տիրական կոչմամբ կայսերք վեհափառ
Քաջ աշխարհաշէնք հանուրց բարերար ·
Տենչմամբ երկնայնոց և գործովք բարեաց
Ստացան աստ և անդ կրկին թագ փառաց ։
Սոքա են պատկերք աստ Երկնաւորին
Չափ արդարութեան կալեալ ՚ի ձեռին ,
Պատողական վարձն իւրաքանչիւրոց
Չարի և բարւոյ կշռեալ ըստ գործոց ։

ԹԷՈԴՈՐԱ աղախին Քրիստոսի էր այրասիրտ կոյս Աղեքսանդրացի , զոր բռնեցին Դիոկղետիանոսի հալածանքին ատեն , և շատ փորձեցին որ հաւատքէ հանեն ։ Դատաւորը տեսաւ որ բռնութեամբ կարելի չէ , բռնեց երանուհին բանտը դրաւ պոռնկատան մէջ , որպէս զի հեշտութեամբ խաբուի ։ Իսկ սրբասէր կոյսը դիմելով առ Աստուած խնդրեց օգնութիւն · ուր գնաց ազդմամբ Տեառն բարեպաշտ երիտասարդն Դիդիմոս զօրականի հագուստով , և սիրտ տալով հանեց իր զգեստն ու կուսին հագուց զրկեց դուրս , և ինքն նստաւ անոր տեղը ։ Յետոյ երբոր բանն իմացուեցաւ , զարմացան ամէնքը · իսկ դատաւորը կատղելով միատեղ գլխատեց զԴիդիմոս և զԹէոդորա , հրաշագործ մարմիններն ալ այրել տուաւ ։

ԹԷՈԴՈՐՈՍ Տիւռոն էր զինաւոր Ամասիացի բարեպաշտ, որ քաջութեանը համար մտաւ Պիռօն ըսուած զինուորաց կարգը, և յառաջադէմ ըլլալով՝ անուանի եղաւ։ Երբեմն հանդիպելով սարսափելի վիշապի մը, ուսկից տեղացիք կը դողային, խաչակնքելով զինքն զարկաւ նիզակովը սատկեցուց օրինակ դիւին։ Բրինկաս բռնաւորը երբոր գնաց Ամասիայի քրիստոնեաները քննելու համար՝ Թէոդորոս առաջին ելաւ քաջութեամբ դաւանելով զՔրիստոս և զօրացնելով ընկերները։ Նաև աստուածային նախանձով գնաց գիշերը այրեց Ռէայի կռատունը. կռամոլները մէկէն բռնեցին տարին դատաւորին, որ չարաչար ծեծելով բանտը փակեց զերանելին, ուր մխիթարուեցաւ 'ի Տեառնէ։ Ապա նորէն պրկեցին քաջ նահատակն ու այրեցին։ Իսկ սուրբ նշխարքը ժողվեց բարեպաշտ Եւսեբի տիկինը, տարաւ ամփոփեց իր տունը, որ յետոյ եկեղեցի շինուեցաւ։

ԹԷՈԴՈՐՈՍ Արակլեայի էր քեռորդի սուրբ Թէոդորոսի զինաւորին, առաքինի և քաջայաղթ Ստրատելատ կամ սպարապետ Արակլեայի գնդին, ուր իրեն իմաստութեամբն շատ հեթանոսներ հաւատքի բերաւ։ Լիկինոս կայսր քրիստոնէից թշնամին երբ գնաց յԱրակլեա՝ քաջն Թէոդորոս առաջին ելաւ պատուեց զինքը սիրով. յետոյ առաւ արծաթ ոսկի կուռքերը մանրեց ու աղքատներուն բաժնեց։ Աստի բռնաւորը զինքն չարաչար տանջեց ծեծով և հրով. բայց նա քաջութեամբ կը փառաւորէր զԱստուած. ապա կրկին քննութեանց և հարցմանց ետև խաչը հանեցին զերանելին ու նետով ծակ ծակ ըրին երեսը և աչքը, նաև ուրիշ սոսկալի տանջանքներով թողին կիսամեռ ։ Իսկ գիշերը հրեշտակ Տեառն իջաւ զինքը խաչէն ողջ անարատ, զոր տեսնելով բազմութիւնը իշխաններով հաւատացին Քրիստոսի, և կ՚ուզէին քարկոծելու զչարն Լիկիանոս. բայց սուրբ Թէոդորոս չի թողուց, ու ելաւ գնաց բանտը մնաւ ։ Իսկ անօրէն բռնաւորը դահիճներ ղրկեց, գաղտուկ գլխատեց քաջ վկայն. որուն Աբգար ծառայն առաւ մարմինը ամփոփեց ու վկայաբանութիւնը գրեց ։

ԹԷՈԴՈՐՈՍ մանուկ կամ սուրբ ԹՈՐՈՍ Երզնկայու՝ էր որդի Սուրէնայ նախարարին Հայոց, որ մկրտեցաւ Պասիոս քահանայէն տեսնելով սուրբ Լուսաւորչին հրաշքը, երբոր կը տանէին խոր վիրապը ձգելու ։ Սուրէն երբ իմացաւ՝ բարկութեամբ կը ստիպէր որդին որ դառնայ ու պաշտէ կուռքերը. իսկ նա երբոր երես դարձուց հօրը՝ չարաչար կատղեցաւ ու մորթեց սուրբ մանուկը. բայց գիշերը լոյս ծագելով նահատակին վրա Պասիոս քահանայն տարաւ ամփոփեց մարմինը ։ Այս երբ սուրբ Լուսաւորիչն վիրապէն ելաւ ու ազգը լուսաւորելով կը շրջէր, նոյն տեղէն անցնելու ատեն լոյս տեսաւ սուրբ Թէոդորոսի գերեզմանին վրա՝ և հոն շինել տուաւ եկեղեցի կամ վկայարան ։ Ուր տեղ ճգնեցաւ սուրբ Թորոսին մայրը աստուածասէր Աղուվիթաս, և թաղեցաւ մատրան դրանը առջին. այն տեղ թաղեցաւ նաև Պասիոս քահանայն ։ Այս ժամանակէն ետև վանք շինեցին հոն աբեղայից, և եղաւ ուխտատեղի մինչև հիմա անուանեալ Պորբու սուրբ Թորոս Երզնկայու ։

Մանկունք Սիոնի զերթ ձագք աղաւնեաց
Թռեցան յերկինս սուրբ արեամբ ներկած .
Զքնաղ միացեալք յանմահից երամ
Գեղգեղեն առ Տէր զերգս անմահութեան ։
Նորջանիկ ծնունդք սուրբ աւազանին
Գնեցին արեամբ զպսակն երկնային .
Թեթև սլացեալ յանմեղ հասակի
Պերճացան շնորհօք Փրկչին անմահի ։

ԹԷՈԴՈՐՈՍ Ա. Երուսաղէմացի Յոյն ազգաւ , նստաւ յաթոռ սրբոյն Պետրոսի 'ի 642, և առաքելական նախանձով հաստատեց զեկեղեցին Քրիստոսի՝ ժողով գումարելով Միակամադաւանից դէմ, և գրելով զօրաւոր կոնդակներ 'ի պայծառութիւն ուղղափառութե ։ Սաստի մեծապէս գութ ունենալով ընդհանուր հօտին վրա և ճգնելով վասն ճշմարտութեան ցաւագար եղաւ ու փոխեցաւ առ Աստուած 'ի 649 ։

ԹԷՈԴՈՐՈՍ Բ. Հռոմայեցի, ընտրեցաւ քահանայապետ Հռոմայ 'ի 898 . գոլով առաքինի, աղքատասէր և խոհական , ոչ միայն սիրելի էր ամենուն , այլ և շատ յոյս կուտար թէ իմաստուն կառավարութեամբը մեծամեծ բարեաց պատճառ պիտի ըլլայ ։ Սակայն երբոր սկսաւ գեղեցիկ բարեկարգութեանց կանոններ հաստատելու , մահը վրան հասաւ յափշտակեց քսան օրէն ետև ։

ԹԷՈՊՈՄՊՈՍ եպիսկոպոս էր Կիլիկիայի կողմանց , երբոր կռամոլ Դիոկղետիանոսին առջև համարձակ անարգեց կուռքերը՝ հնոցին մէջ ձգել տուաւ սուրբը , ուր անվնաս մնալով կ՚օրհնէր զԱստուած ուրախութեամբ ։ Ապա տարին բանտին մէջ աչքերը փորեցին . բայց երբ հրաշքով լուսաւորեցան , կախարդութի՟ համարելով կանչեց թագաւորը Թէովնաս կախարդն՝ որ դիւական արուեստով յաղթէ սուրբ եպիսկոպոսին ։ Իսկ երբոր սուրբը խաչակնքելով աւրեց անոր ամէն կախարդանքը , Թէովնաս հաւատաց Քրիստոսի և աշակերտեցաւ Թէոպոմպոսի . իսկ թագաւորը կատղելով սոսկալի տանջանքներով փորձեց զերանելին ու վերջը գլխատել տուաւ ։ Յետոյ չարչարեց զԹէովնասն վասն քրիստոնէութեան . այլ երբ տեսաւ թէ անշարժ է սուրբ հաւատքին մէջ , խորունկ գուբի մէջ ձգելով նահատակեց , որ եղաւ տօնելի սուրբ եպիսկոպոսին հետ ։

ԹԻՒՐՍՈՍ բազմաչարչար նահատակն՝ էր Պրուսացի , որ Դեկոսի հալածանքին ատեն երբ զերանելի Լուկիոսը նահատակեցին՝ Թիւրսոս ելաւ ատեան , սկսաւ համարձակ դաւանել զՔրիստոս ծաղրելով կուռքերը ։ Ուստի կռապաշտները խորտակեցին ոսկորներն , ու ոտքէն կախելով աչքին կոպերը քերթեցին , թևերը կոտըրտեցին , և այրեցին կռնակը . բայց սուրբը մնաց անփոփոխ , ու դահիճները վնասուեցան . նաև կուռքերն ալ կործանեցան սուրբին աղօթքովը ։ Ապա ծովը ձգեցին , բայց ազատեցին զինքն հրեշտակները . նոյնպէս ազատեցաւ գազաններուն բերնէն . և երբոր պիտի սղոցէին զերանելին՝ աւանդեց հոգին ։ Այս զարմանալի հրաշքները տեսնելով շատ հեթանոսներ լուսաւորեցան . նոյնպէս Կալինիկոս քուրմն՝ որ խորհրդական էր դատաւորին , գլխատեցաւ վասն անուանն Ք՟ի յամի 250 ։

ԹՈՌՆԻԿ էր քաջ իշխան Հայոց, որդի Մամիկոնեան Մուշեղի և փեսայ Գրիգորի Մագիստրոսի, ուսկից առաւ Սասնոյ տէրութիւնը. իսկ ինքն կը նստէր յԱշմուշատ։ Ի 1058 երբոր Սելութացիք կոխեցին Հայաստան, Թոռնիկ քաջութեամբ զարկաւ հալածեց զանոնք. և ազատելով գերիները դարձաւ աւարով յԱշմուշատ իր երկիրը։ Իսկ ՚ի 1073 հոռոմցած Հայ մը Փիլարտոս անուամբ ապստամբելով կայսերէն կանչեց Թոռնիկն որ երթայ հետը միանայ. բայց նա երբոր անոր խօսքը արհամարհեց, անօրէնն ելաւ պատերազմելու քաջին դէմ։ Թոռնիկ ան ատեն ապաւինելով յԱստուած և ՚ի սուրբ Կարապետ յարձակեցաւ թշնամւոյն վրայ ու ցիրուցան ըրաւ զանոնք մեծ քաջութեամբ, և շատ աւարով դարձաւ իր տեղը։ Փիլարտոս խոնարհելով ուզեց հաշտուելու մեծամեծ երդումներով, բայց ծածուկ խօսք դրեր էր Պարսիկ իշխանին հետ, որ հրաւիրեց զԹոռնիկը կերակուրի, ու սեղանին ատենը ելաւ վրան որ սպաննէ։ Իսկ նա արագութեամբ աջ ձեռքովը դէմ դրաւ ու ձախ ձեռքով սեղանին դանակով զարկաւ սատկեցուց զանիկա և ամէնքն ալ փախուց։ Բայց Պարսիկ մը պահուած ըլլալով ճամբուն մէջ, երբոր քաջն Թոռնիկ կը դառնար իր տեղը, նետով զարկաւ սպաննեց ու գլուխը տարաւ Փիլարտոսին, որ անգթութեամբ հանեց գլխուն սկաւառակը, և անով գինի կը խմէր. մարմինն ալ այրել տուաւ։ Հայերը այրած ոսկորները ժողվեցին տարին սուրբ Կարապետին դուռը թաղեցին պատուով։

Այր անագորոյն գործի բանսարկուին
Արբեալ նախանձու զթոյն մահաբերին ·
Դժնեայ ծառայի կորստեան բարեաց ,
Օ ի մի եղերանք լցին իւր չարեաց :
Գործ է ժանտաժուտ մատնիչ Յուդայի
Բառնալ զբարեխնամ կեանս առաքինի ·
Վասն համբարոյ քանասար գայլոյ ,
Միշտ զարիւն խնդրէ նմանեաց իւրոց :

ԹՈՎԻՁ · Տ · ՎՀՈՒԿ ·

ԹՈՎՄԱՍ *առաքեալ՝ էր մի յերկոտասանից Գալիլեացի , անուանեալ Երկուորեակ · ըստ Յունաց Դիդիմոս , և ըստ Եբր · Թովմաս , որ կոչեցաւ 'ի Քրիստոսէ յերկրորդ ամի քարոզութեանն : Յետ յարութեան Քրիստոսի երբոր թերահաւատ եղաւ զՏէրն չի տեսնելուն համար , ութ օրէն ետև երևցաւ անոր Տէրն մեր ու շօշափել տուաւ վէրքերը , որ աղաղակեց · « Տէր իմ և Աստուած իմ » · իսկ Փրկիչն ասաց · « Երանի որոց ոչ իցէ տեսեալ , և հաւատացեն » : Սրով խրատեց թէ պէտք է աստուածային բանին մէջ ուրիշին ըսածին ալ հաւատալ , չէ հարկ աչքով տեսնել : Թովմաս Համբարձմանէն ետև քարոզեց Պարթևաց , Պարսից , Մարաց , Հնդկաց , և Չինաց · վերջը կատարեցաւ 'ի Քրիստոս գեղարգով 'ի Մալապուր քաղաքը Մադրասու մօտ : Քանթիպպաս աշակերտը մարմինը բերաւ 'ի Միջագետս , և անկէց փոխադրեցաւ 'ի Հայաստան · բայց Փորթուգալք Հնդկաց կը պնդեն թէ հոն հին եկեղեցւոյ աւերակին մէջ գտեր են ու Կոյլայ քաղաքը դրեր են , և մինչև ցայժմ կը պատուեն 'ի Հնդիկս , և այլն :*

ԹՈՎՄԱՍ Արծրունի էր պատմագիր Հայոց վարդապետ 'ի Ժ. դարուն, որ գրեց Վասպուրական աշխարհին դիպուածները Գագիկ Թագաւորին օրը, և Բուղայ ոստիկանին հարուածները այլովքն հանդերձ ։ Պատմութեան ոճը վայելուչ և կարգաւորեալ է Ճարտասանական ձևով և նկարագրութիւններով ։

ԹՈՎՄԱՍ Մեծոփեցի՝ էր վարդապետ Հայոց, առաջնորդ Մեծոփայ վանքին 'ի ԺԵ դարուն, որ եղաւ գլխաւոր պատճառ փոխադրելու կաթուղիկոսութեան աթոռը Սիսէն Էջմիածին ։ Նա բանիս համար մեծ ժողովք ընել տուաւ եօթըհարիւր կղերց և իշխանաց 'ի 1441 . ուր դրին կաթուղիկոս զԿիրակոս Վիրապեցին ։ Քիչ ատենէն Թովմա վարդապետ վախճանեցաւ, որ գրած է իր օրուան պատմութիւնը, և համառօտ մեկնութի Դանիէլի, և հաւաքումն Թղթոց վարդապետաց և կաթուղիկոսաց Հայոց ։

ԹՈՎՄԱՍ Աքուինացի, մեծանուն սուրբ վարդապետ եկեղեցւոյ՝ ծնաւ 'ի 1227 կոմսական զարմէ Աքուինոյ, որ մանկութենէն տուաւ զինքը հոգևորի և ուսման ։ Իշխանաւոր ազգականները շատ ջանացին որ միտքը փոխեն, ճար չեղաւ . այս երբոր եղաւ տասնիրեք տարուան մտաւ սուրբ Դոմինիկոսին կարգը ։ Իր գնաց մայրն որ զինքը տեսնէ, չերևցաւ մօրը . այլ և ազգականներէն հեռանալու համար մեծաւորին հրամանովը գնաց Հռոմայ վանքը ։ Մայրը գնաց ետևէն . տեսաւ որ անկէց ալ կ'ուզէ փախչիլ երթալ Փարիզ, գրեց երկու մեծ որդիքներուն, որ թող չտան Թովմային սահմանէն անցնելու· որոնք բռնեցին ու հասուցին մօրը ՚ի Նափոլի։ Իր բոլոր ազգականներով մեծապէս ուրախացաւ, ու կը ստիպէր որդին՝ որ կրօնէն ելլէ· իսկ Թովմաս մեծաւ տրտմութեամբ երբոր մտիկ չըրաւ մօրը, վերուց բերդը դնել տուաւ որ չփախչի։ Իւր կ՚երթային եղբայրներն ու քուրերը կ՚աղաչէին որ միտքը փոխէ աշխարհական ըլլայ· բայց նա քրոջը մէկին միտքը դարձուց կուսանաց վանքը դրաւ։ Ուստի եղբայրները կատղելով պատռեցին կրօնաւորական զգեստը· իսկ նա համբերութեամբ կրկնեց ու հագաւ։ Ապա սատանային փորձութեամբն տարին զարդարած պոռնիկ կնիկ մը Թովմային խուցը, որ խաբէ· իսկ սուրբը գոչելով առ Տէր և առ Տիրամայրն՝ երած փայտով դուրս վռնտեց չար կինը։ Նաև նոյն փայտով պատին վրա խաչ գրեց ու ծունկի ընկած լալով կ՚աղօթէր· մինչև քուն եղաւ, և տեսաւ երկու հրեշտակ, որ զինքը մխիթարելով գօտի կապեցին մէջքը մաքրասիրութեանը համար։ Թովմաս արթննալով ուրախութբ՟ առաւել բորբոքեցաւ կրօնաւորական սիրով· մայրն ալ մեղքնալով երկու տարիէն ետև թող տուաւ որդւոյն որ սանդուղով իջնի վար· ուսկից Դոմինիկեան կրօնաւորները առին զսուրբը փախուցին մինչև ՚ի Հռոմ, անկէց ալ մինչև ՚ի Փարիզ, ապա անցաւ ՚ի Գերմանիա և աշակերտեցաւ մեծին Ալբերտի տալով զանձն բոլորովին ուսման, և քան զամէնքը գերազանց եղաւ գիտութեամբ· բնութեամբ հանդարտ և լուռ էր, գէր և ծանրաշարժ ըլլալով՝ ընկերները կ՚անուանէին սուրբը անխօս եզն։ Իսկ մեծն Ալբերտ տեղեակ ըլլալով անոր առաքինութեանց և ուշիմութեանը ըսաւ·

Ժամանակ կուգայ որ այդ եղնիկդ այնպէս պիտի պոռայ, որ ձայնը բոլոր աշխարհ զարմացընէ։

Թովմաս աստուածաբանութեան ուսմունքը կատարելէն ետև հրամանաւ վարդապետին անցաւ Փարիզ եղաւ վարժապետ. և երբ կամեցան տալու իրեն վարդապետական պատիւ, հրաժարեցաւ վասն խոնարհութեան։ Խիստ յաջող և շնորհալից գոլով երկու օրէնսդէտ Հրեաներու յաղթեց վիճաբանելով և դարձուց քրիստոնեայ ըրաւ։ Շատ սքանչելի գործքեր և բժշկութիւններ ալ աղօթքով և սրբոց մասունքներով կը կատարէր։ Երբոր կը մեկնէր Եսայեայ մարգարէութիւնը և ծունկ չոգած խաչելութեան առջին կը գրէր սուրբ հաղորդութեան վրայ՝ ձայն լսեց խաչէն. “Բարւոք գրեցեր վասն իմ՝ Թովմաս. արդ զի՞նչ վարձս խնդրես յինէն„. Նա պատասխանեց, թէ “Տէր իմ՝ զքեզ միայն„։ Կղեմէս Դ. սրբազան պապն կամեցաւ արքեպիսկոպոսութիւն տալու իրեն. չուզեց հրաժարեցաւ. Նոյնպէս ամէն փառքէ կը փախչէր։ Աղօթքի մէջ այնչափ կը վերանար աստուածային խոկմամբ, մինչև հագիւ ուշը վրան կը դարձընէին, երկու ջերմեռանդք տեսան գլխուն վրա աստղ լուսափայլ, որ էր նշան աստուածիմաստ գիտութեան և նրբամտութեանն, որով գրեց սքանչելի գրեանք թէ աստուածաբանական և թէ բարոյական, թէ փիլիսոփայական և թէ մեկնողական ճառեր 'ի վերայ չորս աւետարանաց, մարգարէական գրոց, և այլն։ Ի 1274 երբոր ելաւ Գաղղիայէն կ'երթար Լուգդոնի ժողովը՝ ճամբան հիւընդցաւ գնաց Կիստերսեանց վանքը. և հոն ամենայն սրբութեամբ հանգեաւ 'ի Տէր յիսուն տարւան 'ի 1274, ուր եղան զանազան հրաշքներ, նաև գերեզմանէն կը բուրէր անոյշ հոտ ։ Իսկ ՚ի 1323 երբոր սրբազան պապն Յովհաննէս ԻԲ. սրբոց կարգը դասակարգեց զերանելին ըսաւ. “ Հրեշտակային վարդապետս այնչափ հրաշս գործեաց, որչափ երեք հազար աստուածաբանական պրակս գրեաց ”։

ԹՈՎՄԱՍ եպիսկոպոս Անգղիացւոց կամ **ԹՈՎՄԱՍ** Պէքէդ Անկուղաց կոչեցեալ՝ էր արքեպիսկոպոս Կանտուարիոյ ծնեալ ՚ի Լոնտռա, ժամանակակից Շնորհալւոյն, հովիւ քաջ և առաքինի նախանձաւոր օրինացն Աստուծոյ, նաև եկեղեցական իրաւանց ։ Ուստի համարձակ ոչ միայն արգիլեց անարժան գործքը Հենրիկոսի Բ. արքային Անգղիոյ, այլև նզովեց թէ զինքը և թէ խորհրդակիցները. և ապա ելաւ հեռացաւ ու հալածական կը շրջէր, մինչև թագաւորը զղջումի եկաւ, և ինքն ալ դարձաւ յաթոռը ։ Ուր ժողովուրդը մեծ պատւով ընդունեցաւ սուրբը և փառաւորեց. բայց անխրատ թագաւորը նորէն կատղեցաւ եպիսկոպոսին դէմ, ու չորս իշխաններուն ձեռքով նահատակեց զերանելին բեմին վրայ ։ Այլ երբոր սուրբին անունը մեծամեծ հրաշքներով պայծառացաւ, ան ատեն զղջացաւ արքայն ու մեծ պատւով թաղել տուաւ խորանին տակը, ուր տեղ որ գլխատեր էին. նաև շատ հրաշքներ ալ տապանէն գործեցան, զոր Աղեքսանդր հայրապետն Հռոմայ դասեց ՚ի կարգս սուրբ վկայից. իսկ կատարումն եղաւ ՚ի 1170, և էր յիսուներկու տարուան ։

ԹՈՎՄԱՍ Կեմբացի՝ էր հոգեւոր աբեղայ և գիտնական կանոնիկոս ԺԵ դարուն, որ միշտ կ՚աշխատէր օրինակել սուրբ Հարց ճառերը և ամբարել մտքին մէջ հոգևոր խրատներ և իմաստուն խօսքեր ։ Եւ այսպէս լուսաւորեալ ոչ միայն օրինակ բարի եղաւ ամենուն, այլ և խրատիչ հոգեշահ գրուածներով և ճառերով. նաև զանազան մտածականներով և սքանչելի աղօթքներով և երգերով անուանի եղաւ ։ Որոնց մէջ շատ օգտակար և ցանկալի հանդիսացաւ հրաշալի գրքոյկն "Յաղագս նմանող լինելոյ Քրիստոսի", որուն բնագիրն է լատիներէն, և թարգմանեալ տպագրեցաւ գրեթէ ամէն լեզուի մէջ, ինչպէս նաև Հայոց և Ռուսաց լեզուով ։ Եւ այսպէս պայծառացեալ երանելին Թովմաս հոգևոր արդեամբք առաքինութեան և սուրբ վարքով փոխեցաւ առ Քրիստոս իննսունըմէկ տարւան 'ի 1471 ։

Առաքինափայլ խրատք Թովմայեանց
  Են անյաղթ մրցիլ ներհակ բռնութեանց.
  Հեզ համբերատար բերիչ ընդ համայնց
  Առնուլ զյաղթանակ ընդ քաջ դիւցազանց ։
Գոռ առաքինիք այսպէս պերճացան
  Եւ իմաստութեամբ և մեծ սրբութեամբ.
  Ոչ ի համբերողաց տուաւ երանին
  Յանսուտ բերանոյ Աստուծոյ բանին ։

ԹՈՐԳՈՄ՝ էր որդի Գամերայ և թոռն Յաբեթի, որ ծնաւ զնահապետն մեր Հայկ. ուստի անուանեցաւ Հայոց ազգն Թորգոմեան կամ տուն Թորգոմայ. այլ և Ասքանազեան անուամբ Ասքանազայ եղբօրն Թորգոմայ. ևս և Յաբեթեան ։ Իսկ Թորգոմացի անուանեալ ազգն կամ Թիւրքմէնք՝ Հայկայ եղբարներուն ցեղէն են . անոր համար մեր ազգը կը կոչեն Լամմօղլը , այս ինքն Հօրեղբօրորդիք :

Թորոս Ա . էր փառաւոր իշխան Կիլիկիոյ՝ որդի մեծ ասպետին Կոստանդեայ Ա . որ 'ի 1100 , տիրեց հօրն իշխանութեանը վախճանելէն ետև . նաև աւելի զօրանալով առաւ քաջութեամբ շատ քաղաքներ Յունաց և Անարզաբայ քաղաքն ալ ու հոն եկեղեցի շինեց Զօրավարք անուամբ : Յետոյ զարկաւ հանեց Կիլիկիայէն Պարսիկները և Սկիւթացիք . նաև տիրեց Կիզիստրայ ամրոցին՝ որդւոցն Մանտալիայ , որոնք սպաններ էին Գագիկ վերջին թագաւորը Բագրատունեաց . ուստի բռնեց անօրէնները սատկեցուց : Այս մեծամեծ քաջութեան գործքերով ընդարձակեց տէրութիւնը և այնպէս անուն հանեց՝ որ Լատին պատմիչները զմայլելով կը փառաւորեն Թորոսին գործքերն , որ մինչև Միջերկրական ծովը տիրեց զօրութեամբ և իմաստութեամբ : Սակայն քսանւիրեք տարի տիրապետելէն ետև մեռաւ 'ի 1123 անորդի և թողուց զիշխանութիւնը իր եղբօրն Լևոնի Ա :

Թորոս Բ . էր մեծ իշխան Հայոց և տիրող Կիլիկիայի , պանծալի որդի Լևոնի Ա . որ տղայութեան ատեն գերի ընկաւ հօրը հետ Յունաց կայսեր ձեռքը 'ի 1137 , որ տարաւ զանոնք 'ի Կոստանդնուպօլիս : Թորոս բանտին մէջ երազ տեսաւ , որ մէկ փառաւոր մարդ մը տուաւ իրեն հաց՝ վրան ալ ձուկն : Այս երազը պատմեց հօրն ու ըսաւ , թէ Կը զարմանայի որ ինչպէս չուզեցիր ինձմէ և ոչ կերար : Ան ատեն ուրախանալով Լևոն ըսաւ . Ուրախ եղեր որդեակ, զի այս նեղութենէն եւս դուն պիտի տիրես մեր ամէն տեղերուն մինչեւ 'ի ծով, ինչպէս կը ցուցընէ ձուկն, բայց ես չպիտի տեսնեմ։ Ապա միւս տարին վախճանեցաւ Լեւոն բանտին մէջ 'ի 1141։ Կայսրը գթալով Թորոսին վրայ՝ բանտէն հանեց ու քովը կը պահէր. ապա Կիռ Մանուէլին օրը մեծազգի հարուստ տիկին մը կամելով կարգուիլ Թորոսին հետ՝ ամէն ապրանքը տուաւ իրեն, ու շուտով մեռաւ։ Թորոս ժողվեց բոլոր բարիքը փախաւ գաղտուկ գնաց 'ի Կիլիկիա, եւ զօրք ժողվեց, ու հայրենի երկիրները Յունաց ձեռքէն ետ առաւ։ Մանուէլ կայսրը ղրկեց Թորոսին վրայ զԱնդրոնիկոս զօրավարը, որ չարաչար յաղթուեցաւ ու մեծամեծ իշխանները գերի ընկան Թորոսին ձեռքը։ Կայսրը խնդրեց որ արծաթով գնէ իշխանները. Թորոս ծաղր ընելով ըսաւ պատգամաւորներուն. Ձեր իշխաններն իմ աջիս դանկ մը չեն արժեր, ինչ որ կ'ուզէք տուէք անոնց գինը։ Իսկ նորա ամօթ սեպելով՝ շատ գանձ տուին. Թորոս ալ անոնց առջեւ բոլորը բաշխեց զօրքերուն. երբոր Յոյները կը զարմանային՝ ըսաւ. Ասոր համար այսպէս կ'ընեմ, որ նորէն զօրքերս բռնեն ձեր իշխանները բերեն ինծի։ Կայսրը հաշտութի̃ ընելէն ետեւ նորէն պատերազմեցաւ Թորոսին հետ ու յաղթուեցաւ, շատ իշխաններ ալ գերի ըլլալով նորէն գնեց արծաթով։ Թորոս յետոյ եղաւ Սկիւթացիներուն եւ Այլազգի թշնամիներուն վրան ամէնքը հալածական ըրաւ մեծ քաջութեամբ։ Իսկ կայսրը քանի անգամ որ զօրք հանեց Թորոսին վրայ յաղթուեցաւ։ Վերջը հաշտութի̃ ըրին եւ այնպէս բարեկամ եղան որ Թորոս գնաց կայսեր, եւ մեծապէս պատուելով կոչեցաւ Վանուէճապոռ ։ Ապա քսանըչորս տարի իշխանութիւն ընելէն ետև մեռաւ 'ի 1167 . իսկ որդին տղայ ըլլալով յանձնեց Թովմաս իշխանին ձեռքը , որ իր աներն էր ։

ԹՈՐՈՍ Գ . էր եղբայր Հեթում թագաւորին Հայոց՝ որդի Լևոնի Գ . և փեսայ լատին արքային Կիպրոսի ։ Նա 'ի 1293 երբոր Հեթում եղբայրը հրաժարեցաւ թագաւորութենէ սա օծուեցաւ թագաւոր , և նստաւ 'ի Կիլիկիա . բայց շատ գործքերը կը տեսնէր Հեթումին խորհրդովը ։ Իսկ երկրորդ տարին Թորոսն ալ հրաժարեցաւ թագաւորութենէն , ու իշխանութիւնը նորէն յանձնեց Հեթումին ձեռքը ։ Ահա սոքա այսպիսի բարեպաշտ եղբայրսիրութեամբ ծաղկեցան և ծաղկեցուցին ազգը երկուհարիւր տարիէն աւելի թագաւորելով փառաւորապէս իրենց աշխարհքէն դուրս Կիլիկիային մէջ ։ Բայց երբոր նոյն միաբանութեան և ազգասիրութեան հոգին հեռացաւ իշխաններէն՝ կորուսին ամէն փառքն ու մեծութիւնը , այլ և ազգովին գերի եղան մինչև ցայժմ օտար ազգաց հանդերձ թշուառութբ ։

Կիլիկեան արքայք բողոքեն անձայն
  Ազգասէր լերուք՝ մի՛ անմիաբան ,
  Այնու մեք եղաք տիրող աշխարհաց ,
  Այնու կորուսաք զամէն բարւոյ զանձ ։
Քանի՛ հրաշագեղ անուն մեր ազգին
  Երբ տիրէր 'ի մեզ ոգի ազգային ,
  Օգնէր մատն անճառ յաղթել օտարաց
  Հզօր ախոյեան ընդդէմ այլազգեաց ։

Ի.

ԻԳՆԱՏԻՈՍ Աստուածազգեաց հայրապետն էր այն տղայն՝ զոր Քրիստոս առաւ գիրկն ու օրհնեց . և երբոր մեծցաւ՝ աշակերտեցաւ Յովհաննէս աւետարանչին սուրբ Պօղիկարպոսին հետ . իսկ յամի 68 ձեռնադրեալ եպիսկոպոս նստաւ յաթոռ Անտիոքայ , լուսաւորելով ժողովուրդը թէ առաքելական վարդապետութեամբ և թէ գրով։ Տրայիանոս կայսրը երբոր ելաւ Պարսից վրայ , Անտիոքէն անցնելով լսեց սուրբ Իգնատիոսին համբաւն , բռնել տուաւ ու անձամբ դատելով բանտը դրաւ , թէ ինչու հեթանոսներն քրիստոնեայ դարձուցեր էր , և միշտ ալ կը դարձընէր ։ Կայսրը լսելով սրբոյն համարձակ պատասխաններն վասն ճշմարտութեան՝ հրամայեց որ տանին Հռոմ, և գազաններուն առջին ձգեն թէատրոնին մէջ։ Երթալու ատեն սուրբը ամէն տեղ կը զօրացընէր հաւատացեալներն . երբոր հասաւ 'ի Զմիւռնիա մխիթարեց զսուրբն Պօղիկարպոս և ուրիշ եպիսկոպոսները խօսքով և գրով. և երբոր բարեպաշտները կը ջանային որ ազատեն զերանելին՝ գրեց իրենց որ չի խափանեն նահատակութիւնը ։ Զի ես ծարաւի եմ՝ կ'ըսէր երթալու առ Աստուածն իմ. և ցորեան եմ Քրիստոսի , թողէք զիս որ գազաններուն ակռաներովը ալիւր և հաց ըլլամ Աստուծոյ։ Իսկ երբոր հասան Հռոմ ու երկու առիւծ թողուցին սուրբ հայրապետին վրայ՝ ասաց. “Այժմ սկիզբն առնեմ լինել աշակերտ Քրիստոսի. ոչինչ ցանկամ յերևելեաց՝ զի զՔրիստոս շահեցայց. հուր, խաչ, գազանք կուտեսցին 'ի վերայ իմ. շատ է այն՝ զի լիցի ինձ վայելել զՔրիստոս”։ Ապա ինչպէս որ սուրբը կը փափաքէր, գազանները կերան սրբափայլ մարմինը յամի 107. իսկ մեծ ոսկորներն ու գլուխը տարին յԱնտիոք իրեն աթոռը պահեցին պատուով։ Կան սուրբ Իգնատիոսին հոգելից աստուածիմաստ նամակները անգին յիշատակ գանձատան սուրբ եկեղեցւոյ. ըստ ոմանց են քանըմէկ նամակ եռանդուն հոգւով գրած առ զանազան եպիսկոպոսս և ժողովուրդս, ևս և առ Տիրամայր Աստուածածին, առ Յովհաննէս աւետարանիչ, առ ս՟բն Պօղիկարպոս և այլն։

ԻԳՆԱՏԻՈՍ սուրբ պատրիարգ Յունաց Կոստանդինուպօլսոյ՝ էր որդի կայսեր Միքայէլի Կիւրապաղատի, որ 'ի 846 նստեալ յաթոռ հայրապետական՝ անաչառ կը յանդիմանէր խառնակեաց իշխանները և զՎարդան քեռին կայսեր։ Սա կատղելով փակել տուաւ սուրբը վանքի մէջ ու տեղը դրաւ զՓոտ բանիբուն իշխանը 'ի 858, որ քանի մը օրուան մէջ եպիսկոպոս օծուելով ժողով գումարեց իրեն հաստատութեանը համար, թուղթ ալ գրեց սրբազան պապին Նիկողայոսի Ա։ Յետոյ բերել տուաւ սուրբ Իգնատիոսն իր ժողովքին մէջ, ու շատ ստիպեց որ ձեռագիր տայ հրաժարման, երբոր չի կրցաւ ձեռագիր առնելու՝ նեղ բանտին մէջ դնել տուաւ, ու տասնըհինգ օր անօթի ծարաւ տանջեցին սուրբը ։ Յետոյ դահիճները բռնեցին սուրբին ձեռքը՝ խաչ մը գրել տուին հրաժարման գրին վրայ բռնութեամբ, և ասով հանեցին բանտէն զերանելին ։ Որ բողոքեց առ ՝Նիկողայոս պապն, և նզովել տուաւ զՓոտը ․ բայց նա կեղծուպատիր թղթերով, զինքը արդարացուց, ջրին երեսն ելաւ ։ Սակայն 'ի 867 երբոր մեծն Բասիլ հայկազուն կայսր եղաւ, մէկէն ձգեց աթոռէն զՓոտ ու նստեցուց զսուրբն Իգնատիոս, և հրամանաւ Ադրիանոսի պապին ութերորդ ընդհանուր ժողով գումարեց 'ի Կոստանդինուպօլիս 'ի 869 ։ Ուր նզովելով աքսորուեցաւ Փոտ ․ իսկ Իգնատիոս փառաւորապէս քանի մը տարի ալ ապրեցաւ, ապա ութսուն տարեան փոխեցաւ առ Տէր 'ի 877 ․ որուն յիշատակը կը կատարեն Յոյնք ․ և սորա օրը սկսաւ քրիստոնէութիւնը 'ի Ռուսաստան տարածուիլ ։

ԻԳՆԱՏԻՈՍ վարդապետ Հայոց էր աշակերտ Ստեփաննոսի իմաստուն առաջնորդի Կարմիր վանաց, և աշակերտակից ՝Ներսեսի Շնորհալւոյն ․ որ հրամանաւ Գրիգորի Գ ․ կաթուղիկոսին յօրինեց զմեկնութիւն Ղուկասու աւետարանին 'ի 1146 շատ գեղեցիկ իմաստներով, պանծալի ոճով, և վայելչահիւս շարադրութեամբ ։ Որ տպագրեցաւ 'ի Կոստանդինուպօլիս ․ իսկ ինքն փոխեցաւ առ Տէր սրբափայլ վարուք և աստուածաշնորհ վարդապետութեամբ ։ Ըստ ոմանց սա եպիսկոպոս ձեռնադրեցաւ նոյն ՝Գրիգոր կաթուղիկոսէն ։

ԻԳՆԱՏԻՈՍ Լոյոլացի էր հիմնադիր կարգին Յիսուսեանց ծնեալ 'ի Լոյոլայ Սպանիոյ յամին

1492, և զինուոր ըլլալով՝ երիտասարդ հասակի մէջ վիրաւորեցաւ ու անկողին ընկաւ, և մտածելով կենաց վախճանը՝ շարժեցաւ սիրտն որ երթայ Քրիստոսի և սրբոց ճամբան ։ Ասոր գնաց եկեղեցին, հանեց զէնքը կախեց Աստուածածնայ խորանին առջին, և իր պատուական զգեստը տուաւ աղքատաց, ու հագաւ աղքատին քուրջերը․ մուրանալով կ'ապրէր հացով և ջրով միայն, զարմանալի ճգնութեամբ կը տանջէր զինքն, շղթայ գօտի մէջքը, գետնատարած կ'աղօթէր․ և մեծ ջանքով հետևելով սորվեցաւ պիտուական ուսմունքներ երեսունւիրեք տարեան ։ Ու 'ի 1528 գնաց Փարիզ ու Դոմինիկեան կրօնաւորներէն սորվեցաւ աստուածաբանութիւն․ և անոնց վանքին մէջ միտքը դրաւ որ ընկերութիւն մը հաստատէ լուսաւորեալ գիտնականաց, որոնք քարոզիչ ըլլան աւետարանին Քրիստոսի ։ Այս բարի խորհուրդն յայտնելով իւր վարժապետին Հօրն Պետրոսի Ֆեվրէ միաբանեց իր հետը․ նոյնպէս միաբանեցաւ Հ․ Ֆրանչիսկոս Քսավերեան ։ Ապա սուրբն Իգնատիոս լուսաւորեալ յօրինեց հոգևոր կրթութեան գիրքը․ և աշակերտեց իրեն քանի մը գիտուն անձինք և աբեղաներ, և նախ Փարիզ դրաւ Յիսուսեան կարգին հիմն ։ Անկէց ետև դարձան 'ի Հռոմ և հաստատութիւն առին կրօնաւորական իրեք ուխտին վրա աւելցնելով չորրորդ ուխտն ալ երթալու ամէն երկիր առաքելական քարոզութե՟ հնազանդելով հռոմէական սուրբ աթոռին ։ Այսպէս սկսան բազմանալ Յիսուսեանք և ամէն աշխարհ շրջիլ մինչև 'ի Հնդկաստան և 'ի Չինս, նաև ամէն երկիր դպրատուններ, վանքեր և հոգևոր կրթարաններ շինեցին արանց և կանանց ։ Իսկ ինքն սուրբ Իգնատիոս զօրացեալ սքանչելագործութեամբ գլխաւոր եղաւ հերետիկոսներուն և պայծառացուց ուղղափառութիւնը ․ ապա յետ մեծամեծ և զարմանալի գործոց լի արդեամբք փոխեցաւ առ տենչալին իւր Քրիստոս վաթսունըհինգ տարւան 'ի 1556 ։ Սա էր ահաւոր տեսքով, միջահասակ, լայնաճակատ, խորակն և արծուունկն ։ Գրիգոր ԺԵ ․ սրբազան պապն տեսնելով երանելւոյն հրաշքները դասեց 'ի կարգս սրբոց 'ի 1622, և տօնելի եղաւ յեկեղեցիս ։

Յաւէրժահրաշ սէր հարց աստուածազգեաց
Ծառացաւ առ Ան պարգևիչ բարեաց,
Ամբարձան ընտրեալ տենչմամբ կաթոգին
Յանմատոյց փառաց լոյս անճառելին ։
Այն որք իղձ եղեն հաց լինել Փրկչին,
Այլ են որք զարդիւնս յիշատակ թողին ․
Շատք լուսաւորեալ իմաստիւք Հոգւոյն
Հանին զաշակերտս յաթոռ բարձրելոյն ։

ԻԼԱՐԻՈՆ կամ ՀԻԼԱՐԻՈՆ սուրբ հայրն էր Պաղեստինացի, զաւակ հեթանոսաց, որ ուսումն սորվելու համար գնաց յԱղեքսանդրիա, և հաւատալով Քսի մկրտեցաւ ։ Երբոր տասներեօթ տարւան էր աշակերտելով սուրբ հօրն Անտոնի աբբային սորվեցաւ բոլոր կրօնաւորական կանոնները ․ յետոյ դարձաւ իր հայրենիքը Գազա քաղաքը տեսաւ որ ծնողքը մեռեր են, ամէն բաները բաժնեց աղքատաց, ու ինքն հագաւ մազեղէններն, անցաւ յանապատ կը ճգնէր նեղ խցի մէջ պաքով և աղօթքով, մինչև առաւ շնորհք սքանչելեաց ու յաղթեց դիւական փորձանաց ։ Նա շինեց վանքեր 'ի Պաղեստին և Ասորւոց երկիրը · ուր բազմացուց աբեղաներն և կրօնաւորներն ու եղաւ առաջնորդ և հայր հարանց · այլ և փախչելով մարդկային փառքէն սկսաւ շրջիլ օտար կողմեր բարի օրինակ տալով և խրատելով զամէնքը , մինչև վախճանեցաւ 'ի Կիպրոս սրբութեամբ ութսուն տարուան 'ի 371 ։ Իսկ տասը տարիէն ետև Իսիքիոս աշկերտը վերուց սուրբին անապական մարմինը , տարաւ 'ի Պաղեստին թաղեց իրեն վանքը ։

ԻՂԱՐԻՈՍ էր սուրբ եպիսկոպոս Պիկտաւիոյ Գաղղիացւոց՝ զաւակ հեթանոս մեծատան , որ կարդալով աստուածաշունչն լուսաւորեցաւ և մկրտեցաւ բոլոր ընտանեօքն , մինչև արժանի եղաւ կարգի երիցութեան և աստիճանի եպիսկոպոսութեան · և որովհետև զօրաւոր էր ճարտարախօսութեամբ և գրով ախոյեան եղաւ ուղղափառաց ընդդէմ արիանոսաց ։ Որոնց մատնութեամբը աքսորուեցաւ 'ի Փռիւգիա · ուր աղօթքով յարոյց մեռել մը , և գրեց գիրքը “Յաղագս երրորդութեան„ աստուածիմաստ հմտութեամբ , որ շատ յարգելի եղաւ հին Հարց սրբոց ։ Ապա չորս տարիէն ետև գնաց 'ի ժողովն Սելևկիոյ , և անցաւ 'ի Կոստանդնուպօլիս , ու պապանձեցուց արիոսեան հերձուածողները , մինչև որ դարձաւ գնաց իր աթոռը ։ Ուր ժողովքներով և քարոզութեամբ անարատ պահեց ժողովուրդը · և գրեց մեկնութիւն Մատթէի , Սաղմոսաց , նաև իմաստալից նամակներ , և այլն , մինչև մականուանեցաւ Վարդապետ եկեղեցւոյ · իսկ 'ի 369 փոխեցաւ առ Քրիստոս լի հոգւոր և գրաւոր վաստակով ։

ԻԼԱՐԻՈՍ Սարդենիացի սուրբ հայրապետն Հռոմայ նստաւ գլուխ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ 'ի 461, որ մեծ արիութեամբ գլխահար ըլլալով հերձուածողաց՝ անարատ պահեց հօտն և իմաստութեամբ կառավարեց իւր պաշտօնը իբր վեց տարի: Նա դատապարտեց ժողովքով ամէն հերձուածողները և հաստատեց Եփեսոսի և Քաղկեդոնի սուրբ ժողովքները: Ապա գնաց Սարդինիայ կղզւոյն մայրաքաղաքը 'ի Քալիարի, ուր փոխեցաւ առ Աստուած սրբութեամբ 'ի 467, և դասեցաւ սրբոց կարգը հրաշքով:

ԻՆԴՈՍ և ԴՈՄՆԱ էին պալատականք Մաքսիմիանոսի կայսեր 'ի Նիկոմիդիա. Ինդոս էր ներքինի և Դոմնա քրմուհի տասներկու կռոց թագաւորին: Նա գրագէտ ըլլալով կարդաց Գործք առաքելոցը և Պօղոսի թղթերը, հաւատաց Քրիստոսի, և սորվեցուց Ինդոսին հաւատքն ու միատեղ գնացին մկրտեցան Կիւրղոս եպիսկոպոսէն. և սկսան սրբութ̃բ ճգնել և ողորմութեամբ հոգալ աղքատները: Երբոր իմացաւ ներքինապետը՝ խիստ բարկացաւ. Դոմնա փախաւ քրիստոնէից մէջ պահուեցաւ. վերջը երբոր կը նահատակէին մարտիրոսները՝ էրիկ մարդու հագուստով դուրս ելաւ, և կը ժողվէր սուրբերուն նշխարքները: Այն ատենը բռնեցին Ինդոսն ու վիզը երկանաքար կապեցին ծովը ձգեցին. իսկ Դոմնա գտաւ անոր մարմինը ծովէն եզերքն ու ամփոփեց գաղտ. յետոյ բռնեցին զինքն ալ գլխատեցին և հրով այրեցին:

ԻՆՆՈՎԿԵՆՏԻՈՍ Ա. սուրբ և մեծիմաստ հայրապետ՝ ընտրեցաւ յաջորդ Պետրոսի առաքելապետին 'ի 402 . որ սկսաւ մեծաւ խոհեմութբ կառավարել ընդհանուր եկեղեցին ։ Պաշտպան կենալով սրբոյն Յովհաննու Ոսկեբերանին , գլխահար եղաւ անոր թշնամիներուն ու դարձուց սուրբը իր աթոռը ։ Սուրբ Հերոնիմոս և սուրբ Օգոստինոս շատ կը գովեն այս սուրբ քահանայապետը թէ իմաստութեան , և թէ առաքինութեանցը համար . վասն զի ամէն տեղ հաստատեց արդարութիւն և բարեկարգութիւն զօրաւոր կոնդակներով 'ի պայծառութիւն սուրբ հաւատոյ ։ Ապա 'ի 417 վախճանեցաւ սրբութեամբ ։

ԻՆՆՈՎԿԵՆՏԻՈՍ Բ . Հռոմայեցի օծաւ քահանայապետ Հռոմայ 'ի 1130 , որ նախանձոտներ ունենալով գնաց 'ի Փարիզ և մեծապէս պատուեցաւ Լուդովիկոս Զ . արքայէն ։ Ժողով ալ ըրաւ 'ի Հռէմս վասն բարեկարգութեան եկեղեցւոյ , և զարքայորդին Լուդովիկոս Է . պսակեց թագաւոր Գաղղիոյ . Յետոյ դարձաւ 'ի Հռոմ, խոնարհեցուց թշնամիները , և զԼոթարիոս Գերմանացւոց թագաւորը պսակեց փառօք կայսր Հռոմայ ։ Նաև միջնորդութեամբ սրբոյն Բեռնարդոսի ամէն խռովութիւններն խաղաղացուց . ապա գումարեց Լատերանու Բ . ընդհանուր ժողովը հազար եպիսկոպոսաց ընդդէմ հերձուածողաց և հակառակորդաց ։ Այլ 'ի 1143ին հասաւ վախճան առաքինի և համբերատար կենաց մեծ հայրապետին և փոխեցաւ առ Տէր ։

ԻՆՆՈՎԿԵՆՏԻՈՍ Գ . քաջ աստուածաբան յաջորդեց սրբոյն Պետրոսի 'ի 1198 , և առաքելական նախանձով զօրացուց ամէն տեղ հաւատացեալներն ու եկեղեցիները : Լեւոն Հայոց արքայն և Գրիգոր Տղայ կաթուղիկոսն ալ գրեցին առ սրբազան պապն թուղթ հնազանդութեան, և նա գրեց պատասխանի օրհնութեամբ հաստատելով Լեւոնի թագաւորութիւնը : Դարձեալ գրեցին թուղթ սիրոյ, Կաթուղիկոսը խնդրեց պապէն մասնի, իսկ թագաւորը խնդրեց զնշան սրբոյն Պետրոսի հանդերձ ներողութեամբ . Իննովկենտիոս շուտով կատարեց անոնց խնդիրքը, և այլն : Յետոյ վասն բարեկարգութեան ընդհանուր եկեղեցւոյ 'ի 1215 ընդհանրական ժողով գումարեց Լատերանու արևելեան և արևմտեան եպիսկոպոսաց վասն ազատութեան Երուսաղէմի, և ընդդէմ մոլորութեանց Յովակիմայ աբբայի և Ալմարիկոսի, նաև Ալբիկեանց հերձուածին : Յետ մեծամեծ գործոց ընդ թագաւորաց և իշխանաց ապա փիզայինները Ճենուացւոց հետ հաշտեցընելու համար գնաց մեծ հայրապետն 'ի Պերուճիա . ուր հասաւ վախճանը և փոխեցաւ առ Քրիստոս 'ի 1216, 'ի սուգ բոլոր աշխարհի . թողլով շատ իմաստալից կոնդակներ, զօրաւոր վճիռներ, իրեք հոգելից գիրք յաղագս արհամարհութեան աշխարհի, և ուրիշ բարեպաշտական գրուածներ . ասոր կ'ընծայեն նաև “Ե՛կ սուրբ հոգի, և Կայր առ խաչին երգերը” :

ԻՆՆՈՎԿԵՆՏԻՈՍ Դ. Ճենուացի նստաւ 'ի գահ հայրապետութեան Հռոմայ 'ի 1243, որ վասն խաղաղութեան եկեղեցւոյ անցաւ 'ի Գաղղիա և գումարեց Լուգդոնի Ա. ժողովն, ուր գլխահար եղաւ խռովարար իշխանաց և կայսեր Գերմանացւոց՝ հանելով կոնդակ խաչակլրաց անոնց դէմ։ Ապա յետ մահուան Փրիդերիկոսի ապիրատ կայսեր դարձաւ 'ի Հռոմ, և ընծայեց Կարդինալներուն կարմիր գտակ նշան հաստատ հաւատոյ և արիւն թափելոյ։ Մեծ ջանք ունէր ծաղկեցընելու զուսումն աստուածային և քաղաքական իրաւանց, որուն հաւնար գիրք ալ շարադրեց, այնչափ հմտութեամբ, մինչ զի անուանեցաւ Հայր իրաւանց։ Այս հայրապետս գրեց կոնդակ առ Կոստանդին Ա. կաթուղիկոս Հայոց վասն վերջին օծման, և առ Հեթում թագաւոր վասն բղխման Հոգւոյն սրբոյ 'ի Հօրէ և յՈրդւոյ, և այն. որ ընդունեցան Հայք, և ժողովքով հաստատեցին 'ի Սիս յամի 1243։ Իսկ սրբազան պապն յետ մեծամեծ աշխատանաց հիւանդցաւ և վախճանեցաւ 'ի 1254։

ԻՆՆՈՎԿԵՆՏԻՈՍ անուամբ երեքտասան քահանայապետներ նստան Հռոմայ գահը, և մեծագործ առաքինութեամբ ջանացան պայծառ և անսասան պահել առաքելական սուրբ աթոռը և ուղղափառ հաւատքը ամենայն կերպով։ Սակայն ալէկոծութեան մէջ ըլլալով արևելք և արևմուտք, իշխանք և թագաւորք մեծապէս ալ վշտացան։ Մինչ զի շատը կարճօրեայ եղան սիրտցաւութեամբ, և իրենց սկսած փառաւոր գործողութիւնները 'ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ և յօգուտ ամենայն ժողովըրդոց՝ անկատար թողուցին գնացին առ Աստուած. ինչպէս որ պատմեր ենք կարգաւ ամենուն պանծալի վարքը Սրբազան պատմութեան մէջ։

Ընդ բիւր վիշտս եկին Հարք աստուածազան,
Զորս երբէք չարժէ աշխարհ ամենայն.
Ամբողջ պահելով զհօտն եկեղեցւոյ
Բոլորել 'ի գլուխ պսակ գերյարգոյ:
Գործ է չնաշխարհիկ հսկող քաջ հովուաց
Զոհել զանձն 'ի սէր անարատ գառանց,
Բուծեալ 'ի գաւթի չնորհաց սուրբ Հոգւոյն
Հանել յԱրարչին սեղան լուսաբուն:

ԻՍԱՀԱԿ նահապետ էր որդի Աբրահամու, ծնեալ 1896 տարի Քրիստոսէն առաջ. անունը կը նշանակէ ծաղր, զի ծիծաղեցաւ Սառա թէ ծերութեան ատենը ինչպէս պիտի ծնանի: Բայց Աստուած խոստացաւ թէ Իսահակէն անհամար ժողովուրդք պիտի ածին, ինչպէս որ եղաւ: Սակայն Աստուած փորձելու համար հրամայեց Աբրահամու որ ողջակէզ ընէ Իսահակը լեռան վրայ, որ ըստ ոմանց էր լեռն Գողգոթա. երբոր Աբրահամ հնազանդելով այս հրամանին պիտի մորթէր որդին ու զոհ ընէր Աստուծոյ, հրեշտակը թող չտուաւ, և աստուածային օրհնութեամբը գովեց անոր հնազանդութիւնն ու աստուածսիրութիւնը: Իսկ Իսահակ երբոր քառսուն տարւան եղաւ ամուսնացուց հայրը Ռեբեկային հետ, ու ծնաւ երկուորեակ զաւակ Եսաւ և Յակոբ: Յակոբ յետոյ ծնողացն հրամանաւ գնաց 'ի Միջագետ կարգուեցաւ ու շատ զաւակներով դարձաւ հօրը քով: Ուստի Իսահակ շատ գոհ ըլլալով և օրհնելով զԱստուած վախճանեցաւ հարիւր ութսուն տարւան. և թաղեցին որդիքը Աբրահամու գերեզմանին մէջ Քանանացւոց երկիրը: Տ. Աբրահամ, և Յակոբ:

ԻՍԱՀԱԿ Պարթեւ : Տ . ՍԱՀԱԿ :

ԻՍԱՀԱԿ Պարսիկ նոր վկայ , էր Դավրիժեցի նախ Յուսուփ անուամբ երիտասարդ թըշնամի քրիստոնէից : Բայց շուտ մը փոխուեցաւ երբոր իրէն տեսիլք եղաւ դժոխքին տանջանքը և արքայութեան փառքը : Ուստի մէկէն հետևեցաւ քրիստոնէութեան ու մկրտեցաւ . նաև հայերէն սորվելով տեղեակ եղաւ հին և նոր կտակարանաց . և սկսաւ քաջութեամբ վիճել և յաղթահարել անհաւատները համարձակ երեսնին զարնելով անոնց սուտ կրօնքը : Ասոր համար շատ տեղ տանջեցին զինքն վասն սուրբ հաւատոյ : Երբոր հասաւ իր քաղաքը , եղաւ դատաւորին առեանն ու ըսաւ . Ինծի մեծ երախտիք կ'ընես թէ որ զիս կրակով այրես 'ի նշան իմ բոցավառ սիրոյս առ Քրիստոս Աստուած : Ուստի զարկին հաստ փայտով անանկ ջախջախեցին գլուխն որ ըղեղը վաթեցաւ . այլ ինքը երբոր քաջութեամբ կը համբերէր , քարկոծեցին ու մարմինը այրեցին : Ուր երկնային լոյս ծագեց երանելւոյն նշխարքին վրա , մինչև ափշեցան այլազգիք և մխիթարեցան քրիստոնեայք 'ի 1417 :

ԻՍԻԴՈՐՈՍ էր սուրբ եպիսկոպոս Սիւիլլէոյ 'ի Սպանիա , որդի իշխանաւորի , որ մանկութեան ատենը լաւ կրթուեցաւ իր սուրբ եպիսկոպոս եղբարցը քով Լէանդրոսին և Փուլգենտիոսին , նաև քաջ վարժեցաւ հռոմայեցի հելլենացի և եբրայական դպրութեամբ . մինչ զի եղաւ զօրաւոր քարոզ ուղղափառ հաւատոյ , և յաղթահարող արիոսեան Գոթացւոց : Ուստի աստուածիմաստ գիտութեամբ և առաքինութեամբ փայլեալ բանիւ և գրով շարագրեց շատ հոգելից գրեանք , շինեց վանքեր և դպրոցներ 'ի Սպանիա . ուր ծաղկեցուց զուսումն գիտութեանց և կրօնաւորութեան հոգեւոր կրթութեանց : Ապա բարեկիրթ աշակերտներուն ձեռքով և անձամբ պապանձեցուց հերետիկոսներն ու լի արդեամբք և սրբութբ̃ փոխեցաւ յերկինս 'ի 636 :

Թ'եւ Աբրահամու Իսրայէլ կոչի ,
 Բայց չեղև նման վարուց հայրենի .
 Վասն այն ինքն ազգաւ 'ի նախնեաց անտի
 Եղև բոլորից վայրագ ատելի :
Դու մի՛ յոյժ պանծար ո՛ օգոստածին
 Ընդ գործ քաջ նախնեացդ որք քեզ ոչ օգտին .
 Երբ գործքդ աննման են գործոց վեհից
 Միշտ ես աննուէր գժնեայ համայնից :

ԻՐԱՅԻՏԱ կամ ԻՐԱՅԻՍ կոյս էր Աղեքսանդրացի դուստր քահանայի , որ տասներկու տարուան վանք մտաւ , ու վասն առաքինութե̃ ամենուն կը ծառայէր խոնարհութեամբ : Օր մը հրամանաւ մայրապետին կ'երթար աղբիւրէն ջուր բերելու , տեսաւ որ Կուկլիանոս կռապաշտ իշխանը կապանքով քշել կուտար քրիստոնեաները , քահանաներով , կրօնաւորներով , և կուսանքներով . գնաց կուսանաց քով հարցուց , ուր կ'երթան : Երբոր լսեց թէ նահատակուելու կ'երթան որ փառաց պսակն առնուն . թողուց ջրին ամանն ու խնդրեց զօրապետէն , որ զինքն ալ անոնց հետ կապէ , ասելով թէ Ես ալ քրիստոնեայ եմ և աղախին Քրիստոսի : Ասոնք միատեղ հասան յԱնտինոնուպօլիս ու ելան Կուկլիանոսի առեանը . որ տեսնելով զԻրայիտա մատաղ և գեղեցիկ՝ հրամայեց որ թող տան . բայց կոյսը կ'աղաղակէր , թէ Ե՛ս ալ կը մեռնիմ անոնց հետ վասն անուանն Քրիստոսի. զի ես ալ կ'անարգեմ ձեր պիղծ կուռքերն, ու կը պաշտեմ Ճշմարիտ Աստուածն երկնից։ Այսպէս Հոգւով սրբով լցեալ այնչափ բան խօսեցաւ քաջութբ, որ բռնաւորը խայտառակելով նախ զերանելի կոյսն գլխատեց, և յետոյ սուրբ նահատակները։

ԻՐԱՒԱՓԱՌ, ըստ Յն. **ԹԵՄԻՍՏՈԿՂԷՍ** էր հովիւ Զմիւռնացի Դեկոսի հալածմանց ժամանակը. երբոր հալածողները կը փնտռէին լեռներուն մէջ պահուած Դէոսկորիդէս երևելի քրիստոնեայն՝ հարցուցին Իրաւափառին, նա չի յայտնեց, այլ զինքն մատնեց քաջութեամբ, թէ Ե՛ս ալ քրիստոնեայ եմ. ուստի մէկէն բռնեցին տարին դատաւորին առջևը։ Եւ դատաւորը հարցուց թէ ինչ մարդ ես. պատասխանեց համարձակ. Քրիստոնեայ եմ կամօքն Աստուծոյ. և Քրիստոսի զօրութեամբ պատրաստ եմ արիւնս թափելու։ Դատաւորը կատղելով կապել տուաւ զերանելին, և այնչափ ծեծել տուաւ գետնին վրա պառկած, որ աղիքները թափեցան. ետքը այնպէս կախեցին ու մարմինը քերթեցին. երբոր նա համբերութեամբ կը գոհանար, վար առին ու երկաթէ փշերու վրա չարաչար քաշեցին, մինչև աւանդեց հոգին։ Ապա բռնեցին Դէոսկորիդէսն ալ շատ տանջեցին. բայց նա հաստատ քաջութեամբ նահատակեցաւ գլխատելով 'ի 250։

ԻՒԱՆ ՎԱՍԻԼԵՒԻՉ անուանեցաւ Յար և առաջին Թագաւոր Ռուսաց, որ 'ի մանկութէ գոլով վառվռուն, պատերազմասէր և հանճարեղ, խորտակեց Թաթարներուն ուժը, տիրեց Խազանին, և նորոգեց ամէն խանգարած կարդը ազգին ։ Նովկորոտցիք ապստամբելով երբոր միացան Լեհաց հետ, Իւան զօրկաւ քաջութեամբ խոնարհեցուց զանոնք ․ նոյնպէս տասը տարի պատերազմելով Լեհաց հետ և Թաթար խաներուն հետ նկուն ըրաւ զամենքը, և փառաւորեց բարեկարգութեամբ Ռուսաց պետութիւնը ։ Որոնք զօրացան ամենայն կողմանց մինչև հասան Սիպիր և տիրելով շատ տեղերու կանոնաւորեցին, ու ծաղկեցուցին քաղաքականութեամբ, արուեստով և շինութեամբ այլովքն հանդերձ ։ Իւանին թագաւորութեան ատենը Եւրոպացիք ալ յաճախեցին 'ի Ռուսիա ղրկելով 'ի Մոսքա մայրաքաղաք դեսպաններ և նուիրակներ Գերմանացւոց, Լեհաց, Հռոմայ հայրապետաց, Դանեաց, Վենետիկցոց և Տաճկաց ․ որոնց հետ մտերմացաւ Իւան դաշինք հաստատեց ։ Նաև բերել տուաւ արուեստագէտք, ճարտարապետք, և այլք, և վարձատրելով նստեցուց Մոսքա, ուր զարդարեց և ճոխացուց տէրութիւնը մեծագործութեամբ ։ Յետոյ մեծ ժողով գումարեց ու բարեկարգեց Ռուսաց եկեղեցին վանքերով, կղերիկոսներով և կրօնաւորներով ։ Նաև փոխեց դրօշին նշանը սուրբ Գէորգ, դրաւ երկու գլխէն սև արծիւ ։ Իւան այսպիսի քաջագործութեց և բարեկարգութեանց ետև հիւանդանալով մեռաւ եօթանասունըհինգ տարւան յամի 1505 ․ որ թագաւորեց քառասունիրեք տարի և յաջորդ դրաւ իրեն Վասիլ որդին ։

Զնաշխարհիկ մարտիկք 'ի սէր հայրենեաց
Քաջալանջ հասին շքեղ տենչանաց,
Կանգնեալ տիրապէս անմահ յաղթանակ
Ընձանց և ազգին գոլ փառաց պսակ ։

Պերճ աշխարհակալք այսպէս հիմնեցին
Անձնիւր պետութիւնս ըստ չքնաղ կարգին .
Նոյնպէս Յար Իւան Կեսար վեհափառ
Զազգն և զպետութ՟ի փայլեաց գերափառ :

ԻՒԱՆԷ ԱԹԱԲԵԿ ՄԵԾ՝ էր իշխան Հայոց և եղբայր Զաքարէի սպարապետին , որ հայրը Սարգիս մեռանելէն ետև վերակացու եղաւ Անի քաղաքին ձեռամբ Թամար Թագուհւոյն Վրաց 'ի 1184 : Սոքա երկու եղբարք մեծամեծ քաջագործութեամբ յաղթելով Պարսից՝ շատ գաւառները Վրաց իշխանութեան տակ ձգեցին : Բայց երբոր Իւանէ բռնուեցաւ Խլաթայ ամիրայէն , Զաքարէ նորա դուստր Թամդա տուաւ ամիրային կնութեան ու եղբայրն ազատեց : Այս տիկինը շատ օգնութիւն ըրաւ այն կողմի քրիստոնէից . իսկ Իւանէ Զաքարէին մահուանէն ետև առաւ նորա իշխանութիւնն , ու միաբան Հեթում թագաւորին հետ մեծ քաջութե՟ այլազգի ամիրաները հալածեցին Հայոց աշխարհէն : Ապա 'ի 1228 յաղթող քաջ անուամբ փոխեցաւ աշխարհէ Իւանէ Աթաբեկն 'ի սուգ քրիստոնէից : Տ . Զաքարէ :

ԻՒՂԱԲԵՐ կանայք էին հետևողք Քրիստոսի վառեալք աստուածային սիրով . որոնց պարագլուխն էր Մարիամ Մագդաղէնացի լցեալ Հոգւով սրբով , առաքելուհի և քարոզ բանին կենաց : Երկրորդն էր միւս Մարիամն՝ կին Կղէովպայ եղբօրն Յովսեփայ Աստուածահօր , անուանեալ քոյր մօր Տեառն , կամ Մարիամ Յակոբեայ , այս ինքն մայր եղբօր Տեառն : Երրորդն՝ Սողոմէ մայր որդւոցն Զեբեդեայ Յակոբեայ և Յովհաննու : Չորրորդն՝ Յովհաննա կին Քուզայ հազարապետին Հերովդի ։ Կան և ուրիշ շատ բարեպաշտուհիներ ալ, ինչպէս Շուշան և այլք, որք կը շրջէին Փըրկչին հետ, և կը պաշտէին իրենց ծախքովը · նաև խաչելութեան ատենը մխիթարակից էին Տիրամօրն, և յարութեան միածնին՝ խնդակից ։ Նոյնք ամէնքը աստուածպաշտութեամբ կատարեցին իրենց առաքինի կեանքը, և շատ հալածանք ալ քաշեցին վասն անուանն Քրիստոսի ։ Մանաւանդ Մագդաղենացին, որ ըստ ոմանց վախճանեցաւ յԵփեսոս ծառայելով Յովհաննէս աւետարանչին · և ըստ այլոց 'ի Մարսիլիա սքանչելի ճգնութ̃բ կատարեցաւ ։

ԻՈՒՆԿ ԵԴՈՒԱՐԴ էր Անգղիացի գիտնական պաշտօնեայ արքունի Աղօթարանին, որ անբաղդութեամբ կորուց որդիքն ու կինը ։ Այս սաստիկ կսկիծը թեթևցընելու համար գրեց տըրտմալից բանաստեղծութիւններ և զանազան բարոյական քերթուածներ ։ Շատ անուանի եղաւ գիրքն կոչեցեալ Գիշերք Իունկայ, որ բոլոր աշխարհիս ունայնութիւնը կը ստորագրէ սիրտ շարժելով, և գեղեցիկ հաստատելով անմահութ̃ի հոգւոյ ։ Այս գիրք 'ի 1769 թարգմանեցաւ յանգղիական լեզուէն 'ի գաղղիական · և անկէ 'ի բարբառ տաճկաց ձեռամբ Յովհաննէս ասպետին Երեմեան, որ տպագրեցաւ 'ի 1819 'ի Վենետիկ 'ի սուրբն Ղազար ։

ԻՕՌՔ կամ ԵՕՐՔ ՀԵՆՐԻԿՈՍ ԲԵՆԵԴԻԿՏՈՍ էր արքայազուն կարդինալ, և առաքինազարդ իշխան Իօռքայ դուքսին Անգղիոյ ։ Սորա հայրը Յակոբ արքայորդին երբոր եկաւ 'ի Հռոմ՝ Բենեդիկտոս սրբազան պապն մեծ պատուով նստեցոյց յարքայավայել հոյակապ պալատը ։ Ուր 'ի 1725 ծնաւ այս Հենրիկոս և մականուանեցաւ Դուքս Եօրքայ, զոր մկրտեց Բենեդիկտոս պապն և իւր անունը տուաւ իրեն, որ առաքինի և հոգևոր վարքով սնեալ անուանի եղաւ ։ Ապա 'ի 1747 նոյն սրբազան պապն ձեռնադրեց զինքը քահանայ ու տուաւ պատիւ Կարդինալութեան. յետոյ Կղեմէս պապն տուաւ եպիսկոպոսութիւնը Կորնթոսի, և այլն ։ Այս հոգեսէր եպիսկոպոս փափաքելով փրկութեան հոգւոց ժողովներով շատ բարեկարգութիւն ըրաւ իրեն վիճակին մէջ ։ Իսկ 'ի 1798 երբոր Գաղղիացի ապստամբները տիրեցին Հռոմայու, մէկալ կարդինալներուն հետ եկաւ Վենետիկ, ուր 'ի 1800 ամին ընտրեցին պապ զՊիոս Է ։ Նոյնպէս քանի մը ամիսէն ետև գնաց սրբազանին հետ 'ի Հռոմ, և կարգեցաւ Նախագահ կարդինալաց 'ի 1804 ։ Շատ աղքատասէր էր և գիտուն. գրեց հոգեշահ գրեանք վասն հոգևոր կրթութեան, և իմաստալից նամակներ ։ Ապա 'ի 1807 կատարեց առաքինափայլ կեանքը ութսունւերկու տարւան. և սգով լեցուց աղքատները և բոլոր ժողովուրդը ։

Ո՛վ շքեղ գործոց պերճ Պայազատաց
Լքեալ զանցաւորս՝ երկնից տենչողաց .
Որք եղին 'ի գլուխ զխաչ կենարարին
Վեհացան արդեամբք հոգևոր մասին ։
Ճոխք էին փառօք, մերժեալ զամենայն
Աղքատիկ մարմնով յոգի փայլեցան ,
Օրինակ բարեաց եղեալ աշխարհի
Բարձրացան յանձառ փառս անկապտելի ։

Լ.

ԼԱԿՏԱՆՏԻՈՍ Լուսիոս էր բանիբուն պատմագիր եկեղեցական Դ. դարուն Ափրիկեցի, և ըստ ոմանց Իտալացի, որ Դիոկղետիանոսի հրամանաւը վարժապետ եղաւ լատին լեզուի ի Նիկոմիդիա: Իր ատեն եղած քրիստոնէից հալածանքն ողբալով կը պատմէ, և նահատակներուն դառն տանջանքն ու մեծ քաջութիւնն գեղեցիկ կը նկարագրէ: Մեծն Կոստանդիանոս ի 317 հոգաբարձու և հրահանգիչ դրաւ զինքը իր որդւոյն Կրիսպոսի, որ Թագաւորական պալատին մէջ անզարդ և աղքատ կ՚ապրէր հին փիլիսոփաներուն պէս: Այնչափ գեղեցիկ ոճ և ընտիր լատինաբանութիւն ունէր, որ մականուանեցաւ Կիկերոն քրիստոնեայ. որով շատ հոգելից գրեանք շարադրեց. որոնցմէ մնացածները տպուեցան և գլխաւորներն են՝ Ա. Գիրք յաղագս աստուածային պաշտամանց, որ է զօրաւոր վարդապետութիւն ընդդէմ հեթանոսաց սնոտի պաշտամանց և խաբէութեց, և քաջ ճարտարախօսութեամբ կը հաստատէ քրիստոնէական ճշմարտութիւնը: Բ. Ճառ վասն մահուան հալածողաց և թշնամեաց քրիստոնէից, որուն մէջ կը ստորագրէ չարաչար կորուստը անոնց՝ որ պատճառ եղան հալածանաց ու ճշմարտութեան դէմ: Գ. Յաղագս նախախնամութեանն Աստուծոյ 'ի վերայ բանաւորաց և անբանից ։ Դ. Յաղագս վրէժխնդրութեանն Աստուծոյ, և այլն ։ Բոլոր ասոնք հայերէն ալ թարգմանուած ունինք ։ Իսկ ինքն առաքինի և իմաստասէր անուամբ նաև բարի վարքով փոխեցաւ յաշխարհէս 'ի 325 ։

ԼԱՆՏՈՍ Սաբինացի նստաւ յաթոռ քահանայապետութեան Հռոմայ 'ի 913 . որուն կեանքը սակաւօրեայ ըլլալով չի հասաւ ըստ փափաքանացն երևելի մեծագործութիւն մը ընելու վասն պայծառութեան սուրբ եկեղեցւոյ, և բարեկարգութեան կղերիկոսաց ։ Վասն զի վեց ամիսէն ետև հասաւ մահը և փոխեցաւ առ Տէր ։

ԼԱՏԵՐԱՆԵԱՆ չորս ընդհանուր ժողովք գումարեցան 'ի Հռոմ Լատերանու տաճարին մէջ ։ Առաջինն եղաւ իրեքհարիւր եպիսկոպոսաց՝ Կալիստոս Բ. պապին օրը 'ի 1122 վասն բարեկարգութեան եկեղեցական առաջնորդաց, և վասն ազատութեան սուրբ երկրին Երուսաղէմի, և Սպանիոյ ։ Երկրորդն եղաւ հազար եպիսկոպոսաց, Իննովկենտիոս Բ. հայրապետին օրը 'ի 1139, հերձուածներուն և աղանդաւորներուն դէմ ։ Երրորդն եղաւ իրեքհարիւր եպիսկոպոսաց Աղեքսանդր Գ. քահանայապետին հրամանաւ 'ի 1179 ընդդէմ Ալբիկեանց և ուրիշ աղանդաւոր խռովչաց ։ Չորրորդն եղաւ երեքհարիւրտասներկու արևելեան և արևմտեան հայրապետաց՝ հրամանաւ Իննովկենտիոսի Գ. պապին 'ի 1215 վասն ազատութեան Երուսաղէմի և բարեկարգութեան ընդհանուր եկեղեցւոյ, նաև ընդդէմ ամենց մոլորելոց, և այլն ։

ԼԱՒՐԵՆՏԻՈՍ կամ ԼՕՐԷՆՑԻՈՍ էր նախասարկաւագ սրբոյն Քսեստոսի պապին, և փառաւոր վկայ Քրիստոսի ։ Դեկոս անօրէն կայսրն երբոր Պարսկաստանէն դարձաւ ՚ի Հռոմ, գազաններուն առջին ձգեց երկու քրիստոնեայք որ հոն բռներ հետը բերեր էր. բայց գազանները որ չի մօտեցան սուրբ վկաներուն, նա սրով նահատակեց. որոնց անուններն էին Սէլինդոս և Օենխա ։ Յետոյ երբոր հալածանքը բորբոքեցաւ, Վաղերիանոս յաջորդն Դեկոսի բռնեց զՔսեստոս սուրբ հայրապետն ու կը նեղէր որ ուրանայ հաւատքը ։ Բայց նա մեծ քաջութեամբ դաւանելով զՔրիստոս յանդիմանեց խայտառակելով զկռամոլութիւնը, ուստի գլխատեցին սուրբը. իսկ սուրբ մարմինը ամփոփեց պատուով Լաւրենտիոս ։ Որ բռնեցին ու կը բռնադատէին որ եկեղեցւոյ գանձը տայ իրենց. ան ալ կառք մը ուզեց առաւ քաղաքապետէն, ու բոլոր աղքատները և ցաւագարները լեցուց մէջն ու տարաւ իշխանին, որոնց բաժներ էր գանձը հրամանաւ սուրբ հայրապետին ։ Քաղաքապետը բարկանալով չարաչար տանջեց և ծեծելով սուրբը բանտը դրաւ. ուր նա անուամբն Քրիստոսի և աղօթքով շատ հիւանդներ և ցաւագարներ առողջացոյց. զոր տեսնելով բանտապանն Հիպողիտոս հաւատաց Քրիստոսի և մկրտեցաւ ։

Իսկ սուրբ Լաւրենտիոսն կրկին և կրկին դատեցին ու տանջեցին. ապա երբոր տեսան անոր հաստատ սէրը վասն Քրիստոսի, և անպատմելի քաջութիւնը, պառկեցուցին հրացեալ կասկարայի վրա ։ Հոն առջևը կեցած էր մայրը ձեռքն աւետարան կը քաջալերէր որդին, որ հաստատ կենայ. իսկ սուրբ վկայն ասաց իշխանին, “Ա-

Հաւասիկ մարմնոյս մէկ կողմը խորովեցաւ , դարձուր զիս որ մէկալ կողմն ալ խորովի , որպէս զի ըլլամ կատարեալ ողջակէզ Տեառն Աստուծոյ իմոյ ,, . և այսպիսի կտրճութեամբ և ուրախութեամբ աղօթելով աւանդեց առ Աստուած հոգին յամի 258 : Ապա երբոր սուրբին մարմինը կը թաղէր բանտապանը , բռնեցին զան ալ շատ տանջեցին քերթելով . յետոյ կապուած ձիու պոչ կապեցին ու քարոտ և փշոտ տեղեր քաշեցին , մինչև կատարեցաւ 'ի Քրիստոս և թաղեցաւ Լաւրենտիոսին հետ :

ԼԱՒՐԵՆՏԻՈՍ Յուստինեան էր իշխանազուն Վենետիկցի , որ մանկութենէն վառեցաւ հոգևորի և բարեսէր ճգնութեանց՝ փախչելով մարմնաւոր փառքէ և բերկրութեանց : Մինչ զի երբոր ազգականքը կը ջանային որ զինքը կարգեն , փախաւ մտաւ կանոնիկոսաց վանքը սրբոյն Գէորգայ : Ուր խստակրօն վարքով և հրաշալի առաքինութեամբ , խոնարհութեամբ և անձնուրացութեամբ այնչափ գերազանց և շնորհալի հանդիսացաւ , որ 'ի 1424 հաստատեցին ընդհանուր առաջնորդ իրենց կարգին . և ապա 'ի 1451 սրբազան հայրապետն Հռոմայ դրաւ զինքը պատրիարք Վենետիկի : Սակայն ինքը միշտ կը պահէր իրեն կրօնաւորական կարգը և առաքինազարդ վարքը , խոնարհ և աղքատասէր , հայր որբոց և տնանկաց . շինեց կուսանաց վանքեր և դպրոցներ , որով փառաւորեց ազգը և եկեղեցիները ամենայն բարեկարգութեամբ և լուսաւորութեամբ : Անդադար կը պաղատէր առ Աստուած լալով . մինչև արժանի եղաւ տեսնելու զմանկացեալն Յիսուս Ծննդեան պատարագին մէջ :

Նաև շնորհեցաւ իրեն հոգի մարգարէութեան և հրաշագործութեան · գրեց հոգելից գրեանք ալ և ապա մեծագոյն արդեամբք փոխեցաւ առ Փրկիչն եօթանասունըչորս տարւան 'ի 1455 , որուն անուշահոտ սուրբ մարմինը անապական մնալով շատ հրաշքներ գործեց , և եղաւ տօնելի :

Լաւրէնտիոս քաջ պատարագ հաճոյ
 Հօրն երկնաւորի ողջակէզ սիրոյ ,
 Անձնաստոչոր ինքնին բոցավառ նուէր
 Յանեղին սեղան երթեալ ձենձերիւր :
Ի նոյն վառեալ սէր նորին համանուն՝
 Հայրապետական 'ի բարձր աթոռոյն
 Սըփռէր 'ի կարօտս ըղձութըս սիրոյն ,
 Յերկրի լեալ բաշխող երկնային գանձուն ․

ԼԵՒՈՆ Ա . սուրբ քահանայապետ բոլոր հօտին Քրիստոսի , անուանեալ Մեծ և աստուածիմաստ , էր Իտալացի , և ընտրեցաւ արժանաւոր յաջորդ սրբոյն Պետրոսի 'ի 440 , որ մէկէն եռանդուն հոգւով մերժեց հերձուածողներն ու անոնց Եփեսոսի մէջ ըրած չարաժողովը : Իսկ 'ի 451 գումարել տուաւ Քաղկեդոնի սուրբ ժողովն Եւտիքէսի դէմ , ուր նստան նախագահ իրեն նուիրակները՝ և երբոր կարդացին Լևոնի Տումարը , կամ դաւանութիւնը՝ դատապարտելով զԵւտիքէսն ու Դիոսկորոս աղաղակեցին վեցհարիւրերեսունըվեց հայրապետները միաբերան . " Այս է հաւատք առաքելոց . . . Պետրոս խօսեցաւ Լևոնին բերնովը " : Յետոյ ութ ժողովով հաստատեց այս սուրբ ժողովքին կանոնները հերքելով մոլորեալներն ու սահմանելով շատ լաւ կանոններ *վասն բարեկարգութեան, և այլն : Այսպիսի իմաստուն կառավարութբ̃ և ողջամիտ վարդապետութեամբ քսան տարի սուրբ եկեղեցին հաստատելէն ետև փոխեցաւ սրբութեամբ և իմաստութեամբ 'ի 461 : Սուրբ Հայրապետիս իննուսունըվեց աստուածիմաստ Ճառերն որ խօսեր էր տօներու վրա, և հարիւր քառասունըվեց հոգելից նամակները մէկտեղ տպեցան և յարգելի եղան մինչև ցայժմ զօրաւոր և պայծառ ոճովը :*

ԼԵՒՈՆ Բ. *սուրբ հայրապետն էր Սիկիլիացի, լեզուագէտ իմաստուն. օծաւ պապ Հռոմայ 'ի 682, և հաստատեց զընդհանուր ժողովն Կոստանդինուպօլսոյ Գ. : Նաև սահմանադրելով գեղեցիկ օրէնքներ զօրացուց սուրբ հաւատքը, յօրինեց հոգեշահ երգեր և մեղեդիներ. խիստ խնամակալ եղաւ աղքատաց. բայց շուտով փոխեցաւ առ Քրիստոս սրբակաց վարքով 'ի 683 :*

ԼԵՒՈՆ Գ. *սուրբ քահանայապետ Հռոմայեցի՝ ընտրեցաւ յաթոռ Հռոմայ 'ի 795, և շատ հալածանք քաշեց նախանձոտ թշնամիներուն ձեռքէն, մինչև խոշտանկելով վանքի մը մէջ բանտը փակեցին. և կ'ուզէին աւելի չարիք հասցընել սուրբ հայրապետին, բայց հրաշքով կապուեցան. ու Աստուած ողջ ազատեց զինքն : Որ գնաց 'ի Գաղղիա և շատ մեծարեցաւ Կարոլոս արքայէն, որ ոչ միայն մխիթարեց զսուրբը, այլև խաղաղացուց Հռոմ, և մեծ փառքով ճամբեց հայրապետն իր աթոռն : Մեծն Կարոլոս երբոր Հռոմ եկաւ սուրբ Պետրոսի եկեղեցին աղօթք կ'ընէր, սուրբ հայրապետն*

Հոգւով սրբով շարժեալ օծեց զինքը հանդիսապէս Կայսր Հռոմայ. և ընդ բոլոր աշխարհ հռչակեց Կայսր արևմտեան։ Այս սուրբ հայրապետիս օրը շատ երևելի հրաշքներ եղան 'ի պայծառութիւն ուղղափառութեան. և ինքն սրբութեամբ և համբերութեամբ քսանըմէկ տարի սուրբ եկեղեցին կառավարելէն ետև փոխեցաւ առ Քրիստոս լի արդեամբք 'ի 816։

ԼԵՒՈՆ Դ. էր Հռոմայեցի, և ընտրեցաւ յաջորդ սրբոյն Պետրոսի 'ի 847. որ արիական կառավարութեամբ և սրբակաց վարուք փառաւորեց սուրբ եկեղեցին։ Ասան զի ոչ միայն մեծամեծ շինուածներով և պարսպով ամրացուց Հռոմ մայրաքաղաքն, այլ և մօտը նոր քաղաք կանգնեց ամրութեան համար, և իւր անուամբն անուանեց Լէոպօլիս։ Նմանապէս զօրացուց ծովեզերեայ քաղաքներն ու բերդերը այլազգիներուն դէմ. և հրաշագործութ̃բ կորուց նաւերն որ կ'երթային կոխելու զՀռոմ. և ասոր յիշատակ դրաւ Տիրամօրն վերափոխման ութօրեայ տօնը։ Ժողով գումարեց վասն բարեկարգութեան և ուղղութեան վարուց. իսկ Լուդովիկոս Բ. անցեալ 'ի Հռոմ օծուեցաւ իրմէ կայսր Հռոմայ։ Երբոր այսպէս ժրաջան աշխատութ̃բ իրեն առաքելական գործքերը կը կառավարէր 'ի փառս Աստուծոյ, հասաւ մահն և փոխեցաւ առ Տէր 'ի 855։

ԼԵՒՈՆ անուամբ երկոտասան սրբազան հայրապետք նստան 'ի Հռոմ առաքելապետին գահը, մեծահամբաւ անձինք իմաստութ̃բ և սրբակաց առաքինութ̃բ։ Որոնք արեամբ չափ ճգնեցան պայծառացընել զեկեղեցին Քրիստոսի. Թէպէտ և ժամանակին վնասակար խռովութիւնները երբեմն անոնց այնչափ հալածանք քաշել տուին խռովարար իշխաններէն և թագաւորներէն, մինչև ոմանք աքսորանաց և բանտի մէջ մեռան, ոմանք դեղակուր եղան թշնամիներուն ձեռքէն, շատն ալ ցաւագար և կարճօրեայ եղան։ Ուստի ժամանակ չունեցան իրենց պիտուական սահմանադրութիւններն գլուխ տանելու ընդհանուր եկեղեցւոյ օգտին համար, բայց ՚ի ետքի Լևոն ԺԲ. պապէն. ինչպէս ամենուն վարքն ալ կարգաւ պատմեր ենք մեր Սրբազան պատմութեանը մէջ։

ԼԵՒՈՆ ԺԲ. Աննիբաղ Ճէնկա Իտալացի՝ յաջորդեց յաթոռ քահանայապետութեան Հռոմայ ՚ի 1823. և շուտ մը սկսաւ բարեկարգել ամէն եկեղեցական կանոնները և վիճակը. նաև խնամակալ ըլլալով աղքատաց և տնանկաց շատ սիրելի եղաւ հօտին և փառաւորեցաւ անունը ընդ ամենայն աշխարհ։ Ապա յետ կարգաւորելոյ եկեղեցիներն ու դպրոցները կոնդակ հանեց միւս տարին Յոբելեան ներողութեանց 1825 տարւոյն համար, և ամէն աշխարհ զօրացուց ուղղափառները ազատելով ծանրութենէ և նեղութենէ իշխանաւորաց կամ բռնաւորաց ժամանակին, որպէս զի կարենան դիւրութեամբ երթալու ուխտ ՚ի Հռոմ։ Ուստի ՚ի սկիզբն սուրբ տարւոյն Հռոմ ժողովրդով լեցուեցաւ ամենայն ազգաց. իսկ Սրբազանն ելաւ հանդէսով և բոպիկ ուխտ գնաց սրբոց նշխարաց։ Նաև մեծ թափօրով պատրիարգաց, եպիսկոպոսաց, երիցանց և անհամար ժողովրդով չորս մեծ եկեղեցիները մտաւ աղօթք ըրաւ. ապա դարձաւ սուրբ Պետրոսի եկեղեցին պատարագեց, ու ապաշխարողները հաղորդեց. և հանդէսներէն ետև առաւ հետը եօթանասուներկու աղքատ ուխտաւորներ կերակրեց ինքը ծառայելով անոնց և ընծայելով արծըթէ մատաղ: Իբր հարիւր հազար ուխտաւորներ կերակրեց հիւրանոցին մէջ. մինչ զի անթիւ ժողովուրդը գոհ և ուրախ ըրաւ իմաստութեամբ և առատաձեռնութեամբ մեծ հայրապետն Եւ ան՝ մինչև որ այն մեծ հանդէսն Յոբելեանին կատարեցաւ ցնծութեամբ և աստուածպաշտութեամբ: Յետոյ հանեց ընդհանուր կոնդակ ընդ բոլոր աշխարհ, դնելով փոխանորդներ, որպէս զի կատարեն նոյն հանդէսն բաշխելով հաւատացելոց պապական օրհնութիւն Յոբելեան ներողութեան:

Ապա ՚ի 1828 տուաւ սրբազանը ուղղափառ Հայոց ալ, որոնք աքսորեալ էին, և միջնորդութեամբ թագաւորին Գաղղիոյ Կարոլոսի Ժ. Օսմանեան արքայէն հրովարտակ հանել տուաւ, որ աքսորեալները ետ դառնան ու իրենց առանձին պատրիարգ դնեն՝ եկեղեցիներ շինեն, և պայծառանան, և այլն: Յետ կատարելոյ ամենայն առաքինական գործքերը, յայտնի եղաւ իրեն մօտաւոր մահը, և սկսաւ ամէն հոգևոր պատրաստութիւնները տեսնելու: Ապա ՚ի 9 փետ. երբոր ցաւը սաստկացաւ, ինքն արթուն մտօք և ջերմ եռանդեամբ վերջին օծումն առաւ յանձնելով զինքն Աստուծոյ կամացը. և ՚ի 10 փետ. աղօթելով աւանդեց առաքինի հոգին վաթսունըութ տարւան յամի 1829. որուն մեծահանդէս թաղումն ըրին և փառաւոր դամբարան կանգնեցին արժանապէս:

Լեւոն հայրապետք առիւծք մեծազօր ,
Ըստ շքեղ անուանն յաղթողք փառաւոր ․
Մերժեալ կորուսեալ զգազանն անդընդին
Հանին զհօտն յարօտ գեղազուարճ հովտին ։
Դու հրճուեալդ յանմահ հովիտ ուխտարաց
Ջանիւք գերապանծ սուրբ հօտապետաց ,
Իա՛ց աստուածաշնորհ յայն անբիծ հօտի ,
Մինչև երկնայնոյն լցիս արժանի ։

ԼԵՒՈՆ անուամբ վեց կայսերք նստան 'ի Կոստանդնուպօլիս սկսեալ 'ի Ե դարէ մինչև 'ի Թ․ ոմանք անկարգ և անառակ վարքով աննշան եղան , ոմանք ալ մոլորեալ պատկերամարտութեամբ պատուհասելով կորան չարաչար ։ Միայն Լեւոն Զ․ որդի կայսեր Վասլէ Արշակունւոյ գրագիտութեան հետևելով անուանեցաւ Իմաստասէր ․ գրեց ճառեր տօնախմբութեանց վրայ , քրիստոնէական ճշմարտութէ , և ճառ զինուորութեան , և այլն ։ Բայց կայսերավայել քաջագործութիւն և բարեկարգութիւն չըրած մեռաւ յամի 911 ։

ԼԵՒՈՆ Ա․ մեծ իշխան Հայոց Կիլիկիոյ էր որդի Կոստանդին իշխանապետի Ռուբինեանց ցեղէն , եղբայր և աջակից մեծ իշխանին Թորոսի Ա ։ Սա զարմանալի քաջութեամբ զարկաւ հալածական ըրաւ Սկիւթացիները , զոր Լատինները կոչեցին գործ սքանչելեաց ։ Նա 'ի 1123 Թորոսին մահուանէ ետև անցաւ անոր տեղն ու մեծամեծ քաջագործութեամբ մէկ քանի քաղաքներ ետ առաւ Յոյներէն , որ յափշտակեր էին ․ ասոր համար Յովհաննէս Կոմնենոս կայսրը շատ զօրքով եկաւ Լեւոնին վրայ , որ քաշուեցաւ լեռներուն մէջ․ յետոյ սովէն նեղն ընկաւ ու անձնատուր եղաւ երկու որդիքներովը Ռուբէնով և Թորոսով, որոնք կայսրը շղթայակապ տարաւ 'ի Կոստանդինուպօլիս 'ի 1137․ բայց երկրորդ տարին ազատեց բանտէն ու իր պալատն առաւ զանոնք։ Օր մը կայսրը բաղնիք գնաց Ռուբէնն ալ հետը ու մարմարեայ աւազանը վերուց Ռուբէն և տարաւ կայսեր առաջը, որ չորս հոգի չէին կրնար շարժել։ Աստի Հոռոմները զարմանալով Սամփսոն կը կոչէին․ յետոյ նախանձելով կուրացուց քաջին աչքը, որ ցաւէն մեռաւ։ Ասոր համար կայսրը վախնալով Լեւոնէն՝ վերուց նորէն բանտը դրաւ հանդերձ Թորոսով, ուր մեռաւ քաջն Լեւոն 'ի 1141․ իսկ Թորոսը ազատեց բանտէն։

ԼԵՒՈՆ Բ․ անուանեալ Մեծ՝ եղբօրորդի Բ․ Թորոսին, նստաւ առաջին թագաւոր Հայոց 'ի Կիլիկիա, որուն 'ի 1185 յանձներ էր զայս իշխանութիւնը Ռուբէն եղբայրն ու հրաժարեր էր աշխարհէ։ Աստի Լեւոն թագաւորական աթոռը դրաւ 'ի Տարսոն, և սկսաւ զօրանալով տարածել իշխանութիւնը և տիրել շատ քաղաքներու մինչև 'ի ծով։ Այնպէս զի քիչ ժամանակի մէջ եօթանասունևերկու բերդ առաւ, ու շատ բերդեր ալ նորէն կանգնեց Կիլիկիայի շրջանակը։ Նորոգեց Սիս քաղաքն ու թագաւորութիւնը հոն փոխադրեց․ ուր շինեց եկեղեցիներ, դպրոցներ, և հիւանդանոցներ․ անպակաս կ'երթար լսելու քարոզը սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյն, մինչ զի եզական եղաւ աստուածպաշտութեամբ ալ, մեծանձնութ̅բ, խոհականութեամբ և քաջութեամբ։ Փրեդերիկոսի Ա․ կայսեր ձեռնտու և սիրելի եղաւ երբոր գնաց արևելք, ուր որ մեռաւ. անոր համար կայսերորդին ղրկեց Լեւոնին դրօշ առիւծանշան, որ առաջ էր արծուանշան. նաև նորա յանձնարարութ՟բ Կեղեստինոս պապն Հռոմայ ղրկեց Լեւոնի փառաւոր թագ արքայական: Լեւոն նոյն ժամանակը կանչեց եպիսկոպոսները և իշխաններն ու օծուեցաւ Գրիգոր կաթուղիկոսէն թագաւոր Հայոց 'ի 1198 Աստուածայայտնութեան օրը: Երբոր ամէն աշխարհ տարածեցաւ այս լուրը՝ Պաղտատու Ամիրապետն ալ պատուեց Լեւոնը ընծաներով. նոյնպէս կայսրն Յունաց ղրկեց իրեն ականակապ թագ: Լեւոն անկէց ետև աւելի զօրանալով սկսաւ թագաւորական բարեկարգութեամբ և օրէնքով ծաղկեցընել և զարդարել թագաւորութ՟իը, նաև պիտանի շինուածներով: Մեծամեծ յաղթութիւններ ալ ըրաւ ընդդէմ Այլազգեաց և Եգիպտոսի Սուլդանին: Ուստի և տէրութիւնը տարածեց մինչև 'ի չորրորդ Հայս. վերջապէս եկաւ վրան մահաբեր ցաւ մը, իշխաններուն յանձնեց որ իր տեղը թագաւորեցընեն Զապէլ մէկ հատիկ դուստրը տասնըվեց տարուան: Իսկ ինքն ամենայն հոգևոր պատրաստութեամբ և բարեպաշտութեամբ ընդունելով սուրբ եկեղեցւոյ խորհուրդները ջերմեռանդութեամբ աւանդեց հոգին 'ի 1219, երեսունըչորս տարի պայազատելէն վերջը, և թաղեցաւ փառօք 'ի Սիս մայրաքաղաք:

ԼԵՒՈՆ Գ. արքայ Հայոց՝ էր որդի Հեթում թագաւորին և թոռն մեծին Լեւոնի, որ հօրը թագաւորութեան ատեն պատերազմելով Սկիւթացւոց հետ՝ գերի բռնուեցաւ.

բայց հայրը ազատեց զինքը ծանր գնով, ու 'ի 1269 նստեցուց իր գահը, և ինքն կրօնաւորեցաւ։ Իսկ Լեւոն օծուեցաւ թագաւոր 'ի Տարսոն և հոն փոխադրեց աթոռը. և սկսաւ շատ տեղ վանքեր և պիտուական շէնքեր շինելու, ամէն հին գրեանքը նորէն օրինակել տուաւ ու վանքերը ղրկեց, որ աբեղաները կարդալով ուսումը ծաղկեցընեն։ Շատ ուսումնասէր էր և քաղցրաբարոյ, փառայի և աղքատասէր. բայց ապերախտ իշխանները նախանձելով արքային՝ միացան Այլազգեաց հետ, որով մեծապէս վնասեցաւ տէրութիւնը։ Սակայն Լեւոն զօրացեալ զօրք ժողվեց, քաջութեամբ պատերազմեցաւ ու հալածեց թշնամիները և խոհեմութեամբ խոնարհեցուց զամէնքը։ Մինչ զի իրեն իշխաններն ալ սիրով միացան արքային հետն, որ քանի տարի աստուածահաճոյ առաքինութեամբ թագաւորելէն ետև վախճանեցաւ բարի վարքով 'ի 1287. որուն յաջորդեց որդին Հեթում Բ։

ԼԵՒՈՆ Դ. էր եղբօրորդի Հեթում Բ. արքային, որ անզաւակ ըլլալով հրաժարեցաւ թագաւորութենէն ու օծել տուաւ այս Լեւոնը թագաւոր Հայոց 'ի Սիս 'ի 1305. և ինքն կոչեցաւ Թագաւորահայր նստելով վանքին մէջ։ Իսկ Լեւոն միշտ Հեթումին խորհրդովը կը շարժէր. բայց երբոր կամեցաւ ազգը միաբանելու ժողով գումարել տուաւ Սիս քաղաքն ու Հայոց ծէսը փոխել ուզեց Գրիգոր Անաւարզեցի կաթուղիկոսին կանոններովը, ուսկից մեծ խռովութ՟ի ելաւ ազգին մէջ, և մեծ ատելութիւն թագաւորին դէմ անմիաբան իշխաններէն. որոնց մատնութեամբը Թաթարներուն զօրավարը կեղծաւորութեամբ կանչեց Լեւոնը և Հեթումը խորհուրդ ընելու պատճառաւ, և անգթութեամբ սպաննեց արդարներն, ու վազեց որ տիրէ Կիլիկիոյ 'ի 1308 . իսկ Օշին Հեթումին եղբայրը երբոր այս սգալի լուրը լսեց՝ շուտով մը զօրքերը ժողվեց ու հասաւ թշնամւոյն վրա, քաջութեամբ հալածական ըրաւ աշխարհէն . և ինքն օծուեցաւ թագաւոր Հայոց : Ց . 'ի կարգին :

ԼԵՒՈՆ Ե . էր թագաւոր Հայոց, որդի Օշին արքային, որ հօրմէն ետև նստաւ թագաւոր տասուերկու տարուան . բայց հազարապետն ըլլալով Օշին Կայլ՝ փեսայացուց իրեն զԼեւոն ու կոչեցաւ թագաւորահայր . յետոյ թըշնամացաւ հետը, նոյնպէս Լատիններուն ալ խռովեցան . մինչ զի Եգիպտացւոց սուլդանն լսելով անոնց թշնամութիւնը, վազեց եկաւ քանի մը անգամ Լեւոնին երկիրն ապականեց : Իսկ արքայն Լատիններէն օգնութիւն ուզեց . երբոր անոնցմէ ալ շահ մը չեղաւ, Լեւոն տըրտմութեամբ վճարեց կեանքը 'ի 1342 . որ թագաւորեց քսանըմէկ տարի անյաջողութեամբ :

ԼԵՒՈՆ Զ . Լուսինեան էր վերջին թագաւոր Հայոց 'ի Կիլիկիա, մայրենեօք Հայ, և հայրենեօք Լատին : Երբոր իշխաններուն անմիաբանութեամբն աթոռը պարապ մնաց, ու երկիրը ոտնակոխ եղաւ թշնամիներէն՝ սրբազան պապին յորդորանքովը զայս Լեւոն Զ . օծեցին թագաւոր Հայոց 'ի 1365, որ առաւ կին զՄարիամ ազգական Լուդովիկոսի արքային Կաղղիոյ : Եգիպտացիք լսելով թէ Հայք Լատին թագաւոր դրին իրենց, նորէն յարձակեցան 'ի Կիլիկիա և չարաչար կողոպտեցին՝ թէպէտ Լեւոն քաջութեամբ պատերազմեցաւ, բայց վիրաւորեալ փախաւ լեռներուն մէջ պահուեցաւ, մինչ զի կարծեցին թէ մեռած է ։ Լեւոն յետոյ երեւան ելաւ ու Եւրոպացոցմէ օգնութիւն խնդրեց. բայց նոքա մինչև որ շարժեցան՝ Եգիպտոսի սուլտանը անհամար զօրքով զարկաւ, տիրեց Կիլիկիոյ ու աւրեց աշխարհը ։ Իսկ թագաւորը յուսահատեալ փախաւ Կապանու բերդը, ինը ամիս պաշարուեցաւ. ապա երբ ուտելիքը հատաւ, անձնատուր եղաւ Եգիպտացւոց երդումով որ զինքը չսպաննեն 'ի 1375, զոր շղթայակապ տարին յԵգիպտոս բանտը դրին ։ Սուլտանն առաջարկեց՝ որ ուրանայ հաւատքն ու ազատի բանտէն. երբոր յանձն չառաւ Լեւոն՝ ինը տարի մնաց բանտարկեալ խեղճութեամբ ։

Ապա գրեց Լեւոն առ պապն և առ Յովհաննէս արքայն Սպանիայի, որ միջնորդ եղաւ ընծաներով ազատեց Լեւոնը բանտէն 'ի 1382, որ և նախ գնաց ընտանեօքն յԵրուսաղէմ 'ի շնորհակալութիւն Աստուծոյ. անկէց գնաց 'ի Հռոմ, մեծապէս պատուեցաւ Ուրբանոսէ Զ. պապէն ։ Անկէց ալ գնաց 'ի Սպանիա թագաւորին շնորհակալ եղաւ, որ տուաւ իրեն երկիր բնակութեան և ապրուստ. ուսկից ելաւ գնաց Փարիզ, և տասնըհինգ տարի ջանաց օգնութիւն գտնելու խեղճ թագաւորութիւնը կանգնելու համար, հիւընդցաւ ու մեռաւ վաթսուն տարուան 'ի 1393, և թաղեցաւ Կեղեստինեանց Վանքին եկեղեցւոյ մէջ. որուն վրայ կանգնեցին փառաւոր շիրիմ և իր արձանը պսակով, ձեռքն ալ թագաւորական գաւազան՝ սև մարմարիոն տապանաքարի վրայ ընկած այսպիսի արձանագրով. “Աստ անկեալ դնի Լևոն Թագաւորն Հայոց. աղօթեցէք վասն նորա„: Ահա այս Լևոն եղաւ վերջին թագաւոր Կիլիկեցւոց և բոլոր Հայոց ազգին, որոնց միայն անուննին մնաց քանի մը արծաթ և ոսկի դրամներու վրան:

Այս ողորմ վիճակ Հայազն արքայից
Զօրութեամբ բազկի յաղթողք յոլովից.
Միաբանութեամբ ելին լեռնացան
Օցտեալ յիրերաց անկան դաշտացան:
Ո՞վ արկ ընդ ոտիւք ըզդիւցազնական
Ահարկուն ազանց առիւծանըշան.
Ո՛հ կիրք նախանձու անմիաբանից
Կործանեաց և զազգ և նըշան վեհից:

ԼԻԲԵՐԻՈՍ Հռոմայեցի ընտրեցաւ քահանայապետ Հռոմայ ՚ի 352, և ակամայ յանձն առաւ նստիլ աթոռը, վասն զի Արիանոսք Կոստանդ կայսեր ձեռքով մեծ խռովութիւն հանելով հալածեր էին սուրբ Աթանասը և սուրբերը: Լիբերիոս քաջութեամբ գլխաւոր եղաւ հերձուածողաց պաշտպան կենալով ուղղափառաց. այս պատճառաւ կայսրը աքսորեց զինքն ու տեղը դրաւ Փելիքս սարկաւագը: Հայրապետը վախնալով թէ եկեղեցւոյ մեծ վնաս մը չըլլայ, կայսեր կողմը բռնել երևցաւ, և այսպէս երկու տարիէն ետև ազատելով դարձաւ յաթոռը: Ուր առաւել զօրանալով ելաւ ախոյեան ընդդէմ հերետիկոսաց քաջութ̄բ, և նզովելով Արիանոսաց վճիռն ջատագով եղաւ սուրբ Աթանասին: Ուստի կայսրը նորէն աքսորեց զԼիբերիոս, որ սքանչելի համբերութեամբ և ճգնութեամբ անցուց կեանքը *մինչև մեռաւ 'ի 367, որուն մեծ գովեստ տուին սուրբն Բարսեղ, Ամբրոսիոս, Եպիփան, և այլք անուանելով “Փառաւոր նահատակ ճշմարտութեան և ամենաժառանգ բիւր գովեստից„:*

ԼԻԳՈՒՐԳՈՍ էր մեծահամբաւ օրէնսդիր Սպարտացւոց կամ Լակեդեմոնացւոց և արքայորդի, որ ուսմանց հետևելով շրջեցաւ 'ի Յոնաստան, յԱփրիկէ և 'ի Հնդիկս, և անոնց իմաստուններէն տեղեկութիւն առնելով սորվեցաւ օրէնքները և սովորութիւնները: Յետոյ դարձաւ հայրենիքը, և ջանաց որ ազգը քաղաքավարութեամբ կրթէ նոր օրէնքով, և հանէ բարբարոսութենէ. ուստի առաւ երկու շան լակոտ մէկ մօրէ և մէկտեղ ծնած, մէկը մեծցուց դուրսը որսերու մէջ, մէկալը տանը մէջ. երբոր մեծցան՝ հանեց հրապարակն, ուր դրաւ լաւ ուտելիք, ու ձգեց նապաստակ մը հոն. նայիս ընտանի շունը վազեց լաւ կերակուրին, իսկ վայրենին վազեց նապաստակին ետևէն. անոնց վրայ Լիգուրգոս սկսաւ խրատել ժողովուրդը. “Կը տեսնէք այս շները, մէկ մօրէ ծնած են և միատեսակ, միայն սննդեան և կրթութե՟ պատճառաւ ինչպէս աննման բարք ունին„: Եւ այսպէս մտքերնին մտուց թէ որչափ հարկաւոր է մարդուս կրթուիլ օրէնքներով և բարի սովորութեամբ վարժութիւնը: Ուստի սկսաւ հարկաւոր օրէնքներ դնել թէ թագաւորութեան համար, և թէ դատաստանական և քաղաքական կառավարութեան, թէ զինուորութեան, և թէ լաւ կենակցութեան համար: Օրինադրեց որ մանչ աղջիկ մանկութենէ աշխատասէր ըլլան, փափուկ չի սորվին, ղալդարանք չունենան, այլ պարզ վարքով կտրիճութիւն սորվին միշտ աշխատելով ։ Արգիլեց ոսկին գործածութիւնը . միայն փոխնորդով և երկըթէ դրամով առուտուր ընել տալու առանց արծաթսիրութեան և ատելութեան, որ ջանան ապրելու աղքատութեամբ, ժուժկալութեամբ և չարքաշութեամբ աննախանձ և անտրտունջ վասն սիրոյ հասարակութեան, որուն համար բան մը չի խնայեն, և ամէն քաղաքացի հաւասար ըլլայ, և ամէն ունեցածնին հասարակաց ըլլայ ։ Վերջապէս այս օրէնքները անխախտ մնալու համար՝ երդումով ժողովուրդէն խօսք առաւ որ երթայ Կրիտ, և մինչև որ անկէց չի դառնայ բան մը չփոխեն . ուր գնաց մնաց մինչև մեռաւ, և պատուիրեց որ մարմինը ծովը նետեն . որպէս զի Սպարտացիք չիմանան մահն ու չփոխեն օրէնքները ։

ԼԻՆՈՍ սուրբ քահանայապետ Հռոմայ էր աշակերտ Պետրոսի առաքելապետին, և անմիջապէս յաջորդեց յետ կատարման նորա յամի 69 ։ Ինչպէս որ Պօղոս առաքեալ կը յիշէ Կղոդեայ հետ, որ կը համարի Լինոսի հայրը ։ Արդ այս հայրապետ առաջ օգնական ըլլալով սրբոյն Պետրոսի՝ ապա երբոր ընտրեցաւ քահանայապետ մեծանուն եղաւ դառն հալածման ատենը, քարոզելով և զօրացընելով հաւատացեալները . տասներկու տարի իմաստութեամբ կառավարեց եկեղեցին Աստուծոյ . և ձեռնադրեց տասնըհինգ եպիսկոպոս, և տասնըութ վարդապետ, ու ղրկեց զանազան գաւառներ քարոզութեան և հոգաբարձութեան համար ։ Երբոր այսպէս կը փայլէր վարդապետութեամբ և հրաշագործութեամբ բժշկելով Սատուրնինոսին դուստրը գիւտահարութենէ՝ նախանձելով կռապաշտները նահատակեցին սուրբ հայրապետը յամի Տեառն 80 ։

Լուգդունի Ա. ընդհանուր ժողով հարիւրքառասուն հայրապետաց գումարեցաւ 'ի Լիոն քաղաքը Գաղղիացւոց յամի 1245 Իննովկենտիոսի Դ. պապէն վասն բարեկարգութեան, և ազատութեան Երուսաղէմի, և վասն միաբանութեան Յունաց և Լատինացւոց ։ Ուր հաստատեցաւ Խաչակրաց կարգն ու պատերազմը, որ յանձնուեցաւ սուրբ Լուդովիկոսի արքային ։

Լուգդունի Բ. ընդհանուր ժողովն եօթըհարիւր հայրապետաց գումարեցաւ 'ի 1274 Գրիգոր Ժ. պապէն վասն հաստատութեան առջի ժողովին կանոններուն, և վասն միաբանութեան Յոյն և Լատին եկեղեցիներուն, և վասն ազատութեան սուրբ երկրին ։ Ուր միաբանեցան Յոյնք Հռոմայի եկեղեցւոյն հետ եկեղեցականներով, պատրիարգով և թագաւորով հանդերձ երդմամբ, մայր և գլուխ ճանչնալով Հռոմայ աթոռը ամէն աթոռներուն ։

Լուդովիկոս Թ. սուրբ թագաւորն Գաղղիացւոց, էր լի առաքինութեամբ և բարեսնունդ 'ի մանկութենէ, քաջ կրթուած և զօրաւոր պատերազմող ։ Իր մեծամեծ գործքերով շատ բարելաւութեան պատճառ եղաւ արևմտեան կողմն . յետոյ գնաց Երուսաղէմ ազատելու համար, ուսկից վռնտեց Այլազգիները քաջագործութեամբ ։ Այս ձախորդութեամբ ժանտամահ ընկաւ զօրքին մէջ ու յաղթուելով բռնուեցաւ, և դաշնադրութբ̃ ազատեցաւ ։ Հինգ տարի կենալով արևելեան կողմը շատ անհաւատներ լուսաւորեց, և շատ քրիստոնեաներ ազատեց գերութենէ ։ Յետոյ երբոր լսեց մօրը մահը՝ դարձաւ 'ի Գաղղիա, և առանձին թագաւորելով շատ բարեկարգութիւն և բարեգործութիւն ըրաւ․ շինեց վանքեր, եկեղեցիներ, աղքատանոցներ և հիւանդանոցներ ու ինքը կը ծառայէր հիւանդներուն ։ Աստի փառաւորեցաւ ամենայն յաջողութեամբ և զաւակներով ։ Սորա վեցերորդ որդւոյն Պուռպոնին ցեղէն են Պուռպոնեան թագաւորները ։ Բայց ինքը միշտ մարմինը կը տանջէր խոշոր հագուստով, պահօք և ճգնութեամբ ։ Երբոր նորէն ելաւ գնաց Երուսաղէմ ազատելու համար, վախճանեցաւ ժանտամահէն 'ի 1270ին յիսունըհինգ տարւան ։ Իսկ մարմինը տարին Փարիզ փառաւորապէս հանգուցին սուրբ Դիոնեսիոսի տաճարին մէջ, ուր պայծառացաւ հրաշքներով և դասեցաւ սուրբերուն կարգը ։

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ անուամբ ութևտասն թագաւորք եղան 'ի Գաղղիա, ոմանք սրբակաց և բարեպաշտ մականուանեցան, ոմանք ալ մեծանուն և արևմտեան կայսր կոչեցան․ ինչպէս էր Լուդովիկոս Ա․ որդին մեծի Կարոլոսին, որ 'ի 814 յաջորդեց հօրը երեսունըվեց տարւան ։ Բայց բարեմիտ և կրօնասէր ըլլալով շատ հալածանք քաշեց որդիքներէն և ապստամբներուն ձեռքէն․ որոնց թէպէտ յաղթեց համբերութեամբ և ներողամտութեամբ, սակայն սրտին նեղութենէն ցաւով վախճանեցաւ վաթսունևերկու տարեան 'ի 840 ։ Աւելի բարեգործութեանցը և լաւութեանցը համար Պիոս մականուն տուին իրեն, այսինքն Բարեպաշտ ։

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ Բ. Մականուանեալ Կրսեր, 'ի 844 պսակեցաւ թագաւոր Իտալիոյ, և 'ի 855 եղաւ կայսր արևմտեան ։ Որ քաջութ՟բ հալածեց զԱյլազգիներն Իտալիայէն, ու մեծապէս գովեցաւ ամենէն մինչև բարի անուամբ մեռաւ 'ի 875 ։

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ Գ. Դ. էին կայսերք Գերմանիոյ, որոնք մեծամեծ քաջագործութեամբ յաղթելով թշնամեայն անխնա պահեցին իրենց տէրութիւնը անհաւատներէն ու քրիստոնէութիւնը ծաղկեցուցին ։

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԴ. մեծահռչակ թագաւոր Գաղղիոյ՝ էր որդի Լուդովիկոսի ԺԳ. կոչեցեալ Մեծ, որ հինգ տարեան յաջորդեց հօրը 'ի 1643 . և 'ի 1651 առաւ ձեռքը իշխանութիւնը սկսաւ գեղեցիկ կառավարել և ամէն բան անանկ կարգաւորեց, որ տէրութիւնը փոխուեցաւ, ծաղկեցուց վաճառականութիւնը, նաւարկութիւնը, և զինուորութիւնը ։ Արթուն էր ամէն գործքի մէջ . գիտուններու խնամակալ ըլլալով պայծառացուց ուսումն և պիտուական արուեստները ։ Եւ այսպէս շատ տեղ յաղթութիւններ ալ ընելով ընդարձակեց թագաւորութիւնը, կազմեց մեծ նաւահանդէս խոշոր նաւերով ու խոնարհեցուց Ճեզայիրները, Թունուզները և ուրիշ տէրութիւնները ։ Այս մեծազօր թագաւորը ոչ միայն էր յաղթական այլև կրօնասէր և առաքինի, մինչ զի բոլոր Կալվինականները Գաղղիայէն աքսորեց, և յաճախեց դպրոցները, գիտնականները և եկեղեցական կարգերը, հիւանդանոցները, և այլն։ Ապա յետ ամենայն բարեկարգութեց մեռաւ եօթանասուներեօթը տարուան, որ մահուան ատենն ալ քաջութիւնը յայտնեց, երբոր կուլային, ըսաւ․ ՙՙԻնչու համար կուլաք, ինչու չի մտածեցիք թէ որ մի ձեզմէ պիտի բաժնուիմ․ կարծէիք թէ այս աշխարհիս մէջ անմահ պիտի մնամ„։

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԶ․ Թագաւոր Գաղղիոյ՝ էր թոռն Լուդովիկոսի ԺԵ․ որ սնեալ բարեպաշտութեամբ եղաւ առաքինի, և սիրելի ամենուն։ Ապա 'ի 1770 ամուսնացաւ Մարիամու Անթուանէթին հետ՝ դստերն Մարիայ Թերեզիայ կայսրուհւոյն և 'ի 1774 նստաւ Թագաւոր պապը մեռնելէն ետև։ Երբոր սկսաւ բարեկարգել տէրութիւնը և հասարակաց գանձատունը համար տուրքեր դնելու երկիրներու վրայ՝ ազատ իշխանները անկրօններուն հետ միացած ոխացան Թագաւորին դէմ, և կեղծաւորութեամբ ուզեցին ազգային ժողով գումարելու 'ի 1789։ Որովհետև այս ժողովքին գլխաւորներն էին անհաւատ մարդիկ, վճիռներն ալ եղաւ անկրօն ազատութեան համար, չէ թէ ժողովուրդին շահուն համար և բարի վախճանաւ։ Ուստի սկսան բոլոր ժողովուրդին սիրտը պաղեցընելու կրօնին և Թագաւորին դէմ։ Իսկ Թագաւորը որչափ որ քաղցրութեամբ և ներողամտութեամբ կը ջանար շահել անօրէնները՝ անոնք այնչափ աւելի կատղեցան ու սուտ ամբաստանութիւններով Թագաւորը և Թագուհին երեսէ ձգեցին . մինչև յայտնի ապստամբեցան չարութեամբ ։ Թագաւորը տեսնելով անոնց կատաղութիւնը ուզեց որ փախչի ընտանեօքն 'ի 1791 . բայց պահապաններն ճամբէն ետ դարձուցին . իսկ անհաւատներն սոսկալի չարութեամբ 'ի 1792 նոր ժողովով Թագաւորը ձգեցին իշխանութենէն ու ռամկապետութիւն հաստատեցին ։ Ուր Թագաւորը իբր բանտարկեալ որչափ որ փաստաբաններով սուտ հանեց անոնց ամբաստանութիւնները յայտնի պատճառներով , ամենեւին մտիկ չըրին անօրէնները . այլ իրենց չար կամքը առաջ տանելու համար վիճակ ալ ձգեցին Թագաւորին մահուանը վրան ու հինգ Թիւ աւելի հանեցին . և այսպէս անմեղ Թագաւորը դատապարտեցին 'ի մահ 'ի 1793 ։ Փոխարքայն տարաւ իրեն խոստովանահայրը . երբոր տեսաւ՝ խնդութեամբ ասաց արքայն . “ Ալ չեմ վախնար մահուանէ . ապահով է սիրտս յողորմութիւնն Աստուծոյ „ ։ Անկեց ետև միշտ աղօթքի և հոգևոր պատրաստութեան հետ էր և 'ի 20 յունուարի կատարեց բարեպաշտութ՟բ խոստովանանքն , ու առաւօտուն պատարագը տեսաւ և ջերմեռանդութեամբ հաղորդուեցաւ հին սուրբ վկաներուն պէս ։ Յետոյ տուաւ իր գրած կտակը , որով կը դաւանէր սուրբ հաւատքը և Թողութիւն կուտար Թշնամիներուն ամենայն աստուածպաշտութեամբ և գիւցազնեայ առաքինութեամբ ։ Այս խոստովանահօրը հետ մէկտեղ ելաւ գլխատման տեղը , և հոն ըսաց խոստովանահայրը իրեն . “ Զաւա՛կդ սրբոյն Լուդովիկոսի վերացիր յերկինս „ ։ Երբոր ծունկ չոքեցուցին արդարն՝ ասաց . “ Ո՛վ Գաղղիացիք՝ կը մեռնիմ առանց գլխնալու յանցանքս , հիմա պիտի Քրիստոսի ատեանն ելլեմ․ կը ներեմ թշնամեացս , և կը փափաքիմ որ իմ մահս օգուտ ըլլայ ժողովըրդեան ․․․․․ Մէկէն դահիճը գլխատեց ։ Շատ երկիւղած մարդիկ լաթերն թաթղեցին երանելւոյն արեանը , և իրեն լաթին կտորներն ալ ատին նշխարքի պէս պահեցին ։ Վասն զի եղաւ աստուածասէր սուրբ թագաւորներուն նման թէ՛ սրբութեամբ և թէ՛ իմաստութեամբ․ լեզուագէտ էր , ընթերցասէր և խնամակալ իմաստնոց և կարօտելոց ։ Մի միայն պակասութիւն երջանիկ թագաւորիս էր խիստ աւելի բարեսիրտ և բարեմիտ ըլլալը․ նաև գթած և ներող յանցաւորաց․ թէ որ ժամանակով այն դաւաճան թշնամիները և անկրօն օձերը սատկեցնէր , ապստամբները կ՚ոչնչանային , ու ինքն ալ կ՚ազատէր այն անպարտական մահուանէն ։

Ձեզ ինքնակալաց դահիճք դժնդակ
 Ան իւրեանց անսանձ դժնեայ հըպատակք ,
 Գիշատիչք Վեհից գազանաց նըման
 Լեալ մարդախոշոշ անկրօնք անիշխան ։
Օ՛ այս աղէտ ողբոց առթեաց Գաղղիայն
 Աղծեալ ըզհաւատս և բարոյական․
 Արբեամ օրէնսդիր փոյր այլոց ազգաց
 Յայնժամ դորովեալ հանուրց աշխարհաց ։

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԷ․ էր բարեսնունդ որդի բարեյիշատակ Լուդովիկոսի ԺԶ․ որ մանկական հասակին մէջ կ՚երևնար տաղանդաւոր և շնորհալի ։ Մինչ զի հայրը գլխատուելէն ետև սա եղաւ յոյս մխիթարութեան բարեպաշտ Գաղղիացւոց․ և այս յուսով անուանեցին ընտիր մանուկը Լուդովիկոս ԺԷ․ թագաւոր ։

Իսկ անկրօն գազանները անգթութեամբ թունաւորեցին արդար արքայորդին, որուն վրայ աշխարհք լացաւ. և երբոր տեսաւ բժիշկը՝ լալագին կանչեց թէ «Թոյն տուեր են մանկանս»։ Այս խօսքիս համար բժիշկն ալ ծածուկ կորուսին անօրէնները։ Անկէց ետև այն անկրօն ապստամբները ամէն տեղ տարածեցին իրենց չարութիւնը և անհաւատութիւնը. բոլոր Եւրոպա տակն ու վրայ ըրին, կորուսին ամէն լաւութիւնը, խաւարեցին լոյս գիտութեան և եղան վայրենի գազան, ու սկսան մէկզմէկ ջարդել։ Մինչև ապա ՙՆափոլէոն Պօնափարթէն ՚ի 1800 զօրանալով կորուս ամէն չարերն, և կարգաւորելով տէրութիւնը հաստատեց կրօնը ուղղափառութեան. որով արժանի եղաւ կոչուելու թագաւոր և կայսր Գաղղիոյ։ Տ. ՙՆափոլէոն։

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԸ. էր հարազատ եղբայր Լուդովիկոսի ԺԶ. բարեպաշտ և խոհեմ. որ ՚ի 1815 Պօնափարթէն աքսորուելէն ետև Գաղղիացիք հրաւիրեցին Անգղիայէն. եկաւ նստաւ իրեն հայրենական գահը։ Ապա երբոր Պօնափարթէն նորէն մտաւ Գաղղիա, Լուդովիկոս քաշուեցաւ Ֆիանտրա նստաւ. բայց դաշնադիր թագաւորները ձգեցին Պօնափարթէն, ու նստեցուցին աթոռը Լուդովիկոս ԺԸ։ Իր բարի նախանձով փութայաւ նորոգելու ամէն խանգարեալ բարեկարգութիւնները, ուսումնականութիւնը և աստուածպաշտութիւնը։ Ետ դարձուց հալածեալ իմաստուն վարդապետներն, եպիսկոպոսներն, և վարպետներն, ու ամենուն ապրուստ կապեց. մինչ զի հեռու աշխարհքներ եղած ծեր գիտուն վարժապետներուն թոշակն ալ կը ղրկեր ամէն տարի ։ Ինանկ որ Գաղղիայն քիչ ժամանակի մէջ կերպարանափոխ ըլլալով աւելի բարելաւութիւնը գտաւ, և ծաղկեցաւ տէրութիւնը մինչև 'ի մահ Թագաւորիս, որ հանդիպեցաւ խաղաղութեամբ 'ի 1824 ։ Եւ որովհետև անորդի էր յաջորդեց իրեն եղբայրը Կարոլոս ժ․ Տ․ Կարոլոս ժ ։

ԼՈՒԿԻԱ կամ ԼՈՒՉԻԱ, այսինքն Լուսաւոր, էր Սիրակուսացի փառաւոր կոյս վկայուհի, և դուստր հեթանոսաց՝ Դիոկղետիանոսի հալածանքին ժամանակը ։ Սր նահատակներուն հրաշքները լսելով հաւատաց Քրիստոսի, ու կը բաղձար նմանելու սրբութեամբ Ագաթայ կուսին, որ նոյն կղզիին մէջ նահատակուեր էր, ու գերեզմանը հրաշագործ ուխտատեղի էր ։ Լուկիա իր ցաւագար մայրը ուխտի տարաւ նոյն գերեզմանին սուրբին տօնին օրը և կ'աղօթէր որ մօրը բժշկութիւն ընէ ․ Ագաթա երևցաւ իրեն քունին մէջ երկու հրեշտակով և ըսաւ ․ ‶Քոյր իմ Լուկիա ինչու համար ինծմէ կը խնդրես այն բանն որ դուն ալ պիտի ընես այլոց,, ։ Երբոր արթնցաւ տեսաւ որ մայրը առողջացեր է, հաստատեցան հաւատքով երկուքն ալ, մկրտեցան ու ամէն բաներնին բաշխեցին աղքատներուն ։ Բայց ծնողքը նշաներ էին զԼուկիա հեթանոս մարդու մը, որ երբ իմացաւ անոր քրիստոնէութիւնը և չի կրնալով դարձընելու, մատնեց իշխանին ձեռքը, որ շատ փորձեց, և տեսաւ որ հաստատ է 'ի սէրն Քրիստոսի, հրամայեց որ բռնի տանին 'ի պոռնկանոցը ։ Իսկ սուրբ կոյսն պալատին քարէ սիւնը բռնեց կեցաւ ․ և հոդին սուրբ անանկ անշարժ պահեց հոն, որ զօրականներով և չուաններով քաշեցին ու չի կրցան անկեց փրցընելու ։ Յետոյ հրաման ըրաւ բռնաւորն որ կրակ վառեն չորս դին ու ողջ ողջ այրեն կոյսը · այլ տեսաւ որ կրակով ալ չայրեցաւ, հրամայեց որ գլխատեն զերանուհին · նա քաջութեամբ դնաց սուրին տակը դրաւ գլուխը, և այնպէս նահատակեցաւ ուրախութեամբ · իսկ մայրը փառաւորապէս թաղեց սուրբ կոյսը և եղաւ տօնելի ։ Սրուն վրա իր անուամբը վանք և տաճար շինեցին և նոյն սիւնը այն տաճարին մէջն է, ուխտատեղի հաւատացելոց ։

ԼՈՒԿԻՈՍ Պապ ։ Տ․ Պ ԼՈՒԿԻՈՍ ։

ԼՈՒԹԵՐ ՄԱՐՏԻՆՈՍ աղանդապետ էր Սաքսոնիայի 'ի ԺԶ դարուն, որ ուսմամբ յառաջանալով քսան տարուան վարժապետ եղաւ 'ի Գերմանիա · և քսանըմէկ տարուան Օգոստինեան կարգը մտաւ ու աբեղայ ձեռնադրեցաւ ։ Յետոյ քարոզիչ ըլլալով Վիթթեմպէրկ Սաքսոնիայի քաղաքը անուանի եղաւ ։ Սակայն Յովհաննու Հուս հերետիկոսին գիրքը շատ կարդալով մոլորեցաւ եկեղեցական արարողութեանց և աստուածաբանութեան վրա, մինչ զի 'ի 1516 սկսաւ մոլորութիւններն յայտնել · և 'ի 1517 աւելի կատղեցաւ Լեոնի Ժ · սրբազան պապին դէմ, որ ներողութիւն հրատարակեց և ողորմութիւն ժողվել տուաւ Խաչակիր զօրաց համար Դոմինիկեանց ձեռքովը · Լութեր կ'ուզէր որ ինքն հրատարակէ 'ի Գերմանիա զայս ներողութեան օրհնութիւնը · երբոր իրեն չի յանձնեց քահանայապետը՝ Յուդայի պէս սկսաւ սրտին թոյները դուրս թափել: Նախ պապական իշխանութեան դէմ գրեց անուանելով սրբազանը Նեռն. ուրացաւ ներողութեան զօրութիւնը, քաւարանը և եկեղեցւոյ սուրբ խորհուրդները, նաև նոյն իսկ եկեղեցին. և լրբութեամբ կը քարոզէր թէ միայն հաւատքով կ'արդարանանք, բարեգործութիւնը հարկաւոր չէ. Ադամայ մեղքը կ'ըսէր վերուց անձնիշխանութիւնը. և հաղորդութիւնն կը դնէր լոկ հաց: Դարձեալ ուրացաւ շնորհքն ու քաւութիւն մեղաց. և այլ կերպ կերպ ծուռ վարդապետութիւններ գրեց և քարոզեց հաւատքի և բարոյականի դէմ: Ուստի արժանապէս դատապարտեցաւ նզովքով թէ ինքն և թէ պիղծ գրուածքը Տրիդենտեան ընդհանուր ժողովքին մէջ յամին 1549:

Ո՛դժոխածին Լուտեր դիւաշունչ
Եւ մայրախոշոշ վիշապ մահաշունչ.
Հրաւէր թիւնաբեր որդւոց սինի
Յորովայն դժոխոց մահու անմահի,
Դաժնեայ ապիրատ կարապետ Նեռին
Ծծեր զանթիւ ծնունդ սուրբ աւազանին
Ընդ քեզ 'ի ծոց հօր քո բելիարայ
Արդ երթ վայելեա՛ զկտտանս յարաժամայ:

Խ.

ԽԱԴ էր սարկաւագ սրբոյն ՝Ներսէսի Մեծին, որ զինքը դրեր էր վերակացու հիւանդանոցներուն և աղքատանոցներուն։ Այս երանելիս խիստ ողորմած և բարեգութ ըլլալով անանկ առատութեամբ կը խնամէր տնանկներն որ եղած ապրուստը հատաւ. իսկ սուրբը երբոր խնդրեց ՚ի Տեառնէ հաւատքով, ամբարանոցները լեցուեցան բարիքով, և ոչ երբէք պակսեցաւ բան մը. նա որչափ առատ կը բաշխէր, այնչափ բարին կը շատնար։ Յետոյ սուրբն ՝Ներսէս ձեռնադրեց զինքն եպիսկոպոս Բագրեւանդայ. և երբոր սուրբ հայրապետը գնաց ՚ի Կոստանդնուպոլիս՝ Խադ իբրև տեղապահ կը կառավարէր ժողովուրդը ամենայն բարեկարգութեամբ։ Ոչ միայն էր ճգնազգեաց, այլ և անաչառ կշտամբող անկարգութեանց և անիրաւաց մեծի և պզտիկի. միշտ կը ջանար շահել զամէնքը բարի օրինակով, առաքինութեամբ և շինութեամբ։ Ապա երբոր յանդիմանեց զԱրշակ թագաւորը Հայոց՝ որ անիրաւութեամբ սպաններ էր Կամսարականները, հրամայեց Արշակ որ քարկոծեն զսուրբ հայրապետը։ Բայց ազգականներն առին թագաւորին ձեռքէն ու տարին իրենց գաւառն Ապահունեաց, ուր հանգեաւ խաղաղութեամբ ՚ի

Տէր․ որուն մեծամեծ գովեստներ կուտայ Խորենացին, և եկեղեցին կը տօնէ։

ԽԱՆԹՈՒՂ։ Տ․ Աթանաս եպիսկոպոս։

ԽԱՉԱՏՈՒՐ նոր վկայն Տիգրանակերտցի էր պատանի քսան տարուան՝ աղօթասէր և ջերմեռանդն․ որ սրբոց վարքերը լսելով կը փափաքէր մարտիրոսութեան, մինչ զի տեսիլք եղաւ իրեն նահատակութիւնը։ Ապա օր մը դուրս ելած ատենը ասաց թէ "Տէր կը կոչէ զիս, կարծեմ թէ տուն պիտի չի դառնամ"։ Ուստի նոյն օրը երբոր այլազգ մը կը հայհոյէր զինքը, նա ալ պախարակեց անոնց սուտ կրօնը։ Ան ատեն անհաւատները վրան թափեցան, ու քաշեցին տարին դատաւորին․ որ իրեն խրատ կուտար որ ուրանայ հաւատքն ու ազատի։ Իսկ սուրբը պատասխան տուաւ թէ բոլոր մարմինս քերթէք, ես Ճշմարիտ հաւատքս չեմ դառնար․ ուր որչափ խոստմունքներ և սպառնալիքներ որ ըրին չի կրցան յաղթելու, մինչև մահուան վճիռն ելաւ։ Ուստի դահիճները քերթեցին մորթը մինչև կուրծքը, խորտակեցին ոսկորներն ու կիսամեռ ձգեցին գետինը մինչև իրիկուն։ Քահանաները տեսնելով սուրբ վկային փափաքը՝ հասուցին իրեն ծածկապէս սուրբ հաղորդութիւնը․ որ առաւ գոհանալով, և ուրախութեամբ աւանդեց հոգին կէս գիշերուն։ Որուն վրա իջաւ լոյս պայծառ․ ապա հրամանաւ դատաւորին վերուցին միաբան ամէն քրիստոնեայք թաղեցին փառաւորապէս 'ի 1652 և 'ի 20․ օգոստ։

ԽԱՉԻԿ կամ **ԽԱՉԱՏՈՒՐ** վարդապետ հոգետես՝ էր սուրբ Թարգմանչաց աշկերտներէն, որ նման առաքելոց շրջելով կը քարոզէր զբանն Աստուծոյ բոլոր կենացը մէջ աստուածային սքանչելեօք ։ Յայտնութեան տօնին օրը Ակոռի աւանը գտնուելով գիշերը տեսիլք եղաւ իրեն՝ որ բազմութիւնն ննջեցելոց կենդանացեր էին ու ժողոված մեծ ուրախութիւն ունէին ։ Բայց տեսաւ որ Ղազար Ակոռեցին դուրսը կեցեր էր տրտում ․ Հարցուց պատճառն իմացաւ , որ ուրիշները աղօթքով և ողորմութեամբ հասեր էին երանութեան ․ իսկ Ղազարին զաւակները անհոգ թողուցեր էին առանց ողորմութեան և անյիշատակ անոր հոգին որ իրենց շատ բան թողուցեր էր ։ Խաչիկ առաւօտուն մեռելոցին օրը քարոզին մէջ պատմեց տեսիլքն ու յորդորեց որ յիշեն մեռելները ողորմութեամբ և պատարագով ։ Դաւիթ Ղազարու որդին երբոր լսեց , զղջանալով անհոգութեանը վրա , մէկէն նոյն օրն ըրաւ մեծ հոգուհաց քահանաներուն և ժողովրդոց հօրը հոգուն համար ողորմութեամբ և պատարագով ։ Ուստի Խաչիկ վարդապետ նորէն տեսաւ նոյն տեսիլքը հոգևոր ուրախութեան , և Ղազար սուրբերուն մէջը նստած կը փառաւորէր զԱրարիչը ։ Իսկ ինքն սուրբ և առաքինի վարքով փոխեցաւ առ Քրիստոս 'ի Ե դարուն ։

Աստուածատուր վըճիռ տիրական
Լինել ցնծութեամբ արդարոց վախճան՝
Իսկ յուղղութենէ խուն ինչ վրիպելոց
Նախ անդէն քաւիլ ապա երկնից ծոց ։
Պարտք են իսկապէս աստուածասիրաց
Յիշել մաղթանօք զհոգիս ընկերաց ․
Յար օգնել նոցին հայցմամբ և գթովք
Օգտիլ 'ի նոցունց անդրադարձ շնորհօք ։

ԽԱՐԱԼԱՄՊՈՍ քահանայն էր Մագնեսացի, որ հեթանոսաց հալածանքին ժամանակը համարձակ քարոզելուն համար զբանն Ճշմարտութեան՝ Լուկիոս դատաւորը բռնեց տանջելով մորթը քերթեց: Եւ երբոր տեսաւ քաջ նահատակին վառեալ սէրը ՚ի Քրիստոս, կատղելով կ'ուզէր ձեռքովը կտրտել սուրբը. բայց մէկէն ցօսացան ձեռքերը. իսկ երանելին աղօթքով առողջացոյց: Զայն որ տեսան երկու դահիճները հաւատացին Քրիստոսի. նոյնպէս և իրեք կանայք հոն տեսնելով սքանչելիքը վկայեցին Ճշմարտութեան: Աստի առաւել չարանալով անիրաւ դատաւորը հրամայեց որ ամէնը մէկտեղ գլխատեն, որոնք ուրախութեամբ նահատակեցան. և սուրբն Խարալամպոս կարգեցաւ պաշտպան ժանտամահէ բռնուածներուն շատ հրաշագործութեամբ:

ԽԱՐԱՅԻՏՔ կամ ԳԱՐԱՅԻՄՔ են աղանդաւորք այժմեան Հրէից, որոնք միայն սուրբ գրոց աւանդութիւնը կ'ընդունին ըստ նկարագրական իմաստից և ընդ նախականոն սուրբ մատենից: Իսկ Թալմուտն ու Կապալան, և ծերոց աւանդութիւնը, նաև խորանս չարաչար կ'ատեն. և ասոնց համար բոլորովին կը զանին Հրէիցմէ: Որոնք ունին առանձին ժողովարան և ժողովրդապետ ՚ի Կոստանդինուպօլիս, ՚ի Գերմանիա, ՚ի Ռուսաստան, և ՚ի Խրիմ. որ են օրինապահ և բարեմիտ: Հաւանական է թէ ասոնք Թալմուտին շինուած ատենը բաժնուած են. շատ կը պաշտեն Մովսիսի Հնգամատեան սուրբ գիրքը, կ'ընդունին նաև քսանևերկու յայտնի սուրբ Գիրք և մարգարէութիւններն, ու անմահութիւն հոգւոյ, հրեշտակ և յարութ՟ի մեռելոց այլովքն համդերձ ։ Խարայի կը 'նշանակէ գրակարդաց և հմուտ սուրբ Գրոց կամ գրագէտք. առաջ ամէն կարդացողք այսպէս կ'անուանէին. բայց Փարիսեցւոց հերձուածէն ետև այս անունը իրենց սեպհականեցին իբր թէ միայն սուրբ Գրոց հետևողք, և աւելի տեղեակ իրենք էն եբրայական լեզուին և բանին ։ Տ. Փարիսեցիք, և Սադովկ ։

ԽԱՐԻԹԵԱՆՔ էին Եթովպացի քրիստոնեայք նահատակեալք սուրբ Խարիթայի հետ, որ իրենց քաղքին գլխաւորն էր ։ Վասն զի 'ի Զ դարուն Դոմնաս բռնաւոր Հրէայն զօրանալով եկաւ Նեգրան քաղաքին վրայ, որ քրիստոնեաները Հրէից օրէնքը դարձընէ. բայց տեսաւ որ բռնութեամբ չըլլար, սուտ երդումներով որսաց քաղաքացիներն ու խաղաղութեամբ տիրեց ։ Յետոյ երդումին դէմ սկսաւ չարչարել քրիստոնեաներն որ ուրանան զՔրիստոս. երբոր նոքա քաջութեամբ դէմ դրին, նա կը ժողվէր մեծ ու պզտիկ, քահանայ և աշխարհական կը նահատակէր սրով և հրով. իբր երկուհարիւր եկեղեցական և տասը հազար աշխարհական ։ Իւր մատաղ մանկունքն ալ կը քարոզէին զքրիստոնէութիւն. իսկ քաջ ծերունին Խարիթաս զամէնքը քաջալերելով կը զօրացընէր այր և կին, մինչև փառաւորապէս նահատակեցաւ ։ Ապա Ելեսբովամ թագաւորն Եթովպիոյ առաւ Հրէաներէն սուրբ նահատակներուն վրէժը, մինչև սատկեցուց անոնց գլխաւորը, և շատն ալ դարձուց 'ի քրիստոնէութիւն ։

ԽՈՍՐՈՎ. Մեծն էր քաջազօր արքայ Հայոց Արշակունի, և հայր մեծին Տրդատայ, որ յամի Տեառն 213 թագաւորելով ելաւ Սարմատացւոց յաղթեց ու արձանը տնկեց յունարէն գրով։ Ապա սկսաւ քաղաքներ և աւաններ շինել աշխատցընելով քրիստոնեաները, որչափ որ մնացեր էին 'ի Հայաստան։ Նոյն ժամանակը զօրանալով Արտաշիր Սասանեան՝ ձգեց գահէն զԱրտաւան Պարթև արքայն Պարսից ու ինքը նստաւ. Խոսրով շատ բարկացաւ Արտաւան իրեն ազգակից ըլլալուն համար. ուստի ելաւ Սասանեանին վրա ու մինչև 'ի Հնդիկս հալածական քշեց. յետոյ անոր դէմ կանգնեց Պավրէժ քաղաքը իբր թէ դա է 'ի վրէժ։ Արտաշիր մտածեց որ պատերազմով պիտի չի կարենայ գլուխ ելլելու, յանձնեց Անակ նախարարին որ նենգութեամբ սպաննէ զԽոսրով։

Անակ անմտութեամբ յանձն առաւ, ու ելաւ ընտանեօքը գնաց Խոսրովին իբր թէ Արտաշիրէն փախած էր։ Թագաւորը սիրով ընդունեցաւ, նստեցուց Վաղարշապատ արքունի քաղաքը. ուր ծնաւ սուրբ Գրիգոր Լուսաւորիչը 'ի 257։ Յետոյ Անակ թագաւորին հետ որս ընելու գնաց ու զարկաւ սպաննեց զԽոսրով 'ի 258, որ քառասունըհինգ տարի թագաւորեր էր քաջութեամբ. իսկ Անակ փախչելու ատեն երբ Հայերը պիտի բռնէին զինքն՝ ընկաւ Երասխ գետին մէջ կորաւ։ Արտաշիր տիրելով Հայոց աշխարհին ջարդեց Խոսրովին զաւակները. բայց Արտաւազ իշխանը փախուց մէկ որդին որ էր Տրդատ՝ նախ 'ի Կեսարիա, անկէց 'ի Հռոմ։ Տես Տրդատ։

ԽՈՍՐՈՎ Բ. էր որդի մեծին Տրդատայ, որ սուրբ Վրթանէսին միջնորդութեամբը նստաւ թագաւոր Հայոց 'ի 344, և հօրը քաջ զօրավարներուն ձեռքով մէկ քանի յաղթութիւն ըրաւ ։ Յետոյ շինեց Դուին քաղաքն ու աթոռը հոն փոխադրեց . և հօրը առաքինութենէն և քաջութենէն զուրկ ըլլալով երևելի չեղաւ, և ինը տարիէն ետև մեռաւ ու թաղեցաւ հօրը քով, որուն յաջորդեց որդին Տիրան ։

ԽՈՍՐՈՎ Գ. Արշակունի նստաւ թագաւոր Հայոց 'ի 388 Պարսից արքային ձեռամբ, և զսուրբ Սահակ Պարթև դրաւ կաթողիկոս . ապստամբ նախարարները ամբաստանեցին Պարսից թէ Խոսրով ինքնագլուխ կաթողիկոս դրաւ, և այլն ։ Ասոր համար երբոր կանչեց զինքը Շապուհ, չի գնաց, ու դէմ խօսելով ասաց . "Մի՛թէ գնած ծառայ եմ Շապուհ թագաւորին" ։ Իսկ Շապուհ կատղելով զրկեց Արտաշիր որդին Խոսրովին վրայ, որ զինքը ձգեց աթոռէն հինգ տարի թագաւորելէն ետև, և թագաւորեցուց Վռամշապուհ եղբայրը ։ Նոյնպէս սուրբ Սահակն ալ հանեց կաթողիկոսութենէ, և զԽոսրով շղթայակապ զրկեց Խուժաստանու Անյուշ բերդը փակեց . ապա նորէն զսուրբն Սահակ նստեցուց աթոռը ։ Այլ քսանւերկու տարիէն ետև երբոր Վռամշապուհ արքայն մեռաւ, և որդին Արտաշէս տղայ ըլլալով, սուրբ Սահակ գնաց Յազկերտ Ա. արքային Պարսից, խնդրեց որ զԽոսրով նորէն դարձընէ իր աթոռը . և երբոր դարձաւ եկաւ թագաւորեց, մահն ալ տարիէ մը հասաւ վրան, մեռաւ 'ի 414, որուն յաջորդեց Արտաշէս որդին Վռամշապհոյ ։

ԽՈՍՐՈՎ Անուշիրուան․ էր մեծազօր արքայ Պարսից քաջ և խելացի Զ դարուն, որ թարգմանել տուեր էր փիլիսոփաներուն գրուածքն ու կը կարդար Պղատոնին և Արիստոտէլին իմաստասիրութիւնը։ Որուն հետ հաշտութիւն ըրաւ Յուստինիանոս Ա․ կայսրն ՚ի 557, խոստանալով տարուէ տարի տուրք տալու յիսուն հազար ոսկի․ ապա տիրեց Հայաստանու մինչև ՚ի Կարին ու խոնարհեցոյց Յոյները։ Խոսրով յետոյ ծանր հիւանդացաւ․ և ըստ գրելոյ պատմիչներուն սկսաւ մտածել աշխարհիս ունայնութեանը վրայ․ մինչ զի լոյսն շնորհաց լուսաւորելով միտքը՝ հաւատաց յԱստուած Ճշմարիտ և ՚ի Քրիստոս։ Ապա կանչեց եպիսկոպոս մը մկրտեցաւ ու պատարագ ընել տուաւ խուցին մէջ և հաղորդուեցաւ․ իսկ իրեք օրէն ետև փոխեցաւ առ Տէր ուրախութեամբ ՚ի 579․ և քառասունըութ տարի թագաւորեց բարեպէս։

ԽՈՍՐՈՎ Աբրուզ նստաւ յաթոռ թագաւորութեան Պարսից ՚ի 590, որ անգութ և անիրաւ ըլլալով սպաննեց իր հայրն ու գանելի եղաւ ազգին, մինչ զի Հայոց զօրքովը հազիւ կրցաւ յաղթելու թշնամեաց և թագաւորելու։ Ապա շատ վնասելով Յունաց՝ մեծ նեղութիւն տուաւ թէ կայսերութեան և թէ քրիստոնէութեան․ բիւրաւոր մարդիկ կորուս ու առաւ Երուսաղէմ, նաև սուրբ խաչը գերի տարաւ Պարսկաստան ՚ի 614։ Սակայն պատժուելով տկարացաւ Հերակլ կայսեր առջին ու միշտ յաղթուեցաւ․ մինչև Կաւատ իր որդին սատկեցուց զինքն ու խոստացաւ որ սուրբ խաչը դարձընէ, զոր յետոյ դարձուց․ և Հերակլ կայսրն առաւ մեծ փառօք տարաւ նախ 'ի Կոստանդինուպօլիս , և ապա յԵրուսաղէմ հրաշափառապէս տեղը կանգնեցուց ։

ԽՈՍՐՈՎ էր մեծիմաստ եպիսկոպոս Անձևացեաց աշխարհին Հայոց , և հայր սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն , որ 'ի մանկութենէ լաւ վարժեցաւ դպրութեամբ և իմաստութեամբ , և ապա փեսայացաւ Նարեկայ վանքին Անանիայ առաջնորդին եղբօրն հետ, և ունեցաւ իրեք որդի՝ Յովհաննէս , Գրիգոր և Սահակ ։ Յետոյ հրաժարեալ յաշխարհէ վանք մտաւ կրօնաւորեցաւ յամի 961 · ուր առաքինութեամբ և իմաստութեամբ անուանի եղաւ · մինչ զի քանի մը տարիէն ընտրեցաւ Խոսրով եպիսկոպոս , և փայլեցաւ աստուածարեալ վարքով՝ նաև հոգևոր նախանձով միշտ կը քարոզէր կրթելով կղերիկոսները եկեղեցական պաշտօններուն մէջ ։ Ու այս պատճառաւ շարադրեց բացատրութիւն խորհրդոյ սուրբ պատարագին և մեկնութիւն ժամակարգութեան իմաստուն ոճով և հոգելից խրատներով ։ Նա այսպիսի աստուածիմաստ վարդապետութեամբ ծաղկեցընելով եկեղեցին և ժողովուրդն մականուանեցաւ Մեծ · ապա յամի 972 սրբակաց վարքով փոխեցաւ առ Քրիստոս ։

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ · Տ · ՏՐԴԱՏ ։

ԽՈՐԷՆ · Տ · ԱԲՐԱՀԱՄ և ԽՈՐԷՆ ։

ԽՐԻՒՍԱՆԹՈՍ կը Թարգմանի Ոսկիծաղիկ , էր Աղեքսանդրացի որդի հեթանոս իշխանի 'ի Գ· դարու · երբ հօրը հետ գնաց Հռոմ, հանդիպեցաւ Կարպիփորոն սուրբ եպիսկոպոսին, որ կը բնակէր քարանձաւի մէջ: Պատանին սկսաւ սորվիլ սուրբէն Քրիստոսի հաւատքը, հաւատաց և մկրտեցաւ եռանդեամբ: Երբոր կռամոլ հայրը լսեց՝ չարաչար ծեծով բանտը փակեց քաղցած. բայց չի կարաց ասով տղուն միտքը դարձընել. ապա ուրիշին խրատովը հանեց բանտէն ու դրաւ պայծառ խուցի մը մէջ աղջիկներու հետ: Իսկ սրբասէր պատանին միտքը վերուց առ Աստուած անանկ ջերմեռանդութեամբ աղօթեց, որ աղջիկները թմրած չի կրցան սուրբին մօտենալու: Յետոյ գտաւ հայրը գեղեցիկ աղջիկ մը իմաստուն Դարիա անուամբ՝ առաւ հարսն Խրիսանթոսի, որպէս զի յաղթէ անոր գիտութեամբ և տեսքով: Սակայն Խրիսանթոս յաղթեց կուսին շնորհօք Տեառն և դարձուց ՚ի Քրիստոս ճշմարտութեամբ, մինչ զի ուխտեցին, որ քրոջ եղբօր պէս բնակին մէկտեղ անարատ կուսութեամբ և սրբութեամբ. սոքա բարի օրինակով քարոզ եղան ամենուն առաքինութեան և մաքրափայլ պարկեշտութե՟: Երբոր ասոնց սուրբ վարքը հռչակեցաւ քաղաքին մէջ, զարմանալով ամբաստանեցին Կեղերիոսի եպարքոսին թէ Խրիսանթոս կը բաժնէ էրիկները կնիկներէն. իսկ Դարիան կնիկները էրիկներէն: Եպարքոսը շատ փորձեց նեղելով, բայց չի կարաց խախտել զանոնք սուրբ հաւատքէն. ուտի մատնեց Կղոդիոսի տրիբունին, որ գամել տուաւ սուրբերը փայտի վրա: Բայց երբոր տեսաւ թէ նոքա անսասան և անվնաս պահեցան հրաշքով, հաւատաց Քրիստոսի ինքն և իր կնիկը Իլարիա, և երկու որդիքը Յասոն և Միւռոն, նաև եօթանասուն զօրականք: Կայսըլ երբոր լսեց, զամէնքը նահատակեց · նոյնպէս նահատակեց բազմութիւն քահանայից և դղերց այրի մը մէջ, որ եղաւ իրենց գերեզման, և տօնեցան :

Հայրատունկ դրախտին բոյսք Ոսկիծաղիկք
Անձիւղեալ շնորհօք բողբոջք հրաշալիք,
Գեղափայլ պճնեալք ցօղով սուրբ արեան
Արարչին նուէր շքեղ ձօնեցան :
Այսպէս երանեալ վկայք պերճացան
Զոհեցին մարմինս ընդ հոգւոյ փրկանս ·
Ոսկեզարդ պսակօք մըտեալ՝ ի հանդէս
Փառաց Անեղին՝ հրճուին հրաշապէս :

Կ.

ԿԱԶԻՄԻՐ էր որդի Կազիմիրի արքային Լեհաց դուքս Լիդուանիոյ, որ 'ի մանկութենէ աստուածասէր ըլլալով ճգնութեամբ և ջերմեռանդութեամբ մեծցաւ, պահեցող էր և քրձազգեաց՝ անկողինն էր գետնատարած, և գիշեր 'ի բուն աղօթքի հետ էր։ Շատ եռանդագին պատարագ կը տեսնէր մատուցելով։ Քրիստոսի չարչարանքն, մինչև երբեմն կը յափշտակէր հոգւով յերկինս։ Այնչափ աղքատասէր և բարեգութ էր՝ որ անուանեցաւ պաշտպան կարօտելոց. նմանապէս էր զօրաւոր քարոզ ճշմարտութեան և ուղղափառութեան ընդդէմ հերձուածողաց և մոլորելոց։ Աստուածային սիրով խիստ վառած անարատ պահեց կուսութիւնը, և հրաժարեցաւ աշխարհք մըտնելէն, թէպէտ բժիշկները կը ստիպէին իբր դեղ առողջութե և իբր թեթևութիւն խիստ ճգնութեանցն, բայց չկամեցաւ։ Երկնային խնայմամբ փափաքանօք գուշակեց մահուան օրն ու պատրաստուեցաւ ուրախութեամբ, ապա քսանըհինգ տարուան փոխեցաւ երկնից թագաւորութիւնը 'ի 1482։ Իսկ երբոր տարին մարմինը 'ի Վիլնա՝ տապանը մեծամեծ հրաշքներով պայծառացաւ, ուստի Պօղոս պապն դասեց զնա 'ի կարգս սրբոց փառաւորապէս։

ԿԱԼԻՆԻԿՈՍ Թարգմանեալ Բարեյաղթ էր զօրաւոր վկայ Դիոկղետիանոսի հալածանքին ժամանակը, որ Հոգւով սրբով կը քարոզէր զՃշմարիտն Աստուած և կը փակէր հեթանոսներուն բերանը՝ օգնելով քրիստոնէից վաճառականի ձևով. ուստի կռապաշտ վաճառականները մատնեցին զինքը քաղաքապետին, որ չարչարեց սուրբը ծեծով և կողը քերելով: Ապա երբոր զինքը տարին կռատունը՝ աղօթքով կործանեց կուռքը. անոր համար ոտքերուն երկաթէ գամ զարկին ու քալցուցին Անկիւրիոյ կողմերը: Բայց ճամբան երթալու ատեն ջուր բղխեցուց աղօթքով ու դարձուց կռապաշտները 'ի Քրիստոս. ապա երբ հասան 'ի Գանկրի քաղաքը՝ կրակով նահատակեցին սուրբ վկայն:

ԿԱԼԻՊՈՍ էր որդի Թէոկղեայ բարեպաշտ տիկնոջ, որ Դիոկղետիանոսի հալածանքին ժամանակը ղրկեց որդին Կիլիկիայի կողմն: Մաքսիմոս դատաւորը հոն հանդիպելով բռնեց երանելին, տանջեց որ ուրանայ սուրբ հաւատքը. բայց նա քաջութեամբ կը համբերէր, մինչև կրակը ձգեցին. անկէց ալ ազատեցաւ ձեռամբ հրեշտակին. ապա բանտը դրին: Իսկ քաջասիրտ մայրը երբոր լսեց, հանեց բոլոր հարստութիւնը բաշխեց աղքատաց, և գնաց մտաւ որդւոյն բանտը նստաւ: Ուր արտասուախառն խնդութեամբ մխիթարակից ըլլալով կը սրբէր անոր խոցերուն արիւնը. և երբոր գիշերուան մէջ կը սաղմոսէին՝ լոյս ծագելով բանտին մէջ լսեցին ձայն աւետեաց: Ապա կռապաշտները աւագ հինգշաբթի օրը խաչեցին զքաջն Կալիպոս. իսկ առաքինի մայրը խնդրեց որ գլխիվայր խաչէն զորդին. և մնաց սուրբ նահատակը անանկ մինչև աւագ ուրբաթ օրւան յերրորդ ժամը, ապա աւանդեց հոգին նմանելով Փրկչին: Սուրբ երջանիկ մայրն Թէոկղիա երբոր որդւոյն մարմինը խաչէն վար առին՝ գրկեց ջերմեռանդութեամբ ու աւանդեց հոգին առ Աստուած. հաւատացեալները առին պատուով թաղեցին երկուսը միատեղ, և տօնեցին աստուածպաշտութեամբ:

Ով զարմանահրաշ գործք սիրոյ վերին
Օ խորդ 'ի տըկարս գերապանծ փայլին.
Քնքուշ սիրտ մարմին պետաց և կանանց
Յաղթեն կրից և սրոյ գոռ բռնաւորաց:
Ահա [illegible] շնորհացն անթարգման
Որ հրաշըս գործէ յաղթէ և բնութեան.
Անզօրք քաջանան 'ի սէր հաւատոյ,
Հզօրք խոնարհին 'ի պայծառ գահուց:

ԿԱԼԻՍՏՈՍ Ա. սուրբ քահանայապետ Հռոմայ յաջորդեց յաթոռ սրբոյն Պետրոսի 'ի 221. և կառավարեց զեկեղեցին Քրիստոսի հինգ տարի իմաստութեամբ և սրբութեամբ. շինեց եկեղեցի սուրբ Ածամօրն անուամբ. և գամբան մեծ յԱպպիայ, սահմանադրելով գեղեցիկ բարեկարգութիւններ վասն սուրբ հաւատոյ և բարի վարուց: Իսկ կռապաշտները բռնեցին սուրբ հայրապետը երբոր կը վկայէր ճըշմարտութեան հանդերձ քաջութեամբ, զարկին բրօք. և պատուհանէն վար ձգելով նահատակեցին, իսկ սուրբ մարմինը ջրհորը ձգեցին 'ի 226:

ԿԱԼԻՍՏՈՍ Բ. Կաղղիացի, արքեպիսկոպոս Վիեննայ քաղաքին Կաղղիոյ, նստաւ հայրապետ Հռոմայ 'ի 1119, որ առաքելական ոգւով գումարեց ընդհանուր ժողովն Լատերանու ընդդէմ հերձուածողաց և հակառակողաց ։ Իւր սահմանելով պիտուական բարեկարգութիւններ հանդարտեցուց Եւրոպայի խռովութիւնները, և իմաստուն օրինադրութեամբ ծաղկեցուց եկեղեցին, զի էր բանիբուն և տեղեակ ամենայն գիտութեանց. ապա 'ի 1124 հասաւ մահը, փոխեցաւ առ Աստուած ։

ԿԱԼԻՍՏՈՍ Գ. քահանայապետ հօտին Քրիստոսի, Սպանիացի, նստաւ յաթոռ Հռոմայ 'ի 1455 լցեալ հասակաւ, բայց զօրաւոր և մեծագործ ։ Վասն զի ամէն տեղ զօրացուց քրիստոնեաները և եկեղեցիները, բազմացուց խաչակիրները և բարեպաշտ կարգերը ։ Արագոնայ արքայն երբոր սրբազանին ծանուց թէ ես ամէն բանիդ օգնական կ'ըլլամ, պատասխանեց թէ Թագաւորին պէտք է որ իրեն տէրութեանը խնամք ունենայ, և Քրիստոսի եկեղեցնայ հոգը ինծի թողու ։ Բայց ափսոս որ իրեք տարիէն ետև փոխեցաւ առ Աստուած քաջ ծերունի հայրապետը ։

ԿԱԼԻՍՏՐԱՏՈՍ քաջ զօրականն էր Քաղկեդոնացի այր փառաւոր Դիոկղետիանոսի բանակին մէջ ։ Զօրապետն երբոր իմացաւ նորա քրիստոնէութիւնը շատ նեղութիւն տուաւ՝ որ զոհել տայ կռոց. մինչև արեամբ չափ ծեծեցին, և մանր խեցիներու վրա մերկ մարմինը քաշելով կտրըտեցին ։ Բայց չի կրցան յաղթելու քաջ նահատակին. ապա խորգի մէջ դրին, ծովը նետեցին՝ որ մեռնի ։ Իսկ սուրբը հրաշքով անվնաս դուրս ելաւ ծովէն ու զարմացուց զամէնքը. մինչ զի զինուորականներէն քառասունինը հոգի հաւատացին Քրիստոսի, և ծեծ ուտելով մտան Կալիստրատոսին բանտը. որ հոգևոր ուրախութեամբ սորվեցուց զինուորներուն քրիստոնէութեան զամէն կանոնները և լուսաւորեց հաւատքով։ Իսկ հեթանոսները հանեցին բանտէն քառասունինը վկաները, ծովը նետեցին. սակայն նոքա անվնաս ելան ծովէն հրաշքով. և երբոր երկինքէն լոյս իջաւ ու կուռքերն ընկան փշրեցան՝ հարիւրերեսունըհինգ հոգի ալ հոն հաւատացին, քրիստոնեայ եղան։ Ան ատեն նահատակեց սրով զսուրբն Կալիստրատոս և քառասունինը վկաները. իսկ նոր հաւատացեալները թաղեցին անոնց մարմինները, և մէկն ալ գրեց սուրբերուն վկայաբանութիւնը։

ԿԱԼՎԻՆ Յովհաննէս էր Գաղղիացի գեղի մը ժողովրդապետ, մտավարժ և աշխոյժ, բայց մոլի և ամբարտաւան, չարագործ և անառակ։ Մինչև եպիսկոպոսը վռնտեց զինքը վիճակէն, ու տաք երկաթով դրոշմեց ճակատն՝ որ ապաշխարէ. բայց նա գնաց աշակերտեցաւ Զուինգլիոս հերետիկոսին։ Յետոյ ինքն նոր աղանդ հանեց 'ի 1538 դիւրին ճամբաներով ռամիկները խաբելու համար։ Սուտի քարոզեց. ա̃, թէ՝ որդիք մկրտելոց արդար կը ծնին։ բ̃. Առած շնորհքը չի կորնչիր։ գ̃. Ամենայն հաւատացեալք նախասահմանեալ են, պէտք է որ փրկուին, և նոքա են եկեղեցի։ դ̃. Աստուած չուզեր ամենուն փրկութիւնը, և այլն։ Ուրացաւ անօրէնը զեկեղեցական արարողութիւններն ու խորհուրդները, զքաւարան, սրբոց բարեխօսութիւնը, և զգլուխն սուրբ եկեղեցւոյ, այլովքն հանդերձ ։ Սաստի նզովելով դատապարտեցաւ Տրիդենտեան ժողովքին մէջ, և պատուհասեալ տանջեցաւ եօթը տարի ցաւով մարմնոյն, մինչև սատկեցաւ 'ի Ժինեվրա յիսունըհինգ տարեան 'ի 1564 ։

ԿԱԽԱՐԴ. Տ. ՎՀՈՒԿ ։

ԿԱՄՍԱՐ էր նախարար Պահլաւունի, ազգական Տրդատ Թագաւորին, որ Պարսկաստան պատերազմի մէջ գագաթին մէկ կողմը կտրուած ըլլալով կոչեցաւ Քէմսէր, այս ինքն պակասագլուխ ։ Պարսիկները երբոր հայրը սպաննեցին՝ Կամսար փախաւ Տրդատ արքային քով, որ տուաւ իրեն Շիրակայ գաւառն ։ Ապա չորս տարիէն ետև Կամսար լուսաւորեալ մկրտեցաւ սուրբ Լուսաւորչէն, ու եօթը օրէն ետև փոխեցաւ առ Տէր ։ Տրդատ սորա զարմը նախարարութիւն ընելով կոչեց Կամսարական, որոնցմէ ելան շատ երևելի անձինք քաջութե̃ և առաքինութեամբ ։ Իսկ Կամսարայ զորդին Արշաւիրը առաւ իրեն որդեգիր, տալով անոր Երասխաձոր գաւառը, որ յետոյ կոչեցաւ Արշարունիք․ այսպէս մականուանեցաւ և Կամսարականաց նախարարութիւնն ։

ԿԱՅԵՏԱՆՈՍ էր Վիչենցայի ազնուազարմ, հիմնադիր կարգին Թէադինոց ծնեալ 'ի 1478, որ մէկէն նուիրեցաւ մօրմէն Աստուածածնին և հրաշալի սրբութեամբ սնաւ ։ Ապա երբոր վարժեցաւ ուսմանց իրաւանց և հարկաւոր գիտութեանց 'ի Պատուա, գնաց անկէ 'ի Հռոմ՝, և եղաւ գրագետ առաքելական և արգոյ երէց պալատին ։ Բայց նա աստուածային սիրով վառուած կը ծառայէր աղքատներուն և հիւանդներուն. նաև իր ծախքով կանգնեց հիւանդանոց ու կը ծառայէր ժանտամահին ժամանակը ։ Ապա ջանացաւ և հաստատեց ընկերութիւն մը վանական կղերիկոսաց, ապրելով կամաւոր ողորմութեամբ առանց մուրալու ։ Կայետանոս եղաւ առաջնորդ այս ընկերութեան և ծաղկեցուց կրօնը վառելով ժողովուրդն յաստուածպաշտութիւն և 'ի ջերմեռանդութիւն սուրբ հաղորդութեան. իբրև զօրաւոր քարոզիչ կը շահէր զամենքը, և որպէս ճգնաւոր մերկ տախտակի վրա կը պառկէր դիտաւորութեամբ խաչելութեն Տեառն ։ Ուստի առաւ շնորհք մարգարէութեան և աստուածային տեսլեանց. ապա յետ բազում արդեանց վախճանեցաւ սրբութեամբ 'ի Նափոլի վաթսունըեօթ տարեան, և ամփոփեցաւ պատուով և հրաշագործութեամբ սրբոյն Պօղոսի տաճարին մէջ 'ի 1547, դասելով 'ի կարգս սրբոց ։

ԿԱՅԻՆ կամ ԿԱՅԷՆ կը նշանակէ Ստացուած, որ էր առաջին որդի Ադամայ ծնեալ յԵւայէ յերկրորդ ամի աշխարհի. և եղաւ երկրագործ. և ապա նախանձելով եղբօրն Աբելի՝ սպաննեց չարութեամբ յամի աշխարհի 130 ։ Ուստի երբոր յուսահատութեան մէջ ընկաւ, Արարչէն անիծեցաւ, որպէս զի երերեալ տատանեալ ըլլալով նաև ամենէն հալածուելով ապաշխարէ ըրած անօրէնութիւնը եղբօրը դէմ ։ Յետոյ գնաց Եդեմայ կողմը քաղաք շինեց ու կոչեց որդւոյն անուամբը Ենովք, որ ըստ աւանդութեն Հրէից Լամեքէն սպաննեալ կորաւ յաւիտեան. բայց սուրբ Ու կեբերան կը համարի թէ ապաշխարած է եղբայրասպանութեան մեղքն ։

Ի Բ դարուն ելան Կայէնեան հերետիկոսներ՝ որոնք կը պատուէին զԿայէն, զԿորխ, զԴաթան, զՍոդոմացիներն, նաև զՅուդայ, և այլն. իսկ զԱբէլ կ՚ատէին, և ամենայն չարիք կը գործէին անխտիր ։ Ըստ հին Հարց սոքա հնարեցին սուտ աստուածաշունչ, աւետարան, ամբարձումն Պօղոսի, և այլն. որոնք դատապարտեցան և կորան ։ Տ. Աբէլ ։

ԿԱՍՍԻԱՆՈՍ Յովհաննէս ազնուազարմ էր անապատական բանիբուն, կրթեալ յԵգիպտոս ճգնաւորաց քով. վառեցաւ հետևիլ կատարելութեան, նստաւ Բեթղեհէմի վանքը և Գերմանոս եղբօրը հետ կը ճգնէր ։ Ասկէ գնաց 'ի Կոստանդինուպօլիս Ոսկեբերանէն սարկաւագ ձեռնադրեցաւ, և եղաւ զօրաւոր պաշտպան անմեղութե սուրբ վարդապետին թշնամեաց դէմ ։ Յետոյ անցաւ 'ի Հռոմ և 'ի Մարսիլիա ու ձեռնադրեցաւ քահանայ, և շինեց երկու վանք արանց և կանանց. և լեցուց հինգհազար կրօնաւորներով, կրթելով զանոնքը ներանձնական վարքով ։ Զարմանալի առաքինութբ մեծանուն և սիրելի եղաւ մեծամեծաց և մեծին Լևոնի Ա. պապին, և այսպիսի առաքինի անուամբ փոխեցաւ առ Տէր 'ի 1433. որ և թողուց աստուածիմաստ պիտուական ճառեր և խրատական քարոզներ ։ Սուրբն Բենեդիկտոս կը յորդորէր աշկերտներն որ սորա խրատները կարդան ։

ԿԱՏԱՐԻՆԷ ըստ Հյ. ՙԷքտաւինէ և ըստ Յն. Ἰκαθερίνα, այս ինքն Ամբիծ. էր Աղեքսանդրացի կոյս իմաստուն, ազգական մեծին Կոստանդիանոսի, սնեալ և վարժեալ քրիստոնէութեամբ և հելլենական դպրութեամբ, մինչև մեծահռչակ հանդիսացաւ անունը։ Մաքսիմիանոս կռամոլ կայսրն երբոր գնաց յԱղեքսանդրիա հեթանոսական տօնը կատարելու, երջանիկ կոյսը ելաւ ատեանն ու իմաստալից համձարով յանդիմանեց կռապաշտից կուրութիւնը, իրենց նախնեաց առասպելներն երեսնին զարնելով։ Անանկ ամըչցաւ կայսրն որ կանչեց Յունաց գիտուններէն յիսուն իմաստուն ճարտասան ու վիճաբանութիւն ընել տուաւ կուսին հետ։ Իսկ շնորհալից Կատարինէն այնպէս ափիբերան ըրաւ զանոնք որ յայտնի հաւատացին Քրիստոսի. ուստի կատղելով Թագաւորը այրել տուաւ զանոնք ամէնը, և զկոյսը բանտը դրաւ ու սկսաւ փորձել յորդորանքով և վախ տալով, երբոր կոյսը համարձակ մերժեց քաջութ՟բ, սկսան սաստիկ տանջել ծեծով և անուով. բայց հրեշտակ Տեառն ազատեց սրբուհին։ Ապա բռնաւորը գլխատել տուաւ ամբիծ կոյսը տասնըութ տարուան. ուր մէկէն սքանչելապէս, ձեռամբ հրեշտակաց մարմինը փոխադրեցաւ 'ի լեառն Սինայ, և եղաւ նշանաւոր ուխտատեղի հաւատացելոց անապական մնալով, զոր ամէն քրիստոնեայք կը տօնեն փառաւորապէս։

ԿԱՏԱՐԻՆԷ կոյս Սենացի էր Դոմինիկեան կարգէն, պահեցող միանձնուհի, սքանչելագործ և առաքինափայլ. մինչև աղօթքով և պահօք հիւանդները և դիւահարները կը բժշկէր։ Երբոր Փիզա քաղաքն էր օր մը հաղորդուելէն ետև տեսաւ զՔրիստոս խաչեալ, և անկէ միտքը լուսաւորելով՝ կը հասնէր ամէն աստուածաբանական խորունկ և դժուար խնդիրներուն : Այսպէս անարատ սուրբ կոյսն շատ հրաշքներով և մարգարէական հոգւով փոխեցաւ սրբութ՟ք առ սիրելին իւր Քրիստոս երեսունուերեք տարուան, և հանգեաւ 'ի Սինա Դոմինիկեանց վանքը 'ի 1380 : Ասոր նման առաքինի և հրաշագործ էր Կատարինէ Բոնոնիացին ալ Իտալիոյ Քլարայ կուսին կարգէն . որուն մարմինը մինչև հիմա անապական կեցած է իրենց վանքին մէջ :

Սրբափայլ կուսանք ձայնեն մայրաբար
Քաջ պատանեկաց լինել բարեփառ .
Օ ի մօրք ներհուն հոգւով շնորհալից
Առցեն մրցանակ հոգեշարժ մարտից :
Թէ կար մեր անկար բուռն արիացաւ
Յաղթեալ մրցողաց 'ի փառս ամբարձաւ ,
Դուք զի կայք յեսնեալ յառաքինութ՟եց
Ապաշնորհք և զուրկք յանթարշամ պսակաց:

ԿԱՏԱՐԻՆԷ Բ. Ալեքսիովնա էր մեծահռչակ դշխոյ և կայսրուհի Ռուսաց , կին Պետրոսի Գ. կայսեր , որ բարեմիտ և ցուրտ բնութեամբ մարդ էր . իսկ Կատարինէ դշխոյն ընդհակառակն էր կայտառ ոգւով , քաղցրաբարոյ և ճարտարամիտ : Այս պատճառաւ իշխանները պաղեցան թագաւորէն ու թագուհին կը պատուէին . վասն զի Պետրոս Լուտերի աղանդին մօտիկ ըլլալով բոլոր տէրութեանը զզուելի եղաւ , մինչև բանտին մէջ խղդեցին խեղճը : Իսկ խելացի թագուհին տեսաւ ժողովուրդին կատաղութիւնը , ուրիշ կերպով չի կրցաւ խաղաղցընելու , բայց միայն մեծամեծ խոստմունքներով և ջերմեռանդ յունադաւան երևնալով մեծ խոհեմութեամբ ։ Ռուսի իշխանները և մետրապօլիտները ժողվեցան Մոսկով մայրաքաղաքը , և պսակեցին մեծ հանդիսով զԿատարինէ Թագուհի Ռուսաց 'ի 1764 , որ ապա շարադրեց գաղղիերէն օրինաց գիրք մը ազգին օգտակար , ու թարգմանել տուաւ ռուսերէն , որ ընդունելի եղաւ ժողովուրդին կոչելով զինքը Մայր հայրենեաց ։ Ի 1769 թագուհին երբոր յաղթեց Օսմանեանց՝ դաշնակից եղաւ Պրուսիային և Գերմանացւոց հետ , ու Լեհաց տէրութիւնը իրենց մէջ բաժնեցին առին 'ի 1775 . իսկ Ղրիմի տէրութիւնը անկախ ընելով յետոյ անցաւ Ռուսաց ձեռքը 'ի 1779 ։ Կատարինէ Բ . փառաւոր կայսրուհին Ռուսաց շատ երևելի մեծագործութիւններէն ետև մեռաւ յանկարծ վաթսունըեօթը տարւան 'ի 1796 . որ թագաւորեց երեսունըերեք տարի փառօք և պատուով ։

ԿԱՐՈԼՈՍ Մեծն էր բազմայաղթ ինքնակալ արևմտեան , որդի Պիպինի արքային Գաղղիոյ , որ 'ի 771 նստաւ ինքնագլուխ թագաւոր . և յաղթելով Սաքսոնացի աւազակներուն կործանեց իրենց կուռքերն ու քուրմերը ։ Հալածական փախուց ամէն թշնամիներն . նոյնպէս անցաւ յԻտալիա օգնելով սրբազան պապին՝ խոնարհեցուց Լոնգոբարտացիք ։ Յետոյ բարեպաշտութեամբ ջանացաւ որ Սաքսոնացիները հաստատէ քրիստոնէութեան մէջ , դրաւ իրենց պիտուական օրէնքներ և կանոններ եպիսկոպոսներով և պատիժներով ։ Եւ այսպէս հնազանդեցուց այն բարբարոսները աստուածային և թագաւորական օրինադրութեանց նոյնպէս խոնարհեցուց Անգղիացիք, Գերմանացիք, Մաճառները, և այլն։ Ապա յամի 800 յետ մեծամեծ յաղթութեանց գնաց 'ի Հռոմ հանդէսներ կատարեց սրբազան պապին Լևոնի Գ. օրհնութեամբն։ Որ քահանայապետական իշխանութբ՟ պսակեց զԿարոլոս և անուանեց Կայսր արևմտեան, Օգոստոս Մեծ։

Անկեց ետև սկսաւ ծաղկեցընել ամէն քաղաքական օրէնքները, բարեկարգութիւնները, ուսումն և վաճառականութիւն շատ խոհեմութեամբ և զարմանալի ճարտարութբ՟։ Այնչափ ուսումնասէր էր որ իւր պալատը գիտուններու ճեմարան էր ըրեր. տեղեակ ըլլալով ուրիշ լեզուներու շարադրեց գրեանք օրինաց և քերականութե՟։ Ահա այսպիսի բարեպաշտութբ՟ ամէն բան կարգադրեց և տէրութիը՟ յանձնեց մեծ որդւոյն Լուդովիկոսի Ա. Պիոսի, մեռաւ առաքինութբ՟ եօթանասունըմէկ տարւան 'ի 814. Թագաւորեց բարելաւութբ՟ քառասունեօթը տարի. որ և ապաշխարողի հագուստով թաղուեցաւ վասն ջերմեռանդութեան։ Վասն զի էր հանճարեղ, աղքատասէր և կրօնասէր. ընդ ամէն տիրած աշխարհները կը տարածէր քրիստոնէութիւնը և բարեպաշտութիւնը. մարմնով ալ բարետեսիլ էր, թիկնաւէտ, կայտառ աչքով, զուարթերես, արծուենկն և քաջակորով։ Ոմանք սուրբի կարգ դրին զմեծն Կարոլոս, և շատ քաղաք կը յարգեն ու տարեկան յիշատակը կը կատարեն ասելով. Յիշատակ արդարոց օրհնութեամբ եղիցի։

ԿԱՐՈԼՈՍ Ժ. Թագաւոր Գաղղիոյ, եղբայր Լուդովիկոսի ԺԶ. որ եղբօրը մահուան ժամանակը փախաւ յԱնգղիա մինչև 'ի 1815, երբ մէկալ եղբայրը Լուդովիկոս ԺԸ. Թագաւորեց, դարձաւ եկաւ Փարիզ, և յաջորդեց անոր 'ի 1824: Ապա 'ի 1830 երբոր Ճէզայիրցիք քրիստոնէից նեղութիւն կուտային աւազակութեամբ, զօրք ղրկեց ու տիրելով իրենց աշխարհին վերուց աւազակները: Այս աստուածասէր արքայն մեծ երախտիք ըրաւ նաև մեր ազգին միջնորդ ըլլալով Օսմանցոց արքային Սուլդան Մահմուտի դնել տուաւ առանձին պատրիարք ուղղափառ Հայոց վրա, և հրովարտակաւ եկեղեցիներ շինել տուաւ ամէն տեղ 'ի 1830, և այլն: Երբոր կամեցաւ արգիլել Գաղղիա որ առանց քննութեան բան չի տպէն կրօնի և բարի վարուց դէմ, ոտք ելան աշխարհասէր մարդիկ և խռովութիւն հանելով 'ի 1830 հալածեցին զԿարոլոս, որ բոլոր ընտանեօք ելաւ գնաց յԱնգղիա, անկէց ալ անցեալ 'ի Գերմանիա վախճանեցաւ 'ի Կոռիցիա ութսուն տարւան 'ի 1837:

Արքայք և դշխոյք զգօն վարուք իւրեանց
  Ազդեն մեզ լինել ընտիր բարեզգեաց.
  Օ ի մտաք յաշխարհ ճոխացեալ փառօք
  Եղաք ասէն մերկք անփառ պատանօք:
Երանի՛ է ձեզ թէ յանցաւորիս
  Հոգայք ամբարել զերկնային բարիս.
  Քանզի այնք մնան 'ի դարս անվախճան
  Այլքն իբրև ըզծուխ անդէն չքանան:

ԿԵԿՐՈՊ էր հիմնադիր տէրութեան Աթէնայւոց, որ 1582 տարի Քրիստոսէն առաջ ելաւ իր երկրէն Եգիպտոսէն ժողովրդով, անցաւ Ատիկէ աշխարհ Յունաց, և շինեց Աթէնք քաղաքը ։ Ուր ժողվեց ճարտարութբ՟ անտառներէն՝ վայրենի ժողովուրդը , բաժնեց տասներկու վիճակ , որոնց դրաւ քաղաքական օրէնք և հաստատեց ծերակոյտ , որ յետոյ կոչեցաւ Արիսպագոս ։ Սորվեցուց իրենց զանունն Դիոսի կամ Արամազդայ , նաև պաշտօն կրօնի , և այլն ։ Կեկրոպ յիսուն տարի թագաւորելէն ետև մեռաւ ․ որուն ցեղէն տասնըվեց արքայք յաջորդեցին 488 տարի ։ Նա կոչեցաւ Տի–ֆիէս , որ 'ի Յոյն կը նշանակէ Երկբոյս ․ զի ոչ միայն կը խօսէր երկու լեզու Եգիպտացւոց և Յունաց , այլ և վայրենի ազգին դրաւ օրինաւոր կապ ամուսնութեան , որոնք անբանի պէս կ' ապրէին ինչպէս էին Ամերիկացիք ալ երբեմն ։ Ուստի նախնիք կ'անուանէին զԿեկրոպ երկճակատ , անլոյծ ամուսնութիւնը հաստատելուն համար ․ ինչպէս որ հին դրամին վրա կ'երևնայ Կեկրոպ երկճակատ , մէկ երեսը էրիկ մարդու , մէկալը կնիկ մարդու ։

ԿԵՂԵՍՏԻԱՆՈՍ Ա ․ սուրբ քահանայապետն Հռոմայ նստաւ յաթոռ առաքելական 'ի 423 , և իմաստութեամբ կառավարեց զեկեղեցին Քրիստոսի , հաստատելով ուղղափառութիւնը և մերժելով հերձուածողները ։ Դատապարտեց զՆեստոր աղանդապետն թէ առանձին ժողովքով և թէ Եփեսոսի տիեզերական ժողովովը , ուր իրեն փոխանորդ դրաւ սուրբ Կիւրեղ Աղեքսանդրացին ։ Ապա յետ գեղեցիկ կանոնադրութեանց փոխեցաւ առ Աստուած սուրբ վարքով 'ի 432 ։

ԿԵՂԵՍՏԻԱՆՈՍ Բ ․ նստաւ յաթոռ սրբոյն Պետրոսի 'ի 1143 , և մեծանուն հանդիսացաւ իմաստութեամբ և սրբութեամբ . սակայն կարճօրեայ ըլլալով հինգ ամիսէն ետև վախճանեցաւ :

ԿԵՂԵՍՏԻԱՆՈՍ Գ . ընտրեցաւ հայրապետ Հռոմայ ութսունըհինգ տարւան 'ի 1191 , և մեծ ջանքով հետևեցաւ որ ազատէ Երուսաղէմ Սարակինոսներուն ձեռքէն : Եւրոպայի թագաւորները ոտք հանեց , և մեր Լևոն իշխանը հաստատեց թագաւոր Հայոց : Տ. Լևոն Բ : Կեղեստիանոս այսպիսի առաքինի վարքով և առաքելական նախանձով փոխեցաւ յերկինս 'ի 1198 . կան սորա տասնըեօթը իմաստալից կոնդակներն :

ԿԵՂԵՍՏԻԱՆՈՍ Դ . Միլանցի , այր փառաւոր՝ ընտրեցաւ քահանայապետ յառաքելական աթոռ Հռոմայ 'ի 1241 . բայց տասնըեօթը օրէն ետքը վախճանեցաւ , զոր սգացին ամէն աշխարհք :

ԿԵՂԵՍՏԻԱՆՈՍ Ե . սուրբ քահանայապետն օծաւ պապ Հռոմայ 'ի 1294 , որ ճգնութեամբ և պահօք շատ մաշուած էր . մէկէն սկսաւ սկիտանի կարգեր և կանոններ հաստատելու : Ընտրեց տասուերկու իմաստուն գործակալներ՝ և յանձնեց իրենց հոգալ ամենայն բան խոհեմութեամբ և բարեկարգութեամբ : Իսկ ինքն իւր կրօնաւորական վիճակին փափաքելով՝ ժողվեց կարդինալներն ու մեծաւ ջերմեռանդութեամբ հրաժարեցաւ աթոռէն , և այնպէս շարժեց ամենուն սիրտն որ լալագին հնազանդեցան ու չի կրցան ընդդիմանալու ճգնաւոր հայրապետին սուրբ կամացն , որուն վրա աշխարհ զարմացաւ ։ Վասն զի թողուց արքայակերպ մեծութիւնն ու՝ առանձնացաւ իր աղքատ ճգնարանը խեղճ կրօնաւորական զգեստով և փայլեցաւ սրբութեամբ ։ Ապա անցաւ ՚ի Կամպանիա, և գուշակելով մօտաւոր մահը՝ պատրաստեցաւ եռանդեամբք փոխիլ առ Քրիստոս · ուստի ՚ի 1296 հոգեզուարճ աստուածխօսութեամբ աւանդեց պայծառ հոգին ութսուներկու տարեան հանդերձ հրաշագործութեամբ ։ Մինչև սրբազան պապն Կղեմէս Ե · դասեց սրբոց կարգը զերանելի Կեղեստինոս Ե · քահանայապետն ։

Աստուածաշնորհ Հարց բոլբոք երկնասլաց
Վառեցաւ առ սէր անմահականաց ·
Նախանձորդ գտեալ մեծին Եղիայի
Ճգամբք ամբարձան յանմարմնոց կայի ։
Այս խոստումն անշուշտ է Աստուածորդւոյն
Հանողին զխոնարհս ՚ի ծագ գերաբուն ·
Օ ի դու վառեցիր յայն բոց հոգելից
Մերթևել արդեամբք ՚ի կարգս անմահից ։

ԿԵՐԻՆԹՈՍ և ԿԵՐԴՈՆ, առաջինն էր հերետիկոսապետ ՚ի Ա. դարուն, աշակերտ Սիմոն մոգին, որ կը քարոզէր յԱնտիոք քաղաքը, թէ պէտք է պահել Հրեից օրէնքը և թլփատութիւնը ։ Նաև կ՚ուրանար թէ աշխարհս չէ ստեղծուած յԱրարչէն գերագոյն Էակէ · իսկ զՅիսուս բաժնելով Քրիստոսէն կը դնէր սոսկ մարդ, և կ՚ըսէր թէ երբ Յիսուս չարչարեցաւ խաչին վրա, Քրիստոս համբարձաւ երկինքը ։ Յովհաննէս աւետարանիչն կենդանի ըլլալով գրեց սուրբ աւետարանը ասոր դէմ և պապանձեցուց չարալեզուն ։ Նոյնպէս սուրբն Իրանոս և սուրբ ժողովք նզովեցին զայս աղանդապետն ու իւր չար մոլորութիւնը ։ Նմանապէս դատապարտեցին սուրբ Հարք զաղանդապետն Կերդոն Բ դարու, որ կը դնէր երկու սկզբունս բարի և չար. բարին արարիչ երկնից, իսկ չարն ստեղծող երկրի ։ Չէր ընդունէր հին կտակարանը և ոչ բոլոր նոր կտակարանը. նաև առաչօք կը դնէր Քրիստոսի մարդեղութիւնը, և այլն. որ կորաւ աղանդովն, և չար մոլորութեամբն նզովեցաւ ։ Կերինթոս նոյնպէս եղաւ գլուխ Հազարամեայց չարաչար մեկնելով Յայտնութեան մթին բանը, թէ արդարք “Թագաւորեսցեն ընդ նմա հազար ամ„. զոր սուրբ եկեղեցին նզովելով ջնջեց ։

ԿԻԿԵՐՈՆ անուանեալ Մարկոս Տուղղիոս, էր գերահռչակ ատենաբան ճարտասան պերճ իմաստասէր Հռոմայեցի 116 ամօք Քրիստոսէն առաջ, կայտառ ոգւով, բարեգութ և մարդասէր ։ Սա գնաց Աթէնք ու շատ կատարելագործեց ատենաբանութիւնը, մինչև զարմացուց զամէնքը ։ Յետոյ դարձաւ 'ի Հռոմ, և մտաւ իշխանական պաշտօններու մէջ, ըլլալով Պրետոր և Հիւպատոս. որ և ամէն տեղ հաւատարիմ և երևելի եղաւ իր գործքին մէջ. զի միշտ կը ջանար խոհեմութեամբ վարուիլ մեծամեծաց հետ, որոնք նախանձով լեցուած էին ։ Վերջապէս խեղճ Կիկերոն երբոր գրեց ճարտասանական ճառը ընդդէմ Անտոնիոսին, մատնուեցաւ ան գազանին ձեռքը, որ չար ոխակալութեամբ կտրել տուաւ Կիկերոնին բազմահանճար գլուխը, որ վաթսունևիրեք տարուան էր՝ Յիսուսէն 43 տարի առաջ ։ Եւ այսպէս ոչինչ տեղը կորաւ մեծահռչակ իմաստասէրն և քաջ ատենաբանն , որ թողուց շատ իմաստալից գրուածներ , հանճարաւոր ճառեր և զուարճախօս նամակներ ․ որոնց վրա կը զարմանանք թէ ինչպէս ժամանակ գտեր ու գրեր է այնչափ գործքերու մէջ ․ որոնք ամէն լեզուով թարգմանեցան և տպագրեցան շատ անգամ ։

ԿԻՊՐԻԱՆՈՍ էր գերահամբաւ վարդապետ եկեղեցւոյ և սուրբ հայրապետ Կարդաքինեցւոց 'ի Գ դարուն , որ հեթանոսութեան ատենը վարժապետ էր ճարտասանութեան Լատին լեզուին , գոլով բնաւին և իմաստասէր հետևեցաւ իմանալու քրիստոնէական ճշմարտութիւնն , որ նոյն ժամանակը տարածուեր էր յԱփրիկէ ։ Երբոր բարի մտքով տեղեկացաւ քարոզութեամբ իմաստուն վարդապետաց՝ հաւատաց Քրիստոսի 'ի 246 ․ անկեց ետև ճգնողական վարքով ջանացաւ առաքինի և կատարեալ ըլլալու սուրբ գրեանց զօրութեամբն , մինչև արժանի եղաւ սուրբ կարգի երիցութեան և ապա եպիսկոպոսութեան ․ որ գոլով իմաստուն և քաջ հովիւ ծաղկեցուց ամենայն բարեկարգութեամբ իր հայրենիքը ։

Ապա Դեկոսի հալածանաց ժամանակն առանձնացաւ , և իմաստուն նամակներով միշտ կը զօրացընէր ժողովուրդը և պաշտօնեաները հաւատով և սիրով ։ Իսկ հալածանքէն ետև ժողով գումարեց յամի 251 վասն բարեկարգութե̅ց , և սահմանեց մասնաւոր ապաշխարանք անոնց՝ որ հալածանքէն ատեն ուրացեր ու յետոյ զղջացեր էին ճշմարտութեամբ ։ Եւ այսպէս գեղեցիկ օրինադրութեամբ ամենայն բան և վիճմունք հանդարտեցուց ․ Նաև շատ անհաւատներ ալ լուսաւորեց աստուածային վարդապետութեամբ ։ Կարգաւորեց եկեղեցականներն և կրօնաւորներն . իսկ Յուստինիանէ սուրբ կոյսն որ վանքն էր մտեր , ձեռնադրեց սարկաւագուհի ։ Այս երանելեաց քարոզութեամբն շատ ծաղկեցաւ հաւատքը և բարի վարքը · մինչ զի չարանալով կռապաշտները բռնեցին դատեցին զսուրբն Կիպրիանոս և Յուստինիանէ Վաղերիանոսի հալածանքին ատենը , և պէսպէս տանջանքներէն ետև սրով նահատակեցին երկուսն ալ ։ Որք մեծ քաջութեամբ վկայեցին ճշմարտութեան և ուրախութեամբ փոխեցան յերկինս . իսկ հաւատացեալք մեծ պատուով հանգուցին անոնց նշխարքներն ու տօնեցին , և յետոյ եկեղեցի շինեցին տապանին վրան ։

ԿԻՐԱԿՈՍ կամ ԿԻՒՐԱԿՈՍ էր իրեք տարուան մանուկ կայտառ և գեղեցիկ , որդի բարեպաշտ մօրն Յուղիտայի Թագաւորական զարմէ , Դիոկղետիանոսի հալածանքին ատենը ։ Յուղիտա առաւ տղան և երկու աղախին , անցաւ Տարսոն . հոն ալ հասաւ Աղեքսանդր կռապաշտ դատաւորը , և բերել տուաւ ատեանը զՅուղիտա և Կիրակոս ։ Ուր քաջութեամբ Յուղիտա պատասխանելով խոստովան եղաւ զՔ͞ս . նոքա կատղելով ծեծեցին զերանուհին և քերթեցին մարմինը ։ Իսկ մանուկն Կիրակոս մօրը նայելով կուլար . և երբոր մայրը տանջանքին մէջ կը կանչէր . թէ “ Քրիստոնեայ եմ, զՏէր Յիսուս կը պաշտեմ„ , սուրբ տղան ալ անոյշ ձայնով նոյնը կը կանչէր ։ Անօրէն դատաւորն առաւ զԿիրակոս գիրկն ու երբոր կը սիրէր , նա երեսը մօրը դարձընելով կը զարնէր ոտքովը դատաւորին , որ թողու զինքն երթալու մօրը քով ։ Բարկացաւ դատաւորը . Ի՞նչ կ՚ ուզես . մանուկը պատասխանեց . Քրիստոնեայ եմ. ուստի բարկացաւ անօրէնը, բռնեց տղուն ոտքէն՝ նետեց աստիճանէն վար . որուն գլուխը զարնուելով քարին՝ արիւնաթաթախ աւանդեց հոգին աղաւնոյ նման ։ Երանուհին Յուղիտա զայն տեսնելով՝ թէպէտ մորմոքեցաւ սիրտը, բայց ուրախութեամբ գոհացաւ Աստուծոյ, որ իրմէն առաջ զոհ եղաւ իր որովայնին պտուղն ։ Յետոյ չարաչար տանջեցին Յուղիտան . և երբոր քաջութ̃ կը համբերէր, գլխատեցին 'ի 304 . իսկ աղախիններն գնացին գիշերանց գողցան երկուսին ալ նշխարքը, տարին Տարսոնէն դուրս քարանձաւին մէջ պահեցին . որ հրաշքով յայտնեցան մեծին Կոստանդիանոսի օրը, և ամէն տեղ սփռեցան և տօնեցան երանելիները ։

Կիրակոս մանուկ հրեշտակ 'ի մարմնի
  Երգէ քաղցր 'ի լուր երկնից արքայի,
  Քաջապէս մրցեալ ընդ բռնակալին
  Յաղթէ ժառանգէ զպսակն երկնային ։
Ծնունդ ադամածին ողոքէ հեզիկ
  Ընդ մօր դիւցազին չքնաղ գիրգ մանկիկ
  Մւսջլիք բուռն ախտից լինել յաղթական,
  Մրցանօք սլանալ 'ի կեանս անվախճան ։

ԿԻՐԱԿՈՍ վարդապետ, Վիրապեցի, երկար ժամանակ Լուսաւորչայ խոր Վիրապին վանքը բնակելէն ետև գնաց Էջմիածին՝ որ աւրուած էր, ու կը ջանար նորոգելու, և Սսայ աթոռը Էջմիածին փոխադրելու ։ Ապա երբոր Գրիգոր Թ . կաթուղիկոս ընտրեցաւ 'ի Սիս, Հայաստանու առաջնորդները հրաւիրեցին զԳրիգոր, որ երթայ Էջմիածին նստի . բայց երբոր նա չուզեց երթալու, ժողովք ըրին ու միաբանութեամբ օծեցին զայս Կիրակոս կաթուղիկոս Հայոց յԷջմիածին 'ի 1441, որուն մինչև ցայժմ կայ յաջորդութիւնը ։ Աս կոնդակներ գրեց բոլոր աթոռներուն, և երկու տարի բարեկարգութեամբ կառավարեց ազգը․ բայց նախանձողները ձգեցին աթոռէն ու ընտրեցին ուրիշը ։ Իսկ նա քաշուեցաւ վանքի մը մէջ, վախճանեցաւ խաղաղութեամբ և ճգնութեամբ, որ մինչև 'ի մահը կաթուղիկոսի անուամբ կը պատուէին․ վասն զի էր միաբանասէր և ջատագով ուղղափառութեան ։

ԿԻՐԱԿՈՍ վարդապետ Գանձակեցի, պատմաբան, էր անուանի աշակերտ Վանական գերիմաստ վարդապետին, որուն հետ գերի ընկաւ Թաթարներուն ձեռքը, որ ապա հնարքով ազատեցան ։ Կիրակոս գնաց Գետիկ վանքը նստաւ, և գրեց պատմութիւն Հայոց սկսեալ Լուսաւորչէն մինչև իր օրը․ ուր վախճանեցաւ 'ի 1273 ։

ԿԻՐԱԿՈՍ վարդապետ էր աշակերտ Գրիգորի Վկայասիրին առաւել բանիբուն, որ ուղղագրեց Յովհաննու աւետարանին մեկնութեան թարգմանութիւնը, և վախճանեցաւ 'ի 1127 ։

ԿԻՐԱԿՈՍ Երզնկացի էր երգաբան վարդապետ 'ի ԺԵ դարու, որ շատ խրատական ոտանաւորներ շարադրեց հասարակ ոճով․ նաև ըստ ոմանց սորա է կամ՝ վերնոյն ասացեալ շարականը “ Արևելք Գերարփին ” ։

ԿԻՐԵՂ Աղեքսանդրացի, որ է Մեծն Կիւրեղ հայրապետ Աղեքսանդրի, ազնուազարմ, նստաւ պատրիարգ յԱղեքսանդրիա 'ի 412 · շատ անուանի եղաւ իմաստութեամբ և սրբութ՟բ, յաղթահարելով գրով և վարդապետութեամբ ամէն մոլորեալ աղանդաւորները · այլ առաւել քաջ ախոյեան կայնեցաւ Նեստորի դէմ երբոր սրբազան պապին կողմանէ գլուխ նստաւ Եփեսոսի սուրբ ժողովին ։ Նաև միշտ գլխահար եղաւ նեստորականներուն, մինչև որ ամէնքն ալ դատապարտելով կորան ։ Նոյն սուրբն Կիւրեղ խոհեմութ՟բ կառավարելով իր աթոռը՝ շատ նեղութիւն ալ քաշեց հակառակասէր նախանձոտներէն · բայց յաղթեց ամենուն համբերութեամբ և իմաստուն գրուածքով ։ Շատ հոգելից և վսեմ է գիրքն Պարապմանց և Գանձուց, Ճառից, Նամակաց, և այլն, որ հայերէն ալ թարգմանած են ։ Եւ ահա այսպիսի սքանչելի սրբութեամբ 'ի 444 փոխեցաւ սուրբ Կիւրեղ առ Քրիստոս, զոր կը տօնեն ամէն եկեղեցիք ։

ԿԻՒՐԵՂ Երուսաղէմացի և Երուսաղէմայ հայրապետ, էր եկեղեցւոյ տասուերկու վարդապետաց մէկը, ժամանակակից Կոստանդիանոսի և Թէոդոսի, սնեալ յԵրուսաղէմ ։ Որ ձեռնադրեալ քահանայ 'ի սրբոյն Մաքսիմոսէ եղաւ քարոզ բանին Աստուծոյ լուսաւորելով զերեխաները և յաղթահարելով մոլորեալները զօրաւոր աստուածաբանութեամբ, որով շարադրեց աստուածիմաստ գիրքը Կոչումն ընծայութեան ։ Այս սուրբ հայրապետը վասն մեծ առաքինութեան և իմաստութեան ամենուն պատկառելի եղաւ և ցանկալի, մինչև ընտրեցին պատրիարգ Երուսաղէմի, որ այնչափ պայծառացուց ուղղափառ հաւատքը կշտամբելով արիոսական հերձուածողները, որք մինչև կեղծաւոր հնարքներով քշել տուին զերանելին։ Իսկ ապա Կոստանդինուպօլսոյ ժողովքին վճռովը նորէն հաստատուեցաւ իր աթոռը, և շատ մեծամեծ գործքերով պայծառացուց եկեղեցին՝ լուսաւորելով հեթանոսներն ու Հրէաները։ Այս հայրապետին օրն եղաւ հրաշալի երևումն լուսափայլ խաչին երկինքը և այլ սքանչելի նշան վասն հաստատութեան սուրբ հաւատոյ, ինչպէս որ ինքը կը գրէ առ Կոստանդ այլամիտ կայսրն պանծալի վարդապետութեամբ, որ հին ատենը թարգմանեցին հայերէն, և մինչև հիմա ժամերգութեան մէջ կը կարդանք Երևման խաչին տօնին օրը։ Իսկ երանելոյն առ Աստուած փոխումն եղաւ յամի 386, և տօնեցաւ ամէն քրիստոնէից։

ԿԻՒՐԵՂ. հայրապետ, ծերագոյն, էր Հրէից ազգէն Յուդա անուամբ, որ Աննա մօրը հետ կը բնակէր յԵրուսաղէմ։ Երբոր դշխոյն Հեղինէ գնաց յԵրուսաղէմ սուրբ խաչը գտնելու՝ Հրէաները այս Յուդան առջևը հանեցին իբր առաւել տեղեակ Գողգոթայի տեղերուն, որ և կը յայտնէր ճշմարտութեամբ ինչ որ գիտէր։ Իսկ երբոր պատուական խաչը գտնուեցաւ հրաշքով՝ հաւատաց Յուդա և մօրը հետ մկրտեալ անուանեցաւ Կիւրեղ, և ձեռնադրեցաւ յետոյ եպիսկոպոս Պաղեստինու և Երուսաղէմի աթոռին։ Ապա երբոր Յուլիանոս Ուրացողն գնաց Երուսաղէմ, դատեց Կիւրեղ և Աննա վասն սուրբ հաւատոյ. յետոյ կտրեց աջ ձեռքը Կիւրղին, և բերանը հալած կապար լեցուցին ու կրակի վրա պառկեցուցին, ծեծելէն և ուրիշ տանջանքներէն ետքը գեղարդեամբ նահատակեցաւ քաջութեամբ յամի 362 ։ Իսկ երանուհին Աննա մաղերէն կախեցին ու քերթեցին մարմինը մինչև ցոսկորները, որ նոյն տանջանքին մէջ աղօթելով աւանդեց հոգին . որոնց տօնը միատեղ կը կատարեն եկեղեցիք ։

Այնպէս քաջազօր առնէ շնորհք երկնային
  Զծերս և զկանայս ձօնել զկեանս անգին,
  Ի սէր հաւատոյ 'ի սէր Բարձրելոյն ,
  Մերժել զանցաւորս շահել զգանձն անհուն ։
Այս շնորհք և փառք գոն քաջ մրցողաց
  Թէ ժրաջան յուսով յաղթեն ոսոխաց .
  Քանզի քաջայոյք որչափ թոյլ անզօր
  Բուռն յափշտակեն զպսակն երկնաւոր ։

ԿԻՒՐՈՍ քաջազօր արքայ Պարսից ծնաւ 599 ամօք Յիսուսէն առաջ 'ի Մանդանեայ դստերէն Աժդահակայ Մարաց արքային, որ երազին մէջ տեսեր էր թէ այս աղջկէն եղած տղան պիտի տիրէ իր թագաւորութեանը ։ Անոր համար Կիւրոս ծնածին պէս հրամայեց Արբակ զօրավարին՝ որ տանի տղան անտառը ձգէ . ան ալ տարաւ տուաւ թագաւորական հովուին ։ Որուն կինը նոյն օրերը մեռած զաւակ մը ծներ էր, առաւ տղան մեծցուց . և այսպէս մեծնալով զօրացաւ Կիւրոս, ու սկսաւ հովիւներուն հետ պատերազմելով անուանի ըլլալ ։ Աժդահակ երբոր լսեց Կիւրոսին քաջութիւնները, և իմացաւ որ Մանդանեայ աղջկէն ծնած տղան է, կատղեցաւ Արբակին դէմ ու նորա որդին սպաննեց ծածուկ և միսը հօրը կերուց ։ Իսկ Արբակ չարաչար նեղացած ոտք հանեց զԿիւրոս Աժդահակին դէմ և եղաւ անոր զօրավարն, ու միատեղ զարկին կոբուսին Աժդահակը առին և տիրեցին Թագաւորութեանը 559 ամօք Յիսուսէն առաջ ։

Աստի Կիւրոս եղաւ ոչ միայն առաջին Թագաւոր Պարսից տիրելով բոլոր աշխարհին , այլ և քեռին հետը միացուց , ու քաջութե̃ տիրեց բոլոր Ասիային , Արաբիային , Բաբելոնին , և այլոց ։ Այս համատարած աշխարհքները հարիւրքսան գաւառ բաժնեց քեռուն հետ միատեղ , որ էր որդի Աժդահակայ կոչեցեալ Կիաքսար և Դարեհ ։ Կիւրոս այսպիսի յաջողութեան մէջ հրաման հանեց որ բոլոր Հրէաները եօթանասուն տարուան գերութենէն դառնան յԵրուսաղէմ՝ տալովնոցա առաջնորդ Զօրաբաբէլ , ինչպէս որ շատ առաջ գուշակեր էր Եսայի · զորօրինակ “ Այսպէս ասէ Տէր Աստուած ցօծեալն իմ ցԿիւրոս , զորոյ կալայ զաջոյ ձեռանէ նորա հնազանդեցուցանել առաջի նորա զազգս ,, , և այլն ։ Կիւրոս ըստ հնախօսից յետ մեծամեծ յաղթութեանց և աշխարհակալութե̃ ըստ խոստման Տեառն՝ շինել տուաւ Երուսաղէմի տաճարն Աստուծոյ , որ այնչափ յաջողութիւն տուաւ իրեն · և մեր Տիգրան Թագաւորն ալ աջակից անելով իրեն աւելի փառաւորեցաւ , ինչպէս կը յիշէ Երեմիա · “ Առէք նշան 'ի վերայ երկրիդ , հրաւիրեցէք 'ի վերայ նորա զգունդս · պատուէր տուք յինէն Արարատեան Թագաւորութեանցն և Ասքանազեան գնդին ,, ։ Կիւրոս երեսուն տարի յաջողութեամբ աշխարհակալեց ու եօթանասուն տարուան մեռաւ 529 ամօք Քրիստոսէն առաջ ։

ԿՂԵՄԷՍ Ա · Հռոմայեցի էր աշակերտ Պետրոսի և վաստակակից Պօղոսի · Նստաւ չորրորդ քահանայապետ Հռոմայ յամի 93, և անդադար առաքեալներուն հետ կը քարոզէր և կը լուսաւորէր անհաւատները, մինչև բանտակից և չարչարակից եղաւ նոցա։ Իսկ զեկեղեցին Քրիստոսի այնպէս բարեկարգութեամբ գեղեցիկ կառավարեց և ծաղկեցուց՝ որ կռապաշտները նախանձելով բռնեցին շատ չարչարեցին, և յետոյ աքսորեցին քաջ հովուապետն 'ի Քերսոնէս Խրիմի։ Ուր գտաւ շատ քրիստոնեաներ, որ հաւատքի համար աքսորուած էին, ու լեռը փորելով քարանձաւաքաղաք կը շինէին տներով եկեղեցիներով, և այլն։

Սուրբ Կղեմէս հոն ոչ միայն զօրացուց հաւատացեալները, այլ և հրաշալի վարդապետութբ̃ բոլոր Խրիմի կղզին լուսաւորեց հրաշքներով և ջուր բղխեցընելով ժայռին գլխէն։ Ուստի արքունի վերակացուները բռնեցին խարիսխ նաւու կապեցին վիզն ու ծովը նետեցին յամի 102․ իսկ սուրբ մարմինը հրաշքով գտնուեցաւ երբոր ջուրը քաշուելով ցամաքն կ'երևնար տարւէ տարի․ որ եղաւ ուխտատեղի։ Այս սուրբ քահանայապետին կան շնորհալից գրուածքը և թղթերը, որ հին ատենը կը կարդային եկեղեցիներուն մէջ․ ինչպէս կը վկայեն հին սուրբ Հարք։ Սորա օրը շատ պայծառացաւ հաւատքը և եկեղեցական պաշտօնները։

ԿՂԵՄԷՍ Բ․ Սաքսոնիացի եպիսկոպոս, ընտրեցաւ քահանայապետ եկեղեցւոյն Քրիստոսի յաթոռ սրբոյն Պետրոսի 'ի 1046․ որ լաւ սահմանադրութեամբ բարեկարգեց եկեղեցին պատժելով սիմոնականները, և այլն․ սակայն յերկրորդ տարին փոխեցաւ առ Տէր։

ԿՂԵՄԷՍ Գ. Հռոմայեցի Պաւլինոս կարդինալ՝ ընտրեցաւ հայրապետ Հռոմայ 'ի 1187, որ մեծ քաջութեամբ և իմաստութեամբ խաղաղացուց ժամանակին խռովութիւնը, հրատարակելով զկնդակ խաչակիր զօրաց այլազգեաց դէմ: Նոյն 'ի 1189 գրեց նամակ առ Գրիգոր Գ. կաթուղիկոս Հայոց, և առ մեծն Լեւոն թագաւոր Կիլիկիոյ. որպէս զի խաչակիրներուն օգնական ըլլայ երբոր իրեն սահմանը հասնին: Որ և այսպիսի բարեկարգութե̃բ վախճանեցաւ 'ի 1191:

ԿՂԵՄԷՍ Դ. Գաղղիացի, ամբարձաւ յաթոռ սրբոյն Պետրոսի 'ի 1265 ընդդէմ կամացն. զի էր խոնարհ քաղցրաբարոյ և մեծիմաստ: Որ ամէն մեծամեծ գործքերու մէջ երևելի եղաւ և փառաւորեց քրիստոնէութիւնը լաւ հոգացեալ ընդհանուր եկեղեցին: Լսելով թէ Հեթում թագաւորն Հայոց մեծ օգնութիւն էր ըրեր Լատինացւոց յԱնտիոք քաղաքը, գրեց իրեն նամակ օրհնութե̃ մեծ գովութեամբ: Ապա երբոր գնաց 'ի Վիտերբիոն՝ հասաւ իրեն վախճան կենաց 'ի 1268:

ԿՂԵՄԷՍ անուամբ չորեքտասան քահանայապետք Հռոմայ յաջորդեցին յաթոռ ս̃բյն Պետրոսի քանի մը դարու մէջ: Որոնք մեծ իմաստութեամբ և քաջութեամբ կառավարեցին զեկեղեցին Քրիստոսի և ծաղկեցուցին ուղղափառ հաւատքը, հեռաւոր աշխարհներ ղրկելով քարոզիչներ և իմաստուն վարդապետներ մինչև 'ի Հնդաստան և 'ի Չինումաչին: Մանաւանդ Այլազգիներուն զօրացած ժամանակը, նաև Եւրոպայի ալեկոծութեանց ատենը այս երջանիկ հայրապետները մեծապէս քաջացան ու եկեղեցին խաղաղութեան և սրբութեան մէջ պահեցին աստուածային շնորհօք, ինչպէս որ պատմերենք կարգաւ Սրբազան պատմութեան մէջ ։

Աստուածընտիր գլուխք հիմունք Սիոնի
Ծնեցան ընդդէմ թշնամեաց խաչի ։
Յուսով հաւատով քաջ հաստատեցին
Զհիմն եկեղեցւոյ ըստ խոստման Փրկչին ։
Ջոկք անհաւատից և գունդք բանսարկուին
Յանկ մաքառեցան ընդ անշարժ վիմին .
Բայց յետս ընկրկեալ անդէն կորացան ,
Յաղթեաց Ճշմարիտն և կայ անկործան ։

ԿՂԵՄԷՍ եպիսկոպոս Անկիւրիոյ էր Դիոկղետիանոսի ժամանակը աբեղայ, որ հեթանոսաց տղաքը կերակրելով կը սորվեցընէր քրիստոնէութիւն ու կը մկրտէր ։ Ապա քսան տարւան ձեռնադրեցաւ եպիսկոպոս քաղաքին, ուր համարձակ քարոզելով զՔրիստոս մատնուեցաւ կռապաշտ դատաւորին ձեռքը, որ շատ չարչարելէն ետև զսուրբը կայսեր ղրկեց 'ի Հռոմ. որ տանջեց անխւներով զերանելին ու բանտը ձգեց ։ Իսկ նա հրաշքով շատ հոգի լուսաւորեց բանտարգելներէն, որ նահատակեցան . որոնցմէ միայն Ագաթանգեղոս անուանով մէկը մնաց իրեն չարչարակից և բանտակից ։ Ասոնք որչափ առաւել տանջեցան, այնչափ աւելի զօրացան հրեշտակէն ու շատ հեթանոսներ ալ լուսաւորեցին հրաշագործութեամբ . վասն զի ոչ կրակէն և ոչ գազաններէն վնասեցան ։ Ապա շատ զանազան տանջանքներէն և հրաշքներէն ետև գլխատեցան . իրենց հետ նաև երկու սարկաւագ վկայեցին, և մեծ պատուով թաղեցան։ Սուրբ Կղեմէսի տապանը անպակաս հրաշքներով ուխտատեղի է մինչև ցայժմ Անկիւրիոյ սուրբ Խաչի եկեղեցնայ մէջ։

ԿՂԵՄԷՍ Աղեքսանդրացի էր ներհուն վարդապետ եկեղեցւոյ՝ առաջ հեթանոս, այլ յետոյ վարժելով պղատոնական ուսմամբ միտքը լուսաւորեցաւ և ճշմարտութեան ետևէն ինկնալով աւետարանին հաւատաց և մկրտեցաւ։ Յամի 189 աշակերտելով սրբոյն Պանտենոսի վարժապետին համալսարանին Աղեքսանդրիոյ, ապա անոր տեղն անցաւ ու կը հրահանգէր նորադարձ հեթանոսները. և յետոյ քահանայացաւ՝ ունելով երևելի աշակերտներ, ինչպէս մեծն Որոգինէս, Աղեքսանդր հայրապետ, և այլն։ Իսկ Սևերոսի կայսեր հալածանաց ժամանակը հոգելից նամակներով շատ զօրացուց եկեղեցականները և եկեղեցիները։ Նաև շարադրեց աստուածիմաստ գրեանք. գլխաւորքն են՝ ա̅ Յորդոր հեթանոսներուն դարձին համար. բ̅ Յաճախապատում՝ լեցուն տեղեկութեամբ. գ̅ Մանկածու գիրք հոգևոր ուսման. դ̅ Գիրք կրթութեանց, որոնց մէջ գեղեցիկ իմաստութեամբ և հմտութեամբ կը վարդապետէ վասն ողորմութեանն Աստուծոյ, վասն զօրութեան փրկագործութեան, և վասն քրիստոնէական սրբութեան։ Այսպէս գերիմաստն Կղեմէս թողուց եկեղեցւոյ յիշատակ օգտակար վարդապետութ̅ի կրօնի և բարոյականին, այլովքն հանդերձ։ Իսկ իր վախճանը եղած կը կարծուի յամի Տեառն 217։

ԿՂՈԴՈՎԷՈՍ էր առաջին քրիստոնեայ թագաւոր Գաղղիոյ և մեծահամբաւ աշխարհակալ, որ 'ի 481 յաջորդելով հօրը մեծամեծ քաջագործութ̃բ շատ զօրացաւ, մինչև հալածական ըրաւ Գերմանացի ասպատակները ։ Ապա 'ի 496 երբոր խիստ նեղեցաւ թշնամիներէն, խնդրեց օգնութիւն յաներևութէն Աստուծոյ, զոր կը պաշտէր իր թագուհին. և խոստացաւ թէ որ յաղթէ, քրիստոնեայ ըլլայ ։ Երբոր կատարեալ յաղթութեամբ հասաւ 'ի Հռէմս քաղաքը, դիմացն ելաւ սուրբ Հռեմիկիոս հայրապետն ու յիշեց իրեն քրիստոնեայ ըլլալու խոստմունքը, որ լսեր էր անոր զօրավարէն ։ Արքայն մէկէն ընդունեցաւ, և զօրքն ալ կըրթեց սուրբ հաւատքով, ապա ծննդեան օրը մկրտուեցաւ սուրբ հայրապետին ձեռքով ինքն և իրեքհազար զօրքն. որով փառաւորեցաւ անունն քաջութեամբ և աստուածպաշտութ̃բ ։ Երկրորդ տարին բոլոր մօտակայ ազգերը անձնատուր եղան թագաւորին. և 'ի 507 զարկաւ Ալարիկոս բռնաւոր արքայն Գոթաց սպաննեց. վերջը Փարիզ քաղաքն ըրաւ աթոռ թագաւորութեան, և 'ի 511 մեռաւ հօն քառասունըհինգ տարուան, որ երեսուն տարի թագաւորեց քաջութեամբ, և թաղեցաւ 'ի տաճարին Պետրոսի և Պօղոսի ։

ԿՈՄԻՏԱՍ կաթուղիկոս Հայոց էր գիտնական և սրբասէր առաջնորդ Գլակայ վանքին և եպիսկոպոս Տարօնայ. նաև փակակալ վկայարանին սրբոց Հռիփսիմեանց ։ Ապա 'ի 617 երբոր ընտրեցաւ կաթուղիկոս՝ մէկէն սկսաւ նորոգել նոյն վկայարանը. ուր գտաւ սրբոյն Հռիփսիմեայ տապանը կնքով սուրբ Լուսաւորչին և սուրբ Սահակայ Պարթևին կնքած · ուստի իւր կնիքն ալ զարկաւ անոնց քով տապանին վրա , որ ինը Թիզ և չորս մատ երկայն էր ըստ երկայնութեան սուրբ Հռիփսիմէին ։ Եւ ապա կանգնեց փառաւոր տաճար ու տապանակը դրաւ մէջը հանգոյց , և երգեց գերապանծ շարականը "Անձինք նուիրեալք" ։ Յետոյ քակեց փայտաշէն գմբէթը Էջմիածնայ կաթուղիկէին , ու քարաշէն ըրաւ ։ Նաև շատ շինութիւններ և բարեկարգութիւններ ըրաւ · գրելով իմաստալից կոնդակներ և նամակներ ալ , սիրելի եղաւ ազգին և ամենեցուն , այսպիսի խոհականութեամբ վարելով իշխանութիւնը ութը տարի՝ վախճանեցաւ 'ի 625 ։

ԿՈՄԻՏԱՍ քահանայ էր որդի տէր Մարտիրոսի աւագերիցու Քէօմիւրճեան , ծնեալ 'ի Կոստանդինուպօլիս յամի 1656 ։ Կոմիտաս մանկութենէն եղաւ բարեսնունդ և ուսումնասէր առաքինի · մինչ զի ձեռնադրեալ քահանայ կարգեցաւ աւագերէց եկեղեցւոյն սուրբ Գէորգայ , Մելքիսեդեկի ուղղափառ պատրիարգին օրը ։ Որուն քով Կոմիտաս կրթուելով եղաւ ճշմարիտ քարոզ ուղղափառութեան և ուսուցիչ բազմաց ։ Ապա 'ի 1707 երբոր մեծ հալածումն ելաւ ուղղափառաց դէմ · Տէր Կոմիտաս կալանաւորեալ , Եպարքոսին մատնուեցաւ , նաև ամբաստանուելով Թէ ժողովուրդը կը մոլորեցընէ · Եպարքոսն ալ ղրկեց մեծ դատաւորին , որ քննէ հասկընայ · իսկ դատաւորն կաշառքով կուրացեալ ըլլալով տուաւ վճիռ մահապարտութե՟ անոր և երկու աշխարհական ուղղափառաց ։ Եպարքոսը տեսնելով վճիռն՝ հրաման տուաւ գլխատման , բայց պատուիրեց դահճաց , որ յորդորէն տէր Կոմիտասը որ տաճկըննայ ու ազատի . իսկ երանելին և ոչ ականջ դրաւ , այլ սկսաւ Ամբիծք սաղմոսն ասել , և Յովհաննու աւետարանը կարդալ մինչև հասան գլխատման տեղը : Ուր դահիճը գլխատեց զերանելին տէր Կոմիտաս 'ի 25 հոկտ . 1707 շաբաթ օրը , և էր յիսուն տարւան : Իսկ երկու ընկերները զայն տեսնելով մարեցան ընկան . այլազգները մէկէն իրենց հագուստը հագցընելով կանչեցին թէ տաճկըցան , որոնք յետոյ փախան գնացին յԵւրոպա ապաշխարեցին : Իսկ երանելւոյն մարմինին վրա ծագեց պայծառ լոյս բուրելով հոտ անուշութե̃ , և մնաց անթաղ իրեք օր . Թէպէտ ուզեցին ծովը նետել , բայց Եպարքոսը հրաման տուաւ ազգականներուն որ թաղեն ըստ կարգի :

Այլ երբ արգիլուեցաւ ըստ օրինի թաղումն ընելու , Յունաց պատրիարգը քահանաներով և Մետրապօլիտներով հանդերձ եկեղեցական զարդուք՝ թաղել տուաւ փառաւորապէս Պալըխլի գերեզմաննոցը . գլուխը զատ առին պահեցին , որ վերջը Գաղղիոյ դեսպանը ընծայներով առաւ Յունացմէ և ամբողջ մարմնովը ղրկեց 'ի Գաղղիա : Թէպէտ սուրբ վկային գերեզմանը պարապ մնաց , բայց միշտ պայծառացաւ զարմանալի հրաշքներով , և է նշանաւոր ուխտատեղի ամենայն ազգաց ընծայելով նմա անուն սուրբ վկայի , և այլն : Կոմիտաս երանելին ունի գրած ա̃ Տօնացոյց Հայոց , Յունաց և Լատինացւոց համեմատութեամբ յօրինեալ 'ի գ̃ կարգս գաւազանաց 'ի 1690 , ունինք բուն իր ձեռնագիրը . բ̃ Ունինք իրեն գրած Նարեկացւոյն աղօթքները և Լամբրոնացւոյն մեկնութիւն պատարագին և ատենաբանութիւնը . է՟ Պատմութիւն խռովութեանց Կոստանդնուպօլսի . նաև ունինք յարգանօք երանելւոյն փիլոնը և ուրիշ նշխարքը :

Օծեալն Աստուծոյ նահատակ բարի
Դիմէ հաւատով յասպարէզ մարտի .
Ի սէր ճշմարտին ըղկեանս նուիրեալ
Մերձեալ է առ Տեառն ընդ հետ լուսափայլ :
Ճշմարիտ զաւակ սուրբ Լուսաւորչին
Տայ զորկանս առնու զանեղծ թագ Փրկչին .
Թող ողբան ոսոխքն յարտաքին խաւար
Սա ցնծայ յանշէջ լոյսն աստուածավառ :

ԿՈՆՈՆ քահանայապետ սուրբ եկեղեցւոյն Քրիստոսի էր Թրակացի , այր առաքելաշնորհ և կատարեալ իմաստութեամբ և առաքինութեամբ , որ 'ի 686 ընտրեցաւ 'ի գահ սրբոյն Պետրոսի . և ջանաց ջնջել զհեթանոսութիւն Փրակոնիոյ և ծաղկեցընել քրիստոնէութիւնը : Ահա այս ջանքին մէջ 'ի հետևեալ ամին փոխեցաւ առ Տէր երջանիկ հայրապետն :

ԿՈՍՏԱՆԴ Քլոռոս , այս ինքն շէկ , էր որդի մեծատան , քաջ և խելացի զօրական Կայսեր , որ 'ի 292ին քաջագործութեցը համար Դիոկղետիանոսէն ընտրեցաւ Կեսար , իսկ 'ի 305 եղաւ արևմտեան ինքնակալ : Սա մեծ խնամք ունէր ժողովուրդին վրա և կը սիրէր քրիստոնեաները և քրիստոնէութիւնը : Երբեմն կամաւ ձայն հանեց թէ քրիստոնեայ զօրավարները պիտի հանէ զօրքէն դուրս . ուր երբ թուլահաւատներն ուզեցին ուրանալ հաւատքը՝ վռընտեց զանոնք ըսելով . " Թէ որ իրենց

Աստուծոյն անիրաւ եղան, ապա ինչպէս կրնան մարդու հաւատարիմ ըլլալ,, ։ Իսկ որոնք որ մնացին սուրբ հաւատքին մէջ ճոխացոյց փառօք. և ինքն 'ի 306 մեռաւ Անգղիա, բայց մեռնելէն առաջ անուանեց Կեսար կամ յաջորդ զմեծն Կոստանդիանոս, որ ծնած էր Հեղինայէն ։

ԿՈՍՏԱՆԴ կամ ԿՈՍՏԱՆԴՈՍ էր միջին որդի մեծին Կոստանդիանոսի, որ եղաւ Կեսար 'ի 324, և առաւ իրեն կին Եւսեբիա ապականեալը արիոսեան աղանդով ։ Յետ մահուան մեծին Կոստանդիանոսի ընտրեցաւ Կոստանդ կայսր արևելեան, և շատ երևելի իշխանաց և ազգականաց կորստեանը պատճառ եղաւ ։ Ասոր համար սուրբն Աթանաս երեսը զարնելով զայս կատարածը՝ չարաչար կշտամբեց զԿոստանդ ։ Նա ոչ միայն էր անգութ և չարակամ, այլ և մոլորեալ արիոսեան աղանդով, հալածող ուղղափառաց և զօրացուցիչ հերձուածողաց. ուստի եղաւ անարժան զաւակ մեծին Կոստանդիանոսի ։ Թէպէտ տեղ տեղ ըրաւ յաղթութիւն և մեծցուց իշխանութիւնը, բայց չեղաւ մեծանուն, այլ ցածանուն. և արիոսական անուամբ անարգեցաւ մինչև մեռաւ 'ի 361, որ թագաւորեց քսանւիրեք տարի ։

ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍ Մեծ Փլաբիոս էր բազմայաղթ ինքնակալ կայսր Հռոմայեցւոց, որդի Կոստանդ Քլորոսի և Հեղինէին, ծնեալ 'ի 274 ։ Նա 'ի մանկութենէ լաւ կրթուելով սիրելի եղաւ Դիոկղետիանոսի կայսեր, և յետ երևելի լաւութեանց յաջորդեց հօրը յամի 303, և սկսաւ քաջագործութեամբ խաղաղ պահել արեւմտեան կողմն թագաւորութեան. մինչեւ մականուանեցաւ Օգոստոս. եւ առաւ իրեն կին զՓաւստինա դուստր Մաքսիմիանոսի։ Ապա երբոր կ'երթար 'ի Հռոմ պատերազմելու Մաքսենտիոսին դէմ, տեսաւ կէսաւուր ժամանակը երկինքը լուսատեսիլ նշան խաչի՝ այսպիսի գրութեամբ. «Այս նշանովս պիտի յաղթես»։ Եւ այս ձեւով սուրբ նշանին ձեւացուց իրեն դրօշակ ու յաղթեց թշնամւոյն, եւ ամէն տեղ զօրանալով յաղթական եղաւ. վասն զի միշտ կը ջանար բարեգթութբ̃ եւ արդարութբ̃ կարգաւորել տէրութիւնը, եւ ժողովուրդը նախախնամել։ Մինչեւ ապա Լուսաւորեալ սուրբ Սեղբեստրոս հայրապետէն Հռոմայ՝ հաւատաց բոլորով սրտիւ Փրկչին, եւ եղաւ առաջին կայսր յայտնապէս քրիստոսադաւան։

Անկէ ետեւ միշտ պաշտպան եղաւ քրիստոնէութեան եւ ուղղափառութեան ընդդէմ հեթանոսաց եւ հերետիկոսաց. նաեւ տէր կենալով զօրացոյց՝ Նիկիոյ սուրբ ժողովքին հայրապետները Արիոսի դէմ, եւ փառաւորեց նիկիական հաւատքը։ Եւ յետ անթիւ մեծամեծ գործողութեանց եւ յաղթութեանց անհաւատից դէմ տիրելով արեւելեան եւ արեւմտեան աշխարհաց, եւ ջնջելով հեթանոսաց աղանդները, փառաւորեցաւ աստուածային յաջողութեամբ։ Յետոյ գերապանծ նորոգելով Բիւզանդիոն մեծագործ շինութեամբ՝ անուանեց իր անուամբն Կոստանդինուպօլիս. եւ հոն փոխադրելով կայսերական գահն ըրաւ աշխարհաքարոզ քաղաքամայր։ Դարձեալ բարեպաշտութեամբ եւ երկիւղածութեամբ կանգնեց ամէն տեղ պայծառ եկեղեցիներ, վկայարաններ, վանքեր եւ աղքատանոցներ այլովքն հանդերձ ։ ՝Նոյնպիսի բարեխնամութեամբ մեծարեց և պատուեց զսուրբ Լուսաւորիչն մեր և սուրբ Թագաւորն Տրդատ, երբոր գնացին Հռոմ տեսնուեցան կայսեր և սուրբ Սեղբեստրոսի հետ վասն հաստատութեան սուրբ հաւատոյ ։ Այն բանէն ետև մեծն Կոստանդիանոս փափաքելով երկնային թագաւորութեան մկրտուեցաւ, վասն զի դեռ չէր մկրտուած, և քիչ ատենէն փոխեցաւ առ Թագաւորն Թագաւորաց ՝Քրիստոս ՝Նիկոմիդեայի կողմերը վաթսունիրեք տարուան յամի 337, որ թագաւորեց փառաւորապէս երեսունիրեք տարի ։ Մ՝ինչև հիմա կեցած է այն մեծ փառաւոր կճեայ աւազանը Լատերանու եկեղեցւոյ մէջ, ուր մկրտեցաւ ՝Կոստանդիանոս կայսր ։

Տիեզերակալ մեծըն Կոստանդին
Պանծացաւ 'ի փառս նշանաւ խաչին.
Կանգնեաց զայն 'ի գլուխ ընդ ոլորտս երկրի
Կացոյց ըզկռամոլս պաշտօնեայս երկնի ։
Թ՝է յաղթել տենչաս ոսոխաց չարաց
Մ՝ըտանել 'ի փառս անմահից կենաց,
Դ՝իր զայն 'ի ճակատ փրկագործ նշան
Գ՝եր 'ի վեր պանծաս կայսերաց համայն ։

ԿՈՍՏԱՆԴԻՆ անուամբ տասն կայսերք Յունաց նստան 'ի Կոստանդինուպօլիս, սկսեալ 'ի Ե դարէ մինչև 'ի ԺԵ դար, որոնք վայելելով պանծալի մեծին Կոստանդիանոսի արդիւնքը, անոր անուամբն կը պարծէին ։ Սակայն իրենք զուրկ ըլլալով անոր արդարակորով քաջութիւններէն չեղան անուանի, և հետ զհետէ տկարացուցին կայսերական շքեղ պետութիւնը ։ Ամենք գոլով թուլամորթ և նախանձոտք մէկզմէկ կորուսին, և ոմանք չար աղանդով ապականեցան, ինչպէս էր Կոստանդին Դ. Կոպրոնիմոս, որ 'ի Ը դարուն յաջորդեալ հօրը Լևոնի պատկերամարտ Իսաւրացւոյ, և հալածելով սուրբ պատկերքներն ու նշխարքները խռովեց զեկեղեցին և իւր տէրութիւնը, մինչև խորշակահար պատժով կորաւ:

Կոստանդին Ե. մօրը հետ նստաւ կայսր, և խորհրդով Ադրիանոսի Ա. պապին Հռոմայ գումարել տուաւ Նիկիոյ Բ. ընդհանուր ժողովը 'ի 787 պատկերամարտից դէմ, որք նզովեալ կորան. և սուրբ պատկերքներն յարգեցան:

Կոստանդին Զ. Պերփերուժէն որդի Լևոնի կայսեր, յաջորդեց հօրը 'ի Ժ դարուն. և գթալով Հայոց վրա գրեց թուղթ մխիթարութե՟, նաև կանչեց զԱշոտ Բ. Բագրատունին պսակեց թագաւոր Հայոց և մեծ պատուով ճամբեց: Իսկ ինքն անարի ըլլալով յանձնեց կայսերութիւնը աներոջը Ռոմանոսի ձեռքն ու ուսումնասիրութեամբ քանի մը գիրք շարադրեց և այնպէս մեռաւ 'ի 959:

Կոստանդին Ժ. Բաղէոլոգ՝ եղաւ ետքի կայսր արևելեան 'ի ԺԵ դարուն, որ անխելք կառավարութեամբ այնչափ տկարացուց կայսերութիւնն որ 'ի 1453, մայ. 29. չարաչար յաղթուեցաւ Ֆաթիհ սուլթան Մէհէմմէտէն ու կորաւ ինքն ալ և մեծին Կոստանդիանոսի 1123 տարուան թագաւորութիւնն ալ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ ազգաւ Ասորի ընտրեցաւ քահանայապետ Հռոմայ 'ի 708, որ ջանահնար եղաւ ծաղկեցընել սուրբ հաւատքը. ուստի Ակովլտիացիք լուսաւորեալ հաւատացին 'ի Քրիստոս: Յուստինիանոս Բ. կայսրն մեծ աղաչանքով խնդրեց, որ երթայ Սրբազանը արեւելք խաղաղացընէ Յունաց խռովութիւնը։ Գնաց 'ի 710, եւ արքայավայել փառօք տեսնուեցաւ կայսեր հետ 'ի Նիկիա, եւ 'ի կիրակին երբոր պատարագեց քահանայապետն՝ կայսրն հաղորդեցաւ անոր ձեռքով։ Ապա երեք ամիսէն ետեւ շատ բարեկարգութիւն ընելով խաղաղացուց զամէնքը միաբանական սիրով, ու նոյն փառքով դարձաւ Հռոմ։ Իսկ 'ի 715 երբոր գեղեցիկ կը կարգադրէր զեկեղեցին Քրիստոսի՝ հասաւ կենաց վախճանն ու փոխեցաւ առ Աստուած։

ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա. իշխանապետ Հայոց Կիլիկիոյ՝ յաջորդեց Ռուբէնի Ա. 'ի 1095, եւ քաջութեամբ տիրեց քանի մը Յունաց տեղերուն, եւ Վահկայ ամրոցին՝ որ ըրաւ իրեն իշխանանիստ։ Խաչակիր զօրաց մեծ օգնութիւն ըրաւ եւ զօրացուց սոյն ժամանակը, որոնք պատուեցին զինքը Ասպետութեամբ եւ Հիւպատոսութեամբ ազգին վրայ. եւ մեռաւ 'ի 1099 ամին, երբոր առին խաչակիրներն Երուսաղէմ. որուն յաջորդեց իր որդին Թորոս Ա.

ԿՈՍՏԱՆԴԻՆ Բ. Թագաւոր Հայոց որդի Լեւոնի Գ. հաստատուեցաւ հօրմէն իշխան մեծ ամրոցին Կապանոյ։ Պզտի եղբայրը Սմբատ երբոր ապստամբեցաւ Հեթում Թագաւորին դէմ ու կուրացուց, զԿոստանդին ալ բռնեց բանտը դրաւ եւ ինքն թագաւորեց 'ի 1298։ Ապա երբոր հրաշքով Հեթումին աչքը բացուելով նորէն նստաւ Թագաւոր՝ Կոստանդին եւ Սմբատ անցան 'ի Կոստանդինուպոլիս, եւ հոն մեռան։

ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ. Թագաւոր Հայոց. Տ. Ճիւան։

ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ. Թագաւոր Հայոց էր հօրմէն Լատին, և միշտ Թղթակցութիւն ընելով Լատինացւոց հետ ջանացաւ ազգը խաղաղութեան մէջ պահել։ Ասկէց կասկածելով Եգիպտոսի ամիրայն ելաւ Կոստանդինին վրայ. իսկ նա փութով զօրք ժողվեց ու քաջութեամբ զարկաւ հալածեց Այլազգինները և խաղաղացաւ երկիրը մինչև 'ի մահն 'ի 1359, որ տասներութ տարի Թագաւորեց խոհեմութեամբ։

ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա. կաթողիկոս Հայոց Բարձրբերդցի, նստաւ 'ի 1220 ամին, և ղրկեց նուիրակ 'ի Հռոմ և առաւ նամակ օրհնութե՟ 'ի պապէն։ Ապա ժողով գումարեց 'ի Սիս քաղաքը, և հաստատեց Վերջին օծման խորհուրդը, ինչպէս որ առաջ՝ալ կար ազգին մէջ։ Դարձեալ 'ի 1250 ազգային ժողովով հաստատեց կաթողիկոսը "Զբղխումն Հոգւոյն սրբոյ 'ի Հօրէ և յՈրդւոյ". և զայս ուղղափառ դաւանութիւնը ազգին՝ գրեց իմացուց Սրբազան պապին։ Այսպէս բարեխնամութեամբ կառավարեց աթոռը քառասուներեօթ տարի, և վախճանեցաւ խոր ծերութեամբ 'ի Հռոմկլայ 'ի 1267։

ԿՈՍՏԱՆԴԻՆ Բ. կաթողիկոս Հայոց էր արքեպիսկոպոս Կեսարիոյ, և նստաւ 'ի Սիս յամի 1287։ Բայց իրեք տարիէն ետև Հեթում արքայն գժտելով աքսորեց ու տեղը ուրիշը դրաւ։ Ապա 'ի 1307 նորէն նստաւ Կոստանդին կաթողիկոս, և ջանացաւ որ

Սսայ ժողովին կանոնները պահել տայ ազգին՝ Թագաւորին հրամանաւ ։ Ասկէց մեծ խռովութիւն և վնաս ծագեցաւ ազգին մէջ, այնչափ որ Կոստանդին կաթուղիկոս սրտին ցաւէն մեռաւ տրտմութեամբ տասնըվեց տարի աթոռ նստելէն ետև ։

ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ. կաթուղիկոս Հայոց յաջորդեց վերինին ՚ի 1323, և ազգասիրութեամբ գնաց ՚ի Հալէպ առ Նասր ամիրայն Եգիպտոսի, և իմաստուն ճարտարաբանութեամբ հաշտեցոյց Լևոն արքային հետ. և դարձաւ ՚ի Սիս, ու ՚ի 1326 վախճանեցաւ խաղաղութբ՟ ։

ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ. կաթուղիկոս Հայոց յաջորդեց Մեսրոպայ կաթուղիկոսին ՚ի 1372, բայց կարճօրեայ ըլլալով երկու տարիէն ետև վախճանեցաւ առանց ազգաշահ նշանաւոր գործառնութեան ։

ԿՈՍՏԱՆԴԻՆ Ե. կաթուղիկոս Հայոց նստաւ ՚ի 1430, որ միաբանասէր ըլլալով հրաւիրեցաւ երթալ ընդհանուր ժողովն Փլորենտիայի ։ Ուր ղրկեց չորս նուիրակ, որ ուշ հասան ՚ի 1439. ժողովը լմննալէն ետև. բայց Յոյնք և Հայք միաբանեցան Լատին եկեղեցւոյ հետ. նաև ժողովին սահմաններն ալ հասուցին Հայոց, և նոյն տարին վախճանեցաւ Կոստանդին ։

ԿՈՍՏԱՆԴԻՆ իշխան Հայոց ազգական Լևոնի արքային՝ մականուանեցաւ Աւագ պարոն ։ Լևոն Թագաւոր մահուան ժամանակը յանձներ էր այս Կոստանդին իշխանին, որ Զապէլ դուստրն Թագաւորեցընէ. և երբոր դշխոյն էրիկը մեռաւ առաւ իրեն որդւոյն Հեթմոյ Ա։ Որոնք միաբան Թագաւորեցին, ինքն ալ անուանեցաւ Թագաւորահայր. մեծ որդին ըրաւ սպարապետ, և կրտսերը՝ փոխարքայ, և չերրորդն Բարսեղ՝ ձեռնադրել տուաւ արքեպիսկոպոս. իսկ ինքն Կոստանդին բարւոք ծերութեամբ և առաքինի անուամբ մեռաւ 'ի 1261։

Այս առաքինեաց բաժին ցանկալի
  Արդեամբք պճնելոց յերկինս և յերկրի.
  Բարեսէր կամօք յանձն եղեալ Փրկչին
  Պարեն մշտազուարճ յանմահից կային։
Իսկ արք ապիկարք՝ հողմակոծ անյոյս
  Ի գործ պխտանի հեղգ հոգեկորոյս.
  Ըստ անգործ Թշուառ վատնին ինքնատանջ,
  Ընդ 'ի չար տանջանս մատնին աննահանջ։

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍՈՅ ընդհանուր ժողովքն են չորս, որք գումարեցան այլ և այլ ժամանակ. ա̄ եղաւ յամի 381, ուր հարիւր յիսուն հայրապետք նզովեցին զՄակեդոն ուրացողն զաստուածութիւն Հոգւոյն սրբոյ։ բ̄ Եղաւ յամի 553 հրամանաւ Վիրգիլիոսի պապին հարիւր վաթսունըհինգ հայրապետաց. ուր դատապարտեցան Երեք գլուխքն մոլորական գրոց Թէոդորոսի Մոպսուեստացւոյ, և ինքն Թէոդորոս այլովքն հանդերձ։ գ̄ Եղաւ յամի 680 հարիւր եօթանասուն հայրապետաց, ուր դատապարտեցան միակամադաւան հերձուածողները։ դ̄ Եղաւ 'ի 869 ամին հարիւրերկու հայրապետաց, ուր նզովեցաւ Փոտ պատրիարգն ու նորէնհաստաւ Իգնատիոս օրինաւոր հայրապետն։

ԿՈՍՏԱՍ Փլաբիոս էր երրորդ որդի Մեծին Կոստանդիանոսի, որ 'ի 333 կոչեցաւ Կեսար, և յետոյ իրեն բաժին ընկաւ տիրել և ըլլալ կայսր արևմտեան ։ Սա պաշտպան եղաւ ուղղափառաց ընդդէմ Արիանոսաց , և կշտամբիչ Կոստանդ կիսարիոսեան եղբօրն . նա և սպառնալով հրամայեց՝ որ զսուրբն Աթանաս դարձընէ իր աթոռն Աղեքսանդրիոյ ։ Իսկ 'ի 347 գումարել տուաւ ժողովն Սարդիկոյ ընդդէմ Դոնատեան հերձուածողաց . ուստի մեծապէս գովելի եղաւ ուղղափառներէն ։ Բայց 'ի 350ին անօրէն ապստամբներէն աղէտալի մահուամբ վախճանեցաւ երեսուն տարեան ։

ԿՈՐԻՒՆ վարդապետ , անուանեալ այլ սքանչելի , էր աշակերտ սրբոց Թարգմանչաց , որ բաց 'ի թարգմանութեանց գրեց սուրբ Մեսրոպայ վարքը 'ի խնդրոյ սրբոյն Յովսեփայ կաթողիկոսի ։ Ուր գեղեցիկ յարմարութեամբ կը պատմէ զլուսաւորութիւն ազգիս ուսմամբ 'ի ձեռն սրբոյն Սահակայ և Մեսրոպայ , որ ապա ձեռնադրեցաւ եպիսկոպոս . իսկ պատմութիւնն տպագրեցաւ 'ի վանս մեր 'ի Ս . Ղազար 'ի 1833 ։

ԿՈՒԱԴՐԱՏՈՍ սուրբ աշակերտն առաքելոց , համարի ըստ ոմանց նա , որ Յովհաննու յայտնութե՟ մէջ կը գրի Հրեշտակ Փիլադելփեայ եկեղեցւոյն ։ Սա քարոզութեամբ բանին Աստուծոյ մեծահռչակ եղեր էր Տրայիանոսի կայսեր օրը . նաև կը պատմեն թէ յամի 126 եպիսկոպոս եղաւ Աթինայ քաղաքին ։ Այս երանելին նախ և առաջ գրեց ճառ հաստատութեան քրիստոնէական կրօնիս լի զօրաւոր պատճառներով և առաքելաշնորհ ճարտարախօսութեամբ , զոր ընծայեց Ադրիանոսի կայսեր յամի 131 ։ Աղեքսանդրի Սևերոսի վարքին մէջ գրած է, թէ այս գրուածքէն շարժելով կայսըր հաւատաց Արարչին և կ'ուզէր տաճար կանգնել անուամբ Տեառն ։ Ուստի սուրբին այս գրուածքը դադրեցուց Սևերոսին հալածանքը ։ Ահա այսպիսի յայտնի ցուցմունքներով հաստատեցին սուրբ վարդապետք քրիստոնէական ճշմարտութիւնն ու դարձուցին հեթանոսները 'ի լոյս հաւատոյ ։

ԿՈՒԹԹԷՄՊԷՐԿ ՅՈՎՀԱՆՆԷՍ, Գերմանացի, էր Մակոնցա քաղաքէն 'ի ԺԵ դարուն, որ գեղեցիկ հանճարով հնարեց տպագրութեան ամենաօգտակար արուեստն, ու 'ի 1436 սկսաւ փորագրել գրեանքը երես առ երես փայտեղէն տախտակի վրա · որուն հետ ընկերանալով յետոյ հոն Ֆուսթ յաջողաձեռն ոսկերիչն տպագրեցին նախ Կիկերոնի գիրքն 'ի 1444 ։ Ապա աւելի հետևելով հնարեցին շարժական փայտէ գիրը 'ի 1555, յետոյ առաւել կատարելագործելով տպագրեցաւ Աստուածաշունչը ։ Այսպէս Կութթէմպէրկին անունը անմահացաւ և գիւտն տպագրութեան ծաղկեցաւ ամէն ազգի մէջ · ինքն ալ 'ի 1465 բարձրացաւ պատուով, ազնուականութեամբ և տարեկան թոշակաւ · սակայն 'ի 1468 մեռաւ վաթսուն տարեան ։

ԿՈՒՌՆԵԼԻՈՍ հարիւրապետ իտալական գնդին՝ էր Պաղեստինոյ Կեսարիայէն, որ աստուածահրաշ նշանով և տեսլեամբ մկրտեցաւ ձեռամբ Պետրոս առաքելապետին, ըստ պատմութեան սուրբ Գրոց՝ հանդերձ բոլոր ընտանեօքն ։ Եւ եղաւ ճշմարիտ աշակերտ և օգնական սուրբ առաքելոյն 'ի քարոզութիւն սուրբ Աւետարանին ։ Նաև ձեռնադրեցաւ անկէ եպիսկոպոս և գնաց քարոզել 'ի փոքրն Միւսիա ։ Դեմետրիոս դատաւորը հոն բռնեց սուրբն ու ղրկեց կռատունն՝ որ դարձընէ ․ իսկ նա աղօթքով կործանեց կուռքը ․ ուստի չարաչար ծեծելով երանելին գլխիվայր կախեցին բոլոր գիշերը ։ Նոյն ատեն փլաւ տաճարն ու ծածկեց տակը շատ կռապաշտներ, դատաւորին ընտանիքն ալ միատեղ ։ Երբոր մոլորեալներն ընկան սուրբ Կուռնելիոսին ոտքն ու խնդրեցին իրենց օգնութիւն ․ աղօթեցաւ սուրբը, և խաչակնքելով յարութիւն տուաւ թաղուածներուն ․ որոնք մեծ եռանդեամբ հաւատացին Քրիստոսի, նաև քաղաքացիքն ալ լուսաւորեալ մկրտեցան և ամէնքը եղան ժողովուրդ եպիսկոպոսին ։ Որոնց շինեց եկեղեցիներ և հաստատեց քահանաներով հանդերձ ամենայն բարեկարգութ՟բ ․ մինչև հանգեաւ խաղաղութ՟բ 'ի Քրիստոս և տօնեցաւ փառաւորապէս ։

ԿՈՒՌՆԵԼԻՈՍ, սուրբ քահանայապետ հօտին Քրիստոսի, ընտրեցաւ յաջորդ սրբոյն Պետրոսի 'ի 253, որ գոլով այր մեծահամբաւ իմաստութեամբ և սրբութեամբ ժողով գումարեց 'ի Հռոմ, և նզովեց զՆովատիանոս հերձեալ երէցն ընդ Նովատոսի աղանդաւորին ․ և հարկաւոր կանոններով բարեկարգեց զուխտ եկեղեցւոյն վասն հաստատութեան ուղղափառ հաւատոյ և դարձելոց ճշմարիտ զղջմամբ, որոնք հալածանքին ատենը մոլորեր էին ։ Ուստի զարմանալի քաջութեամբ այնպէս զօրացոյց զեկեղեցին և նահատակներն, մինչ զի կռապաշտները կատղելով բռնեցին սուրբ հայքապետը, նահատակեցին վասն ՚ի Քրիստոս հաւատոյ յամի 255, որ մեծապէս գովեցաւ սուրբ Կիպրիանոսէն և յայլոց :

ԿՌՈՆՈՍ ըստ Յոյն բանաստեղծից էր առաջին չաստուած, որդի Ուրանոսի կամ երկնից և եղբայր Տիտան չաստուածին, որ տուաւ թագաւորութիւնը Կռոնոսին այսու դաշամբ որ զաւակ չի մեծցընէ, որպէս զի թագաւորութիւնը մնայ Տիտանեանց. և ատոր համար կ՚ուտէր իրեն որդիքը՝ կ՚ըսեն : Բանաստեղծները նմանեցուցին ժամանակը Կռոնոսին, որ բռներ է ձեռքը օձաձև մանեակ մը անծայր՝ նշան յաւիտենականութեան, և ունի գլխուն վրայ ժամացոյց որ միշտ կը վազէ կ՚անցնի, և աջ ձեռքը մանգաղ, որ ամէն բան կը կտրէ կը վերջացընէ ընդ կենաց ստեղծուածոց : Հռոմայեցիք հին ատենը կանգնեցին Կռոնոսին տաճար մը, ուր տարուէ տարի ՚ի պատիւ նորա հանդէս կ՚ընէին անուանելով Սաթուրնեան, որ է անուն Կռոնոսին և Երևակին :

Կռոնոս ժամանակս ես ընդ ձեզ խօսիմ
  Օ անվախճան մանեակ տեսէք յիմ ձեռին .
  Զգէ զձեզ ՚ի նոյն մանգաղս մահաբեր
  Յանծայր շրջանին կորուստ անըւէր :
Ընգոյ համարիմ ՚ի բանաւորաց ,
  Բայց անյագ կլանեմ զգոյս անցաւորաց .
  Իմ փոր խորանդունդ անյատակ գեհեան
  Պատրաստ կայ և զձեզ առնուլ յիւր բերան :

Հ․

ՀԱՄԱԶԱՍՊ Մամիկոնեան էր փառաւոր նախարար, փեսայ մեծին Սահակայ հայրապետին, որ քաջ և առաքինի մարդ ըլլալով Վռամշապուհ Հայոց Թագաւորը զինքն մեծ սպարապետ դրաւ յամի Տեառն 392, որ խոհեմութեամբ և քաջագործութեամբ կատարեց իւր պաշտօնը քսանևերկու տարի, և մեռաւ 'ի 414․ թողլով իրեք որդի, որ են Մեծն Վարդան, որ յաջորդելով հօրը կարգեցաւ սպարապետ, Հմայեակ, և Համազասպեան․ առաջինն և երկրորդն նահատակեցան վասն հաւատոյ Պարսից դէմ պատերազմելով քաջութեամբ․ երրորդն պատերազմէն ետև բանտարկեցաւ Պարսիկներէն, և տասներկու տարիէն ետև ազատեցաւ բարեպաշտ նախարարներուն հետ 'ի 464։ Տ․ Վարդան Մեծ։

ՀԱՄԱԶԱՍՊ և Սահակ դիւցազնեայ եղբարք՝ էին պատուական նախարարք Արծրունիք, և իշխանք Վասպուրական աշխարհին Հայոց։ Երբոր հրամանաւ Հարոն ամիրապետին Եզիտ ոստիկանն եկաւ Հայաստան, նենգութեամբ կանչեց իրեք եղբարք Համազասպ, Սահակ և Մերուժան՝ պատճառելով թէ Յունաց ձեռնտու են, և իբրև յանցաւոր բանտը դըրաւ ընդադատելով, որ կամ ուրանան հաւատքը և կամ մեռնին. ուր Թուլահաւատ Մերուժան ուրանալով ազատեցաւ ։ Իսկ Համազասպ և Սահակ քաջութեամբ յանձն առին մեռնիլ 'ի սէր Քրիստոսի. ուստի անօրէն ոստիկանը շատ օր չարչարեց սուրբերը կերպ կերպ տանջանքներով. բայց երբոր չի կրցաւ հանել սուրբ հաւատքէն՝ հրամայեց որ տանին գլխատեն երանելիները ։ Որոնք երբ հասան գլխատման տեղը՝ Համազասպ մեծ եղբայրը հրաւիրեց պզտի եղբայրը Սահակն որ նախ նահատակուի, ըսելով. Մարմնաւոր ուրախութեանց մէջ առաջ ես կը խմէի բաժակը. հիմա երկնաւոր բաժակն ուրախարար պէտք է որ դուն առաջ խմես ։ Այս ծնրադրութեամբ երբոր աղօթք կ'ընէին՝ նախ սուրբն Սահակ վիզը խոնարհեցուց սրին և յետոյ սուրբն Համազասպ յամի 786. և այսպէս երկրաւորէն ելան յերկնային փառս ։ Իսկ անարժան Մերուժան երկուսէն ալ զրկուեցաւ չարաչար. վասն զի Գաւիթ Սամիկոնեան հանդիպելով իրեն սպաննեց ուրացողը, ինչպէս որ մարգարէացեր էր սուրբն Մովսէս Խորենացի 300 տարի առաջ ։

Ունայնասիրաց այս թոշակ պահի
Ծախելոց զոգիս 'ի սէր աշխարհի.
Իսկ արդարք զանձինս տան 'ի սէր Փրկչին
Աստուածեան փառօք յաւիտեան հրճուին ։
Սոքա քեզ լիցին զարթուցիչ խթան
Մի կալ յաշխարհի զերթ պաճար անբան.
Յուսացար շնորհօք տիրական ձեռին,
Ջանամ վայելել յանսպառ բարին ։

ՀԱՅԿ նախահայր ազգիս Հայոց՝ էր որդի Թորգոմայ թոռան Յաբեթի, որ Հայաստանէն գնաց 'ի Սենաար. ուր բազմացաւ որդիքներով, թոռներով, և զօրացաւ աշտարակաշինութեան ժամանակը: Յետոյ երբոր Բէլ ուզեց բռնանալ ամենուն վրան, Հայկ առաւ ընտանիքը իրեքհարիւր հոգի, դարձաւ Արարատեան աշխարհը և հնազանդեցոյց երկրին ժողովուրդը: Ուր շինեց քաղաք, ու տուաւ Կադմոս թոռին, և ինքն ընտանեօք գնաց բնակեցաւ հիւսիսակողմեան դաշտը անուանելով Հարք, ուր որ շինեց քաղաքն Հայկաշէն:

Բէլ տեսնելով Հայկին պանծալի գործքերը կատղեցաւ, և ջանաց որ ձեռքին տակն առնէ, ուստի շատ զօրքով ելաւ Հայկին վրա. իսկ Հայկ ժողվեց իր քիչ զօրքը և զաւակները, ելաւ թշնամւոյն դէմ: Բայց Բէլ ուզեց որ անձամբ ընէ յաղթութիւնը՝ առաւ քիչ մը զօրք յարձակեցաւ Հայկին վրա. ան ալ զարմանալի քաջութեամբ վազեց Բէլին առջեն ու զարկաւ երեքթևեան նետով, անցուց Բէլին պղնձապատ կուրծքէն սատկեցուց, և ցրուեց անոր բոլոր զօրքը: Հայկ նոյն տեղը կանգնեց քաղաք ու անուանեց Հարք. նաև այն ժամանակը հաստատեց իրեն ինքնակալութիւնն: Սարգան պատմիչն կ'անուանէ զՀայկը՝ Աստուածային փառաց նախանձախնդիր. վասն զի սատակելով զԲէլն առաջնորդ կռապաշտութեան՝ չուզեց պաշտել նորա կուռքը: Հայկն մեր քաջայաղթ մեծամեծ դիւցազնական գործքերէն ետև մեռաւ փառօք, յանձնելով թագաւորութիւնը անդրանիկ որդւոյն Արմենակայ:

Հայկ մեր նախահայր ահեղ ախոյեան
Ընդդէմ թշնամւոյն անզգոյշ յաղթական .
Ըղձէ իւր որդւոց գոլ վէհ քաջազօր
Կործանել զվիրագն իբր անզէն անզօր ։
Մեծ է մարդ դիւցազն ըստ իւրում սեռի
Եւ առ մեծագոյնս կարգեալ հրաշալի .
Յուսալ յԷն անհաս, կոխել զԲէլ սատան
Քաջ հանդիսանալ, այս գործ է մարդկան ։

ՀԱՅԿԱԿ Փաւոսեան էր Հայկազն թագաւոր Հայոց 605 ամօք Քրիստոսէն առաջ, որ միաբան Նաբուգոդոնոսորին հետ գնաց Երուսաղէմայ վրան և գերի վարեցին Յուդայի ցեղը ։ Որոնցմէ Հայկակ իշխանազուն գերի մը առաւ Շամբատ անուամբ և բնակեցուց 'ի Հայաստան . ասկէ առաջ եկաւ քաջն Բագարատ և Բագրատունիք ։

ՀԱՅՆԷՔՔԷՆ ՔՐԻՍՏԻԱՆՈՍ ՀԵՆՐԻԿՈՍ Սաքսոնիացի հրէշ բանական՝ ծնաւ 'ի 1721 . երբոր եղաւ տասնամսեան սկսաւ խօսիլ . մէկ տարուան սորվեցաւ Մովսեսի հինգ գրոց պատմութիւնը . և տասնիրեք ամսուան՝ միտքն առաւ բոլոր պատմութիւնն աստուածաշնչին ։ Ապա երբ եղաւ երկու տարուան ու կէս սորվեցաւ լատիներէն և գաղղիարէն, ուսումն աշխարհագրական և պատմագրական ։ Սակայն չորս տարուան որ եղաւ յանկարծ եկաւ վրան մահաբեր հիւանդութիւն և մեռաւ 'ի 1725 ։ Սա միայն կաթմօրը կաթը կ'ուտէր, և քանի մը ամիս առաջ կաթէն կտրեր էր ։

ՀԱԲԵՐՏ ԼՈՒԴՈՎԻԿՈՍ՝ էր Գաղղիացի վարդապետ և աստուածաբան Սորպոնեան 'ի

ԺԱ. դարուն , որ գրեց աստուածաբանութիւն ընդարձակ և համառօտ ։ Համառօտութիւնը թարգմանեալ հայերէն տպագրեցաւ 'ի Թրեստ. ունի նաև հրահանգ վասն խոստովանահարց , որ բորբոքիչ է ճշմարիտ սիրոյ ապաշխարութեան ։ Նա մեռաւ 'ի 1718 խաղաղութեամբ ութսունևիրեք տարեան ։

ՀԵԳԵՍԻՊՊՈՍ էր երևելի պատմիչ Հրէայ հաւատացեալ 'ի Քրիստոս 'ի Բ դարուն , որ գնաց 'ի Հռոմ տեղեակ ըլլալու եկեղեցական աւանդութեանց . և ճամբեան խօսակցելով զանազան հայրապետաց հետ՝ գտաւ անոնց վարդապետութիւնը միօրինակ և համեմատ աստուածաշունչին ։ Յամի 157 հասեալ 'ի Հռոմ մնայ մինչև 'ի 177 . ուր յօրինեց եկեղեցական պատմութիւնը՝ սկսեալ 'ի Քրիստոսէ մինչև իր օրը . ինչպէս որ կը հաստատէ նաև Եւսեբիոս ։ Նա կը համարի առաջին եկեղեցական պատմագիր . բայց այս պիտուական գիրքը կորած է . միայն հատուածները կան տպած հանդերձ ծանօթութեամբ . Հեգեսիպպոս վախճանեցաւ յամի Տեառն 181 ։

ՀԵԹՈՒՄ Ա. էր որդի Կոստանդեայ մեծ իշխանին , որ յետ ամուսնանալոյն Զապէլայ թագուհւոյն հետ օծաւ թագաւոր Հայոց 'ի Կիլիկիա յամի 1224 ։ Նա գեղեցիկ բարեկարգութեամբ շատ զօրացոյց զազգն ու թագաւորութիւնը . և խոհեմ քաղաքավարութեամբ բարեկամանալով Թաթար Խաներուն հետ ապահովացուց տէրութիւնը ։ Հեթում յամի 1269 ժողվեց բոլոր իշխաններն ու կաթուղիկոսը 'ի քաղաքն Տարսոն , և բազմեցուց իր զահը զորդին Լեւոն Գ. իսկ ինքն հրաժարեալ թագաւորութենէն կրօնաւորեցաւ վանքին մէջ անուանելով Մակար. ուր վախճանեցաւ սրբութեամբ նոյն տարին, քառասուներհինգ տարի թագաւորելէն ետեւ.

ՀԵԹՈՒՄ Բ. էր որդի Լեւոնի Գ. եւ թոռն Ա. Հեթմոյ, թագաւորեց 'ի 1289, բայց չուզեց վասն խոնարհութեան թագ դնելու, այլ միշտ կրօնաւորներուն հետ կը կենակցէր, նաեւ կուսակրօն եւ հոգեսէր ըլլալով սուրբ գրեանց հետ կը զուարճանար աստուածախոհ մտածութեամբ: Բայց 'ի 1293 զԹորոս եղբայրն օծել տուաւ թագաւոր, իսկ ինքն հագաւ ըղգեստ Ֆրանչիսկեան կրօնաւորի եւ անուանեցաւ Յովհաննէս: Բայց յետոյ բռնադատեալ եղբօրմէն, նստաւ նորէն թագաւոր, զոր կուրացուց անգութ Սմբատ եղբայրն. այլ 'ի 1300 հրաշքով բացուեցաւ աչքն ու դարձեալ թագաւորեց Հեթում. եւ 'ի 1305 օծել տուաւ թագաւոր իր Թորոս եղբօրը որդին զԼեւոն Դ. իսկ ինքն մականուանեցաւ թագաւորահայր: Սակայն բարեպաշտ արքայն Հեթում Բ. չի կրցաւ ազատ ըլլալու թշնամիներուն չար նախանձէն. որոնք զուր տեղը սպաննել տուին անմեղը 'ի 1308.

ՀԵԹՈՒՄ պատմիչ էր որդի Օշնի իշխանին եւ սպարապետ Հեթում Բ. արքային, որ 'ի 1305 թողուց իշխանութիւնն ու կրօնաւորեցաւ 'ի Կիպրոս Լատին կարգով. անկէց գնաց ուխտ 'ի Հռոմ, անկէց ալ գնաց 'ի Գաղղիա. ուր էր սրբազան պապն Կղեմէս Ե. Հեթում սիրելի եղաւ հօն Սրբազանին, եւ նորա յորդորանքով շարադրեց Գաղղիարէն պատմութիւն պատերազմաց Թաթարաց, Ասորւոց, Պաղեստինու և Կիլիկիոյ. որ ընդունելի եղաւ գիտնոց տեղեկութեանցը համար, և 'ի 1307 թարգմանեցաւ Լատիներէն և տպեցաւ. նաև հայերէն ալ թարգմանեցաւ. Հեթում հայերէն գրած ունի համառօտ ժամանակագրութիւն սկսեալ 'ի ՇԻԵ Հայոց թուականէն մինչև իր օրը յամի Տեառն 1296։ Իսկ ինքն առաքինի վարուք բարի օրինակ ըլլալով փոխեցաւ երջանկութեամբ առ Տէր նոյն տարին։

ՀԵՂԻ քահանայապետ Հրէից էր եօթներորդ Ահարոնէն ետև. որ թուլութեամբ իր չարագործ որդիքը չի խրատելուն համար պատժեցաւ 'ի Տեառնէ, և զրկուեցաւ քահանայապետութենէն։ Վասն զի որդիքը տապանակին հետ գնացին պատերազմ ու մեռան. իսկ Հեղի լսելով տապանակին գերութիւնը՝ աթոռէն ընկաւ մեռաւ սրտին ցաւէն։

ՀԵՂԻՆԷ, սուրբ դշխոյ, կին էր Կոստանդ կայսեր և մայր մեծին Կոստանդիանոսի։ Այս դշխոյս երբոր հաւատաց Քրիստոսի՝ վառեցաւ սիրտն որ տարածէ սուրբ հաւատքը կանգնելով եկեղեցիներ, վանքեր և աղքատանոցներ. ապա երբ տեսիլք եղաւ իրեն սուրբ խաչը գտնելու համար՝ ելաւ գնաց յԵրուսաղէմ յամի 326։ Ուր Յուդային յայտնելովն գտաւ տեղը սուրբ Խաչին, զոր Հրեայք թաղելով ծածկեր էին, և Ադրիանոս կայսրն կռատուն կանգներ էր հոն, անոր համար քրիստոնեայք չէին երթար ուխտ սուրբ տեղերուն։ Իսկ սուրբ Հեղինէ մէկէն կործանեց կուռքը և կռատունը․ մեծ աշխատանքով հանել տուաւ սուրբ Խաչն Յիսուսի և աւազակներուն ալ երկու խաչերն ։ Ուր երբոր մեռեալ պատանի մը դրին սուրբ Խաչին վրայ, յարութիւն առաւ մեռեալը․ և անդէն կանգնեցին Խաչափայտն ու երկրպագին յարգութեամբ ։ Ապա դշխոյն մէկ մասն Խաչին և մէկ բևեռը ղրկեց մեծին Կոստանդիանոսի․ և մէկ մասն ալ ղրկեց Հռոմ դնել տուաւ սուրբ Խաչի եկեղեցւոյ մէջ, զոր ինքն էր շինել տուեր ։ Անոր հետ ղրկեց և Խաչին վերնագրի տախտակը, վրայի գիրն էր եբրայեցերէն, լատիներէն և յունարէն կարմրագեղով գրած ։ Սուրբ դշխոյն այսպիսի առաքինութեամբ ծերացեալ փոխեցաւ առ Քրիստոս յամի 330․ իսկ մարմինը փոխադրեցաւ 'ի Հռոմ և մասն ինչ 'ի Վենետիկ տարեալ դրին 'ի կղզին սուրբ Հեղինէ․ զոր ամէն ազգ կը տօնէ ։

ՀԵՂԻՆԷ, սուրբ Թագուհին Աբգար արքային, էր առաքինազարդ և բարեպաշտ, որ Աբգարու մեռնելէն ետև Սանատրուկ կռապաշտ արքային իրեն տուած պատիւը մերժեց ու գնաց նստաւ յԵրուսաղէմ Կղոդեայ կայսեր օրը ։ Ուր սովին ժամանակը ցորեն բաշխելով կը հոգար աղքատները, ինչպէս որ կը վկայէ Յովսեպոս․ որուն գերեզմանը կար Երուսաղէմի դրան առջևը մինչև Խորենացւոյն օրը ։

Զնաշխարհիկ դշխոյք փափաքողք վերնոյն
Եդին խաչ 'ի գլուխ պըսակ լուսաբուն․
Պճնեալք երկնաշնորհ առաքինութեամբ
Զքնաղ գերարփի 'ի վեր քան ըզբան ։

Այս խաչապաշտից է փառք պարծանաց
Պանծաւ տիրապէս 'ի փայտն կենաց ․
Թէ փայլիւ տենչաս նման դշխոյից
Ճգնեա՛ց 'ի շքեղ գործ բարեպաշտից ։

ՀԵՐԱԿԼ էր ինքնակալ Յունաց, որ ելաւ Փոկաս բռնաւորին դէմ, և քաջութեամբ զօրացեալ յաղթեց անիրաւին ու գլխատեց, և նորա չարագործութիւնքն իրեն խրատ ըլլալով միշտ ջանաց բարեգործ և առաքինի ըլլալու ։ Յամի 610 Թագուհիին հետ պսակուեցաւ կայսր 'ի Կոստանդինուպօլիս ։

Խոսրով Բ․ Պարսից արքայն երբ կատաղութեամբ գնաց տիրեց Երուսաղէմի և գերի տարաւ զսուրբ Խաչափայտը 'ի 615 ։ Հերակլ անհնարին սրտմտեալ յարձակեցաւ Խոսրովին վրա և զարկաւ չարաչար հալածական ըրաւ 'ի 622 ։ Այս քաջագործութիւնը յաղթական կայսեր այնպէս զօրացուց Կաւատ կամ Շերոյ անզգամին որդին նոյն Խոսրովու, մինչ՝ զի բռնեց զհայրը բանտին մէջ սատկեցուց ․ և հաշտութիւն ընելով Հերակլին հետ ետ դարձուց զսուրբ Խաչափայտն 'ի 628 ։ Իսկ բարեպաշտ կայսրն տարաւ զայն մեծահանդէս յարգանօք 'ի Կոստանդինուպօլիս 'ի ցնծութիւն հաւատացելոց ։ Ապա 'ի 629 տարաւ կայսրն զսուրբ խաչն նաւով յԵրուսաղէմ գոհանալով Աստուծոյ վասն յաղթութեանցն, և փափաքանօք առաւ կռնակին ու ելաւ Գողգոթա լեռանը վրան կանգնեց, զոր ամէն քրիստոնեայք կը տօնախմբեն ջերմեռանդութեամբ ։ Հերակլ այսպիսի կրօնասիրութեամբ մեծանուն հանդիսացաւ և գովեցաւ ․ բայց երեսուն տարի թագաւորելէն ետև վախճանեցաւ ջրգողութեամբ վաթսունըվեց տարուան յամի 641։

ՀԵՐՄԱՍ էր հեղինակ գրքին Հովիւ անուամբ, զոր վարդապետք կը համարին թէ է Երմասն, որուն Պօղոս առաքեալ ողջոյն կը գրէ. և ոմանք կը դնեն թէ է եղբայր սրբոյն Պիոսի Ա. պապին։ Նաև կը պատմեն թէ անոր համար այս գիրքս Հովիւ կոչեցաւ. զի կը ձևացընէ հրեշտակին բերնէն ասացեալ հովուի կերպարանքով, և գրեալ յամի 142 'ի վերայ ապաշխարութեան մեղաւորաց։ Սակայն հին սուրբ Հարք շատ կը գովեն մաքուր ոճը և բարոյականը, որ է յիշատակարան սուրբ վարուց առջի քրիստոնէից։

ՀԵՐՄԷՍ, ըստ Յն. Թարգմանի փայլածու, որ ոչ միայն է անուն այս մոլորակին, այլ և Նեղոսի որդւոյն, որ կը սեպուի Թարգման դից իբր յայտնիչ կամաց նոցա և չաստուած ճարտարախօսութեան, վաճառականութեան և աւազակութեան։ Սուտի կը նկարէին զՀերմէս սուրհանդակի նման, թևաւոր սաղաւարտով և ոտքով. ձեռքն ալ վիշապագլուխ գաւազանով։ Լիւստրացիք երբոր տեսան Պօղոս առաքեալին հրաշքը և քաղցրութիւնը կոչեցին զնա Հերմէս աստուած.

ՀԵՐՄՈԳԻՆԷՍ 'ի Բ դարուն էր երևելի հռետոր և զարմանալի բանագէտ. 'ի մանկութենէն այնպէս յաջող և արագ սորվեցաւ ուսմունքները, որ տասնըհինգ տարուան վարժապետ եղաւ ուսումնարանաց, և շարադրեց հռետորական գրեանքը։ Սակայն երբոր եղաւ քսանըչորս տարուան կորուց յիշողութիւնն . և մոռնալով ամէն սորված ուսմունքը մնաց բթամիտ մինչև 'ի խոր ծերութիւն ։ Իսկ երբ մեռաւ բացին սիրտը գտան շատ մազոտ . և գիտուններն ըսին որ Հերմոգինէս տղայ ատենը պայծառացաւ ծերութեամբ , և հասուն հասակին մէջ տղայացաւ բթամտութեամբ ։

ՀԵՐՄՈԳԻՆԷՍ մոգ՝ էր Ստոյիկեան փիլիսոփայ , որ առաքելոց քարոզութեամբն հաւատաց Քրիստոսի , և ապա տեսնելով սրբոց նահատակութիւնը՝ նորէն դարձաւ յանհաւատութիւն ։ Կը ջանար սուրբ Գիրքը յարմարցընել իր չար աղանդին քարոզելով թէ նիւթն է համագոյակից Աստուծոյ , և սկիզբն ամենայն չարեաց . միանձն է կ'ըսէր Աստուած , և Քրիստոսի մարմինն կը դնէր արևուն մէջ . և թէ սատանաներն ալ մարմին առնելով պիտի փրկուին ։ Որուն դէմ Տերտուղիանոս քաջութեամբ գրեց խայտառակեց . նոյնպէս Որոգինէս , սուրբ Ոգոստինոս և այլք նզովեցին չարաչար ։ Պօղոս առաքեալ կը յիշէ մոլորեալները Հերմոգինէս և Փիգեղոս ։

ՀԵՐՈԴՈՏՈՍ էր գերահամբաւ պատմագիր Յունաց իբր 500 տարի Յիսուսէն առաջ՝ անուանեալ նախահայր պատմագրաց ։ Որ բանասիրութեամբ ելաւ փոքր Ասիայէն շրջեցաւ յԵգիպտոս , յԻտալիա և Յունաստան , տեղեկանալով պատմութեանց և աւանդութեանց հին ազգաց ։ Յետոյ գրեց ինը գիրք կամ դըպրութիւնք պատմութեան քաղցր ոճով և հմուտ քննութեամբ ։ Եւ երբոր Ողիմպիական հանդիսին ատենը բազմութեան առջին հանեց կարդաց պատմութիւնը, Յոյնք այնպէս զարմացան, որ ինը Մուզայից անունը տուին ինը դպրութեանց գրքերուն, իսկ զՀերոդոտոս՝ անոնց հայր և նոր չաստուած անուանեցին : Սա կը պատմէ 240 տարուան մէջ հանդիպած գործքերը աւելի Պարսից և Յունաց մէջ, յիշելով նաև զՓիւնիկեցիս, Սկիւթացիս, Հնդիկս : Անոր համար նախապատիւ եղաւ ամէն արտաքին պատմագիրներէն . ինչպէս որ կը յիշէ նաև մեր հնախօս Խորենացի վարդապետն :

ՀԵՐՈՆԻՄՈՍ սուրբ վարդապետ եկեղեցւոյ էր Դաղմատացի այր քանիբուն և աստուածիմաստ հեղինակ : Որ պատանեկութեան ատենը Հռոմ գնաց մկրտեցաւ և վարժեցաւ զանազան ուսմամբ . անկէց գնաց 'ի Գաղղիա, և 'ի Յունաստան ծաղկեցաւ գիտութեամբ փիլիսոփայութեան և ճարտասանութեան : Ապա աշակերտելով Գրիգորի աստուածաբանին շատ հմուտ եղաւ գիտութեամբ սուրբ Գրոց և աստուածաբանութեան . յետոյ գնաց ուխտ յԵրուսաղէմ սորվեցաւ Հրէից լեզուն հին կտակարանը լաւ հասկընալու համար : Անկէց ետև առանձնացաւ Ասորւոց անապատն միշտ պարապելով աստուածային գրոց և խոկմանց հանդերձ ճգնութեամբ չորս տարի : Յետոյ գնաց յԱնտիոք քահանայ ձեռնադրեցաւ Պաւղինոս եպիսկոպոսէն . և անկէց գնաց 'ի Հռոմ եղաւ նօտար Դամասոսի պապին . անկէց ալ դարձաւ յԵրուսաղէմ, նստաւ Բեթղեհէմի վանքը . և սկսաւ թարգմանել հին կտակարանը Հրէից լեզուէն 'ի լատին լեզու . նա և շատ պիտանի գրեանք յոյն լեզուէն 'ի լատին թարգմանեց : Շարադրեց աստուածիմաստ մեկնութիւններ, գեղեցիկ ճառեր և հոգելից նամակներ ․ և յետ բազմապատիկ արդեանց փոխեցաւ առ Տէր իննուսուն տարւան 'ի 422 ․ և թաղեցաւ 'ի Բեթղեհէմ ․ այլ յետոյ փոխադրեցին 'ի Հռոմ և հանգուցին յեկեղեցին Աւագ Մարիամու ․ Լատին եկեղեցին փառաւորապէս կը կատարէ իր տօնը ։

Հերոնիմոս քաջ րաբուն պերճաբան
Գրիչ Հոգւոյն սրբոյ վեհ աստուածաբան ․
Քարոզ աշխարհի կոչեալ շնորհալից
Սուրբ եկեղեցւոյ դիւան հոգելից ։
Սա անբաւ գրեանց հեղինակ ընտիր
Ջանիւք ճգնութեամբ եղև հոգեկիր՝
Որչափ անձնամատն 'ի ճիգն իմաստից ,
Այնչափ լուսաթռիչ ել 'ի փառս երկնից ։

ՀԵՐՈՎԴԷՍ Ա ․ արքայ Հրէաստանի՝ էր Ասկալոնացի կամ Եդովմայեցի վարժեալ Հրէից օրէնքներով, և շատ երևելի մարդիկ ալ սպաննելով զօրացաւ ու սիրելի եղաւ Հռոմայեցւոց կեղծաւորութեամբ , մինչև տիրելով Հրէաստանի մականուանեցաւ Մեծ ։ Սորա օրը ծնաւ Փրկիչն մեր Մեսիայ ․ զոր կամելով սպանանել կոյր նախանձով կոտորեց անմեղ մանկունքն Բեթղեհէմի ․ որոնց հետ կորուս իրեն տղան ալ ։ Երուսաղէմի տաճարը նորոգեց , ու շինեց ամփիթէատրոն հեթանոսական խաղերու համար , նաև կանգնեց տաճար կռոց 'ի պատիւ Օգոստոս կայսեր ․ իսկ իր պատկերքն ալ դնելով կռոց կարգը անուանեցաւ Մեսիայ ․ բայց Աստուծմէ պատժուած որդնալից սատակեցաւ ։

ՀԵՐՈՎԴԷՍ Բ. Անթիպաս՝ որդի էր առաջնոյն և եղաւ չորրորդապետ Գալիլեացւոց, որ օրինաց դէմ առաւ եղբօրը կնիկը. և երբոր յանդիմանեց զինքը Յովհաննէս Մկրտիչ, գլխատել տուաւ: Նմանապէս կուրացեալ մտօք արհամարհեց զՏէրն մեր ու ճերմակ զգեստով ղրկեց առ Պիղատոս. բայց յանցաւոր գտուեցաւ կայսեր առջև, ու աքսորեցաւ ՚ի Լիոն Հերովդիադայ կնկանը հետ. և հոն թշուառաբար սատկեցան:

ՀԵՐՈՎԴԷՍ Գ. էր վերինին եղբայրը, որուն յաջորդելով անուանեցաւ Ագրիպպաս, և գլխատեց զՅակոբոս Յովհաննէս աւետարանչին եղբայրն. նաև բռնեց զՊետրոս բանտը դրաւ. բայց ինքն ալ զարնուեցաւ հրեշտակէն ու որդնալից սատկեցաւ:

ՀԵՐՈՎԴԷՍ Դ. էր որդի վերինին, և թագաւորեց անկէ ետև, մականուանեալ Փոքր: Պօղոս առաքեալ ասոր ատեանը ելաւ և քաջութեամբ խօսելով զարմացուց զամէնքը: Հերովդէս Բերինիկեայ քրոջը հետ գնաց ՚ի Հռոմ, մեռաւ յամի Տեառն 90:

ՀԵՐՈՎԴԻԱՆՈՍՔ էին չարաղանդ Հրեայք, որք կեղծաւորութեամբ պաշտեցին զՀերովդէս Ա. իբր Մեսիայ որ դրեր էր զինքն կուռքերուն կարգը: Ոմանք էին հետևող աղանդոյն Յուդայի Գալիլեացւոյ, ուր կը թագաւորէր Հերովդէս Բ: Փրկիչն մեր ասոնց աղանդը անուանելով խմոր Հերովդի՝ յայտնեց թէ էր չար մոլորութիւն բռնաւորին, որ կորուց ազգն կռապաշտական աւելորդապաշտութեամբ . ատոնք ալ խառնուելով անհաւատ Սադուկեցւոց հետ կորան ։

ՀԵՐՔՈՒԼԷՍ , ըստ Հյ . Հերակլէս , էր գլուխ հսկայից և քաջաց Հելլենացւոց , ըստ բանաստեղծից ծնեալ 'ի Դիոսէ և Աղմենայ կնոջէն իբր 1280 տարի Քրիստոսէն առաջ, նաև սնեալ առիւծի ըղեղով ։ Սորա գործքերը և տասներկու քաջութիւնները գերահռչակ կը պատմեն հիները մինչև չաստուածոց կարգը դրին . մեր Արտաշէս Ա . թագաւորը Յունաստանէն բերաւ ասոր պղնձաձոյլ ոսկեզօծ արձանը տնկեց Հայաստանու մէջ, զոր կործանեց սուրբ Լուսաւորիչն ։

ՀԵՓԵՍՏՈՍ ըստ դիցաբանից էր դարբին և չաստուած հրոյ , նաև որդի Դիոսին խիստ տգեղ , զոր ձգեց երկնքէն վար , եղաւ կաղ . իրեն պաշտօն տրուեցաւ Արամազդայ կայծակները շինել Կիկղոպներուն ձեռքով ։ Հեթանոսները ընծայեցին Հեփեստոսի կրակ գտնելը , և Թոբէլայ արուեստը , որ ըստ սուրբ Գրոց , "Էր Ճարտարապետ դարբին պղնձոյ և երկաթոյ" ։ Սուրբն Կիւրեղ կ'ըսէ . "Հուրն 'ի քարէ բաղխելոյ թափի մինչև ցայսօր . ուստի է Հեփեստեայն հրոյդ արարիչ" ։ Այս չաստուածիս կուռքը մեր Արտաշէս Ա . բերաւ Յունաստանէն տնկեց 'ի Դերջան , զոր կորուց Լուսաւորիչ ։

ՀԻՄԵՆՈՍ . Տ . ՓԻԼԵՏՈՍ ։

ՀԻՊԵՐԻԿԵԱՆՔ էին եօթը վկայք Սամոսատ քաղաքէն․ ուր երբոր հեթանոսական տօնը կը կատարէին, քաղաքին գլխաւորները Հիպերիկոս և Փիլոթէոս քրիստոնեայ ըլլալով աղօթք կ'ընէին առաջի սուրբ Խաչին։ Այն ատեն գնացին հինգ բարեկամները զիրենք հրաւիրեցին կուռքին տօնին․ իսկ Հիպերիկոս և Փիլոթէոս աստուածային վարդապետութեամբ դարձուցին զանոնք 'ի հաւատս Քրիստոսի․ և ապա մկրտել տուին քահանային։ Մաքսիմիանոս կայսրը հոն ըլլալով կանչեց ատեան զՀիպերիկոս և Փիլոթէոս, որոնց հետ միատեղ գնացին հինգ բարեկամներն ալ։ Ուր ամէն հարցափորձերուն քաջութեամբ պատասխան տալէն ետև չարաչար ծեծով տանջեցին Հիպերիկոսը․ յետոյ մէկալոնք ալ նոյն տանջանքով բանտարկեցին։ Ապա տեսան որ սուրբերը աւելի զօրացան, տարին քաղաքէն դուրս կախեցին ու հաստ գամերով գլուխնին ծակելով նահատակեցին վկաները․ որոնք ուրախութեամբ կատարեցան 'ի սէրն Քրիստոսի և տօնեցան։

ՀԻՊՊՈԿՐԱՏԷՍ էր մեծահամբաւ հին բժիշկ Յս՟էն 460 տարի առաջ․ որ նախնեաց ամէն բժշկական գիւտերը և փորձերը մէկ հաւաքելով կարգաւ՝ իրեն գիւտերն ալ աւելցուց ու առաջին եղաւ բժշկական գիրք հանողներուն՝ և սեպուեցաւ բժշկապետ։ Որուն վրա մինչև հիմա կը զարմանան գովելով վարպետ բժիշկները, և նորա կանոններով կը վարդապետեն և կը հաստատեն այս արուեստին ուսմունքը։ Կը պատմեն թէ սորա մեծ պապն ալ Նեպրոս անչափ քաջ էր բժշկութեան, որ

Ամփիկտիոնեանց բանակը առողջացուց ժանտախտէն ։ Յունաստանին սոսկալի ժանտացաւն ալ Հիպոկրատէսի ճարտար արուեստովն վերցաւ ․ ուստի Աթենացիք մեծարեցին զնա ոսկի պսակով ։ Երբ փոխադրական ախտը ճարակեցաւ Պարսկաստան, Արտաշէս արքայն հրաւիրեց Հիպոկրատէսն որ երթայ փարատէ այս ցաւը խոստանալով մեծամեծ պարգեւներ ։ Պատասխան ղրկեց անոր քաջ բժիշկը ․ “Պարտական եմ իմ ամէն ունեցածս հայրենացս ընծայելու ․ ուստի անկէց բան չաւելնար որ ուրիշներուն ալ տամ„ ։

Քաջ տեղեակ էր գուշակել ցաւերուն պատճառները, տեսակները, եւ հանգամանքները ․ մինչ զի այժմեան գիտունները կը զարմանան վրան կոչելով աստուածիմաստ բժիշկ ։ Վան զի ամէն յաջողութիւն Աստուծոյ կ՚ընծայէր եւ նախախնամութիւնն Հայր դրեր էր իրեն եւ բժշկութեան արուեստին, որ եւ բարեկեցութեամբ եւ զօրութեամբ արուեստին ապրեցաւ հարիւր տարի, եւ մեռաւ 359 տարի Յիսուսէն առաջ ։ Յոյնք եւ ամէն ազգ կը յարգեն նորա իմաստութիւնը եւ խելացի գրուածքը ․ իսկ քաղաքակիցքն ՚ի Կոլ կղզին Յունաստանի ոչ միայն կը պատուեն յիշատակը, այլ եւ նստած խուցը Հիպոկրատէսին կը պահեն անկործան ։

Հիպոկրատէս քաջ բժիշկ վեհափառ
Զօրեղ յարուեստին յիմաստըս պայծառ ․
Գտիչ բիւրազգի դեղոց զարմանոց
Յանմահից սակի եղեալ՚ի գիտնոց ։

Յորդորէ վարիլ խրովք կանոնօք
Յերկարել ըզկեանս անվըրդով ամօք ·
Պարկեշտ բարեչափ 'ի գնացըս ժուժկալ
Հանդարտ և անկիր ոգւով աստէն կեալ ։

ՀԻՊՊՈՂԻՏՈՍ անուամբ երեք անուանի սուրբեր եղան · առաջինն էր զօրական, որ վասն հաւատոյ նահատակեցաւ կատղած ձիերու ոտքի տակ Հռոմայի մօտ ։ Երկրորդն էր երէց Անտիոքացի, որ նահատակեցաւ Դեկոսի հալածանքին ատենը ։ Իսկ երրորդն էր եպիսկոպոս մեծահամբաւ իմաստութեամբ և սրբութ̃բ, որ յամի 230 ջրի մէջ հեղձուցին հաւատքի համար ։ Ոսկեբերան, Թէոդորետոս և Հերոնիմոս մեծապէս կը գովեն այս երանելոյն վարքը, և իմաստալից գրուած ճառերը, նաև վսեմ աստուածաբանական վարդապետութի̃ը այլովքն հանդերձ ։

ՀԻՒԳԵՆՈՍ սուրբ հայրապետն Հռոմայ էր Յոյն ազգաւ իմաստասէր, որ վասն առաքինութեանցն ընտրեցաւ յաջորդ սրբոյն Պետրոսի յամի 130, և մեծ խոհեմութեամբ բարեկարգեց ընդհանուր եկեղեցին չորս տարի ։ Նա և հաստատեց սուրբ խորհրդոց հին ծէսերը · և Վաղենտինոս ու Կերդոն աղանդաւորները մերժելով զօրացուց ուղղափառները · յետոյ սրբափայլ վարքով փոխեցաւ առ Տէր 'ի 142 ։

ՀԻՒՐԿԱՆՈՍ ՅՈՎՀԱՆՆԷՍ էր քահանայապետ և իշխան Հրէից, որդի Մակաբեան Շմաւոնի, զոր Պտղոմէոս կ՚ուզէր սպաննել · բայց սա կորուց թշնամիներն ու ամրացաւ յԵրուսաղէմ, և պաշարուեցաւ Ասորւոց Անտիոքոս Թագաւորէն : Որուն սիրտը առնելով հետն հաշտութիւն ըրաւ և վճարեց մեծ գանձ, որ գտեր էր Դաւիթ մարգարէին գերեզմանին մէջ : Անտիոքոսէն ետև զօրանալով շատ տեղերու տիրեց, նաև նուաճելով Եդովմայեցիները թլփատել տուաւ : Եւ յետ տիրելոյ Սամարիայի և քանդելոյ անոնց տաճարը տիրեց և բոլոր այն աշխարհին, և երեսունըմէկ տարի իշխելէն ետև մեռաւ 104 տարի Քրիստոսէն առաջ :

ՀՄԱՅԵԱԿ · Տ · ՀԱՄԱԶԱՍՊ :

ՀՈՄԵՐՈՍ քերթողահայր էր գերահռչակ բանաստեղծ 'ի Զմիւռնիոյ, ժամանակակից Եղիայ մարգարէին : Սա մեծանուն հանդիսացաւ հին ժամանակէն 'ի վեր մինչև հիմա ընդ ամենայն աշխարհ վասն երկու հանճարեղ քերթուածոցը Եղիականին և Ոդիսականին, որք թարգմանեցան ամէն լեզուով, նաև հայերէն : Հոմերոս յունարէն կը նշանակէ կոյր, վասն զի յետոյ կուրացեր է դիպուածով . և 'ի կղզին Սախըզ դպրոց բացեր էր . քաղաքացիք կը ցուցընեն ան տեղը, ուր ինքն մեռաւ ըստ ոմանց 934 տարի Յիսուսէն առաջ :

ՀՈՒՍԵԱՆՔ էին հերձուածողք հետևողք Յովհաննու Հուսի և Հերոնիմոսի Պրակացւոյ . որոնք թունաւորեալ Վիկլեֆ Անգղիացի հերետիկոսին գրքէն սկսան քարոզել եկեղեցնայ դէմ, ներողութե՟ց և խորհրդոց ներհակ կը հայհոյէին . եկեղեցին կ'անուանէին սոսկ ընկերութ՟ի արդարոց, և թէ չէ իրաւունք հնազանդել եկեղեցւոյ . և թէ քահանայք և եպիսկոպոսք երբոր կը մեղանչեն, կը կորսնցընեն իրենց իշխանութիւնը, և այլն ։ Այս չարաղանդ Հուսին գրքերէն թունաւորելով կորաւ չար Լուտերը ։ Հուս կը նշանակէ սագ, որ էր Պոյեմիացի . երբոր յամառելով իր մոլորութեանցը վրայ չի հնազանդեցաւ Կոստանդեայ ժողովոյն նզովելով դատապարտեցաւ, և ապա աշխարհական դատաստանով կենդանւոյն այրեցաւ, մոխիրը գետը թափեցին յամին 1418 ։

ՀՌԱՔՍ էր առաքինի իշխան Հրէից, որ Մակաբայեցւոց հալածանքին ժամանակը փակուած ըլլալով աշտարակին մէջ կը պատերազմէր քաջութեամբ Նիկանովրայ կռապաշտ զօրքին հետ ։ Երբոր թշնամիք աշտարակին դուռն այրեցին, Հռաքս փափաքեցաւ քաջութեամբ մեռնիլ քան մատնիլ կռապաշտից ձեռքը ։ Ուստի այլայլելով խօթեց սուրը փորն ու ձգեց զինքը վար . ապա ելաւ քարի մը վրայ, աղիքներն գիրկն առած վերուց դէպ 'ի երկինքն ու աղաղակեց առ Աստուած . “Ո սոյն հատուցումն հատուսցիր դու նմա” ։ Այս աստուածավառ յուսով փրկութեան փոխեցաւ յաշխարհէ մեծ և չափազանց քաջասրտութեամբ ։

Հռաքս սիրաբորբոք տենչմամբ երկնային
Ոոհ և զոհարար անձնանուէր Լվին .
Տալով ինքնակամ զարև և զարիւն
Հզօր յաղթական եղև թշնամւոյն ։

Այս գործ է սիրոյ արարչականին
Չէ ըմբռն մարդոյ չէ իղձ մարդկային .
Դու չահատակեմ յԱնմահին սեղան
Սիրով խարուկեալ անծախ յաւիտեան :

ՀՌԵՄԻԿԻՈՍ էր սուրբ արքեպիսկոպոս Հռեմս քաղաքին Գաղղիոյ, որ առաքինութեամբ և իմաստութեամբ այնչափ մեծամեծ բարձրացաւ, մինչև քսանըչորս տարւան հասակով արժանի եղաւ արքեպիսկոպոսութեան : Ապա 'ի 496 ամի լուսաւորեալ դարձուց զԿղոդովէոս արքայն Գաղղիոյ, և մկրտեց հանդիսապէս անոր զօրքովը և իշխաններովը . և յորդորական քարոզով օրհնեց զթագաւորը, որդիքը, և յաջորդները խնդրելով 'ի Տեառնէ անսխալ պահել զնոսա ուղղափառ հաւատքին մէջ : Սուրբն Անաստաս Բ. պապն ալ գրեց արքային կոնդակ օրհնութեան մականուանելով “Անդրանիկ որդի սուրբ եկեղեցւոյ„ : Իսկ սուրբ հայրապետն Հռեմիկիոս յետոյ գրելով մէկ քանի հոգեշահ նամակներ սրբութեամբ փոխեցաւ առ Քրիստոս յամի 535, և դասեցաւ սրբոց կարգը :

ՀՌԵՄՓԱ Եբրայեցերէն կը թարգմանի Հսկայ, որ էր անուն պայծառ աստեղ և Քիուն կռոց, զոր կռամոլ Իսրայէլացիք պաշտեցին հեթանոսական աւելորդապաշտութեամբ, և անոր համար չարաչար կշտամբեց զանոնք Ամոս մարգարէն ասելով . “Առէք զվրանն Մողոքայ՝ և զաստղ աստուածոյն ձերոյ զՀռեմփայ, զպատկերս նոցա զոր արարէք ձեզ„ : Նոյնպէս սուրբն Ստեփաննոս ալ Հրէաներուն երեսը զարկաւ նոյն գործքը, որուն վրա կատղելով քարկոծեցին զնախավկայն ։ Ոմանք համարեցան թէ Հռեմփա էր անուն արեգական, զոր այլեայլ անուամբ կը պաշտէին հեթանոսները ։

ՀՌԻՓՍԻՄԷ որբափայլ գեղեցիկ կոյսն՝ էր Հռոմայեցի Դիոկղետիանոս կայսեր ժամանակը, Թագաւորական զարմէ բարեպաշտ ծնողաց զաւակ, և բարեսնունդ աշակերտ սրբուհի Գայիանէ մայրապետին ։ Երբոր կայսրը կարգուիլ ուզեց նկարեցին Հռիփսիմէին պատկերքն ալ բնութեամբ և տարին Թագաւորին, որ տեսածին պէս հրաման ըրաւ որ հարսնեց պատրաստութիւնը տեսնեն ։ Իսկ որբասէր կուսանքը լսելով այս սատանային որոգայթը՝ սկսան խնդրել աստուածային օգնութիւնը ։ Նոյն ատեն սուրբ Գայիանէ առաւ Հռիփսիմէն շատ ընկերներով և քահանաներով ու փախաւ Հայաստան 'ի Վաղարշապատ Թագաւորական քաղաքն Հայոց և նստան քաղաքէն դուրս հնձաններու մէջ ։ Որոնց համար կայսրը գրեց Տրդատ Թագաւորին, որ գտնէ ու փափաքելով ուզեց իրեն կնիկ առնուլ զՀռիփսիմէ կոյսն թէ՛ քաղցրութեամբ և թէ՛ բռնութեամբ ։ Իսկ սրբուհին զօրանալով 'ի Տեառնէ չի հաւանեցաւ արքային . և երբ բռնութեամբ տարին պալատը՝ նա դէմ դնելով չի մօտեցուց իրեն, և աստուածային զօրութեամբ յաղթելով արքային գետինը զարկաւ զան ու փախաւ ։ Սաստի Թագաւորը կատղելով հրամայեց որ կորընցընեն Հռիփսիմէն . դահիճները հասան, տարին նախ լեզուն կտրեցին, և ապա պառկեցուցին ու չորս ցցի վրայ կապելով մարմինը այրեցին, փորը պատռեցին, աչքերը փորեցին, և կտոր կտոր ընելով նահատակեցին երեսունւիրեք ընկերներով քաղաքէն դուրս ։ Որոնք ամէնքը մէկտեղ կ'անուանին Հռիփսիմեանք․ իսկ սուրբ նշխարքները ինը օրէն ետև սուրբ Լուսաւորիչ ամփոփեց ։ Տ․ Գայիանէ, և Գրիգոր Լուսաւորիչ ։

Հռիփսիմէ չքնաղ աստղ յարևմտից
Ծագեաց յարևելս յաշխարհ հայկազնից․
Հրաշագեղ պայծառ լուսաբեր հոգւոյ
Հրաւիրակ յերկին 'ի պարս անմարմնոց ։
Այլ աստուածաշնորհ գերահրաշ կուսան
Հարսնացեալ փրկչին քօղով սրբութեան
Վարդագոյն արեամբ թևացաւ յերկին
Առ փեսայն անճառ յանմատոյց արփին ։

ՀՌՈՄՈՒԱԼԴՈՍ աբբայ էր Հռաւեննայի հիմնադիր կարգին Կամալդուլեանց լռակեցից, որ մանկութենէն կրօնաւորելով եղաւ ճգնազգեաց, ներանձնաւոր և աստուածամերձ ։ Սա առաքինի վարքով և զուարթ քաղցրախօսութեամբ շատ մարդիկ շահելով կատարելութիւն սորվեցուց բարի օրինակովն ։ Տեսիլքով ալ սանդուղք մը տեսաւ կանգնած մէկ ծայրն երկինքը, որով վեր կ'ելլէին իր կարգին կրօնաւորներն ճերմակ զգեստով ։ Այսպիսի սքանչելի քաղաքավարութեամբ հաստատեց լռակեցից կարգը, և յարգելի եղաւ ամենուն, ուր հարիւր տարի ճգնելով փոխեցաւ սրբութեամբ առ Տէր հարիւրքսան տարուան 'ի 1027 ։

ՀՌՈՄՈՒԼՈՍ էր ազգապետ Հռոմայեցւոց և հիմնադիր Հռոմայ, թոռն Նումիտորի արքային, որ բռնութեամբ իւր եղբօրն Ամուլիոսի զրկեցաւ թագաւորութենէն և մէկհատիկ աղջիկէն: Ամուլիոս այս աղջիկը փակեր էր Վեստեան կուսանաց քով, որոնք նուիրեալ էին իբր զոհ չաստուածոց կամ մեռեալ աշխարհի, զի հոն պիտի մեռնէին առանց կարգուելու. անոր համար այս աղջիկը հոն դրաւ որ անզաւակ մնայ. բայց խորագէտ աղջիկը քիչ օրէն ետև եղաւ յղի, ու հաստատեց թէ այս յղութիւնը եղեր էր Արէս չաստուածէն, և այսպէս մահուանէ ազատեցաւ վարպետութեամբ. երբոր ծնաւ երկուորեակ մանչեր, Ամուլիոս հօրեղբայրը ձգել տուաւ զանոնք Տիբերիս գետին մէջ. բայց իր հովիւը տեսնելով տղաքը ջրին եզերքը առաւ տարաւ կնկանը տուաւ որ սնուցանէ: Իսկ այս կնկան անունն ըլլալով Լաւրենտիա Լուփա, և Լուփա լատիներէն նշանակելով էգ գայլ, անկէց ձևացուցին թէ գայլը ջրէն հաներ ու կաթովը սնուցեր է տղաքը, որոնք անուանեցան Հռոմուլոս և Հռեմոս. ապա մեծնալով զօրացան, և եղան գլուխ աւազակաց անապատներուն մէջ: Յետոյ երբոր իմացան բռնաւոր Ամուլիոսին անիրաւութիւնը և մօրերնուն խեղճութիւնը՝ բարկանալով ժողվեցին աւազակներն ու եկան չարագործին վրա սատկեցուցին. նա և նորէն նստեցուցին իրենց պապը՝ Նումիտորը իւր թագաւորական աթոռը: Իսկ իրենք գնացին քիչ մը հեռուն Տիբերիս գետին քով ուր որ զիրենք ձգեր էին՝ հիմնեցին մայրաքաղաքն 756 տարի Քրիստոսէն առաջ, որ Հռոմուլոսին անուամբը կոչեցաւ Հռոմ:

Հռոմուլոս հետզհետէ շինելով մեծցուց քաղաքն ու մօտակայ ազգաց ժողովրդով լեցուց.

ապա հաստատելով հոն ծերակոյտ ծաղկեցուց թագաւորութիւնը : Մինչ զի քիչ ատենի մէջ ունեցաւ հազար ձիաւոր , և քառասունըվեց հազար հետևակ զօրք · որոնցմով երբոր հանդէս մը ուզեց ընել , յանկարծ սոսկալի մրրիկ մ՚ ելաւ , զամէնքն իրար անցուց · քաջ Հռոմուլոս ալ հոն կորաւ կամ սպաննուեցաւ յիսունըհինգ տարուան երեսունըեօթ տարի թագաւորելէն ետև : Ու երբոր ժողովուրդը կուլային իրենց քաջ թագաւորին կորուստին վրայ , ծերակոյտը ձևացուց թէ Հռոմուլոս երկինքը հաներ են աստուածները · ուստի շուտով կռատուն մը շինեցին նորա անուամբն ու պաշտօն մատուցին կոչելով Կուիրինեան մեհեան :

ՀՌՈՔՈՍ կամ ՌՈՔՈՍ էր հրաշագործ սուրբ ուխտաւոր Գաղղիացի , որ 'ի մանկութենէ սկսաւ ճգնել աղօթքով , խորգով և պահօք : Ապա ծնողքը մեռնելէն ետև ամէն բաները բաժնեց աղքատներուն , ու կամաւոր աղքատութեամբ և պանդխտութեամբ կը շրջէր Իտալիայի ուխտատեղիներն : Ուր տարածուած ըլլալով ժանտամահը՝ Հռոքոս շատերը բժշկեց աղօթքով և նշանաւ սուրբ խաչին · մինչև ինքն ալ բռնուեցաւ ժանտախտէն ու բժշկեցաւ : Ապա երբ դարձաւ 'ի Գաղղիա՝ բռնեցին սուրբը իբրև լրտես , և անիրաւութեամբ բանտը դրին · ուր հինգ տարի սոսկալի նեղութիւն համբերեց առանց յայտնելու զինքը · մինչև փոխեցաւ առ Աստուած երեսունուերկու տարուան յամի 1307 : Ու իրեք օրէն ետև բացին բանտը , տեսան սուրբին մարմինը լուսափայլ և երկու կանթեղ վառած քովը · նաև ոսկեգիր տախտակ մը այսպէս գրած · " Բարեխօսութեամբ Հռոքոսի ազատ ըլլան ջերմեռանդները ժանտամահէն „ ։

Քաղաքապետն ըլլալով իւր հօրեղբայրը՝ երբոր իմացաւ սուրբին անմեղութիւնը և զարմանալի համբերութիւնը շատ ցաւեցաւ, ու մեծ պատուով թաղել տուաւ կանգնելով վկայարան անուամբ նորա ։ Իսկ նշխարքը փոխադրելով՚ի Վենետիկ հաստատեցին շքեղ եղբայրութիւն հանդերձ տաճարաւ . ուր անպակաս ըլլալով հրաշքը, Սրբազան պապք կարգեցին ՚ի դասս սրբոց, և կը տօնեն ։

ՀՍԿԱՅՔ կամ ՍԿԱՅՔ էին ծնունդք դստերաց Կայենի՝ ըստ սուրբ Գրոց, քաջք, զօրաւորք, բարձրահասակք և անզգամք, որոնց համար ասաց Աստուած . “ Մ՛ի մնասցէ ոգի իմ ՚ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան վասն լինելոյ դոցա մարմին ։ Նոքա էին սկայքն որ յաւիտենից արք անուանիք „ . և այլն ։ Ըստ հին պատմութեանց եղած են ժամանակով՝ սոսկալի հսկայք մեծամարմինք, որպէս վկայեցին Մովսէսի լրտեսները . ինչպէս էր և Ովգ արքայն Բասանու մնացուած հսկայից, որ ըստ սուրբ Գրոց ունէր ինը կանգուն երկայնութիւն և չորս կանգուն լայնութիւն ։ Նոյնպէս էր Գողիադ, և ուրիշ հսկաներն, որոնց մեծամեծ ոսկորները երբեմն գտուեցան հողին տակէն ։

ՀՐԵՇՏԱԿՔ և ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏՔ են զուարթուն հոգիք երկնից, դեսպանք և պատգամաւորք Աստուծոյ, աննիւթ և պարզ հոգեղէնք հաստատեալք ՚ի պահպանութիւն մարդկան, և մանաւանդ ՚ի փառաւորել զԱրարիչն ։ Հեթանոսք կը համարէին հրեշտակներն հաւասար Աստուծոյ կամ մարմնեղէն գոյացութիւն ։ Բայց եկեղեցին սահմանեց ըստ սուրբ Գրոց ․ թէ հրեշտակք են աննիւթ և անմահ , աստուածամերձ և շնորհալից , բիւրք բիւրուց հազարք հազարաց , ինն դասակարգութեամբ , որ են , Սերովբէք , Քերովբէք , Աթոռք , առաջին քահանայապետութիւն ․ Տէրութիւնք , Զօրութիւնք , Իշխանութիւնք , երկրորդ քահանայապետութիւն ․ Պետութիւնք , Հրեշտակապետք և Հրեշտակք , երրորդ քահանայապետութիւն ։ Սոքա ընդհանրապէս կ'անուանին երկնային զօրք , հրեշտակք և հրեշտակապետք ․ որոնց տօնը կը կատարենք վասն փառաբանելոյ զԱրարիչն , 'ի պատիւ յաղթութեան նոցա ․ որք ստեղծուածներուն պէս մերժեցին սատանային յորդորանքն ապստամբութ՟ե և հաստատեցան երանական շնորհքին մէջ , անուանելով պահապանք աշխարհի և բանակք Աստուծոյ , պաշտպանք երկիւղածաց և սուրբ եկեղեցւոյ , ինչպէս որ սուրբ Գիրքը յայտնի կը պատմէ անուամբ յիշելով Միքայէլ , Գաբրիէլ և Ռափայէլ ։

Միքայէլ հրեշտակապետն կը համարի ինչպէս զօրավար երկնից , որ իր զօրքովը կռուելով յաղթեց սադայէլին , և կարգեցաւ ընդհանրական խնամակալ հին և նոր եկեղեցւոյ ներհակ չարութեանց դիւին ։

Գաբրիէլ հրեշտակապետն է իբրև առանձին ընտանի և մերձաւոր ազգի մարդկան ․ շատ անգամ պատգամաւորութ՟բ յԱստուծոյ կողմանէ յայտնեց մեծամեծ խորհուրդներն մարդեղութեան Փրկչին խօսակցելով ընդ Տիրամօրն և ընդ Զաքարիայի այլովքն հանդերձ ։

Իսկ Ռափայէլ մականուանի Պահապան հրեշտակ, որ է մի եօթն գլխաւոր հրեշտակներէն գնալով առ Տովբիթ պահպանեց որդին վտանգներէն ճամբորդութեան մէջ, հարսն ալ հրաշքով ազատեց դիւահարութենէն, այլ և իւր աչքը բացաւ։

Հրեշտակք գերիմաստ էակք անմարմին
Հաստատեալք 'ի սպաս կամաց անբաւին,
Յիննեակ տրոհեալ դաս իբրև զօրք երկնից
Յօժան փրկութեան բանական էից։
Ո՛վ անճառահրաշ խնամոց Բարձրելոյն
Քանի՜ բարեգութ առ մեր փրկութիւն.
Անմահից յանձնէ զմահացուս անարգ
Ուղեկցիլ ընդ ելս յանմահական կարգ։

* * *

Ղ.

ՂԱԶԱՐ կամ ՂԱԶԱՐՈՍ, ըստ Եբր· թարգմանի օգնութիւն Այ, էր առաքինի բարեկամ Քրիստոսի, և եղբայր Մարիամու և Մարթայի։ Մեռնելէն և թաղուելէն չորս օր վերջը, Յիսուս յարութիւն տուաւ ու գերեզմանէն հանեց զինքն· և անկէ ետև տասնըհինգ տարի ալ ապրեցաւ ու ամենևին չծիծաղեցաւ մինչև 'ի մահը, միշտ մեռնելն յիշելով։ Սուրբն Եպիփան կը պատմէ, թէ Ղազարոս երեսուն տարուան էր երբոր յարեաւ և ապա ձեռնադրեցաւ եպիսկոպոս առաքեալներէն· և շատ տեղեր շրջելով կը քարոզէր զաւետարանը, և աստուածային հրաշագործութեամբ կը լուսաւորէր զանհաւատները։ Յետոյ աքսորուեցաւ 'ի Մարսիլիա և հոն ալ քարոզեց զՔրիստոս։ Նաև յետ կատարելոյ առաքելական քարոզութիւնը՝ վախճանեցաւ խաղաղութբ և սրբութեամբ 'ի Կիպրոս կղզին, ուր եղաւ ուխտատեղի։ Իսկ նշխարքը 'ի Թ դարուն փոխադրեցան 'ի Կոստանդինուպօլիս իւր անուամբ շինեալ վանքին եկեղեցւոյ մէջ։ Կը պատմեն թէ երբոր Լևոն կայսեր հրամանաւ գնացին սրբոյն մարմինը գտան 'ի Կիպրոս, տապանաքարին վրա այսպէս գրած էր· "Այս է Ղազարոս բարեկամն Յիսուսի չորեքօրեայ մեռեալն, և յարուցեալն 'ի մեռելոց, և յետ իջման Հոգւոյն սրբոյ 'ի վերնատունն՝ եպիսկոպոս ձեռնադրեալ յառաքելոյն սրբոց, եկն 'ի Կիտուամ քաղաքս Կիպրոսի և քարոզեաց աստ զՔրիստոս, և մեռաւ խաղաղութեամբ յետ ժե տարւոյ յարութեանն իւրոյ . . . Եղաւ յայսմ տապանի ,, ։

Ղազար բարեբաստ մեծապանծ իշխան
Սրբոյն Աստուծոյ ընտիր բարեկամ.
Յորմէ վերառեալ 'ի դրանց դժոխոց
Գտաւ փառաբան փրկողին խնամոց ։
Բանի անհաս շնորհք են գոլ փարելի
Բարեշուք գործով Փրկչին Յիսուսի .
Նման 'ի մահուն ահընկեց դիւաց
Ժառանգորդ երկնից անսպառ բարեաց ։

ՂԱԶԱՐ Փարպեցի էր վարդապետ Հայոց, ընտիր պատմագիր, Ճարտասան անուանեալ. որ մանկութեան ատենը աշակերտեցաւ երանելոյն Աղանայ Արծրունւոյ կրօնաւորի, հետևելով սրբութեան և իմաստութեան նորա ։ Յետոյ կարգեցաւ վերակացու Էջմիածնայ աբեղայից կրթութեան և վարժատան 'ի մեծէն Վահանայ Մամիկոնեան, որուն խնդրելովը գրեց մէկիկ մէկիկ իւր ժամանակին պատմութիւնը ։ Գեղեցիկ կը պատմէ Վարդանանց և Ղևոնդեանց նահատակութիւնը . այլ և Մեծին Վահանայ Մամիկոնեան իշխանապետին մեծամեծ գործքերն ու քաջութիւնները, մինչև փառաւորապէս հաստատուիլը Մարզպան Հայոց կամ փոխարքայ ցամ Տեառն 485 ։ Տ . Վահան ։

ՂԱՒՐՈՍ և ՓՂՈՐՈՍ էին երկուորեակ եղբարք 'ի Կոստանդնուպօլիս քարակոփք, որք հալածմանքին ատենը ելան գնացին Լիւրիկիա։ Ուր Լիկիանոս իշխանը տուաւ իրենց արծաթ և գործաւորներ որ տաճար մը շինեն կռոց. բայց նոքա արծաթը բաժնեցին աղքատներուն, և տաճարը նուիրեցին ճշմարիտ Աստուծոյ երկնի և երկրի, կուռքերն ալ կոտրտեցին կորուսին։ Իշխանը սաստիկ կատղելով կրակը ձգել տուաւ զիրենք. ուր երբոր չէրեցան, չարաչար ծեծով խորունկ գուբի մը մէջ ձգեց և աւազով ծածկել տուաւ. իսկ նոքա ուրախութ̃բ նահատակեցան վասն Տեառն։ Յետոյ մեծին Կոստանդիանոսի ժամանակը այս երանելիքս տեսիլքով յայտնեցին իրենց նշխարաց տեղը. զոր հանեցին տարին 'ի Կոստանդնուպօլիս, պատուով հանգուցին եկեղեցւոյ մէջ, և հաստատեցին տօն։

ՂԵՒԻ էր երրորդ որդի Յակոբ նահապետին ծնեալ 'ի Լիայէ, որուն որդին Կահաթ Մովսիսի պապն գնաց յԵգիպտոս իրեք որդւով, մեռաւ հարիւրյիսուներեօթ տարուան։ Սորա ցեղն քահանայութիւն կ'ընէր Յուդայի ցեղին հետ. ինչպէս Եղիսաբէթ որ Յուդայի ցեղէն էր ու Ղևտայի Զաքարիա քահանային կին եղաւ։ Ղևեայ ցեղն ալ որ են Ղևտացիք հաստատեցան 'ի Տեառնէ քահանայք մատուցանել զոհս, խունկս և ծառայել խորանին վկայութեան։ Ասոնք չունէին սեպհական երկիր, վասն զի Աստուած չի տուաւ այս ցեղին ժառանգութիւն Աւետեաց երկրէն. այլ նոցա եկամուտն ու ապրուստն էր տաճարին տասանորդները և պատարագները ըստ հրամանաց

Տեառն․ որ գրուած էին զանազան քաղաքներ ամէն ցեղերուն մէջ ։ Եւ կը ջանային որ Մովսիսի Ղեւտական գրքին մէջի ամէն ծէսերը և պատուիրանները հին օրինաց լաւ պահեն և պահել տան ամենուն․ զի այն գիրքն էր իրենց հոգևոր ծիսարանը ։

ՂԵՒՈՆԴ երէց և սուրբ վարդապետ էր երևելի աշակերտ սրբոյն Սահակայ, աստուածիմաստ Թարգմանիչ, լցեալ Հոգւով սրբով, որ քաջութ՟բ առաւ եկեղեցականներն ու ժողովուրդն, ելաւ Պարսից կրակապաշտ մոգերուն դէմ և քարով փայտով զարկաւ հալածեց, որոնք պիտի Հայոց ազգը կրակապաշտ դարձընէին ։ Ասով զօրացաւ ազգը, և ուրիշ քաղաքներէն ալ վռնտեցին կրակապաշտներն ու քաջացան սուրբ հաւատքով, մինչև սարսափեցուցին անօրէն անհաւատները ։ Այս երանելին գուշակեց ուրացող չար Վասակին կորուստ ասելով․ “Եթէ արդարև դու կենդանութ՟բ զգլուխդ 'ի վերայ ուսոցդ 'ի Հայս տանիս, ապա ընդ իս Տեառն Աստուծոյ չէ խօսեցեալ” ։

Ղեւոնդեանք անուանեցան սուրբ նահատակակիցք Ղեւոնդի, որք էին Յովսէփ կաթողիկոս, Սահակ եպիսկոպոս, Մուշէ երէց, Սամուէլ և Աբրահամ քահանայք ։ Սոքա և սուրբն Ղեւոնդ մեծ արիութեամբ պաշտպան կեցան քրիստոնէութեան ընդդէմ Պարսից, և զօրացուցին 'ի Քրիստոս ամենայն ճշմարիտ հաւատացեալներն Հայոց ։ Եւ գտնուելով սուրբ Վարդանայ մեծ բանակին մէջ սիրտ կուտային նահատակներուն, որ քաջութեամբ պատերազմին կրակապաշտներուն դէմ վասն 'ի Քրիստոս հաւատոց ։ Տ․ Վարդան ։

Անոնց նահատակութենէն ետև Պարսիկները բռնեցին այս սուրբ քահանայքս ծանր կապանքով տարին Պարսկաստան. ուր իրեք տարի տառապելէն ետև հրաշքով դարձուցին անոնց Մոգպետը ՚ի Քրիստոս, որ նահատակեցաւ հաստատ հաւատքով։ Ապա կրկին և կրկին հարցափորձութեանց ետև նահատակեցին առաջ Արշէն երէցն սրով, ապա Սահակ եպիսկոպոս, Յովսէփ կաթուղիկոս, Մուշէ երէց, և Քաջաջ սարկաւագ։ Իսկ Ղեւոնդ երէցը իբրև պարագլուխ սրբոց՝ նախ քարշեցին քարաժայռ տեղերէն տանջելով, և ապա գլխատեցին։ Այլ Սամուէլ և Աբրահամ երէցները ընդ Թաթիկ եպիսկոպոսին ուրիշ տեղ նահատակեցան։ Նոյն ժամանակն եղան ահագին սքանչելիք սուրբերուն լուսափայլ նշխարաց վրան. ուր քրիստոնեայ մը Խուժիկ ժողվեց սուրբ մարմինները ծածուկ և տարաւ ամփոփեց մեծաւ յարգութ՟ք յամի Տեառն 454. իսկ հրաշագործ ոսկորներէն առաւ բաժնեց քրիստոնէից և բանտարկեալ նախարարաց ՚ի հաստատութիւն հաւատոյ և ճշմարտութե՟։

Քրիստոսազօր քաջ հովիւք շնորհալիք
Ղեւոնդեան հայք սուրբք երկնահրաշ արիք,
Մատեան յասպարէզ դիւախորոխտ մարտից
Շիջուցին ըզլռոց կրակապաշտ Պարսից։
Ճշմարիտ ծնունդք հօր Լուսաւորչին
Զոհեալք ՚ի սէր Տեառն և ՚ի սէր հօտին,
Հարին զթշնամին հեղմամբ սուրբ արեանց
Զերծուցին ըզհօտն յահեղ գայլանաց։

ՂԵՒՈՆԴԷՍ էր քաջ զօրական աստուածապաշտ ՚ի Տրապօլիս, ուր Ադրիանոս դատաւորն ղրկեց զՀիւպատիոս զօրագլուխն ու Թէոդուլոս զօրականն, որ բռնեն զՂեւոնդէս: Ան ատեն սաստիկ ջերմն բռնեց Հիւպատիոսին ու սկսաւ կանչել իրեք անգամ. Աստուած Ղեւոնդիոսին օգնէ՛ ինծի. և մէկէն առողջացաւ. ուստի շուտ մը գնաց Ղեւոնդիոսին քով հաւատալով Քրիստոսի և Թէոդուլոսին հետ միատեղ մկրտեցաւ: Դատաւորը երբոր լսեց իրեքն ալ բերել տուաւ առաջը. և որչափ ջանացաւ սաստիկ տանջանքներով բաժնել զանոնք Քրիստոսէն, նոքա առաւել զօրանալով կը համբերէին բերկրութեամբ վասն սուրբ հաւատոյ, մինչև նահատակեցան և տօնեցան հրաշագործութեամբ:

ՂՈՎՏ էր եղբօրորդի Աբրահամու, և ըստ սուրբ Գրոց՝ այր արդար ձանձրացեալ յանօրէն չարագործութեանց Սոդոմացւոց. որոնց մէջէն հանեց Աստուած զարդարը ձեռամբ հրեշտակաց մեծ հրաշքով: Իսկ կինն Ղովտայ երբոր ետևը դարձաւ, արձան աղի կտրեցաւ երկմտութեանը համար. զի չի հաւատաց հրեշտակին խօսքին, որ պատուիրեր էր իրեն որ ետ չի դառնայ. անոր համար պատժեցաւ:

ՂՈՒԿԱՍ Աւետարանիչ՝ էր Անտիոքացի բժիշկ, պատկերահան, և ճարտար գրիչ. որ գնաց յԵրուսաղէմ, և տեսնելով Յիսուսի սքանչելագործութիւններն հաւատաց, և միացաւ աշակերտաց հետ: Ապա շատ անգամ ուղեկից և գործակից ըլլալով Պօղոսի և այլոց սրբոց առաքելոց, գրեց սուրբ աւետարանը Հոգւով սրբով, Պօղոս առաքեալին յորդորանքովը և Թէոփիլոսի աշակերտին խնդիրքօմը ․ նոյնպէս գրեց գեղեցիկ կարգաբանութեամբ Գործք առաքելոց գիրքը ։ Աստի առաքելահրաշ քարոզութեամբն և սքանչելագործութեանցն համար շատ հալածանք քաշեց անհաւատներէն ․ և յետ բազում հոգևոր և մարմնաւոր բժշկութեանց, նկարեց քանի մը պատկերք Աստուածամօրն՝ Յիսուս գիրկը ինչպէս մէկն ալ է ՚ի Վենետիկ ։ Որ և այսպիսի աստուածահրաշ սրբութեամբ ապրեցաւ ութսունուիրեք տարի կուսակրօն սրբութեամբ ըստ սրբոյն Հերոնիմոսի, և ապա մեծամեծ արդեամբք հանգեաւ յԵլլադա խաղաղութեամբ ․ իսկ սուրբ մարմինը ժամանակէն ետև փոխադրեցաւ ՚ի Կոստանդնուպօլիս, և յետոյ ՚ի Պատուա ՚ի հոյակապ եկեղեցին սրբոյն Յուստինեայ կուսին ։

Ղուկաս լուսապանծ աւետարանիչ
Պատմող յարութեան գերափառ գրիչ ․
Օ գործս յիսուսեանց և զառաքելոց
Քաջ կարգաբանեալ պերճ հանդիսացոյց ։
Գովեալ աշակերտ յաւետարանի
Ճարտար գործակից մեծին Պօղոսի ․
Ճգնեալ մինչ ՚ի մահ ՚ի գիր և ՚ի բան
Արդեամբք փայլեցաւ ըստ շքեղ անուանն ։

ՂՈՒԿԻԱՆՈՍ կամ ՂՈՒՆԿԻԱՆՈՍ էր ճըգնազգեաց երէց Անտիոքայ եկեղեցւոյն, ջերմ աստուածասէր և գիտնական, որ ունէր շատ աշկերտներ ․ ոմանք եղան քահանայ և եպիսկոպոս, և ոմանք մարտիրոս ըստ մարգարէութեան երանելոյն ։ Դիոկղետիանոսի հալածանքին ժամանակը գնաց ՚ի Նիկոմիդիա, ուկը քաջալերէր նահատակները, նաև ուրացողները կը դարձընէր առ Քրիստոս ։ Նա այսպէս յայտնի կը քարոզէր առաքելաբար զբանն կենաց մեծամեծ հրաշքներով, մինչև թագաւորն ալ վախնալով համարձակ երեսը նայելու վարագոյր կախեց ու այնպէս խօսեցաւ սրբոյն հետ · բայց երբոր յաղթուեցաւ նորա զօրաւոր վարդապետութենէն, հրամայեց ծեծել և տանջել չարաչար ։ Յետոյ բանտին մէջ սովամահ նահատակեցին հեթանոսները · իսկ մարմինը ծովը ձգեցին · բայց հրաշքով ելաւ և թաղեցաւ 'ի Հեղինուպօլիս · ապա մեծն Կոստանդին վրան տաճար կանգնեց, և Ոսկեբերան ներբողեց ։

ԼՈՒԿԻՈՍ Ա · սուրբ քահանայապետն Հռոմայ օծաւ պապ յամի 255, որուն գործքը մեծ գովեստով կը պատմէ սուրբն Կիպրիանոս թէ սքանչելի քաջութեամբ հալածական ըրաւ Նովատեան հերետիկոսներն ու զօրացուց սուրբ հաւատքը ամենայն բարեկարգութեամբ ։ Մինչև ապա մատնեցաւ անհաւատներուն ձեռքը, և տանջանքով պսակեցաւ մարտիրոսական մահուամբ 'ի 257 ·

ԼՈՒԿԻՈՍ Բ · ընտրեցաւ յաջորդ սրբոյն Պետրոսի 'ի 1144, որ մեծ ջանքով հետևեցաւ ապստամբները կարգի բերելու և ամենայն անկարգութիւնը վերցընելու ։ Անոր համար շատ զօրաւոր կոնդակներ ալ գրեց թագաւորներուն և իշխաններուն, և շատ նեղութիւն քաշելով միւս տարին վախճանեցաւ առաքինութեամբ ։

ԼՈՒԿԻՈՍ Գ · Լուքքացի նստաւ քահանայապետ յաթոռ Հռոմայ 'ի 1181, և իմաս-

տութեամբ կառավարելով ընդհանուր եկեղեցին Քրիստոսի և ամէն տեղ նամակներ գրելով քաղցր վարդապետութեամբ զօրացուց հաւատքը։ Գրիգոր Տղայ կաթուղիկոսն Հայոց գրեց թուղթ հպատակութեան առ սրբազանն Լուկիոս, և ընկալաւ պատասխանին ընծաներով։ Ներսէս Լամբրոնացին այսպէս կը պատմէ. "Ընկալեալ կաթուղիկոսին սրբոյ զպատուական Պալիումն և զխոյրն 'ի լրումն պատուոյ իւրոյ՝ գոհացաւ զԱստուծոյ, և ետ զնամակ հայրապետին և զգիրս կարգաց եկեղեցւոյ յիւր նուաստութիւն թարգմանել"։ Իսկ Լուկիոս մեծ քահանայապետն փոխեցաւ առ Տէր 'ի 1185։

ԼՈՒՆԿԻԱՆՈՍ *հարիւրապետ է այն, որ 'ի խաչելութեան Յիսուսի պահապան կեցած էր զօրքովն 'ի Գողգոթա։ Ուր երբ տեսաւ յայտնի հրաշքները և ահաւոր աւանդումն հոգւոյ Փրկչին կենդանի աստուածային ձայնիւ, կանչեց թէ "Արդարև Աստուծոյ որդի էր սա"։ Ըստ ոմանց սա էր այն զօրականն, որ տիգով խոցեց Քրիստոսի կողն ու Յիսուսի սուրբ արիւնովը՝ կոյր աչքը լուսաւորեցաւ։ Յետոյ պահապան դրուեցաւ սուրբ գերեզմանին. և երբոր Հրեաները կաշառ տուին պահապաններուն, որ Յիսուսի յարութիւնը ծածկեն, Լունկիանոս և երկու ընկերները չառին, այլ հաւատալով մկրտեցան Առաքեալներէն։ Ապա գնաց 'ի Կապադովկիա իրեն գաւառը կը քարոզէր զՔրիստոս, մինչ զի Պիղատոս ամբաստանելով առ կայսրն գլխատել տուաւ երկու ընկերովը. և գլուխը տարին յԵրուսաղէմ աղբանոցը ձգեցին. բայց ժամանակէն ետև յայտ-*

նուեցաւ կոյր կնկան մը աչքը բացուելով բարեխօսութեամբ սուրբ Լունկիանոսին ։ Մանդուա քաղաքը Իտալիոյ յեկեղեցին սուրբ Անդրէի պատուով կը պահեն Յիսուսի կողին սուրբ արիւնը այսպիսի յիշատակարանով լատիներէն գրած ․ “ Ես Լունկիանոս երբեմն հարիւրապետ հաւատալով Քրիստոսի՝ զայս կողէն վազած արիւնը առի և հոս պահեցի , մինչև որ Աստուած յայտնէ ճշմարիտ պաշտօնէից իւրոց „ ։

Մեհ հարիւրապետ Լունկիանոս հզօր
Նորջանիկ քարոզ անճառ բանին Հօր ․
Ի մերժիլ Հրէից ապիրատ ազգին
Օտարք մերձ գտան վշտակից Փրկչին ։
Խաչահանք Միածնին եղեն բարերար
Իսկ ժպիրհ Հրեայք կուրեան չարաչար ․
Հեթանոսք ժառանգ լեալ երկնաւորին
Նոքա դառնաղէտ պատժոց գեհենին ։

Ճ.

ՃԻՆԿԻԶ ԽԱՆ էր բազմայաղթ և մեծազօր ինքնակալ արքայ Թաթարաց, որ 'ի 1202 յաղթելով ուրիշ Թաթար խաներուն տիրեց քաջութեամբ բոլոր Թաթարստանու : Յետոյ տիրելով Պարսկաստանու ալ՝ ըրաւ ընդարձակ միապետութիւն, և քսանևերկու տարի պատերազմելով իշխեց մեծ մասին Ասիոյ, և անուանեցաւ Աշխարհակալ : Ճինկիզ խան սահմանեց օրէնք պաշտելու մի Աստուած անմահ արարիչ երկնի և երկրի, նաև քաղաքական իրաւունք և բարեկարգութիւններ մտուց Թաթարաց մէջ : Ուխաթա որդին յաջորդ դրաւ իրեն և թագաւոր Մողոլից . իսկ Թուշի որդւոյն տուաւ Աժտէրխան, Թուրքաստան և Օզպէկ Թաթարները : Եւ սորա որդին Բաթու յարձակեցաւ 'ի Լեհաստան, Մաճառստան, և մինչև 'ի Կոստանդինուպօլիս . սորա ցեղէն են Ղրիմի Թաթարները . որ տիրեցին 'ի Տաւրիս հինգհարիւր տարի մինչև 'ի Շահին Գէրէյ խան, որ յանձնեց տէրութիւնը Ռուսաց : Իսկ Ճինկիզ խան բոլոր տէրութեան սահմանները կարգադրելէն վերջը պատրաստեցաւ որ ելլէ Չինաց թագաւորութեան վրայ . բայց հասաւ իրեն մահը, և քսանըչորս տարի քաջութեամբ թագաւորելէն ետև մեռաւ եօթանասունևերկու տարուան յամի 1226 . և թողուց չորս զօրաւոր որդիք, Ուխաթա, Ջալթա, Թուշի, Թուլի. և սորա որդին էր Մանգոյ խանն, որոնց ամենուն տէրութեանը վրայ յետոյ տիրապետեց Լէնկթէմուր բռնակալն։

ԺԻՒԱՆ կամ ՅՈՎՀԱՆՆԷՍ Գայլէր Թագաւոր Հայոց 'ի Կիլիկիա, որ մականուանեցաւ Կոստանդին Գ.։ Նա էր եղբօրորդի Թագաւորին Կիպրոսի, հօր կողմանէ Լատին, և մօր կողմանէ Հայ, որդի Զաբելոնայ աղջկան Գ. Լեւոնի։ Երբոր Լեւոն Ե. մեռաւ անժառանգ՝ Ժիւանը նստուցին յաջորդ նորա 'ի 1342, որ անխոհեմութեամբ սկսաւ փոփոխել Թագաւորութեան առաջին կարգը. ոչ խնամք ունէր ազգին վրայ, և ոչ քաջագործութիւն մը Թշնամեաց դէմ կրցաւ ընելու. այլ առաւել անմիտ գտնուեցաւ երբոր հրամայեց որ Հայոց եկեղեցնայ արարողութիւնները փոխեն ու Լատինի ծէս մտցնեն։ Ասով ազգը կատղելով ելան բազմութեամբ վրան, ու զարկին սպաննեցին Թագաւորութեանը երկրորդ տարին, որուն յաջորդեց Գուիտոն եղբայրը։ Տ. 'ի կարգին։

Եղկելի արքայ Ժիւան անիմաստ
Գահավէժ բերմամբ անկաւ չարաբաստ.
Աւաղելի բաղդ՝ երբ զուրկն յիմաստից
Տքնի ձեռներէց գոլ գերագունից։
Տիրող պահոյից է իմաստութիւն
Ոչ փարթամ զօրեղ ոչ խրոխտ պերճութի.
Այլ խոհեմամիտ Թագաւոր արդար
Հայր է աշխարհին բիւր բարեաց պատճառ։

Մ .

ՄԱԿԱԲԱՅԵՑԻՔ էին նոյն քաջ վկայք հին օրինաց, որք նահատակեցան ջերմ սիրով վասն պահպանութեան աստուածատուր օրինաց՝ անօրէն Անտիոքոս կռապաշտ արքային հալածանաց ժամանակը ։ Սոքա դէմ ելլելով անարգեցին զարշ կուռքերը և քաջութեամբ խայտառակեցին կռապաշտութիւնը . մանաւանդ Յուդայ Մակաբէին առաջնորդութեամբը, որուն պերճ անուամբը ամէնքն ալ Մակաբայեցիք անուանեցան ։

Իսկ այս նահատակներն էին՝ Եղիազար քահանայ ծերունի, օրէնսգէտ և առաքինազարդ, որ չուրացաւ աստուածպաշտութիւնը և չի կերաւ անոնց պիղծ զոհեալն . ուստի չարաչար տանջանքով նահատակեցին ։ Նոյնպէս բռնեցին Շամունէ քաջասիրտ կինն եօթը որդւով կը նեղէին որ ուրանան ու կռապաշտ ըլլան ։ Նոյնք թագաւորին ատենին մէջ անանկ համարձակ դաւանեցին աստուածպաշտութիւնն ու քաջութեամբ անարգեցին թագաւորը, որ կատղելով մէկիկ մէկիկ տոկալի տանջանքներով նահատակել տուաւ ։ Յետոյ նահատակեցին պառաւքինին Շամունէ, որ մինչև 'ի վերջը կեցեր զաւակացը սիրտ կուտար, որ քաջութեամբ մեռնին վասն օրինացն Աստուծոյ ։

Զասոնք ներբողեցին ճառով սուրբ Հարք, Ոսկեբերան, Աստուածաբան, և այլք. նաև ամենայն քրիստոնեայք կը կատարեն անոնց տօնը։

ՄԱԿԱԲԵԱՆՔ Ասմոնեան էին իշխանաւոր քահանայապետք Հրէից, որպէս Մատաթի և հինգ որդիքը՝ Յովհաննէս, Շմաւոն, Յուդայ Մակաբէ, Եղիազար, և Յովնաթան՝ աստուածապաշտ դիւցազունք։ Մակաբայեցւոց գրոց մէջ կարգաւ կը պատմին ասոնց արիական գործքերն ընդդէմ արքային Ասորւոց, վասն ազատութեան հաւատոյ և պաշտպանութեան օրինացն Աստուծոյ։ Որոնց իշխանութիւնը տևեց որդւոց որդի մինչև ցՀերովդէս և մինչև ցՓրկիչն Մեսիայ։ Կը պատմի թէ Յուդայ Մակաբէի դրօշակին վրա գրած էին այս տառերը Մ. Կ. Բ. Ի. որ ըստ Եբր. կը նշանակէին. “Ո՞վ իցէ նման քեզ յաստուածս Տէր. և կամ ո՞վ նմանիցէ քեզ փառաւորեալդ ’ի սուրբս„. իսկ գրերը Մակաբէ կը կապեն։ Տ. Յուդայ Մակաբէ։

Մօրըն զուգընթաց մանկունք գըգուելի
Գոռ բռնաւորաց հարան ’ի դիմի,
Ոչ ահ տանջանաց ոչ սէր կաթոգին
Յանմահ պըսակացն արգել ըղձօսին։
Վառեալ Մակաբեանց ’ի սէր Անեղին
Մարտեան ընդ զինուց Անտիոքոսին.
Փշրեալ ըզբագինս դիցամոլ ժանտից
Ամբարձին սեղան արքային երկնից։

ՄԱԿԱՐ կամ ՄԱԿԱՐԻՈՍ Մեծն էր մեծանուն ճգնաւոր հրաշալի վարքով և հոգելից խրատաբանութեամբ․ որ աշակերտ ըլլալով սրբոյն Անտոնի ջանացաւ նման ըլլալ անոր սրբութեամբ։ Աստի կարգեցաւ առաջնորդ շատ միանձանց, և անուանի եղաւ հրաշագործութեամբ․ որուն կ՚երթային ցաւագարները ամէն կողմանէ բժշկուելու համար, մինչև որ սրբութեամբ վախճանեցաւ ՚ի 391։

ՄԱԿԱՐԻՈՍ, ՄԱԿԱՐ և ՄԱՐԿՈՍ անուամբ ուրիշ ճգնաւորներ ալ եղան յետոյ, և սքանչելի սուրբ վարքով և հրաշագործութեամբ առաքինացան նման Մեծին Մակարայ մինչև փոխեցան առ Աստուած, ինչպէս որ կը պատմէ Հարանց վարքը։

ՄԱԿԱՐԻՈՍ կամ ՄԱԿԱՐ եպիսկոպոս Հայոց, որ ծնեալ յԱնտիոք ՚ի բարեպաշտ ծնողաց մկրտեցաւ ՚ի Մակարիոսէ եպիսկոպոսէն, և ՚ի 995 յաջորդեց նորա աթոռը։ Շատ առաքինի և սրբակաց, աստուածիմաստ և աղքատասէր էր․ անանկ որ եպիսկոպոսարանը լեցուած էր աղքատներով և հիւանդներով, որոնց իր ձեռքովը կը բաժնէր կերակուրն ու կ՚առողջցընէր ցաւոտները։ Եւ այնչափ շատ հրաշքներ եղան սրբոյն ձեռքովն՝ որ առաւ չորս աշկերտն ու փախաւ փառքէն դէպ ՚ի Պաղեստին ուխտաւորի նման․ բայց ճամբան շատ սքանչելիք ըրաւ խաչագլուխ գաւազանովն։

Իսկ երբոր յԵրուսաղէմ կը քարոզէր՝ անհաւատները բռնեցին տանջեցին զերանելին․ ուր անվնաս մնալով՝ քանի մը հեթանոսներ քրիստոնեայ եղան․ և անունը այնչափ փառաւորեցաւ՝ որ անկէց ալ ելաւ գնաց ՚ի Փլանդրիա ՚ի 1011, և նստաւ սուրբ Բաւոնի վանքը մինչև փոխեցաւ առ Քրիստոս սրբութեամբ և հրաշագործութեամբ 'ի 1012, ուր հրաշագործ գերեզմանն եղաւ ուխտատեղի ։ Ապա 'ի 1067 սուրբ մարմինը փոխադրեցին զանազան տեղեր խորաններ շինելով և եղբայրութիւն հաստատելով 'ի սէր սրբոյն ։

ՄԱԿԵԴՈՆ էր պատրիարգ Յունաց Կոստանդինուպօլսոյ 'ի Դ դարուն, որ եղաւ Հոգեմարտ աղանդապետ ուրանալով Հոգւոյն սրբոյ աստուածութիւնը, և կոչեցաւ 'ի սուրբ Հարց՝ Մակեդոն հայհոյիչ և գայլ ապականիչ ։ Իսկ հետևողներն անուանեցան Հոգեմարտք, վասն զի կը հայհոյէին, թէ Որդին է միայն նման Հօր և Հոգին արարած ։ Կեղծաւորելով կը ջանային դրսէն սուրբ և ժուժկալ երևնալու. բայց ներսէն պիղծ և անօրէն էին ։ Մակեդոն նզովեցաւ նախ յԱղեքսանդրիա, և ապա ընդհանուր Կոստանդինուպօլսոյ ժողովը չարաչար նզովեց Մակեդոնը և բոլոր Հոգեմարտ հերետիկոսները. վերջը աքսորուեցան մինչև 'ի Ռուսաստան և հեռու աշխարհներ ։

ՄԱՀՄԷՏ կամ ՄՈՒՀԱՄՄԷՏ էր գլուխ Մահմէտականաց աղանդին, ծնեալ 'ի Մէքքէ յամի Տեառն 570, և մեռեալ 'ի 631 ։ Ուզեց օրինաց գիրք մը հանել և անով Արաբացիք կռապաշտութենէն դարձընել. ուստի տասնըհինգ տարի աշխատելով տեղեկացաւ ուրիշ ազգաց կրօնքներուն ։ Նաև ամէն տարի կ'ելլէր կ'ըսեն, Հերայ լեռան վրա ամիս մը կը կենար, ու Արաբները հոն ժողվելով կը քարոզէր, որ հաւատան իր շինած օրինաց գրքին որ Կուրան անուանեց. և աս է կ'ըսէր կրօնք

Աբրահամու, Իսմայէլի, Յիսուսին և մարգարէից ։

Մահմէտին հետևեցան Արաբացիք, Հագարացիք և Սարակինոսք. և երբ աւելի զօրացաւ, միացան Պարսիկք, Բարբարոսք, Թուրք, Սկիւթացիք, և այլք ոյք առ հասարակ կ՚անուանին Մահմէտական ։ Մահմէտ շատ հնարք բանեցուց զամենքը հնազանդեցընելու. մինչ զի Մեքքէի դատաւորները կասկածելով ուզեցին սպաննել զինքը. բայց իմանալով փախաւ գնաց Մէտինէ. և այս փախուստը կոչեցաւ Հէճրէթ կամ Հէճիրա ։ Ասկից կը սկսի թուականն Հագարացւոց յամի Տեառն 622. յուլիսի 16 ։ Հօն սկսաւ զօրանալ և տիրել Արաբներուն նաև ուրիշ աշխարհքներուն՝ քարոզելով այսպէս թէ “ Մարգարէները ունէին զանազան կերպ քարոզութեան. և Յիսուս անուշութեամբ քարոզեց. իսկ մերը սրով պիտի հնազանդեցընէ օրինացս, որ չէ ներելուկ „ ։

Կուրանին սկիզբն գրած է թէ Գաբրիէլ հրեշտակն իրեն երևնալով տուն տուեր է որ գրէ օրէնքը. իսկ Աբուպէքիր, Ալի, Օսման, և Իօմէր կը վկայեն թէ Գաբրիէլ բերաւ Մահմէտին ոսկեգիր մագաղաթէ տետրակ մը, ուր գրած էին օրէնքն մահմէտական, որ կը քարոզէ աստուածսիրութիւն և եղբայրսիրութիւն, յարութիւն մեռելոց, վերջին դատաստան և յաւիտենական պատիժ դժոխքին ։ Ընդունի հին և նոր կտակարանը դնելով չորս գիրքն երկնքէն իջած. այսինքն Թէվրատ՝ հին կտակարան, Զէպուր՝ սաղմոս, Ինճիլ՝ աւետարան և Կուրան ։

Նաև կ՚ըսէ թէ Յիսուս է Մեսիայն խոստացեալ, բան և հոգի Աստուծոյ, առաքեալ և

Մարգարէ, ծնեալ 'ի Կուսէն Մարիամայ. Իսկ աւետարանը քարոզեցաւ ազգէս աշկերտներէն, և միայն աստուածային յաջողութբ̃ ծաւալեցաւ հալածանքով քիչ ժամանակի մէջ։ Այլ և 'ի պատիւ Տեառն կը դնէ ըստ Երեւութական աղանդաւորաց, թէ Հրէայք չի կրցան չարչարելու զանչարչարելի Յիսուսը, այլ նորա նմանութիւնը խաչեցին, և ինքն վերացաւ երկինքը առ Աստուած, և այլն։

Կը պատուիրէ թլփատութիւնը, և օրը հինգ անգամ աղօթք լուացուելով. մէկ ամիս ծոմ պահել ցորեկը. ուրբաթները սուրբ պահել. զգուշանալ գինիէն, խոզի միս և արիւն ուտելէն, և այլն։ Իսկ ժողովուրդին սիրտը շահելու համար օրինաւոր կը դնէ բազմակնութիւնը և մարմնաւոր հեշտութիւնը թէ հոս և թէ 'ի հանդերձեալն իբր վարձք Մահմէտականաց. նաև թոյլ կուտայ որ օրէնքին դէմ եղողներուն ապրանքը յափշտակեն ու սրով կոտորեն։ Ահա այսպէս Կուրանին վարդապետութիւնը խառն է հին և նոր օրինաց հետ։

ՄԱՂԱՔԻԱՍ թարգմանի հրեշտակ, որ է փոքրամնատեան և վերջին մարգարէ յետ գերութեան Բաբելացւոց։ Աս շատ կը ջանար Նեէմիին հետ միատեղ հաստատելու Հրէից մէջ աստուածպաշտութիւնը և օրինապահութիւնը, որոնք պակսեր էին հեթանոսներուն մէջ բնակելով։ Իր ատենը կատարեցաւ տաճարին շինութիւնը Զօրաբաբելի ձեռքով։ Մաղաքիա մարգարէացաւ, թէ յայս տաճար պիտի գայ Մեսիայն, ասելով. “Ահա ես առաքեմ զհրեշտակ իմ, և տեսցէ զճանապարհս իմ, և յանկարծակի եկեսցէ 'ի տաճար իւր

Տէրն զոր դուք խնդրէք, և հրեշտակն ուխտի զոր դուք կամիք։ Ահաւասիկ գայ ասէ Տէր ամենակալ»։ Կատարեցաւ այս մարգարէութիւն. վասն զի գալով Փրկիչը ցոյց տաճարին փառքը այնչափ անթիւ սքանչելագործութբ՟ և աստուածային քարոզութեամբ. յայտնելով զխորհուրդս Աստուծոյ՝ սահմանեց նոր ուխտ և նոր պատարագ խափանելով զհինն, որ է օր Տեառն մեծ և երևելի, մինչև ապա կործանեցաւ տաճարը և լեցուեցաւ Մաղաքիայի մարգարէութիւնը և այլոց։ Իսկ այս սուրբ մարգարէս առաքինափայլ վախճանեցաւ մատաղ հասակին մէջ խաղաղութեամբ։

Մաղաքիա շքեղ կոչմամբ պանծալի
 Անուամբ և իրօք հրեշտակ 'ի մարմնի,
 Կայտառ տեսանող քարոզ լուսաբան
 Նորոյ օրինաց Տեառն գալստեան։
Մատնիք ազգ առնէր ապառում ազգին
 Ըզյանկարծ գալուստ խոստացեալ Փրկչին.
 Ի յայն նորաշէն տաճար վայելուչ
 Վեհ Մեսիային ելով ընկալուչ։

ՄԱՄԲՐԷ Վերծանող էր գիտնական վարդապետ և երևելի աշակերտ սրբոյն Սահակայ և Մեսրոպայ, նաև կրտսեր եղբայր սրբոյն Մովսէսի Խորենացւոյն։ Որ յօրինեց աստուածիմաստ գեղեցիկ ճառեր 'ի վերայ յարութեան Ղազարու, և գալստեան Տեառն յԵրուսաղէմ, որ տպագրեցան 'ի Վենետիկ 'ի 1832։ Պարձեալ շարադրեց համառօտ Հայոց պատմութիւն մի և ուրիշ պիտուական գրեանք և թարգմանութիւնք։

ՄԱՄԳՈՒՆ էր դայեակորդի Ճենաց արքային և եղաւ նահապետ Մամիկոնեանց, որ 'ի 283 ամին փախաւ 'ի Պարսկաստան՝ Ճենաց արքային ձեռքէն, անկէց ալ անցաւ 'ի Հայաստան : Նոյն ժամանակը Տրդատ Թագաւորն հասաւ Հայաստան Հռոմայեցի զօրքով : Մամգուն գնաց ընդառաջ Տրդատայ ու սիրելի եղաւ իրեն, և միշտ մնաց քովը հաւատարմութեամբ . նաև մկրտուեցաւ բոլոր տամբն :

Յետոյ երբոր Սղուկ նահապետը ապստամբեցաւ, Տրդատ խոստացաւ Մամգունին, որ թէ բռնէ Սղուկն իրեն տանի նա նորա նախարարութ̃իը իրեն տայ : Իսկ Մամգուն ճարտարութ̃բ իբր արքայէն փախչելով գնաց Սղուկին քով . և օր մը որսի ատեն զարկաւ նետով սպաննեց ու տիրեց բերդին 'ի 320 : Տրդատ երբոր լսեց՝ ուրախ եղաւ . ու հրովարտակաւ հաստատեց Մամգունը իշխան և նախարար : Ահա այս Մամգունէն սկսաւ Մամիկոնեան քաջ իշխաններուն ազգն ու նախարարութիւնը, որոնք զօրացան Տարօնայ երկիրն, և շատերն եղան հաւատարիմ քաջ աստուածապաշտ, և անյաղթ պատերազմողք, ինչպէս էին Մեծն Վարդան, քաջն Վահան, սուրբն Հմայեակ, Վարդ, և այլն :

ՄԱՆԱՍԷ էր որդի Եզեկիայ արքային Յուդայ և աշակերտ Եսայեայ մարգարէին, որ տասներկու տարուան թագաւորեց Եղիակիմ Քեղկեայ առաջնորդին ձեռքին տակը : Բայց նորա մահուանէն ետև կռապաշտ եղաւ . կուռքեր և անտառներ շինեց . մինչև տաճարին մէջն ալ կուռք դրաւ կը պաշտէր . նաև 'ի պատիւ Մողոքայ դից որդիքը զոհ ըրաւ : Եսայի մարգարէն երբոր զինքը յանդիմանեց՝ կատղելով սղոցել տուաւ զսուրբն. բայց ինքն ալ պատժեցաւ, վասն զի Ասորեստանցիք ելան վրան բռնեցին տարին կապանքով 'ի Բաբելոն բանտը դրին։ Հոն իմանալով չարագործութիւններուն պատիժն՝ սկսաւ սրտանց գոչել առ Աստուած. Տէր ամենակալ՝ աղօթքը լսելով։ Ամենագութ Արարիչն ալ ողորմելով քաղցրացոյց Բաբելոնի արքային սիրտը, որ ազատեց զինքն ու ղրկեց յԵրուսաղէմ։ Մանասէ մտածին պէս յԵրուսաղէմ մէկէն կործանեց բոլոր կուռքերն, ու սրբելով տաճարը պայծառացուց աստուածպաշտութիւնը բարի օրինակ ըլլալով ճշմարիտ ապաշխարողաց, մինչև մեռաւ բարեպաշտութեամբ վաթսուներօթ տարւան։

ՄԱՆԳԼԱՒՏ էր եղբօրորդի երանելոյն Պաւթի եպիսկոպոսին Մոկաց, որ 'ի 981 զինուորեալ ըլլալով Վասլի և Կոստանդնի կայսերաց քով շատ քաջութիւններ ըրաւ. անոր համար զինքը պատուեցին Մանգլաւտ անունով։ Սա հօրեղբօրը Պաւթի եպիսկոպոսի գերեզմանին հողէն ունէր, որ բժշկութիւններ կ'ընէր. և այս պատճառաւ սիրելի էր կայսերաց, որոնք տուին իրեն ըստ տենչանացն՝ մասն կենաց փայտին, փուշ պսակին, բևեռին, սպունգին, խանձարուրին, ղենջակին և Տիրամօրը հանդերձն։ Որ ոսկեղէն ամանի մէջ դրաւ ու մեծ պատուով տարաւ իր հայրենիքը յաշխարհն Մոկաց, և դրաւ Ապարանից վանքը, որ էր հանգստարան հօրեղբօրն։ Ուստի սուրբ Գրիգոր Նարեկացին յօրինեց փառաւոր ճառ 'ի վերայ խաչին յիշելով զայն ցանկալի գանձն, և գովելով զՄանգլաւտ բարեպաշտ և իմաստուն իշխանն պատճառ հոգւոր բարեաց ։

ՄԱՆԳՈՒ ԽԱՆ էր ինքնակալ Թաթարաց և թոռն Ճինկիզ խանին , որ 'ի 1251 թագաւորեց բոլոր Թաթարներուն վրա մինչև 'ի Միջագետք ։ Անոր հետ շատ բարեկամացան Կիլիկիայի Հայոց թագաւորներն և արևելեան իշխաններն ։ Կը պատմեն թէ մեր Հեթում թագաւորը երթալով իրեն յորդորեր էր որ քրիստոնեայ ըլլայ , ու Երուսաղէմն առնէ Հագարացւոց ձեռքէն ։ Իսկ նա յօժար էր այս բանիս ըստ ասից Հեթում պատմաբանին . բայց մահը շուտով հասնելով մեռաւ Մանգու Խան 'ի 1261 . որուն յաջորդեց իր եղբայրն Կուպիլա ։

ՄԱՆԷ կամ ՄԱՆԻ՝ էր ճգնազգեաց կոյս սուրբ Հռիփսիմէ կուսին ընկերներէն , որոնք երբոր Եկեղեաց գաւառէն կ'անցնէին՝ Մանէ աստուածային ազդմամբ միայնացեալ 'ի լեառն Սեպուհ կը ճգնէր այրի մը մէջ սրբութեամբ և աղօթիւք ։ Ապա շատ տարիէն ետև նոյն լեռան վրա ճգնեցաւ սուրբ Լուսաւորիչն մեր . և երբ մօտեցաւ սուրբ Մանեայ այրին , ձայն եկաւ ներսէն որ իրեք օրէն ետև թող մտնէ այրին մէջ ։ Ուր երբոր մտաւ գտաւ զի սրբուհին կոյսն վախճանեալ էր . զոր հանգոյց սաղմոսիւք և օրհնութեամբ , և ինքն մնաց հոն ճգնեցաւ մինչև փոխեցաւ առ Տէր ։

Մանէ կոյսն ամբիծ լեալ ասպնջական
Սուրբ Լուսաւորչին յիւր սուրբ ճգնարան .
Սաղ վերասլացեալ 'ի պարս անմարմնոց
Եթող Գրիգորի զտուն ճգնանց իւրոյ ։

Ո՛վ անճառելի խնամոց Արարչին
Որ և 'ի տըկար փայլես կանանին,
Զվայրս ամայի արհաւիրս բնութեան
Ի թատըր փոխես սիրոյ սրբութեան,

ՄԱՆԻ կամ ՄԱՆԻՔԵՈՍ էր չար աղանդապետ 'ի Գ դարուն, որ գերի ըլլալով Պարսից մէջ՝ սորվեցաւ անոնց մոգութիւնը և Արապներուն կախարդութիւնը: Վերջը մկրտուեցաւ, ու սկսաւ չար աղանդը տարածելու, քրիստոնէութիւնը մոգութեան հետ միացընելով, և քարոզելով թէ ինքն է հոգին սուրբ մխիթարիչ, որ մոգութիւն սորվեցընելու համար եկեր է հանդերձ հրաշագործութեամբ: Բայց երբոր չի կրցաւ բժշկելու Շապուհ Պարսից արքային որդին, անոր հրամանաւը սպանուեցաւ յամին 278 իբր երեսունըութ տարեան: Աս հեթանոսաց նման, նախ երկու սկզբունք կը դնէր՝ բարի և չար, բարին կը դնէր պատճառ բարւոյ. և չարն պատճառ չարի. երկրորդ թէ նիւթն և մարմինն չարէն են, նոյնպէս և ամուսնութիւնն, զոր արգիլեց. երրորդ թէ մարմինն Քրիստոսի առաչօք է, և Մեսիայն օձն է որ բարին ու չարը սորվեցուց նախաստեղծից. և այլն: Ուրացաւ զյարութ̃ի մարմնոց, և զանձնիշխանութիւն, կը դնէր հոգեփոխութիւն և կը մերժէր զերկրագործութիւն: Մանիքեցիք հետևողք այս աղանդին շատ խայտառակ և յիմարական խաբէութիւններ հնարեցին, ու դատապարտեցան վարդապետներէն ժողովքներով և գրութեամբ:

ՄԱՆԿՈՒՆՔ ԲԵԹՂԵՀԷՄԻ կամ ԱՆՄԵՂ. ՄԱՆԿՈՒՆՔ՝ էին երջանիկ տղայք՝ երկու տարին վար կաթնկերք , որք անօրէն Հերովդի հրամանաւ ջարդուեցան սքանչելի նահատակութեամբ փոխանակ Քնի ։ Ինչպէս գեղեցիկ կը պատմէ սուրբ աւետարանը . և սուրբ վարդապետք իմաստուն ճառերով գովաբանեցին ։ Նոյնպէս վայելուչ է մեր շարականոցին մարգարտաշար գովեստը , որ կ՚երգէ . “ Երանելի սուրբ մանկունքն որպէս քաջ նահատակք ետուն զանձինս իւրեանց ՚ի մահ փոխանակ որդւոյն Աստուծոյ ։ Եւ հոգիք սուրբ մանկանցն որպէս զերամ աղաւնեաց թռուցեալ ՚ի յերկինս , և դասեալ ընդ զուարթունս երկնից ”։ Իսկ սուրբ եկեղեցին հին ժամանակէն ՚ի վեր փառաւորապէս կը տօնէ զանոնք ։

ՄԱՆԿՈՒՆՔ ԵՓԵՍՈՍԻ . Տ . ԵՕԹՆ ՄԱՆԿՈՒՆՔ ։

ՄԱՆՈՒԷԼ ԿՈՄՆԵՆՈՍ . Տ . ԷՄՄԱՆՈՒԷԼ ։

ՄԱՆՈՒԷԼ Մամիկոնեան էր քաջ զօրավար Թէոփիլոսի կայսեր Յունաց . զոր ազատեր էր մեռնելէն և մեծ պատիւ ունէր ։ Բայց երբոր կայսրը նախանձոտներուն խօսքովը ապերախտ եղաւ անոր զրկելով զինքը պատուէն . ան ալ անցաւ Հագարացւոց կողմն ։ Որով շատ մեծ վնաս եղաւ կայսեր , որ կուլար թէ ինչպէս այս քաջ զօրավարս կորուսի . ուստի հրովարտակ և դեսպան ղրկելով և շատ աղաչանքով հազիւ դարձուց զքաջն ու պատուեց մեծապէս ։

Յամի 822 մեռաւ Թէոփիլոս , և յաջորդեց որդին Միքայէլ Բ . բայց մայրը Թէոդորա պատկերամարտ էր . իսկ Մանուէլ ծանր հիւանդցաւ ու կանչեց կրօնաւորներուն օրհնենքն առաւ․ և առաջադրեց, որ եթէ ընդունայ, բոլորովին վերցընել տայ պատկերամարտից աղանդը․ և երբ առողջացաւ ըստ մարգարէութեան այն կրօնաւորաց՝ մէկէն կատարեց ուխտն ու մեռաւ խոր ծերութեամբ և բարեպաշտութեամբ։

ՄԱՆՈՒՇԱԿ սրբուհին էր Հռոմկլայեցի, զոր լինը հազար գերեալներուն հետ մէկտեղ Յունաստանէն գերի տարաւ Շապուհ արքայն Պարսից։ Սա տարիքն առած ըլլալով միշտ կը խրատէր մանկագոյններն՝ որ հաստատ կենան հաւատքնուն վրա՝ անոր համար Մոգպետը սաստիկ ծեծելով բանտը դրաւ մէկ տարի մը շատ նեղութեամբ։ Յետոյ ծեծել տուաւ գաւազանով ու կիսամահ բանտարկեց տասնը հինգ ամիս։ Անկեց ետև մոգերուն ատեանը հանեցին․ ուր երբոր չի կրցան սուրբ հաւատքէն հանելու, բարակ չուանով պրկեցին զերանելին մինչև կոտըրտեցան ոսկորները։ Նաև ուրիշ դառն տանջանքներէն ետև գլխատեցին սրբուհին, որուն արիւնախառն հողը և արիւնը ժողվեցին առին հաւատացեալք․ և անով կ՚ըլլար բժշկութիւն ցաւոց, և դեղ ամենայն ախտից։

Մանուշակ ընտիր ծաղիկ բարեբոյս
Հոտով և տեսլեամբ չքնաղ շնորհալըս․
Յաղթեալ տիրապէս դիւազունդ Պարսից
Փշրեաց զորոգայթ չարարուեստ մարտից,
Առաքինափայլ վարուք գերապանծ
Մանկագունից լեալ յորդորակ բարեաց,
Կորզեաց զօրհորդս յատամանց մոգուց
Ի ժանտ գազանաց զաղիր բերանոց։

ՄԱՇՏՈՑ *վարդապետ Բ. էր որդի քահանայի կրօնաւորեալ նախ Մաքենոցաց վանքը, և յետոյ 'ի Սևան կղզին սրբութեամբ և առաքինութեամբ ։ Որ ունելով հոգի միաբանական սիրոյ ամէն քրիստոնէից հետ, և մանաւանդ քաղկեդոնականաց հետ քաղցր վարուելուն համար՝ շատ նեղութիւն քաշեց տգէտ և նախանձոտ աբեղաներէն ։ Բայց զօրաւոր էր աստուածիմաստ վարդապետութեամբ և գիտութեամբ. ուստի ընտրեցաւ արժանապէս յաթոռ կաթուղիկոսութեան, և եղաւ մխիթար ազգին բարեկարգութեամբ և ուղղութեամբ ։ Սակայն եօթն ամիսէն ետև փոխեցաւ առ տենչալին իւր Քրիստոս յամի* 897, *և թաղեցաւ 'ի Գառնի, ու տօնելի եղաւ սուրբ վարուքը ։*

ՄԱՐԻՆՈՍ *էր աստուածապաշտ իմաստասէր առաքինափայլ հեթանոսաց մէջ, որ երբեմն տեսնելով անոնց մարդազոհը՝ ոտքով զարկաւ կործանեց զօհարանը, և համարձակ կը քարոզէր զճշմարտութիւն Քրիստոսի ։ Ժողովուրդը կատղելով վրան թափեցան, քարով և փայտով տանջեցին, և մօրուքը փետտելով տարին դատաւորին, որ սաստիկ ծեծելէն ետև, կողն այրել տուաւ ու գլխատեց սուրբը ։*

ՄԱՏԱԹԻ ՇՄԱԻՈՆ *էր հզօր քահանայապետ Հրէից Եղիազարու ցեղէն, նախանձախնդիր աստուածային օրինաց ։ Որ տեսնելով Անտիոքոսի Ասորւոց արքային կռապաշտութ͞ե չարիքն իբր* 170 *տարի Յիսուսէն առաջ, զինե-*

ցաւ քաջութեամբ անհաւատներուն դէմ և զօրացուց որդիքն ալ։ Որոնք արիաբար պատերազմելով ոտքի տակ առին Ասորիներն ու պայծառացուցին աստուածպաշտութի̃ը․ իսկ ինքն մեռաւ բարեպաշտութեամբ 166 տարի Յիսուսէն առաջ։ Որ և համարի սկիզբն Թուականի իշխանութեան Մակաբեանց, որ տևեց մինչև ցՀերովդէս 130 տարի։ Տ․ Մակաբեանք։

ՄԱՏԱԹԻԱ Առաքեալ ընտրեցաւ աստուածային վիճակաւ Յուդային տեղը՝ երկոտասանից թիւը լեցնելու համար։ Որ շրջեցաւ քարոզութեամբ շատ տեղեր․ և հասեալ Եթովպիա շատ մարդ դարձուց զօրութե̃ն Աստուծոյ և սքանչելագործութեամբ, ձեռնադրելով նոցա քահանաներ, եպիսկոպոսներ և հոգևոր պաշտօնեաներ։ Ապա դարձաւ 'ի Հրէաստան քարկոծեցաւ, և գլխատեցաւ սակրով։

ՄԱՏԹԷՈՍ Առաքեալ և Աւետարանիչ առաջ էր մաքսաւոր, Ղևի Ալփեայ կոչեցեալ և Քրիստոսէն կանչուելով գնաց ետևէն առաքեալ եղաւ, բայց քարոզութիւն չի գնացած գրեց իր աւետարանը Հոգւով սրբով ըստ խնդրոյ եկեղեցւոյն Երուսաղէմի։ Յետոյ շրջեցաւ շատ աշխարհներ հեթանոսաց մէջ, մինչև հասաւ յերկիրն մարդակերաց։ Ուր շատ չարչարանք քաշեց վասն Քրիստոսի, և հրաշքով անվնաս պահեցաւ, մինչև դարձուց մեծ բազմութիւն 'ի Քրիստոս․ և ձեռնադրեց եպիսկոպոսներ և քահանաներ, ու դարձաւ Յերապոլիս, նահատակեցաւ հրով բարբարոսներէն, և թաղեցաւ Պղատոն եպիսկոպոսէն , զոր ինքն էր ձեռնադրեր ։

ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ էր պատմագիր Հայոց ԺԲ դարուն , որ կը սկսի պատմութիւնը Աշոտ ողորմածէն և կը հասցընէ մինչև ցԹորոս և ցԼևոն իշխան ։ Շատ բան կը գրէ հաւատարմութեամբ Պարսից՝ և Հագարացւոց վրա , Յունաց և Լատինացւոց վրան ալ շատ բան գրեց աշխատասիրութբ ։ Որ կ'երևնայ թէ Ուռհայ քաղաքն առնուած ատենը թշնամեաց սրին հանդիպեր է , որ չի կրցաւ գրել քաղքին առումն ։

ՄԱՐԳԱՐԻՏԱ Թագուհին Սկովտիոյ՝ էր յազգէ Թագաւորաց Անգղիացւոց , և մայրենեօք 'ի կայսերական ցեղէն ծնեալ 'ի Հունգարիա , որ երեսուն տարի Թագաւորեց պսակւելով ընդ Մաղքոլմայ Գ. արքային Սկովտացւոց ։ Սակայն Թագաւորական և փափկութեանց մէջ կատարեալ Ճգնաւորի պէս կը վարուէր , միշտ զանձն մահացուցեալ պահօք և աղօթիւք ։

Շինեց և նորոգեց զանազան վանքեր և եկեղեցիներ . նաև իւր բարի օրինակով ազգականներէն շատ անձինք վառեց աստուածպաշտութեամբ . նոյնպէս բարեպաշտութբ զարդարեց Թագաւորը և զաւակները բոլոր ժողովրդովն ։ Մայր էր աղքատաց և տնանկաց . իրեքհարիւր աղքատ ինքն կը նայէր և իր ձեռքովը ոտքերնին կը լուար , և խոցերը կը պատէր . նաև բոլոր իր գանձը անոնց վրա կը ծախէր ։ Յետոյ եկաւ իրեն հիւանդութիւն մը , որ սքանչելի համբերութեամբ վեց ամիս քաչեց․ մինչև հոգին տալու ատենը պայծառացաւ դէմքը․ և յետ մահուան երանուհի Թագուհւոյն եղան զարմանալի հրաշքներ․ ինքն ալ եղաւ տօնելի ։

ՄԱՐԵՄ դշխոյ էր առաքինի դուստր Աշոտոյ Ա․ արքային Բագրատունւոյ , որ այրը Վասակ Սիւնի մեռնելէն ետև՝ հրաժարեցաւ յաշխարհէ հետևելով ճգնութեանց և հոգևոր կրթութեանց աղօթքով , պահօք և ընթերցողութեամբ ։ Ուստի հայրը ընծայեց իրեն մեկնութիւնը Յովհաննու աւետարանին․ որ յօրիներ էր Նոնայ Ասորին և թարգմանած էր հայերէն․ այս հոգևոր գիրքն եղաւ մեծ մխիթարութիւն ջերմեռանդն տիրուհւոյն ։ Ապա շատ տարիէն ետև մեծամեծ խռովութեանց ատենը՝ որդիքը առին զինքը և ստացուածքնին ապաւինեցան Սևան կղզին , և վերջը Ուտի աշխարհին անառիկ ամրոցներն ։ Ուր սրբակրօն վարքով և առաքինութեամբ վախճանեցաւ բարեպաշտուհի Մարեմ տիկինն․ ապա քանի մը տարիէն ետև մարմինը փոխադրեցաւ 'ի Գեղարքունի Շողագայ եկեղեցին , որ ինքն էր շինել տուեր յիշատակ բարի հոգւոյն համար ։

Անգին մարգարիտ շքեղ Թագուհի
Պարծանք Սկուլտայ վեհ առաքինի․
Զաղքատս և տընանկս համարեալ 'ի գանձ
Յերկինս ամբարեաց իւր մթերս անանց ։
Իսկ Մարեմ դշխոյ յազգէ Հայկազանց
Անձնատուր գտաւ հոգեշահ ճգանց․
Թողեալ զտիկնութիւն վառեցաւ հոգւով
Ըզհետ երկնայնոց բորբոքեալ սիրով ։

ՄԱՐԻԱՄ կոյս Աստուածածին Թագուհին երկնի և երկրի, էր 'ի Նազարէթէ, դուստր Յովակիմայ և Աննայի, ծնեալ 'ի վեր քան զօրէնս բնութեան առանց յանցանաց զաւակ Եւայի, և անդատապարտ շառաւիղ օրհնութե՟ Ադամայ։ Որ ծնածին պէս նուիրեցաւ Աստուծոյ, և եռամեայ ընծայեցաւ 'ի տաճարն. ապա եօթնամեայ հրաժարեցաւ ծնողացը տնէն ու բնակեցաւ տաճարին կուսաստանը պարկեշտ կուսանաց հետ սքանչելի սրբութեամբ։ Մինչև տասնըչորս տարւան որ եղաւ, ծնողքը աստուածային ազդմամբ նշանեցին սրբոյն Յովսեփայ հետ որ Դաւթի ցեղէն էր։ Ապա տուաւ իրեն Գաբրիէլ հրեշտակն աստուածամայրութեան աւետեաց ողջոյն ըլլալու անարատ կուսութեամբ մայր բանին Ս. Հոգւով սրբով։

Երբոր ասաց սուրբ կոյսն. « Ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում », Մէկէն յղացաւ զորդին Միածին, և խոնարհութեամբ փութացաւ, գնաց առ Եղիսաբէթ յայցելութիւն, զԿարապետն Յովհաննէս սրբելով յարգանդի մօրն։ Անկեց դառնալէն ետև ըստ ժամանակին ծնաւ վայելչապէս զԱստուածորդին անխախտ կուսութե՟ 'ի Բեթղեհէմ. ապա քառասնօրեայ ընծայեց 'ի տաճարն հօր Աստուծոյ, և կուսական կաթամբն աճեցուց. նաև ամէն տարի կը տանէր 'ի տաճարն։ Եւ ամէն տնօրինական գործոց Փրկչին գործակից էր Տիրամայրն մինչև յանպարտական խաչելութիւնն, խաչին տակը սըրտանց խաչուելով. յետ յարութեան ալ հաղորդ եղաւ անճառելի ցնծութեանց վասն մեր փրկութեան։

Ապա յամի Տեառն 45 եկաւ Աստուածամօրն հրաւէր փոխման իբր վաթսուն տարւան . և Աստուածորդին եկաւ երկնաւոր փառօք , ու սուրբ կոյսն աւանդեց սրբասնեալ հոգին անոր ձեռքը առաքելոց առջև , և իրեք օրէն ետև յարեաւ գերեզմանէն վերափոխեցաւ յերկնային փառս ։ Ուր կարգեցաւ մայր և դշխոյ հասարակաց թագուհի հրեշտակաց և մարդկան , պաշտպան սուրբ եկեղեցւոյ և բարեխօս վասն փրկութեան ամենայն հաւատացելոց , ինչպէս որ միշտ մայրական հրաշքը ամէն տեղ յայտնի է ։

Մարիամ մայր Տեառն օթարան շնորհաց
 Շըքեղ տիրուհի փառք տիեզերաց .
 Ընտրեալ 'ի Հօրէ վասն ազգի մարդկան
 Որդւոյն ՚որ ծնընդեամբ պատճառ փրկութեն ։
Պըսակ վայելուչ 'ի պէսպէս շնորհաց
 Սուրբ եկեղեցւոյ 'ի գլուխ պարծանաց .
 Անդարձ բարեխօս առ Հայր գերագոյ ,
 Ո՛վ մայրըդ Բանին հարսնըդ սուրբ Հոգւոյ ։

ՄԱՐԻԱՄ և ՄԱՐԹԱ էին սրբասէր քոյրեր սուրբ Ղազարու , ջերմեռանդն պաշտողք Յիսուսի , որք վասն անուան և սիրոյ նորա այնչափ հալածանաց և վշտաց համբերեցին 'ի Հրէից և 'ի հեթանոսաց , մինչև երջանիկ մահուամբ կատարեցան 'ի Քրիստոս . ոմանք զՄարիամ Մագդաղենացին կարծեն քոյր Ղազարու ։ Տ. Յուղաբեր կանայք ։ Իսկ ըստ արևմտեան պատմութեանց Մարթա և Մարիամ Ղազարու հետ գնացին 'ի Մարսիլիա , և քարոզութեամբ շատ ժողովուրդ լուսաւորեցին ։ Մարթա կանգնելով վանատուն և կուսանոցներ համարեցաւ առջի մայրապետ կուսանաց . յետոյ շինեց վանքեր և եկեղեցիներ Գաղղիայի քաղաքներուն մէջ հանդերձ հրաշագործութեամբ ։ Մինչև որ ինքն ալ քոյրն ալ կատարեցան 'ի Քրիստոս, և շինեցան յանուն նոցա եկեղեցիներ և ուխտատեղիք սուրբ նշխարացն ։

ՄԱՐԻԱՄ Եգիպտացի էր Աղեքսանդրիա քաղաքէն 'ի Ե դարու, դուստր գեղեցիկ, որ դիւական խաբէութեամբ ընկաւ պոռնկութեան մեղքին մէջ տասնըեօթ տարի ։ Յետոյ գնաց Յերուսաղէմ Վերացման խաչին օրը. ուր կամելով մտնել յեկեղեցին՝ աներևոյթ զօրութեամբ սուրբ խաչին արգելուեցաւ մնաց. տեսաւ որ դրանը վրա դրած էր Աստուածածնայ պատկերը, մէկէն զղջումի գալով լացաւ սրտանց. և յանձնելով զինքն անոր բարեխօսութեանը երաշխաւոր դրաւ զՏիրամայրն, և այնպէս կրցաւ մտնել տաճարը, և երկիր պագանել կենաց փայտին ։ Այս ազդմամբ Աստուածամօրն գնաց անապատ, և բոլոր սրտով խոստովանեցաւ մեղքերը սուրբ Յովհաննու վանքին մէջ. ու անցնելով Յորդանան գետը գտաւ ճգնարան մը, և հոն ճգնեցաւ անտանելի ճգնութեամբ քառասունըեօթ տարի ։ Այս երբոր մօտեցաւ վախճանը՝ Զոսիմոս ճգնաւորը շարժած 'ի Տեառնէ՝ տարաւ իրեն սուրբ հաղորդութիւնն մինչև Յորդանան գետին քով ։ Մարիամ գետին վրայէն քալելով գնաց առաւ սուրբ հաղորդութիւնն ու շուտով դարձաւ իր ճգնարանը, և նոյն օրը փոխեցաւ առ Աստուած ։ Վասն զի միւս տարին նոյն Զոսիմոս երբոր գնաց հոն՝ գտաւ վախճանած Մարիամ, և գիր գրած, թէ . “ Ես ննջեցի 'ի 427 . ապրիլի 1 չարչարանաց օրն „ ։ Հոն ամփոխեց սուրբն անոր մարմինը օրհնութեամբ և սաղմոսիւք ։

ՄԱՐԻԱՆԷ կոյս էր Անտիոքացի, դուստր Եդեսիոսի քրմին Դեկոս կայսեր ժամանակը, որ աստուածային շնորհօքն լուսաւորեալ հաւատաց Քրիստոսի, հօրմէն ծածուկ ։ Այլ երբոր սկսաւ համարձակ վկայել և պատմել քրիստոնէութեան ճշմարտութիւնը և կռոց ստութիւնը փափաքելով նահատակութեան վասն սիրոյն Քրիստոսի, մատնեցաւ անօրէն եպարքոսին ձեռքը, որ սոսկալի տանջանքով չարչարեց կոյսն ու չի կրցաւ հաւատքէն հանելու․ ապա մութ բանտին մէջ փակեց ։ Ուր երևցաւ սատանան ահագին վիշապի կերպարանքով, և բացաւ բերանն որ կլլէ զերանուհին ։ Իսկ նա աղօթելով առաւ ձեռքը փոքրիկ փայտէ խաչը․ և զօրութբ՟ Հոգւոյն սրբոյ կոխելով վիշապին վզին վրա ստիպեց որ յայտնէ դիւական խաբէութի՟ը․ և ապա հալածեց յանդունդը ։ Յետոյ նորէն հանեցին ատեան սուրբ կոյսն, որ քաջութեամբ անփոփոխ կը քարոզէր սուրբ հաւատքը․ և շատ տանջանքներէն ետև եռացեալ ջրին մէջ ձգեցին, և երբ անվնաս ելաւ՝ տասը հազար հոգի անհաւատներէն տեսնելով այս մեծ հրաշքները հաւատացին Քրիստոսի, և Մարինէին հետ նահատակեցան սրով ։ Իսկ իր հրաշագործ նշխարքը ամէն տեղ տարածեցաւ, և անուամբ նորա վանքեր և եկեղեցիներ կանգնեցին ։

Մարինէ անյաղթ հրաշագործ կուսան
Մաքառի ընդ դևս իբրև զախոյեան․
Հըզօր զօրութեամբ կենսատու խաչին
Հալածէ յանդունդըս խոր խաւարին ։

Նշանի́ որոց լոյսն է անյեղլի
Ի խաչն անմահին յանուն Յիսուսի.
Թէ դրունք դժոխոց 'ի պայքար մատչին
Ի մանուկ կուսէ պարտեալ խորտակին։

ՄԱՐԻԲԱՍ ԿԱՏԻՆԱ կամ Տէր Աբաս էր գիտուն պատմագիր Ասորի, տեղեակ արեւելեան լեզուներուն Հայոց, Քաղդէացւոց եւ Յունաց։ Օր Թագաւորն Հայոց Վաղարշակ զրկեց իր եղբօրն Արշակ արքային Պարսից, որպէս զի նորա հրամանաւ մտնէ Նինուէի դիւանը հին Թագաւորներուն. ուր փնտռելով գտաւ մատեան մը Յոյն գրով եւ այսպիսի վերնագրով. "Այս մատեան հրամանաւ Աղեքսանդրի Քաղդէացւոց լեզուէն փոխեցաւ 'ի Յոյն, որ ունի բուն հնոց եւ նախնեաց բանս"։ Մարիբաս այս գրքէն հանեց Հայոց պատմութիւնը, Յոյն եւ Ասորի գրով բերաւ 'ի Մծբին առ արքայն Վաղարշակ 143 տարի Քրիստոսէն առաջ։ Որ Հայկէն կը սկսէր պատմելու ամէն դիպուածները մինչեւ ց'Աղեքսանդր. անկեց վերջն ալ Մարիբաս գրեց Վաղարշակին եւ որդւոցը գործքերը, եւ այլն։ Ահա այս գրքէն առեալ Խորենացին մեր նը պատմիչը գեղեցիկ կարգաւ կը պատմէ նախնի նահապետներուն Հայկազանց եւ Թագաւորներուն բոլոր գործքերը։

ՄԱՐԿԵՂԻԱՆՈՍ սուրբ քահանայապետն Հռոմայեցի յաջորդեց յաթոռ սրբոյն Պետրոսի յամի 296, Դիոկղետիանոսի հալածանքին ատեն, որ կատաղեալ դառնապէս եւ քանդելով եկեղեցիները կը նահատակէր քրիստոնեաները անխնայ։ Նոյն ժամանակը քաջութեամբ եղաւ սուրբ հայրապետն , համարձակ կը զօրացընէր սուրբ մարտիրոսները · բայց երբոր հեթանոսներն կը ջանային որսալու սուրբը և իրենց կողմը դարձընելու , եղաւ կայսեր ատեանն ու արիապէս դաւանելով զՔրիստոս անարգեց կուռքերը քաջութեամբ ։ Ուստի մէկէն բանեցին սաստիկ տանջեցին , և չի կրնալով յաղթել քաջութեանը նահատակեցին 'ի 304 ։

ՄԱՐԿԵՂՈՍ Ա · սուրբ հայրապետն Հռոմայ յաջորդեց սրբոյն Մարկեղինոսի 'ի 304 , և գեղեցիկ բարեկարգելով եկեղեցին հաստատեց քսանըհինգ ժողովրդապետութիւն և պաշտօնեաներ Հռոմայու մէջ , որպէս զի լաւ կատարեն սուրբ խորհուրդներն ու ծառայեն նահատակաց գերեզմաններուն ճշմարիտ ապաշխարութեամբ · այս պատճառաւ աքսորուեցաւ կռամոլ Մաքսենտիանոսէն ։ Յետոյ կապեցին վերանելին կը չարչարէին , որ կռոց երկրպագութիւն ընէ · բայց երբոր մերժեց սուրբը կուռքերը՝ դատապարտեցին , որ հրապարակական ախոռին մէջ ծառայէ անասնոց ։ Որ այնչափ վիշտ քաշեց համբերութեամբ , մինչև վտանգեցաւ օդին ապականութենէն և այնպէս վասն սուրբ հաւատոյ մեռաւ անարգութեամբ յամի 309 ։

ՄԱՐԿԵՂՈՍ Բ · քահանայապետն նստաւ յաթոռ սրբոյն Պետրոսի 'ի 1555 ։ Սա որովհետև եկեղեցական պաշտօններուն մէջ շատ երևելի գործքեր ըրած էր , նոյնպէս գովելի ջանքով պատրաստուեցաւ վայելչապէս բարեզարդելու ընդհանուր սուրբ եկեղեցին ։ Սակայն թշուառաբար քսանւերկու օրէն ետև յանկարծական մահուամբ վախճանեցաւ յիսունըչորս տարւան, որուն վրա ամէն եկեղեցի և ազգ սգացին։

Պայծառ վէպք վարուց քաջ հօտապետաց
Հայելի տուան զգօն հոգեսիրաց.
Օ ի զնոցուն բերեալ վարս առաքինի
Պճնեցին գործով յընտրելոց կարգի։
Քանի՜ ջերմ սիրով զիւրեանց խաչ բարձին
Ելին 'ի գագաթն երկնաձեմ լերին.
Թափելով զարիւն սիրով մահացան
Իբր անմահ փիւնիկ յերկինս թեւացան։

ՄԱՐԿԻԱՆՈՍ կայսր արեւելեան էր ցածազգի զինուոր մը, որ երբեմն ճամբուն վրա մեռեալ մը տեսնելով այնչափ ցաւեցաւ վրան, որ տեսնողները կարծեցին թէ ինքն է սպաննողը։ Ուստի մատնեցին դատաստանին և դատապարտեցին զանմեղը իբր մարդասպան. բայց երբոր կը տանէին դատապարտելու յայտնուեցաւ բուն սպաննողը, և ինքն մեռնելէն ազատելով բոլորովին հետեւեցաւ բարեպաշտութե՟ և քաջագործութեան։

Եւ այսպէս աստուածային յաջողութեամբ այնչափ զօրացաւ, և այնչափ զինուորական մեծութեան հասաւ գովութեամբ, մինչև ընտրեցաւ Կեսար և Կայսր զարմանալի բաղդով մը։ Վասն զի յամի Տեառն 450 փոքր Թէոդոսի մահուանէ ետև Պողքերիա կայսեր քոյրը կը կառավարէր թագաւորութիւնը. բայց հարկադրեցաւ՝ որ իրեն գահակից առնէ ամուսնութե՟ զքաջն Մարկիանոս, որ տեղեակ էր տէրութեան ամէն բանին և զարդարեալ աստուածպաշտութեամբ։ Նա առաջարկու-

թեամբ սրբոյն Լեւոնի Ա. հայրապետին Հռոմայ այս նորապսակ կայսրն հրովարտակ հանեց հերետիկոսաց դէմ, և գումարել տուաւ սուրբ ժողովքն Քաղկեդոնի ընդդէմ մոլորութեան Եւտիքէսի յամին 451 ։ Իսկ յետ լաւ կանոնադրութեան և աւարտման սուրբ ժողովքին հրամայեց որ կանոնները ամէն տեղ աղէկ պահուին ։ Նա 'ի 457 նոյն բարեպաշտութ̃բ վճարեց առաքինազարդ կեանքը կայսրն վաթսունըինը տարուան, զոր աշխարհք սգաց բարելաւութեանը համար ։

*Մ*ԱՐԿԻՈՆ *Պոնտացի էր Սինոպ քաղաքէն 'ի Բ դարուն որդի եպիսկոպոսի, որ դէշ պղծաւէր ըլլալով վռնտուեցաւ հօրմէն, ու գնաց արևմուտք հետևեցաւ Կերդոնի մոլորութեանը՝ դնելով բարի և չար աստուած. ուրացաւ յարութիւն մարմնոյ. կը քարոզէր հոգեփոխութ̃ի, և երկու Քրիստոս. մէկը եկած, մէկալն ալ գալու է, որ նորոգէ հին օրէնքը Հրէից ։ Նա դատապարտեալ չարագործները՝ Կայէն, Կորխ, և Սոդոմայեցիները փրկուած կը համարէր. իսկ Աբէլ և ամէն արդարները կը դատապարտէր ։ Փոխուեց Հին և Նոր Կտակարանը բաց 'ի Ղուկասու Աւետարանէն. նաև այլայլեց մկրտութեան ձևը, և ամէն սուրբ խորհուրդները ։ Մարկիոնիտք էին հետևողք այս անօրէն հերձուածողին, որոնք մեռածները փրկելու համար կենդանիները կը մկրտէին. կ'ատէին մարմինը և ծնունդ մարդոյ. մինչ զի ոմանք գահավէժ ընկնելով մարտիրոս կը համարէին զիրենք ։ Եւ այնչափ անձոռնի մոլորութիւններ հնարեցին, որ երբ Մարկիոն հարցուց երբեմն Պօղիկարպոսի, թէ Զիս կը* ճանչնամ․ պատասխանեց սուրբը․ “Ես ճանչնամ զքեզ անդրանիկ որդին բելիարայ„ ։ Որ և բոլոր արբանեակներովն նզովեալ դատապարտեցաւ յամենայն սրբոց հայրապետաց, և 'ի ժողովն արևելեան յամի 160 ։

ՄԱՐԿՈՍ Աւետարանիչ էր աշակերտ, դպիր և թարգման սրբոյն Պետրոսի, որ գնաց անոր հետ 'ի Հռոմ և նորա հրամանաւ գրեց աւետարանը յամի 43 ։ Յետոյ շրջեցաւ շատ տեղեր քարոզելով սուրբ աւետարանն, մինչև հասաւ յԱղեքսանդրիա և յԵգիպտոս․ ուր մեծամեծ նշանագործութ͞բ հաստատեց Քրիստոսի հաւատքը, և ձեռնադրելով եկեղեցւոյ պաշտօնեաներ հիմնեց եկեղեցին Աղեքսանդրիոյ, և եղաւ առաջին հովիւ ։ Իսկ յաւուր տօնախմբութեան հեթանոսաց երբոր կը քաջալերէր ժողովուրդն Աղեքսանդրիոյ՝ կռապաշտները կատղելով կապեցին սուրբ աւետարանիչը, և գետնաքարշ արիւնլուայ տարին բանտը փակեցին ։ Ուր աղօթելով քաջալերեցաւ հրեշտակէն․ ապա Փրկիչն երևնալով սրբոյն ասաց․ “Խաղաղութիւն ընդ քեզ ծառայ իմ Մարկոս Աւետարանիչ„ ։ Այս գետնի վրա քարշելով այնչափ տանջեցին զերանելին, մինչև աւանդեց սուրբ հոգին զուարթութեամբ․ իսկ մարմինը կրակը ձգեցին ։ Նոյն ատեն կայծակնախառն սաստիկ անձրև գալով սասանեցուց կռապաշտները․ իսկ աշակերտներն յաջողութեամբ հանեցին սուրբ նշխարքն ամբողջ և անվնաս, ու հանգուցին վիմափոր գերեզմանին մէջ յամի Տեառն 61 ։ Այլ 'ի Դ դարուն շինեցաւ եկեղեցի գերեզմանին վրա յարգանօք ։ Վենետիկեցիք ալ ժամանակէն ետև Ճարտարութեամբ փոխադրեցին զայն սուրբ նշխարքը իրենց մայրաքաղաքն ու կանգնեցին սուրբ Մարկոսի անուամբ հոյակապ մայր եկեղեցին . և մարմինը ամփոփելով խորանին տակը փառաւորապէս՝ հաստատեցին պաշտպան իրենց պետութեան և ազգին ։ Այս տաճարին գանձատան մէջ պահած կայ հին Աւետարան բամբակէ թղթի վրա գրած , որ կարծի թէ սուրբ աւետարանչին ձեռքով գրած է ։ Ուր կայ նոյնպէս հնագոյն պատարագամատոյց եկեղեցւոյն Անտիոքայ , որ է անուամբ սրբոյն Մարկոսի , և կը գործածեն Ղփտիք , և այլն ։

ՄԱՐԿՈՍ սուրբ քահանայապետն Հռոմայ նստաւ յաթոռ սրբոյն Պետրոսի 'ի 336 , ինչպէս որ ընտրեր էր սուրբն Սեղբեստրոս իրեն յաջորդ ։ Սա սահմանադրեց երգել պատարագին մէջ՝ Նիկիոյ հաւատամքը փոխան առաքելական հանգանակին . նաև շնորհեց Մետրապօլիտներուն հայրապետական զարդն Պալլիում ուրարաձև ։ Որ մինչև հիմա սրբազան պապն կը շնորհէ արքեպիսկոպոսներուն 'ի նշան կատարեալ իրաւասութեան ըստ կանոնադրութեան սուրբ քահանայապետին Մարկոսի ։ Երբոր բարի նախանձով և մեծիմաստ կարգադրութբ՟ ձեռք զարկեր կը ծաղկեցըներ սուրբ եկեղեցին՝ նման սրբոյն Սեղբեստրոսի , մահը վրան հասաւ , և 'ի միւս տարին փոխեցաւ սրբութեամբ առ Քրիստոս ։

ՄԱՐԿՈՍ Արեթուսայ եպիսկոպոս Ասորի էր զօրաւոր վարդապետութեամբ և գրով . որուն վրա նախանձելով Արիանոսեան հերետիկոսները մատնեցին Յուլիանոսի ուրացողին ։

Որ հրամայեց ծեծով և տանջանքով հաւատքէ հանել զսուրբն. իսկ նա երբոր կը համբերէր անկաճները կտրելով ճամբաներէն քարշ բերին. ապա երկըթէ գրչով ծակծըկեցին գլուխն։ Յետոյ խաչ հանելով չարաչար տանջեցին. երբոր չմեռաւ՝ Յուլիանոս աքսորեց սուրբը անծանօթ կղզի մը. ուր սքանչելի համբերութ՟բ փոխեցաւ առ Քրիստոս, ինչպէս որ սուրբ Գրիգոր աստուածաբանը կը գովէ ճառով։

ՄԱՐԿՈՍ աբբայ Աթենացի, էր բարեկիրթ և գիտուն, որ ծնողքը մեռնելէն ետև փափաքելով ճգնաւորութեան մերժեց զաշխարհ, և թողուց տուն տեղ և ամէն բարիքը, գնաց ծովեզերքը, նստաւ տախտակի մը վրայ, ու քշեց ծովուն ներսը։ Իւր աստուածային նախախնամութեամբ առաջնորդելով՝ գնաց ելաւ հեռաւոր ցամաքը Խափշկաց աշխարհին 'ի լեառն Թարմակիա. և այն անմարդաբնակ տեղը զարմանալի առաքինութեամբ ճգնեցաւ իբրև հրեշտակ անմարմին իննուսունըեօթ տարի։ Իսկ երբոր վախճանը մօտեցաւ՝ աստուածային ազդեցութեամբ սուրբ Սրապիոն աբբային գնաց անոր տեսութեան. և կեցաւ քովը մինչև վախճանեցաւ սուրբն Մարկոս, որ թաղեց ու պատմութիւնն ալ գրեց իրմէն լսելով։

Մարկոս մեծ աբբայ միանձն հոգեկիր
　Ուսմամբ սրբութ՟բ ճոխ աստուածընտիր.
　Ընդ ծով աշխարհիս անց իբր անմարմին
　Առաքինացեալ ըստ խրատու Փրկչին։
Կենակից վերնոց զարդ անապատի
　Ճոխացաւ շնորհօք յանշէն յանմարդի.
　Բազմամեայ ճգամբք մաշեցաւ մարմինն,
　Աստուածավառ պերճ փայլեցաւ հոգին։

ՄԱՐՈՆԻՔ կոչեցան Լիբանանու ժողովուրդք լատինացեալք, որք այս անուամբ կ'որոշին հերձեալ Յակոբիկներէն. և անուննին առած են Մարոն Յովհաննէս Ասորւոց պատրիարքէն, որ 'ի 707 երբոր Լիբանանցիք մոլորեցան Նեստորի և Եւտիքէսի աղանդովը, զանոնք դարձուց յուղղափառութիւն ։ Ապա 'ի Ջ դարուն բոլորովին միացան Հռոմայ եկեղեցւոյն հետ. որոնց պատրիարքը Լիբանան կընստի ու կը հրամայէ եպիսկոպոսաց Դամասկոսի, Հալէպու, Կիպրոսի, և այլն ։ Ասոնց կրօնաւորներն են սուրբ Անտոնայ կարգէն, աղքատ և խստակեաց. և իրենց պատարագամատոյցն է ասորերէն Լատին ծիսով. իսկ աւետարանը և ընթերցուածները կը կարդան արաբերէն. ունին նաև 'ի Հռոմ դպրոց հիմնեալ 'ի Գրիգորէ ԺԳ ։

ՄԱՐՈՒԹԱՅ եպիսկոպոս Նփրկերտի էր հօր կողմանէ Ասորի, և մօր կողմանէ Հայ. և ծաղկեցաւ Փոքր Թէոդոսի ժամանակը լուսաւոր վարդապետութեամբ և առաքելական հոգւով՝ դարձընելով 'ի Քրիստոս այն կողմերուն մնացած հեթանոսները ։ Իւր այնչափ անուանի եղաւ հրաշագործութեամբ, մինչև հրաւիրելով տարին 'ի Պարսկաստան, որ բժշկեց թագաւորին որդին 'ի դիւէն. և երևելի նշանագործութեամբ բոլորովին դադրեցուց հալածանքն քրիստոնէից ։ Յետոյ հրովարտակաւ նոյն Պարսից թագաւորին գնաց առ կայսրն Յունաց և նորա ծախքովն ամրացուց Նփրկերտ քաղաքն ու հոն ժողվեց ջերմեռանդութեամբ ամէն տեղերէն երկու հարիւր ութսուն հազար նշխարք սուրբ մարտիրոսաց, և զետեղեց փառաւոր եկեղեցնայ խորաններուն մէջ՝ որ ինքն շիներ էր , անոր համար քաղաքն ալ Մարտիրոսաց քաղաք ըսուեցաւ ։ Նոյն սուրբ նշխարքներուն մէջ յետոյ իր մարմինն ալ պատուեցաւ . որ վախճանեցաւ սուրբ և առաքինազարդ վարքով և աստուածիմաստ գրուածքով ՚ի պայծառութիւն հաւատոյ ։

ՄԱՐՏԻՆՈՍ եպիսկոպոս Գաղղիոյ ՚ի Դ դարուն էր առաքելաշնորհ և աղքատասէր յոյժ , որ տեսնելով աղքատ մը մերկ ողորմելի կտրեց վերարկուն , կէսը տուաւ անոր ։ Ուստի նոյն գիշերը արժանացաւ տեսնելու զՏէրն՝ որ վրան առեր էր աղքատին տուած վերարկուն , և առաւել զօրացաւ առաքինի վարքով և քաղաքավարութեամբ ։ Սա նախ աշակերտ եղաւ սրբոյն Հիլարիոսի հայրապետին , և ժողվեց աշակերտներ կրթեց բարի վարքով . ապա շինեց փառաւոր վանք և զարդարեց սրբակաց կրօնաւորներով առաջնորդելով նոցա ։ Արիանոս հերետիկոսներէն ալ շատ հալածանք քաշեց համբերութեամբ , մինչև ապա ընտրեցաւ եպիսկոպոս յամի 374 . բայց կրօնաւորական վարքը չի փոխեց , նաև խստակրօնութեամբ կրթելով աշակերտները ծաղկեցաւ հրաշագործութեամբ ։ Մինչ զի շատ հեթանոսներ ալ լուսաւորելով կործանել տուաւ կռատուններն ու կանգնեց վկայարաններ . և այսպիսի հրաշալի մեծագործութեամբ և սրբութեամբ փոխեցաւ առ Տէր ութսունըչորս տարեան ՚ի 400ին ։

ՄԱՐՏԻՆՈՍ Ա . սուրբ քահանայապետ Հռոմայ յաջորդեց յաթոռ սրբոյն Պետրոսի յամի 649 , և վասն հաստատութե՟ սուրբ հաւատոյ ժողով գումարեց 'ի Լատերան հարիւրհինգ եպիսկոպոսաց ու դատապարտեց զաղանդն Միակամադաւանից: Որոց կուսակից ըլլալով Կոստանդին հոռոմ կայսրը հրամայեց կուսակալին, որ սպաննէ զսուրբ հայրապետը. բայց նա երբոր մօտեցաւ անոր, մէկէն 'ի մէկ կուրացաւ: Ապա աքսորեցին սուրբը 'ի Նաքսոս կղզին, անկէց 'ի Կոստանդինուպօլիս. ուր շատ տանջեցին զերանելին, որ նզովքէն արձակէ այն հերձուածողները. և երբոր չի կրցան յաղթելու սուրբ քահանայապետին քաջութեանը՝ շղթայակապ աքսորեցին 'ի Տաւրիա. ուր նման Կղեմայ հայրապետին կատարեցաւ վկայական մահուամբ յամի 655:

ՄԱՐՏԻՆՈՍ Բ. կամ ՄԱՐԻՆՈՍ նստաւ քահանայապետ Հռոմայ 'ի 882, և բարեկարգութեամբ կառավարեց զեկեղեցին Քրիստոսի տասնըեօթն ամիս միայն. ապա փոխեցաւ առ Տէր:

ՄԱՐՏԻՆՈՍ Գ. յաջորդեց պապական աթոռը 'ի 942, և զօրաւոր սահմանադրութ՟բ շատ բարելաւութիւն ըրաւ իշխանաւորաց և եկեղեցականաց մէջ. մինչև փոխեցաւ առ Քրիստոս առաքինութեամբ 'ի 946:

ՄԱՐՏԻՆՈՍ Դ. ընտրեցաւ քահանայապետ Հռոմայ 'ի 1281, և կառավարեց ընդհանուր եկեղեցին գեղեցիկ բարեկարգութեամբ առաքելաբար. և սուրբ վարքով վախճանեցաւ 'ի 1285: Իսկ գերեզմանը հրաշքներով փառաւորեցաւ:

ՄԱՐՏԻՆՈՍ Ե. ընտրեցաւ պապ յաթոռ Հռոմայ յամի 1417, որ խոհական առաջնորդութեամբ և սահմանադրութեամբ բարեզարդեց եկեղեցին խաղաղութեամբ և ուղղութեամբ: Ապա 'ի 1581 յանկարծական մահուամբ փոխեցաւ յերկինս:

ՄԱՔՍԻՄՈՍ վկայ էր ազնուական Յոյն, և ատենադպիր Հերակլ կայսեր, որ յետոյ եղաւ առաջնորդ վանից, և գլխահար Միակամադաւան հերձուածողաց: Ափրիկէ գնաց ուղղափառները հաստատելու համար. և անկէ անցաւ 'ի Հռոմ ու ժողովներուն մէջ խայտառակեց աղանդաւորները, որոնք կատղած աքսորել տուին զինքն Անաստաս աշակերտովը. վերջը տարին 'ի Կոստանդինուպօլիս, նզովելով տանջեցին և բանտ դրին: Որոնք զարմանալի համբերութեամբ քաշեցին զայս ամէն չարչարանք վասն ուղղափառ հաւատոյ մինչև կատարեցան 'ի Տէր վկայական մահուամբ յամի 662: Մաքսիմոսի սուրբ վարդապետին կան զանազան գրուածք աստուածաբանականք և բարոյականք, լուծմունք սուրբ գրոց. և տրամախօսութիւնք 'ի վերայ սուրբ Երրորդութեան ընդդէմ հերձուածողաց, հաստատելով զխորհուրդ մարդեղութեան և երկուց կամաց 'ի Քրիստոս, և այլն:

ՄԵԼԻ եպիսկոպոս առաջ էր Պարսիկ զինուոր Շապուհ արքային օրը. ապա հրաժարելով մտաւ ճգնային ծառայութեան մէջ յԱսպահան, և ձեռնադրեցաւ հայրապետ Ռիթրազան քաղաքին. յետոյ գնաց յԵրուսաղէմ, և յանապատն, ու ողջունեց զսուրբ Անտոն. անկէց ալ գնաց 'ի Մծբին, և լսեց սուրբ Յակոբէն որ պիտի նահատակուի ։ Ապա դարձաւ 'ի Պարսկաստան համարձակ կը քարոզէր հրաշագործութեամբ զանունն Քրիստոսի . մինչ զի քաղաքապետը բռնեց զերանելին և զերկու աշկերտները , Աուրա քահանայն ու Շինաւ սարկաւագը , և սաստիկ տանջանքով կը նեղէր սուրբերն որ պաշտեն արեգակն ու կրակը . բայց նոքա երբոր քաջութեամբ յանդիմանեցին անոնց հեթանոսական մոլորութիւնը , քաղաքապետն ու եղբայրը զարկին սրով եպիսկոպոսին կուրծքին , որ ասաց անոնց՝ թէ վաղը դուք ալ մէկզմէկ այսպէս պիտի սպաննէք . և ըսածին պէս սատկեցան իրարմէ որսի մէջ միւս օրը ։ Իսկ երանելւոյն սուրբ աշկերտներն շատ տանջանքներէն ետև նահատակեցան քարկոծմամբ , և կը տօնուին Մելեայ եպիսկոպոսին հետ ։

ՄԵԼԻՏՈՍ կամ ՄԵԼԻՏԻՈՍ հայրապետ էր փոքր Հայաստանէն . նախ ձեռնադրեցաւ եպիսկոպոս Սեբաստիոյ , յետոյ առանձնացաւ 'ի Հալէպ . և ապա վասն մեծահռչակ սրբութեան և իմաստութեան ընտրեցաւ պատրիարգ Անտիոքայ ։ Արիանոսք տեսան որ խիստ կը ջատագովէ Նիկիական հաւատքը և զաստուածութիւն բանին , աքսորել տուին սուրբ հայրապետը . բայց ուղղափառք շուտ դարձուցին իր աթոռը ։ Ապա երթալով 'ի սուրբ ժողովն Կոստանդինուպօլսոյ շատ պատուեցաւ Թէոդոս կայսերէն և հայրապետներէն . ուր ժողովը չարձակուած վախճանեցաւ սուրբն Մելիտոս յամի 381 , զոր մեծարեցին ներբողական ճառերով սուրբ Գրիգոր Նիւսացին , Աստուածաբանն , Ոսկեբերան , և այլն ։

ՄԵԼՔԻԱԴԷՍ սուրբ քահանայապետն Հռոմայ՝ էր Ափրիկեցի . և վասն իմաստութեան և սրբութեան յաջորդեց յաթոռ սրբոյն Պետրոսի 'ի 311 , և մեծ խոհեմութեամբ բարեկարգեց եկեղեցական վիճակը : Սորա օրն եղան մեծամեծ հրաշքներ . և Մեծն Կոստանդիանոս տեսնելով սուրբ Խաչն զօրացաւ ու յաղթելով չար թշնամեաց կործանեց կռապաշտից ուժը, որք կը հալածէին քրիստոնէութի̃ւը : Որով խաղաղացաւ սուրբ եկեղեցին բոլոր հռոմէական կայսերութեան մէջ . իսկ կայսրն ընծայեց Մելքիադէսի սուրբ հայրապետին թագաւորական պալատն Լատերանու հանդերձ թոշակաւ : Ապա սուրբ հայրապետն շատ կարգադրութիւններէն ետև վասն պայծառութեան սուրբ եկեղեցւոյ՝ փոխեցաւ առ Աստուած սրբութեամբ և առաքինութեամբ 'ի 313 :

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ կը թարգմանի թագաւոր խաղաղութեան, և կ՚ըսուի չհամարեալ յազգս․ վասն զի աստուածաշնչին մէջ չյիշուիր ցեղը և էր քահանայ Աստուծոյ բարձրելոյ , թագաւոր Սաղիմայ , և ժամանակակից Աբրահամու , որ և օրհնեց զԱբրահամ, և առաւ անկէց հաց և գինի 'ի նուէր պատարագի Աստուծոյ , նաև յօրինակ պատարագին Քրիստոսի : Ըստ այսմ ասի՝ նախանկար պատկեր Փրկչին , կենդանի օրինակ աստուածպաշտութե̃ , նմանեալ որդւոյն Ա̃յ : Իսկ Յիսուս ալ կոչեցաւ քահանայ ըստ կարգին Մելքիսեդեկի . ինչպէս Պօղոս ասաց . “ Մելքիսեդեկ թագաւոր էր Սաղիմայ . . թագաւոր արդարութեան . . թագաւոր խաղաղութեան . անհայր՝ անմայր՝ չհամարեալ յազգս . որոյ ոչ սկիզբն աւուրց , և ոչ կատարած կենաց , նմանեալ որդւոյն Աստուծոյ՝ կայ մնայ քահանայ մշտնջենաւոր ,, . և այլն ։

Մելքիսեդեկեան աղանդաւորք 'ի Գ դարու նիւթապէս իմանալով սուրբ Գրոց այս խօսքերը դրին թէ Մելքիսեդեկ էր զօրութիւն Աստուծոյ , միջնորդ փրկութեան , և որդի Աստուծոյ մարդկային կերպարանօք երևեալ Աբրահամու , զոր ոմանք կոչեցին հոգի սուրբ , ու կը պաշտէին ։ Իսկ սուրբ հայրապետք դատապարտեցին զանոնք վարդապետութեամբ սուրբ Գրոց և սրբոյն Պօղոսի ։ Հայոց եկեղեցին կը յիշատակէ զՄելքիսեդեկ սուրբ նահապետաց հետ մէկտեղ ։

ՄԵՌԿԵՐԻՈՍ կամ ՄԵՌԿՈՒՐԻՈՍ էր Սկիւթացի զինուոր Հռոմայեցւոց շատ ջերմ աստուածապաշտ ։ Երբոր գնաց պատերազմելու բարբարոսաց դէմ յանձնեց զինքն Աստուծոյ . և տեսլեամբ զօրացաւ քաջագործութեամբ պատերազմին մէջ ու առաւ զօրավարութեան պատիւ ։ Որուն նախանձելով հեթանոսները մատնեցին Դեկոսի կայսեր իբր հայհոյիչ չաստուածոց . երբոր յատեան հանեցին քաջ զօրականն Քրիստոսի , համարձակ քաջութեամբ պատասխանելով վկայեց ճշմարտութեան . ոչ յորդորանք և ոչ ահագին սպառնալիք կրցան թուլցընել սրբոյն հաւատքը . ուստի բանտը փակեցին ։ Ապա կապեցին չորս ցցի վրա ու տակը կրակ վառեցին և մարմինն ալ կտըրտեցին , անանկ որ վազած արիւնը մարեց կրակը . իսկ սուրբ նահատակը կիսամեռ բանտարկեցին . բայց հրեշտակ Տեառն բժշկեց խոցերը , նաև ուրիշ սոսկալի տանջանքներէն ալ պահեց , ու այնպէս զօրացուց , որ կռապաշտները յուսահատելով տարին երանելին 'ի Կապադովկիա գլխատեցին : Իւր մարմինը բուրելով անուշահոտութիւն մը լուսափայլեցաւ , որով շատ անհաւատներ հաւատքի եկան մեծամեծ հրաշքներով . ուստի մեծ պատուով ամփոփեցին հոն նշխարքը , և եղաւ ուխտատեղի և պաշտելի մինչև հիմա :

ՄԵՍԻԱՅ ըստ Եբր . Մաշիախ . ըստ Յն . և Լտ . Քրիստոս , այս ինքն Օծեալ , որ է յատկացեալ անուն Յիսուսի Փրկչին , որպէս ճշմարիտ քահանայապետի , թագաւորի թագաւորաց , և մարգարէի օծելոյ ոչ իւղով օրհնութեան , այլ շնորհօք անձնաւորական աստուածային միաւորութեան : Յակոբ նահապետ իբր 1700 տարի Յիսուսէն առաջ մարգարէացաւ՝ թէ Մեսիային գալոց է Յուդայի ցեղէն երբոր կը պակսին իշխանները նոյն ցեղին : Նաև ըստ մարգարէութեան Դանիէլի՝ վերցաւ իշխանութիւնն Հրէից , և բոլորովին ընկան Հռոմայեցւոց տակը . ըստ այնմ . « Բարձցին զոհք և նուէրք . և 'ի վերայ տաճարին պղծութեան աւերածոյն կացցէ , և մինչև 'ի վախճան ժամանակի կատարած տացի 'ի վերայ աւերածին » : Տ . Դանիէլ , և Մաղաքիաս : Յուլիանոսին հրամանաւ Հրէայք նորէն ձեռք զարկին տաճարը կանգնելու՝ բայց կրակ ելաւ հիմունքէն ու խափանեց գործքը . զի անկանգնելի է կործանումն ըստ բանին Տեառն և Մարգարէից : Թալմուտը կը վկայէ , թէ աշխարհս պիտի մնայ 6000 տարի . 2000 տարի բնական օրէնքով ինչպէս նահապետաց ժամանակն էր . ապա 2000 տարի Գրաւոր օրէնքով Մովսէսի . անկէ ետև պիտի ծնանի Մեսիային ու թագաւորէ նոյնպէս 2000 տարի ։ Ահա ըստ մարգարէութե՟ն եկաւ և կատարեց ամէն գրածներն ու խոստմունքները մարգարէից ․ ըստ այնմ " Մեք ուսուցին Իսրայէլի երկրպագել Աստուծոյ տէրութեանն , և յայտնի քարոզեցին զփրկութիւն հեթանոսաց ․ եթէ գայ Մեսիայ թագաւոր Իսրայէլի " ։ Տ․ Յիսուս Քրիստոս ։

Ամենաշնորհ յոյս էիցս ամենայն
Խոստացեալ փրկիչ օծեալ Մեսիայն ․
Լրումն օրինաց և մարգարէից ,
Շնորհատու բարեաց բացող դրանց երկնից ։
Ո՛հ դիւաբախ միտք հրէական ազգին
Իսպառ կուրացեալ մախանօք չարին ,
Բարձ զօծեալն անմահ , զրկեալ 'ի շնորհաց
Փառք իւր կապտեցան 'ի հեթանոսաց ։

ՄԵՍՐՈՊ սուրբ րաբունապետն մեր , մականուամբ Մաշտոց Մեծն , առաջ նօտար էր Մեծին Ներսէսի , և ապա արքունի ատենադպիր ։ Այլ և վարժ ըլլալով զինուորական կրթութեան և առաւել առաքինական հրահանգօք՝ շատ սիրելի էր եղած իշխանաց և մեծամեծաց ։ Սակայն ոչինչ համարելով աշխարհային անցաւոր մեծութիւնը՝ վանք մտաւ , ու հոգևոր եռանդեամբք այնչափ բորբոքեցաւ , որ աբեղայ ձեռնադրուելէն ետև առանձնացաւ յանապատ և կը ճգնէր քարանձաւներուն մէջ ։

Ապա աստուածային ազդեցութեամբ առաջադրեց որ երթայ լուսաւորէ ազգը քարոզով և գրով ։ Ուստի ժողվեց աշակերտներ կրթեց , և անոնց հետ շրջելով լուսաւորեց շատ տեղ սուրբ վարդապետութ՟բ ․ նաև մաքրեց մնացած աղանդներն և աւելորդապաշտութ՟իններն հանդերձ աստուածահրաշ սքանչելեօք , և զարմանալի նշանագործութեամբ ։ Յետոյ գնաց առ Մեծն Սահակ , և խորհրդակցելով ջանացաւ գիր հնարելու ազգին համար , և հայերէն թարգմանելու զաստուածաշունչը · շատ աշխատանքէն և աղօթքներէն ետև հրաշալի տեսլեամբ առաւ 'ի Տեառնէ շնորհք · յօրինեց մեր լեզուին տառերը շատ գեղեցիկ յամի 406 · յետոյ հնարեց Վրաց և Աղուանից գրերն ալ ։ Տ · Վռամշապուհ ։ Անկէ ետև սկսաւ առաւել շատցընել աշկերտներն ու դպրոցները , ծաղկեցընելով դպրութիւնն ու գիտութիւնը Հայոց մէջ զարմանալի ազգասիրութեամբ ։ Աջակից և օգնական եղաւ սրբոյն Սահակայ ամէն հոգևոր գործքերու մէջ , թարգմանելով պիտուական գրեանք սուրբ Հարց և եկեղեցական արարողութեանց ։ Որոնք միաբան սահմանեցին սաղմոսերգութեամբ և շարականներով ժամասացութեան կարգը , և եկեղեցական ծիսից աղօթքները և ամենայն հոգևոր պաշտօններն , և այլն ։ Սուրբն Մեսրոպ հաւաքեց ամենայն եկեղեցւոյ խորհրդոց ծէսերն ու աղօթքները , և մէկ եկեղեցական գիրք մը շինեց որ իր անուամբն Մաշտոց կ' ըսուի մինչև ցայժմ ։ Քանի մը տարիէն ետև երբոր վախճանեցաւ սուրբն Սահակ , տեղապահ նստաւ յաթոռ կաթուղիկոսութեան Մեծն Մեսրոպ · և վեց ամիսէն ետև փոխեցաւ առ Քրիստոս 'ի 441 'ի Վաղարշապատ ։ Ուր հոգին աւանդած ատենը լուսեղէն խաչ երևցաւ մարմնոյն վրա , և մնաց վրան մինչև տարին հանգուցին զերանելին 'ի վկայարան սրբոց , ինչպէս որ կը պատմեն աշակերտքն Կորիւն և Մովսէս Խորենացին ։

Արփիափայլ ջահ Մեսրոպ րաբունի
Լուսատու որդւոց Թորգոմեան ազգի ,
Հնարիչ աթութայց Թարգման մատենից ,
Ծաղկիչ դպրոցաց ուսման իմաստից :
Ահա գեղափայլ լոյս աստուածաշնորհ
Արամեան ազինըս պարգևեալ նոր .
Մի՛ ոք ապիրատ գտցի այսց շնորհաց
Մնալով անդպիր խաւարեալ յուսմանց :

ՄԵՍՐՈՊ Կաթուղիկոս առաջնորդ էր սուրբ Թադէոսի վանքին , և 'ի 1359 նստաւ կաթուղիկոս յաթոռն Սսայ : Որ տասւիրեք տարի կառավարեց քաղցրութեամբ . և նուիրակ ղրկեց առ սրբազան պապն Իննովկենտիոս Զ . յայտնելով իւր սէրն ու հպատակութիւնը բոլոր ժողովրդով : Յետոյ վասն միաբանելոյ ազգը ժողով ըրաւ արարողութեանց համար . իսկ պատարագին ջրախառնութեան թոյլ տուաւ երթալ ըստ սովորութեան ազգին : Ուստի ոմանք հետևեցան հին սովորութեան անջուր պատարագելով և ոմանք ջրախառն ըստ սահմանադրութեան ժողովըն Սսայ և Ադանայի :

ՄԵՏՐՈՓԱՆՈՍ սուրբ հայրապետն էր թագաւորացն մեծին Կոստանդիանոսի ժամանակը , որ նստաւ Ա . պատրիարք Կոստանդինուպօլսոյ և մականուանեցաւ թագաւորահայր : Նիկիոյ սուրբ ժողովքին ատեն ծերութեան պատճառաւ իր տեղը ղրկեց զԱղեքսանդրոս աւագերէցն 'ի Նիկիա :

Իսկ ժողովքէն ետև հայրապետներն անցեալ 'ի Պօլիս ողջունեցին զսուրբն Մետրոփանոս աւետիս տալով վասն հաստատութեան ուղղափառ հաւատոյ : Եւ նա գոհանալով օրհ֊

նեց զամէնքը հանդերձ թագաւորով· յետոյ յանձնեց որ իրմէն ետև դնեն պատրիարգ զԱղեքսանդրոս, և նորա յաջորդ զՊօղոս դպիր իւր· ապա ողջոյն հրաժարական տալով եպիսկոպոսներուն և Կոստանդիանոսի կայսեր՝ փոխեցաւ առ Տէր յամի 326։

ՄԵՐՈՒԺԱՆ կամ ՄԵՀՐՈՒԺԱՆ էր Արծրունի նախարար, որ փախաւ գնաց առ Շապուհ արքայն Պարսից ուրացաւ հաւատքը։ Շապուհ յաղթելով Արշակ Բ· արքային Հայոց ղրկեց զՄերուժան զօրքով 'ի Հայաստան, որ տիրելով կրակապաշտ ընէ Հայերը· ան ալ մեծամեծ չարիքներով աւրեց եկեղեցիները, այրեց գրեանքը և սաստիկ հալածանքով շատ նահատակներ ըրաւ։

Սուրբն Ներսէս Կոստանդինուպօլիս ըլլալով երբոր լսեց զայս չարիքս, խնդրեց Թէոդոս կայսերէն, ու թագաւորեցուց զՊապ որդին Արշակայ, և զօրքով բերաւ 'ի Հայաստան· որոնք յաղթելով հալածական ըրին կրակապաշտները։ Նոյն պատերազմին մէջ ըլլալով քաջն Սմբատ Բագրատունի բռնեց զանօրէն Մերուժանը, և հօն տեսաւ որ գեղացիք շամփուրով միս կը խորովէին, առաւ շամփուրը կլորցուց կրակը ձգեց, և հանեց տաք տաք ուրացողին գլխուն վրա դրաւ ասելով· “Մերուժան, կը փափաքէիր թագաւոր ըլլալու, ահա ըստ ցանկութեանդ կը պսակեմ զքեզ թագաւոր Հայոց իմ թագադիր ասպետութեան իշխանութեամբս„։ Այսպէս սատկեցաւ ուրացողը, և պատերազմը դադրելով խաղաղացաւ Հայաստան 'ի 381։

ՄԺԷԺ Գնունի նախարար Հայոց էր քաջ զօրագլուխ Հերակլ կայսեր Յունաց. որ մեծ յաղթութեամբ հալածելով Պարսիկները՝ բռնեց իրենց զօրավարը բերաւ կայսեր, որ զինքը դրաւ իշխանապետ Հայոց 'ի 628 ։ Նոյնպէս զօրացաւ ՄԺԷԺ Կոստանդին կայսեր օրը, և այնչափ սիրելի եղաւ ամենուն քաջութեամբ և քաղցրութեամբ, մինչ զի Կոստանդինէն ետև զինքն ընտրեցին կայսր 'ի 667, որ շատ փառաւորեցաւ բարեպաշտութեամբ. բայց ժանտ Հոռոմները նախանձելով սպաննեցին քաջը յամի 668 ։

ՄԻՀՐ պարսկերէն կը նշանակէ Արեգակն, որ էր իրենց մեծ չաստուածը, որուն անուան վրա երդումն կընէին. զոր օրինակ "Դահճապետն ասէ. Ի Միհր Աստուած երդուեալ է իմ։ Արեգական, որ անուանեցաւ Միհր աստուած", և այլն ։ Այս կուռք կանգներ էին Հայաստանու Դերջան գաւառն, զոր Արտաշէս արքայն բերած էր Յունաստանէն, և յետոյ կործանեց սուրբ Լուսաւորիչ ։

ՄԻՀՐԱՆ կամ ԲԱԿՈՒՐ էր առջի քրիստոնեայ թագաւորն Վրաց, մեծին Տրդատայ արքային օրը, որ լուսաւորեցաւ Նունէ կուսէն ։ Վասն զի սուրբ կոյսն քարոզելով 'ի Վրաստան մեծամեծ հրաշքներով, Միհրան կանչեց որ բժշկէ թագուհին ու արքայորդին. որոնք երբոր բժշկեցան՝ արքայն պարգև մը տուաւ կուսին. բայց նա չառնելով առաւել պատուեցաւ զարմացմամբ ։ Ապա 'ի 317 Միհրան որսի ատեն մեծ վտանգի մէջ ընկաւ, և օդին խռովութեամբը անանկ խաւարի մէջ մնաց, որ մի լորեալ կը դողար՝ և հոն սրտանց դառնալով առ Աստուած ուխտեց՝ որ եթէ ազատի այն վտանգէն հաւատայ ճշմարիտ Աստուծոյն քրիստոնէից : Այն ժամանակը մէկէն բացուեցաւ երկինքը . Միհրան բոլոր սրտով հաւատաց 'ի Քրիստոս , և մկրտեցաւ հանդերձ ժողովրդով փառաւորապէս : Ասիկա 'ի 321 մեծապէս պատուեցաւ Տրդատ թագաւորէն և հաստատեցաւ զօրավար հիւսիսային զօրաց Հայոց : Յետոյ ելաւ Պարսից դէմ շահատակեցաւ . ուր պատերազմին մէջ ընկաւ Միհրան յամի 351 : Տ . Նունէ :

ՄԻՀՐԴԱՏ էր արքայ Պոնտոսի , փեսայ Արտաշիսի Ա . արքային Հայոց , քաջ և զօրեղ թշնամի Հռոմայեցւոց , որ 100 տարի Յիսուսէն առաջ փոքր Ասիայի շատ տեղերուն տիրեց . ապա սկսաւ պատերազմել Հռոմայեցւոց հետ : Նաւեր ալ շինել տուաւ ու անցաւ Յունաստան , և շատ անգամ յաղթելով Հռոմայեցւոց՝ տիրեց շատ տեղերուն . նաև այնչափ նեղը խօթեց թշնամիներն , որ Հռոմայեցիք հանեցին անոր դիմաց նախ Լուկուլլոսը , վերջը Պոմպէոս զօրավարն , որպէս զի վարպետութեամբ յաղթէ Միհրդատին : Բայց նա ուրիշ կերպով չյաղթուեցաւ , այլ երբոր անմիաբանութեամբ իշխանները պաղեցան իրմէն սաստիկ բնութեանը համար , ու Փառնակ որդին թագաւոր դրին , և միացեալ թշնամիներուն հետ ելան վրան պաշարեցին Միհրդատին նստած բերդը , ան ատեն յուսահատելով առաւ թոյն որ մեռնի . բայց 'ի մանկութենէ սորված ըլլալով թոյնի չի վնասեցաւ . կինն ու աղջիկը թունով մեռուց , ինքն ալ իւր սրովը ինքնասպան մեռաւ եօթանասուն տարւան, 59 տարի Քրիստոսէն առաջ, որ յիսունըվեց տարի թագաւորեց ահեղ քաջագործութ՟ք, մինչև դողացուց Հռոմայեցւոց հասարակապետութիւնը ։

ՄԻՆԱՍ Մեծն էր Աթենացի, իմաստալից ճարտասան Մաքսիմիանոսի կայսեր, որ ղրկեց յԱղեքսանդրիա զօրքն՝ որ խաղաղացընէ խռովեալ իշխանները ։ Իր մեծ զգօնութեամբ կատարելէն ետև գործքը մնաց հոն տարի մը, և աստուածպաշտութեամբ յայտնեց քրիստոնէութիւնը մխիթարելով քրիստոնեաները և օգնելով աղքատաց ․ մինչ զի աղօթքով կը բժշկէր ամէն ցաւ ։ Երբոր լսեց կայսրը ղրկեց վրան Երմոգինէս եպարքոսն, որ անոր ուսումնակիցն էր ․ բայց երբոր սկսաւ վիճել սրբոյն հետ՝ յաղթուելով նորա աստուածուսոյց պատճառներէն կտրել տուաւ լեզուն և կուրացուց աչքն ու բանտը դրաւ ։ Իսկ սուրբ Մինաս բժշկուելով հրեշտակին ձեռքով զարհուրեցուց զԵրմոգինէս ․ մինչև հաւատաց Քրիստոսի յայտնապէս դաւանութ՟ք ։ Ան ատեն սուրբն Մինաս հրաւիրեց ձեռամբ Եւգրափոս նօտարին քահանաներն ու եպիսկոպոսներն, որք հոգևոր կրթութեամբ լուսաւորեալ մկրտեցին զերանելին Երմոգինէս, որ յետոյ ձեռնադրեցաւ քահանայ և եպիսկոպոս Աղեքսանդրոս պատրիարգէն ։ Անկէ ետև շրջելով համարձակ կը քարոզէր զաւետարանն ճշմարտութեան ․ մինչ զի երբոր լսեց Մաքսիմիանոս կայսրն գնաց յԱղեքսանդրիա և բռնեց Երմոգինէսը տիգով խոցեց որովայնը, և ձեռքն ու ոտքը կտրելով գետը ձգեց ։ Իսկ սուրբն Մինաս բանտին մէջ կախելով չարաչար կը տանջէր ․ բայց Տէր զերկուռն ալ պահեց կենդանի և ողջանդամ, և մեծ պարծանք եղան հաւատացելոց և հաստատութիւն հաւատոյ ։ Հոն քաջն Եւգրաքոս զօրացեալ հոգւով սաստիկ յանդիմանեց կայսեր չար խստասրտութիւնը, որ կատղելով զարկաւ սրովն սպաննեց ։ Նա գլխատեց ըզսուրբն Մինաս և Երմոգինէս . իսկ մարմինները ծովը նետել տուաւ, որ հրաշքով հասան 'ի Կոստանդինուպօլիս և մեծ յարգութեամբ ամփոփեցան Մետրոփանոս հայրապետէն, ուր մեծամեծ հրաշագործութիւնք եղան . և ամէն տեղ եկեղեցիներ կանգնեցին անուամբ սրբոյն Մինասայ ։

Յանկալին վերնոց պերճաբան Մինաս,
Ընտիր հոգելից վեհ աստուածիմաստ,
Յաղթող գոռ մարտից կայսեր և պետաց,
Զօրեղ հրաշագործ ահարկու դիւաց ։
Մեծն Երմոգինէս ընդ Եւգրաքոսի
Լոյծ ըղբռնութիւն չար բելիարի ։
Վարդագոյն արեամբ հաղորդք գերապանծ
Սրբոյն Մինասայ պերճ յաղթանակաց ։

ՄԻՆԱՍ Եգիպտացի, ժամանակակից մեծին Մինասայ, էր քաջ զօրական աստուածասէր կայսերական գնդէն, որ տեսնելով անօրէն կռապաշտներուն մոլութիւնը, թողուց զինուորութիւնն ու ելաւ լեռը կը ճգնէր ։ Նա վառեալ սիրովն Քրիստոսի գնաց քաղաքը, և ելաւ դատաւորին առջեւն համարձակ դաւանեց քրիստոնէութիւնը ։ Ուստի հեթանոսները կատղեալ սաստիկ ծեծ տուին և այրեցին կողն ու երկըթէ փուշերու վրա քաշեցին . և ապա գլխատեալ այրեցին մարմինը ։ Իսկ հաւատացեալք ժողվեցին նշխարքը և սփռեցին ամէն տեղ, որ ծաղկեցան հրաշքով ։

ՄԻՒՌՈՆ Կրետացի բարեպաշտօն և առաքինի էր Դեկոսի ժամանակը, որ առատասիրտ և ողորմած ըլլալով Աստուած ալ շատցուց անոր արմտիքը · նաև պարգևեց իրեն շնորհք բժշկելու ամէն ցաւ · և ինչ որ կ՚օրհնէր՝ պտղաբեր կ՚ըլլար ։ Ապա ձեռնադրելով քահանայ՝ զօրացաւ շնորհօք, և կը զօրացընէր քաջութեամբ նահատակներն, փափաքելով ինքն ալ նմանել մարտիրոսաց ։ Դեկոսին հալածանքը դադրելէն ետև Միւռոն ձեռնադրեցաւ եպիսկոպոս · որ աստուածիմաստ վարդապետութեամբ և հրաշագործութեամբ փառաւորեց զեկեղեցին, միշտ պատուելով և յիշատակելով սուրբ նահատակները ։ Ամենուն կը քարոզէր՝ որ եռանդագին պատուեն սուրբերը · զի ամէն սուրբք իրենց տօնին օրը համարձակութիւն ունին բարեխօսել առ Աստուած վասն տօնողացն ։ Սա հարիւրամեայ եղաւ · ու վախճանելու ատեն ասաց աշկերտներուն · "Ահա ես ալ կ՚երթամ՝ մարտիրոսներուն ետևէն սրբոյն Անտոնինոսի և Լաւրենտիոսի" ։

ՄԻՔԱՅԷԼ կը նշանակէ "Ո՛վ է որպէս Աստուած", որ է հրեշտակապետ, և կը համարի զօրավար երկնային զօրաց և հալածող բանսարկուին, ինչպէս կը հաստատէ բանն Յայտնութեան ասելով · "Միքայէլ և հրեշտակք իւր կռուէին ընդ վիշապին . . . և անկաւ վիշապն մեծ՝ օձն առաջին ։ Միքայէլ հրեշտակապետն (ասէ Յուդայ առաքեալ) յորժամ ընդ բանսարկուն սատանայի վիճեալ տայր պատասխանի վրան Մովսիսեանն մարմնոյ . . . ասէ՝ սաստեսցէ 'ի քեզ Տէր ,, ։ Կ՚աւանդի թէ Յուդայ այս բանը առեր է Մովսէսի վարքէն . ուր գրած է թէ՝ Միքայէլ հրեշտակ Մովսէսի մարմինը ծածկեց , որ Հրէայք չի պաշտեն զայն կռապաշտութեամբ . իսկ սատանայ հակառակելով կը պնդէր որ տայ նոցա , որպէս զի կռապաշտ ըլլան ։ Վարդապետք կը համարին թէ Միքայէլ հրեշտակապետ երևնալով մարգարէից կը խնամէր հին եկեղեցին . նմանապէս խնամակալ է նոր եկեղեցւոյն ։ Տ . Հրեշտակք ։

ՄԻՔԱՅԷԼ անուամբ երեք կայսերք Յունաց նստան 'ի Կոստանդինուպօլիս Թ. դարուն մէջ . բայց կայսերութեան վայել երևելի գործք մը չի կրցան ընելու ։ Ուստի երկարատև չեղաւ իրենց պետութիւնը . միայն բարեպաշտութե̄ հաստատեցին զյարգութի̄ սուրբ պատկերաց ու մերժեցին պատկերամարտ հերձուածողները ։

ՄԻՔԱՅԷԼ Սեբաստացի նստաւ կաթուղիկոս Հայոց 'ի 1556 , որ ջանալով բարեկարգել և զօրացընել ազգը և աթոռը ղրկեց 'ի Հռոմ զգլխնական Աբգարը և քահանայ մը առ սրբազան պապն Պիոս Դ . հանդերձ նամակաւ և դաշանց թղթով ։ Աբգար խմաստութեամբ սիրելի եղաւ սրբազանին բացայայտ ծանուցանելով ամէն հաւատքի և ազգային աւանդութեանց և ապարողութե̄ց խնդիրները ։ Շատ շինուեցան հայրապետք Հռոմայ մեր ազգին վրայ , և կամեցան Հայոց դպրատուն կանգնել Հռոմայու մէջ ինչպէս կը գրէ սրբազան Գրիգոր ԺԳ . պապն ։ Աբգար մեծ պատուով դարձաւ 'ի Հայաստան . բայց նոյն ատեն վախ-

Ճանելով Միքայէլ կաթուղիկոսն՝ իրենց բարի փափաքն ալ անպտուղ մնաց դժբաղդութեամբ ազգին 'ի 1569 ։

ՄԻՔԻԱՍ էր փոքրամատեան մարգարէ 'ի ցեղէն Յուդայ կամ Եփրեմի. թէպէտ մարգարէութիւնն է միայն եօթնեակ գլուխ, բայց ոճն է գերազանց, և բանն խորհրդաւոր և յորժ ազդու ։ Գուշակեց Հրէից գերութիւնն ու կործանումն. այլ և յայտնապէս պատմեց զծնունդն Փրկչին և հաստատութիւն նոր եկեղեցւոյ ամենայն պարագայով, ինչպէս որ կատարեցաւ ։ Ըստ ոմանց՝ սա էր Միքիայն ժամանակակից Աքաաբու, որ բանտը մտաւ, սով քաշեց, ու նահատակեցաւ Յովրամէն գահավիժելով. և ըստ այլոց ժամանակակից էր Եսայեայ մարգարէին սրով նահատակեալ վասն ճշմարտութեան ։

ՄԽԻԹԱՐ բժիշկ փիլիսոփայ էր ժամանակակից Շնորհալւոյն Հեր քաղաքէն, բանիբուն և տեղեակ աստեղաբաշխութեան ։ Ան մտերիմ բարեկամ ըլլալով յաճախ կ'երթար Շնորհալւոյն քով. և նորա խնդիրքով գրեց ոտանաւորն երկնից վրայ, որ կը սկսի “Իմ եղական գոլով բնութիւն„ ։ Շնորհալին ուրիշ ոտանաւոր մ'ալ գրեց 'ի վերայ մարդեղութե՟ Յիսուսի, որուն գլխագրերը կը կազմեն “Մխիթար բժիշկ ընկալ 'ի Ներսիսէ զայս բան„ ։ Իսկ ինքն Մխիթար գրեց իրեն լաւ բժշկարանը հրամանաւ Գրիգորի Դ. կաթուղիկոսին 'ի 1184 ։

ՄԽԻԹԱՐ Գոշ (այսինքն Քէօսէ) կամ Մխիթար Գետկայ՝ էր գիտնական վարդապետ

Հայոց 'ի ԺԲ դարուն, առաքինազարդ և խոստակրօն։ Սա յօրինեց զանազան պիտանի գրեանք, և քարոզական խորհրդաւոր առակներ առաքինութեանց վրայ, և իմաստալից խրատներով զարդարած վասն բարի վարուց և կատարելութե՟ ․ որ տպագրեցաւ 'ի Ս. Ղազար։ Նոյնպէս յօրինեց դատաստանագիրք Հայոց, որոշելով ինչ դասակարգութիւն եկեղեցական Կղերքը ․ որոնց ամենուն գլուխ դրեր է քահանայապետն Հռոմայ։ Գրեց նաև մեկնութիւն Երեմիայի, ողբոց, և Բարուքայ։ Դարձեալ շարադրեց Տրամախօսութիւն 'ի վերայ բնութեանս Ադամայ բերնէն առ որդիս և Եւայի բերնէն առ դստերս։ Յօրինեց և կանոնս վասն պաշտաման սուրբ հաղորդութեան, և հաւատոյ գիրքը, այլև խրատական նամակներ։ Եւ երբոր կը փափաքէր միաբանելու ազգը ըստ կանոնաց Սսոյ Ա. ժողովոյն՝ հասաւ վախճանը Գետկայ վանքին մէջ ․ շատ երևելի աշկերտներ ունեցաւ ․ և գլխաւորն էր Յովհաննէս վարդապետ Վանական։ Տես 'ի կարգին։

ՄԽԻԹԱՐ Մեծ վարդապետ Սեբաստացի, Աբբահայր՝ էր երանաշնորհ հիմնադիր սուրբ ուխտին մերոյ, ծնեալ յամի Տեառն 1676, և անուանեալ Մանուկ, որ սնաւ սրբութեամբ երկու սրբասէր կուսանաց քով։ Ապա երբոր տասնըհինգ տարուան եղաւ վառեցաւ սիրտը կրօնաւորութեան սիրով, մտաւ սուրբ Նշանին վանքը։ Որուն համար այն հոգելից կուսանքն ալ տեսիլ տեսեր էին, թէ կային սառնալից ճամբայի մը վրայ, որ կը հանէր փառաւոր դուռ մը ․ ուր մանուկ մը սառերը կոտրելով կը բանար ճամբան։ Ուստի գիտնալով թէ մանուկն էր Մխիթար բայց ոչ արքայութեան դրան, ուրախութեամբ գոհացան Աստուծոյ · որ և մտեալ կրօնաւորական կանոնի տակ հոգւոր կրթութեամբ այնչափ յառաջադէմ եղաւ, մինչև զարմացուց զամէնքը, և Առաջնորդն ալ տեսնելով առաքինի վարքը և ուսումնասիրութիւնը ձեռնադրեց զնա սարկաւագ կոչելով Մխիթար ։

Յետոյ անցաւ 'ի Կարին, ուր ծանօթ եղաւ Յիսուսեան վարդապետի մը հետ · և տեղեկացաւ Եւրոպայի վանքերուն կանոնաց և բարեկարգութե̃ցն, որոնց վրայ շատ կը բորբոքէր սիրտը ։ Անկեց գնաց յԷջմիածին · ուխտն ընելէն ետև տեսաւ որ հոն ուսման կրթութիւն չկայ, անցաւ Սևանայ վանքը, ուր ընկաւ Աստուածածնայ պատկերքին առջևն ու շնորհք խնդրեց ։ Հոն հրաշալի թմրութիւն մը վրան եկաւ, և կը տեսնէր Տիրամայրն ծաղկանկար հագուստով, և երկու կուսանք ալ քովը ։ Երբոր հարցուց Աստուածամայրն · Ի՞նչ կը խընդրես · պատասխանեց Մխիթար · Ինչ որ ինձի հարկաւոր կը ճանչնաս, զայն կը խնդրեմ ։ Խոստացաւ զայն Տիրամայրն ու անյայտ եղաւ տեսիլքը ։

Իսկ Մխիթար արթնցաւ ուրախ և մխիթարեալ · ապա ելաւ գնաց Բասենու Կարմիր վանքը · ուր եկեղեցւոյ մէջ տեսաւ Տիրամօր պատկերը նման տեսիլքին Սևանու · ուստի յանձնելով զինքն Ածածնին ու վանահօրն խնդիրքովը յանձն առաւ կրթելու աբեղաները ուսմամբ և առաքինութեամբ, և էր ինքը տասնըեօթ տարւան ։ Ոչ միայն ուսմամբ կը լուսաւորէր զանոնք այլ և համարձակ վարդապետելով վանականաց և ժողովրդոց առջև հոգեւորապէս կը մխիթարէր զամէնքը տասնըեօթը ամիս ։ Յետոյ նորէն գնաց 'ի Սեբաստիա նստաւ Սուրբ Նշանին վանքն ու շարադրեց շատ ոտանաւորներ և տաղեր, ուր արեան առատութեամբ կուրացան աչքերը. բայց քաջալերեալ յօրինեց ոտանաւոր գովեստն Աստուածածնայ, որուն գլխագիրերն կը կապեն այս բանը. "Մխիթար կոյրն էի ուխտեցի, զի 'ի կուսէդ լոյս տացի" ։ Այս գարնան ատեն լուսաւորեցան աչքերը. և տասնըչորս ամիսէն ետև ելաւ Հռոմ երթալու. բայց երբոր Կիպրոս կղզին հասաւ, անանկ սաստիկ ջերմ եկաւ վրան՝ որ ետ դարձաւ, գնաց Հայրենիքը և օդափոխութեամբ կատարեալ առողջանալէն ետև՝ նստաւ Սուրբ Նշանին վանքը, շատ երգեր ալ շարադրեց, և քսան տարեան որ եղաւ քահանայ ձեռնադրեցաւ ։ Անկեց ետև սկսաւ աշկերտներ ժողվել և 'ի 1697 գնաց 'ի Կոստանդինուպօլիս, անկեց 'ի Կարին. երբոր դաս կուտար հոն զաստուածաբանութիւնը մեծին Ալբերտի, Մարգար առաջնորդն Կարմիր վանքին տուաւ իրեն վարդապետական գաւազան 'ի 1699. և հոնկէ դարձաւ 'ի Կոստանդինուպօլիս, ուր կը կրթէր աշկերտներն ու կը քարոզէր ուղղափառ հաւատքը համարձակ ։ Ուստի թշնամիներէն հեռանալով քաշուեցաւ գնաց Գաբուչիններուն վանքը նստաւ ։ Իսկ յամի Տեառն 1701. սեպ. 8. Աստուածածնայ Ծննդեան տօնին օրը ժողվեց աշկերտներն, ու հոգեւորապէս կրթեց զանոնք՝ որ նուիրեցան կրօնաւորական ուխտով յորդեգրութիւն Տիրամօրն ։ Յետոյ երբոր նեղեցան թշնամիներէն Աբբահայրն իրեք աշկերտներով փախաւ 'ի Մօռա կղզին Վենետիկցոց տէրութեան տակը. և հոն Մո-

թուն քաղաքը երկիր ալ առաւ վանք շինեց եկեղեցիով և կրօնաւորական կանոններով ըստ կարգի սրբոյն Անտոնի Աբբային, զոր հաստատեց Կղեմէս ԺԱ. սրբազան պապն 'ի 1709. պատուելով զՄխիթար անուամբ Աբբայի ։ Ապա 'ի 1715 Մօռայի պատերազմին ատենը Մխիթար Աբբայ անցաւ 'ի Վենետիկ, և առաւ տէրութենէն սրբոյն Ղազարու փըլփլկած կղզին . ուր մտաւ 'ի սեպտեմբերի 8ին աշկերտներովն ու մէկէն սկսաւ շինել վանքը և գեղեցիկ կատարեց 'ի 1740ին ։

Յամի 1743 առաւ սրբազան պապէն ԺԴ. Բենեդիկտոսէն նամակ օրհնութեան և հաստատութեան, մեծ ուրախութեամբ ամենուն ։ Վերջի տարիները վրան եկաւ դալուկ ցաւը . սկսաւ ամենայն հոգևոր պատրաստութիւնը տեսնել եռանդեամբ, մինչև որ երջանիկ մահուամբ փոխեցաւ առ Քրիստոս եօթանասունըչորս տարւան, յամի 1749, ապր. 27. զոր մեծաւ փառօք հանգուցին եկեղեցւոյ շքեղ բեմին վրայ ։ Մխիթարայ յաջորդեց իւր աշակերտն Ստեփաննոս վարդապետ Մելքոնեան և կառավարեց սուրբ ուխտն խոհեմութեամբ յիսուն տարի, և վախճանեցաւ 'ի 1799. և սորա յաջորդ եղաւ իւր աշկերտը մեծիմաստ Ստեփաննոս Բ. Ագոնց. որ 'ի 1807 օծաւ արքեպիսկոպոս և վախճանեցաւ սրբութեամբ 'ի 1824. անկէց ետև աբբայք արքեպիսկոպոս ձեռնադրեցան ։

Բարուն երկնաշնորհ ձրագ աստուածավառ, ,
Լուսաբեր ազգիս արուսեակ պայծառ .
Փայլմամբ վառ լուսոյ պէսպէս իմաստից
Վերբերիչ բարեաց Մխիթար հոգելից ։

Ո դուռն իմաստութեան բացեր շնորհատու
Յարդարիչ ուղղոյ ելից երկնաչու .
Դրախտ անմահ տնկոց շնորհեալ Հայ ազգի
Ի յաւերժ վայելս պտղոց ցանկալի ։

ՄՈՂՈՔ ըստ Եբր. թագաւոր, էր սոսկալի կուռք մը Ամմոնացւոց, որ կը պաշտէին Հրէայք, նաև Սողոմոն վասն կռապաշտ կանանցն կանգնեց կռատուն մը ։ Այս կուռքս էր թափծու պղնձէ, նստած պղնձէ գահին վրա, գլուխն էր եզան ոսկի թագով, թևերը բացած . և գիրկն ունէր եօթը խորշ, մէկին մէջ կը դնէին ալիւր, և մէկալընոնց մէջ հինգ զանազան կենդանի, իսկ եօթներորդին մէջ կը դնէին տղայ մը, որ իրեն կը զոհէին . զոհագործութեան ատենը կրակ կը վառէին տակէն և խեղճ տղան գրկին մէջ կ՚այրէին իբր ողջակէզ . նաև ձայնը չիլսուելու համար քուրմերը ահագին ձայներ կը հանէին երգերով, փողերով, և թմբուկներով մինչև ողորմելի տղան այրելով ծուխ կ՚ըլլար, ինչպէս որ կը նախատէ Երեմիա մարգարէն . “Եւ առ պղծութեան իւրեանց շինեցին բագինս Բահաղու մատուցանել զուստերս և զդստերս Մողոքայ„ ։ Տ . Բահաղ ։

ՄՈՆԻԿԱ էր մայր սուրբ Օգոստինոսի, կին ժրագլուխ և առաքինի, որ իւր էրիկը դարձուցեր էր ՚ի Քրիստոս . և յետ նորա այրի մնալով անդադար աղօթքի հետ էր ։ Մինչ զի աղօթքով դարձուց որդին ալ Մանիքեցւոց աղանդէն . յետոյ միատեղ ելաւ գնաց ՚ի Միլան, ու աշակերտ ըրաւ զայն սուրբ Ամբրոսիոսին . այսպէս Օգոստինոս եղաւ մեծանուն վարդապետ եկեղեցւոյ ՚ի ցնծութիւն մօրն ։

Այս սրբուհին երբոր դարձաւ յԱփրիկէ իր քաղաքը փոխեցաւ առ Աստուած, որուն վրա սուրբ ոգին մեծ գովեստ խօսեցաւ: Իսկ նըշխարքը ժամանակէն ետև փոխադրելով 'ի Հռոմ հանգուցին 'ի տաճար սրբոյն Օգոստինոսի, զոր կը տօնէ Լատին եկեղեցին:

ՄՈՆՏԱՆՈՍ էր աղանդապետ Բ դարուն, այր ախտաւոր և փառասէր, որ կը ջանար խաբէութեամբ մարգարէ ձևանալու, խորամանկ արուեստներով սուտ գուշակութիւններ ընելով: Մինչև աշկերտներն ալ պաշտել սկսան զինքը իբր հոգի սուրբ և կոչեցան Մոնտանեանք ուրանալով եկեղեցւոյ իշխանութիւնն. իսկ բանական հոգին կը համարէին մարմնեղէն, նաև կը մերժէին ամուսնութիւնը: Ոմանք ալ կը նուիրէին իրենց պատարագին հաց և պանիր, անոր համար կոչեցան "Արտոտիրիտէ„ այս ինքն հացպանիրեանք. և նոյն հացը կը շաղուէին արիւնով տղոց, զոր կը կոչէին մարտիրոս: Մոնտանոս ունէր երկու չարաճճի կնիկ, որոնց ձեռքով կը խաբէր աղանդակիցները. և նոքա զինքը սատկեցուցին յամի 219: Որ դատապարտեցաւ բոլոր աշկերտներովը 'ի ժողովին Գաղղիոյ 'ի սրբոյն Իրանոսէ յամի 197, և չարաչար նզովեցան ամէնքը 'ի սրբոց Հարց և Վարդապետաց:

ՄՈՎԿԻՄՈՍ էր սրբակրայ երէց Նիւլանդայի, որ Դիոկղետիանոսի հալածանքին ատենը համարձակ կը քարոզէր զԱւետարանն. և չէր թողուր որ հաւատացեալք երթան հեթանոսներուն զոհին հանդէսը տեսնեն: Ուստի բռնեցին կռապաշտները տանջելով կրակը ձգեցին, բայց հրեշտակները զինքն անփաս պահեցին թէ կրակէն ու գազաններէն, և թէ ուրիշ դառն տանջանքներէն. մինչև ապա հեթանոսները գլխատեցին զերանելին, և թաղեցաւ 'ի Բիւզանդիա. ուր յետոյ մեծն Կոստանդիանոս տաճար կանգնեց նորա անուամբն, և հրաշքներով տօնեցաւ:

ՄՈՎՍԷՍ Նախամարգարէն էր թոռն թոռին Յակոբայ նահապետին, որ ապրեցաւ գետէն, ուր որ Փարաւոն թագաւորին հրամանաւ ձգուած էր ուրիշ մանչ տղոց պէս: Աստի Փարաւոնին աղջիկը գետէն հանելով և որդեգրելով իրեն՝ վարժեցաւ Մովսէս իմաստութեամբ յարքունիս: Յետոյ փախաւ անկէց, և աստուածային կարգադրութեամբ եղաւ առաջնորդ Իսրայէլացւոց. և հանելով զանոնք Եգիպտոսէն մեծամեծ հրաշքներով անցուց Կարմիր ծովէն աստուածային զօրութեամբ: Նաև սքանչելի կերպով քառասուն տարի առաջնորդեց նոցա անապատին մէջ, տալով իրենց աստուածային օրէնքներն ու պատուիրանները զարմանալի նշաններով: Մովսէս հեզ խոնարհութեամբ և արի համբերութեամբ եղաւ ընտանի Աստուծոյ, աստուածատես, և աստուածախօս. այլ և առաջին գրող Աստուածաշունչ գրոց 'ի ստեղծմանէ աշխարհի մինչև իր օրը, պայծառ նկարագրելով ճշմարտութիւնն օրինաց, մարգարէութեանց, և բարոյական վարդապետութեան:

Հրէից տօները և ծէսերը բոլոր կարգաւորեց. ու յայտնի մարգարէացաւ Մեսիային գալստեան վրայ, ինչպէս որ ամէնն ալ կատարեցան: Որուն վարդապետութիւնն ալ շատ մօտ էր վարդապետութ՟ն նոր օրինաց և եկեղեցւոյ ։ Ահա այսպէս մեծն Մովսէս հրահանգեց խստասիրտ ժողովուրդը շատ հալածանք քաշելով, և համբերելով առաքինութ՟ք. ապա վախճանեցաւ հարիւր քսան տարւան, և թաղեցաւ աստուածային հրամանաւ 'ի Նաբաւ լեռը անյայտ տեղ մը. որպէս զի աւելորդապաշտ Հրէայք չի պաշտեն զսուրբն Աստուծոյ ։ Սակայն հին և նոր եկեղեցին կը տօնէ յարգանօք. և ըստ Սուրբ Գրոց՝ “ Ոչ ևս եկաց մարգարէ յԻսրայէլ իբրև զՄովսէս, այր՝ զոր ծանեաւ Տէր դէմ յանդիման ” ։

Մովսէս պարագլուխ գնդին տեսողաց,
  Պերճ աստուածախօս գրիչ սուրբ օրինաց.
  Ժրաջան կորովի վարիչ գերափառ
  Անյաղթ վշտակիր յազգէն չարափառ ։
Որչափ յաճախեաց 'ի գործ սքանչելեաց
  Ի դարձ ապիրատ ազգին չարաղգեաց,
  Այնչափ աննըւէրք իբր անսաստ գազան
  Քաղցր օրինադրին նոքա հեստ գըտան ։

ՄՈՎՍԷՍ Խորենացի, մեծիմաստ քերթող, էր ձեռնասուն աշակերտ և ազգական սրբոյն Մեսրոպայ, որ փայլեցաւ իմաստութ՟ք և սրբութեամբ ։ Յամի Տեառն 434 ուսման պատճառաւ ղրկեցին զինքն ու դասակիցներն յԱղեքսանդրիա, յԱթէնս, 'ի Հռոմ և 'ի Կոստանդինուպօլիս, որոնք շատ բանիբուն և տեղեակ եղան ։ Երբոր դարձան 'ի Հայաստան, ընտրեցին զՄովսէս եպիսկոպոս Բագրեւանդայ և Արշարունեաց, որ ամենայն բարեկարգութ՟ք կառավարեց վիճակը մինչև 'ի խոր ծերութիւն քարոզութեամբ և գրաւոր աշխատասիրութ՟ք, թարգմանելով պիտանի գրեանք 'ի լուսաւորութիւն ազգիս, և յօրինելով զանազան գիրքեր, ճառեր, և շարականներ այլովքն հանդերձ:

Որպիսի են, Պատմութիւն Հայոց ՚ի սկզբանէ աշխարհի մինչև ՚ի Ե դար, Համառօտ աշխարհագրութիւն, Պիտոյից գիրք ճարտասանական, Պատմութիւն վերափոխման և սքանչելագործ պատկերի Տիրամօրն, նաև սրբոյն Հռիփսիմեայ. Մեկնութիւն ժամակարգութեանց, և Քերթողական բանք, և այլն: Մարգարէական ոգւով գրեց գուշակութիւն Բագրատունեաց վրա, և վասն նահատակութեան իշխանացն Սահակայ և Համազասպայ, ինչպէս որ յետոյ կատարեցան բոլորն ալ: Իսկ ինքն աստուածարեալ սուրբ վարդապետն վճարելով բազմարդիւն կեանքը փոխեցաւ առ Ք͞ս իբր հարիւր քսան տարւան, և տօնեցաւ:

ՄՈՎՍԷՍ անուամբ քանի մը կաթուղիկոսներ նստան, որոնցմէ էր Մովսէս Բ. իմաստուն և ազգասէր վարդապետ ՚ի Զ դարուն, որ բարեկարգութեամբ կառավարելով աթոռն՝ ուղղագրեց տումարն և տօներուն շրջանն՝ այլ և սահմանեց ժողովով նոր թուական և շրջան յամի Տեառն 552: Ահա ասկէց կը սկսի Հայոց թուականն. ուստի երբ ուզես գտնել զթուականն Հայոց՝ հանէ Քրիստոսի թուականէն 552, մնացեալն է Հայոց թուականն:

Մովսէս ջանացաւ սրբել զՀայաստան Պարսից կրակապաշտութենէն. իր ատենը հրդեհ ընկաւ Դուին քաղաքը մոգերուն կրակէն. երբ որ իրենք չի կրցան մարելու, հոն հասաւ Մովսէս հայրապետ՝ խաչով և աւետարանովն ալ տեառնագրելով մարեց կրակը. և թագաւորէն հրաման բերել տուաւ ազատութեան ազգին:

Նաև հալածեց Յուլիանիտ երևութական հերետիկոսները ։ Յամի 580 ձեռնադրեց կաթողիկոս Վրաց զառաքինի քորեպիսկոպոսն Կիւրիոն բանիբուն, որ գնալով 'ի Կոստանդնուպոլիս և խնամելով զճշմարտութիւն Քաղկեդոնի ժողովոյն ընդունեց և միացաւ Յունաց հետ ։ Ապա 'ի 581 Մովսէս կաթողիկոս առաւ իրեն օգնական Վրթանէս վարդապետը, և տասուիրեք տարի ալ անով կառավարելով աթոռը վախճանեցաւ յայլս ծերութեան 'ի 594 ։

ՄՈՎՍԷՍ Գ, կաթողիկոս, էր նուիրակ․ և երբոր գնաց յԵրևան՝ հրամանաւ Ամիրգունեայ նախարարին կանգնեց Անանիայ առաքելոյն վանքն ։ Ուր ժողվելով աշակերտներ կը կրթէր բարի վարքով և ուսմամբ․ հոն գնաց Մելքիսէթ կաթողիկոս և ձեռնադրեց զՄովսէս եպիսկոպոս ։ Ամիրգունա երբեմն Մովսէսի վանքին կողմն ժուռ գալով, նա ալ առջևն ելաւ պատուելու համար ու եօթն եօթն ձերմակ մեղրամոմ ընծայեց թէ իրեն, և թէ հետն եղող Խանին․ որոնք շատ զարմացան, զի չէին տեսած այնպէս ազնիւ մոմ ։ Երբոր տարաւ Խանը Շահաբաս Շահին ցըցուց, ան ալ հաւնելով կանչեց Մովսէս եպիսկոպոսը, և հրամայեց որ հարիւր լիտր մոմ իրեն համար ձերմըկցընէ, ու արուեստն ալ սորվեցընէ, ինչպէս որ ինքը սորվեր էր յԵրուսաղէմ լուսարարութեան ատենը ։ Մովսէս անով սիրելի եղաւ Շահին․ և նորա առջևն կատարեց գետին վրա Ջրօրհնէնքին հանդէսը, նաև խնդրեց որ զինքն ալ լուսարար դնէ Էջմիածնայ ։

Իսկ երբ Սահակ կաթողիկոս փախաւ Էջմիածնէն, Հայոց իշխաններն օծել տուին զՄովտէս կաթուղիկոս 'ի 1629 ։ Անկէ եւս զօրանալով ազատեց աթոռը պարտքէն , և սկսաւ նորոգելու շատ խանգարած տեղեր ․ շինեց Հիւրանոց և օթեվան , նաև նորոգեց և զարդարեց զեկեղեցին կարգով կանոնով և աստուածային պաշտօններով ։ Իսկ ինքն միօրինակ առաքինութեանց հետևելով կը փառաւորէր ճգնող վարքով և ընթերցմամբ Սուրբ Գրոց ․ կանգնեց դպրատուն մ' ալ 'ի Յովհաննու վանքն ։ Պօղոս Դոմինիկեան վարդապետն երբոր եկաւ 'ի յարգութիւն կաթուղիկոսին՝ ըսաւ կաթուղիկոսն թէ մեր ազգը Լուսաւորչէն 'ի վեր կը ճանչնայ եկեղեցին Հռոմայ գլուխ ամենայն եկեղեցեաց ․ ես ալ նոր թուղթ գրեցի Ուրմի վրայէն ․ բայց այլազգեաց տակն ըլլալով չենք կրնար համարձակ թղթակցիլ ։ Դոմինիկեան վարդապետը շատ շինուելով կաթուղիկոսին շնորհալի խօսքերուն վրա մեկնեցաւ մեծ գոհութեամբ հայրապետին , որ բարի վարքով փոխեցաւ առ Տէր 'ի 1632 , և թաղեցաւ սուրբ Անանիայի վանքը , ուր առանձնացեր էր ճգնութեամբ ․ որուն յաջորդեց իւր աշակերտը Փիլիպպոս եպիսկոպոս ։

ՄՈՒՇԵՂ Մամիկոնեան էր իշխան Տարօնոյ , դուքս Հայոց , և օգնիչ բանակին Մօրիկ կայսեր ․ որ պատերազմելով Պարսից հետ , վազեց նոցա Վահրամ զօրապետին վրա զարկաւ՝ սատկեցո՛ւց 'ի 591 ։ Խոսրով արքայ Պարսից թշնամանալով ղրկեց Մուշեղին վրա զՄիհրան զօրավար տասը հազար զօրքով , որոնք նահատակեցին եօթն խոտաճարակները սուրբ սեղանին վրա յԻննակնեան վանքը ։ Մուշեղ լսելով շատ ցաւեցաւ ․ և ծեր ըլլալով յանձնեց պատերազմը Պայլ Սահմանին՝ հաստատելով զինքն իշխան Տարօնոյ , որ քաջութեամբ զօրացեալ չարաչար հալածեց Պարսիկները խայտառակութ՟ : Նոյն ատեն Մուշեղ նորոգեց սուրբ Կարապետի վանքին պարիսպը , և ուրիշ բարեպաշտ գործքերով վախճանեցաւ :

ՄՈՒՐԹԲԷ : Տ · ԽՍԹԵՐ :

ՄՕՐԻԿ ՏԻԲԵՐ բարեպաշտ կայսրն Յունաց , էր Հայոց ազգէն . որ մեծ քաջագործութեամբ և առաքինութեամբ փեսայ և յաջորդ եղաւ Տիբերիոսի կայսեր 'ի 582 : Իմաստութեամբ խաղաղացուց տէրութիւնը և եկեղեցին , ջանալով միաբանել Հայ և Յոյն եկեղեցին և հաստատել ուղղափառութիւնը : Սակայն բռնակալն Փոկաս զօրավար ապստամբելով ամէն բան վերուվար ըրաւ չարութեամբ , մինչև բռնեց Մօրիկ կայսրն ալ սպաննեց զաւակներովը 'ի 604 , որ միշտ սաղմոսելով կ՚աղօթէր . “Արդար ես Տէր և ուղիղ են դատաստանք քո „ : Բայց շուտով սատկեցուցին անօրէն Փոկասն ալ :

Սըսեմ ինքնակալ քաջ աստուածազօր ,
Մօրիկ յաղթական , Հայկազուն հզօր .
Ներող , բարեգութ , տարացոյց բարեաց ,
Առաքինութեամբ լեալ արժան փառաց :
Ի նուաստ զարմէ վերացեալ 'ի գահ
Դժընդակ բաղդիւ համբուրեաց ըզմահ :
Զի առաքինեաց ոչ աստ կշռին վարձք ,
Այլ 'ի հանդերձեալն , ուր բարիք անդարձք :

Յ·

ՅԱԲԵԹ ըստ բազմաց էր անդրանիկ որդի Նոյ նահապետին ծնեալ 'ի 500 ամի կենաց Նորա : Սա ջրհեղեղէն եւս ծնաւ զԳամեր, ուսկից ծնան Ասքանազ, Ռիփաթ եւ Թորգոմ. ուրիշ որդիքներ ալ ունեցաւ Յաբեթ. իսկ 'ի Թորգոմայ ծնաւ Հայկ քաջայաղթ նահապետ Հայոց : Տ. Հայկ : Ըստ աւանդութեան հին Հայոց՝ Սուրբ Գիրքն 'ի պատիւ տոհմակցութե՟ Փրկչին՝ զՍեմ միջին որդին Նոյի Յաբեթէն առաջ կը դնէ, ինչպէս կ'երեւնայ հօրը մարգարէական օրհնութենէն. “ Ընդարձակեսցէ Աստուած Յաբեթի, եւ բնակեսցէ 'ի տան Սեմայ. եւ եղիցի Քանան ծառայ նոցա „ : Յիրաւի ընդարձակեցան Յաբեթեանք կամ որդիք եւ սերունդք Յաբեթի ու լցին զԱսիա եւ Եւրոպա ինչպէս Յոյնք եւ Հռոմայեցիք, որ Յաբեթայ ցեղէն էին, իսկ Հայք՝ ամէն ազգէ առաջ մտան Սեմայ տունը հաւատալով 'ի Քրիստոս Արդար Թագաւորով :

Յաբեթ գեղաշուք նախապետ ազանց
Տիրող տան Սեմայ եւ ճոխ վիճակաց
Սքօղեալ զմերկութիւն հօր իւր վեհանձին,
Ճոխացաւ 'ի փառս օրհնութեամբ նորին :

Որդւոյն ողջէ լինել հայրասէր
Ժառանգ օրհնութե՟ հարց աստուածասէր .
Որ ի այս է վայել բանական անձին
Նախ զԱ՟ծ պատուել՝ ապա զհարս նախկին ։

ՅԱԴԴՈՒՍ էր Ղևտացի քահանայապետ, որ ըստ պատմութեան Յովսեպոսի գնալով ընդառաջ Մեծին Աղեքսանդրի սիրտը կակղցուց երբոր եկեր էր Երուսաղէմի վրան ։ Նաև տարաւ թագաւորին ցըցուց Դանիէլ մարգարէին գուշակութիւն ըրած տեղը վասն կործանման Պարսից տէրութեանը 'ի յաղթութենէ Յոյն թագաւորի մը ։ Աղեքսանդր շատ ուրախացաւ այս մարգարէութեան վրա, և չինեալ Յադդուս քահանային խօսքերովն՝ զոհ մատոյց Աստուծոյ 'ի տաճարին . այլ և զօրանալով յաջողութեամբ Տեառն՝ գնաց յաղթեց Պարսից և տիրեց բոլոր Ասիոյ ։ Յադդուս ապա վախճանեցաւ 333 տարի Յիսուսէն առաջ, որուն յաջորդեց Ոնիաս Ա. ։

ՅԱԶԿԵՐՏ Ա. էր արքայ Պարսից զօրաւոր, որ 'ի 399 թագաւորեց, և մեծ վնաս տուաւ Յունաց ։ Ապա երբոր Աբդաւ վկայն կործանեց կրակատուն մը՝ Յազկերտ կատղելով սաստիկ հալածանք հանեց և շատ քրիստոնեաներ նահատակեց ։ Մինչև յետոյ սուրբ Մարութայ եպիսկոպոսն բժշկեց անոր որդին ու դադրեցուց հալածանքը ։ Ասիկայ իր Շապուհ որդին թագաւոր դրաւ Հայոց վրան . բայց 'ի 419 հայրն ալ որդին ալ սպաննուեցան մէկ օրւան մէջ ։

ՅԱԶԿԵՐՏ Բ. արքայ Պարսից չար հալածիչ եղաւ Հայոց, և յամի 451 շատ ջանացաւ որ կրակապաշտ ընէ մեր ազգը ։ Ուստի Մեծն Վարդան բանակ կազմեց սաստիկ պատերազմով և մեծամեծ քաջութեամբ ելաւ դէմն ու խորտակեց Պարսից ուժը ․ բայց ինքն ալ նահատակեցաւ արիապէս ․ Տ․ Վարդան ։ Յազկերտ տեսնելով աշխարհին աւերումն շատ վըշտացաւ, ապա նահատակեց սուրբ Ղևոնդեանքն և դադրեցուց հալածանքը ․ ինքն ալ սատկեցաւ 'ի 447 ։ Տ․ Ղևոնդեանք ։

ՅԱԿԻՆԹՈՍ Պարսիկ էր ջերմեռանդն աստուածապաշտ, որ երկու ընկերով ելաւ լեռը՝ մտաւ այրի մը մէջ Շապուհ արքային հալածանաց ատենը կը քարոզէր զԱւետարանն իրենց եկողներուն ։ Մինչև մատնեցան ու ելան ատեան, քաջութեամբ պատասխանեցին, և չարաչար ծեծ կերան ․ բայց տեսլեամբ Յիսուսի մխիթարեցան յոյժ, և հրաշագործութեամբ բացին արքային կապուած լեզուն ։ Իսկ խըրտասիրտ դատաւորը նախ կրակով տանջեց սուրբերը, յետոյ հալած կապարի մէջ ձգեց ․ երբոր անվնաս մնացին վկաները՝ հաւատաց Քրիստոսի Աֆթոնիոս զօրականն ու կատարեցաւ սրով ։

Յակինթեանք երբ լիճը ձգուեցան, անկէց ալ որ ազատեցան անվնաս, շատ մարդիկ հաւատացին և գլխատեցան ․ ապա Յակինթոս ընկերներովը ողջ ողջ այրեցին, և հոգիները փայլակնաձև երևնալով ելան երկինքը, և տօնեցան ։

ՅԱԿՈԲ աստուածատես նահապետն որդի էր Իսահակայ, երկուորեակ ծնեալ Եսաւայ հետ ։ Եւ էր ծանրաբարոյ, հեզահոգի և սիրելի մօրը, իսկ Եսաւ երկրագործ, զօրաւոր որսորդ, և սիրելի հօրը, զի բռնած որսերովը կը կերակրէր ծերը ։ Օր մը Եսաւ քաղցած որսէն դառնալով՝ խնդրեց Յակոբէն շիկաթանը, որ մայրն իրեն եփեր էր ։ Յակոբ ալ ասաց եղբօրը․ Վաճառէ ինծի անդրանկութիւնդ որ տամ․ և նա թեթևամտութեամբ փոխեց շիկաթանին հետ իր անդրանկութեան պատիւը օրհնաց դէմ ։ Իսահակ հիւանդացաւ, և պատուիրեց Եսաւին, որ իր որսէն խորտիկ եփէ ու բերէ իրեն, որ հայրական օրհնենքն առնէ, որ կուտային անդրանիկներուն ։ Ռեբեկա մայրը լսելով զայն ղրկեց Յակոբը, դաշտէն բերել տուաւ երկու ուլ, և խորվեց ու ղրկեց հօրը ։ Իսահակ կերաւ ախորժանօք, և օրհնեց զՅակոբն ասելով․ “Տացէ քեզ Աստուած 'ի ցօղոյ երկնից և 'ի պարարտութենէ երկրի բազմութիւն ցորենոյ և գինւոյ, և ծառայեսցեն քեզ ազգք, և երկիր պագցեն քեզ իշխանք․ և եղիցիս տէր եղբօր քում„, և այլն ։ Յետոյ տարաւ Եսաւ իր խորտիկը հօրը, որ իմանալով բանը շատ զարմացաւ․ իսկ Եսաւ սաստիկ խռովելով ոխ պահեց որ Յակոբն սպաննէ, թէպէտ հայրը իրեն ալ տուաւ օրհնութիւն ։

Ռեբեկայի յորդորելովը Իսահակ ղրկեց Յակոբն առ Լաբան իրեն եղբայրը, և հոն ամուսնացաւ նախ Լիայ աղջկանը հետ, և ապա Ռաքէլին հետ, որոնցմէ ունեցաւ 12 զաւակ, և անհամար անասուններ հանդերձ ծառաներով ։ Ապա հրամանաւն Աստուծոյ ելաւ անկէց քսան տարիէն ետև բոլոր զաւակներով և բարիքներով․ Ճամբան տեսիլքով հրեշտակը զինքն անուանեց Իսրայէլ, այսինքն աստուածատես․ և իր ցեղն անուանեցան Իսրայէլացիք ։ Յետոյ հանդիպեցաւ եղբօրը, և ընծաներով հետը հաշտուեցաւ․ ապա Ռաքէլ կինը մեռնելէն ետև՝ գնաց առ Իսահակ հայրը, ողջ գտաւ, բայց խիստ ծերացեալ, որ հարիւր ութսուն տարուան վախճանեցաւ բարեպաշտութեամբ, զոր թաղեցին Եսաւ և Յակոբ ամենայն պատուով ։ Իսկ Յակոբայ տասներկու որդիք եղան նահապետք Իսրայելացւոց, Ռուբէն անդրանիկ, Շմաւոն, Ղեւի, Յուդա, Իսաքար, Զաբուղոն, Դան, Նեփթաղիմ, Գադ, Ասեր, Յովսէփ, և Բենիամին, նաև Դինա դուստր Լիայի ։ Յակոբ շատ սիրելուն համար Յովսէփ որդին՝ եղբայրները նախանձելով գէշ կը խօսէին վրան հօրն առջև, և երբոր օր մը հայրը ղրկեց զինքն դաշտը եղբայրներուն, անոնք հեռուէն տեսնելով խորհեցան որ սպաննեն․ բայց Ռուբէնը գթալով անջուր հորի մը մէջ ձգեց, որ յետոյ տանի հօրը ։ Իսկ այն միջոցին վաճառականներ անցնելով անկեց հանեցին Յովսէփը վաճառեցին անոնց, ու խաբեցին ըզՅակոբ թէ չար գազան պատռեց ։ Նոքա տարին խեղճ տղան յԵգիպտոս վաճառեցին ։ Յակոբ երբոր լսեց՝ շատ ողբաց սիրական զաւակին վրայ, և յուսալով յանձնեց Ստեղծողին կամացը ։ Այն ատեն սաստիկ սով ըլլալով Յակոբ երկու անգամ ղրկեց որդիքն որ երթան ցորեն բերեն Եգիպտոսէն ։ Յովսէփ առջի անգամին նեղելով եղբայրներն իբրև լրտես՝ բերել տուաւ Բենիամին եղբայրն ու իմացուց զինքն անոնց․ և ստիպեց որ շուտով երթան հայրն ալ իրեն բերեն ։ Յակոբ երբոր լսեց՝ վառեցաւ ոգին, ելաւ մէկէն ժողվեց ամէն բանը գնաց Եգիպտոս վաթսունըվեց հոգիով ։ Յովսէփ ելաւ հօրն առջին մեծ փառքով․ ուր փաթթուեցան իրարու և լացին մեծապէս փա-

փափաքմամբ ։ Ապա տարաւ Յովսէփ զհայրն առ Փարաւոն, զոր օրհնելով բնակեցաւ Յակոբ երջանկութեամբ 17 տարի Եգիպտոսի լաւ երկիրը, նա և պատուիրեց Յովսէփու, որ զինքը տանի Աբրահամու գերեզմանը թաղէ. և օրհնեց զՅովսէփ և անոր որդիքը Մանասէ և Եփրեմ։ Յետոյ ժողվեց ամէն որդիքն ու կտակ ըրաւ օրհնելով մէկիկ մէկիկ և մարգարէանալով ինչ որ պիտի պատահէր յետ ժամանակաց տասներկու ցեղին։ Ահա ըստ այսմ մարգարէութեան վիճակեցաւ Յուդայի ցեղին նախապատիւ թագաւորութիւն, յորմէ ծնաւ աստղն Յակոբայ Քրիստոս. իսկ ցեղին Ղեւեայ պատիւ քահանայութեան, և այլն։ Յակոբ կտակը խօսելէն ետև վախճանեցաւ 147 տարուան։ Յովսէփ ընկաւ հօրը վրան լացաւ, և զմռսել տուաւ մարմինը. ապա սուգը կատարելէն ետև մեծ փառքով տարաւ Քանանացւոց երկիրը Աբրահամու և Իսահակին գերեզմանը թաղեց 1685 տարի Յիսուսէն առաջ։ Տ. Յովսէփ։

Յակոբ չնաշխարհիկ գործով վեհապանծ
Հայր նահապետաց փարթամ գերազանց.
Լին մըտերիմ սիրող հոգետես,
Հրաշալի վերնոց աստուածահանդէս։
Լեր դու ըղձակաթ սիրով գերագոյն
ԶԱստուածատեսութեան ժառանգել զանուն.
Մառեցի յոգիդ իղձ տիրականին
Ամբառնալ'ի փառս՝ որ յերկինս պահին։

ՅԱԿՈԲ Մծբնայ Հայրապետ հրաշագործ, անուանեալ Զգօն, էր որդի հօրաքեռ սուրբ Լուսաւորչին, սնեալ միատեղ'ի Կեսարիա իմաստութեամբ և աստուածպաշտութեամբ։

Որ ճգնելով յանապատն արժանի եղաւ տեսութեան Քրիստոսի, և զօրացեալ առաւ շնորհք հրաշագործութեան՝ ձգելով զմարդիկ յաստուածսիրութիւն ։ Յետոյ գնաց բնակեցաւ Մարուգէի ճգնաւորին վանքը · այլ երբոր այն կողմերը գնաց Մելիտոս սուրբ հայրապետն Անտիոքայ՝ ձեռնադրեց զսուրբն Յակոբ եպիսկոպոս Մծբնայ, որ առաքելական հոգւով և աստուածխնամ քարոզութեամբ կը լուսաւորէր ժողովուրդը ։ Մարուգէի վանքը կենդանացուց մեռած պատանի մը, և Մարուգէին հետ միատեղ առողջացուցին անդամալոյծ մը · և ուրիշ շատ հրաշքներ գործեց սուրբ հայրապետն ։

Նիկիոյ սուրբ ժողովին մէջ ալ գլխաւոր հայրապետներուն մէկն էր, ուր Կոստանդիանոս կայսրը տեսաւ որ հրեշտակներն կը սպասաւորէին սուրբ Յակոբին ։ Սուրբ Վրթանէսին խնդրելովը գրեց տասնըութ աստուածաբանական և հոգելից ճառեր, որ և մեծամեծ գործքերէն ետև լի արդեամբք փոխեցաւ առ Քրիստոս ։ Մահուանէն ետև ալ շատ հրաշքներ ըրաւ սուրբ Յակոբ, մանաւանդ ժանտամահէ բռնաւորներուն պաշտպան ըլլալով ։ Իսկ գերեզմանն է ուխտատեղի ՚ի Մծբին քաղաք, մինչ զի ամէն ազգ և այլազգիք կը պատուեն միշտ · և շատ տեղ ալ եկեղեցիներ և խորաններ կանգնեցին ու ճառերով և շարականներով յարգեցին այսպէս · “Երկրպագեմք առաջի տեւողական նշխարաց ճգնաւորին Քրիստոսի „ և այլն ։

ՅԱԿՈԲ Ծանծալոս էր Ասորի կրօնաւոր տգէտ, այլ խորամանկ և ճարտար, որ միաբանելով Եւտիքեան հերձուածողաց հետ եղաւ անոնց գլուխ յԵդեսիա, անուանելով զինքն ընդհանրական մետրապօլիտ 'ի 541 ։ Պատմեն թէ Յակոբ տաք երկաթով կը դրոշմէր մկրտելոց և դրոշմելոց ճակատները այն խօսքին համար, թէ "Նա մկրտեսցէ զձեզ 'ի հոգին սուրբ և 'ի հուր" ։ Յակոբիկք կոչեցան անոր հետևողները, որ էին խռովարար աղանդաւորք, և բաժանեցան յայլևայլ հերձուածս և ծէսս ։ Ոմանք խառն Նեստորականաց հետ, ազգաւ Ասորի, հաղորդութեան հացին մէջ կը խառնեն եղ և աղ ։ Իսկ այլք չեն ընդունիր անոնց ծէսը, և եօթն խորհուրդ եկեղեցւոյ կը պաշտեն դաւանելով սուրբ հաղորդութիւնը և ուխտ կրօնի, որոնց այլափառներն են տգէտ Ղփտիք, և ուղղափառք կոչին Մարոնիք ։ Տես 'ի կարգին ։

ՅԱԿՈԲ Կլայեցի էր կաթուղիկոս Հայոց, որ 'ի 1268 նստաւ 'ի Հռոմկլայ, և կոչեցաւ գիտնական. զի գոլով բանիբուն յօրինեց Աստուածամօրն ծննդեան շարականը, "Նորգեցէք որդիք սիոնի երգ նոր" ։ Նաև Շնորհալւոյն ընդհանրական թուղթն օրինակելով՝ իր կոնդակովը ղրկեց շատ տեղ, որ կարդալով լուսաւորուին ։ Որ և խոհեմութեամբ կառավարեալ զեկեղեցի տասնըինն տարի, վախճանեցաւ 'ի 1287 ։

ՅԱԿՈԲՈՍ առաքեալ մեծն էր եղբայր Յովհաննու Աւետարանչին որդի Զեբեդեայ, ազգական Փրկչին ։ Որ համբարձմանէն ետև շրջելով Հրէից մէջ մինչև 'ի Սպանիա, քարոզեց զԱւետարանն. և երբոր դարձաւ 'ի Հրէաստան, ու կը հաստատէր Մեսիային գալուստը, Հրէայք մատնեցին Ագրիպպաս Հերովդէսին, որ նահատակեց սրով յամի Տեառն 42. և եղաւ առջի մարտիրոսը տասներկու առաքեալներուն մէջէն։ Իսկ մարմինը հրաշքով հասաւ ՚ի Սպանիա, ուր է մեծահռչակ ուխտատեղի։ Բայց սուրբին գլուխը պահուած է սուրբ Յակոբայ վանքը Երուսաղէմի, որ է Հայոց ձեռքը։

ՅԱԿՈԲՈՍ Ալփեան էր որդի Ալփեայ և եղբայր Մատթէի, նաև մի տասներկու առաքելոց։ Սա քարոզեց զԱւետարանն նշանով և հրաշքներով. ուստի անօրէն Հրէաները բռնեցին սաստիկ ծեծով և տանջանքով նահատակեցին ՚ի Սրուճ երկիրն Պարսից։

ՅԱԿՈԲՈՍ Արդար կամ ՅԱԿՈԲ Փոքր, և եղբայր Տեառն՝ էր որդի Կղէոփայ եղբօր Յովսեփայ Աստուածահօր, և Մարիամու անուանելոյ քոյր մօր Տեառն։ Սա համարի գլուխ եօթանասնից և յարգոյ յաչս Առաքելոց իբրև ազգական փրկչին, զոր գովութեամբ կը յիշէ Յովսեպոս Հրէայն անուանելով եղբայր Յիսուսի Քրիստոսի կոչեցելոյ։ Սա և ձեռնադրեցաւ Պետրոս առաքեալէն առաջին եպիսկոպոս Երուսաղէմի, ու առջի պատարագն ալ նա ասաց վերնատան մէջ Յիսուսէն ետև։ Շատ ճգնաւոր և շնորհալից էր, որ գրեց կաթուղիկէ թուղթը, և վերջը կատարեցաւ յԵրուսաղէմ։ Եւսեբիոս կը պատմէ, թէ Հրէայք չկարնալով յաղթել արդար Յակոբայ՝ հանեցին տաճարին աշտարակին գլուխն, ու ստիպեցին որ յայտնապէս ուրանայ զՔրիստոս. երբոր չուրացաւ՝ վար ձգեցին. հոն թափիչ մը զարկաւ գլխուն փայտով նահատակեց յամի Տեառն 62 ։

ՅԱԿՈՎԻԿ էր Պարսիկ վկայ, բարեպաշտ, և սիրելի արքային Յազկերտի, որ բանի դարձուցեր էր զվկայն 'ի հրապաշտութիւն ։ Բայց նա զղջալով բոլորով սրտիւ ելաւ յատեանն արքային, և մերժելով կրակապաշտից մոլորութիւնը՝ քաջութեամբ դաւանեցաւ զՔրիստոս Աստուած ։ Ուստի կատղելով արքայն կապել տուաւ զերանելին, ու բոլոր անդամները կտոր կտոր ըրին ․ բայց նա սաղմոսելով կ'օրհնէր զԱստուած ։ Ապա կտրեցին գլուխը ․ ուր երկնքէն լոյս իջաւ վրան ։ Իսկ հաւատացեալք ժողվեցին կտըրտած մասունքները երեսուն թուով և պահեցին պատուով ․ յետ ժամանակաց փոխադրելով 'ի Վենետիկ հանգուցին յառանձին եկեղեցւոջ, որ եղաւ ուխտատեղի ։

ՅԱՆՈՍ կամ ԻԱՆՈՍ Ա․ Թագաւոր Իտալիոյ՝ էր որդի Ապողոնի ըստ առասպելաց ․ սա նախ հաստատեց յԻտալիա կրօնք և քաղաքական օրէնքներ, և ապա շինեց Յանիկողոս քաղաքն ու նստաւ առաջին թագաւոր ։ Որուն երբոր գնաց Կռոնոս հիւր, մեծապէս պատուեցաւ հիւրասիրութեամբ ․ անոր համար Յանոս մեռնելէն ետև դասեցաւ 'ի կարգս դից ըստ բանաստեղծից ։ Հռոմուլոս տաճար մը կանգնեց Յանոսի, որուն դռները բաց կը մնային պատերազմի ժամանակ ․ իսկ խաղաղութեան ժամանակ փակ էին, ինչպէս հին կայսերաց ժամանակն ալ կ'ըլլար ․ բայց քրիստոնէութեան ատենը խափանեցաւ ։ Այս տաճարս տասներկու դուռն ունէր՝ նշան տասներկու ամսոց ․ իսկ

Յանոսի արձանին գլուխն էր երկդիմի, 'ի նշան տեսանելոյն անցածն ու գալիքը, և իբրև տեսող տարւոյն վերջին օրը և առաջին օրը յաջորդին, կամ Նոր տարւոյն : Ասկէց եղած է անունս Յունուար, զոր կը պատուէն նախնիք տօնախմբութեամբ և ուրախակցութեամբ, կամ բարեմաղթութեամբ մինչև ցայժմ, համարելով սկիզբն յաջողութեան և դուռն յաջող Նոր տարւոյն : Ուստի հին քրիստոնեայք նոյն օրը ծոմապահութեամբ կ'անցընէին . իսկ այժմ սուրբ եկեղեցին փառաւորապէս կը տօնախըմբէ Յիսուսի անուանակոչութեան օրն :

Յանոս էր տարւոյն տանուտէր անգոյ
  Ի դիցամոլից պաշտեալ գերյարգոյ,
  Որով ժըրացեալք 'ի գործ պիտանին
  Գեղեցիկ արդիւնս յառաջ բերէին :
Իսկ ժամանակն զանձ մեծ անուանեցին
  Զքնաղ նկարուք կենդանագրեցին .
  Զի ուսցին բարւոք արկանել 'ի կիր
  Ի պըսակ տարւոյն լինել բարեկիր :

ՅԱՆՍԵՆԵԱՆՔ էին հետևողք մոլար դըրութեանց Կոռնելիոսի Յանսենիոսի եպիսկոպոսին Իւբրիոյ, որ ծնեալ 'ի Հոլանտա 'ի 1585, քաջ բանիբուն երևցաւ 'ի Փարիզ : Նա եղաւ դպրոցապետ 'ի Պայոնա . իսկ 'ի Լուանիա երբ դասատու էր Սուրբ Գրոց առաւ վարդապետական պատիւ . յետոյ ընտրեցաւ Սպանիայի թագաւորէն եպիսկոպոս Իւբրիոյ, և 'ի 1638 վախճանեցաւ մեծանուն : Նա քսան տարի աշխատելով շատ իմաստալից և գիտնական բաներ գրեց, որ մեռնելէն ետև հրատարակեցան : Բայց սուրբ Օգոստինոս անուամբ գրքին մէջ գտան հինգ մոլորական նախադասութիւնք շնորհաց վրայ, զի սուրբ Օգոստինոսի վարդապետութիւնը հաստատել ուզելով սխալեցաւ, ու մէկալ ծայրն անցաւ՝ ուստի Իննովկենտիոս Ժ. պապն դատապարտեց զանոնք և ոչ զինքն ։

ՅԱՍՈՆ Տարսոնացի, և Սոսիպատրոս Մակեդոնացի էին աշակերտք սրբոյն Պօղոսի ։ Առաջինն եղաւ եպիսկոպոս Տարսոնի, իսկ երկրորդն եղաւ եպիսկոպոս Իկոնիոյ. որք յետ քարոզելոյ և լուսաւորելոյ իրենց վիճակը՝ նաւեցին միաբան, գնացին 'ի կղզին Կորփու ։ Ուր աստուածային վարդապետութեամբ ծաղկեցուցին քրիստոնէութիւնը, և շինեցին եկեղեցի յանուն սրբոյն Ստեփանոսի ։ Բայց իշխանապետը բռնեց սուրբերը բանտը փակեց. հոն եօթը աւազակ և բանտապանը դարձան 'ի Քրիստոս և նահատակեցան ։ Իսկ սուրբ առաքեալները կենդանացուցին նոր իշխանապետին մեռած որդին ու արձակեցան բանտէն. և համարձակ քարոզելով զՔրիստոս շատ անհաւատ լուսաւորեցին, մինչև յետոյ խաղաղութեամբ հանգեան 'ի Տէր, և տօնեցան ։

ՅԱՒԵՐԺԱՀԱՐՍՈՒՆՔ կամ ՆԻՄՓԱՅՔ ըստ բանաստեղծից են դստերք Ովկիանոսի և չաստուածուհիք զուարճութեանց, հովտաց, անտառաց, լերանց, վազուկ ջրոց, և ամէն գեղազուարճ տեղերու ։ Որոնք աշխարհիս վրայ միշտ այնպիսի ուրախալից տեղեր սիրելնուն համար՝ հոգինին ալ միշտ կը զուարճանան այն տեղերը, կ'ըսեն. ինչպէս որ կը յիշէ Դաւիթ Անյաղթ ։

Անոնք են ըստ ռամկաց Ս՝էղճ աշէնէրը. և ըստ Տճ., Փէրի գըզլարը, Սակայն ըստ սրբոց

Չարց՝ բուն յաւերժական հարսունք են հոգիք Երանելեաց, հարսունք անմահ փեսային Քրիստոսի միշտ զուարճալից պայծառք. ըստ այմ. “Երկնային զօրքն վերինք անմարմնական և յաւերժական հարսունք անախտ հարսանեաց„ :

ՅԵՍՈՒ որդի Նաւեայ էր հրաշալի պաշտօնեայ Մեծին Մովսէսի, և քաջայաղթ զօրավար Իսրայելացւոց, առաքինի և հոգելից: Որ աստուածային ընտրութեամբ եղաւ յաջորդ Մովսէսի, և մեծ սքանչելագործութեամբ բնակեցոյց Իսրայելացիք յերկիրն Աւետեաց: Նաև գրելով քսանըեօթ տարւան դիպուածներն և մահն նախամարգարէին իրեն գրքին մէջ՝ համարեցաւ երկրորդ սրբազան գրիչ, և պատկեր Յիսուսի Փրկչին թէ անուամբ, և թէ պանծալի գործքով՝ յաղթելով ամէն թշնամեաց, և անցնելով Յորդանան գետը: Յետոյ յաղթեց Ադոնիբեզէկին և չորս թագաւորաց՝ հրաշքով կայնեցընելով արեգակն մինչև որ կատարեց յաղթութիւնը. և ապա տիրելով սահմանաց երեսուն թագաւորաց Քանանացւոց՝ բաժնեց տասներկու ցեղից Իսրայէլի: Յետոյ հանգոյց տապանակն 'ի Սելով. ինքն ալ հանգեաւ սրբութեամբ հարիւր տասը տարւան, 1424 տարի Քրիստոսէն առաջ:

ՅԵՍՈՒ որդի Սիրաքայ ծնաւ յԵրուսաղէմ 234 տարի առաջ Փրկչէն, և գրեց եբրայեցերէն կանոնական գիրքը կոչեցեալ Իմաստութիւն կամ գիրք Սիրաքայ: Յետոյ ասոր թոռներէն մէկը Յեսու անուամբ գնաց յԵգիպտոս թարգմանեց յունարէն վասն բնակչացն, և եղաւ բնագիր ։ Որ մի է բարոյական ընտիր խրատներով, գերիմաստ աստուածաբանութ̃ք, և մարգարէական հոգւով, ու իմաստասիրութեամբ, որուն հայերէն ընտիր թարգմանութիւնն ալ տպագրեցաւ մեր տպարանը ։

ՅԵՐՈԲՈՎԱՄ որդի Նաբատայ, Եփրեմի ցեղէն, էր ծառայ Սողոմոնի, որ հանդիպելով Աքիայ մարգարէին լսեց զարմանալի գուշակութիւն մը ։ Քան զի մարգարէն բռնեց իր զգեստը պատռեց, տասուերկու կտոր ըրաւ ու ասաց Յերոբովամին. Առ դուն տասը կտորն. զի այսպէս ասէ Տէր. ահա ես պիտի պատռեմ Սողոմոնին թագաւորութիւնը, տասը գաւազանը քեզի պիտի տամ, և երկուսն իրեն. դուն եղիր թագաւոր Իսրայէլի ։ Յերոբովամ կասկածելով Սողոմոնէն՝ փախաւ յԵգիպտոս, մինչև մեռաւ Սողոմոն, ետքը դարձաւ ։ Իսկ Ռոբովամ որդին Սողոմոնի երբոր հետևելով սննդակից մանկանց խորհրդին ու խստութեամբ վշտացուց ժողովուրդը և արհամարհեց ծերոց լաւ խորհուրդը, ազգը գլուխ քաշելով թագաւորեցուցին զՅերոբովամ ։

Ուստի ըստ մարգարէութե Աքիայ՝ Ռոբովամ թագաւորեց միայն Յուդայի և Բենիամինի ցեղերուն վրայ իր անմտութ̃ն ։ Յերոբովամ ալ չար խորհրդով գլխին՝ թափել տուաւ երկու ոսկիէ կով, մէկը դրաւ 'ի Դան, և մէկալը 'ի Բեթէլ. որպէս զի ժողովուրդը այս կուռքերը պաշտեն ու չերթան յԵրուսաղէմ Ռոբովամին կողմը, միանան հետը ։ Ահա այսպիսի չար խորհրդով սեղան շինեց ու քուրմեր ալ դրաւ կռապաշտներուն նման, անօրէնութեամբ մեղանչեց Աստուծոյ դէմ, և չարաչար պատճառ մեղաց եղաւ Իսրայէլացւոց մինչև վերջը ։ Ապա 'ի 15 օրն ամսոյն ութերորդի երբ որ ինքն ալ գնաց զոհելու հեթանոսական տօնախմբութեամբ , և գայթակղեցուց ժողովուրդը , Աստուած մարգարէի ձեռքով իմացուց որ վրէժ պիտի խնդրէ ․ բայց Յերոբովամ նոյն մեղքին մէջ կորաւ 'ի Սամարիա քսանուերկու տարի թագաւորելով ։

ՅԵՓԹԱՅԷ էր մեծազօր գլուխ և առաջնորդ Իսրայէլացւոց , որ արդարութեամբ դատեց ազգն վեց տարի , մեծամեծ քաջագործութեամբ յաղթելով կռապաշտներուն և տիրելով նոցա ։ Ապա եղաւ Ամմոնացւոց դէմ , և ուխտեց Աստուծոյ որ թէ յաղթէ թշնամեացը՝ դառնալու ատեն ինչ որ դիմացն ելլէ՝ զոհ ընէ Տեառն ։

Յեփթայէ փառաւոր յաղթութիւնն ընելէն ետև երբոր տուն դարձաւ՝ ահա մէկհատիկ աղջիկը խաղալով խնդալով ելաւ դիմացը ։ Ան ատենը հայրն լաթերը պատռելով լացաւ աղջըկանը վրան ։ Բայց քաջասիրտ աղջիկը մխիթարելով հայրը խնդրեց երկու ամիս ժամանակ ․ որ ելաւ լեռներուն վրա լացաւ կուսութիւնն ու եկաւ կատարեց ուխտը մնելով կուսաստանին մէջ մշտնջենաւոր ողջախոհութեամբ իբրև ողջակէզ ծառայել Տեառն ։ Վասն զի մարդազոհութիւնը արգելած էր օրէնքէն , և Յեփթայէ օրինապահ բարեպաշտ էր ․ ուստի միայն նուիրելով զնա Աստուծոյ ․ կատարեց ուխտը ․ ինչպէս որ Մովսէսի ժամանակը նուիրեցան Տեառն երեսուներկու կուսանք Մադիանացւոց աղջիկներէն ։ Անոր համար Իսրայէլացիք այս առաքինի գործքին յիշատակը պահելով տարուէ տարի կը ժողվէին աղջիկները չորս օր կուլային զդուստրն Յեփթայեայ ։ Նաև Պօղոս առաքեալ գովելով կը դասէ Յեփթայէն մարգարէից կարգը ։ Թէպէտ ոմանք 'ի 'նը Հարց կը կարծեն թէ Յեփթայէ արեամբ զոհեց իր աղջիկը, ինչպէս կը նկարագրէ մեր սուրբ Եղիշէ վարդապետն ալ ։

ՅԷՈՒ էր տասներորդ արքայ Իսրայէլի, օծեալ Եղիսէ մարգարէէն 884 տարի Քրիստոսէն առաջ, որ ելաւ անօրէն Յովրամին վրայ ու սատակեց նաև բոլոր տունն Աքաաբու ըստ բանին Եղիայի ։ Կորոյս զՕքոզիա արքայն Յուդայ, և Յեզաբէլ կինն Աքաաբու, նաև Բահաղու քուրմերը · կործանեց մեհեանը և փըշրեց կուռքը, վերուց ամէն կռապաշտական սնոտիապաշտութիւնները · ապա ինքն մեռաւ պատուով քսանըութ տարի թագաւորելէն ետև ։

ՅԻՍՈՒՍ ըստ Եբր · Եշուա, այս ինքն փրկիչ մականուանի Քրիստոս, Աստուածորդի, մարդացեալ Բան, Վարդապետ, Օրէնսդիր ծայրագոյն, և այլն ։ Որ ըստ գուշակութեան մարգարէից՝ մարդ եղեալ ծնաւ յԱստուածամայր կուսէն յամի աշխարհի 4000 · մկրտեցաւ, և անթիւ հրաշագործութեամբ քարոզեց զփրկութիւն մարդկան · չարչարեցաւ կամաւ խաչելով վասն մեր, և յարեաւ հզօր զօրութեամբ · համբարձաւ աստուածապէս և նստաւ ընդ աջմէ հօր Աստուծոյ ։

Յետոյ ղրկեց զխոստացեալ Հոգին սուրբ առաքելոց դասը, որք լցեալ աստուածային շնորհօք քարոզեցին և լուսաւորեցին զաշխարհ աստուածային սքանչելեօք, ինչպէս կը վկայէ սուրբն Յովհաննէս. “Որ էրն 'ի սկզբանէ զորմէ լուաքն, որում ականատեսն իսկ եղեաք, ընդ որ հայեցաքն. և ձեռք մեր շօշափեցին 'ի վերայ բանին կենաց: Եւ կեանքն յայտնեցան, և տեսաք, վկայեմք, և պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն, որ էրն առ հօր՝ և երևեցաւ մեզ„: Յովսեպոս Հրեայ պատմիչն ալ այսպէս կը վկայէ. “Զայսու ժամանակաւ լինի և Յիսուս այրն իմաստուն, եթէ արժան իցէ կոչել զնա այր. քանզի էր հրաշափառ գործոց արարող, ուսուցիչ՝ որոց ընդունէին քաղցրութ՟բ զճշմարտութիւն, յինքն յանկուցանէր զբազումս 'ի Հրէից և 'ի Հելլենացւոց: Քրիստոս սա էր, որ մատնութ՟բ գլխաւոր արանց 'ի մերոցս 'ի խաչ դատապարտեալ 'ի Պիղատոսէ՝ տակաւին 'ի սիրելոյ զնա ոչ դադարեցին, որք 'ի սկզբանէ սիրեալ էին զնա: Քանզի երևեցաւ նոցա յերրորդ աւուր դարձեալ կենդանի, որպէս և աստուածարեալ մարգարէք զայսոսիկ և զայլ բիւր սքանչելիս գուշակեալ էին զնմանէ. և մինչև ցայժմ քրիստոնէիցն առ 'ի նմանէ անուանեալ ազգ ոչ նուազեցաւ„: Այս վկայութիւն Յովսեպոսի եղաւ զէնք սրբոց Հարց և վարդապետաց ձեռքը. ինչպէս որ կը հաստատեն հին սուրբ հայրապետաց գրուածքը Հրէից դէմ. ըստ այնմ. “Մարգարէ ոմն մեծ յարուցեալ է 'ի միջի մերում„:

Ո՛վ ամենահրաշ շնորհք Երկնաւորին
Յարաժամ հասեալ առ մարդ հողածին.
Զանհասանելի Որդին բարեխնամ
Տնօրհէ 'ի բառնալ զկորուստն անդարման:

Մարմին զգենու Բանն անճառելի
Կամաւ մահանալ 'ի սէր մահացուի,
Եւ անպարտ մահուամբն ըզմահ սպանանէ
Ըզմահկանացուս անմահ ներգործէ ։

ՅԻՍՈՒՍԵԱՆՔ ։ Տ. ԻԳՆԱՏԻՈՍ Ջուղացի ։

Յոբ երանելի կամ Յովբ արդար էր գերահռչակ նահապետ Աբրահամեան զարմէն և Եսաւէն, ժամանակակից Մովսէսի, իշխան և Թագաւոր Եդոմայ. ըստ ոմանց նաև քահանայ որպէս Մելքիսեդեկ՝ լցեալ մարգարէական հոգւով ։ Որ կատարեալ աստուածպաշտութք հրահանգելով զինքն և զաւակներն սիրելի եղաւ Աստուծոյ ։ Որուն նախանձելով դեւը չարաչար փշտացուց զարդարը Թէ ապրանքը և զաւակները կորսունցընելով, և Թէ սոսկալի հարուածով մարմինն տանջելով աստուածային Թոյլտուութեամբ ։ Որով փառաւորեցաւ Յոբ զարմանալի համբերութեամբ, և համակերպութեամբ գոչելով " Տէր ետ և Տէր էառ. եղիցի անուն Տեառն օրհնեալ " ։

Եւ այսպէս խայտառակելով սատանայ հալածեցաւ յանդունդը ։ Իսկ ամենողորմ Տէրն նորէն շնորհեց համբերող Յոբայ բոլոր ճոխութիւնը և նոր զաւակներ հանդերձ առողջութեամբ և զօրութեամբ. մինչև տեսաւ չորրորդ ազգը զաւակացն ապրելով երկուհարիւր քառասունըութ տարի, որ եօթանասունըութ տարուան էր երբոր փորձեցաւ ։ Յակոբոս առաքեալ այսպէս կը գովէ. " Ահաւասիկ երանեմք համբերողաց. զհամբերութիւն Յոբայ լուարուք և զկատարումն Տեառն տեսէք " ։ Կը պատմեն Թէ Յորդանանու գլուխը կանգուն կայ հին կոթող մը Յոբայ գերեզմանին վրայ ։ Վենետիկ և յԱնտիոք ալ կանգուն կան հին եկեղեցիք յանուն Յոբայ ․ իսկ տօնը կը կատարեն ամենայն քրիստոնեայք մարգարէից կարգով ։

ՅՈԲԵՆՏԻՈՍ և ՄԱՔՍԻՄՈՍ էին քաջ զօրականք և Թիկնապահք Յուլիանոսի ուրացողին , որ երբ գնաց յԱնտիոք՝ հրամայեց որ ուտելիքներուն մէջ խառնեն կուռց պիղծ զոհին ճարպն ու արիւնը ։ Իսկ երանելիք երբոր կայսեր սպասաւորաց հետ սեղան նստան՝ սկսան լալագին աղաղակել առ Աստուած ․ “ Մատնեցեր զմեզ 'ի ձեռս թագաւորի անօրինի և չարի ” ։ Յուլիանոս լսելով զայս՝ չարաչար տանջեց սուրբերը , և չի կրնալով բաժնել զանոնք Յիսուսէն՝ գլխատեց ․ նաև անուն հանեց թէ հաւատքի համար չի մեռան , այլ կայսրը անարգելնուն համար ։ Իսկ նոքա փառաւորեցան հրաշքներով , նաև Ոսկեբերանին գովաբանութեամբն ու ճառովը ։

ՅՈԲՆԱՂ էր պատրիարգ Երուսաղէմի , որ նախ խաբուելով միացաւ Դիոսկորոսի չարաժողովին հետն ու տանջեցին զսուրբն Փլաբիանոս 'ի 449 ։ Ապա դատապարտելով 'ի սուրբ ժողովէն Քաղկեդոնի՝ զղջումի եկաւ չորս եպիսկոպոսներով , թողութիւն առաւ , ու անոնց հետ հաստատուեցան իրենց աթոռը , և ազատեցան նզովքէն ։

ՅՈԹՈՐ էր քուրմ Մադիանացւոց ․ որ երբ Մովսէս մարգարէն կը փախչէր Եգիպտոսէն առաւ քովն ու աղջիկն իրեն կին տուաւ ։ Ապա շատ տարիէն ետև Մովսէս Իսրայելացիները երբոր Եգիպտոսէն հանեց անապատն Արաբիոյ, Յոթոր անոր դիմացն ելաւ, հետը մէկ տեղ էր նորա Սեփովրա կինն՝ իր աղջիկը և երկու որդիքը։ Ուր սորվեցուց Մովսէսի զինուորական կարգը և դատաստանական կառավարութիւնը հանդերձ դատաւորներով, և այլն։ Յոթոր ըստ ոմանց թագաւոր կամ իշխան էր Արաբիոյ, որոնք ան ատեն թագաւորութիւնն ու քահանայութիւնը մէկտեղ կը վարէին. ինչպէս էին՝ Նախահարքն Ադամ, Նոյ, և այլք։

ՅՈՎԱԲ որդի Շարուհեայ էր քաջ զօրավար Դաւթի, յաղթող մեծամեծ պատերազմներու մէջ հեթանոս այլազգեաց դէմ, որ մեծ յաղթութեամբ առաւ Սիոնի բերդը Յեբուսացւոց ձեռքէն, և խորտակեալ զԱմմոնացիս տիրեց թագաւորական քաղաքին։ Ուստի ճշմարիտ սրտակից ըլլալով Դաւթի միշտ հաւատարմութեամբ պաշտպանեց զարքայն դառն հալածանքին մէջ ալ՝ զօրանալով անոր ապստամբ որդւոյն Աբիսողոմին վրա, զոր նետահար կորուց, և ազատեց արքայն մեծ վտանգներէն և չար թշնամիներէն։ Սակայն երկու գործք նախանձու խաւարեցուցին իր փառքը. մէյմը որ խաբէութեամբ սպաննեց զԱբեններ սպարապետը Սաւուղին. երկրորդ՝ սպաննեց զԱմեսայի զօրավարն Դաւթի, որպէս զի չանցնի մեծութեամբ քան զինքն։ Այս պատճառաւ Սողոմոն ըստ պատուիրանաց հօրը սպաննել տուաւ զՅովաբ տաճարին մէջ, ուր ապաւիներ էր։

ՅՈՎԱԹԱՄ էր բարեպաշտ արքայ, որ յաջորդեց հօրն Ոզիայի 759 տարի Յիսուսէն տուած՝ երբոր հայրը մտաւ տաճարը խունկ ծխելու յանդգնութեամբ ու պատժուելով բորոտեցաւ և ընկաւ աթոռէն ։ Բայց նա հօրը ողջութեան ատենը չուզեց թագաւոր կոչուիլ․ թէպէտ շատ գեղեցիկ կառավարեց պետութիւնը, վայելչապէս նորոգեց զԵրուսաղէմ և ծաղկեցուց աստուածպաշտութիւնը ։ Նաև խորտակեց Ամմոնացիք և կռապաշտ թշնամիք և անով սիրելի եղաւ ժողովուրդին գոլով մեծանուն՝ մինչև վախճանեցաւ փառօք, տասնըվեց տարի թագաւորելէն ետև արդարութբ̃․ որուն յաջորդեց Աքազ որդին ։

ՅՈՎԱԿԻՄ կամ ԵՂԻԱԿԻՄ էր որդի Յովսիայ և արքայ Յուդայ չարագործ և օրինազանց ։ Երեմիա շատ խրատներ տալէն ետև մարգարէացաւ Յովակիմին գլուխը գալու թշուառութիւնները, թէ վասն անիրաւութեանցն պիտի թաղուի թաղումն իշոյ Երուսաղէմէն դուրս․ զոր գրեց թղթով՝ տուաւ իրեն որ արթըննայ ։ Բայց նա մերժելով զմարգարէն պատռեց գիրն ու կրակարանին մէջ ձգեց այրեց ։ Անկէց ետև Նաբուգոդոնոսոր առաւ Երուսաղէմն ու գերի տարաւ զՅովակիմ 'ի Բաբելոն ։ Յետոյ գթալով դարձուց զինքն յԵրուսաղէմ, թէպէտ նա իր չարութենէն ետ չի կեցաւ մինչև որ մեռաւ․ բայց այնչափ ատելի եղաւ ժողովրդեան, որ մարմինը ձգեցին Երուսաղէմի դռնէն դուրս կերակուր թռչուններուն և գազաններուն, ըստ մարգարէութեան Երեմիային ։

ՅՈՎԱԿԻՄ և ԱՆՆԱ էին երանեալ ծնողք Տիրամայր Կուսին, զոր ծնան աստուածային սքանչելեօք ծերութեամբ և ամլութեամբ ։ Որոնք առաքինափայլ սրբութեամբ գերազանցեալ արժանացան նախածնող ըլլալու Աստուածորդւոյն ։ Կը պատմեն թէ սուրբ Յովակիմ կանուխ վախճանեցաւ . իսկ սրբուհին Աննա տեսաւ զՄեսիա զթոռն իւր Յիսուս . որուն անուամբ կայսրն Յուստինիանոս Ա . եկեղեցի կանգնեց 'ի Կոստանդինուպօլիս 'ի 550 ։

Մեկնիչները կը համարին թէ Ղուկասու յիշած Հեղին հայր սրբոյն Յովսեփայ՝ էր այս Յովակիմ, որ իբր աներ Յովսեփայ՝ կը համարի նորա որդին ըստ հին սովորութեան ։ Եկեղեցին հին ատենէն սկսաւ տօնել զյիշատակ ծնողաց սուրբ Աստուածածնին ։ Յովհան Դամասկացին 'ի Է դարուն սուրբ Աննայի վրան գովեստ մը գրած է ։ Իսկ մեր ազգն շարականով կը կատարէ տօնը , երգելով . “ Որ նախախնամ իմաստութեամբ տնօրինեցեր զխորհուրդ սուրբ եկեղեցւոյ . . . վայելչապէս ծաղկեցուցեր այսօր 'ի Յովակիմ և 'ի յԱննա ,, . և այլն ։ Նոցա շիրիմը կ'երևնայ կ'ըսեն 'ի Գեթսեմանի Աստուածածնայ գերեզմանին մօտիկ . իսկ սուրբ նշխարքները փոխադրելով արևմուտք շատ հրաշքներ գործեցին ։

Երանի՛ ծնողաց Տիրամայր Կուսին
Պարծանք նախահարց արդարոց խմբին .
Յորոց ծագեցաւ լուսին գերարփի
Հանուրց լուսատու հերքող խաւարի ։
Քանի՛ գերապանծ փառք նահապետաց
Նախածնող Փրկչին լեալ տիեզերաց .
Ականել տենչմամբ զանհաս Մեսիայն
Պաշտել զթոռն Յիսուս կուսածին արքայն ։

ՅՈՎԱԿԻՄ Ա. պատրիարգ Հայոց՝ էր եպիսկոպոս Պուրսայի. ուր ծանօթ եղաւ Սուլթան Մէհէմմէտին Բ. որ խոստացաւ Յովակիմայ՝ թէ որ առնէ զԿոստանդինուպօլիս՝ զինքը դնէ պատրիարգ Հայոց։ Ուստի քաղաքն առնելէն ետեւ նստեցուց Յովակիմն պատրիարգ, փոխադրելով Պուրսայէն քանի մը տուն Հայոց. եւ 'ի 1462 վեց տուն ալ Անկիւրիէն բերել տուաւ նստեցուց 'ի քաղաքն եւ 'ի Պսամաթիա, ուր առաջ ալ շատ Հայեր կային։ Յովակիմ թագաւորական հրովարտակաւ իշխեց ազգին։

ՅՈՎԷԼ էր Ռուբէնի ցեղէն փոքրամատեան մարգարէ, ժամանակակից Եղիսէի։ Սորա մարգարէութիւնը կը գուշակէ Հրէաստանի աւերումն եւ գերութիւնն Յուդայ. այլ եւ Նոր Եկեղեցւոյ փառքը, Հոգւոյն սրբոյ գալուստը, եւ այլն։ Պետրոս առաքեալ այս մարգարէութենէն ցըցուց Հոգւոյն սրբոյ իջնելը առաքելոց վրայ եւ սքանչելիքը մեծամեծ նշաններով։ Այս մարգարէն վախճանեցաւ խաղաղութեամբ եւ թաղեցաւ 'ի Բեթոռ։

ՅՈՎԻԱՆՈՍ կամ ՅՈԲԻԱՆՈՍ ՓԼԱԲԻՈՍ էր կայսր Հռոմայ ծնեալ 'ի Պէլղրատ յամի 331։ Սա ուրացող Յուլիանոսին օրը զօրքին վերակացուն էր. բայց ինքն գոլով ճշմարիտ աստուածապաշտ մերժեց քաջութեամբ ուրացողը։ Որ սատկելուն պէս զօրքն ընտրեցին զսա իրենց կայսր բարելաւութեանցն համար. իսկ Յովիանոս հրաժարելով ասաց. “Չեմ ուզեր թագաւորել հեթանոս զօրքին վրայ, մինչեւ որ չի դառնան 'ի Քրիստոս, անհնարին է„։ Նոքա դարձան 'ի Քրիստոս եւ միաբան իրեն հաւացին կայսերական ծիրանին յամի 363 ։ Իսկ նա մէկէն հաշտութիւն ընելով Պարսից հետ վերուց կռապաշտութիւնը և զօրացուց եկեղեցին. զսուրբն Աթանաս և ուրիշ հայրապետները դարձուց յաքսորանաց ։ Սակայն մեծ դըժբաղդութեամբ կարճօրեայ եղաւ բարեգութ կայսրն. քանզի Գաղատիայի կողմը մեռած գտան անկողինին մէջ, որ խեղդուեր էր ածուխին գոլորշիներէն երեսունուիրեք տարուան 'ի 364, փետ. 17. Թագաւորեց առաքինօրէն միայն եօթն ամիս, զոր լացին սուրբ հայրապետք և սուրբ եկեղեցին դառնապէս ։

ՅՈՎԻՆԻԱՆՈՍ աղանդաւոր Դ դարուն էր նախ կրօնաւոր Միլանու վանքին մէջ. յետոյ հեշտախտութեամբ թողուց կրօնաւորութիւն ու սկսաւ անամօթաբար քարոզել թէ անօգուտ են կուսութիւն և ժուժկալութիւն, և թէ ամենայն մեղք և վարձք հաւասար են ։ Ուրացաւ զկուսութիւն Տիրամօրն և զճշմարիտ մարդեղութիւն Քրիստոսի, ուստի դատապարտեցաւ Միլանու ժողովքին մէջ, նաև 'ի Հռոմ 'ի 390 ։ Սուրբն Հերոնիմոս գրեց կուսութեան ճառք ընդդէմ Յովինիանոսի. և ամենայն սուրբ Հարք նզովեցին անօրէնը իր աշակերտներովը ։ Թէոդոս և Ոնորիոս կայսերք ալ աքսորեցին աս չար հերետիկոսը, որ թշուառութեամբ սատակեցաւ անապատներուն մէջ յամի 412 ։

ՅՈՎՀԱՆ Ոսկեբերան աստուածաշնորհ հայրապետ, էր Անտիոքացի ծնեալ 'ի 344 և կըրթեալ սրբակրօն վարքով և աստուածիմաստ գիտութեամբ, միշտ զբաղելով հոգևոր ընթերցուածով և աղօթքով ։ Առանձնացաւ անապատի մէջ և այնչափ գերազանց եղաւ առաքինի ճգնութեամբ , մինչև բռնադատեալ ձեռնադրեցին զինքը քահանայ ։ Որ եղաւ հրաշալի քարոզ աստուածային բանին՝ առատ բղխելով լեզուէն իմաստութեան շնորհք , և մականուանեցաւ Բերան ոսկի ։ Յետոյ արժանապէս ընտրեցաւ պատրիարք Կոստանդինուպօլսոյ 'ի 398 , և զօրացաւ առաքինութեամբ որպէս հովիւ քաջ համբերելով վշտաց , և մանաւանդ դառն հալածանաց Եւդոքսիայ Թագուհւոյն և այլ թշնամեաց նախանձոտաց , ամէն նեղութեանց մէջ կ'աղաղակէր · " Փա՛ռք քեզ Աստուած՝ փա՛ռք քեզ , յաղագս ամենայնի Տէր փա՛ռք քեզ ,, ։

Երկու անգամ աքսորեցին զերանելին · երկրորդ անգամուն երբոր հասաւ 'ի Կոկիսոն Հայոց և 'ի Կոմանա քաղաք՝ հիւանդացաւ , և ամենայն հոգևոր պատրաստութեամբ փոխեցաւ յերկինս ։ Զոր հանգուցին փառօք սուրբ Բասիլիսկոսի վկայարանին մէջ , որ նոյն գիշերը երևցաւ սրբոյն ու ասաց · " Քաջալերեա՛ց եղբա՛յր իմ Յովհաննէս , վաղիւ հասանէ մեզ կենակցիլ ընդ միմեանս ,, ։ Վախճան սուրբ Ոսկեբերանին եղաւ 'ի 407 , և ինքն էր վաթսուներրեք տարուան · միշտ երևելի հրաշքներով ծաղկեցաւ տապանը և նշխարքը ։ Յամի 438 փոխադրեցին սուրբ հայրապետին մարմինը 'ի Կոստանդինուպօլիս 'ի տաճարն սուրբ Առաքելոց , յետոյ 'ի Հռոմ, նաև մասն մասն սփռելով Եւրոպայի քաղաքները ամէն տեղ ուխտատեղի եղան հրաշքներով , մանաւանդ 'ի Կոստանդինուպօլիս ։ Տեսանք 'ի Վենետիկ աս Սուրբին աջ ձեռքին բութ մատն ու ցուցամատն անարատ պահած յարգութեամբ իբր գանձ ցանկալի ։ Այնպէս սքանչելի գանձ են այս սուրբ Ոսկեբերան վարդապետին հոգելից անհամար գրուածքը, աստուածախօս ձայներն ու քարոզները · նաև մեկնութիւնները բոլոր աստուածաշունչ գրոց և գերխնամ նամակներն այլովք հանդերձ, որ թարգմանեալ տպուեցան շատ լեզուով, նաև հայերէն ալ ընտիր թարգմանութեամբ Ախնեայ ։

ՅՈՎՀԱՆ Մանդակունի էր պանծալի աշակերտ մեր սուրբ Թարգմանչաց, որ այնչափ մեծամեծ գովեցաւ իմաստութեամբ և սրբութեամբ, մինչ զի եօթանասուներհինգ տարեան օծին զինքը կաթուղիկոս ՚ի 480 ։ Սա գեղեցիկ բարեկարգելով աթոռը վայելչացուց եկեղեցին կանոնադրութեամբք և ժամերգութեան աղօթքներով, քարոզներով և շարականներով ։ Շարադրեց հոգեշահ ձառեր հանդերձ թարգմանութեամբ · նաև կարգադրեց պատարագամատոյցն ու մաշտոցը, և այլն ։ Զօրացուց զմեծն Վահան և զօրքը աստուածային օրհնութեամբ, որ քաջութեամբ յաղթեցին արքային Պարսից ։ Յետ մեծի յաղթութեան զամենքը ժողվեց յեկեղեցին ու փառաւոր ատենաբանութիւն մը խօսեցաւ աստուածային սքանչելեաց վրայ օրհնելով իշխաններն ու բոլոր ազգը ։ Նա յամի 486 սրբութեամբ հանգեաւ ՚ի Տէր, և թողուց իմաստալից ձառերն որ տպագրեցան ՚ի վանս մեր ՚ի 1836 ։

Տիեզերալոյս վեհապետք հզօր
Ճշմարիտ կրօնից վկայք մեծազօր ·
Ընդ չարաչարաց աներկիւղ մարտեան
Դժխոյից պետաց անուղղայ մարդկան ։

Սաստեալ տիրապէս զինու ճշմարտին
Հարին զհալածիչ հոգւոց թշնամին․
Պերճ շքեղացան հաւատով յուսով,
Ընդ համբերութեամբ վառ 'ի վառ սիրով։

ՅՈՎՀԱՆ Դամասկացի էր իմաստուն վարդապետ Յոյն, և սուրբ կրօնաւոր ազնուազարմ 'ի Ը։ դարուն որ մեծանուն հանդիսացաւ պանծալի ուսմամբ այնպէս գիտութեանց Իտալացի Կոզմա կրօնաւորին քով։ Յետոյ գնաց յԵրուսաղէմ մտաւ սուրբ Սաբայի վանքը, կրօնաւորեցաւ սրբութեամբ և առաքինի վարքով եղաւ բարի օրինակ ամենուն։ Որ մեծաւ քաջութեամբ գրեց նաև ջատագովութիւն սուրբ պատկերաց ընդդէմ պատկերամարտ կայսերաց։ Բայց հերձուածողք նախանձելով, սըրբոյն անուամբ սուտ գիր մը շարադրեցին և մատնութեամբ կտրել տուին աջ ձեռքը։ Այլ նոյն գիշերը հրաշքով առողջացաւ, որ գրեց աստուածաբանական Ճառեր ուղղափառութեան վրայ, և այլն։ Ապա սրբակեաց քաղաքավարութեամբ փոխեցաւ առ Տէր ութսունըչորս տարեկան 'ի 760։ Սորա շատ պիտանի գրեանքը տպագրեցան յունարէն և լատիներէն։

ՅՈՎՀԱՆ Իմաստասէր էր կաթուղիկոս իմաստուն և բանիբուն փիլիսոփայ, որ 'ի 718 նստաւ Լուսաւորչայ աթոռը և ժողով գումարեց, ու մեծ խոհեմութեամբ բարեկարգելով եկեղեցին սահմանեց երեսուներկու պիտանական կանոններ ուղղութեան և ծիսերուն վրայ։ Ուր խօսեցաւ իմաստալից Ճառ մը մերժելով Պօղիկեան չար աղանդաւորները․ նաև գրեց ուրիշ Ճառեր և շարականներ ալ։ Դարձեալ գրեց ուղղափառ վարդապետութեամբ պատուական գիրքը ընդդէմ Երևութական հերձուածողաց 'ի վերայ մարդեղութեան բանին Աստուծոյ , և անշփոթ միաւորութեան երկու բնութեանց 'ի մի Քրիստոս ։ Ինչպէս որ կը հաստատեն Շնորհալին , Գրիգոր կաթուղիկոս և Լամբրոնացին բերելով անկէ վկայութիւններ , զոր և տպագրեցինք ։ Այս մեծ հայրապետս Յովհան կատարեցաւ բարի անուամբ , առաքինի բարելաւութեամբ և իմաստասէր վարքով 'ի 729 . ինչպէս կը յիշատակէ Յայսմաւուրքը ։

ՅՈՎՀԱՆ Մայրագոմեցի ։ Տ. Եզր կաթուղիկոս ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Զ. կաթուղիկոս Հայոց պատմաբան առաջ էր պաշտօնատէր հայրապետանոցին , և յետ մահուան Մաշտոց կաթուղիկոսին՝ ընտրեցաւ յաթոռ սուրբ Լուսաւորչին յամի 897 ։ Սա շատ հալածանք քաշեց այլազգի իշխաններէն , և խնդիրքով այլոց գրեց իւր պատմութիւնը զարդարուն ոճով , սկսեալ Հայկէն մինչև իր ծերութեան ժամանակը ։

Յուսուփ անօրէն ոստիկանէն ալ շատ նեղութիւն քաշելէն ետև դրամով ազատեցաւ կապանքէն . ապա գրեց գեղեցիկ նամակ առ Կոստանդին Պերփիւռուժէն կայսրն Յունաց 'ի 920 խնդրելով օգնութիւն վասն ազատութե՟ Հայոց ։ Կայսրը սիրով հրաւիրեց զինքն և զԱշոտ Բ. Թագաւորն Հայոց ։ Թագաւորը գնաց ու մեծ պատիւ գտաւ Կայսերէն . իսկ Յովհաննէս կաթուղիկոս փուճ պատճառներով հեղգացաւ չի գնաց որ Քաղկեդոնական չերևնայ. որով կորուց լաւ առիթը, և եղաւ թափառական և վշտալից այլազգի ոստիկաններուն ձեռքէն մինչև 'ի խոր ծերութիւնն: Ապա 'ի 925 ցաւալից ոգւով վճարեց կեանքը քսանըութ տարի կաթուղիկոսութենէն ետև, որուն յաջորդեց Ստեփաննոս Բ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Է. անուանեալ Մեծաբարոյ էր եպիսկոպոս Սսոյ, նստաւ կաթուղիկոս 'ի Հռոմկլայ յամի 1202ին: Սա էր վսեմ և փառացի, նաև սիրելի Լևոն Բ. թագաւորին, որ առաջ զրկեր էր զինքը Ներսէս Լամբրոնացւոյն հետ մէկտեղ Փրեդերիկոս կայսեր դէմ բարևելու, երբոր կ'երթար Երուսաղէմ առնելու այլազգեաց ձեռքէն: Լևոնի ջանքով Յովհաննէս կաթուղիկոս հաստատուելէն վերջը աթոռներուն մէջ երկպառակութիւն մտաւ, մինչև զրին կաթուղիկոս Անանիա և Դաւիթ եպիսկոպոսները այն կողմը. Լևոն ալ քիչ մը պաղեր էր Յովհաննէսէն. բայց նա հաստատ նստաւ 'ի Հռոմկլայ ու կառավարեց ազգը մեծ խոհեմութեամբ: Յետոյ գրեց թուղթ հպատակութեան առ սրբազան պապն Ոնորիոս Գ. անկէց ալ առաւ պատասխանի յորդորանաց գովութեամբ: Նաև դարձեալ սիրելի եղաւ Լևոն թագաւորին. ու ժողով գումարել կ'ուզէր Լատին եկեղեցւոյն հետ միաբանութեան համար: Սակայն նոյն միջոցին վախճանեցաւ տասնըութ տարի հայրապետութենէն ետև, որուն յաջորդեց Կոստանդին Ա:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Կարապետ և մարգարէ և առաքեալ և Մկրտիչ որդւոյն Աստուծոյ, էր որդի Զաքարիայ քահանայապետին և ամուլ

Եղիսաբեթին, որ տղայութեան ատենը փախուցին Բեթղեհէմի կոտորածէն անապատը. ուր կերակուրն էր մարախ և մեղր վայրենի։ Երբոր քսանւինը տարեան եղաւ՝ դարձաւ Յորդանանու մօտ, քարոզելով ապաշխարութիւն մեղաց և գալուստ Մեսիային ու ասելով. "Որ զկնի իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս, և ես չեմ բաւական բառնալ զկօշիկս նորա. նա մկրտեսցէ զձեզ 'ի Հոգին սուրբ՝ և 'ի հուր"։ Երկրորդ տարին Յիսուս փրկիչն գնաց առ Յովհաննէս մկրտուելու. իսկ նա ընդդիմանալով ասաց. "Ինձ պիտոյ է 'ի քէն մկրտիլ, և դու առ իս գաս"։ Բայց յետոյ խոնարհութեամբ մկրտեց զՏէրը. և երբոր տեսաւ Հոգին սուրբ վրան, աղաղակեց "Ահա է գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի։ Ահա է . . . որ մկրտէ Հոգւով սրբով։ Եւ ես տեսի և վկայեցի՝ եթէ սա է որդին Աստուծոյ"։ Այս վկայութիւնն Յովհաննու լսելով երկու աշակերտները՝ գնացին Յիսուսի ետևէն, որոնց մէկն էր Անդրէաս առաքեալ։ Անթիպաս Հերովդէս չորրորդապետ քանի մը տարիէն ետև բանտը դրաւ զՅովհաննէս զինքը յանդիմանելուն համար վասն յափշտակելոյն զՀերովդիադա իր եղբօր կինն, և վասն ուրիշ չարութեանցն. Հերովդիա ոխ ունելով գլխատել տուաւ զսուրբ Յովհաննէս չարութեամբ։ Յովսեպոս Հրեայ պատմիչ մեծ գովութեամբ կը յիշէ զսուրբը, թէ միշտ կը խրատէր Հրէաներն որ ապաշխարեն, բարի և երկիւղած ըլլան և թէ Հերովդէս տեսնելով թէ ժողովուրդը խուռն կ'երթան իրեն, փակեց բերդին մէջ ու գլխատեց. և պատուհասեցաւ ինքն ալ կորաւ։ Յովհաննու սուրբ մարմինը թաղեցին աշկերտներն և յետոյ նշխարքներն ամէն տեղ սփռեցան· ինչպէս սուրբ Լուսաւորիչ ալ բերաւ Կեսարիայէն 'ի Հայաստան, ուր տօնն ալ քանի մը անգամ կը կատարենք տարւան մէջ։ Հին սուրբ Հարք կ' անուանեն զՅովհաննէս Նախասկիզբն միանձանց· իսկ մեր շարականը կը կոչէ “ Լուսեակդ առաւօտեան, Նախընթաց ճանապարհի որդւոյն Աստուծոյ տնօրէնութե սուրբ Յովհաննէս „ · և այլն ։

Մեծն 'ի մարգարէս մկրտիչ բանին Հօր
Կարապետ սրբեալ յարգանդ ամուլ մօր·
Արփւոյն ցոլացման արուսեակ պայծառ
Գառին Աստուծոյ յայտնիչ հրաշափառ
Անապատասուն կենակից զուարթնոց
Սաստիչ արքայից անիրաւ գործոց·
Ի սէր ճշմարտին զոհեալ զկեանս անգին
Լուսափայլեցաւ յանմարմնոց գնդին ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ աստուածաբան առաքեալ և աւետարանիչ՝ էր որդի Որոտման և սիրելի աշակերտ Յիսուսի՝ որդեգրեալ Տիրամօրն խաչելութեան ատենը ։ Նա միշտ քովը ըլլալով կը պաշտէր զԱստուածամայրը մինչև որ վերափոխեցաւ ։ Իսկ ինքն մինչև 'ի խոր ծերութիւն քարոզելով կը ծաւալէր զբանն կենաց յեկեղեցիս Ասիացւոց· ուր հաստատեց իր աթոռը յԵփեսոս, երևելի սուրբ աշակերտներով ալ ծաղկեցուց վիճակը և շատ տեղեր ։ Մինչ զի հեթանոսները բռնեցին, կապանօք տարին 'ի Հռոմ, և շատ չարչարելէն ետև ձգեցին եռացեալ ձէթին մէջ· բայց սուրբ առաքեալը անվնաս ելաւ կաթսայէն, և առաւել պայծառացաւ հրաշագործութեամբ և զօրութեամբ ։

Յետոյ Դոմետիանոս կայսրն աքսորեց զերանելին 'ի Պատմոս կղզին. ուր տեսիլք տեսաւ ու գրեց Յայտնութեան հրաշալի գիրքը, և ապա դարձաւ յԵփեսոս և հոն գրեց սուրբ աւետարանն ու իրեք ընդհանրական թղթերը: Յամի Տեառն 100, կիրակի օր մը՝ սուրբ Յովհաննէս հանգեաւ ննջելով գերեզմանին մէջ իբր իննուսուն կամ իննուսունուինը տարուան, որ ինքն փորել տուեր էր յԵփեսոս. բայց յետոյ չի գտան մարմինը, կարծելով թէ յարեաւ: Աս անուանեցաւ Աստուածաբան և Արծիւ, վասն զի կը սկսանի աւետարանը Յիսուսի աստուածութենէն իբրև արծուի երկինքը սլանալով խոր աստուածաբանութեամբ, կամ ըստ հնախօսից՝ աւետարանելով սլացաւ որպէս արծիւ մինչև 'ի Պարթևս և 'ի Հնդկաստան:

ՅՈՎՀԱՆՆԷՍ կոչեցեալ ՄԱՐԿՈՍ էր աշակերտ առաքելոց, եղբօրորդի Բառնաբայ, և որդի Մարեմայ. երբոր Պետրոս առաքեալ բանտէն ազատեցաւ հրեշտակին ձեռքով՝ ասոր տունը գնաց. ուստի էր եօթանասուն աշակերտներէն: Պօղոս և Բառնաբաս առաքելոց հետ միաբան քարոզեց 'ի Յունաստան և 'ի Կիպրոս, իսկ յամին 63 Հռոմ գնաց և կը ծառայէր Պօղոս առաքելոյն բանտին մէջ, ինչպէս կը գրէ. “Ողջոյն տայ քեզ... Մարկոս եղբօրորդի Բառնաբայ„: Որ շատ առաքելական գործքերէն ետև Բառնաբասին քով գտնուեցաւ 'ի Կիպրոս նահատակութեան ատենը. ինքն ալ նահատակեցաւ 'ի Բիւբլի կամ յԵփեսոս. ուր մեծապէս կը պատուէին սուրբին գերեզմանը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Երուսաղէմի հայրապետ, նստաւ 'ի 389 պատրիարգ Սուրբ երկրին, որ էր կրօնաւոր լցեալ առաքինութեամբ և սրբութեամբ, սիրելի սրբոց և մտերիմ բարեկամ Ոսկեբերանին, Օգոստինոսի և քահանայապետաց Հռոմայ: Սա քաջութեամբ գլխահար եղաւ Պեղագեանց, և հերքելով հերետիկոսները բարձրացուց ուղղափառ հաւատքը: Ապա շատ առաքինապանծ գործքերէն և արդիւնաւոր բարելաւութեանց ետև՝ խաղաղութեամբ հանգեաւ 'ի Քրիստոս, և յիշատակը տօնեցաւ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Կամաւոր աղքատ էր որդի Եւտրոպիոսի իշխանին 'ի Ե դարու 'ի Կոստանդնուպօլիս, որ սնաւ ուսմամբ և բարի վարքով. իսկ սրբասիրութեանը համար ծնողքը շինեցին իրեն ոսկետուփ աւետարան մը: Յետոյ հանդիպելով աբեղայի մը՝ հարցուց տեղեկացաւ Անհանգստից վանքին կրօնաւորաց կարգը. հետը խօսք դրաւ, ու ծածուկ գնաց քաղքին մօտիկ վանքը մտաւ. և հագաւ կրօնին զգեստը տասնըհինգ տարւան, ու զարմանալի ճգնութեամբ առաքինացաւ վեց տարի: Ապա սկսաւ մաշիլ ծնողացը կարօտուն. մինչ զի չի դիմանալով գնաց վանահօրն օրհնութին առաւ ու դարձաւ հօրը տունը աղքատի ձևով անծանօթ ամենևին՝ խեղճ խուցի մը մէջ նստաւ վեց տարի, առանց ծնողացը յայտնելու և խօսակցելու զարմանալի համբերութեամբ և վշտակրութեամբ: Երբոր ապա մահը մօտեցաւ՝ հոգևոր պատրաստութիւնը տեսնելէն ետև կանչեց մայրն ու ցցուց մօրը իրեն աւետարանը և յայտնելով ասաց, որ զինքը այն աղքատ զգեստովը թաղեն. և մէկէն հանգեաւ ՚ի Տէր, ու մարմինէն անոյշ հոտ մը բուրեց։ Բոլոր ճանչցան զինքը դառն ողբով այլայլեցան ծնողքը, եղբարքը և բոլոր ազգականքն։ Իսկ երանելւոյն վրա լոյս ծագեցաւ յերկնից. և գնացին հոն Արկադէոս կայսրն ու պատրիարգը, և փառաւորապէս թաղեցին սուրբն Աստուծոյ նոյն տեղը։ Իսկ ծնողքն գերեզմանին վրա կանգնեցին տաճար իւր անուամբն. և իրենք ալ հոն կրօնաւորեցան մինչև ՚ի մահ, անպակաս տեսնելով սուրբ զաւակին հրաշքը։

Ահա իսկական պատկեր Յիսուսի
Աղքատացելոյ առ մարդկան ազգի,
Ումբուռն թեկն ածեալ երջանիկն Յովհան
Աղքատին հագւով եգիտ զանմահ կեան։
Տես ըմբիշք երկնից բեր անյաղթ մրցին
Սան անանց բարեաց ճգնին տառապին,
Քանզի բաւունք տիրեն անեղծ պըսակաց
Յաղթեալ աշխարհի մարմնոյ և դիւաց։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Ա. Քահանայապետ Հռոմայ էր Տոսքանացի, այր մեծանուն սրբութե̃ և իմաստութեամբ, որ նստաւ յաթոռ սրբոյն Պետրոսի ՚ի 523 և շուտով բարեկարգեց զեկեղեցին հերձուածողաց դէմ։ Անոր համար Թէոդորիկոս արիոսեան թագաւորն Իտալիոյ բռնադատելով ղրկեց սրբազանը ՚ի Կոստանդինուպօլիս առ կայսրն Յուստինոս գրելով վասն ազատ թողլոյ արիոսեանց իրենց աղանդին մէջ։ Իսկ սուրբ քահանայապետը մեծ փառօք մտաւ թագաւորանիստ քաղաքը. վասն զի Յոյնք մինչև ան ատենը չէին տեսած քահանայապետ Հռոմայ, որ քաղաք մտածին պէս հրաշքով կոյրի մը աչք ալ բացաւ ։ Ուստի մեծ պատիւ ըրին սուրբին , որ զատկին օրը պատարագեց փառաւորապէս 'ի մայր եկեղեցին . ուր կայսրն ծնրադրութեամբ առաւ կայսերական թագը սուրբ հայրապետին ձեռքէն հանդէսով ։ Անկէ ետև մերժեց աղանդաւոր արքային խընդիրքը , որ կատղելով հալածանք հանեց յԻտալիա ուղղափառաց դէմ, զոր լսելով Յովհաննէս պապն սիրտը չդիմացաւ , դարձաւ 'ի Հռոմ հօտը հոգալու համար . իսկ չար արքայն բռնեց սուրբը բանտն փակեց սաստիկ վշտօք և նեղութեամբ , մինչև վտանգելով մեռաւ վկայական մահուամբ 'ի 526 ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ անուամբ նստան 'ի գահ Հռոմայ քսանուիրեք սրբազան պապք կամ հայրապետք , որոնք մեծամեծ հալածանքներ քաշելով հաստատ պահեցին սուրբ աթոռը և ուղղափառութեան հաւատքն ։ Ոմանք մեծագործ և ոմանք մեծանուն երևեցան . որպէս գերիմաստ Յովհաննէս ԻԲ պապն միլիոնաւոր գանձ հաւաքեր էր Երուսաղէմն ազատելու համար . և երեսուն հազար ոսկի ալ օգնութիւն ղրկեց Հայոց Լևոն արքային , որ քաջ պատերազմի անհաւատից դէմ, ինչպէս որ գրեր ենք ամենուն պատմութիւնը ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ վարդապետ Երզնկայի կամ Պլուզ , այս ինքն Կապուտակն 'ի ԺԳ դարուն մնաւ սուրբ Գրիգորի վանքը 'ի Սեպուհ լեռը , աշակերտելով մեծիմաստ Վարդան վարդապետին , ծաղկեցաւ հմուտ բանասիրութեամբ . որ յետոյ նստաւ Աստուածածնայ վանքը Որձորու և անուանեցաւ Որձորեցի ։ Յամի 1281 ուխտ գնաց Երուսաղէմ . անկէց անցաւ Հռոմկլայ , ուր եղաւ վարժապետ Հայրապետանոցին Յակոբ կաթուղիկոսի ատեն , որ տուաւ իրեն յօրինելու մեկնութ͞ի քերականին : Յետոյ դարձաւ Սեպուհ լեռան վանքն ու կը մեկնէր Աստուածաշունչը . նաև մեկնեց Դաւթի Անյաղթին քերականութիւնը : Գրեց գիտնական ճառեր և ոտանաւորներ 'ի վերայ երկնից և շարժման լուսաւորաց , տարերաց և եղանակաց տարւոյ : Կատարեց 'ի 1316 Մատթէի մեկնութիւնը , որ սկսեր էր Շնորհալին , և նոյն տարին գտնուեցաւ Ատանայի ժողովքին մէջը : Ապա թարգմանեց լատինէն 'ի հայ սուրբ Թովմայի Աքուինացւոյն հոգելից ճառը 'ի վերայ եօթն խորհրդոց : Թո՛ղ ուրիշ խրատական գրուածները , վայելուչ երգերը , ոտանաւորները , տաղերը և շարականները . ինչպէս են՝ “ Այսօր զուարճացեալ . Երինք ամենայն . Յաւուրս վերջին . Այսօր ձայնն հայրական . Յամենայն ժամ օրհնեմք ” . այլովքն հանդերձ : Երզնկացին այսպիսի ուսումնական առաքինութեամբ և բարի վարքով վախճանեցաւ 'ի Տէր յամի 1326 :

ՅՈՎՀԱՆՆԷՍ Նեբոմուգեան էր Պոհեմիացի լատին վարդապետ , որ մանկութեան ատենը Աստուածածնայ հրաշքովն ազատեցաւ մահուանէ և նուիրեցաւ Աստուծոյ : Ապա սնաւ առաքինի վարքով և կատարեալ իմաստութ͞բ , մինչև ձեռնադրեցաւ քահանայ . և եղաւ զօրաւոր քարոզիչ , կանոնիկոս եկեղեցւոյն Փրակայի , և խոստովանահայր Յովհաննայ Թագուհւոյն : Իսկ պղծագործ թագաւորը նախանձելով և ատելով պարկեշտ թագուհւոյն վարքը՝

կը նեղէր զՅովհաննէս խոստովանահայրն , որ յայտնէ իրեն կնկանը խոստովանութիւնն · իսկ նա ոչ երբէք հաւանեցաւ ոչ խոստմամբ և ոչ բռնութեամբ ։ Ուստի սուրբը շատ նեղութեամբ և քաջութեամբ համբերելով պատրաստեցաւ մահուան յանձնելով զինքն Աստուածամօրը · իսկ բռնաւորը կիշերանց ձգել տուաւ սուրբ Յովհաննէսը ձմեռ ատեն ՚ի Մոլտաւա գետը Փրակայի , որ կատարեցաւ վկայական մահուամբ ՚ի ժԴ դարուն ։ Իսկ սուրբ մարմինին վրա աստղանիշ պայծառ ջահեր երևցան ջրին երեսը ։ Ուր գնային ջերմ սիրով քահանայք և բոլոր ուխտն եկեղեցւոյ , տարին սուրբ մարմինը հանգուցին մայր եկեղեցնոյ մէջ , որ եղաւ հրաշագործ ուխտատեղի ։ Ապա երեքհարիւր տարիէն ետև երբոր բացին երանելւոյն գերեզմանը տեսան հաւատարիմ լեզուն ողջ անապական մնացեր էր , որ և երբեմն կարմիր ծիրանեգոյն փայլեցաւ հրաշքով ։

Այսպէս սխրագործ խորհուրդք հաւատոյ
Փրկչին զօրութեամբ են միշտ գերյաղթ ,
Աւանդք շնորհաբաշխ տուեալք օծելոց ,
Սրբազան կնքով բանալիք հոգւոց ։
Երջանիկ վկայն Յովհաննէս ընտիր
Օոհ լինի պահել զկնիքն աստուածադիր ·
Հերքէ զքէն դիւաց ընդ ժանտ արքային
Աստղափայլ պճնի աստ և ՚ի դաս վերին ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Ե · Պաղէոլոգ էր խաղաղասէր կայսր Յունաց , որ տեսնելով ազգին թուլութիւնը ՚ի 1431 խնդրեց պաղատանօք Լատինացոց օգնութիւնը՝ խօսք տալով միաբանիլ Հռոմայ եկեղեցնայ հետ ։ Եւգինէոս Դ պապը նուիրակով հրաւիրեց զինքն ։ Յամի 1439 կազմեցաւ ընդհանուր ժողովը Փլորենտիոյ, ու գնաց հոն կայսրն, և Յովսէփ յոյն պատրիարգն իւր ուխտովը ։ Հոռոմները դաւանեցին հոն զբղխումն Հոգւոյն սրբոյ 'ի Հօրէ և յՈրդւոյ, և թէ հոգիք արդարոց վայելեն արքայութեան մէջ, և մեղաւորաց հոգիք կը տանջին դժոխքը · իսկ զղջացեալ արատաւոր հոգիք քաւարանին մէջ մաքրուելով աղօթքով և պատարագով կը հասնին արքայութեան ։ Այլ թէ աթոռն Հռոմայ ունի գերագահ իշխանութիւն և գլուխ է ընդհանուր եկեղեցւոյ, յաջորդ Պետրոսի և փոխանորդ Քրիստոսի ։ Եւ այսպէս եղաւ միաբանութիւն և ցնծութիւն ամենուն ։ Սակայն այս ուրախութիւնը երկար չի քշեց · զի Յովսէփ պատրիարգը սահմանադրութեանցն ստորագրելէն ետև հոն վախճանեցաւ · իսկ կայսրն դարձաւ 'ի Պօլիս տեսաւ որ ազգը կը տրտնջայ այս ըրած միաբանութե՟ վրա, սաստիկ վշտացաւ, ու սրտին նեղութենէն հիւանդ ընկաւ մեռաւ 'ի 1448, թագաւորելով քսանըչորս տարի ։ Որուն յաջորդը Կոստանդին ժ · թուլամորթ ըլլալով հոգ չըրաւ այս օգտակար միաբանութեան վրա՝ որով դարձեալ մնացին բաժնուած, ու շուտով կորուց թագաւորութիւնը, և եղաւ վերջին կայսր արևելեան · Տես 'ի կարգին ։

ՅՈՎՆԱԹԱՆ էր առաքինի որդի Սաւուղայ, որ շատ գովելի եղաւ ոչ միայն խելքով և քաջութեամբ, այլ և անկեղծ մտերմութեամբ և աննախանձ անշահասիրութեամբ ։ Վասն զի գիտէր որ ինքն էր յաջորդ հօրը թագաւորութեան · բայց նայելով աստուածային ընտրութեանը և ժողովուրդին շահուն՝ հնազանդ եղաւ Աստուծոյ, և պաշտպան կեցաւ Դաւթի հոգւով չափ, յօժարելով միայն նորա երկրորդն ըլլալու որպէս սքանչելի օրինակ առաքինական եղբայրսիրութեան ։ Անոր համար երբոր ընկաւ պատերազմին մէջ հօրը հետ միատեղ, Դաւիթ երգ չինեց սիրական բարեկամին վերայ ու կ'ողբար անմխիթար. “Ցաւէ ինձ ՚ի վերայ քո եղբա՛յր իմ Յովնաթան, գեղեցկացար ինձ յոյժ, զարմանալի եղև սէր քո ինձ”, և այլն ։

ՅՈՎՆԱԹԱՆ քահանայապետ Հրէից՝ էր քաջ զօրավար, որդի Մատաթիայ, և եղբայր Յուդայ Մակաբէին, որուն յաջորդելով մեծամեծ քաջութեամբ շատ զօրացաւ, ու լողալով անցաւ Յորդանան գետէն բանակովը, և զարկաւ խոնարհեցուց Բաքիդ թագաւորը ։ Սա աստուածային յաջողութեամբ այլազգիները անանկ զարմացուց. մինչև թագաւորները կը փափաքէին որ հետը դաշնակից ըլլան անուանելով զնա արքայ Հրէից, և մեծ քահանայապետ ։ Սակայն հեթանոս Տրիփոն իշխանը խաբէութեամբ հրաւիրեց զՅովնաթան իրեն բերդը Պտղոմայիդ, ուր երբ գնաց նա հազար հոգիով, դուռը փակել տալով նախ բոլոր մարդիկը ջարդեցին, ու զՅովնաթան երկաթը զարկին, և յետոյ սպաննեցին աս անյաղթելի փառաւոր քաջը ։ Ամէնքը լացին անմխիթար վրան, որուն յաջորդեց Շմաւոն եղբայրը 144 տարի Յիսուսէն առաջ ։

ՅՈՎՆԱՆ որդի Ամաթեայ էր երկոտասան փոքրամատեան մարգարէներուն մէկը, և ըստ ոմանց կը համարի որդի այրի կնոջն զոր կենդանացուց Եղիա մարգարէն ։ Աստուած հրամայեց իրեն որ երթայ քարոզէ 'ի քաղաքն Նինուէ. բայց Յովնան փախաւ 'ի Թարսիս, և հանդիպելով սաստիկ նաւաբեկութեան՝ ծովը ձգեցին զինքը ։ Եւ հոն մեծ ձուկ մը կլլեց խեղճն, ու տարաւ իրեք օրէն ետև Նինուէի ցամաքը ձգեց, որ սկսաւ աղաղակելով քարոզել, թէ իրեք օրէն ետև Նինուէ պիտի կործանի ։ Նինուէացիք երբոր լսեցին իրենց մօտ կորուստը, միկէն ապաշխարեցին մեծ պզտիկ, ու ազատեցան պատուհասէն ։ Փրկիչն մեր այս բանը բերաւ օրինակ իրեն երեքօրեայ թաղման և յարութեանը, նաև խորհրդոյ ապաշխարութեան աւելով. "Զի որպէս էր Յովնան 'ի փոր կիտին զերիս տիւս և զերիս գիշերս, նոյնպէս եղիցի և որդի մարդոյ 'ի սիրտ երկրի զերիս տիւս և զերիս գիշերս ։ Արք Նինուէացիք յարիցեն 'ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և դատապարտեսցեն զսա. զի զղջացան 'ի քարոզութեանն Յովնանու" ։ Այս մարգարէն քարոզութիւնը կատարելէն ետև դարձաւ 'ի Հրէաստան և խաղաղութեամբ վախճանեցաւ 761 տարի Յիսուսէն առաջ. իսկ մարգարէութիւնն է միայն չորս գլուխ ։

Յովնան մեծահրաշ քարոզ Նինուէի
Զքնաղ օրինակ Փրկչին աշխարհի.
Եռօրեայ թաղմամբ մուտ 'ի փոր կիտին
Եւ ել կենդանի հրաշիւք Անմահին ։
Գործ է հիասքանչ Արարչին իմաստոց
Ի դարձ ապիրատ Եւայի որդւոց,
Հանեալ յանդնդոց զգուշակըն կենդան
Ածել զոճրագործս 'ի զեղջ փրկութեան ։

ՅՈՎՍԱՓԱՏ արքայ Յուդայ յաջորդեց հօրն Ասայի 914 տարի Փրկչէն առաջ. և բարեպաշտութեան հետևելով զօրացաւ 'ի Տեառնէ. մինչ զի յաջողութեամբ կազմեց իր բանակը միլիոնէն աւելի զօրքով: Սակայն երբոր իրեն որդին Յովրամ փեսայ ըրաւ կռապաշտ արքային Աքայաբու դաշնակցելով հետը և անոր Ոքոզիայ որդւոյն հետ ալ, կորուց վաստուածային յաջողութիւնը ըստ մարգարէութեան Ելիեքիայ: Յովսափատ զղջալով խնդրեց օգնութիւն 'ի Տեառնէ, որ յաջողեցաւ սքանչելապէս: Վասն զի տաճարին երգեցողները բանակին մէջն ըլլալով, երբոր անոնց բարձրաձայն երգել տուաւ, այնպէս խառնեցան թշնամիքն որ մինչև ջարդեցին մէկզմէկ: Իսկ Յովսափատ յաղթելով կռապաշտից ժողվեց անոնց աւարն ու դարձաւ յԵրուսաղէմ. ուր քսանըհինգ տարի աստուածպաշտութեամբ թագաւորելէն ետև մեռաւ վաթսուն տարուան:

ՅՈՎՍԵՊՈՍ պատմիչ գիտուն Հրեայ՝ էր քահանայից ցեղէն, որ ականատես ըլլալով Երուսաղէմի առմանը և Հրէից կործանմանը՝ գրեց ամէն պատմութիւնը 'ի Հռոմ. նաև Հրէաստանի հնախօսութիւնը սկսեալ 'ի ստեղծմանէ աշխարհի: Այս հմուտ գրուածները յարգելի ըլլալով Հռոմայեցւոց և գիտնոց՝ ինքն ալ սիրելի եղաւ կայսերաց: Հնախօսութեան մէջ կը գովէ Յովհաննու Մկրտչին առաքինութիւնները և անպարտ մահը: Նաև կը գրէ թէ Աննա քահանայապետ դատապարտեց զՅակոբ եղբայր կոչեցեալ Յիսուսի Քրիստոսի, և զայլս ոմանս. բայց այս գործ անհաճոյ եղաւ բարեսիրաց · նոյն գրքին մէջ կը ներբողէ զՓրկիչն ։ Տ· Յիսուս ։

ՅՈՎՍԷՓ գեղեցիկ էր մետասաներորդ որդի Յակոբայ Ռաքէլէն ծնած, որ վասն շնորհալի պարկեշտութեանը խիստ սիրելի էր հօրը, ուստի նախանձելի և ատելի էր եղած եղբարցը ։ Որուն վրա միշտ չար կը խօսէին հօրը, մանաւանդ երբոր լսեցին նորա գերազանցութեան մարգարէական երազը ։ Յակոբ մէկ օր մը ղրկեց զՅովսէփ 'ի դաշտն Դովթայիմ եղբարները տեսնելու համար · անոնք հեռուէն տեսնելով խորհուրդ ըրին որ սպաննեն անմեղը ։ Ռուբէն առաւ անոնց ձեռքէն ու ցամաք հորին մէջ ձգեց, որ ետքը հօրը տանի ։ Մադիանացի վաճառականներն երբոր անկեց կ'անցնէին՝ Յուդայ յորդորեց եղբարքն ու Յովսէփը անոնց վաճառեցին · յետոյ առին ծաղկեայ պատմուճանը արիւնաթաթախ ղրկեցին հօրը խաբելով՝ թէ չար գազան պատռեց Յովսէփը ։ Յակոբ երբոր լսեց՝ պատռեց լաթերը, ընկաւ գետինը լացաւ դառնապէս սիրական զաւակը երկար ժամանակ ։ Իսկ Մադիանացիք տարին Յովսէփը վաճառեցին յԵգիպտոս Փարաւոնի դահճապետին, որուն եղաւ սիրելի և տանը վերակացու ։ Սակայն անպարկեշտ կինը ցանկանալով Յովսէփին գեղեցկութեանը կը բռնադատէր որ մեղանչէ հետը · իսկ արդարը մերժելով փախաւ անզգամին ձեռքէն, որ զըրպարտելով անմեղը բանտը դնել տուաւ ։ Բայց հօն ալ աստուածային շնորհօքն սիրելի եղաւ բանտապետին, որ գթալով յանձնեց Յովսէփին կառավարութիւնը բանտին, որ խոհեմութեամբ ամէն բան կը հոգար ։ Ան ատեն բանտարկեցան հոն Փարաւոնին մատակարարն ու տակառապետը . և երազ տեսնելով պատմեցին Յովսէփու , որ ինչպէս մեկնեց՝ անանկ կատարեցան ։ Փարաւոն ալ սոսկալի երազ մը տեսաւ , ու մեկնիչ չէր կրնար գտնել , որուն ծանուց տակառապետը Յովսէփին ըրած մեկնութիւնը . որ մէկէն հանել տուաւ բանտէն ։ Յովսէփ երբոր մեկնեց երազն արքային վասն եօթը տարուան առատութեան և գալու Եգիպտոսի սովուն , գոհ ըլլալով Փարաւոն դրաւ զՅովսէփ իշխանապետ բոլոր Եգիպտոսի . որ գոլով երեսնամեայ սկսաւ ամէն բան կարգի դնելով բարեզարդել աշխարհը իմաստութեամբ ։ Յակոբ նահապետ ան ատենը երկու անգամ ղրկեց որդիքն յԵգիպտոս ցորեն առնելու համար ։ Յովսէփ նախ նեղեց եղբայրները իբրև լրտես . ապա երբոր գնացին բերին Բենիամին համամայր եղբայրը՝ սիրտը շարժելով իմացուց զինքն անոնց , և ստիպեց որ շուտով երթան հայրը բերեն պատրաստական կառքերով ։ Յակոբ լսելով զասոնք ցնծացաւ հոգւով ու շուտով ճամբայ ելաւ հասաւ յԵգիպտոս ։ Յովսէփ բնակեցուց հայրը 'ի բարեբեր երկիրն Գեսեմ . ուր շատ աճեցան նոքա , մինչև մեռաւ . որ թաղելէն ետև մնաց Յովսէփ յԵգիպտոս նոյն աստուածպաշտութեամբ և փառօք ։ Իսկ երբ եղաւ հարիւր տասը տարուան ժողվեց զամէնքն ու խօսեցաւ մարգարէաբար . “ Ահաւասիկ ես մեռանիմ . այցելութեամբ այց արասցէ ձեզ Աստուած . հանջիք զոսկերս իմ աստի ընդ ձեզ , և տարջիք յերկիրն , զոր երդուաւ Աստուած տալ հարցն մերոց Աբրահամու , Իսահակայ , և Յակոբայ ” ։ Իր վախճանելէն չորս հարիւր երեսուն տարի ետև Մովսէս մարգարէն առաւ Յովսէփին ոսկորները տարաւ յերկիրն աւետեաց և հանգուց նախնեացը քով ։ Պատմի թէ Յովսէփայ գերեզմանը կ'երևնայ Սիւքեմայ բլրին վրայ , զոր կը պատուեն Արաբացիք նորա անուամբն , քովն ալ կանգներ են մզկիթ ։ Ըստ ոմանց Եգիպտացիք կը պաշտէին զՅովսէփ անուամբ Ապիս և Հերմէս չաստուածոց ։ Իսկ քրիստոնեայք կը յարգեն իբրև նահապետ , մարգարէ և ճշմարիտ օրինակ առաքինութեանց ողջախոհութեան և անոխակալութեան . ինչպէս կը գովէ Սողոմոն . “Նա զարդարն վաճառեալ ոչ եթող 'ի ձեռանէ . այլ 'ի մեղաց փրկեաց զնա . ընդ նմա էջ 'ի գուբ . . . մինչև եբեր նմա գաւազան թագաւորութեան . և ետ նմա փառս յաւիտենական „ . և այլն ։ Տ . Յակոբ ։

Յովսէփ հօրամոյն մանուկ շնորհալի
  Ի ժանտ կրից եղբարցն իւր 'ի սպանդ վարի .
  Անողորմ մատնեալ ժանտաժուտ ազգաց
  Յաւալից վշտօք լինի տարագնաց ։
Բայց համբերատար և զգօն հոգին
  Յանձն եղեալ 'ի սուրբ կամս աստուածային
  Յաղթէ աննուէր բաղդին աղէտից
  Վեհանայ 'ի շնորհս 'ի գահ արքայից ։

ՅՈՎՍԷՓ Աստուածահայր , արդար և սրբափայլ նշանած ամենասուրբ Աստուածամօրն , էր Դաւթի և Յուդայի ցեղէն , առաքինութեանն և սրբութեանն համար ընտրեցաւ 'ի Տեառնէ 'ի խնամել և 'ի պաշտել զմայրն Աստուծոյ և Աստուածորդին ։ Նոյն ողջախոհ արդարութեամբն առաքինացեալ փոխեցաւ առ Տէր աւանդելով իր սուրբ հոգին Յիսուսի ձեռքը 'ի Նազարէթ, ուր էր իւր աղքատ տունը ։

Աստուածահայր անուամբ և մեծամեծ սքանչելեօք պայծառացաւ սուրբ Յովսէփ եկեղեցեաց մէջ՝ հանդերձ տօնախմբութեամբ, որ և բարեխօս է հոգեվար քրիստոնէից ։ Մովսէս Խորենացի սուրբ հայրն մեր այսպէս կը վկայէ. "Յովսէփ քառասունամեայ էր, մինչ կոյսն յանձնեցաւ նմա, և երեսուն և մի ամի կենարարին հանգեաւ 'ի Նազարէթ 'ի տան իւրում„ ։ Ուրեմն Յովսէփ եօթանասուներմէկ տարի ապրեցաւ, և երկու տարի առաջ քան զՔրիստոսի մահը վախճանեցաւ ։

ՅՈՎՍԷՓ Արեմաթացի այր բարեգործ և արդար էր փառաւոր նախարար և իշխան Հրէից մէջ, որ նախ ծածուկ աշակերտ էր Յիսուսի, յետոյ եղաւ մեծահամբաւ թաղելով զՓրկիչն մեր իրեն վիմափոր գերեզմանին մէջ իւր պարտէզը ։ Իսկ յարութենէն ետքը շատ օգնական և գործակից եղաւ աշակերտաց Քի քարոզելով և փառաւորելով զանունն նորա մինչև առաքինի քաղաքավարութեամբ հանգեաւ 'ի Տէր ։

ՅՈՎՍԷՓ սուրբ հայրապետ էր կաթուղիկոս Հայոց և աշակերտ սուրբ Թարգմանչաց, անձն իմաստուն և սրբակաց, որ արժանապէս յաջորդեց սրբոյն Մեսրոպայ և իրեք տարիէն ետև կրակապաշտ Պարսիկները բռնեցին զինքը Ղևոնդեանց հետ մէկտեղ և շատ չարչարելով գլխատեցին վասն հաւատոյ ։ Շնորհալին երգելով կը ներբողէ զինքն ու ընկերներն այսպէս. "Մկրտեալք արեամբն իւրեանց արբին զբաժակ՝ մահու Փրկչին, յառաջեալ յամենեցունց Յովսէփ ընտրեալ աշակերտացն , նորահրաշ սիրով լցեալ և նահատակ բարի ցուցաւ , շինեցաւ տաճար փառաց սրբութեան անմահ բանին ,,։ Տ. Ղեւոնդ ։

ՅՈՎՍԷՓ նոր վկայ 'ի ԺԲ դարուն էր որդի անհաւատի , որ մնաւ և սորվեցաւ քրիստոնեայ տղոց հետ , մինչև արժանի եղաւ մկրտութեան ծածուկ ։ Երբոր հայրն իմացաւ սաստիկ ծեծելով թողուց կիսամահ . իսկ նա փախչելով շրջեցաւ վանքերն ու սաղմոսելով եղաւ սրբակաց ճգնաւոր ։ Ապա յԵրուսաղէմ երթալու ատեն համդիպեցաւ Ներսէս Շնորհալւոյն 'ի Հռոմկլայ , և առաւ սուրբ օրհնութիւնը , որ սիրտ տալով պատանւոյն ասաց մարգարէութբ̃ . Թէ որ հաւատքի համար վախճանիս , յիշատակդ կ'անցընեմ առաջին մարտիրոսաց կարգը ։

Յովսէփ երբոր դարձաւ 'ի քաղաքն Դուին քարոզելով ծնողացը զաւետարանն , մատնուեցաւ այլազգեաց ձեռքն ու շատ տանջանքներէն ետև բանտը մտաւ ։ Ուր սաստիկ չարչարելով սուրբը կրկին անգամ դատեցին , ու զարկին կուշտը պատռեցին , և ապա գլխատեցին զերանելին 'ի 1170 . որուն վրա լոյս իջաւ ու թաղեցին պատուով Հաւուց Թառայ վանքը , և դասելով վկայից կարգը տօնեցաւ ։

ՅՈՎՍԻԱ էր արքայ Յուդայ , յաջորդեց իր հօրը Ամոնայ՝ ութ տարուան հասակովը . Ջանահնար եղաւ կործանելու կուռքերը , և ապա սրբեց տաճարը Քեղկեայ քահանայապետին ձեռքով , որ գանձատան մէջ գտաւ Երկրորդ օրինաց սուրբ գիրքն ու տարաւ թագաւորին , զոր Մովսէս մարգարէն գրեր և տապանակին մէջ պահեր էր · յետոյ կռապաշտ Թագաւորներուն օրը հաներ ու գանձատան մէջ ծածուկ տեղ պահեր էին, որ չի կորսնցընեն ։ Յովսիա ժողվեց ազգը և այս գիրքը կարդալով քաջալերեց ժողովուրդը Քեղկեայ հետ, որպէս զի կատարելով աստուածային օրէնքը զօրանան և բարեպաշտ ըլլան ըստ պատուիրանացն Աստուծոյ ։ Յետոյ գնաց արքայն բոլոր Սամարիայի կուռքերը կործանեց ։ Բայց Եգիպտացւոց հետ պատերազմելու ատեն չարաչար խոցեցաւ ու դարձաւ յԵրուսաղէմ մեռաւ երեսունինը տարուան 610 տարի Քրիստոսէն առաջ ։ Այս բարեպաշտ Թագաւորին վրայ ամէնքը սգացին, իսկ Երեմիա մարգարէն ողբական գովեստ յօրինեց վրան պանծալի ։

ՅՈՎՐԱՄ որդին Աքայաբու յաջորդեց Ոքոզիայ եղբօրը · և վերուց մէկ քանի կուռքեր · իսկ Մովաբացւոց հետ պատերազմին ատենը երբ ջուր չկար՝ Եղիսէի մարգարէին հրաշքովը ջուր գտաւ ու յաղթեց թշնամիներուն ։ Յետոյ երբ պաշարելով Ասորւոց արքայէն՝ մեծ սով ընկաւ Սամարիայի մէջ, անանկ որ երկու կանայք կերան իրենց զաւակները սոսկալի թշուառութեամբ, Յովրամ կարծելով թէ այս խեղճութեանց պատճառը Եղիսէն է հրամայեց որ սպաննեն ։ Բայց նա մէկէն մարգարէացաւ թէ վաղը պիտի բարիքով լեցուի քաղաքը · ուստի նոյն գիշերը թըշնամեաց բանակը ահ մը ընկաւ 'ի Տեառնէ՝ թողին ամէն բան փախան, և Սամարիա լեցուաւ ամէն բարիքով ։ Յետոյ ելաւ Յովրամին վրայ Ազայէլ արքայ Ասորւոց, ուր խոցուելով Յովրամ գնաց 'ի քաղաքն Եզրայէլ · և

Թողուց բանակը Յէու զօրավարին ։ Սա Եղիսէի մարգարէին հրամանաւ Թագաւորելով սպաննեց զՅովրամ, վասն զի կռապաշտութե՟ ձեռք զարկեր էր , և ինքն Թագաւորեց փառօք ։ Տ ․ Յէու ։

Այսպէս ցորքան Վեհք ուղիղ ընթանան
Ըզմարգարէից պահեալ պատուիրան ․
Վայելեն 'ի շնորհս խնամոց Արարչին
Յաղթող 'ի մրցմունս լեալ գերմարդկային ։
Իսկ երբ յուղղութե՟ց շեղեալ խոտորին
Նման Յովրամայ 'ի կորուստ մատնին ․
Քանզի ապիրատն միշտ 'ի վտանգի
Զուրկ 'ի սուրբ շնորհաց հեծէ տաղտապի ։

ՅՈՒԴԱ կը նշանակէ գովեստ կամ խոստովանութիւն , և է անուն չորրորդ որդւոյն Յակոբայ ։ Սորա ցեղէն ծնաւ Փրկիչն մեր ըստ մարգարէութեան հօրը , որ ասաց ․ “ Մի պակասեսցէ իշխան Յուդայ , և մի պետ յերանաց նորա , մինչև եկեսցէ նա , որոյ իւրն է հանդերձեալքն ․ և նա է ակնկալութիւն հեթանոսաց „ ։ Ուստի ցեղն Յուդայի միշտ եղաւ նախապատիւ և գլուխ ազգին ․ որոնց տրուեցաւ մեծ մասն երկրին աւետեաց ․ ուր շինեցաւ Երուսաղէմ աթոռ Դաւթի , և Թագաւորութիւնը տևեց մինչև ցգերութիւն Բաբելացւոց ։ Իսկ գերութենէն դառնալէն ետև միացան Ղևտացւոց հետ , որոնցմէ եղան Իսրայէլացւոց գլխաւորներն ու դատաւորները , պահելով միշտ Յուդայի ցեղին ազգաբանութիւնը մինչև ցկործանումն Երուսաղէմի , որով բարձաւ իրենց իշխանութիւնը ։ Եւ ահա նոյն ժամանակը ծնաւ խոստացեալ Մեսիայն Յիսուս, որ սուրբ աւետարանաւ ժողվեց ամէն ազգ ըրաւ մէկ եկեղեցի ։ Ուստի անկէ ետև վերցաւ յաշխարհէ Յուդայի ցեղին իշխանութիւնը ըստ մարգարէութեան սուրբ նահապետին Յակոբայ ։

ՅՈՒԴԱ Մակաբէ էր որդի Մատաթի քահանային, և անպարտելի զօրավար քաջայաղթ, որ մեծամեծ յաղթութեամբ կոտրեց Ասորիներուն ուժը ։ Երբոր Լուսիասին հետ կը պատերազմէր տեսաւ բանակին գլուխը հրեշտակ Տեառն նման ձիաւոր զօրավարի, որով հալածեց թշնամիներն ու սրբեց ազգը Անտիոքոսի կռապաշտութենէն ։ Ապա ըրաւ մեծ տօնախմբութեան հանդէսը վասն նորոգութեան և սրբութեան տաճարին. որուն յիշատակը մինչև հիմա կը կատարեն Հրեայք, ինչպէս կը յիշէ աւետարանը. “Եղեն յայնժամ նաւակատիքն յԵրուսաղէմ” ։ Անկէց ետև դարձեալ պատերազմեցաւ Յուդա հեթանոսաց հետ. որուն օգնական գալով յերկնից հինգ ձիաւորք քսան հազար Ասորիներէն կոտորեց. և զարկաւ յաղթեց ուրիշ ազգերուն ալ զարմանալի քաջութեամբ և աստուածային զօրութեամբ, մինչև դողացուց կռապաշտները ։ Յետոյ յանկարծ Յուդայի վրան հասան բազմութեամբ կռապաշտ Դեմետրի զօրքը. Յուդայեանք վախնալով ցրուեցան, Բայց քաջն Յուդա ութհարիւր մարդով սոսկալի պատերազմեցաւ, և խորտակեց թշնամեաց բանակն ու ինքն ալ ընկաւ այն շփոթութե՟ մէջ, մեռաւ քաջութ՟ 161 տարի Յիսուսէն առաջ ։ Զոր վերուցին եղբայրները տարին թաղեցին նախնեաց գերեզմանը. և ազգով ողբացին աննման քաջ զօրավարը, որուն յաջորդեց Յովնաթան եղբայրը, և յետոյ Շմաւոն որդւոց որդի մինչև որ եկաւ Մեսիայն Փրկիչ աշխարհի ։ Տ. Մակաբայեցիք ։

ՅՈՒԴԱ առաքեալ Ղեբէոս, որ անուանեցաւ Թադէոս, էր երկոտասան առաքեալներէն և եղբայր Յակոբայ արդարոյ՝ Տեառն եղբայր, ինչպէս որ կ՚անուանէ զինքն նամակին սկիզբն, կոչի նաև Յուդա Յակոբեան, որ զատ է Հայոց Թադէոս առաքելէն ։ Յուդա շրջեցաւ քարոզութեամբ ՚ի Միջագետս, ՚ի Հայաստան և ՚ի Պարսկաստան. լուսաւորելով հրաշագործութեամբ անհաւատներն ու շատ չարչարանքով նահատակեցաւ նետահար վասն անուան Տեառն յԱրմի կամ ՚ի Պէրութ յամի 80 ։ Սա է որ ասաց Քրիստոսի. « Օ ի եղև զի մեզ յայտնելոց ես զքեզ, և ոչ աշխարհի » ։ Իր յետ կործանման Երուսաղեմի գրեց կաթուղիկեայց թուղթն առ հաւատացեալ Հրէայս, որուն համար կ՚ըսէ Որոգինէս. « Հակիրճ է թուղթս. այլ լի է ազդուութք̃ և երկնային շնորհօք » ։

ՅՈՒԴԱ Իսկարիովտացի էր երկոտասան առաքեալներուն մէկը, քարոզ երկնաւոր Վարդապետին. որ վասն արծաթսիրութեան եղաւ գործիք սատանային մատնելով և տալով Փրկիչը Հրէից ձեռքը ։ Նա երբոր տեսաւ թէ կը դատապարտեն Վարդապետը գնաց զղջմամբ ըրած չարութի̃նը պատմելով Հրէից ասաց. « Մեղայ, զի մատնեցի զարիւն արդար ». և ձգեց մատնութե̃ արծաթն ՚ի տաճարն ու յուսահատելով խեղդեցաւ անձնասպանութեամբ ։

Իսկ անիրաւ քահանայք տաճարին այն արծաթով գնեցին ագարակն բրտի կոչելով Ակեղդամա . այս ինքն գին կամ գիւղ արեան , և ըրին օտարականաց գերեզմանատուն իբր գործք ողորմութեան . և վռնտեցին անկէց Յուդան , որ ըստ Ոսկեբերանին՝ թէ որ երթար զղջմամբ գթած Վարդապետին ոտքն ընկնէր , կը գտնէր թողութիւն չար մեղացն : Բայց նա կուրացեալ արծաթսիրութեամբ կորաւ չարաչար երեսուն արծաթին համար , և անարգական անուամբ կոչեցաւ Իսկարիովտացի , այսինքն այր սատակման : Վասն զի ըստ սուրբ Գրոց սատանան մտեր էր փորն որ պատռեցաւ , ու բոլոր փորը դուրս թափելով սատկեցաւ չարատանջ :

ՅՈՒԴԱՍ Հաքքադօշ , այս ինքն սուրբ , էր Ռաբբի Հրէից և վարժապետ Անտոնինոսի Պիոսի կայսեր 'ի Բ. դարուն : Սա հաւաքելով ազգային հին աւանդութիւնները և նախնի սովորութիւնները գիրք մը յօրինեց մականուանելով Միշնա , և վեց մասն բաժնեց . ա. գրեց երկրագործութեան և հունտերու վրա , բ. տօնախմբութեանց վրա , գ. ամուսնութե և կանանց վրա , դ. քաղաքական գործառնութեանց վրա , ե. զոհերու և պատարագաց վրա , զ. օրինական խտրութեանց և պղծութեանց վրա , և այլն : Այս գիրքն է Հրէից նախնի ատենին վճիռ տուողը . Թալմուտն ալ ասկէց ելած է առասպելաբանութեամբ համդերձ : Յուստինիանոս Ա. կայսրն յամի 541 իր օրինաց գրքին մէջ կը յիշէ զայն . և կը պատուիրէ Հրէից որ այն գիրքը չկարդան իրենց ժողովքին մէջ, հապա աստուածաշունչ կարդան :

ՅՈՒԴԻԹ ազնուուհի էր քաջակորով տիկին Հրէայ Շմաւոնի ցեղէն, շատ գեղեցիկ աստուածասէր և բարեպաշտ, որ զարմանալի պարկեշտութ̃բ կը քաղաքավարէր 'ի Բետիղուայ հայրենիքը սրբակաց այրութեամբ ։ Ապա երբ Հողոփեռնէս Նաբուգոդոնոսորին զօրապետը պաշարեց զԲետիղուա իր հայրենիքը և բնակիչքը վասն պակասութեան ջրոյ պիտի անձնատուր ըլլային, Յուդիթ չթողուց, այլ մեծ քաջութեամբ գնաց Հողոփեռնէսին խոստացաւ որ քանի մը օրէն ետև կը տանի զինքն 'ի քաղաքն ։ Իսկ նա այս խօսքերէն և գեղեցկութենէն խաբուելով թմրեցաւ, ու սաստիկ զինեհարութեամբ քունի ընկաւ ։ Յուդիթ նոյն խուցին մէջ Ա̃յ ապաւինելով զարկաւ գլուխը կտրեց ու դրաւ նաժշտին տօպրակին մէջ և նոյն գիշերը դարձաւ իր քաղաքը ։ Անկից զօրանալով բնակիչքը ելան զարկին Հողոփեռնեսին բանակը և անոր խորանը ազնիւ բաներովը ընծայեցին Յուդիթին, ան ալ նուիրեց Աստուծոյ ։ Անոր եկան Երուսաղէմէ այցելութիւն քաջ տիկնոջն Յովակիմ մեծ քահանայ իշխաններով և օրհնեցին զինքը փառօք, որ ազատեց նաժիշտը . և դրին իրեն տօն մը սրբազան ու տարուէ տարի կը կատարեն մինչև հիմա ։ Իսկ ինքն նովին օրհնութեամբ և գովութ̃բ մեռաւ հարիւր հինգ տարուան էրկանը Մանասէին տունը ։ Որուն վրա ս̃բ գիրն այսպէս կը գրէ, “Մեռաւ նա 'ի Բետիղուա, և թաղեցին զնա 'ի շիրմի առն իւրոյ Մանասէի և սուգ արին 'ի վերայ նորա ամենայն տունն Իսրայէլի զաւուրս եօթն . . . Եւ ոչ ոք էր որ զարհուրեցուցանէր զորդիսն Իսրայէլի յաւուրս Յուդթայ, և յետ մեռանելոյ նորա զաւուրս բաղումն ,,: Սուրբ Կղեմէս Ա. պապն կը յիշէ այս պատմութիւնը. Նոյնպէս ամէն սուրբ Հարք սրբազան գիրք համարեցան, նաև սուրբ Հերոնիմոս, և այլն:

ՅՈՒԼԻԱՆԷ կոյս էր իշխանուհի Նիկոմիդացի ծածուկ քրիստոնեայ. բայց կռապաշտ հայրը նշաներ էր զկոյսն հեթանոս սինկղիտոսի հետ: Իսկ նա հրաժարելով ասաց թէ չեմ առներ մինչև որ քրիստոնեայ չըլլայ: Ասոր նոքա կատղելով բռնեցին զերանուհին սաստիկ տանջանքով բանտ դրին որ զգաստանայ. իսկ կոյսը երբոր հաստատ մնաց 'ի սէրն Քրիստոսի ուրախութեամբ՝ հանեցին յատեան ու կրկին դատեցին, և ապա կրակը ձգեցին: Բայց նա չայրելով շատ հոգի դարձուց 'ի Տէր, որոնք սուրբ կուսին հետ գլխատեցան. իսկ Յուլիանեայ հրաշագործ մարմինը ամփոփեց Սոփիա տիկինը. և յետոյ փոխադրեցաւ 'ի Կումա քաղաք արևմտեան:

ՅՈՒԼԻԱՆՈՍ Եգիպտացի Դիոկղետիանոսի ժամանակը կը փայլէր սրբութեամբ և կրօնաւորական կատարելութեամբ հռչակաւոր վանքեր շինեց, և բազմացուց աշակերտները, մինչև եղաւ առաքինազարդ առաջնորդ տասը հազար միանձանց: Բայց կռապաշտ դատաւորն Մարկիանոս բռնեց սուրբը, և այրեց վանքը և կրօնաւորները քահանաներով, եպիսկոպոսներով և աշխարհականներով, ուր փախեր էին հալածանքէն: Իսկ զերանելին Յուլիանոս ծեծեցին չարաչար. ուր մէկ դահիճին աչքը կուրացաւ ու սուրբին աղօթքովը բացուեցաւ՝ երբ քուրմերը չի կրցան բանալու:

Կեսարիոս որդի դատաւորին տեսաւ հօն հրեշտակներ որ կը խօսէին սուրբին հետ, և հաւատաց Քրիստոսի քսան զօրականով. նոյնպէս շատերն ալ հաւատացին երբ Յուլիանոս կենդանացուց մեռել մը։ Այս մեծամեծ հրաշքներէն ետև Կեսարիոսին մայրը եօթն որդւով դարձաւ 'ի Քրիստոս. յետոյ ամէնքը մէկտեղ շատ տանջանքով գլխատեցան սուրբ Յուլիանոսի հետ և տօնեցան։

ՅՈՒԼԻԱՆՈՍ ուրացող էր եղբօրորդի մեծին Կոստանդիանոսի, որ ցանկանալով կայսերութեան ուրացաւ զՔրիստոս և եղաւ դիւապաշտ։ Ուստի սոսկալի հալածանքներով ջանացաւ մարել Քրիստոսի հաւատքն ու ծաղկեցընել կռապաշտութիւնը. վասն զի կարծէր թէ քրիստոնէութեամբ կայսերութիւնը կը տկարանայ։ Յամի 360 կեղծաւորելով մտաւ եկեղեցին որ լաւ երևնայ զօրքին. բայց արգելք դրաւ որ քահանայք ուսումն չի սորվին, և զօրացուց քուրմերն ու մոգերը։ Յետոյ թուղթ ալ գրեց Հրէից, և խոստացաւ կանգնել իրենց տաճարը խաբելու և որսալու համար։ Գրեց նաև քրիստոնէութեան դէմ աւելորդապաշտութեամբ ուր երբեմն կը գովէր Յիսուսի և առաքելոց հրաշքները, նաև առաքինութիւնը քրիստոնէից, և այլն։ Անօրէնը շատ սուրբեր նահատակեց իրեք տարուան կայսերութեան միջոցին մէջ։ Վերջը ուզեց որ նման մեծին Աղեքսանդրի երթայ յաղթէ Պարսից ու բոլոր աշխարհքիս տիրէ։ Բայց յիմարութեամբ կորուց բանակը. ինքն ալ հոն սատակեցաւ՝ պատժուելով սրբոց արեամբն յամի 369։

Գրիգոր աստուածաբան տեսեր էր ուրացողը յԱթէնք, և այսպէս կը պատմէ. "Գլուխն էր գողգոջուն, և ոտքն սասանուն. տեսութիւն աչացն.. ժանտ և ժպիրհ.. Զոր իբրև տեսի՝ ասացի թէ կայսերութիւն Հռոմայ մնուցանէ 'ի տան զօձ մահաթոյն և ժանտ. և երանի թէ ոչ իրաւացին բանք իմ, և մի՛ թշուառացի երկիրս չարութեամբ նորին,, :

Նոյն սուրբ Գրիգոր կը պատմէ թէ ուրացողն երբոր խոցուեցաւ Պարսից պատերազմին մէջ աներևոյթ նետերէն՝ առաւ կուրծքէն վազած արիւնն ու դէպ 'ի վեր սրսկելով պոռաց գազանաբար առ Յիսուս. "Յաղթեցեր Գալիլեացիդ յաղթեցեր,, . և մէկէն փչեց պիղծ հոգին երեսուներկու տարուան հասակին մէջ :

ՅՈՒԼԻԱՆՈՍ Աղիկառնացի էր եպիսկոպոս Կարիոյ 'ի Ե դարուն, որ մոլորելով եղաւ առաչօքեան աղանդաւոր : Վասն զի կը վարդապետէր՝ թէ մարմինն Քրիստոսի էր անչարչարելի, և յղութեան ժամանակէն անկիր և անապական, ինչպէս էր յարութենէն ետև. ուստի չարչարանքն, մահն, և ամենայն կիրքն Յիսուսի էին առաչօք և ոչ իրապէս : Որ նզովեցաւ նախ 'ի Հռոմ, և ապա 'ի ժողովն Աղեքսանդրիոյ 'ի 430 : Սորա հետևողներն մականուանեցան Յուլիանիտք, կամ Երևութականք, և կամ Առաչօքեանք :

ՅՈՒԼԻՈՍ Ա. սուրբ Հայրապետն էր Հռոմայեցի, և նստաւ յաջորդ սրբոյն Պետրոսի 'ի 336 : Որ մեծ իմաստութեամբ և քաջո
կառավարեց զեկեղեցին Քրիստոսի իբր
նըվեց տարի հալածելով զարիոսեան հե

կոմները ։ Գրեց հոգելից կոնդակներ քաջալերելով զեկեղեցականս, որպէս զի հաստատ պահեն ուղղափառ և Նիկիական հաւատքը ։ Յամի 341 ժողով ըրաւ ՚ի Հռոմ, և արդարացուց սուրբն Աթանաս, ու յետոյ ղրկեց իր աթոռը փառօք ։ Սահմանադրեց գումարել ժողովն Սարդիկեայ ՚ի 347 ընդդէմ նոյն աղանդաւորներուն, ինչպէս մեր Ճառընտիրը կը պատմէ. “Յուլիոս եպիսկոպոսապետն գայ ՚ի ժողովն Սարդիկեայ. զի ոչ էր արժան առանց նորա կամացն ժողով լինել ըստ սահմանի ուղղափառաց„ ։ Այս սուրբ Յուլիոս պապ փոխեցաւ առ Տէր ՚ի 352 ։

ՅՈՒԼԻՈՍ Բ. Սավոյացի եպիսկոպոս կարդինալ, բարձրացաւ աթոռ Հռոմայ ՚ի 1503, որ մեծագործ և գերիմաստ ըլլալով շատ բարեկարգութիւն ըրաւ ու ապստամբներն հնազանդեցուց ։ Յետոյ կամեցաւ հոյակապ շինել Վատիկանեան մայր եկեղեցին առաքելապետին Պետրոսի՝ որ շիներ էր մեծն Կոստանդիանոս ։ Յամի 1506 եղաւ հիմնարկութիւն մեծ տաճարին Հռոմայ. այլ որովհետև մեծ գանձ պէտք էր կատարելու՝ Յուլիոս պապն և յաջորդները հանեցին կոնդակ օրհնութեան և ներողութէց, յորդորելով հաւատացեալներն որ առատ ողորմութեամբ օգնական ըլլան այն ահագին շինութեանը ։ Այս մեծ քահանայապետն շատ երևելի մեծագործութեանց վերջը վախճանեցաւ ՚ի 1513 ։

ՅՈՒԼԻՈՍ Գ. Գոսքանացի արքեպիսկոպոս, յաջորդեց սրբոյն Պետրոսի ՚ի 1550, որ առաքելական ջանքով ծաղկեցուց եկեղեցին ։

Հիմնարկեց Հռոմայու մէջ համալսարան և դպրոցներ կղերիկոսաց կրթութեանը և ուսմանց համար ։ Ապա հռչակեց հանդէս Յոբելինին, որ լսելով Ստեփանոս կաթուղիկոսն Հայոց գնաց Հռոմ և շատ մեծարեցաւ. ուր առնելով զօրհնութիւն սրբազան պապին դարձաւ 'ի Հայաստան ։ Իսկ մեծ հայրապետն Յուլիոս յետ կառավարելոյ զեկեղեցին հինգ տարի առաքինի քաղցրութեամբ հանգեաւ 'ի Տէր վաթսուներեօթն տարեան ։

ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ էր քաջ զօրավար և դիւցազն առաքինի, որ եղաւ առաջին ինքնակալ Հռոմայեցւոց, որդի Լուսիոսի Կեսարի, ծնեալ 98 տարի Յիսուսէն առաջ ։ Սա գոլով կայտառ և արի ոգւով ոչ միայն եղաւ զօրաւոր ճարտասան ուսմամբ, այլ և գերապանծ յաղթական, գանձապետ Հռոմայ, քրմապետ և Պրետոր կամ Բդեշխ, և այլն ։ Այնչափ մեծանձն էր, որ մեհենին մէջ տեսնելով Աղեքսանդրին պատկերքը՝ լալով ասաց. “ Ես դեռ երևելի գործք մը չեմ ըրած. բայց Աղեքսանդր երբոր իմ տարիքս էր՝ գրեթէ բոլոր աշխարհքիս տիրեց ” ։ Նաև շատ անգամ կ'ըսէր, թէ “ Կը փափաքիմ առաջին ըլլալ գեղի մէջ, քան երկրորդ ըլլալ Հռոմայու մէջ ” ։ Յուլիոս այսպիսի ոգւով և ճարտարութեամբ յաղթեց շատ զօրաւոր ազգաց. նաև խոհական քաղցրութեամբ շահելով մեծամեծաց սիրտը և բոլոր հասարակապետութեան սէրը՝ ընտրեցաւ հիւպատոս Հռոմայու 59 տարի Յիսուսէն առաջ ։ Անկեց ետև որչափ որ զօրացաւ, այնչափ աւելի խոհեմութեամբ և մարդասիրութեամբ սիրելի եղաւ ամէն տեղ և

Հռոմայեցւոց ։ Խելքով նախանձոտ թշնամիները կը հեռացնէր ու կը կորսնցնէր, իսկ արիութեամբ և յաղթութեամբ պետութիւնը կը փառաւորէր ։ Այսպիսի հնարքով տիրեց բոլոր Գաղղիոյ, Անգղիոյ, Գերմանիոյ, Եգիպտոսի, Պոնտոսի, և այլն ։ Երբոր շուտով մը յաղթեց Փառնակայ Պոնտոսի արքային ալ՝ գրեց 'ի Հռոմ աւետեաց լուրը իրեք բառով թէ "Եկայ, Տեսայ, Յաղթեցի" ։ Այսպէս յաղթելով զօրաւոր թշնամիներուն, մանաւանդ Պոմպէոսին որ իր նախանձորդն էր, ամէն աշխարհ բարեկարգեց իմաստութեամբ, ու ետքը փառաւոր հանդէս կազմեց ըրած յաղթութեանցն համար հինգ օր, անուանելով Ինքնակալ ։ Այլ և մեծ խորագիտութեամբ վայելչացուց Հռոմ հարկաւոր շինուածներով․ խորունկցուց Տիբերիս գետն ու զօրաւոր նաւակայան կազմեց, տօմարը շտկեց, և ամէն անկարգութիւնները վերուց, գեղեցիկ օրէնքներ դնելով կանգնեց հասարակաց գրատուն մը, և այլն ։ Երբոր այսպիսի հայրենասիրութեամբ կը փառաւորէր՝ նախանձոտ չար թշնամիները երդումով միաբանեցան զինքն սպաննելու ։ Ուստի երբ ատեան գնաց՝ անօրէն ոսոխները վազեցին վրան ու քսանւիրեք խոցուածով սպաննեցին քաջայաղթ կայսրը յիսունըվեց տարւան, 43 տարի Քրիստոսէն առաջ ։ Այս դիւցազն էր առատաձեռն, վեհաբարոյ, ներողամիտ, գիտնական, բարձրահասակ և փառահեղ ։ Թէպէտ թշնամիք կորուցին քաջին փառքն ու ջանացին անունն ալ խաւարելու, բայց նորա առաքինի մեծագործութիւնները և իմաստնոց ցաւակցութեան գովեստները միշտ կը փառաւորեն իր անունը ։

Յուլիոս Կեսար անզոյգ դիւցազնեայ
Յաղթական ազգաց թագադիր Հռոմայ .
Ներող վեհութեամբ եղև նպատակ
Մախանաց ժանտից , անգութ սրոյ ճարակ :
Ո՛վ դժոխարմատ նախանձ չարասէր
Օ խարդ քաջ արանց լինիս մահաբեր ,
Որք ըզգօրութիւն հարին թշնամեաց
Յապիկար նետիցդ անկան 'ի կենաց :

ՅՈՒՂԻՏԱ բարեպաշտուհի կին : Տ . ԿԻՒՐԱԿՈՍ :

ՅՈՒՆԱՆ և Բարաքիաս էին երկու եղբարք ընտիր կրօնաւորք , որք Շապուհ արքային օրը քարոզելով կը քաջալերէին նահատակները 'ի Պարսկաստան և 'ի գիւղն Աբոք , ուր ինը վկայք բանտը դրեր էին վասն սուրբ հաւատոյ . երբոր մոգերն իմացան՝ բռնեցին զայս երկու եղբարներն ու տանջեցին , որ կրակապաշտ ընեն : Բայց նոքա երբ չի դարձան , նախ կապեցին զՅունան , և չարաչար ծեծով քաշեցին ու անանկ խեղճը ձգեցին վար : Իսկ եղբայրը գլխիվայր կախելով կտրեցին մատերն ու երկուսն ալ բանտարկեցին : Յետոյ ինը վկայից կողերն այրեցին , և Յունանու գլուխը քերթելով լեզուն կտրեցին , նաև մամուլով ոսկորները ջարդեցին : Բարաքիան ալ գլորեցին փուշերուն մէջ , և ուրիշ տանջանքներով նահատակեցին Յունանին հետ . իսկ եօթը վկայքը գլխատեցին : Նշխարքները ամփոփեց պատուով Աբդիշոյ անուամբ բարեպաշտ մը 'ի 327 . և այս վկայաբանութիւնը գրեց ականատես Եսայի ասպետն Արծրունի :

ՅՈՒՇԿԱՊԱՐԻԿՔ են մտացածին ճիւաղք և երկակենցաղ խառնակ կենդանիք, կիսով չափ կնկան կերպարանքով և կիսով չափ ձկան, կամ ուրիշ կենդանեաց, որ կ'անուանին նաև Համբարու, Պարիկ, Յարալեզ, Այծամարդ, Եղջերուաքաղ, և այլն : Խորենացին և Եզնիկ վարդապետները կը պատմեն թէ՝ երբոր մեռաւ Արայ նահապետն Հայոց, մոգերը առասպելեցին մխիթարելու համար Շամիրամ թագուհին, թէ կենդանի մը կայ յարալեզ, որ լիզելով պիտի յարուցանէ զԱրայ : Որոց մէջ ալ այսպէս կ'ըսեն այս կենդանիներուն համար "Համբարուք, կամ Յուշկապարիկք ոչ եթէ անձն ինչ ունիցին, այլ 'ի մարդկան սովորութենէ առնուն գիրք : Երևեալ 'ի Կարմիր ծովէ՝ զնոյն օրինակ մարդկան և ձկան կերպարանս ունել՝ չորից յուշկապարիկ գազանաց : Բարոյախօսն ասէ վասն յուշկապարկաց, թէ մահաբերք են, և 'ի ծովու են, և երգեն երգս քաղցրաձայնս . և կերպարանք նոցա մինչ 'ի պորտն՝ կին մարդոյ է, և միւսն թռչնոյ է : Նոյնպէս և իշացուլն՝ մի կողմն արու մարդոյ, և վայր կողմն իշոյ" :

ՅՈՒՍԻԿ սուրբ հայրապետն՝ էր որդի սուրբ Վրթանիսի և թոռն սրբոյ հօրն մերոյ Լուսաւորչի, որ նախ ամուսնութեամբ ունեցաւ երկու որդիք Պապ և Աթանագինէ, և ապա հրաժարեալ յաշխարհէ կը ձգնէր կրօնաւորական առաքինութեամբ, մինչև օծաւ քահանայ : Իսկ հայրը մեռնելէն ետև ընտրեցին զինքն կաթուղիկոս, որ իմաստութեամբ և սրբութեամբ կը հովուէր ազգը յօրէնս Աստուծոյ :

Տիրան Թագաւորն Հայոց նոյն ատենը կանգնեց ալքունի տաճարին մէջ Յուլիանոս ուրացողին դիւանկար պատկերը ։ Սուրբ Յուսիկ լսելով մէկէն 'ի մէկ հոն հասաւ, ու յորդորեց Թագաւորն որ չի պղծէ զեկեղեցին Աստուծոյ 'ի կորուստ ժողովրդեան ։ Բայց երբոր նա մտիկ չըրաւ, սուրբը սաստիկ յանդիմանելով քաշեց առաւ ուրացողին պատկերքը և ոտքովը կոտրտեց ։ Տիրան վախնալով ուրացողէն այնչափ ծեծել տուաւ սուրբ հայրապետն՝ մինչև նահատակեցաւ քաջութեամբ ծեծի տակ յամի 362 · միայն վեց տարի նստաւ աթոռը · իսկ մարմինը տարին 'ի Թորդան հօրը քով թաղեցին ։ Տիրան ալ վերջը չարաչար պատժուելով կորաւ ։

Հրաշափառ յուսով հօտապետք հզօր
Զահեղ բռնակալս հարին քաջազօր ·
Չետուն մուտ չարին 'ի փարախ խաշանց
Մարմնով խորտակել զփաղանգ թշնամեաց ։
Յուսիկ յուսալից համանման նախնեաց
Զդիւանուէր պատկերն ընդ ոտիւք փշրեաց ·
Մրցեալ աներկիւղ ընդ ժանտ ալքային
Պահեաց անարատ զհօտ Լուսաւորչին ։

ՅՈՒՍՏԻԱՆԷ կոյս ։ Տ · ԿԻՊՐԻԱՆՈՍ ։

ՅՈՒՍՏԻԱՆՈՍ կամ ՅՈՒՍՏԻՆՈՍ սուրբ իմաստասէր վկայ՝ էր պղատոնեան փիլիսոփայ Պաղեստինացի, այր սքանչելի իմաստութեամբ և քաջութեամբ ։ Սա 'ի Բ դարուն հալածանքին ատենը տեսնելով քրիստոնէից զարմանալի քաջութիւնն ու սէրը՝ հաւատաց Քրիստոմի, և սկսաւ իմաստուն վարդապետութեամբ և գրով յաղթահարել հեթանոսները ։ Ապա գնաց Հռոմ և գրեց հոգելից գրեանք վասն ջատագովութեան քրիստոնէից, մէկ գիրքը տուաւ Անտոնինոս Պիոսի կայսեր, մէկալն ալ տուաւ Մարկոս Աւրելիոսի, որոնք դադրեցուցին հալածանքը ։ Նաև յորդորանք գրելով կռապաշտից խայտառակեց նոցա առասպելական ուսմունքն ու բանաստեղծներուն շինծու կրօնը, և կը բռնադատէր որ փնտռելով գտնեն զԱստուած ճշմարիտ 'ի սուրբ գիրս և լուսաւորին իմաստութեամբ ։ Իսկ համախօսութեան գրքին մէջ կ'ապացուցանէ Քրիստոսի հաւատքին ճշմարտութիւնը Հրէից դէմ. և նոյն խորհրդով դպրոց ալ շինեց Հռոմայու մէջ, ու կը լուսաւորէր անհաւատները ։ Դարձեալ գրեց աստուածաբանական ճառեր, և շնորհալից նամակներ 'ի ջատագովութ̃ի սուրբ հաւատոյ, խայտառակելով զդիմախօս Կրեսկէս փիլիսոփայն, որ նախանձելով մատնեց զսուրբ Յուստինոս կռամոլ բռնաւորաց, ու նահատակել տուաւ յամի 167 ։ Բայց նա եղաւ պարծանք քրիստոնէութեան առաջի հեթանոսաց սուրբ վարքովը և տալով կեանքը վասն Քրիստոսի հաւատոյ ։

ՅՈՒՍՏԻԱՆՈՍ կամ ՅՈՒՍՏՈՍ էր Հռոմայեցի բարեսէր զօրական, որ պատերազմէն դառնալու ատեն Կղոդեայ զօրապետին հետ տեսաւ օդին մէջ սառնանման խաչ մը, ուսկից ձայն լսեց, որ դառնայ 'ի խաչեալ Փրկիչն ։ Երբոր տեսաւ 'ի Հռոմ ուրիշ տեսիլք հրեշտակի՝ մկրտեցաւ, և բոլոր ապրանքը բաժնեց աղքատաց ։ Իսկ զօրապետը լսելով հրամայեց որ զոհէ կռոց . բայց նա մերժելով քաջութեամբ վկայեց ճշմարտութեան : Ուստի սաստիկ ծեծով և տանջանքով դըրին գլուխը հրացեալ սաղաւարտ մը և թևին տակը շամփուր · այլ հրեշտակ Տեառն ողջ պահեց սուրբը ուրիշ տանջանքներէն ալ : Յետոյ կրակի վրա տարածելով նահատակեցաւ քսանըեօթն տարւան առանց մէկ մազն երելու :

ՅՈՒՍՏԻԱՆՈՍ Ա. Մեծն՝ էր ինքնակալ արևելեան , քեռորդի Յուստինոսի Ա. կայսեր , որ թագաւորեց յամի 527 . և մէկէն սկսաւ քաջութեամբ զսպել ապստամբներն ու տարածել հռոմէական պետութիւնն մինչև բարբարոսաց աշխարհքը : Վանդալներուն յաղթելով Գոթաց տէրութիւնը վերուց յԻտալիոյ . և ինքնակալութիւնը կարգաւորելու համար դրաւ տասը գիտուն իրաւագէտք , որոնք պիտանի սահմանադրութիւններն հաւաքեցին յօրինելով տասուերկու մատեան կամ գիրք օրինաց . և իրենց սահմանադրութիւններն ալ միատեղ դնելով եղան աղբիւր ամենայն օրինաց և իրաւաբանութեան : Յուստինիանոսի դատաստանագիրքը ամէն դատաստանատանց մէջ գործածուելով անմահացուց այս կայսեր անունը մինչև հիմա : Յետոյ վասն հաստատութեան ուղղափառ կրօնի գումարել տուաւ 'ի 553 զհինգերորդ ընդհանուր ժողովն 'ի Պօլիս : Կանգնեց փառաւոր եկեղեցին Այա Սօֆիա անուամբ Իմաստութեան Աստուծոյ . նաև այս ահաւոր տաճարը կատարելէն ետև փառք տալով կանչեց Յուստիանոս . " Յաղթեցի քեզ Սողոմոն " . այս տաճար հիմա մզկիթ փոխուած է Սուլթան Մէհէմմէտին ձեռքով : Իսկ կայսրն երեսունըութ տարի առաքինութեամբ թագաւորելէն ետև վախճանեցաւ ութսունըչորս տարուան յամի 565 ։

ՅՈՒՍՏԻՆՈՍ Ա. ինքնակալ կայսրն էր որդի հողագործի զինուոր գրեալ վասն աղքատութեան ։ Բայց քաջութեամբ և հանճարով առանց գրութեան այնչափ զօրացաւ, մինչև հասաւ զինուորական աւագութեան. և ապա արժանի եղաւ կայսերութեան 'ի 518 ։ Սա նախ ջանացաւ տեղեակ ըլլալ կայսերական օրինաց և իրաւանց, և դնելու արդար օրէնքներ հանդերձ բարեկարգութեամբ ազատ և գոհ պահելով ժողովուրդը ։ Պաշտպան ըլլալով Քաղկեդոնի սուրբ ժողովոյն ետ դարձուց աքսորեալները, նաև ջանահնար եղաւ միաբան և խաղաղ պահել արևելեան և արևմտեան եկեղեցիները ։ Աստի խնդրեց և առաւ Որմիզդ պապէն ընդհանուր կոնդակ հաւատոյ հասարակաց և ստորագրել տուաւ ժողովով հայրապետաց, որով շատ գովելի եղաւ համբաւը ։ Յետոյ հրովարտակ հանեց Արիանոսաց դէմ. որուն համար Թէոդորիկոս արքայն Ոստրոգոթաց դառն հալածանք հանելով արևմուտք ուղղափառաց դէմ մեծ վնաս հասուց սուրբ եկեղեցւոյ ։ Յամի 526 սաստիկ երկրաշարժութիւն ըլլալով կործանեցաւ Անտիոք քաղաքը, որուն համար շատ տրտմեցաւ կայսրն. մինչև մերկացաւ ծիրանին ու խարազն հագաւ, և լռութեամբ ապաշխարեց, որպէս զի անցնի բարկութիւն Տեառն ։ Նաև տեսնելով քեռորդւոյն ուշիմութիւնը որոշեց իրեն յաջորդ, որ եղաւ մեծահռչակ Յուստինիանոս Ա. ։ Իսկ ինքն բարեբարոյ կայսրն Յուստինոս թագաւո րեալ տասը տարի մեռաւ բարեպէս եօթանասունըեօթ տարուան յամի 527 ։

ՅՌԵԹԷՈՍ Աթենացի էր իմաստուն վարժապետ և սքանչելի բանիբուն վարդապետ Դիոնեսիոսի Արիսպագացւոյն արտաքին և աստուածային գիտութեանց համար ։ Նա ներկայ ըլլալով Տիրամօրը ննջման՝ առաքեալներուն առջև անանկ գերապանծ և աստուածիմաստ վարդապետութեամբ գովաբանեց զԱստուածամայրն՝ որ հիացուց զանոնք ։ Գրեց խորին իմաստով աստուածաբանական ճառեր , ինչպէս որ կը պատմէ գովութեամբ սուրբն Դիոնեսիոս մականուանելով զերանելին Բարեփառ Առաջնորդ մեր ։ Սպանիացիք շատ կը պատուեն յարգութ̃բ զսուրբ Յռեթէոս համարելով իրենց առջի եպիսկոպոսներուն մէկը ։ Իբր զի երբոր Պօղոս առաքեալ ուշացաւ երթալու 'ի Սպանիա , իրեն փոխանորդ սուրբ Յռեթէոսը ձգեր է հոն . և ինչպէս առաջ ինքն էր եպիսկոպոս Աթենացւոց՝ իրեն փոխանորդ ձգեր էր զԴիոնեսիոսն եպիսկոպոս յԱթէնս ։

Յռեթէոս սոփեստ հոգելից րաբուն
Շքեղ լուսաբուղխ քնար սուրբ Հոգւոյն .
Սաւ 'ի վառ գովից լեզուաւ հրեղինաց
Զերկնի և երկրի զմայրն հասարակաց ։
Հրազինեալ լեզու Աստուածախօսին
Փայլեալ 'ի գովեստ Տիրամօր կուսին
Պերճացաւ 'ի գունդ սուրբ Առաքելոց ,
Սխրացան հրեշտակք և դասք արդարոց ։

Ն.

՛ՆԱԲՈՒԳՈԴՈՆՈՍՈՐ Մեծն էր մեծազօր արքայ Բաբելացւոց, որ յաղթելով ՛Նեքաւովայ արքային Եգիպտացւոց տիրեց նաև Հրէաստանի և Երուսաղէմի։ Կործանեց զտաճարն Աստուծոյ, և գերի տարաւ կապանօք զՍեդեկիա թագաւորն ու Յուդայի ազգը։ Այսպիսի անկարծելի յաջողութեանց համար հպարտացաւ արքայն, և ամբարտաւանութեամբ կանգնեց իրեն ոսկիէ արձանը բարձր վաթսուն կանգուն և լայնքը վեց կանգուն. և սաստիկ հրաման հանեց որ ամէնքը երկրպագութեամբ պաշտեն զայն։ Այս անօրէն հրամանին դէմ կեցան իրեք մանկունք աստուածապաշտք, Սեդրաք, Միսաք և Աբեդնագով, որոնք արքային անգութ հրամանաւ ընկան վառած հնոցին մէջ։ Բայց աստուածային զօրութեամբ առանց այրելու ուրախ ելան կրակէն օրհնելով Ստեղծողն որ կռապաշտներն այրեց, ու սասանեցուց թագաւորը։ Իսկ նա անխրատութեանը համար պատժուելով գազանի կերպարանք փոխեցաւ եօթը տարի. անկէց ետև նորէն դարձաւ առջի մարդկութեան կերպարանը։ ՛Նաբուգոդոնոսոր սարսափելի երազով ալ տեսաւ պատկերք մը, որուն գլուխն էր ոսկի, կուրծքն ու թևերը արծաթ, մէջքն ու ծունկերը պղինձ, և ձիւերն երկաթ, իսկ ոտքին կէսն ալ խեցեղէն ։ Յետոյ տեսաւ որ լեռնէն քար մը փրթաւ, ու զարկաւ արձանին փշրեց և կորուց ։ Այս երազը միայն Դանիէլ մարգարէն կարաց մեկնելու այսպէս ասելով. Արձանին չորս նիւթերը կը յայտնեն չորս մեծամեծ տէրութիւններ. ոսկին է Ասորեստանեայցը, որուն պիտի յաջորդէ Պարսից տէրութիւնը, որ է արծաթն. յետոյ պետութիւնն Յունաց կամ Աղեքսանդրի, որ է երկաթն. ապա տէրութիւն Հռոմայեցւոց, որ է խեցեղէն ոտքն տիրող և կոխիչ մեծ մասին երեսաց երկրի ։ Իսկ վէմն որ առանց ձեռքի փրթաւ՝ կը գուշակէր ըստ սրբոց Հարց՝ զՔրիստոս ծնեալ 'ի կուսէն, և քարոզութեամբ աշակերտաց կործանող կռոց հեթանոսաց, տարածելով քրիստոնէական թագաւորութիւնը ամէն աշխարհ մինչև 'ի կատարած աշխարհի ։ Նաբուգոդոնոսոր հաճեցաւ Դանիէլի մեկնութեանը և մեծապէս պատուեց զինքն փառաւորելով զանունն երկնաւոր Թագաւորին, մանաւանդ իրեք մանկանց հրաշքը տեսնելէն ետև. որ և խոնարհութեամբ կը գոչէր. “Արդ ես Նաբուգոդոնոսոր օրհնեմ և առաւել բարձրացուցանեմ և փառաւոր առնեմ զարքայն երկնից, զի ամենայն գործք նորա ճշմարիտ են, և շաւիղք նորա իրաւունք. և զամենեսեան՝ որք գնան ամբարտաւանութեամբ՝ կարող է խոնարհեցուցանել,, ։

Նաբուգոդոնոս դիւաշունչ գազան
Կարծէր զինքն անմահ դից յար և նման.
Օ երթ լեռան ահագին յամպս ծառացաւ
Անդէն ջաղջախմամբ յանդունդըս սուզաւ ։

Բամբէ զաղփաղփուն պետից վիճակին
Տես ամբարտաւանք ուստի՛ ուր գլորին .
Որ զանձըն պաշտել տայր իբրև աստուած
Կորագլուխ հայցմամբ պաշտէ զԼ՛ն փառաց :

ՆԱԲՈՒԶԱՐԴԱՆ դահճապետ՝ էր զօրագլուխ Նաբուգոդոնոսորայ , որ յետ տիրելոյ Երուսաղէմի տաճարին ամէն գեղեցիկ և լաւ զարդերը և ամանները ղրկեց 'ի Բաբելոն . իսկ մնացորդները այրեցան : Վասն զի Նաբուզարդան ըստ հրամանի թագաւորին կրակ ձգեց քաղաքին ամէն կողմն ու այրեց բոլոր՝ կործանելով պարիսպը , աշտարակները և ամէն երևելի տեղերը քաղաքին և տաճարին : Սա հանեց բանտէն Երեմիա մարգարէն և յանձնեց բարեպաշտ Գոդողիայ իշխանին ձեռքը , որ հայրաբար կը խնամէր զսուրբ մարգարէն և բոլոր մնացած ժողովուրդը , մինչև շատ ցրուած Հրէայք դարձան յԵրուսաղէմ :

ՆԱԶԱՐԻՈՍ, ԿԵԼՍԻՈՍ, ԳԵՐՈՒԱՍԻՈՍ, և ՊՌՈՏԱՍԻՈՍ ս՟բ վկայք՝ էին ժամանակակից Առաքելոց : Նազարիոս էր Հռոմայեցի , որուն ծնողքն մկրտեալ էին Պետրոս առաքելէն , իսկ ինքն սուրբ Լինոսէն . քսան տարուան էր երբ ելաւ կը քարոզէր յԻտալիա . և գտաւ երկու եղբարք կապած վասն անուան Քրիստոսի Գերուասիոս և Պռոտասիոս . և երբոր ուզեց անոնց ընկեր ըլլալ , իմացան քրիստոնէութիւնը , հալածեցին քաղաքէն : Իսկ նա առաւ իրեք տարուան տղայ մը Կելսիոս անուամբ գնաց Միլան . և հոն գտաւ առջի կապեալներն ու ինքն ալ կապեցաւ կռապաշտներէն : Որոնք սոլով և բանտով շատ տանջելէն ետև նահատակեցին զսուրբ Նազարիոս և Կելսիոս տղայն ։

Իսկ երանելին Գերուասիոս ծեծով նահատակեցաւ · նոյնպէս Պռոտասիոս բրածեծ ըլլալով գլխատեցաւ վասն հաւատոյ ։ Այս երկուսին մարմինը արինաթաթախ և անապական գտաւ սուրբ Ամբրոսիոս աստուածային յայտնութեամբ իրեքհարիւր տարիէն ետև 'ի Միլան քաղաքը · ուր կոյրի մը աչք լուսաւորեցաւ և շատ դիւահարներ ալ բժշկեցան այն սուրբ նշխարքներուն մօտենալով ։

ՆԱԶՈՎՐԱՑԻՔ կամ ՆԱԶԱՐԱՑԻՔ էին ուխտաւորք և պահեցողք, զի եբրայական բառս Նազ՟ր.՝ կը նշանակէ ժուժկալ, որոնք ոչ գինի, և ոչ արբեցուցող խում կը խմէին, ոչ մեռելի կը մօտենային, և ոչ մազերնին կը կտրէին, կամ կ'ածիլէին ։ Ասոնք էին մշտնջենաւոր և մինչև 'ի մահ ուխտաւորք, ինչպէս էր Սամփսոն, որ ուխտին դէմ գլուխը ածիլելուն համար՝ մատնեցաւ այլազգեաց ձեռքը թշուառութ՟ք ։ Նոյնպէս Գաբրիէլ գնաց Զաքարիային գուշակեց թէ Յովհաննէս մշտնջենաւոր Նազովրեցի ուխտաւոր պիտի ըլլայ ։ Իսկ ժամանակաւոր Նազովրացիք էին նոքա որոնց երբոր ուխտադրութեան ժամանակը կը լմննար՝ նոյն օրը կ'երթային քահանային, որ կը տանէր զիրենք Վկայութեան խորանին դուռն մատուցանելով պատարագ Տեառն տարևոր գառն մի և որոջ մի տարևոր վասն մեղաց և խոյ մի, նաև բաղարջ և իւղախառն քաքար ։ Յետոյ կ'ածիլէին գլուխնին ու մազերը խորանին վրայ կ'այրէին · անկէ ետև Նազովրացիք կը քակուէին ուխտէն ։ Իսկ Պաղեստինէն դուրս գտնուողներն միայն գլուխնին կ՚ածիլէին , և ուրիշ ծէսերը կ՚երթային տաճարին մէջ կը կատարէին , ինչպէս որ ըրաւ Պօղոս առաքեալ՚ի Կենքրէ ։ Նազովրացի կոչեցաւ նաև փրկիչն մեր Յիսուս · զի ըստ մարգարէութեան Եսայեայ՚ի Նազարէթ քաղաքը մնաց · ուստի աշակերտներն ալ մականուանեցան Նազովրացիք ։

ՆԱԶՈՎՐԵՑԻՔ էին Նազարեան աղանդաւորք Բ դարուն , որոնք հրէութենէ դարձան ու Պետրոսի անուամբ սուտ աւետարանով կը քարոզէին թէ բաւական չէ հաւատալ Քրիստոսի , հապա պէտք է թլփատիլ և հին օրէնքը պահել ։ Առաքեալք ատոր համար ժողովք ըրին յԵրուսաղէմ , և գրեցին քրիստոնէից , թէ հարկաւոր չէ պահել թլփատութիւն և Հրէից հին ծէսն · այլ բաւական է հեռու կենալ պոռնկութենէ , արիւնէ և խեղդած կենդանւոյ մսէն ։ Յամի 197 կայսրն Ադրիանոս հրամայեց որ Հրեայք վասն նոր ապստամբութեան աքսորուին Հրէաստանէն բոլորովին · ան ատեն անոնց ամէն ծէսերը և նշանները խափանեցան ։ Իսկ ոմանք հրէական յամառութեամբ ծածուկ պահելով հին օրէնքը՝ մականուանեցան Նազովրացիք , կամ Նազարեանք · այս ինքն հերձեալք ։ Այսպէս կ՚անուանէին նաև այն քրիստոնեայք , որք Քրիստոսի հաւատքը կը միացընէին հին օրէնքին հետ , և մկրտութեան սուրբ խորհուրդը թլփատութեան հետ · ատոր համար նզովեցան աշակերտներէն Քրիստոսի ։

ՆԱԹԱՆ մարգարէ գոլով սիրելի և ընտանի Աստուծոյ՝ եղաւ յորդորող և կառավարիչ Դաւթի ամէն երևելի գործքերու մէջ յաստուածակոյս կողմանէ ։ Նաև անաչառ յանդիմանելով անոր առաջը դրաւ պոռնկութեան չար մեղքը և Ուրիային սպանութիւնը , մինչ զի Դաւիթ սարսափելով աղաղակեց " Մեղայ Տեառն " . իսկ Նաթան մխիթարելով ասաց . " Տէր անցոյց զքև զմեղս քո , և մի՛ մեռցիս " ։ Ուստի Նաթան եղաւ միջնորդ Աստուծոյ և Դաւթի մէջ , նաև միշտ սիրական իրարու հետ ։

ՆԱԹԱՆԱՅԷԼ կը թարգմանի պարգև Աստուծոյ , և էր աշակերտ Քրիստոսի 'ի Կանայ Գալիլեացւոց ։ Յիսուս երբոր տեսաւ զինքն ասաց . " Ահա արդարև Իսրայէլացի յորում նենգութիւն ոչ գոյ " ։ Եւ նա դաւանելով ասաց . " Ռաբբի՛ դու ես որդի Աստուծոյ , դու ես թագաւորն Իսրայէլի " ։ Ան ատեն խոստացաւ Յիսուս իրեն , թէ որ այս հաւատքով մնաս հաւատարիմ , պիտի տեսնես մեծամեծ սքանչելիք . ինչպէս որ եղաւ յետոյ ։ Ոմանք զսա կը նոյնացընեն Բարթուղիմէոսի հետ ։ Տե՛ս 'ի կարգին ։

Վեհ Նաթանայէլ պարգև տէրունւոյն
Աննենգ առձայնեալ յանսուտ բերանոյն .
Արդար Իսրայէլ զաւակ Յակոբայ
Ի փրկչէն գովեալ գերապանծ վկայ ։
Հաւատաց անշուշտ տիրական բանից
Արժանի գտաւ մեծագոյն հրաշից .
Ընտրեալ առաքեալ քարոզ լուսակիր
Ե՛ քեզ հրաշագործ ջահ աստուածակիր ։

ՆԱԹԱՆԻՄԱՑԻՔ էին հասարակ սպասաւորներ Խորանին և տաճարին Աստուծոյ , այս ինքն փայտ տանող և ջրկիր զոհերուն և քահանայից համար ։ Յեսու տուաւ այս պաշտօնը նախ Գաբաւոնացւոց․ յետոյ տուին Քանանացւոց, որ մնացեր էին Իսրայէլացւոց ծառայելու համար ։ Գաւիթ և Սողոմոն դրին զանոնք վասն ծառայելու տաճարին ու քահանայից․ և այս պատճառաւ անուանեցան Նաթանիմացիք, այս է Նուիրեալք ։

ՆԱԽԱԴԱՄԵԱՆՔ էին հին թանձրամիտ աղանդաւորք, որ կը պնդէին առանց հիման՝ թէ Ադամէն առաջ կար ուրիշ Ադամ, որուն զաւակներն էին Նախադամեանք, և այլն ։ Իսահակ ոմն Նախադամեանն յամի 1655 տպագրեց ՚ի Հոլանտա իւր ցնորական գիրքը․ ուր կը ջանայ հաստատել յիմարութեամբ, թէ Ադամէն շատ առաջ կար հին Ադամ, որմէ եղան հեթանոսները․ իսկ Եբրայեցիք էին ծնունդ ետքի Ադամին ։ Նաև կը դնէր ուրիշ աշխարհք, ուր չկորսեց ջրհեղեղն․ և մեղքն Ադամայ չի տարածեցաւ այն աշխարհքը Նախադամեանց վրան, և այլն ։ Այս չար աղանդը և աղանդաւորքն արդէն նզովեալ յեկեղեցւոյ կորան ։

ՆԱԽԱՀԱՐՔ կոչին սուրբ նահապետք հին եկեղեցւոյ․ որոնք վասն աստուածասէր առաքինութեանց արժանապէս տօնելի եղան իբրև վկայ հանդերձեալ ճշմարտութեան, որ կատարեցաւ ՚ի Քրիստոս և ՚ի Նոր եկեղեցին ։ Որոնց համար կը գրէ Պօղոս․ “ Սոքա ամենեքին վկայեալք ՚ի հաւատոյն՝ չև ևս ընկալան զաւետիսն, Աստուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ՝ զի մի՛ առանց մեր կատարեսցին ” ։ Որպիսի են՝ Ադամ, Աբէլ, Աբրահամ, Իսահակ, Յակոբ, Յովսէփ, Մովսէս և այլք ։ Տէս 'ի կարգին ։

ՆԱԽԱՍԱՀՄԱՆԱԿԱՆՔ էին աղանդաւոր ուրացողք մարդկային ազատութեան 'ի Ե դարու, որոց գլուխ եղաւ Ղուկիդոս երէցն ։ Սոքա կը քարոզէին՝ թէ Աստուած բացարձակ վճռով սահմաններ է որ ոմանք փրկուին, և ոմանք կորսուին . ուստի ամէն գործք թէ՛ բարի և թէ՛ չար հարկաւ կը գործեն առանց ազատութեան, և այլն ։

Գոտէսկաղոս մոլորեալն նորոգիչ եղաւ այս աղանդին, որ կ'ըսէր թէ պէտք չէ բարեգործութիւն, վասն զի Քրիստոս միայն վասն Նախասահմանելոց մեռաւ, որոնք հարկաւ կը փրկին առանց արդեանց ըստ վճռոյն ։ Ասոնք նախ դատապարտեցան 'ի ժողովն Արելատայ 'ի 475 . ապա շատ անգամ նզովեցան ։

ՆԱՀԱՊԵՏ Վարդապետ աշակերտ Եղիազարու, նստաւ կաթուղիկոս յԷջմիածին 'ի 1691 . որ գոլով բարեսէր շատ շինութիւն և բարեկարգութիւն ըրաւ ։ Սա կանգնեց Շողակաթի եկեղեցին և զանգակատունը . ապա գրեց թուղթ առ պապն Իննովկենտիոս ԺԲ ։ Ասոր համար հակառակասէր վարդապետք ձգեցին կաթուղիկոսն աթոռէն, ու դրին Ստեփանոս վարդապետը 'ի 1695 ։ Որ անհանդարտ բնութեանը համար տասն ամիսէն ետև վերուցին բանտը դրին, ուր մեռաւ ։ Ապա նորէն նստեցուցին Նահապետ կաթուղիկոսն, որ ուրախակցութեան և շնորհաւորութե̃ թուղթ առաւ Իննովկենտիոս պապէն հանդերձ ընծաներով և փառաւոր աթոռով ։ Որուն գրեց շնորհակալութեան և հպատակութեան նամակ սիրոյ ։ Նոյնպէս յաջորդն Իննովկենտիոսի Կղեմէս ԺԱ. գրեց նամակ առ Նահապետ կաթուղիկոս յորդորելով զնա մնալ միշտ հաստատ 'ի սէր միաբանութեան ընդ հռոմէական աթոռոյն ։ Բայց կաթուղիկոսը շուտով վախճանեցաւ 'ի 1705 . որուն յաջորդեց Աղէքսանդր Ջուղայեցի ։

ՆԱՆԱՅ էր սարկաւագապետ Ասորի, և բանիբուն փիլիսոփայ, որ Բագարատ իշխանին խնդիրքովը յօրինեց մեկնութիւն Յովհաննու աւետարանին՝ թարգմանելով Հագարացւոց լեզուովն 'ի 838, որ կը հասկնար Բագարատ. և յետոյ թարգմանեցին հայերէն ։ Նանայ սարկաւագ 'ի 855 գերի ընկաւ Հագարացւոց, և շատ չարչարանք քաշեց հաւատքի համար ։ Ապա 'ի 862 ազատելով գնաց Զաքարիա կաթուղիկոսին, որուն թուղթ գրեց Փոտ պատրիարգն՝ Քաղկեդոնի ժողովքին ճշմարտութե՟ համար ։ Նանայ այս թուղթին շատ հաւանելով յորդորեց կաթուղիկոսն որ ընդունի այն սուրբ ժողովքը ։ Ապա միատեղ գնացին առ մեծ իշխանն Աշոտ, որ գումարել տուաւ Շիրակվանու ժողովը, ուր հաստատեցաւ ուղղափառութիւն սուրբ ժողովքին Քաղկեդոնի ։

ՆԱՆԷԱ էր չաստուածուհի Պարսից, և ըստ ոմանց Աֆրոդիտէ կամ Անահիտ, որ ունէր մեծագանձ տաճար 'ի Պարսկաստան ։ Ասոր համբաւը երբոր լսեց Անտիոքոս Եպիփանէս արքայն Ասորւոց ջանացաւ որ կողոպտէ տաճարը . ուստի կեղծաւորեցաւ որ փեսայ ըլլայ կուռքին, կամ էրիկ չաստուածուհւոյն լրբութեամբ մօտենալով անոր ։ Քուրմերն իմանալով նորա միտքը՝ խօթեցին զինքը տաճարը ․ երբոր մօտեցաւ կուռքին՝ փակեցին դուռն ու պատուհանէն քարեր նետելով չարաչար սատկեցուցին քովի մարդիկներովը ։ Այս կտոր կտոր ընելով՝ գլուխնին պարսպին վրայէն նետեցին զօրքին մէջ ․ ուր ամէնքը սարսափելով ցիրուցան եղան ․ զի Անտիոքոս շատ չարիք ըրեր էր յԵրուսաղէմ Աստուծոյ դէմ, անոր համար այսպէս կորաւ չարեօք ։

ՆԱՐԿԻՍՈՍ էր սուրբ եպիսկոպոս Երուսաղէմի , որուն առաքինութեանցը նախանձելով իրեք չարասէր թշնամիք ջանացան երդումով աղտոտել երանելոյն շնորհափայլ անունը ։ Ուստի մէկէն պատժուեցան ․ վասն զի մէկն որդնալից սատակեցաւ , մէկալը դիւահարեցաւ , և երրորդը կուրացաւ , ու ամենուն յայտնեց անիրաւ զրպարտութիւնը ։ Իսկ սուրբ հայրապետն անարատ վարքով առաքինացաւ մինչև 'ի խոր ծերութիւն աւելի քան հարիւր տարի , և նոյն սրբութեամբ հանգեաւ 'ի Տէր յամի 212 ։

Այս ապիրատից բաժին բաժակի
  Վասն աքացողաց ընդդէմ խթանի ․
  Որ ոք յանդգնեալ հարկանի վիմին
  Անդէն խորտակեալ ջաղջախմամբ փշրի ։
Չարախօսք այսպէս չարատանջ կորեան
  Այլոց լարեցին հաղբս ինքեանք անկան ․
  Զի զոր ինչ նիւթէ ոք վասն ընկերին
  Թէ՛ բարի թէ՛ չար հանդիպի նմին ։

ՆԱՒՈՒՄ ըստ Եբր ․ կը նշանակէ մխիթարիչ կամ ապաշխարող , որ էր երկոտասան փոքրամատեան մարգարէից մէկը Շմաւոնի ցեղէն ։ Ժամանակակից էր Եսայեայ մարգարէին · այլ և իննըսուն տարի Յովնանէն ետև եղաւ երկրորդ քարոզիչ, և գուշակող կործանման Նինուէի մեծ սպառնալեօք ։

Իսկ մարգարէութիւնը համառօտած է յերեք գլուխ · բայց ազդողական է պայծառ նկարագրութեամբ և զօրաւոր օրինակներով ։ Ինքն վախճանեցաւ իրեն երկիրը ։

ՆԱՓՈԼԷՈՆ Պօնափարթէ էր քաջայաղթ զօրավար և կայսր Գաղղիացւոց Քորսիքացի · ծնեալ 1769ին · Հայրն էր խորհրդական քաղաքին, որ դրաւ որդին զինուորութեան ուսման երբոր եղաւ տասնըհինգ տարուան ։ Ապա յառաջանալով գնաց Փարիզ խռովութեան ժամանակը · և քաջագործութեամբ եղաւ զօրավար · նաև 1796ին սպարապետութեամբ անցաւ յԻտալիա և երևելի քաղաքներուն տիրեց Միլանին, Հռոմայ, Նափոլիոյ, և այլն ։ Անկէ ետև ելաւ Վիենայի վրա · բայց յաղթուելով Վենետիկը խոստացաւ Նեմցէներուն ու հաշտուեցաւ 'ի 1797 · և յետոյ տիրեց ու տուաւ անոնց Վենետիկը ։ Նափոլէոն երբոր դարձաւ Փարիզ, տէրութիւնը հեռացընելով զինքն անկէ ղրկեց յԵգիպտոս նաւերով և քառասուն հազար զօրքով 'ի 1798, ուր քաջութեամբ տիրեց ։ Բայց Անգղիացիք օգնելով Օսմանեանց պաշարեցին Եգիպտոս · Նափոլէոն ալ մեծ ճարտարութեամբ փախաւ անկէց 'ի Փարիզ 1799ին ։ Շատ գովելի եղաւ Գաղղիացւոց առջին խելքին և քաջութեանցն համար · մինչ զի հաստատեցին զինքն գլուխ իրեք հիւպատոսաց, որք կը կառավարէին տէրութիւնը 'ի 1800ին ։ Երկու տարիէն ետև ալ բացաւ եկեղեցիներն ու բարեպաշտութեամբ իրենց աթոռը դարձուց փախած եպիսկոպոսները և քահանաները այլովքն հանդերձ ։ Բոլոր օգտակար բաներուն նայելով այնչափ սիրելի եղաւ ազգին, մինչև անուանեցին Ինքնակալ և յաջորդ մեծին Կարոլոսի ։ Յետոյ հրաւիրեց 'ի Փարիզ զպապն Պիոս Է. և պսակեցաւ կայսր՝ անուանակոչեալ Նափոլէոն Ա. 'ի 1804. իսկ տարի մը ետև կոչուեցաւ Թագաւոր Իտալիոյ. և ասոր համար ալ պսակեցաւ 'ի Միլան ոսկի պսակաւն ըստ հին սովորութեան ։ Ի 1806 երբոր դարձաւ 'ի Փարիզ, Գաղղիացիք մեծապէս շնորհակալ եղան. նա ալ շատ փոփոխութիւներ ըրաւ Եւրոպայի մէջ ։ Բրուսիան դէմ եկաւ ասոր. և նա մէկէն հարիւր յիսուն հազար զօրքով ելաւ վրան ու տիրելով Պեռլին մայրաքաղաքին խոնարհեցուց անոր թագաւորը և հաշտեցաւ հետը արիապէս ։ Յետոյ անցաւ 'ի Սպանիա թագաւորեցուց իր Յովսէփ եղբայրը հոն. և զՄուրատ քեռայրն թագաւոր դրաւ 'ի Նափոլի, նաև տիրեց Փորթուգալայ աշխարհին ։ Ի 1809 Նափոլէն պատերազմելով յաղթեց Նեմցէներուն և մտաւ Վիենա մայրաքաղաքը ։ Ֆրանչիսկոս կայսրն աղջիկը տուաւ անոր կին և հաշտուեցաւ ։

Ի 1812 Պօնափարթէն ելաւ Ռուսներուն վրա. որուն դիմացն ելաւ քաջ զօրավարն Քութուսով, և թող տուաւ որ մտնէ Մոսկով մայրաքաղաքն որ իրենք այրեր էին ։ Նափոլէոն երեսունըհինգ օր հոն ուշանալով ցուրտը կոխեց, ու սոսկալի ջարդ կերան Ռուսներէն. ինքն հազիւ ընկաւ 'ի Վարսաւիա, և հինգհարիւր հազար զօրքը կորուց ։

Տարին մը ետև նորէն ուզեց Ռուսաց վրա երթալու․ բայց դաշնագիր տէրութիւնքն միացեալ Ռուսաց հետ յաղթեցին Նափոլէոնին ։ Ան ատենը Գաղղիացիք անձնատուր եղան դաշնագրաց, որոնք յաղթանակաւ մտան Փարիզ, Իսկ Նափոլէոն հրաման գրեց զօրքին որ հնազանդին Պուռպօնեան օրինաւոր Թագաւորաց․ Իւր համար Թագաւորներն ալ ներեցին իրեն, և հրաման տուին որ երթայ Էլպա կղզին անկախ տիրէ մինչև 'ի մահն ։ Նափոլէոն աղէկ շինութիւններ սկսաւ ընել Էլպայի մէջ․ սակայն ծածուկ խօսք դրաւ Գաղղիայի ապըստամբներուն հետ ու 1815ին անցաւ Գաղղիա․ իսկ Լուդովիկոս ԺԸ․ օրինաւոր Թագաւորը հալածական փախաւ 'ի Հօլանտա ։ Դաշնագիր Թագաւորները դարձան 'ի Փարիզ և բռնեցին Պօնափառթէն աքսորեցին 'ի հեռաւոր կղզին սուրբ Հեղինէի դնելով հետը իրեք զօրավար, վիրաբուժը, և տասներկու ծառայ 'ի 15․ Հոկ․ 1815 ։

Ուր կապեցին իրեն Թօշակ հարիւր հազար Ֆիօրին․ հօն ինքն իր վարքը կը գրէր, բայց ունէր ստամոքսի տկարութիւն․ երբոր ցաւը զօրացաւ 'ի 1817 խնդրեց ուղղափառ քահանայ և Իտալացի բժիշկ ։ Ֆէշ կարդինալն իւր քեռին՝ ղրկեց իրեն երկու վարդապետ և բժիշկ, որ շատ պատուելով զանոնք ընդունեց և մխիթարուեցաւ․ նաև միշտ կըսէր․ “ Չեմ անհաւատ և անկրօն․ այլ հաւատամ բոլորով սրտիւ յԱրարիչն իմ Աստուած ” ։ Ապա 'ի 15 ապր․ 1821 գրեց կտակը․ յետոյ քահանայն տուաւ իրեն վերջին օծումն, ինչպէս որ խնդրեց ասելով․ “ Հաւատամ յԱստուած Ճշմարիտ, և կամիմ մեռանիլ 'ի հայրենի ուղղափառ կրօնիս իմում. ծնայ յուղղափառ հաւատս. և կամիմ լնուլ զամենայն պարտս... և ընդունիլ զամենայն նպաստս՝ զոր մատակարարէ եկեղեցին սուրբ „ :

Նա ապա ՚ի 5 մայ. վախճանեցաւ բարի մահուամբ յիսունեւերկու տարեան, զոր թաղեցին մեծահանդէս յուղարկաւորութեամբ ըստ սուրբ ծիսից : Իսկ ՚ի 1840ին մարմինը զմռսեալ հանեցին տարին Փարիզ, փառաւորապէս հանգուցին շիրմով : Նմանապէս իրեն որդին Ֆրանչիսկոս Նափոլէոն մեռաւ բարեպաշտութեամբ քսան տարեան, և թաղեցաւ ՚ի Վիենա կայսերաց գերեզմանը յամի 1832 :

Այս փառասիրաց հուսկ յետին պայման
  Բարձրանալ կարծեն մինչ յերկնից սահման.
  Սակայն չհանդուրժեալ բաղդին արկածից
  Ի կոր կործանին հեծեն ցաւալից :
Անց ՚ի Հեղինեայ կղզի տարաբնակ
  Տես զՍաստիչն հզօր փակեալ ՚ի վանդակ,
  Ուսի՛ր շատանալ որչափ քեզ տուան
  Զի մի՛ անկցիս հէք յաղէտ անդարման :

ՆԵԲՐՈՎԹ էր որդի Քուշայ, թոռն Քամայ, զօրաւոր հսկայ, որ եղաւ գլուխ և առաջնորդ աշտարակը շինողներուն : Անկեց եւ բռնանալով տիրապետեց յԱսորեստան, և թագաւորեց ՚ի Բաբելոն : Ոմանք կ՚ անուանեն զսա Բէլ կամ Բահաղ՝ նախահայր Նինոսի, և պատճառ կռապաշտութեան : Վասն զի կը պատմի թէ ամբարտաւանն Նեբրովթ զօրանալով ազգապետաց վրան՝ պաշտել տուաւ իրեն կուռքը :

Սակայն քաջն Հայկ նախահայրն Հայոց Նոյէն կրթուած և աստուածապաշտ ըլլալով, երես դարձուց Նեբրովթէն, և ժողվեց թոռներն ու ցեղը՝ ելաւ չարին վրա · և ճարտարութեամբ քաշեց ուժով երեքթևեան նետն, ու սրտին հասուց, մէկէն սատկեցուց · իսկ որդիքը պաշտեցին զինքն կուռքի պէս ։

ՆԵԵՄԱՆ փառաւոր իշխանն էր զօրապետ Ասորւոց թագաւորին, որ բորոտելով գնաց ՚ի Սամարիա Եղիսէ մարգարէէն բժշկուելու համար ։ Եղիսէն ալ պատուիրեց իրեն, որ երթայ եօթն անգամ լուացուի Յորդանան, որ բժշկութիւն գտնէ ։ Նեեման երբոր գնաց լուացուեցաւ, մէկէն մարմինն ըռըմտնալով եղաւ տղու մարմինի պէս ։ Ու շուտ մը դարձաւ շնորհակալութիւն ըրաւ Եղիսէին շատ ընծաներ տալով, բայց նա բան մը չառաւ ամենևին ։ Ան ատենը Նեեման, շնուելով ասաց · “Ահա գիտացի թէ ոչ գոյ Աստուած յամենայն երկրի, բայց միայն ՚ի մէջ Իսրայէլի „ ։ Ապա առաւ երկու բեռ հող Հրէաստանէն որ այն հողին վրա յԱսորեստան Աստուծոյ զոհ մատուցանէ ։ Ինչպէս որ դշխոյ Հեղինէն ալ Երուսաղէմայ հողէն տարաւ Հռոմ՝ և սուրբ Խաչին եկեղեցին նոյն հողին վրա կանգնեց ։

ՆԵԵՄԻ էր Յուդայի ցեղէն կամ թագաւորական տնէ, և ըստ ոմանց քահանայական ցեղէ, փառաւոր իշխան Հրէից, ընկեր Զօրաբաբէլի, և տակառապետ Արտաշէսի արքային, որուն հրամանաւ իշխան եղաւ, ու կը շինէր Երուսաղէմի պարիսպն օգնելով ազգին, 454 տարի Քրիստոսէն առաջ ։ Անգադար կը խրատէր որ լաւ պահէն Աստուծոյ օրէնքը , թողուն իրենց այլազգի կռապաշտ կնիկներն ու աւելորդապաշտութիւններն ։ Նորէ կարգեց Ղևտացիներն , ու բոլոր ժողովուրդը գործակցութե̃ Եզրասայ քահանային · գրեց իր ժամանակին դիպուածներն , բովանդակելով յերեքտասան գլուխ · ապա երեսուն տարի բարեպաշտութեամբ առաջնորդելէն ետև մեռաւ խաղաղութեամբ ։ Տ · Եզր ։

ՆԵՂՈՍ աբբայ էր սրբասէր աշակերտ սուրբ Ոսկեբերանին , և եպարքոս Կոստանդինուպոլսոյ , լցեալ իմաստութեամբ և զարդարեալ աստուածպաշտութեամբ բոլոր տնովն ։ Ապա հեռանալով յաշխարհէ՝ կինն ու աղջիկը դրաւ կուսանաց վանքն ու ինքն առանձնացաւ Սինայի լեռը որդւոյն հետ մէկտեղ · և եղան կատարեալ և առաքինի կրօնաւորք · մինչև քահանայացան և եղան ուսուցիչ հոգևոր կենաց թէ բանիւ , և թէ բարի օրինակաւ ։

Սրբոյն Նեղոսի գրուածքը , աստուածիմաստ ճառերը , հոգևոր խրատները խիստ շատ են · Թո՛ղ յորդորական թղթերը թուով 1071 ։ Աստուածսիրութեամբ վառեալ վախճանեցաւ երանելին լի արդեամբք և սրբութեամբ յամի 450 ։ Այս և Նեղոս Եգիպտացի նոյնպէս սուրբ ճգնաւոր , ինչպէս կը յիշէ Հարանց վարքը ։

ՆԵՍՏՈՐ · Տ · ԴԵՄԵՏՐԻՍ ։

ՆԵՍՏՈՐ եպիսկոպոս էր Պերգեայ · Դեկոսի հալածանքին ատենը բռնեցին կռապաշտներն ու կը նեղէին որ զոհէ կռոց · իսկ նա խաչակնքելով զինքն կանչեց համարձակ․ Որչափ ինձի տանջանք տաք, և որչափ ջանաք սատանային կամքը կատարելու և զիս կրակով այրելու, ես զՔրիստոս չեմ ուրանար։ Ուստի շատ տանջանքէն և ծեծէն ետև խաչը բևեռեցին ու սրածեծ ըրին․ իսկ երանելին անդադար սիրտ տալով կը սորվեցընէր ժողովուրդը․ մինչև որ նոյն տանջանքին մէջ կատարեցաւ ՚ի Տէր, և եղաւ տօնելի։

ՆԵՍՏՈՐ աղանդապետ սատանայամիտ՝ էր պատրիարգ Յունաց և աշակերտ Թէոդորոսի Մոպսուեստացւոյն, որմէ մոլորելով ուրացաւ զաստուածութիւնն Քրիստոսի և եղաւ մարդադաւան։ Երկու անձինք կը քարոզէր Քրիստոսի․ և զԱստուածածինն կ՚անուանէր մարդածին կամ քրիստոսածին։

Այս հերետիկոսին գլխուն զարնող եղան՝ սուրբն Կեղեստիանոս սրբազան պապն և ն՟րն Կիւրեղ Աղեքսանդրացի։ Նաև քանի մը ժողովքով և Եփեսոսի ընդհանուր ժողովով նզովելէն ետև աքսորեցին Եգիպտոսի անապատը յամի 431, ուր չարաչար սատկեցաւ։ Յետոյ Նեստորականք ալ աքսորեցան անարգանօք յԱսորեստան և մինչև Հնդկաստան, որոնք հիմա քիչ քիչ կը դառնան յուղղափառութիւն, և կ՚անուանին Քէլտանի․ իսկ հերձուածողք կը կոչուին Նաստուրի։

ՆԵՐԱՆՁՆԱԿԱՆՔ էին Ա. դարու հոգեսէր քրիստոնեայք, որոնք հրաժարելով՚ի հեշտութեանց՝ հոգևոր կրթութեամբ կ՚ապրէին թէ եկեղեցականներն և թէ աշխարհականներն, որոնցմէ եղաւ սկիզբն միանձնութեան ըստ

Եւսեբիոսի ։ Վասն զի խուցի մէջ փակուած միայն աղօթքի՝ և կարդալու կը պարապէին ․ հագածնին և կերածնին խոշոր էին , ու գետնի վրա կը պառկէին ։ Ուստի պատկառելի էին հեթանոսաց և հաւատացելոց , նաև բարի օրինակ ամենուն յիշելով Պօղոսի խօսքը ․ “ Որ քրիստոսեանքն են զմարմինս իւրեանց 'ի խաչ հանին կարեօքն և ցանկութեամբք հանդերձ „ ։

ՙՆԵՐՍԱՆ կամ ՙՆԵՐՍԷՍ էր եպիսկոպոս Պարսից , զօրաւոր իմաստութեամբ և առաքինութեամբ , որ կը հրահանգէր շատ աշակերտներ ։ Յովսէփ ծերագոյն աշակերտն երևելի ըլլալով եպիսկոպոս ձեռնադրեցաւ իրմէն ու միատեղ նահատակեցան սրով քսան սուրբ վկաներով յամի 343 , որոնց մէջ կային իրեք եպիսկոպոս , երկու քահանայ , և Ոհանամ ճգնաւորը ։

ՙՆԵՐՍԷՀ Կամսարական էր տէր և իշխան Շիրակայ , որ շատ քաջութիւն ըրաւ Հրահատ եղբօրը հետ Պարսից դէմ ։ Երբոր Պարսիկները գերի կը տանէին եղբայրը , ետևէն կ'երթար որ հնարքով մը ազատէ ։ Ապա երբ հասան Բագրևանդ գաւառը՝ մտաւ Լուսաւորչայ մատուռն ու լալով և արտասուօք խնդրեց եղբօրն ազատութիւնը ։ Ահա հասաւ հոն եղբայրը կապանքէն արձակած հրաշքով ․ փաթթուեցան իրարու լացին ․ և գնացին 'ի Դուին առ Յովհան Մանդակունի կաթուղիկոսն և գոհացան Աստուծոյ ամենայն բարեպաշտութ՟բ և եռանդեամբ ։ Յետոյ գնացին առ մեծն Վահան , և միաբան անթիւ կռապաշտ ջարդեցին քաջութեամբ ․ մինչ զի զարհուրելով

Պարսիկները մէկէն հաշտութիւն ըրին · իսկ Ներսէս նորէն առաւ իշխանութիւնը հայրենի Կամսարականաց ։

ՆԵՐՍԷՍ Մեծն էր աստուածիմաստ սուրբ հայրապետ Հայոց, և Թոռն թոռան սուրբ Լուսաւորչին, բարեկիրթ սրբութեամբ գիտութեամբ և առաքինութեամբ զարդարեալ ըստ ամենայնի ։ Անոր երբոր ծնաւ իր սուրբ Սահակ որդին՝ ինքն հրաժարեալ աշխարհէ ընտրեցաւ կաթողիկոս Հայոց, ու գնաց 'ի Կեսարիա քահանայ և եպիսկոպոս ձեռնադրեցաւ յԵւսեբիոսէ պատրիարգէն սուրբ Բարսեղին հետ, և Հոգին սուրբ աղաւնակերպ իջաւ երկուքին վրա · և երբ պատարագեց՝ սիւն հրեղէն յերկնից երևցաւ վրան · ու ձայն հրեշտակաց ալ լուեցաւ ու սրբոյն դէմքը փայլեցաւ Մովսէսի դէմքին պէս ։

Յետոյ դարձաւ 'ի Հայաստան ամէն բան նորոգելով պայծառացուց ազգը · ժողովքներով հաստատեց կանոններ և բարեկարգութիւններ ։ Ամէն տեղ կանգնեց հազարաւոր դպրոցներ, հիւանդանոցներ, հիւրանոցներ, ուսումնարաններ, վարժատուններ և վանքեր երկու հազարէն աւելի ։ Այս ազգին համար գնաց 'ի դուռն կայսեր Վաղեսի, որ գոլով արիոսեան աքսորեց զերանելին անբնակ կղզի մը ։ Անկից դարձաւ պատուով մեծն Թէոդոսի հրամանաւ, և մտաւ 'ի սուրբ ժողովն Կոստանդինուպօլսոյ ։ Այս դարձաւ յաթոռ և մեծամեծ հրաշալի առաքինութեանց վերջը երբոր յանդիմանեց չարագործութիւնը Պապ թագաւորին, որպէս զի ուղղի մոլութենէն, անօրէնը թունով նահատակեց սուրբը խաւարելով ազգին լուսափայլ ճրագն սքանչելի ։ Սուրբն Ներսէս պատմեց մարգարէաբար իրմէն ետև ինչ որ պատահեցաւ մեր ազգին հանդերձ թշուառութեամբ ։ Իսկ սուրբ մարմինը փառօք թաղեցին 'ի Թիլն աւանի յամի 384 . որ 'ի 1272ին հրաշքով յայտնեցաւ Յովհաննու Երզնկացւոյն օրը ։

Ներսէս շնորհալոյս հովիւ բարեխնամ
Երկրորդ լուսարփի ազգիս Արամեան .
Հաստիչ նորոգիչ սրբազան կարգաց ,
Նոր ջահ դպրութեանց մխիթար վշտաց ։
Մեծից կայսերաց հանուրց տենչալի ,
Անշէջ հետևող սուրբ Լուսաւորչի .
Սիւն եկեղեցւոյ անկելոյ կանգնիչ ,
Անաչառ բժիշկ հոգւոց դարմանիչ ։

ՆԵՐՍԷՍ Գ Շինող ընտրեցաւ կաթողիկոս յամի 640ին . վասն զի Եզր հայրապետ մեռնելէն ետև Հագարացի աւազակներն մտան Դուին տասներկու հազար հոգի ջարդեցին , երեսուն հազար ալ գերի տարին ։ Ան ատեն ազգը խեղճ մնալով Թէոդորոս Ռշտունի մեծ նախարարը ձեռնադրել տուաւ կաթողիկոս զՆերսէս եպիսկոպոսն Տայոց ։ Սա մէկէն արիութեամբ սկսաւ մաքրել Դուին , մեռելները թաղել , և Լուսաւորչայ վկայարանը նորոգել , նաև կանգնեց Խոր Վիրապին վկայարանը , և Վաղարշապատու հոյակապ եկեղեցին , որուն չորս գլխաւոր սիւներուն տակը դրաւ սուրբ Լուսաւորչին ոսկորները ։ Իսկ գլուխը տապանով զետեղեց սեղանին տակը , որ ետքի ժամանակս տարին յԻտալիա 'ի Նէապօլիս . ուր եկեղեցի ալ շինեցին ու կը տօնեն , և անպակաս հրաշքը կը տեսնեն հոն ։ Ներսէս կաթողիկոս շատ եկեղեցիներ , վանքեր և հիւրանոցներ շինելուն համար անուանեցաւ Շինող ։ Ժողովով նզովեց Մայրագոմեցւոյն մոլորական գիրքը և անոր Սարգիս աշկերտին աղանդը ։ Յամի 627 Կոստանդ կայսրն Յունաց գնաց Դուին . ուր կայսեր քահանաներուն պատարագին ատենը կաթուղիկոսը իրեն եպիսկոպոսներովը հաղորդեցաւ մարմնոյ և արեան Տեառն , և հանդիսապէս ընդունեցան սուրբ ժողովն Քաղկեդոնի ։ Կայսրն երթալու ատենը յորդորեց որ միշտ միաբան մնան . կաթուղիկոսն ալ նոյնպէս կը քարոզէր իրեններուն մինչև 'ի մահը , որ եղաւ յամի 661 . և քսանւիրեք տարի հայրապետութիւն ըրաւ բարեպէս , ու թաղեցաւ 'ի Խոր Վիրապը ։

ՆԵՐՍԷՍ Շնորհալի կամ Կլայեցի մեծահամբաւ սուրբ հայրապետն՝ էր Լուսաւորչայ ցեղէն , պանծալի զաւակ Ապիրատ իշխանին , որ սորվեցաւ Ստեփաննոսի իմաստուն վարդապետին քով , մեծ եղբօրը Գրիգորին հետ մէկտեղ ։ Երկուքն ալ բարեկրթութեամբ այնչափ լուսաւորեցան , որ Գրիգոր շուտով քահանայ և եպիսկոպոս ձեռնադրեցաւ և յետոյ ընտրեցաւ կաթուղիկոս , և կոչեցաւ Գրիգոր Պահլաւունի . քովը կանչեց Ներսէս եղբայրը , քահանայ ձեռնադրեց . ապա և եպիսկոպոս 'ի 1135 , ու նուիրակութեան ղրկեց . որպէս զի քարոզելով լուսաւորէ հօտը աստուածաշնորհ վարդապետութեամբ ։ Յամի 1142 Մանուէլ Կոմնենոս կայսրն երթալով Կիլիկիա խօսակցեցաւ Գրիգոր կաթուղիկոսին և Ներսէսին հետ , ու զարմացաւ անոնց իմաստուն վարդապետութեան և խելքին վրա . նոյնպէս իր

Ալեքս փեսայն ։ Որոնք ջանացան միացընելու Յոյները Հայոց հետ . և սկսան Թղթակցութիւններ ընել հաւատքի և ծէսերու վրա առ 'ի միաբանել ազգը և եկեղեցին, որ բաժնուեր էին պատճառաւ Քաղկեդոնի ժողովքին . և Հայերը յայտնի դաւանեցին ան ատենը երկու բնութիւն Քրիստոսի ։ Գրիգոր կաթուղիկոս ծերութեան ժամանակը ժողով գումարեց ու Ներսէս եղբայրն ընտրեց իրեն յաջորդ՝ օծելով զինքը կաթուղիկոս, նաև իր քօղը գլուխը ձգեց, ու նստեցուց իւր աթոռը յամի 1165 ։

Ներսէս նորապսակ հայրապետն ան ատեն խօսեցաւ գերապանծ ճառ մը, և ապա գրեց իմաստալից կոնդակներ, նամակներ, և ընդհանրական Թուղթ շրջաբերական առ ցրուած ազգն ։ Յետոյ վայելչացուց տօնախմբութեանց կարգը, և պաշտամունքը Աւագ շաբաթուն, Հոգեգալստեան, Վերափոխման, և այլն ։ Նաև գեղեցիկ շարականներով և քաղցր տաղերգութ̃բ այնպէս զարդարեց եկեղեցին Հայոց, մինչև արժանապէս անուանեցաւ Շնորհալի ։ Յետոյ գրեց կայսրն վասն միաբանութեան Թուղթ . Շնորհալին ալ գրեց պատասխանի սքանչելի իմաստութեամբ . որով վառեցաւ կայսեր սիրտը և ղրկեց Յոյն աստուածաբանն Թէորիանէ և զՅովհաննէս վանահայր վարդապետ Հայոց 'ի 1170 ։ Որոնք վիճելով Շնորհալւոյն հետ շինուեցան Հայոց վարդապետութեան և ծէսերուն վրա . որ և գրեցին կայսեր . ինչպէս Շնորհալին ալ գրեց ասելով . " Յայտնի եղև ճշմարութիւնն և հաստատեցաւ, հեռի գոլով ձեր՝ 'ի Նեստորի բաժանմանէ, և մեր Եւտիքեայ (շփոթմանէ), և հուպ եկեալք միմեանց ուղիղ դաւանութեամբ հաւատոյ շնորհօքն Աստուծոյ ,, ։ Եւ խոստացաւ որ ազգային ժողովով կատարէ միաբանութիւնը ։ Այնպէս գրեց առ Միխայէլ պատրիարգն Ասորւոց 'ի 1172 ։ Երբոր այս հարկաւոր պատրաստութե՟ հետ էին , հասաւ Աստուծոյ հրամանն սուրբ հայրապետին փոխման յաշխարհէս յերկինս եօթանասունըհինգ տարւան , յամի 1173 ։ Հոն էր Ներսէս Լամբրոնացի · ուր հասաւ և Գրիգոր Տղայ եղբօրորդին · որ հանդէսով հանդուցին զսուրբ մարմինը եղբօրը քով · ուր տապանը մինչև հիմա կը պատուեն ամենքը ։ Իսկ կայսրը երբոր լսեց կը կանչէր լալով · "Մեծ զգայարան և արթուն հովիւ բարձաւ այսօր յեկեղեցւոյն Աստուծոյ · զրկեցան Հայաստանեայք յերկրորդ Լուսաւորչէն իւրեանց ։ Ո՛վ երանելի , զիա՛րդ զիմս փափաք անկատար թողեր , և ժամանեցեր առ Քրիստոս ,, և այլն ։ Ապա պատուիրեց Յունաց եկեղեցիներուն մէջ յիշատակել զՇնորհալին ։ Եւ այսպէս փառաւորեց Աստուած զփառաւորիչս իւր արդեամբք հայրապետութեան և գրաւոր վաստակօք ։

ՆԵՐՍԷՍ Լամբրոնացի էր արքեպիսկոպոս Տարսոնի իշխանազուն փառաւոր , և յարգանդէ նուիրեալ Աստուծոյ ուխտելով մօրն ։ Ուստի 'ի մանկութենէ լցեալ Հոգւով սրբով գերազանց եղաւ գիտութեամբ և ամենայն առաքինութեամբ ։ Ապա թողուց իշխանութիւնն ու կը նստէր ճգնութեամբ Սկևռայ վանքը , նաև երբեմն Սեաւ լերին վանքը ճգնելով ։ Շատ վայելուչ ճառեր և մեկնութիւններ նաև ճարտար թարգմանութիւններ ալ գրեց թարմ հասակին մէջ ։ Յետոյ ստիպմամբ կաթուղիկոսին ձեռնադրեցաւ արքեպիսկոպոս քսանւիրեք տարւան · և եղաւ հովիւ քաջ նորոգող կարգաց և կանոնաց , ճշմարիտ քարոզ բանին ճշմարտութեան , և անաչառ վարդապետ եկեղեցւոյ · մինչև կոչեցաւ 'ի Յունաց և 'ի Լատինացւոց՝ երկրորդ Պօղոս Տարսօնեան և ճըշմարիտ աշակերտ Յիսուսի ։ Սիրելի էր ամենայն ազգաց իմաստութեամբ և սրբութ̃բ · այլ և միաբանական սիրով ամենուն կը յարմարէր շահելով ընկերը , միանգամայն վառեալ 'ի սէրն Աստուծոյ ։ Որով կատարեց առաքինի և սրբակաց կեանքը քառասունըհինգ տարւան ։ Բայց մեռնելէն առաջ կանչեց աշկերտներն օրհնեց և խրատեց · ապա առաւ վերջին թոշակն ասելով · “Ընկալ Յիսուս զհոգի իմ զՆերսեսի քո ,, , և աւանդեց հոգին ։ Թողուց շատ աստուածիմաստ գրեանք , ճառեր , մեկնութիւններ , թուղթեր , շարականներ , աղօթքներ , և այլն ։ Վերջին կարգաւորութ̃ի տօնացուցին ասոր օրն ըլլալուն համար անունը դուրս մնաց · բայց մահուանէն ետև մէկէն տօնեցին ։

Ներսիսեանք որչափ 'ի սէր ճոխացան
Այնչափ 'ի շնորհաց Հոգւոյն պերճացան ·
Բանիւ և արդեամբք չքնաղ կապեցին
Պսակ 'ի վեհ գլուխ Յաբեթեան տոհմին ։
Ուսի՛ր 'ի գործոց քաջ ազգասիրաց
Յարգել զերկս արհի շնորհալից Հարանց ·
Իմաստասէր դու ազգիդ պիտեան
Փարելի սրբոց արդեամբք գեղազան ։

ՆԻԿԻՈՅ սուրբ ժողով էր Ա · տիեզերական սիւնհոդոս իրեքհարիւր տասնըութ հայրապետաց սրբոց , որ եղաւ 'ի քաղաքն Նիկիա մեծն

Կոստանդիանոսի և սուրբ Սեղբեստրոսի պապին ու մեր սուրբ Լուսաւորչին ժամանակը յամի 325, Արիոսի հերետիկոսին դէմ. որ ուրացաւ աստուածութիւն Քրիստոսի և դատապարտեցաւ նզովքով, մինչև սատակեցաւ զարշելեաց մէջ։

ՙՆԻԿԻՈՅ Բ. ժողովն էր եօթներորդ ընդհանուր ժողով իրեքհարիւր վաթսունըեօթն հայրապետաց. որ եղաւ Ա. Ադրիանոսի պապին և Կերիփեռուժէն կայսեր օրն յամի 787, պատկերամարտից դէմ. ուր դատապարտեցան աղանդաւորներն և կորան։

ՙՆԻԿՈԴԵՄՈՍ էր իշխան և ռաբբի Հրէից. որ գնաց գիշերանց տեսնելու զՅիսուս ասելով. “Գիտեմք, զի յԱստուծոյ եկեալ ես վարդապետ. զի ոչ ոք կարէ զայդ նշանս առնել՝ զոր դուդ առնես, եթէ ոչ Աստուած իցէ ընդ նմա ”։ Փրկիչն հրաւիրեալ զնա մկրտութեան ասաց. “Եթէ ոչ ծնցի ոք ՚ի ջրոյ և ՚ի Հոգւոյն սրբոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ ”։ Ապա ասաց. “Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զորդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ՚ի նա՝ մի կորիցէ ”։ Աւրեմն Հրէից ռաբբիները գիտէին թէ Մեսիայն պարտ է լինել փրկիչ աշխարհի և Աստուածորդի. անոր համար ՙՆիկոդեմոս մէկէն աշակերտեցաւ Յիսուսի. և թաղման ատենը փառաւորապէս սպասաւորեց սուրբ մարմնոյն։ Այս պատճառաւ Հրէայք աքսորեցին զինքը. իսկ նա միշտ առաքելական քարոզութեամբ կ՚աւետարանէր զՓրկիչն մինչև կատարեցաւ և թաղեցաւ սուրբ Ստեփաննոսին քով ։ Ապա 'ի Դ. դարուն հերետիկոսներն հանեցին սուտ աւետարան մը Նիկոդեմոսի անուամբ, որ էր առասպելական և յիմարական ցնորք. զոր մերժեցին սուրբ Հարք և նզովեցին ։

ՆԻԿՈՂԱՅԻՏՔ էին հին աղանդաւորք. որք հեթանոսաց պէս կը քարոզէին թէ ստեղծողն աշխարհի չէ գերագոյն էակ. այլ ոգի մը բնութեան. և Քս՟ չէ որդի Աստուծոյ, և այլն ։ Իսկ իրենք էին ախտաւորք և անառակ. որոնց գլուխն եղաւ եօթը սարկաւագներուն մէկը Նիկողայոս անուն. որ իր կնամոլութեան ախտը ծածկելու համար չար մոլորութիւններ հանեց, ինչպէս կը յիշէ Յովհաննէս Յայտնութեան մէջ ։ Իսկ 'ի Թ. դարուն ելան նոր Նիկողայիտք մարմնասէրք, որ կը քարոզէին՝ թէ օրինաւոր է քահանայից և սարկաւագաց նորէն կարգուիլ, որոնք չարաչար նզովեցան 'ի 1095ին ։

ՆԻԿՈՂԱՅՈՍ սքանչելագործ հայրապետն Իզմիրու՝ էր որդի բարեպաշտ ծնողաց, որ ծնած ատենը ոտքի վրա կեցաւ, և պաք օրը ծիծ չէր քաշեր ։ Տղայ ատենը դպրոցին մէջ բժշկութիւն կ'ընէր զօրութեամբ խաչին ։ Ապա լցեալ աստուածային շնորհօք ձեռնադրեցաւ քահանայ և կը փայլէր աստուածիմաստ վարդապետութեամբ և հրաշագործութեամբ. մինչև օր մը տեսաւ զՏիրամայրն Յիսուս գիրկը. որ տուաւ իրեն աւետարան մը. իսկ սուրբ կոյսն շնորհեց զգեստ հայրապետական ։ Ուստի ընտրեցաւ յետոյ եպիսկոպոս իր քեռուն տեղն ու առաւել ծաղկեցաւ հրաշքներով մանաւանդ ծովային վտանգներու մէջ. աղատեց իրեք անիրաւի դատապարտեալներ . և այլ շատ սքանչելեօք փոխեցաւ առ Տէր 'ի Դ. դարուն ։

ՆԻԿՈՂԱՅՈՍ Ա. էր սուրբ քահանայապետ Հռոմայ՝ անուանեալ Մեծ վասն մեծամեծ առաքինութեանց . որով ընտրեցաւ յաջորդ սրբոյն Պետրոսի 'ի 858 ։ Որ եօթն ժողով գումարեց վասն բարեկարգութեանց , և գրեց հոգելից կոնդակներ վասն առաջնորդաց և իշխանաւորաց ։ Հերքեց հերձուածողները և խաղաղացուց արևելեան եկեղեցին հաստատելով ուղղափառ հաւատքն ։ Այնչափ էր սորա խոնարհական արթնութիւն 'ի վերայ հօտին Քրիստոսի , մինչև ամէն աշխարհք կը փայլէր անունը և կառավարութիւնը ։ Որ ապա լի արդեամբք փոխեցաւ առ Փրկիչն 'ի 867 . և նոյն օրն կարգեցին զտօն նորա ։

ՆԻԿՈՂԱՅՈՍ Բ. էր եպիսկոպոս Փլորենտիոյ , նստաւ քահանայապետ Հռոմայ 'ի 1058 . այր սրբակեաց և աղքատասէր ։ Ուստի խաղաղութեամբ կառավարեց զեկեղեցին Քրիստոսի մինչև վախճանեցաւ շուտով 'ի 1061 ։

ՆԻԿՈՂԱՅՈՍ Գ. ազնուական զարմէ ընտրեցաւ գլուխ սուրբ եկեղեցւոյ 'ի 1277 . և քաջութեամբ սանձեց արևմտեան թագաւորները ։ Սա գրեց նամակ առ կայսրն և առ պատրիարգն Յունաց վասն միաբանութեան եկեղեցեաց Յունաց և Լատինացւոց . որ յետոյ հաստատեցաւ 'ի ժողովն Լուգդոնի ։ Բայց շուտով հասաւ իր կենաց վախճանն 'ի 1280 ։

‘ՆԻԿՈՂԱՅՈՍ Դ. մեծանուն կարդինալ և վարդապետ աստուածաբանութեան՝ ընտրեցաւ յաթոռ Հռոմայ 'ի 1288. և ձեռնամուխ եղաւ շուտով բարեկարգել ընդհանուր եկեղեցին զամէնքը 'ի սէր միաբանութե՟ յորդորելով: Երևելի քարոզիչներ ղրկեց հեռաւոր աշխարհներ վասն ուղղափառ հաւատոյ, և շատ ջանաց ազատելու Երուսաղէմ, օգնելով արևելեան քրիստոնէից: Զօրացուց նաև մեր Հեթում Բ. արքայն և ուրիշ մեծամեծ իշխաններին, որ միաբան անհաւատից դէմ քաջութեամբ պատերազմեցան: Նա այսպիսի առաքինութեամբ փոխեցաւ առ Տէր 'ի 1294:

‘ՆԻԿՈՂԱՅՈՍ Ե. այր քաղցրաբարոյ և աստուածաբան վարդապետ ընտրեցաւ յաջորդ սրբոյն Պետրոսի 'ի 1447, որ առաքելական քաջութեամբ հերձուածողները ջնջելով շատ բարեկարգութիւն ըրաւ, և կատարեց մեծահանդէս տօն յոբելեան 'ի 1450: Այս հայրապետս տեսնելով Յունաց տկարութիւնը շատ ջանացաւ որ միաբանելով ուրիշ տէրութեանց հետ օժ տայ իրենց: Բայց անոնք հպարտութեամբ չմիացան ու կործանեցին կայսերութիւնը. ուստի սրբազան պապն լալով հայրաբար կը խնամէր փախստական Յոյները, որ իրեն կ'երթային. և սրտին կսկծուն չդիմանալով տկարացաւ ու փոխեցաւ առ Քրիստոս 'ի 1455 յիսունըեօթն տարուան:

Այսպէս փոխանորդք Փրկչին Ճգնեցան
Յածեալ յընդհանուրս նահատակեցան.
Արեամբ չափ մրցեալ՝ ամբողջ պահեցին
Զօրդիս Սիոնի 'ի ժանեաց կերչին:

Այս պերճ գրաւական էր քաջի Հովուին
Կամայ զոհել զանձն առ 'ի սէր հօտին.
Որով պանծացաւ փարախ փրկչական
Շնորհազարդ պայծառ ը̃ դարս յաւիտեան:

ՆԻՆՈՍ էր Նեբրովթայ թոռներէն և եղաւ ինքնակալ Ասորեստանեայց, և կանգնեց մեծ քաղաքն Նինուէ. որուն երկայնութիւնն էր իրեք օրուան ճամբայ Յովնան մարգարէին ժամանակը: Նինոս կը համարուի առջի կուռք շինողը, որ երբ իր վաղամեռիկ որդւոյն արձանը շինեց, ուրիշներն ալ անոր նայելով սկսան իրենց նախնեաց արձանը կանգնել և պաշտել աւելորդապաշտութեամբ. վասն զի ասոր վըրայ կ՚իմանան Սողոմոն իմաստունին ըսածը. "Զի տարաժամ սգով թաղծեալ հայր, վաղամեռիկ լինելոյ որդւոյ իւրոյ արար պատկեր: Ապա ժամանակաւ ձգեալ ամբարիշտ սովորութիւնն իբրև զօրէնս պահեցաւ. և բռնաւորաց հրամանաւ կարգէին 'ի պաշտօն դրօշեալքն,,,

ՆՈՅ նահապետ էր որդի Ղամեքայ նահապետին. որ մէկհատիկ արդար և աստուածապաշտ ըլլալով իւր ընտանեօքն՝ ազատ մնաց համաշխարհական ջրհեղեղէն: Ուստի եղաւ երկրորդ հայր աշխարհի, և ուսուցիչ կարգաց բարեպաշտութե̃, նաև աստուածավայել պատարագաց, այլովքն հանդերձ: Մարգարէացաւ Մեսիային գալստեանը համար իւր Սեմայ զաւակէն, և օրհնեց, ուսկից եղաւ հայր Աբրահամն և ժառանգեց զայն օրհնութիւնը՝ իր ցեղը աստուածպաշտութեան մէջ մնալով: Որոնցմէ ելան շատ նահապետք և մարգարէք, արդարք և քահանայք. նաև Մեսիան՝ որուն գալստեամբ օրհնեցան ամենայն ազգք ըստ նոյն մարգարէութեան ։

ՆՈՆՆՈՍ էր Յոյն քերթող եգիպտացի Ե. դարուն. որ յօրինեց դիւցազնական ոտանաւոր, կամ նկարագրութ̃ի առասպելաբանութեանց Դիոնիսեայ Բաքոսի՝ ՚ի քառասունըութ գիրս ։ Նաև կայ մեկնաբանութիւն աւետարանին Յովհաննու իբր քերթողութիւն լատիներէն թարգմանած ։ Գրիգորի Աստուածաբանին քանի մը ճառերուն մէջ ալ յիշուած առասպելաց մեկնութիւն մըն ալ կայ Նոննոսի անուամբ, որ հայերէն ալ թարգմաներ են նախնիք ընտիր շարադրութեամբ ։

ՆՈՎԱՏԵԱՆՔ էին աղանդաւորք Գ. դարուն հետևողք Նովատիանոսի և Նովատոսի. որք ապստամբութեամբ կը հակառակէին սուրբ եկեղեցւոյն Հռոմայ և սրբոյն Կոռնելիոսի պապին, քարոզելով թէ չիք թողութիւն յեկեղեցւոջ վասն մեղանչողաց ։ Սոքա իրենց հետևողները նորէն կը մկրտէին. և կրկին պսակեալները կը մերժէին. նաև զատիկը լուսնի 14ին կը կատարէին. որոնք նզովեցան ժողովով յամի 255 ։

ՆՈՐԱՂԱՆԴ և Բրոդէստանդ կը կոչէին նորահաւատ աղանդաւորք. ինչպէս են Լուտերականք, Կալվինականք, և այլն ։ Որոնք մոլորեալ ՚ի ճշմարտութենէ ընկան կերպ կերպ չար աղանդներու մէջ ներհակ սուրբ գրոց և սուրբ եկեղեցւոյ, հանդերձ յամառութեամբ և չարութեամբ ։ Անոր համար ալ նզովեցան. և այս խայտառակութիւնը ծածկելու համար անուանեցան նոր անուամբս Նորաղանդ ՚ի 1529 , Անոնց յարմար կուգայ Պօղոս առաքեալին խօսքը՝ “ Որպէս Յաննէս և Յամբրէս հակառակ կացին Մովսիսի · նոյնպէս և սոքա հակառակ կան ճշմարտութեանն · մարդք ապականեալք մտօք , անպիտանք ՚ի հաւատս · այլ ոչ երբէք դայցեն յառաջ ՚ի լաւ անդր · քանզի անմտութիւն սոցա յայտնի լիցի ամենեցուն , որպէս և նոցայն իսկ եղև „ ։

ՆՈՒՆԷ սուրբ կոյսն հրաշալի՝ էր ընկեր սըրբոց Հռիփսիմեանց , որ Հայաստան մտած ատենը աստուածային ազդեցութբ՟ բաժնուեցաւ ու Վրաստան անցաւ , բնակելով Մծխիթա մայրաքաղաքը ինչպէս աղախին մը · բայց վառեալ աստուածային սիրով մէկէն սկսաւ անուամբն Յիսուսի հրաշք ընել · մինչև բժըշկեց Վրաց Միհրան թագաւորին տղան և հիւանդ թագուհին՝ յայտնի քարոզելով զՔրիստոս ։ Անկէ ետև երբոր Միհրան որսի ատեն վտանգեցաւ թանձր ու մութ ամպով մը պատած և կորուց ճամբան՝ ուխտեց որ եթէ ազատի վտանգէն , պաշտէ Նունէին Աստուածը ։ Եւ ահա ազատեցաւ , ու բոլոր տնով և ազգով դարձաւ առ Քրիստոս ։ Ան ատենը սուրբ կոյսն Նունէ իմաց տուաւ սուրբ Լուսաւորչին , և նորա հրամանաւ կանգնեց փայտէ խաչ մը · և կը քարոզէր ժողովուրդին սուրբ հաւատքն Քրիստոսի մինչև որ իրենց հովիւ գայ ։ Նոյն ժամանակը հասան հոն քահանայք Յունաց և կանգնեցին եկեղեցի յունական ծիսով ։ Անկէ առաջ ալ խաչանման լոյս մը անհաւատները տեսեր էին Նունէի խաչին վրայ , և հաւատացեր էին ։ Նաև սուրբ կուսին աղօթքով անպակաս հրաշքներ ալ կ՚ըլլային ․ մինչև եղաւ երանուհին կատարեալ քարոզիչ և լուսաւորիչ Վրաստանու , նաև մօտ եղած ազգերուն ալ ։ Կործանեց Արամազդայ մեհեանն ՚ի Մծխիթա , և ուրիշ գաւառներու մէջ ու եկեղեցիներ շինեց , միշտ քարոզելով սուրբ կրօնը հրաշագործութեամբ մինչև ՚ի վախճան բազմարդիւն կենացն ․ որ մեծ ձգնութեամբ և սրբութեամբ փոխեցաւ առ Քրիստոս , և թաղեցաւ փառաւոր հանդիսով ․ զոր մինչև հիմա Վրացիք կը տօնեն իբրև իրենց առաքելուհի և պանծալի լուսաւորիչ ։

Նունէ հրաշափառ առաքելուհի
Լուսաբեր տան Վրաց շնորհապանծ արփի ․
Երկնաբուղխ քարոզ կոյս աստուածաբան
Կործանիչ բագնեաց ուսմանց կորստեան ։
Գործակից շնորհաց սուրբ Լուսաւորչին
Պայծառ ծաւալիչ լուսոյ երկնային ․
Բարձող խաւարի դիւապաշտութեան
Ծաղկիչ հաւատոյ խաչին զօրութեամբ ։

Շ.

ՇԱԲԱԹԱԽՏԻՐ կամ ՇԱԲԱԹԱՊԱՀՔ էին աղանդաւորք Ա. դարու, որոնք Հրէութենէ դարձան և կը պնդէին թէ քրիստոնեայք հարկ է որ պահեն թէ՛ շաբաթն և թէ ամէն օրէնքն Մովսէսի։ Առաքեալք ասոր համար ժողովք ըրին ու մերժեցին այս հրէամիտ աղանդաւորները։ Նմանապէս սուրբ Հարք ամենայն ըզգուշութեամբ կը խրատէին փախչիլ հրէական խտրութենէ ըսելով. “Յամենայն շաբաթապահ և շաբաթախտիր կրօնից զանձն քո ՚ի բաց պահեսջիր։ Ի բաց լիցի մարդ ՚ի խտրելոյ ժամանակաց, և ՚ի շաբաթապահ կրօնից (մոլորելոց)„։

ՇԱՄՈՒՆԷ. Տ. ՄԱԿԱԲԱՅԵՑԻՔ։

ՇԻՂԱ՝ ըստ Եբր. կը նշանակէ Երրորդ. որ էր եօթանասուն աշակերտաց մէկը, և գործակից առաքելոց. որ նախ Պօղոս առաքելոյն հետ յԱնտիոք քաղաքը գնաց քարոզեց։ Վերջը շատ տեղեր պտըտելով քարոզեց Քրիստոսի սուրբ աւետարանն ու կանգնեց եկեղեցիներ ՚ի Մակեդոնիա կամ ՚ի Թեսաղոնիկէ. և հոն կատարեցաւ քարոզութեամբ և լի արդեամբք։ Սա նոյն կը կարծուի Սիղուանոսի հետ, որ էր գործակից առաքելոց կոչեցեալ Տերտիոս, այսինքն երրորդ։

ՇՄԱՒՈՆ որդի Մատաթեայ քահանային և եղբայր Յուդայի Մակաբեան՝ ընտրեցաւ իշխան և քահանայապետ ազգին Հրէից Յովնաթան եղբօրմէն ետև 139 տարի Յիսուսէն առաջ։ Սա քաջութեամբ և խոհեմութեամբ կառավարելով ազգը՝ նախ շինեց Սիոնի բերդը և Երուսաղէմի պարիսպն ալ ամրցուց ու ժողվեց ցրուած ազգը. ապա հաշտութիւն ընելով մօտիկ տէրութեանց հետ՝ ծերութեան ատենը ելաւ պտըտելու իրեն բերդերը։ Երբոր հասաւ Երիքովի կողմը՝ իր փեսայն Պտղոմէոս Աբուբեանց խաբէութեամբ կերակուրի կանչեց որդիքներովն ու սպաննեց. որպէս զի տիրէ նորա իշխանութեանը։ Բայց Յովհաննէս որդին հօն չըլլալով ազատեցաւ ու յաջորդեց հօրը ժառանգելով Մակաբեանց տէրութիւնը, որ տևեց մինչև 'ի Հերովդէս, և 'ի փրկիչն աշխարհի։ Տ. Մակաբեանք։

ՇՄԱՒՈՆ Նախանձայոյզ կամ **ՍԻՄՈՆ** Կանանացի՝ վառեալն 'ի սէր Տեառն, էր երկոտասան առաքելոց մէկը։ Որ շրջեցաւ քարոզութեամբ սուրբ աւետարանին յԵգիպտոս և 'ի Մաւրիտանիա. ծաւալեց սուրբ հաւատքը չարչարուելով դիցամոլ բարբարոսներէն։ Յետոյ անցաւ 'ի Պարսկաստան Յուդա Թադէին հետ. անկէց ալ 'ի Հայաստան քարոզութ՟ կատարեցաւ Որմեայ մօտիկ։ Ըստ ոմանց 'ի Բրիտանիա խաչին վրա բևեռեցաւ կռապաշտներէն։

ՇՄԱՒՈՆ ազգական Քրիստոսի էր եօթանասունն աշակերտաց մէկը, եղբայր Յակոբայ Արդար կոչեցելոյ և եղբայր Տեառն. որ նստաւ եպիսկոպոս յԵրուսաղէմ եղբօրմէն ետև։ Իսկ երբոր Դոմետիանոս ջարդեց Դաւթի ցեղին մնացորդը՝ Շմաւոն ապրեցաւ . վասն զի շատ ծեր էր . բայց անօրէն Հրեայք մատնեցին սուրբը՝ թէ կը քարոզէ զՅիսուս Թագաւոր ։ Դատաւորն կը պատկառէր Շմաւոնին ծերութենէն . սակայն հրէական չարախօսութեանցը համար հրամեց որ Յսի նման խաչեն սուրբ առաքեալը հարիւր քսան տարւան յամի Տեառն 108 ։

ՇՄԱՒՈՆ եպիսկոպոս Պարսից՝ էր փառահեղ ծեր եպիսկոպոսապետ փայլեալ սրբութբ և լուսաւոր վարդապետութեամբ՝ Շապուհ Թագաւորին ժամանակը . որ շատ ուրիշ քրիստոնեաներ ալ տանջեց , որպէս զի կրակապաշտ ըլլան ։ Ուստի հանել տուաւ առաջը զսուրբ եպիսկոպոսն ու երբոր յաղթեցաւ անոր զօրաւոր վարդապետութենէն՝ բանտը փակեց զերանելին , և սաստիկ հալածանք հանեց քրիստոնէից դէմ ։ Եւ հոն նախ սուրբ եպիսկոպոսին առջև գլխատեցին հարիւրաւոր աշխարհական և եկեղեցական անձինք . յետոյ կտրեցին իրեն գլուխը յամի 340 ։ Կրակապաշտներն տեսնելով նահատակներուն քաջութիւնը աւելի կատաղութեամբ շատ սուրբեր ալ նահատակեցին , որոնց մէջ երևելի էին Փուսիկ կիւրապաղատն և նորա Կուսան աղջիկն . նաև սուրբ Շմաւոնին երկու քուրերը , և Ազատ անուն ներքինին , հազարաւոր մարտիրոսներով ։ Մինչև ձանձրանալով անհաւատները դադրեցուցին հալածանքը ։

ՇՈՒՇԱՆ էր դուստր Քեղկեայ Հրէին և կին Յովակիմ իշխանին Յուդայի ազգէն ։ Այս առաքինազարդ տիկինը իրեն պարտիզին մէջ լուացուելու ատեն, երկու ծեր դատաւոր հոն պահուած ըլլալով՝ ցանկացան լրբութե̃ հետը մեղանչելու ։ Պարկեշտ կինը երբոր չհաւանեցաւ անոնց չարութեանը, աղաղակելով զրպարտեցին անմեղը, թէ տեսանք որ կորիճի մը հետ կը մեղանչէր. և միւս օրը վճռեցին որ մեռնի ըստ օրինաց ։ Երբոր կը տանէին, Շուշան դիմեց աղօթքով առ Աստուած. Դանիէլ մարգարէն ան ատեն եղաւ դիմացնին ու բողոքեց անիրաւներուն դէմ, որ նորէն քննեն ։ Երբ առանձին առանձին հարցուց Դանիէլ նոքա մէկզմէկ ստեցին ատեանին մէջ. ուր Շուշան արդարացաւ, և չար ծերերը սատկեցուցին 607 տարի Քրիստոսէն առաջ ։

ՇՈՒՇԱՆ՝ կոչեցեալ Վարդուհի կամ Վարդանուհի՝ էր դուստր սրբոյն Վարդանայ, որ կարգեր էր Վազգենի Վրաց բդեշխին հետ ։ Վարդանանց նահատակութենէն ետև երբոր Վազգէն կրակապաշտ եղաւ, Շուշան յանդիմանելով հրաժարեցաւ անկէ որ զգաստանայ ։ Իսկ երիկը կը ջանար որ Շուշանը հաւատքէ հանէ. ուստի վեց ամիս անօթի ծարաւ ծեծի տակ տանջեց մինչև տրորեցաւ սրբուհւոյն մարմինը. որ գոհութեամբ կը քաշէր ցաւը 'ի սէրն Քրիստոսի ։ Օր մը չարաչար ծեծէն ետև տագրը զինքն ազատեց անօրէն երկանը ձեռքէն. որ հաղորդուելով սուրբ խորհրդին աւանդեց հոգին 'ի 458. իսկ Վազգէն չարաչար պատժեցաւ Վրաց ալքայէն ։ Շուշան նահատակութենէն առաջ փախուց երկանը ձեռքէն զուրբ խաչն Կուսեայ 'ի Հայաստան. անոր համար մականուանեցաւ Շուշանայ խաչ ։

ՇՈՒՇԱՆ կամ ՍՈՒԶԱՆՆԱ Պաղեստինացի՝ էր դուստր քրմի կռոց, և մօր հրէի Մաքսիմիանոսի ատենը։ Այս կոյսն տասնըութ տարուան ըլլալով ծնողքը մեռնելէն ետև մկրտեցաւ ու ամէն բանը բաշխեց աղքատաց․ և ապա ածիլեց գլուխն ու էրիկ մարդու ձևով գնաց Երուսաղէմ, և ճգնեցաւ կրօնաւորաց վանքին մէջ քսան տարի․ ապա կին մը վառուելով անոր սիրովը, երբոր մերժեցաւ սուրբէն՝ գնաց եպիսկոպոսին չար խօսեցաւ վրան։ Իսկ եպիսկոպոսը երբոր քննեց իմացաւ կուսին սքանչելի առաքինութիւնը՝ այնչափ զարմացաւ որ շուտ մը սարկաւագուհի ձեռնադրեց ու ղրկեց կուսանաց վանքը․ ուր ծաղկեցաւ հրաշագործութեամբ։ Յետոյ սկսաւ քարոզել զՔրիստոս և աղօթքով կործանել կուռքերը․ ան ատեն Աղեքսանդրոս կռամոլ դատաւորը բռնեց կտրեց կուսին ծիծերը։ Բայց հրեշտակ Տեառն երբոր բժշկեց՝ դահիճներն ալ հաւատացին ու նահատակեցան սրով։ Ապա Շուշանին բերանը լեցուցին հալած կապար՝ և այնպէս ուրախութեամբ աւանդեց հոգին․ իսկ մարմինը հանգուցին եպիսկոպոսարանին մէջ մեծ պատուով ու տօնեցին։

Դիւցազն վեհութիւն կանացի բնութեան
Յամօթ համակէ զմոլիս այրական․
Տըկարք վերճեմեալ ճախրեն յեթերին
Յաղթել բուռն ախտից հզօրաց գոռ բազկին։
Զարթի՛ր ո՛վ այր դու պատկեր Արարչին,
Սան անմահ գործոց վիճակեալ բանին․
Ո՛չ քեզ թէ մեղկեալ շրջիս իբր անբան
Ո՛ւր փափուկ կուսանք անյաղթ քաջաման։

Ո ·

ՈԳԻ՝ Թէպէտ ըստ սուրբ գրոց է հոգի անմարմնոց և բանական մարդոյ՝ անմահ և անմասն , բայց հեթանոսներն մոլորեալ մտքով Ոգի կը կոչէին իրենց ընտանի չաստուածներն ու դևերը : Որոնց դրօշեալներն իբր ոգւոր՝ կը դնէին տեղ տեղ տներուն և խանութներուն մէջն ու կը պաշտէին՝ նուիրելով գինի և խունկ՝ յիմար աւելորդապաշտութեամբ , իբրև թէ զիրենք պիտի պահեն վտանգներէ : Եսայի այսպէս կը յանդիմանէ զանոնք · “ Ամաչեսցեն ամենեքեան որ ստեղծանեն կուռս , և դրօշեն զանօգուտն . . . զկէսն արար յաստուած դրօշեալ և խոնարհեալ երկիր եպագ նմա · յաղօթս կայ առ նա՝ և ասէ · փրկեա՛ զիս , զի աստուած իմ ես դու „ · և այլն : Եսա · ԽԴ :

ՈԴԻՍԵՒՍ կամ ՈՒԼԻՍԷՍ՝ էր խելացի և ճարտարախօս արքայ Իթակայ կղզւոյն Օանթայի մօտիկ · որ Տրոյական պատերազմին մէջ շատ քաջութիւններ և հնարքներ բանեցնելով աւելի մեծանուն եղաւ , մինչև տասը տարի պաշարելէն ետև Յոյնք առին այն փառաւոր քաղաքն ու կործանեցին սորա ճարտարութբ̃ն · անոր համար Աքիլլէսի զէնքն ընծայեցին

Ոդիսեւսին, ետքը շատ վտանգաւոր դիպուածներու մէջ ընկնելով և ազատելով քաջագործութեամբ դարձաւ իրեն կղզին տասը տարուան մէջ։ Հոմերոս և ուրիշ բանաստեղծներն նկարագրելով անոր ճամբորդութիւնն ու քաջութիւններն այնչափ բարձրացուցին առասպելաբանութեամբ, մինչև դիւցազանց և կիսաստուածոց կարգը հանեցին․ ինչպէս որ կը պատմէ իրեն որդին անուանի Տելեմաքը՝ բանաստեղծութեամբ մեծիմաստ Ֆէնէլոնի եպիսկոպոսին Կամբրեացւոյ։

ՈԶԱ՝ կը նշանակէ զօրութիւն, և է անուն Ամինադաբայ որդւոյն․ որ անզգուշութեամբ երկնցուց ձեռքն որ բռնէ տապանակը երբոր կը տանէին։ Այս գործքս տապանակին անպատուութիւն սեպուելով պատժուեցաւ Ոզա ու ընկաւ մեռաւ․ որ մեծ ահ և դող եղաւ բոլոր ժողովուրդին և Դաւթի։

ՈԼՈՄՊԻԱ՝ էր դուստր Ակունդաւի կոմսին ՚ի Կոստանդինուպօլիս, և ազգական Ոլիմպիադայ թագուհւոյն Հայոց, որ մնալով այրի կուսան կը բնակէր պատրիարքարանին մօտ ճգնութեամբ աղօթքով և պահքով․ նաև շատ բան բաշխելով աղքատաց և եկեղեցիներուն կը քաղաքավարէր սրբութեամբ։ Մանաւանդ ջերմեռանդութեամբ կը պատուէր սուրբ Յովհան Ոսկեբերանը դարմանելով հիւանդութեան ատենը․ իսկ երբոր աքսորեցաւ սուրբ հայրապետն Եւդոքսիայ թագուհիէն, Ոլիմպիան ալ շատ հալածանք քաշեց ու աքսորեցաւ վասն ճշմարտութեան, մինչև ուրախութեամբ կատարեցաւ ՚ի Նրիստոս․ ինչպէս որ գովութ̃ կը վկայէ սուրբ Ոսկեբերան , և եկեղեցին կը տօնախմբէ ։

ՈՂԲԻԱՆՈՍ կամ ՈՒԼԲԻԱՆՈՍ եպիսկոպոս Անիայի՝ էր Մաքսիմիանոսի հալածանքին ատենը ․ ուր կռապաշտներուն զոհին օրը բռնեցին սուրբն ու կը նեղէին որ զոհէ կռոց ։ Իսկ նա երբոր կը խրատէր զանոնք որ հրաժարին դիւապաշտ մոլորութենէն , նոքա տաք շամփուրով այրեցին կուրծքն ու կռնակը ։ Անկէց ետև Եղիանոս բդեշխն Անիացւոց տանջեց զսուրբը և աշկերտները ․ և երբոր չկրցաւ զանոնք խախտել սուրբ հաւատքէն՝ հրաման ըրաւ որ ողջ ողջ այրեն երանելիներն ։

ՈՆԵՍԻՄՈՍ կողոսացի՝ էր ծառայ Փիլիմոնի մեծատուն սիրելւոյն Պօղոսի ․ Ոնեսիմոս հեթանոս ըլլալով ցանկացաւ ազատութեան , ու գողնալով տիրոջը բաները փախաւ 'ի Հռոմ ։ Ուր երբոր տեսաւ սուրբ առաքեալը կապանքով՝ աշակերտեցաւ ու բոլոր սրտով դարձաւ առ Տէր և մկրտեցաւ ծառայելով անոր սըրտանց ։ Իսկ սուրբ առաքեալն կամելով շահիլ Փիլիմոնին սիրտը՝ յանձնարարական թուղթ մը գրեց անոր սրտաշարժ ոճով , ու Ոնեսիմոսին տուաւ ղրկեց ․ Փիլիմոն մեծ պատուով ընդունեց զնա որպէս եղբայր , և նորէն ղրկեց որ ծառայէ Պօղոս առաքեալին ․ Ոնեսիմոս եղաւ անկէց ետև երևելի աշակերտ և գործակից Պօղոսի ․ որ ազատելէն ետև կապանքէն ձեռնադրեց զինքն եպիսկոպոս և ղրկեց քարոզել Եւրոպիա և Ասիա ։ Ապա Յովհաննէս աւետարանչէն ետև նստաւ յաթոռն Եփեսոսի , լուսաւորելով հաւատացեալներն սուրբ վարդա-

պետութեամբ և սքանչելագործութեամբ, մինչ զի հեթանոսները բռնեցին տարին կապանքով 'ի Հռոմ վասն Քրիստոսի, և փակեցին բանտին մէջ անօթի ծարաւ տասնըութ օր. յետոյ ծեծի տակ ծունկերը կոտրելով նահատակեցին, և ըստ ոմանց քարկոծեցին յամի 109։

ՈՆՈՐԻՈՍ Ա. *ընտրեցաւ քահանայապետ Հռոմայ յամի* 625. *որ միակամնադաւան հերձուածին սկսած ատենը մեծ խոհեմութեամբ կառավարեց ընդհանուր եկեղեցին։ Բայց յետոյ Կոստանդինուպօլսոյ Սարգիս պատրիարգին խաբէական թղթին աչք գոցելով լռեց. և շուտ մը չդատապարտելուն համար զայն աղանդը՝ կողմնակից համարեցաւ միակամնադաւանից։ Որ կ'արդարացընեն երևելի աստուածաբաններն. իսկ ինքն վախճանեցաւ 'ի* 637։

ՈՆՈՐԻՈՍ Բ. *նստաւ հայրապետ Հռոմայ 'ի* 1124. *և առաքելական նախանձով բարեկարգեց ամէն վիճակները պատրիարգներուն եպիսկոպոսներուն, և առաջնորդներուն։ Նաև շահելով արքայից և իշխանաց սիրտը խաղաղացուց զաշխարհ և փառաւորեց եկեղեցին. հինգ տարիէն ետև վախճանեցաւ լաւութք*։

ՈՆՈՐԻՈՍ Գ. *ձեռնադրեցաւ քահանայապետ ընդհանուր եկեղեցւոյ 'ի* 1216. *որ իմաստուն քաղաքավարութեամբ ծաղկեցուց հաւատքը։ Հաստատեց կրօնաւորական կարգեր, հանեց իմաստուն քարոզիչներ և մեկնիչներ սուրբ գրոց. նաև հաւաքելով խաչակիր զօրք ղրկեց արևելք։ Նամակ գրեց Յովհան-*

նէս է. կաթուղիկոսին Հայոց. որպէս զի ձեռամբ Լևոն արքային օգնէ Լատիններուն. նաև գրեց պիտանի գրեանք. ապա ՚ի 1227 փոխեցաւ առ Տէր սրբութեամբ. Տ. Յովհաննէս է։

ՈՆՈՐԻՈՍ Դ. յաջորդեց Մարտինոս պապին ՚ի 1285, և մեծ խոհեմութեամբ զօրացուց զեկեղեցին Քրիստոսի. հաստատելով կրօնաւորական կարգերը. և հերձուածողներուն դէմ պայծառացուց ուղղափառ հաւատքը. բայց երկու տարիէն ետև վախճանեցաւ։

ՈՆՈՐԻՈՍ կայսր Հռոմայեցւոց յարևմուտ՝ էր պզտի որդի մեծին Թէոդոսի ծնեալ յամի 388, որ հօրմէն անուանեցաւ Կեսար. իսկ նորա մեռնելէն ետև Արկադէոս եղբայրը նստաւ կայսր արևելեան, և Ոնորիոս կայսր արևմտեան. բայց թոյլ վատասիրտ ըլլալով ամենևին քաջութեան գործք մը չկրցաւ ընելու թշնամեաց դէմ։ Այլ և Ալարիկոս Գոթաց թագաւորէն յաղթուելով և անոր հարկատու ըլլալով՝ Հռոմը շատ թշուառացուց. մինչև ազգն ապստամբեցաւ իրեն դէմ ու ինքն ալ փախաւ Ռաւեննա նստաւ։ Իր տրամութեամբ ջրգող եղաւ և խեղճութեան մէջ մեռաւ անորդի երեսունինը տարւան յամի 423. և իր վախկոտութեամբը պատճառ եղաւ կործանման հազար տարւան թագաւորութեն։ Տ. Արկադէոս։

Տիրող աշխարհի՝ հանճարն է քաջաց
Լծակցեալ չքնաղ առաքինութեանց.
Ոչ նախնեաց համբաւ ո՛ ազգի մեծութիւն
Գիտացին երբէք պահել զպետութիւն։

Թէ տիրել տենչաս մեծութեան երկրի
Նախ կրթեա՛ զքեզ քաջ 'ի գործ պիտանի.
Քանզի կրթանօք քաջալաւութեան
Մարդն է թագաւոր անմահ բանական։

ՈՆՈՓՐԻՈՍ սուրբ Հայրն՝ էր Ճգնաւոր եգիպտացի խստակրօն որ նախ վանքի մէջ կրօնաւորեցաւ. յետոյ առանձնացաւ խոր անմարդաբնակ անապատին մէջ խիստ ճգնութեամբ և խոկմամբ միացեալ Աստուծոյ հետ։ Հոն տեղ գտաւ նեղ խուց մը և քովն ալ արմաւենի ծառ, և ուրախ սրտով բնակեցաւ հոն վաթսուն տարի հրեշտակային վարքով։ Յետոյ եկաւ իրեն սուրբն Պափնուտիոս ճգնաւորն որուն պատմելով իր սքանչելի վարքը փոխեցաւ առ Քրիստոս։ Զոր թաղեց Պափնուտիոս ու գնաց պատմեց ճգնաւորներուն անոր բարի օրինակը։

ՈՍԿԵԱՆՔ էին հինգ սուրբ Ճգնաւորք պալատականք. որոնց գլխաւորն կ'անուանէր ըստ յն. Խ–է–ւէ, այս ինքն ոսկի. և դեսպանութեամբ գնացին Հռոմայէն առ Սանատրուկ թագաւորն Հայոց։ Ուր հանդիպելով Թադէոս առաքելոյն և տեսնելով անոր հրաշքները՝ հաւատացին Քրիստոսի, և քահանայ ձեռնադրեցաւ Ոսկին։ Այս սուրբ առաքելոյն նահատակութենէն ետև գնացին Եփրատ գետին գլուխը ճգնարան շինեցին՝ կրօնաւորեցան։ Իսկ քառասուներեք տարիէն վերջը ազդմամբ Տեառն գնացին քարոզելու Արտաշէս թագաւորին և Սաթինիկ թագուհւոյն Հայոց։ Որուն ազգականներն ու Սուքիաս իշխանը դարձուցին և մկրտեցին. երբոր լսեց Արտաւազդ արքայորդին կատղելով գնաց անոնց ճգնարանն ու մորթեց երանելիներն 'ի 107 ամին ։ Որոնց նշխարքը թաղեցին Սուքիասանք , և անոնց տեղը Ճգնեցան ։

ՕՍԻՈՍ գերիմաստ եպիսկոպոսն էր Սպանիացի Դիոկղետիանոսի հալածանքին ատենը . որ մեծ քաջութեամբ զօրացուց զսուրբ եկեղեցին , և արիական դաւանութեամբ Ճշմարտութեան անուանեցաւ խոստովանող ։ Յետոյ սիրելի և խորհրդական եղաւ մեծին Կոստանդիանոսի ու համոզելով գումարել տուաւ՝ Նիկիոյ սուրբ ժողովը ըստ հրամանաց սուրբ Սեղբեստրոսի պապին . և ինքն ալ նախագահ նըստաւ իբր փոխանորդ Սրբազանին ։ Կոստանդ կայսրը յետոյ արիոսեան աղանդով ապականած կը բռնադատէր զՕսիոս որ դատապարտէ ըզսուրբն Աթանաս ։ Իսկ նա քաջութեամբ դէմ կենալով ըսաւ . “Խոստովանեցայ զՅիսուս Քրիստոս 'ի հալածանսն . . . եթէ կամիս դու զնոյն (հալածանս) վերստին նորոգել , յօժարամիտ գտցես զիս 'ի կրել զամենայն , քան մատնիչ լինել Ճշմարտութեան , և տալ զհաւանութիւն դատապարտութեան անմեղին (Աթանասի) ” և այլն ։ Կոստանդ կապելով բանտը դնել տուաւ հարիւր տարուան ծերը . ուր շատ նեղութենէն ետև դարձաւ 'ի Սպանիա . և նզովելով զԱրիոսը վախճանեցաւ արդարութեամբ 'ի Դ . դարուն ։

ՈՍԿԻԱԲԱՆ կ'անուանի նա՝ որուն բանը կամ խօսքն է իբր անապական ոսկի , և բերանն է ոսկիաբուղխ , ինչպէս էր Բերանն ոսկի սուրբ Յովհան հայրապետն Պօլսոյ . նաև Պետրոս Ոսկիաբան մեղրածորան վարդապետ արեւմտեան ժամանակակից Ոսկեբերանին։ Տես ՚ի կարգին։ Որոնց աստուածաբուղխ վարդապետութիւնք եւ գրուածքն փայլեցան ինչպէս ոսկի, ըստ այնմ. « Սուրբն Ոսկեբերան Յովհան սքանչելին . . . Արժանապէս զոսկիաբանն պատուեսցուք։ Որ անապական բանին քարոզ կոչեցար բերան ոսկի. յորմէ աղբիւր կենաց հոսեալ, արբուցանելով քառավտակ բղխմամբ զընդհանուր տիեզերս »։

Ոսկիաբան Հայրք սուրբ եկեղեցւոյ
Ոսկեձոյլ բանիւք փայլիչք հաւատոյ՝
Տիեզերալոյս անուամբ գեղազան
Ընդ ոլորտս երկրի վերապատուեցան։
Հրճուեալ դու յարդիւնս ոսկիաբանից
Պաշտեա՛ զանգին երկս աստուածախօսից,
Օ ի պսակ շնորհաց շքեղ կապեսցի
Ի տիրականիդ գլուխ պանծալի։

ՈՎՍԷԷ՝ էր որդի Բէէրայ՝ Իսաքարայ ցեղէն, եւ առաջին 12 փոքրամատեան մարգարէից, ժամանակակից Եսայեայ։ Սա մարգարէացաւ ազդու քարոզութեամբ 760 տարի Քրիստոսէն առաջ, նկարագրելով Հրէից յանցանքն ու պատիժը սաստիկ ոճով. նաեւ յոյս տալով կը խոստանայ նոցա ազատութիւն, եթէ ձգեն մեղքն ու դառնան ճշմարտութեամբ առ Աստուած։ Եւ այս մարգարէութիւնն է ԺԴ գլուխ. իսկ ինքն վախճանեցաւ խաղաղութ՟բ եւ թաղեցաւ իր երկիրը Բէլամոթ։

ՈՐԴԵԳՐԱԿԱՆՔ՝ էին հերետիկոսք Դ. դարուն. որոնք՝ Նեստորին մոլորութեամբ կործանեալ կը հայհոյէին թէ Քրիստոս չէ որդի

Աստուծոյ, այլ որդեգրեալ։ Ասոր դատապարտեցան սուրբ Հայրապետներէն և Լատինաց ժողովքէն. որք սուրբ Կիւրղի վարդապետութեամբն սահմանեցին թէ Քրիստոս ըստ որում մարդ՝ է ճշմարիտ որդի Աստուծոյ, և ոչ որդեգիր. վասն զի միայն անձն աստուածային էր ՚ի Քրիստոս։

ՈՐՄԶԴԱՆ՝ էր փառաւոր նախարար Պարսիկ քրիստոնեայ և սիրելի ամենուն բարեպաշտութեանը համար. ուստի Յազկերտ արքայն շատ կը նեղէր զուրբն որ կրակապաշտ ըլլայ. իսկ նա քաջութեամբ պատասխանեց. Արքայ քաջ, թէ որ մէկ ծառայ ուրանար զքեզ՝ չէ՞ր դատապարտեր մահուամբ. ապա ո՛րչափ աւելի պատժոց արժանի է նա որ կ՚ուրանայ երկնից թագաւորը։ Յազկերտ բարկութեամբ անպատիւ ըրաւ իշխանն ու ղրկեց ուղտապաններուն քով։ Յետոյ փառաւոր զգեստ մը ղրկեց իրեն. որպէս զի առջի պատիւն միտքը բերէ. բայց նա արհամարհելով պատռեց նետեց. իսկ արքայն կատղելով գլխատեց զերանելին, որ տօնեցաւ։

ՈՐՄԻԶԴ ըստ Պարս. պայծառ ղամբար, էր անունն իրենց Զրուան չաստուածին որդւոյն. որով կ՚անուանէին զԱրամազդն կամ Դիոս։ Ասոր սուրբ Գիրքն որմզդական կը կոչէ ինչ որ նուիրած էր Որմզդին, զոր օրինակ "Որմզդական դիցն Ոլոմպիացւոց։ Որմզդական տօն, քաղաք։ Զհուրն որմզդական՝ որ ՚ի բագնին. . անշէջ հրամայէ լուցանել"։ Իսկ սուրբն Կիւրեղ այսպէս կը յիշէ. "Լուռ եղէց փարթար զՈրմզդի ՚ի կարապն փոփոխութիւն". և այլն։

Անոր վրայ Պարսից զրուցած առասպելները կը յիշեն մեր Եզնիկ և Եղիշէ վարդապետները, և լաւ կը յանդիմանեն անոնց մոլորութիւնները։

ՈՐՄԻԶԴԷՍ սուրբ Հայրապետն նստաւ քահանայապետ Հռոմայ և արժանաժառանգ յաջորդ Պետրոս առաքելապետին ՚ի 514։ Որ բարի նախանձով աշխատեցաւ մեծապէս․ որպէս զի սիրով կապէ արևելեան և արևմտեան եկեղեցիներն գրելով հոգելից կոնդակ առ Յուստինոս կայսրն հերձուածողները վերցնելու համար, այլովքն հանդերձ։ Ինքն ալ ժողովով սահմանադրեց լաւ կանոններ վասն բարեկարգութեան թէ եկեղեցականաց և թէ իշխանաց՝ հալածելով աղանդաւոր Մանիքեցիքը։ Ուստի թագաւորներն ալ անգլին և փառաւոր ընծաներով պատուեցին զսուրբն գլուխ ճանչնալով ընդհանուր եկեղեցւոյ և փոխանորդ Քսի։ Որ յետ շատ առաքելական գործքերու վասն պայծառութեան սուրբ հաւատոյ և ժողովրդեան փոխեցաւ առ Աստուած ՚ի 523, ՚ի սուգ ամենուն։

ՈՐՈԳԻՆԵԱՆՔ՝ էին հերձուածողք Զ․ դարուն, որք ապականեալ աղանդով կը մեկնէին Որոգինէսի գիտնական վարդապետին գրուածքը ծուռ մտքով․ և լրբութեամբ կը քարոզէին ա, թէ Քրիստոս որդեգրութեամբ միայն է աստուածորդի․ բ, Մարդկային հոգիք գոյացած էին մարմնին հետ չմիացած․ գ, Դատապարտեալներուն տանջանքն չեն յաւիտենական․ դ, Օր մը դեւերն ալ պիտի ազատին դժոխքէն՝ նոյէն Փրկչին չարչարանքովը․ Է, Աստղերն են հոգևոր, և այլն։

Ասոնց հետևելով Ափրիկեցիք մեծ խռովութիւն հանեցին եկեղեցւոյ մէջ․ մինչև հարկ եղաւ գումարել Կոստանդնուպոլսոյ Բ․ ընդհանուր ժողովը յամի 553, ուր ամէնքը նզովեցան։ Որոգինեան ուրիշ հերետիկոսներ ալ ետքը ելան․ որք հետևելով չարագործ զատ Որոգինէսի մը կը մերժէին ամուսնութիւնն ու կը գովէին գարշելի պղծագործութիւնը։ Ասոնք ալ դատապարտեցին սուրբ հայրապետները, մանաւանդ սուրբն Եպիփան և Օգոստինոս․ որոնք ազատ կը դնեն յայս չար մոլորութեանց զմեծն Որոգինէս սրբասէր վարդապետը․ որուն գրուածքը լի են ողջախոհութեան սիրով, և սրբութեամբ։

ՈՐՈԳԻՆԷՍ մեծն՝ էր որդի սրբոյն Լեոնիդեսի վկային ծնեալ յամի 185, և վախճանեալ՝ ի 253, մեծահամբաւ վարդապետ եկեղեցւոյ իմաստութեամբ և առաքինութեամբ ըստ վկայութեան սուրբ Հարց։ Սա աշակերտեցաւ սրբոյն Կղեմայ Աղեքսանդրացւոյն․ և ապա հաստատեցաւ վարժապետ և ուսուցիչ մեծանուն վարժատան Աղեքսանդրիայի․ որ դեռ տասնըութ տարուան էր, ու շատ գովեստով պատուեցաւ գիտուններէն։ Յետոյ շարադրեց աստուածիմաստ գրեանք հաստատելով զճշմարտութիւն հաւատոյ՝ բոլոր անյաղթելի քաջարտութեամբ և զօրաւոր պատճառներով, նաև անժխտելի պատասխանատուութեամբ ատեաններուն մէջ ընդդէմ անհաւատից և հերձուածողաց, մինչև ՚ի սուրբ Հարց մականուանեցաւ Ադամանդ անփշրելի՝ գլխահար հերետիկոսաց ։ Մեծ քաջութեամբ համբերեց շատ չարչարանաց վասն սուրբ հաւատոյ ․ և մեծ փափաք ալ ունէր արիւն թափելու և նահատակութեան 'ի սէր Քի իրեն սուրբ հօրը նման ։ Ուստի վասն այսպիսի աստուածսիրութե ձեռնադրեցաւ քահանայ յեպիսկոպոսէն Պաղեստինու և եղաւ ճշմարտութեան քարոզ և օրինակ առաքինութեանց , մինչև սուրբ հաւատքով լուսաւորեց ազգն Արաբացւոց և շատ հերձուածող անհաւատներ ։ Եղաւ մեծապատիւ ուսուցիչ երևելի սրբոց վարդապետաց ․ ինչպէս սրբոյն Գրիգորի սքանչելագործին , և Աթենագորասին և եղբօրն , այլ և շատ մարտիրոսաց ։ Եւ այսպէս արդեամբ , իմաստութեամբ և բարի վարքով անանկ գերապանծ հռչակեցաւ որ մոլորեալ նախանձոտ աղանդաւորները նորա գրուածներուն մէջ մոլար նախադասութիւններ ալ խօթեցին անիրաւութբ ․ ինչպէս էին Որոգինեանք և այլք , թէպէտև իր ամէն գրուածքներն ալ ազատ չէին քանի մը թիւր կարծիքներէ ։ Ըստ սուրբ վարդապետաց այնչափ բան գրեց Որոգինէս , որ կեանք մարդոյ չէ բաւական միայն կարդալու անթիւ մատեանքը ։ Որուն նրբախօս և համարձակ գրածները ոմանց շատ յանդգնական երևնալով արտաքսեցին զինքն իր վիճակէն և պաշտօնէն ․ որոնց համար այսպէս կը գրէ նոյն քաջ առաքինին ներողամիտ բարեպաշտութեամբ ․ “Պարտ եմ թողուլ զիմ թշնամիս և զրպարտողս 'ի դատաստանն Աստուծոյ ․ հաւատամ արդիւնաւորիլ գթալով 'ի վերայ նոցա , քան թէ ատելով ։ Մանաւանդ կամ է ինձ աղաչել զԱստուած՝ զի ողորմեսցի նոցա , քան թէ վրէժխնդիր լինել չարակամութեանց նոցին ․ որով հետև ծնեալ եմք վասն օրհնելոյ և ոչ վասն անիծանելոյ „․ և այլն ։ Յամի 1719 տպագրեցան աս տուրքին շատ գրեանքը և նամակներն իմաստալից, զոր օրինակել կուտար իրեն եօթն նօտարներուն ։

Քաջն Որոգինէս գերիմաստ բարուն
Ընդդէմ հերձելոց մարտիկ բռնագոյն,
Ծնեալ գերահրաշ պերճաբանութեամբ
Փշրեաց զանկրօն դենս իբրև ադամանդ ։
Ուղղափառ կրօնիս անյաղթ ախոյեան
Սարժիչ իմաստնոց յանծխօսութեան ․
Պճնեալ պերճ մանկամբք սուրբ զեկեղեցի
Փայլեցոյց փառօք ընդ դարս անյեղլի ։

ՈՒՐԱՆՈՍ՝ ըստ հնախօսից էր առջի թագաւոր Ատլանդեանց, և հայր Կռոնոսին ու Ատլասին ։ Որ ըստ պատմութեան Դիոդորոսի Սիկիլիացւոյն՝ ժողվելով այն կողմի վայրենի ժողովուրդը կրթեց քաղաքականութեամբ․ որով ընդարձակեց տէրութիւնը ։ Նաև տեղեակ ըլլալով երկնից լուսաւորներուն շարժմանցը՝ իմաց կուտար քաղաքայւոց աստղերուն և եղանակաց տարւոյն փոփոխմունքը, ծնունդ լուսնի, խաւարմունքն, և այլն ։ Ուրանոս երևցաւ այն տգէտներուն իբր երկնաքաղաքացի, որ երբոր մեռաւ, կոչեցին երկնային կամ երկինք, և երկինքն ալ Ուրանոս անուանեցին ։ Առասպելախօս դիցաբաններն ասկէց առին, ու կոչեցին Ուրանոսը հայր չաստուածոց և Դիոսի․ ժամանակն ալ նմանցուցին Կռոնոս չաստուածին որ կ'ուտէր իր տղաքը, ինչպէս որ ժամանակն ալ ամէն բան կը ծախէ կ'ուտէ ։ Սորա գլխուն վրայ դրած էր ժամացոյց վազող, մէկ ձեռքը օձաձև մանեակ նշան յաւիտենականութեան , և մէկալ ձեռքը մանգաղ հնձող մարդկային կենաց ։ Տ․ Կռոնոս ։

ՈՒՐԲԱՆՈՍ Ա․ սուրբ հայրապետն ընտրեցաւ գլուխ սուրբ եկեղեցւոյ յամի 226 ․ և առաքելական նախանձով ջանաց լուսաւորել և դարձընել 'ի Քրիստոս շատ հեթանոսներ ։ Նու շատերն ալ սորա սուրբ վարքը տեսնելով զօրացան հաւատքով ու մարտիրոսութեամբ նահատակեցան ։ Վայելուչ կանոնագրութիւն զարդարեց եկեղեցին ․ և աստուածային պաշտամանց անօթները ոսկեղէն և ականազարդ շինել տուաւ 'ի պատիւ սուրբ խորհրդոյն ։ Նաև աղքատասիրութեամբ ալ մեծանուն դովեցաւ այս սուրբ քահանայապետն ․ մինչև հեթանոսները նախանձելով բռնեցին ու շատ ջանացան որ դարձընեն , բայց խայտառակ եղան սուրբին քաջութենէն ․ մինչև գլխատեցին յամի 233 ։

ՈՒՐԲԱՆՈՍ Բ․ Գաղղիացի՝ օծաւ քահանայապետ Հռոմայ 'ի 1088 , և արիութեամբ կառավարեց ընդհանուր եկեղեցին , նաև մեծ արթնութեամբ տասներկու ժողովք գումարելով զօրացուց սուրբ հաւատքն , ու խափանեց հերձուածները ։ Հանեց Խաչակիր զօրք վասն ազատութեան Երուսաղէմի , և հիմնադրեց կրօնաւորական պիտանի կարգեր ։ Մինչև վախճանեցաւ բարեպէս 'ի 1099 ։

ՈՒՐԲԱՆՈՍ Գ․ յաջորդեց 'ի Հռոմ՝ սրբոյն Պետրոսի աթոռը 'ի 1185 , և գովելի առաքինութեամբ հետևեցաւ փառաւորել զեկեղեցին միաբանական սիրով։ Այլ և շատ ջանք ըրաւ վասն ազատութեան Երուսաղէմի․ ապա երբ որ լսեց թէ առնուեցաւ Եգիպտոսի սուլտանէն՝ խոր խոցուեցաւ անանկ որ սրտին ցաւէն մեռաւ յամի 1187։

ՈՒՐԲԱՆՈՍ Դ․ նստաւ քահանայապետ Հռոմայ 'ի 1261․ որ արդէն ընտրուած էր պատրիարգ Երուսաղէմի, և գեղեցիկ բարեկարգութեամբ պայծառացուց կրօնը․ նաև սուրբ հաղորդութէ̃ փառաւոր տօն սահմանեց Տօն մարմնոյ և արեան Փրկչին անուանելով, յետ ութօրէից հոգեգալստեան։ Եւ այսպիսի ջերմեռանդն բարեպաշտութեամբ փոխեցաւ առ Տէր 'ի 1264։

ՈՒՐԲԱՆՈՍ Ե․ սուրբ միանձն Բենեդիկտեան՝ ընտրեցաւ պապ Հռոմայ 'ի 1362․ որ մեծապէս ջանաց միաբանել Յոյները և Լատինները, գրեց կոնդակ Յովհաննէս կայսեր, և Յունաց պատրիարգին։ Որոնք յետոյ գնացին 'ի Հռոմ, և դաւանելով ուղղափառ հաւատքը միացան Լատինացւոց հետ, և եղաւ մեծ ցնծութիւն ամենեցուն։ Սուրբ հայրապետը լսելով Հայոց նեղձութիւնը շատ ցաւակցելով գրեց ազգին մխիթարութիւն քաջալերական․ և խոստացաւ օգնել անոնց։ Յետոյ գնաց յԱւենիոն, և հոն սրբափայլ վարքով մեռաւ վաթսուներմէկ տարուան 'ի 1370․ մահուան ատենն ալ եղան զարմանալի հրաշքներ, մինչև դասեցաւ սրբոց կարգը։ Ուրբանոս անուամբ նստան ուրիշ երեք հայրապետներ ալ Հռոմայ․ Ուրբանոս Զ․ նստաւ 'ի 1378․ և մեռաւ 'ի 1389։ Ուրբանոս Է․ նստաւ 'ի 1590․

տասուիրեք օրէն ետև մեռաւ ։ Ուրբանոս Ը․ նստաւ 'ի 1623 ․ և վախճանեցաւ 'ի 1644 ։

Ճարտար ղեկավարք համատիպք Փրկչին
Ընդ ուղիս փորձանաց ապահով անցին,
Անսասան պահեալ զնաւակ Պետրոսեան
Ի նաւահանգիստն հասին տիրական ։
Բայց լեր հետամուտ դու յանքոյթ նաւին
Անվեհեր մրցել ընդ հողմս փորձողին ․
Քանզի անխոտոր մատըն վեհագոյն
Խորտակէ զամպրոպս աշխարհիս ծովուն ։

ՈՒՐԻԱ Կարիաթարիմացի՝ էր մարգարէ Աստուծոյ, և ժամանակակից Երեմիայ մարգարէին, որ անոր խօսքովը կը գուշակէր թըշուառութիւնքն ու ամէն չարիքն Երուսաղէմի ․ որն որ երբ լսեց անօրէն Յովակիմ թագաւորն և իշխանները՝ կատղելով կ՚ուզէին սպաննել զՈւրիան ․ իսկ նա իմանալով փախաւ գնաց յԵգիպտոս ։ Սակայն նոքա հանել տուին անկէց ու մատնեցին արքային ձեռքն, որ կոտրտել տուաւ զսուրբ մարգարէն, և մարմինն ալ նետեց հասարակաց գերեզմաննոցը ։ Կարծէր անհաւատը թէ ասով պիտի խափանէր Աստուծոյ պատիժները, որոնց արժանի էին ․ բայց սուրբ մարգարէին գուշակութիւնքը մէկէնիմէկ կատարեցան, և անօրէնները պատժուելով կորան չարաչար ․ նաև Երուսաղէմ կործանեցաւ, և Յովակիմ ալ ազգովը գերի ընկաւ Բաբելացւոց շատ թշուառութեամբ ։

ՈՒՐԻԷԼ՝ ըստ Եբր․ կը նշանակէ Լոյս կամ հուր Աստուծոյ ․ որ է անուն հրեշտակին լուսոյ ըստ Հարց սրբոց ․ ինչպէս կը յիշատակեն աղօթքներուն և եկեղեցական գրեանց մէջ՝ հայցելով նորա օգնականութիւնը ։ Ոմանք ալ անուանեցին զՈւրիէլ հրեշտակապետ խնամակալ, և վերակացու ամէն ստեղծուածներուն աշխարհիս վրա . ասեն եթէ ինքն յայտնեց փիլիսոփայից՝ աստղերուն և մոլորակներուն շրջանները, տարին, ամիսը, ժամանակը ։

ՈՒՐՍԻԿԻՆՈՍ՝ էր Լիւրիկեցի քաջ զօրապետ և տրիբուն, որ Մաքսիմիանոսի սաստիկ հալածանքին ժամանակը գնաց զարմանալի քաջութեամբ յայտնեց եպարքոսին իր քրիստոնէութիւնը ։ Իսկ կռապաշտները անողորմ տանջելով երբ չկարացին յաղթելու սուրբին ու խայտառակեցան, փաթթեցին ձիթոտ կտաւով, վրան ալ ցանեցին ծծումբ ու վառեցին հրով . երբոր սոսկալի կը բռնկէր՝ սկսաւ աղաղակել սուրբ վկայն . «Արժանի՞ է ձեռքս այս տանջանքին, որ ապրեցուց զբռնաւոր արքայն թշնամին ճշմարտութե պատերազմին մէջ» ։
Ան ատեն յիշելով իշխանները սրբոյն մեծամեծ երախտիքը՝ ազատել տուին զերանելին ։ Բայց հեթանոսներն յետոյ նորէն բռնեցին տանջեցին չարաչար, և երբոր տեսան սուրբը անփոփոխ 'ի սէրն Քրիստոսի՝ գլխատեցին ։

ՈՒՐՍՈՒԼԱ կամ ՕՐՍՈԼԱ սրբուհի կոյսն գեղեցիկ, էր միամօր դուստր Դէոնոտոսի հաւատացեալ արքային Բրիտանիոյ 'ի Ե . դարուն . զոր նշաներ էին հեթանոս թագաւորին որդւոյն ։ Բայց սուրբ կոյսն չուզելով հարս ըլլալ ժողվեց բազմութիւն կուսանաց ընկեր իրեն, ու ելաւ նաւով փախչելու, և որչափ որ անհաւատ աղջիկներ կային հետը, կրթելով և լուսաւորելով զամենքը քրիստոնեայ ըրաւ ։ Գնաց Հռոմ կատարեց ուխտը, անկէ անցաւ ՚ի Գերմանիա և Կողոնիա, ուր ընկան բարբարոս Հոնաց ձեռքը ։ Ան ատեն սուրբ հաւատքնին անարատ պահելու համար զօրացան ընդդէմ կռապաշտներուն և կուսական մաքրութեամբ ու հաստատ յուսով ապաւինեցան յԱստուած. և ամենևին չի մօտեցան քաջութեամբ պիղծ հեթանոսներուն ։ Ուստի զուարթութեամբ նահատակեցան ՚ի սէր Քրիստոսի քաջալերութեամբը Օրսուլայ կուսին. որուն կը փափաքէր զօրապետն Հոնաց, որ առնու կին իրեն. բայց սուրբ կոյսն արհամարհեց անոր հրապուրանքն ու ամէն սպառնալիքն ։ Իսկ բարբարոսն կատղելով զարկաւ նետով նահատակեց երանելին բոլոր ընկերներովը յամի 455. որոնց սուրբ նշխարքը գտան հրաշքով ՚ի 1250 և տօնեցան ։

Օրիորդ չքնաղ Ուրսուլա կուսան
Հարսըն Քրիստոսի ամբիծ անման,
Առաքինափայլ հանդոյն անմարմնոց
Ահաւոր դիւաց փարելի վերնոց ։
Երկնապանծ շնորհօք ժրագլուխ արին
Գործեաց մեծամեծս ՚ի սէր անմահին.
Կուսական մարմնով յաղթեալ բռնութեց
Եւ երամովըն ՚ի դասս անդրանկաց ։

* * *

Չ.

ՉԻՉԻԼԻԱ կամ ԿԻԿԻԼԻԱ, այս ինքն Կորգիչ՝ էր անուանի կոյս Հռոմայեցի, և դուստր հեթանոս իշխանի 'ի Գ. դարուն. որ նշանած էր Վալերիանոսի ազնուական երիտասարդին հետ: Բայց հարսնիքէն առաջ սուրբ կոյսն հաւատալով Քրիստոսի մկրտեցաւ ձեռամբ սուրբ Ուրբանոսի Ա. հայրապետին Հռոմայ, և ծածուկ պահեց քրիստոնէութիւնը մինչև հարսնիքին օրը: Նա երբոր առանձին եղաւ՝ ըսաւ Վալերիանոսի իւր փեսային. Գիտնաս որ երկնաւոր անմարմին հրեշտակն զիս շատ կը սիրէ մաքուր կուսութեանս համար, անանկ որ՝ եթէ մէկը մօտենայ ինձի, կամ թէ որ դպչիս ինձի՝ կը կորսնցընէ զքեզ. իսկ եթէ պահես զիս անարատ, զքեզ ալ ինձի պէս կը սիրէ ու կը ցուցընէ Աստուծոյ փառքը: Նա ատենը խնդրեց Վալերիանոս որ տեսնէ հրեշտակը. պատասխանեց կոյսը. Կը տեսնես թէ որ հաւատալով Քրիստոսի մկըրտուիս: Նա ալ գնաց առ սուրբ Ուրբանոս պապն, Ճշմարիտ դաւանութեամբ մկրտուեցաւ. ու երբոր դարձաւ տուն, տեսաւ որ Չիչիլիան աղօթք կ'ընէր, հրեշտակն ալ բոցափայլ և հրաթև՝ քովը կեցած էր, որ ծաղկէ մէյմէկ պսակներ դրաւ երկուսին ալ գլուխը:

Վաղերիանոս հոն խնդրեց հրեշտակէն որ Տիբուրտիոս մեծ եղբայրն ալ ըլլայ քրիստոնեայ, ինչպէս որ եղաւ ։ Վասն զի հրեշտակն երթալէն ետև եղբայրը երբոր գնաց անոնց շնորհաւորելու՝ հոն առաւ անոյշ վարդի և շուշանի հոտ անոնց գլխէն, և երբ լսեց անոնցմէ պատճառը, հաւատաց Քրիստոսի, և մկըրտուելով սուրբ հայրապետէն արժանի եղաւ հրեշտակին տեսութեանը ։ Մինչ զի եղբօրը հետ մէկտեղ սկսան թաղել նահատակներուն մարմինը ջերմեռանդութ̃բ ։ Ապա կռապաշտները բռնեցին զիրենք ու տանջելով նահատակեցին, ուր Մաքսիմոս դահճապետը տեսնելով անոնց առաքինութիւնը և հրաշքը դարձաւ 'ի Քրիստոս և նահատակ եղաւ ուրիշներուն հետ մէկտեղ ։ Յետոյ հանեցին յատեան զսուրբ կոյսն Կիկիլիա, որ հրաշքներով շատ հոգի դարձուցեր էր, և քաջութեամբ դաւանեց քրիստոնէութիւնը․ զոր ձգեցին տաք բաղնիքին մէջն ու տանջեցին անգթութեամբ, ապա իրեք օրէն ետև գլխատեցին ։

ԿԻՐՔՈՒՄԶԵԼԼԵԱՆՔ՝ էին Դոնատեան աղանդաւորք, որ կը նշանակէ Թափառականք․ վասն զի ասդին անդին շրջելով կը ստիպէին հարուստներն որ գերինին ազատեն ու առնելիքնին բաշխեն ։ Անոնք իրենց չի հետևողներն հալածելով կը պատուհասէին անիրաւութ̃բ․ և գլխաւորներն էին Մաքսիտոս և Փախսեր․ որ կը քարոզէին յամի 340ին այսպէս, թէ որ մէկը զինքն կրակը ձգէ, կամ կամաւ վերէն վար ձգէ ու մեռնի՝ մարտիրոս կ'ըլլայ ։ Անոնց հետևող լիրբ կանայք դատարկ շրջելով և շատերը գլխէ հանելով մեծ խռովութիւն ձգեցին. մինչև եկեղեցին զամէնքն ալ նզովելով կորուց: Ապա 'ի ԺԴ. դարուն ելան այս անուամբ ուրիշ հերետիկոսներ, որոնք կը մերժէին ամէն եկեղեցական առաջնորդներն և զհայրապետն Հռոմայ իբրև մոլորեալք և անարժան խորհուրդ կատարելու: Բայց իրենք էին մոլի և ախտաւոր անկրօն. ուստի շուտով դատապարտեցան, և չար գործքովնին ջնջեցան:

ՉՈՐԵՔԵԱՆՔ՝ էին այն աղանդաւորք, որք չորրորդ թիւը աւելորդապաշտութեամբ կը պատուէին իբր սրբազան, և կը ջանային ամէն բաներնին չորսով կատարելու. որպէս զի յաջողութիւն գտնեն: Այսպէս կոչեցան նաև Շաբաթականք. որք միայն չորեքշաբթի օրերը սուրբ համարելով ծոմապահութեամբ քաղցած կ'անցընէին: Դարձեալ Չորեքեանք անուանեցան մոլորեալ Մանիքեցիք. վասն զի կ'ըսէին հայհոյութեամբ թէ չորս անձինք են յամենասուրբ Երրորդութեան և չորրորդութիւն, և այլն: Բայց ամէնքն ալ նզովեալ ոչընչացան, ըստ պատմութեան հին սուրբ Հարց:

ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵԱՑՔ՝ էին հրէամիտ աղանդաւորք Դ. դարուն, որ կը քարոզէին, թէ պէտք է տօնել զատիկը Հրէից հետ մարտի ամսուն լուսնի տասնըչորսին: Սոքա շատ խռովութիւն հանեցին եկեղեցւոյ մէջ ուզելով հին օրէնքը նորոգելու, և նորը խափանելու: Որոնց բանը և մոլորութիւնը հրամանաւ սրբոյն Սեղբեստրոսի պապին սաստիկ քննեցին Նիկիոյ սուրբ ժողովքին մէջ սուրբ հայրապետներն ու նզովեցին թէ՛ այս չար աղանդը, և թէ՛

աղանդաւորները · նաև հաստատեցին կանոններով Ճշմարտութիւնը յամի 325 ։

Սոհմակ քանասար աղանդաւորաց
Ցրուել ցանկացան զհօտ սուրբ ոչխարաց ·
Որոց գլխահար հովիւք քաջազօր
Փշրեցին ժանիս ընջեցին անզօր ։
Վերացի՛ր անյողդողդ ընդդէմ թշնամեաց
Ճ՛շմարիտ որդի Ճշմարիտ հովուաց ,
Կա՛ց քաջ հաստատուն ՚ի Ճշմարտութեան
Օ ի Ճշմարտութիւն է միշտ յաղթական ։

Պ.

ՊԱԼԼԱԴԻՈՍ՝ էր գիտնական անապատաւոր կապադովկացի, որ յամի 401 ձեռնադրեցաւ եպիսկոպոս Բիւթանիոյ. և ներքին բարեկամ ըլլալով սրբոյն Յովհաննու Ոսկեբերանին մեծ քաջութեամբ պաշտպան կեցաւ սուրբին: Մինչև աքսորեցաւ աթոռէն ու շատ տեղեր հալածական շրջելով հաւաքեց սրբոց և անապատաւոր Ճգնաւորաց վարքերն ու 'ի լոյս ընծայեց 'ի 420, որով շատ շինութիւն եղաւ ամենուն: Սորա անուամբ կայ տրամախօսութիւն բանասիրական, ուր կը բովանդակի Ոսկեբերանին վարուց պատմութիւնը:

ՊԱԼԼԱՍ կամ ԱԹԵՆԱՍ, և ըստ մեզ Նանէ՝ է մեծահամբաւ աստուածուհի իմաստութեան և արուեստներու, նաև պատերազմի, որ ըստ առասպելաց ծնած է Դիոսին ուղեղէն: Անոր համար չի կարգուեցաւ. զի կուսութիւնը շատ կը սիրէր. և այնչափ մեծ պատիւ կուտային իրեն դիցամոլք, որ Դիոսէն ետև զինքը դասեցին՝ զինուորեալ և ձեռքը նիզակով, ոտքին տակն ալ բու և գործիք ուսմանց, նշան իմաստութեան և պատերազմի: Ամենէն աւելի Աթենացիք կը պատուէին զԱթենաս ։ Հայերն ալ ասոր կուռքը դրեր էին մեծ պատուով Թիլ աւանը Հայաստանու ու կը պաշտէին հանդիսով, զոր կործանեց սուրբ հայրն մեր Լուսաւորիչ ։ Հռոմայեցիք սորա տօնը կը կատարէին յունուարի 3ին, և կը տևէր մինչև 'ի 9 մարտի . և նոյն միջոցը աշկերտներն ընծայ կը տանէին վարժապետներուն 'ի պատիւ Պալլասայ, որ լաւ սորվին և գիտուն ըլլան Աթենասին շնորհքովը ։

Աւանդ իմն մեայլ պահեալ յօտարաց
Թուի գոլ 'ի սուրբ գրոց և 'ի նախահարց .
Եթէ բանն Աստուած նախ քան զարուսեակ
Ծնեալ 'ի Հօրէ գեր քան զօրինակ ։
Առ վսեմութեան շքեղ գիտութեանց
Ծնող իմաստից եղին զԱթենաս .
Ջաղջախմամբ գլխոյ մեծին Դիոսի
Մայրն իմաստութեան ասեն ելանտի ։

ՊԱԼՀԱՒՈՒՆԻՔ կամ ՊԱՀԼԱՒՔ՝ էին փառաւոր նախարարք և եղբարք Պարթևազեան Արտաշեսի արքային Պարսից 'ի Պահլ քաղաքէն . որոնք իրեք ցեղ բաժնուած էին՝ Կարենի, Սուրենի, և Ասպահապետի պալհաւք ։ Սուրենեան ցեղէն էր Անակ սուրբ Լուսաւորչին հայրը . որ անցաւ Հայաստան ու նենգութ՟բ սպաննեց զմեծն Խոսրով Տրդատ թագաւորին հայրը ։ Տես 'ի կարգին ։

ՊԱԽՈՄԻՈՍ սուրբ հայրն Եգիպտացի՝ էր զաւակ հեթանոսի, և քսան տարւան մտաւ կարգն զինուորութեան . որ տեսնելով քրիստոնէից բարի վարքն ու գործքը՝ հաւատաց Քրիստոսի և սկսաւ սորվիլ քրիստոնէութե օրէնքը․ յետոյ բանտն ալ մտաւ վասն սուրբ հաւատոյ ։ Սուրբ Կոստանդիանոս հալածանքը վերուց , սուրբն Պախոմէոս բանտէն ազատեցաւ , ու գնաց անապատը ձգնեցաւ սրբութեամբ․ և շատ ծաղկեցուց կրօնաւորութիւնը նաև բիւրաւոր ձգնաւորներով և աշկերտներով լեցուց իր շինած վանքերը ։ Կը պատմեն թէ ամէն կիրակի կը ժողվէին քովը հինգ հազար միանձունք պաշտօնեայք տօնախմբելով Քրիստոսի սուրբ յարութիւնը ։ Սուրբ Հերոնիմոս հաւաքեց այս սուրբ ձգնաւորին կանոնները ու լատիներէն դարձուց ։ Իր քրոջը ձեռքով ալ կուսանաց վանքեր հաստատեց , ու շատ սրբասէր կուսանքներով ծաղկեցուց ։ Յետոյ նոյն սուրբ վարքով փոխեցաւ առ Քրիստոս և տօնեցաւ յամի 348 ։

ՊԱՀԱՊԱՆ Հրեշտակք՝ են զօրք Աստուծոյ պահպանիչ և օգնական մարդու և աշխարհիս , վասն զի ըստ սուրբ գրոց ամէն մարդ և հաւատացեալք ծննդենէն 'ի վեր ունին պահապան հրեշտակ մը ։ Աբրահամ՝ օրհնեց իր ծառայն ասելով․ “ Տէր Աստուած երկնից․․․ առաքեսցէ զհրեշտակ իւր առաջի քո ” ։ Նոյնպէս Յակոբ օրհնելով թոռներն ասաց․ “ Հրեշտակն որ փրկեաց զիս յամենայն չարեաց , օրհնեսցէ զմանկունս զայսոսիկ ” ։ Որ և հաստատեց Փրկիչն․ “ Ասեմ ձեզ , զի հրեշտակք նոցա յերկինս՝ հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ ” ։

Անոր համար սուրբ եկեղեցին փառաւոր տօն դրաւ պահապան հրեշտակաց՝ վասն զգաստութեան մարդկան սուրբ գրոց վկայութ̃բք հաստատելով այս ճշմարտութիւնը , ինչպէս․

“ Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, 'ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո ։ Յորժամ կայցեր դու յաղօթս և նուն քո Սառա՝ ես մատուցի զյիշատակս աղօթից ձերոց առաջի սրբոյն ” . և այլն ։ Տ . Հրեշտակք ։

Աստուածահրաշ գործ վերին տեսչութեան
Ի խնամ արկանել հոգւոց փրկութեան
Պահապան մարդկան կարգէ զօրս վերին
Անվրէպ առաջնորդ յերկրէ մինչ յերկին ։
Օ՜ ինչ քան զայս չքնաղ պարծանք հողածնաց
Յանձնիլ 'ի Տեառնէ 'ի պահ հրեշտակաց .
Այլ պարտ է 'ի սուրբս յարիլ սուրբ ամբիծ
Փառաբանել զՆա ընդ հրաբուն սրտից ։

ՊԱՂԷՍ՝ էր հեթանոսաց ատենը չաստուածուհի հովիւներուն իբր պահապան խաշանց ։ Որուն կը մատուցանէին մեղր և կաթն , որպէս զի պահէ զիրենք և ոչխարները գայլէն և ամէն վտանգներէն ։ Դարձեալ կ՚ընծայէին անոր եփած գինի , կորեկ , և ցորեն . ու ոչխարները ման կը բերէին կուռքին չորս բոլորը խնդրելով անասնոց համար ապահովութիւն գազաններէն և ցաւերէն ։ Նաև երբեմն Պաղէսը պատուելու համար հովիւներն սեղանին քով կրակ կը վառէին ու աւելորդապաշտութեամբ բոցին վրայէն կը ցաթկէին , ինչպէս որ կը պատմէ Ովիդիոս ։

ՊԱՄՓԻՒՂՈՍ՝ էր սուրբ քահանայ Պաղեստինու , որ կը փայլէր առաքինութեամբ և աղքատսիրութեամբ , լաւ սորված ըլլալով աստուածային և արտաքին գիտութիւնները ։ Այնչափ ուսումնասէր էր , որ իւր ձեռօք շատ գրքեր օրինակեց, և հաւաքեց ընտիր օրինակներ սուրբ գրոց և երևելի հեղինակաց իբր երեսուն հազար․ զոր ընծայեց իրեն եկեղեցւոյն։ Դարձեալ օրինակեց Որոգինեսին շատ գրեանքը․ նաև շարադրեց համառօտ մեկնութիւն Գործոց առաքելոց։ Մաքսիմիանոսի հալածանքին ժամանակը Ուրբանոս դատաւորը բռնեց սուրբը, տանջելով բանտը փակեց․ ուր սկսաւ յօրինել ներբողական ճառը 'ի պատիւ Որոգինեայ, զոր կատարեց յետոյ Եւսեբիոս Կեսարացին։ Վասն զի Փերմիլիանոս կռամոլ իշխանը բանտէն հանեց զսուրբն Պամփիլոս ու շատ տանջեց․ բայց նա մեծ քաջութեամբ երբոր հաստատ մնայ 'ի սէրն Քրիստոսի՝ կատարեցաւ սրով 'ի 308․ և իրեն հետ տասը վկաներ ալ կատարեցան։ Եւսեբիոս մեծ գովեստով գրեց սուրբ Պամփիլոսի վարքը իրեք գիրք բաժնելով․ սուրբն Յերոնիմոս ալ և այլք շատ կը յարգեն զերանելին։

ՊԱՆ չաստուած դաշտաց՝ ըստ առասպելաց էր որդի Յերմեայ, կամ Արամազդայ։ Սա ըստ բանաստեղծից՝ Սիրինկայ յաւերժահարսին ետևէն ընկաւ, նա ալ զինքն Լադոնի լիճը ձգելով եղէգ փոխարկեցաւ ու բուսաւ լճին քով։ Իսկ Պան կտրելով ձևացուց անով առաջին սրինգն, կամ եղեգնափողն (մըսխալ) ըստ Վիրգիլիոսի։ Սա և համարեցաւ ծնող այծամարդոց և չաստուած բնութեան, և այլն։ Սորա կուռքն էր բոցակնեայ կամ բոցաչուի․ և գլուխն երկու կոտոշով, կուրծքը աստղանըշան, կէսէն վար մազոտ այծանման․ ձեռքը սրինգ մը կամ կեռ գաւազան։ Եւ այնչափ սարսափելի էր դրօշեալը, որ ռամիկները կարծէին թէ բոլոր գիշերը կը շրջի լեռներն ու դուրսերը · և այսպիսի փուճ երևակայութ̃բ սոսկալով կը դողային առասպելական Պանէն ։

ՊԱՆՏԱԼԷՈՆ Նիկոմիդացի՝ էր որդի կռապաշտ իշխանի և մօր քրիստոնէի Մ՝աքսիմիանոսի ատենը · որ սորվեցաւ բժշկութեան ուսումն Եփրոսինոս բժշկապետէն ։ Իսկ հաւատքը սորվեցաւ Երմողայոս սուրբ քահանայէն և լուսաւորեալ աշակերտեցաւ ծերուն ։ Ապա տեսնելով ճամբուն վրա մեռած տղայ մը օձէն զարնուած , Յիսուսին անուամբը ողջացուց , և մէկէն դարձաւ գնաց սուրբ Երմողայոսին ու մկրտուեցաւ ։ Անկէ ետև որչափ հիւանդ կ'ըլլար , կը բժշկէր հրաշքով · և այնչափ անուանի եղաւ , մինչև լսեց թագաւորը , և բռնեց կատաղութեամբ նահատակեց զսուրբն Երմողայոս երկու ընկերով ։ Պանտալէոն ապա դարձուց հայրը 'ի հաւատս Քրիստոսի , և ջարդեց բոլոր մեծագին կուռքերն ու բաժնեց աղքատաց · ուստի բռնեցին սուրբը կապեցին և հանեցին բռնաւորին առեանը · ուր անվախ դաւանելուն համար զճշմարտութիւնը սաստիկ ծեծելով մարմինը կրակով խանձեցին ։ Ան ատեն Տէրն մեր երևցաւ սրբոյն Երմողայոսին կերպարանքով քաջալերեց և զօրացուց ։ Յետոյ ոտքը քար կապեցին ու ծովը նետեցին · ուսկից հրեշտակն ազատեց , նաև գազաններէն ալ պահեց · մինչև ապա գլխատեցին զերանելին ։ Ուր երբոր արիւնին տեղը կաթ ու ջուր վազեց՝ շատ մարդիկ հաւատացին Քրիստոսի · յետոյ շատ հրաշքներով ալ փառաւորեցաւ սքանչելի պատանին Պանտալէոն և տօնեցաւ ։

ՊԱՆՏԵՆՈՍ՝ էր Սիկիլիացի փիլիսոփայ 'ի Բ. դարուն, որ եղաւ գահագլուխ վարժապետ համալսարանին Աղեքսանդրիոյ. ուր սուրբ Մարկոսէն ետև սովորութեամբ միշտ կար մեկնիչ մը որ կը մեկնէր հաւատացելոց սուրբ Գիրքն: Այն ատենը Հնդստանցիք խնդրեցին Աղեքսանդրիոյ պատրիարգէն թարգմանիչ մը սուրբ Գրոց իմաստուն մտօք: Ան ալ ղրկեց Պանտենոսը. որ կրթեց զանոնք ուսմամբ և հաւատքով. մինչ զի լուսաւորելով զանոնք կորուց կռոց մոլար ուսմունքը, և աւելորդապաշտութիւնները քրմաց և պրահմնից, ու ծաղկեցուց աստուածպաշտութիւնը այլովքն հանդերձ: Եւսեբիոս կը պատմէ թէ Պանտենոս հոն գտաւ Մատթէոսի աւետարանը գրած եբրայեցերէն Բարթուղիմէոս առաքեալէն մնացած: Ալ ինքն փառաւորապէս կատարելով իր առաքելութեան պաշտօնը դարձաւ փառօք յԱղեքսանդրիա. և սկսաւ մեկնել սուրբ Գիրքը առանձին դպրոցի մէջ. իսկ համալսարանը յանձնեց իր աշկերտին Կղեմայ Աղեքսանդրացւոյ: Յետոյ առաքինի քաղաքավարութեամբ վախճանեցաւ և գովեցաւ հին պատմիչներէն: Տ. Կղեմէս Աղեքսանդրացի:

ՊԱՊ՝ էր թագաւոր Հայոց Արշակունի որդի Արշակայ Բ. որուն հայրը Պարսից ձեռքը մատնուելէն ետև, սուրբ Ներսէս մեծն՝ խնդրելով Թէոդոս կայսերէն թագաւորեցուց զՊապ, որ պատանդ էր 'ի Պօլիս: Իսկ կայսրը ղրկեց զՊապ իրեն զօրքով և Տերենտիոս զօրապետով 'ի Հայաստան 'ի 382: Սակայն ապերախտ արքայն երբոր յանդիմանեցաւ սուրբ Ներսէսէն չար վարուցը համար՝ թունամահ ըրաւ սուրբը․ անկէ ետեւ աւելի չարանալով ապստամբեցաւ կայսերէն ։ Իսկ նա Տերենտիոսին ձեռքով բռնել տուաւ զանիրաւ Պապն ու կացնով սպաննել տուաւ անարգութեան համար յամի 384 ։

Ժանտաժուտ վատթար Պապ ապերասան
 Գժնեայ ապերախտ տմարդի գազան․
 Խամրեցեր ըղձրագ ազգիս լուսատուն
 Օծին լուսաւորչեան Ներսէս շնորհագոյն ։
Վարձ ապիրատիդ հուրն անշէջ դաժան
 Փոխան Հօր լուսոյ՝ գունդ դիւաց գեհեան․
 Ըստ սատակամահ օրհաս դժնդակ
 Ընդ անքուն որդանց լեալ անվերջ ճարակ ։

ՊԱՊ լիկէացի՝ էր աստուածապաշտ առաքինի, որ Մաքսիմիանոսի հալածանքին մէջ շատ հեթանոսներ դարձուց 'ի Քրիստոս ։ Ասոր դատաւորը բռնեց և տանջելէն ետև բանտը փակեց, ու քերթել տուաւ մարմինն խորտակելով կղակը ։ Վերջը երկըթէ կօշիկ ագուցին ոտքն ու սուր գամերով գամեցին, և այնպէս քալցուցին մինչև 'ի Սելևկիա․ ուր ժանտաթզենուն տակը աւանդեց հոգին․ անկէց ետև այն ծառն անոյշ թուզ պտղաբերեց սուրբին հրաշքով ։ Եւ կին մը մաքուր լաթով սրբեց վկային արիւնն ու դրաւ կոյրի մը աչքի վրա, մէկէն բացուեցաւ ։

ՊԱՊԻԱՍ եպիսկոպոս Յերապօլեայ՝ էր աշակերտ սուրբ Յովհաննու աւետարանչին և ընկեր սրբոյն Պօղիկարպոսի ։ Սա ըստ ոմանց հետևեցաւ կարծեաց Հազարամեայց՝ դնելով թէ աշխարհքիս ետքը մեռելները յարութիւն առնելէն ետև Տէրն մեր Քրիստոս պիտի գայ աշխարհք ու հազար տարի թագաւորելով սրբոց հետ Երուսաղէմ՝ արդարքն պիտի զմայլին փրկչին հետ ամենակերպ հրճուանօք, և այլն : Իսկ այս մոլորութիւնն եղաւ ծուռ իմանալով Յայտնութեան այս մթին բանը. "Եւ թագաւորեսցեն ընդ նմա հազար ամ" : Կերինթոս աղանդապետն չարաչար մեկնելով զայս բնաբանը կը քարոզէր թէ արդարք յարութեան ատենը պիտի գան և մարմնաւոր հեշտութեամբ ուրախանան հազար տարի ու ետքը պիտի երկինքն ելլեն, և այլն : Սակայն զայս մոլորութիւն ամէն սուրբ հայրապետք նզովեցին ըստ կանոնի սուրբ եկեղեցւոյն : Պապիաս ունի գրուածներ, և շատ կը սիրէր առաքելոց աշակերտներն ու քարոզիչները : և երբոր կը տեսնէր անոնցմէ մէկը բաղձանօք կը հարցանէր. "Ըսա՛ ինձ աղաչեմ զլուեալսն քոյ յԱնդրէայ, 'ի Պետրոսէ և 'ի Թովմայէ". և այլն : Որ և բարի վարքով յիշատակեցաւ սրբոց վկայաբանութեանց մէջ :

ՊԱՍՔԱԼԻՍ Ա. կամ Բասքալ, էր քահանայապետ Հռոմայ՝ այր սուրբ և իմաստուն Հռոմայեցի, որ 'ի 817 յաջորդեց յաթոռ սրբոյն Պետրոսի. և գեղեցիկ կանոնադրութբ̃ և սրբութբ̃ կառավարեց զեկեղեցին Քրիստոսի : Նաև վասն ընդհանուր խաղաղութե̃ և հաստատութե̃ Եւրոպիոյ տէրութեանց և կայսեր Լուդովիկոսի Պիոսին՝ սահմանադրեց իմաստութեամբ զօրաւոր օրէնքներ յօգուտ հասարակաց և սուրբ եկեղեցւոյ : Բայց յետ փառաւորելոյ սրբութեամբ իւր պաշտօնն քահանայապետական փոխեցաւ առ Տր̃ 'ի 834 :

ՊԱՍՔԱԼԻՍ Բ. Պոսքանացի՝ օծաւ Հայրապետ Հռոմայ 'ի 1099. որ ժողով գումարելով 'ի Լատերան մերժեց ապստամբներն ու շատ բարեկարգութիւն ըրաւ, և խաղաղացուց արևմուտքն հոգելից կոնդակներով ։ Թէպէտ շատ նեղութիւն ալ քաշեց Հենրիկոս կայսեր ձեռքէն. բայց համբերութեամբ և խոհեմութեամբ յաղթեց ամէն չարեաց, և քաջութեամբ պայծառացուց զեկեղեցին մինչև 'ի մահն յամի 1118 ։

Օ երկնից բանալին զերդ սուր երկսայրի
Եդ փրկիչն 'ի ձեռս վիմին Պետրոսի.
Խորտակել զեղջիւր ապիրատ չարաց
Ընդդէմ հաւատոյ հերձեալ գոռոզաց ։
Նովին ճոխացան յաջորդք սուրբ գահին,
Ի դարուց անտի զապստամբս հարին.
Նոքա կորագլուխ 'ի միջոյ բարձան,
Իսկ սա գերապանծ կայ 'ի վեհութեան ։

ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՔ՝ էին աղանդաւորք Ը. դարուն հալածող սուրբ պատկերաց, և սուրբ խաչին, և սրբոց նշխարաց ։ Ասոնք չարաչար մոլորելով Հրէից չարախօսութեամբը սկսան կոտրտել և ջնջել սրբազան պատկերքները հալածանքով հանդերձ, ինչպէս կը պատմեն սուրբ Հարք ։

Գլխաւոր պատկերամարտք եղան չարասէր կայսերք Յունաց՝ Լևոն Իսաւրացի, և Կոստանդին Կոպրոնիմոս խռովարարք եկեղեցւոյն Քրիստոսի ։ Յամի 726 Կոպրոնիմոս անիրաւ չարաժողով ըրաւ 'ի Պօլիս պատկերամարտ աղանդն հաստատելու համար. զոր նզովեցին ժամանակին սուրբ Հայրապետներն, սուրբ

Գերմանոս պատրիարգ, սուրբ Յովհան դամասկացի, սուրբ Գրիգոր Բ. պապ, մեր Յովհան իմաստասէր, և այլք։

Յետոյ երբոր նստան Կոստանդին Պերփիւռուժէն և Հեղինէ մայրն՝ հրամանաւ Ա. Ադրիանոսի հայրապետին Հռոմայ եղաւ Բ. ժողովն Նիկիոյ 'ի 787. որ նզովելով դատապարտեց պատկերամարտերն ու իրենց չար աղանդն։ Տ. Կոստ. Կոպրոնիմոս։

ՊԱՏԿԵՐԱՊԱՇՏՔ կամ **ՊԱՏԿԵՐԱՄՈԼՔ**՝ են կռապաշտ և պաշտող պատկերաց դից. և անոնք որ նիւթապէս կը պաշտեն պատկերքը առանց պատուելու զբուն սուրբն, ինչպէս որ կը յիշէ վարդապետ մը. "Ոչ զսրբոցն պատիւ կամիմ փոքրկացուցանել. այլ զոմանց պատկերապաշտաց չար վնասամտութիւն և սխալանս կամիմ զգաստացուցանել"։

Պատկերապաշտութեան սկիզբն եղաւ անօրէն Բէլն. որ երբ տիրելով աշխարհաց հպարտացաւ, սկսաւ զինքն ու իր կուռքը պաշտել տալ հպատակաց։ Անոր համար քաջն Հայկ չուզելով անոր գարշելի պատկերքը պաշտել՝ ճշմարիտ Աստուծոյ ապաւինելով զարկաւ սատկեցուց զառաջնորդն պատկերապաշտութեան ըստ պատմագրաց։ Տ. Հայկ։

ՊԱՐԹԵՆԻՈՍ նշանագործ՝ էր սուրբ եպիսկոպոս Լամբսակայ Կիլիկեցւոց մեծն Կոստանդիանոսի ժամանակը՝ որ մանկութենէն լաւ կրթուած էր բարեպաշտ աղքատսիրութեամբ և երկիւղածութեամբ։ Ընտրեցաւ հովիւ եկեղեցւոյ քաջ և առաքինի, մեծիմաստ և սքանչելագործ, մինչև յարութիւն կուտար նաև մեռելներուն աստուածային զօրութեամբ , և այլն ։ Ուստի մեծապէս պատուեցաւ կայսերէն իբր առաքեալ և մարգարէ Աստուծոյ · և այսպէս զարմանալի առաքինութեամբ և սուրբ վարքով փայլեցաւ յեկեղեցւոջ , մինչև հանգեաւ 'ի Տէր · զոր կը տօնէ եկեղեցին ։

ՊԱՐԹԵՒՔ , այս ինքն ձիաւորք , էին զօրաւոր ազգ և բնակիչք Ասիոյ սահմանակից Պարսից՝ Աբրահամու և Քետուրայ ցեղէն , որ մեծամեծ քաջութեամբ տարածեցին իրենց իշխանութիւնը այլևայլ աշխարհք · ասոնցմէ էր մեծն Արշակ Պարթև , որ թագաւորեց Քուշանաց , Հայոց , Պարսից և Մարաց վրա , և կարգաւորելով տէրութիւնը դրամ ալ կըտրեց յունարէն գրով , մէկ կողմը փորագրած էր ինքն նստած և ձեռքն առած արմաւենի յաղթութեան և գիր այսպէս · “Բասիլէօս Բասիլէօն „ , այս ինքն Արքայ արքայից · իսկ մէկալ կողմն իր դէմքը և անունը ։ Պարթևները տիրելով արևելեան ազգերուն շատ զօրացան · և շատ պատերազմ ըրին Հռոմայեցւոց հետ ։ Պարթևազեան անուանեցան Հայք , Պարսիկք , և Մարք ։ Անոնցմէ էր մեր սուրբ Լուսաւորիչն ալ ։ Տես 'ի կարգին ։

ՊԱՐԻԿ կամ ՅՈՒՇԿԱՊԱՐԻԿ ըստ առասպելաց էր խառնակ ոգի Ճիւաղ , և ըստ հեթանոսաց՝ ընտանի չաստուած , որոնք քաղցր երգով իրենց կը քաշէին լողներուն սիրտը ։ Փիլոն իմաստասէր այսպէս կը խօսի · “Ոչ պարեկացն երգ · յուշկապարիկն է , որ մինչև 'ի պորտն կնոջ պատկեր , և անհնարին քաղցր ձայն ունի , և պատրէ զլողն „ ։ Իսկ Եզնիկ կ՚ըսէ․ “Անուանք յուշկապարկաց, կամ համբարուաց, կամ պարկաց ըստ կարծեաց մտաց մարդկան ասին և ոչ ըստ բնութեան ։ Յորժամ քաղաքք և գիւղք աւերեսցին, և անդ դևք բնակիցեն, և կեղծ 'ի կեղծս յայտնիցին, և մարդկան ըստ կեղծեաց նոցա անուանս եդեալ՝ զոմն յուշկապարիկ, զոմն պարիկ, զոմն համբարու կոչիցեն ” ։

ՊԱՐԿԱՑՔ՝ ըստ առասպելաց էին չաստուածուհիք կենաց և մահու երեք դստերք Դիոսի․ որոնք ունէին մարդկան ճակատագիրը պէսպէս կերպարանքով և անուամբ ձևացեալ ։ Առաջինն կ՚ըսուէր Կղոտով այլակերպ հագուստով, և ձեռքն ունէր վուշ մանելու՝ որ կը նշանակէր մարդկային կեանքը ։ Երկրորդն էր Լաքեսիս անուամբ աստղանիշ հագուստով․ որ պտուտցընելով իլիկը և մանելով կը յայտնէր մարդուս անցողական կեանքը ։ Իսկ երրորդն Ատրոպէ անուն սևեր հագած կը կտրէր թելը ապացուցանելով մահուան կէտը․ միայն առաքինեաց կեանքին թելը կը դնէին ոսկի և հաստատ ։ Անոնք նաև կը նշանակէին ժամանակը ներկայ, անցեալ, ապառնի, և այլն ։

ՊԱՐՈՅՐ՝ էր առաջին պսակաւոր թագաւոր Հայոց Հայկազուն յաղթական․ որ շատ քաջութեամբ փառաւորեցաւ, և միաբանելով Վարբակէս Մարաց իշխանին հետ առին զՆինուէ մայրաքաղաքը 743 տարի Քրիստոսէն առաջ ։ Ուր թագաւոր նստաւ Վարբակէս ։ և Պարոյր թագաւորեց Հայոց վրա՝ արիութե՟ և բարեկարգութեամբ․ որուն յաջորդեց որդին Հրաչեայ ։

Պայազատք քաջազն ՚ի դալս հընութեան
Պոռ շահատակեալ ՚ի գահ ամբարձան .
Վրաջան մրցանօք քաջութեամբ անձին
Սեհափառ պսակ ՚ի գլուխ կապեցին ։
Հարց զմեր Պարոյր արքայ առաջին
Եւ ել ՚ի գահոյս պսակ ՚ի գլխին .
Բայց նահատակեալ յառաքինութեան՝
Փառք գտաւ ազգին անմոռաց յիշմամբ ։

ՊԱՒԼԻՆՈՍ կամ **ՊՕՂԻՆՈՍ**՝ էր առաքինազարդ եպիսկոպոս Նոլա քաղաքին Իտալիոյ, և առաջ հիւպատոս Հռոմայ ՚ի Դ. դարուն. Յամի 410 երբոր Գութք առին զՆոլա ու գերի ըրին այրի կնկան մը որդին, սուրբ եպիսկոպոսն ալ գերի երթալով յԱփրիկէ ազատեց մանուկը. որ պարտիզպանի ձևով կը ծառայէր մեծ համբերութեամբ թագաւորին փեսին քով. որուն գուշակելով թագաւորութիւն՝ սիրելի եղաւ, և անոր ձեռքով ազատեց բոլոր գերիներն իրեն հետ ու դարձաւ իւր աթոռը: Ուր այսպիսի առաքինութեամբ կը հովուէր ժողովուրդը մինչև որ մեծամեծ արդեամբք փոխեցաւ առ Աստուած եօթանասունըութ տարուան յամի 431, և թողուց պատուական գրուածներ ոտանաւոր և արձակ շարադրութեամբ ։

ՊԱՓՆՈՏԻՈՍ՝ էր մեծանուն ճգնաւոր և աշակերտ մեծին Անտոնի. որ վասն սքանչելի սրբութեան՝ ժողովուրդին ստիպելովը ձեռնադրեցաւ եպիսկոպոս Թեբայիդայ, խոստովանողի անուն ալ առաւ ։ Սան կի Մաքսիմիանոսի հալածանքին ատենը հեթանոսներն տեսնելով սուրբին քաջութիւնը մէկ աչքը հանեցին, և ոտքին ջիղը կտրեցին ու աքսորեցին ։ Բայց Կոստանդիանոսի ատեն գնաց փառօք Նիկիոյ սուրբ ժողովը, յետոյ Տիւրոսի ժողովը · ուր մեծ քաջութեամբ յաղթելով Արիանոսաց՝ պաշտպան եղաւ սուրբ Աթանասին, և բազմարդիւն ծերութեամբ փոխեցաւ առ Տէր ։

ՊԱՓՆՈՏԻՈՍ Եգիպտացի՝ էր ուրիշ ճգնաւոր, որ Դիոկղետիանոսի ատենը շատ մարդ 'ի Քրիստոս դարձունելուն համար կը փնտըռէին զինքը ։ Երբոր լսեց՝ դարձաւ անապատէն ելաւ քաջութեամբ դատաւորին դիմաց · որ անանկ չարաչար տանջեց՝ մինչև աչքները թափեցան ։ Բայց հրեշտակի ձեռքով բժշկելէն ետև ղրկեցին սուրբը կապանօք առ կայսրն ուրիշ վկայից հետ ։ Իսկ անողորմ կայսրը տեսնելով անոր անփոփոխ սէրն առ Քրիստոս, խաչել տուաւ արմաւենի ծառին վրայ · և հետը 547 վկաներ ալ գլխատել տուաւ, որ եղան տօնելի ։

ՊԵՂԱԳԻԱ ազնուազարմ կոյս պարկեշտ՝ էր Տարսոնացի դուստր հեթանոսի, բայց բարեսիրութեամբ կը սիրէր քրիստոնեաները ։ Երբոր Կղէնոս եպիսկոպոսը շատ հոգի կը մըկըրտէր հեթանոսներէն Դիոկղետիանոսի օրը, ազնիւ կոյսը տեսիլք տեսաւ որ ինքն ալ անոնց մէկը պիտի ըլլայ ։ Ասկէց սիրտը վառելով ճար ըրաւ գնաց եպիսկոպոսին ոտքն ընկաւ ու սորվելով հաւատքին բաները լուսաւորեցաւ · և երկու աղախինով մկրտուեցաւ, ու հանեց իր մեծագին զգեստը եպիսկոպոսին տուաւ որ աղքատաց բաժնէ ։ Իսկ ինքն աղքատի հագուստով տուն դարձաւ · երբոր մայրը տեսաւ՝ սկըսաւ լալ աղջկանը վրան և սգալ. յետոյ իմացուց զայն կայսեր որդւոյն, որ աղջկանը նշանածն էր ։ Նա ալ երբ լսեց անանկ կատղեցաւ, որ զարկաւ ինքը զինքն սպաննեց սրովը. իսկ կայսրը չարաչար դառնացեալ մէկէն հրամայեց որ հրացեալ պղնձէ ցուլին մէջ ձգեն սուրբ կոյսը, ուր ողջակէզ եղաւ երջանիկ հարսն Քրիստոսի վասն հաւատոյ և տօնեցաւ յիշատակը ։

ՊԵՂԱԳԻԱ կոյս Անտիոքացի՝ էր քրիստոնեայ մեծազգի Նումերիանոս կայսեր ատեն. որուն ետևէն ընկան հեթանոսներն որ բռնեն ու մաքուր կուսութիւնը պղծեն վասն անարգութեան քրիստոնէից սաստիկ հրամանաւ և բռնութեամբ անօրէն դատաւորին ։ Զօրականները զինքն բռնելու ատեն՝ ժամանակ ուզեց որ մտնէ խուցը, և լաւ զգեստը հագնի. ուր ջերմեռանդ աղօթքով յանձնեց զինքն Աստուծոյ, ու պատուհանէն վար ընկաւ անվնաս ամփոփ մարմնով, և աղօթելով աւանդեց հոգին Յիսուսի ձեռքն ու փառաւորեցաւ հրաշքով ։ Անոր համար սուրբ Ոսկեբերան և սուրբ Ամբրոսիոս ալ գեղեցիկ ճառերով գովեցին զսուրբ կոյսն, և տօնելի եղաւ ։

Լուսաճեմ հարսունք սիրով փեսային
Իբրև քաջ մարտիկ 'ի հանդէս մտին.
Հարին զթշնամին զինու սուրբ Հոգւոյն
Ճոխացան անանց փառօք գերաբուն ։
Ուրացան զաշխարհ փառս անցաւորին
Վառեցան 'ի սէր շքեղ մարգարտին.
Անարատ պահեալ զակըն կուսութեան
Պարեն գերահրաշ 'ի պերճ հարսնարան ։

ՊԵՂԱԳԻՈՍ Ա. քահանայապետ Հռոմայ նստաւ յաթոռ սրբոյն Պետրոսի 'ի 555. և իմաստութեամբ կառավարեց ընդհանուր եկեղեցին միաբանելով արևելեան և արևմտեան եպիսկոպոսները. գումարել տուաւ հինգերորդ ընդհանուր ժողովը, և բացատրելով հաստատեց կանոնները 'ի հաստատութիւն հաւատոյ։ Իսկ 'ի 560 հասաւ կենաց վախճանը և փոխեցաւ առ Տէր. որուն կան տասնըվեց իմաստալից նամակները։

ՊԵՂԱԳԻՈՍ Բ. Հռոմայեցի ընտրեցաւ յաթոռ Առաքելական 'ի 578. և գեղեցիկ բարեկարգութբ՟ ծաղկեցուց զեկեղեցին Քրիստոսի։ Պաւարիացիք իր ժամանակը դարձան յուղղափառութիւն, և Սպանիացիք ալ մաքրեցան արիոսեան աղանդէն։ Այնչափ գութ ունէր աղքատաց և տնանկաց վրայ, որ աղքատանոցներն ու անկելանոցները լիացուցեր էր ամէն բարեօք։ Նոյն ատենը յԻտալիա ընկաւ ժանտախտի պէս ցաւ մը, որ բռընգալ և յօրանջել տալով կը սպաննէր բռնուողները։ Ասկէց սովորութիւն եղաւ, որ փռընգացողին առողջութիւն կը մաղթեն, և յօրանջողը կը խաչակնքէ բերանը։ Այս ցաւէն ախտանալով սրբազան մեծ Հայրապետն ալ հանգեաւ 'ի Քրիստոս յամի 590։

ՊԵՂԱԳԻՈՍ չար աղանդապետ՝ էր ուրացող շնորհաց, իռլանտացի միայնակեաց։ Որ 'ի 405 կը քարոզէր թէ ոչ սկզբնական մեղք կայ և ոչ շնորհք, նաև առանց շնորհաց կրնայ մարդ արդարանալ պատուիրանապահութբ՟, և այլն։ Որուն գլխաւոր եղան սուրբ Հայրապետն

Օգոստինոս և ամենայն սուրբ վարդապետք ջատագովք շնորհաց․ որք նզովեցին ժողովքով թէ զանօրէն Պեղագիոս և թէ Պեղագեան աշկերտները ։

Կիսապեղագեանք էին նոյն աղանդաւորք․ որք կեղծաւորութեամբ կը ջանային ուղղափառ երևնալու, ասելով թէ սկիզբն փրկութեան մեզմէ է և միայն կատարումն շնորհքէն, և այլն ։ Ասոնց դէմ ելաւ քաջութեամբ սուրբն Օգոստինոս, և հզօր վարդապետութեամբ խայտառակեց զամէնքը, որոնք դատապարտեցան Արաւսիկոյ ժողովքով յամի 429 ։

ՊԵՏՐՈԲՐՈՒՍԵԱՆՔ՝ էին հերձուածողք ԺԲ․ դարուն, որ կը մերժէին մկրտութիւն տղայոց, կ՚այրէին եկեղեցիներն ու խաչը․ կ՚ուրանային Քրիստոսի ներկայութիւնն ՚ի սուրբ հաղորդութեան ։ Ուստի անօգուտ կը համարէին աղօթքը, պատարագն ու ողորմութիւնը վասն ննջեցելոց ։ Նաև կ՚ատէին հին կտակարանը պատուիրաններուն համար, զի էին ախտալից պատուիրանազանց և չարագործ ։ Միայն կ՚ուզէին անուամբ քրիստոնեայ երևնալու, իսկ գործով ուրացեալ էին․ անոր համար դատապարտեալ ժողովքով ջնջեցան կորան բոլորովին ։

ՊԵՏՐՈՍ առաքելապետ երեսփոխանն Քրիստոսի՝ նախ կ՚ըսուէր Սիմոն, և էր Գալիլեացի որդի Յովնանու և եղբայր Անդրէի․ որ ՚ի փրկչէն անուանեցաւ Պետրոս կամ Կեփաս․ այս ինքն վէմ կամ քար․ և եղաւ հիմն եկեղեցւոյ, վէմ անվանելի ՚ի դրանց դժոխոց, ըստ բանի Տեառն ։ Աւետարանը կը պատմէ Պետրոսի սքանչելի սէրն առ Քրիստոս . իսկ համբարձումէն և հոգեգալստենէն ետև սիրաբորբոք վարդապետութեամբ և անբաւ հրաշագործութեամբ նախ լուսաւորեց զՀրէաստան և շատ երկիրներ . յետոյ քարոզելով տիեզերաց , նստաւ ժամանակ մը Անտիոք , ուր աշակերտեալք և հաւատացեալքն նախ անուանեցան Քրիստոնեայք կամ Քրիստոսեանք ։ Ապա շրջելով փոքր Ասիայի աշխարհները քարոզեց , և երկու աստուածիմաստ նամակ ալ գրեց անոնց՝ երբոր անցաւ ՚ի Գաղատիա և յԻտալիա ։ Վերջը գնաց Հռոմ հաստատեց իր աթոռն առաքելապետական , և հոն մեծամեծ հրաշագործութեամբ լուսաւորելէն ետև արևմուտքը՝ Պօղոս առաքեալին հետ քաջութ՟բ խայտառակեց անօրէն Ներոն կայսրն ու խաբեբայ Սիմոն մոգն , որ վերէն ընկաւ սատկեցաւ . իրենք ալ ան ատեն նահատակեցան Ներոնէն , շատ և սքանչելի գործքերէն վերջը յամի Տեառն 66 ։ Պետրոս գլխ՚ի վայր խաչեցաւ որ քսանըհինգ տարի կառավարեց ընդհանուր եկեղեցին . և թաղեցաւ ՚ի Վատիկան , ուր յետոյ շինեցին մեծասքանչ եկեղեցին սըրբոյն Պետրոսի ։

Հզօր փակակալ երկնաւոր դրախտին
Վէմ անփշրելի ՚ի դրանց գեհենին .
Գեր քան ըզընաւս ջերմ սիրող Յիսուսի
Վեհ առաքելոց Պետրոս հրաշալի ։
Հիմն եկեղեցւոյ հովուապետ հովուաց
Կանգնիչ աթոռոց խարբալեալ եղբարց ,
Կապող արձակող յերկինս և յերկրի
Հանուրց լուսատու որդւոց Սիոնի ։

ՊԵՏՐՈՍ սուրբ հայրապետ Աղեքսանդրիոյ ընտրեցաւ պատրիարգ յամի 300. որ վասն խոնարհութեան չէր նստէր իր աթոռը եկեղեցւոյ մէջ, այլ վարը կը նստէր ու զօրութեամբ կը փայլէր անարատ պահելով իւր հօտը կռապաշտ կայսերաց և հերձուածողաց ժամանակին չարութենէն։ Անոր համար հալածեցաւ Աբիսողոմ սարկաւագին հետ վասն ճշմարտութեան հաւատոյ, և երբոր լսեց թէ իրեն քահանաներէն շատը նահատակեր են ու ժողովուրդը անտէր մնացեր է, դարձաւ յաթոռը և զամէնքը զօրացուց բարեկարգութեամբ։ Այն ժամանակը հոն հասաւ Մաքսիմիանոս կայսեր հազարապետը և բռնեց սուրբ հայրապետը բանտարկեց. ուր գնաց տեսութեան համար սուրբ Անտոն ճգնաւորն ու մխիթարեց սուրբը։ Ապա գնացին բանտը Ակիւղաս և Աղեքսանդր հայրապետանոցին երէցները. որոնց համար գուշակեց սուրբն Պետրոս թէ իրեն աթոռը յաջորդ պիտի նստին։ Նաև գուշակեց թէ Արիոս իր նզոված երէցն ալ շատ չարիք պիտի ընէ. զի տեսայ կ՚ըսէր երազիս մէջ Յիսուս մանուկն լուսափայլ և պատռած պատմուճանով. որ ըսաւ ինծի, թէ Արիոս պատռեց պատմուճանս։ Յետոյ երբ հրաման եղաւ գլխատելու սուրբը՝ ժողովուրդն ոտք ելաւ. գնացին բազմութեամբ բանտին դուռը պահեցին։ Իսկ երանելին ուրիշներուն վնաս չըլլալու համար զօրապետին իմաց տուաւ որ բանտին պատը ծակէ. ուր գիշերանց եկան ծակեցին պատն ու հանեցին սուրբ հայրապետը տարին քաղաքէն դուրս գլխատեցին։ Իսկ Աբիսողոմ սարկաւագը յետոյ խոստովանողական մահուամբ կատարեցաւ։

ՊԵՏՐՈՍ Ոսկիաբան՝ էր աստուածաշնորհ վարդապետ Իտալացի Ե. դարուն, որ վասն պանծալի իմաստութեան և առաքինութեան ձեռնադրեցաւ եպիսկոպոս Ռաւեննայ հռչակելի ազդեցութբ՟ Պետրոսի առաքելապետին, յամի 433: Նա իրեն առաքինի սուրբ վարքովը և մեղրածորան վարդապետութեամբն ոչ միայն անուանեցաւ Ոսկիաբան, այլև շատ ուղղութիւն և բարիք ըրաւ շինելով եկեղեցիներ, և յաղթահարելով Եւտիքեան և ուրիշ հերձուածողներ: Գրեց նաև գեղեցիկ և աստուածիմաստ ճառեր վասն հաստատութեան սուրբ հաւատոյ և այլն. և տասնըութ տարի իմաստութեամբ և սրբութեամբ վիճակը հովուելէն ետև ծերութեան ժամանակը գնաց իւր հայրենիքը, և հոն վախճանեցաւ յամի 450:

ՊԵՏՐՈՍ Քերթող՝ էր բանիբուն եպիսկոպոս Սիւնեաց Զ. դարուն Աղուանից Վաչագան արքային օրը. որուն խնդրելովը յօրինեց գեղեցիկ ճառ և վայելուչ գովեստ սուրբ Աստուածածնայ և հռչակելի ծննդեան Փրկչին: Յամի 527 գտնուեցաւ Դունայ Բ. ժողովին մէջ որ գումարեցաւ վասն բարեկարգութեանց Բ. Ներսէս կաթուղիկոսէն: Նա ալ էր երևելի հայրապետներուն մէկը. որք իմաստութեամբ սահմանեցին երեսունըութ կանոններ վասն բարութեան և շինութեան ազգին:

ՊԵՏՐՈՍ Կնափոս, այս ինքն Թափիչ, էր բռնակալ պատրիարգ Անտիոքայ, աղանդակից և ջատագով Եւտիքեսի՝ քարոզելով անոր մոլորութիւնը, որ նզովեալ՚ի ժողովոց սատակեցաւ յամի 488: Նա եղաւ գլուխ աստուածաչարչար մոլորելոց , որ ծուռ մտքով կ՚ երդէր խաչեցարով սուրբ Աստուածը . և անոր համար դատապարտեցաւ սուրբ Փելիքս քահանայապետէն Հռոմայ : Տ . Եւտիքէս :

ՊԵՏՐՈՍ Գետադարձ՝ էր իմաստուն կաթուղիկոս Հայոց . որ 'ի 1019 նստաւ յԱնի քաղաք , ու խոհեմ կառավարութեամբ և ուղղափառ վարդապետութեամբ սիրելի եղաւ ամենուն : Յօրինեց աստուածիմաստ ճառեր , վայելուչ շարականներ Մարտիրոսաց , Հանգստեան , Մանկունք , և այլն : Նա 'ի 1022 գնաց յաշխարհն Խաղտեաց առ Վասիլ Բ . կայսրն Յունաց՝ Յովհաննէս Հայոց արքային կողմանէ խնդրելով պաշտպանութիւնը և յանձնելով անոր Հայոց ազգին տէրութիւնը : Ուրախացաւ կայսրը , և ուզեց որ ջրօրհնեաց տօնին հանդէսը Պետրոս իր առջին կատարէ հայ ծէսով : Ուր երբոր օրհնեց կաթուղիկոսը զջուրն Տրապիզոնի գետոյն , և 'ի խաչակնքելն կենաց փայտով և սուրբ մեռոնով , ջուրը կայնեցաւ , և գետը մնաց անշարժ , ինչպէս որ կը պատմեն . և այս հրաշքով կոչեցաւ Գետադարձ . կայսրն ալ խիստ շնորհելով ղրկեց հայրապետը իր տեղը փառօք : Յետոյ շատ նեղութիւն քաշեց հայրապետն ազգէն և նախանձոտ վարդապետներէն իբր կողմնակից Հռոմոց , որոնք տիրելով Անի քաղաքին մեծ վնասներ բերին ամենուն . մինչև Յոյն քաղաքապետը ղրկեց զնա 'ի Պօլիս 'ի 1048 , ուր իրեք տարի մնաց կաթուղիկոսը : Ապա իշխանն Սեբաստիոյ Ատոմ Արծրունին միջնորդ ըլլալով տարաւ 'ի Սեբաստիա ու նստուց սուրբ Նշանու վանքը : Եւ հոն ծերութեան ատեն լսելով ազգին թշուառութիւնը, որ կը քաշէին Պարսից և Յունաց ձեռքէն, ցաւելով մեռաւ 'ի 1058ին, որ իբր քառասուն տարի հայրապետութիւն ըրաւ :

ՊԵՏՐՈՍ Նողասկոս՝ էր Գաղղիացի առաքինի և ողորմած. տղայ ատենը օրոցքին մէջ մեղուներն աջ ձեռքին մէջ մեղր շինեցին՝ նշան բարեգործութեան : Երբոր չափահաս եղաւ՝ հեռանալով Ալբիգեան հերետիկոսներէն գնաց 'ի Սպանիա նստաւ սուրբ Աստուածածնայ վանքը : Ապա անցաւ 'ի Բարկինոն, ու ամէն ունեցածը տուաւ գերիները ազատելու համար անհաւատներուն ձեռքէն. մինչև արժանի եղաւ տեսութեան Տիրամօրն, որ տեսիլքին մէջ կը յորդորէր զինքն որ նոր կրօն մը հաստատէ գերի ազատելու համար : Իսկ նա գեղեցիկ կարգով կատարեց՝ գործակցութ͞բ սրբոյն Ռայիմունտոսին, և օգնականութեամբ Յակոբայ թագաւորին Արագոնայ : Անոր համար նոյն կրօնը անուանեցաւ կարգ Մարիամու վասն ազատութեան գերեաց հանդերձ չորրորդ ուխտով : Իսկ երանելին Պետրոս վասն մեծամեծ առաքինութեանց և խիստ վարուցն ունեցաւ նաև շնորհք մարգարէութեան. շատ անգամ ալ արժանացաւ տեսլեան սուրբ Աստուածամօրն և պահապան հրեշտակին. ապա լի արդեամբք և բարի ծերութեամբ փոխեցաւ առ Տէր 'ի 1256 :

ՊԵՏՐՈՍ Ա. Ալեքսիեվիչ՝ էր աշխարհաքարող ինքնակալ Ռուսաց անուանեալ Մեծ, և ծնեալ 'ի 1673. որ ուշիմ և ճարտարամիտ ըլլալով քիչ տարուան մէջ թագաւորեց, ու մէկէն ժողվեց գունդ մը յիսուն կտրիճներու , և վրանին դրաւ վարպետ վարժող՝ Լէմցէ զօրապետ մը . սկսաւ ինքն ալ անոնց հետ կրթուիլ զինուորական կարգով : Անոնց հետ մէկտեղ կ'ուտէր չափով , և կը պառկէր վրանին մէջ հասարակ զինուորի մը պէս հնազանդելով ամէն հրամանաց զօրապետին . և այսպէս լաւ ուսմամբ եղաւ Մեծ սպարապետ բոլոր բանակին Ռուսաց : Ի 1697 յայտնելով իր զօրութիւնը պաշարեց ու առաւ Ազախու աշխարհը Օսմանցոցմէ . և նոյն պատերազմին մէջ տեսնելով թէ հարկաւոր է նաւամարտութիւն , մարդիկ ղրկեց Հոլանտա , ինքն ալ զգեստն փոխած մտաւ անոնց մէջ , գնացին սկսան սորվիլ արուեստը ամէն բանով : Ի 1698 անցաւ յԱնգլիա խելք սորվելու համար . անկէց ալ ելաւ շրջեցաւ Եւրոպիա , ու հասաւ Վիեննա , տեղեկանալով ամենայն գիտութեանց , օրէնքներուն և սովորութեանց բոլոր երևելի ազգերուն , և այլն : Ի 1699 լսելով հին Մոսկով զօրքին ապստամբութիւնը , մէկէն հասաւ Մոսքա մայրաքաղաքը , և զամէնքը բանի խօթեց զինուորական նոր կարգին մէջ , հաստատելով սուրբ Անդրէի ասպետաց կարգը որ է մեծ նշան պատուոյ : Այն ատեն դաշնաւորելով Լեհաց թագաւորին հետ , ելաւ Շվետներուն վրայ 'ի 1709 և քաջութբ պատերազմեցաւ , մինչև յաղթելով փախուց անոնց թագաւորը , և տիրեց երևելի տեղերուն : Ապա թշնամիները խոնարհեցընելէն ետքը սկսաւ կատարել Փեդրպուրկ կայսերանիստ մայրաքաղաքին շինութիւնը , որ 'ի 1703ին հիմնարկութեամբ սկսեր էր շինելու : Ի 1715 նորէն ելաւ պտըտեցաւ Եւրոպիա և գնաց Փարիզ և ուրիշ լուսաւորեալ քաղաքներ շատ բան սովորեցաւ ։ Յետոյ դարձաւ իրեն աթոռը , աւելի ծաղկեցուց ազգը գիտութեամբ և ամէն բարելաւութեամբ . կանոնաւորեց նաև եկեղեցական կարգը , վերուց պատրիարգութիւնը , և ամէն մետրապօլիտները հաւասար դրաւ ազգային հոգևոր ժողովին տակը հանդերձ վերատեսչութե՟ կայսեր ։ Իսկ ժողովուրդը տեսնելով անոր բարի ջանքը անուանեցին Մեծ Ինքնակալ և Հայր հայրենեաց . բայց ինքն ամենեւին չէր սիրեր ոչ արտաքին փառք և ոչ մեծութիւն ։ Ի 1721 հանեց հարիւր հազար կրթուած զօրք , և ըրաւ նաւահանդէս և նաւահանգիստ քառասուն մեծամեծ պատերազմական նաւերու , և չորսհարիւր ցռկանաւուց , և այլն ։ Նոյնպէս հաստատեց եւրոպացի վարպետներով ուսումնարաններ , ճեմարաններ և դպրոցներ ամէն պիտուական գիտութեանց , արուեստներու , լեզուագիտութեան , և այլն ։ Մեծն Պետրոս գիշեր ցորեկ ջանաց այսպէս ազգը լուսաւորելու , և ինքնակալութիւնը փառաւորելու , և ինչպէս պէտք է կատարեց . բայց իր կեանքը վնասելով միզարգելութեան ախտով , 'ի 1725ին մեռաւ յիսուներեք տարեան , և աշխարհը սուգի մէջ թողուց ։ Վասն զի էր քաջ դիւցազն , բարերար առաքինի , կայտառերես և բարձրահասակ , մեծահանճար և յաջողամիտ , եռանդուն ոգւով և ճոռոմաբան ։ Որուն խելացի մեծագործութիւնքն ու բարեկարգութիւնքը Ռուսաստանու՝ ամէն տեղ յայտնի կը քարոզեն իր հոգւոյն գերազանցութիւնը , և անհամար առաքինութիւնքն խրատ են աշխարհի մեծամեծաց ։ Անոր համար իր ազգն ալ շատ յարգելով զինքն սուրբ կ'անուանեն . իսկ երախտագէտ Կատարինէ Բ .

Թագուհին կանգնեց ՚ի Փեդըրպուրկ մեծածախ փառաւոր արձան մը ՚ի պատիւ մեծին Պետրոսի ։

Լայնածաւալ սիրտ վեհափառ քաջաց
Արտագրիչ գործոց հնաշխարհիկ փառաց .
Օ աշխարհ զպետութի՛ կարգեալ գերունակ
Կանգնեն պերճապէս զանմահ յիշատակ ։
Պետրոս դիւցազնեայ առաքինին քաջ
Ազանց բոլորից տարացոյց բարեաց .
Գերահրաշ փայլիչ ազգին իւր Ռուսաց
Նոր աստղ ծագեաց հիւսիսականաց ։

ՊԵՏՐՈՍ Դամիանոս՝ էր երանելի եպիսկոպոս Օստիայ քաղաքին Իտալիոյ Ժ. դարուն. որ Թարմ հասակին մէջ վարժապետ եղաւ դպրոցաց. յետոյ կրօնաւորելով կարգեցաւ հոգևոր ուսուցիչ եղբարց ։ Սրբազան պապն Ստեփաննոս Թ. ձեռնադրեց զինքն եպիսկոպոս Օստիայ հանդերձ կարդինալական պատուով. յետոյ գնաց նուիրակ ՚ի Միլան, և հանդարտեցուց խռովարարները ուղղելով զանկարգութիւնս տեղւոյն ։ Անկէ ետև հրաժարելով եպիսկոպոսութենէն մտաւ առջի ճգնարանն ու կը գրէր ժամանակին անկարգութիւններն ։ Ապա ղրկուեցաւ նուիրակ ՚ի Գաղղիա և ՚ի Գերմանիա, ամէն տեղ մեծ շինութիւն ընելով սրբեց և վերուց անկարգութիւնները Իտալիոյ, մինչև փոխեցաւ առ Տէր ութսուներկու տարւան յամի 1072 ։ Որուն զանազան շատ պիտանի գրուածները տպուեցան ՚ի Հռոմ, հարիւրյիսունըութ ճառեր և նամակներն, նաև վաթսուն պիտառութիւնք . լեցուն պէսպէս տեղեկութեամբ և հոգեշահ յորդորականներով վասն բարի վարուց . մինչ զի անուանեցաւ անդըրդուելի հիմն առաքելական աթոռոյ ։

ՊԻՂԱՏՈՍ Պոնտացի՝ էր դատաւոր Հրէաստանին Հռոմայեցւոց կողմանէ . ըստ ոմանց ծնած էր Իտալիոյ Պոնտիա կղզին , զոր Յովսեպոս Հրէայն կը կոչէ Ս՝ոլի զօշաքաղ ։ Սա զի գիտնալով Փրկչին անմեղութիւնը և յայտնի աքանչելիքը անօրէն Հրէից հաճոյ ըլլալու համար կեղծաւորութեամբ մատնեց չարերուն ձեռքը կաշառքին սիրովը . ինչպէս կըսէ շարականը . "Կշռեցին արծաթ բազում, առեալ տարան առ Պիղատոս , ասեն 'ի խաչ հան 'ի խաչ՝ զի հայհոյիչ է օրինաց ,, ։

Այսպէս իր խղճմտանքին և կնկանը տեսիլքին ու վկայութեանը դէմ՝ որ վասն անմեղութեան Յիսուսի , վճռեց անօրէնն ու խաչել տուաւ զԱստուածորդին ։ Բայց մեր Աբգար արքայն մէկէն գրեց Տիբեր կայսեր Հռոմայ Պիղատոսին չարութիւնը . որ կանչեցին 'ի Հռոմ. և երբ չկարցաւ պատասխան տալու վասն անմեղութեան Յիսուսի և աքանչելեացն , որ գրած էին տէրութեան յիշատակարանին մէջ՝ աքսորեցին Գաղղիա անարգութեամբ . ուր ինքնասպան կորաւ սատկելով ։ Յուստինոս սուրբ վկայն ջատագովելով Փրկիչն մեր կը գրէ առ կայսրն . "Յիսուս Քրիստոս խաչեցաւ . և բաժանեցին զհանդերձս նորա . . . արար և զաքանչելիս . կարէք ստուգել 'ի յիշատականացն Պոնտոսի Պիղատոսի ,, . և այլն ։

ՊԻՈՍ այս ինքն բարեպաշտ անուամբ նստան յաթոռ սրբոյն Պետրոսի ինն սրբակաց քահանայապետք Հռոմայ ։ Սուրբն Պիոս Ա .

Աքուիլացի օծաւ պապ յամի 158 . և իմաստութեամբ կառավարեց ընդհանուր եկեղեցին զատապարտելով հերձուածողներն ու հաստատելով առաքելական կանոնները : Ի 164 շատ հալածանք քաշեց կռապաշտ թագաւորներէն . և ապա պսակեցաւ մարտիրոսութեամբ 'ի 167 :

ՊԻՈՍ Բ . իմաստուն հայրապետ յաջորդեց 'ի գահն Հռոմայ յամի 1458 . և մեծ գործքեր ըրաւ վասն պայծառութեան սուրբ հաւատոյ ժողվելով չորս հարիւր հազար պատերազմող զօրք անհաւատից դէմ : Փոխեցաւ առ Աստուած 'ի 1464 ամին :

ՊԻՈՍ Գ . քեռորդի էր վերինին և յաջորդեղաւ 'ի 1503 , զարմանալի քաջութեամբ ձեռք զարկաւ որ գլուխ տանի նախորդին սկսած հարկաւոր գործքերը . բայց քսանըվեց օրէն ետև մահը հասնելով՝ հանգեաւ 'ի Տէր :

ՊԻՈՍ Դ . էր ազնուազարմ առաքինի , մեծանուն Մէտիչի տոհմէն , ընտրեցաւ յաջորդ սրբոյն Պետրոսի՝ երևնալով վրան հրաշալի աղաւնի մը ընտրութեան ատենը 'ի 1559 : Ու մեծ ջանքով առաջ տարաւ Տրիդենտեան ժողովը : Մէքայէլ կաթուղիկոսն ղրկեց այս Սրբազանին պատգամաւոր գիտնական Աբգարը հանդերձ կոնդակով և դաշանց թղթով : Սրբազան պապն սիրով ընդունեց Աբգարն ու գովեց զկաթուղիկոսն : Սակայն շուտով հասաւ մահը և վախճանեցաւ 'ի 1565 :

ՊԻՈՍ Ե . սուրբ և առաքինափայլ անձն՝ օծաւ քահանայապետ Հռոմայ 'ի 1566 . որ պայծառացուց զեկեղեցին Քրիստոսի սուրբ վարքովը և նզովելով հերձուածողները ։ Շատ գեղեցիկ բարեկարգութիւններ ալ ըրաւ աթոռներուն , եկեղեցիներուն , վանքերուն , և այլն ։ Մինչև որ կատարեց առաքինի կեանքը յամի 1572 . և մեռնելէն վերջն ալ շատ հրաշքներ գործելով դասեցաւ սրբոց կարգը ։

ՊԻՈՍ Զ . խոստովանող հայրապետն նստաւ պապ Հռոմայ 'ի 1775 . և մեծագործ առաքինութեամբ ջանեցաւ պայծառ պահել զեկեղեցին Աստուծոյ հանդերձ բարեկարգութեամբ և սրբութեամբ ։ Գրեց զօրաւոր կոնդակներ ամէն աշխարհք վասն պահպանութեան սուրբ հաւատոյ անհաւատներէն անկրօնութեան ժամանակը ։ Գաղղիացիք 'ի 1798 կատաղութեամբ մտան Հռոմ, ու տարին Սրբազանը 'ի Գաղղիա . բայց քաշած վշտացը և սրտցաւութեանը համար հիւանդցաւ ճամբան ։ Ու սքանչելի համբերութեամբ մահուան պատրաստութիւնը տեսաւ ջերմ սիրով 'ի Վալէնցա քաղաքը , ուր վախճանեցաւ սրբութեամբ 'ի 1799 . օգոս . 28 . իր յերրորդ ամի իշխանութեանն՝ ութսունուերկու տարւան ։

ՊԻՈՍ Է . ընտրեցաւ քահանայապետ Հռոմայ յամի 1800 Վենետիկ քաղաքը սուրբ Գէորգայ վանքին մէջ , ուր ժողված էին Կարդինալները . Թագադրութիւնն ալ հոն ըրաւ մեծափառ հանդէսով 'ի 21 մարտի ։ Նոյն 'ի 9 մայիսի մեր սուրբ Ղազարու վանքն ալ եկաւ վասն այցելութեան . ուր երկու տեղ գահը նստած հայրապետական օրհնութեամբ և գովութեամբ օրհնեց վանքն ու միաբանութիւնը , նաև եկող Ջերմեռանդները ։ Որուն յիշատակը փորագրեալ դրուեցաւ եկեղեցւոյ դրան երկու կողմն ։

Այս իրեք ամիսէն ետև գնաց 'ի Հռոմ իր գահը , և քաղցր կառավարութեամբ շահեցաւ ամենուն սիրտը պահելով ժողովուրդը խաղաղութեան և բարեկարգութեան մէջ ։ Այլ 'ի 1814 շատ նեղութիւն ալ քաշեց Գաղղիացւոց ձեռքէն . բայց համբերութեամբ յաղթելով ամէն վշտաց արիապէս դարձաւ փառօք իր գահը , և հաստատեց վանքերն ու կրօնները նաև դպրոցները և ուսումն ։ Որով առաւել փառաւորեցաւ սրբութե՟ և խոնարհութե՟ համբաւը սրբազանին ամէն տէրութե՟ց մէջ . մինչև որ յամի 1823 փոխեցաւ առ Աստուած նովին տարիքին և սուրբ վարքով ութսուներկու տարուան 'ի 20 . օգոս ։

ՊԻՈՍ Ը . յաջորդեց յաթոռ Հռոմայ 'ի 1829 . և գեղեցիկ կարգաւորեց զհօտն Քրիստոսի գրելով զօրաւոր կոնդակներ թագաւորներուն և առաջնորդներուն ։ Մեծ ջանքով դարձունել տուաւ Գաղղիացւոց թագաւորին ձեռամբ զամէն աքսորուած ուղղափառ Հայերը Օսմանեան արքային հրովարտակաւ ։ Նա 'ի 25 հոկ . 1829 իւր պապական կոնդակով հաստատեց եպիսկոպոսապետ պատրիարգ 'ի Կոստանդինուպօլիս 'ի վերայ ամենայն արևելեան ուղղափառաց ։ Ի 1830 . փետ . 7 . լսելով մեր Աստուածածնայ եկեղեցւոյն շինութե՟ը համար 'ի Խարասու՝ կոնդակ օրհնութեան և ներողութեան ղրկեց մեզի , ձեռամբ Նախագահին Քափելլարի կարդինալին , որ յետոյ նստաւ պապ ։ Իսկ սրբազանն այսպիսի հայրագութ առաքինութեամբ երբոր կը խնամէր զամէնքը՝ հասաւ մահը և վախճանեցաւ սրբութեամբ ՚ի 1830. նոյ. 30։

ՊԻՈՍ Թ. իշխանազն ծնեալ ՚ի Սինիկալլիա յամի 1792, և գերազանցեալ իմաստութեամբ ձեռնադրեցաւ քահանայ անուամբ Յովհաննէս Ֆերրէտտի, և ապա արքեպիսկոպոս՝ Լևոն Պապէն։ Իսկ Գրիգոր ԺԶ., ընծայեց իրեն պատիւ կարդինալութեան ՚ի 1840։ Յետոյ նոյն Գրիգոր սրբազանը վախճանելէն վերջը կարդինալներն շուտով գումարեցան ու ընտրեցին զայս Յովհաննէս Ֆերրէտտի Մաստայի կարդինալը յաջորդ սրբոյն Պետրոսի ՚ի 17 յուն. 1846, որ փառաւոր թագադրութեամբ օծեալ՝ անուանեցաւ Պիոս Թ։

ՊԻՒԹԱԳՈՐԱՍ կամ ՊԻՒԹԱԳՈՐ՝ էր երևելի փիլիսոփայ և մեծանուն Ճարտասան Սամոսացի։ Կը քարոզէր թէ մէկ է Աստուած ստեղծող աշխարհի, այլ և բանական հոգիք անմահ են և մարմինէ մարմին փոփոխելով կ՚ըլլայ հոգեփոխութիւն։ Ինչպէս ես, կ՚ըսէր՝ առաջ էի Եւփորբոս Տրոյիայի պատերազմին, ատենը. և հոն մեռայ ու ողջընցայ եղայ Հոմերոս. յետոյ մեռնելով փոխուեցայ սիրամարգ եղայ. և այսպէս շատ անգամ անցայ մարմինէ մարմին, ու վերջը Պիւթագորաս եմ ահա։

Այս անմիտ աղանդովը պատուիրեց աշկերտներուն, որ ամենևին միս չուտեն. չըլլայ թէ մարդու միս ըլլայ՝ անասուն փոխուած։ Գրեց նաև հարկաւոր օրէնքներ բարոյականին վրան ժուժկալութեան, անկեղծութեան, պարկեշտութեան և ողջախոհութեան։ Պիւթագո-

րաս այսպիսի ուսմունքներով շատ ժողովուրդ կրթեց. նաև հեթանոսական պատրանքներով ալ դից մարգարէ ձևացաւ: Արգիլեց որ զինքն և ուրիշը չանուանեն իմաստուն, կամ Սօֆօս. որ միայն Աստուծոյ կը վայլէ, կ'ըսէր, այլ իմաստասէր, կամ Փիլօսօֆօս. այս ինքն սիրող իմաստութեան: Մեռաւ խոր ծերութեամբ 497 տարի Յիսուսէն առաջ Մետապոնտոս քաղաքը, ուր իր տունը կռատուն շինեցին. իրեն ալ կուռքի պատիւ կուտային աղանդաւոր աշկերտները:

ՊՂԱՏՈՆ՝ էր գերահռչակ փիլիսոփայ Յոյն ազնուական Աթենացի, և գլուխ աղանդոյն Ակադեմեանց: Աշակերտ եղաւ Սոկրատայ փիլիսոփային, առջի անունն էր Արիստոկղէս, յետոյ Թիկնաւէտ և լայնաճակատ ըլլալուն համար անուանեցաւ Պղատոն: Կայտառ էր երեսով ալ և մտքով ուշիմ. քիչ ատենի մէջ սորվեցաւ քերթողութիւն և ազատական արուեստներն. քսան տարւան սկսաւ փիլիսոփայութիւն և վարժեցաւ Սոկրատին քով: Յետոյ շատ տեղեր պտըտելով գնաց Եգիպտոս, և պէսպէս հմտութեամբ և ուսմամբ լեցուեցաւ, նաև տեղեկացաւ եբրայական օրինաց: Անկէց ետև գնաց Սիկիլիա Ետնա հրավառ լեռը տեսաւ ու Դիոնեսիոս բռնաւորին քով երկայն ատեն կենալէն ետև դարձաւ Աթէնք, և հաստատեց դպրոց երևելի 'ի թաղն Ակադեմիա. շատ իմաստուն աշկերտներ հանեց, և ինքն ալ մեծահամբաւ իմաստասէր հռչակեցաւ աշխարհիս մէջ. նաև յոմանց անուանեցաւ "Մովսէս աթենացի, կամ Աստուածաբան հեթանոս": Ու և մեռաւ ութսուներմէկ տար-

ւան, 344 տարի Քրիստոսէն առաջ։ Պղատոն յօրինեց շատ պիտուական գրեանք, իմաստասիրական օրէնքներ, ուր կը վարդապետէ թէ՝ Մի միայն է Աստուած յաւիտենական, Էական իմացական, գործունեայ և ամենակարող, բարի և բարերար 'ի բնէ, արարչապետ և նախախնամիչ տիեզերաց, և այլն։

Բայց մոլորական գաղափարներ ալ կը դնէր թէ նիւթն է յաւիտենական՝ ինչպէս Աստուած, հանդերձ խառն շարժմամբ ուսկից ամէն բան կը գոյանայ ըստ գաղափարաց, կ'ըսէր։ Ասկէց կը հետևցընէր թէ Աստուած է հայր աշխարհի, և ընդհանուր աշխարհ. որդի միակ, Աստուած ծնեալ, հոգի աշխարհի, պատկեր Աստուծոյ, և այլն։ Կղեմէս աղեքսանդրացին կը գրէ թէ Պղատոնին այս մութ խօսքերը պատրաստեցին զհեթանոսներն 'ի քրիստոնէութիւն։ Նաև կը պատմեն թէ 'ի Ը. դարուն գտան գետնին խորը հին տապան և համարեցան Պղատոնին. ուր կար կ'ըսեն ոսկի տախտակ գրած. "Քրիստոս ծնցի 'ի կուսէն, և ես հաւատամ 'ի նա։ Եկեսցէ աստուածային օրէնսդիրն, տանջեցի" և այլն։

Սակայն սուրբ վարդապետք ըստ մեծին Օգոստինոսի՝ մերժեցին զայս ամենայն անիմանալի գաղափարները և Պղատոնին ցնորքը, ու յայտնի հաստատեցին զլուսափայլ ճշմարտութիւն հաւատոյ և միութեան Աստուծոյ։

Իմաստասիրաց մեծն այն Պղատոն
Անկաւ 'ի խաւար առ 'ի գիւտ լուսոյն,
Ասաց զԷն անծին ծընող էակաց
Բայց ինքն ոչ ուղիղ զնա պաշտել կարաց։

Աւա՛ղ մեծիմաստ շքեղ հանճարոյ
Որ 'ի գաղափարս մոլորեալ անգոյ՝
Սահեցաւ յանդունդ բազմաստուածութեան
Եւ 'ի ճշմարտէն գրտաւ բացական :

ՊԼՈՒՏՈՆ՝ էր սանդարամետական չաստուած դժոխոց , եղբայր Դիոսի , և որդի Կռոնոսի : Իբր զի յունական անունս Աիտիս թարգմանի դժոխք , իսկ Բլուդօն նշանակէ ճոխ , մեծատուն : Ուստի կոչի չաստուած ճոխութեանց , ոսկւոյ և գոհարաց , նաև ամէն հողէ ելած հարստութեանց : Սա կը կոչէին Բելփար կամ Բեեղզեբուղ . և կը նկարէին խիստ տգեղ , սևագոյն և կաղ , կառք մը նստած սև ձիերով , ձեռքը երկժանի , գլուխը սև պսակ , և ձեռքը բանալի մահու և դժոխոց : Թէպէտ չունէր տաճար , բայց կ՚ընծայէին իրեն սև անասուն , ու ամէն ձախորդութեան և թշուառութեանց մէջ Պլուտոնի կ՚աղաչէին :

ՊՈԹԻՆՈՍ սուրբն՝ էր առաջին հայրապետ Լիոն քաղաքին Գաղղիոյ 'ի Բ . դարուն . և աշակերտ էր սրբոյն Պողիկարպոսի , որուն հրամանաւ գնաց 'ի Գաղղիա . ուր սքանչելի վարդապետութեամբ և հրաշագործութեամբ լուսաւորեց ազգն ու պայծառացուց եկեղեցին ամենայն բարեկարգութեամբ և առաքինութ՟ : Մարկոսի Օրելիոսի հալածմանքին ատենը բռնեցին սուրբ եպիսկոպոսը իննսուն տարեան . շատ տանջելէն ետև երբոր չկրցան յաղթելու՝ նահատակեցին զսուրբ ծերունին վասն սուրբ հաւատոյ յամի 177 : Որուն յաջորդ նստաւ սուրբ Իրենէոս հետևող առաքելոց . իսկ վկայաբանութիւնը գրեցին եկեղեցիք Լուգդոնի և Վիեննայի, ինչպէս որ կը վկայէ Եւսեբիոս ։

ՊՈՂԻԿՐԱՏԷՍ՝ էր բռնաւոր իշխան Սամոսին 532 տարի Քրիստոսէն առաջ, որ ըստ պատմութեան Հերոդոտեայ՝ ինչ գործքի որ ձեռք զարնէր՝ կը յաջողէր ։ Այս բանս չար նշան սեպելով՝ սնապաշտութեամբ հանեց մատնին ծովը նետեց, որ չարէն ազատի ։ Բայց քանի մը օրէն ետև խոհակերը ձկան փորէն գտաւ մատնին ։ Եւ նոյն ատեն Օրոնդ նախարարը Պարսից կամելով տիրել Սամոսի՝ հրաւիրեց քովը զՊողիկրատէսն, ու երբոր գնաց զարկաւ սպաննեց չարաչար ։

ՊՈՂՔԵՐԻԱ սրբուհին՝ էր առաքինի դուստր Արկադեայ կայսեր, և քոյր Փոքր Թէոդոսին, որուն հետ մէկտեղ կը կառավարէին տէրութիւնը 'ի 414 ։ Իսկ եղբայրը մեռնելէն ետև 'ի 450 ընտրել տուաւ կայսր զՄարկիանոս զօրավարը, որուն հետ ամուսնացաւ միայն իրեն օգնական ըլլալու համար, պահելով ինքը իր մշտնջենաւոր կուսութեան ուխտը ։ Ապա հրամանաւ Լևոնի Ա. սուրբ հայրապետին Հռոմայ գումարել տուաւ ընդհանուր Քաղկեդոնի ժողովն 'ի 451 ։ Ուր մեծապէս գովեցաւ տիրուհիս վասն սրբակաց վարուցն ու առաքինափայլ խոհեմութեան և իմաստութեան, որով միշտ խնամակալ էր իմաստնոց և առաքինեաց. որ ապա յիսունըվեց տարեան վախճանեցաւ յամի 454 ։

ՊՈՄՊԷՈՍ Գնէոս Մեծ՝ էր քաջազօր սպարապետ Հռոմայեցւոց, որ հօրը քով վարժելով երևելի եղաւ· քսանևերեք տարուան էր երբոր իրեք խումբ զօրք ժողվեց, ու գնաց ապստամբներուն ձեռքէն առաւ Սիկիլիա և Ափրիկէ։ Ուստի շուտ մը մեծնալով համբաւն՝ ըրաւ հանդէս յաղթանակի 81 տարի Յիսուսէն առաջ։ Ապա եղաւ Սպանիայի վրան· յաղթեց քաջութբ՟, ու կատարեց երկրորդ հանդէս յաղթանակի 'ի Հռոմ, և կարգեցաւ Հիւպատոս, ու հալածեց ծովային աւազակները։ Յետոյ սպարապետութբ՟ գնաց արևելք Միհրդատին դէմ· և յաղթութեամբ հաշտութ՟ի խօսեցաւ Մեծին Տիգրանայ Բ· Հայոց արքային հետ, ու գնաց յաշխարհն Վրաց, Աղուանից, Մարաց, Ասորւոց և ապա տիրեց Երուսաղեմին, ու մտաւ բազմութեամբ 'ի Սրբութիւն սրբոց Երուսաղեմի, որ մինչև նոյն ժամանակը չէր պղծած ըստ Յովսեպոսի· նաև Հրէաստան ըրաւ ան ատենը Հռոմէական գաւառ մը։ Ուր երբոր լսեց Միհրդատին մահը՝ մեծ ուրախութեամբ և անթիւ գանձով դարձաւ 'ի Հռոմ առանց փառքի և մեծութեան իբր հասարակ մարդ· և առաւելի փառաւորեցաւ Պոմպէոս կատարելով մեծ հանդէս յաղթանակի իրեք օր մեծ ցնծութեամբ՝ 61 տարի Քրիստոսէն առաջ։ Ապա փեսայ եղաւ Յուլիոս Կեսարին, և միանալով Կրասոսին հետ իրեքը մէկտեղ բաժնեցին բոլոր ինքնակալութիւնը իրեք մասն, Կրասոս առաւ արևելքը, Պոմպէոս առաւ Ափրիկէ, իսկ Կեսար առաւ Հիւսիսի կողմն, և այս կոչեցաւ Եռապետութիւն։

Ասկեց նախանձ և ատելութիւն ընկաւ իրենց մէջ· մինչ զի Պոմպէոս և Կեսար մեծ պատրաստութբ՟ ելան իրարու դէմ, և սոսկալի ջարդ տուին իրարու մեծամեծ պատերազմներով Յունաստանին մէջ 48 տարի Քրիստոսէն առաջ : Վերջապէս Պոմպէոս յաղթուեցաւ Կեսարէն ու փախաւ իջաւ նաւը , անցաւ Ափրիկէ ապաւինելով Պտղոմէոս արքային : Իսկ նա զրկեց անոր իր զօրավարները , որոնք ըստ հրամանաց արքային՝ նաւէն հանեցին զինքն ու ծովեզերքը կտոր կտոր ջարդեցին . գերիներն ալ մարմինը այրեցին ու մոխիրին վրա հող լեցուցին ըստ կռամոլ սովորութեան : Ահա այս փառաւոր իշխանապետն այսպէս կորաւ յիսունըվեց տարեան . որ Երուսաղէմայ տաճարը պղծելէն ետև կորուսեր էր յաջողութիւնը , և միշտ յաղթուելով բնաջինջ եղաւ զարմովը : Նոյնպէս կորաւ ասոր գահակիցն Կրասոս յետ կողոպտելոյն զտաճարն Աստուծոյ :

Տէս փառամոլից այս ելք յանկարծոյն
  Ոտնհար եղելոց օրինաց վերնոյն .
  Ճիգացեալ 'ի գահ յեղյեղուկ բաղդին
  Իսկոյն վայրանկեալ 'ի կորուստ մատնին :
Անյագուրդ վիշապ դժոխորովայն
  Պոմպէոս գրաւիչ զաշխարհիս սահման .
  Արդ ձգեալ յանվայր կայ 'ի ծովեզրին
  Մարմնով խողխողեալ՝ հոգւով յանդնդին :

ՊՈՆՏԻԱՆՈՍ սուրբ հայրապետն հռոմայեցի՝ նստաւ 'ի գահ առաքելապետին Պետրոսի 'ի 233 , և քաջութեամբ կառավարեց զեկեղեցին Քրիստոսի յանդիմանելով ապստամբ իշխանները : Նոյն ատեն անօրէն կայսրն Աղեքսանդր բռնեց քահանայապետը մատնութեամբ իշխանաց , ու աքսորեց վասն սուրբ հաւատոյ Հիպպոլիտոսի քահանային հետ մէկտեղ . բայց կայսրն մէկէն պատուհասեալ կորաւ :

Մաքսիմոս յաջորդ նստաւ կայսեր ու չար հալածանք հանեց եկեղեցւոյ առաջնորդաց դէմ. նաև շատ նեղեց զսուրբն Պոնտիանոս, և չի կրնալով յաղթել քաջութեանը՝ նահատակեց չարաչար ծեծով 237ին 'ի Սարդենիա կղզին. ուսկից յետոյ մարմինը տարին հանգուցին 'ի Հռոմ։

ՊՈՍԻԴՈՆ՝ ըստ դիցաբանից էր որդի Կռոնոսի և եղբայր Դիոսի և Պղուտոնի, զորոնք ազատեց Ռէա իրենց մայրն Կռոնոսի բերնէն ու տուաւ հովիւներուն որ սնուցին։ Յետոյ երբ Դիոս կամ Արամազդ բաժնեց իրենց հօրն իշխանութիւնը՝ ինքը տիրեց երկնի և երկրի, Պղուտոնի տուաւ դժոխքը, իսկ Պոսիդոնի տուաւ ծովը՝ որ համարեցաւ չաստուած ծովու. ուսկից հանելով զազաններն կ'ապականէր թշնամեաց երկիրները։

Պատմեն թէ սա եռաժանին գետինը զարկածին պէս՝ ձիեր հանեց, կամ ձիոց սանձ գտաւ. և առոր յիշատակ դրին խաղարկութիւններ, և ձիանց վազելը հանդէսով. և մինչև հիմա այս վազուկ ձիերուն հանդէսը շատ ազգերու մէջ կ'ըլլայ, մանաւանդ Թաթարըստան թագաւորաց առջին։ Յոյները կոչեցին զայս չաստուածը խորտակողնաւերու, և սասանող երկրի, և կը ձևացընէին նստած խեցեմորթէ շինած կառքի մը վրան, որ կը քաշէին ծովային ձիանքը. ինքն ալ եռաժանին ձեռքը կը հրամայէր քամիներուն։

ՊՈՐՓԻՒՐ՝ էր աղանդաւոր փիլիսոփայ Գ. դարուն Տիւրացի, որ աշկերտ եղաւ Պղոտինոս իմաստասիրին Որոգինեսին հետ։ Բայց սատիկ հետեւելով պղատոնական դրութեանց չար Թշնամի եղաւ քրիստոնէութեան՝ շատ բան ալ գրելով հեթանոսական աղանդով ընդդէմ Ճշմարտութեան, որ կոչի՝ Ներածութիւնք Պորփիւրի, եւ այլն ։ Եւսեբիոս կը պատմէ, թէ Պորփիւր տասնըհինգ գիրք գրեց հակառակ քրիստոնէութեան ․ բայց շատը այրեցին Կոստանդիանոս եւ Թէոդոս կայսերք ։ Փիլիսոփայական գրուածները չեն այնչափ մերժելի ․ իսկ ժուժկալութեան Ճառին մէջ կը գովէ Հրէաները, մոգպարէները, եւ նահատակները ։ Քրիստոս տէրն մեր կը պատուէ որպէս իմաստուն ․ իսկ վարդապետութիւնը կ՚անուանէ գերապանծ ։ Կարծեալ կը գրէ, թէ Քրիստոսի աշակերտները շիտակ չհասկցան անոր խօսքը ․ եւ քրիստոնեայք ալ ոչ արդարութեամբ երկրպագութիւն ըրին անոր որպէս Աստուծոյ ։ Այսպիսի փուճ խօսքերը նորա նզովելով դատապարտեցին սուրբ վարդապետք ․ մանաւանդ սուրբ Օգոստինոս չարաչար խայտառակեց զչար անօրէնը լուսաւոր վարդապետութեամբ եւ անյաղթելի Ճշմարտութեամբ ։ Որուն հետեւող աղանդաւորներն անուանեցան Պորփիւրեանք, եւ նզովեալ կորան ամէնքը ։

ՊՈՐՓԻՒՐՈՍ Թեսաղոնիկեցի՝ էր եպիսկոպոս Գազա քաղաքին Արկադեայ Թագաւորին ժամանակը ․ որ նախ կրօնաւորելով ՚ի Սկիտէ գնաց յԵրուսաղէմ, եւ քարոզութբ̄ կը դարձընէր Հրէաներն ու Հեթանոսները ։ Այս ամէն բան բաժնելով աղքատաց՝ ձեռագործին կը կերակրէր անանկները ․ եւ այսպիսի աստուածահաճոյ աղքատսիրութեամբ արժանի եղաւ քանին մէջ տեսլեան Փրկչին ․ նաեւ հաստա քահանայական սուրբ կարգին, ապա կարգեցաւ պահապան սուրբ կենսատու Խաչափայտին Երուսաղէմայ մէջ։ Ուր երբոր մեռաւ Գրազայի եպիսկոպոսը՝ յաջորդ ընտրեցին զերանելին իր զարմանալի առաքինութեանցն համար։ Երբոր գնաց 'ի Պօլիս պատուելու զսուրբ Ոսկեբերանը, հաւանեցուց Եւդոքսիա Թագուհին, որ իրեն օգնական ըլլայ, որպէս զի այն քաղաքէն և կողմէն վերցընէ կռապաշտութե՟ մնացուածը, և Գազայ քաղաքին մէջն ալ կանգնէ խաչաձև եկեղեցի մը։ Թագուհին բարի սրտով կատարեց սուրբ եպիսկոպոսին բարեպաշտական խնդիրքն. և ըստ գուշակութեան սուրբին՝ տուաւ իրեն Աստուած զաւակ մը, որ է փոքրն Թէոդոս կայսր։ Իսկ ինքն սուրբն Պորփիւրոս փայլեալ սրբութեամբ և առաքինութեամբ փոխեցաւ առ Տէր և տօնեցաւ հրաշագործութեամբ։

ՊՐԱՔՍԷԱՍ՝ էր հայրաչարչար Հերետիկոս Բ դարուն և աշկերտ լիրբ Մոնտանոսի, որ մէկ անձն մը կը դնէր յԱստուած ասելով. Հայր ծնեալ և չարչարեալ և նոյն ինքն է Քրիստոս, և այլն։ Որուն դէմ ելաւ քաջն Տերտուղիանոս, և քաջութ՟բ հաստատեց սուրբ եկեղեցւոյ ճշմարիտ վարդապետութիւնն ու նզովելով մերժեց զչար մոլորութիւնն, որ յետոյ Սաբէլ և այլք ջանացան նորոգելու. բայց ամէնքն ալ դատապարտեալ կորան։ Իսկ սուրբ Հայրք դաւանեցին զճշմարտութիւնն ասելով. “Երեք անձինք և մի բնութիւն մի աստուածութիւն, զքեզ խոստովանիմք յաւէտ սուրբ Երրորդութիւն„։

ՊՐՈՅԵՐ կամ ՊԱՐՈՅՐ իմաստասէր Հայազգի՝ էր մեծահամբաւ բանասէր Դ. դարուն քրիստոնեայ, որ այնչափ երեւելի եղաւ գիտութեամբ, մինչեւ աշակերտեցան իրեն սուրբ Բարսեղ, սուրբ Գրիգոր Աստուածաբան, եւ Յուլիանոս ուրացող յամի 343 ։ Եւնապիոս հեթանոս փիլիսոփան անոր աշկերտն ըլլալով այսպէս կը պատմէ . Պրոյեր Հայոց աշխարհքէն գնաց յԱնտիոք, եւ մանկութենէն սորվեցաւ հոն ճարտասանութիւն ու անցաւ յԱթէնք, ուր վարժելով եղաւ վարժապետ . որուն աշկերտ եղան Պոնտացիք եւ Բիւթանացիք, այլովքն հանդերձ ։ Սորա համբաւն իմաստութեան եւ բարեպաշտութեան լսելով Կոստաս կայսր կանչեց քովն, ու զարմացաւ լաւ քաղաքավարութեան եւ ճոխաբանութեանը վրայ, մինչեւ սեղանակից եւ մտերիմ ըրաւ իրեն ։ Յետոյ ղրկեց զՊարոյր 'ի Հռոմ, եւ հոն ալ այնչափ պատուեցաւ, որ արձան կանգնեցին այսպիսի վերնագրով . “ Թագուհին Հռոմ, թագաւորին ճոխաբանութեան ,, ։ Վերջը գնաց յԱթէնք իր վարժապետութեան աթոռը . միշտ կը սորվեցընէր առատ վարդապետութը̃, կայտառ, ժիր, եւ աստուածաշնորհ մինչեւ վախճանեցաւ խոր ծերութեամբ անուանելով “ Այր աստուածային ,, ։ Սուրբ Հերոնիմոս կը պատմէ թէ Յուլիանոս ուրացողը ծուռ կը նայէր իրեն քրիստոնէութեանը համար . բայց թոյլ տուաւ որ սորվեցընէ քրիստոնէից բարեկըրթութեամբ ։ Իսկ սուրբ Գրիգոր Աստուածաբան յօրինեց այս պանծալի վարժապետին վրայ գեղեցիկ գովեստ մը ոտանաւոր վերտառութեամբ ։

ՊՐՈԿՂ՝ էր պանծալի աշակերտ սուրբ Ոսկեբերանին, որ վասն իմաստութեան և սրբութեան ձեռնադրեցաւ եպիսկոպոս Կիւզիկոյ, և եղաւ հզօր գլխահար Նեստորականաց, և քաջ ջատագով ուղղափառութեան։ Ուստի հերձուածողներէն հալածուելով դարձաւ 'ի Պօլիս, ու միշտ հոգևոր գործոց և ընթերցուածոց կը պարապէր առաքինութ̃բ։ Այս պիղծ Նեստորի կործանմանէն վերջը երբոր վախճանեցաւ Մաքսիմիանոս պատրիարգը, ընտրեցին արժանաւոր պատրիարգ Կոստանդինուպօլսոյ զերանելին Պրոկղ յամի 434։ Որ իբրև քաջ հովիւ զօրացուց ուղղափառ հաւատքը հալածելով հերձուածողները և Նեստորի չար աղանդն։ Սահակ Պարթև սուրբ հայրապետն մեր նամակ գրեց առ սուրբն Պրոկղ վասն մոլորութեան Նեստորի և աղանդաւորներուն. և 'ի 435 առաւ պատասխանին, որ կը գրէ աստուածիմաստ վարդապետութեամբ 'ի վերայ մարդեղութեան Բանին, անշփոթ միաւորութեան երկու բնութեանցն, և աստուածամայրութեան Տիրամօրն, և այլն։ Իսկ նամակը այսպէս կը վերջացընէ. “Դու արդ կացէք 'ի մի շունչ և 'ի մի հոգի՝ միաբան ճգնեալք 'ի հաւատս Աւետարանին, և մի՛ իւիք զանգիտիցէք 'ի հակառակորդաց. այլ պահեցէք զաւանդութիւնս զորս ընկալայք 'ի սուրբ և յերանելի հարց, որ 'ի Նիկիա սահմանեցին ուղիղ հաւատոյ„։ Այս նամակս շատ անուանի է իւր գրուածներուն և ճառերուն մէջ, որ տպուեցաւ յն. և լտ։ Իսկ ինքն աստուածային իմաստութեամբ և սրբութեամբ փառաւորեց իր աթոռը տասուերեք տարի, ապա փոխեցաւ առ Քրիստոս յամի 447, զոր սուրբն Կիւրեղ կ՚անուանէ. “Այր լի աստուածպաշտութ՟բ, անթերի ՚ի ներվարժութիւնս և ՚ի տեղեկութիւնս եկեղեցական վարդապետութեանց, և անվրէպ ՚ի պահպանութիւն կանոնաց եկեղեցւոյ”:

ՊՐՈԿՂՈՍ վկայ՝ էր Գաղատացի Տրայիանոսի հալածանքին ատենը, որ շատ տանջուեցաւ Մաքսիմոս դատաւորէն: Ուր անօրէնը աներևոյթ զօրութ՟բ Քրիստոսի կապուեցաւ մնաց անշարժ, մինչև ապա խոստովանելով Աստուծոյ զօրութիւնն ու արձակուեցաւ: Յետոյ չարանալով նորէն տանջեց զուրբը կրակով, և ապա նետով նահատակեց: Իլարիոն եղբօրորդին ճամբան հանդիպելով Պրոկղոսի՝ գիրկն ընկաւ լալով. ուստի զայն ալ բռնեցին տանջեցին, և ապա գլխատեցին: Այս սուրբերուն հրաշագործ նշխարքը տարին ՚ի Պօլիս հանգուցին Հիւպատոսին վանքն ու տօնեցին:

ՊՐՈԿՈՊԻՈՍ զօրավար՝ էր Երուսաղէմացի որդի հօր քրիստոնէի և մօր կռապաշտի Դիոկղետիանոսի ժամանակը: Սա հայրը մեռնելէն ետև կռապաշտութ՟բ մեծցաւ ու սիրելի եղաւ կայսեր. մինչև դուքս դրուեցաւ Աղեքսանդրիոյ: Ապա երբոր կ՚երթար հօն երկու գունդ զօրքով քրիստոնեաները կորսնցընելու համար կռամոլ կայսեր հրամանաւ, ահա ճամբան երևցաւ իրեն սառնատեսիլ խաչ մը, ուսկից լսեց, եթէ չիպաշտէ զՅիսուս Աստուածորդին զխաչելեալն, պիտի մեռնի: Ուստի սարսափելով հասածին պէս ՚ի Սկիւթապօլիս շինել տուաւ այն խաչին օրինակն ոսկերչին, ու անով թշնամիներուն յաղթելով կը պաշտէր զՔրիստոս:

Իսկ մայրը տեսնելով զայն մատնեց Ղուկիոս դատաւորին , որ սաստիկ տանջեց զերանելին ու կիսամահ բանտը ձգեց ։ Իւր երևցաւ Փրկիչը հրեշտակներով , և ողջացուց սուրբը հրաշքով · մինչև հաւատացին երկու զօրագլուխք իրենց զօրքերով և մկրտեցան ձեռամբ սրբոյն Ղևոնդի ։ Վերջապէս Պրոկոպիոս լուսաւորելով զմայրըն ալ ուրիշ տիկիններով ամէնքը հաւատացին Քրիստոսի և տանջեցան ծեծով և հրով ու ցնծութեամբ գլխատեցան 'ի սէրն Աստուծոյ ։ Յետոյ խիստ ծեծով նորէն տանջելով զսուրբն Պրոկոպիոս ափին մէջ դրին կրակ և կնդրուկ , որպէս զի բանի խնկէ կռոց ։ Բայց նա քաջութեամբ կրակն ամուր պահեց ձեռքին մէջն ու չի վնասեցաւ · ապա անօրէնները խայտառակ ընելով գլխատեցին քաջ նահատակը , որ տօնելի եղաւ ։

Աստուածաքանչ շնորհ կենսատու խաչին
Անշէջ բորբոքէ զսիրտ հոգեսիրին ,
Ոչ հուր ոչ ազգ ազգ ահեղ տանջանաց
Գիտեն ընկճել զիղձ եռանդուն քաջաց ։
Բթեցան սուսերք ժանտ բռնակալաց
Անմեղ վկայից արեան ծարաւեաց ·
Համայն և ինքեանք փոյթ ընդ փոյթ կորեան
Իսկ սուրբք քաջայոյս 'ի խաչն՝ անմահ կան ։

ՊՕԼԼԱՆՏ կամ ԲՈԼԼԱՆԴ՝ կոչուեցաւ Յովհաննէս մեծիմաստ վարդապետն Յիսուսեան , որ ժողվելով հին յիշատակարանները սրբոց վարուց , կամ վկայաբանութիւնները հաւաքելով ըստ կարգի , և բազմահմուտ քննութեամբ ծանօթութիւններ ընելով հաւատարմութ̃ տպագրել տուաւ վարք սրբոց հինգ հատոր . իսկ վեցերորդ հատորը տպագրած ատենը Պօլլանտ վախճանեցաւ եօթանասուն տարւան 'ի 1665 ։ Անոր յաջորդեցին Հենշենիոս և Փափէպրօք Յիսուսեան վարդապետք . ասոնց ալ վաստակակից եղան ուրիշները յաջորդութեամբ ։ Որ լաւ քննութեամբ յայտնեցին զճշմարտութիւն աներկբայ և երկբայական վկայաբանութեանց և պատմութեանց , ապա 'ի լոյս հանեցին այս պիտուական մատեանը յիսունըհինգ հատորով յամի 1794 , ու անուանեցան Պօլլանտեանք կամ Բօլլանդեանք ։

ՊՕԿՕՄԻԼԷՍ ըստ Սկլաւ . կը նշանակէ Աստուած ողորմեա՛ մեզ ։ Այս անուամբ կոչուեցան չար հերետիկոսներն ԺԱ. դարուն , որոնք հետևելով աղանդաւոր Վասիլ Սկլաւոնին՝ կ'ուրանային զխորհուրդն սուրբ Երրորդութեան ։ Հայր Աստուած միայն կ'ընդունէին . Որդին անկէց ծնած , իսկ Հոգին յՈրդւոյ ծնած 5500 տարի առաջ ։ Հոգին ալ ծնաւ կ'ըսէին զՅուդայ մատնիչը և ուրիշ առաքեալները ։ Կ'անարգէին սուրբ խաչը , սրբոց նշխարքը և սրբազան պատկերքները , և այլն ։ Կը մերժէին խորհուրդն ամուսնութեան . իսկ հաղորդութեան խորհուրդ կը համարէին այն՝ երբ հանապազօրեայ հացը կը խնդրէին ըսելով Հայր մեր եօթն անգամ ցորեկը , և հինգ անգամ գիշերը հանդերձ ծնրադրութեամբ , և այլն ։ Որոնք շուտով նզովեցան կորան . իսկ աղանդապետն Վասիլ չարաչար այրեցաւ 'ի Կոստանդինուպօլիս Աղեքսի Կոմնենոսին օրը ։

ՊՕՂ , պարզամիտ էր առանց ուսման այր երկրագործ . բայց խիստ աստուածավախ և հոգեսէր աշխարհական, որ քանի մը զաւակ ունենալէն ետև հրաժարեցաւ տնէն և վատ կնիկէն ու ելաւ գնաց յանապատ առ սուրբ հայրն Անտոն։ Որուն աշակերտելով կատարեալ առաքինութեամբ, զարմանալի համբերութե̃ և միամիտ հնազանդութեամբ առաւ հայրական օրհնութիւնը սուրբ ծերուն։ Ապա նստելով յառանձին ճգնարան այնչափ զօրացաւ սուրբ վարքով և կատարելութե̃, մինչև աղօթքո̃ն կը հալածէր դևերը. նաև արժանի եղաւ աստուածային յայտնութեանց, բարի օրինակ ըլլալով ճգնաւորաց և գլխաւոր աշակերտ սրբոյն Անտոնի. վերջը բարի ծերութեամբ և սրբութեամբ հանգեաւ 'ի Տէր և տօնեցաւ։

ՊՕՂԻԿԱՐՊՈՍ՝ էր մեծանուն հայրապետ, և սքանչելագործ աշակերտ Յովհաննու աւետարանչին, որ մանկութեան ատենը արևելքէն գալով 'ի Զմիւռնիա որդեգիր եղաւ բարեպաշտ Կալիստեայ տիկնոջն, ու անոր տանը ամէն բան կը հոգար։ Երբոր որ ամէն ուտելիքը կը բաժնէր աղքատաց, աղօթքով նորէն կը լեցնէր. շատ անգամ ալ երթալով սուրբ Աւետարանչին քով աշակերտեցաւ ու լեցուեցաւ անոր հոգւովը։

Ապա ձեռնադրեցաւ արժանապէս սարկաւագ և քահանայ, ու շնորհազարդեալ կը քարոզէր զբանն Աստուծոյ հրաշագործութեամբ անդադար շատ ժամանակ, մինչև մեռաւ Բուկողոս եպիսկոպոս Զմիւռնիոյ, որուն տեղը Պօղիկարպոս ձեռնադրեցաւ սուրբ Աւետարանչէն՝ ծագելով վրան երկնային լոյս մը, և աղաւնակերպ Հոգին սուրբ երևնալով։

Անկեց ետև առաւել շնորհազարդեալ պայծառայուց զեկեղեցին աստուածիմաստ քարոզութեամբ և յայտնի հրաշքներով, զոր Հրեաներն ու Հեթանոսները տեսնելով կը դառնային 'ի Քրիստոս ։ Այս ծերութեան ատեն գնաց Հռոմ, ու աքանչելի վարդապետութեամբ շատ հերձուածողներ դարձուց յուղղափառութիւն ։ Յետոյ դառնալով իր աթոռը մատնուեցաւ Հեթանոսաց ձեռքը Աւրեղիոսի հալածանքին ատենը, որոնք պէսպէս քննութ՟ և նեղութեամբ որչափ որ ջանացին յաղթելու ծերուն՝ քաջութեամբը խայտառակեցան ։ Այս վճռեցին հրովնահատակելու զերանելին . բայց բոցը կամարաձև ըլլալով սուրբը չայրեցաւ . նոյն ատենը դահիճը սրով զարկաւ նահատակեց սուրբ հայրապետը իննըսունըհինգ տարւան յամի 169 . իսկ ամբառնալն երկինքը տեսան արժանաւորներն ու գրեցին վարքը ։

ՊՕՂԻԿԵԱՆ չար հերետիկոսներն էին կռապաշտիցմէ մնացուածք Լուսաւորչայ ժամանակէն Հայաստանու մէկ կողմն . ոմանք աւելորդապաշտութեամբ ուզածնին կը պաշտէին . ոմանք ալ արև կը պաշտէին, ու Արևորդիք կ'անուանէին . շատն ալ յետոյ հետևելով Մանիքեցւոց և Պօղոսի Սամոսատացւոյն գնացին ուրիշ տեղէ 'ի Հայաստան Ը. դարուն, և կոչեցան Պօղիկեանք ։ Որոնք միայն ունէին անուն քրիստոնէութեան, և դրսէն կը ձևանային կեղծաւորութ՟ բարեպարիշտք, այլ շատ անկարգք և պղծալից էին ։ Խաչերը կը կոտրտէին, սուրբ խորհուրդներն ու բարի վարքը կը մերժէին . ուր և չարաչար նզովեցան սուրբ Մեսրոպէն, և Յովհան Իմաստասիրէն, ինչպէս կը պատմեն նաև Յոյն պատմիչք ։ Պրիզոր Մագիստրոս ալ այսպէս կը գրէ․ “Ահաւասիկ Պօղիկեանքդ, որ ՚ի Պօղոսէ Սամոսատացւոյ դեղեալ․ ․ ․ ․ ասեն զՊօղոս սիրեմք, և զՊետրոս անիծանեմք։ Ահա և այլք ոմանք ՚ի Զրադաշտ մոգէ, մոգք պարսկականք․ և այժմ ՚ի նոցունց դեղեալք՝ արեգակնապաշտք, զոր արևորդիսն անուանեն”։ Նոյնպէս գրէ Շնորհալին․ “Որպէս են Պօլոմելուք ՚ի մէջ Յունաց, նոյնպէս և արևորդիք ՚ի մէջ Հայոց։

ՊՕՂՈՍ առաքեալ՝ երբեմն Սօղոս կամ Սաւուղ, էր Տարսոնացի, ազգաւ Եբրայեցի և Բենիամինի ցեղէն, առաջ նախանձաւոր հին օրինաց և սաստիկ հալածիչ եկեղեցւոյ։ Սուրբ Ստեփաննոս քարկոծելէն ետև երբոր կ՚երթար ՚ի Դամասկոս քրիստոնեաներն հալածելու համար՝ ճամբան սոսկալի լոյս մը տեսաւ․ մէկէն ձիէն վար ինկաւ ու լսեց այս բանս․ “Սաւուղ Սաւուղ, զի՞ հալածես զիս․ ես եմ Յիսուս զոր դուն հալածես”։ Ելաւ մէկէն զգաստացաւ շնորհօք սուրբ Հոգւոյն․ գնաց Դամասկոս մկրտեցաւ Անանիա առաքեալէն, ու եղաւ քարոզ բանին Աստուծոյ, անօթ ընտրութեան և վարդապետ հեթանոսաց, բազմավաստակ հայր հասարակաց բանիւ և գրով, ինչպէս որ կը պատմէ Գործք առաքելոցը, և իրեն գրած տասնըչորս թղթերը Հոգւով սրբով, զոր մեկնեց Ոսկեբերան և այլ սուրբ Հարք։

Ահա այս պատճառաւ մականուանեցաւ արդեամբք Երեքտասաներորդ առաքեալ տեսող երկնից, և այլն։ Որչափ մեծ չարչարանք և շատ հալածանք քաշեց վասն անուան Տեառն ամէն աշխարհ, այնչափ զօրացաւ սուրբ Առաքեալը. մանաւանդ յԱսիա, յԱրաբիա, յԱնտիոք և Յունաստան այլովքն հանդերձ։ Ապա մատնութեամբ Հրէից կապանօք աքսորուեցաւ 'ի Հռոմ. ուր յետ երկար բանտարգելութեան և շատ քննութեանց յայտնի եղաւ անմեղութիւնն յամենայն կողմանց։ Անկէց ետև արձակեցաւ, ու նորէն կը շրջէր քարոզելով ամէն տեղ Քրիստոսի սուրբ հաւատքը և լուսաւորելով աշակերտները վարդապետութեամբ։ Յետոյ գնաց Հռոմ գտաւ Պետրոս առաքեալն ու միատեղ վիճեցան՝ Ներոն կայսեր առջև Սիմոն մոգին դէմ, որ վերէն ընկաւ սատկեցաւ սուրբ Առաքելոյս աղօթքով։ Իսկ՝ Ներոն կատղելով մէկ օրուան մէջ նահատակեց երկուսն ալ յամի Տեառն 66, Պետրոսը խաչելով, Պօղոսը գլխատելով. ասոնց անուամբ կանգնեցին փառաւոր եկեղեցիներ։ Տ. Պետրոս։

Անհասանելոյն գործ անճառելի
  Երկնաբերձ մտաց Էից սիրալի,
  Ի գազան փոխէ զմարդ դիւցազնական
  Ու զահեղ գազան 'ի մարդ գերբնական։
Նոյն շնորհ անսահման դարձոյց զվէս Սօղոս
  Յընտիր աշակերտ յերկնաճեմ Պօղոս.
  Հրաշափառ քարոզ անօթ ընտրութեան
  Լոյս հեթանոսաց ճրագ ճշմարտութեան։

ՊՕՂՈՍ անապատական՝ էր առջի միայնակեաց ճգնաւոր, զաւակ մեծատան որբացած։ Որ Դեկիոսի հալածանքին ժամանակը բոլոր ունեցածը բաժնեց աղքատներուն ու գնաց ներսի անապատը հրաժարելով աշխարհքէ տասնըվեց տարուան պատանեակ յամի 250։ Ուր գտաւ քարածերպ մը և անոյշ ջուր պատրաստած 'ի Տեառնէ. մնաց մէջը բնակեցաւ ճգնութեամբ և հրեշտակային վարքով իննսունըեօթն տարի՝ անյայտ ամէն մարդիկներէն մինչև 'ի մահն: Ապա յամի 343 սուրբ Անտոն ճգնաւորն աստուածային ազդեցութեամբ գնաց գտնելու զերանելին. ու երբոր վախճանեցաւ՝ ամփոփեց մարմինը. և տեսաւ հոգին որ երկինքը կ'ելլէր: Որուն վրա սուրբ Հերոնիմոս փառաւոր ճառ կը խօսի մեծ գովեստով:

ՊՕՂՈՍ Խոստովանող Թեսաղոնիկեցի՝ էր ձեռնասուն սարկաւագ սրբոյն Աղեքսանդրի հայրապետին Պօլսոյ, և եղաւ նորա արժանաւոր յաջորդ: Բայց Կոստանդ կայսրն Արիանոսաց չարախօսութ՟բ ձգեց աթոռէն սուրբը, և սուրբ Աթանասն ալ իրեն աթոռէն աքսորեց. որոնք գնացին ընկան առ Յուլիոս պապն Հռոմայ, որ թուղթ առաւ Կոստաս թագաւորէն, ու ղրկեց զանոնք իրենց աթոռը: Իսկ անօրէն հերձուածողք նորէն աքսորել տուին. ուր երանելին Պօղոս քշուեցաւ 'ի Կոկիսոն, և համարձակ կը քարոզէր Նիկիական ուղղափառ հաւատքը: Անոր համար չար Արիանոսք ատելութեամբ և հրամանաւ Փիլիպպոսի եպարքոսին խեղդեցին զսուրբ հայրապետն իր եմիփորոնաւն երբոր գիշերանց պաշտօն կը կատարէր: Ապա մեծին Թէոդոսի օրը փոխադրեցին սուրբին մարմինը 'ի Պօլիս, և հանգուցին պատուով:

ՊՕՂՈՍ Սամոսատցի, հայրաչարչար հերետիկոս, էր նախ մուրացկան Ասորի. ապա երեսպաշտութեամբ զօրացաւ, ու եպիսկոպոս նըստաւ յԱնտիոք քաղաքը յամին 262: Որ յետոյ սկսաւ քարոզել չար աղանդը ուրանալով զաստուածութիւնն Քրիստոսի , երկու անձն և երկու որդի՝ բնական և որդեգրական դնելով Փրկիչը · բնականն էր կ՚ըսէր զօրութիւն Աստուծոյ ուսուցիչ օրինացն Թլփատութեան ։ Նա այսպէս ջանացաւ նորոգել հրէութիւնը , քարոզելով մի միայն անձն հօր Աստուծոյ · իսկ Որդի և Հոգին՝ յատկութիւնք Այ , և այլն ։

Այս աղանդապետն երբոր կանչեցին Անտիոքայ ժողովքը՝ կեղծաւորելով ասաց թէ՝ իր քարոզութիւնը շիտակ մոլոր ըսած է ։ Բայց ժողովքը նզովեց մոլորեալը աթոռէն վար ձգելով յամի 270 ։ Ասոր հետևողները Սամոսատցիք անուանեցան , որոնք կը մկրտէին միայն յանուն հօր Աստուծոյ ։ Անոր համար սուրբ ժողովը՝ Նիկիոյ սահմանեց , որ նոցա մկրտած երեխաները նորէն մկրտեն ըստ կարգին սուրբ եկեղեցւոյ · իսկ ինքն կորաւ չարաչար ։

ՊՕՂՈՍ Ա․ կայսր Ռուսաց ծնեալ յամի 1754 · Կատարինեայ Բ․ դշխոյէն , և 'ի 1780 շրջելով յԵւրոպիա մեծապէս պատուեցաւ յամենայն տեղ և տէրութեանց մէջ , մինչև դարձաւ իր կայսերական քաղաքը ։ Իր մայրը մեռնելէն ետև նստաւ ինքնակալ կայսր Ռուսաց 'ի 1796ին ։

Ապա սկսաւ բարեկարգել թագաւորութիւնը , զօրքը , և իշխանները համդերձ քաղաքական շինութեամբ , և այլն ։ Իսկ 'ի 1799 միանալով՝ Նեմցէներուն հետ ելաւ անկրօն Գաղղիացւոց վրա Սուարով զօրավարին ձեռքով ։ Յետոյ երբոր տէրութեան քանի մը կարգերը ուզեց փոխելու , ատելի եղաւ իշխաններուն ։ Մինչև ոմանք գիշերանց կոխեցին խուցն ու աղէտալի մահուամբ սպաննեցին անմեղ կայսրըն 'ի 1801 ։ Որուն յաջորդեց դժկամակութե̃ Աղեքսանդր մեծ որդին ։ Տ· 'ի կարգին ։

Պօղոս Ա· սուրբ հայրապետն Հռոմայ նստաւ 'ի գահ սրբոյն Պետրոսի 'ի 757, և մեծամեծ առաքինի գործքով սիրելի եղաւ Թագաւորաց և իշխանաց ։ Մինչև քաջութեամբ նզովեց ու կորուց պատկերամարտները, այլ և գրեց յանդիմանութիւն ամբարիշտ կայսեր Կոպրոնիմոսի, որով զօրացան ուղղափառք · ապա շինեց վկայարաններ, ու սրբոց նշխարքը պատուով դրաւ խորանները յարգութեան համար ։ Շատ անգամ ալ հիւանդանոցները երթալով իր ձեռքով կը դարմանէր հիւանդները · կը հոգար աղքատներն ու բանտարկեալները · և այսպիսի երկնային առաքինութեամբ քաղաքավարեալ փոխեցաւ առ Տէր 'ի 767 ։

Պօղոս Բ· ազնուազարմ Վենետիկցի, աստուածաշնորհ և փառաւոր անձն, օծուեցաւ քահանայապետ Հռոմայ յայտնութեամբ Տիրամօրն յամի 1464 ։ Շատ ողորմած և քաղցրասիրտ էր և զարմանալի բարեկարգութեամբ փայլեցուց զեկեղեցին և եկեղեցականները ։ Յոբելեան հանդէսն սահմանեց որ քսանըհինգ տարին անգամ մը կատարուի, ինչպէս որ մինչև հիմա կ'ըլլայ նոյն կարգովը ։ Մեծ խոհեմութեամբ և քաջութեամբ կործանեց ապստամբ խռովարարներն և աղանդաւորները · իսկ առաքինի և բանիբուն անձինքը փառաւորեց ։ Ծաղկեցուց դպրոցները հաստատելով տպարան և երևելի շինութիւններ Հռոմայու մէջ ։ Ապա վախճանեց առաքինազարդ և բարեսէր կեանքն ու փոխեցաւ յանանց կեանքը յիսունըչորս տարեան 'ի 1471 ։

ՊՕՂՈՍ Գ. իմաստասէր և խոհական կարդինալ՝ ընտրեցաւ գլուխ սուրբ եկեղեցւոյն Քրիստոսի յամի 1534. որ առատասիրտ և խնամոտ ըլլալով մեծ քաջութեամբ գլխահար եղաւ չար հերձուածողներուն Կալվինականաց և այլոց, անարատ պահելով ժողովուրդն Աստուծոյ բարեպաշտութեամբ: Այս մեծազօր հայրապետս ուսումնասէր ըլլալով շատ կը պատուէր գիտունները, և իրեն սեղանակից էին աստուածաբանները: Գրեց հոգելից կոնդակներ վասն հաստատութեան սրբազան կրօնից. բայց հաստատելէն ետև Քաբուչինաց և Յիսուսեանց կարգը, վճարեց ցանկալի կեանքը ութսունևերկու տարւան 'ի 1549:

ՊՕՂՈՍ Դ. Նէապօլսեցի՝ նստաւ քահանայապետ Հռոմայ յամի 1555. որ էր ծերունի ութսուն տարւան, բայց քաջ և անաչառ խստութեամբ հաստատեց գեղեցիկ կարգեր և կանոններ օգտակար թէ կրօնին և թէ ժողովրդեան: Մեծապէս ջանացաւ ամէն աշխարհք տարածելու ուղղափառ հաւատքը, մանաւանդ յԱնգղիա. դատապարտեց հերձուածողներն, ու անոնց հայհոյական գրեանքը: Գրեց պիտուական գրքեր և նամակներ. նաև հաստատեց քանի մը եպիսկոպոսական աթոռներ, շատ բարիք ալ ըրաւ Հռոմայեցւոց, որոնք կանգնեցին սրբազանին արձանը Կապիտոլիոնին մէջ. իսկ յամի 1559 առաքինազարդ վարքով փոխեցաւ առ Աստուած:

ՊՕՂՈՍ Ե. Հռոմայեցի՝ նստաւ յաթոռ սրբոյն Պետրոսի փառաւորապէս 'ի 1605, որ բարենախանձ ոգւով կառավարեց սուրբ եկեղեցնայ վիճակը, և խոհեմութեամբ վարուելով ամենուն հետ խաղաղացուց անմիաբանները, և այլն ։ Աստի օրինադրելով հարկաւոր կարգեր և կանոններ զօրացուց զեկեղեցին Քրիստոսի և սուրբ կրօնը ։ Հրամայեց կղերց, որ ուսումնական ըլլան և քաջ սորվին աստուածաբանութիւնն ըստ բարոյականին, նմանապէս վանականք ալ վարժին խօսելու Լատիներէն, Յունարէն, Արաբերէն, և Եբրայեցերէն, որպէս զի ըլլան գիտուն վարդապետ և քաջ վարժապետ 'ի լուսաւորել զազգս և ծաղկեցընել հաւատքը ։ Սրբազանը ուրախութեամբ ընդունեց Հայոց Դաւիթ կաթուղիկոսին դաւանութեան և հնազանդութեան նամակը և հոգելից մխիթարութեամբ գովեց բարեպաշտութիւնը ։ Շատ փառաւոր շէնքեր և աղբիւրներ ալ շինեց Հռոմայ մէջ, կատարեց սրբոյն Պետրոսի հոյակապ Ճակատը և մեծագործ աղբիւրն Պօղոսեան, նաև պալատն Մօնթէ Քավալլօ, և այլն ։ Այսպէս պայծառացեալ աստուածային վարուք, հոգեհանճար իմաստութեամբ, և պաշտօնասիրութեամբ փոխեցաւ առ Տէր Պօղոս սրբազան հայրապետը վաթսունինը տարւան յամի 1600 ։

Սեմ գահակալք յաջորդք Պետրոսի
Վեհք աստուածընտիր շնորհազարդ արի ․
Հովիւք քաջայոյս տէրունեան հօտին
Եղծիչ մոլելոց այլափառ գնդին ։
Սոքա պերճականք ըստ բանի Փրկչին
Պատշաճեալք հիման տան Երկնաւորին ․
Յոյց վերայ կանգնեաց մատն արարչական
Զեկեղեցին սուրբ անշարժ յաւիտեան ։

Ռ.

ՌԱԲԲԻ՝ ըստ Եբր. կը նշանակէ վարդապետ և տէր. իսկ Ռաբբունի կամ Ռաբունի՝ վարդապետ իմ, տէր իմ։ Աշակերտներն այսպէս կը կոչէին զՓրկիչն մեր զոր օրինակ. “Ռաբբի բարւոք է մեզ աստ լինել։ Ռաբբունի, զի բացայց”, և այլն։ Իսկ որովհետև փարիսեցիք այս անուամբ կը պարծէին հպարտութեամբ, Յիսուս արգիլեց աշակերտացն ասելով. “Բայց դուք՝ մի՛ զոք կոչէք վարդապետ, զի մի է ձեր ուսուցիչ”։

Ռաբբիք Հրէից երկու աղանդ բաժնուելով ոմանք կ'անուանէին Ռաբունեանք, որք կը հետևէին կուրօրէն Թալմուտին և ծերոց աւանդութեանց, ոմանք ալ Խարայիտք կամ Գարայիմք, որ չարաչար կ'ատեն Թալմուտն ու Հրէից աւանդութիւնը. այլ միայն Մովսիսի հինգ գիրքը կ'ընդունին։ Տ.'ի կարգին։ Ռաբունեաց ամէն գրեանքը շարադրեցան Յիսուսէն ետև քրիստոնէից դէմ առասպելաբանութեամբ ստութեամբ և լի մոլորութեամբ, որով կը ջանան յարմարցընել զսուրբ Գիրքը իրենց պիղծ Թալմուտին։ Փրկիչն մեր սաստիկ յանդիմանեց փարիսեցւոց խստասրտութիւնն ու մնապաշտութիւնը, որոնք կուրացեալ թողլին Աստուծոյ բանն ու առասպելաբանութեամբ և սուտ աւանդութեամբ ծերոց միայն կը պարծենային, Իսկ հին սուրբ վարդապետք վկայութեամբ սուրբ Գրոց, և բացայայտ մեկնաբանութեամբ նախնի Րաբունեաց խայտառակեցին անոնց ամէն ստաբանութիւնը և հրէական խարդախութիւնը ընդդէմ յայտնի ճշմարտութեան ։

ՌԱԽԱԲ, ՌԱՀԱԲ կամ ՀՌԵՔԱԲ՝ է անուն պոռնիկ կնոջ, որ ըստ ոմանց էր պանդոկապետուհի, զի Եբրայական բառս Զօնահ կը նշանակէ թէ պոռնիկ, և թէ պանդօկապետուհի ։ Նա կին բնակելով Երիքովի պարըսպին քովը՝ երբոր Յեսուին երկու լրտեսներն անոր տունն իջան, ու թագաւորը մարդ ղրկեց որ բռնեն՝ Ռախաբ իմաստութեամբ պահեց զանոնք, և գիշերանց պարսպին պատուհանէն չուանով փախուց անվտանգ ։ Նոր համար երբոր Յեսու առաւ քաղաքը, այն երկու կորիճ լրտեսներն մտան Ռախաբին տունն ու հանեցին անկէ Ռախաբը և ծնողքը, եղբայրներն ու ազգատոհմը ամէն ապրանքովը, և բնակեցուցին Իսրայէլացւոց մէջ. իսկ բոլոր քաղաքն այրեցին մարդիկներով ։ Պօղոս առաքեալ կը գովէ Ռախաբին հաւատքը, որ կին եղաւ յետոյ Սաղմոնայ իշխանին Յուդայ և մայր Բոոսին. և նախահանի կոչեցաւ Դաւթի, կամ Հանիկ Աստուածամօրն և Փրկչին. ինչպէս որ կը յիշէ սուրբն Եփրեմ. "Օ Ռահաբ պոռնիկն և զաղրագործն, ողորմեցայ նմա վասն հիւրընկալութեանն, և Հանիկ ինձ արարի"։

Ռախաբ բարեբաստ թէպէտ այլազգի
Մեծագործ գտաւ 'ի պատեհ առթի.
Հիւրընկալ բարի խնամող օտարաց
Եղև արժանի գերագոյն բարեաց ։

Օ՛ որ ինչ ոք գործէ առ սէր բարեմոյն
Հանդիպի վարձուց անսահման բարույն.
Հիւրասիրութեամբ Ռախաբ լեալ տիկին
Ազատիչ զարմին հանիկ և Փրկչին:

ՌԱՓԱՅԷԼ կամ **ՀՌԱՓԱՅԷԼ**. Տ. Հրեշտակք:

ՌԻՉՉԻ Մատթէոս՝ էր վարդապետ Յիսուսեան Իտալացի, որ 'ի 1578 գնաց Հնդկաստան, անկէց ալ անցաւ 'ի Չինս վասն քարոզութեան. ուր սիրելի եղաւ Վանլի կայսեր և հրաման առաւ ու կանգնեց թագաւորական պալատին մէջ Փրկչին և Տիրամօրն պատկերքը: Ապա ինքնակալին խնդրելովը գծեց աշխարհացոյցն Չինաց տէրութեան, մէջ տեղը դնելով զայն երկիր ինչպէս որ կը փափաքէին ու կարծէին թէ իրենց աշխարհը հողագնտին մէջ տեղն է իբր ամենէն գերագոյն:

Երբոր մեծ համբերութեամբ կատարեց զայն՝ ընդունելի եղաւ ու յաջողութեամբ կանգնեց հոն եկեղեցի, և հիմն քրիստոնէութեան դրաւ, որ քիչ ժամանակէն շատ ծաղկեցաւ խոհեմ կառավարութ̃բ Յիսուսեանց. իմաստութիւնը առաքելական քարոզութեան հետ միացուց որով լուսաւորեցին անթիւ կռապաշտներ, և պայծառացուցին հաւատքը: Շարադրեց համառօտ քրիստոնէական վարդապետութիւն մը վասն քրիստոնեայ Չինաց՝ նշանակելով միայն բնական կրօնին կանոններն ու բարոյական իմաստասիրութ̃ին որ կ'առաջնորդէ առ սուրբ հաւատքը: Շատ պիտանի տեղեկութ̃իններ ալ գրեց Չինաց աշխարհին վրա. աս առաքելաշնորհ և բազմարդիւն՝ քարոզիչս փոխեցաւ առ Քրիստոս յիսունըութ տարուան 'ի մայրաքաղաքն Փէքին յամի 1610 ։

ՌՈԲՈՎԱՄ՝ էր որդի Սողոմոնի, որ մանկութենէն անկիրթ և թոյլ մեծնալով՝ երբոր թագաւոր նստաւ քառասունըմէկ տարուան և իշխանները խնդրեցին որ թեթևցընէ ժողովուրդին վրայէն ծանր տուրքը, ինչպէս որ հօրը խորհրդականներն ալ կը յորդորէին որ մտիկ ընէ անոնց, նա թողուց ծերոց պիտանի խրատն ու հարցուց անփորձ երիտասարդներուն. անոնք ալ խրատ տուին որ ծանր խօսքերով պատասխան տայ ու աւելի ծանրացընէ տուրքը ։ Ան ատեն ժողովուրդը բարկանալով գլուխ քաշեցին. և Իսրայէլի տասը ցեղն ապստամբելով միացան Յերոբովամ իշխանին հետ ու թագաւոր դրին զայն ։ Միայն Յուդայի և Բենիամենի ցեղերը մնացին Ռոբովամին հետ. որ թագաւոր նստաւ յԵրուսաղէմ աստուածպաշտութ̅բ տասնըեօթ տարի ։ Ապա մեռաւ և թաղեցաւ Դաւթի քաղաքին մէջ. բայց բոլոր կեանքին մէջ խելացի բան մը չըրաւ հօրը նման ։

ՌՈՄԱՆՈՍ կամ ՌԱՄԱՆՈՍ Երգեցող՝ էր սարկաւագ Ասորւոց երկրէն եկեղեցւոյն Բերիտոյ առաքինութեամբ և ուսմամբ կրթեալ 'ի մանկութենէ ։ Յամին 500 գնաց 'ի Կոստանդինուպոլիս ու բնակեցաւ Աստուածածնայ եկեղեցւոյն դրան քով, որ կը պաշտէր ջերմեռանդն սիրով և աղօթիւք. մինչև քունին մէջ երևցաւ իրեն Տիրամայրն և տուաւ գիրք մը որ կլլէ ։ Երբոր արթընցաւ երանելին սկսաւ քաղցր ձայնով երգել Քրիստոսի ծննդեան վրայ երգ մը՝ այսպէս . «Կոյսն այսօր զգերագոյականն ծնանի» : Նոյն ատեն առաւ երկնային շնորհ երգաբանութեան , որով շարադրեց հազար շքեղ կցուրդս , կամ՝ ըստ յն . Կոնդակիոն , որ մինչև հիմա կ՚երգեն : Իսկ երանելին Ռոմանոս վախճանեցաւ սրբակրօն վարքով , և տօնեցաւ յեկեղեցիս միշտ :

ՌՈՄԱՆՈՍ սրբազան հայրապետն Հռոմայ յաջորդեց յաթոռ սրբոյն Պետրոսի յամի 897 . և մեծ ջանքով սկսաւ բարեկարգել ընդհանուր եկեղեցին Քրիստոսի : Սակայն ժամանակին կարճութիւնը չթողուց որ կատարէ ամէն բան կանոնով : Միայն գրեց քանի մը զօրաւոր նամակներ և կոնդակներ վասն հաստատութեան եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ : Մէկէն վրան հասաւ մահը իրեք ամիս և քսանուերկու օր հայրապետական իշխանութիւն քշելէն ետև :

ՌՈՄԱՆՈՍ աբեղայ էր Անտիոքացի , աստուածապաշտ առաքինի Մաքսիմիանոսի ժամանակը : Ասկղեպիադէս կուսակալ եպարքոսը երբոր ուզեց եկեղեցին մտնելու , Ռոմանոս դէմ ելաւ արգիլեց յանդիմանելով հեթանոսաց մոլորութիւնը : Ուստի անօրէն եպարքոսը ծեծով կախել տուաւ սուրբը և տանջեց սաստիկ . բայց նա միշտ Քրիստոս կը քարոզէր ու քրիստոնէութիւնը կը փառաւորէր տանջանքին մէջալ : Ան ատենը տղայ մը բերին հոն . երբոր հարցուց Ռոմանոս , թէ ո՞ր Աստուածը պէտք է պաշտել . պատասխանեց մանուկը . Օ մի Աստուած ճշմարիտ արարիչ երկնի և երկրի , զոր քրիստոնեայք պաշտեն : Բռնաւորը կատղելով ըսաւ թէ՝ Ո՛վ սորվեցուց քեզ այդ ։ Պատասխանեց թէ մայրս սորվեցուց ․ մայրն ալ բերին ու մօրն աչքին տանջեցին տղան ․ որ երբ ըսաւ ․ Ծարաւի եմ, մայրն ասաց իրեն ․ Որդեակ մի խմեր ջուր, այլ գնա՛ 'ի ջուրն կենդանի ։ Այն ատեն կտրեցին տղուն գլուխը ․ ու երանելի մայրն ուրախութեամբ ամփոփեց մարմինը, զոր կը տօնենք Ռոմանոսին հետ ։ Ապա նորէն չարաչար տանջեցին զսուրբն Ռոմանոս, մարմինը բերթելով լեզուն ալ կտրեցին ․ իսկ նա առաւ թուղթ ու արիւնովը գրեց ․ Երանի որ սուրբ են սրտիւք ․ երանի որ վասն Աստուծոյ հրաժարին յաշխարհէս, և այլն ։ Երբոր ուզեցին ողջ ողջ այրել զերանելին՝ սաստիկ անձրևով մարեցաւ կրակը, ու սուրբը բանտ ձգեցին ուր նոյն գիշերը անգութ եպարքոսն խեղդել տուաւ ․ որուն նշխարքը շատ հրաշքներով ծաղկեցաւ, ինքն ալ տօնեցաւ ։

ՌՈՄԱՆՈՍ Ա. Լակապէն էր Հայազգի կայսր Յունաց նախարարի ցեղէ, որուն հայրը Վաշտակ քաջ իշխանն կայսերական պատերազմող մեծ քաջութեամբ ազատեց Վասիլ կայսրն մահուանէ պատերազմի մէջ ։ Ասով ոչ միայն ինքն եղաւ մեծապատիւ սիրելի, այլ և որդին Ռոմանոս մեծամեծ քաջագործութ̃ք շատ անուանի, մինչև եղաւ աներ Կոստանդին Պերփերուժէն կայսեր ․ նաև յետոյ գահակից ալ ըլլալով կոչեցաւ թագաւորահայր ․ և վերջը նստաւ կայսր յամի 919 ։ Ոչ միայն քաջութ̃ք և խաղաղասիրութեամբ առաքինացաւ, այլ և աղքատասիրութեամբ և մարդասիրութեամբ ․ ամէն օր իրեք աղքատ իրեն սեղանակից էին ․ հինգշաբթի և շաբաթ օրերը իրեք կրօնաւոր ալ սեղանը կ'առնէր , ու սեղանին վրայ հոգեշահ գրեանք կարդալ կուտար · նաև անպակաս ապաշխարութե̃ և արտասուօք կ'անցընէր օրը ։ Ռոմանոս հայկազն հոգեսէր բարեպաշտութեամբ Եդեսիայէն բերել տուաւ զանձեռագործ սուրբ դաստառակն ու թուղթն Քրիստոսի գրեալ առ Աբգար թագաւոր , զոր և ընկալաւ 'ի Պօլիս մեծահանդէս փառօք յամի 944 ։ Իսկ ինքն առաքինութեամբ վախճանեցաւ վանքի մէջ 'ի 948 ։

Ռոմանոս անուամբ երեք կայսերք ալ յաջորդեցին յետոյ 'ի Պօլիս , բայց չեղան անուանի ոչ քաջագործութեամբ և ոչ բարեպաշտութեամբ ։

ՌՈՒԲԷՆ Ա. մեծ և առաջին իշխան Հայոց , ազգական Գագիկ արքային , քաջութեամբ զօրացեալ եղաւ իշխանապետ և հիմնադիր Նոր թագաւորութեան Հայոց 'ի Կիլիկիա ։ Վասն զի յամի 1080 զօրանալով տիրեց այն կողմանց , ու ամրացաւ Տորոսի անառիկ լեռներուն մէջ · ուսկից փախցընելով Յոյները ինքնիշխան տիրապետեց բոլոր լեռնակողմանց արիապէս ։ Մինչև ապա ամէն կողմանց Հայոց քաջերը և վարդապետներն ընդ վանականաց ժողովեցան Ռուբէնին քով , որ խոհեմութեամբ գեղեցիկ բարեկարգելով զօրացուց ազգը և ծաղկեցուց վանքերը ։ Այս զարմանալի քաջագործութեամբ սկսաւ հետզհետէ ընդարձակել իւր տէրութիւնը ինչպէս ինքնակալ թագաւոր յաղթական և գլուխ ազգին · այս պատճառաւ տէրութիւնն ալ իր անուամբն կոչուեցաւ Ռուբինեանց , որ տևեց 295 տարի ։ Եւ ունեցաւ ութ իշխանապետ տասնըվեց թագաւոր մինչև ցվերջին արքայ Լևոն Զ. Տ. 'ի կարգին ։ Իսկ մեծն Ռուբէն Ա. աստուածպաշտութեամբ կատարեց ցանկալի կեանքը յամի 1095 իբր եօթանասուն տարեան՝ յետ տիրելոյ թագաւորապէս տասնըհինգ տարի, և թաղեցաւ փոքր Կաստաղոնի վանքը ։ Որուն յաջորդեց որդին լայնախորհուրդ քաջն Կոստանդին Ա. ։

ՌՈՒԲԷՆ Բ. էր եղբայր Լևոնի Բ. առջի թագաւորին, որ Մլեհէն ետև՝ նախագահ իշխան նստուցին ազգին վրա, և շուտով զօրացաւ Յունաց դէմ ու յաջողութեամբ տիրեց Տարսոնին ։ Այս յաջողութիւնը անհաճոյ եղաւ անոնց որ Յունաց կողմանէ իշխան էին այն տեղերուն, մանաւանդ Լամբրոն բերդին իշխանին, որ Անտիոքայ լատին կոմսին ձեռքովը խաբէութեամբ բռնեց Ռուբէնը ։ Իսկ Լևոն անոր եղբայրը գնաց քաջութեամբ ազատեց անոնց ձեռքէն ու նստեցուց իւր աթոռը 'ի 1183 ։ Բայց Ռուբէն երկու տարիէն ետև յանձնեց իշխանութիւնը նոյն Լևոն եղբօրն ու գնաց կրօնաւոր եղաւ Դրազարկու վանքը տասնըմէկ տարի իշխանութիւն ընելէն ետև, և քիչ ատենէն մեռաւ, և հոն թաղեցաւ ։

ՌՈՒԲԷՆ Գ. Պալտինեան յամի 1207 յաջորդեց իշխանութեան Պէմունդին ու նստաւ յԱնտիոք, որ գրեց նամակ 'ի 1209 առ սրբազան պապն Իննովկենտիոս Գ. ։ Իսկ կայսրն Գերմանացւոց Օթոն Դ. ղրկեց թագ առ Լևոն արքայն Հայոց, որ զՌուբէն պսակէ թագաւոր և ընդ իրեն երկրորդը ։ Ապա Լևոն

Բ. մեռանելէն ետեւ Զապէլ թագաւորեց, և Ռուբէն մնաց փոխարքայ ու մեռաւ յամի 1220 ։

Քաջ հայրենասէրք պերճ հանգստացան
Սահուչափ ձրգամբք վեհապանծ գրտան ․
Կանգնեալ զպետութիւնս թողլին յիշատակ
Կապեցին 'ի գլուխ պարծանաց ըզթագ ։
Զքնաղ վեհացաւ Ռուբէն քաջ արանց
Փառք Կիլիկեցւոց պարծանք Հայկազանց ,
Ըզնախնին կանգնեալ զտէրութիւն ազգին
Յիշատակ փառաց և 'ի շուք անձին ։

ՌՈՒՍՕ Յակոբ էր անհաւատ աշխարհական և գիտնական Ժընեւրայի, որ միաբանելով անկրօնից հետ՝ անաստուած Վոլթերին չար սկզբանցն հետեւեցան ։ Մինչեւ ջանացան որ ուսումնական գրուածներով և դիւահնար սուտ պատճառներով վերցընեն փոք կրօնն ու եկեղեցին և հաստատեն անաստուածութիւն յայտնի ուրանալով զճշմարտութիւն Աւետարանին, և պատմութիւն աստուածային սքանչելագործութեանց ։ Որոնք յանցեալ դարու այսպիսի ապականեալ չար մտօք շատ անմեղներ անաստուածութեան փոսը ձգեցին կորուսին, ու իրենք ալ թշուառութեամբ կորան ։ Նոյնպէս գրածներն ալ իրենց հետ դատապարտեալ հերքեցան ․ թէպէտ և ոճին կողմանէ կը գովուին Ռուսոյի քանի մը գրուածները ։ Ինքը մեռաւ 1778ին ։

ՌՕԶԷԼԼԻ Կոզմաս՝ էր մեծանուն վարդապետ Դոմինիկեան Իտալացի ծնեալ 'ի 1540 ։ Սա խոհական հանճարով հնարք գտաւ անլեզու բնական համերց համար․ որպէս զի կարենան կենակցիլ ընկերութեամբ իրարու հետ նշաններով, կամ միայն շարժմամբ մատանցն մէկ մէկու հասկցնել իրենց մտքին խորհուրդը առանց խօսակցութեան։ Ասով մեծապէս յարգեցաւ այս վարդապետը․ գրեց նաև բացայայտ հանճարով գիրք մը վասն օգնելու մարդկային յիշողութեան և անկորուստ պահելու սորվածը յիշողութեան մէջ, այլովքն հանդերձ։ Այս պիտուական գիրքն հիմա սակաւագիւտ է և ամենուն ցանկալի։

ՌՕԼԷՆ Կարոլոս էր Գաղղիացի բանիբուն հեղինակ պիտանի գրեանց․ և եղաւ արքունի դպրոցին մէջ վարժապետ բանասիրական ուսմանց և հմտութեանց։ Յետոյ եղաւ վերակացու Ճեմարանաց, և լաւ բարեկարգութեամբ ծաղկեցուց դպրոցներն ու վարժարանները։ Որչափ բարձրացաւ ուսումնականութեամբ, այնչափ խոնարհեցաւ անկեղծ բարեմտութբ՝ միշտ յիշելով իր ցեղին նուաստութիւնը․ մինչև անուանեցաւ, "Արդարև այր Իսրայէլացի, յորում նենգութիւն ոչ գոյ"։ Զօրաւոր և քաջ էր գրով քան խօսքով, և ախորժելի էր իրեն կարդալ քան խօսակցութեանց մէջ մտնել։ Շատ պիտուական և բազմահատոր գրեանք շարադրեց, որ տպագրեցան շատ անգամ և թարգմանեցան ուրիշ լեզուներ ալ, ինչպէս իր բազմահատոր Հռոմէական պատմութիւնը և Հնախօսութիւնը թարգմանեցաւ հայերէն և տպագրեցաւ մեր վանքը։ Այս գրուածները լեցուն են բարոյական խրատներով և օգտակար տեղեկութեամբ։ Սակայն նախնի Հռոմայեցւոց պատմութիւնը չի լմնցուցած հասաւ մահը մեռաւ 'ի 1741, զոր լրացուց Կուէվիէ իր աշկերտը :

ՌՕԼՕՆ էր առաջին դուքս Գաղղիոյ Նորմանտիա գաւառին, և առաջնորդ Նորմանտացւոց՝ որ 'ի Թ և Ժ. դարուն կոխեցին ու կողոպտեցին Գաղղիա : Իսկ Կարոլոս արքայն Գաղղիոյ չկարնալով դէմ դնել Թշնամեացը խոստացաւ տալ անոնց գաւառին մէկ մասը, նաև իւր դուստրն ալ տալ Ռօլոնին՝ բայց այսու պայմամբ՝ որ դառնայ 'ի քրիստոնէական հաւատքն ու հարկատու ըլլայ իրեն : Ռօլոն յանձն առաւ ու մկրտեցաւ և անուանեցաւ կնքահօրն անուամբ Ռոբերդ՝ որ էր Գաղղիայի իշխան . իսկ երկիրը անոնց անուամբ կոչեցաւ Նորմանտիա մինչև ցայժմ : Նորապսակ դուքսն Նորմանտիոյ եղաւ բարեպաշտ և արդար ամէն գործքին մէջ, նաև յաղթող և քաջ պատերազմող, առաքինի և աջողաձեռն . նաև զամէնքը շահելով սիրելի եղաւ, ու ինչ օրէնք որ կը հաստատէր, սիրով կը կատարէին, հնազանդելով ամէն հրամանացը : Իսկ նա յամի 927 ծերութեան ատեն հրաժարելով տէրութենէն յանձնեց իր որդւոյն Գուլիէլմոսին . ապա հինգ տարիէն ետև վախճանեցաւ խաղաղութեամբ :

ՌՕՄԱՆՑՈՎ էր մեծազօր սպարապետ Ռուսաց Կատարինեայ Բ. Թագուհւոյն ատեն, որ ելաւ Ղրիմու վրան, ու Թաթարներն քշեց . բայց երբոր աւելի ներս մտաւ, պաշարուեցաւ Խանին հարիւր յիսուն հազար զօրքէն : Իսկ քաջ զօրավարը առանց յուսահատելու սաստիկ պատերազմելով տասնըութ հազար զօրքով խորտակեց Թաթարաց զօրութիւնը, և անթիւ բազմութ՟ի ջարդելով փախստական ըրաւ Իւանը և զօրքը ։ Թագուհին լսելով այս յաղթութիւնը մէկէն քարէ արձան կանգնեց անոր 'ի յիշատակ քաջագործութ՟են ։ Յետոյ նորէն պատերազմ բացին, բայց Ռօմանցով միշտ յաղթող եղաւ անոնց վրայ ։ Ետքի անգամին երբոր կոտրեց հաղորդակցութ՟իը Օսմանցոց մեծ բանակին և Սերասկեր Փաշային՝ խոնարհեցուց զանոնք Ռուսաց կամքը կատարելու, որ էր անկախութիւն Ղրիմու Օսմանցոցմէ, և ազատ նաւարկութիւն Ռուսաց Սև ծովուն մէջ. նաև բոլորովին տիրելու Ազախու երկրին ։ Ապա երախտագէտ Թագուհին հրաւիրեց Ռօմանցովին որ երթայ Մոսքա մայրաքաղաքը կատարէ մեծ փառօք յաղթութեան հանդէսը ։ Իսկ նա գնաց հոն հասարակ զինուորի մը պէս, որ եղած պատերազմին համարը տայ ։ Սակայն Թագուհին մեծամեծ պարգևներով և պատուով ձոխացուց զնա շնորհելով իրեն շատ երկիրներ և հազարաւոր բնակիչներ վասն ծառայութ՟ե ։ Անկէ ետև հրաժարեալ առանձնացաւ Ռօմանցով իր երկիրը և խաղաղութեամբ մեռաւ ութսուն տարւան 'ի 1790ին, որ սիրելի եղաւ իր ազգին, և գովելի Եւրոպացւոց ։

ՌՕՎԻՆ Յովհաննէս էր համբաւեալ ծեր երկարակեաց Մաճառ ազգէ, աղքատ և առողջ մարմնով 'ի ԺԸ. դարուն ։ Կը պատմեն թէ սա քսանըհինգ տարւան հասակին կարգուեր է գիւղական աղջկան մը հետ, որոնց վարքը պարզ, ժուժկալ, և կերակուրնին միշտ մորացորեն էր ։ Ռօվին այսպիսի չափաւոր աղքատութեամբ ապրեցաւ մինչև հարիւրեօթայիսունուերկու տարի , և կինն Սառա հարիւր վաթսունըչորս տարի : Ասոնք երկու ամուսին մեռան ճամբորդութեան մէջ երբոր կ'երթային Կարոլոսի Զ.՝ Նեմցէի կայսեր քով, որ զանոնք կանչեր էր տեսնելու համար :

Երկարաձիգ կեանք հանուրց տենչալի ,
Այլ թէ ապարդիւն՝ նման է ստուերի .
Մտանէ մարդ յաշխարհ մերկ և լալագին
Ելանէ թշուառ ողբալից կրկին :
Յոլովք կարճօրեայ կենօք ճոխացան
Աննահանջ ճգամբք շքեղ փայլեցան .
Ո ի կեանք ճշմարիտ կեանք առաքինեաց
Ծաղկեալ արգասեօք բուրաստան շնորհաց :

* * *

Ս.

ՍԱԲԱ աբբայն էր Կապադովկացի՝ ծաղկեալ առաքինութեամբ 'ի Ե. կամ Զ. դարուն, որ շրջեցաւ Երուսաղեմայ վանքերը աշակերտելով սուրբ Եւթիմէոսի և Թէոկտիստոսի միանձանց, և եղաւ անոնց նման դերազանց ճգնողական վարքով և սրբութեամբ ։ Շինեց եօթը վանքեր և ծաղկեցուց սրբակաց աշակերտներով և հրաշագործութեամբ ։ Մեծապէս ջանաց շտկել հերձուածողներուն միտքը հաստատելով Քաղկեդոնի սուրբ ժողովքը, և խրատելով խռովարար անզգամները. շատն ալ իր բարի վարքով դարձուց չարութենէ ։ Երուսաղեմի պատրիարգները երբեմն կը ղրկէին երանելին առ կայսերս Յունաց որ միջնորդ ըլլայ խաղաղութեան. և անգամ մը Յուստինիանոս կայսրը տեսաւ սուրբ Սաբային գլխուն վրա լուսեղէն պսակ ։ Այսպիսի առաքինի վարքով և սրբութ՟բ փոխեցաւ առ Աստուած իննուսուն ու երկու տարուան Պաղեստինու վանքին մէջ յամի 531. և եղաւ տօնելի ։

Խրթան են ազդու վարք առաքինեաց,
Օրինակ բարի ողոքիչ մըտաց.
Որոց լըծակցեալ բարեգործութեան
Բանան զերկնից դրունս առաջի մարդկան ։

Իսկ եթէ աննըման են գործք ընդ բանին
Մին ձայնք իբրեւ ծուխ ընդ օդըս ցնդին .
Այլ Սաբայի գործք և բանք շնորհալից
Հանին զբիւրաւորս 'ի խորան երկնից ։

ՍԱԲԷԼ Լիբեացի էր չարամիտ աղանդապետ Գ. դարուն, որ ուրացաւ զԵրրորդութ՟ի աստուածային անձանց դնելով մի միայն անձն ։ Այլ և հայհոյելով կը քարոզեր լրբութեամբ թէ նոյն անձն վասն արարչագործութե՟՝ կոչի Հայր, վասն փրկագործութեան՝ կոչի Որդի, և վասն շնորհաբաշխութե՟ կոչի Հոգի, և այլն ։ Սաբելեանք կոչեցան ասոր հետեւողները, որոնք կը սորվեցընէին թէ՝ Հայր է որպես արեւ, Որդին լոյս և Հոգին ջերմութ՟ի ։ Այս աւետարանն կ'ըսէին ծագեցաւ Բանն ինչպես ճառագայթ աստուածային և միացաւ Յիսուսի հետ վասն փրկագործութեան . իսկ ջերմութ՟ի Հօր հաղորդեցաւ Առաքելոց անուամբ Հոգւոյն սրբոյ, և այլն ։ Որոնք դատապարտեցան Սաբելլին հետ 'ի սուրբ Հարց ժողովքով, և ինչպես յամի 263 առ Աղեքսանդրիոյ ժողովքին մէջ Հայրաչարչար հերետիկոսաց հետ նզովեցան ։

ՍԱԲԻՆԻԱՆՈՍ մեծահամբաւ իմաստուն նուիրակն սուրբ Գրիգորի Մեծին առ Մօրիկ կայսրն՝ օծուեցաւ մեծ քահանայապետ Հռոմայ յամի 604, և շուտով սկսաւ բարեկարգել զեկեղեցին Աստուծոյ կանոնադրելով կղերիկոսաց ամէն հարկաւոր օրէնքներն ու սահմանները ։ Նաև պատուիրեց որ զանգակներու ձայնով նշան տան երթալու յեկեղեցին ու կատարելու ժամերգութիւնը և հասարակաց աղօթից կարգը 'ի շնորհակալութ՟ի ամենակալին Աստուծոյ ։ Սակայն մեծիմաստ հայրապետին մահը շուտով վրա հասաւ ու անկատար թողուց ամէն մեծաշահ խորհուրդներն ու գործքերը ։ Իսկ ինքն հոգւոյն փրկութեանը հետևելով ամէն բանէն առաջ մահուան պատրաստութիւնը տեսաւ ամենայն ջերմեռանդութեամբ, և կնքեց սրբութ՟ք առաքինի կեանքը յամի 604 ։

ՍԱԴՈՎԿ կամ ՇԱՀԴՈՒՍՏ էր եպիսկոպոս Տիզբոնի, որ երա՛զին մէջ տեսաւ զսուրբ Շմաւոն եպիսկոպոսն՝ որ նահատակեր էր Շապու՛հին հալածանաց մէջ, իբրև նստած սա՛նդուղքին գլուխն ու կը կանչէր զինքն որ վեր ելլէ քովն երթայ ։ Այս տեսիլքով անանկ զօրացաւ, որ յօժարութեամբ անձնատուր եղաւ կռապաշտներուն, և քաջութեամբ ելաւ թագաւորին ատեանն ու համարձակ դաւանեց զՔրիստոսի հաւատքը ․ ուստի մեծ նեղութ՟ք բանտը փակեցին սուրբն երկար ժամանակ ։ Սուրբին հետևելով հարիւր քսանըութ ոգիք ալ այր և կին, բանտակից եղան երանելւոյն, ուր մնացին ամէնքը հինգ տարի և եօթն ամիս սովով և տանջանքով, մինչև նահատակեցան սրով ։ Իսկ սուրբն Սադովկ ծանր կապանքով աքսորեցաւ 'ի Խուժաստան և գլխատեցաւ 'ի Բեթլապատ վասն Քրիստոսի յամի 342 ։

ՍԱԴՈՎԿ կամ ՍԱԴՈՒԿ արդար Թարգմանի․ և էր երևելի Ռաբբի Հրէից, որ գլուխ եղաւ Սադուկեցւոց աղանդին՝ Քրիստոսէն երկու դար առաջ ։ Սա աշակերտելով Անտիգոնոսի փիլիսոփային մոլորեցաւ, ու անոր աղանդը կը սորվեցընէր ըսելով, թէ բարեգործութիւն ընելու է միայն լաւութեան համար և ոչ վասն վարձուց. զի չկայ հատուցումն ոչ բարեգործութեան և ոչ պատիժ չարագործութեան մեռնելէն ետև 'ի հանդերձեալն ։ Այս չար աղանդին շուտով հետևեցան շատ աշխարհասէր Հրեայք ու անուանեցան Սադուկեցիք. որոնց համար կ'ըսէ սուրբն Եփրեմ. “Կոչին սաքա Սադուկեցիք, այս ինքն արդարք. ոչ՝ ասեն, վարձուք մեք պաշտեմք զԱստուած (յուսով յարութեան)„ ։ Սակայն զուրկ էին արդարութենէ և առաքինութենէ. ամէն բան 'ի ցոյց մարդոյ կ'ընէին, ոչ յարութեան կը հաւատային և ոչ գոյութեան հրեշտակաց ։ Անոր համար յանդիմանեց զանոնք Փրկիչն ասելով. “Մոլորեալք՝ ոչ գիտէք զգիրս և ոչ զզօրութիւն Աստուծոյ„ ։ Որոգինէս կը պատմէ թէ Սադուկեցիք շատ հետևելով Սամարացւոց մոլորութեանցը իրենց աղանդը անոնց կը յարմարցընէին հանդերձ աւելորդապաշտութբ̃ ։

ՍԱՀԱԿ Ա. Պարթև սուրբ հայրապետն՝ էր Լուսաւորչայ թոռներէն, որդի Մեծին Ներսեսի, որ կրթուեցաւ հօրը քով, և 'ի Կոստանդինուպօլիս աստուածային իմաստութբ̃ և սրբութեամբ. մինչև արժանի եղաւ երկնաւոր տեսլեան, իմանալով հրեշտակէն Հայաստանու ապագայ վիճակն և խորհուրդ կատարածի ընդհանուր աշխարհի, այլովքն հանդերձ ։ Ուստի մխիթարելով հոգևորապէս անկէ ետև անդադար կը պարապէր ընթերցմամբ և մտաւոր աղօթքներով ։ Ապա ձեռնադրեցաւ սարկաւագ և քահանայ. և ժողվելով վաթսուն աշակերտ կը կրթէր ուսմամբ և առաքինութեամբ ։ Որոնք հետը կը շրջէին քարոզելով և լուսաւորելով ազգը, և բարեկարգելով եկեղեցիները ։ Յետոյ ընտրեցաւ սուրբ Սահակ արժանաւոր կաթուղիկոս յաթոռ սուրբ Լուսաւորչին և ուրախացուց բոլոր ազգը իբրև երկրորդ Լուսաւորիչ սքանչելի առաքինութեամբ և ազգասիրութեամբ ։ Սան զի գործակցութեամբ սրբոյն Մեսրոպայ հնարեցին հայերէն գրերը, և թարգմանեցին բոլոր Աստուածաշունչն ու սրբոց Հարց հոգելից գրեանքը և այլն ։ Դարձեալ վայելչապէս կարգաւորեց եկեղեցական պաշտօնները և կանոնները ժամերգութեանց, սուրբ պատարագին, և սուրբ խորհրդոց երգերով և աղօթքներով ։ Մեծ ջանք ունէր ազգին օգտին վրայ ալ, որուն համար երկու անգամ գնաց դուռը Պարսից արքային ։ Վերջապէս երբոր տիրատեաց նախարարներուն չար կամացը դէմ կեցաւ Թագաւորը չփլեցընելու համար, ձգեցին զինքը աթոռէն Պարսից արքային ձեռամբ և բանտարկեցաւ 'ի Պարսկաստան մեծ վշտակրութեամբ ։ Ապա դարձաւ 'ի Հայաստան, ու միշտ աշխատասիրելով կը լուսաւորէր ազգը թարգմանութեամբ և աստուածիմաստ քարոզութ̃ մինչև 'ի խոր ծերութիւն՝ 'ի շահ ժողովրդեան և 'ի լուսաւորութիւն մանկանց Սիոնի առաքինափայլ վարքով ։ Նա այսպիսի աստուածահաճոյ քաղաքավարութեամբ և հրաշագործ սրբութեամբ կատարեց սուրբ Սահակ պանծալի կեանքը ութսուն տարուան կամ աւելի և փոխեցաւ երկինքը յամի 440 ։ Իսկ սուրբ մարմինը մեծահանդէս փառօք հանգուցին յԱշտիշատ իւր երկիրն . ու գերեզմանին վրայ կանգնեցին պայծառ եկեղեցի, քովն ալ վանք վայելուչ 'ի պատիւ սուրբ հայրապետին, որ յիսունըմէկ տարի արդիւնաւոր կաթուղիկոսութիւն ըրաւ. և մէկէն հաստատեցին տօնախմբութիւնն արժանափայլ։ Տ. Թարգմանիչք։

Ռաբուն վեհափառ արփի լուսապանծ
 Երկրորդ լուսածագ ազգի հայկազանց.
 Սուրբ Լուսաւորչայ օրհնութեան զաւակ
 Աղբիւր գիտութեանց պայծառ արուսեակ։
Պերճ աստուածիմաստ թարգման հոգելից
 Աստուածաշունչ գրոց սրբոց մատենից.
 Վառեալ ըղձմանկտին 'ի սէր գիտութեան
 Վարժեաց ձեռնասունս քաջ աստուածաբան։

ՍԱՀԱԿ անուամբ չորս կաթուղիկոսք յաջորդեցին սրբոյն Սահակայ, որոնց մէջ երևելի եղաւ Գ. Սահակ, որ նստաւ կաթուղիկոս յամի 677, որ և էր սրբակաց, գիտնական և առաքինի։ Ասոր օրը Հագարացիք տիրած էին Հայաստանու. ուր Աբդըլլայ ոստիկանը շատ զրկողութեամբ չարութիւններ ըրաւ։ Բռնեց Սահակ կաթուղիկոսն ու Սմբատ Բիւրատեան սպարապետը կապանքով ղրկեց Ամիրապետին 'ի Դամասկոս։ Բայց Սմբատ փախաւ 'ի Հայաստան, և օգնութ̃ կայսեր հալածեց Հայաստանէն Հագարացիները։ Ուստի գնաց Հայոց վրան Մահմատ սպարապետը մեծ պատրաստութեամբ. երբոր իմացաւ Սահակ կաթուղիկոս 'ի Դամասկոս, հրաման առաւ երթալու Մահմատին քով. բայց հասնելով 'ի Խառան հիւընդցաւ ու մեռաւ հոն յամի 702։ Սակայն մեռնելէն առաջ գրեց անոր թուղթ պաղատանաց, որպէս զի ողորմի Հայոց. և հրամայեց սարկաւագներուն որ մեռնելէն ետև գիրը դնեն աջ ձեռքին մէջ ։ Ահմատ երբոր լսեց սուրբին մահը, գնաց մօտեցաւ մեռելին, և բարև տալով ասաց. “ Սէլամ ալէյք ” ։ Ն ատենը մեռելն իբրև կենդանի բարեն առնելով երկնցուց իրեն թուղթը ։ Իսկ նա սարսափելով կարդաց գիրն ու խոստացաւ խնդիրքը կատարելու. և գրեց Հայոց նախարարներուն հրովարտակ բարերարութեան, և հրամայեց որ տանին փառաւորապէս թաղեն երանելոյն մարմինն. վերջը հաշտեցուց Ամիրապետը քրիստոնէից հետ ազատելով ամէն գերի ընկած Հայերը ։ Սա քսանըվեց տարի կաթողիկոսութիւն ըրաւ, և յօրինեց գեղեցիկ Ճառ ծաղկազարդին, նաև հոգելից շարականներ Խաչին և Եկեղեցւոյ ։ Գրիգոր Անաւարզեցին կը գրէ, թէ սորա աջը տեսեր է անապական ՚ի Հռոմկլայ ։

ՍԱՀԱԿ Բագրատունի էր փառաւոր ասպետ և ազգասէր իշխան, որ ՚ի 481 ընտրեցին մարզպան Հայոց՝ երբոր Վահան Մամիկոնեան սպարապետ եղած Պարսից դէմ արիապէս կը կռուէր ։ Սահակ ալ մտաւ ՚ի պատերազմ Վահանին հետ մէկտեղ քրիստոնէական հաւատքը պահելու համար կրակապաշտից դէմ, շատ անգամ յաղթեցին ։ Յետոյ Միհրանին դէմ պատերազմած ատենը Սահակ մեծ քաջութ՟բ վազեց թշնամեաց վրան, և հոն նահատակեցաւ վասն հաւատոյ իշխանութեանը երկրորդ տարին ։ Սա խնդրեց Մովսէս Խորենացիէն Հայոց ազգին պատմութիւնը, որ զարմանալի հմտութեամբ և գիտնական հնախօսութեամբ գրեց վայելչապէս ծերութեան ատենը. և այս պատուական գրքին սկիզբն կը գովէ Սահակայ առաքինի ուսումնասիրութիւնն ու բարեսէր խոհականութիւնը ։

ՍԱՀԱԿ աբեղայ էր հայազգի կրօնաւոր շնորհազարդ Դ. դարուն, որ աղանդաւոր Վաղէս կայսեր հալածման ատենը սրբութեամբ կը ձգնէր Բիւզանդիոյ վանքին մէջ ։ Կայսրը երբ պատերազմ կ'երթար Գոթաց դէմ՝ Սահակ ելաւ առջևն ու կանչեց. "Արքայ, բա՛ց ուղղափառներուն եկեղեցիները. թէ չէ՝ պատերազմէդ ողջ չես դառնար" ։ Իսկ Արիոսեան անօրէն կայսրն ծեծել տուաւ զսուրբն ու ձգեց փշերուն մէջ. երանելին ազատեցաւ անկէց հրեշտակին ձեռքով, և վազելով կայսեր ետևէն հասաւ ու երիվարին սանձէն բռնեց՝ պոռաց. "Ո՛վ թագաւոր՝ լո՛ւր ինձ, և բա՛ց զեկեղեցիս ուղղափառաց" ։ Իսկ բռնաւորը հրամայեց երկու իշխանաց, որ տանին սուրբը տղմային բանտը փակեն մինչև որ ինքն դառնայ ու դատապարտէ ։ Նորէն աղաղակեց սուրբն Սահակ. "Եթէ դու ողջանդամ դարձցիս, ապա Տէառն չէ խօսեալ ընդ իս, զի վանեալ այրեսցիս հրով" ։ Այս մարգարէութիւնը լման կատարեցաւ. վասն զի Վաղէս յաղթուելով փախաւ ընկաւ խոտնոցի մը մէջ, ուր թշնամիներն այրեցին զինքը չարաչար ։ Ապա մեծն Թէոդոս թագաւորեց ու բացաւ սուրբ եկեղեցիներն ազատելով ամէն բանտարկեալները և աքսորեալները հաւատքի համար ։ Իսկ այն երկու իշխանք որ բանտը դրին սուրբն ու կը պահէին՝ տեսնելով անոր հրաշքները դարձան ուղղափառ եղան և կը ծառայէին անոր խցին մէջ. ուր կատարեցաւ երանելին առաքինութեամբ և սրբութեամբ ։

ՍԱՄԱՐԱՑԻՔ կամ ՇԱՄՐՏԱՑԻՔ էին մնացորդք Իսրայէլի 10 ցեղին, Յուդայի և Բենիամենի ցեղէն բաժնուած թէ իշխանութեամբ և թէ հաւատքով։ Վասն զի Սաղմանասար տիրելով Սամարիայի բնակիչներուն մէկ մասը քշեց յԱսորեստան, ու անոնց տեղը ղրկեց կռապաշտ գաղթական, որ գնացին Հրէից քահանաներ ու կը սորվեցընէին անոնց աստուածային օրէնքը. բայց նոքա իրենց կռապաշտութիւնն ալ պահելով եղան աւելորդապաշտ։ Ժամանակէն ետև երբոր Զօրաբաբէլ կը շինէր երկրորդ տաճարը ասոնք ալ ուզեցին միաբան շինել. բայց Զօրաբաբէլ չուզեց որ ժողովուրդը չաւրուի. ասկէց մտաւ մէջերնին մեծ թշնամութիւն, մինչև խափանել տուին տաճարին շինութիւնը։ Իսկ մեծն Աղեքսանդրի ժամանակը թողին կռապաշտութիւնն ու անոր հրամանով տաճար մը շինեցին Գարիզին լեռանը վրան նման Երուսաղեմի տաճարին, և ասով չար հերձուած մտուցին. վասն զի միայն գրաւոր օրէնքը կը կատարէին ոչինչ համարելով աւանդութիւններն ու ծէսերը։ Այս տաճարը երկուհարիւր տարիէն ետև այրեց Յովհաննէս Հիւրկանոս Շմաւոնի որդին. բայց նոքա նոյն լեռանը վրան առանց տաճարի կը մատուցանեն իրենց զոհը մինչև հիմա։ Ասոնք անպակաս են 'ի Դամասկոս, 'ի Սիւքեմ, և այլն. նաև ունին հոն քահանայապետ, և լաւ կը պաշտեն Մովսեսի հինգ գիրքը նման Իսրայիտաց, և այլն։ Ուստի Հրէայք կ'անարգէին զանոնք, նա և թշնամանելով Սամարացի ըսին Տեառն մերոյ, որ երբ ջուր ուզեց Սամարացի կնոջմէն, ասաց կինը զարմանալով. "Զիա՞րդ յինէն ըմպել խընդրես . . . զի ոչ երբէք խառնակին Հրէայք ընդ Սամարացիս ,, ։ Իսկ Փրկիչը քարոզելով լուսաւորեց կինը . և նա քարոզելով Ճշմարիտ Մեսիային հաւատքի բերաւ քաղաքին ժողովուրդը , ինչպէս կը պատմէ սուրբ Աւետարանը ։ Ապա Հոգեգալստէն ետև ամէնքն ալ մկրտեցան Փիլիպպոսէն . և յետոյ դրոշմուելով Պետրոս և Յովհաննէս առաքեալներէն առին Հոգին սուրբ ։

ՍԱՄՈՒԷԼ՝ էր փառաւոր մարգարէ սիրելի Աստուծոյ նման Մովսեսի , Ղևեայ ցեղէն , հրաշքով ծնեալ յամուլ Աննայէ , ուխտեալ և նուիրեալ 'ի տաճարն Աստուծոյ ։ Ընտրեցաւ փոխան Հեղի քահանայապետին առաջնորդ և կառավարիչ տանն Իսրայելի , որոնք կառավարեց յԱստուծոյ կողմանէ արդարութեամբ , զօրութբ̃ և հրաշքներով , մինչև որ օծեց թագաւոր Սաւուղը և Դաւիթը բանիւ Տեառն ։ Աւանդութիւն է թէ՝ ինքն գրեց Հոգւով սրբով Աստուածաշունչին Դատաւորաց , Հռութայ , և ա̃ Թագաւորութեանց գրքերը ։ Աստուածահաճոյ սրբութեամբ մեռաւ Սամուէլ իննուսունըութ տարւան , 1057 տարի Յիսուսէն առաջ ։

Սամուէլ ընտրեալ ձայնիւ տիրական
Հըզօր յանձանձիչ ազգին յակոբեան ,
Հայր և ինքնակալ գուշակ հրաշալի
Դատող անաչառ և իրաւացի ։
Այր աստուածաշնորհ պարծանք աշխարհի
Ընդ հէգ Սաւուղայ եղաւ 'ի կշռի .
Թէպէտ և եթող նա զիշխանականն
Այլ ոչ մերկացաւ ըզգութ հայրական ։

ՍԱՄՈՒԷԼ երէց Անեցի էր բանիբուն ժամանակագիր և գրասէր քահանայ, որ հրամանաւ Գրիգոր կաթուղիկոսին կամ Շնորհալւոյն եղբօրը՝ գրեց զժամանակագրութիւն հանդերձ մասնաւոր պատմութեամբ նախնեաց և հնախօսութեամբ նշանակելով աղիւսակներով: Այս ժամանակագրութիւնը թարգմանեցաւ լատին լեզուով և տպուեցաւ 'ի 1820:

ՍԱՄՓՍՈՆ էր դատաւոր Հրէից, որդի Մանուէայ, Դանայ ցեղէն, այր փառաւոր և հզօր, հրաշքով ծնած: Վասն զի մայրը ամուլ էր. որուն երևցաւ հրեշտակ Տեառն ու աւետիս տուաւ վասն ծննդեան Սամփսոնի հրաժարեցնելով զմայրն ու որդին արբեցընող խմելիքներէն և անսուրբ կերակուրներէն և չի կտրել գլխուն մազերը. որպէս զի մանուկն ըլլայ ուխտաւոր Աստուծոյ. և Աստուած անոր ձեռքով ազատէ Իսրայէլացիները Փղշտացւոց չար ծառայութենէն: Տղան երբոր ծնաւ՝ անուանեցին Սամփսոն, այս ինքն արեգակն, և եղաւ շատ զօրաւոր և հանճարեղ, զոր օրհնեց Աստուած տալով իրեն գերմարդկային ուժ մը: Երբոր եղաւ տասնըեօթն տարուան՝ կարգուեցաւ այլազգի աղջկան հետ. Ճամբան երթալու ատեն բռնեց սոսկալի առիւծ մը սպաննեց ճեղքելով բերանը: Դառնալու ատեն տեսաւ որ մեղուները առիւծին բերնին մէջ մեղր շիներ էին. որուն վրայ առակով հարցմունք ըրաւ այսպէս. "Ի կերչէ ել կերակուր, և 'ի հզօրէ ել քաղցր": Զոր այլազգիները չկարցան մեկնելու, անոր համար պիտի տային իրեն երեսուն զգեստ, բայց կնկանը ձեռքովը իմացան բանը: Անոր համար նեղանալով Սամփսոն սատակեց շատ այլազգիներ ու այրեց անոնց ագարակներն ։ Անոնք ալ միշտ կը ջանային զինքն սպաննելու յանկարծ վրան վազելով ․ իսկ նա օր մը իշու ծնօտովը հազար այլազգի սպաննեց և շատն ալ հալածական փախուց Աստուծոյ զօրութեամբն ։ Յետոյ ջանացին իմանալ անոր ուժին պատճառը Դալիլայ կնկան մը ձեռքով ․ երբոր կինը իմացաւ անկէց խորամանկ խաբէութեամբ անոյշ խօսքերով, ու գերծեց գլխուն մազերը, մատնեց զինքն այլազգեաց ։ Ան ատենը հեռացաւ իրմէն աստուածային զօրութիւնը, և ընկաւ չարաչար թշնամեաց ձեռքը ։ Անոնք Սամփսոնին աչքերը հանեցին և երկըթէ կապանքով ձգեցին բանտը, ուր աճելով գլխուն մազերը և սրտին եռանդն ու զօրութիւնն, երբոր Դագոն կուռքին տօնախըմբութեան տարին զինքն ու հետը կը խաղային ծաղրելով, նա սրտանց աղաղակեց առ Տէր ․ “ Օ օրացո՛ զիս և զայս մի նուագ Աստուած „ ։ Հոն երկու սիւն կար որոնց վրայ շինուածքը կեցած էր, Սամփսոն երկու ձեռքով անանկ սաստիկ շարժեց զանոնք որ խորտակեցան ու բոլոր կռատունը կործանելով իրեքհազար հոգի կորան ․ ինքն ալ հոն մեռաւ երեսունըութ տարւան, որ դատեց Իսրայէլացւոց ազգը քսան տարի ։

Սամփսոն մեծահրաշ շքեղ դատաւոր,
 Ճոխ երկնաշընորհ ձըրիւք քաջազօր ․
 Իբր արև ծագեալ տանն Իսրայելի
 Կործանիչ բագնեաց կըռոց գարշելի ։
Աւաղ սքանչելւոյն ձրից աստուածազան
 Որպէս նանրացաւ չքնաղն աննըման ․
 Անկեալ ՚ի հրապոյրս կանացի շրթանց
 Ընդ փըղատակօք բարձաւ ՚ի կենաց ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ արքայն Հայոց էր քեռորդի մեր Աբգար Թագաւորին, որ քոյրն ղրկեց տղայը մեծ Հայաստան. բայց Ճամբան անանկ սաստիկ ձիւնի հանդիպեցան, որ ցիրուցան եղան. դայեկը տղան գիրկն առած մնացին ձիւնին տակը իրեք օր։ Երբոր ելան ձիւնէն՝ տղան անուանեցաւ Սանատրուկ կամ տուրք Սանոտի կնոջ, որ էր դայեակը. Թադէոս առաքեալ երբոր գնաց Հայաստան և լուսաւորեց զԱբգար Թագաւորն, ու Հրովարտակաւ անցաւ 'ի մեծ Հայաստան առ Սանատրուկ, հոն ալ դարձուց բազմութիւն Հայոց Քրիստոսի հաւատքն ու մկրտեց զամէնքը Սանդուխտ կոյսն ալ միատեղ, որ էր դուստր Սանատրուկ արքային։ Իսկ Աբգար Թագաւորին մահուանէն ետև Անանէ որդին և Սանատրուկ քանի մը իշխաններով դարձան կռապաշտ եղան. ու նահատակեցին հաւատացեալները, նաև Սանդուխտ կոյսը. և ապա զսուրբն Թադէոս։ Սանատրուկ անկէ ետև տիրապետելով յարձակեցաւ զօրքով յԵդեսիա ու կոտորեց ապերախտութեամբ Աբգարու ցեղին արու զաւակները։ Յետոյ ինքն ալ սատակեցաւ որսի ատեն, նետը սխալմամբ հանդիպելով իրեն, վասն վրէժխնդրութեան անմեղ սպանմանցն, յամի Տեառն 67։

ՍԱՆԴՈՒԽՏ կոյս. Տ. ԹԱԴԷՈՍ։

ՍԱՌԱ կամ ՍԱՐՐԱ՝ որ կը նշանակէ Տիրուհի իմ և Տիկին, եղաւ մայր շատ ազգաց և Թագաւորաց ըստ Սուրբ Գրոց։ Սա՛ն զի էր կին և ազգակից նահապետին Աբրա՛համու, որ ծնաւ զԻսահակ. ասկէց ալ ծնան նահապետք ու իշխանք Հրէից, և անոնցմէ՝ սուրբ կոյսն Մարիամ, ուսկից ծնաւ Յիսուս, որով ազգք և ազինք օրհնութեամբ ծաղկեցան և աճեցան ։ Ուստի և Սարրա եղաւ օրինակ նոր եկեղեցւոյ Մեսիային ․ որ և համեստ առաքինութեամբ և միամիտ հնազանդութեամբ ապրելով երկանը հետ, վախճանեցաւ սրբութեամբ հարիւր քսանըեօթն տարւան, և թաղեցաւ 'ի Քեբրոն, որ եղաւ իրենց գերեզմանատունը անկէ ետև ։

ՍԱՌԱ դուստր Հռագուէլայ էր Նեփթաղիմայ ցեղէն, որուն վրայ դեւ տիրելով թող չէր տար նոր փեսային որ իրեն մօտենայ, այլ եօթը փեսան առագաստին մէջ սպաններ էր ։ Ապա աստուածային կարգադրութեամբ հոն եկաւ Տուբիա Տոբիթայ որդին Ռափայէլ հրեշտակին հետ, որուն օգնութեամբը աղօթքով և հրաշքով հալածեցաւ դեւը, և ինքը յաջողութեամբ Տեառն ամուսնացաւ Սառային հետ և եղաւ ժառանգ ամէն ընչից Հռագուէլայ աներոջը ․ և ապա դարձաւ հօրը քով ու անոր մեռնելէն ետև գնաց զաւակներով աներոջն ամէն բանը ժառանգեց Սառային հետ ։ Տ․ Տովբիթ ։

Ահեղ անքընին կամք Անճառելոյն
  Խափանիչ դիւաց գործոց չարաթոյն ․
  Թոյլ տայ ծառայից ակիլ 'ի ժանտից
  Զի ցուցցէ զմատին իւր հանդէս հրաշից ։
Հրաշափառ հըզօր տէր կենաց մահու
  Պսակիչ արդարոց չարեաց մահածու ․
  Ընկենու հանէ 'ի դըրանց դըժոխոց
  Ինքն հաստիչ եղծիչ ներքնոց և վերնոց ։

ՍԱՏՈՒՌՆԻՆՈՍ աղանդաւոր էր Անտիոքացի Բ. դարուն, որ հետեւելով Մենանդրին կը քարոզէր թէ միայն հայր է Աստուած աներեւոյթ և ստեղծող հրեշտակաց ։ Անոնցմէ եօթը շինեցին աս աշխարհս ծածուկ. երկու հրեշտակ ալ զմարդիկ ստեղծեցին, ոմանք բնապէս բարի, ոմանք ալ չար ։ Դարձեալ կ՚ըսէր թէ՝ Քս՟ եկաւ խափանելու զաստուածն Հրէից, որ է այն հրեշտակներուն մէկը. և մարմինն Քրիստոսի կը դնէր առ աչօք, իսկ զամուսնութիւնն կը կոչէր գիւտ սատանայի ։ Նաև կը պատուիրէր աղանդակից Սատուռնինեանց հրաժարիլ մսէն ու գինիէն, որպէս զի թեթև ըլլան հոգիի պէս ։ Թո՛ղ ուրիշ մոլար հայհոյանքը, զորոնք նզովեալ դատապարտեցին հին սուրբ Հարք Իրանոս, Տերտուղիանոս, և այլն ։

ՍԱՐԳԻՍ զօրավար նշանագործ վկայն էր Գամրաց աշխարհքէն, որ ծաղկելով քաջութեամբ և առաքինութեամբ մեծին Կոստանդիանոսի օրը՝ առաւ անկէց պատիւ սպարապետութեան, ու համարձակ կը քարոզէր Քրիստոսի հաւատքը և կը կործանէր կուռքերը զարմանալի աստուածպաշտութեամբ և առաքելական նախանձով ։ Բայց երբ թագաւորեց Յուլիանոս Ուրացողը՝ Սարգիս առաւ Մարտիրոս անուամբ որդին՝ փախաւ Հայոց Տիրան թագաւորին քով ։ Անկէց ալ ապա անցաւ Պարսկաստան ու Շապուհ թագաւորին պատերազմներուն մէջ կը՝ քաջանար հաւատարմութեամբ ։ Անգամ մը տեսաւ որ իր զօրքը թշնամիներէն կը վախնան, քարոզելով յորդորեց զանոնք որ Քրիստոսի ապաւինին, որոնք հաւատալով յաղթութիւնը վաստըկեցան. իսկ երբոր Մարտիրոս որդին գերի ընկաւ ու հօրը աղօթքովն ազատեցաւ հրաշապէս , առաւել հաստատեցան հաւատքով ։ Սարգիս և որդին յետոյ կանչուեցան Շապուհէն , որ երթան զոհեն մեծ մեհենին մէջ տասուերկու կուռց ։ Ան ատենը քաջն Սարգիս համարձակ դաւանութեամբ վկայեց Քրիստոսի ու վազեց կուռքերը վար ձգեց կոտըրտեց , ցուցընելով անոնց ոչնչութիւնը ։ Իսկ քուրմերը կատղելով վազեցին բազմութեամբ սուրբ վկային վրան ու կը զարնէին չարաչար , և հոն զերանելի Մարտիրոսն ոտքի տակ նահատակեցին · ուր հայրը տեսնելով որդւոյն նահատակութիւնը գոհացաւ Աստուծոյ ։ Շապուհ բանտարկեց զքաջն Սարգիս , որուն վրա լոյս ծաթեց ու քակուեցան կապանքն · և յետ կրկին անգամ հարցուփորձի հրամայեց որ գըլխատեն · զոր շատ տանջանքով տարին քաղաքէն դուրս ։ Ուր երբ սուրբը կ'աղօթէր հրեշտակ Տեառն երևցաւ ձեռքը պսակ · իսկ սուրբ Սարգիս մեծ ուրախութեամբ գլխատեցաւ ու փառաւորեց իւր քաջութ̃բ հաւատքն Քրիստոսի ։ Վասն զի լուսաւորեր էր տասնուչորս հոգի Պարսիկ զինուորներէն , որոնք առին սուրբին մարմինն ու պատեցին մաքուր զգեստով · երբոր լսեց Շապուհ , մէկէն գլխատեց զանոնք ալ · և ամենուն մարմինը ձգել տուաւ գազանաց առաջն որ ուտեն · բայց անոնք և ոչ մօտեցան · ուստի քրիստոնեայք գիշերանց վերուցին անկէց և պահեցին պատուով յամի 362 ։

Քաջ պերճապատիւ Սարգիս զօրաւոր
Ահարկու դիւաց արքայից հըզօր ·
Աննահանջ մրցեալ ընդ դիցամոլից
Կործանեաց զբագինս , զդէնս անհաւատից ։

Մարտիրոս որդւով Ճեպեալ’ի հանդէս
Օատելիս խաչին հարին քաջապէս.
Առաքինօրէն հեղմամբ սուրբ արեան
Գերահրաշ պսակաւ յերկինս ամբարձան:

ՍԱՐԳԻՍ և ԲԱԳՈՍ էին ազնուական Հռոմայեցիք. Սարգիս էր առաջին ատենադպիր, և Բագոս՝ երկրորդ դպիր Մաքսիմիանոս կայսեր: Ասոնք ամբաստանեցան կայսեր առջին քրիստոնէութեան համար, և բռնութեամբ տարին կռատունը. բայց երբոր չուզեցին զոհել կռոց, մերկացուցին զիրենք պատուաւոր զգեստէն, ու կնկան հագուստով շղթայակապ պտըտցուցին Ճամբաներուն մէջ: Յետոյ թագաւորը զանոնք ղրկեց առ Անտիոքոս դուքսն Տաճկաստանի մօտ, որ բանտ դրաւ սուրբերը. ուր քաջալերեցան հրեշտակէն Այ. ու դատաստանին մէջ անփոփոխ քաջութեամբ դաւանեցին զՔրիստոս: Նախ զսուրբն Բագոս այնչափ ծեծեցին չարաչար՝ մինչև մարմինը պատառ պատառ ըլլալով աւանդեց հոգին. և նոյն գիշերը երևցաւ երկնային զարդով իւր Սարգիս ընկերին: Անօրէն դուքսը շրջեցուց հետը զերանելին Սարգիս երկըթէ կօշիկ ոտքը դամած. և տարաւ ’ի Ռուծափ քաղաք ու գլխատեց, որք հրաշագործութեամբ փառաւորեցան և տօնեցան:

ՍԱՐԳԻՍ Ա. սուրբ հայրապետն Հռոմայ նստաւ յաթոռ քահանայապետութեան յամի 687, որ խոհեմութեամբ և սրբութեամբ կառավարելով ընդհանուր եկեղեցին մեծ շինութիւն և սէր ցցուց հաւատացելոց հանդերձ հարկաւոր սահմանադրութբ: Ուստի խռովարար Նախանձոտները երբոր տրտնջացին սուրբ հայրապետին դէմ զրպարտելով, բերել տուաւ ութ օրւան տղայ մը, որ լեզու ելաւ ու յայտնեց սուրբին արդարութիւնը։ Ու այսպիսի հրաշալի սրբութեամբ փոխեցաւ առ Քրիստոս 'ի 701, և պատուեցաւ յեկեղեցւոյ։

ՍԱՐԳԻՍ Բ. Հռոմայեցի ընտրեցաւ յաջորդ սրբոյն Պետրոսի 'ի 844, որ արիապէս խաղաղացուց ապստամբներն, ու հալածական ըրաւ Եւրոպայէն Արաբացիները, որոնք աղօթքով սուրբ հայրապետին ծովուն տակը կորան։ Յետոյ մեծագործ շէնք մը շինեց Լատերանու սրահին քովն ու հոն զետեղեց սուրբ սանդուղքը Պիղատոսի պալատին, որն որ սուրբ Հեղինէ Թագուհին փոխադրեր էր Երուսաղեմէն 'ի Հռոմ. և ինքն առաքինի վարքով վախճանեցաւ յամի 847։

ՍԱՐԳԻՍ Գ. նստաւ քահանայապետ Հռոմայ 'ի 904, և մեծ ջանք ըրաւ որ արևելեան և արևմտեան եկեղեցիները միացընէ։ Բայց շուտով հասաւ մահն ու վախճանեցաւ յամի 911 սուրբ վարքով։ Սարգիս Դ. օծուեցաւ հայրապետ Հռոմայ 'ի 1009, որ մեծ խնամով հոգացող եղաւ աղքատաց. և շարադրեց հոգելից ճառեր. ու իրեք տարիէն ետև փոխեցաւ առ Տէր սրբութեամբ։

ՍԱՐԳԻՍ Ա. կաթուղիկոս Հայոց նստաւ յԱնի քաղաք ընտրութեամբ Գագիկ Ա. Թագաւորին յամի 992, որ էր առաջնորդ Սևանայ՝ այր խոհական, ճգնազգեաց և քաղցրաբարոյ, որով լաւ բարեկարգեց ազգը՝ նաև միջնորդ հաշտութեան ըլլալով միաբանեց իշխաններն ու բոլոր ժողովուրդը : Գտնալով մաս մը նշխարաց սուրբ Հռիփսիմեանց՝ կանգնեց 'ի պատիւ անոնց եկեղեցի մը մօտիկ կաթուղիկէին Անւոյ : Նոյն 'ի 1002 ժողով ըրաւ ընդդէմ Յակոբոսի եպիսկոպոսին Հարքայ Թոնդրակեցի աղանդաւորին , զոր բանադրելով աղուեսադրոշմ նշանով բանտ ղրկեց : Քսանըեօթը տարի Հայրապետութիւն ընելէն ետև ձեռնադրեց իրեն յաջորդ զՏէր Պետրոս Գետադարձ , և ապա վախճանեցաւ 'ի 1019 :

ՍԱՐԳԻՍ Ա . պատրիարգ Երուսաղեմի Հայոց . ուր նստած էր եպիսկոպոս Օշին թագաւորին օրը . վերջը գլուխ քաշելով Սսոյ կաթուղիկոսէն առաւ Հրովարտակ Եգիպտոսի ամիրայէն ու կոչուեցաւ ինքնագլուխ պատրիարգ Երուսաղեմի 'ի 1311 : Նոյնպէս և յաջորդները մինչև հիմա նոյն զօրութեամբ կը շարունակեն , իսկ ինքն շուտով վախճանեցաւ :

ՍԱՐԳԻՍ վարդապետ մեկնիչ կաթուղիկեայց՝ էր աշակերտակից Շնորհալւոյն , և անոր նման քաղցրաբան , իմաստուն և աստուածաշնորհ . որ առանձնացեալ Քարաշիթաւանքին մէջ կը պարապէր գրելու մեկնութիւն աղօթից Նարեկացւոյն և Եսայեայ մարգարէին , այլ և մեկնութիւն եօթն թղթոց կաթուղիկեայց խիստ գեղեցիկ և ճոխ վարդապետութեամբ : Այս գերապանծ մեկնութիւնը յօրիներ է 'ի 1150ին . որուն բոլորգիր ընտիր գաղափարը մեծադիր գտանք 'ի Լեհաստան Անի քաղաքէն բերած :

ՍԱՐԳՍԵԱՆՔ էին հերձուածողք Թ. դարուն և աշակերտք Մանիքեցի աղանդաւորին Սարգսի ։ Ասոնք ինչպէս ուզէին՝ կը փոխէին հաւատքը ըստ տեղւոյն, և իրենց վարդապետութիւնն ալ կը ծածկէին. որոնք Նիկեփորոս կայսեր օրը երես առնելով զօրացեր էին. բայց Միքայէլ յաջորդ կայսրը կորուց զամէնքն ալ ։
Սարգիս այս աղանդը բերեր էր Եգիպտոսէն ու կեղծաւորութեամբ կը ջանար որ քրիստոնէութիւնը միացընէ հրէութեան հետ, և մկրտութիւնը՝ մովսիսական օրէնքին հետ միաբանէ իբր խառնուրդ. բայց շուտով նզովեալ մերժեցան ։

ՍԱՐԴԱԽ էր որդի Բաթուի մեծ խանին Թաթարաց Ռուսայ կողմն. ուր մանկութեան ատենը Ռուս դայեկին ձեռքով քրիստոնեայ եղած էր, ու քրիստոնէաբար կ'ապրէր. հայրն ալ չէր սիրտը կոտրեր ։ Ասոր շատ անգամ օգնական եղաւ քրիստոնէից և ազատեց զանոնք բռնաւոր անհաւատներուն ձեռքէն ։ Ապա երբոր մեռաւ հայրը, գնաց Մանգոյ խանին ձեռքով առաւ հօրն իշխանութիւնը 'ի 1355ին, և երբ դարձաւ թագաւորի պէս իր աթոռը, անհաւատ ազգականները թունաւորեցին զաս ամենուն բարերար խանը ։

ՍԱՐԿԱՒԱԳ Յովհաննէս վարդապետ ԺԲ. դարուն մէջ ծաղկեցաւ ուսումնասիրութեամբ և հոգեշնորհ գրուածքով. որով շատ սիրելի եղաւ Վրաց արքային Դաւթի, և այլազգի իշխանաց ։ Նաև անդադար քարոզելով կը սորվեցընէր ամենուն զբանն կենաց և ճշմարտութիւն սուրբ Աւետարանին ։ Ասոր շատ աշկերտներ ալ ունեցաւ · որոնք լաւ կրթելով ուսմամբ և առաքինութեամբ երևելի անձինք եղան, որպէս Երեմիա Ճգնազգեաց, Խաչատուր, Գրիգոր, Յովհաննէս, և այլն ։ Շատ աստուածավառ աղօթքներ գրեց, և գեղեցիկ ճառեր ու շարականներ, նաև իմաստալից խրատական թղթեր ալ գրեց մեծամեծաց, և թագաւորազուն կուսանաց ։ Նմանապէս շարադրեց պատմագրութիւն, ժամանակագրութիւն, նաև համարագիր երգոյն Դաւթի վասն թուոց սաղմոսաց համառօտ բացատրութեամբ, և այլն ։ Սարկաւագ վարդապետ հասեալ ապա ՚ի բարի ծերութիւն փոխեցաւ առ Տէր յամի 1129 · և թաղեցաւ Հաղբատայ վանքը՝ ուր կրօնաւորեր էր առաքինի վարքով շատ տարի ։

ՍԱՒՈՒՂ Կիսեան՝ էր Ա · թագաւոր Հրէից Բենիամենի ցեղէն ընտրած, հրամանաւ Աստուծոյ օծուեցաւ ձեռամբ Սամուէլի մարգարէին ։ Որով զօրացաւ և մեծամեծ յաղթութեամբ խորտակեց կռապաշտները 1095 տարի Քրիստոսէն առաջ · Սամուէլ ալ զինքը հօր պէս կը խնամէր ։ Բայց այս մեծ յաջողութեամբը հպարտացաւ Սաւուղ և անհնազանդ եղաւ Աստուծոյ պատուիրանացն ։ Աստի մարգարէն անոր անհնազանդութիւնն երեսը զարնելով և կշտամբելով ասաց · “ Լաւ է ունկնդրութիւն քան զզոհ ընտիր (այս պատճառաւ ահա) պատառեց Ած թագաւորութիւնդ ու պիտի տայ քեզմէ աղէկին „ ։ Անկէց ետև Սամուէլ հեռացաւ Սաւուղէն, օծեց զԴաւիթ թագաւոր Իսրայէլի ։ Սաւուղ երբոր լսեց, չարանալով ընկաւ Դաւթին ետևէն որ սպաննէ . իսկ նա ջերմեռանդութեամբ զԱստուած կը փառաւորէր և կը զօրանար ու Սաւուղին ալ աղէկութիւնը կ'ուզէր միշտ : Սամուէլի մեռնելէն ետև երբ այլազգիք ելան Սաւուղին վրա , անօգնական մնալով զգեստը փոխեց ու գնաց կախարդ կնկան մը , որ իրեն երևցընէ զՍամուէլը . իսկ նա երևնալով սաստիկ յանդիմանեց կախարդին երթալուն համար բան իմանալու , նաև գուշակելով անոր կորուստը անյայտ եղաւ : Երբոր սկսաւ պատերազմը Սաւուղին զօրքը ջարդուեցան . ինքն ալ յուսահատելով սուրը փորուն դրաւ ու ընկաւ վրան մեռաւ՝ և իրեք որդիքն ալ խեղճութեամբ պատերազմին մէջ մեռան թշնամիներէն նոյն ատենը 1055 տարի Յիսուսէն առաջ :

Դառն արտասուելի արքայ չարաբաստ
Յոր վեհութենէ յոր վիհ անկեալ կաս .
Օ՜հ քեզ և հմայից գործոց խաւարին
Ու մատնիս 'ի գուբ անզերծ գեհենին :
Օծեալ պանծալիդ արքային երկնի
Գերահրաշ զաւակ պերճ՝ Սամուէլի .
Անլսողութիւնք իբր ըզքեզ ածին
ՅԱստուծոյ գրկաց 'ի գոգ բանսարկուին :

ՍԵԲԵՐԻԱՆՈՍ Էմեսացի էր եպիսկոպոս Գաբաղացւոց է . դարուն ժամանակակից Ոսկեբերանին և զօրաւոր քարոզիչ : Սորա անուամբ ունինք 13 իմաստալից ճառեր գեղեցիկ թարգմանած հին ատենը , որոնք տպեցինք 'ի 1830 . նաև լատիներէն ալ թարգմանելով տպագրեցինք Եւրոպացւոց համար . զի յոյն բնագիրը չկայ : Երևելի հին վարդապետներէն ոմանք կը հաստատեն ու կը բերեն վկայութիւն ասոր ճառերէն ։

ՍԵԴԵԿԻԱ էր ետքի թագաւորն Յուդայի, որ թագաւոր նստած էր Նաբուգոդոնոսորայ հրամանաւ. բայց ոչ միայն անկէ ապստամբեցաւ, այլ և ստեղծողէն, շատ վշտացուց Երեմիա մարգարէն և հալածեց մարգարէները ։ Նաբուգոդոնոսոր ալ շատ զօրքով ելաւ Երուսաղեմայ վրան տիրեց, ու բռնեց Սեդեկիան. և նախ աչքին առջև սպաննեց որդիքը. և ապա կուրացուց աչքերը, և կապանօք տարաւ 'ի Բաբելոն, ուր մեռաւ թշուառութբ̃ ։ Յուդայի թագաւորութիւնն ալ վերջացաւ, և բոլոր Հրէից իշխանութիւնն ալ կորաւ 584 տարի Յիսուսէն առաջ ։

ՍԵՂԲԵՍՏՐՈՍ Ա. էր Հռոմայեցի հայրապետ աստուածիմաստ, որ 'ի 314 ընտրեցաւ յաջորդ առաքելապետին Պետրոսի. և մեծ խոհեմութբ̃ կառավարեց եկեղեցին Քրիստոսի ։ Բայց շատ հալածանք ալ քաշեց կռապաշտներէն վասն անուան Յիսուսի. մինչև ապա լուսաւորեց մեծն Կոստանդիանոս բժշկելով զինքն հոգևորապէս և մարմնաւորապէս հանդերձ իշխաններովն. ուստի կոչեցաւ լուսաւորիչ Հռոմայեցւոց, և համբաւը ամէն աշխարհ տարածեցաւ. մինչև մեր սուրբ Լուսաւորիչն ալ գնաց Սրբազանին տեսութեանը. և անկէ առաւ ընդարձակ իշխանութիւն կաթուղիկոսութեան ու փառաւորապէս դարձաւ իր աթոռը ։ Նաև սուրբն Սեղբեստրոս շատ օգտակար կանոններ և պապական վճիռներ հանեց վասն օրհնութե̃ մեռոնին, և դրօշմին և այլն ։

Գումարեց զանազան ժողովներ ալ 'ի Հռոմ, աղանդաւոր հերձուածողներուն դէմ վասն պայծառութեան սուրբ հաւատոյ ։ Նմանապէս գումարել տուաւ Նիկիոյ սուրբ ժողովը ձեռամբ Կոստանդիանոսի, և առանձին ժողովքով նոյնը հաստատեց ։ Ապա սքանչելի սրբութեամբ և առաքինափայլ արդեամբք փոխեցաւ առ Քրիստոս 'ի 335 ։

ՍԵՂԲԵՍՏՐՈՍ Բ. էր Բենեդիկտեան կրօնաւոր մեծիմաստ, որ 'ի 999 օծեցին քահանայապետ Հռոմայ վասն գիտութեանցն և առաքինութեանց ։ Այս հայրապետս մտցուց Հռոմայեցւոց մէջ Արաբացւոց թուանշանն. և Գողոնիային դքսութիւնը թագաւորութիւն ըրաւ ։ Սակայն շուտով հասաւ մահն ու անկատար թողուց գեղեցիկ ուսումնական ջանքերն վասն լաւութեան ժողովրդեան. և փոխեցաւ առ Տէր 'ի 1003 ։ Կան ասոր պիտանի գիտնական գրուածները և հարիւր քառասունըինն իմաստալից նամակներ ։

ՍԵՄ էր որդի Նոյի ծնեալ հարիւր տարի ջրհեղեղէն առաջ. վերջը Յաբեթ եղբօրը հետ միատեղ պարկեշտութեամբ ծածկեց հօրը մերկութիւնն ու ժառանգեց հայրական օրհնութիւնն ։ Ուստի վեցհարիւր տարի ապրեցաւ ու թողուց հինգ որդի, Եղամ, Ասուր, Արփաքսադ, Լուդ, և Արամ, որոնք իրենց մէջ բաժնեցին բոլոր Ասիա ։ Արփաքսադայ ցեղէն ծնաւ Թարա հայրն Աբրահամու. և ասոր զաւակէն Փրկիչն Մեսիայ, որով օրհնեցան ամէն ազգք ըստ գուշակութեան մարգարէից ։

Ոլոմպիոդորոս իմաստասէրը կը պատմէ՝ թէ

երբոր Սեմայ Թոռները շատցան, ժողվեց զամէնքն ու գնաց դէպ 'ի արևմտեան հարաւ. և բնակելով լեռան մը տակ կոչեց լեռը իւր անուամբ Սիմ, և հոն Թողուց մէկ որդին ու դարձաւ արևելք, այն տեղը հիմա Սասունք կ'ըսուի։ Սեմէն եղան Պարսիկք, Ասորիք, Եբրայեցիք, Քաղդէացիք, և այլն։

ՍԵՆԵԿԱ Լուկիոս էր երևելի փիլիսոփայ Սպանիացի իբր 6 տարի Քրիստոսէն առաջ ծնած, որ սորվեցաւ նախ ճարտասանութի՟, և ապա փիլիսոփայութիւն Ստոյիկեան, և այլն։ Յետոյ եղաւ համարակալ, նաև անուանի ատենախօս. ապա աքսորեցաւ 'ի կղզին Կորսիկա ու գրեց մօրը մխիթարութեան ճառը։ Կղօդեայ կայսեր կինը եօթը տարիէն ետև ետ դարձուց զՍենեկան ու վարպետ դրաւ իր Ներոն որդւոյն։ Բայց տեսնելով Ներոն թէ վարպետին վարքն ու առաքինի խրատներն իւր մոլի խայտառակութեանցը դէմ են՝ ուզեց որ դեղով սպաննէ. և երբոր չեղաւ, մահապարտութեան վճիռ մը տուաւ որ մեռնի՝ ինչ մահուամբ որ ուզէ. Սենեկա ալ ուզեց մեռնիլ բաղնիքին մէջ երակը ծակելով։

Սենեկային հեթանոսական ախտաւոր գործքերը շատ գիտուններ վար կը զարնեն. բայց կը գովեն գեղեցիկ խրատներն և առաքինափայլ իմաստներն։ Մինչև ոմանք կարծեցին թէ սուրբ Աւետարանին կամ Առաքելոց վարդապետութեան տեղեակ էր։ Ասոր գրուածները հայերէն ալ կայ թարգմանած և տպած։ Կան նաև տասնըչորս չինծու թուղթ Սենեկայի անուամբ առ Պօղոս առաքեալ, և սորա պատասխանիք. բայց ամէնքն ալ սուտ են։

ՍԵՆԵՔԵՐԻՄ Յովհաննէս էր արքայ Վասպուրական աշխարհին Հայոց Արծրունեաց, որ յամի 1021 երբոր Սկիւթացիք վազեցին իրեն երկիրը, հանեց անոնց դէմ Շապուհ զօրավարն ու հալածական ըրաւ թշնամիները: Բայց վախնալով թողուց իր երկիրը անցաւ 'ի Յունաստան, խնդրելով Վասիլ կայսրէն անոր տեղը Սեբաստիայի գաւառն իր սահմանովը:

Կայսրը շատ ուրախանալով շնորհեց իրեն ինչ որ կ'ուզէր մինչև Եփրատին սահմանը: Իսկ Սենեքերիմ պարգևեց կայսեր տասը քաղաք, եօթանասունևերկու բերդ, չորս հազար գեղրանք, և չորսհարիւր հազար բնակիչք. որոնք բոլոր տնով տեղով անցան 'ի Սեբաստիա, յամի 1021, հետերնին տարին Վարագայ սուրբ խաչն ալ: Անոնց հետ միատեղ գնացին բազմութիւն միանձանց և Նարեկայ վանքին միաբանքը, հետերնին առնելով սուրբ Գրիգորի Նարեկացւոյն մարմինը. ուր վանք և եկեղեցի շինեցին ու հոն հանգուցին սուրբին նշխարքը: Իսկ Սենեքերիմ կանգնեց սուրբ Նշանին վանքը, ու հոն դրաւ Վարագայ խաչն և ապա 'ի 1026ին մեռնելու ատեն որդւոցը պատուիրեց՝ որ այս սուրբ խաչը դարձընեն իրեն տեղը 'ի Վարագ, նաև զինքն ալ հոն թաղեն. որոնք կատարեցին աս հրամանը: Սենեքերիմէն ետև թագաւորեց Դաւիթ մեծ որդին 'ի Սեբաստիա և 10 տարիէն ետև վախճանեցաւ անորդի. վերջը Ատոմ եղբայրը նստաւ իբրև մեծ իշխան Հայոց. անկէ ետև ալ Աբուսահլ մէկալ եղբայրն, որ եղաւ վերջին թագաւոր Սեբաստիոյ և Արծրունեաց:

ՍԵՐԱՊԻՍ էր անուանի կուռք մը Եգիպտացւոց, որ մեծ պատիւ ունէր յԱղեքսանդրիա, որուն համար այն քաղաքը սուրբ կը կոչէին: Արձանը մարդու ձեւով էր. գլուխն ունէր ցորենի գրիւ եւ ձեռքը կանոն. քովն ալ եռագլուխ կենդանի մը: Ասկէց հնախօսները մակաբերեցին թէ կը նշանակէ Յովսէփ նահապետը, որ սովին ատենը ցորենով խնամեց Եգիպտոսը, եւ յետոյ պաշտեցին կռամոլները պէսպէս անուամբ: Թէոդոս մեծ ինքնակալն ջարդեց այս կուռքը եւ աւրել տուաւ կռատունը, որուն տակը կար գետնափոր բազմապտոյտ մութ բնակարան լաբիւրինթոսի նման. ուր քուրմերը ամէն դիւական գործքերը կը կատարէին կերպ կերպ խաբէութեամբ:

ՍԵՐՈՎԲԷ կամ ՍՐՈԲԷ. ըստ Եբր. Սրովբէֆ, այս ինքն այրող՝ վառեալ, որ է վերի եւ առաջին դասն հրեշտակաց: Վասն զի բնութեամբ վառվռուն են, զուարթ՝, հրեղէն եւ երագ ՚ի պաշտօն Աստուծոյ, ինչպէս որ տեսաւ Եսայի ու ասաց. “Սրովբէք կային շուրջ զնովաւ. վեց թեւք միոյ եւ վեց թեւք միոյն, եւ առաքեցաւ առ իս մի ՚ի սրովբէից անտի”: Նոյնպէս մեր սուրբ Լուսաւորիչ ալ կ՚ըսէր. “Տեսի զՏէր ՚ի վերայ աթոռոյ բարձրացելոյ, եւ վեցթեւեայ սրովբէագունդ շուրջ զՏերամբըն”: Իսկ Ոսկեբերան ասէ. “Ի հեբրայեցի լեզու հրեղէն բերանք թարգմանին Սրովբէք”: Վեցթեւեան սերովբէք քառակերպեան քերովբէք, աթոռք անեղին”, եւ այլն: Ըստ այսմ Աստուածամայրն անուանեցաւ. “Սերովբէ հողեղէն եւ մարմնաւոր քերովբէ: Աւետիս քեզ Տիրամայր՝ սրովբէանման քրովբէաթոռ ,, ։ Տ. Հրեշտակք և Քերովբէ ։

ՍԵՒԵՐԻԱՆՈՍ Սեբաստացի էր քաջ զօրական Լիկինոսի ատենը, որ երբ քառասուն մանկունքն բանտը փակեց, Սեւերիանոս օգնելով կը դարմանէր զանոնք և ուրիշ նահատակներն ալ ։ Ասոր դատաւորն բռնեց ու տանջեց չարաչար. իսկ սուրբը ուրախութեամբ կը քարոզէր զՔրիստոս. երբոր կախաղանին վրայ հանեց զերանելին՝ հոն աւանդեց հոգին ։ Ու երբ հաւատացեալք կը տանէին սուրբ մարմինը իր հայրենի գեղը՝ Աստուած զինքը հրաշքով յայտնեց՝ յարութիւն տալով անոր ծառային, որ նոյն օրը մեռած էր. և ելաւ գնաց տիրոջը թաղմանը ։

Հոգեվառ վըկայք 'ի սէր տիրական
Ի հանդէս մարտի բորբոքեալ մատեան .
Ըղձափափաք լեալ նըմին մարտակից
Պերճ յաղթանակաւ գըտան պահակից ։
Այսպէս բիւրաւորք 'ի սէր անմահին
Մանկունք և կուսանք յասպարէզ ելին .
Աննահանջ մրցեալ ընդ բուռն հըզօրաց
Յաղթելով առին ըզպսակն երկնապարծ ։

ՍԵՒԵՐԻՆՈՍ քահանայապետ էր Հռոմայեցի աղքատասէր առաքինի, որ 'ի 640 նստեալ գլուխ եկեղեցւոյ զամէնքը հայրաբար կը խնամէր ։ Նաև շատ ջանացաւ շտկել Միակամադաւան հերձուածողներուն մոլորեալ միտքը, որոնք պղտորելով Հերակլեայ կայսեր խելքը կատաղութեամբ յափշտակեցին Լատերանու եկեղեցւոյն գանձը, և հալածելով վշտացուցին

Սրբազանը, որ խիստ վշտագնեցաւ, ու վաթսունըչորս օրէն ետև համբերութեամբ փոխեցաւ առ Քրիստոս ։

ՍԵՒԵՐՈՍ էր հերետիկոս Բ. դարուն, որ կը դնէր զանազան պատճառ բարւոյն և չարին. Մարդս եղած է կ՚ըսէր այս երկու պատճառէն, այս է, ըստ բանականութեն՝ բարի պատճառէն. և ըստ ախտաւորութեանն՝ ՚ի չարէն ։ Նոյնպէս մարմինն ալ գլխէն մինչև մէջքը՝ է գործք բարի պատճառին, անկէց մինչև ոտքն է չար պատճառին ։ Դարձեալ կ՚ըսէր՝ բարի արարիչը չէ առիթ մեղաց, այլ չարն է. գինին և կինը կը դնէր գործք չար պատճառին. իսկ ջուրը՝ բարի արարչին ։ Այս աղանդէն ելան Էնկրատեանք, Դատիանոսեանք, և Ջրամատոյց աղանդաւորք, որք պարզ ջրով կը պատարագէին. որոնք ամէնքն ալ կոչուեցան Սեւերիոսեանք և չարաչար դատապարտեցան ։

ՍԷԹ երրորդ որդին Ադամայ անուանեցաւ Զաւակ օրհնութեան, պարգևեալ յԱստուծոյ փոխան Աբէլի նման նմա աստուածապաշտ առաքինութեամբ՝ յամի աշխարհի 130. ասոր զաւակներն ալ Որդիք Աստուծոյ ըսուեցան վասն որոշելոյ Կայենին չար որդիներէն, որոնք կոչեցան Զաւակ մարդկան ։ Սէթին ցեղէն եղաւ Նոյ երկրորդ հայրն աշխարհի ։

Յովսեպոս կը պատմէ թէ Սէթին որդիքն ունէին տեղեկութիւն աստղաբաշխութեան, որ փորագրեր էին երկու սիւներու վրան, որպէս զի յիշատակ մնան ։ Հնախօսք հաստատելով զայս կը գրեն, թէ նախնիք շատ տեղեկութիւններ ունէին Ադամէն առած աւանդութեամբ, մէկն ալ ան էր որ կ՚ըսէին, թէ աշխարհք հրով և ջրով պիտի կորնչի ։ Աստի կասկածելով թէ չըլլայ որ այսպիսի պիտուական աւանդները կորսուին, այսպէս կը փորագրէին. նաև այս պատճառով Հրէայք մեծապէս կը պատուէին Սէթը իբր հնարող գրոց շրջանաց տարիներուն, ամսոց, եօթնեկաց և եօթն մոլորակաց, և աստղաբաշխութեան գրոց ։

ՍԷԹԵԱՆՔ էին աղանդաւորք Բ. դարուն, որոնք ըստ պատմութեան Եպիփանու, կը քարոզէին թէ Կային և Աբէլ հրեշտակներէն ստեղծուեցան ։ Իսկ Աբելայ մեռնելէն ետև հակառակութիւն ընկաւ մէջերնին, մինչև ապա ամէնքն ալ հաճեցան, որ անոր տեղը Սէթ ստեղծուի ։ Այս պատճառաւ կը պաշտէին ինչպէս Մեսիայ, որ բերեր էր իրենց եօթը մատեանք օրինաց, կ՚ըսէին. որոնք նզովեցան հին Հայրապետներէն ։

ՍԻԲԻԼԼԱ կամ՝ ՍԻԲԻՂՂԱ՝ անուանեցան աստուածարեալ կուսանք և քերթող մարգարէուհիք, որոնք երևցան հեթանոսներուն մէջ հին ժամանակը զանազան տեղեր ։ Այս կուսանքս ըստ ոմանց էին եօթն, որոնք մարգարէացան վասն գալստեան Փրկչին և հաստատութեան քրիստոնէական հաւատոյ ։ Եւ այս գուշակութիւնքս ոտանաւոր գրած յունարէն՝ կ՚անուանին Սիբիլլեան պատգամք ինը գիրք բաժնուած, յարգելի են գիտնոց վասն խորհրդաւոր իմաստից և հմտութեանցն. թէպէտ և այս գործքը շինծու կը կարծուէր քրիստոնէութեան առջի դարերուն մէջ ։ Քրիստոսէն առաջ ալ կային Հռոմ Սիբիլլեան պատգամներ, նոյնպէս Պղատոնին ատենը Յունաստան ալ կային. բայց շատ տարբեր իրարմէ։ Տասը կը համրուին գլխաւոր Սիբիլլայք։

ՍԻԼՎԵՐԻՈՍ Իտալացի բարձրացաւ յաթոռ սրբոյն Պետրոսի յամի 536, որ մեծ ջանքով սկսաւ բարեկարգել զեկեղեցին Քրիստոսի։ Բայց Թէոդորա Թագուհին Յուստինիանոսի ուզելով որ սուրբ հայրապետը աղանդաւորներու գլուխ ցուցընէ՝ սուտ գիր մը շինեց սրբազանին անուամբն, ու քշել տուաւ զան. բայց կայսրն իմանալով ստութիւնը ետ դարձուց սուրբ հայրապետը։ Սակայն կինը աղանդաւորաց պաշտպան ըլլալով նորէն աքսորել տուաւ սուրբը անմարդաբնակ կղզին Պաղմարիա, ուր անօթութենէ փոխեցաւ առ Տէր վկայական մահուամբ վասն ճշմարտութեան յամի 540։

ՍԻՄԵՈՆ ծերունին էր արդար, սուրբ և երկիւղած յԱստուծոյ, որ մեծ փափաքով կը սպասէր յԵրուսաղէմ Մեսիային գալստեանը Հոգւով սրբով լեցուած։ Ապա երբոր Տիրամայրը բերաւ քառասնօրեայ Յիսուս Փրկիչն 'ի տաճարն ընծայելով Հօր Աստուծոյ, Սիմէոն ազդմամբ սուրբ Հոգւոյն գնաց տաճարն ու փափաքմամբ առաւ գիրկը զՅիսուս ու օրհնելով ասաց. “Արդ արձակեա զծառայս քո Տէր ըստ բանի քում 'ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո”։ Սա մարգարէացաւ վասն չարչարանաց և փրկագործութեան Յիսուսի, նաև վասն վշտակցութեան և ցաւոց Աստուածամօրն ասելով. “Եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր”, և այլն։ Նոյնպէս յայտնի քարոզեց թէ Քրիստոս Լոյս է 'ի յայտնութիւն հեթանոսաց եւ փառք ժողովըրդեան Իսրայելի :

Աննա ծերունի մարգարէուհին ալ նոյն փափաքով հոն տեսաւ Փրկիչն ու գոհացաւ Աստուծոյ գուշակելով Երուսաղեմի եւ բոլոր տիեզերաց փրկութիւնը : Եւ այս պատճառաւ սուրբ Սիմէոն , ու Աննա մարգարէուհին եւ Եղիսաբէթ մայր Յովհաննու Մկրտչին միատեղ կը յիշուին Յայսմաւուրքին մէջ :

Աստուածահրաշ տենչ Փրկչին տեսութեան
Ըզհին ծերունւոյն յերկարեաց ըղձեանս .
Խանդակաթ սիրով եհաս տենչանաց
Գոհացաւ ետես զՓրկիչն աշխարհաց :
Ո՛վ որ փափագես Փրկչին քում տեսոյ
Անդուլ հա՛ր ըզդուռըն նորուն սիրոյ
Եւ 'ի վայելեալ 'ի շնորհըս բարւոյն
Կա՛ց միշտ գոհաբան պարգեւացն անհուն :

ՍԻՄԷՈՆ Սիւնակեաց էր Անտիոքացի Փոքր Թէոդոսի ժամանակը . որ գոլով տասւիրեք տարուան լսեց յեկեղեցին Սուրբ Գրոց խօսքերն ու սիրտը վառեցաւ կատարելութեան հասնելու սրբոց նման : Ուստի յանձնելով զինքն 'ի կամս Աստուծոյ ելաւ գնաց յանապատ Հեղիդորոսի աբբային վանքը մտաւ ու կը ճգնէր խստութեամբ , անօթի ծարաւ . ապա մտաւ ցամաք հորի մը մէջ ու կ'ապաշխարէր . բայց վանահայրը զինքը վանք դարձուց : Երեք տարիէն ետեւ քաշուեցաւ յանապատն ու խիստ կը ճըգնէր , մինչեւ առաւ շնորհք հրաշագործութեան եւ մարգարէութեան : Ասոր համար անթիւ մարդիկ կ'երթային սուրբին հրաշքները տեսնելու . որով և շատ անհաւատներ ալ կը դառնային առ Աստուած ։

Այս բազմութենէն նեղելով երանելին՝ ելաւ բնակեցաւ սեան մը վրայ, որ առաջ իրեք կանգուն բարձր էր, յետոյ եօթն, և տասներկու և ապա ըրաւ երեսուն, և քառասուն ։ Եւ այսպէս սուրբ Սիմէոն Սիւնակեաց ձգնեցաւ համբերութեամբ 47 տարի, և գերազանց սրբութ՟բ փոխեցաւ առ Տէր հրաշալի յամի 460 ։

Կան ուրիշ Սիմէոն Սիւնակեացներ ալ, որոնք այսպիսի ձգնութեամբ և հրաշագործութեամբ առաքինանալով եղան տօնելի յեկեղեցւոջ ։

ՍԻՄԷՈՆ Հայկազուն էր ազնուական ցեղէ, միայնակեաց հոգեսէր և սքանչելագործ, որ բռնութեամբ աշխարհ մտուցին ։ Բայց նա հարսանեաց օրը փախաւ տնէն նման Աղեքսիանոսին յամի 986, և առանձնացաւ Երասխաձորին անապատը, ուր սրբութեամբ կը ձգնէր խարազնազգեաց . մինչև առաւ շնորհք սքանչելագործութեան յարութիւն տալով իր Ստեփաննոս մեռեալ աշկերտին ։ Եւ երբոր անունը ելաւ՝ փախաւ գնաց Երուսաղէմ 'ի 1010ին, հոն ալ բժշկութեամբ դիւահարաց և ակարաց փառաւորեցաւ անունն ու անցաւ 'ի Հռոմ 1012ին ։ Եւ հոն ուխտը կատարելէն ետև երբոր սուրբ Յովհաննու մատուռը կ'աղօթէր բժշկեց դիւահար մը, և ապա շատ հիւանդներ ալ բժշկելով պատուեցաւ ամենէն ։ Վերջը շրջելով Գոսկանայի երկիրը մեծամեծ հրաշքներով փառաւորեցաւ աւելի ։ Այսպիսի հրաշագործութեամբ բարձրացաւ սուրբ Սիմէոնի անունը 'ի Սպանիա, 'ի Բրիտանիա, 'ի Գաղղիա, և 'ի բոլոր արեւմուտք ։ Նա որչափ փառքէ կը փախչէր՝ փառքն ետեւէն կ՚երթար սուրբին․ մինչեւ եկաւ բնակեցաւ Մանդուայի քով Բենեդիկտեանց վանքը․ ուր առաքինի քաղաքավարութեամբ եւ խստակրօն ճգնութեամբ եղաւ բարի օրինակ կրօնաւորաց․ մինչեւ որ փոխեցաւ առ Աստուած յամի 1016․ ՚ի յուլ․ 26․ Նաեւ շատ հրաշքներ ալ տապանէն եղան ։ Ուստի Բենեդիկտոս սրբազան Պապն կոնդակով տօն դրաւ սուրբին․ եւ խորան եւ եկեղեցի ալ կանգնեցին նորա անուամբ ։ Իսկ նոյն վանքին կրօնաւորքը ութօրեայ կը կատարեն տօնը, եւ կը պատուեն նշխարքը, եւ խորգը, սաղմոսը եւ կտակարանը հայերէն, եւ այլն ։

ՍԻՄՈՆ․ Տ․ ՇՄԱՒՈՆ Նախանձայոյզ, եւ Շմաւոն ազգական Քրիստոսի ։

ՍԻՄՈՆ Մոգ էր Սամարացի եւ գլուխ աղանդապետաց ։ Ծննդեամբ Հրեայ եւ կախարդութեամբ զարմացուցիչ ամենուն ։ Մինչեւ Հռոմ Տիբերիոս գետին քով արձանը կանգնեցին այս գրութեամբս, “Սիմոնի աստուծոյ սրբոյ„ ։ Վասն զի կը քարոզէր զինքն թէ էր Հայր տուող հին օրինաց, Որդի մարմնացեալ, եւ Հոգի իջեալ Առաքելոց վրայ ։ Նոյնպէս կը մերժէր մարգարէները, եւ հին Կտակարանը․ ուրացաւ բարեգործութիւնը, եւ յարութիւն մարմնոյ, ու դրաւ հոգեփոխութիւն ։ Աշխարհքս ալ հրեշտակներն ստեղծեցին՝ կ՚ըսէր․ եւ որոնք որ իր պոռնիկ Հեղինէ կնկանը ապաւինին՝ կը փրկուին, կ՚ըսէր հայհոյութեամբ ։ Սիմոն մկրտուեցաւ Փիլիպպոսէն, բայց երբ տեսաւ թէ Պետրոս եւ Յովհաննէս դրոշմելով կու տան Հոգին սուրբը , ստակ տարաւ անոնց և խնդրեց որ իրեն ալ տան այն իշխանութիւնը Հոգին սուրբը տալու , որպէս զի անով փարթամանայ ։ Բայց երբոր առաքեալները վռնտեցին զինքը՝ ուրացաւ հաւատքը . և գնաց Հռոմ մոգութիւն կ՚ընէր՝ Ներոնին ժամանակը ։ Որ վիճեցաւ Պետրոս առաքեալին հետն ու հրաշք երևցընելով մոգութեամբ յօդը վերացաւ ։ Իսկ Պետրոս և Պօղոս աղօթքով յայտնեցին անոր դիւական խաբէութիւնը , որ վերէն վար ընկաւ սատակեցաւ յամի Տեառն 66 . ինչպէս որ կը պատմէ սուրբ Յուստինոս , և կ՚ըսէ թէ տեսայ Սիմոնին արձանը Տիբերեայ կղզին մէջ ։ Դարձեալ Հռոմայու ծայրը մատրան քով վէմ մը կայ վրան կըցուցընեն առաքելոց ծնգաց տեղը , որոնք աղօթք ըրած ատեն ծնգերը քարին մէջ խրուեր են կ՚ըսեն ։ Աս մոգին անունով Սիմոնականք ըսուեցան աղանդաւորներն Ա. դարուն , որոնք ամէն հոգևոր գործքերն կաշառով կը կատարէին անիրաւութեամբ ։

Ձե՛ռ Բելիարայ որդի կորստեան
Սիմոն դիւաշունչ մահահոտ գաղան .
Օ երդ իժ մայրասպան զծինս աւազանին
Ծծէր դու ՚ի ծոց մահու խաւարին ։
Ուանեար զմեծութիւն շնորհաց երկնային
Հիմ ժըպըրհեցար զընել ընդ գոյն .
Տեսեր ընդ աղօտ զլոյս անճառելոյն
Ձե՛պեցեր ընդ խաւար անզերծ գեհենոյն ։

ՍԻՄՊԼԻԿԻՈՍ սուրբ հայրապետն յաջորդեց ՚ի գահ Հռոմայ յամի 467 , և կառավարեց իմաստութեամբ զեկեղեցին Քրիստոսի արիապէս տասնըհինգ տարի և կէս ։ Մեծ ջանք ըրաւ ջնջելու Պետրոս Կնափոսը և ուրիշ Եւտիքական մոլորեալները . նաև յանդիմանեց Զենոն կայսրն՝ որ անոնց պաշտպան էր ։ Սահմանեց հարկաւոր կանոններն եկեղեցւոյ . գրեց տասնըութ իմաստալից նամակներ . և ապա հրաշագործութեամբ և սրբութեամբ փոխեցաւ առ Աստուած յամի 483 ։

ՍԻՆԳՆԻՈՍ կամ ԵՒՍԻՆԳՆԻՈՍ ծերունին Անտիոքացի էր քաջ զօրական Կոստասայ հօրն Կոստանդիանոսի , որուն օրը հաւատաց Քրիստոսի և մնաց հաստատ մինչև Յուլիանոսի Ուրացողին օրը ։ Աս անօրէն Ուրացողը երբոր կը նեղէր զծերն որ զոհէ կռոց , նա քաջութեամբ սաստիկ յանդիմանեց անոր անաստուած մոլորութիւնն ըսելով . “ Մեծն Կոստանդիանոս կուռքերէն դարձաւ առ Քրիստոս Աստուած ճշմարիտ . իսկ դուն Քրիստոսէն դարձար առ պիղծ կուռս ” ։ Ասկեց Ուրացողն կատղելով չարաչար բրածեծ ընել տուաւ զերանելին , ու կապանքով բանտարգելէն ետև գլխատեց հարիւր տասը տարեան . զոր թաղեց Եւստաքէոս ու վարքը գրեց ։

ՍԻՈՆ կաթուղիկոս Հայոց բարեկիրթ և առաքինի Ը . դարուն ձեռնադրեցաւ եպիսկոպոս Աղձնեաց . և սրբութեամբ կը կառավարէր իւր հօտը բարի օրինակով և վարդապետութեամբ ։ Այն ատեն Սիմ լեռան տակի յորդառատ աղբիւրը ցամքեցաւ . հագարացի իշխանը խնդրեց հայրապետէն որ աղօթքով բղխեցընէ ։ Իսկ նա կիրակամուտին հսկումն ըրաւ ժողովրդեան հետ մէկտեղ ջերմեռանդութբ . և կիրակի առաւօտուն գնաց ուխտին ու խաչակնքեց աղբիւրը ։ Ու երբ ձեռքի խաչովն օրհնեց և գաւազանովը զարկաւ , մէկէն սկսաւ աղբիւրը վազել առատապէս . որուն համար շատ զարմացաւ այլազգի իշխանը ։ Ու յետոյ եղաւ ոստիկան ու նստաւ Դուին . նոյն ատենը Տրդատ կաթուղիկոսն ալ վախճանեցաւ . ոստիկանը կանչեց զՍիոնը նստեցուց կաթուղիկոս յամի 767 ։ Անկէ ետև աւելի բարեկարգելով ազգը և բոլոր եկեղեցին՝ ժողով գումարեց 'ի Պարտաւ քաղաքն Աղուանից ու սահմանեց քսանըչորս կանոններ վասն ուղղութե՟ և բարեկարգութեան ։ Ապա 'ի 775 նոյն առաքինի վարքով և հսկողութեամբ փոխեցաւ առ Տէր . որուն յաջորդեց Եսայի կաթուղիկոս ։

ՍԻՍԱԿ էր որդի Գեղամայ նահապետին Հայոց , որ յանձնեց ասոր կառավարութիւնն ու պահպանութիւնը Սևան ծովակին կողմանցը ։ Ու լեցուց շէնութեամբ երկիրը և կոչեցաւ իւր անուամբ Սիսական կամ Սիւնիք ։ Յետոյ ընդարձակեց իւր տէրութիւնը մինչև 'ի Կասպից ծով . և այս մասն ալ անոր անուամբ կոչեցաւ Աղուանք և Շիրուանք ։ Իբր զի քաղցրաբարոյ և շատ սիրուն ըլլալուն համար Աղու և Անոյշ կ'անուանէին զինքն ։

ՍԻՍԻԱՆՈՍ անուամբ եղան զանազան ճըգնաւորներ . բայց առաւել անուանին եղաւ Կապադովկացին , որ եօթը տարի կրօնաւորական կրթութենէն ետև մտաւ գերեզմանի մը մէջ իրեք տարի ճգնեցաւ ջերմեռանդ աղօթքով , մինչև առաւ իշխանութիւն հալածելու դևերը ։ Իսկ երբոր սրբութեան անունը տարածեցաւ՝ տարին զինքն իրեն հայրենիքն ու ձեռնադրեցին քահանայ, որ եղաւ զարմանալի հիւրասէր և հայր հասարակաց ։ Յետոյ երբ ընտրեցին զինքն եպիսկոպոս՝ փախաւ անապատը և ճգնեցաւ առանձինն Յորդանանու մօտ մինչև իր վախճանը ։ Մեռնելէն ետքը գնաց իրեն ճգնաւոր մը, զոր ողջունեց մեռելը ինչպէս կենդանի ։ Իսկ երբոր պիտի թաղէին, աղաչեց սուրբին աշակերտը փորողին որ լայն ըլլայ գերեզմանը երկու հոգու համար ։ Ու պառկելով փսիաթին վրա՝ մեռաւ. և եղբայրքը թաղեցին հոն ծերն ու աշակերտը միատեղ ։

ՍԻՍԻՆՆԻՈՍ էր մեծահամբաւ հայրապետ ազգաւ Ասորի, որ պէսպէս առաքինական գործքերուն համար ընտրեցաւ քահանայապետ Հռոմայ յամի 708 ։ Սա մեծ հոգ տարաւ պայծառացընելու ընդհանուր եկեղեցին իմաստալից կոնդակներով և սահմանադրութեամբ ։ Ձեռք զարկաւ նորոգելու քաղաքին պարիսպը և տաճարները, բայց շուտով հիւանդացաւ յօդացաւութեամբ. և քսան օրէն ետև վախճանեցաւ ։

ՍԻՐԻՈՍ Հռոմայեցի սուրբ հայրապետն յաջորդեց Դամասոսի պապին յամի 385. և կառավարեց ընդհանուր եկեղեցին իմաստութեամբ և սրբութեամբ տասուերեք տարի ։ Օրաւոր կոնդակներով և վճիռներով գլխաւոր եղաւ կրկնակնունք հերետիկոսներուն. դատապարտեց զՅովինիանոս որ կ՚ուրանար Աստուածածնայ կուսութիւնը. իսկ Մանիքեցիները աքսորեց Հռոմայէն ։ Այս հայրապետին անունը շատ վկայաբանութեանց մէջ կը գովէն սուրբ Հարք. վասն զի սա խաղաղացուց

Ափրիկէի եկեղեցին Դոնատեան խռովարար հերձուածողներէն, ինչպէս կը պատմէ սուրբ Ամբրոսիոս և այլք։ Ապա այսպիսի գեղեցիկ բարեկարգութեամբ փոխեցաւ առ Քրիստոս 'ի 398։

ՍԻՄԱՔՈՍ սուրբ քահանայապետն Հռոմայ էր Սարդենիացի սրբակաց և իմաստուն, որ նստաւ յաթոռը յամի 498։ Եւ շատ սիրելի և պատուելի եղաւ ամենուն վասն սքանչելի համբերութեանցն և հալածանացն որ կրեց 'ի սէր ճշմարտութեան, ու յաղթեց հակառակորդաց։ Անոր համար զանազան ժողովքներ եղան 'ի Հռոմ վասն բարեկարգութեան կղերիկոսաց և վասն հաստատութեան Սրբազանին այլովքն հանդերձ։ Ուստի մեծաւ քաջութեամբ ոչնչացուց հերետիկոսներն ու շտկեց ապստամբները. մինչ զի կուապաշտ արքայն Սարակինոսաց, և Սիգիսմունդոս արիոսեան թագաւորն լուսաւորեցան հաւատով։ Ապա վախճանեցաւ սրբութեամբ 'ի 514։

ՍԻՒՔԻՈՍ կամ ԽՍԻՒՔԻՈՍ էր հրաշագործ ճգնաւոր, որ նախ երթալով անապատը հանդիպեցաւ երկու գիւահարներու և բժշկեց աղօթքով։ Ապա շատ ճգնութենէն և հրաշքներէն ետև շինեց լեռան տակը եկեղեցի սուրբ Անդրէի, և վանք արանց և կանանց։ Իսկ մեռնելէն ամիս մը առաջ հրեշտակին ձեռքով իմացաւ իւր վախճանը, մեռած գիշերն ալ լոյս ծաղեց վրան ու լուսաւորեցաւ։ Ապա ժամանակէն ետև Կոստանդեայ և Եուինեայ թագաւորաց օրը բերին սուրբին մարմինը հանգուցին յեկեղեցին Ամասիոյ, և տօնեցին։

ՍԿՈՎՏ էր մեծահամբաւ վարդապետ Նրբախօս Ֆրանչիսկեան՝ Սկովտացի ։ Քաջ մեկնիչ ըլլալով աստուածաբանական դժուար խնդիրներու՝ հաստատուեցաւ վարժապետ աստուածաբանութեան 'ի Փարիզ. ուր գրեց զանազան ճառեր և խնդիրներ, բայց նրբախօսութեամբն տեղ տեղ սուրբ Թովմայի կարծեացը դէմ գրեց ։ Ասկէց երկու ներհակ դպրոցք ըսուեցան Թովմայականաց և Սկովտականաց. առաջնոյն հետևեցան Դոմինիկեանք, և երկրորդին Ֆրանչիսկեանք. բաց 'ի զանազան գրոց՝ Սկովտ իմաստութեամբ հաստատեց Աստուածածնայ անարատ յղութիւնն, և վախճանեցաւ 'ի Գերմանիա երեսուն տարեան յամի 1308 ։

ՍՄԲԱՏ արքայ Բագրատունի, նահատակ որդի Ա. Աշոտոյ, էր զարդարեալ քաջութ̃բ և աստուածպաշտութեամբ, որ յամի 890 թագաւորեց. ու ամենայն մեծամեծ դժուարութեանց մէջ ընկաւ, և սքանչելի համբերութեամբ յԱստուած ապաւինելով ամէն վըշտաց ճարը կը գտնէր ։ Երկայնամիտ էր և ներող, բարեխնամ և մարդասէր, խոնարհ և ակնածելի իշխանաւորաց. որով և օրինակ բարի բոլոր ժողովրդեան ։ Պատերազմաց մէջ ալ շատ մեծամեծ քաջագործութիւններ ըրաւ. վերջը տուաւ զանձն փոխանակ ազգին ։ Սան զի երբոր պաշարուած էր Յուսուփայ ոստիկանէն Կապուտայ բերդին մէջ, տեսնալով որ իր պատճառաւ կը ջարդուէին քրիստոնեաները, ասաց թէ՝ Լաւ է ես մեռնիմ, քան թէ այսչափ ժողովուրդն Աստուծոյ կորսուի ։ Եւ այսպէս արժանի եղաւ փառաւոր պսակի մարտիրոսութեան՝ մատնելով զինքն անհաւատ Թշնամւոյն ձեռքը, որ անտանելի տանջանօք չարչարեց սուրբ Թագաւորն, որպէս զի ուրանայ հաւատքը։ Այլ նա հաստատեալ ՚ի սէրն Քրիստոսի զօրացաւ սքանչելի համբերութեամբ. վերջը քահանայի մը ձեռամբ հաղորդուելով գլխատեցաւ անհաւատներէն։ Որոնք սուրբ մարմինը գամեցին փայտէ խաչին վրա, և Աստուած փառաւորեց սուրբ վկային ծագելով պայծառ լոյս մարմնոյն վրա, և տալով շնորհք բժշկութեան արիւնախառն հողին. մինչև անհաւատներն ալ լուսաւորեալ հաւատքի եկան, յամի 914։

Երջանիկ արքայ Սմբատ կորովի
  Հոգւով և մարմնով չքնաղ շնորհալի.
  Ընաշխարհիկ տիպար լեալ առաքինեաց
  Արժանի գըտաւ կրկնակի պսակաց։
Ճենձերեալ ՚ի հուր բոցոյն երկնային
  Զոհեաց զանձն ՚ի սէր եղբարց և ազգին.
  Հրաշալի հանուրց գործով գերաբուն
  Պարակից վերնոց հրեղինաց դասուն։

ՍՄԲԱՏ Սպարապետ Խոստովանող էր հայր Աշոտոյ առաջին արքայի Բագրատունեաց քաջ և աստուածապաշտ, որ Բուղայ ոստիկանին ձեռքով կապեալ նախարարներով վարեցաւ ՚ի Պաղտատ։ Իր քաջութեամբ հաստատ մնալով հաւատքին վրա բանտարկեցաւ. և ապա աղօթելով աւանդեց հոգին, ու Խոստովանող անուանեցաւ արժանապէս ՚ի 856։

ՍՄԲԱՏ Բազմայաղթ էր Մօրիկ կայսեր ժամանակը, որ զինքը մարզպան դրաւ Հայոց վասն մեծամեծ քաջագործութեանցը և ազգը լաւ հոգալուն ։ Ամբատ կանգնեց Դուին եկեղեցի մը քարաշէն կոփածոյ՝ անուամբ սուրբ Լուսաւորչին, և ծաղկեցուց հաւատքը ամէն տեղ ։ Նաև շատ երևելի բարեպաշտ գործքերով յիշատակեցաւ անունը յայսմաւուրքին մէջ․ որ ապա յամի 610 վախճանեցաւ բարեպէս․ իսկ մարմինը տարին թաղեցին ’ի Տարոն ։

ՍՄԲԱՏ Բ․ թագաւոր Հայոց անուանեալ Տիեզերակալ և Շահիարմէն՝ էր երէց որդի Աշոտոյ Գ․ որ թագաւորեց յԱնի ’ի 977, և հալածական ըրաւ յաշխարհէն ասպատակները ։ Սա կանգնեց քաղաքին ամուր պարիսպը՝ լայն և խոր խրամով․ շինեց և շատ եկեղեցիներ․ ուր ամէն իշխաններն ալ տաճար շինելով շատցուցին եկեղեցիներուն թիւը հազար և մի․ որուն վրա երդում ընելով ռամիկները կ’ըսէին “’Ի հազար և Ա եկեղեցի Անւոյ„ ։ Յետոյ հիմնարկել տուաւ Տրդատ ճարտարապետին ձեռքով կաթուղիկէ մեծ տաճարն ալ ’ի 989․ բայց նոյն տարին վախճանեցաւ ։

ՍՈԿԻՆՈՍ Լելլիոս և եղբօրորդին Սոկինոս Փօստոս էին Իտալացի աղանդապետք ԺԶ․ դարուն ։ Ասոնք նորոգելով հին չար աղանդները կոչեցան Նոր Արիանոսք․ ուրացան զխորհուրդ Երրորդութեան և Մարդեղութեան․ մերժեցին շնորհք, սկզբնական մեղք, եօթն խորհուրդք եկեղեցւոյ, և նախասահմանութիւն․ ազատութիւն կը քարոզէին, ու իրենք թշուառ գերի էին մոլութեանց ։ Սոկինեանք անուանեցան ասոնց հետևողները, որ չար մոլորութեամբ և խռովութեամբ լցին զԵւրոպա ։ Վասն զի հակառակասէր էին, նիւթապաշտ և անկրօն, որոնք անէծքով դատապարտեալ կորան Սաւկինեանց հետ ։

ՍՈԿՐԱՏ կամ **ՍՈԿՐԱՏԷՍ** էր Աթէնացի գերազանց փիլիսոփայ, որ վարժեալ յուսման և 'ի գիտութեան, առաւել ծաղկեցաւ բարոյական իմաստութեամբ, որով կը կրթէր զինքն 420 տարի Յիսուսէն առաջ ։

Սոկրատին սովորական վարժարաններն էին խանութներն ու փողոցները, ուր կը քարոզէր համարձակ ամենուն՝ միութիւնն Աստուծոյ, անմահութիւն հոգւոյ, պատիժ և վարձ՝ չար և բարի գործքերու մեռնելէն ետև ամէն մարդկան ։ Իր ճարտարախօսութեամբ հաստատելով զայս ճշմարիտ սկզբունքը մտիկ ընել կուտար ու առաքինութեան ճամբան կը սորվեցնէր ․ ինքն ալ էր համեստ, ժուժկալ, երկայնամիտ, և ամէն բանի մէջ միշտ միակերպ և անխռով ․ մինչև պատգամախօսէն Դելփեայ անուանեցաւ “Իմաստնագոյնն 'ի մէջ Յունաց” ․ և հարսնեացն ու մահուան օրը միապէս չայլայլեցաւ ։ Սովի և ախտաւոր անձինք գտնելի էին իրեն ․ և ոչինչ կը համարէր կուռքերն ու չաստուածները ։ Ասոր համար դիցամոլ թշնամիները ամբաստանեցին զինքը դատաւորաց առջին, և վճռել տուին որ մոլախինդի թունով մեռնի ։ Իսկ նա երբ լսեց, ըսաւ ․ “Ես շատոնց դատապարտեալ էի մեռնելու բնութեան օրէնքով” ․ և ամենևին չայլայլեցաւ ։ Սոկրատ այսպէս զուարթութեամբ յանձն առաւ մեռնիլ 'ի չար նախանձէն թշնամեացն՝ ասելով ․ “Յելանելն 'ի կենաց աստի կրկին ճանապարհք ընդ առաջ լինին ․ մին ուղղեալ է 'ի տեղի յաւիտենական տանջանաց վասն չարագործաց ․

իսկ միւսն ածէ յերջանիկ կայանս աստուածոց, վասն նոցա որոց ոգիք անարատ պահեցան և 'ի մարմնի աստ առաքինացան դիւցազնական գործովք”: Այս մեծիմաստ առաքինին առաւ թունաւոր մոլախինդը խմեց զուարճախառն յուսով, և մեռաւ եօթանասուն տարեան: Աթենացիք առաքինի փիլիսոփան կորսնցնելէն ետև շուտով զղջացին ու պատժեցին անոր թշնամիները: Եւ 'ի պատիւ նորա կանգնեցին պղնձէ արձանը Սոկրատին, նաև նուիրելով իրեն անուան տաճար մը գրեցին այսպէս. “Ա[illegible] [illegible] [illegible]”:

ՍՈԿՐԱՏ էր Կոստանդնուպօլսեցի եկեղեցական պատմագիր Յոյն, որ 'ի Ե. դարուն գրեց յաջորդութիւն եկեղեցական պատմութ՟ե Եւսեբեայ բաժնելով եօթն գիրք սկսեալ 306 ամէ մինչև 'ի 439: Սա էր աշխարհական և անհմուտ աստուածաբանական խնդրոց նաև տգէտ հաւատքի բաներուն, և ոչ շատ գովելի:

ՍՈԶՈՄԵՆՈՍ Հերմիաս էր Սաղամինացի պատմագիր Ե. դարուն, որ լուսաւորեալ հրաշագործութեամբ սրբոյն Իղարիոնի հաւատաց Քրիստոսի. և գնաց 'ի Պոլիս եղաւ փաստաբան և վարժապետ հռետորութեան: Նա գրեց եկեղեցական պատմութիւնը յունարէն սկսեալ յամէն 324 մինչև 'ի 439:

Շատերը կը գովեն զայս պատմագրութիւն իբր ճիշտ ստորագրութ՟ի երևելի դիպուածոց, և եկեղեցական արարողութեանց և յայտնի ապաշխարութեանց և ուրիշ նշանաւոր գործողութեանց, և այլն: Բայց ոմանք բանի տեղ չընելով կը համարին քաղեալ ըստ մեծի մասին Սոկրատին պատմութենէն ու վայելչաբանութեամբ զարդարած ։

ՍՈՂՈՄՈՆ կամ ՍԱՂԱՄՈՆ, ըստ եբր Շալօմ, Թարգմանի խաղաղարար կամ կատարեալ, որ էր որդի Դաւթի, և երրորդ արքայ Իսրայելացւոց լեցուած ամենայն փառքով, մեծութեամբ և աստուածաշնորհ իմաստութեամբ, մինչև կոչեցաւ 'ի Տեառնէ “Յեդիդե”, այս է սիրելի Աստուծոյ. որուն ամենայն սքանչելի գործքերը գրած կան կարգաւ 'ի Գ. գիրքը Թագաւորութեանց. ինչպէս մեծագործ շինութիւն տաճարին Աստուծոյ, և Երուսաղէմի պարիսպներուն ու երևելի քաղաքներուն շէնքը. նաև հազարաւոր ողջակէզները, զոհերը, հանճարն ու աստուածաշնորհ իմաստութիւնը ։ Սողոմոն բոլոր ժողովրդով և մեծագործ փառաւորութեամբ փոխադրեց տապանակը տաճարին ներսի կողմն. հոն տարաւ ամէն սպաս սրբութեան տաճարին, ու կատարեց ուխտը ողջակիզներով ։ Ան ատեն Աստուած ալ լուսեղէն ամպով լցուց տաճարը, և Սողոմոն սրտառուչ պաղատանքով օրհնեց զԱրարիչն պէսպէս խնդրուածքով ։ Այնպէս կատարեց փառաւոր տօն և նաւակատիք տաճարին բոլոր ժողովրդով տասներչորս օր ։ Ապա կրկին անգամ երևնալով Աստուած օրհնեց զարքայն, և ճոխացուց փառքով, փարթամութեամբ և հզօր զօրութեամբ ։ Մինչև տիկինն Սաբայ լսելով անոր գերազանց իմաստութիւնը եկաւ իրեն մեծագանձ ընծաներով. և զարմացաւ անոր իմաստութեանը և փառացը վրայ, և այլն ։ Ըստ Սուրբ Գրոց, Սողոմոն իմաստնացաւ քան զամենայն մարդիկ, և խօսեցաւ երեք հազար առակ, և հինգ հազար երգս և օրհնութիւնս ։ Նաև գրեց պատմութիւնս տնկոց, անասնոց, թռչնոց, և ձկանց, որք հիմա չկան բայց ՚ի գրոց Առակաց, Ժողովողին, Իմաստութեան և Երգոց երգոյն ։ Սակայն իգասիրութեանը ախտը մթնեցուց Սողոմոնին ամէն փառքն ու մեծութիւնը. մինչև շատ վարդապետներ տարակուսեցան հոգւոյն փրկութե̃ը վրա ։ Շատ սուրբ Հարք ալ գրեցին մեր ՙՆարեկացւոյն՝ պէս, թէ ծերութեան ատենը զղջանալով գրեց Ժողովողի գիրքն ասելով. “Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է” ։ Ես այսպէս մեռաւ յիսունըինը տարւան, քառասուն տարի թագաւորելէն ետև յամի աշխարհի 3029 ։ Ասոր համար խոստացեր էր Աստուած Դաւթի. “Յարուցից զզաւակ քո յետ քո . . . ես եղէց նմա ՚ի հայր, և նա եղեցի ինձ յորդի. և եթէ եկեսցէ անիրաւութիւն նորա՝ յանդիմանեցից . . . բայց ողորմութիւն իմ ոչ մերժեցից ՚ի նմանէ”, և այլն ։

ՍՈՂՈՆ փիլիսոփայ էր անուանի Յունաց եօթն իմաստուններուն մէկը, որ և շատ գործքերու մէջ յայտնեց իմաստութիւնը ։ Երբեմն գնաց Կրեսոս կամ Կիւրոս Լիւդացւոց թագաւորին քով ու տեսաւ անոր փառքը. երբոր հարցուց Կրեսոս, թէ տեսե՞ր ես այսպիսի բարեբաղդութի̃, պատասխանեց Սողոն. “Պէտք չէ երանել մարդուն բարեբաղդութիւնը քանի որ ողջ է” ։ Յետոյ երբ յաղթուելով Կրեսոս, բռնուեցաւ Պարսից Կիւրոս թագաւորէն՝ որ հրամայեց տապկելու Կրեսոսը. ան ալ սկսաւ լալով աղաղակել. “Ո՜վ Սողոն Սողոն, գեղեցիկ խօսեցար թէ չէ պարտ մարդոյ երանել զբարեբաղդութիւն մինչ 'ի վախճան „ ։ Օաս որ լսեց Կիւրոս ազատեց Կրեսոսը ։ Իսկ Սողոն շատ գեղեցիկ օրինադրութիւնք դնելով Աթէնս լուսաւորեց ազգը կրթութեամբ ։

ՍՈՂՈՆ Կիլիկեցի էր հովիւ բարեպաշտ և հոգեսէր, որ Մաքսիմիանոսի հալածանքին ատենը քունին մէջ յայտնութիւն ունենալով սկսաւ քարոզել զ՛Քրիստոս, և շատ մարդ լուսաւորեց շնորհօքն Աստուծոյ՝ համարձակ ամենուն սորվեցընելով արքայութեան ճամբան ։ Օր մը ծածուկ մտաւ կռատունն ու կուռքին ոսկի ձեռքը առաւ մանրեց և բաժնեց աղքատներուն ․ քուրմը երբոր գող բռնեց ուրիշները՝ Սողոն յայտնեց զինքն ու համարձակ դաւանեց զ՛Քրիստոս դատաւորին առջև ։

Սաստի չարաչար տանջելով զերանելին, ոտքերը երկաթէ կօշիկ հագուցին և գամերով քալեցուցին ․ յետոյ ծառէն կախելով և սաստիկ ծեծով նահատակեցին ։ Երբոր մարմինը կրակը ձգեցին, անձրևով կրակը մարեցաւ, ու քրիստոնեայք գնացին առին և տօնեցին ։

ՍՈՍԻՊԱՏՐՈՍ ։ Տ ․ ՅԱՍՈՆ ։

ՍՈՎՏԵՐ սուրբ հայրապետն օծաւ ՛Քահանայապետ Հռոմայ յամի 175, և չորս տարի փառաւորապէս կառավարեց զընդհանուր եկեղեցին ՛Քրիստոսի ։ Հաստատեց առաքելական աւանդութիւնները, և կանոնադրեց քահանայից ծոմապահ պատարագել սրբապէս ․ նոյնպէս կուսանաց՝ որ չխնկարկեն եկեղեցնոյ մէջ, և չմօտենան սուրբ մարմնակալին, և այլն ։ Պատուիրեց նաև հաւատացելոց՝ որ ողորմութեամբ օգնական ըլլան աքսորուելոց վասն սուրբ հաւատոյ, որոնք միշտ մխիթարելով կը զօրացընէր քաղցր բանիւ. մինչև ապա անօրէն քուրմերը բռնելով զսուրբ հայրապետը տանջեցին, որ դարձընեն հաւատքէն. իսկ նա համբերելով նահատակեցաւ արիաբար յամի 179, և յիշատակեցաւ յեկեղեցւոջ։

ՍՈՐԲՈՆ կամ ՍՕՌՊՈՆ էր մեծանուն վարդապետ Գաղղիացի կանգնող Փարիզու աստուածաբանութեան դպրոցին, և քարոզիչ խոստովանահայր սուրբ Լուդովիկոսի Թ. արքային Գաղղիոյ։ Սա 'ի 1251 կանոնիկոս եղաւ ու սկսաւ կրթել հանճարամիտ տղաք կղերիկոս ընելու համար։ Նա 'ի 1253 հաստատեց Սօրպոնեան միաբանութիւնը, որ եղաւ սկիզբն Եւրոպայի համալսարաններուն։ Նա ասոր հաստատութեան կոնդակն ալ առաւ Հռոմայ սուրբ աթոռէն և Լուդովիկոսէն յամի 1258. ուստի այս դպրոցէն ելան շատ երևելի աստուածաբաններ։ Սորբոն վարդապետը յետոյ գրեց այս դպրոցին պիտանի կանոնները. ապա 'ի 1274 վախճանեցաւ սրբութեամբ եօթանասունևիրեք տարւան. և թողուց իրեն ամէն ինչքը և գրուածքը Սորբոնեան ընկերութե՟. որով անմահացաւ անուն առաքինի հիմնադրին Սորբոնի, և բարի համբաւն աստուածիմաստ ընկերութեան Սորբոնեանց։

ՍՈՒՔԻԱՍԱՆՔ էին տասնըվեց անձինք, անուանի իշխանք Թագաւորութեան Ալանաց, որոնք եկան Հայաստան Սաթինիկ դշխոյին հետ։ Սա լսելով սուրբ Ոսկեանց քարոզութիւնը՝ աշակերտեցան իրենց ու մկրտեցան. և մէկիկ մէկիկ տեսան յայտնապէս զՔրիստոս ։ Բահադրաս կ՚անուանէր գլխաւորնին, որ անուանեցաւ Սուքիաս ։ Ասոնք Ոսկեանց նահատակութենէն ետև թաղեցին նշխարքներն ու իրենք անոնց ճգնարանը մտան ճգնեցան ։ Բայց հոն պարարտ երկիր ըլլալուն համար թողին գնացին Սուկաւ լեռը, 44 տարի ճգնեցան ամառ ձմեռ բաց օդին մէջ կենալով. մարմիննին դարձեր էր իբր վայրի այծերու, անոր համար Քօշք կ՚ըսուին ։ Երբոր մեռաւ Շապուհ Ալանաց արքային՝ իր յաջորդը Գատրանոս լսելով Սուքիասանց գործքը՝ ղրկեց Բաղահա զօրագլուխն որ զանոնք դարձընէ սուրբ հաւատքէն. բայց տեսնելով թէ անոնք հաստատ վառեալ են ՚ի սէրն Քրիստոսի՝ սկսաւ տանջել և խանձողել, ապա դահիճները սրով նահատակեցին զանոնք յամի 130. և ուր որ կատարեցան՝ աղբիւր բժշկութեան բղխեց ։

Այսպէս երկնակրօնք ընդ դարս յաւիտեան
  Անմահին յուսովն առաքինացան.
  Ոյս չարժէ աշխարհ մատն եղեն վշտաց
  Բազմակիր մարմնով հասին աւետեաց ։
Նոյն անձառ յուսով ՚ի սէր գերընական
  Գունդ Սուքիասանց պայծառ փայլեցան,
  Պատիւ, մեծութիւն, պշուք արքունեաց
  Փոխեցին ընդ փառս անանց ճոխութեանց ։

ՍՈՓԻԱ կը թարգմանի իմաստութիւն, և էր Իտալացի կին ազնիւ, այրի մնացած իրեք դստերով. որոնց անուններն էին Պիստիս (հաւատք), Էլպիս (յոյս), Ագապէ (սէր) ։ Ասոնք մայրը կրթեր էր պարկեշտ աստուածպաշտութեամբ, և մէկտեղ կ'երթար Հռոմ յեկեղեցին կ'աղօթէր շատ անգամ Բ դարուն սկիզբն ։ Նոյն ատեն Անտիոքոս անուամբ կռապաշտ մը ուզեց Սոփիայէն որ աղջիկներուն մէկը տայ իրեն կին ։ Պատասխանեց սրբուհին, թէ մենք քրիստոնեայ ենք, այդ չենք կրնար ընել ։ Իսկ նա գնաց մատնեց զանոնք ատենին. ուր ելան քաջութեամբ դաւանեցին զՔրիստոս համարձակ ըստ գեղեցիկ յորդորանաց մօրը՝ փափաքելով նահատակութեան ։ Ասոր մէկիկ մէկիկ տանջելով գլխատեցին ամբիծ կուսանքը. որոնց նշխարքը ամփոփեց մայրը Հռոմէն դուրս ։ Ապա իրեք օրէն ետև ընկաւ սուրբ դստերաց գերեզմանին վրա, խնդրեց որ զինքն ալ քովերնին առնէն. և հոն մէկէն աւանդեց հոգին, ու անոնց հետ տօնեցաւ ։

ՍՈՓՈՆԻԱ էր երկոտասան փոքրամատեան մարգարէներուն մէկը, Շմաւոնի ցեղէն և ժամանակակից Երեմիայ մարգարէին ։ Ասոր մարգարէութիւնը իրեք գլուխ բան է, որ ազդու խօսքով կը յորդորէ Հրէաները որ ապաշխարեն գուշակելով անոնց և Նինուէին կործանումը, նաև Երուսաղէմին մեծամեծ չարիքն ։ Յետոյ յոյս տալով կը գուշակէ նոցա գերութենէն ազատութիւնը, եկեղեցւոյ կանգնումը, և հեթանոսաց կոչումը ։ Սոփոնիա վախճանեցաւ 'ի Սարաբաթ իւր երկիրը ։

ՍՊԵՒՍԻՊՈՍ, Եղասիպոս, և Մեղասիպոս էին եռուորեակ մէկտեղ ծնած եղբարք Կապադովկացիք, Մարկոսի Աւրելիոսի ժամանակը, ձիավարժ ծառայ հեթանոս տէրանց ինչպէս իրենք ալ կռապաշտ էին. իսկ Լէոնիլլա իրենց մամը քրիստոնեայ էր՝ որ օր մը հրաւիրեցին իրենց հեթանոսական հարկիքին 'ի պատիւ Պիոսի. իսկ նա խրատեց զանոնք որ թողուն կուռքերն ու Աստուծոյ ծառայեն ճշմարտութեամբ ։ Անոնց սիրտն անանկ փոխուեցաւ, որ մէկէն կոտրտեցին կուռքերն ու զոհն ալ չներուն տուին ։ Աս բանս իմանալով իրենց տէրերը սաստիկ տանջանքով չարչարեցին զանոնք. և երբոր անկարելի եղաւ դարձընելու հաւատքէն, իրեքը մէկտեղ կրակը ձգեցին, ու մամերնին ալ գլխատեցին Յունիլլայ տիկնոջ և Տուրբոնի նոտարին հետ մէկտեղ, որ կուռք մը կործաներ էր ։

ՍՊԻՆՈԶԱ Բենեդիկտոս Սպանիացի ազգաւ Հրէայ սկսաւ անաստուածութիւն քարոզել Ամստերտամ քաղաքը՝ ջանալով ամէն կրօն փուճը հանելու իբր քաղաքական օրէնք մարդիկներէն հնարած ։ Ուստի կը հայհոյէր, թէ Աստուած չէ անսահման կատարեալ, նիւթն է աստուած և մի միայն գոյացութիւն. որուն տարածութիւնն ու խորհուրդն են եղանակաւորմունք կ'ըսէր, և այլն ։ Որ պատուհասեալ չարաչար սատկեցաւ քառասունըչորս տարուան 'ի Հոլանտա յամի 1677 ։

ՍՊԻՐԻԴԻՈՆ սքանչելագործ հայրապետ էր հովիւ Կիպրացի, որ կինը մեռնելէն ետև ընտրեցաւ եպիսկոպոս Տրիմիթունայ քաղքին իւր զարմանալի առաքինութեանցը համար ։ Մաքսիմիանոսի հալածանաց ատենը դատապարտեցին հանքերու մէջ, հանելով մէկ աչքը. իսկ Աստուած փառաւորեց զինքն որ Նիկիոյ սուրբ ժողովքին հայրապետներուն մէկն եղաւ ուր քաջութեամբ ջատագովեց ուղղափառութիւնը, և պապանձեցուց հեթանոս փիլիսոփայքն ու դարձուց 'ի սուրբ հաւատս ։ Ունէր հոգի մարգարէութեան և շնորհք հրաշագործութեան ․ որ աղօթքով անձրև բերաւ և սովին ատենն ալ առատացուց ցորենը ։ Նաև անմեղ անձ մը մահուանէ ազատելու համար գետին վազքը դադրեցուց , ու շուտով հասաւ ազատեց ։ Ապա սուրբ հայրապետը ուրիշ շատ հրաշքներ ալ գործեց ․ և յետոյ լի արդեամբք փոխեցաւ առ Աստուած 'ի կղզին Քօրֆու ․ ուր կայ մարմինը ամբողջ անապական մինչև հիմա , և անպակաս հրաշքներով կը փառաւորի ։

ՍՏԱՆԻՍԼԱՒՈՍ Քոցքա իշխանորդի Լեհաց՝ մանկութենէ վառած էր աստուածսիրութեամբ , բարեկիրթ և առաքինի խոնարհութեամբ և ողջախոհութեամբ ։ Բայց եղբայրը հակառակելով ասոր կամացն թող չէր տար որ կրօնաւորական կարգ մտնէ ։ Իսկ նա ծածուկ ձգնութեամբ շատ տկարացաւ ու մահուան դուռը հասաւ ․ սակայն սիրտը տուեր էր սուրբ Աստուածածնայ , և միշտ քաղցրիկ մայր իմ կը կանչէր ։ Եւ այսպէս զօրանալով հալածեց դևն իրեք անգամ , որ կատղած շան պէս վրան յարձակեցաւ , ու չկարցաւ սուրբին մօտենալու ։ Ապա երբ կը փափաքէր երանելին վերջին թոշակն առնելու , հրեշտակին ձեռքով հաղորդուեցաւ , նաև արժանի եղաւ տեսնելու Աստուածամայրն Յիսուս գիրկը , որ յորդորեց երթալու Յիսուսեանց կարգը մտնելու ։ Նոյն կէտին մէջ առողջացաւ Ստանիսլաւոս և ձամբայ ելաւ գնաց Հռոմ առ սուրբն Ֆրանչիսկոս Պորճեան ընդհանրական մեծաւոր Յիսուսեանց, որ սիրով ընդունելով առաւ զինքն իրենց կրօնին մէջ։ Իսկ նա բոլորովին վառած աստուածսիրութեամբ իբրև հրեշտակ կրօնաւորեցաւ՝ ճշմարիտ կատարելութեամբ և սրբութեամբ բարի օրինակ ըլլալով ամենուն։ Անչափ բորբոքեցաւ սիրովն Յիսուսի, մինչ զի անդադար կու լար որ երբ պիտի արժանի ըլլայ անճառելի տեսութեան երկնային փառաց։ Եւ ահա այսպիսի հոգևոր սիրով սաստիկ մաշելով վախճանեց առաքինափայլ կեանքը տասնըութ տարուան, և փոխեցաւ երկինքը նորընծայութեան մէջ, ու պայծառացաւ հրաշագործութեամբ, և տօնեցաւ։

ՍՏԱՆԻՍԼԱՒՈՍ Ա. Թագաւոր Լեհաց՝ էր դուքս Լիթուանիոյ, որ վասն իմաստութեան և առաքինութեան պսակեցին արքայ ՚ի Վարսաւիա մայրաքաղաքը յամի 1705։ Նա միանալով Կարոլոսի ԺԲ. Շվետի արքային հետ պատերազմեցաւ Ռուսաց դէմ. բայց յաղթուելով մեծն Պետրոսէ ընկաւ աթոռէն ՚ի 1709։ Եւ շատ ջանաց որ ուրիշ տէրութեանց ձեռքով նորէն Թագաւորէ։ Երբոր ճար չեղաւ, ՚ի 1736 հրաժարեցաւ Թագաւորութենէն ու առաւ Լոռենայի և Պառի դքսութիւնը կրելով միայն անուն Թագաւորի։ Ուր նստելով շատ գեղեցիկ բարեկարգութեամբ փառաւորեց երկիրը մեծամեծ շինուածներով, դպրոցներով, լաւ օրէնքներով, և օգտակար քաղաքավարութեամբ, նաև կրօնասիրութեամբ ըստ ամենայնի մինչև ՚ի մահն յամի 1766, ՚ի հասակի ութսունըինը տարուան։ Ու թաղեցաւ յեկեղեցին Աստուածածնայ իր դշխոյին դիմացը. ուր մահարձանին վրա գրեցին զայս բան

Սուրբ Գրոց. “փրկեաց զիս Տէր 'ի հակառակութենէ ժողովրդոց„։

Խիստ խնամակալ էր գիտնոց և եկեղեցականաց. շարադրած ունէր իմաստասիրական, բարոյական և քաղաքական գրեանք, որոնց մէջ կը փայլին բարեպաշտութիւն, կրօնասիրութիւն և ատելութիւն ընդդէմ անկրօն նորաղանդից։

ՍՏԱՆԻՍԼԱՒՈՍ Բ. Փօնեաթօվսքի էր վերջի թագաւոր Լեհաց, որ Եւրոպայի մէջ բարի անուն ունենալով սիրելի եղեր էր Կատարինէ Բ. Թագուհւոյն Ռուսաց. և անոր ուժով պսակեցաւ թագաւոր Լեհաց երեսունևերկու տարուան յամի 1764։ Սակայն քիչ ատենէն ետև ազգը փոփոխամտութեամբ պաղեցաւ արքայէն, Ռուսներն ալ երես դարձուցին, ու մնաց անճար. ապստամբները չարութեամբ շատ զօրացան. որոնց գլուխ էր անօրէն Կազիմիր Փուլուսքի։ Եւ 'ի 1771 միաբանութեամբ զէնք առին թագաւորին դէմ. և քառասուն զինուոր գիւղականի հագուստով ծածուկ մտան Վարսաւիա և գիշերանց բռնեցին թագաւորը ու հանեցին քաղաքէն դուրս։ Առաւօտը երբոր ժողովուրդն իմացաւ, ելան ամէնքը փնտռելով գտան թագաւորը, զոր աւազակները թողուցեր փախեր էին։ Այս խեղճ վիճակը ամենուն սիրտը շարժեց, առին զինքը բազմութեամբ և ուրախութեամբ տարին Վարսաւիա իր աթոռը, և այլն։ Սակայն Լեհացի իշխանք միշտ անմիաբան ըլլալով առիթ տուին թշնամիներուն, որ միացան ու անոնց թագաւորութիւնը բաժին բաժին ըրին յամի 1772. մեծ մասն Լիթուանիայի առին Ռուսները, Կալիցիայն առին Նեմցէները, կտոր մը տեղ ալ

Ռուսներն, իսկ քիչ մը տեղ ալ Թագաւորին Թողուցին. ուր հանգիստ նստած կը կառավարէր: Ի 1788 երբ Ռուսները պատերազմ բացին Օսմանցոց հետ Լեհերն ալ գլուխ վերուցին Ռուսաց դէմ, որոնք 'ի 1795ին նորէն տիրեցին Լեհաց ու Թագաւորը հրաժարեցուցին ամէն իշխանութենէ: Իսկ Պօղոս Ա. կայսրն Փօնեաթօվսքին կանչեց Փեդրպուրկ 'ի 1796ին ու մխիթարելով իր պալատին մէջ նստեցուց պատուով ինչուան որ 'ի 1798ին մեռաւ վաթսունըվեց տարուան: Եւ այսպէս կատարեցաւ իմաստուն գուշակութիւնը Ստանիսլաւոսի Ա. Թագաւորին վասն անմիաբանութեան Լեհաց. ըսաց թէ լարաբաժին պիտի ըլլանք օտար ազգերէն քիչ ժամանակէն ետև:

Այս է պտուղ դառն երկպառակութեան
  Կործանիչ քաջաց վըսեմ պետութեան.
  Մինչև վատ արանց տիրել տիրողաց
  Ստրնհար լինել վեհ պայազատաց:
Յայս աղէտս անկեալ պերճ Փօնեաթօվսքին
  Վայէ զգարձ բաղդին կորըստեամբ ազգին.
  Հերձիք իշխանաց առիթ խաւարի
  Ը քեղ հայրենեաց և մեծ աշխարհի:

ՍՏԵՓԱՆՆՈՍ նախավկայն կամ առաջին սուրբ մարտիրոսն էր լի շնորհօք և զօրութ̃բ, և եօթանասուներկու աշակերտաց Քրիստոսի մէկը. նաև գլուխ եօթն սարկաւագաց, ձեռնադրեալ առաքեալներէն, կը քարոզէր Քրիստոսի հաւատքը լուսաւորելով Հրեաները: Որոնք նախանձելով բռնեցին ատեան հանեցին, և իբրև հայհոյիչ քարկոծեցին յամի Տեառն 33 կամ 37: Գործք առաքելոց գերահռչակ կը պատմէ սուրբ Ստեփաննոսին հրաշալի աստուածաբանութիւնը, հրեշտակային տեսլեամբ քահանայապետին ատեանը կենալով. և մեծահանդէս նահատակութիւնը յԵրուսաղէմ աղօթելով քարկոծողներուն համար, տեսնելով զորդին Աստուծոյ փառօք ընդ աջմէ Հօր, և այլն։ Ըստ սրբոց Հարց՝ պտուղ աղօթից սուրբ Նախավկային եղաւ դարձն Պօղոսի, որ կամակից էր սպանողաց նորա, և եղաւ անօթ ընտրութեան, և զօրաւոր քարոզ բանին Աստուծոյ անոր փոխան, այլ և սիւն հաստատութեան սուրբ եկեղեցւոյ։

ՍՏԵՓԱՆՆՈՍ Ա. սուրբ Հայրապետն Հռոմայ նստաւ յաթոռ սրբոյն Պետրոսի յամի 257. որ Վաղերիանոսի հալածանքին ատենը ժողվեց յեկեղեցին հաւատացեալներն ու սիրտ կուտար, կը մկրտէր երեխաները և կը ձեռնադրէր արժանաւորները հանդերձ հրաշագործութեամբ։ Ուր բժշկեց նաև Նեմեսիոս իշխանին կոյր ծնած աղջկան աչքերը և ուրիշները, զինքն ալ սարկաւագ ձեռնադրեց, և այլն։ Երբոր այս բաները լսեցին կռապաշտները՝ շատ քահանայ և ժողովուրդ բռնեցին չարաչար տանջանքով նահատակեցին, որոնց նշխարքը սուրբ Հայրապետը թաղեց պատուով։ Մինչև ապա զինքն ալ բռնեցին ու բազմութե̄ տարին կռատունն՝ որ բռնութեամբ խնկել տան կուռքերուն։ Իսկ երանելին երբ ջերմ սիրով աղօթեց առ Աստուած՝ ահագին շարժմամբ կուռքերն ընկան փշրեցան, ու կռապաշտները թողուցին փախան։ Ապա սուրբ քահանայապետն անկեց գնաց յԵկեղեցին պատարագեց ու հաղորդեց ժողովուրդը. և դեռ չէր լմնցած՝ երբ դահիճները հասան հոն, և եկեղեցնայ դուռը կոտրելով մտան ներս, ու գլխատեցին սուրբ հայրապետն Ստեփաննոս. անանկ որ արիւնը խառնուեցաւ Յիսուսի արեանը հետ յամի 260։

ՍՏԵՓԱՆՆՈՍ Բ. Հռոմայեցի ընտրեցաւ Քահանայապետ 'ի 752, և մեծ արթնութբ̃ կառավարեց զեկեղեցին Քրիստոսի անարատ պահելով պատկերամարտ հերձուածողներէն։ Յորդոր գրեց քաջութեամբ Կոստանդինոսի կայսեր Յունաց, որ թողու պատկերամարտութեան մոլորութիւնը։ Նզովեց պատկերամարտից ժողովակը և Կոստանդինոսը. ապա մեծ հանդիսով գնաց 'ի Գաղղիա առ Պիպին արքայ, զօրացուց Իտալիան։ Մինչև այսպիսի առաքինական քաջութեամբ փոխեցաւ առ Տէր 'ի 757։

ՍՏԵՓԱՆՆՈՍ Գ. Սիկիլիացի նստաւ յաջորդ սրբոյն Պետրոսի 'ի 768, և ժողով գումարեց 'ի Հռոմ ընդդէմ պատկերամարտից, և զօրաւոր սահմանադրութեամբ նուաճեց ապստամբները. բայց շուտով հասաւ մահը յամին 772։

ՍՏԵՓԱՆՆՈՍ Դ. Հռոմայեցի նստաւ Պապ 'ի 816, և գեղեցիկ բարեկարգելով զեկեղեցին գնաց 'ի Գաղղիա, և օծեց զԼուդովիկոս արքայն Գաղղիոյ կայսր Հռոմայ։ Ապա մեծ փառքով դարձաւ յաթոռը. բայց մահն ալ շուտով հասաւ, փոխեցաւ 'ի 817։

ՍՏԵՓԱՆՆՈՍ անուամբ ինը քահանայապետ նստան յաթոռ սրբոյն Պետրոսի, որոնք մեծաջան եղան հաստատ պահել սուրբ եկեղեցին և ծաղկեցընել ուղղափառ հաւատքը ամենայն բարեկարգութեամբ և պայծառութեամբ ։ Սրբ․ պտմ․ Բ ։

ՍՏԵՓԱՆՆՈՍ Ունեցի փառաւոր վկայն Հայոց էր Կոկիսոնէ բարեսնունդ և սրբասէր, առաքինի և օրինակ բարի ամենուն ։ Ուստի երբոր Յուլիանոս Ուրացողը հասաւ 'ի Կեսարիա՝ յղեց Սոկրատէս դատաւորն 'ի Կոկիսոն, որ հալածէ քրիստոնեաները ։ Նոյն ատենը Ստեփաննոս ծնողաց և ազգականաց հետ 33 հոգի լեռը փախան․ բայց հայրը վախճանեցաւ ճամբան․ և իրենք գնացին մտան քարանձաւ մը, ուր կար մատուռն Աստուածամօր, և հոն մնացին իրեք ամիս․ ապա երբոր հովիւ մը զիրենք մատնեց, գնացին զինուորներ զիրենք բռնելու․ իսկ Ստեփաննոս ամենուն սիրտ տալով յանձն եղաւ Տիրամօրն ու քաջութեամբ ելաւ դատաւորին առջև․ և միաբան պատասխանեց, թէ մենք պատրաստ ենք վասն անուան Քրիստոսի մահուան և բանտի ։ Ան ատենը մայրն սուրբ Ստեփաննոսի եօթը կուսանքով բանտը դրին․ իսկ Ստեփաննոս և ուրիշները ծեծեցին և քերեցին ։ Ուր նահատակելով Բագրատունի մանուկ մը մեծամեծ հրաշքներ եղան լոյս ծագելով, և այլն․ մինչև հարիւրաւոր անձինք հաւատքի եկան, և նահատակեցան սրով ։ Իսկ սուրբ Ստեփաննոսը իրեններուն հետ մէկտեղ փուռը ձգեցին․ ուր երբոր չայրեցան՝ գլխատեցին յամի 462 ։ Հոն դարձեալ մեծ հրաշքներ ըլլալով շատ հեթանոսներ ալ քրիստոնեայ եղան ու թաղեցին նահատակներուն նշխարքը Ունի քաղաքին մօտ․ անոր համար սուրբ Ստեփաննոս կոչեցաւ Ունեցի ։

ՍՏԵՓԱՆՆՈՍ Ա. Սիւնեցի էր աշակերտ սրբոյն Մեսրոպայ, որ իր աշակերտակից Սիւնեաց եպիսկոպոսին մահուանէն ետեւ ձեռնադրեցաւ անոր յաջորդ եւ զօրացուց աթոռը վարդապետութեամբ եւ ուսմամբ ճշմարտութեան 'ի Դ դարուն ։ Կ'երեւնայ թէ սա յօրիներ է Աւագ օրհնութեանց ութ կարգը 'ի պատիւ յարութեան Քրիստոսի ըստ մտաց տասը մարգարէական օրհնութեանց Սաղմոսին · բայց ըստ ոմանց վառ ձայնին օրհնութիւնը յետոյ Շնորհալին շարադրեր է ։

ՍՏԵՓԱՆՆՈՍ վարդապետ Գետնական էր մեծիմաստ առաջնորդ Կարմիր վանաց, որ գոլով տասնըութ տարւան նորընծայ քահանայ՝ ծաղկեցաւ հոգիաբուղխ քարոզութեամբ ։ Բարսեղ կաթուղիկոս երբ հոն պատահեցաւ՝ ոմանք ամբաստանեցին վրան Ստեփաննոսի թէ մատաղ հասակովը քարոզիչ եղեր է · կաթուղիկոսը հրամայեց անոր, որ ելլէ բազմութեան առջին քարոզ մը տայ ։ Երբոր լմնցուց քարոզը ամէնքը հիացան անոր շնորհալից վարդապետութեանն ու իմաստութեանը վրան ։ Իսկ կաթուղիկոսը հանեց ձեռքի ոսկեզարդ գաւազանն անոր ընծայեց, մատնին ալ մատը դրաւ · ու յաջորդ կիրակին ձեռնադրեց եպիսկոպոս հաստատելով առաջնորդ Կարմիր վանաց ։ Յամի 1105 Գրիգոր վկայասէր գնաց հոն քրոջը թոռներով, ու կանչեց Բարսեղ կաթուղիկոսը յանձնեց իրեն տղաքը · իսկ նա ալ յանձնեց այս Ստեփաննոս առաջնորդին, որ աստուածային իմաստութեամբ եւ ամենայն գիտութեամբ կրթեց զանոնք, որոնք ապա եղան սքանչելի հայրապետք, Գրիգոր Պահլաւունի և ՙՆերսէս Շնորհալի ։ ՙՆաև ասոնց հետ վարժեցուց երկու՝ տղայ Սարգիս մեկնիչ կաթուղիկեայց, և Իգնատիոս մեկնիչ Ղուկասու․ իսկ ինքն նոյն առաքինութեամբ և սրբութ՟ե փոխեցաւ առ Տէր ։

ՍՏԵՓԱՆՆՈՍ եպիսկոպոս Մոկաց Ժ դարուն վասն մեծ առաքինութեանցն Պսակ անուանեցաւ ու իմաստութեամբ առաջնորդեց Ապարանից վանքին ։ Ուր իր քեռին Մանգլատ ընծայեց զսուրբ փայտն կենաց, զոր ուրիշ մասունքներուն հետ զետեղեց ՚ի 982ին իւր շինած Աստուածածնայ տաճարին մէջ հանդերձ մատուռներով ։ Իսկ Թափորը մեծահանդէս կատարեց բազմութեամբ եպիսկոպոսաց, իշխանաց և Թագաւորաց ։ Այս փառաւոր Թափորին մէջ ըլլալով սուրբ Գրիգոր ՙՆարեկացին այսպէս կը գրէ․ “ Ո ամենեսին զորքոցն պարս ունի հաւաքեալ ընդ Թևովք իւրովք՝ իբր զմայր երանեալ ամենայն կենդանեաց՝ Տիրուհին և Աստուածածինն ” ։ Յետոյ այս եպիսկոպոսին խնդրելովը գրեց ՙՆարեկացին աստուածընկալ սուրբ խաչին պատմութիւնը և ՙՆերբողը, և այլն ։

ՍՏԵՓԱՆՆՈՍ Ասողիկ․ Տ․ ԱՍՈՂԻԿ ։

ՍՏԵՓԱՆՆՈՍ Թագաւոր Մաձառաց եղաւ առջի քրիստոնեայ արքայ այն ազգին յամի 997, որ իւր բարեպաշտութեամբն շատ ծաղկեցուց քրիստոնէութիւնը շինելով եկեղեցիներ, վանքեր, դպրոցներ և աղքատանոցներ ։ Վասն զի այնչափ ջերմեռանդն և ողորմած էր, որ՝ շատ անգամ կը վերանար մտքով երկինքն ու կը զմայլէր ։ Խիստ լաւ կրթեց աստուածպաշտութեամբ իւր որդին Եմերիկոսը, նա և ժողովուրդը բարի վարքով և բարեպաշտութ՟ն զարդարեց, մինչև լի առաքինութեամբ և սըրբութեամբ փոխեցաւ յերկնային թագաւորութիւնն 'ի 1038 Աստուածածնայ վերափոխման օրն, որուն շատ ջերմեռանդն էր ։

Այսպէս վեհապետք արքայք նահատակք
Ժառանգ լեալ արդեամբք զվեհն առին պըսակ.
Ի կրկնակի կեանս կրկնակի փառօք
Զքնաղ փայլեցան անպատում՝ բարեօք ։
Քանի՛ հրաշափառ հրճուանք երջանկաց
Գոյզն անցաւորօք զանանցս շահողաց․
Ոհեցին զորկանս 'ի սէր անեղծին
Ամբարձան 'ի փառս անսահման Էին ։

Վ.

ՎԱՀԱԳՆ էր Թագաւոր Հայոց, որդի Տիգրանայ Ա. Հայկազնոյ, 500 տարի Քրիստոսէն առաջ, որ փառաւոր քաջութեան գործքերով նման Հերակլի մեծանուն եղաւ։ Մինչև արձան կանգնեցին իրեն մեծութեանը ու պաշտեցին. որուն վրայ երգեր ալ յօրինեցին փառաւորելով իւր մեծութիւնը, ինչպէս որ կը յիշէ Խորենացի վարդապետն մեր։ Ասոր ցեղէն բազմացան Վահունի քուրմերը, որոնք կը պաշտէին իրենց նախնին Վահագն, որ և դասեցաւ հիւսիսային աստեղատունը անուամբ Հերակլեայ կամ Հերքիւլեայ։ Մակաբայեցւոց գիրքն ալ կ'ըսէ. “Տայր նոցա երեքհարիւր ստատեր 'ի գինս զոհից Վահագնի (յն. Հերակլեայ) պաշտաման„։ Ագաթանգեղոս այսպէս կը գրէ. “Յարուոյն Արամազդայ, յԱնահիտ տիկնոջէ, և 'ի քաջն Վահագնէ„։ Ոմանք զարեգակն պաշտեցին և Վահագն կոչեցին, և այլք զլուսին՝ և Արտեմիս ձայնեցին, և այլն։

Վահագն ահագին քաջափառ արքայ
Հըզօր շահատակ նըման Հերակլեայ.
Մեծացեալ 'ի գործ, բարերար բազմաց
Պատուեցաւ երգովք պաշտեցաւ յազգաց։

Յիշատակ բարեաց անյաղթ վեհազին
Արժան դիւցակերպ գիտողք կանգնեցին.
Թողուլ օրինակ քաջաց առ յապայ
Առաքինանալ գործովք դիւցազնեայ։

ՎԱՀԱՆ Մամիկոնեան Մեծ՝ էր նախարար և դուքս Հայոց, որդի Հմայեկայ մեծին Վարդանայ եղբօրը, քաջագործ և առաքինի նման իր բարեպաշտ նախնեացը։ Որ յամի 481 միաբանելով ուխտապահ նախարարներուն հետ սկսաւ հալածել Հայաստանէն կրակապաշտ Պարսիկներն ու կրակատուները կործանել, որ կանգներ էին ուրացող նախարարները։ Ուստի Պարսիկները բազմութեամբ յարձակեցան 'ի Հայաստան կատաղաբար, ուր Վահան և չորս հարիւր ուխտապահ զօրքը չորս թև բաժնուեցան, և Աստուծոյ ապաւինելով ելան Պարսից դէմ ու անպատմելի քաջութեամբ ջարդեցին թշնամիները, զօրավարը կորուցին. մնացած զօրքն ալ ցիրուցան հալածեցին։ Այս յաղթութեան վրա մեծապէս ցնծալով բարեպաշտ Վահանեանք փառաւորեցին զԱստուած կանչելով. "Յաղթեց զօրութիւն խաչին"։ Պերոզ արքայն Պարսից լսելով կատղեցաւ ու երկաթ զարկաւ Վահանայ Վարդ եղբայրը, որ պատանդ պահեր էր քովը, բայց անիկա հրաշքով ազատեցաւ ու հասաւ անվնաս Վահանին քով։ Պերոզ նորէն շատ զօրքով ղրկեց Միհրան ու վերջը Շապուհ զօրավարը. բայց անոնք ալ յաղթուեցան Վահանէն։ Երբոր Պերոզէն ետև թագաւորեց Վաղարշ եղբայրը խոհեմ և խաղաղասէր, հրաւիրեց իրեն քով Մեծն Վահան, իսկ նա առաջարկեց Պարսից որ նախ՝ թոյլ տան Հայոց որ ազատ պաշտեն զճշմարիտն Աստուած և չհալածեն քրիստոնեաները . երկրորդ՝ պատուեն արժանաւորները և երեսէ ձգեն ուրացողները . երրորդ՝ արդարութեամբ լսեն Հայոց դատաստանները ։ Վաղարշ սիրով ընդունեց Վահանին արդար առաջարկութիւնները գրով և կնքով, և զինքն ալ մեծագոյն պատուով փառաւորեց երբոր գնաց իրեն, վասն զի շնորհեց իրեն սպարապետութիւնն Հայոց, և Մամիկոնեանց տէրութիւնը ։ Նոյնպէս շնորհեց ուխտակից նախարարներուն պատիւ և մեծութիւն ըստ արժեանց ամէն մէկուն . և այսպէս մեծ փառքով ճամբեց զամէնքը ՚ի Հայաստան ։ Իսկ սուրբ հայրապետն Յովհան Մանդակունի մեծ ցնծութեամբ ելաւ Վահանայ առաջին ու Լուսաւորչայ սուրբ նշխարքովն օրհնեց զամէնքն . և գնաց հանդէսով Վաղարշապատ գոհացաւ զԱստուծոյ . իշխաններն ալ հոն ընծայեցին Աստուծոյ առատ նուէրք ու խընդութեամբ դարձան իրենց տունը հանգըստացան ։ Մեծն Վահան միշտ ազգին լաւութեանը համար ջանալով կը ծաղկեցընէր հոգևոր և մարմնաւոր բարեկարգութեամբ, զոր լսելով Վաղարշ շատ ուրախացաւ ։ Ապա յամի 485 հրովարտակով հաստատեց զՎահան Մարզպան, կամ Դուքս Հայաստանու . իսկ նա գնաց առ Յովհան հայրապետ, ու միատեղ գնալով յեկեղեցին մատուցին գոհաբանական աղօթքը . ուր խօսեցաւ երանելին Յովհան գեղեցիկ ճառ վասն քաջալերութեան ուխտապահաց, և զգաստութեան թուլամորթաց . և այսպէս օրհնութեամբ և ցնծութեամբ արձակեց ժողովուրդը . Վահան փառաւորապէս դարձաւ իր պալատը, յետոյ հրամանաւ արքային դրաւ սպարապետ իւր եղբայրն Վարդ ընտիր և կորովի ։ Մեծն Վահան անկէ ետև շրջելով ՚ի Հայաստան վերուց ամէն տեղէն կրակատունները, նորոգեց վանքերն ու եկեղեցիներն դպրոցներով, որոնց վերակացու դրաւ գիտնական վարդապետն Ղազար Փարպեցի Էջմիածնայ վանքը, որ գրեց զպատմութիւնն անոր գործքերուն, և այլն ։ Այսպէս աստուածպաշտութեամբ վարելով իշխանութիւնը երեսուն տարի փառաւորապէս, բարի ծերութեամբ կատարեց ցանկալի կեանքը յամի 510 ․ որուն յաջորդեց մարզպանութեամբ Վարդ եղբայրը ՚ի 511 ։

Վահան վեհափառ քաջ Մամիկոնեան
Վահանաւ կրօնից ջաղխեաց ըզսատան ․
Հրաբորբոք սիրով ծաղկեալ հաւատով
Պսակ փառաց ազգին վեհացաւ հոգւով ։
Ա՛ռ քեզ ապացոյց զվարս ոգեսիրաց
Ճգնեա՛ւ վասն ազգիդ վասն անանց բարեաց ․
Նոյն շնորհք և պսակ և քեզ պահեալ կան
Եթէ քաջ արանց գտցիս համանման ։

ՎԱՀԱՆ Մամիկոնեան Գայլ անուանեալ, ազգականից էր Մուշեղայ իշխանին Տարօնոյ ․ որուն վրա եկան Պարսիկները կորսընցընելու յամի 604 ։ Մուշեղ շատ ծեր ըլլալով յանձնեց քաջ Վահանին պատերազմը և իւր տէրութիւնը ․ վասն զի ինքն անզաւակ էր ։ Վահան խոստացաւ Պարսից Միհրան զօրավարին, որ առանց պատերազմի կամքը կատարէ ։ Բայց ծածուկ իր զօրքը և տեղերը ամըրցուց, ու Պարսկի հագուստով պահապանները շարեց Օձ քաղաքին դրան առջին ։ Պարսիկները երբոր մտան ներս՝ Վահանին պահած զօրքը և քաղաքացիք ելան բոլորն ալ ջարդեցին , Միհրան զօրավարը դուրսն ըլլալով բան մը չիմացաւ ։ Որուն բարեկամ ձեւանալով Վահան գնաց իրեն քաջերովը տեսութիւն ընելու , և նիզակովը զարկաւ սատկեցուց ․ այսպիսի ճամբով և քաջասրտութեամբ շատ երևելի Պարսիկներ ալ կորուց այն կողմերը ։ Մուշեղ լսելով Վահանայ քաջագործութիւնները կը գոհանայր զԱստուծոյ ․ իսկ Պարսիկները քանի անգամ՝ որ զօրք հանեցին Հայոց վրա՝ քաջն Վահան և որդին քաջ Սմբատ զարկին աւրեցին ․ մինչև յուսահատեցան կրակապաշտ թըշնամիները ։ Վահան անհաւատներուն յաղթելէն ետև շատ աւարով դարձաւ Մուշ քաղաքը ․ և իւր իշխանութիւնը յանձնելով քաջայաղթ որդւոյն Սմբատայ մեռաւ բարեպաշտութեամբ յամի 606 ։

ՎԱՀԱՆ Գողթնացի էր որդի մեծ Նախարարին Խոսրովու և տէր Գողթն գաւառի , զոր չորս տարւան գերի ըրին այլազգիք , տարին Ամիրապետին ու Թլփատեցին ։ Երբոր սորվեցաւ մահմետականաց ամէն դպրութիւնը , եղաւ արքունի ատենադպիր և խորհրդական մեծանուն ։ Յետոյ երբ արքունի հրովարտակով գնաց տիրելու Գողթն գաւառին՝ իրեն երկրին , հասկըցաւ իւր հայրենի քրիստոնէական հաւատքին ճշմարտութիւնը ․ ու բոլորով սըրտով դարձաւ 'ի Քրիստոս ․ և սկսաւ ապաշխարել աղօթքով , պահքով և ճգնութեամբ ։ Այլազգիք լսելով ուզեցին զինքը բռնելու ․ իսկ նա քաղքէ քաղաք հալածական երթալով հասաւ Շիրակայ ճգնարանը , վեց ամիս ճգնեցաւ ։ Ապա անցաւ անծանօթ անապատի վանքերը և ուխտատեղերը շրջեցաւ ջերմեռանդութեամբ ։ Վերջը ելաւ ինքնակամ գնաց Դամասկոսի արքունիքը յայտնելով իր քրիստոնէութիւնը , նաև զարմանալի քաջութեամբ Ամիրապետին ատենին մէջ համարձակ հաստատեց հաւատքին ճշմարտութիւնն , ու երկաթ կապանքով բանտը մտաւ ։ Վերջապէս վկայական մահուամբ գլխատեցաւ փառաւոր հանդէսով յամի 737 ։ Ուր գտնուելով Թէոփիլոս Յոյն զօրական մը ամփոփեց երանելւոյն մարմինը եկեղեցւոյ մէջ ․ և եղան շատ մեծամեծ սքանչելիք սրբոյն տապանէն , որ տօնեցաւ , ու գեղեցիկ շարականով պատուեցաւ ։

Վեհ արքայատիպ հրաշափառ իշխանք ,
Շնորհալից ընտրին քաջազն Վահանեանք ,
Հաւատով , յուսով , զինու սուրբ Խաչին
Ոեղջիւր անկրօնից մանրեալ փշրեցին ։
Եդին ՚ի կշիռ զկեանս և զարիւն անգին
Ի սէր Քրիստոսի ւ՚ ՚ի փրկանս ազգին ․
Շըքեղ պերճացան շնորհօք գերափառ
Ցնծան աստ և անդ յաւէժ անըսպառ ։

ՎԱՀԱՆ կաթողիկոս Հայոց էր իշխանորդի արքեպիսկոպոս Սիւնեաց ընտրեցաւ հայրապետ յամին 965 ։ Սա առաջուց տեղեակ ըլլալով ճշմարտութեան Քաղկեդոնի սուրբ ժողովին , անկէ ետև սկսաւ յայտնի քարոզել , և բանիբուն քաղցր վարդապետութեամբ շտկել ամենուն միտքը ։ Բայց ոմանք տգէտ վարդապետներէն նախանձով խռովութիւն հանեցին հայրապետին դէմ ու ձգեցին աթոռէն հինգ տարիէն ետև ։ Իսկ նա քաշուեցաւ Վասպուրական աշխարհը Աբուսահլ թագաւորին քով, ու մեծապէս պատուասիրեցաւ ամենէն ըստ պատմութեան սուրբ Լամբրոնացւոյն : Ապա տասնըհինգ տարի հայրապետութիւն ընելէն վերջը վախճանեցաւ առաքինութեամբ և թաղեցաւ հոն Ձորոյ վանքին մէջ յամի 980 :

ՎԱՀՐԱՄ սպարապետ Հայոց էր որդի մեծ իշխանին Պահլաւունի Գրիգորի Լուսաւորչայ ցեղէն : Ունէր երկու եղբարք ալ Վասակ և Տիգրան . Վասակ եղաւ սպարապետ Բ. Սմբատ արքային , որուն որդին էր իշխանն Գրիգոր Մագիստրոս , և ինքն նահատակ եղաւ : Վահրամ հոգեսէր ըլլալով շինեց եկեղեցիներ և վանքեր , նաև շատ երևելի քաջագործութիւններ ալ ըրաւ . մանաւանդ երբոր սպարապետ եղաւ Յովհաննու արքային 'ի 1021 : Ապա յամի 1040 երբ Մոնոմախոս կայսրն զօրք հանեց որ տիրէն Անի քաղաքին , Վահրամ ազգասիրութեամբ ընտրեց առաւ Հայոց զօրքն ու զարկաւ չարաչար հալածեց Յոյները , որոնք անիրաւութեամբ կը ջանային յափշտակելու Անի , և Հայոց իշխանութիւնը վերցընելու : Յետոյ ժողվեց իշխաններն ու գնաց Պետրոս կաթուղիկոսին օծել տուաւ թագաւոր զԳագիկ Բ. Յովհաննու եղբօրորդին՝ 'ի 1042 : Ուստի Վահրամ իբր թագաւորահայր հոգացող եղաւ , ու չթողուց որ Գագիկ երթայ առ կայսրն , որ կը ստիպէր զան իրեն գալու : Վահրամ ծերութեան ատեն պատերազմելով այլազգեաց հետ հաւատքի համար հալածեց անհաւատները , բայց ինքն ալ մատնուեցաւ թշնամեաց ձեռքը և վկայական մահուամբ նահատակեցաւ 'ի 1047 : Իսկ մարմինը տարին հանգուցին Սանահնի վանքը, ուր գերեզմանին վրայ երևցաւ հրաշալի լոյս եօթն օր։

ՎԱՂԱՐՇԱԿ Ա․ Նստաւ թագաւոր Հայոց Արշակունեաց ցեղէն ձեռամբ իր եղբօրն Արշակայ մեծազօր արքային Պարսից, որ պատուիրեց իրեն ընդարձակել տէրութիւնը մինչև 'ի Կիլիկիա ըսելով․ "Որչափ միտք քո և քաջութիւն հասանեն․ զի սահմանք քաջաց զէնն իւրեանց․ որքան հատանէ այնքան ունի"։ Վաղարշակ 149 տարի Յիսուսէն առաջ թագաւորեց Մծբին քաղաքը նուաճելով ապըստամբ ազգերը Կապադովկացւոց, և Պոնտացւոց, և այլն։ Այս խոհեմ արքայն Մարիբաս Ասորւոյն ձեռքով Հայոց պատմութիւնն գրել տուաւ և կարդալով սկսաւ բարեկարգել ազգն ու տէրութիւնը վայելչապէս։ Բագարատ իշխանը դրաւ թագադիր արքայից․ որուն ցեղը կոչեցաւ Բագրատունի։ Զօրքին վրայ և տէրութեանը ամէն գլխաւոր գործոց կառավարութեան պաշտօնատէրներ դրաւ և հաստատեց հարիւր քսան նախարարութիւն։ Դարձեալ բարեկարգեց կրօնքի պաշտօնն ալ, կանգնելով կուռք արևու և լուսնի, և իր նախնեաց արձանները մեհենի մէջ՝ քուրմերուն ալ գլուխ և քրմապետ կարգեց Վահունեաց, կամ Վահագնի ցեղը։ Նորոգեց Շամիրամին քաղաքը, և երբոր որդիքը բազմացան, զանդրանիկն Արշակ քովը պահեց, ու մէկալնոնք ղրկեց Հաշտենից կողմերը։ Այսպէս իմաստուն կառավարութեամբ քսանևերկու տարի թագաւորելէն ետև մեռաւ Մծբին քաղաքը 127 տարի Քրիստոսէն առաջ։ Անկեց ետև նոյն ցեղէն նստող թագաւորները Արշակունիք անուանեցան, և երկար ժամանակ պահեցին Մեծիմաստ Վաղարշակին յիշատակը։

Վաղարշակ չքնաղ պետ դիւցազնական
Ջան եդ վառ պահել ըզճրագ բանական.
Պերճացաւ փառօք 'ի լուսոյ անտի
Յիշատակ բարեաց եթող աշխարհի։
Նա վիրկ 'ի լուսոյ աստուածեան բանին
Գործեաց սիրալիր ըստ բնատուր շնորհին.
Իսկ դու յանձառ շնորհաց փայլեալդ 'ի հոգի
Քանի՞ պարտիս գոլ պերճ առաքինի։

ՎԱՂԵՆՏԻԱՆՈՍ կամ ՎԱՂԵՆՏԻՆՈՍ էր Եգիպտացի փիլիսոփայ Պղատոնական Բ դարուն, որ քրիստոնեայ ըլլալէն ետև ճարտարախօսութեամբ անուանի եղաւ։ Բայց երբոր արժանի չեղաւ եպիսկոպոսութեան ըստ փափաքանացն՝ կատղելով սկսաւ քարոզել Գնոստիկեանց պէս թէ կան երեսուն յաւիտեանք կամ կիսաստուածք և շատ իմացական ոգիք ըստ երկու սեռից մէկզմէկէ ծնած իրեք կարգ որոշելով։ Առաջին կարգը կը կոչէր Հայր, որ ծնաւ զհոգի և զճշմարտութիւն. որոնցմէ ծնան կ'ըսէր ուրիշները, ուր ետքի ծնունդք եղան Քրիստոս և Հոգին սուրբ, որ միացին անզաւակ։ Եւ այսպիսի յիմար մոլորութեամբ կ'ըսէր խաչեալ զԵրրորդութիւնն. իսկ մարմինն Յիսուսի երկնքէն բերած ու անցած ընդ կոյսն խողովակի նման։ Ուրացաւ զյարութի, ժուժկալութիւն և բարոյական առաքինութիւն. իսկ իւր շինած չաստուածութիւնը անուանեց փլէռօմա, այս ինքն բազմութիւն։ Ասոր հետևողները բազմացան 'ի Գաղղիա, և կոչեցան Վաղենտինեանք. բայց սուրբն

Եփրանոս, և այլ սուրբ Հարք զանձինքը դատապարտեցին գրով, և այլն:

ՎԱՂԵՐԻՈՍ, Կանդիտոս, և Ակիւղաս էին Տրապիզոնցի իշխանք, որոնք Դիոկղետիանոսի հալածանքին ատենը պահուած էին Մաղտեաց լեռներուն մէջ: Բայց Լիսիաս կուսակալ դատաւորն ընկաւ ետևներէն գտաւ ու շատ ջանաց որ հաւատքէ հանէ: Երբոր ճարը չգտաւ, փակեց զիրենք Պիդուս բերդը Լազիկիոյ, քաղցած ծարաւ. և տեսնելով անոնց ուրախութիւնը սկսաւ չարչարել ծեծով և հրով այնչափ, մինչև յուսահատեցան դահիճներն ու նորէն բանտը դրին սուրբերը: Այն ատեն բռնեցին Եւգինէոս անուանի իշխանն ու տարին կռատունն՝ որ երկրպագել տան կռոց: Իսկ երանելին աղօթելով առ Աստուած, կուռքերն ընկան ջարդեցան. ուստի կռապաշտները սոսկալի կատաղութեամբ չարչարեցին սուրբն ու տարին միւս երեք վկայից քով բանտարկեցին: Ապա վառեցին 'ի Տրապիզոն մեծ կրակ և սուրբերը մէջը ձգեցին. բայց երբ բոցը չվնասեց անոնց՝ շատ կռապաշտներ հաւատացին Քրիստոսի: Իսկ բռնաւորը խայտառակեալ սրով նահատակեց հրաշագործ մարտիրոսները:

Ուստի առ 'ի պատիւ նոցա կանգնեցին քարաշէն պայծառ վկայարան անուամբ սրբոյն Եւգինէոսի Տրապիզոնի գեղեցիկ բլրին վրա բերդէն դուրս, և հիմա մզկիթ է, զոր Այլազգիք կ'անուանեն "Եէնի Ճումայ Ճամիսի":

ՎԱՂԷՍ Փլաբիոս արևելեան կայսր, եղբայր Վաղենտինիանոսի Ա, նստաւ 'ի Պօլիս յամի 365: Որ նախ ջանաց տարածել քրիս-

տոնէական հաւատքը. ետքը երբոր ընկաւ Արիոսեանց աղանդը՝ եղաւ չար հերետիկոս հալածող ուղղափառաց։ Մանաւանդ չարաղանդ կնկանը գրգռելովը մեծ հալածանք հանեց ուղղափառութեան դէմ՝ հալածելով սուրբ հայրապետները. աքսորեց մեր սուրբ Ներսէսն ալ, եւ Մելիտոս հայրապետն Անտիոքայ, եւ այլն։ Բայց երբոր ուզեց գրել սուրբ Բարսղին ալ աքսորանքը, հրաշքով գրիչը կոտրեցաւ մատուըներուն մէջ. ասոր համար սարսափելով կը վախնար սուրբէն։ Անկէ ետեւ շատ ձախորդութեանց մէջ ընկաւ. եւ երբ 'ի 378ին կը պատերազմէր, չարաչար յաղթուեցաւ Լոտրէնէի մօտ, եւ վիրաւորեալ ընկաւ գեղացիի մը խուց. եւ հոն երեցին զինքը, յայտնի պատժուելով աստուածային արդարութեամբ։ Որուն յաջորդեց սուրբ Թէոդոս կայսրն մեծ, ու ամէն աքսորած սուրբերը ետ դարձուց։

ՎԱՂԷՍԵԱՆՔ *էին չար հերետիկոսք Գ. դարուն, որոնք հետեւելով աղանդաւոր Վաղէսի արաբացւոյն՝ պիղծ մոլորութիւններ կը քարոզէին. նաեւ փրկութեան հասնելու համար յիմարութեամբ թող կուտային իրենք զիրենք ներքինի ընելու։ Որոնց դէմ գումարեցաւ ժողով Աքայիա յամին 250, ուր եւ նզովեցան։ Արաբացիք ալ նոյն դարուն մէջ սկսան շաղփաղփել, թէ բանական հոգին մարմինին հետ մեռնի ու մարմինին հետ յարութիւն կ'առնէ իբր ապականացու։ Ասոնց դէմ ալ եղաւ ժողովն Արաբիոյ։*

ՎԱՆԱԿԱՆ *Յովհաննէս վարդապետ Տաւուշեցի՝ էր ուշիմ աշակերտ մեծիմաստ Մխի-*

թարայ Գօշի, որ մանկութենէն ուսումնական և աստուածասէր ըլլալով մտաւ Գետիկայ վանքն ու առաքինազարդ հանդիսացաւ ։ Ուստի քսանամեայ քահանայ օծուեցաւ հոն՝ ապա բարձրանալով յաստիճան վարդապետութե՟ կանգնեց Խորանաշատ վանքն և ուրիշ վանքեր ալ յանապատն ու աշկերտներով և աբեղաներով լեցուց․ զորոնք միշտ ուսմամբ և առաքինութեամբ կը հրահանգէր 'ի սէրն Աստուծոյ ։ Իսկ երբոր Թաթարները կոխեցին Հայաստան՝ շատ նեղութիւն քաշեց Վանական վարդապետ, մինչև գերի ընկաւ ձեռուըննին 'ի 1236. և ապա ազատեալ գնաց Խորանաշատ վանքն ու գրեց այս պատմութիւնը ։ Ուր անդադար ճըգնելով սրբութեամբ և խիստ վարքով, նաև գրելով և սորվեցընելով ճշմարիտ վարդապետութեամբ՝ մականուանեցաւ Վանական ։

Գրեց գերապանծ Ճառեր, և ժողովական նամակ հոգելից 'ի վերայ բղխման Հոգւոյն սրբոյ 'ի Հօրէ և յՈրդւոյ խորունկ իմաստով և զօրաւոր պատճառներով և սրբոց վկայութ՟բ ։ Սորա հրամանով յօրինեց տէր Իսրայէլ իւր ընտիր յայսմաւուրքը ։ Իսկ Վարդան վարդապետ վասն Վանական վարդապետին գրուածոյն այսպէս կը պատմէ․ “Ո հարիւրապատիկն աստէն թողեալ... 'ի գիրս գանձուց եկեղեցւոյ, զորս ամբարեաց 'ի շնորհացն Աստուծոյ և 'ի յստակ մտաց ծննդականաց” ։ Այսպէս Վանական վարդապետ յետ պէսպէս առաքինի վաստակոց փոխեցաւ առ Աստուած եօթանասուն տարւան յամի 1251, և թաղեցաւ փառօք իւր վանքն Խորանաշատ․ և յիշատակը գրուեցաւ Յայսմաւուրաց մէջ ։

Վանական րաբուն վեհ աստուածարեալ
Գերապանծ բանիւ ոգւով շնորհափայլ.
Եթող համբակաց յիշատակ բարեաց
Գրուածս հոգելից, գործս սքանչելեաց։
Սորա ձիթենիք անկեալք 'ի տան Տեառն
Լապտերք գեղափայլք գաւթին տէրունեան.
Հրաշալի լուսով զոգիս պճնեցին
Ուսմամբ և շնորհօք 'ի փառս ամբարձին։

ՎԱՉԱԿԱՆ արքայ Աղուանից էր որդի Վաչէի արքային Հայկայ ցեղէն, առաքինի և երկիւղած. որ շատ բարեկարգութիւն ըրաւ նորոգելով սուրբ տեղերը և բերդերը, և այլն. ժողով ալ գումարել տուաւ 'ի Պարտաւ, ուր սահմանեցան քանի կանոնք վասն ուղղութեց։ Եւ յամին 488 ջանացաւ գտնել սուրբ Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսին նշխարքը, որ ըստ աւանդութեան հանգուցեալ էր յեկեղեցին 'ի փոքր Սիւնիս։ Ուր գնաց թագաւորը ժողովրդով հանդերձ ամենայն ջերմեռանդութեամբ. նոյն գիշերը յայտնեց Աստուած զայն գանձը. և երգելով Փառք 'ի բարձունս՝ հանեցին ոսկորները ու անոյշ գինիով լուացին։ Որուն վրայ թագաւորը կանգնեց եկեղեցի. ու մէկ մասն նշխարաց դրաւ հոն. մէկ մասն ալ հետը կը տանէր վասն հրաշագործութեան։ Անկէ ետև սահմանեցին որ տարին երկու անգամ տօն կատարուի սրբոյն Գրիգորիսի կաթուղիկոսի։ Իսկ ինքն բարեպաշտ արքայն Վաչական այսպիսի աստուածսիրութեամբ կատարեց առաքինի կեանքը բարեպէս։

ՎԱՐՎԱՐԻԱ կոյսն էր մէկ հատիկ դուստր Դիոսկորոսի հեթանոս իշխանին Արեգ քաղաքէ Մաքսիմիանոսի ժամանակը ։ Անոր զարմանալի գեղեցկութեանը համար հայրը շինեց բարձր աշտարակ մը , և հոն բնակեցուց աղջիկն որ մարդ չտեսնէ զինքն ․ բայց նա ծածուկ քրիստոնեայ ըլլալով շատ ուրախ եղաւ առանձնութեանը վրայ միշտ մտածելով աստուածային բաները և հոգւոյն փրկութիւնը ։ Ուստի երբոր հայրը կարգել ուզեց Վառվառիա կոյսն , նա հրաժարեցաւ կերպ կերպ պատճառներով ։ Հայրը աշտարակին քով բաղնիք մը շինել կուտար , սուրբ կոյսը տեսաւ որ երկու պատուհանով է , հրամայեց որ իրեք ըլլայ ․ և երբ հարցուց հայրն պատճառը , նա համարձակ վկայեց թէ Յանուն ամենասուրբ Երրորդութեան շինել տուի իրեք պատուհան միաչափ հաւասար ․ յետոյ մօրը պալատն ալ մտաւ բոլոր կուռքերը կործանեց ։ Դիոսկորոս երբ հաստատ իմացաւ աղջկանը քրիստոնէութիւնը՝ յուսահատեալ կատղեցաւ , ու մատնեց կոյսը դատաւորին ։ Իսկ անգութ դատաւորը որչափ աւելի տանջեց վկայուհին , նա այնչափ զօրանալով անվախ պահեցաւ աստուածային կարողութ՟ ։ Բայց քարասիրտ հայրը դիւահարեալ բռնեց ձեռքովը կտրեց անարատ կուսին գլուխը ու զոհ ըրաւ Տեառն յամի իբր 300 ։ Նոյն ատենը երկնքէն կրակ ընկաւ՝ այրեց անողորմ հայրն ու դատաւորը ․ Իսկ նշխարքն ամփոփեցան պատուով , և անպակաս հրաշքով ծաղկեցան ։

ՎԱՍԱԿ Պահլաւունի Նահատակ էր հայր Գրիգորի Մագիստրոսին , քաջ սպարապետ Սմբատայ Բ․ Բագրատունի արքային ։ Սա մեծանուն հանդիսացաւ թէ անյաղթելի քաջագործութեամբ և թէ բարեպաշտութեամբ ․

շատ տեղ վանքեր կանգնեց եկեղեցիներով, ինչպէս մեծագործ Մարմարաշէն վանքն, և այլն ։ Սասակ առաքինի խաղաղասիրութեամբ միշտ կը ջանար իշխաններուն և Թագաւորներուն մէջէն կռիւը վերցընելու, և ասով մեծ օգուտ և շինութիւն ըրեր էր ազգին ։ Տուղրիլ սկիւթացին երբոր բազմութեամբ կոխեց Հայաստան, ու գերիները կը նեղէր՝ որ ուրանան հաւատքը այրելով եկեղեցիները, և այլն, Սասակ Ողջնի բերդին մէջ չդիմացաւ, հրաւիրեց ազգին քաջերն որ ինքնակամ երթան հետը հաւատքի համար արիւն թափեն . մէկէն հինգհարիւր քաջ ժողվեցան քովը, որոնցմով ելաւ Տուղրիլին դէմ առանց սպասելու, նախ մտաւ վանք մը խոստովանելով հաղորդուեցաւ, յետոյ յարձակեցաւ Սկիւթացւոց վրա . ուր իրեքհարիւր հոգի անոնցմէ ջարդելով հասաւ Տուղրիլին բանակը ։ Իսկ իր մարդիկը տեսնելով թշնամեաց անթիւ բազմութիւնը սկսան վախնալ ։ Ան ատեն քաջն Սասակ յուսալով յաստուածային անճառ զօրութիւնը կը սրտապնդէր զամէնքը ։ Հոն յանկարծ ելաւ ահագին Սկիւթացի հսկայ մը և առաջ կանչեց Հայոց զօրավարը . երբ իշխաններն կը սարսափէին անկէ, Սասակ արութեամբ ելաւ դիմացն ասելով . “Ելից Աստուծով իմով, և հարից զնա իբրև զԳողիաթն Դաւթի„ ։ Սկիւթացին մէկէն յարձակեցաւ վրան, իսկ քաջն Սասակ հասուց սուրը գլխուն ճղքեց ու գետինը զարկաւ ։ Սասակեանք տեսնելով զօրացան ու մտան թշնամեաց բանակը ցիրուցան ըրին ։ Երբոր Սասակ դարձաւ իր օթեվանը և կ՚աղօթէր, թշնամիներէն մէկը հոն պահուած ըլլալով զարկաւ քարով գլուխը վիրաւորեց. իսկ երանելին փառաւորելով զԱստուած կատարեցաւ. և ասոր համար Նահատակ մականուանեցաւ մեր գրեանց մէջ:

Նորահրաշ մրցմամբ վեհք յառաքինեաց
Ի սէր հաւատոց ու՛ անձառ աւետեաց,
Յանձն առին զարկածս անբաւ աղէտից
Զօրացան հոգւով ըստ աննիւթ էից:
Այս է անթառամ պսակ համբերողաց
Զոր խոստացեալ Տէր մրցանակ շնորհաց.
Որ կայ ցրվախճան աննահանջ տենչմամբ
Հարեալ զթշնամիս վեհանայ փայլմամբ:

ՎԱՍԻԼ Ա. էր մեծանուն կայսր Յունաց Հայոց Արշակունեաց ազգէն, որդի հասարակ մարդու մը. բայց խելքով և զօրութեամբ ընտիր: Ուստի քաջութեամբ և բարեպաշտութեամբ առաջ երթալով մտաւ թագաւորական պալատը, և զօրանալով քաջագործութեամբ՝ կորուց Միքայէլ կայսեր թշնամիները: Մինչև կայսրը օծել տուաւ զինքը իրեն գահակից յեկեղեցին սուրբ Սոֆիայ յամի 866: Միքայէլ մոլի և անողորմ մարդ ըլլալով ատելի էր ազգին. իսկ Վասիլ առաքինի և բարեսիրտ, և միշտ կը խրատէր որ զգաստանայ Միքայէլ. բայց նա ոխալով կը ջանար կորսընցնել զարդարը: Այս բանս որ իմացան իշխանները՝ գիշերանց գնացին անկողնուն մէջ սպաննեցին ըզկայսրը 'ի 867. և միւս օրը միաբան տարին Վասիլը նստեցուցին կայսերական աթոռն ու աղաղակեցին ցնծութեամբ մեծաւ "Կեցցէ տէր մեր Վասիլ ինքնակալ,,: Վասիլ ան ատենը մէկէն ձեռք զարկաւ քաղաքական և զինուորական բարեկարգութեանց. նոյնպէս կարգուարեց հոգևորական գործքերը կանգնելով եկեղեցիներ , վանքեր , դպրոցներ , և այլն ։ Իր Թոռը Կոստանդին Պորփիւռոժէն կը գրէ թէ Կատարեցաւ տեսիլքը սուրբ Սահակայ Պարթևին . զի ահա իմ պապս ելաւ յազգէն Արշակունեաց Թագաւոր Հայոց իրեքհարիւր յիսուն տարիէն ետև , և այլն ։ Վասիլ կայսրը ըսելով թէ Բագրատունի նախարարներն էին Թագադիր Արշակունի ազգային՝ խնդրեց Աշոտէն Ա . որ ղրկէ իրեն փառաւոր Թագ մը . ան ալ կատարեց կամքն ու եղան մտերիմ և սիրելի իրարու ։ Վասիլ շատ մեծամեծ յաղթութեանց և բարեկամութեանց ետև գրեց որդուն Լևոնի խրատական համառօտ ճառ մը . ուր կը դնէ այս գեղեցիկ խրատը հայրական . " Ունիջիր զանկեղծաւոր հաւատս ու վարդապետութիւնս կրօնի . Նոքին լիցին հանապազ կանոն վարուց քոյ ։ Հաւատք են նախաշաւիղ ամենայն բարեաց , որք սրբեն զգործս մեր զամենայն , և ընծայեն առաքինութեան զյետին աստիճանն կատարելութեան ,, ։ Պանծալի կայսրն Վասիլ այսպիսի բարեպաշտութեամբ Թագաւորեց տասնըինը տարի , և մեռաւ որսի մէջ եօթանասունըչորս տարուան 'ի 886 ։

ՎԱՍԻԼ Բ . կայսր Յունաց էր Թոռն Թոռին մեծին Վասլի Ա . որ Թագաւորեց քսան տարուան 'ի 976ին , անձն առաքինի և բարեսէր . որուն գահակից եղաւ իրեն եղբայրը Կոստանդին ։ Սա քաջութեամբ և բարեպաշտութեամբ յաղթեց ամէն Թշնամեաց Հագարացւոց , Բուլղարաց և Եգիպտացւոց , որուն ձեռնտու եղան Հայերն ալ ։ Որ և պատերազմին մէջ ուխտեր էր որ եթէ յաջողի յաղթութիւնը՝ կրօնաւորի զգեստ հագնի · անոր համար ծիրանի զգեստին տակէն սքեմ կը հագնէր՝ հրաժարելով իր դշխոյէն ալ ։ Պետրոս Գետադարձ այս բարեպաշտ կայսեր առջին ջրօրհնէնքին հանդէսը կատարեց Տրապիզոնի գետին վրա ու ջուրը դարձուց կամ կայնեցուց ։ (Տե՛ս 'ի կարգին, Պետրոս ։) Վասիլին բարեսիրութիւնն ու ողորմածութիւնը՝ շատ կը գովեն պատմիչները զարմանալով · և պարծանք Հայոց կ՚անուանեն վասն ազգասիրութեանը և բարեպաշտ գործքերուն ։ Մեծապէս ծաղկեցուց վանքերը , եկեղեցիները , դպրոցներն ու հիւանդանոցները · որով ինքն ալ ծաղկեցաւ լաւութեամբ թագաւորելով յիսուն տարի փառաւորապէս · և ապա վախճանեցաւ աստուածսիրութեամբ եօթանասուն տարւան 'ի 1024 ։ Անոր օրը բերին մասն կենաց փայտին Յունաստանէն և հանգուցին փառաւոր հանդէսով Մոկաց գաւառը Ապարանից վանքին մէջ · անոր համար կոչեցաւ Խաչ Ապարանից , ինչպէս որ Գեղեցիկ կը գովէ սուրբն Գրիգոր Նարեկացի ։ Տ · Մանդալատ ։

Բարեշուք տիրողք ծըրից աշխարհի
Ճոխացան շնորհօք գործով հրաշալի ·
Որչափ գերափառ փառօք պերճացան
Այնչափ հեզ խոնարհ յԱստուած միացան ։
Վեհութիւն և փառք բարեբաղդ վիճակ
Աստուածպաշտութե՟ երբէք չեն ներհակ ·
Քանզի աննախանձ շնորհք Երկնաւորին
Կրկնակի պսակէ զպերճ առաքինին ։

ՎԱՍԻԼ կամ **ԳՈՂ** Վասիլ Հայազգի իշխան Մարաշու, որ քաջութեամբ և յանկարծ զարնելով կը խորտակէր թշնամիները, անոր համար Գող կոչեցաւ: Այս մեծամեծ յաղթութեամբ ոչ միայն տարածեց իրեն իշխանութիւնը, այլև ձեռնտու ըլլալով Ռուբինեանց զօրացուց ազգը. և 'ի 1098 օգնական եղաւ խաչակիր զօրաց ալ: Նա և հրաւիրեալ պատուեց զԳրիգոր Վկայասէրը ծերութեան ատեն, որ և քովն վախճանեցաւ՝ առաւ օրհնութիւնը: Երբ յամի 1108 Պարսիկներն եկան Վասիլ իշխանին վրայ բազմութեամբ, չարաչար զարկաւ վռնտեց ու բոլոր քրիստոնեայ գերիներն ազատեց, ղրկեց իրենց տեղը բարեսիրութ̃բ: Վասիլ շատ անգամ այսպիսի քաջագործութեամբ անուանի եղաւ ու դողացուց թշնամիները: Ի 1112 հասաւ վախճան այս քաջայաղթ իշխանին և մեռաւ Բարսեղ կաթուղիկոսին առջևը. որուն նախ տուաւ հազար դահեկան հողադրամ, պատարագցու և ողորմութիւն. և այնպէս բարի մահուամբ փոխեցաւ 'ի Տէր:

ՎԱՍԻԼՈՒՀԻ մատաղ կոյսն էր Նիկոմիտցի զաւակ քրիստոնէից որբ մնացած ինը տարուան. որ դիւամոլ Դիոկղետիանոսի ատենը համարձակ կը պաշտէր զՔրիստոս: Ասոր մատնեցին դատաւորին ատեանը, և ինչ հարցմունք որ ըրին, այնպէս անվախ կը պատասխանէր քաջութեամբ դաւանելով զԱստուած և նզովելով կուռքերը: Մինչև զարմացան հեթանոսներն ու չարաչար ծեծեցին, և կրակով ալ փորձեցին. յետոյ կատղած գազաններուն առաջը ձգեցին: Երբոր սուրբ կոյսն ամենէն ալ ապրեցաւ աստուածային զօրութեամբ, կռապաշտները յուսահատելով ազատ թողուցին զինքը ։ Իսկ երանուհին ելաւ բարձր վիմին վրա . ու բորբոքեալ սիրով և ջերմեռանդութեամբ պաղատելով աւանդեց մաքուր հոգին առ Աստուած . գերեզմանէն ալ միշտ հրաշքներ կ՚ըլլային ։

ՎԱՐԴ էր եղբայր Մեծին Վահանայ և Մարզպան Հայոց , որ յամի 479 տարին Պերոզ արքային Պարսից իբր պատանդ . և երկու տարիէն ետև բանտը դրին կապանօք ։ Սակայն զարմանալի հրաշքով ազատեցաւ ու գնաց առ Վահան եղբայրն , որուն համար ամէնքը ցընծութեամբ լեցուեցան փառաւորելով զԱստուած . և եղաւ մեծ պարծանք հաւատացելոց ։ Վարդ միշտ նիզակակից և ձեռնտու եղաւ եղբօրը . իսկ Վահան երբոր Մարզպան եղաւ Վաղարշ արքայէն , Վարդն ալ դրաւ սպարապետ զօրաց 'ի 486 ։ Կաւատ արքայն ալ միշտ զինքն հետը պատերազմի կը տանէր . և երբոր առին Ամիդ քաղաքը , Վարդ ազատեց քրիստոնեաները կոտորածէն ։ Կաւատ դրաւ զՎարդը Մարզպան Հայոց՝ Վահանին մահուանէն ետև 'ի 512 ։ Ապա չորս տարիէն ետքը նախանձոտներուն դրդութեամբ հանեց , որ մեռաւ օտար երկիր . իսկ մարմինը տարին թաղեցին 'ի Տարօն ։

ՎԱՐԴԱՆ Մամիկոնեան սուրբ նահատակ էր մեծ նախարար և թոռն սուրբ Սահակայ Պարթևին , որուն քով վարժեցաւ իմաստութեամբ և առաքինութեամբ իւր Հմայեակ և Համազասպեան եղբարցը հետ ։ Յամի 420 սուրբն Սահակ ղրկեց զՎարդան սուրբ Մեսրոպէն հետ առ կայսրն Թէոդոս Փոքր՝ նամակով հանդերձ խնդրելու իշխանութիւն վասն հալածելու հայ ժողովուրդը Յունաց բաժնին մէջ։ Իսկ կայսրն ոչ միայն կատարեց խնդիրքը մեծաւ պատւով, այլ և Վարդանը դրաւ Ստրատելատ Հայոց։ Որ յետոյ գնաց սուրբ Սահակին հետ 'ի Պարսկաստան, ու Վռամ արքայէն կրկին հաստատուեցաւ Սպարապետ Հայոց և իշխանապետ Մամիկոնեանց 'ի 432։ Ապա 'ի 450 Յազկերտ Բ. մոխրապաշտ արքայն հանեց սոսկալի հալածանք մը, և կանչեց Վարդանը նաև գլխաւոր նախարարները ահագին սպառնալով, կամ կրակապաշտ ըլլալ, և կամ կորսուիլ բոլոր ընտանեօք։ Որուն պատասխան տուաւ Մեծն Վարդան, թէ անհնարին է այդ բանը. և իմաստուն պատճառներով ալ ցցուց իրենց այնչափ հաւատարիմ ծառայութիւնը Պարսից տէրութեան, և այլն։ Բայց անօրէն Յազկերտ կատղելով երդուընցաւ որ բոլորն ալ պիտի կորսընցընէ թէ որ երկրպագութիւն չընեն արեգական։

Այս սոսկալի նեղութեան մէջ իշխան մը մեղքընալով կը համոզէր որ վեր 'ի վերանց թագաւորին կամքը կատարեն, ու երթան Հայաստան պաշտեն զքրիստոնէութիւն։ Այս բանիս շատ դէմ կեցաւ Վարդան. բայց ուրիշները հաւանելով խօսք տուին Յազկերտին՝ որ մեծ ուրախութեամբ ճամբեց զանոնք, հետերնին ալ դրաւ եօթնհարիւր մոգ որ երթան Հայոց կրակապաշտութիւն սորվեցընեն։

Երբոր ասոնք Հայաստան հասան՝ բոլոր ազգը տակն ու վրա եղաւ. ապա իմանալով անոնց միտքը քիչ մը հանդարտեցան։ Ուստի ուխտապահ նախարարները Վարդանայ հետ միաբան երգումով կապուեցան առաջի սուրբ հայրապետաց արիւննին Թափելու սուրբ հաւատքին համար ։ Հոն սուրբ Յովսէփ կաթուղիկոս եպիսկոպոսներով գրեցին դաւանութեան ձեռագիրը աղօթքով ․ ուր ժողովեալ միաբանեցան հարիւր հազար ուխտադիր Հայք փափաքող նահատակութեան ։ Վարդան իր քաջերովը գնաց Դուին և կործանելով կրակատունը կանգնեց Լուսաւորչայ եկեղեցին ։ Նոյնպէս ըրին ամէն տեղ թէ եկեղեցականք, և թէ աշխարհականք քանդելով կրակատուներն ու մեհեանները և հալածելով մոգերն ու դիւապաշտ քուրմերը ։ Յետոյ զօրքը իրեք բաժնելով յարձակեցան ամէն կողմանց ու չարաչար ջարդեցին կրակապաշտները և մաքրեցին զՀայաստան ։ Յազկերտ երբոր լսեց զասոնք՝ անհնարին կատղած՝ շատ զօրք ժողվեց Հայոց դէմ ։ Նոյնպէս մեծն Վարդան պահօք և աղօթքով պատրաստեց զօրքը ըստ պատուիրանաց սրբոյն Յովսեփայ ․ և զատկական տօնը կատարելէն ետև ամէնքը ուրախութեամբ դիմեցին յօժարակամ յԱրարատեան աշխարհը թուով վաթսունըվեց հազար ։ Որոնց մէջ մտան Յովսէփ կաթուղիկոս, և եպիսկոպոսք և քահանայք համօրէն ուխտիւք ամէնքն ալ զինուորեալ վասն հոգևոր պատերազմին և պաշտպանութեան սուրբ հաւատոյ, և այլն ։

Թէպէտ անօրէն Վասակ ուրացող իշխանն Սիւնեաց քանի մը ուխտանենգ նախարարներով անցան Պարսից կողմը, բայց սուրբն Վարդան յԱստուած ապաւինեալ քաջալերեց զօրքը Արտազ գաւառին մօտ, ուր կարդալ տուաւ Մակաբայեցւոց գիրքը ․ սուրբ Ղևոնդն ալ Հոգւով սրբով լեցուած կը զօրացընէր սիրտ տալով ամենուն ։ Պատերազմին օրը քահանայք կանգնեցին խորան . և պատարագէն ետև հաղորդուելով սկսան միաբերան աղաղակել սըրտանց . “ Հաւասարեսցի մահս մեր մահուան արդարոց . . . հաճեսցի Աստուած ընդ կամաւոր պատարագս մեր , և մի՛ տացէ զեկեղեցի իւր 'ի ձեռս հեթանոսաց ” ։

Առաւօտուն քաջն Վարդան զօրքը չորս գունդ բաժնեց ու տուաւ քաջ նիզակակիցներուն ձեռքը դասաւորելով Պարսից դէմ . և սկսաւ մեծ պատերազմն Տղմուտ գետին քով ։ Հայերը անցան գետին միւս կողմն ու սկսան կոտրել Պարսիկները . որոնց զօրապետը զարհուրելով հրամայեց իրեն գնդին որ բազմութեամբ փաթթեն զՎարդան ։ Հոն երանելին անպատմելի քաջութեամբ շատ մարդ թշնամիներէն ջարդեց . սակայն ինքն ալ վէրք առաւ ընկաւ և նահատակեցաւ ուրախ սրտով և փափաքանօք ։ Ան ատեն Հայերն ցրուելով քաշուեցան հեռաւոր տեղեր հայրապետներով և քահանաներով ու բերդերուն մէջ նստան ։ Այն օրը նահատակեցան պատերազմին մէջ երկուհարիւր իննըսունըվեց հոգի . իսկ ուրիշ տեղեր ալ բոլորը միատեղ կը հաշուին հազար երեսունըվեց , ինչպէս կը դնէ տօնացոյցը և Շնորհալին ։ Այս հոգևոր քաջագործութիւնն եղաւ 'ի 2 յունիսի 451ին ։ Յայսմաւուրքը 'ի 7 . օգոս . կը դրէ թէ պատերազմէն ետև անհաւատները սարսափելով փախան անկէց . իսկ Հայերը անվախ գնացին գտան երանելեաց մարմինը լուսափայլ , և տարին պատուով ամփոփեցին հանգստարանին մէջ ։

Անզուգ շահատակ գերահրաշ Վարդան,
Ջահ ճշմարտութեան անյաղթ ախոյեան,
Զօրացեալ 'ի յոյս՝ հաւատս 'ի սէր վառ
Հար կորոյս զանթիւ թշնամեաց ճամբար։
Վարդագոյն արեամբ քաջ պսակաւոր
Փայլեաց ընդ քաջաց 'ի շնորհս երկնաւոր.
Ընկալեալ յերկնից զյաղթանակ մարտին
Պերճափայլ պսակ Արարչապետին։

ՎԱՐԴԱՆ Բարձրբերդցի էր երեւելի վարդապետ Հայոց պատմաբան, եւ քաջուսումն աշակերտ Վանականին, ճարտարամիտ եւ բանիբուն, տեղեակ գրոց աստուածային եւ արտաքին իմաստնոց, եւ հմուտ լեզուաց Պարսից, Եբրայեցւոց, Յունաց եւ Ասորւոց, ինչպէս յայտ է իւր բազմապատիկ գրածներէն։ Վարդան երբոր կ'երթար յԵրուսաղէմ՝ գնաց տեսութեան Հեթում արքային, անկէց ալ գնաց 'ի Հռոմկլայ յարգելով Կոստանդին Ա. կաթուղիկոսը, որ հաճելով պահեց քովը իբր քարտուղար 5 տարի։ Էր եւ մօտ 'ի է ժողովն Սսայ յամի 1243, ուր սահմանեցան քսանըհինգ կանոններ վասն բարեկարգութեանց եւ վասն կատարելոյ վերջին օծման խորհուրդը, եւ այլն։ Այս կանոնները տարաւ 'ի Հայաստան վարդապետներուն ձեռք դնել տալու համար, ու ամէն տեղ կը քարոզէր բանն կենաց՝ ուղղելով մոլորեալները։ Նաեւ նման Վանական վարդապետին աշկերտներ ժողվելով կը քարոզէր ողջամիտ վարդապետութիւն սուրբ եկեղեցւոյ, կրթելով զանոնք յուսմունս աստուածային եւ արտաքին գրոց, ուր գլխաւոր աշկերտներուն մէկն եղաւ Յովհաննէս վարդապետ Երզնկացի։ Տ. 'ի կարգին։

Այս մեծիմաստ վարդապետը բարւոք ծերութեամբ և լի գովելի արդեամբք փոխեցաւ առ Աստուած 'ի 1271, և թողուց շատ պիտուական գրեանք, զորօրինակ ա. Պատմագրութիւն սկսեալ Ադամէն մինչև ցամ Տեառն 1267, շատ հմտութեամբ: բ. Համառօտ Մեկնութիւն սաղմոսին: գ. Մեկնութիւն Երգոց երգոյն գրեալ 'ի 1265: դ. Մեկնութի Դանիէլի քաղեալ 'ի հին մեկնչաց: ե. Մեկնութի հինգ գրոցն Մովսէսի գրեալ 'ի 1261: զ. Ներբողական ճառ 'ի սուրբն Գրիգոր Լուսաւորիչ:

Թող ուրիշ լաւ գրուածքները, որպէս Տեսութիւն Անթառամ ծաղկին, Մեկնութիւն քերականին և համարողական արուեստի, Մեկնողական ճառք 'ի տօնապատճառս, 'ի վերայ Յովհաննու Աւետարանին, և թղթոց Պօղոսի առ Եբր. և ա Կոր, և այլն: Ընտիր են Խրատական ճառք և քարոզքն, այլ և՝ շինած շարականները՝ "Ի յանսահման ծովէն: Որ զարգարեցին: Որ նախիմաց":

ՎԱՐԴՈՒՀԻ ըստ Լտ. Ռօզա և Նոր ծաղիկ, էր կոյս սքանչելի քաղաքավար և սրբակաց Լիմա քաղաքէն Ամերիկայի: Երբոր չափահաս եղաւ ծնողքը կը ջանային զինքը կարգելու, նա հրաժարելով դէմ կեցաւ ամենայն քաջութեամբ, ու մազերն ալ խուզելով ճըգնութեան տուաւ զինքն: Այս մտաւ Դոմինիկեան կուսանաց վանքը և առաջանալով առաքինութեամբ հասաւ կատարելութեան համբերութեամբ, աղօթասիրութբ և աստուածպաշտութեամբ: Մինչև արժանի եղաւ տեսլեան Յիսուսի փրկչին և Աստուածամօրն, որով մականուանեցաւ Վարդուհի Մարիամեան։ Նաև պայծառացաւ զարմանալի հրաշագործութեամբ թէ առաջ և թէ յետ մահուան. Տ. Ռուշան։

ՎԱՐՈՍ սուրբ Հայր։ Տ. ԹԱԹՈՒԼ։

ՎԵՍՊԱՍԻԱՆՈՍ կամ ՎԵՍՊԻԱՆՈՍ էր մեծագործ կայսր Հռոմայեցւոց ծնեալ յամի Տեառն 8. գեղեցիկ քաջագործութեամբ բարձրացաւ անունն՝ թէպէտ ինքն միշտ կը պատմէր ցած ազգէ ըլլալը։ Զօրավարութեամբ մեծ յաղթութիւններ ըրաւ յԵւրոպա, յԱփրիկէ, և մանաւանդ Հրէաստան։ Ուր երբոր պատրաստուեցաւ զԵրուսաղէմն ալ առնելու, Ներոն կայսրն մեռաւ. նոյնպէս ետևէ ետև մեռան յաջորդներն ալ՝ Գաղբա, Օթոն, և Վիտեղլիոս մէկ տարուան մէջ. ու ինքն ընտրեցաւ կայսր Հռոմայ յամի 69։ Աստի շուտով կարգաւորեց խոհեմութեամբ բանակին ամէն բանը ու կառավարութիւնը յանձնեց իր որդւոյն ձեռքը քաջին Տիտոսի, և ինքն դարձաւ Հռոմ։ Ժողովուրդը հոն մեծ ցնծութեամբ ընդունեց զինքը վասն բարի համբաւուն և խելացը, որով սկսաւ մէկէն բարեկարգել իմաստութեամբ կայսերութիւնը։ Իսկ Տիտոս նման քաջագործութեան հօրը զօրացուց զօրքն ու մեծ յաղթութեամբ շուտով առաւ Երուսաղէմ. և առած փառաւոր աւարներովը գնաց հօրը, որուն հետ մէկտեղ ըրաւ հանդէս յաղթանակի Հռոմայու մէջ։ Վեսպասիանոս պատերազմներէն դադրելէն ետև կանգնեց մեծագործ տաճար խաղաղութեան, ուր դրաւ Երուսաղէմի տաճարին սրբազան բաները. որուն իրեք աղիւսակերտ կամարները դեռ կանգուն կան 'ի Հռոմ։ Իսկ ինքն մեռաւ 69 տարուան յամի 79, և էր մեծանձն բարեսիրտ և անփառասէր. մինչ զի մեռած ատենը ծաղրելով զիցապաշտ ազգին սովորութիւնը ասաց. “Գիտեմ որ մեռնելէս ետև զիս ալ պիտի աստուածացընեն, ինչպէս ուրիշ կայսերներուն ըրին„։ Բնաջինջ ըրաւ ամէն անկարգութիւնները և սուտ դիւահնար գուշակութիւնները։ Պայծառացուց զՀռոմ պիտուական շինութեամբ և բարեզարդութեամբ. խնամակալ էր առաքինութեանց և Թշնամի մոլութեանց. ծաղկեցուց արուեստ և գիտութիւն՝ պատուելով հանճարեղ գիտունները, պիտանի և արդարասէր անձինքն։ Զարմանալի ներողամիտ էր թշնամեացը, որոնց վրէժխնդիր ըլլալու և պատժելու տեղը բարիք կ՚ընէր ըսելով. “Կը ցաւիմ իմ կեանքիս և իշխանութեանս ետևէ եղողներուն վրայ, զի չեն գիտեր թէ ինչ ծանր բեռն է թէ արդարութիւն ընել, և թէ ըլլալ բարեգութ տէր և հայր հասարակաց„։ Այս բարեսէր կայսեր Վեսպասիանոսի արժանաւոր յաջորդ ընտրեցին առաքինասէր որդին Տիտոս։ Տես 'ի կարգին։

Վեսպասիանոս յաղթող գերամբարձ
Քաջազօր բազկաւ ժառանգեաց ըզփառս.
Հոյակապ հըզօր անյաղթ կորովի
Խոհական արթուն 'ի գործ պիտանի։
Վեհութիւն հոգւոյ ոչ յազգէն չափի
Այլ առաքինեաց սեպհական սրտի.
Թէ միտքն է շըքեղ, ճարտար, իմաստուն
Թէ և անտոհմիկ միշտ է գերաբուն։

ՎԵՍՏԱ էր անունն կրկին չաստուածուհեաց կռապաշտից, մէկն էր կին Ուրանոսի չաստուածին և մայր Կռոնոսի, որ կը ձևացընէին ձեռքը թմբուկ ։ Մէկալն էր քոյր և կին Կռոնոսի՝ Ռէա անուամբ․ և կը պաշտէին իբր չաստուած և գտիչ հրոյ ։ Նումա Թագաւոր Հռոմուլոսի յաջորդը ասոր համար տաճար կանգնեց, ու պատուիրեց որ հոն կրակը մշտավառ պահեն և չմարեն ։ Եւ վասն պահպանութեան կրակին սահմանեց նուիրեալ կուսանք մշտնջենաւոր կուսութեամբ ։ Այս կուսանքս կոչեցան Վեստեանք, որոնց պաշտօնն էր պատրաստել զոհերը․ և թէ որ անհոգանային կրակը վառ պահելու, և կուսութիւննին պղծելու, քուրմերը զանոնք ողջ ողջ կը թաղէին, և կամ սովամահ կը կորսնցընէին, և այլն ։

Այս կուսական զոհագործութիւնը կ'երևնայ թէ փիլիսոփաները հնարեր են վասն խափանելոյ անօրէն հեթանոսական մարդազոհութիւնը, որոնք յաճախ կը զոհէին խեղճ տղաքը և անմեղ կուսանքը իբր գործ աստուածպաշտութեան, ինչպէս որ չարաչար կը յանդիմանեն զանոնք սուրբ մարգարէները ։ Ասկէց յայտնի կ'երևնայ թէ կուսութիւնը յարգելի էր հեթանոսաց և անկրօն ազգաց մէջն ալ, և կուսապղծութիւնը սաստիկ դատապարտելի ։

ՎԵՐՈՆԻՔԱ սրբուհին էր առաքինազարդ տիկին, երկիւղած, պաշտօնասէր և բարի օրինակ անարատ վարուք հանդերձ սրբութեամբ, ինչպէս որ վկայաբանութիւնը կը գրէ անոր յիշատակը 'ի 13 յունվ․ յամի 1494, թէ 'ի Միլան փոխեցաւ առ Աստուած, և վերապատուեցաւ ։ Այս անուամբ կոչեցաւ Փրկչին հին պատկերքն ալ պաստառի վրա քաշուած, և պահեալ յեկեղեցին սրբոյն Պետրոսի 'ի Հռոմ։ Ոմանք կը հաստատեն թէ երբոր Տէրն մեր Գողգոթա լեռը կը տանէին խաչելու, այս բարեպաշտուհի Վերոնիքա կինս թաշկինակը տուեր է Փրկչին, որ արիւնաթաթախ դէմքը սրբելով տպաւորուեր է վրան իւր աստուածային պատկերքը, և այն պատկերքէն առեր է անունը. զի "Վէրա էյքօն" կը նշանակէ 'ի Լատին և 'ի Յոյն ճշմարիտ պատկեր, զոր և կը տօնեն Եւրոպացիք։

ՎԻԳԻԼԻՈՍ հայրապետ Հռոմայ նստաւ յաջորդ սրբոյն Պետրոսի յամի 540. և գնալով 'ի Պօլիս զօրացուց Քաղկեդոնի սուրբ ժողովքին սահմանները։ Նոյնպէս կայսեր օգնութեամբ գումարեց ընդհանուր Կոստանդինուպօլսոյ Բ. ժողովքը ընդդէմ Երից գլխոց, և Եւտիքականաց, և այլն։ Իսկ դառնալու ատեն հասաւ Սիկիլիա, և հոն վախճանեցաւ 'ի 555. և թողուց տասնըութ իմաստալից նամակներ վասն ճշմարտութեան և բարեկրօնութեան։

ՎԻԿՏՈՐ Ա. կամ սուրբ ՎԵԿՏՈՐ Աֆրիկեցի օծաւ Պապ 'ի 194. և զօրացեալ Հոգւով սրբով մերժեց զաղանդաւորները ժողովքներով, ու մեծապէս զօրացուց հաւատքը լաւ կանոններով։ Մինչ զի արքայն Սկովտիոյ բոլոր ժողովրդով դարձաւ 'ի Քրիստոս. և շատ հոգևոր շինութիւններ ալ ըրաւ հանդերձ բարելաւութեամբ։ Ըստ իւր այսպիսի առաքելական նախանձով սուրբ Վիկտոր նահատակեցաւ կռապաշտներէն վասն ճշմարտութեան յամի 203։

ՎԻԿՏՈՐ Բ. Գերմանացի մեծահամբաւ նստաւ յառաքելական գահ 'ի 1055. և արիութեամբ գումարեց ազգային ժողով. շատ ուղղութիւն և շինութիւն բրաւ աթոռին և ազգին։ Ապա յետ բարեկարգութեանց վախճանեցաւ սրբութեամբ 'ի 1057, և գովեցաւ։

ՎԻԿՏՈՐ Գ. Բենեւենտացի ընտրեցաւ քահանայապետ ընդհանուր եկեղեցւոյ 'ի 1086, և ճշմարտութեան նախանձով հաստատեց ուղղափառութիւնը և ուխտն եկեղեցւոյ. բայց մոլորեալները չարութեամբ չքաշելով թունաւորեցին զինքն, երեք օրէն ետև փոխեցաւ առ Տէր 'ի 1087։

ՎԻՆԿԵՆՏԻՈՍ կամ **ՎԻՆՉԵՆՑԻՈՍ** Փերրարեան էր Սպանիացի ազնուազարմ, տղայութենէն հոգեւոր և շնորհալի, պարկեշտ և խոնարհ. որ մտաւ Դոմինիկեանց կարգն ու շատ յառաջացաւ խոհեմութեամբ և սրբութեամբ։ Մինչև եղաւ զօրաւոր քարոզ բանին Աստուծոյ՝ լուսաւորելով Հրէաներն ու հեթանոսները, նաև շահելով ուրիշ անկարգ ժողովուրդներն ալ զարմանալի հրաշագործութեամբ, 'ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ և ուղղափառաց։ Ահա այս հրաշից շնորհքովը ամէն ցաւ կը բժշկէր ու դիւանքը կը հալածէր, և մեռելներու ալ յարութիւն կուտար, անով անհաւատները հաւատքի կուգային։ Յետ շարադրելու շատ հոգեշահ գրեանք փոխեցաւ առ Աստուած վաթսուներկու տարւան յամի 1419. և պայծառացաւ հրաշքով գերեզմանը նման սուրբ Անտոն Պատուացւոյն։

ՎԻՏԱՂԻԱՆՈՍ սուրբ հայրապետն Հռոմայ յաջորդեց սրբոյն Պետրոսի յամի 657, որ առաքելական հոգւով զօրացեալ հաստատեց ամէն եկեղեցական կարգ և կանոն վայելչապէս։ Ժողով գումարեց 'ի Հռոմ և զօրացուց զճըշմարտութիւնն ընդդէմ Միակամնդաւանից։ Սա բաց 'ի օգտակար սահմանադրութեանց ամէն աշխարհի համար՝ եկեղեցական պաշտամանց մէջ մտոյց գործածութ̅ի երգեհոնի կամ նուագարանաց։ Եւ բարեպէս կատարելով իր մեծ պաշտօնը փոխեցաւ սուրբ վարուք առ Քրիստոս 'ի 672։

ՎԻՐԳԻԼԻՈՍ Պուպլիոս Մարոն էր անուանի քերթող, բանաստեղծ լատին, որդի Մանդուացի բրտի մը, ծնեալ 70 տարի Յիսուսէն առաջ։ Լատին և Յունական լեզուաց քաջ հմուտ ըլլալով բնական յօժարութեամբ ընկաւ քերթողութեան ետեւէն աւելի երգելով շինական բաներն, և այլն։ Օգոստոս կայսր երբոր դարձուց անոր հայրենի ժառանգութիւն, Վիրգիլիոս երախտագիտութեամբ շարադրեց հովուաբանութիւն իրեք տարուան մէջ, և հըռչակեցաւ գովութեամբ հանճարը։ Ասկէց ետև Մեկենասայ խնդիրքովը գրեց զՄշակական քերթուածը գեղեցիկ յոյժ։ Յետոյ գնաց Նափլի և սկսաւ Ենէական քերթուածը, և անոնցմով եղաւ սիրելի Օգոստոսի, Մեկենասայ, Ովրատիոսի, և այլոց, ուր նախանձոտները չքաշելով երեսը կը զարնէին ցած տոհմը, և գրուածները կ'անարգէին։ Իսկ ինքն գովեստէն փախչելով կ'ըսէր թշնամեացը համար այսպէս. "Շատ կը զարմանամ՝ ասոնց վրայ, որոնց մէկ վնաս մը չեմ ըրած, և ոչ ատելութեամբ գնացեր եմ իրենց հետ ։ Բայց այս օրէնք է արուեստաւորաց, որ մէկ մէկու կը նախանձին. իսկ ես ալ անոնցմէ վրէժս կ՚առնում միայն շտկելով իմ սխալմունքս, որ նոքա իրենց քըննելովը կը գտնեն „ ։ Վիրգիլիոս երբոր կարդաց Անէական քերթուածը Օգոստոս կայսեր առջեւ, այնչափ սիրտը շարժեցաւ՝ որ երեսուներեք հազար ֆրանք դրամ ընծայեց իրեն ։ Ասկէ երբոր ելաւ կ՚երթար յԱթէնք բանաստեղծութիւնը աւելի կատարելագործելու համար՝ Կալաբրիա հիւընդցաւ, և մեռաւ ՚ի Պռինտիզի քաղաքը յիսուն տարեկան 19 տարի Քրիստոսէն առաջ ։ Իսկ մարմինը տարին Նափոլի, և տապանագիրը գրեցին այսպէս.

Ծնաւ զիս Մանտուա, Կալաբրեբք առին, և
 ամփոփէ արդ
Զիս Պարթենոպէ. զհօտ և զանդաստան եր-
 գեցի և զմարտ ։

Այս քերթող ունի զգուշաւոր համեստութիւն. մէկ հատիկ է բանաստեղծական ոճը լատին լեզուին, վսեմ և փառաւոր ոտանաւորին արուեստը, պերճ իմաստները, և այլն ։ Վիրգիլեայ քերթողական ոտանաւորները ամէն Եւրոպեան լեզուաց մէջ թարգմանած և տպուած են. նոյնպէս հայերէն ալ թարգմանեցաւ և տպուեցաւ ընտիր և մաքուր՝ մեր վանքը ։

Քերթողահայր քաջ Վիրգիլիոս ներհուն
 Վըսեմ սոփեստէս ընտիր բանիբուն.
 Յաղթող քերթողաց լատինականին
 Ընդ պսակազարդ ՚ի գլուխ խմբին ։

Աւա՜ղ վսեմութեան մտաց հազներգուին
Որ չեղև խնդրակ եւս Արարչին ·
Յածեալ վեր 'ի վայր 'ի խոյզ բնութեան
Չեկաց 'ի վերայ՝ թէ յորմէ ստեղծան ։

ՎԼԱՍ կամ ՎԼԱՍԻՈՍ էր սուրբ և հրաշագործ եպիսկոպոս Սեբաստիոյ, որ Դիոկղետիանոսի և Լիկիանոսի հալածանաց ատեն արիապէս կը քաջալերէր սուրբ նահատակները։ Ապա առանձնացաւ այրի մը մէջ քաղքէն դուրս, կը ճգնէր աստուածահաճոյ սուրբ վարքով։ Երբ որ իմացան կռապաշտները՝ գնացին բռնեցին երանելին, որ տանելու ատենը ճամբան շատ ցաւագարներ առողջացուց։ Ապա ատեան հանեցին, քննեցին ու տեսան հաւատքին հաստատութիւնը, սէրը և քաջութիւնը, կատղելով ծեծեցին և երկաթով քերեցին մարմինը։ Յետոյ երբոր բանտը կը տանէին արիւնաթաթախ, եօթն բարեպաշտ կանայք գնացին արիւնը առին ու վրանին կը քսէին։ Աստի զանոնք ալ բռնեցին հեթանոսները նահատակեցին սրով։ Իսկ զսուրբն Վլաս ձգեցին Սեբաստիոյ լիճը · ուր աստուածային զօրութեամբ ջրին վրա քալելով ելաւ դուրս անվնաս, ու ետքը գլխատեցաւ հետն ալ կին մը երկու զաւակով, յամի 315։ Հոն բարեպաշտ կին մը ամփոփեց սրբոյ նշխարքներն, և եղաւ հրաշագործ ուխտատեղի բժշկութեան ախտաժետաց, որով սուրբն Վլաս ամէն աշխարհք փառաւորեցաւ վանքերով և եկեղեցիներով։ Մեծապատիւ պաշտպան է մասունքներովը Ռակուզայ մայրաքաղաքին և նահանգին, քաղաքին դրան վրան ալ կանգնած է կճեայ փառաւոր արձանը, զոր կը պատուէին մեծ տօնախմբութեամբ Դաղմատացիք ։

ՎԼԱՏԻՄԻՐ էր մեծազօր քաջ իշխան Ռուսաց Ժ. դարուն, որ մեծամեծ արութեամբք և ճարտարութեամբ յաղթելով թշնամեաց մտաւ 'ի Նովկորոտ նոր քաղաքը, անկէց ալ գնաց Քիեւլի վրան ։ Քիեւլացիք ան ատենը անիշխան ըլլալով բացին քաղաքին դռներն ու Վլատիմիրը ընդունեցան իրենց թագաւոր . որ աւելի զօրանալով յաղթեց Լեհերուն և բոլոր ապստամբները նուաճեց . այլ և հարկատու ըրաւ Պոկ գետին քովի բնակիչներն ու այն կողմի ազգերը, կոչելով Աշխարհապետ ։

Ուստի այս մեծ յաջողութեանց համար մարդազոհ ըրաւ պատերազմին մէջ բռնած գերիները վասն շնորհակալութեան կռոց, և այլն ։ Այս մեծ իշխան փառաւոր յաղթութեամբ այնչափ սիրելի եղաւ օտար թագաւորներուն, մինչև կայսերք Յունաց և այլք կը յորդորէին որ իրենց կրօնը դառնայ, և Յունաց պատրիարքը ղրկեց իրեն Մետրապոլիտ մը այս բանիս համար, որ սիրելի եղաւ անոր, ու ծանրագին ընծաներով դարձաւ 'ի Պոլիս ։ Վլատիմիր համոզուեցաւ որ քրիստոնեայ ըլլայ, և տասը մարդ ղրկեց 'ի Պոլիս քննելու համար կրօնը, որոնք տեսնելով սուրբ Սոփիայ պայծառ եկեղեցին, և եկեղեցական ահեղ հանդէսներն զարմանքով մը կանչեցին . “Այս է ճշմարիտ կրօնք, որ այսպէս փառաւորեալ է„ ։ Ապա 'ի 987 Վլատիմիր բանակ կազմեց ու գնաց Խրիմ պաշարեց Քերսոն քաղաքը . բայց չկրցաւ առնելու ։ Ուր Անաստաս քահանան սակալով Վլատիմիրին զօրութենէն նետ մը ձգեց անոր բանակին մէջ վրան կապած թուղթ մը այսպէս գրած . “Ուէ որ կ'ուզես աս քաղաքն առնելու՝ պէտք է կտրես ջրին ճամբան աս մօտիկ տեղդ„ ։ Երբոր անոնց ջուրը կտրեց՝ Քերսոնցիք տուին քաղաքը . Վլատիմիր տեսնելով հօն քրիստոնէութիւնը ծաղկած գեղեցիկ եկեղեցիներով և արարողութեամբ՝ լուսաւորեցաւ ինքը , և ջանաց որ Ռուս ազգն ալ լուսաւորէ ։ Յետոյ սկսաւ աղէկ մը սորվիլ զխորհուրդ քրիստոնէութեան , և մկրտուելով անուանեցաւ Վասիլ 'ի 988 , հանդերձ տասւերկու որդիքներովը , նաև խնդրեց առաւ կայսեր քոյրն Աննա , և ամուսնացաւ հետը ։ Ապա մեծ փառքով դարձաւ 'ի Ռուսաստան սուրբ զարդերով, նշխարքներով, եկեղեցական գրքերով, պատկերքներով, քահանաներով, և վարդապետներով ։ Իր ճշմարիտ աստուածպաշտութեան նախանձով վառուած կործանեց բոլոր կուռքերը , և հրամայեց՝ որ ամէնքը ջնջեն հեթանոսական աւելորդապաշտութիւններն ու յայտնի պաշտեն զՔրիստոս ։ Եւ այսպէս ճոխացուց Ռուսաց տէրութիւնը աստուածպաշտութեամբ և քաղաքականութեամբ , մշակութեամբ , պէսպէս արուեստներով և ուսմամբ , դպրոցներով, եկեղեցիներով, և հիւանդանոցներով, և ամէնայն լաւութեամբք ։ Ահա այսպիսի բարեկարգութեամբ և առաքինութեամբ քառասունըհինգ տարի թագաւորելէն ետև վախճանեցաւ հասուն հասակով, ու մականուանեցաւ ազգէն Սուրբ և Մեծ ։

ՎԼԱՏԻՍԼԱՒՈՍ էր առաջին թագաւոր Լեհաց և յաջորդեց իշխանութեան հօրը 'ի 969 . երկու տարիէն ետև ալ առաւ անուն թագաւորի կայսերէն Օթոնէ Գ.։ Եւ 'ի 1001 երեւելի գործքերով իր թագաւորութիւնը ազատ ըրաւ կայսերական հրամանէն, ու սկսաւ գեղեցիկ ծաղկեցընել ամենայն բարեկարգութեամբ եւ աստուածպաշտութեամբ յօգուտ ամենուն։ Ուստի մեծապէս զօրացաւ աստուածային յաջողութեամբ յաղթելով մօտակայ տէրութ՟եց եւ փառաւորելով միշտ մինչեւ որ վախճանեցաւ առաքինի անուամբ յամի 1025, որուն յաջորդեց Նիկողոս Բ.։

ՎՈԼԹԵՌ էր Գաղղիացի անաստուած փիլիսոփայ ԺԸ. դարուն, խորամիտ եւ ճարտարախօս, վայրաբան եւ ծաղրածու։ Մինչ զի վայելուչ գրուածներուն մէջն ալ գեղեցիկ իմաստով խօսքերը միմնաբար կը վարէր ծաղրելով կրօնն ու աստուածպաշտութիւնը։ Ասով թունաւորեց շատերուն միտքը անաստուածութ՟բ, մանաւանդ կանանց ու պատանեկաց, մինչեւ տակն ու վրայ ըրաւ Եւրոպա իր չար քերթողական անգլուխ արուեստովը։ Ազատութիւն խոստանալով այն անմտաց՝ գերի ըրաւ չարաչար ախտից եւ ապականութեան, անոր համար շատ մոլար գրածները դատապարտեցան իրեն հետ։ Շատ գրուածներ ունի, որոնց մէջ անուանի են բանաստեղծութիւնքն, Ենրիականը, ողբերգութիւնքն եւ մանր երգերը. արձակ գրուածոց մէջ ալ՝ պատմութիւնները Կարոլոսի ԺԲ., Լուդովիկոսի դարը, եւ այլն։ Շատ սիրելի էր Պրուսաց Ֆրեդերիկոս թագաւորին, ուրիշ շատ մեծ մարդիկ ալ բարեկամ ունեցաւ, բայց չկրցաւ մէկու մը հետ ալ մինչուան վերջը բարեկամ մնալ՝ իր կծու լեզուին եւ բնութեանը համար։ Կ'ըսուի թէ Վոլթեռ մեռնելու մօտիկ խիղճը տանջելով դաւանութիւն տալու ուղղափառութեան, ու հոգաբարձու քահանայն լսելով հասաւ հոն : Բայց անկրօն աշկերտները թող չտուին որ երթայ քովը, ուստի չեղաւ արժանի փրկութեան · այլ թըշուառ մահուամբ կորաւ ութսունըչորս տարուան 'ի 1778ին :

ԲՈՆԻՓԱԿԻՈՍ կամ **ԲՈՆԻՓԱՏԻՈՍ** անուամբ ելին մեծանուն քահանայապետք Հռոման յաթոռ առաքելականին Պետրոսի, և իմաստութեամբ կառավարեցին ընդհանուր եկեղեցին Քրիստոսի :

ԲՈՆԻՓԱԿԻՈՍ Ա. սուրբ անձն գերիմաստ օծուեցաւ Պապ յամի 418, և առաքինի վարքով բարեկարգեալ գլելը՝ զօրացուց հաւատքն ու ջնջեց հերձուածողները զօրաւոր կանոններով և սքանչելի սրբութեամբ, որով վախճանեալ 'ի 423 դասեցաւ սրբոց կարգը ·

ԲՈՆԻՓԱԿԻՈՍ Բ. մեծ հայրապետ յաջորդեց Հռոմայու գահը 'ի 530, և մէկէն ձեռք զարկաւ՝ որ կանոնաւորէ ամէն կարգը սուրբ եկեղեցւոյ : Բայց կարճատև ըլլալով հետևեալ տարին փոխեցաւ առ Տէր :

ԲՈՆԻՓԱԿԻՈՍ Գ. մեծիմաստ նուիրակ նախ՝ ղրկուեցաւ սուրբ Գրիգոր պապէն առ կայսրն Մորիկ : Իսկ դառնալու ատեն ընտրեցին յաջորդ սուրբ աթոռին 'ի 607, բայց յետ կարգադրութեանց ինչ նոյն տարին վախճանեցաւ :

ՎՈՆԻՓԱԿԻՈՍ Դ. սրբակաց հայրապետ նստաւ քահանայապետ Հռոմայ 'ի 608, և ժողով գումարեալ զարդարեց եկեղեցին: Պանթէոն ամենադից կռատունը սրբեց ու օծեց տաճար Աստուածամօրն և բոլոր մարտիրոսաց. նաև սահմանեց տօն Ամենայն սրբոց տարեկան. ապա ինքն նովին սուրբ քաղաքավարութեամբ փոխեցաւ 'ի դասս սրբոց 'ի 615: Ասոնց նման յաջորդ նոյնանուն քահանայապետք ալ բարեկարգութեամբ և իմաստութեամբ կառավարեցին ընդհանուր եկեղեցին:

Ճարտար ղեկավարք Պետրոսեան նաւին
Անտիր հօտապետք փոխան Փրկողին.
Խորտակեալ զալիս դիւաշունչ հողմոց
Անվրէպ հասուցին ըղձաւն յանքոյթ ծոց:
Խոստումն է անսուտ շնորհեալ Պետրոսի
Կալ մնալ անկործան անշարժ 'ի կայի.
Օ 'ի Տեառն է այն տուն զերդ՝ Նոյի տապան
Ապահով յալեաց հոգւոց Փրկարան:

ՎՈՐՈՆՑՈՎ Միքայէլ մեծահուշակ Դուքս փոխարքայ և կուսակալ մեծ հարաւային և արեւելեան կողմանց Ռուսաստանու՝ Տաւրիդ, Կովկասու, Վրաստանու, և այլն: Որ է հին զարմէ Ռուս ասպետաց և Կոմսից բարեկիրթ և վարժ մանկութենէն քաղաքական և զինուորական ուսմամբ, որով ամէն պաշտօնի մէջ սիրելի և պիտանի եղաւ կայսերութեան. մինչև ապա Աղէքսանդր Ա. հաստատեց զինքն ընդհանուր կուսակալ աշխարհաց Քերսոնի, Խրիմի, և Կատարինասլաւի հանդերձ Պեսարապիայով. և այս իշխանութիւն միանգամայն կոչի՝ Նոր Ռուսիա, զոր սկսեր էր ծաղկեցընել ՚ի 1803, նախ Գաղղիացի Տիւք Տըրիշլիեօ շինողն Օտեսայի ։

Վորոնցով ջանաց ամէն տեղ բարեզարդել վայելուչ շինուածքով և կարգով․ այլ աւելի զօրացուց Օտեսայի նաւահանգիստը, և ծաղկեցուց վաճառականութիւնը, արուեստն ու բարեշինութիւնը ։ Կանգնեց հոյակապ պալատ ծովակողմն, կարգաւորեց զինուորանոցները, անկելանոցներն ու դպրոցները, և այլն ։ Աղեքսանդր Ա․ բարեսէր կայսր տեսնելով Վորոնցովին շինութիւնները շատ հաճեցաւ․ և անձամբ քալեց հարաւակողմն Խրիմի ու յանձնեց կոմսին, որ բանայ ճամբաները, զարդարէ պալատներով և պտղաւէտ պարտէզներով, ծառերով, այգիներով, և այլն ։ Վորոնցով ալ ինչպէս որ պէտք է շինեց զարդարեց նոյն կողմերը բարեշէն գեղերով, պալատներով, և այլն ։ Ուր փոքրիկ քաղաք մը հիմնեց անուամբ Եալթա եկեղեցիով և նաւահանգստով ։ Ալուփքա պալատ մը շինեց իր գեղը զարմանալի մեծագործութեամբ նման բերդի ։ Վորոնցով մեծագործ կամուրջ և երևելի շինուածներ ալ կանգնեց Օտեսայի մէջ, որ եղաւ Եւրոպայի մեծաշէն և բազմավաճառ քաղաքներուն մէկը ։ Ուր ՚ի 1828 Նիկողայոս Ա․ կայսրն և կայսրուհին նստան Վորոնցովին պալատը ։ Նոյն ատենը կայսեր հրամանաւ գնաց Վառնայի բերդն առաւ, և աւելի փառաւորեցաւ անունը ։ Յետոյ կայսեր հետ հանդէսով եկան Խրիմ ՚ի 1837, և նստան ՚ի Պաղջէսէրայ Խանսէրայն ։ Իսկ մեծ կոմսն Վորոնցով վասն մեծամեծ արդեանցն բարձրացաւ ՚ի վեհութիւն Փոխարքայի, ՚ի 1844 հաստատելով Դուքս և մեծ Սպարապետ բոլոր կողմանցն Կովկասու, զի ամենայն զօրութեամբ շահատակեալ՝ նկուն արացէ զապստամբ ծառապաշտ Չերքէզս յաջողութեամբ Բարձրելոյն :

Շըքեղ պայազատ Վորոնցով իշխան
Հըզօր կուսակալ, վըսեմ խոհական .
Որչափ հոյակապ գերամբարձ 'ի փառս
Այնչափ բարեգութ խոնարհ վեհափառ :
Արդարակորով արարք քաջարանց
Հանուրց քարոզ գոլ օրինակ բարեաց .
Բարեաւ տիրեցին արկածից բաղդին
Անանց յիշատակ յապագայս թողլին :

ՎՌԱՄՇԱՊՈՒՀ էր խելացի և խաղաղասէր արքայ Հայոց Արշակունի , թագաւորեալ 'ի 392 : Սա երբոր Միջագետ կ'երթար խաղաղութիւն ձգելու համար Յունաց և Պարսից մէջ , շատ աշխատեցաւ՝ որ դպիր մը գտնէ Յունարէն և Պարսկերէն գրել տալու համար , վասն զի սուրբն Մեսրոպ քովը չէր : Այն ատենը Ասորի երեց մը Աբէլ անուամբ ծանուց արքային թէ Դանիէլ եպիսկոպոս մը յօրիներ է Հայոց գրեր :

Ապա երբ սուրբն Մեսրոպ կը ջանար հնարել մեր գրերը , թագաւորը իմացուց իրեն Դանիէլեան նշանագրերը . զոր բերին տեսան որ յարմար չեն : Ուստի սուրբն Մեսրոպ մեծ ջանքով և ճգնութեամբ աշխատեցաւ , ու վերջապէս գտաւ յաջողութեամբ Տեառն , յօրինեց Հայոց գրերը կատարեալ . և երբոր բերաւ զանոնք 'ի Հայաստան , Վռամշապուհ և սուրբ Սահակ դիմացն ելան ու ցնծութեամբ և ուրախութեամբ մտան թագաւորեալ քաղաքը : Թագաւորը մէկէն հրաման ըրաւ՝ որ դպրոցներ

կանգնեն ու դպիրներուն հայերէն կարդալ գրել սորվեցընեն նոր գտնուած տառերով· նաև ամէն օտարազգի գրերով հայերէն գրուածները փոխելով օրինակեն նոր Հայ գրով: Եւ այսպէս ոչ միայն սուրբ Սահակ և սուրբ Մեսրոպ անմահացան, այլ և Վռամշապուհ բարեսէր արքայն, որ մեռաւ 21 տարի առաքինութեամբ և լաւութեամբ թագաւորելէն ետև յամի 413:
Տ· Մեսրոպ:

ՎՐԹԱՆԷՍ մեր սուրբ հայրապետն էր երեց որդի սուրբ Լուսաւորչայ, որ ծնաւ 'ի Կեսարիա և սնաւ իմաստութեամբ և առաքինութեամբ, մինչև եղաւ չափահաս, ու հոն ամուսնացեալ ունեցաւ երկու որդիք՝ Գրիգորիս և Յուսիկ, ըստ ոմանց երկուորեակ: Անկէց ետև մտնելով եկեղեցական կարգ՝ ձեռնադրեցաւ սարկաւագ և քահանայ: Տրդատ թագաւորը կանչեց զինքն 'ի Վաղարշապատ քաղաք, և եղբօրը Արիստակեսի վախճանելէն ետև ձեռնադրել տուաւ կաթուղիկոս Լուսաւորչայ աթոռը 'ի 339· և եղաւ հովիւ քաջ և առաքինի բարեկարգելով և ուղղելով անառակ ախտաւորները: Իսկ մոլորեալ չար իշխանները երբոր սպաննեցին զՏրդատ թագաւորը՝ ղրկեցին չարագործ մարդիկ սուրբ Վրթանեսին վրան ալ՝ որ սուրբ Կարապետի վանքն էր: Բայց անոնք սուրբ հայրապետին վրա ելած ատեննին կապուեցան հրաշքով ու սուրբը մէջերէն անցաւ գնաց: Յետոյ ազգասիրութ̃բ մեծ ջանք ըրաւ որ ազգը խաղաղութեան մէջ պահէ բարեկարգութեամբ· մինչև ելաւ գնաց կայսեր դուռը Տրդատայ թոռան Տիրանին հետ, որն որ թագաւորեցուց, ու բերաւ Հայաստան նստեցուց:

Իսկ ինքն սուրբ Վրթանէս հրաշալի առաքինութեամբ և իմաստուն բարեկարգութ͞բ տասնըհինգ տարի և ինն ամիս կառավարեց ազգն ու մեծամեծ արդեամբք փոխեցաւ առ Աստուած յամի 355, և թաղեցաւ 'ի Թորդան. ուր փոխադրեցաւ յետոյ սուրբ Լուսաւորչայ մարմինը :

Խորենացի սուրբ վարդապետն այսպէս կը գրէ Վրթանէսին և Արիստակէսին վրայ. “Արդարև հօր սքանչելւոյ որդիք զարմանալիք, առաւել քան զառաւել. զի . . . անսպառին և անանցականին միայն հսկելով. որք ոչ զպատիւն յինքեանս ձգէին, այլ պատիւն զհետ նոցա ընթացաւ ”, և այլն :

Վեհափառ զաւակ վեհ Լուսաւորչին
Վրթանէս հզօր բարուն լուսածին,
Հայրատունկ դրախտին ծաղկիչ գերապանծ
Շնորհաբաշխ ազգիս լուսատու հոգեւոյ :
Այսպէս գերահրաշ հարք հոգեհանճար
Վառեցին ըզլոյս մերժեալ ըզխաւար,
Անարատ պահեալ զհոգևոր որդիս
Հանին 'ի կաճառս սուրբ լուսերամից :

Տ·

ՏԱԲԻԹԱ կը թարգմանուի այծեմնիկ, եւ ըստ Ասոր· որատես, որ էր ողորմած տիկին մը Յոպպէ կամ Եաֆա քաղաքը ։ Երբոր մեռաւ այս բարեպաշտ կինն՝ կանչեցին Պետրոս առաքեալն ու հանեցին վերնատունը, ուր պառկեցուցեր էին մեռելը ։ Իսկ աղքատները չորս դին շարուած կուլային՝ ցուցընելով անոր իրենց տուած հագուստները ։ Սուրբ առաքեալը զանոնք ամէնքը դուրս հանեց ու սկսաւ աղօթք ընել· յետոյ դարձաւ դէպ 'ի մեռելն ասաց· “Տա՛բիթա, արի՛ կա՛ց յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի ” ։ Իսկ նա մէկէն բացաւ աչքը հրաշքով ու նստաւ ։ Պետրոս ձեռքէն բռնեց յարուց, եւ կանչեց որբերն ու որբեւայրիները մեռելն առջեւները կենդանի կայնեցուց ։

ՏԱԼԻԹԱ էր տասներկու տարուան դուստր Յայրոս ժողովրդապետին, որ լսելով Յիսուսի հրաշքները՝ գնաց ոտքն ընկաւ ու կ՚աղաչէր որ երթայ ձեռքը դնէ Տալիթա աղջկանը վրան ու բժշկէ, զի հոգեվարք էր ։ Յիսուս գնաց հետը՝ ճամբան հրաշքներ գործելով· նայիս մարդ եկաւ ժողովրդապետին տնէն, թէ մեռաւ աղջիկդ մի՛ աշխատցըներ վարդապետը· որուն ասաց Յիսուս· Մի՛ վախնար· միայն հաւաստա։ Երբոր տունը մտաւ տեսաւ բազմութիւն լալկաններու, ըսաց․ Ի՞նչ իրար անցեր էք կուլաք․ Տալիթան մեռած չէ, հապա քուն կ՚ըլլայ․ անոնք սկսան ծաղրել Յիսուսը։ Իսկ նա զամէնքը դուրս հանեց ու առաւ հայրը, մայրը և իրեն իրեք աշկերտները, մտաւ մեռելին քով, բռնեց ձեռքէն ու կանչեց․ "Տալիթա կո՛ւմի, որ թարգմանի, աղջի՛կ դու՝ քեզ ըսեմ արի՛։ Եւ վաղվաղակի յարեաւ աղջիկն և գնայր„։ Ամէնքը զարմացան մնացին աստուածային սքանչելեացը վրան․ իսկ Փրկիչն անոնց հաւատքը հաստատելու համար հրամայեց՝ որ ուտելիք տան Տալիթային․ որոնք թուի թէ աշակերտեցան Յիսուսի։ Ուստի այս անուն եղաւ մակդիր Աստուածամօր կուսին, զոր օրինակ "Ի վերայ հրեղէն թևո՛ցն, եթէ 'ի բազուկն Տալիթայ մօր քոյ (Աստուածածնի)„։

Յստակ հաւատոց է գործ հիասքանչ
  Յաղթող վեհանալ մահու բռնութեանց,
  Կորզեալ յանդնդոց մեռեալս տիրաբար
  Զերդ անմահ փիւնիկ կանգնել հրաշափառ։
Հաւատացելոց չիք ինչ անհնարին
  Յաղթէ ըստ վճռոյն զամէն դժուարին.
  Ընդ ջերմ հաւատոց լծեալ գործք բարի
  Մահու և դժոխոց յաղթական կանգնի։

ՏԱԿԻՏՈՍ Կոռնելիոս էր մեծ պատմաբան և իմաստասէր լատին, ժամանակակից կայսերաց Վեսպասիանոսի, Տիտոսի, և Դոմետիանոսի, և այլն։ Որոնց սիրելի եղաւ ուսումնականութեամբն և կարգեցաւ հիւպատոս յամի Տեառն 97, որ Ճարտար լատինաբանութեամբ շատ բան կը պատմէ արեւելեան պատերազմերուն վրա վասն Հռոմայեցւոց, Հայոց և Պարսից ։ Նոր տարեգրութիւնն է պատմութ՟ի Տիբերիոսի, Կալիգուլայ, Կղոդիոսի, և Ներոնի կայսերաց․ բայց այս պատմութեանց շատը կորած են․ ինչպէս ուրիշ գրուածներուն ալ մեծ մասն կորած է ։

ՏԱՃԱՐԱԿԱՆՔ էին ազնուական զինուորներ կամ ասպետներ իբրև պաշտպանք տաճարի․ որ է առջի կարգ ամենայն հոգևորական զինուորութեանց ։ Նոր սկիզբն եղաւ Երուսաղէմ յամի 1118, Հուգոնէն, որ քանի մը ասպետով ուխտեց վասն պաշտպան կենալու սուրբ գերեզմանին և օգնելու ուխտաւորաց ընդդէմ անհաւատից ։ Եւ այս պատճառաւ Բաղդուինոս Բ, արքայ Երուսաղէմի շնորհեց իրենց վանատուն մը Սողոմոնի տաճարին տեղը, և ասոր համար անուանեցան Տաճարականք․ բայց ետև վասն աղքատութեանն կոչուեցան Աղքատք սուրբ քաղաքին․ վասն զի ողորմութ՟ք միայն կ'ապրէին․ որոնց շատ ապրանք ընծայեցին փարթամ մեծամեծք ։ Նոնք առաջ ուխտեցին Երուսաղէմի պատրիարգին առջևը իրեք ուխտ․ յետոյ աւելցուցին չորրորդ ուխտը պաշտպանելու ուխտաւորները, և այլն ։ Այս միաբանութիւն շուտ բազմանալով զօրացաւ․ ուստի Ոնորիոս Բ․ սրբազան պապն ալ ժողով ըրաւ ասոնց համար, ու կանոններ շարադրեց սուրբն Բեռնարդոս․ որոնց հրաման եղաւ որ ճերմակ զգեստ հագնին ։ Եւգինէոս Գ․ շնորհեց ասոնց որ վերարկուին վրա դնեն նշան խաչի, անուանելով խաչակիր զօրք ։ Իսկ իրենց հոգևոր պարտաւորութիւնն էր՝ ա՟ ամէն օր պատարագ տեսնել․ է̄ շաբթուն չորս օրը միս չուտել։ Եւ այսպէս աղէկ զօրացան 'ի Պաղեստին մինչեւ ցանկումն նոյն Թագաւորութեան։ Ապա անկէց ետեւ ցրուեցան Եւրոպայի մէջ ու բազմանալով այնչափ փարթամացան, մինչ զի յամի 1312 երբոր վերցաւ այս կարգը յարեւմուտ ունէին ինը հազար վանատուն։

Ասոնք ապա Թողուցին իրենց կրօնաւորական կարգ կանոնն ու գլխուորի ազատ կեանք կը վարէին աւազակութեամբ եւ ամենայն չարագործութեամբ։ Անոր համար Եւրոպայի Թագաւորները եւ սրբազան պապն Կղեմէս Ժ․ բոլորովին վերուցին անոնց կարգը։

ՏԱՅԱՍ պոռնիկ էր դուստր չարագործ եւ շահասէր կնոջ, որ տասուերկու տարուան աղջիկը մատնեց գարշ պոռնկութեան շահասիրութեամբ, եւ պատճառ եղաւ կորստեան շատ հոգւոց։ Երբոր լսեց սուրբն Սրապիոն ճգնաւոր՝ գնաց Տայասին քարոզեց՝ թէ ծածկագէտն Աստուած ամէն տեղ ներկայ է, եւ ամէն ծածուկ բան կը տեսնէ, ու սարսափելի է ահեղ դատաստանը։ Տայաս մէկէնիմէկ զղջացաւ բոլոր սրտով եւ հրապարակաւ կրակը ձգեց այրեց ամէն ըռզակն՝ որ մեղքով ժողվեր էր․ ու գնաց մտաւ կուսանաց վանքը։ Ուր նեղ եւ ողորմելի խցի մը մէջ իրեք տարի ճգնեցաւ սոսկալի մահացուցմամբ եւ կատարեալ ապաշխարութեամբ, նաեւ միշտ լալագին կ'աղաղակէր․ “ Որ ստեղծեր զիս, ողորմեա՛ ինձ ,,։

Ապա սուրբ ճգնաւորն Պօղ հրաշքով տեսաւ փառաց պսակ մը պատրաստուած 'ի Տեառնէ Տայասին համար վասն ճշմարիտ ապաշխարութեանը եւ անտանելի ճգնութեանցն։ Այս տեսիլքը լսելով սուրբ Արապիոն գնաց հանեց արգելանոցէն զերանելին Տայաս, որ քանի մը օրէն ետև հիւանդութեամբ փոխեցաւ առ Տէր յամի 345, և տօնեցաւ ։

ՏԱՏԻԱՆՈՍ էր այր ճարտարաբան և բարեհանճար եկեղեցական հեղինակ Բ. դարուն՝ Ասորի ազգաւ, որ աշակերտելով սրբոյն Յուստինոսի սորվեցաւ քրիստոնէական վարդապետութիւնն 'ի Հռոմ ։ Բայց յետ մահուան սուրբ վարդապետին դարձաւ իր հայրենիքն ու ընկաւ Վաղենտինեանց և Մարկիոնեանց մոլորութեան մէջ՝ դնելով կրկին պատճառ բարի և չար, բարին հեղինակ նոր կտակարանաց, և չարն հին կտակարանաց ։ Կը մերժէր ամուսնութիւն միս և գինի իբր գործ չար պատճառի ։ Կ'ուրանար յարութիւն մարմնոց և փրկութիւն Ադամայ. իսկ Փրկչին մարդեղութիւնը առաչօք կը դնէր ։ Ինքը խստակեաց ըլլալով հետեւողներն ալ մականուանեցան Ժուժկալք և Ջրամատոյցք. զի միայն ջրով կը պատարագէին ։ Ասոր գրած շատ գրեանքը կորած են. նաև ըստ ոմանց գրեր էր սա համաբարբառ չորս աւետարանաց, և այլն ։ Միայն կայ ճառախօսութիւնը ընդդէմ մնոտիապաշտութեան հեթանոսաց և վասն գերազանցութեան քրիստոնէական հաւատոյ ։

ՏԱՐԱԳՈՍ, Պրոբոս, և Անդրոնիկոս էին Տարսոնացի սիրելի բարեկամք իրերաց, որոնք Դիոկղետիանոսի հալածանքին ատեն մատնեցան Մաքսիմիանոսի դատաւորին ձեռքը ։ Երբոր աներկիւղ դաւանեցին զՔրիստոս, նախ ջարդեցին Տարագոսին կզակը, և ծեծելով ձգեցին բանտը ։ Պրոբոսն ալ նոյնպէս ծեծով քերեցին կողն ու կապանքով այն բանտին մէջ փակեցին ։ Անդրոնիկոսն ալ նոյն տանջանքով փորձեցին ու անոնց քով բանտարկեցին ։ Յետոյ իրեքը մէկտեղ տարին Մամեստիա, հոն ալ սոսկալի տանջանքով չարչարեցին ու ձգեցին գազանաց առջին. երբոր սուրբերը անվնաս պահեցան, գլուխնին կտրեցին. իսկ մարմիննին հրաշագործութեամբ ամփոփեցան յԻկոնիոն ։

ՏԱՐՍԱՅԻՃ Օրպելեանց էր իշխան Հայոց որդի Ելիկումայ, որ 'ի 1265 տիրեց Սիւնեաց աշխարհին ու սիրելի եղաւ Ապաղայ խանին Թաթարաց. նաև կոչեցաւ Աթաբէկ, զի թագաւորեցուց զԴեմետրէ որդին Վրաց արքային ։ Սա առաւ կին զդուստր ամիրային Արուղ խաթուն, որ քրիստոնեայ եղաւ ու ծնաւ իրեք որդիք Ելիկում, Փախրադոլա, և Ստեփաննոս, որ եղաւ արքեպիսկոպոս Սիւնեաց ։ Նորոգեց եկեղեցիներն ու վանքերը. Դեմետրէ ալ յանձնեց Տարսայիճին զկուսակալութիւնը Արարատեան աշխարհին ։ Որ յամի 1287 Ստեփաննոս որդին ձեռնադրել տուաւ արքեպիսկոպոս Սիւնեաց Կիլիկիայի Հայոց կաթողիկոսէն, և 'ի 1290 մեռաւ ու թաղեցաւ 'ի Նորավանս ։ Որուն իշխանութիւնը տիրեց երէց որդին. ասոնց ձեռքը մնաց երկար խաղաղութիւնք աշխարհքն Արարատայ և Սիւնեաց ։

ՏԵԼԵՄԱՔ էր որդի Ոդիսեայ թագաւորին Իթակայ, որ տղայ էր՝ երբոր հայրը գնաց Տրոյիոյ պատերազմին. մինչև եղաւ տասնըհինգ տարուան ։ Տեսաւ որ հայրը կ'ուշանայ, ու իշխաններն ալ կ'ուզեն մայրն առնելու, ելաւ հայրը փնտռելու․ առաջնորդ առաւ իրեն չաստուածուհին Աթենաս՝ ծպտեալ Մենտոր բարեկամին կերպարանքովը ։ Աստի այս Մենտորին հետ նաւարկելով ընկաւ շատ վտանգներու մէջ, մինչև զարմանալի կերպով գտաւ հայրը, որ հասաւ Իթակա իր աթոռը տասը տարիէն ետև, ու բոլոր թշնամիները կորուց, և այլն ։

Այս պատմութիւնը գեղեցիկ ձևացուցեր է Ֆենելոն Գաղղիացի մեծիմաստ եպիսկոպոսը մտացածին բանաստեղծութեամբ Տելեմաք անուն գրքով, որ կրկին թարգմանեցաւ հայերէն և տպեցաւ յամի 1826 և 1849 ։

ՏԵՂԵՍՓՈՐՈՍ էր սուրբ Հայր անապատական առաքելաշնորհ ազգաւ Յոյն, որ յաջորդեց յաթոռ առաքելապետին Պետրոսի յամի 142, և իբր տասներկու տարի կառավարեց ընդհանուր եկեղեցին իմաստութեամբ և քաջութեամբ ։ Այս քահանայապետ հաստատեց կոնդակաւ առաքելական աւանդութիւնները և քառասնորդական պահքը ամէն տեղ ։ Նաև սահմանեց՝ լատին ծիսով պատարագին սկիզբն երգել “փառք 'ի բարձունս Աստուծոյ„, և այլն ։ Զարմանալի բարեկարգութե՟ այնչափ պայծառացուց հաւատքն, որ հեթանոսները չար նախանձով բռնեցին, չարաչար տանջեցին երանելին վասն քրիստոնէութեան․ որով պսակեցաւ մարտիրոսութեամբ յամի 154 ։

Արդիւնք դիւցազանց զանձ անկապտելի
 Չիք նոցին խոչուն ըստ բերման բաղդի․
Այլ 'ի վեհութեան և 'ի հալածանս
 Միշտ միօրինակ առաքինանան ։

Մեհ ինձ հայրապետք Քրիստոսի փոխան
Որ սուրբ հաւատոյ սիրով մահացան.
Յանձն առեալ աստէն զամէն դըժընդակ
Ոնանց բարութեանց հասին անվըրանգ։

ՏԵՐՏՈՒՂԻԱՆՈՍ երէց Կարթագինեցի էր պերճաբան վարդապետ եկեղեցւոյ Գ. դարուն, այր իմաստուն և երկիւղած, որ թէպէտ հեթանոսաց զաւակ էր՝ աշակերտ անհաւատ փիլիսոփայից, բայց թափանցելով ճշմարտութե̄ կատարեալ քննութեամբ պատճառաց՝ լուսաւորեցաւ, ու ծագկեցաւ քրիստոնէութեամբ և ներհուն աստուածաբանութեամբ, մինչև պապանձեցուց փիլիսոփաները։ Ուստի շարադրեց գերազանց ջատագովութիւն մը պաշտպանելով քրիստոնէական սուրբ հաւատքը, և եղծանելով կռապաշտութեան պիղծ մոլութիւնը. զոր մատուց Կարթագինեցւոց իշխող Հռոմայ տէրութեանն։ Դարձեալ գրեց շատ իմաստալից գրեանք հին աղանդաւորաց և հերետիկոսաց դէմ մութ և խիստ ոճով, որ լաւ հասկընալու համար պէտք է աղէկ և շատ կարդալ, թէ չէ՝ կը մոլորի կարդացողը։ Այս պատճառաւ բազումք զինքն կը դատապարտեն իբր մոլորած ծերութեան ատենը, ըստ Մոնտանեանց ընծայելով հոգեղէն գոյացութեանց նուրբ մարմին մը անոնց հաստատ էութիւնն իմացընելու համար. դարձեալ ծանր մեղքերը անթողլի են կ՚ըսէր՝ և թէ հոգիք կը ծնին, զի են էակ, և այլն։ Սակայն շատ երևելի վարդապետք ջատագովեցին զՏերտուղիանոս մեկնելով այլաբանօրէն խրթին խօսքերը. ինչպէս մէկն ալ է սուրբն Կիպրիանոս, որ ամէն աստուածաբանական դժուար խնդիրները անոր վճռովը կը քակէր ու կ՚անուանէր իւր վարդապետն, և այն, որ և մեռաւ ութսունըհինգ տարուան յամի 245 ։

ՏԻԲԵՐ կամ ՏԻԲԵՐԻՈՍ Ա․ էր որդեգիր Օգոստոս կայսեր, որ շատ տեղ քաջագործութիւն ընելով՝ ծերակուտէն ալ ընտրուեցաւ կայսր Հռոմայ Օգոստոսէն ետև, ինչպէս որ նա որոշեր էր ։ Սա յամի Տեառն 15 հաստատուելով ինքնակալ՝ նախ երևցաւ քաջագործ առաքինի․ բայց քանի մը տարիէն ետև ընկաւ գարշ անառակութեանց և շռայլութեանց ետևէն, ու կորուց քաջութիւնը և քաղաքավարութիւնը ։

Ասոր տէրութեան 15 տարին Յովհաննէս Մկրտիչ երեսուն տարուան եկաւ անապատէն 'ի Յորդանան քարոզելով, և հետևեալ տարին մկրտեց Տէրն մեր աստուածային տեսլեամբ, և յայտնեցաւ Մեսիայն անհամար հրաշագործութեամբ, և իր սուրբ տնօրէնութիւնքն կատարեց ։ Հայոց թագաւորն Աբգար երբոր լսեց Քրիստոսի խաչուիլը՝ գրեց առ Տիբեր Պիղատոսին դէմ, յայտնելով անոր անիրաւութիւնը և Քրիստոսի սքանչելիքը ։ Կայսրը այնպէս շարժեցաւ ցաւակցութեամբ, մինչև առաջարկեց ծերակուտին, որ Յիսուսը դասեն իրենց աստուածներուն կարգը ըստ սովորութեան Հռոմայեցւոց ։ Տիբեր այս բանը գրեց իմացուց Աբգարին, ու մեծ պատիժ դրաւ Յիսուսի աշակերտացը չարախօսներուն ըստ Եւսեբերանին ։ Պիղատոս ալ այս պատճառաւ կանչուեցաւ 'ի Հռոմ և դատապարտեցաւ․ իսկ Տիբեր մեռաւ եօթանասունըութ տարուան՝ յամի Տեառն 39 ։

ՏԻԳՐԱՆ Ա. էր մեծազօր արքայ Հայկազն որդի Երուանդայ Ա. որ հօրմէն ետև թագաւորեց, ու շատ փառաւորեցաւ քաջագործութ՟բ տիրելով շրջակայ ազգերուն 565 տարի Քրիստոսէն առաջ, և մեծին Կիւրոսի հետ ելաւ Մարաց արքային Աժդահակայ վրան ու նիզակովը զարկաւ սրտին սատկեցուց զԱժդահակն, ու աւարն առաւ դարձաւ 'ի Հայաստան: Տիգրան ուրիշ պատերազմերու մէջ ալ նիզակակից եղաւ Կիւրոսի, ու յաղթեցին թշնամեացն: Նոյնպէս եղաւ տիրելն Բաբելոնի, ինչպէս կը հաստատէ նաև Երեմիա մարգարէն յասելն. "Առէք նշան 'ի վերայ երկրիդ. փող հարէք ընդ ամենայն ազգս. հրաւիրեցէք 'ի վերայ դորա գունդս. պատուէր տուք յինէն Արարատեան թագաւորութեանցն և Ասքանազեան գնդին, կանգնեցէք զնովաւ նետակալս, ելէք 'ի վերայ . . . դնել զերկիրն Բաբելացւոց յապականութիւն ": Ուրեմն Բաբելոն առնուած ատենը Տիգրան թագաւոր էր աշխարհին Արարատեան. որ քառասունըհինգ տարի թագաւորելէն ետև փառօք մեռաւ մեծանուն, որուն յաջորդեց քաջազօրն որդին Վահագն:

ՏԻԳՐԱՆ Բ. էր արքայ Արշակունի որդի Արտաշէսի Ա. որ 89 տարի Յիսուսէն առաջ յաջորդելով հօրը՝ իր քեռայրը Միհրդատ դրաւ իրեն փոխարքայ, ու հալածական ընելով Յոյները տիրեց բոլոր փոքր Ասիոյ, և յանձնեց աշխարհը Միհրդատին, որ կը տիրէր Պոնտոսի և Միջերկրեայց:

Տիգրան տարածելով իշխանութիւնը շատ թագաւորներու տիրեց ու կը ծառայեցընէր իրեն. որոնցմէ չորսը փառաւոր հագուած ետևէն կ'երթային ոտքով՝ և երբոր բազմած հրապարակաւ կը խօսէր , այն խեղճերը ձեռք կապած դիմացը կը կայնէին ։ Տիգրան յետոյ ըրաւ փառաւոր յաղթութիւններ տիրելով երկրին Ասորւոց և Կապադովկիոյ , և այլն ։

Ապա որդին Արտաւազդ Ա. Թագաւորեցուց Արարատեան աշխարհին վրա , ու ինքն պատերազմելով հաշտութիւն խօսեցաւ Հռոմայեցւոց հետ , ուր բռնեցին Հիւրկանոս քահանայապետը և ուրիշ գերիներ , որ բնակեցուց Վան քաղաքը ․ իսկ ինքն Տիգրան 54 տարի թագաւորելէն ետև մեռաւ ութսունհինգ տարուան իր հիւանդութեամբն ։

ՏԻԳՐԱՆ Գ․ կամ ՎԵՐՋԻՆ թագաւորեց յամի 153 , և դէմ ելլելով՝ քաջութեամբ յաղթեց Հռոմայեցւոց զօրքին ․ անոր համար Վերոս Լուկիոս ելաւ վրան կայսեր կողմանէ ․ բայց նա՛ չհասած Տիգրան խաբուեր էր աղջկանէ մը ՚ի փոքր Հայս , և բռնուեր էր Հռոմայեցիներէն ։ Վերոս երբոր տեսաւ զան վայելուչ անձն կապած՝ ցաւակից ըլլալով ազատեց , ու թագաւորեցուց , և ղրկեց փառօք Հայաստան ։ Ու այս առաքինի մեծանձնութեան յիշատակ ստակ կտրեց ․ մէկ կողմը կայսրն նստած գահն ու թագ կը դնէ Տիգրանին գլուխը այսպիսի մակագրութեամբ լատիներէն ․ “Թագաւոր տուեալ Հայոց„ ։ Իսկ մէկալ կողմը միայն գլուխն էր կայսեր այս վերտառութ̃բս ․ “Առմէնիաքուս„ այս ինքն Հայկական ։ Տիգրան երբ դարձաւ Հայոց աշխարհը՝ վասն շնորհակալութեան կռոց կանգնեց սեղան իր եղբօրը Մաժան քրմապետին գերեզմանին վրա ։ Նաև հաստատեց քանի մը նախարարութիւն բարեկարգելով տէրութիւնը · ապա մեռաւ յամի 193 · որուն յաջորդ նստաւ Վաղարշ իր որդին ։

Աւա՜ղ վաղանցուկ աշխարհիս բաղդին
 Թշուառ զերջանիկն առնէ 'ի կիտին ·
 Փառաւորին թուէր բաղդն յաւերժական
 Անդէն 'ի հրճուանսն անկաւ 'ի կործան ։
Տիգրան գոռ եդ զինքն յանմահից սակի
 Պաշտեալ 'ի բիւրուց իբրեւ Բել նախնի ·
 Յանկարծ դարձ բաղդին ւ' արագոտն օրհաս
 Իջուցին 'ի հող զպետն և պաշտօնեայս ։

ՏԻՄՈԹԷՈՍ սուրբ առաքեալ էր Լիւստրացի և սիրելի աշակերտ սրբոյն Պօղոսի, ուղեկից և գործակից նորա առաքելական երևելի աշխատութեանց մէջ, շնորհալից և կատարեալ առաքինութեամբ և հաւատով ։ Մինչև ձեռնադրեցաւ անկէց եպիսկոպոս Եփեսոսի, երբոր դեռ հոն չէր հաստատեր Յովհաննէս իր աթոռը · և կը քարոզէր միշտ բանն կենաց Ներոն կայսեր օրը ։ Պօղոս առաքեալ գրեց իրեն երկու նամակ աստուածային իմաստութեամբ և հայրական ընտիր խրատներով լեցուն յամի 64 և 65 ։ Որով զօրացեալ սուրբ աշակերտը՝ երբոր տեսաւ Արտեմեայ դից տօնին հեթանոսաց պղծութեան լկտի գործքերն, սկսաւ քաջութեամբ քարոզել և պատուիրել իր ժողովուրդին՝ որ հեռու կենան այն պղծութեանց ։ Իսկ կռապաշտները կատղելով թափեցան երանելւոյն վրայ ու քարով փայտով զարկին նահատակեցին սուրբ առաքեալը յամի 96, զոր աշկերտները տարին թաղեցին պատուով · իսկ 'ի Դ· դարուն նշխարքները փոխադրելով 'ի Պօլիս՝ հանգուցին յեկեղեցին Առաքելոց ։

ՏԻՄՈԹԷՈՍ դպիր Եգիպտացի ընթերցող եկեղեցւոյն, որ ամուսնացեալ Մաւրա կուսին հետ տանջուեցաւ հաւատքի համար Թեբայիդի դատաւորէն հրացեալ շամփուրով, և ուրիշ սոսկալի չարչարանքով: Ուր երբոր չկարցաւ յաղթելու քաջ նահատակին, բերին նոր հարսն զարդարած յորդորելու համար զայրն, որ հնազանդի կռապաշտ բռնաւորին: Իսկ երանելին քաղցր խրատներով անանկ շարժեց հարսին սիրտն՝ որ քաջութե՟ ըսաւ դատաւորին. Ես ալ քրիստոնեայ եմ ինչպէս իմ էրիկս: Ան ատեն հարսը մերկացուցեալ ծեծեցին, ու մատերը կտրտելով ձգեցին եռացեալ ջրին մէջ, և տաք ձէթի մէջ: Բայց երբոր մնաց նա անփնաս, խաչեցին երկուսն ալ պատին վրայ մէկմէկու դիմաց. ուր մնացին կենդանի ինն օր. ապա ջերմեռանդն սրտով փոխեցան առ Քրիստոս, և եղան տօնելի:

ՏԻՄՈԹԷՈՍ Կուզ էր բռնաւոր պատրիարգ Աղեքսանդրիոյ Ե. դարու, այր խռովարար և տգէտ, յամառ ջատագով հերձուածողաց Եւտիքեսի և Դիոսկորոսի: Որ չարութեամբ ապըստամբութիւն հանեց ու Պռոտերիոս Աղեքսանդրիոյ պատրիարգը աթոռէն ձգեց, նաև որով սպաննել տուաւ աւազանին քով, և ինքն անարժանութեամբ նստաւ պատրիարգ: Լեոն կայսրն երբոր լսեց զան՝ աքսորեց Կուզն 'ի Գանգրաս, որ նզովեցաւ 'ի ժողովն Հռոմայ յամի 478:

ՏԻՄՈԼԷՈՆ էր քաջ զօրավար Յոյն, որ գնաց 'ի Սիկիլիա ընդդէմ բռնութեան Դիոնեսիոսի և Կարքեդոնացւոց՝ ըստ խնդրանաց բնակչացն ։ Ուր տասը նաւով և հազար զօրքով ազատեց Սիրակուզա մայրաքաղաքը բռնակալին ձեռքէն, և զինքն ալ բռնեց քաջութեամբ զրկեց ՚ի Կորնթոս · նոյնպէս յաղթեալ սպաննեց Կարքեդոնացւոց զօրապետը և ուրիշներն, ու բոլոր Սիկիլիայի կղզին ալ ազատեց հաշտութիւն ընելով, և այլն ։ Այսչափ յաղթութեանց ետև առանձնացաւ հասարակ մարդու պէս անշուք կեանք կը վարէր ընտանեօքը, և ոչ երբէք պատիւ ուզեց, այլ միայն խաղաղութիւն · զի իրեն փառքն էր իւր քաջագործութիւնն ու արդարութիւնը ։ Ուստի մեռնելէն ետև կանգնեցին իրեն փառաւոր մահարձանը Սիրակուզայի հրապարակին մէջ, և կոչեցաւ այն՝ Տիմոլէոնեան հրապարակ ։

ՏԻՄՈՆ առաքեալ էր եօթանասունևերկու աշակերտներէն Քրիստոսի, և եօթն սարկաւագներէն, որ ձեռնադրելով եպիսկոպոս՝ եղաւ առաջին հովիւ ՚ի կողմանս Արաբիոյ և Ասորւոց · ուր հրաշագործութեամբ քաղքէ քաղաք շրջելով կը քարոզէր և կը լուսաւորէր շատ հեթանոսներ ։ Մինչև մատնութեամբ Հրէից կռապաշտները բռնեցին զերանելին ու սոսկալի տանջեցին, և երբոր չկարցան յաղթելու անոր քաջութեանը՝ հրով նահատակեցին ։ Իսկ ըստ ոմանց ողջ ելաւ կրակէն ու աղօթելով աւանդեց հոգին, կամ խաչին վրա կատարեցաւ ՚ի Կորնթոս, և տօնեցաւ ։

ՏԻՏԱՆ, Տիտանեանք, ըստ եբր · Ռափա, Ռափայիմ, կամ Ռափացիք, այս ինքն Հսկայ, Հսկայք, առնք ըստ առասպելաց՝ էին որդիք երկնի և երկրի թշնամիք Արամազդայ, երբոր յանդգնութեամբ դէմ ելան երկնային զօրութեանց, պատժեցան Դիոսէն ու յանդունդս կորան։ Ինչպէս կը յիշէն սուրբ գիրք և սուրբ Հարք. «Ոչ որդիք Տիտանացւոց սատակեցին (զհսկայն) և ոչ բարձունք հսկայք յարեան ի վերայ նորա, այլ Յուդիթ։ Յետ ջրհեղեղին Տիտանն ընդ Կրոնի ի մարտ գրգռէր» և այլն։ Տ. Կռոնոս։

ՏԻՏՈՍ գլխաւոր աշակերտ սրբոյն Պօղոսի, էր Յոյն Կրետացի հեթանոս՝ դարձեալ ի քրիստոնէութիւն բանիւ առաքելոյն, և կրթեալ հելլենական ուսմամբ եղաւ անոր թարգման և գրագիր, մինչև գնաց հետը յԵրուսաղէմայ ժողովը։ Բայց յառաջ հրաշալի ձայն մը լսեց երկինքէն, թէ հարկ է քեզ փնտռել ուրիշ ճամբայ մը փրկութեան. մէկէնիմէկ մարգարէական գրոց և աւանդութեանց հետևելով կը քննէր ճշմարտութիւնն աստուածային։

Ապա երբ քսան տարեան եղաւ՝ Կրէտի իշխանն իւր հօրեղբայրը ղրկեց զինքն յԵրուսաղէմ, որպէս զի լաւ մը ստուգէ Յիսուսի հրաշքները։ Ուր երբոր հասաւ ու ականատես եղաւ Փրկչին և աստուածահրաշ գործոցն, երկրպագութիւն ըրաւ Տեառն, ու մնաց աշակերտացը քով մինչև ի Հոգեգալուստն։ Ապա ձեռնադրեալ եպիսկոպոս՝ եղաւ գործակից Պօղոսի ի քարոզութիւն աւետարանին՝ յետոյ մնաց ի Կրետէ իբրև առաջնորդ Գորտինի քաղաքի։ Որուն հոգելից համառօտ թուղթ մը գրեց սուրբ Առաքեալը Մակեդոնիայէն գեղեցիկ խրատներով։

Տիտոս դարձեալ շրջեցաւ Պօղոսին հետ յԱսիա և յԵւրոպա, կամ ի Հռոմ. և յետ կատարման առաքելոյն՝ նորէն դարձաւ 'ի Կրետէ : Եւ հօն առաքելական քարոզութեամբ լուսաւորեց կղզւոյն բոլոր ժողովուրդը, հաստատելով եկեղեցիներ և քարոզիչներ, այլովք հանդերձ : Ապա բարւոք ծերութեամբ իբր իննսուն տարւան աւանդեց հոգին ցնծութեամբ հրեշտակաց ձեռքը, որք երևցան հօն երանելոյն :

ՏԻՏՈՍ մեծահամբաւ իշխանակալ Հռոմայեցւոց էր որդի Վեսպասիանոսի կայսեր, այր քաջ, բարեբարոյ և մարդասէր : Հրէայք երբոր ապստամբեցան, ելաւ հօրը հետ մէկտեղ Երուսաղէմի վրան, ու երբոր հայրը կայսր ընտրուեցաւ, ինքը պաշարելով զԵրուսաղէմ՝ սաստիկ սով ձգեց քաղաքն, ինչուան ծնողքը զաւակնին կ'ուտէին . Տիտոսի սիրտն այրելով շատ ջանաց՝ որ հնազանդեցնելով ազատէ Հրէաները և քաղաքը : Բայց երբոր անոնց խօսքը չանցաւ, սաստկացուց պատերազմն ու մեծ աշխատութեամբ տիրեց քաղաքին, և երբոր կը ջանար անվնաս պահել տաճարը, ահա զինուոր մը տանիքէն կրակ ձգեց այրեց տաճարը : Ան ատենը ներս լեցուեցան Հռոմայեցիք կրակ տուին այրեցին ամէն կողմէն քաղաքն ալ տաճարն ալ, ըստ բանի Տեառն, “Ոչ մնասցէ այդր քար 'ի վերայ քարի, որ ոչ քակտեսցի ”: Յովսեպոս ջարդուածներուն թիւը կը դնէ միլիոն մի և երեքհարիւր հազար : Աս ալ կը պատմէ թէ, երբոր Տիտոս մտաւ յԵրուսաղէմ ասաց . “Առաջնորդութեամբն Աստուծոյ տեղւոյս 'ի գլուխ հանաք զայս պատերազմ . այս Աստուած է՝ որ հալածեաց զՀրէայս յամրոցէ աստի, որում ոչ ոյժ մարդկային, և ոչ մեքենայք կարող էին վնասել„ ։ Երբոր իրեն պսակ տուէին 'ի պատիւ այս յաղթութեան . նա անարժան զինքն համարելով ասաց . „ Չեմ ես յաղթողն 'ի մարտիս , այլ միայն ձեռնտու աստուածային վրէժխնդրութեանն „ ։ Տիտոս երբ դարձաւ 'ի Հռոմ, ըրաւ հօրը հետ մէկտեղ փառաւոր հանդէսն յաղթանակի . ուր մտան անարգանօք գլխաւոր հրէայք Սիմոն և Յովհաննէս՝ պարագլուխք ապստամբութեն եօթըհարիւր հոգիով ։ Այն հանդէսին մէջ թափօրով բռներ կը տանէին տաճարին սուրբ սեղանը , աշտանակն ալ եօթն ճրագարանով, օրինաց գիրքն ու ծերանեգոյն վարագոյրները սրբութեան սրբութեանց ։

Այն ատենը կանգնեցին յաղթական կամարն ալ առ 'ի յիշատակ՝ որ մինչև հիմա կայ անկործան . վրան ալ կ'երևնան փորուած ձևեր սեղանին և աշտանակին . նաև տպեցան քանդակակնիքք (տամղա), փորուած վրան կին մը գլուխը կախած և թևին վրա ընկած՝ այսպիսի մակագրութեամբ . „ Հրէաստան նուաճեալ„ ։ Տիտոս այսպիսի փառօք և իմաստուն քաղաքավարութեամբ այնպէս սիրելի էր ժողովուրդին , որ հայրը մեռածին պէս՝ ընտրեցին կայսր Հռոմայ յամի Տեառն 79 ։ Ուր իր առջի գործքն եղաւ բարեկարգել կայսերութիւնն ու իւր տունը ամենայն բարելաւութեամբ և ուղղութեամբ ։ Օր մը երբոր չունեցաւ առիթ ուրիշին բարիք ընելու ասաց ցաւելով . „ Ո՛հ բարեկամք իմ, ահա այսօրս կորուսի „ ։ Անչափ ողորմած և ներողամիտ էր Տիտոս , մինչև կոչուեցաւ . „ Գորովանք Հռոմայ „ ։ Սակայն շուտով զրկեցաւ Հռոմ առաքինի աշխարհակալէս . որ ընկաւ ծանր հիւանդութեան մէջ, ու *տանել տուաւ զինքն երկիրն Սաբինայ, ուր մահուանը մօտ աչքը վեր վերուց, հառաչեց ցաւագին, ու մէկէն հոգի տուաւ 41 տարուան յամի 81։*

ՏԻՐԱՆ Բ. *էր արքայ Հայոց Արշակունի, որդի Արտաշեսի Բ. որ նորոգեց խաղաղութե՟ ուխտը Անտոնինոսի Պիոսի կայսեր հետ՝ յղելով անոր աշխարհին հարկը՝ կայսրն ալ զրկեց Տիրանին թագ արքայական և ծիրանի։ Անոր յիշատակ փորագրել տուաւ նոր դրամ. մէկ կողմն իւր պատկերը՝ ձեռքը դրած Տիրանայ վրան իբր թէ ծիրանի կը հագցունէ այսպիսի գրուածով.* “ԹԱԳԱՒՈՐՆ ՀԱՅՈՑ ՏՈՒԵԱԼ”։ *Տիրան ետքը գնաց յԱկեղեաց գաւառ ու արքունի պալատ կանգնեց իրեն, սակայն լեռան քովէն երբոր կ'անցնէր՝ գլորելով ընկաւ վրան հիւս, կամ գունտ ձեան ու խղդեց զինքը յամի 152, որ թագաւորեց քսանւերկու տարի։*

ՏՈԲԻԹ *կամ* ՏՈՎԲԻԹ *էր Եբրայեցի երկիւղած առաքինի, Նեփթաղիմայ ցեղէն, գերեալ և բնակեալ 'ի Նինուէ։ Ուր երբոր Սենեքերիմ ամօթով դարձաւ Երուսաղեմէն՝ կոտորելով կը ջարդէր Հրեաները, բայց զանոնք կը թաղէր Տովբիթ գթալով խեղճերուն, ասոր համար թագաւորը կ'ուզէր զինքն ալ սպաննել։ Ուստի փախաւ անկէց Տովբիթ, և անոր մահուանէն ետև նորէն դարձաւ, ու պատուիրեց որդւոյն Տուբիայի հեռանալ Նինուէէն, որ կործանելոց էր ինչպէս որ եղաւ. և յորդորեց բարեպաշտ և առաքինի ըլլալ միշտ։ Յետոյ զրկեց որդին Ռափայէլ հրեշտակապետին հետ առ Ռագուէլ ազգականը՝ որպէս զի* անոր պահ տուած արծաթն առնէ ու բերէ՝ հոն տեղ ալ գլխահար աղջիկն նորա Սառա հրաշքով ազատեցաւ ու Տուբիայի հետ կարգուեցաւ ։

Անկէց միաբան դարձան առ Տովբիթ · որուն կոյր աչքը ձկան լեղիով բժշկեցին, ու հրեշտակն աներևոյթ եղաւ ։ Իսկ ծերն ան ատենը յօրինեց երգ օրհնութեան առ Աստուած · և ապա երկար կեանքով հարիւր յիսուն տարւան փառաւորապէս վախճանեցաւ 660 տարի Յիսուսէն առաջ ։

Գիրք Տովբիթայ ԺԴ գլուխ կը բովանդակի · ուր կը գուշակէ կործանումն Երուսաղէմի և դարձումն գերութենէ, ջնջումն կռապաշտութեան և դարձն հեթանոսաց յաստուածպաշտութիւն ։ Այս սուրբ գիրքը գրեցաւ քաղդէարէն, և ապա թարգմանեցաւ ուրիշ լեզուներ ։ Իսկ Տուբիա յետ մահուան հօրն, և մօրն Աննայի՝ գնաց զաւակներով առ աներ իւր Ռագուէլ և ժառանգեց անոր բոլոր ապրանքը Սառային հետ ։ Նաև հօրը բարեպաշտութեամբն երկարակեաց ըլլալով տեսաւ շատ թոռան թոռներ մինչև հինգերորդ ծնունդն · ապա մեռաւ խաղաղութեամբ հարիւրքսանըեօթը տարւան · բայց նախ քան զմահն լսեց Նինուէի կործանումն Նաբուգոդոնոսորէն ։ Տ · Սառա ։

ՏՈՄՍԱԿԱՒՈՐՔ էին հաւատացեալք Դեկոսի հալածանքին ատենը, որոնք հրապարակական կռապաշտութենէ ազատելու համար կ'երթային դատաւորներէն կ'առնուին տոմսակ իբր թուղթ վկայական ։ Եւ անով ապահով կ'ըլլային թէ հնազանդ են կայսեր, և նեղութիւն չէին քաշեր հաւատքի համար · վասն զի դատաւորները հրապարակաւ կը կարդային զայն վկայելով ստութեամբ թէ անոնք զոհեր են կռոց, և այլն ։

Այն տամանակին գրուածքը թէպէտ ճշմարիտ չէր, բայց մեծ մեղք համարեցաւ տամակաւոր քրիստոնէից․ մինչ զի Ափրիկէի եկեղեցին զանոնք ուրացող համարելով ոչ հաղորդեցաւ հետերնին՝ մինչև որ երկար ապաշխարութեամբ, և նահատակաց միջնորդութեամբ չարդարացան, և ապա հազիւ ազատեցան կանոնական պատիժէն, ինչպէս կը յիշէ սուրբ Կիպրիանոս ։

ՏՐԱՅԻԱՆՈՍ Ուլպիոս էր կայսր Հռոմայ քաջ և վեհափառ, ազգաւ Սպանիացի ։ Ու մեծ անուն ըրաւ Տիտոսի պատերազմին մէջ Հրէից դէմ, մինչև որդեգրեցաւ Ներուաս կայսերէն, որուն մահուանէն ետև ամենուն հաւանութեամբ ընտրեցաւ ինքնակալ Հռոմայ յամի Տեառն 98 ։

Տրայիանոս փութով Գերմանիայէն դարձաւ Իտալիա, ու քալելով մտաւ Հռոմ, որ փառասէր չերևնայ, և առատաձեռնութեամբ ու ներողամտութեամբ շատ սիրելի եղաւ ժողովուրդին․ զինքն տեսնելու փնտռողներուն դիմացը կ՚ելլէր ու ընդունելով կը պագանէր ։

Երբոր լսեց անոնց տրտունջը այս չափազանց ընտանութեանը համար ասաց, “Կ՚ուզեմ կատարել զայն, զոր կը ցանկայի որ ուրիշ թագաւոր մը ինծի ընէր երբոր հասարակ մարդ էի ։ Նաև գրեց արքունեաց վրան այսպէս․ “Պալատ հասարակաց” ։ Չէր ուզեր որ իր անուամբ արձան կանգնեն․ խոնարհամիտ էր և զուարթաբարոյ ։ Յամի Տեառն 112 առաւ Սելևկիա և Տիզբոն Պարսից մայրաքաղաքը ։

Յետոյ գնաց ապստամբ Հրէից վրայ, և շատ մարդ կորուց. գրեթէ բնաջինջ ըրաւ Պաղեստինու Հրէաները, շատն ալ աքսորեց աշխարհիս ծայրը։ Տրայիանոս այսպէս փառօք թագաւորելով մեռաւ վաթսունըվեց տարւան յամի 117 'ի Տրայիանուպօլիս։ Անոր մարմնին մոխիրը տարին 'ի Հռոմ թաղեցին Տրայիանոսի սիւնին տակը, որ ինքն կանգներ էր բերած աւարներէն Դակաց յաղթած ատենը։ Պլինիոս փոքրն ճառ խօսեցաւ անոր վրայ՝ գովելով զինուորական ձեռքը, մարմնոյն բարեչափութիւնն, ժուժկալութիւնն ու չարքաշութիւնն։ Սիրող էր գինւոյ և պատուող հանճարաւոր ճարտարաց. կ'ատէր բամբասողները և ծոյլերը, որով պայծառացուց բովանդակ Իտալիա ամենայն բարելաւութեամբ. շատ մեծագործ և օգտակար շէնքեր ալ շինեց։ Անոր անունը յանկալի էր ժողովուրդին բերանը. մինչ զի բերկրութեանց մէջ կ'աղաղակէին. “Երջանիկ լիցիս քան զՕգոստոս, և լաւագոյն քան զՏրայիանոս”։ Սակայն դիցամոլութեամբ հալածանք հանեց, ու սուրբ Իգնատիոս աստուածազգեացը նահատակեց։

ՏՐԴԱՏ կամ ՏՐԴԱՏԻՈՍ սուրբ Թագաւոր Հայոց բազմայաղթ՝ էր որդի Խոսրով Ա. արքային, որ հայրը մեռնելէն ետև Արտաւազդ նախարարը փախուց 'ի Կեսարիա, և հոն սնաւ և մեծցաւ Տրդատ։ Ապա զօրանալով գնաց 'ի Հռոմ ու իր քաջութեամբ անուանի եղաւ Պրոբոս կայսեր օրը՝ կենդանեաց հետ կռուելով հանդէսներու մէջ։ Յամի Տեառն 284 Դիոկղետիանոս կայսր պատերազմ բացաւ Գոթաց արքային Հռչէի հետ, որ ուզեց մենամարտութեամբ վճարել պատերազմի ։ Երբոր կայսեր դժուար եկաւ այս բանը, հասկըցուցին իրեն թէ միայն Տրդատ կարող է գլուխ տանել այս յաղթութիւնը ։ Ուստի հագաւ Տրդատ կայսերական զգեստն ելաւ Հոչէի դէմ, բռնեց զանիկա ու քաջութեամբ բերաւ կայսեր առջև, որ ուրախութեամբ փաթաթեց զՏրդատ ։

Ապա երբոր իմացաւ թէ Խոսրով թագաւորին որդին է՝ թագ դրաւ գլուխն ու իր զօրքովը ղրկեց Հայաստան, որ տիրէ թագաւորութեանն ՚ի 286 ։ Տրդատ մեծաւ զօրութեամբ հասաւ Հայաստան եւ միացուցեալ հետը նախարարներն աւելի զօրացաւ Պարսից դէմ ։ Ապա երբոր գնացին յԵկեղեաց գաւառը սուրբ Գրիգոր Տրդատայ հետն էր · որուն հրամայեց որ երթայ հոն կռատունը Անահիտ կուռքին գլուխը պսակ դնէ չնորհակալութեամբ · բայց Լուսաւորիչ հրաժարելով քարոզեց զՔրիստոս ու տանջեցաւ Տրդատէն, որ վերջը ձգել տուաւ ՚ի Խոր վիրապը թունաւոր զեռնոց մէջ, եւ այլն ։ Տ · Գրիգոր ։ Տրդատ յետ մեծամեծ յաղթութեանց թշնամեաց դէմ յամի 291 ամուսնացաւ Աշխէն թագուհոյն հետ, որ էր դուստր արքային Ալանաց, որ ծնաւ Բ · Խոսրովը ։ Իսկ յամի 300 նահատակելով Հռիփսիմեան սուրբ կուսանքն չարաչար պատուհասեցաւ Տրդատ · մինչ զի մոլեգնելով խոզացեալ եղաւ, եւ ժողովուրդն ալ պատժեցաւ սոսկալի պատուհասով ։ Տ · Հռիփսիմէ ։ Ան ատեն Խոսրովիդուխտ քոյրն Տրդատայ աստուածային տեսիլքով բերել տուաւ զսուրբ Լուսաւորիչն՝ որ բժշկեց զՏրդատ եւ ամէն դիւահարները, ու լուսաւորելով ազգը սուրբ վարդապետութեամբ մկրտեց անթիւ բազմութիւն Եփրատ գետին քով. ուր երեւցաւ յերկնից լուսեղէն նշան խաչի. Անկէ ետեւ ոչ միայն Տրդատին անունը փոխուելով Յովհաննէս մկրտուեցաւ, այլ եւ ինքն բոլորովին նոր մարդ եւ այր Աստուծոյ դարձաւ. Գործակից եղաւ սուրբ Լուսաւորչայ լուսաւորելով ազգը եւ ծաղկեցնելով սուրբ հաւատքը. շինելով վանքեր եւ եկեղեցիներ, այլովքն հանդերձ. Այս ծերութեան ժամանակը առանձնացաւ 'ի Սեպուհ Լուսաւորչին ճգնարանը. ուսկից կանչեցին զինքը ապերախտ իշխանները. երբոր չուզեց երթալ, թոյն մահու խմցուցին սուրբին ութսունըհինգ տարուան յամի 341. եւ հոն վախճանեցաւ գոհութ՟բ. Այր նման առաքինափայլ վարքով եւ սրբութեամբ փոխեցան առ Աստուած Աշխէն թագուհին եւ կուսակրօն Խոսրովիդուխտ քոյրն, որ մէկտեղ կը տօնէ սուրբ եկեղեցին.

Հայկայ ազգաց Տրդատ հրաշափառ
Ընդդէմ յաղթական կորովի անձաւ.
Արութեամբ բազկին տիրեալ հայրենեաց
Բարձրացոյց շքնաղ զփառս Արշակունեաց.
Յաւէտ պերճացաւ շնորհօք տէրունի
Ի պայծառ լուսոյ արփւոյն Գրիգորի.
Յորում պճնեցան ազգք Հայաստանեայց
Որ լոյս հաւատոյ զինեալք քաջընթաց.

ՏՐԻԴԵՆՏԵԱՆ ընդհանուր ժողով արեւմտեան բազմաթիւ Հայրապետաց, Արքայից եւ ներհուն Աստուածաբանից՝ եղաւ 'ի Տրիդենտոն քաղաք Թիրոլոյ 'ի սրբազան պապէն Պօլէ Գ. 'ի 1545, ընդդէմ նորաղանդից Լութերի, Կալվինի, եւ Զուինգլիոսի, նաեւ այլոց. եւ վասն եկեղեցական բարեկարգութեանց. որ շատ զգուշութեամբ քննելով սահմանեց, և նորաղանդից դէմ իմաստուն և զօրաւոր վճիռներ հին սուրբ ժողովքներուն կանոնները հանեց, անանկ որ մինչև հիմա եկեղեցին կարօտ չեղաւ նորէն ընդհանուր ժողով գումարելու։ Սակայն անպակաս մասնաւոր ժողովներ կը գումարին թէ ազգային, և թէ գաւառական վասն բարեկարգութեանց եկեղեցական գործոց, վասն բարի վարուց, և այլն։

ՏՐԻՍՄԵԳԻՍՏՈՍ Հերմէս եռամեծ էր մեծահամբաւ իմաստասէր Եգիպտացի, որ ծաղկելով Աբրահամու նահապետին ժամանակը, քահանայութիւնն ու աշխարհական իշխանութիւնը մէկ ըրաւ միացուց։ Ասոր և իր Թօթի որդուն կ'ընծայեն նախնիք գրոց գիւտը. այլ և Եգիպտացւոց օրէնքներն, ու երաժշտութիւն, զոհագործութիւն, և այլն։ Մինչ զի սա համարեցաւ սկիզբն քիմիականութեան և ուրիշ բնական գաղտնեաց. որուն անուամբ հանեցին բնախօսութե՟ գիրք մը, և գաղղիական թարգմանութիւնը տպած է 'ի Փարիզ յամի 1626։ Կան երկու ճառեր ալ իր անուամբը, որ համարին գրեալ Բ. դարուն, և այլն։

Ոմանք ալ կարծեցին թէ այս փիլիսոփայ էր Մովսէս մարգարէն փոխեալ դիցաբանութեամբ Տրիսմեգիստոս պատգամաւոր եռամեծ։ Լակտանտիոս հնախօսն ալ այս Իմաստասիրիս վրայ այսպէս կը խօսի. “ Սա գրեաց մատեանս առ 'ի ճանաչել զաստուածայինս. յորս ճառէ զմեծութիւն գերագունի և միայնոյն Աստուծոյ. և նովին անուամբ կոչէ զնա, որով մեք զԱստուած և զՀայրն ”։

ՏՐԻՓԵՆԱ կոյսն Հելլեսպոնտացի էր դուստր Անաստասիոսի հեթանոս իշխանի և մօր քրիստոնէի ։ Որ հեթանոսաց տօնին ատենը շարժեալ աստուածային նախանձով սկսաւ համարձակ անարգել կռապաշտից կուրութիւնը, խրատելով զանոնք՝ որ դառնան ու պաշտեն զԱստուած ճշմարիտ հոգւով և ճշմարտութեամբ ։ Ուստի բռնեցին սուրբ կոյսը, տանջեցին հրով. որ մնաց կենդանի նաև տանջող մեքենաներէն ։ Յետոյ կապեցին զերանելին երկու ցուլի մէջ ու սաստիկ վազցընելով երկու ճղքեցին. որուն նահատակութիւնը կը տօնեն ամենայն քրիստոնեայք ։

ՏՐԻՓՈՆ նշանագործ վկայն էր ժամանակակից Գրիգորի սքանչելագործին, Փռիւգիացի, որբ մնացեալ հօրմէն. զոր բարեպաշտ մայրը մեծցուց աստուածային երկիւղիւ և աղօթասիրութեամբ ։ Ուստի մանկութենէն սկսաւ հրաշագործութիւն ընել. և աղօթքով անբան կենդանիներն ալ բժշկել ։ Անգամ մը երբոր սագ կ՚արածէր՝ ընկերները տեսան որ տկարները աղօթքով կ՚առողջացընէր. տղուն մէկը օձէն զարնուելով, երբ Տրիփոնին օգնութիւնը խնդրեց, անոր աղօթքով ազատեցաւ մահուանէ ։

Անկէց ետև շատ տեղ պտըտելով մեծամեծ հրաշքներ կը կատարէր անուամբ Յիսուսի հալածելով դևերը, և այլն ։ Մինչև տարին զինքն 'ի Հռոմ. ուր բժշկեց Գորդիանոսի կայսեր դուստրն ։ Յետոյ Դեկոսի հալածանքին ատենը բռնեցին սուրբը վասն հաւատոյ, և բոցի վրա խորովեցին, սրով ալ խոցոտեցին, և ձիոց կոխոտել տուլին . բայց երբոր ամենքն անվնաս մնաց զօրութեամբ Տեառն, ապա նահատակեցին սրով յամի 250 ։

Մաղթանք արդարոց հալածիչ դիւաց
 Օ էն հատու սրբոց ընդդէմ թշնամեաց .
 Սրով քաջ հարեալ ըզնետս բանսարկուին
 Սանեցին ըզքռունս յանել գեհենին ։
Վանի մեծահրաշ շնորհք երկնաւորին
 Գործէ հրաշագործ և զմատաղ մանկտին .
 Նահատակօրէն զօրութեամբ ոգւոյ
 Ըմբռնալ 'ի կարգ երկնաձեւ զուարթնոց ։

Փ.

ՓԱԲԻԱՆՈՍ կամ **ՓԱՍԻԱՆՈՍ** էր սուրբ քահանայապետ Հռոմայ ընտրեալ յաթոռ սրբոյն Պետրոսի յամի 238, որ շուտով մը ղրկեց քարոզիչներ 'ի Գաղղիա և զարմանալի ջանքով զօրացուց սուրբ հաւատքը տասնըհինգ տարի գեղեցիկ բարեկարգութեամբ և իրեն բարի վարքովը : Կը պատմեն թէ ընտրութեան ատենը հանդէսին մէջ երևցաւ աղաւնի մը և հեզիկ թռչելով նստաւ սուրբ հայրապետին գլխուն վրայ : Սիրով զօրացեալ հանեց շատ մը կոնդակներ, ու սահմանադրեց եպիսկոպոսներուն որ՝ տարուէ տարի աւագ հինգշաբթի օրհնեն սուրբ մեռոն. և դրաւ եօթն սարկաւագ, որ աղքատները հոգան : Նաև շատ մատուռներ և վկայարաններ շինեց գետնափոր գերեզմաններուն մէջ նահատակաց համար 'ի պատիւ նշխարաց սրբոց և 'ի քաջալերութիւն վկայից : Ապա ինքն ալ փառաւոր վկայութեամբ նահատակեցաւ վասն սուրբ հաւատոյ Դեկոսի հալածանաց ատեն յամի 253 :

ՓԱԲԻՈՍ Մաքսիմոս էր մեծապատիւ Հիւպատոս և հրամանատար զօրաց Հռոմայ, 324 տարի Քրիստոսէն առաջ : Անգամ մը երբոր

Պապիրիոս մեծ սպարապետը մեկնեցաւ բանակէն՝ ասոր յանձնեց բանակը պատուիրելով որ չպատերազմի թշնամւոյն դէմ։ Բայց երբոր նա ուշացաւ, ու Փաբիոս յաջող առիթ ունեցաւ թշնամին խորտակելու, հայրենասիրութեամբ ընտրեց մահապարտութեան վտանգը, քան կորսնցընել ազգին օգուտը։ Սաստի զարկաւ թշնամին աւրեց ու առաւ յաղթութիւնը։ Պապիրիոս իմանալով զայրացաւ վասն անհնազանդութեանն ու դատապարտեց արդարը․ բայց բոլոր ժողովուրդն ոտք ելան աղաչեցին։ Որ քաջութեամբ և իմաստութեամբը շատ անգամ ալ մեծամեծ պաշտօններու հասաւ, և գովեցաւ։ Յետոյ կատարեց հանդէս յաղթանակի զանազան ազգաց դէմ ըրած քաջագործութեանցն համար։ Կան նաև Փաբիոս անուամբ ուրիշ երևելի Հիւպատոսներ, առաջինի զօրավարներ և իշխաններ ալ, և այլն։

ՓԱՂԵԿ նահապետ ըստ սուրբ գրոց էր Սեմայ ցեղէն ծնեալ յիսուն տարի Բաբելոնի աշտարակաշինութենէն ետև։ Հոն երբ բաժնուեցան լեզուները, մարդիկն ալ իրարմէ զատուելով հեռացան՝ Փելէկ անունն եղաւ, ըստ եբր, և ըստ մեր Փաղէկ, որ կը նշանակէ բաժանումն․ և եղաւ յատուկ անուն նահապետին, ինչպէս որ կ՚ըսէ գիրը․ “Յաւուրս նորա բաժանեցաւ երկիր”։

Այս ըստ հնախօսից էր մասնաւոր գործ աստուածային նախախնամութեան․ զի անով ամենայն կողմանք աշխարհի լեցուեցան մարդկութեամբ և ծագեցան զանազան ազգերով և լեզուօք, խելքով և արուեստով։

ՓԱՅԵԹՈՆ ստուգաբանի հրափայլ, որ ըստ բանաստեղծից էր որդի արեւու, կամ Ապողոնի. Սա խնդրեց հօրմէն որ գէթ օր մի քշէ արեւուն կառքը, բայց քշելու ատենը խրտեցուց ձիերն ու սահմանէն դուրս ելլալ այրեց երկինքը եւ երկիրը վասն անվարժութեանն. Անոր համար Դիոս կայծակով զարկաւ ձգեց զինքը կորուց Իտալիոյ Պադոս գետին մէջ. Առասպելս կը խրատէ նորավարժ համբակներն՝ որ չըլլան յանդուգն ձեռներէց ՚ի գործ եւ անլսող ծերոց. ապա թէ ոչ՝ շուտով կը կորսուին. Դաւիթ անյաղթ օրինակ կը բերէ զաս Սոդոմայեցւոց պատմութեանը.

Ահա տարացոյց յանդուգն համբակաց
Անվարժ ձեռներէց վեհիցըն շաւղաց,
Որով նորատիք ընդվզեալ ՚ի կրից
Ընկան գահավէժ ՚ի սորս աղէտից.
Բանի փայելուչ կալ յորս վեհին
Երհուն քաջագէտ կրթիլ յարուեստին
Մեծագործելով շարժառիթ բարեաց
Ժառանգել զհամբաւ չքեղ դիւցազանց.

ՓԱՅԼԱԾՈՒ. Տ. ՀԵՐՄԷՍ.

ՓԱՌՆԵՐՍԷՀ էր վարդապետ Հայոց սուրբ Կարապետի վանքէն, որ միաբան հաւանութբ արքային Տիրանայ Բ. ընտրեցաւ կաթուղիկոս սուրբ Յուսկան եւ սուրբ Դանիէլի մահուանէն ետեւ յամի 362. Բայց իրեք տարիէն ետեւ մեռաւ, որուն արժանաւոր յաջորդ նստաւ Մեծն Ներսէս Պարթեւ՝ թոռն որդւոյ Յուսկան.

ՓԱՐԱՒՈՆ կը նշանակէ թագաւոր և իբր մականուն կ՚ընծայի Եգիպտոսի թագաւորաց ըստ Սուրբ Գրոց որուն մէջ տասը Փարաւոն կը յիշուի. նախ այն՝ որ կը թագաւորէր Աբրահամու հոն գնացած ատենը։ Երկրորդն այն՝ Յովսէփ գեղեցիկ յԵգիպտոս գնացած ժամանակը. Երրորդն է այն՝ որ չարչարեց Եբրայեցիները, սա և յաջորդները կանգնեցին բուրգունքը. Չորրորդն է, որ Մովսէսի և Ահարոնի դէմ գալով այնչափ պատիժ քաշեց Եգիպտոս, ինչպէս կը պատմեն բաց 'ի Սուրբ Գրոց և արտաքին պատմիչք Դիոդորոս և Հերոդոտոս. Հինգերորդն է, որ կը թագաւորէր Դաւթի օրը. Վեցերորդն էր Սողոմոնի աները, Եօթներորդն է, որ օգնեց Յերոբովամայ Նաբատեան. Ութերորդն է անուանեալն Փուա. Իններորդն է Փարաւոն Նեքաւով. Տասներորդն կոչի Վափառ կամ Վափրէս 'ի մարգարէութեան Երեմիայ։

ՓԱՐԻՍԵՑԻՔ էին աղանդաւոր Հրէայք բաժնուած մէկալոնցմէ թէ վարդապետութ̅բ, և թէ այլաձև զգեստով. զի և Փարաշ ըստ եբր. բաժանումն կը նշանակէ։ Ասոնք կեղծաւորութեամբ կը ջանային սուրբ երևնալ սաստիկ օրինապահութեամբ և հետևողութեամբ ծերոց աւանդութեանց։ Իսկ զուրիշները մեղաւոր համարելով կ՚անարգէին ու կը խորշէին, և ասով ռամիկներուն աչքին զարմանալի և պատուելի կ՚երևնային ստութեամբ։ Շատ անգամ ալ իմաստուն երևնալու համար աստուածային օրէնքը և մարգարէից բանը ծուռ կը մեկնէին ուզածնուն պէս։ Անոր համար սաստիկ կշտամբեց զանոնք Փրկիչն մեր. որպէս և Յովհաննէս մկրտիչ ասելով. “ Ծնունդք իժից՝ ո՞ եցոյց ձեզ փախչել ’ի բարկութենէն որ գալոց է, (Թողեալ զշաղփաղփանս) արարէք այսուհետև պտուղ արժանի ապաշխարութեան „, և այլն ։ Ասոնցմէ յետոյ եղան Թալմուտեան ռաբբիք յօրինողք զառասպելական Թալմուտն, որ կը նզովեն Խարայիտք, կամ Կարայիմ հրէայք ։ Տ. Սադովկ, և Խարայիտք ։

ՓԱՒՍՏԱ կոյսն էր Կիզիկոնէն զաւակ քրիստոնէից որբ տասուիրեք տարեան, պարկեշտ և աղօթասէր, որ պահօք և բարի օրինակով շատ անհաւատներ կը լուսաւորէր ։ Մաքսիմիանոս կայսրն լսելով ասոր քարոզութիւնը և զարմանալի գործքը ղրկեց Եւլասիոս իշխանաւոր քուրմը, որ դարձընէ զկոյսն ’ի կռապաշտութիւն ։ Բայց նա յաղթուելով մատաղ կուսին զօրաւոր խօսքերէն սկսաւ չարչարել հրով, ծեծով և սղոցելով. իսկ նա սիրով կը համբերէր առ սէրն Քրիստոսի ։ Բռնաւորը տեսաւ որ այն տանջանքները ոչ ինչ ազդեցին. սուրբ կուսին, լուսաւորելով հաւատաց Քրիստոսի ։ Ուստի կայսրը ղրկեց Մաքսիմոս եպարքոսը, որ նախ տանջեց զԵւլասիոս քերանօք և ջահով. յետոյ ծակելով սուրբ կուսին պճղունքը բևեռեց փայտի. երբ երկուսը մէկտեղ ձգեց եռացեալ տապակի մէջ, և տեսնելով անոնց վրա եղած մեծամեծ հրաշքները, ինքն ալ դարձաւ առ Տէր ու գնաց մտաւ տապակին մէջ. և ինքնակամ նահատակելով տօնեցաւ սրբոց հետ ։

ՓԱՒՍՏՈՍ Յովհաննէս էր արծաթագործ Գերմանացի Մակոնցայ քաղաքէն, որ յամի

1436 հնարեց նախ տպագրութեան պիտանի գիւտը երես առ երես փորագրելով փայտի վրայ ։ Ապա 'ի 1440 Յովհան Կութթէմպէռկ և Պետրոս Շէֆֆէռ աշակերտ Փաւստոսի հնարեցին պողպատէ և կապարէ տառերը , որ իրարու քով շարելով գրքի երեսները ձևացուցին դիւրութեամբ , անոր համար Կութթէմպէրկի կ'ընծայուի տպագրութեան բուն գիւտը ։ Շէֆֆէռ ապա հնարեց մելան և ուրիշ հարկաւոր բաները տպագրութեան ։ Փաւստոս այնչափ ուրախացաւ՝ որ իրեն փեսայացուց հանճարեղ Պետրոսը ․ որոնք սկսան տպել զանազան գրեանք , և 'ի 1462 տպեցին Աստուածաշունչը ։ Առջի տպածներէն է Կիկերոնին գիրքը , որ պահած է Ժինէվռայի հասարակաց գրատունը , ուր կայ արձան կանգնած վերտառութեամբ մեծանուն Փաւստոսի , որ թուի թէ 1466ին մեռած է 'ի Փարիզ ժանտախտէն ։

ՓԵԲՐՈՆԻԱ սուրբ կոյսն մանկութենէն մնեալ էր կուսաստանի մէջ Մծբին քաղաքը հօրաքեռը քով , որ գոլով գեղեցիկ և կայտառ , սաստիկ կը ճգնէր աղօթքով և արտասուօք ընդդէմ փորձութեանց դիւին ։ Դիոկղետիանոսի հալածանաց ատեն երբոր գնաց այն քաղաքը Սիղուլիանոս դատաւորը ատեան հանեց սուրբ կոյսն ու անոյշ խոստմունքներով շատ աղաչեց որ ուրանայ զՔրիստոս և կարգուի իրեն եղբօրորդւոյն Լիւսիմաքոսին հետ ։ Իսկ շնորհալի կոյսն լցեալ Հոգւով սրբով մերժեց քաջութեամբ անոր ամէն խօսքը ․ ուստի տանջեցին բոցով և քերթելով ․ կտրեցին լեզուն , ստինքն ու ոտքերը ։ Մինչ զի հեթանոսներն ալ տեսնելով երանուհւոյն սքանչելի համբերութիւնը ցաւակցելով կը նզովէին կուռքերը և Դիոկղետիանոսը ։ Իսկ անգութ դատաւորը մորթել տուաւ գլուխը իբրև անմեղ գառն, և նոյն օրը ինք ալ երկնառաք պատժով սատկեցաւ ։ Այսպիսի հրաշք տեսնալով Լիւսիմաքոս՝ ուրիշ իշխաններով հաւատաց Քրիստոսի ․ իսկ սուրբ կուսին մարմինը ամփոփեցաւ փառօք իր վանքին մէջ ․ ուր ապա իւր անուամբն շինեցաւ եկեղեցի քաղքին եպիսկոպոսէն կամ սբ Յակոբէն, և եղաւ տօնելի հրաշքներով ։

Այսպէս հրաշագեղ կուսանք պերճացան
Իգական բնութեամբ գերամբարձ գըտան ․
Իբր ըմբիշ անյաղթ դիմեալ յասպարէզ
Հարին ըզսատանն հըզօրեղապէս ։
Տարփումն Անմահին անպատում փառաց
Ի հանդէս մարտին ըզնոսա ձեպեաց ․
Օոհիլ անվեհեր 'ի սէր փեսային
Յանկէտ խրախութեան հրձուիլ ընդ նմին ։

ՓԵԴԵՐԻԿՈՍ Օգոստոս արքայ Լեհաց էր կայսրընտիր Սաքսոնիոյ, որ յաջորդեալ եղբօրը դքսութեան 'ի 1694, սպարապետ կարգեցաւ կայսերէն ընդդէմ Օսմանեանց, և յաջողութեամբ գլուխ տարաւ գործքը ։ Իսկ 'ի 1697 դաւանելով հռոմէական ուղղափառ հաւատքը ընտրեցաւ թագաւոր Լեհաց և պսակեցաւ 'ի Գրագովիա ։ Սակայն արքայն Շվետաց Կարոլոս ԺԲ․ դէմ ելաւ, ու պատերազմով առաւ թագաւորութիւնը՝ տուաւ Ստանիսլաւոսին 'ի 1706 ։ Այլ երբոր նա խորտակեցաւ մեծէն Պետրոսէն Բ․ 1709ին, Փեդերիկոս նորէն նստաւ թագաւոր Լեհաց փառաւորապէս, և խոհեմութեամբ պայծառացուց տէրութիւնը մինչև որ 'ի 1733 մեռաւ բարի անուամբ և պատուով վաթսունըվեց տարեան ։

Սա էր քաջ պատերազմող, ուսումնասէր, խնամակալ գիտութեանց և արուեստից, մեծանձն յաջողութեանց և ձախորդութեանց մէջ, օրինաց գիրք մը հանեց․ կանգնեց դպրոց ազնուականաց 'ի Տրեզտա մայրաքաղաքը իր դքսութեան, և այլն ։ Տ․ Փրիդերիկոս ։

ՓԵԼԻՔՍ այս ինքն Երջանիկ անուամբ նըստան չորս քահանայապետք Հռոմայ․ առաջինը նստաւ յամի 252, և քաջութեամբ մերժեց աղանդն Սաբէլլի և Պօղոսի Սամոսատացւոյն ։ Սահմանադրեց սեղան կանգնել մարտիրոսաց գերեզմաններուն և սուրբ նշխարաց վրան պատարագելու համար, ինչպէս կը վկայէ սուրբ Աթանաս ։ Նաև աստուածխնամ կոնդակներով հաստատեց ուղղափառ հաւատքը․ այս ինքն ալ վասն 'ի Քրիստոս հաւատոց նահատակեցաւ 'ի 275 Օրեղիանոս կայսերէն ։

ՓԵԼԻՔՍ Բ․ էր սարկաւագ եկեղեցւոյն Հռոմայ, և սուրբ Լիբերիոսի աքսորուելէն ետև յամի 355 ընտրեցաւ տեղապահ ։ Այլ իրեք տարիէն ետքը երբոր Լիբերիոս դարձաւ իր աթոռը, Փելիքս զովելի խոնարհութեամբ առանձնացաւ ուրիշ քաղաք․ և հոն պսակեցաւ մարտիրոսական մահուամբ Յուլիանոսէն 'ի 365․ և եղաւ տօնելի, որպէս վկայէ սուրբ Հերոնիմոս, և այլք ։

ՓԵԼԻՔՍ Գ․ սուրբ հայրապետն Հռոմայ նստաւ գլուխ սուրբ եկեղեցւոյ յամի 483, և դատապարտեց Զենոն կայսեր մոլորական հրավարտակը և Ակակիոս Պօլսեցին ։ Ապա 'ի 487 ժողով գումարելով 'ի Հռոմ՝ մերժեց հերձուածողներն ու բարեկարգեց ընդհանուր եկեղեցին ։ Այսպիսի առաքելական գործով երբոր կը հաստատէր եկեղեցին Ափրիկոյ երջանիկ մահուամբ փոխեցաւ յերկինս և տօնեցաւ յեկեղեցւոյ ։

ՓԵԼԻՔՍ Դ. ընտրեցաւ քահանայապետ յաթոռ սրբոյն Պետրոսի 'ի 526 , և հաստատելով առաքելական կանոնները՝ պատուեց յոյժ նահատակաց նշխարքները . որով զօրացուց սուրբ եկեղեցին և եկեղեցականները հանդերձ բարեկարգութեամբ և շինութեամբ ։ Ապա արդարութեամբ և աղքատսիրութեամբ փոխեցաւ առ Քրիստոս 'ի 530 ։

ՓԵՐԲՈՒԹԷ կամ ըստ Ասոր. **Թարբուլա** էր քոյր սրբոյն Շմաւոնի եպիսկոպոսին Պարսից , որ եղբօրը նահատակութենէն ետև միշտ կը քարոզէր Քրիստոսի հաւատքը քրոջը հետ մէկտեղ ։ Որուն վրայ նախանձելով Հրէայք և հեթանոսք՝ երբոր Շապուհ արքային թագուհին հիւանդցաւ՝ անօրէն Հրէայք համբաւեցին թէ այս երկու քոյրք կախարդեցին զթագուհին , և բռնել տուին զանոնք ։ Այս բանին քննիչ եղաւ մոգպետը թագաւորին հրամանաւ . ու երբոր վնաս մը չգտաւ , սկսաւ շողոքորթել զՓերբութէ սրբուհին , որ իրեն կին ըլլայ ։ Իսկ նա անարգանօք մերժեց , և անօրէնը կը նեղէր զերանելին՝ որ գէթ երկրպագութիւն ընէ արեգական և կրակի ։ Սա ալ որ մերժեց , Հրէայք յորդորեցին թագուհին , որ կտրտել տայ երկու քրոջ մարմինները ու անոնց մէջէն անցնելով առողջանայ ։ Ուստի սղոցով ճղքեցին զերանուհիներն ու ձգեցին ճամբուն վրայ. որոնց մէջէն անցաւ Թագուհին գնաց պալատն ու ընկաւ մէկէն սատկեցաւ ։ Իսկ սրբուհիք փառաւորեցան հրաշագործութեամբ և տօնեցան յամի 341. որոնց հետ իրենց աղախինն ալ նահատակեցաւ ։

ՓԻԼԻՄՈՆ էր Կողոսացի մեծատուն, որ քարոզութեամբ սրբոյն Պօղոսի հաւատաց Քրիստոսի, և աշակերտելով ապա ձեռնադրեցաւ եպիսկոպոս Կողոսացւոց ։ Որուն տունն էր իբր ժողովարան նորահաւատ քրիստոնէից, հոգևոր տեղի բարեպաշտութեան և առաքինութեանց ։

Պօղոս Թուղթ գրեց առ Փիլիմոն Հռոմէն, ու Ոնեսիմեայ ծառային ձեռքովը հասուց իրեն, որ պարտաւոր էր տիրոջը ։ Իւր անանկ քաղցր աստուածախօս վարդապետութեամբ յանձնեց ծառան տիրոջն ու այնպէս շարժեց սիրտն՝ որ սիրով ընդունեց ծառան և նորէն ղրկեց սուրբ Առաքեալին ։ Տ. Ոնեսիմոս, և Աշակերտք Պօղոսի ։

ՓԻԼԻՊՊՈՍ Մակեդոնացի ։ Տ. ԱՂԵՔՍԱՆԴՐ Մեծն ։

ՓԻԼԻՊՊՈՍ առաքեալ էր Յիսուսի երկոտասան և նախկին աշակերտներուն մէկը, նաև քաղաքակից Պետրոսի, որ քարոզեց յԱսիա և հասեալ մինչև Սկիւթացւոց աշխարհը շատ հոգիներ լուսաւորեց հրաշագործութեամբ ։ Իւր երկար ճգնութեամբ և անդադար քարոզութեամբ մեծապէս առաքինացաւ շահելով վայբենիները ։ Յետոյ դարձաւ 'ի Յերապօլիս և գտաւ իր քոյրն Մարիամ. և երբ անոր հետ հոն ալ սկսաւ լուսաւորել զանհաւատները՝ կռապաշտներն չարացան ու բռնեցին սուրբ առաքեալը չարչարեցին. և երբ չկրցան յաղթելու անոր քաջութեանը՝ գլխ'ի վայր կախեցին հրամանաւ Նիկանովը բդեշխին ։ Եւ այսպէս նահատակեցաւ երանելին յամի 84 Տրայիանոսի ժամանակը, և փառաւորեցաւ հրաշքով ։ Որուն չարչարակից եղաւ Բարթուղիմէոս եօթանասուն աշակերտաց մէկը, որ կենդանի մնաց, ու Մարիամին հետ ամփոփեց պատուով սուրբ Փիլիպպոսի նշխարքը ։

ՓԻԼԻՊՊՈՍ անուանեալ Աւետարանիչ էր երկրորդն յեօթն սարկաւագաց, զոր ընտրեցին Առաքեալներն Հոգեգալստենէն ետև ։ Սա քարոզեց աւետարանը 'ի Սամարիա և 'ի Հրէաստան. և հրաշալի վարդապետութեամբ լուսաւորելով զԵթովպացի ներքինին Կանդակայ տիկնոջ՝ մկրտեց ։ Յետոյ շրջեցաւ յԱսիա, և ձեռնադրեցաւ եպիսկոպոս Տրաղացւոց, և շատ հոգի լուսաւորեց հոն հանդերձ նշանագործութեամբ ։ Մինչև չարչարանքով նահատակեցաւ անհաւատներէն. և ըստ ոմանց խաղաղութե՟ վախճանեցաւ իր տանը մէջ 'ի Կեսարիա Փիլիպպեայ ։ Եւ ունէր չորս մարգարէուհի կոյս դստերք, որոնց մէկն էր Երմոնէ ։ Տ. 'ի կարգին ։

Փող աստուածախօս հրաւիրակ վերին
Ընտրեալ 'ի Տեառնէ քարոզ ճշմարտին.
Աստուածգիտութեան շնորհօք երկնահոս
Փայլեաց զարևելս արին Փիլիպպոս ։

Ղամբար լուսափիւռ խուժադուժ ազանց
Ասիոյ մարզից շնորհաբաշխ բարեաց.
Ճոխացոյց զոգիս պարգևօք Հոգւոյն
Արժանացուցեալ անմատոյց լուսոյն :

ՓԻԼԻՊՊՈՍ եպիսկոպոս : Տ : **ԵՒԳԻՆԷ** կոյս :

ՓԻԼԻՊՊՈՍ Մարկոս էր կայսր Հռոմայեցւոց, որ քաջութեամբ շատ երևելի եղաւ զինուորութեան մէջ, ու յամի Տեառն 244 գլուխ եղաւ պահապան զօրաց, որոնք զինքն կայսր անուանեցին Պարսից երկիրը : Ասկից դարձաւ 'ի Հռոմ. և առատաձեռնութեամբ շահելով ժողովուրդը՝ շատ պիտուական օրէնքներ դրաւ վասն խաղաղութեան աշխարհին և բարեկարգութեան : Վերուց պոռնկանոցներն ու ամէն անառակութեանց տեղերը ըստ Եւսեբեայ. թոյլ տուաւ քրիստոնէից՝ որ համարձակ ամէն եկեղեցական պաշտօնները կատարեն : Վասն զի շատ կը սիրէր քրիստոնէական քաղաքավարութիւն ու կարգը. ինքն ալ քրիստոնեայ եղած էր, ինչպէս որ կը պատմեն Եւսեբիոս, Վինկենտիոս, Որոգինէս և այլք : Այս կայսեր և թագուհւոյն թուղթ ալ գրեր է Որոգինէս, կ'ըսեն :

Փիլիպպոս խոնարհութեամբ կը կատարէր եպիսկոպոսին դրած ապաշխարանքը. և երբ հոգևոր գործոց և կարգադրութեանց կը հետևէր սպաննուեցաւ զօրքէն 'ի 249, Վեռոնայի քով, ուր բանակը աւրուեցաւ Դեկոսէն՝ ու ինքն քառասունըհինգ տարուան մեռաւ և հինգ տարի թագաւորեց :

ՓԻԼԻՊՊՈՍ կաթուղիկոս Հայոց էր խոհեմամիտ և խաղաղասէր աշակերտ և նուիրակ

Մովսէսի կաթուղիկոսին, որուն մեռնելէն ետև յաջորդեց 'ի 1633 . և շատ գովելի եղաւ առաքինի գործքերուն և բարեկարգութեանցը համար . զարդարեց Անանիայ առաքելոյն վանքը Երևանու մէջ ու շատ անգամ հոն կը բնակէր ճգնութեամբ :

Հայրապետանոցին շէնքերը կատարելէն ետև գնաց յԱսպահան, և հրամանաւ Շահաբասին առաւ անկէց Լուսաւորչայ աջն ու փոխադրեց յԷջմիածին 'ի 1638 : Շատ տեղ ալ վանքեր և եկեղեցիներ շինեց, ու կրօնաւորներով և աբեղաներով լեցուց : Նորոգեց սրբոյն Հռիփսիմեայ և Գայիանեայ վկայարանքը . ու գտաւ անոնց տապանը, և սուրբ մասունքներէն առաւ վասն ջերմեռանդութեան հաւատացելոց :

Շատ ծախքով կանգնեց մեծ դպրոց յԷջմիածին, և դրաւ վարժապետ Սիմոն Ջուղայեցին . անկէց ետև դրաւ ուսուցիչ Ստեփաննոս կղերիկոսը՝ որ Լեհաստանէն եկեր էր հոն . որուն տուաւ կարգ աբեղայութեան և գաւազան վարդապետութեան . նաև քանի մը գիրք ալ թարգմանել տուաւ Լատին լեզուէ 'ի Հայ :

Յամի 1642 սրբազան պապն Իննովկենտիոս Ժ . ղրկեց կաթուղիկոսին զԼատին վարդապետն Պօղոս, որ առաջուց ծանօթ էր Փիլիպպոսի . և երբոր 'ի 1647ին այս վարդապետ պիտի դառնար յարևմուտս՝ կաթուղիկոսը գրեց դաւանութեան թուղթ ստորագրութեամբ 25 եպիսկոպոսաց և ութ վարդապետաց, ու ղրկեց սրբազան Պապին : Ապա գրեց կոնդակ 'ի Պօլիս յորդորելով ժողովուրդն՝ որ վերցընեն ազգային անմիաբանութիւնը, որուն համար ինքն ալ գնաց հոն ու շահեցաւ ազգը շինութեամբ :

Ուր գնաց նաև՝ Նիկոլ եպիսկոպոսն Լվովու , և Խաչկօ իշխանը վասն քաղաքական խռովութեան . կաթուղիկոսը մեծ խոհեմութեամբ շահեցաւ երկու կողմն ալ օրհնելով ։ Նա 'ի 1652ին ղրկեց յԼվով իր խոհական աշկերտը Յովհաննէս վարդապետ , որ քաղցր յորդորանքով հաշտեցուց ժողովուրդը Նիկոլին հետ , և բանալ տուաւ եկեղեցին ու օրհնեց զամէնքը կաթուղիկոսին կողմանէ ։ Որուն համար բոլոր քաղաքը ցնծացաւ . իսկ Կազիմիր արքայն Լեհաց շնորհակալ ըլլալով՝ պատուեց Յովհաննէս վարդապետը մեծամեծ պարգևներով ։ Ի 1653 կաթուղիկոսը դարձաւ յԷջմիածին շատ ընծաներով և դրամով . ուր սկսաւ շինել զանգակատունը . բայց դեռ չէր կատարած քարոզ մը տուաւ մեծ պահքին մէջ այն բանին վրա . “Այր մի էր մեծատուն՝ որոյ էր տնտես . . . ոչ ևս կարես լինել տնտես „ ։ Այս խօսքիս վրա այնպէս եկաւ իրեն թէ Աստուած զինքը կը կանչէ հոգևոր տնտեսութենէն . ուստի գնաց իր խուցն ու պատմեց միաբանից . և նոյն օրը հիւընդցաւ ու պատրաստութեամբ ութ օրէն վախճանեցաւ վաթսունըիրեք տարուան 'ի 1655 , և թաղեցաւ փառօք սուրբ Հռիփսիմեայ վկայարանին մէջ ։

ՓԻԼԻՊՊՈՍ՝ Ներեան էր հիմնադիր հոգևոր ուխտին Աղօթավանից , որ գոլով ազնուական Ֆլորենցացի գնաց 'ի Հռոմ տասնըինը տարուան , ուր կը փափաքէր առաքինութեամբ ծառայել հիւանդաց ։ Յամի 1550 ձեռնադրեցաւ աբեղայ երեսունըհինգ տարուան , և հիմնեց պիտուական միաբանութիւնը օգնելու անտէր հիւանդաց և օտար աղքատաց . ուսկից սկսաւ ուխտն Աղօթավանից · և 'ի 1564 սահմանեցաւ նոր կարգ վանական ։ Իսկ 'ի 1575 սրբազան պապն Գրիգոր ԺԳ · հաստատելով զան սկսան երթալ միաբաններէն ասդին անդին , ու կանգնել այսպիսի ընկերութիւն երիցանց եկեղեցական սիրով ըստ սահմանադրութեն ։ Սուրբ Փիլիպպոս հիմնադիր մեռնելէն իրեք տարի առաջ յանձնեց իր առաջնորդութիւնը Պարոնիոս կարդինալին ու փոխեցաւ առ Աստուած ութսուն տարեան 'ի 1595 , որ և դասեցաւ 'ի կարգս սրբոց 'ի 1622 ԺԵ Գրիգորէն ։ Այս կարգս շատ օգտակար և անուանի եղաւ · ուսկից ելան առաքինի վարդապետք և ճոխաբան քարոզիչք ։

Երանաշնորհ պերճ վարդապետ ներհուն
 Պճնեալ 'ի վերուստ շնորհօք գերաբուն ,
 Պարծանք Երեւանց տան ւ'ոգեւանդ ուխտին
 Ծընող մեծ բարեաց ըստ հոգւոյ մասին ։
Ուրացաւ զաշխարհ և ըզգարմ պայծառ
 Փրկչին հետեւող լեալ կամայօժար .
 Կոխեաց ընդ ոտիւք զփառս երազական ,
 Ներկրեր 'ի յոգի անձառից խոկմամբ ։

ՓԻԼՈՆ իմաստասէր էր Եբրայեցի մատենագիր յԱղեքսանդրիոյ , և եղբայր Լիւսիմաքոսի ժողովրդապետին Հրէից , որ յամի Տեառն 40 ուղեւորեցաւ ազգին կողմանէ 'ի Հռոմ , ու գանգատեցաւ կայսեր առջին քաշած նեղութեանց վրա · և հոն գրեց խելացի տրամախօսութիւնն ու գովելի եղաւ ։ Ըստ սրբոյն Հերոնիմոսի՝ ուրիշ անգամ ալ Փիլոն գնաց Հռոմ ու խօսակցեցաւ Պետրոս առաքեալին հետ ։ Որ և շատ գրեանք գրեց · բայց շատը կորած են . իսկ Ճառացածներուն մէջ խիստ գեղեցիկ է ճառն ընդդէմ մոլորապաշտութեան և անաստուածութեան ։ Նոյնպէս ճառերն յաղագս Նախախնամութեան և Կենդանեաց . նաև Լուծմունքն Ծննդոց և Ելից, որուն հին թարգմանութիւնը գտանք յԼվով ու տպեցինք լատին թարգմանութեամբ մեր վանքն ՚ի Վենետիկ ։ Փիլոնին գրուածքը իրեք կարգ կը բաժնուին . ա, կը ճառէ աշխարհիս ստեղծման վրա . բ, կը ճառէ հին Կտակարանին պատմութեանց վրա . գ, կը ճառէ օրէնքներուն վրա . և այս կը համարի գիրք իրաւաբանութեան՝ լեցուն գերիմաստ և այլաբանական վարդապետութեամբ ու գիտնական ճոխաբանութ̄ք ։ Վասն զի տեղեակ էր գրոց և բանից փիլիսոփայից Յունաց և Հռոմայեցւոց, մինչև մականուանեցաւ ՚ի նախնեաց Պղատոն Եբրայեցի ։ Սակայն ինքն հրէութեան մէջ ելաւ աշխարհէս ։

ՓԻՂԵՏՈՍ և Հիմենոս էին աղանդաւոր Հրէայք, որոնք քարոզութեամբ սրբոյն Պօղոսի հաւատացին աւետարանին, և ետքը մոլորեցան ուրանալով զյարութիւն մարմնոյ ։ Վասն զի միայն կ՚ընդունէին խորհրդական յարութիւն, որ է խորհուրդ մկրտութեան, որով իբր թէ մահուանէ յարութիւն կ՚առնենք, կ՚ըսէին ։ Բայց սուրբ առաքեալը բանադրեց զանոնք, որ ուրիշներն ալ իրենք ալ խրատուին չհայհոյել . ինչպէս ասաց . “ Որս մատնեցի սատանայի . . ։ Բանք նոցա իբրև զքաղցկեղ ճարակ գտանեն . որոց սակի են Հիմենոս և Փիլետոս, որք վրիպեցան ՚ի ճշմարտութենէն „, և այլն ։

ՓԻՐՄԻԼԻԱՆՈՍ էր մեծանուն եպիսկոպոս Կեսարիոյ Կապադովկացւոց, բարեկամ Որոգինեայ և սրբոյն Կիպրիանոսի Գ. դարուն: Սա նախագահ նստաւ 'ի ա̄. ժողովն Անտիոքայ ընդդէմ Պօղոսի Սամոստացւոյն յամի 264, և երբոր կ'երթար 'ի բ̄. ժողովն այն քաղաքին՝ վախճանեցաւ 'ի Թարշիշ 'ի 270: Զոր կը յիշատակէ Յունաց յայսմաւուրքը սրբոց կարգին մէջ: Իսկ սուրբ վարդապետն մեր Մովսէս Խորենացի կը պատմէ թէ ասոր գըրքեն ալ տեղեկութիւններ քաղեր գրեր է իր պատմութեան մէջ Հայոց թագաւորներուն վրայով 'ի Ա. Խոսրովէն մինչև ցՏրդատ, և այլն:

ՓԼԱԲԻԱՆՈՍ սուրբ պատրիարգ Յունաց Կոստանդինուպօլսոյ նստաւ յամի 447, և քաջութեամբ զԵւտիքէս չարը նզովել տուաւ ժողովքի մէջ: Ան ատեն հերձուածողին կուսակից եղաւ Դիոսկորոս և չարաժողով ըրաւ Եւտիքականաց հետ, ու աթոռէն ձգեց Փլաբիանոսը. իսկ նա մէկէն բողոքեց առ սրբազան հայրապետն Հռոմայ մեծն Լեւոն: Դիոսկորոս կատղելով վազեց Փլաբիանոսին վրան ու գետինը ձգեց. աղանդակիցներն ալ այնչափ չարչարեցին սուրբ պատրիարգը, որ վտանգելով իրեք օրէն փոխեցաւ առ Տէր վկայական մահուամբ վասն ուղղափառ հաւատոյ 'ի 449: Երբոր լսեց սուրբ հայրապետն Լեւոն՝ գումարել տուաւ ընդհանուր սուրբ ժողովն Քաղկեդոնի, որ շատ քննութեանց ետև նզովեց հերձուածողները զԵւտիքէս, զԴիոսկորոս և բոլոր աղանդակիցները 'ի 452: Տ. 'ի կարգին:

ՓԼՈՐԵՆՏԵԱՆ ժողով ընդհանուր գումարեցաւ նախ 'ի Ֆերրարա, և ապա պատճառաւ ժանտախտին փոխադրեցաւ 'ի Փլորենտիա քաղաք Իտալիոյ յամի 1439 Եւգինէոս Դ. պապուն ատեն: Ուր հասան Յոյնք պատրիարքով, մետրապօլիտներով, և Յովհաննէս Է. Կայսերով: Նախ համաձայնութեամբ բոլոր հայրապետաց սահմանեցաւ դաւանութիւն բղխման Հոգւոյն սրբոյ 'ի Հօրէ և յՈրդւոյ: Երկրորդ թէ մարմին Տեառն մերոյ ճշմարտապէս քահանայագործի թէ բաղարջով և թէ հացով: Երրորդ՝ թէ հոգիք հանգուցելոց չև արդարացեալ կը սրբին ներելի մեղքէն քաւարանին մէջ: Չորրորդ՝ թէ հոգիք կ'ընդունին հոն թեթեւութիւն պատժի աղօթքով և բարեգործութեամբ հաւատացելոց: Հինգերորդ՝ թէ հայրապետն կամ աթոռն Հռոմայ ունի նախագահութիւն յընդհանուր եկեղեցւոջ Քրի: Այս կոնդակին ստորագրեց նախ սրբազան Պապն ութ կարդինալով, երկու Լատին պատրիարքով և շատ առաջնորդներով: Իսկ 'ի կողմանէ Յունաց ստորագրեց նախ Յովհաննէս կայսրն Պալէոլոգ, և ապա փոխանորդք պատրիարքացն Աղեքսանդրիոյ, Անտիոքայ, և Երուսաղէմի. իսկ պատրիարքն Կոստանդինուպօլսոյ վախճանած էր հոն: Անոնցմէ ետև ստորագրեցին երեսուն արևելեան Յոյն վարդապետք. ուսկից ապա մեկնեցան 'ի 1440ին:

Յետոյ հասան հոն Հայք և Աբգար դեսպանն Կոստանդին կաթուղիկոսին, և այլն: Ասոնք ալ ընդունեցան սուրբ ժողովքին ամէն կանոնները հաւատքի վրայ: Թէպէտ յետոյ արևելցիք դարձան այս մեծաշահ միաբանութենէն փուճ պատճառներով 'ի վնաս ազգաց և եկեղեցւոյն Քրիստոսի, ինչպէս որ իրենք ալ կը վկայեն ցաւելով։ Տ. Յովհաննէս Ե.

ՓՈԿԱՍ սքանչելագործ հայրապետ էր Սինոպցի նաւագործի մը որդի սնեալ երկիւղածութեամբ, որ մանկութենէն աղօթասէր և խիստ պահեցող ըլլալով՝ անուամբ Քրիստոսի կը հալածէր դեւերը, կ'առողջցընէր հիւանդները ու մեռելները, և կ'ազատէր նաւակոծութենէ և վտանգէ նաւերը։ Ուստի աստուածային շնորհօք եղաւ մասնաւորապէս պաշտպան և բարեխօս նաւակոծեալ վտանգելոց։ Եւ այսպիսի հրաշագործութեամբ շրջելով շատ կռապաշտներ դարձուց և լուսաւորեց քարոզութեամբ Պոնտոսի քաղաքները։ Ապա երբ դարձաւ 'ի Սինոպ՝ ձեռնադրեցին զինքն եպիսկոպոս քաղաքին, որ առաքելական ջանքով պայծառացուց սուրբ հաւատքը վայելչապէս։ Տրայիանոս կայսրն երբոր գնաց յԱմասիա՝ հեթանոսները մատնեցին զսուրբ հայրապետն ու կայսեր ատեանը հանեցին. բայց չկրցան յաղթելու անոր քաջութեանը և իմաստութեանը ոչ կապանքով և ոչ տանջանքով։ Ուստի սրով նահատակեցին, ու մարմինը այրեցին. բայց նա մահուանէն ետև ալ մեծամեծ հրաշքներով տօնելի եղաւ փառօք։

ՓՈԿԱՍ եպիսկոպոս Հռոմայեցի էր ժամանակակից վերնոյն և սքանչելագործ վկայ, որ անանկ քաջութեամբ դաւանեց զճշմարտութիւն յատեանն Ափրիկանոսի դատաւորին, մինչև հրաշքով անոր սիրտը փրթաւ ու ընկաւ կիսամահ. ապա աղօթքով երանելւոյն ելաւ գնաց կայսեր պատմեց բանը։ Իսկ կռամոլ կայսրն անձամբ քննելով զսուրբն չարչարեց քերթելով մարմինը · յետոյ ձգեցին կրին հորը և տաք բաղնիքը · ուր սուրբ Փոկաս աղօթելով աւանդեց հոգին ։ Վկայաբանութիւնը կը պատմէ թէ միւս օրը սուրբն երևցաւ Տրայիանոսի և ըսաց որ՝ Ինձի բացուեցան արքայութեան դռները՝ դուն գնա՛ քեզի պատրաստած յաւիտենական տանջանքը վայելէ՛ · և այսպէս շուտով սատկեցաւ կայսրն · իսկ սուրբը հրաշքներով տօնեցաւ ։

ՓՈԿԱՍ կայսր ։ Տ· ՄՈՐԻԿ ։

ՓՈՍՏՈՍ Յովհաննէս էր Գերմանացի մեռելահմայ 'ի ԺԶ· դարուն, որ հետևելով բժշկականութեան և կախարդական աստղագիտութեան կամ գուշակական մոգութեան՝ անխտիր ետևէ եղաւ անառակութեանց և հմայից մոգութեան ։ Աս ալ կ'ըսուի թէ կախարդութեամբ զարմանալի բաներ ընելով ետքը դիւէն կտոր կտոր եղաւ քառասունըմէկ տարուան, ինչպէս կը պատմեն ականատես պատմիչք, ահ տալով անոնց որ յիմարութեամբ կը ջանան հնարել հանրական դեղ մը ամէն հիւանդութեանց դէմ, և արուեստ շինելու ոսկի նաև ըմպելի անմահութեան, այլովքն հանդերձ ։ Որոնք նոյն յիմարութեամբ կորան գնացին ։

ՓՈՏԻՆԷ կը թարգմանի Լուսեղէն, և էր այն Սամարացի կինն՝ որ Սիւքար քաղաքի ջրհորին քով խօսակցելով Յիսուսին հետ հաւատաց Տեառն, և հաւատքի բերաւ Սամարացիներն ալ ։ Ապա Համբարձմանէն ետև մկրտեցաւ Պետրոս առաքեալէն, և անոր հրամանաւ գնաց 'ի Կալքեդոն ու քարոզեց զաւետարանն Քրիստոսի ։ Իսկ երբոր դարձաւ յԵրուսաղէմ, հալածեցաւ 'ի Հրէից ու գնաց Հռոմ. ուր Ներոնէն դատելով համարձակ վիճեցաւ վասն ճշմարտութեան սուրբ հաւատոյ ։ Ուստի անօրէն կայսրն տանջեց սրբուհին, բայց Աստուած անվնաս պահեց զինքն սրէ, կրակէ, և մահադեղէ . յետոյ աչքերը հանեցին, մարմինը քերթեցին ու հոտած բանտի մէջ ձգեցին ։

Որուն երևցաւ Յիսուս Պետրոս և Պօղոս առաքեալներուն հետ, ու առողջացուց զինքն . և տուաւ երանուհւոյն շնորհք բարեխօսութե՟ ամենայն աչացաւաց ։ Անկեց ետև մնաց սուրբ կինն երեք տարի բանտին մէջ՝ միշտ քարոզելով անհաւատից զճշմարտութիւն մինչև հանգեաւ 'ի Քրիստոս ։ Ասոր հետ նահատակեցան իր որդիքն ալ Յովսէփ և Վիկտոր քանի մը ընկերներով հրամանաւ Ներոնին, և տօնեցան ամենեքին ։

ՓՈՏԻՆՈՍ ։ Տ. ԱՆԻԿՏՈՍ ։

ՓՈՏԻՆՈՍ էր եպիսկոպոս Սիրմիոյ, և ծննդեամբ Գաղատացի մտավարժ և բանիբուն ։ Որ 'ի Դ. դարուն հետևելով Սամոստացւոյն մոլորութեանց կ'ըսէր՝ թէ Քրիստոս Մարիամէն ունի սկիզբն, և ոչ յԱստուծոյ ։ Իսկ ըզՀոգին սուրբ համարելով երկնային զօրութիւն մը, և ոչ ճշմարիտ անձն աստուածային՝ կը հայհոյէր Սաբելի նման դնելով մի միայն անձն 'ի սուրբ Երրորդութեան ։

Փոտինոսի աղանդին հետևողներն անուանեցան Փոտինեանք, և անոր հետ նզովեցան նախ Անտիոքայ ժողովքին մէջ 'ի 345 , յետոյ 'ի Միլան յամի 347 , և այլն :

ՓՈՏԻՈՍ կամ ՓՈՏ պատրիարգ Կոստանդինուպօլսոյ , էր երևելի բանասէր , և ճարտարամիտ հռետոր : Երբոր Իգնատիոս սուրբ պատրիարգը կշտամբելով զՎարդան կեսարը վասն չարութեցն քշուեցաւ , իր՝ տեղը նստաւ Փոտ , և վեց օրուան մէջ աշխարհական իշխանութենէն ձեռնադրեցաւ եպիսկոպոս 'ի 858 , ու կեղծաւորութեամբ գրեց՝ Նիկողայոս հայրապետին կերպ կերպ ճարտարութեամբ՝ և խաբեբայ ժողովքով արդարացուց զինքն : Բայց սրբազանն ետքէն տեղեկանալով նենգութեանցը՝ նզովեց զՓոտ , ու հրամայեց որ ետ դարձընէն զարդարն Իգնատիոս իր աթոռը :

Փոտ երբոր չկարցաւ վարպետութեամբ որսալու զքահանայապետն՝ յանդգնեցաւ ինքն ալ նզովք գրել Պապին դէմ , և ստորագրել տուաւ կուսակիցներուն : Ապա սկսաւ չարաչար թշնամութեամբ գրել ամէն տեղ սրբազանին և սուրբ աթոռին դէմ , պղտորելով շատերուն միտքը՝ և այս եղաւ սկիզբն Յունաց հերձուածին 'ի Թ . դարէն մինչև ցայսօր :

Յամի 867 Վասիլ Հայկազուն նստաւ կայսր , և տեղեկացեալ՝ Փոտայ խարդախութեանցն՝ աքսորեց , ու նստեցուց նորէն աթոռը սուրբըն Իգնատիոս , որ գրեց թուղթ հպատակութեան առ Ադրիանոս պապ յաջորդն ՝Նիկողայոսի : Նոյնպէս գրեց կայսրն , և խնդրեց որ ընդհանուր ժողովքով դադրեցընէ խռովութիւնը : Եւ նա գումարեց ընդհանուր ժողովն Կոստանդինուպօլսոյ Դ . ուր նզովեցաւ Փոտ , և այրեցան անկանոն գրուածքները 'ի 869 :

Փոտ աքսորանացը մէջ խորամանկ հնարքներով կայսեր սիրտը շահելով՝ դարձաւ 'ի Պոլիս իբր մեծիմաստ գիտուն . ուր սուրբ Իգնատիոս վախճանածին պէս նստաւ նորէն յաթոռը նոյն վարպետութեամբ ։ Ապա վասն չարութեան խռովելով Յովհաննէս Ը. պապին դէմ՝ հնարեց վէճը բղխման Հոգւոյն սրբոյ 'ի Հօրէ և յՈրդւոյ ։ Որուն միշտ գլխահար եղաւ սրբազանն և յաջորդներն՝ ծանուցանելով կայսերաց Փոտայ խարդախութիւնները և զրպարտութիւններն Հռոմայու սուրբ աթոռին դէմ, այլովքն հանդերձ ։ Լեոն Իմաստասէր յաջորդելով իր հօրն Վասլի սոսկաց Փոտայ հերձուածին վրա , ու կրկին քննելով անոր գործքերը՝ աքսորեց զինքը խայտառակութեամբ Հայաստան վանքի մը մէջ 'ի 886 , ուր մեռաւ յամի 892 ։ Փոտայ ընտիր գրեանքն թարգմանած և տպագրած են . այլ իմաստալից պիտանիներն են՝ տարեգրութիւնքն և մատենադարան, լուծումն դժուարիմաց բանից սուրբ գրոց , Ճառերը , և այլն ։ Շատ ուրիշ աստուածաբանական գրուածներն և գիտնական նամակներն ալ անտիպ կը մնան . նաև շատերն ալ կորած են ։ Զօրաւոր է պատասխանին , որ գրեց զգօնութեամբ առ Զաքարիա կաթուղիկոսն մեր վասն Ճշմարտութեան Քաղկեդոնի ժողովքին ։ Տ . 'ի կարգին ։

ՓՈՐՄՈԶՈՍ սուրբ քահանայապետ Հռոմայ էր նախ եպիսկոպոս Փօռթօ քաղաքին Իտալիոյ , որ ընտրեցաւ յաթոռ սրբոյն Պետրոսի , և առջինը եղաւ առանց օծութեան եպիսկոպոսական աթոռէն բարձրանալու 'ի գահ քահանայապետութե յամի 891 ։ Այս գործքը նոր ըլլալով ոմանց խիստ անկարգ երեւցաւ. մինչ զի Ստեփաննոս Զ. գայթակղելով մեռնելէն ետեւ Սրբազանին մարմինը գերեզմանէն հանել տուաւ, ու իրեք մատը կտրեց Տիբերիս գետը նետել տուաւ օրինակի համար, որ յետոյ հրաշքով ելաւ, եւ փառաւորեցաւ արդարը. զոր եւ մեծապէս պատուեց պապական վճռով Յովհաննէս Թ. 'ի 898, եւ այլն: Վասն զի չորս տարի ու կէս գեղեցիկ կառավարեց Քրիստոսի եկեղեցին, գրեց վարքը քահանայապետաց, եւ օծեց կայսր արեւմտեան զԱռնոլդոս Օգոստոս. ապա սրբութեամբ եւ հրաշագործութեամբ փոխեցաւ առ Աստուած յամի 896:

Վեհ համբերատարք դառինըս կրեցին
Մինչեւ յետ մահու ընդ աղէտս անցին.
Ի սէր անանցին կտրատեալ 'ի սպառ
Յարեան զերդ անմահ Փիւնիկ վեհափառ:
Շըքեղ փայլեցան վըկայք քաջ արանց
Անցաւոր կենօք ստացան փառս անանց,
Ոգւով արութեան զօրութեամբ վերին
Յանկէտըն խրախճան յաւիտեան բերկրին:

ՓՈՒԼԳԵՆՏԻՈՍ գերիմաստ հայրապետն էր սուրբ եպիսկոպոս Ռուսպայ քաղաքին Աֆրիկոյ, որ Զ. դարուն փառաւորեց ուղղափառութիւնն թէ սքանչելի վարդապետութեամբ, եւ թէ աստուածաշնորհ գրուածովն 'ի ջատագովութիւն ճշմարտութեան ընդդէմ հերձուածողաց Արիանոսաց, Նեստորականաց, Եւտիքեանց, եւ Կիսապեղագեանց: Որոնցմէ շատ հալածանք ալ քաշեց. զի Արիոսեան բռնաւոր արքայն երկու անգամ աքսորեց սուրբը 'ի Սարդինիա կղզին: Ուր երբոր փառաւորեցաւ հրաշագործութեամբ՝ կ՚ըսէր խոնարհ սրտով. “Սքանչելագործութիւնք ոչ տան մարդոյ զսրբութիւն, այլ միայն զանունն և համբաւ, որք առանց ճըշմարիտ երկիւղածութեան՝ կարգին միայն ՚ի կորուստ մեր ”:

Ապա հալածանքն դադրելէն ետև դարձաւ յաղթանակաւ իր աթոռը, և մեծ ուրախութիւն եղաւ ժողովրդոց և առաջնորդաց: Վասն զի նա էր հերետիկոսներուն բերանը փակողն լուսաւոր վարդապետութեամբ և սրբակրօն վարքով ու հրաշքով: Եւ այսպիսի առաքինութեամբ գեղեցիկ հովուեց իւր եկեղեցին քսանըհինգ տարի, և ՚ի 533 ամի փոխեցաւ առ Տէր վաթսունըհինգ տարեան:

Փուլգենտիոս խիստ յարեալ էր սուրբ Օգոստինոսին վարդապետութեանը, և անով կը պատերազմէր Պեղագեանց և աղանդաւորաց դէմ: Այն պատճառաւ մականուանեցաւ երկրորդ Օգոստինոս, և դասեցաւ սուրբ եկեղեցւոյ մեծանուն վարդապետաց կարգը հոգելից ճառերով, նամակներով, և քառասուն կանոններով հաւատոյ, որք տպեցան ՚ի 1684, և այլն:

ՓՐԻԴԵՐԻԿՈՍ կամ **ՓԵԴԵՐԻԿՈՍ** Պարպառոսսա էր կայսր արևմտեան կամ Ալամանաց, որ քսանըվեց տարեան յաջորդեց հօրը դքսութեանը, և երեսունըմէկ տարեան ընտրեցաւ կայսր հօրեղբօրը տեղն յամի 1152. և ՚ի 1155 գնաց Հռոմ՝ պսակեցաւ կայսր Ադրիանոս Դ. պապէն:

Յետոյ Աղեքսանդր Գ. պապին դէմ գլուխ քաշելով բանադրեցաւ ՚ի 1868ին. ուստի ատելի ըլլալով Իտալացւոց չարաչար վնասուեցաւ պատերագիմով Թէ ինքն, և Թէ որդին Օթոն ։ Սրով խոնարհեցաւ ու հաշտութիւն խնդրեց, և արձակուեցաւ նզովքէն օրհնութեամբ սրբազանին 'ի 1177 ։

Յետոյ երբոր Սալադին սուլդանն Եգիպտոսի առաւ զԵրուսաղէմ Լատինացւոց ձեռքէն, Պապն ստիպեց զկայսրն Փրիդերիկոս, որ 'ի 1189 Խաչակիր զօրքով Ճամբայ ելաւ ու Իկոնիայի Սուլդանին յաղթեց, անկէց Պաղեստին երթալու ատենը Տարսոնի մօտ գետին մէջ լուացուելու ատեն խղդուեցաւ 'ի 1190, և Թողուց անուն քաջութեան ։ Լեոն Բ. Հայոց Թագաւորը Կիլիկիոյ շատ սիրելի եղաւ այս կայսեր օգնական ըլլալով ։ Տ. 'ի կարգին ։

ՓՐԻԴԵՐԻԿՈՍ Բ. Թոռն վերինին նստաւ կայսր 'ի 1218, և գնաց 'ի Հռոմ պսակեցաւ Օնորիոս Գ. պապէն ինքն և Թագուհին մէկտեղ յամի 1220 ։ Եւ այս օրհնութեան փոխան հանեց սաստիկ հրովարտակ հերետիկոսաց դէմ. նաև խոստացաւ որ երթայ ազատէ զԵրուսաղէմ. բայց երբոր կը տընտընար երկրէն հեռանալու, Գրիգոր Թ. 'ի 1228, նզովք դրաւ Թէ որ չերթայ. ասկէց սարսափելով մէկէն Ճամբայ ելաւ ։ Բայց Թուլութեամբ զինադադարութն ըրաւ տաս տարուան Մէլէքին իշխանին հետ, միայն քրիստոնեայ գերիներն ազատեց ։ Սրբազան պապն լսելով զայս և ուրիշ անկարգ չար գործքերը կայսեր՝ կրկին նզովեց զինքը 'ի 1239 ։ Իսկ կայսրն աւելի չարանալով կոխեց և կողոպտեց չարաչար Իտալիա, շատ մարդ ալ ջարդելով. զոր Գրիգոր պապ չկրնալով ուղղելու սրտցաւութեամբ մեռաւ 'ի 1241 ։

Իննովկենտիոս Դ. նստաւ քահանայապետ Հռոմայ 'ի 1243. որ առաջուց բարեկամ ըլլալով կայսեր՝ նախ արձակեց զինքն նզովքներէն, և 'ի 1245ին գումարեց ժողով 'ի Լիոն. քաղաք։ Ուր ընկաւ կայսրն իշխանութենէն և ընտրեցաւ Հենրիկոս 'ի 1246. իսկ Փրիդերիկոս սաստիկ վշտացեալ մեռաւ յիսունըեօթն տարուան 'ի 1250։

Բայց ճշմարիտ զղջումն ընելով արտասուօք ապաշխարեց, ու թողուց հարիւր հազար ունկի ոսկւոյ վասն սուրբ երկրին։ Շատ շինութիւններ ալ ըրաւ 'ի Նափոլի և 'ի Սիկիլիա ուսումնարաններով. վասն զի ուսումնասէր և գիտնական ըլլալով գիրք ալ յօրինեց, ու Յունաց գրեանքն ալ թարգմանել տուաւ, և այլն։

ՓՐԻԴԵՐԻԿՈՍ Գ. Գեղեցիկ անուանեալ ընտրեցաւ կայսր արևմտեան 'ի 1314, որ անյաջողութեամբ չկրցաւ երևելի բան մը գործելու։ Վասն զի ուրիշ կայսրընտիրներն ընտրեր էին Լուդովիկոսը, որ զօրանալով բռնեց զինքն 'ի 1322ին։ Այլ յետոյ ազատեցաւ, և 'ի 1330 մեռաւ, զոր ոմանք կայսերաց կարգը չեն դներ։

ՓՐԻԴԵՐԻԿՈՍ Դ. յաջորդեց հօրեղբօրն որդւոյն յամի 1440, և 'ի 1452 գնալով 'ի Հռոմ պսակեցաւ կայսր Նիկողայոսէ Ե. սրբազան պապէն հանդերձ հպատակութեամբ։ Ապա դարձաւ կայսրը 'ի Վիեննա, որուն չափազանց ներողամտութիւնն ու անհոգութիւնը երես հանեց ժողովուրդը։ Մինչև Մաճառները ապստամբելով դրին իրենց թագաւոր Մաթիաշը 'ի 1458, որ տիրեց Վիեննայի ու հալածական փախուց կայսրը ։ Ուր շատ նեղութենէն եւ հաշտութիւն ըրաւ կայսրին ապըստամբին հետ 'ի 1487ին. ապա ծերութեան ատեն ոտքի ցաւով մեռաւ եօթանասունըութ տարուան յամի 1493 ։

ՓՐՈՒՄԵՆՏԻՈՍ վերակոչեալ քարոզիչ Առաքեալ Հապէշի և Եթովպիոյ էր աշակերտ Մերոպիոսի իմաստասէր վաճառականին Տիւրացւոյ Դ. դարուն ։ Սա ըստ պատմութեան Սոկրատայ երբոր աշկերտներովն ելաւ կ'երթար Եթովպիա՝ Ափրիկոյ զինուորներն բռնեցին զիրենք և երկու եղբայր Մերոպին ազգականներն, տարին Հապէշի թագաւորին. մեծին անունն էր Փրումենտիոս՝ սիրելի եղաւ թագաւորին և գանձապետ. իսկ պզտիկին անունն էր Եդեսիոս, որ եղաւ մատռուակ արքային, զի սորված ըլլալով մեծն եղաւ վարժապետ արքայորդւոց. բայց Մերոպիոս մեռաւ հոն ։ Ժամանակէն ետև երբ մեռաւ թագաւորը, թագուհին չթողուց զանոնք որ երթան ։ Որոնք ծանօթանալով այն կողմի օտարական քրիստոնէից հետ միաբանեցան ու շինեցին աղօթարան, ուր միշտ կատարելով աստուածային պաշտօնն Հապէշներէն ալ շատ հոգի լուսաւորեցին ։

Յետոյ երբ արքայորդին հօրը տեղն անցաւ՝ հրաման առին երթալու. Եդեսիոս գնաց 'ի Տիւրոս ու քահանայ ձեռնադրեցաւ. իսկ Փրումենտիոս գնաց առ սուրբն Աթանաս և աղաչեց՝ որ ղրկէ Եթովպիա և Հապէշստան քահանաներ և եպիսկոպոս ։ Սուրբ Հայրապետըն ձեռնադրեց զՓրումենտիոս եպիսկոպոս ու քահանաներով դրաւ ղրկեց հոն յամի 331 ։

Ուր նա անդադար քարոզելով և եկեղեցիներ կանգնելով ծաղկեցուց սուրբ հաւատքը · ետքը Եդեսիոս ալ գնաց Հապէշստան եղաւ գործակից եղբօրը , և միաբան տարածեցին զլոյս աւետարանին Ափրիկէի կողմերը՝ մինչև որ վախճանեցան առաքելական քարոզութեամբ և առաքինութեամբ յամի իբր 360 ։ Բնակիչք Հապէշի մինչև հիմա իրենց լուսաւորիչ կը ճանչնան սուրբն Փրումենտիոս ։

Բարէ հիասքանչ տեսչութեան Վերին
Գործս անճառելեաց 'ի լոյս ածողին ·
Եւ զլոյս հաւատոյ անպատում շնորհաց
Սփռեաց յընդհանուրս 'ի ձեռըն մանկանց ։
Այսպէս հին և նոր զիւր եկեղեցի
Աստուածգիտութեամբ պճնեաց հրաշալի ,
Ի ձեռն ապիկար հովուաց ձկնորսաց
Ճոխացոյց փառօք 'ի ծագս աշխարհաց ։

* * *

Բ.

ՔԱՂԿԵԴՈՆԵԱՆ ընդհանուր սուրբ ժողովն գումարեցաւ յամի 451 'ի քաղաքն Քաղկեդոն, որ է Կադըքէօյ, հրամանաւ մեծ քահանայապետին սուրբ Լեոնի Ա. և Մարկիանոսի կայսեր Յունաց։ Այս մեծ ժողով 636 հայրապետաց եղաւ ընդդէմ Եւտիքէս հերետիկոսին, որ կը դնէր 'ի Քրիստոս մէկ չփոխեալ բնութիւն՝ հակառակ սրբոց Հարց և վարդապետութեան սուրբ եկեղեցւոյ, ինչպէս որ կը վկայէ Շնորհալին և ուրիշ վարդապետք Հայոց։

Ուստի սուրբ ժողովս ամենայն զգուշութեամբ մանր քննելով հերետիկոսին չար միտքը՝ ամենուն հաւանութեամբն նզովեց զինքն և իրեն հետևող աղանդակիցներն։ Ուր նախագահ էին սրբազան Պապին նուիրակները. հոն էր և կայսրը. իսկ ժողովական հայրապետներն էին ըստ մեծի մասին արևելեան Յոյն վարդապետք։

Բայց Հայոց հայրապետները չգտնուեցան հոն պատճառաւ ազգիս հաւատքի համար ըրած մեծ պատերազմին ընդդէմ կրակապաշտ Պարսից՝ սուրբ Վարդանանց նահատակութեանը։ Ասորիներն ալ կողմնակից և ազգակից ըլլալով Եւտիքեսի և Դէոսկորոսի՝ չմիաբանեցան սուրբ Ժողովքին ու սուրբ Լևոնի տումարին սահմանադրութիւնը և վարդապետութիւնը ծուռ մեկնելով պղտորեցին մեր ազգին միտքը ։ Թէպէտ սուրբ վարդապետներն յետոյ քննեցին ճշմարտութիւնն ու դաւանեցին նաև գրով. ինչպէս է սուրբ Նարեկացին, Շնորհալին, Լամբրոնացին, Վահան, Զաքարիա կաթուղիկոս, Վանական և Վարդան Վարդապետք այլովքն հանդերձ ։ Սակայն անհաւանք մինչև ցայժմ մնացին անստուգութեան մէջ ու կոչեցան Միաբնակք, իսկ Քաղկեդոնականք մականուանեցան Երկաբնակք ։

ՔԱՄ էր պզտի որդի Նոյ նահապետին, որ տեսնելով զհայրը մերկ քնանալով հարբած, ծաղրեց ու գնաց դուրս պատմեց եղբարցն ։ Որոնք ետև ետև երթալով ծածկեցին հօրը մերկութիւնն ու օրհնեցան ծնողքէն . իսկ Քամ որդւովը սուրբ հօրն անէծքն առաւ այսպէս . “ Անիծեալ Քանան մանուկ . . . ընդարձակեսցէ Աստուած Յաբեթի, և բնակեսցէ 'ի տան Սեմայ, և եղիցի Քանան ծառայ նոցա ,, ։

Այս մարգարէութիւնը սուրբ նահապետին կատարեցաւ . երբ զի Յաբեթի և Սեմայ ազգը տիրեցին չորս կողմանց աշխարհի ։ Յազգէն Սեմայ ծնաւ Փրկիչ Թագաւոր Թագաւորաց և Տէր տէրանց ։ Յաբեթի զաւակները տարածելով ոչ միայն տիրեցին Ասիայի ու Եւրոպայի, այլ և ամենէն առաջ մտան Սեմայ տունը հաւատալով 'ի Քրիստոս Աբգար Թագաւորին հաւատքովը ։

Քամայ ազգը բազմանալով յԱփրիկէ եղաւ ծառայ ուրիշներուն . իսկ Քանանացիք, որ տասը ազգ բաժնուած կը բնակէին երկիրն Աւետեայ, նախ գերի եղան Եբրայեցւոց, յետոյ Հռոմայեցւոց և այլոց։ Այսպէս բոլոր Ափրիկեցիք, կամ որդիք Քամայ միշտ ծառայեցին ուրիշ ազգաց։

Ահա չնաշխարհիկ գանձ անկապտելի
Օրհնութիւն ծնողաց աւանդ տէրունի.
Որով ճոխացաւ նախահարց երամ
Երկնապանծ փառօք ընդ դարս յաւիտեան։
Գերահրաշ գրեցին զայն պարծանքն անձանց
Անջինջ դրոշմեցին 'ի սիրտ զաւակաց,
Ժառանգեալ ըզշնորհս ը՟ հարցն օրհնութե՟
Հանդերձ սերընդովք բարգաւաճք ցուցան։

ՔԱՄԱՀԻ էր թագաւոր Չինաց, որ նստաւ յամի 1664. և վառուելով 'ի սէր ուսմանց և արուեստից Եւրոպեանց՝ թոյլ տուաւ քարոզիչներուն՝ որ մտնեն իր տէրութեան սահմանը։ Որոնց առաքելաշնորհ քարոզութեամբը շատ կռապաշտներ լուսաւորեցան մինչև հիմա. զի անցած դարու կէսին Չինաց աշխարհը քառասունըվեց հազար ուղղափառ քրիստոնեայք։ Այս ինքնակալը հետաքննին բնութեամբը շատ անուանի եղաւ, ու Չինաց մէջ իմաստուն համբաւեցաւ։ Սան զի անդադար հետևելով հմտութեանց և հմուտ վարդապետաց Յիսուսեանց ծաղկեցուց թէ գիտութիւնը և թէ քրիստոնէութիւնը իրեն աշխարհին մէջ արդեամբք այն իմաստուն քարոզչաց։ Եւ ասոր համար հրովարտակ ալ հանեց գովելով քրիստոնէական հաւատքը իբր լուսաւորիչ և մխիթարիչ մարդոյ, և այլն։ Սա Փէքինու տաճարին ճակատը դրաւ այսպիսի մակագիր իր ձեռօքը գրած. “Ճշմարտի սկզբանն ամենայն իրաց, որ է անհուն բարի և անհուն արդար․ լուսաւորէ, պահպանէ, ուղղէ զամենայն իւրով գերագոյն իշխանութեամբ, և գեր ՚ի վերոյ արդարութեամբ․ է անսկիզբն և անվախճան․ ՚ի գոյ էած զամենայն ի սկզբանն․ ինքն է կառավար նորա․ և ինքն է ճշմարիտ տէր ամենեցուն „ ։

Իսկ այս խոհական Թագաւորս Չինաց այսպիսի բարեսիրութեամբ ապրեցաւ եօթանասուներմէկ տարի, ու մեռաւ յամի 1722ին ։

ՔԱՄՈՎՍ էր կուռք Մովաբացւոց և Ամմոնացւոց, որուն համար Սողոմոն շինեց բարձր տեղանը կամ զոհարանը ըստ պատմութեան Սուրբ Գրոց․ “Յայնժամ շինեաց Սողոմոն ըզբարձաւանդակն Քամովսայ կռոցն Մովաբու ՚ի լերինն հանդէպ Երուսաղէմի „ ։

Ըստ ոմանց այս էր կուռք արեգական․ վասն զի Քամօս կամ Շամօս արև կը թարգմանի ։ Ոմանք ալ զան կը համարին կուռք արբեցութեան․ զի յունական բառս Քօմօս արբեցութիւն և շուայտութիւն կը նշանակէ ։

ՔԱՆԱՆԻԴԱՅ էր փառաւոր իշխան Քանանացի․ զի Յեսու Քանանացւոց երկիրը զարկած ժամանակը՝ անոնցմէ շատը փախան յԱփրիկէ ։ Ոմանք ալ աս իշխանին առաջնորդութեամբն հասան Հայաստան ըստ պատմութե՟ Հայոց, 1440 տարի Քրիստոսէ առաջ ։ Ասկէ բազմացան Քանանիդեանք կամ Նախարարութիւն Գնդունեաց ։

ՔԱՆԴԵՄԻՐ Դեմետր էր իշխանապետ, կամ Պէյ Մոլտավիայի, այր ճարտար և բանիբուն, ուր գնաց 'ի 1710 Օսմանցոց կողմանէ՝ երկիրը պահելու համար Ռուսաց դէմ։ Բայց նա հոն հասածին պէս երկիրը տուաւ մեծին Պետրոսի Ա. կայսեր Ռուսաց ու ինքն ալ խառնուեցաւ անոր բանակին մէջ, որուն միշտ հաւատարիմ մնալով մեծամեծ փառքերու և իշխանութեան հասաւ. ապա մեռաւ 'ի 1723։ Սա ունի զանազան երևելի գրեանք տպած և թարգմանած. ա, Պատմութիւն Օսմանեանց Լատիներէն. բ, Յաղագս Մահմետական կրօնի Ռուսերէն. գ, Ստորագրութիւն երկրին Ուլահու Լատիներէն. դ, Ներածութիւն երաժշտութեան Տաճկաց, Ռուսերէն. ե, Հաւաքումն Օսմանեան տաղերգութեանց երաժշտական խազերով։

Քանդէմիր տեղեակ էր գործածական և պիտանի լեզուաց. նաև մեծանուն երաժիշտ էր տաճկական երգոց (փէշրէվի), և այլն, զորս ցարդ անոր անուամբ կը նուագեն ախորժելով։

ՔԱՊԱԼԵԱՆՔ կոչեցան Գաղտնագուշակք, կամ Թուագուշակք, իբր թէ ծածկագէտք խաբէական հնարքով։ Վասն զի Քապալ ըստ Եբր. նշանակէ Աւանդականութիւն, և ըստ Հյ. Վեցհազարեակ և Եօթնագրեանք՝ արուեստ Թուոց, և այլն։ Քաղդէացիք նախ դրին զԱստուած մի միայն հեղինակ և գիտակ ամենայն բնական երևութից բարւոյ և չարի, և ամէն մարդկային պատահարաց։ Ապա ասկէց հնարեցին առասպելական սուտ ոգիք բարի ու չար, որոնց կուտային բոլոր աշխարհային դիպուածները։ Ասկէց ալ հետևցուցին աւելորդապաշտ անհաւատները թէ պէտք է բարեկամանալ և խորհրդակցիլ բարի ոգիներուն հետ ու անոնցմէ իմանալ ըլլալիքները , և անոնց ձեռքով հալածել չար ոգիքը կամ դևերն ու ազդեցութիւններն : Իսկ անոնց հաճոյանալու և օգնութիւն խնդրելու համար հարկաւոր է գիտնալ անուննին՝ որ հալածող են ամենայն չարեաց՝ կ'ըսէին : Նաև կարծէին թէ այնպիսի անուանց կոչմամբ կ'առնուն զօրութիւն հրաշագործութեան . անոր համար նուսխաներուն վրա կը գրէին այնպիսի ծածուկ խորհրդական անուններ կախարդական և վրանին կը պահէին , ու թևերնին ալ կը կապէին , և այլն : Սակայն այնպիսի խորհրդական հրաշագործ անուններ գտնելու համար՝ հարկաւոր էր գիտնալ քապալ կամ վեցհազարեակ , կ'ըսեն : Որ կ'ըլլայ այբուբեն թիւերը կերպ կերպ շարելով և թուելով բաղադրել անուն ինչ փուճ դիւական . և կերպ կերպ դարձընելով հանել բառ մը , ու անով հնարել խաբէական գաղտնագուշակութիւնը սնոտիասէր Քապալեանց և կախարդաց :

ՔԱՌԱՍՈՒՆ կուսանք էին Ադրիանուպօլսեցի միանձնուհիք , կրթուած աստուածիմաստ խրատով Ամոն սարկաւագին . զասոնք բռնեց Բարդոս դատաւորը և շատ նեղութիւն կուտար՝ որ կռապաշտ ընէ . բայց անոնց աղօթքովը կոտըրտեցան կուռքերն ու սատակեցաւ քուրմը : Ան ատեն տանջեցին զԱմոն կողը այրելով . և երբոր դրին գլուխը պղնձէ սաղաւարտ մը հրացեալ , կուսանաց աղօթքով եղաւ սաղաւարտը դրուեցաւ դատաւորին գլուխն , որ կատղելով աքսորեց զամէնքը 'ի Հերակլիա : Հոն ալ երբոր քաջութեամբ անարգեցին կռապաշտութիւնը , ձգեցին գազաններուն առջև , բայց անվնաս մնացին ։ Նաև մարգարէացան Լիկիանոս բռնաւոր արքային կորուստն ու քրիստոնէութեան ծաղկիլը ։ Անկէց ետև զրկեցին սուրբերը անգութ թագաւորէն, որ զամէնքն ալ նահատակեց սրով և հրով վասն անուան Տեառն, և տօնեցան հրաշագործութեամբ ։

ՔԱՌԱՍՈՒՆ մանկունք էին Սեբաստացի քաջ զօրականք կայսերական գնդէն Կապադովկացւոց ՚ի փոքր Հայս, բոլորն ալ քրիստոնեայ Լիկիանոսի ժամանակը ։ Որոնք ջերմեռանդն աղօթքով հրաշք կը գործէին հարկաւոր ատեն, ինչպէս որ անջուր տեղ մը անձրև բերին, և թշնամիներուն յաղթելով նախանձելի եղան շատերուն ։

Ապա երբոր գնացին ՚ի Սեբաստիա՝ Լուսիաս իշխանը հրամանաւ Լիկիանոսի սկսաւ դատել բանակին մէջի ամէն քրիստոնեաները ։ Իսկ քառասուն մանկունք քննեցան քաղաքին դատաւորէն․ որ տեսնելով անոնց համարձակ քաջութիւնն ու հաստատ հաւատքը բանտը դրաւ․ ուր երևցաւ Քրիստոս քաջ նահատակներուն և զօրացուց մեծապէս ։ Յետոյ քննեց զանոնք Լուսիաս իշխանը դատաւորին հետ միատեղ․ և երբոր անփոփոխ գտաւ՝ հրամայեց որ քարով զարնեն բերաններնուն ։ Իսկ դահիճները չփոթելով մէկ մէկու կը զարնէին՝ նմանապէս Լուսիաս անոնց զարնելու տեղը դատաւորին զարկաւ ։ Ուստի խայտառակելով նորէն զրկեց սուրբերը՝ բանտ դրաւ, ուր կրկին մխիթարուեցան Յիսուսէն երկնաւոր ձայնիւ ։ Ապա նոր քննութենէն ետև կապեցին զանոնք իրիկունը և մերկ ձգեցին Սեբաստիայի լիճը, որ ձմեռն ըլլալով սառեցաւ ու կը կոտրտէր վկայից մարմինը ։ Ուր չդիմանալով ընկերներուն մէկը վազեց դուրս ընկաւ պատրաստած բաղնեց մէջն ու փչեց հոգին՝ զրկուելով սուրբ պսակէն ։ Իսկ երանելի ընկերներն երբոր եռանդագին սրտով աղօթք կ'ընէին՝ երկինքէն լոյս ծագեցաւ ու տաքցուց սառամանիքը, և երևեցան քառասուն պսակք ։ Զան տեսնելով բաղնեց պահապանը՝ կանչեց ընկերներուն՝ որ ես ալ քրիստոնեայ եմ, ու ընկաւ լճին մէջ պսակակից եղաւ քաջ նահատակներուն ։

Ապա հանեցին սուրբ քառասունքը, ո՛րը այրեցին, ո՛րուն ալ ծնկերը խորտակելով գետը ձգեցին ։ Իսկ եպիսկոպոսը տեսիլք տեսաւ ու գնաց գետին եզերքը գտաւ լուսափայլ նշխարքը սրբոց և ամփոփեց պատուով ։ Զասոնք գովեցին գեղեցիկ ճառերով սուրբն Բարսեղ, Նիւսացին, Եփրեմ, և Սիսիանոս վարդապետ Հայոց՝ հոն սուրբ Քառասնից տաճարին մէջ ։

Սիրով անմահին զօրացան վըկայք
Յասպարէզ մարտից կանգնեալ յաղթանակ,
Հարին զթշնամին յուսացեալք յԱստուած
Գըտան արժանիք շըքեղ մըցանաց ։
Անզեղջ շնորհք Փրկչին առատ բաշխեցաւ
Մանկանց և կուսից երկնի հրաւէր տուաւ․
Յարատեւքն 'ի մարտ յուսով անբաւին
Յաղթեն տիրանան երկնից քաղաքին ։

ՔԱՌԱՍՈՒՆ և հինգ վկայք էին ժամանակակից և գաւառակից քառասուն մանկանց, բայց զօրականք այն գնդէն, որ կ'ըսուէր Լեգէոն Հայոց 'ի Նիկոպօլիս ։ Ուր Լիւսիաս իշխանը երբոր կը դատէր քրիստոնեաները՝ այս քառասունըհինգ վկայք եղան ատեանն ու քաջութեամբ դաւանեցին զՔրիստոս համարձակ պատասխանելով հեթանոսաց , որոնք կատաղութեամբ զարկին բերաններուն ու աշտարակի մը մէջ փակեցին ։

Յետոյ կրկին անգամ դատելով քերեցին երկրթէ ճանկով սուրբերուն մարմինն ու նորէն բանտը դրին , ուր բարեպաշտ կին մը ջուր կը տանէր անոնց զովանալու համար ։ Եւ երբոր գիշերը կ'աղօթէին սաղմոսելով , հրեշտակ Տեառն լուսափայլ իջաւ հոն ու քաջալերեց նահատակները ։ Աստի երկու Եգիպտացի պահապանք տեսնելով զաս հրաշքը հաւատացին ու մտան բանտը ։ Իսկ կռապաշտները երանելեաց ձեռքերն ու ոտքերը կտըրտելով, այրեցին զամէնքն ու նետեցին Գայլ գետին մէջ ։ Ասոնց մէկ ընկերը՝ Ախսիանոս տանջանքի մէջ պապակելով ծարաւէն՝ բռնեց քար մը ու կարդաց առ Աստուած . մէկէն ջուր բղխեց քարէն և զովացուց սուրբը ։ Այսպէս հրաշագործութեամբ կատարեցան 'ի Քրիստոս և տօնեցան ։

ՔԱՐԻՍՏՈՍ հովիւ և Մարիամ՝ սրբակաց լծակիցք՝ էին Եգիպտոսի մէկ գեղէ մը , որոնց ծածուկ առաքինութիւնքն յայտնեց Աստուած երկու անապատական ճգնաւորաց , թէ ձեզմէ վեր սուրբ են ։ Որոնք գնացին գտան զանոնք , և իմացան թէ Քարիստոս և Մարիամ կ'ապրէին մէկտեղ կուսութեամբ միշտ քրոջ եղբօր պէս . գիշերը գետնի վրա կը պառկէին զատ զատ , խորգով և ճգնութբ ։ Իրենց ամէն բանը իրեք բաժներ էին , մէկ մասն կուտային աղքատաց , մէկ մասն աւօտարականներուն համար կը ծախէին , իսկ մնացածն էր իրենց հարկաւորութեան համար ամենայն ժուժկալութեամբ և պարկեշտութեամբ քաղաքավարելով։ Ասոնք եղան բարի օրինակ ճգնաւորաց, և գրեցաւ յիշատակը Հարանց վարքին մէջ։

ՔԱՐԻՏԻՆԷ էր աղախին բարեպաշտ՝ Կղոդիոսի, որ Դիոկղետիանոսի ժամանակը մատնեցաւ հաւատքի համար Դոմետիանոս կոմսին ձեռքը։ Որ սրբոյն գլխուն վրա կրակ դնել տուաւ, և խոցերուն վրա լեցուց քացախ․ ապա հրացեալ շամփուր կուշտը խօթելով ծովը ձգել տուաւ։ Ուսկից ազատեց զորբուհին հրեշտակ Տեառն․ ապա հանեցին ակռաներն ու եղունգները, և տարին ձգեցին պոռնկանոցը, ուր ջերմեռանդն աղօթքով աւանդեց սուրբ հոգին․ իսկ մարմինը պատուով թաղեց տէրը, և եղաւ տօնելի յիշատակը։

ՔԱՐԻՏՈՆ խոստովանող սուրբ հայրն էր Իկոնիոն քաղաքէն, որ Որեղիանոսի հալածանքին ատեն տանջեցին հրով և ծեծով ու բանտարկեցին կռապաշտները։ Ապա հալածանքէն ետև ազատեցաւ, գնաց յԵրուսաղէմ․ և երբոր կ'երթար Եղիայի անապատը՝ բռնեցին աւազակները սուրբն ու կապեցին, այրի մը մէջ դրին․ իսկ իրենք խմեցին օձէն թունաւորած գինին առանց գիտնալու ու ընկան մեռան։ Ան ատենը երանելին ժողվեց անոնց կողոպտած բաներն ու բաժնեց աղքատաց․ իսկ նոյն տեղը շինեց վանք, և փայլեցաւ հրաշագործութբ̅․ և երբոր անունն ելաւ, փախաւ գովեստէն, և շրջելով շատ տեղեր և վանքեր՝ եղաւ հայր հարանց, մինչև որ 'ի խոր ծերութեան փոխեցաւ երկինքը 'ի Դ․ դարուն։

ՔԱՐՈՆԴԷՍ կամ ՔԱՐՈՆԴ. Խարոն կը թարգմանի Թիաքարշ ըստ Եգիպ. և էր ըստ բանաստեղծից որդի գիշերոյ չաստուած սանդարամետական։ Այլ և Թիաքարշ նաւակին Ախերոն գետոյն դժոխոց, որ կ՚անցընէր հոգիները դրամով ընդ միւս կողմն, ու կը տանէր տարտարոսը ըստ յունական առասպելաբանութեան։ Ասոր համար սովորութիւն էր հեթանոսաց, որ մեռելներուն բերանը տակ կը դնէին, որ վճարէ վարձը թիաքարշին ու անցնի ընդ անդին։ Որ ըստ Դիոդորի Սիկիլիացւոյ է մնացուած աւելորդապաշտութեան Եգիպտացւոց, որոնք մեռելները կը թաղէին միւս կողմն Ախերոնի, որոնցմէ առին Յոյնք Որփէոսի առասպելախօսութեամբն։

ՔԱՐՊՈՆԱՐՔ էին խռովարար աղանդաւորք ժամանակիս մնացորդք անկրօն Ֆռամասոնից, որոնք մեծ շփոթութիւն հանեցին յԵւրոպա ետքի ատենս։ Վասն զի խիստ կը ջանային անկրօնութեամբ վերցընելու ոչ միայն զճշմարտութիւն հաւատոյ, այլ և մեծամեծ իշխանաւորաց և եկեղեցականաց կեանքը՝ ունելով ծածուկ միաբանութիւն մը ընդդէմ տէրութեանց և սուրբ եկեղեցւոյ։

Պիոս Է. քահանայապետն Հռոմայ բանադրեց զանոնք և ուրիշ աղանդաւորները յամի 1821. իսկ կոնդակը ղրկեց ամէն պետութեանց՝ որ զգուշանան ու ամենուն հրատարակեն խափանելով չարը։ Զայս կոնդակ սիրով ընկալաւ Ռուսաց կայսրն ալ և բոլոր իւր տէրութեան մէջ հրատարակեց, որուն օրինակը մեզի ալ ղրկեց Տաւրիա։

ՔԵՂԿԻԱ էր գերապատիւ քահանայապետ Հրէից աստուածասէր Յովսիայ բարեպաշտ թագաւորին օրը։ Սա տաճարը սրբելու ատեն գտաւ Երկրորդ Օրինաց սուրբ գիրքն ու տարաւ արքային, և ինչպէս կ'երևնայ գրած էր այն ձեռօք սուրբ նախամարգարէին Մովսէսի, և յետոյ հոն պահած գաղտ կռապաշտ թագաւորներէն։ Նոքա այս գրքով ազգը և Երուսաղէմ սրբեցին 'ի կռապաշտական աւելորդապաշտութեանց։ Տ. Յովսիա։

ՔԵՐԱՍՔՈՎ Միխայլ էր անուանի բանաստեղծ Ռուս լեզուագէտ ԺԸ. դարուն, որ իւր աշխոյժ բանասիրութեամբն համարեցաւ առաջին հեղինակ դիւցազնական քերթուածոց Ռուսաց։ Վասն զի յօրինեց ոչ միայն ողբերգութիւն, կատակերգութիւն և տաղերգութիւններ, այլ և տուարածական, երգիծաբանական առասպել և մտացածին պատմութիւններ, և այլ բանաստեղծութիւններ։ Ամենէն աւելի անուանի է դիւցազնականն Ռուսիադա, որով գեղեցիկ կը նկարագրէ Խազանի առումն Իւան Բ. Վասիլեվիչէն՝ ազգին փառքը այն դարուն մէջ՝ յայտնի երևցընելով. ասով շատ փառաւորեցաւ ազգէն, վասն զի գրուածքը հանճարաւոր էր և ընտիր ոճով։

ՔԵՐՈՎԲԷ կամ **ՔՐՈՎԲԷ**, և ըստ Եբր. յոգ. Քէրօբիմ, է վերի դասն հրեշտակաց Սերովբէից դասէն ետև, և կը թարգմանի հեղումն իմաստութեան, այլ և կոչեցաւ բազմաչեայ, հրացայտ, քառաթև, քառակերպեան, և այլ պէսպէս անուամբ և ձևով նկարագրեցան ըստ տեսլեան սուրբ մարգարէից։

Աստուածաշունչ գիրքը կը պատմէ . “ Հրամայեաց քերոբէից և բոցեղէն սրոյ շուրջանակաւ պահել զճանապարհս ծառոյն կենաց : Արասցես երկուս քրովբէս . . . խօսեցայց ընդ քեզ 'ի վերուստ 'ի քաւութենէն անտի 'ի միջոյ երկուց քրովբէիցն ,, : Եւ այս մտօք կ'ըսուի թէ “ Աստուած բազմեալ է 'ի քրովբէս , Անպատում աթոռ աստուածութեանն ասէ ըզքերովբէսն : Քերովբէք կոչին բազմաչեայք ըստ տեսանողին , որ է յաճախ գիտութիւն : Արա՛ աթոռ քեզ երկնային , Բազմեա՛ց յօղս ըստ քրովբէին ,, և այլն : Տ . Հրեշտակք . և Սերովբէք :

Քիլոն մեծանուն իմաստասէր էր եօթն Յոյն փիլիսոփաներուն մէկը , որ 550 տարի Յիսուսէն առաջ ծաղկելով համարեցաւ հեղինակ լակոնական և համառօտ վճռական խօսից : Եսովպոս հարցուց անոր թէ գիտե՞ս արդեօք Արամազդ ի՞նչ կ'ընէ երկինքը . Քիլոն պատասխանեց . “ Այո՛ գիտեմ , զխոնարհս բարձրացուցանէ , և զբարձրացեալս խոնարհեցուցանէ ,, : Երբոր հարցուցին , թէ ի՞նչ է աւելի դժուար . պատասխանեց թէ այս երեք բանս . “ Պահել զգաղտնիս խորհուրդս , գիտել թէ զիարդ պարտ իցէ 'ի կիր առնուլ զժամանակն , և համբերել անիրաւութեանց անտրտունջ ,, :

Պլինիոս կը պատմէ թէ Քիլոն գրել տուաւ տաճարին վրան աս վճիռներս , ու կ'ըսէր միշտ . “ Ծանի՛ր զքեզ . մի՛ ցանկար մեծամեծ յաջողութեանց : Փորձաքարն քննէ զոսկին . և ոսկին 'ի ձեռս մարդկան որոշէ զբարիս և զչարս : Լաւագոյն է արգոյ լինել յաչս այլոց , քան ահարկու ,, , և այլն :

Փիլիսոփայիս մահը շատ աղետալի եղաւ, վասն զի տեսաւ՝ որ որդին կը պսակուի յաղթանակով Ողիմպիական խաղին մէջ, գնաց անանկ բորբոքմամբ փաթթուեցաւ իրեն՝ որ ուրախութենէն սիրտը պատռեցաւ ու մէկէն փչեց հոգին։

ԿԼԱՐԱ հրաշագործ կոյս էր Ասիզացի աշակերտուհի սրբոյն Ֆրանչիսկոսի իւր քաղաքակցին, որ ամէն ունեցած բարին բաժնելով աղքատաց՝ գնաց առանձնացաւ ժամատունը զարմանալի առաքինութեամբ․ ուր առաւ քօղ կրօնաւորական ձեռամբ սուրբ Ֆրանչիսկոսին։ Անկեց ալ ուրիշ տեղ փոխադրելով բազմացուց իրեն հետեւող սուրբ կուսանքը․ և գեղեցիկ կրթութեամբ բարեկարգելով վանքերը եղաւ մայր միանձնուհեաց քառասունևերկու տարի մեծ ձգնութեամբ։

Ոչ միայն առաքինութեամբ, այլ և հրաշագործութեամբ լուսափայլեցաւ․ որչափ աղքատութեամբ և խոնարհութեամբ կը համբերէր աշխատանաց, պահոց, և երկար աղօթից, այնչափ զօրացաւ շնորհօք։ Մինչև առողջացուց շատ հիւանդներ համր, խուլ, և այլն․ երբոր հարկ եղաւ, առատացուց հրաշքով հացն ու ձէթը։ Եւ երբ Սարակինոսները պաշարեցին Ասիզ քաղաքն ու պիտի կոխէին Կլարային վանքը՝ առաւ ամանով սրբութիւն սրբոցն ու տարաւ վանքին դուռն, ընկաւ առաջը լալագին, պաղատեց որ պահէ զիրենք անհաւատ գազաններէն։ Եւ ահա ձայն լսուեցաւ թէ “Պահեցի և պահեցից զձեզ միշտ„։ Այս ձայնով թշնամիները կուրանալով ցրուեցան կորան անկէց։ Սրբուհի կոյսն Կլարա ըստ պայծառ անուանը լուսափայլեցաւ դէմքին ալ․ մինչև մեծագործ առաքինութեամբ և հրաշքներով փոխեցաւ առ Փրկիչն այցելութեամբ հրեշտակաց և սուրբ կուսանաց յամի 1243, և տօնեցաւ։

Կլարա շնորհազարդ կոյս լուսապայծառ
Անուամբ և արդեամբք չքնաղ գերափառ․
Մարմնով փանաքի հոգւով գերազանց
Հոյակապ հրաշից գործող մեծասքանչ։
Մայր գերահռչակ սա միանձնուհեաց
Ընտիր հրահանգօք կազդուրիչ կարգաց․
Ի վարս սրբութեան քաջ առաքինի
Ի սէր փեսային վառեալ գերարփի։

ԿՈՒԹՈՒՍՈՎ Միքայէլ Լարիոնովիչ էր մեծահամբաւ սպարապետ Ռուսաց ծնեալ 'ի 1745, և վարժեալ յուսմունս 'ի Գերմանիա։ Ապա զինուորելով Սուարով զօրավարին ձեռքին տակը, այնչափ զօրացաւ մեծ մեծ քաջութեամբ, մինչ զի Թագուհին Կատարինէ Բ, դրաւ զինքը գործակալ զինուորութեան Խրիմի մէջ 'ի 1782, ուր ապա քաջութեամբ պատերազմելով հալածական փախուց հարաւային կողմէն Օսմանեանց զօրքը, բայց հոն մէկ աչքը կորուց։

Բոլոր ըրած պատերազմներուն մէջ գովեցաւ քաջութիւնը և խելքը, մանաւանդ 'ի 1788 երբոր դէմ դնելով ետ վռնտեց Թշնամիները Պօկ գետին վրայէն։ Յետոյ գնաց Օզուի բերդին վրայ․ հոն ալ ահագին քաջագործութեամբ յաղթեց Թշնամեաց․ բայց չարաչար վիրաւորեցաւ ու իբր հրաշքով ապրեցաւ։ Ապա հաշտութենէն ետև 'ի 1793 գնաց 'ի Պօլիս տէրութեան կողմանէ։ Յետոյ Աղեքսանդր Ա․

կայսեր օրը շատ մեծամեծ գործառնութեանց մէջ մտաւ ու կատարեալ գովութեամբ գլուխ տարաւ ։ ՙՆմանապէս Գաղղիացւոց դէմ եղած ամէն պատերազմերուն մէջ յայտնի երեւցաւ ՙՔութուզովին խելքն ու քաջութիւնը ։ Իսկ ՚ի 1809 երբոր սպարապետ եղաւ Օսմանցոց դէմ, մեծ քաջութեամբ անանկ զօրացաւ , մինչեւ ՙՆատըր փաշա վէզիրը նեղը ձգելով անձնատուր եղաւ ՙՔութուզովին , որ մեծ պարգեւներով կոմսութիւն առաւ Թագաւորէն ՚ի 1811 ։

Իսկ ՚ի 1812 կարգեցաւ մեծ հրամանատար բանակին , եւ նախագահ զինուորական ատենին Նափոլէոնին դէմ ։ ՙՔութուզով տեսնելով Գաղղիացւոց սաստիկ ուժը՝ ճարտարութեամբ սկսաւ քիչ քիչ ետ քաշուիլ , մինչեւ հասուց ետեւէն թշնամին ՚ի Մոսկով մայրաքաղաքն ՚ի 14 . սեպ . ուր երբոր մտաւ Պօնափառթէն , քաղաքը չարաչար կ՚այրէր զօրապետին հրամանաւ , որպէս զի թշնամին չկարենայ կենալու հոն ։ Իսկ նա անմտութեամբ կեցաւ , որ Ռուսները աղաչելով հաշտութիւն խնդրեն . ինքն ալ ուզածին պէս ճամբայ բանայ իրեն յԱսիա անցնելու ։

ՙՔութուզով նոյն միջոցը իւր բանակն անանկ լաւ զօրացուց , որ Պօնափառթէն տեղ մը չիկրցաւ պարտըկուելու , մինչեւ վրա հասաւ ցուրտն ու կորուց անհամար Գաղղիացի զօրքը ։ Այս քաջութեան փոխարէն ՙՔութուզով առաւ կայսերէն պատիւ Ասպետութեան եւ Դքսութեան , որ հետեւելով հալածեց Գաղղիացիքը մինչեւ ՚ի Պէռլին եւ ՚ի Լիփսիա ։ Երբոր այսպիսի քաջութեամբ առաջ կ՚երթար քաջ սպարապետն իւր բանակովը , սաստիկ ցաւ մը եկաւ վրան, ու մեռաւ վաթսունըութ տարուան 'ի 13 ապր. 'ի Շլեզիա Գերմանիոյ երկիրը, և մեծ կսկիծ տուաւ ազգին ու ամենուն։ Քութուսով քաջութեամբ և իմաստութեամբ ոչ միայն հայրենիքը ազատեց այն աշխարհահործան պատուհասէն, այլ և պատճառ եղաւ ազատութեան Եւրոպիոյ։

ՔՈՓԹՈՍ Սուփտի էր Թագաւոր Եգիպտոսի կոչեցեալ Փարաւոն։ Պատմեն թէ սա կանգնեց Եգիպտոսի բրգունքն, որ աշխարհիս եօթն հրաշալեաց մէկն է, ուր իրեքհարիւր հազար ոգի աշխատցուց քսանուիրեք տարի. Պլինիոս կը պատմէ թէ միայն սոխի սխտորի ծախեց ութհարիւր տաղանդ գործաւորներուն համար. ինչպէս Հրէայք ալ յիշեցին անապատին մէջ փափաքելով Եգիպտոսի սոխին սխտորին, և այլն։ Այս իրեք բրգունք հեռու են Մսըրէն երկու մղոնով, իսկ իրարմէ երկուհարիւր քայլ. մէկը մեծ, երկուսը փոքր։ Ըստ Հերոդոտոսի մեծ բուրգը կանգնեց արքայն վասն իւր մարմնոյն 'ի պատիւ արևու. երկրորդը վասն կնկանը, և երրորդն վասն դստերն. ուր կը բնակէին կախարդ քուրմերը։ Ասոնց շինուածքը իրեք հազար հինգ հարիւր տարիէն աւելի է. և այս տեղերէն կը գտնեն մոմիա ըսուած զմըռսած մարմինք անապական հին Եգիպտացւոց ներկած և ոսկեզօծ, ուսկից մէկ հատ ալ մեր գրատանը ընծայ եկաւ։

ՔՍԵՆՈՓԱՆԷՍ Յոյն փիլիսոփայ էր աշակերտ Արքեղայոսի և ժամանակակից Սոկրատայ, որ հարիւր տարիէն աւելի ապրելով գրեց շատ իմաստասիրական բանաստեղծութիւններ հաստատելով թէ անհնար է բնապէս գուշակել և իմանալ ըլլալիքները․ նաև անթարգմանելի են խոկութիւնք իրաց, և այլն։

Կռապաշտութիւնը անանկ անձոռնի կ'երևնար աս փիլիսոփային, որ դէմ գրեց Հոմերոսին և ուրիշ կռամոլներուն․ ստուգելով թէ ամբարշտութիւն է տալ աստուածոց թէ ծնունդ, և թէ մահ․ յորմէ հետևէր թէ չկային անոնք ու միշտ չպիտի ըլլան, կ'ըսէր։ Երբեմն տեսաւ որ Եգիպտացիք կուռքին վրա կուլային տօնին օրը՝ ծաղրելով ասաց․ “Եթէ պաշտօնդ աստուածոց համար է, ինչո՞ւ անոնց վրա կուլաք․ իսկ եթէ մարդկանց համար է, ինչո՞ւ զոհ կը մատուցանէք անոնց„։

Ուստի այսպէս կուռքերը անարգելուն պատճառաւ աքսորուեցաւ հայրենիքէն իբր ամբարիշտ, և գնաց բնակեցաւ 'ի Սիկիլիա, ուր ունեցաւ աշակերտ զանուանին Պարմենիդէս և ուրիշ նշանաւոր անձինք․ թէպէտ բարեկամ էր մեծամեծաց, բայց միշտ կարօտութեան մէջ էր։

Կղեմէս Աղեքսանդրացին կը բերէ ասոր ըսածը․ “Մի միայն է գերագոյն Աստուածն եթէ մարդկան, և եթէ բնակչաց երկնից, և աննման է մարդոյ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ„։ Սա երբեմն հրաւիրեցաւ նարտ խաղալու․ և երբոր հրաժարեցաւ, պղերգ և ծոյլ կոչեցին զինքը․ ան ալ պատասխանեց “Յիրաւի պղերգ եմ յոյժ՝ ինչ և իցէ անվայել գործքերու համար„։

ՔՍԵՆՈՓՈՆ էր մեծահամբաւ իմաստասէր, զօրավար, և պատմաբան Աթենացի, որ սորվեցաւ Սոկրատէն իմաստասիրութիւն և քաղաքական օրէնսգիտութիւն ։ Իսկ զինուորութեամբ առաջացեալ կարգեցաւ հրամանատար զօրաց ու անցաւ 'ի Բիւզանդիա բարեկարգելով քաղաքը 400 տարի Յիսուսէն առաջ ։ Յետոյ տասըհազար յունական զօրքով գնաց Պարսկաստան․ անկէց բարբարոսաց մէջէն անցնելով Հայաստանու կողմերն հասաւ ու ամբողջ բանակը հասուց 'ի Յունաստան, և շատ գովելի եղաւ ։ Ապա յետ զանազան քաջագործութ̃եց Ասիայի մէջ՝ առանձնացաւ 'ի Լակեդեմոնիա, ուր գրեց բարոյական և պատմական ճառերը ։ Նաև գրեց եօթն գիրք Թուկիդիտեայ պատմութեան յաջորդութիւնը՝ ան ժամանակէն մինչև իր օրը ։ Անկէց ալ անցաւ գնաց բնակեցաւ 'ի Կորնթոս, ուր խաղաղութեամբ մեռաւ իննըսուն տարեան՝ Յիսուսէն 360 տարի առաջ ։

Սոկրատին այս փառաւոր աշկերտը սիրելի եղաւ ամենուն քաջութեամբ և իմաստութ̃բ․ որով գրեց քանի մը գրեանք այնչափ քաղցրաբանութեամբ, զոր Յոյնք յարգելով անուանեցին “Մեղու Ատտիկեան և Երգիչ Աթենացի„ ։ Կրիլլոս անոր որդին քաջութեամբ պատերազմելով զարկաւ հայրենեաց թշնամին Եպամինոնդ սպարապետը խոցեց չարաչար, ինքն ալ անկէց խոցուեցաւ մեռաւ․ Քսենոփոն երբոր լսեց կռատան մէջ զոհի ատեն, շուտ մը պսակը գլխէն հանեց․ ապա լսելով թէ վասն հայրենեացը մեծ քաջութեամբ քաջի մը ձեռքով սպաննուեցաւ, նորէն պսակն գլուխը դնելով ասաց խնդութեամբ․ “Գիտէի թէ հարկաւ օր մը պիտի մեռնի որդիս, զի մահկանացու ծնաւ, բայց չէի գիտեր թէ այսպիսի մահուամբ․ վասն զի այս մահը ցնծալից ուրախութեան է արժանաւոր, և ոչ սգոյ և տրտմութեան „ :

ՔՍԵՆՈՓՈՆ Պատրիկ Սինկղիտոս 'ի Կոստանդինուպօլիս էր առաքինի, արդար և ողորմած. Նոյնպէս աստուածասէր ամուսինն ալ Մարիամ: Որոնք իրենց երկու զաւակը Արկադէոս և Յովհաննէս սնուցեալ աստուածպաշտութեամբ ղրկեցին 'ի դպրոց իրաւագիտութեան Բէրիտոն քաղաքին: Բայց հազիւ ապրեցան ալէկոծութենէն, ու Յովհաննէս գնաց վանք մը մտաւ: Իսկ Արկադէոս գնաց Երուսաղէմ, և իմանալով եղբօրն առողջութիւնը, ինքն ալ գնաց մտաւ անոր վանքը կրօնաւոր եղաւ: Ապա բարեպաշտ ծնողքը երբոր իմացան երջանիկ զաւակաց վիճակը՝ թողին զաշխարհ գնացին անոնց. Քսենոփոն մտաւ Ճգնաւորաց վանքը, իսկ Մարիամ կուսանաց վանքը: Ուր ամէնքն ալ սքանչելի առաքինութեամբ կրօնաւորելով եղան բարի օրինակ մինչև որ փոխեցան սրբութեամբ առ Աստուած, և տօնեցան:

ՔՍԵՍՏՈՍ Ա. սուրբ քահանայապետ Հռոմայ, յաջորդեց սրբոյն Պետրոսի 'ի 132. և բարեկարգութեամբ կառավարեց զեկեղեցին Քրիստոսի տասը տարի, որ և կանոնադրեց, զի աշխարհականները չի դպչին սրբազան բաներուն. իսկ եպիսկոպոսները հաստատուին իրենց վիճակը միայն կոնդակաւ աթոռոյն Հռոմայ: Հեթանոսները տեսնելով սուրբ հայրապետին բարի նախանձը բռնեցին տանջեցին վասն սուրբ հաւատոյ. և ապա նահատակեցին 'ի 142:

ՔՍԻՍՏՈՍ Բ. Աթենացի սուրբ հայրապետը նստաւ յաթոռ Հռոմայ 'ի 260. բայց միւս տարին կռամոլ կայսրն Վաղերիանոս բըռնեց սուրբն չարչարեց՝ որ ուրանայ. իսկ նա մեծ քաջութեամբ անարգեց կուռքերն համարձակ դաւանելով զՔրիստոս Աստուած ։ Այն ատեն սուրբն Լաւրենտիոս իր նախասարկաւագը կը փափաքէր որ չարչարակից ըլլայ սուրբ հայրապետին. իսկ նա մխիթարելով մարգարէացաւ թէ իրեք օրէն ետև պիտի մարտիրոսութեամբ պսակուիս վասն սուրբ հաւատոյ, ինչպէս որ կատարուեցաւ ։ Վասն զի երբ սուրբ Քսիստոս գլխատեցաւ, Լաւրենտիոս ամփոփեց մարմինը 'ի 261. ուր զինքն ալ բռնեցին ու խորովեցին կրակով ։ Տ. 'ի կարգին ։

ՔՍԻՍՏՈՍ Գ. սուրբ հայրապետն ընտրեցաւ քահանայապետ Հռոմայ 'ի 432, և մեծ ջանքով Պեղագեան աղանդաւորները ջնջելով հանդարտեցուց եկեղեցին Քրիստոսի քաջութեամբ ։ Նաև ըրաւ հաշտութիւն 'ի մէջ Կիւրղի Աղեքսանդրացւոյն և Յովհաննու Անտիոքացւոյն ։ Եւ այսպէս զօրացուցանելով սուրբերը և սուրբ հաւատքը փոխեցաւ առ Քրիստոս 'ի 440. և ծաղկեցաւ հրաշքով ։

ՔՍԻՍՏՈՍ Դ. օծուեցաւ մեծ հայրապետ բոլոր հօտին Քրիստոսի 'ի 1471, և զօրաւոր կանոններով ընկճեց աղանդաւորներն ու պայծառացուց ուղղափառ կրօնը ։ Մեծ ջանք ըրաւ ազատելու զԵրուսաղէմ. նաւեր պատրաստեց ու միաբան Վենետիկցոց և Նափոլիթանցոց հետ ղրկեց յԱտալիա, զոր առին և ճոխ աւարով և գերիներով ղրկեցին 'ի Հռոմ ։ Իսկ սըրբազմը ուրախութեամբ սկսաւ քաղաքը զարդարել, կանգնեց գեղեցիկ կամուրջ Տիբերիս գետին վրա կոչեցեալ կամուրջ Քսեստոսի․ շինեց վայելուչ եկեղեցիներ, պալատներ, ճամբաներ, և այլն․ նաև ճոխացուց Վատիկանեան գրատունը, և հաստատեց զտօնն անարատ յղութեան Տիրամօրն, զոր արևելեան եկեղեցիները շատ կանուխ կը տօնէին։ Գրեց աստուածիմաստ ճառեր, գրեանք, և կոնդակներ․ ապա ՚ի 1484 փոխեցաւ առ Տէր եօթանասունըմէկ տարուան։

ՔՍԵՍՏՈՍ Ե․ գերահռչակ քահանայապետ Հռոմայ էր որդի աղքատ այգեգործի Անքոնայէն, որ ՚ի 1585 ընտրեցաւ գլուխ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ, իւր ճարտար իմաստութեամբ և խոհական հանճարեղութեամբն խեղճ հովուական վիճակէն վերանալով յայս բարձրագոյն աստիճանն։ Զարմանալի մեծագործութեամբ և բարեկարգութեամբ եկեղեցւոյ վասն հաստատութեան սուրբ կրօնից բոլոր աշխարհք զարմացուց։ Իմաստալից կոնդակներով և սահմանադրութեամբ ալ զօրացուց իւր իշխանութեան աթոռը․ այնչափ փառաւոր շինուածներ ալ կանգնեց վայելչապէս, մինչև անուանեցաւ երկրորդ հիմնադիր Հռոմայ։ Այս սրբազանս ոչ միայն ուսումնասէր և պաշտպան էր առաքինի իմաստնոց, այլ և կ՚ատէր զմոլութիւն և կը պատժէր չարաչար աւազակներն ու մոլի ախտաւորները․ նաև սիրելի էր ամէն ազգաց և տէրութեանց մինչև Ճափոնացոց իսկ և այլոց ամենից։

Շատ ուրախացաւ երբոր առաւ մեր Ազարիա կաթուղիկոսին դաւանութեան թուղթը սու֊

ռագրութեամբ չորս Հայ եպիսկոպոսաց. կանգնեց հիւրանոց մը մեր ազգին համար անուամբ սուրբ Մարիամու Եգիպտացւոյ, որ մինչեւ ցայժմ Հայոց ձեռքն է. ուր կը բնակին ուխտաւորք: Յետ այսչափ զարմանալի մեծագործութեանց եւ շինութեանց թողուց հինգ միլիոն սկութ վասն ազատութեան սուրբ երկրին Երուսաղէմայ. եւ ինքն փոխեցաւ արի եւ սրբակաց վարուք առաքինութեան վաթսունըւինը տարւան յամի 1590: Քսեստոս սրբազան պապը մեծամեծ գովեստներով փառաւորեցաւ միշտ Թագաւորներէն եւ մեծամեծներէն թէ վասն պիտանի գրուածներուն որ թողուց, եւ թէ վասն սքանչելի բարեկարգութեանց 'ի հաստատութիւն Քրիստոսական կրօնիս. մինչեւ մականուանեցաւ "Երջանիկ հովիւ փառաւորեալ 'ի Տեառնէ":

ՔՍԵՍՏՈՍ էր Իտալացի գիտուն Հրէայ, որ հաւատալով Քրիստոսի մտաւ Ֆրանչիսկեանց կարգը. եւ ապա սկսաւ սերմանել իր մոլորութիւնները: Երբոր յամառելով դէմ դրաւ Ճշմարտութեան դատաւորաց առջին, դատապարտեցաւ որ ողջ ողջ այրի: Սակայն հոգեւորական ատենին մեծաւորը մեղքնալով հաւանեցուց՝ որ նզովէ մոլորութիւններն ու ազատի: Ուստի մերժելով նորէն մտաւ վանքն, եւ առաքինի վարքով պայծառացեալ կը քարոզէր ըզբանն կենաց եւ Ճշմարտութիւն սուրբ աւետարանին մինչեւ մեռաւ 'ի Ջենովա քառասունըինը տարւան 'ի 1569: Սա հմտական բաներ գրեց աստուածաշնչին վրայով. բայց գլխաւոր գրուածն է իմաստալից քննութիւն Սուրբ Գրոց եւ Թարգմանութեանց այլովքն հանդերձ:

ՔՍԻՍՈՒԹՐՈՍ ըստ բանաստեղծից էր դիցազն, որ Կռոնոսէն իմացաւ թէ ջրհեղեղ պիտի ըլլայ. մեծ նաւ մը շինեց ու անով ազատեց զինքը և ազգատոհմը կորստենէն. իսկ նաւէն ելլելէն ետև փոխադրեցաւ յերկինս չաստուածոց կարգը, և այլն:

Այս է պատմութիւն Նոյ նահապետին խանգարած աւանդութեամբ հեթանոսաց մէջ որդւոց որդի: Ասոր նման ուրիշ խանգարած պատմութիւններ ալ կռապաշտից գրեանց մէջ կ'երևնան, ինչպէս է Դևկալիոնին, Փիւռոսեան Սիբիլլային, և այլոց: Կը պատմեն, թէ սա գիրք է, որ աշտարակէն և լեզուաց խառնակութենէն առաջ Քսիսութրոս նաւեց 'ի Հայաստան. և որդիք նորա Զրուան, Տիտան, և Յապետոսթէ, այս է Սեմ, Քամ, Յաբեթ՝ եղան իշխանք 'ի վերայ երկրի, և այլ այսպիսի բանք: Զոր մեր Գրիգոր Մագիստրոս և ուրիշ բանիբուն հնագէտներ յայտնի վկայեցին թէ բուն Նոյին և ջրհեղեղին պատմութիւնն է:

ՔՐԻՍՏԱՓՈՐ էր Սկիւթացի հսկայ ահաւոր՝ նախ անուանեալ Մարգարիտ, որ կայսերական զօրքով գնաց յԱսորեստան եղաւ քրիստոնեայ, և կոչեցաւ Քրիստափոր, այս ինքն Քրիստոսակիր: Երբոր տեսաւ քրիստոնէից չարչարանքը՝ գնաց յանդիմանեց դահիճներուն անգթութիւնը, որոնք զարհուրելով իմացուցին դատաւորին: Իսկ սուրբը երբ գնաց աղօթատունը՝ ետևէն գնացին երկուհարիւր զինուոր զինքը բռնելու համար. բայց նա աներկիւղ ելաւ դիմացնին սիրով, և սքանչելի քաղցրութեամբ զամէնքը դարձուց 'ի Քրիստոս, և հոն մկրտեցան ձեռամբ Պետրոս քահանային ։ Ապա ելաւ դատաւորին ատեանն ու համարձակ դաւանելով սուրբ հաւատքը մատնեցաւ տանջանաց ․ բայց ոչինչ համարելով ահագին տանջանքն ու երբոր կը գոհանար , բանտարը ղրկեց հոն երկու պոռնիկ՝ որ սուրբը մոլորցընեն ։ Իսկ նա դարձուց զանոնք ՚ի քրիստոնէական պարկեշտութիւն ․ որոնց անունն էր Կալլինիկէ և Ակիւլինէ ։ Դատաւորը լսելով կատղեցաւ , ու սաստկութեամբ կը ստիպէր՝ որ դառնան ՚ի կռապաշտութիւն ․ այլ երբոր անոնք մերժեցին քաջութեամբ , կախեցին երանելիներն ու այնչափ տանջեցին , մինչև նահատակեցան ։

Ապա նորէն ատեան հանեցին փառաւոր վըկայն Քրիստափոր և երկուհարիւր հաւատացեալ զինուորները , որոնք երբ միաբերան Քրիստոս դաւանեցին՝ վճռեցաւ որ գլխատուին ։ Իսկ սուրբն Քրիստափոր ձգեցին եռացեալ ձիթով և ձիւթով խալկինի մէջ , ուկից պահեցաւ հրաշքով ։ Ապա ամէն տանջանքներէն ետքը կտրեցին գլուխը յԱնտիոք քաղաքը յամի 362 ․ իսկ սուրբ մարմինը փոխադրեցին ՚ի Պոլիս , ուսկից ալ յարևմուտք տարին պատուով ։

ՔՐԻՍՏԱՓՈՐ Ա․ կաթողիկոս Հայոց Արծրունի ընտրեցաւ յամի 475 , որ մեծ ջանքով հաստատ պահեց ժողովուրդը Բարծումայէն՝ Նեստորական աղանդէն , որ Եդեսիայէն անցնելով ՚ի Պարսկաստան և ՚ի Հայս կը ջանէր զհերձուածն ․ ուր իր աղանդին չհետևողներէն եօթհազար հոգի նահատակել տուաւ Պարոզից ձեռքով ։ Քրիստափոր լսելով գրեց կոնդակներ ամէն տեղ առ եպիսկոպոս և առ իշխանս, և զգուշացուց ազգը Բարծումայէն և Նեստորական աղանդէն խոհեմ բարեկարգութեամբ ։ Թէպէտ անօրէն Բարծումն շատ հետևեցաւ վնասել կաթուղիկոսին մատնելով Պարսից, և այլն, բայց խայտառակեցաւ չարը. իսկ հայրապետը նոյն գովելի քաջութեամբ վախճանեցաւ 'ի 480 ։

ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ. Բագրևանդցի նստաւ կաթուղիկոս Հայոց 'ի 515, որ խռովութեան ժամանակ ըլլալով չիհասաւ երևելի գործքով մը ազգին օգուտ և աթոռին պատիւ բերելու, մինչև վախճանեցաւ 'ի 521. որուն յաջորդեց Տէր Ղևոնդ ։

ՔՐԻՍՏԱՓՈՐ Գ. ազնուազարմ յԱպահունեաց յաջորդեց Կոմիտաս կաթուղիկոսին 'ի 625, որ ըլլալով այր ճգնազգեաց՝ անաչառութեամբ կը յանդիմանէր զանկարգութիւնս իշխանաց և մեծամեծաց, նաև Վարազտիրոց մարզպանին ։ Մինչ զի ոխակալ թշնամիները հաւանեցուցին մարզպանն՝ որ ձգէ աթոռէն զհայրապետը. իսկ նա իմանալով հրաժարեցաւ կաթուղիկոսութենէն 'ի 628, և գնաց յոտն Մասեաց շինեց մեծ վանք մը, ուր ժողվեց կրօնաւորներ, ու խիստ ճգնութեամբ կրօնաւորեցաւ բարւոք մինչև 'ի մահն ։

ՔՐԻՍՏԻՆԻԱ կամ ՔՐԻՍՏՈՆԵԱՑ կոյս էր Տիւրացի, միամօր դուստր Ուրբանոս դքսին՝ խիստ գեղեցիկ, զոր շատ ազնուականներ կը փափաքէին առնելու հարսն իրենց զաւակաց ։ Բայց հայրը կռապաշտ ըլլալով՝ դրաւ աղջիկն որ պահպանէ ոսկի արծաթ կուռքերը առանձին աշտարակի մը մէջ, որպէս զի աւելի սխրական ըլլայ չարչարանքներուն ։ Սակայն Ճշմարիտն Աստուած սիրեց զկոյսը, և երևեցաւ տեսլեամբ․ յորմէ լուսաւորեալ աստուածային շնորհօք կոտըրտեց կուռքերն ու աղքատներուն բաժնեց ։ Երբոր լսեց հայրը՝ կատաղութեամբ հրամայեց չարաչար ապտակելու դէմքն, ու մերկ ծեծելու․ բայց տեսնելով աղջկան հաստատ միտքը բանտը դրաւ ։ Յետոյ հրով և անուով ալ տանջեց ու ծովը նետել տուաւ․ բայց հրեշտակ Տեառն հանեց ծովէն և մխիթարեց հրաշքով․ իսկ հայրը երբոր պիտի գլխատէր կոյսը, յանկարծամահ սատկեցաւ ։ Յետոյ գնաց հոն Դիոս դատաւորն, ու չարչարելով զերանելին որչափ ջանք որ ըրաւ դարձընելու՝ փուճ ելաւ աստուածային հրաշքով․ մինչև ապա երկու տիգաւորք խոցելով սրբուհւոյն կողը՝ կատարեցաւ 'ի Քրիստոս յամի Տեառն 110 ․ իսկ նշխարքը ժամանակէն ետև սփռեցան և ծաղկեցան յարևմուտք ։

ՔՐԻՍՏՈՆԵԱՅՔ կամ **ՔՐԻՍՏՈՍԵԱՆՔ** վերակոչեցան նախնի հաւատացեալ Հրէայք և Հեթանոսք՝ դաւանելով Ճշմարիտ Աստուած զՅիսուս Քրիստոս․ որոնք աշակերտեալ Առաքելոց երբոր բազմացան՝ նախ յԱնտիոք քաղաքն անուանեցան Քրիստոնեայ ։

Իսկ քրիստոնէութիւնն կոչի Քրիստոսեան հաւատք և վարդապետութիւն, քրիստոնէական կրօնք, հաւատք, կարգ, ծէս, նաև ուղղափառ դաւանութիւն սուրբ եկեղեցւոյ, ըստ այնմ․ “ Քրիստոնէութեան անուն 'ի Քրիստոսէ է․ ըստ քրիստոնէութեան և գործքն վկայեսցեն ։ Պարտ է մեզ ոչ միայն անուամբ կոչիլ քրիստոնեայ , այլ և գործով ։ Որք քրիստոսեանքն են զմարմինս իւրեանց 'ի խաչ հանին կարեօքն և ցանկութեամբ հանդերձ ,, , և այլն ։

ՔՐԻՍՏՈՆԵԱՅՔ սուրբ Յովհաննու անուանեցան հին աղանդաւորք , որոնք կը բնակէին Յորդանանու քովերը , ուր կը մկրտէ եղեր Յովհաննէս մկրտիչ . և հիմա կը բնակին Միջագետաց և Քաղդէացւոց աշխարհքը ։ Ասոնք տարւէ տարի հինգօրեան տօներ կը կատարեն , ուր իրենց եպիսկոպոսը կը մկրտէ երեխաները գետին եզերքը ըստ Յովհաննու մկրտութեան ։ Իսկ հացն ու բաժակը կ'օրհնեն պարզապէս յիշատակաւ Քրիստոսի՝ առանց յիշելու տէրունեան մարմին և արիւն . իսկ սրբագործութիւնն երկար աղօթքով կ'ընեն շնորհակալութեամբ 'ի գովեստ Աստուծոյ . և այն իւղաղանդ և գինէխառն հացը կ'ըլլայ իրենց հաղորդութեան տեղ ։ Ըստ նոցա գինին կը նշանակէ զարիւնն Քրիստոսի , և իւղն զօծումն շնորհաց և սիրոյ ։ Երրորդութեան խորհուրդն ալ պակասութ̅ք կը դաւանին ասելով , թէ Քրիստոս է հոգի և բան հօրն յաւիտենական ։ Դարձեալ ունին իրեք գլխաւոր տօներ . ա̅ , է երեքօրեայ , որ ձմեռը կը կատարեն 'ի յիշատակ ստեղծման աշխարհի և Ադամայ . բ̅ , օգոստոսի կը կատարեն իրեք օր կոչելով տօն սրբոյն Յովհաննու , գ̅ , հինգօրեայ յունիսի մէջ կ'ընեն , և այն օրերը իրենց մկրտութիւնին ալ կը կատարեն ։ Կիրակին կը պահեն , բայց ոչ ծոմապահութ̅ի ունին և ոչ ապաշխարանք . վասն զի կը հաւատան թէ հարկաւ ամէնքն ալ պիտի փրկին ։ Իսկ իրենց հանդերձեալ կեանքը առասպելաբանութեամբ լեցուն է . խիստ մոլեալ և մոլորած են կախարդութեանց մէջ, և անով կորուցեր են ճշմարիտ հաւատքը, այլ միայն անուն քրիստոնէութեան ունին։

ՔՐԻՍՏՈՍ ըստ Եբր. Մաշիախ, Մեսիա, և ըստ յն. Խրիստօս, այս ինքն օծեալ, ինչպէս են քահանայք, մարգարէք և թագաւորք օծեալք վասն պահպանելոյ զաստուածային կրօնն ու ժողովուրդը։ Սակայն Մեսիային գալէն ետև Քրիստոս սեպհական անուն եղաւ Յիսուսի Փրկչին իբր գլուխ ամենայն օծելոց, գոլով աստուածութեամբն օծեալ մարդկութիւնն՝ զմեզ ալ օծեց աստուածային շնորհօք. ըստ այնմ. "Հոգի երեսաց մերոց Տէր Քրիստոս։ Դու ես Քրիստոս որդի Աստուծոյ կենդանւոյ։ Քրիստոսն անուն օծեալ կոչի. այս ինքն Աստուած և մարդ. զի Քրիստոս ոչ սոսկ մարդկութեան է անուն, և ոչ լոկ աստուածութեան"։ Տ. Մեսիա, Յիսուս։

ՔՈԼՈՄՊՈՍ Քրիստափոր էր մեծահամբաւ նաւապետ Ճենովացի ծնեալ 'ի 1442, և վարժած ուսմամբ, որ նաւարկելով Ովկիանոս ծովը գնաց միացաւ փորթուքալներուն հետ։ Որոնք նոյն ատենը ետևէ էին նոր կղզիներ գտնելու Ադլանդեան Ովկիանոսին մէջ. և այն նոր տեղերը գնաց Քոլոմպոս տեսաւ, ու քննելով աշխարհագրութիւնը և հին նոր աշխարհացոյցները վառեցաւ սիրտն՝ որ ինքն ալ նոր երկիր գտնէ։ Ասոր համար գնաց Ֆերդինանդոս Սպանիայի արքային յայտնեց բաղձանքն, ու օգնութիւն խնդրեց՝ որ երթայ նոր աշխարհք գտնէ. բայց երբոր տեսաւ թէ թագաւորը ժամանակ կ'անցընէ, ընկաւ Եղիսաբէթ թագուհին, և սիրտը շարժելով առաւ երեք նաւ իննսուն հոգւով ու պէտք ըլլալու բաներով. որոնց համար եօթը տարի ջանալէն ետև նաւեց 'ի Կանարեան կղզիները գնաց յամի 1492, օգոս. 3։

Ապա 7 սեպ. ելաւ անկէց մտաւ յՈվկիանոս. և երբոր երկնցաւ ճամբան, շատ նեղութիւն քաշեց անհամբեր ընկերներէն։ Որոնք քանի մը շաբաթ անցնելէն ետև երբ ցամաք չտեսնելով յուսահատեցան, ու տրտնջալով կը բռնադատէին որ ետ դառնայ. մինչև նաև միաբանեցան ծածուկ զինքը սպաննելու, և ետ դառնալու, Կոլոմպոս մեծ խոստմունքով և պաղատանօք հազիւ կարցաւ հաւանեցընել, որ քանի մը օր ալ համբերեն յԱստուած ապաւինելով։ Ու ահա 'ի 11 հոկ. 1492. Կոլոմպոս նշմարեց երկիր մը, որ էր Կուանահանէ կղզին Ամերիկայ՝ որ անուանեց սուրբ Փրկիչ 'ի յիշատակ վտանգէն ազատութեանը։ Ուստի Կանարեան կղզիներէն ելլելէն ետև երեսունևերեք օր անցեր էր ելան ցամաք վարի նոր աշխարհին, և հոն ծովէն քով խաչ տնկեցին ու ընկան գետինը երկրպագութիւն ըրին ամէնքը գոհանալով զԱրարչէն, և այլն։ Վայրենի բնակիչք տեսնելով զանոնք և մեծամեծ նաւերը սարսափելով փախան լեռներն ելան, միայն կին մը անոնցմէ բռնեցին ասոնք. Կոլոմպոս հրամայեց որ տան անոր հաց, գինի, և խաղալիկ բաներ։ Այս կինը գնաց վայրենիներուն սիրտ տալով բերաւ լեռներէն բարեկամացուց Սպանիացւոց հետ, նոյնպէս անոնց թագաւորն ալ գնաց ծանօթացաւ Կոլոմպոսին հետ։ Որոնք սկսան առուտուր ընելով փոխանակել ոսկին հետ ապակի խաղալիկներ, և այլն։ Մինչ զի թողտուին որ ծովեզերքը փայտաշէն բերդ մը կանգնեցին. ուր Կոլոմպոս թողուց երեսունըութ ոգի ընկերներէն ու դարձաւ 'ի Սպանիա մարտի 15 յամի 1493, լեցուն ոսկիով, գանձով, չտեսնուած բաներով և քանի մը հոգիով նոր աշխարհքէն: Թագաւորն ու թագուհին տեսնելով ցնծացան ազգով, և խիստ փառաւորեցին Կոլոմպոսը մեծ իշխանութեամբ փոխարքայի և ծովակալի, և այլն:

Յետոյ նորէն ղրկեցին Կոլոմպոսը տասնըեօթը նաւով, շատ մարդով և քարոզիչներով, արուեստաւորներով, բժիշկներով, այլովք հանդերձ, որ լուսաւորեն վայրենիները: Կոլոմպոս հասնելով վարի աշխարհքը գտաւ ուրիշ նոր տեղեր ալ:

Սակայն ապերախտ Սպանիացիք նախանձով լեցուած Իտալացի Կոլոմպոսին մեծամեծ փառքերուն վրայ, սկսան սուտ զրպարտութ՟ք գրել և չարախօսութեամբ արքային աչքէն հանել: Մինչև քննիչ ալ բերել տուին հօն, ու անիրաւութեամբ դատապարտելով զարդարը շղթայակապ ղրկեցին 'ի Սպանիա: Թագաւորը և թագուհին երբոր տեսան Կոլոմպոսն այնպէս կապած, մորմոքեցան վրան, ու նորէն մեծ փառօք ղրկեցին յԱմերիկա: Հասաւ հոն Կոլոմպոս, և տեսնելով Սպանիացւոց չար նախանձը իր գտած աշխարհքին մէջ, շուտով ետ դարձաւ 'ի 1504. ուր մեռած գտնելով իրեն բարերար թագուհին Եղիսաբէթ՝ այնչափ վշտացաւ յուսահատելով իր վիճակին վրայ, մինչև սաստիկ ախտակրութեամբ հիւընդցաւ ու վախճանեցաւ վաթսունըչորս տարուան 'ի 1509. բարեպաշտ վարքով և աստուածսիրութեամբ:

Իսկ մարմինը յետոյ փոխադրեցաւ սուրբ

Դոմինիկոսի կղզին Ամերիկայի, և թաղեցաւ փառօք մայր եկեղեցնայ մատրան մէջ։ Որուն յաջորդեց երէց որդին. նոյնպէս երկու եղբարքն ալ ասպետութեամբ և հարստութեամբ պատուեցան։ Եւ միւս որդին Փերդինանտոս կրօնաւորեալ կանգնեց ճոխ գրատուն քանհազար գրեանց ու պարգևեց եկեղեցւոյն Սեվիլլոյ. որ ապա հօրը վարքը գրեց և թարգմանեալ տպեցին գաղղիարէն։ Իսկ Ճենովացիք հայրենասիրութեամբ կանգնեցին փառաւոր արձան մեծին Քօլոմպոսի Ճենովայ մայրաքաղաքին մէջ, որ ոչ միայն առաջին գտնող եղաւ նոր աշխարհքին Ամերիկոյ, այլ և պանծալի առիթ լուսաւորութեան վայրենեաց երկրին ուղղադաւան հաւատքով, անթիւ մեծաշէն եկեղեցիներով, դպրոցներով, և իմաստուն վարդապետներով։

Աշխարհաշինաց հանճար և օճան
Նորանոր աշխարհս ածին յերևան,
Յածեալ ընդ Ովկիան մըտին ընդ երկրաւ
Հանին յանդնդոց հակոտնեայս անբաւ։
Յայս բաստ պանծացաւ Քօլոմպոս արին
Խորտակիչ հըզօր մրցմանց դըժուարին.
Գտեալ զանծանօթն աշխարհ վայրենեաց
Ուսմամբք և կրօնիւ նորատունկ պճնեաց։

* * *

Օ․

ՕԳՈՍՏԻՆՈՍ սուրբ հայրապետ էր մին 'ի չորս գերիմաստ վարդապետաց Լատին եկեղեցւոյն, ծնեալ յԱփրիկէ 'ի 354, և վարժեալ քաջ ուսմամբ 'ի Կարքեդոն, որով շատ գերազանց եղաւ․ բայց ծռելով ընկաւ Մանիքեցւոց աղանդն տաք գլխով, և այլն։

Յետոյ գնաց Հռոմ և Միլան ճարտասանութեան վարժապետ ըլլալու համար․ ուր յարեցաւ 'ի սուրբն Ամբրոսիոս և աղօթքով իր բարեպաշտուհի մօրն սուրբ Մոնիկայի լուսաւորեալ դարձաւ բոլոր սրտով առ Աստուած, և սորվելով սուրբ Ամբրոսիոսէն զճշմարտութիւն սուրբ կրօնին, մկրտեցաւ անկէց 'ի 387։

Յետոյ դարձաւ յԱփրիկէ, և ամէն բանը բաժնելով աղքատաց ծաղկեցաւ ճգնութեամբ և սրբութեամբ․ մինչ զի Վաղերիոս եպիսկոպոս Հիպպոնայ ձեռնադրեց զինքն քահանայ։ Իր աշակերտներ ժողվելով հաստատեց սրբական կարգ կանոնաւոր աբեղայից։ Այս սկսաւ ծաղկեցընել հրաշալի վարդապետութիւնն գրով և քարոզութեամբ յաղթահարելով ամէն աղանդաւորս ընդ Մանիքեցւոց։ Այնչափ խոնարհ, ժուժկալ և առաքինասէր էր, մինչև կը փայլէր իբր վառարան աստուածային սիրոյն, և օրինակ բարի կատարեալ ապաշխարողաց։

Յամի 395 ժողով եպիսկոպոսաց լսելով այս սուրբին գերապանծ աստուածաբանութիւնը ընտրեցին և ձեռնադրեցին եպիսկոպոս Հիպպոնայ. որ պայծառացուց ոչ միայն զԱփրիկէ, այլ և արևելք և արևմուտք աստուածիմաստ վարդապետութեամբն՝ խորագոյն յայտնաբանելով բոլոր հաւատոյ մասունքը: Մինչ զի ամէն աստուածաբանք նուրբ և դժուար խնդիրները սուրբ Օգոստինոսին վճիռներովը կ'որոշեն անսխալ: Հազարէն աւելի հոգելից գրուածք կը համրեն Երանելոյն հանդերձ գեղեցիկ ճառերովն ու իմաստուն նամակներով. թող ուրիշ վարդապետութիւնները քարոզներով, և այլն: Նա այսպիսի սրբութեամբ և աստուածահաճոյ քաղաքավարութեամբ պայծառացեալ սուրբ Օգոստինոս երեսունըվեց տարի հայրապետութենէն ետև փոխեցաւ առ Աստուած եօթանասունըվեց տարւան յամի 430, և տօնելի եղաւ փառօք:

Հարքն աստուածարեալք 'ի Հոգւոյն սրբոյ
  Պճնեցին շնորհօք զմանկունս հաւատոյ՝
  Գերապանծ ճըգամբք վեհ հանդիսացան
  Յերկնաշնորհ պարգևըս լցեալ զեղան:
Պայծառ Օգոստէ արդեամբք գերափառ
  Վարդապետ շնորհաց նովին պերճացար.
  Գերահրաշ ուսմամբք կրօնից ետուր փայլ,
  Օ եղջիւր սիոնի յաղթող ամբարձեալ:

ՕԳՈՍՏՈՍ, ըստ Լտ. Աւկուստուս, այս է վեհափառ, և բարեբախտ, որ էր անուն մեծահամբաւ բարեբարոյ կայսեր Հռոմայ Հոկտաւիանոսի, ինչպէս որ կը յիշեն սուրբ Աւետարանն ալ. “Եւ հրաման յՕգոստոս կայսերէ„, և այլն։ Սա ծնաւ 'ի Հռոմ 63 տարի Քրիստոսէն առաջ, և էր ազգական և որդեգիր Յուլիոսի Կեսարու. որ լաւ քաղաքավարութբ̄ և ընծաներով շահեցաւ զծերակոյտը. մինչև կանգնեցին արձանը մեծամեծ պատուով։ Ապա դաշնակցելով Անտոնինոսի և Լեպիդոսին հետ հաստատեցին գերագոյն իշխանութիւնն Եռապետական հանդերձ հիւպատոսական իշխանութեամբ։

Այս դաշնակից եռապետները յետոյ խռովութեամբ սաստիկ պատերազմեցան իրարու հետ. մինչև որ երկուքը կորսուեցան, ու բոլոր Հռոմէական կայսերութեան իշխանութիւնը մնաց Հոկտաւիանոսին ձեռքը, որ մեծապէս փառաւորեցաւ։ Քրիստոսէն 29 տարի առաջ կատարեց իրեք մեծահանդէս յաղթանակ իւր ըրած քաջագործութեանցը համար. ուր շատ մեծ խաղ և տօնախմբութիւնք եղան. ինքն ալ մականուանեցաւ Օգոստոս կանգնելով իր անուամբ տաճար և կուռք. և վասն քաղցր կառավարութեան կոչեցին զինքն Հայր հայրենեաց։ Ապա այրեց Սիբիլլայից մարգարէական գրուածներն, ու ութերորդ ամիսն Հռոմայեցւոց անուանեց իւր անուամբ Օգոստոս. մեծամեծ շինութիւն և օրէնքներ ալ հաստատեց մայրաքաղաքին մէջ։ Ասոր օրը ծնաւ Փրկիչն աշխարհի երբոր աշխարհագիր կ'ըներ ըստ պատմութեան Աւետարանին։ Օգոստոս վերջապէս որդեգրելով իր խորթ որդին Տիբերիոսը դրաւ իրեն գահակից կամ յաջորդ. ու մեռաւ եօթանասունվեց տարուան յամի Տեառն 14, և միշտ մեծանուն փառաւորեցաւ։

ՕԼԿԱ էր անուանի դշխոյ Ռուս ազգէ ժ. դարուն, որ ամուսնացաւ Իկոր քաջ դքսին հետ յամի իբր 912, հայկազարմ Լեւոն կայսեր օրը: Այն ատեն Տնեբեր գետին քովի բնակիչքն ու Տրեւլեանք ապստամբեցան. Իկոր շուտ մը գնաց զամէնքը խոնարհեցուց: Ապա ելաւ Խրիմի վրան, բայց Կոստանդին Պերփեռուժէն կայսրն հաշտեցաւ հետն ու դարձուց իր տեղը խաղաղասիրութեամբ: Իկոր քաջութեամբ ամէն թշնամեացն յաղթելէն ետեւ զօրքին մէկ մասը ճամբեց, ու երբ անհոգ կեցեր էր, Տրեւլեանք յանկարծ հասան վրան՝ գլխատեցին վաթսունըութ տարուան, որ մանուկ որդին Սվեաթոսլաւ թողուց իր Օլկա դշխոյի խնամակալութեանը: Օլկա եղաւ տիրուհի Քիեւայ մայրաքաղաքին, զոր յափշտակելու համար Տրեւլեանք խնդրեցին՝ որ իրենց իշխանին կին առնէն զինքը, թողութիւն ալ հայցեցին Իկորին մահուան համար, եւ այլն: Իսկ խոհեմ դշխոյն ճամբեց զանոնք, որ երթան իշխանները ղրկեն այս մեծ գործքիս համար: Միւս օրն երբոր մտան քաղաքը անոնց իշխանները, ծառայքն բռնեցին զանոնք՝ ողջ ողջ թաղեցին: Օլկա նորէն ուզեց ուրիշ իշխաններ ալ զինքը հարս տանելու համար մեծ իշխանին: Տրեւլեանք յիսուն ոգի ալ երեւելիներէն ղրկեցին Օլկային. որոնք բաղնիք հրաւիրեցան, ու մէկէն այրեցան հոն: Յետոյ պատուիրեց դշխոյն որ հարսնիքն սկըսին. ինքն ալ գնաց նախ էրկանը գերեզմանին վրա լացաւ եւ շիրիմ կանգնեց. ապա զարդարուած գնաց Տրեւլեանց, որոնք երբոր ուրախութեամբ արբեցան՝ նա նշան տուածին պէս Ռուսները զարկին զամէնքը ջարդեցին: Օլկա ելաւ դարձաւ 'ի Քիեվ, և զօրք հանեց Տրեւլեանց վրա, ու սաստիկ պարտելով՝ հարկատու ըրաւ զամէնքը ։ Յետոյ ելաւ երկիրներն աչքէ անցուց, քաղաք և աւաններ շինեց ու դարձաւ Քիեվ․ անկէց ալ անցաւ 'ի Պօլիս ։ Ուր լուսաւորեալ մկրտեցաւ և անուանեցաւ Հեղինէ՝ որուն կնքահայր եղաւ Կոստանդին Պերփեռուժէն կայսրն, և մեծապարգև պատուեց դշխոյն իշխաններովը, որ ամէնքն ալ մկրտեցան հոն ։ Օլկա մեծ փառքով դարձաւ 'ի Ռուսիա, բայց չկարցաւ դարձընել 'ի քրիստոնէութիւն իրեն որդին զոռոզն Սվեաթոսլաւ ։ Իսկ ինքն դշխոյն մեռաւ յամի 955, և դասեցաւ Ռուս ազգէն սրբոց կարգը ։ Տ․ Վլատիմիր ։

Օշին էր մեծ իշխան որդի Լեւոնի Գ․ արքային Հայոց, որ 'ի 1309 թագաւոր օծուեցաւ, և հրաման հանեց որ պահուին Սսայ ժողովին կանոնները ազգային ծէսերը փոխելու համար ։ Որուն շատ ներհակեցան արևելեան վարդապետներն, ու արհամարհեցին հրամանները արքային և Կոստանդին կաթուղիկոսին ։ Այլ և Սարգիս եպիսկոպոս Երուսաղէմի գլուխ քաշելով առաւ հրովարտակ Եգիպտոսի ամիրայէն անկախ ըլլալու համար կաթուղիկոսէն և արքայէն՝ անուանելով զինքն Ա․ պատրիարք Երուսաղէմի 'ի 1311ին ։ Կարին քաղաքին Գրիգոր եպիսկոպոսն ալ զարկին սպաննեցին խռովարարք սուրբ պատարագի բաժակին մէջ ջուր խառնելուն համար ուրիշ քրիստոնէից նման ։ Օշին այն անզգամներուն մէկ քանին բռնել տուաւ ու աքսորեց ։

Ապա 'ի 1316 ժողով ընել տուաւ յԱտանայ քաղաքը, և անով վերջացան այսպիսի խռովութիւնքն. որ դեսպան ալ ղրկեց սրբազան հայրապետին Հռոմայ Յովհաննէս ԻԲ. խընդրելով խաչակիր զօրք զԵրուսաղէմ ազատելու համար։ Իւր Յակոբ վարդապետն յայտնեց Հայոց դաւանութիւնը ճշմարտութեամբ. որ համաձայն ըլլալով Հռոմէական հաւատոյ շատ հաճեցաւ մեծ Քահանայապետն, և ապա գրեց կոնդակ օրհնութեան առ թագաւորն և առ կաթուղիկոսն՝ յորդորելով մնալ միաբան և հաւատարիմ։ Յետոյ՝ Նասըր սուլդանն Եգիպտոսի լսելով թէ Օշին միացած է Լատինացւոց հետ՝ տասնըութ հազար ձիաւոր զօրք հանեց Կիլիկիային վրայ։ Ան ատեն զօրացեալ Օշին ժողվեց իրեն կտրիճներն ու յանկարծ քաջութեամբ դէմ ելաւ զարկաւ, որը ջարդեց, որը գերի բռնեց, որն ալ հալածեց. իսկ ինքն ցնծութեամբ գոհանալով դարձաւ իրեն տեղը։

Յամի 1320 սաստիկ հիւանդանալով Օշին թագաւորը մահուան պատրաստութիւն տեսաւ, ապա ժողվեց իշխաններն յանձնեց անոնց և կաթուղիկոսին իր որդին տասը տարւան Լևոն Ե, որպէս զի ժամանակին թագաւորեցընեն տղան, այլ և դնեն թագաւորութեան կառավարիչ իշխանապետ մը Պայլ մականուամբ, և որդւոյն խնամակալ։ Ապա քիչ օրէն ետև վախճանեցաւ արքայն տասնիրեք տարի տիրելէն ետև, և թաղեցաւ փառօք Դրազարկու վանքը։

Պայլ հազարապետ մեծ իշխանն ՚ի 1320 թագաւոր օծել տուաւ զԼևոն Ե. Սիս քաղաքը մեծաշուք հանդէսով, և յետոյ աղջիկը տալով փեսայացուց իրեն՝ ինքն ալ մականուանեցաւ Թագաւորահայր, և Պարոն Կիլիկիոյ. նաև իւր եղբայրն ալ հաստատեց սպարապետ

Հայոց ։ Լևոն ասոնց ձեռքին տակը շատ հանգիստ Թագաւորեց · բայց յետոյ դժբաղդ եղաւ վշտանալով ազգէն և այլազգիներէն · մինչ զի ծաղկեալ հասակով մեռաւ անժառանգ ՚ի 1342, որ տիրեց քսանըերկու տարի ։

ՕՇԻՆ Ասպետ մեծ էր իշխան մէկ մասին Արճախ աշխարհին Հայաստանու, որ այլազգիներուն ձեռքէն ելաւ գնաց բոլոր ընտանեօքն ՚ի Պօլիս ՚ի 1072, և իւր երկիրները տուաւ Յոյն կայսեր, ու անոնց տեղն առաւ Լամբրոն բերդը ՚ի սահմանս Տարսոնի ։ Օշին նստելով հոն ծաղկեցուց շինութեամբ, և կանգնեց զեկեղեցի յանուն սրբոյն Պետրոսի, այլ և քաջութեամբ վանեց Հագարացի Թշնամիները ։ Յետոյ երբ կայսրն ելաւ Հռոբերդոսի Լատին դքսին վրայ, Օշին գնաց կայսեր օգնութեան, ուր դքսին բանակէն ելաւ ահագին մեծ Գաղղիացի մարդ մը խրոխտալով, ձեռքն ալ գեղարդն ։ Օշին չվախնալով հասաւ վրան ձիով սուսերամերկ · իսկ Գաղղիացին զարկաւ գեղարդով անոր կուրծքին սաստիկ վիրաւորեց · բայց Օշին անանկ ուժով զարկաւ նորա գլուխուն, որ երկուս ճղքեց սաղաւարտովը մեռաւ ։ Օշին ալ ընկաւ հոն · այլ վերուցին տարին կայսեր, որ գուրգուրալով վրան հրամայեց աղէկ դարման տանին, և առողջանալէն ետև դրաւ զինքը իշխան Տարսոնին ու բոլոր սահմանացն, շնորհելով իրեն պատիւ ազատական իշխանութեան կոչելով Սեբաստոս ։ Օշին և Կոստանդին իշխան Կիլիկիոյ շատ օգնութիւն ըրին Խաչակիր զօրաց պաշարներով, երբոր մեծ կարօտութեան մէջ էին անոնք ։ Այս քաջ Օշին ծնաւ զՀեթում, ասկեց ալ եղաւ միւս

Օշին, որմէ ծնաւ սուրբ Ներսէս Լամբրոնացին:

ՕՍՄԱՆ կամ ՕԹՄԱՆ նախ էր քաջ սպարապետ Մահմէտին, որ մեծ յաղթութեամբ կորուց շատ կռապաշտներ. ապա յամի Տեառն 644 յաջորդելով Օմէրին նստաւ Ամիրապետ կամ Խալիֆա Հագարացւոց ՚ի Դամասկոս եօթանասուն տարւան ծեր: Բայց քաջութք̃ շատ երկիրներու տիրեց ու օրէնքներով բարեկարգեց. մինչև համարեցաւ երրորդ յաջորդ Մահմետին: Այլ և աղանդասէր ըլլալով բազմացուց Կուրանին մաքուր օրինակները Ապուպէքիրին օրինակէն. բայց ինքը վերջապէս սպաննուեցաւ ապստամբներէն յամի 655. որոնց գլուխ ըլլալով Ալի նստաւ յաջորդ Օսմանին: Տ. ՚ի կարգին:

ՕՍՄԱՆ Ա. Թագաւոր Օսմանեանց էր որդի Էրթօղրուլի որդւոյ Սիւլէյման շահին, որ ջուրը խեղդուեցաւ: Էրթօղրուլ էր կռապաշտ, երբոր կնաց Ալայէտտին ամիրային Կոնեայի՝ եղաւ Մահմէտական և անոր զօրավար, այս պատիւն առաւ Օսման որդին ալ և եղաւ փաշա Փռիւգիոյ վասն խելացի քաջագործութեանցն:

Երբոր Ալայէտտին մեռաւ անզաւակ՝ տէրութիւնը բաժնեցին, և Օսման առաւ Բիւթանիայի և Կապադովկիայի կողմերն, ու Յունաց շատ երկիրներուն և Անատոլիի քաղաքներուն տիրեց: Մինչև Պուրսան ալ առաւ ու թագաւորական գահը հոն հաստատեց յամին 1300, անուանելով զինքն Սուլդան. և այսպիսի մեծափառ կառավարութեամբ զօրացընելով թագաւորութիւնը քսանըեօթը տարի, մեռաւ խաղաղութեամբ վաթսունինը տարւան յամի 1327 . որուն անուամբ կոչեցաւ թէ ազգը և թէ պետութիւնը Օսմանեան :

ՕՐԽԱՆ էր որդի և յաջորդ Սուլդան Օսմանին, որ 'ի 1327 նստաւ թագաւոր, ու զօրանալով թշնամեաց դէմ պարտաւորեց զօրքն՝ որ պարապ ժամանակն երկրագործութիւն ընելով ապրին առանց թոշակի և առանց հարկ տալու : Ապա ելաւ պատերազմ Անդրոնիկէ կայսեր դէմ, ու քանի մը անգամ յաղթեց և տիրեց Նիկիոյ, նաև բնակիչներուն ալ ազատութիւն տուաւ որ ուր կ'ուզեն երթան : Այս բարերարութիւնը բնակչաց սիրտը անանկ շարժեց որ մնացին հոն. և դուրսն եղողներն ալ գնացին Օրխանին հնազանդութեան տակը մտան. ուր այնչափ ժողովուրդ լեցուեցաւ, որ գրեթէ հաւասարեցաւ Պօլսոյ : Յետոյ շատ տեղեր ալ առաւ Սօռայի կողմերէն, Պուրսայի մէջ կանգնեց հոյակապ մզկիթն արքունի, վարժարան, դպրոց, հիւանդանոց, և այլն :

Անդրոնիկոսէն ետև նստաւ բռնութեամբ կայսր Յովհաննէս Կանտակուզէն, որուն դէմ ելաւ ժողովուրդը. երբոր Ճարը հատաւ անիրաւին՝ դաշնաւոր եղաւ Օրխանին հետ տալով իրեն աղջիկն անոր կին ընդդէմ եկեղեցական կանոնաց, թոյլտուութեամբ Յունաց եկեղեցւոյն, և զրկելով զորդին Անդրոնիկեայ 'ի ժառանգութենէ տէրութեան : Այս անկանոն ամուսնութեամբ թէպէտ կայսրը խաղաղացաւ թշնամիներուն ձեռքէն, բայց պատճառ տուաւ Օսմանեանց, որ Յունաց շատ տեղերուն տիրեցին իբրև օժիտ կայսեր աղջկանը : Սերջը կայսերութիւնն ալ կորուսին, ու ժողովըրդոց ալ բերանն ընկան նախատանքով, և այլն։ Օրխան յետոյ դիմեց 'ի Կէլիպօլու, ուր պատերազմելով Թաթարներուն դէմ ընկաւ մեռաւ 'ի 1360։ Բայց որդիքը Սիւլէյման և Մուրատ գլուխ տարին յաղթութիւնը հալածելով Թաթարները. և Մուրատ Ա. յաջորդեց Օրխանին։

ՕՐԷՆԴԻՈՍ էր Երևելեան վկայ և զինուոր վեց եղբայրներովը Դիոկղետիանոսի բանակին մէջ. ուր Բարբարոսաց պատերազմին ատենը հսկայազօր արքայն Մաւրիտանացւոց ուզեց՝ որ կայսեր հետ մենամարտութիւն ընէ։ Կայսրն ալ ընտրեց զքաջն Օրէնդիոս ու հանեց դիմացը, որ աղօթքով սպառազինեալ կործանեց թշնամին ու գլուխը տարաւ կայսեր։ Ան ալ մեծ ցնծութեամբ տիրեց Բարբարոսաց աշխարհին ու սկսաւ փառք տալ կուռքերուն այս մեծ յաղթութե՟ համար։ Օրէնդիոս չդիմանալով ասաց համարձակ. Ո՛վ թագաւոր, քա՛ջ գիտնաս որ իմ տէրս Քրիստոս ոյժ տալով ինձի այս յաղթութի՟ն ընել տուաւ և ոչ քու անշունչ կուռքերդ։ Անոր վրա սաստիկ կատղեցաւ բռնաւորը, բայց նոյն ատեն լռեց, ու քանի մ'օրէն ետև փորձեց քաջ նահատակը մեծ խոստմունքով և սպառնալով. այլ երբ չկրցաւ յաղթելու երանելույն՝ աքսորեց վեց եղբայրներովը, որոնք դառն տանջանքով և վկայական մահուամբ կատարեցան 'ի Քրիստոս։ Իսկ սուրբ Օրէնդիոսին ոտքը մեծ քար մը կապեցին ու ծովը նետեցին. որ հրեշտակին ձեռքով ելաւ ցամաք և աղօթելով աւանդեց սուրբ հոգին. և ամփոփեցաւ պատուով ու տօնեցաւ 'ի քրիստոնէից։

ՕՔՍԵՆՏԻՈՍ կամ ԱՒՔՍԵՆՏԻՈՍ էր մեծ ճգնաւոր Ե. դարուն, որ սրբութեամբ ճգնեցաւ Քաղկեդոնի մօտիկ լեռան վրայ կոչեցեալ Օքսենտեան լեռան : Նա խիստ ճգնութեամբ այնչափ փայլեցաւ, մինչև արժանի եղաւ շնորհաց հրաշագործութեան և մարգարէութեան. երբեմն հրեշտակներն ալ երևնալով յայտնապէս կը սաղմոսէին հետը մէկտեղ : Այս երանելին շատ մեծ յարգութիւն ունէր կայսերաց և բոլոր ժողովրդեան առջին. վասն զի միշտ կը յանդիմանէր՝ Նեստորական Եւտիքական և ուրիշ հերետիկոսներուն գլուխը՝ հաստատելով անոնց դէմ սուրբ ժողովքներուն սահմանը : Ապա յետ շինելոյ և բարեկարգելոյ վանքեր և մատուռներ՝ հոգեշնորհ առաքինութեամբ և սրբութեամբ հանգեաւ 'ի Քրիստոս, և թաղեցաւ իւր շինած վանքը յԱրիքինարիայ : Տ. Եւստրատիոսեանք :

ՓԷ կամ ՓՕ, մեծ չաստուածն է Չինաց, զոր կը պաշտեն անոնք իբր Տէր երկնից, և պատկերքը կը ձևացընեն լուսով պատած չորս դիէն, ձեռքերն ալ հագուստին տակը պահած, նշանակելով թէ իր գործքերը ծածուկ են։ Աջ կողմն է իրենց առջի օրէնսդիրն Կոնփուկիոս. իսկ ձախ կողմը դրած է Լանկա օրէնսդիրն որ էր իրենց մեծ պաշտելի քը։

Շատ հետաքննին հեղինակներ կը համարին թէ Հին Չինացիք այսպէս Փէ, և Փօ կ՚անուանէին Նոյ նահապետը, ինչպէս կ՚երևնայ անոնց ազգային պատմութենէ և նշաններէն։

ՓԷԼԼԷՐ Փրանչիսկոս էր մեծիմաստ վարդապետ Յիսուսեան Փիանտրացի, որ շատ արևմտեան քաղաքներ ոտքով քալելով կը քննէր գրատուններն ու վանքերուն դիւանատեղերը։ Նա 'ի 1770 դարձաւ իր հայրենիքն ու ըրաւ չորրորդ ուխտն երթալու քարոզութեան ուր որ ղրկեն, նման Քրիստոսի աշակերտներուն։

Յամի 1773 երբ իրենց կրօնը վերցաւ, սա ելաւ անկրօն աղանդաւորաց դէմ արգոյ գրութեամբ և հզօր քարոզութեամբ զօրացուց զուղղափառ հաւատքը և եկեղեցին Քրիստոսի։ Ի 1797 վրան հիւանդութիւն եկաւ, ապա 'ի 1802, եռանդուն հոգւով վերջին խորհուրդները կատարեց քահանային հետ աղօթելով վախճանեցաւ բարի մահուամբ վաթսունըեօթը տարեան ։ Որ և գրեց քառասուն թուով իմաստալից գրեանք, բառարաններ և օրագրութիւն այլովք հանդերձ, որոնք շատ անգամ տպագրեցան և պիտանի եղան թէ՛ գիտնոց և թէ՛ դպրոցներուն ։

ՖԷՆԷԼՈՆ Ֆրանչիսկոս էր մեծահամբաւ եպիսկոպոս Գաղղիացի ծնեալ 'ի բերդն Ֆէնէլոն, և լաւ կրթեալ իր հօրեղբայր սպարապետին ձեռքին տակը ։ Որ շուտով հասուց կատարելութեան ուսմանց մէջ. մինչ զի տասնըւինը տարեան կրնար բեմն ելլել քարոզելու ։ Հօրեղբայրը տեսնելով անոր ուշիմութիւնը, յորդորեց, ու դրաւ սուրբ Սուլպիկիոսի վանքը 'ի Փարիզ ։

Ուր քսանըչորս տարեան քահանայ ձեռնադրեցաւ. ապա Փարիզու արքեպիսկոպոսը դրաւ զինքը վերակացու նորադարձ Կալվինականներուն, որոնց լաւ առաջնորդեց ։ Յետոյ թագաւորը ղրկեց զինքը քարոզելու Գաղղիայի հերետիկոսներուն, որոնցմէ շատ հոգի դարձուց 'ի Ճշմարտութիւն. ապա 'ի 1688 Լուդովիկոս ԺԴ. յանձնեց անոր թոռներն՝ որ վարժեցընէ բարեկրթութեամբ ։

Ֆէնէլոն յաճախելով յարքունի պալատն՝ արքայորդիք որ ըստ օրէ կը զարգանային ուսմամբ և առաքինութեամբ ։ Որուն համար շատ գոհ ըլլալով թագաւորը՝ ընտրեց զինքն արքեպիսկոպոս Կամպրայի ։ Որ և յետոյ սաստիկ վիճեց Պոսիւէթին հետ աստուածաբանական խնդրոց վրայ. բայց ինքն խոնարհեալ միշտ մեծապատիւ գովեցաւ իբրև աստուածընտիր եպիսկոպոս և առաքինի իմաստասէր ։ Նա այսպէս սիրելի և ակնածելի եղաւ Ֆենելոն թէ սրբակաց վարքով և թէ քաղցր վարդապետութեամբ, մինչև վախճանեցաւ բարեպէս վաթսունուիրեք տարւան ՚ի 1715, և զամէնքը սգով լեցուց, մանաւանդ զՀայրապետն Հռոմայ Կղեմէս ԺԱ. որ կարդինալ պիտի ընէր զինքն ։ Ֆենելոն շատ գրածներ թողուց աստուածաբանական, փիլիսոփայական, և բանասիրականք, որով անմահացուց գիտնական և բարի անունը ։ Աւելի գերիմաստ և վայելուչ է դիւցազնական բանաստեղծութիւնը Տելեմաք անուանեալ. որ շատ նախապատիւ է ամէն աշխարհ, և ամէն ազգաց մէջ. նաև շատ լեզուով թարգմանեալ տպեցին. ինչպէս մենք ալ կրկին անգամ թարգմանեցինք և տպեցինք ։

ՖԷՈՏՈՐ Ալեքսիևիչ էր երեց որդի Ալեքս Յարին կամ թագաւորին Ռուսաց, որ նստաւ հօրն աթոռը յամի 1676 ։ Նա կրթելով զինուորական և քաղաքական կրթութեամբ՝ յաղթեց Ուքրանիայի ապստամբաց, ու հաշտութիւն ըրաւ Օսմանցոց հետ բարեկարգելով վայելչապէս իր պետութիւնը ։ Պատուիրեց Մոսկով մայրաքաղաքին բնակչացն՝ որ քարաչէն փոխեն իրենց յարդածածուկ տները, որով ընդարձակեց և գեղեցկացուց քաղաքը շինութեամբ և կարգադրութեամբ դրամով ալ օգնելով նոցա ։ Յետոյ երբ կամեցաւ իշխաններն ու մեծամեծներն ալ կարգի դնել, և Լեհացոց հագուստը հագցընել, սկսան պաղիլ իրմէն. և որչափ մեծ փափաքներով ուզեց տէրութիւնը զօրացընել և ազգը զօրքով և ուսմամբ փառաւորելու՝ առաջ չկրնայ , մինչև կորիծ հասակին մէջ ելաւ աշխարհքէս հիւանդութեամբ 'ի 1682 ։ Որուն յաջորդեց տասը տարուան պզտի եղբայրն Մեծն Պետրոս , և ամէն լաւ փափաքները կատարելով պայծառացուց կայսերութիւնը ․ Տ ․ 'ի կարգին ։

ՖԻՌՄՕՆ Հենրիկոս էր փոխանորդ արքեպիսկոպոսական աթոռին , որ աշակերտելով Յիսուսեանց մեծիմաստ վարդապետ հանգիսացաւ ․ մինչ զի Եղիսաբեթ տիրուհի քոյրն Լուդովիկոսի ԺԶ ․ ընտրեց զինքն իրեն խոստովանահայր յամի 1777 ։ Ապա երբոր անկրօնները զաս բարեպաշտ թագաւորը պիտի գլխատէին՝ ելաւ մէկտեղ գլխատման տեղն ու ասաց թագաւորին աս խօսքս ․ “ Օ աւա՛կդ սրբոյն Լուդովիկոսի ել յերկինս 'ի վեր „ ։

Առաքինափայլ անմեղ թագաւորիս արիւնը վրան ցայթկելէն ետև պահուեցաւ ու ծածուկ կը հոգար ժողովուրդը և տիրուհի քոյրը թագաւորին բանտին մէջ ։ Երբոր ան ալ գլխատուեցաւ , անցաւ յԱնգլիա Էտիմպուրկ մայրաքաղաքն Սկովտիոյ , ուր էր եղբայրը թագաւորին Լուդովիկոս ԺԸ , որ տուաւ առաքինի վարդապետին բարձր պատիւն միշտ հետը տանելով ։

Ի 1800ին թագաւորը ղրկեց զինքն առ կայսրն Ռուսաց Պօղոս Ա ․ որ շատ զմայլեցաւ անոր շնորհալի կերպարանքին և իմաստութեանը վրա , մինչև խնդրեց օրհնութիւնն ու աղօթքը ։ Ուր իր պաշտօնը լաւ կատարելէն ետև , երբոր Գաղղիացիք գերի վարեցան 'ի Միթաւ քաղաքին Ռուսաց յամի 1807 , հոն ըլլալով Լուդովիկոս ԺԸ ․ խիստ ցաւակից եղաւ վիրաւորներուն և փոխադրական հիւանդներուն վրա ։ Ապա պատուիրեց Փիւմօնին՝ որ անոնց ամէն պէտքը հոգայ ։ Իսկ նա անանկ մեծ սիրով առաքինացաւ , մինչև զօրքին ցաւն իրեն փոխուելով հինգ օրւան մէջ զոհ եղաւ քրիստոնէական սիրոյ վաթսուներկու տարւան 'ի 1807 , որ անպատմելի կսկիծ տուաւ արքունեաց և տէրութեանն ։ Թագաւորը և ամէնքը մեծահանդէս փառօք թաղեցին զառաքինին ․ որուն յիշատակագրութիւնքը և նամակներն տպեցան 'ի Փարիզ ։

Կնիք աստուածագիծ սէր եղբայրական
Ցոլացաւ 'ի դէմս հոգեշնորհ մարդկան ,
Որոց նմանեալ հանուրց փրկողին
Ի զոհ ձօնեցան 'ի սէր ընկերին ։
Ձայն երկնահրաւէր յօր աներեկի
Եղբայրասիրաց գոչէ նազելի ,
Եկայք օրհնեալք օր յանսպառ խրախճան
Որ առաքինեացդ անդուստ պատրաստ կան ։

ՓԼԱԺԵԼԼԵԱՆՔ ըստ Լտ. Ձաղկիչք Թարգմանին , և էին մոլեգնեալ աղանդաւորք ԺԳ դարուն , իբր ջերմեռանդ ապաշխարողք՝ հրապարակաւ ձաղկելով զիրենք արեամբ չափ սաստիկ ․ և զան կը համարէին յիմարութեամբ մկրտութիւն արեան՝ բաւական ջնջելու մեղքերը ամէն խորհուրդներէն զօրաւոր , և առանց անոր փրկութիւն չկայ , կ'ըսէին ։

Այս աղանդին հետ բազմացան չարիք , բազմապատիկ խռովութիւնք և ժանտախտ ․ մինչ զի ժողովուրդը խուռն թափօր կազմելով սկսան կոյր բորբոքմամբ ապաշխարել՝ ճամբաներուն մէջ ծեծկուելով ողբալով , որպէս զի այն փորձանքները վերնան իրենց աշխարհքէն ։ Եւ այնչափ կատղեցան Եւրոպայի մէջ, մինչև տները կը կոխէին ու բռնութեամբ դուրս կը քաշէին մարդիկ, որ ձաղկելով արդարանան ։

Ասկէց այնչափ չարիք ծնան յափշտակութեամբ և մարդասպանութ՟բ, մինչ զի սրբազան պապն Կղեմէս Զ. դատապարտեց զայս աղանդն նզովելով և տէրութեանց ձեռքով ալ ջնջեց Փլաձելլեան աղանդաւորները ։ Որոնց համար գրեց կոնդակ և 'ի Հայաստան առ մեր Հայ հայրապետներն, որ զգուշանան չար աղանդներէն ։ Որք խոնարհ հպատակութ՟բ պատասխանեցին, և ուրախացուցին Սրբազանը. որոնց վրա այսպէս կը գրէ գովութեամբ. “ Պատուական եղբարք մեր Մխիթար կաթուղիկոս Հայոց, և արքեպիսկոպոսունք և եպիսկոպոսունք և սիրելի որդիք մեր առաջնորդք վանաց, և այլ կղերք եկեղեցւոյն Հայաստանեայց փոյթ կալան ծանուցանել մեզ ”, և այլն ։

ՓՌԱՄԱՍՈՆՔ ըստ Պղ. ստուգաբանի Որմնադիր եղբարք կամ Նոր միաբանութիւն անկրօնից, որք էին ծածուկ աղանդաւորք միացեալք նախ 'ի Գաղղիա, և անկէց ամէն երկիր տարածեալք մեր օրը, վասն եղծանելոյ զհաւատս և զտէրութիւն ։ Ասոնք ունէին առանձին խորհրդարան մութ և ահռելի տեղեր. ուր ծածուկ կը ժողվէին գիշերանց և խաբէական խոստմունքով թուլահաւատներն իրենց ընկեր կը գրէին սոսկալի ձեւերով և երդումներով, որ գաղտուկ պահեն իրենց աղանդը, և այլն ։ Ազատութիւն և հաւասարութիւն կը քարոզէին հանդերձ եղբայրսիրութեամբ. բայց իրենք գերի էին չար ախտից կեղծաւորութեամբ, չաբականութեամբ և անկրօնութեամբ յայտնի հակառակելով սուրբ եկեղեցւոյ և թագաւորութեանց ։ Անոր համար շուտով նզովեալ կորան թէ՛ եկեղեցական և թէ՛ տիրական իշխանութեամբք ։ Տ․ Բարպօնարք ։

ՖՐԱԴԻՉԵԼԼԵԱՆՔ ըստ Իտ․ փոքր եղբարք, էին Ֆրանչիսկեան կրօնաւորք․ բայց ետքը եղան մոլորեալ աղանդաւորք դատարկաշրջիկք յարևմուտս ԺԳ․ դարուն, սուրբ Ֆրանչիսկոսէն ետև ։ Որոնք քանի մը ճիւղ բաժնուեցան ու ամէն տեղ խռովութիւն կը ձգէին․ անդադար քարոզելով, թէ իրենց աղանդը անմիջապէս Քրիստոսէն տրուած է, ու իրենք միայն են ճշմարիտ եկեղեցի, նաև չեն պարտական ուրիշի հնազանդելու ։

Անչափ յանդգնեցան լրբութեամբ, մինչև ուրացան գլխաւորութիւն սուրբ եկեղեցւոյ, և զնախագահութիւն սրբազան աթոռոյն ։ Սաստի փութով դատապարտեալ կորան ՚ի ժողովն Վիեննայի և ուրիշ մասնաւոր ժողովքներով ։

ՖՐԱՆՉԻՍԿՈՍ Ասիզացի սքանչելագործ սուրբ ճգնաւորն մականուանեալ Մեծ՝ էր Իտալացի շատ առաքինի և աղքատասէր, վառեալ քրիստոնէական կատարելութեամբ ։ Մինչ զի թողուց ամէն բան, ու գնաց մտաւ ճգնարան՝ փափաքելով խօսակցիլ Աստուծոյ հետ, և համարձակ ասել․ Հայր մեր որ յերկինս ես․ եղիցին կամք քո յաւիտեան ։ Օր մը սուրբ Անտոնին պէս լսեց Աւետարանին խօսքը թէ “ Մի՛ ստանայք ոսկի և արծաթ և պղինձ ՚ի գօտիս, մի՛ պարկ, և մի՛ երկուս պարեգօտս և կօշիկս „ , և այլն. առաջադրեց ճիշդ պահել Յիսուսի բանն. և թողուց վրան միայն մէկ պարեգօտ մը, աղքատացաւ նման աշակերտաց Տեառն:

Յետոյ ժողվեց տասներկու ընկեր ու հիմնեց զկարգ աղքատ և բոկոտն կրօնաւորաց Մինօրեց, այս ինքն կրտսեր կոչեցելոց. զոր երկնային տեսլեամբ հաստատեց Ինովկենտիոս Գ. հայրապետն Հռոմայ: Իսկ երանելին անկէ ետև աշկերտները շատցուց բարեկրթութեամբ, և ղրկեց ամէն աշխարհ վասն քարոզութեան և լուսաւորութեան քրիստոնէից:

Նմանապէս ինքն ալ փափաքելով մարտիրոսութեան գնաց յերկիրն Ասորւոց. ուր անհաւատ Սուլդանը մեծապէս պատուեց զնա իբրև այր Աստուծոյ. ուստի դարձաւ յԻտալիա ու շատ վանքեր ալ շինեց: Յետոյ առանձնացաւ Ալվեռնոս լեռն, ու կը ճգնէր խիստ պահօք 'ի պատիւ Միքայէլ հրեշտակապետին. իսկ խաչվերացին օրը երևցաւ իրեն խաչելեալ Տէրն սրովբէական թևօք պարածածկեալ, և հրաշքով տպաւորեց հինգ վէրքը ձեռքն ու ոտքը և կողը: Ապա երկու տարիէն ետև սքանչելի գործքով և առաքինական սրբութեամբ փոխեցաւ առ Աստուած քառասունըչորս տարուան յամի 1226. և թաղեցաւ փառաւորապէս Ասիզ քաղաքին մէջ. բայց իւր անունը մնաց Ֆրանչեսկոս, այս ինքն Գաղղիական. զի տեղեակ էր գաղղիականին. և իւր բերնէն խօսքն էր միշտ. “Աստուած իմ և ամենայն ինչ„:

Ինչպէս այս իւր սուրբ անունը ամէն տեղ փառաւորեցաւ, որ առաջ էր Յովհաննէս, նոյնպէս կարգը ծաղկելով բազմացաւ ու զանազան ճիւղեր բաժնուելով աստուածաշնորհ քարոզիչներ, և իմաստուն սրբակաց կրօնաւորներ ունեցաւ, որոնք մինչև հիմա մեծ հոգևոր շինութիւն են եկեղեցւոյ ։

ՖՐԱՆՉԻՍԿՈՍ Պաւլայեցի էր Կաղաբրիայէն, ջերմեռանդ սրտով մտաւ սուրբ Ֆրանչիսկոսին կարգը, և ապա առանձնացաւ անապատը ։ Ուր երբոր ելաւ սրբութեան համբաւը՝ շատ հոգեսէր անձինք գնացին աշակերտեցան իրեն ։ Հոն վանք շինելով ուխտ հաստատեց, և եղաւ հիմնադիր երկրորդ կարգին Ֆրանչիսկեանց, որ անուանեցան ՄԻՆԻՄ, այս է՝ Ամենակրտսերք ։ Սա ինքն էր խիստ ճգնաւոր, պահեցող, շնորհալի, և հրաշագործ ․ որ երբեմն վերարկուն տարածելով ջրին երեսն ու նստաւ վրան նաւակի պէս անցաւ Սիկիլիայի ծոցն մէկ ընկերով, և զարմացուց զամէնքը ։ Այլ և ունելով հոգի մարգարէութեան գուշակեց գալիքներն ու փառաւորեցաւ անունը և կարգը, մինչև սրբութեամբ և մեծ ճգնութեամբ փոխեցաւ առ Տէր իննսունըմէկ տարւան 'ի 1507 ։

ՖՐԱՆՉԻՍԿՈՍ Քսաւերեան Սպանիացի կոչմէն առնուական՝ անուանեալ Առաքեալ Հնդկաց, որ նախ աշակերտեցաւ սուրբ Իգնատիոսի հիմնադրին Յիսուսեանց 'ի Փարիզ ։ Որուն շնորհքովը այնպէս զարգացուեցաւ հոգևոր իմաստութեամբ և երկնային տեսութ՟բ, մինչ զի սլաքական աղօթքով երբեմն վեր կը բարձրանար ։ Եւ այսպէս եղաւ աստուածախոհ ճգնաւոր, և մեծազօր քարոզիչ ուղղափառութեան առաքելական սիրով ։ Որով գնաց 'ի Հնդստան, և սքանչելի քարոզութ՟բ անթիւ կռապաշտներ լուսաւորեց և մկրտեց իշխաններով և թագաւորով մինչև 'ի Ճեափոն, և այլն ։

Զարմանալի հրաշագործութեամբ անբժըշկելի ցաւերը կը բժշկէր , մինչև մեռելներուն ալ յարութիւն կու տար անուամբ Փրկչին ։ Նոյնպէս մարգարէական հոգւով շատ բան կը գուշակէր . և որչափ առաւել կը խոնարհէր առաքինութեամբ , այնչափ գեր 'ի վեր կը փառաւորէր ճշմարիտ աստուածպաշտութեամբ ։ Երբոր այսպիսի առաքելական նախանձով կը քարոզէր երանելին՝ և արդեամբք փոխեցաւ յերկինս 'ի Սանկեան կղզին Չինաց քառասունըվեց տարեան 'ի 1552 . իսկ սուրբ նշխարքը փոխադրեցին յարևմուտս , որ ծաղկեցան սքանչելագործութեամբ մինչև ցայժմ ։

ՖՐԱՆՉԻՍԿՈՍ Պորճեան էր դուքս Կանտիոյ և փոխարքայ Քադալոնիոյ Սպանիայի , որ աշխարհք մտնելէն ետև երբոր կինը մեռաւ , թողուց ամէն բան և զաւակներն ու մտաւ Յիսուսեանց կրօնը յամի 1548 ։ Ուր այնչափ պայծառացաւ առաքինութեամբ և սրբութեամբ , մինչև ընտրեցաւ առաջնորդ բոլոր կրօնին 'ի 1565 , և եղաւ բարի օրինակ շատ հոգեսէր իշխաններու , որ աշխարհէ հրաժարեալ կրօնաւորեցան ։

Առաւել ճգնազգեաց և աստուածասէր էր երանելին , և վասն փրկութ̃ե հոգւոց աշխատող , եղբայրասէր , հեզ և խոնարհ սրտով , միշտ կոչելով զինքն մեղաւոր ։ Շատ անգամ հրաւիրեցին հոգևոր իշխանութեան եպիսկոպոսութեան և կարդինալութեան , հրաժարեցաւ չուզեց . այլ միշտ գոհ էր ծառայել հիւանդաց և աղքատաց ։ Շատ ալ աղօթասէր էր ծնրադրութեամբ և խոկմամբ . երբեմն պատարագելուն ատեն երեսէն լոյս կը ծագէր . որ յետ բազմապատիկ առաքինափայլ գործոց և հրաշալի ճգնութեանց վախճանեցաւ 'ի Հռոմ վաթսունևերկու տարւան յամի 1571, և դասեցաւ սրբոց կարգը տօնախմբութեամբ ։

ՖՐԱՆՉԻՍԿՈՍ Սալեզացի էր իշխան Գընեվայ կամ Ճ'ինեվրայի, սնեալ բարի վարքով և սրբութեամբ հանդերձ ուսմամբ ամէն գիտութեանց 'ի Պատուա և 'ի Փարիզ ։ Նա հրաժարելով յիշխանական մեծութենէ Սաւոյայի, մտաւ յեկեղեցական վիճակ․ և ձեռնադրեցաւ քահանայ հօրեղբօրէն՝ որ քաղաքին եպիսկոպոսն էր․ սկսաւ քարոզել զբանն կենաց անանկ եռանդեամբ, որ բիւրաւոր հերձեալ աղանդաւորներ դարձան յուղղափառութիւն․ որոնցմէ նաև շատ հալածանք ու վիշտ քաշեց․ բայց համբերութեամբ ամենուն ալ յաղթեց, և այլն ։ Յետոյ երբոր հօրեղբայրը եպիսկոպոսը վախճանեցաւ, սա ձեռնադրեցաւ եպիսկոպոս Սալեզ քաղաքին, ու գօտևորեալ ծաղկեցուց սուրբ հաւատքը, և փայլեցուց իւր աստուածաբանութեան և իմաստուն վարդապետութեան շնորհքը ։ Սահմանադրեց նոր կարգ կուսանաց կամ միանձնուհեաց Օգոստինեանց կանոնով, և անուանեց “Կարգ այցելութե՟ սուրբ Աստուածածնին” ։ Գրեց շատ աստուածիմաստ ճառեր և հոգելից խրատներ 'ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ, և վասն հաստատութեան հաւատացելոց 'ի բարի վարս և 'ի քրիստոնէական կատարելութեան, յայտնելով զճանապարհն երկնից ։ Որուն տենչացեալ վառ սիրով գնաց առ անձկալին Փրկիչ յիսունըհինգ տարւան յամի 1622 'ի Լիոն քաղաքի Գաղղիոյ․ և հետզհետէ պայծառացեալ հրաշքներով դասեցաւ սրբոց կարգը տօնեցաւ ։

Փրանչիսկոս քաջազն մեծ ազատական
Ուղղափառ կրօնից նեցուկ անկործան .
Ընտիր նախահօրը շնորհափայլ կարգաց ,
Ճարող հոյակապ լուսատու ազգաց ։
Հրաշալի վերնոց հանուրց գերապանծ
Ընդ ծագս աշխարհի ծաւալիչ շնորհաց ,
Պերճ նշանագործ անկելոց պաշտպան
Թվուրելոց ուղղիչ 'ի կարգ սրբութեան .

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ